


Ա.Ռ. ԳԱՅԱԵԱՆ



ՆՈՐ
ԿՏԱԿԱՐԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա.Ր.ԳԱՅԱԵԱՆ

A. R. KAYAYAN

**ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

INTRODUCTION GENERALE AU
NOUVEAU TESTAMENT

**ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
PERSPECTIVES REFORMEES**

«ՉԱՎԱՏՔ ԵՎ ԿՅԱՆՔ»
ՀԱՅԱՍՏԱՆ - 2003

ՀՏԴ 23.28
ԳՄԴ 86.37
Գ 262

Ֆրանսերենից թարգմանեց՝
ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

Traduite du français par
SOUSSANNA KHATCHATRIAN

ԳԱՅԱԵԱՆ Ա.Ռ.
Գ 262 Նոր կտակարանի ընդհանուր ներածություն, «Էլդորադո», -2003 թ., 464 էջ:

Գ $\frac{0403000000}{0127(01)2003}$ 2003 թ.

ԳՄԴ 86.37

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Քրիստոնեական Աստվածաշնչի արդիականությունը.....	13
ա. Ներածություն	13
բ. Հին Կտակարան.....	15
1. Պատմական բնույթի գրքեր	15
2. Բանաստեղծությունների գրքեր	15
3. Մարգարեությունների գրքեր	15
գ. Նոր Կտակարան	16
1. Պատմական բնույթի գրքեր	17
2. Թղթեր (նամակներ)	17
3. Մարգարեության գիրք	18
դ. Աստվածաշնչի նշանակությունը.....	18
ե. Աստվածաշնչի զորությունը	21
1. Աստված	21
2. Հայտնություն	21
3. Սուրբ Գիրք	21
4. Սուրբ Գիրքը՝ հավատքի կանոն	21
5. Սուրբ Գրքի զորությունը.....	22
զ. Աստվածաշնչի ընթերցումը	24
1. Համատեղ և անհատական ընթերցանություն	24
2. Ընդհանուր խորհուրդներ	26
3. Ավելի մասնավոր խորհուրդներ	28
է. Աստվածաշնչի այժմեականությունը	29
2. Նոր Կտակարանի լեզուն	34
ա. Առաջին դարում գործածվող հիմնական լեզուները	34
բ. Ինչո՞ւ է հունարենը Նոր Կտակարանի լեզու	35
գ. «Կոյնե» հունարենն իմանալու անհրաժեշտությունը	39
դ. «Կոյնե» հունարենի առանձնահատկությունները	39
3. Նոր Կտակարանի ձեռագրերը	42
ա. Գրելու նյութերը	42
1. Պապիրոս	43
2. Մագաղաթ	44
բ. Ձեռագրերը	46
գ. Ժամանակագրական ակնարկ	49
4. Նոր Կտակարանի թարգմանությունները.....	51
ա. Հին Կտակարանի «Յոթանասնից» թարգմանությունը	51
բ. Նոր Կտակարանի հնագույն թարգմանությունները	52
1. Սիրիերեն թարգմանություններ	52

2. Ղպտիերեն (կամ եգիպտերեն) թարգմանություններ	54
3. Հայերեն թարգմանություններ	54
4. Լատիներեն թարգմանություններ	55
գ. Այլ թարգմանություններ	56
1. Չոն Ուիքլիֆի անգլերեն թարգմանությունը	56
2. Գերմաներեն թարգմանությունը	57
3. Աստվածաշնչի թարգմանունը ֆրանսերեն	58
4. Լեֆեվր դ'Էտապլ-ի թարգմանությունը	58
դ. Առաքելական Հայրերի ասույթները	60
ե. Աստվածաշնչի թարգմանության հարցը	60
5. Նոր Կտակարանի կանոնը	62
ա. Բառի սահմանումը	62
բ. Բառի գործածությունը Նոր Կտակարանում	63
գ. Բառի պատմությունը վաղ քրիստոնեության շրջանում	63
դ. Աստվածաշնչյան կանոնի հարցը	64
ե. Հին Կտակարանի կանոնը	65
1. Օրենքը	67
2. Մարգարեները	67
3. Սուրբ գրվածքները կամ Վարքագրությունները	68
4. Հավելված. պարականոն գրքեր	68
զ. Նոր Կտակարանի կանոնը	69
1. Մի քանի սկզբունքներ	69
2. Նոր Կտակարանի կանոնի ձևավորման գործընթացը	71
3. Եզրակացություն	74
6. Նոր Կտակարանի աշխարհագրությունը	75
ա. Ֆիզիկական աշխարհագրությունը	75
բ. Կլիման	78
գ. Բուսական և կենդանական աշխարհը	79
դ. Մարդկային կյանքը	80
ե. Հաղորդակցության ուղիները	80
1. Ցամաքային ուղիները	80
2. Ծովային ուղիները	81
զ. Նոր Կտակարանում հիշատակված քաղաքները	82
1. Քրիստոսի առաքելության ընթացքում հիշատակված քաղաքները	82
2. Ս.Պողոսի այցելած քաղաքներն ու երկրները	82
3. Փոքր Ասիայի յոթ Եկեղեցիները	82
է. Այլ երկրներ	83
7. Միջկտակարանային և Հիսուսին ժամանակակից պատմություն	83
ա. Մեդերի և պարսիկների շրջան (538-332)	84
բ. Հունական շրջան (332-167)	84
գ. Մակաբեների շրջան (167-63)	86
դ. Հռոմեական շրջան (մ.թ.ա. 37-մ.թ. 70)	88

1. Հռոմեական կայսրության վերելքը	88
2. Կայսրերը	90
3. Գավառային իշխանությունը	94
4. Հերովդեսի ու նրա հետևորդների իշխանությունը	96
8. Հրեա-հեթանոսական հոգևոր շրջանակը	100
I. Հրեական միջավայր	100
ա. Ներածություն	100
բ. Հրեական կրոնի աստվածաբանական հիմնական գծերը	102
1. Օրենքը	102
2. Իմաստությունը	104
3. Հելլենականությունը	105
4. Մեսիական հույսը	105
5. Միաստվածությունը	110
6. Ընտրությունը	110
7. Հավիտենական ճակատագիրը	110
գ. Միջկտակարանային շրջանի հրեական գրականությունը	111
դ. Հոգևոր հաստատություններն ու արարողությունները	113
1. Նախաբան	113
2. Տաճարը	114
3. Սրբության շրջանակները	116
4. Ժողովարանը	117
5. Տոները	120
ա. Չատիկ	120
բ. Հոգեգալստյան տոն	120
գ. Վրանների տոն	121
դ. Շաբաթ	121
ե. Կրոնական ու քաղաքական օրացույց	121
6. Հոգևորականությունը	123
ա. Քահանայապետը	123
բ. Քահանաները	124
գ. Ղևտացիները	125
դ. Ատյանը	125
ե. Կրոնաքաղաքական խմբավորումները	126
1. Hassidim	126
2. Սադուկեցիները	127
3. Փարիսեցիները	127
4. Նախանձահույզները	128
5. «Հեղափոխականները» (Sicaires)	129
6. Հերովդեսականները	129
7. Հեսեները	129
8. Սամարացիները	129
9. Նորադարձներն ու աստվածավախները	130

10. Ապոկալիպտականները	131
II. Հեթանոսական միջավայր	132
ա. Հունական զոհաբերությունը	133
բ. Խորհրդավորություն բովանդակող կրոններ	133
գ. Ցինիկյան փիլիսոփայություն	135
դ. Ստոիցիզմ	135
ե. Գնոստիցիզմ	136
9. Աստվածաշնչի մեկնությունը	138
ա. Աստվածաշնչյան տեքստերի մեկնությունը	138
1. Մեկնության գիտությունը	138
2. Մեկնության ծավալումը	138
3. Սուրբ Գրքի մեկնությունը	140
4. Աստվածաշնչյան մեկնության պրակտիկան	141
բ. Աստծու Խոսքը մարդկային լեզվով	141
1. Լեզվաբանությունը	141
2. Լեզվի ծագումը	142
3. Բառի և առարկայի կապը	144
4. Ջուզորդումներ	144
5. Լեզուների խառնումը	145
6. Լեզուների խառնաշփոթից հետո	146
7. Կայուն կապ բառի և նրա մատնանշած առարկայի միջև	147
8. Մի քանի օրինակ	148
գ. Աստվածաշնչի ընթերցումը եկեղեցում	149
ա. Ինչո՞ւ և ինչպե՞ս ընթերցել Աստվածաշունչը	149
բ. Թարգմանել նշանակում է դավաճանե՞լ	151
գ. Գրական տարբեր ոճերը	152
10. Հիսուսի քարոզներն ու առակները	155
ա. Հիսուսի քարոզները	155
բ. Մեր Տիրոջ առակները	156
գ. Ի՞նչ է առակը	157
դ. Կարդալ առակները	158
ե. Առակների հետապնդած նպատակը	162
11. Նոր Կտակարանի հրաշքները	163
ա. Բուժումները Ավետարաններում և «Գործք Առաքելոց»-ում	163
բ. Հրաշքի մեկնաբանությունը	165
գ. Հրաշքն իբրև նշան	167
12. Քրիստոսի հարությունը	169
ա. Հարության իրադարձությունը	169
բ. Առաքելական Եկեղեցու հավատը հարության նկատմամբ	172
գ. Հարության ապացույցները	174
13. Ս.Պողոս. կյանքն ու գործունեությունը	178
ա. Ներածություն	178

բ. Պողոսի ակունքները	179
գ. Հավատափոխությունը	181
դ. Առաքելական կյանքը	183
1. Առաջին շրջանը. Դամասկոս և Երուսաղեմ	183
2. Քարոզչական առաջին ճանապարհորդությունը	184
3. Երուսաղեմի տիեզերաժողովը	184
4. Քարոզչական երկրորդ ճանապարհորդությունը	184
5. Քարոզչական երրորդ ճանապարհորդությունը	186
6. Բանտարկության շրջանը	187
7. Պողոսի վախճանը	187
8. Պողոսի կյանքի իրադարձությունների համառոտ ակնարկ	188
ե. Պողոսը՝ առաքյալ	188
1. Պողոսն արժեքավորում է իր առաքելությունը	188
2. «Առաքյալ» բառի իմաստը	190
զ. Պողոսի խառնվածքը	191
է. Նամակների (թղթերի) հեղինակը	192
14. Ի՞նչ է Ավետարանը	194
15. Ավետարան ըստ Մատթեոսի	197
ա. Հեղինակը	197
բ. Վավերականությունը	198
գ. Հասցեատերերը	201
դ. Ստեղծման տարեթիվն ու վայրը	202
ե. Առանձնահատկությունները	203
1. Երկու Կտակարանների շարունակականությունը	205
2. Պարտիկուլյարիզմ և ունիվերսալիզմ	205
3. Ընդհատականություն երկու Կտակարանների միջև	206
4. Երկնքի Թագավորությունը	206
5. Եկեղեցու Ավետարանը	207
6. Վարդապետության Ավետարանը	207
7. Հրաշքները Մատթեոսի Ավետարանում	209
զ. Ավետարանի կառուցվածքը	209
է. Լուրը	212
16. Ավետարան ըստ Մարկոսի	214
ա. Հեղինակը	214
բ. Վավերականությունը	216
գ. Հասցեատերերը	218
դ. Ստեղծման տարեթիվն ու վայրը	219
ե. Առանձնահատկությունները	219
զ. Կառուցվածքն ու վերլուծությունը	225
է. Լուրը	226
17. Ավետարան ըստ Ղուկասի	228
ա. Հեղինակը	228

բ. Վավերականությունը	229
գ. Հասցեատերերը	232
դ. Ստեղծման տարեթիվն ու վայրը	234
ե. Առանձնահատկությունները	235
զ. Կառուցվածքը	238
է. Լուրը	239
18. Սինօպտիկական խնդիրը	241
ա. Նմանությունները	242
բ. Տարբերությունները	243
գ. Նմանությունների ու տարբերությունների օրինակներ զուգահեռ հատվածներում	243
դ. Սինօպտիկական խնդրի պատմությունը	244
19. Ավետարան ըստ Հովհաննու	247
ա. Հեղինակը	247
բ. Վավերականությունը	249
գ. Հասցեատերերը	252
դ. Ստեղծման տարեթիվն ու վայրը	252
ե. Առանձնահատկությունները	253
1. Հովհաննու Ավետարանի և մյուս Ավետարանների նմանությունները	254
2. Տարբերությունները	255
3. Հրաշքներ Հովհաննու Ավետարանում	257
4. Հիսուսի՝ Հովհաննու Ավետարանին հատուկ քարոզները	257
զ. Լուրը	257
1. Քրիստոսաբանությունը	258
2. Քրիստոսով նոր կյանքը	259
3. Եկեղեցին ու խորհուրդները	259
է. Կառուցվածքը	261
20. Հիսուսի կյանքը	263
ա. Ծնունդը	264
բ. Մանկությունն ու պատանեկությունը	264
գ. Մկրտությունն ու փորձվելը	265
դ. Հասարակական գործունեության սկիզբը	265
ե. Եռանդուն վարդապետությունն ու գործունեությունը Գալիլիայում	266
զ. Տասներկուսի կազմավորումը	266
է. Աճող հակամարտությունը	267
ը. Վերջին շաբաթը Երուսաղեմում	268
թ. Թաղումը, հարությունը, համբարձվելը	268
ժ. Ավետարաններում և «Գործք Առաքելոց»-ում մեջբերված անձինք	269
21. Հիսուս Քրիստոսի կյանքը	273
ա. Փրկության արշալույսը	273
բ. Հովհաննեսը նախապատրաստում է մեսիայի գալուստը	274
գ. Գործունեությունը Գալիլիայում	275

դ. Հիսուսի հրատապ քարոզը հատկապես Գալիլիայից դուրս	276
ե. Հիսուսի վերջին կանխասացությունը	279
զ. Տանջանքներ	281
է. Հարությունը, հայտնություններն ու համբարձումը	282
22. «Գործք Առաքելոց»	283
ա. Հեղինակն ու վավերականությունը	283
բ. Հասցեատերերը	285
գ. Գրելու տարեթիվն ու վայրը	286
դ. Ժամանակագրությունը	286
ե. Գրքի կառուցվածքն ու բովանդակությունը	289
զ. Առանձնահատկությունները	289
1. Արտասանված խոսքերը	290
2. Ընտրված նյութերը	291
3. Պատմականությունը	291
4. Հարությունը	293
5. Սուրբ Հոգու դրսևորումն ու հրաշքները	293
6. «Գործք Առաքելոց»-ն ու Պողոսի թղթերը	294
7. Սուրբ Գիրքն ու մարգարեությունը	294
8. Հեղինակի մտադրությունը	295
9. Սուրբ Հոգին	298
23. Հռոմեացիներին ուղղված նամակը	301
ա. Ներածություն	301
բ. Հեղինակն ու վավերականությունը	302
գ. Գրելու տարեթիվն ու վայրը	302
դ. Հռոմի եկեղեցու ակունքները	303
ե. Առիթն ու նպատակը	305
զ. Հասցեատերերը	307
է. Առանձնահատկությունները՝ լեզուն, ոճը, գրական ծևը	307
ը. Լուրը	309
թ. Բովանդակության վերլուծությունը	310
24. Կորնթացիներին ուղղված երկու նամակները	314
ա. Կորնթոս քաղաքը	314
բ. Եկեղեցու հիմնումը	315
գ. Հեղինակը	316
դ. Առաջին նամակը գրելու հանգամանքներն ու տարեթիվը	316
ե. Առաջին նամակի լուրը	318
զ. Առաջին նամակի բովանդակության վերլուծությունը	319
25. Կորնթացիներին ուղղված երկրորդ նամակը	323
ա. Ի՞նչ է կատարվել երկու նամակները գրելու միջև ընկած ժամանակահատվածում	323
բ. Գրելու տարեթիվը	326
գ. Լուրը	327

	դ. Նամակի բովանդակության վերլուծությունը	328
26.	Պողոսի՝ Գաղատացիներին ուղղված նամակը	330
	ա. Հեղինակն ու այն գրելու նպատակը	330
	բ. Հասցեատերերը	333
	գ. Գրելու տարեթիվն ու վայրը	336
	դ. Նամակը գրելու հանգամանքները	336
	ե. Առանձնահատկությունները	337
	զ. Լուրը	337
	է. Բովանդակության վերլուծությունը	339
27.	Եփեսացիներին ուղղված նամակը	341
	ա. Հեղինակը	341
	բ. Գրելու հանգամանքները	343
	գ. Հասցեատերերը	344
	1. Քաղաքը	344
	2. Եկեղեցին	345
	դ. Լուրը	347
	ե. Բովանդակությունը, վերլուծությունը	348
28.	Փիլիպպացիներին ուղղված նամակը	350
	ա. Հեղինակը	350
	բ. Փիլիպպե քաղաքը	350
	գ. Փիլիպպեի եկեղեցին	353
	դ. Լուրը	355
	ե. Բովանդակության վերլուծությունը	358
29.	Կողոսացիներին ուղղված նամակը	360
	ա. Հեղինակն ու վավերականությունը	360
	բ. Վավերականության արտաքին ապացույցները	360
	գ. Գրելու հանգամանքներն ու տարեթիվը	361
	դ. Հասցեատերերը	361
	ե. Քրիստոնեության ակունքները Կողոսում	362
	զ. Կողոսյան հերետիկոսություն	364
	է. Բովանդակության վերլուծությունը	367
30.	Թեսաղոնիկեցիներին ուղղված նամակները	369
	ա. Հեղինակն ու վավերականությունը	369
	բ. Վավերականության ներքին ապացույցները	369
	գ. Հասցեատերերը	370
	դ. Գրելու հանգամանքները	371
	ե. Գրելու տարեթիվն ու վայրը	371
	զ. Երկու նամակների կարևորությունը	371
	է. Առաջին նամակի բովանդակության վերլուծությունը	375
	ը. Երկրորդ նամակի բովանդակության վերլուծությունը	377
31.	Տիմոթեոսին ուղղված երկու նամակները	378
	ա. «Հովվական» նամակների ընդհանուր ներածություն	378

1. Պատմական բնույթի դժվարություններ	379
2. Հերետիկոսություններին արված հղումներ	380
3. Եկեղեցական կազմակերպություն	380
4. Պողոսի անձը	381
5. Լեզուն և ոճը	381
բ. Վավերականության արտաքին ապացույցները	382
գ. Տարեթիվը	383
դ. Եկեղեցական կազմակերպությունը	384
ե. Առաջին նամակի հասցեատերերը	384
զ. Գրելու հանգամանքները	386
է. Երկրորդ նամակի առանձնահատկությունները	387
ը. «Հովվական» նամակների ընդհանուր գնահատականը	388
թ. Առաջին նամակի բովանդակության վերլուծությունը	389
ժ. Երկրորդ նամակի բովանդակության վերլուծությունը	391
32. Տիտոսին ուղղված նամակը	394
ա. Հեղինակն ու վավերականությունը	394
բ. Հասցեատերերն ու առանձնահատկությունները	394
գ. Գրելու հանգամանքներն ու տարեթիվը	396
դ. Լուրն ու նպատակը	397
ե. Բովանդակության վերլուծությունը	398
33. Փիլիմոնին ուղղված նամակը	400
ա. Հեղինակը	400
բ. Հասցեատերերը	400
գ. Գրելու հանգամանքներն ու նպատակը	400
դ. Առանձնահատկությունները	401
ե. Լուրը	403
զ. Բովանդակության վերլուծությունը	404
34. Եբրայեցիներին ուղղված նամակը	407
ա. Հեղինակը	407
բ. Հասցեատերերը	408
գ. Գրելու տարեթիվը	409
դ. Առանձնահատկությունները	410
ե. Նամակի լուրը	410
զ. Բովանդակության վերլուծությունը	413
է. Հավելված, հաստատականություն հավատքի մեջ	414
35. Հակոբոսի նամակը	416
ա. Հեղինակն ու վավերականությունը	416
բ. Գրելու հանգամանքները, հասցեատերերը	417
գ. Առանձնահատկությունները	418
դ. Հակոբոսն ու Պողոսը	420
ե. Լուրը	421
զ. Բովանդակության վերլուծությունը	423

36. Պետրոսի առաջին նամակը	424
ա. Հեղինակը	424
բ. Հասցեատերերը	425
գ. Գրելու վայրը	427
դ. Առանձնահատկությունները	427
ե. Լուրը	428
զ. Բովանդակություն և վերլուծություն	429
37. Պետրոսի երկրորդ նամակը	431
ա. Հեղինակն ու վավերականությունը	431
բ. Հասցեատերերը	432
գ. Առանձնահատկությունները	433
դ. Լուրը	433
ե. Բովանդակության վերլուծությունը	435
38. Հովհաննեսի երեք նամակները	435
ա. Հեղինակն ու վավերականությունը	435
բ. Գրելու հանգամանքներն ու հասցեատերերը	436
գ. Կապը Ավետարանի հետ	437
դ. Առաջին նամակի բովանդակությունը	438
ե. Լուրը	440
զ. Երկրորդ նամակի բովանդակությունը	441
է. Երրորդ նամակը	442
ը. Երեք նամակների ընդհանուր գնահատականը	443
39. Հուդայի նամակը	443
ա. Հեղինակն ու վավերականությունը	443
բ. Գրելու հանգամանքները	444
գ. Առանձնահատկությունները	445
դ. Լուրը	445
ե. Բովանդակության վերլուծությունը	447
40. «Հայտնություն»	448
ա. Հեղինակն ու վավերականությունը	448
բ. Հասցեատերերը	450
գ. Գրելու տարեթիվը	451
դ. Գրքի սիմվոլիզմը	452
ե. Մեկնության տարբեր դպրոցներ	455
զ. Գրքի վերլուծությունը	461

Գ Լ ՈՒ Խ 1

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հազարամյակներ ի վեր մարդիկ գրում են: Գրվածքների մեծ մասը՝ լինեն արձանագրություններ քարի, թե կավի, մագաղաթի, թե պապիրուսի վրա, դեռ չգրված մոռացության է մատնվում մնայուն հետք չթողնելով մարդկանց հիշողության մեջ: Եթե, բարեբախտաբար, որևէ գրվածք պահպանվում է մյուսներից ավելի երկար, ապա, իր հերթին, դա էլ է հնանում:

Հենց որ նոր հայտնագործություն է կատարվում, կամ էլ որևէ գաղափարախոսություն սկսում է տարածվել և դառնում է նորահայտ, հին տեքստերը դուրս են մղվում շրջանառությունից, ապրում իրենց դարը. դրանց թողած ազդեցությունն անցողիկ է, իսկ այն, ինչ որոշակի մնում է, հաճախ, ընդամենը, հնագիտության թանգարանում կամ էլ հնագրավաճառի ցուցափեղկում ցուցադրված մի պատառիկ է: Հազվադեպ են այն հին գրվածքները, որոնց վրա գիտնականները կիտոնարհվեն՝ փորձելով կարդալ կամ էլ վերծանել դրանց իմաստը:

Միայն մի գիրք՝ քրիստոնեական Աստվածաշունչը՝ Հին ու Նոր Կտակարանները, ահա երկու հազար տարի ի վեր մնում է զարմանալիորեն արդիական:

Երկու հազարամյակի ընթացքում ազգեր են ստեղծվել ու անհետացել, երբեմնի խոսակցական լեզուները դարձել են «մեռած», ինչպես՝ լատիներենը, դասական հունարենը, արամեերենը, սկիզբ առել և, կործանման դատապարտված, ի վերջո անհետացել են քաղաքակրթություններ, աշխարհն ու հասարակարգերը խոր ցնցումներ են ապրել ու ենթարկվել արմատական փոփոխությունների: Մինչդեռ Աստվածաշունչը մնացել է անփոփոխ՝ չվախենալով ոչ միայն ժամանակից, այլև թունոտ քննադատություններից, որոնք հազվադեպ մոլեգնությամբ համառորեն ցանկանում էին ոչնչացնել այն: Անհավատությամբ սանձազերծված քամիներին ու փոթորիկներին դեմ հանդիման՝ Աստվածաշունչը շարունակել է իր առաքելությունը և փոխանցել փրկչության լուրը:

Ո՞րն է Աստվածաշնչի գաղտնիքը: Ո՞րն է նրա հարատև արդիականության պատճառը: Այս հարցերին պատասխանելու համար մեկ բառը բավական է, գաղտնիքը նրա հաղորդած բացառիկ լուրն է: Այդ լուրն ուղղվում է մարդկային ամեն մի ճակատագրի, ինչպիսին էլ լինի պատմական դարաշրջանը, ինչպիսին էլ լինեն ժամանակները բնութագրող հանգամանքները, հասարակարգերը ցնցող քամիները, մայրցամաքների կլիման, ժողովուրդների մշակույթները, տվյալ ժամանակի պահանջները, մաշկի գույնը: Այդ լուրը վերաբերում է փրկության ավետմանը, փրկություն, որ Աստված, Հիսուս Քրիստոսով և իր Սուրբ Հոգու հաղորդությամբ պարգևում է աշխարհին: Դա խիստ անձնական լուր է, քանզի վերաբերում է ինչպես յուրաքանչյուրիս, այնպես էլ ողջ մարդկությանը: Թեման պետք է որ չափազանց հետաքրքրի մեզ: Այդ իսկ պատճառով էլ դրան պետք է վերաբերվենք հարգալից ուշադրու-

թյամբ՝ կարդալով և փորձելով հասկանալ իմաստը, որպեսզի անձնական հավատքով, զուտ աստվածային ողորմածությամբ՝ օգտվենք փրկչությունից:

Աստվածաշնչի ուսումնասիրությանն անցնելուց առաջ գոնե կարողանայինք աղոթել. «Տե՛ր, մաքրի՛ր մեր շուրթերը, որ չպղծենք քո սուրբ Խոսքը, սրբազանացրո՛ւ մեր սրտերը, որպեսզի Սուրբ Գրքի աստվածային ազդեցությամբ ամեն օր դրանք է՛լ ավելի բացվեն և տրամադրվեն ապրել քո Սուրբ Հոգով ներշնչված ու լուսավորված Խոսքով»:

Ի՞նչ է Աստվածաշունչը: Սա մեզ ուղղված ամենաառաջին հարցն է: Ոմանք կպատասխանեն՝ անտիկ աշխարհի գրական, պատմական ու հոգևոր ամենամեծ հուշարձաններից մեկը: Եվ սա ճշմարիտ է: Մյուսները կասեն՝ դա պատմական այն փաստաթուղթն է, որի վրա հենվում է քրիստոնեական հավատքը: Սա էլ է ճիշտ: Ասվածը, սակայն, բավարար չէ: Երկրի վրա միմյանց հաջորդած ու Աստվածաշնչից սնված քրիստոնյաների վաթսուն սերունդների համար այս գիրքն այնքանով է եզակի, որ չի խոսում միայն անցյալի մասին: Այդ գրքով Աստված դիմում է իրենց՝ այժմ, այսօր: Այն Աստծուց ներշնչված Խոսք է, որը նրա ներկայությունը դարձնում է կենդանի ու արդիական:

Այդ Խոսքը մեզ հասնում է գրքի տեսքով: «Աստվածաշունչ» բառը՝ հունարենի *biblion*՝ «գիրք» բառից, պարզորոշ ձևով արտահայտում է դա: Հունարենում այն հոգնակի թվով է՝ *ta biblia*, այսինքն՝ գրքեր: Միջնադարյան լատիներենում բառը դարձավ իզական սեռի եզակի թվի զոյական՝ հավանաբար մատնանշելու բոլոր գրվածքները միասին, իբրև գերազանց գիրք, որպես մարդուն ներշնչելու, նրան դեպի աստվածային Արարչի գծած ճակատագրի իրականացումը տանելու համար անհրաժեշտ միջոց, Արարիչ, որը նաև ամենագոր Փրկիչն է: Անշուշտ, նշելու համար նաև այն խոր, ներքին միասնությունը, որով գրքի բոլոր մասերը՝ «Ծննդոց»-ից մինչև «Հայտնություն», հրաշալիորեն կապվում են միմյանց: Աստվածաշունչը՝ *ta biblia*-ն, մեկ գիրք է՝ առանձին այն դարաշրջաններին հատուկ տարբեր ոճերով, որոնց ընթացքում գրվել է: Իրականում Աստվածաշունչը գրադարան է՝ *divina biblioteca*, ինչպես ասում էր սուրբ Հերոնիմոսը՝ «Վուլգատա» վերնագրով հայտնի Աստվածաշնչի թարգմանիչը:

Մտեք որևէ գրադարան, աչքի անցկացրեք հատորներով ծանրաբեռնված դարակները: Այս բաժնում պատմությանը վերաբերող գրքեր են, մյուսում՝ նշանավոր մարդկանց կենսագրություններ, մեկ այլ տեղ կգտնեք գեղարվեստական գրականություն, պոեզիայի նմուշներ, ավելի հեռվում՝ գիտական աշխատությունների կամ փիլիսոփայության վերաբերյալ ատենախոսությունների ծանրությունից կքված դարակ: Այս հատորը վերջերս է լույս տեսել, մյուսը, գուցե, բազում դարեր առաջ: Այսպիսիք են Աստվածաշունչը կազմող գրքերը, եթե դրանք քննության առնենք արտաքին տեսանկյունից:

Աստվածաշունչը բաժանվում է երկու մեծ մասի՝ Հին Կտակարանի և Նոր Կտակարանի: Առաջինը պարունակում է երեսունինը գիրք, երկրորդը՝ քսանյոթ: Հին Կտակարանը բաժանված է երեք մասի՝ տասնյոթ պատմական, հինգ բանաստեղծական, տասնյոթ մարգարեական գիրք: Նորը ևս բաղկացած է երեք մասից՝ պատմության վերաբերյալ հինգ գիրք, քսանմեկ թուղթ կամ նամակ, մարգարեական մեկ գիրք: Համառոտ խոսենք յուրաքանչյուրի մասին՝ ամփոփ ներկայացնելով թեման կամ բովանդակությունը:

Բ. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

1. Պատմական բնույթի գրքեր

«*Գիրք ծննդոց*»-ը ներկայացնում է աշխարհի ու մարդու ստեղծման, ինչպես նաև Իսրայելի ժողովրդի նախահայրերի կամ նախնիների՝ Աբրահամի, Իսահակի, Հակոբի պատմությունը: «*Ելից*»-ում (նշանակում է ելք) պատմվում է այն մասին, թե Աստված, Մովսեսի առաջնորդությամբ, Եգիպտոսից ինչպես հանեց իր ժողովրդին ու նրան տվեց տասը պատվիրանները: «*Ղևտացոց*»-ը (Ղևտացիների գիրքը) բովանդակում է Իսրայելի հասարակական ու հոգևոր կյանքը կարգավորող օրենքներ: «*Թվոց*»-ում հիշատակվում է Իսրայելի ընտանիքներից երկուսի թվակազմը անապատում գտնվելու ժամանակ: Գիրքը տալիս է նաև օրենքների մի քանի տեքստեր: «*Երկրորդ օրինաց*»-ը (Օրենքի երկրորդ հրատարակությունը) հիշեցնում է Տասը պատվիրանները՝ դրանք զարգացնելով ու լրացնելով: Ավարտվում է Մովսեսի մահվան պատմությամբ: Հրեաներն այս հինգ գրքերն անվանում էին «Օրենք»:

Չեսուի գրքում նկարագրվում է Քանանի նվաճումն ու բաժանումը: «*Ղատավորաց*»-ը ցույց է տալիս, թե իր ժողովրդի ծոցում Աստված ինչպես է ծնունդ տալիս «ղատավորներ» կոչված ազատարարների: *Հռութի գիրքը* տալիս է մովաբացի Հռութի՝ Դավիթ թագավորի նախանոր պատմությունը: *Սամուելի* երկու գրքերից առաջինում տրվում է Սամուել մարգարեի պատմությունը, նրա, ով ժողովրդին ներկայացնում է իր առաջին թագավորին՝ Սավուղին, երկրորդում նկարագրվում է Իսրայելի ազգային միասնությունը ստեղծողի՝ Դավիթ թագավորությունը: «*Թագավորաց*» երկու գրքերում պատկերվում է Սողոմոնի թագավորությունը, այնուհետև ազգի բաժանումը երկու թագավորության (Իսրայել և Հուդա) ու նրանց պատմությունը՝ ընդհուպ մինչև քայքայումը (աքսորը): «*Մնացորդաց*» երկու գրքերն անդրադառնում են Իսրայելի ողջ պատմությանը, մասնավորապես՝ Հուդայի թագավորությանը: *Եզրասի* և *Նեեմիայի* գրքերում պատմվում է Եզրասի ու Նեեմիայի ազդեցությամբ աքսորից հրեա ազգի վերադարձի ու վերականգնման մասին: *Եսթերի* գիրքը հրեա մի կնոջ պատմություն է, որը Պարսկաստանի պալատում իր ժողովրդին պաշտպանում է նրա դեմ ծրագրված բնաջնջումից:

2. Բանաստեղծությունների գրքեր

Հոբի գիրքը, որ չափածո պոեմ է, շոշափում է չարի ու տառապանքի խնդիրը: *Սաղմոսների* գիրքը ժամերգությունների և անհատական բարեպաշտության ժամանակ օգտագործվող հարյուր հիսուն օրհներգերի ժողովածու է: «*Առակաց*»-ը հորդորներով ու մաքսիմներով սովորեցնում է վախենալ Աստծուց: «*Ժողովող*»-ը ցույց է տալիս, որ, Աստծու հանդեպ ունեցած վախից ու նրա պատվիրանները կատարելուց բացի, ամեն ինչ ունայն է: «*Երգերգոց*»-ը հարսանեկան երգերի հավաքածու է:

3. Մարգարեությունների գրքեր

Եսայու գիրքը բաղկացած է միմյանցից փոքր-ինչ տարբեր երկու մասից: Առաջինում մարգարեն մատնում է ազգերի մեղքերն ու Իսրայելի ժողովրդի անհավատարմությունները: Երկրորդում կանխագուշակություն է արվում աքսորի ավարտի և մեսիական փրկչու-

թյան մասին: *Երեմիան* դատապարտում է կրոնական ձևապաշտությունը, Երուսաղեմը տեսնում է կործանված և Աստծու մի նոր դաշինք է խոստանում իր ժողովրդի հետ: *Ողբերի* գիրքն արտահայտում է հեղինակի տխրությունը ժողովրդի դժբախտությունների առիթով: *Եզեկիելը* քստրվածների մարգարեն, աղերսում է Աստծու դատաստանը. նա կանխագուշակում է Երուսաղեմի ու տաճարի վերակառուցումը: *Դանիելի* գիրքը հավատացյալներին քաջալերում է ավելի շուտ հանդուրժող լինել, քան հրաժարվել հավատքից:

Օվսեան մատնում է ժողովրդի կրկնվող անհավատարմությունները, ժողովուրդ, որին, սակայն, Աստված չի լքում: *Հովելը* նկարագրում է ազգերի վերջնական դատաստանը և բոլոր հավատացյալներին խոստանում Սուրբ Հոգու պարգևը: *Ամոսը* մատնում է կեղծավորություններն ու անօրինությունները. Աստված ոչ թե զոհեր, այլ ողորմածություն է ուզում: *Աբդիան* ավետում է Եդոմի կործանումը: *Հովնանի* գիրքը Աստծու՝ նրա ստեղծած բոլոր էակների նկատմամբ ունեցած սիրո լուսաբանումն է: *Միքիան* ավետում է մեսիական ժամանակների գալուստը: *Նաումը* նկարագրում է Նինվեի վրա փլվելիք աղետը: *Ամբակումը* խոսում է մարդու անհավատության ու վստահության դեմ Աստծու զայրույթի մասին, մարդ, որն իր հույսը դրել է Աստծու վրա: *Սոփոնիան* վեր է հանում ժողովրդի մեղավորությունը և նրան քարոզում ապաշխարանք: *Անգեն* իսրայելցիներին հորդորում է վերակառուցել Երուսաղեմի Տաճարը: *Չաքարիայի* գիրքը նկարագրում է Աստծու դատաստանը և զղջացող Իսրայելին խոստանում Երուսաղեմի վերակառուցում: *Մաղաքիան* ավետում է Տիրոջ գալստյան օրը:

Գ. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Նոր Կտակարանը կազմող քսանյոթ գրքերը, իբրև «Սուրբ գրվածքներ», քրիստոնեական Եկեղեցու կողմից միավորվեցին մ. թ. 2-րդ դարի վերջերին (ավելի ուշ՝ տես կանոնին մվիրված գլուխը): Դրանք ստացան «Նոր Ուխտի» (հունարեն՝ *kaine` diathe`ke*, որտեղ *diathe`ke`-ն*՝ նշանակում է կտակ, պայմանագիր կամ դաշինք) գրքեր անվանումը: Խոսքը վերջնական դաշինքի մասին է, որ Աստված իր Որդով՝ Հիսուս Քրիստոսով, կնքել է մարդկանց հետ: Եվ, իրոք, Հին Ուխտի (Հին Կտակարանի) գրքերը, որ քրիստոնյաները ստացել էին հրեաներից և պահել որպես ներշնչանքով գրված գրքեր, պատկերում են աստվածային այն ուխտի փուլերը, որ կնքվել է Եդեմում Ադամի հետ (Ծննդ. 1:28-29, 2:15-17), այնուհետև, Ջրհեղեղից հետո՝ Նոյի ու նրա որդիների հետ (Ծննդ. 9:1-17), Աբրահամի հետ, որը Աստծու կոչով թողեց Խառանը ու հաստատվեց Քանանում (Ծննդ. 12:1-3, 15-20) և, հատկապես, Մովսեսի հետ՝ Սինայում՝ փախչող եբրայեցիների խմբերը իրեն պատկանող ժողովուրդ դարձնելու նպատակով (Ելից 19 և հաջորդ էջերը): Այս ուխտն ավելի ուշ վերահաստատվել է Դավթի հետ (Բ. Սամ. 23)՝ հաճախ հիշատակվելով մարգարեների կողմից (Երեմ. 31:31-34): Արդ, բոլոր ուխտերն արատավորվել են մարդկանց անհնազանդությամբ: Եվ, վերջապես, Աստված Հիսուս Քրիստոսով դառնում է ոչ միայն մարդկանց պարզևած փրկության գործողության ստորագրող, այլև այդ փրկությունն իրականացնող: Այդուհետ, ամեն ինչ կատարված է. Քրիստոսի կյանքով ու մահվամբ, նրա տանջանքներով ու հարությամբ, թողություն ու հավիտենական կյանք են ստանում բոլոր նրանք, ովքեր դա խնդրում ու հավատում

են: Այսպիսին է վերջնական ու կատարյալ «Նոր Ուխտ»-ը, որի մասին խոսվում է Նոր Կտակարանում:

1. Պատմական բնույթի գրքեր

«Ավետարան» բառը նշանակում է «Բարի լուր»։ այն Հիսուս Քրիստոսի կողմից աշխարհ բերված փրկության լուրն է: «Ավետարաններ» անվամբ մատնանշում են Հիսուսի կյանքի մասին պատմող չորս պատմությունները:

Մատթեոսի Ավետարանը ցույց է տալիս, որ Քրիստոսն իսկապես մարգարեների կանխագուշակած Մեսիան է: *Մարկոսի* Ավետարանը Հիսուսի մեջ ցույց է տալիս Աստծու Որդուն: *Դուկասի* Ավետարանը Հիսուս Քրիստոսին պատկերում է իբրև բոլոր մարդկանց Փրկիչ: *Հովհաննու* Ավետարանը, որ տարբերվում է առաջին երեքից, ավելի մոտիկից է ծանոթացնում Հիսուս Քրիստոսի՝ Աստծու անմահ Որդու անձին:

«*Գործք Առաքելոց*»-ում պատմվում է Եկեղեցու ստեղծման մասին: Գրքի առաջին մասում (1-12) խոսվում է Պետրոս առաքյալի և պաղեստինյան համայնքի մասին: Երկրորդ մասը (13-28) նվիրված է Պողոս առաքյալին. նկարագրվում են նրա քարոզչական մեծ ճանապարհորդությունները:

2. Թղթեր (նամակներ)

Թղթերը (կամ նամակները) առաքյալներն ուղղել են քրիստոնեական համայնքներին կամ էլ գործընկերներին: Առաջին տասներեքը ստորագրված են Պողոսի անվամբ:

Հռոմեացիներին ուղղված թուղթը, որն ամենակարևորն է, զարգացնում է հավատքով փրկվելու մասին ուսմունքը և դրանից բխող հետևանքները: *Կորնթացիներին* ուղղված նամակներից առաջինը ցուցումներ է տալիս Եկեղեցու և հավատացյալի կյանքի համար, երկրորդը հավաստում է առաքելական միջնորդության ուժը: *Գաղատացիներին* ուղղված ուղերձը զգուշացնում է այն սխալներից, որոնք աղավաղում են *ողորմածությամբ* փրկվելու Ավետարանը: *Եփեսացիներին* ուղղված թղթում հայտարարվում է, որ Աստված կամենում է հեթանոսներին մտցնել Եկեղեցի՝ շինություն, որի անկյունաքարը Քրիստոսն է: *Փիլիպպեցիներին* ուղղված նամակում, որը գրված է բանտարկված առաքյալի կողմից, քրիստոնյաներին հորդոր է արվում ուրախանալ Քրիստոսի մեջ: *Կողոսացիներին* ուղղված թուղթը հավատացյալներին կոչ է անում սրբագործվել փառաբանված Քրիստոսի հաղորդությամբ: *Թեսաղոնիկեցիներին* ուղղված երկու նամակները հավատարմության ու զգոնության կոչ են անում Քրիստոսի մոտալուտ գալստյան սպասման մեջ: *Տիմոթեոսին* ուղղված երկու թղթերն ու *Տիտոսին* ուղղված նամակը վերաբերում են քրիստոնեական միջնորդ գործունեությանն ու Եկեղեցու ղեկավարմանը: *Փիլիմոնին* ուղղված թղթում առաքյալը միջամտում է փախած մի ստրուկի օգտին:

Եբրայեցիներին ուղղված ուղերձում շարադրվում է նոր ուխտի՝ հին նկատմամբ ունեցած առավելությունը, և Հիսուս Քրիստոսը պատկերվում է որպես մեր Քահանայապետ: *Հակոբոսի* թղթում շեշտվում է հավատքը սեփական գործերով ապացուցելու անհրաժեշտությունը: *Պետրոսի* երկու թղթերից առաջինը հույսի կոչ է անում հալածված քրիստոնյաներին, երկրորդը լույս աշխարհ է հանում կեղծ ուսմունքները և արթնացնում այս աշխարհի վերջի մա-

սին միտքը: *Չովհաննեսի* երեք նամակներում փառաբանվում է Աստու՝ մեր հանդեպ ունեցած սերը, որ դրսևորվում է Հիսուս Քրիստոսի մեջ: Դա նրա և մեր եղբայրների հանդեպ ունեցած սիրո աղբյուրն է: *Չուղայի* թուղթը զգուշացնում է ծաղրողներից ու անօրեններից:

3. Մարգարեության գիրք

Չայտնությունը տեսիլքների ձևով քաջալերում է հալածված քրիստոնյաներին՝ հաղորդելով, որ պայքարի ավարտին նրանք մասնակից են լինելու Տիրոջ վերջնական հաղթանակին:

Այս վաթսուևեց գրքերը գրվել են մոտ քառասուն հեղինակների կողմից՝ ի մի բերելով բնագրեր ու պատմական բնութի պատմություններ, բանաստեղծական երգերի ժողովածուներ, նրանց դարաշրջանի ազգային, հասարակական կամ կրոնական գործերում վճռական դեր խաղացած մարդկանց կենսագրություններ, բայց և Աստուց երես թեքած մարդուն ուղղված հավատքի ու ապաշխարանքի հուզիչ կոչեր: Ավելի քան հազար տարի Աստված օգտվել է տարբեր տարիքի և սոցիալական տարբեր պայմաններում ապրող մարդկանց ծառայությունից՝ նրանց գրչով շարադրելու իր լուրը: Ընտրվել են հարուստներ կամ աղքատներ, գիտնականներ կամ պակաս ուսյալներ, գերիշխաններ կամ կուսակալներ, քահանաներ կամ հովիվներ, նշանավոր անձինք կամ հանրությանն անծանոթ հողագործներ, ոմն նախկին մաքսավոր, Գալիլիա գավառի համեստ ձկնորսներ, կայսերական բանտերի ոմն գերի, գերությունից ազատված մի ստրուկ՝ մարդիկ, ովքեր ներշնչված ու մղված էին Աստու Սուրբ Յոզով: Նրանք գրավոր ձևով մեզ են հանձնել Աստվածաշնչի առաջին և միակ լուրը (Ա. Պետրոս 1:21): Հերոնիմոսն իրավացիորեն կարող էր Աստվածաշունչը որակել իբրև *divina bibliotheca*:

Հետաքրքիր կլիներ իմանալ, թե մանրագնին ու ճշգրիտ ինչ ձևով են այս գրքերը գրվել Բ. ա. այդ հազարամյակի և Բ.հ. առաջին դարի ընթացքում: Հիշյալ ներածությամբ կփորձենք պատասխանել Նոր Կտակարանի վերաբերյալ տրված օրինական այս հարցին: Առաջին գլխում առավել ընդհանրական ձևով խոսվում է այն մասին, թե ինչ է Աստվածաշունչն ամբողջությամբ վերցված: Մենք հետազային ենք թողնում մեզ այլ ներածության հոգսը, եթե Աստված մեզ ուժ տա ուսումնասիրելու Հին Կտակարանի գրքերը:

Դ. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Աստվածաշունչն աշխարհի ամենաշատ վաճառված գիրքն է և մրցում է համաշխարհային գրականության լավագույն գնայուն գրքերի հետ:

Քանի՞ մարդ է այն կարդում: Ըստ վերջերս կատարված վիճակագրական տվյալների՝ փարիզյան շրջանի 12 մլն. բնակիչների հազիվ հինգ տոկոսն է տեսել Աստվածաշունչը՝ չնայած գոյություն ունեցող բոլոր թարգմանություններին՝ լինեն դրանք բողոքական, Հռոմի կաթոլիկական, թե՛ վերջերս լույս տեսած՝ տիեզերական կոչված թարգմանություն:

Ընդգծենք Աստվածաշնչի ընթերցանության կարևորությունը, ինչպես նաև նրա՝ մեզ ներշնչող վստահությունը: Աստվածաշունչն այնպես, ինչպես մեզ է հասել, այն է՝ տպագրված ու հրատարակված տեքստ, լիովին արժանի մեր վստահությանը:

Քրիստոնեական Եկեղեցին, եթե հավատարիմ է Աստվածաշնչի լուրին, այն ընդունում է իբրև հենց Աստուծո հոսք: Դա այդպես է ոչ միայն Ռեֆորմացիայից ծնունդ առած Եկեղեցիների, այլև հռոմեական Եկեղեցու համար, թեև նա միաժամանակ ընդունում է նաև Ավանդույթի ուժը:

Հավանաբար դուք՝ այս տողերն ընթերցողներդ, ունեք քրիստոնեական Աստվածաշնչի՝ Հին և Նոր Կտակարանների որևէ օրինակ: Եթե դուք սերում եք բողոքական, ավետարանական ընտանիքից, ապա, անկասկած, հոգևոր կրթության ավարտին, կոնֆիրմացիայի ժամանակ, իբրև նվեր ստացել եք այս գրքի մի օրինակ: Նմանապես, եթե ձեր ամուսնությունը տոնվել է բողոքական տաճարում, արարողությունն իրականացնող հովիվը, հավանաբար, որպես հիշատակ, ձեզ տվել է այդ գրքի որևէ օրինակ: Այն ձեզ տրվել է իբրև այն հիմքի խորհրդանիշ, որի վրա դուք պետք է ստեղծեիք ձեր օջախը: Մտավախություն կա, որ այս երկու առիթներով նվիրված Աստվածաշնչերը թաքցվել են փոշու հաստ շերտով ծածկված գրադարանի դարակների հետևում: Գուցե Աստվածաշունչը համարել են այնպիսի արժեք, որին չեն համարձակվում անգամ դիպչել՝ վախենալով, որ, չինական ճենապակու պես, կարող է հանկարծ փշրվել: Մենք, իհարկե, հեգնում ենք: Նաև պատկերացնում են, որ անորոշ ինչ-որ մի վախ ունանց մղում է չբացել այն՝ ընթերցելու չափազանց անհանգստացնող այս կամ այն հատվածը:

Եթե դուք ունեք հռոմեական կաթոլիկության ավանդույթ, ապա պետք է որ լսած լինեք Վուլգատայի՝ Աստվածաշնչի լատիներեն թարգմանության մասին, որը Ք. հ. 5-րդ դարում իրականացրել է սուրբ Զերոնիմոսը: Հազիվ երեք տասնամյակ առաջ այն դեռևս հռոմեական աստիճանակարգի կողմից միակ թույլատրվածն էր. վերջերս, իրենց հերթին, արագորեն տարածվեցին հռոմեացի աստվածաբանների կողմից իրականացված տարբեր թարգմանություններ: Եվ, բացի այն, որ դուք գերադասում եք ձեր հին Աղոթագիրքը, սկսել եք թերթել նաև Սուրբ Աստվածաշնչի էջերը: Ուրախալի է, որ հռոմեացի բազմաթիվ կաթոլիկներ այլևս չեն գոհանում միայն խոստովանելով, որ այն Աստուծո հոսքն է, այլև ձեռնամուխ են լինում նրա լուրջ ուսումնասիրությանը՝ իմանալով, որ Աստվածաշունչը բողոքականների գիրք չէ՝ բողոքականության «թղթե պապը»: Վերջ դրվեց նաև այն ժամանակաշրջանին, երբ նրա էջերից կրճատում էին ամբողջական հատվածներ՝ պնդելով, թե դրանք չափազանց անպատշաճ էին հնչում երբևէ նմանօրինակ բան չլսած ականջներից:

Լինենք բողոքականներ, թե կաթոլիկներ, մեզ այլևս չի ներվի համաշխարհային գրականության այս գլուխգործոցն անտեսելու փաստը:

Ազատամտական վարչակարգ ունեցող բազմաթիվ երկրներում դժվար չէ ձեռք բերել քրիստոնեական Աստվածաշնչի որևէ օրինակ. դա այդպես չէ բռնատիրական վարչակարգ, քաղաքական կամ կրոնական բռնատիրություն ունեցող բազմաթիվ երկրներում, որտեղ Աստվածաշունչ ունենալը օրենքով պատժվող արարք է: Այսպես, եթե զբոսաշրջիկը և, անգամ, արևմտյան որևէ ձեռնարկության աշխատակիցն իրենց իրերում Աստվածաշունչ են տանում Միջին Արևելքի այնպիսի երկրներ, որտեղ հեղեղի պես հոսում են նավթային դուրրերը, այն կբռնագրավվի թմրադեղից էլ արագ: Հավանաբար այն պատճառով, որ այս գիրքը կարող է ազատագրել հոգիներ և սրտեր, որոնք մարմիններից վատթար ստրկության մեջ են: Անկասկած, ժամանակակից ավտոմատ զենքերից այն ավելի պայթուցիկ է՝ մտքերի ու գործողությունների արմատական հեղափոխություն իրականացնելու համար:

Ընդունենք հնամենի մտայնությունները փոխելու և ազատագրելու նրա արտասովոր կարողությունը, մի բան, որ ազատագրական ո՛չ մի պատերազմ, ո՛չ էլ բուռն հեղափոխություն երբևէ չէր կարող իրագործել: Բարքեր, բարոյականություն, հոգևոր բարեկեցություն, 180° շեղում անգամ սոցիալական, քաղաքական, տնտեսական և նույնիսկ գիտական ըմբռնումներում. ամեն ինչ իրականացվում է Աստվածաշնչի հետ շփման շնորհիվ, իհարկե, ոչ թե կախարդանքի ազդեցությամբ, այլ խելացի մտորելով բոլոր այն առնչությունների շուրջ, որ նա սահմանում է Աստծու և մարդու, մարդու և մարդու միջև հարաբերությունների վերաբերյալ:

Մատերիալիստական վարչակարգ ունեցող, ասենք՝ եվրոպական Արևելքի որևէ երկրում, ընդամենը մի քանի տարի առաջ, Աստվածաշունչը ներմուծելու արգելքը որոշ քրիստոնյաների մղել էր մաքսանենգության՝ զարտուղի ճանապարհներով այստեղ բերելու ու ձրի բաշխելու Աստվածաշնչի հազարավոր օրինակներ: Ուրիշ ի՞նչ կարող էին անել, երբ հոգևոր քաղցը աղաղակող էր, և որ միայն Հոգու կյանքի, ուժասպառ բարոյական գիտակցության նկատմամբ անզգա մարդիկ էին մնում խուլ ու անտարբեր: Ամեն կերպ, մեծ վտանգների գնով անհրաժեշտ էր լսելի դարձնել հույս պարզևող միակ լուրը, եթե չէին կամենում ամբողջ ժողովուրդների շնչահեղձ անել մատերիալիստական դիալեկտիկայի մշուշում, մատերիալիզմ, որն ավելի խավարամիտ ու անտանելի է, քան հեթանոսական կրոններից ամենահետիմը: Շատ հաճախ Աստվածաշնչի մի օրինակը ծառայել է բազմաթիվ մարդկանց, քանի որ այդ գրքի նկատմամբ քաղցը ավելի սուր էր զգացվում, քան որոշ պարենամթերքների պակասը: Շնորհակալ ենք Աստծուն. մատերիալիստական դրախտներից շատերը այժմ բացում են իրենց դռները՝ ազատ մուտքի իրավունք տալով Աստվածաշնչին:

Ինչ վերաբերում է ձեզ, ապա դուք արտոնություններ ունեցող հազվադեպ մարդկանցից եք, եթե ձեր երկրի գրախանութների վաճառասեղանների վրա առաջարկվում են քրիստոնեական Սուրբ գրքերի օրինակներ: Թերևս դժվարանում եք ընտրություն կատարել տրամադրության տակ եղած այս կամ այն թարգմանություններից: Ինչ վերաբերում է ինձ, ես գործառնում եմ ֆրանսերենը, չնայած այս ցուցումը դրզմատիկ խորհրդի ոչ մի միտում չունի, Louis Second տարբերակից, որը վերջերս վերանայվել ու կոչվել է Bible à la Colombe: Բառախաղ անելով, կարող եմ ասել, որ երբ վերջինս դեռևս précolumbienne¹ էր, այն ինձ նույնքան բավարար էր թվում եբրայերեն ու հունարեն բնագրերը ճշգրիտ ձևով հասկանալու համար, որքան վերջին վերանայված թարգմանությունը: Այսուհանդերձ, թվում է, որ այն հետապնդել է թարգմանության որակը լավացնելու նպատակ: Նկատի առնելով արմատներս (ժամանակակից հունարենը իմ երկու մայրենի լեզուներից մեկն է), ինչպես նաև հովվական առաքելություն և աստվածաբանություն դասավանդելս՝ ավելի հաճախ դիմում եմ Նոր Կտակարանի հունարեն բնագրին:

Աստվածաշնչի ուշադիր քննությունը թույլ կտա բացահայտել նրա միակ բովանդակության հարուստ բազմազանությունը: Այստեղ բերված են մարդկային ճակատագրի համար շատ մեծ հետաքրքրություն ներկայացնող փաստեր: Ավելի ուշ կդիտարկենք Աստվածաշունչը գրելու հանգամանքները, ինչպես նաև շարադրանքի համար օգտագործված նյու-

¹ (Ֆր.) բառացիորեն՝ նախակոլոմբյան, այսինքն՝ նախքան Bible à la Colombe կոչվելը: (Այս և հետագա ծանոթագրությունները թարգմանչինն են):

թերի լեզուների հարցը: Իմիջիայլոց, հիշենք, որ նախնական ծեռագրերն այլևս առկա չեն. շատ վաղուց անհետացել են:

Ե. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ

Ավետարանական հավատքի բոլոր կրոններն էլ հավատում են Սուրբ Գրքի (Հին և Նոր Կտակարանների վաթսուներեք գրքերի կանոնի) զորությանը: Դրանց կարծիքով, Սուրբ Գրքի զորությունը նրա ունեցած բացարձակ կարողությունն է, քանի որ այնտեղ Աստված խոսում է մեզ հետ: Սուրբ Գրքում Աստված մեզ հետ խոսում է այսօր, ինչը նա արել է անցյալում: Բոլոր նրանք, ովքեր ընթերցում կամ լսում են Աստվածաշունչը, լինեն դրանք Եկեղեցիներ, թե անհավատներ, լսում կամ կարդում են Աստծու Խոսքը: Այստեղ նշենք «Աստծու և նրա հայտնության» վերաբերյալ Ֆրանսիայի ավետարանական Եկեղեցիների 1559 թ. դավանաբանության (որը կոչվում է նաև Ռոշելի դավանաբանություն) հողվածներից մեկը:

1. Աստված

Մենք հավատում և խոստովանում ենք, որ կա ընդամենը մեկ Աստված, որը միայն մեկ պարզ էություն է՝ հոգևոր, հավերժական, անտեսանելի, անփոփոխ, անսահման, անհասկանալի, անարտահայտելի, որը կարող է անել ամեն բան, և որը շատ խելացի է, շատ բարի, շատ արդար և շատ ողորմած:

2. Հայտնություն

Աստված է իրեն ճանաչել տալիս մարդկանց: Նախ՝ իր գործերով՝ մարդկանց արարումով, պահպանմամբ ու կառավարման եղանակով և ապա, որն առավել պարզ է, իր Խոսքով, որը սկզբում հայտնվել է գուշակի կողմից, իսկ հետո գրի է առնվել գրքերում, որոնք մենք անվանում ենք Սուրբ Գիրք:

3. Սուրբ Գիրք

Ամբողջ Սուրբ Գիրքը բովանդակվում է Հին ու Նոր Կտակարանների կանոնական գրքերում, որոնցից է ահա մի հատված (դավանաբանությունն այստեղ տալիս է նույն ցուցակը, ինչ մենք՝ վերևում):

4. Սուրբ Գիրքը՝ հավատքի կանոն

Մենք ընդունում ենք, որ այս գրքերը կանոնական են, և որ դրանք մեր հավատքի շատ հստակ կանոնն են, ոչ այնքան ընդհանուր համաձայնությամբ ու Եկեղեցու թույլտվությամբ, որքան Սուրբ Հոգու վկայությամբ ու ներքին համոզմունքով, Հոգի, որով դրանք տարբերում ենք կրոնական այլ գրքերից, որոնց վրա, ինչքան էլ դրանք օգտակար լինեն, չի կարելի հիմնել հավատքի և ոչ մի հողված:

5. Սուրբ Գրքի գորությունը

Մենք կարծում ենք, որ այդ գրքերում բովանդակված խոսքի հիմքում Աստվածն է, և այն իր մեջ թաքցնում է ոչ թե մարդկանց, այլ միայն Աստծու գորությունը:

Այս խոսքը ամեն ճշմարտության կանոնն է և բովանդակում է այն ամենը, ինչ անհրաժեշտ է Աստծուն ծառայելու և մեր փրկության համար: Հետևաբար մարդկանց, անգամ հրեշտակներին, թույլատրված չէ որևէ բան ավելացնել, կրճատել կամ փոխել:

Դրանից հետևում է, որ ո՛չ հնությունը, ո՛չ սովորությունները, ո՛չ մեծ թիվը, ո՛չ մարդկային իմաստությունը, ո՛չ դիտողությունները, ո՛չ վճիռները, ո՛չ օրենքները, ո՛չ որոշումները, ո՛չ ժողովները, ո՛չ տեսիլքները, ո՛չ էլ հրաշքները չեն կարող հակադրել Սուրբ Գրքին, այլ, ընդհակառակը, ամեն ինչ պետք է քննվի, կարգավորվի և վերափոխվի ըստ նրա:

Դավանաբանությունները, ինչպես և ուղղափառ աստվածաբանության որոշ կրոններ, միշտ չէ որ գորությունը կապել են, համենայն դեպս՝ ոչ բացահայտորեն, Հիսուս Քրիստոսի գորության հետ:

Արդ, Քրիստոսը Աստծու խոսքն է: Նրա միջոցով է Աստված ստեղծել ամեն բան: Նրա միջոցով է Աստված դիմում մեղավորներին և հաշտվում նրանց հետ: Հիսուս Քրիստոսի քարոզները, ինչպես նաև նրա ողջ անձն ու միջնորդությունը Աստծու խոսքն են: Չէ՞ որ Ավետարանի բովանդակությունը Աստծու անձն է ու նրան ծառայելը: Նրանով մահացած ու հարություն առած Քրիստոսով է Աստված մեր Հաշտարարը, Փրկիչը, ինչպես որ մեր Արարիչն է:

Հին Ուխտի պատմությունը այն գործունեության պատմությունն է, որ Աստված ձեռնարկում է Քրիստոսով՝ հանում իր ժողովրդի փրկության: Առանց Քրիստոսի նկատմամբ ունեցած հավատքի՝ մենք չենք կարող հասկանալ ո՛չ Հին Ուխտի, ո՛չ էլ նրա փաստաթղթի իմաստը:

Իր մարմնացման ժամանակ Քրիստոսը կանչել է առաքյալների: Վերջիններիս նա ուղարկել է մարդկանց մոտ: Առաքյալներին ընտրելու, կանչելու և ուղարկելու այս երևույթը հիշեցնում է եբրայերենի իրավաբանական shaliach հասկացությունը¹: Ըստ ռաբբունիների՝ shaliach-ը ողջ անձով ներկայացնում է իրեն ուղարկողին: Իր իշխանությունը նա ձեռք է բերում միայն այն կանչից, որը ստանում է իբրև առաքելություն: Ինչ-որ մեկի պատվիրակը նրա լիազոր ներկայացուցիչն է: Հետևաբար, առաքյալներին իշխանությունն ու լուրը Հիսուս Քրիստոսին են. Հիսուսից ստացված ավանդույթը փոխանցվում է առաքյալների խոսքի մեջ. նրանց հաղորդած լուրի մեջ Քրիստոսն է խոսում:

Համբարձվելուց հետո Քրիստոսը շարունակում է առաքյալներ ուղարկել: Սուրբ Հոգին կօգնի նրանց՝ ավետելու Քրիստոսի խոսքը, կօգտվի նրանց քարոզից՝ մարդկանց համոզելու այն ամենում, ինչը վերաբերում է մեղքին, արդարությանն ու դատաստանին: Նա առաքյալներին ընդունակ կդարձնի խոսել Քրիստոսի անունից: Այս պատճառով էլ առաքելական խոսքը նույնքան գորեղ է ու ազդու, որքան Քրիստոսի խոսքը: Առաքյալները կքարոզեն, բայց նաև կգրեն: Նրանց գրվածքները նույն գորությունն ունեն, ինչ բանավոր խոսքը:

Առաքելական ժամանակներից ի վեր կապ գոյություն ունի փրկության և առաքելական լուրի ընթերցման կամ ունկնդրության միջև: Չէ՞ որ հարություն առած Քրիստոսն ինքն է

¹ Այս կապակցությամբ տես՝ Oscar Cullmann, «La Tradition» և H. Ridderbos, «When the Time Had Fully Come» աշխատությունները:

Ավետարանի հեղինակը՝ միաժամանակ մնալով նաև նրա առարկան: Նույն այս պատճառով էլ առաքյալները Եկեղեցու հիմքն են և դա՝ բացառապես Հին Կտակարանի մարգարեների հետ միասին, առանց այսպես կոչված առաքյալների ժառանգորդության:

Հին և Նոր Կտակարանների կանոնական գրքերում Քրիստոսն ինքն է խոսում իր Եկեղեցու հետ: Այս պատճառով էլ կարծում ենք, որ Աստծու հայտնության ժամանակն ամենակին էլ սահմանափակված չէ Տիրոջ երկրային գոյության երեսուներեք տարիներով և, անգամ, հարության ու համբարձման միջև ընկած քառասուն օրով (ըստ Կարլ Բարթի), այլ շատ ավելի ընդգրկուն է և ավարտվում է մ. թ. 80-ական կամ 90-ական թվականներին (վերջին մարգարեի մահվամբ):

Քրիստոսը հոգացել է, որպեսզի Աստվածաշնչի հեղինակները փոխանցեն այն ամենը, ինչը գալիք դարերի ընթացքում Եկեղեցին պետք է իմանար իր գոյության, վկայության և ծառայության մասին լինելու Տիրոջն իսկապես հավատարիմ Եկեղեցի: Այն ամենն, ինչ անհրաժեշտ էր Եկեղեցու ամբողջ կյանքի համար, գրվել էր նախապես: Եկեղեցին ոչ թե հարց է բարձրացնում, այլ բերում է համոզմունքներ:

Քրիստոսի մեջ, այսպիսով, Աստծու վերջնական խոսքն է: Սուրբ Գիրքը Աստծու՝ նախապես գոյություն ունեցած, մարմնացած ու փառաբանված իր Որդու մեջ հայտնվելու մասն է կազմում: Աստվածաշունչը մեզ հնարավորություն է տալիս հանդիպել Քրիստոսին, հաղորդակցվել և մնալ նրա հետ: Քրիստոսը մեզ հետ կխոսի միայն առաքյալների հաղորդած լուրով (խորհուրդներ, մկրտություններ և սուրբ Հաղորդություն, որոնք, ըստ ավետարանական աստվածաբանության, ընդամենը նեցուկ են հավատքի համար կամ էլ ողորմածության լրացուցիչ, խոսքին հնազանդ միջոցներ): Կարդալով Աստվածաշունչը՝ մենք լսում ենք նրա ձայնը, լսում ենք սփոփիչ խոսքերն ու հովվական հորդորները: Նա մնում է նույնը՝ երեկ, այսօր և հավիտյանս հավիտենից: Աստված հայտնվել է Քրիստոսի մեջ այնպես, ինչպես Աստվածաշունչն է ներկայացնում: Աստվածաշունչը հայտնությանը հակված մարդկային վկայությունը չէ, որը կարող էր դառնալ Աստծու խոսք (ըստ բարթյան աստվածաբանության): Մենք անպայմանորեն պետք է իմանանք, որ Աստվածաշնչի խոսքը Քրիստոսի խոսքն է: Հայտնության շուրջը եղած աղմկոտ վիճաբանությունները պարտական են քարոզի ոչ թե ձևին, այլ բովանդակությանը, փրկության խաչն է, որ անմտություն ու խայտառակություն է անհավատների աչքերով:

Ամփոփելու համար ասենք, որ, մեր կարծիքով, Սուրբ Գրքի գորությունը Քրիստոսինն է: Երկուսի միջև կա անբաժանելի գործառութային կապ: Այս բանի գիտակցումը թույլ կտա խուսափել Աստվածաշնչի գորության վերաբերյալ թյուրիմացությունից ու ոչ ճշգրիտ սահմանումներից: Աստվածաշնչի վկայությունն այն է, որ Քրիստոսը տալիս է իր անձի ու գործի վերաբերյալ: Սուրբ Գրքի գորությունը պետք է պարզ ու հստակ ձևով հաստատվի ամբողջ կյանքում ու նրա բոլոր բնագավառներում: Այդ գորությունն իրավացիորեն, սակայն գուցե թե չափազանց սեղմ ձևով, հաստատվել է փրկությանը վերաբերող ուսմունքի գլուխներում: Արդ, Քրիստոսի մեջ Աստծու խոսքը, որին պետք է ունկնդիր լինենք, այնպիսի խոսք է, որը վերաբերում է մեր և աշխարհի կյանքին՝ բոլոր բաների փրկության, հաշտության և վերջնական հաստատման նպատակով: Դա տեղի կունենա Քրիստոսի միջոցով՝ միայն ի փառս Հայր Աստծու:

Ձ. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ

1. Համատեղ ու անհատական ընթերցանություն

Հիսուսի օրոք Սուրբ Գիրքը կարդում էին ժողովարաններում: Հնգամատյանը բաժանված էր մասերի կամ parashas-ների՝ շաբաթօրյա ընթերցանության համար: Կարդում էին նաև մարգարեներին, որոնց գրվածքներն ընթերցանության համար բաժանված էին haftaroth-երի: Որոշ Ketubim-ներ՝ Սուրբ գրքեր կամ գրվածքներ կարդացվում էին հրեական տոների առթիվ: Բնագիրը կարդում էին եբրայերենով, այնուհետև թարգմանում էին արամերեն և մեկնաբանում: Եթե դա Մարգարեների գրքերից վերցված հատված էր, ապա պատիվ էին անում ներկա գտնվող որևէ այցելուի՝ խնդրելով ընթերցել այն: Նա տեքստը ընթերցում էր կանգնած (դա ընթերցողի դիրքն էր), այնուհետև նստում էր (դա դոկտորի դիրքն էր)՝ այն մեկնաբանելու համար: Տեսարանը հրաշալիորեն է ներկայացված Դուկասի Ավետարանում (4:16-27): Հիսուսը բազմիցս առիթ ունեցավ ընթերցելու և ուսուցանելու ժողովարաններում:

Եկեղեցին պահպանեց Սուրբ գրվածքները հրապարակավ ընթերցելու սովորույթը: Ընթերցողի (հունարեն՝ anagnostes) միջնորդության մասին խոսվում է Հովհաննու «Հայտնության»¹ մեջ: Ընթերցանությունը (anagnosis), որի համար հորդորում են Տիմոթեոսին (Ա.Տիմոթ. 4:13), ոչ թե մասնավոր, այլ հրապարակային է եկեղեցում՝ (մարգարեի) հորդորի և (դոկտորի) վարպետության միջնորդություն:

Մեր թվարկության սկզբի միջերկրական աշխարհի կրոններում միայն ժողովարանն ու քրիստոնեական ժողովն ունեին ճառաբեմ (cathedras), որտեղից կարդում էին սուրբ բնագրերը: Առաջին եկեղեցիներում, հռոմեացի դատավորների ճառաբեմերի պես, այն տեղադրվեց ապսիդի խորքում: Ժողովարաններում, գոնե Թալմուդի ժամանակ, ժողովի մեջտեղում բեմահարթակն էր՝ գրակալով (analogeion): Ավելի ուշ, եկեղեցիներում ընթերցանությունը կատարվում էր տրիբունայի (հունարեն anabainein՝ «ցույց տալ») բարձունքից: Տրիբունայի մասին առաջին հիշատակությունն արված է Liber pontificalis-ում (555-559): Ընթերցողը հաճախ լինում էր միջնորդ գործունեության պատրաստվող երիտասարդ քրիստոնյա:

Սուրբ գրվածքների ընթերցանության միջնորդության մասին ամենաինն նշումներից հիշենք այն, որ արել է Հուստինոս Վկան (Ջատագովություն¹ 1, 67): Նա խոսում է կիրակնօրյա հավաքույթի ժամանակ «առաքյալների (ավետարանիչների) հուշերի» ընթերցանության, ինչպես նաև Տերտուլիանոսի (De praescrptionibus, 37) կողմից արվածների մասին. նա ասում է, որ եկեղեցին օրենքի ընթերցանությունը զուգակցում է առաքյալների ու ավետարանիչների գրվածքների ընթերցանությանը՝ սնունդ տալու իր հավատքին:

Եկեղեցում աստվածաշունչ ամբողջական գրքեր ընթերցելու սովորույթն աստիճանաբար վերացավ: Ընթերցում են միայն քարոզին վերաբերող քիչ թե շատ երկար հատվածների ժամանակ: Ընթերցանությունն այլևս ինքնանպատակ չէ, մի բան, որ շատ ափսոսալի է: Եկեղեցում կամ եկեղեցու կողմից Աստվածաշնչի անհատական կամ համատեղ ընթերցանությունը խրախուսելը հրաշալի բան էր: Կապված այն բանի հետ, որ, փաստորեն, բողոքական շրջանակներում անհատական ընթերցանություն հաճախ չի կայացել, և որ ժողո-

¹ Justin le Martyr, «Apologie de la religion chre'tienne».

վում հետևողականորեն համատեղ ընթերցանություն այլևս չի կատարվում, անգիտություն-
նր մեծանում է: Ընդամին, համատեղ ընթերցանությունն էական է Եկեղեցու կյանքի համար:
Դրա դադարեցմամբ Եկեղեցու հոգևոր կյանքը կրճատվել է:

Երբ քննության ենք առնում նախախնամությամբ լի այն միջոցները, որ Աստված կիրա-
ռում է Սուրբ Գրքերը պահելու համար, տեսնում ենք, որ համատեղ ընթերցանությունը
գլխավոր դեր է խաղում: Դրանով Եկեղեցին ընտելանում է բնագրին այն աստիճան, որ
այլևս չի հանդուրժում որևէ փոփոխություն: Այդժամ հասկանալի է դառնում, թե Օգոստի-
նոսն ինչու էր թշնամաբար տրամադրված Յերոնիմոսի կողմից իրականացված նոր թարգ-
մանության նկատմամբ. վերջինիս նա մեղադրում էր Եկեղեցին պղտորելու գործում: Եթե
Եկեղեցին հրապարակային ընթերցանությամբ կապված չէ սուրբ տեքստին, ապա չի կարե-
լի ասել, որ նա այն տիրապետում է կոլեկտիվ ու կենդանի ձևով: Աստվածաշնչի որևէ օրի-
նակ ունենալն ամենևին էլ չի նշանակում, թե այն տիրապետում են մահ հոգևոր ձևով:
Առանց անհատական ընթերցանության ու խորհրդածության, քրիստոնյա ժողովուրդն այլևս
չի ընկալում բնագիր թափանցած, ակամա կամ դիտավորյալ արված փոփոխությունները:
Իրականում նա այլևս չունի այն գիրքը, որը դառնում է «հոգևորականների» և, անգամ,
որոշ մասնագետների սեփականությունը: Այսօր շատերն են Աստվածաշունչ գնում, սա-
կայն հավաստի չէ, թե քրիստոնյաներն ու Եկեղեցին Սուրբ Գրքերին, իրոք, նույնքան հնուտ
են տիրապետում, որքան առաջին դարերում:

Պողոսի բնագրերից մեկում խոսվում է գրքի ընթերցման նպատակի մասին: Առաքյալը
դիմում է իր երիտասարդ բարեկամ Տիմոթեոսին և պնդում, որ ընթերցանությունը և, հատ-
կապես, Սուրբ գրվածքների համատեղ ընթերցանությունը փրկչական ազդեցություն ունի
(Ա. Տիմ. 3:14-17): Մարդու մտածողությունը ներծծված է իրեն շրջապատող մտածողությամբ,
և դա նպաստում է նրա մտայնության ձևավորմանը: Քանզի նրա մտածողությունը սնվում է
աստվածաշնչյան բնույթի բնագրերից, արտահայտություններից, պատկերներից ու պատ-
մություններից, ապա դրանք նրա մեջ կծնավորեն քրիստոնեական մտայնություն, որի վրա
էլ կհենվեն բոլոր այն արժեքավոր վճիռները, որ նա առիթ կունենա կայացնել: Քրիստո-
նեական ընդհանուր այս մտայնության ամենահուսալի հիմքը Սուրբ գրքերի համատեղ
իմացությունն է: Դրա հսկողությունը մասնավորապես Եկեղեցու գործն է՝ ընթերցել Սուրբ
Գիրքը և այն ընթերցել տալ: Խելամիտ կլինի մասնավոր ընթերցանությունը չդարձնել պատ-
ճառ՝ վերացնելու համատեղ ընթերցանության սովորույթը:

Անհատական ընթերցանությունը ընդհանրացված չէր առաքելական Եկեղեցում, քան-
զի այդ ժամանակ ձեռագրերը հազվադեպ էին, իսկ կարդալու արվեստը՝ քիչ տարածված:
II դարի վերջին Իրինեոսը խոսում է այնպիսի Եկեղեցիների մասին, որոնք դեռևս Սուրբ
Գիրք չունեն, մի բան, որ չի նշանակում, թե դրանք այն չէին ճանաչում: Խոսքը բացատրու-
թյունների մասին էր, սակայն դա ապացուցում է, որ անհատապես Սուրբ Գրքեր ունենալը
Աստծու ծրագրի էական տարր չէ, այլապես հասկանալի չէր լինի, թե ինչու մարմնացումը,
որի իրականացումը դարեր շարունակ հետաձգվում էր, տեղի չէր ունեցել գրատպության
գյուտից հետո:

Սուրբ գրվածքների անհատական ընթերցանությունը երկու հիմնական առավելություն
ունի: Նախ՝ այն գալիս է միանալու համատեղ ընթերցանությանը՝ Աստվածաշնչի հետ

քրիստոնյայի շփումը դարձնելով ավելի հաճախակի ու այն երկարած գելով, և, բացի այդ, հեշտացնում է մտախորհումն ու ուսումնասիրության գործը: Հետևաբար, առաջին նպատակն, իրոք, բնագրին այնպես ընտելանալն է, որպեսզի մտքերը, արտահայտությունները, պատկերներն ու պատմությունները տեղ գրավեն քրիստոնյայի մտավոր աշխարհում, որպես իշխող տարր՝ երկրորդ պլան մղելով և անգամ չեղյալ համարելով այն մտքերը, արտահայտությունները, պատկերներն ու պատմությունները, որ նա ստացել է շրջապատող աշխարհից և որոնցից չի կարող փախչել: Անշուշտ, Աստվածաշնչին առնչվելն երիտասարդ տարիքից, այն տարիքից, երբ մշակվում է մարդու մտայնությունը, շնորհ է: Նրանք, ովքեր չեն օգտվել դրանից, կարող են հատուցում գտնել՝ մշտապես դիմելով Սուրբ Գրքին: Այնուհանդերձ, ցավալի է, որ ավետարանական միջավայրերում Սուրբ գրվածքների ուսումնասիրությունը չի դիտվում իբրև երեխաների մեջ քրիստոնեական մտայնություն ձևավորող գլխավոր տարր:

Երկրորդ նպատակն արդեն իսկ ներառված է առաջինում. դա հոգևոր դատողության, իմաստության, ճանաչողության ձևավորումն է, որ իր մեջ ամփոփում է մտախորհումն ու ուսումնասիրությունը: Մտախորհման և ուսումնասիրության գործն ավելի հազվադեպ է, քան պարզ ընթերցանությանը: Ամենից հաճախ ընթերցողը գոհանում է շրջապատի կարծիքներով կամ էլ նրանով, ինչը կարող է լսել Եկեղեցու քարոզներում: Մտածողության այս կրավորականությունը դեմ է հոգևոր կյանքի ամեն տեսակ բնական աճի և նպաստում է աղանդների ու բոլոր սխալների առաջացմանը: Ահա թե ինչու Աստվածաշունչն ընթերցելու առաջարկն արդյունք չէր տա, եթե այն չմղեր անհրաժեշտ ուսումնասիրության ու մտախորհման և չօժանդակեր դրանց:

Այս կապակցությամբ տրվելիք խորհուրդները հիմնականում չեն տարբերվում նրանց ուղղված խորհուրդներից, ովքեր պատրաստվում են միջնորդ գործունեության: Տարբերությունը ավել կամ պակաս մեկ հարցի մեջ է. այն հիմնվում է մտախորհմանը նվիրված ժամանակների տարբերությունների, օգնությունների (ուսուցիչներ կամ գրքեր), անհատական հատկանիշների վրա: Այստեղ կտրվեն միայն ընդհանուր խորհուրդներ: Աստվածաշնչի ընթերցանության և ուսումնասիրության վերաբերյալ գրվել են ոչ համարժեք գրքեր: Կնշենք դրանցից մի քանիսը միայն՝ առանց երաշխավորելու իբրև Ավետարանի խոսք:

2. Ընդհանուր խորհուրդներ

Աստվածաշունչը պետք է ընթերցել որպես Քրիստոսի աշակերտ: Քրիստոնյան Աստվածաշնչի առջև չպետք է տեղավորվի իբրև հին բնագիրն ուսումնասիրել ցանկացող գիտնական, այլ որպես մեկը, ով չգիտե և փորձում է հասկանալ աստվածային Տիրոջ ուսմունքը: Դա իր մեջ պարունակում է մտավոր հազվագյուտ հնագանդություն, ինչպես և շրջապատողություն՝ Աստվածաշնչի ընթերցանության և ուսումնասիրության առիթով չլսելու մարդու-ուսուցիչներին, նրանց, ովքեր իրենց մեկնաբանություններով ստվերում են Աստծու մտածողությունը:

Պետք է ընթերցել իբրև Քրիստոսի մարմնի անդամ: Քրիստոնյան «ներառված է» Եկեղեցու կազմում: Նրա հոգևոր կյանքը մարմնից դուրս չի կարող բնական ձևով զարգանալ: Յուրազնալ առանց օգնության այն միջոցների, որ Տերը կամեցել է, նույնն է, թե հակադրվել

նրա կամքին և գոռոզամտորեն կամ հիմարաբար հայտնվել ողորմածության կանոնավոր ուղիներից դուրս: Աստվածաշունչ գնելն ու այն ընթերցելը քրիստոնյային թույլ չեն տալիս թուլացնել Եկեղեցու հետ նրանց միացնող կապերը: Ընդհակառակը՝ Աստվածաշունչն ինքն է նրան տանում Եկեղեցի:

Պետք է ընթերցել ամեն ինչ, սակայն ոչ նույնական ձևով: Կարդալ Յին Կտակարանը՝ առանց Նորը կարդալու, ինչպես հրեաներն են անում, կամ էլ Նորը կարդալ առանց Յնի, ինչպես վարվում են վատ ներշնչված որոշ քրիստոնյաներ կամ էլ նրանք, ովքեր գոհանում են միայն սիրած որևէ գրքի կամ գլխի, չափածո մի քանի տողի կամ տողերի ընթերցանությամբ, նշանակում է անխուսափելիորեն խեղաթյուրել աստվածաշնչյան հայտնության հեռանկարները, կանգնել Սուրբ Գրքերը թյուր մեկնաբանելու վտանգի առջև: Բայց և այնպես, լավ չէ ընթերցել միակերպ՝ առանց հաշվի առնելու այս կամ այն բնագրի միջև գոյություն ունեցող տարբերությունները: Կան աստվածաշնչյան անհամաձայնություններ, որոնք մեզ ավելի մոտ են, ավելի անմիջականորեն յուրացվող, և որոնց պետք է ուշադրություն դարձնել:

Պետք է շատ կարդալ և, հատկապես, լավ կարդալ: Քիչ կարդալը հազիվ թե օգտակար լինի: Վատ կարդալը շատ կարդալու դեպքում ժամանակի կորուստ կլինի: Լավ կարդալու համար պետք է կարդալ դանդաղ՝ ջանալով հասկանալ ու մտապահել: Խոսքը բնագրերը հիշողության մեջ պահելը չէ միայն, այլ Աստծու մտածողությունը յուրացնելն ու հիշողության մեջ, սրտում ու կյանքում պահպանելը:

Ուստի պետք է ընթերցել՝ սնունդ տալու սեփական հավատքին, հույսին ու գթասրտությանը. Սուրբ գրքերի ընթերցանությունը պետք է նպաստի կյանքին: Դրա նպատակը ո՛չ հիշողությունը խճողելը, ո՛չ էլ այն փոքրիկ փառասիրությանը հագուրդ տալն է, որի էությունը աստվածաշնչյան բնագրերից թարս ու շիտակ մեջբերումներ կատարելն է: Ընթերցում են իմանալու համար, և իմանում են՝ ապրելու Քրիստոսի կյանքով, որը ներդաշնակորեն կարող է զարգանալ միայն լույսի մեջ: Մարդը չի ապրում միայն հացիվ:

Պետք է կարդալ ազնիվ տեքստ: Մենք ազնիվ տեքստ ենք անվանում այն թարգմանությունը, որը չի քողարկում բնագիրը, այլ հնարավորություն է տալիս միանալու նրան: Կան թարգմանություններ, որոնք ազնիվ չեն, քանզի բառացի են ու ոչ ճշգրիտ: Երբ թարգմանում են օրենքի որևէ տեքստ, որևէ պայմանագիր, հետևում են, որպեսզի թարգմանությունը շատ ճշգրիտ ներկայացնի բնագիրը: Արդ, աստվածաշնչյան բնագիրը անսահմանորեն ավելի լուրջ է, քան մարդկային ցանկացած օրենք կամ հասարակական պայմանագիր: Թարգմանությունն ազնիվ չէ, երբ այն արտահայտում է թարգմանչի անձնական ըմբռումները՝ անգամ խեղաթյուրելով բնագիրը: Ազնիվ չէ նաև այն դեպքում, երբ թաքցնում է սեփական սահմանները՝ ոչ հավաստին ներկայացնելով իբրև հավաստի: Թարգմանություններից պետք է օգտվել մեծ զգուշավորությամբ և, նախքան իրական արժեքի մասին տեղեկանալը, դրանց վրա չկառուցել տեսություններ: Թարգմանությունների վերահսկողությունը Եկեղեցու պարտքն է: Ցավալի է նշել, թե չափազանց մեծ թիվ կազմող Եկեղեցիներ ինչպիսի անտարբերությամբ են վերաբերվում այն բնագրին առնչվող հարցերին, որ ընթերցում կամ ընթերցել են տալիս:

Պետք է կարողանալ օգտվել Եկեղեցու ազդեցությունը երկարաձգող և ուսումնասիրությունն ու մտախորհումը հեշտացնող միջոցներից: Ինչո՞ւ չօգտվել որոշ հրատարակություն-

ներում հանդիպող զուգահեռներից և անգամ մեկնաբանություններից, եթե դրանք լավ են արված: Չմոռանանք, որ խոսքը միայն (ուսուցման) միջոցների մասին է, և որ Ուսուցիչը Տերն է:

Պետք է կարդալ աղոթելով: Հոգին է, որ առաջնորդում է մեզ՝ օգտվելով ինչպես նյութեղեն միջոցներից, այնպես էլ Եկեղեցու, և որը կարող է օգնել մեզ՝ զգալու ու հասկանալու Աստծու մտածողությունը:

3. Ավելի մասնակի խորհուրդներ

Հնարավորության սահմաններում կարևոր է ընթերցանությունը լուսավորել աշխարհագրական, պատմական և հնագիտական բավարար իմացությամբ:

Պետք է ամեն բան թողնել իր տեղում: Հին Կտակարանը չպետք է տեղավորել նույն հարթության վրա, ինչ՝ Նորը: Խոսքը տվյալ գրքի առանձնահատուկ բնույթը պահպանելու մասին է, տեքստի մեջ նշմարել «իմաստային միավորները», այսինքն՝ դեպի գլխավոր միտքն ուղղված, մեկ ամբողջություն կազմող հատվածները: Առանձին տեքստը իմաստային միավոր չէ, այն համատեքստից անջատելը սխալվելու լավ միջոց է:

Պետք է ջանալ գրքի մեջ հայտնաբերել իշխող գաղափարները, որ կարելի է գտնել Աստվածաշնչի ողջ շարադրանքի մեջ, ինչպես, ասենք, մեղքի, ողորմածության, արդարության և այլն, կայուն հասկացությունները, ուսումնասիրել թեմաները՝ այն գաղափարները կամ պատկերները, որ կարելի է գտնել տեքստի ամբողջ երկայնքով. լեյտմոտիվներ, որոնք հայտնվել են տարբեր հարթությունների վրա, և որոնց միջով անցնում է մտքի մի հոսանք, որը միտվում է դեպի թեմայի կատարյալ իրականացում Քրիստոսի մեջ և նրա գործում:

Պետք է ձգտել հասկանալ Աստծու ծրագիրը, որի հեռանկարը Քրիստոսն է ու իր գործը և, մասնավորապես, Քրիստոս-Եկեղեցի զույգի վերջնական կայացումը:

Պետք է կարդալ, որպեսզի հասկանալ առանձին վերցրած գրքի, գաղափարի, պատկերի, բառի իմաստը: Բառարանի ուսումնասիրությունը շատ կարևոր է, սակայն համարյա անհնարին՝ ելնելով ֆրանսերենի համաձայնություններից: Պատկերների ուսումնասիրությունը նույնքան կարևոր է, որքան բառերինը: Այն ավելի դժվար գործ է:

Կարելի է ընթերցել համառոտ ձևով, սակայն կարևոր է կարողանալ նշել աչքի ընկնող այն հատվածները, որոնցում հոգևոր դաս է նկատվում: Լավ կլինի գրավոր պահպանել Սուրբ գրվածքների ընթերցանության ժամանակ ձեռք բերած գիտելիքներն ու շնորհները:

Չի կարելի կարդալ մեկ ընթերցանությամբ ամեն ինչ հայտնաբերելու մտադրությամբ: Պետք է կարողանալ կրճատել ակնկալությունները և կարդալ որոշակի մտադրությամբ՝ գտնելու մի գաղափար, հասկանալու ուսմունքի մի կետ, հոգևոր սնունդ ստանալու, դիտելու և պաշտելու, գտնելու Հոգու մխիթարություն:

Պետք է կարդալ ու վերստին կարդալ: Աստվածաշունչը նախատեսված է վերընթերցելու համար: Այդ վերընթերցանությունը խիստ առանձնահատուկ հատկություններ ունի: Տվյալ տեքստը երկու անգամ նույն ձևով չեն կարդում: Երկրորդ ընթերցանության ժամանակ մտցվում են ուրիշ ընթերցանությունների ժամանակ ձեռք բերված այլ մտքեր: Այսպիսով, աննկատելիորեն մտքում ձևավորվում է կենդանի համադրություն, տեքստերը նոր բներանգ են ստանում, որը զալիս է աստիճանաբար յուրացված ենթատեքստից:

Լավ կլինի հիշել բնագրերը, սակայն դրանց ընտրությունը պետք է լավ կատարվի: Հարկ է խուսափել հատկապես որոշ աղանդների կողմից չափազանց հաճախ կիրառվող մի փորձից, որի էությունը առանձին - առանձին բնագրերի ցուցակներ կազմելն է՝ հետագայում մուներտկման նպատակով օգտագործելու համար: Աստվածաշունչը չի տրվել միայն ու միայն dicta probantia մատակարարելու համար, այն ապացույցներ տալու համար նախատեսված ժողովածու է: Ընդամեն, առանձնացված այս բնագրերը կարող են կորցնել աստվածաշնչյան համատեքստի հետ ունեցած իմաստը և ձեռք բերել մեկ այլ իմաստ՝ կապված արհեստական հավաքածուի հետ, որի մեջ մտցվել են, և ոգու հետ, որով ներշնչված են: Այսպես են ստեղծվում աղանդներն ու հերետիկոսությունները:

Է. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԱՅԺՄԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աստվածաշունչը, ինչպես արդեն ընդունել ենք, պատմական նմանօրինակը չունեցող հոգևոր բնագրերի ժողովածու է: Մենք գիտենք, թե որն է նրա հիմքը, վերձանում ենք երբայերեն կամ հունարեն բնագրերի բառերը, ճշգրտում ստեղծման տարեթիվը, ինչպես նաև վայրերը, հանդիպում նրա հեղինակներին՝ իբրև կենդանի անձանց, և նրա մասին ունենք մի շարք այլ տեղեկություններ ևս: Ջուտ պատմական տեսանկյունից՝ կարող ենք առանց վարանելու հավաստել Աստվածաշունչը կազմող փաստաթղթերի, նրա պատմական հյուսվածքը հանդիսացող իրադարձությունների ու փաստերի արժանահավատությունը: Գրական տեսակետից՝ նրանում անփոփոխ մտքերն ու խոսքերն այնպիսի բարձր արժանիքներ ունեն, որ կրոնական ոչ մի ժողովածու չէր համարձակվի գերազանցել: Միայն չարամտությամբ կարող էին այն անվանարկել կամ էլ կասկածի տակ առնել նրա պատմականությունը:

Այսուամենայնիվ, բավական կլինե՞ր արդյոք ընդունել բացառիկ այդ գրքի անհերքելի պատմականությունը և խոստովանել մյուս բոլոր արժեքները գերազանցող հոգևոր արժեքը: Աստվածաշունչը մնում է որպես կրոնական անցյալի գլուխգործո՞ց, թե՞, իր իսկ բովանդակությամբ, մշտապես նորացվող այժմեականություն է վայելում: Քրիստոնեական եկեղեցու համար կասկած չկա, որ իր անցյալը մեզ բնավ չէր հետաքրքրի, եթե չունենար արդիական արժեք՝ մոտիկից առնչվելով ներկա իրականությանը, այսօրվա մեր գոյությանը, այն խնդիրներին, որոնց բախվում ենք, հարցերին, որ դնում ենք մեր առջև կամ էլ տալիս այն ամենի շուրջ, ինչն էական է կյանքում:

Իրոք, Աստվածաշնչի այժմեականությունը չի սահմանափակվում միայն մարդու կամ ընդհանրապես ամբողջ մարդկության հետ կապված հնարավոր բոլոր իրավիճակների նկարագրությամբ: Այն մատնանշում է աշխարհ եկող ամեն մարդու իսկական ճակատագիրը: Նրա լուրը, չնայած կապված է պատմական հանգամանքներին, հասարակական շրջանակին, տնտեսական պայմաններին, կրոնի տիպերին և իր գրվելու դարաշրջանի քաղաքական կառավարման հեղինակներին, վերաբերում է Աստծու առաջ մարդու ողջ ճակատագրին: Մարդու կողմից ստեղծված բոլոր առասպելաբանություններին Աստվածաշունչը հակադրում է առակը, որը ապակողմնորոշիչ ճառերի խառնադմուկի մեջ, անէություն հաղորդող և հուսահատությամբ վարակող լուրերի լաբիրինթոսում իմաստավորում և հաղորդում է փրկու-

թյան լուրը: «Քո խոսքը ճրագ է իմ աչքերի և լույս է իմ ճանապարհի համար», - գրում է 119-րդ սաղմոսի հեղինակը Հին Կտակարանում: Ինչ վերաբերում է Նոր Կտակարանին, ապա Պողոս առաքյալի գրչի տակ Աստվածաշնչի այժմեականության մասին կարդում ենք այնպես, ինչպես քրիստոնեական Եկեղեցին է ընդունում և մեկնաբանում. «Ամեն գիրք Աստվածաշունչ է և օգտակար է վարդապետության համար ... որպեսզի Աստծու մարդը կատարյալ լինի» (Բ. Տիմ. 3:16):

Այժմ նշենք Աստվածաշնչի արտասովոր այժմեականությունը հաստատող մի քանի վայրեր, որտեղ այն ընկալվում է մեր հավատքի աչքերով:

Ամենագերագանց վայրը *քրիստոնեական Եկեղեցին է*: Նրա ողջ գործունեության, ինչպես նաև գոյության հիմքը Աստվածաշունչն է: Եկեղեցու ժամերգությունը կատարվում է նրա շուրջը: Բողոքական տաճարում առաջին անգամ ժամերգությանը մասնակցող մարդկանց կզարմացնի մի մանրամասն՝ կենտրոնում տեղադրված ճառաբեմը, մինչդեռ ավագանն ու հաղորդության սեղանը եզրերին են: Այս դիրքը պարզորոշ ձևով ցույց է տալիս, որ Ավետարանի հայտարարումը նման ժամերգության կենտրոնում է: Քարոզն, ուստի, ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ Աստվածաշնչի բովանդակության բացատրություն և շարադրանք, բովանդակություն, որը տարածվում է ինչպես առանձին հավատացյալի ու Եկեղեցու, այնպես էլ ընդհանուր առմամբ աշխարհի ներկա իրավիճակի վրա:

Երկու խորհուրդներն ընդամենը ողորմածության տեսանելի միջոցներ են՝ ամրապնդելու Աստվածաշնչից քաղված գրավոր կամ բանավոր լուրը: Աստվածաշնչի նկատմամբ դրանք մնում են երկրորդական: Բացի այդ՝ աղոթքը նույնպես այնպիսի խոսք է, որի թե՛ ներշնչանքը, թե՛ բովանդակությունը քաղված են Աստվածաշնչից: Աղոթքը երբեք չի հորինվում մարդկային բանականությամբ կամ զգացմունքներով, այլ ստեղծվում է Աստծու Խոսքով սնվող, վերածնված մարդու հոգով: Տվյալ դեպքում, խոսքը երգերի ու օրհներգերի մասին է, եթե դրանք վիճելի ճաշակի և կասկածելի ներշնչանքի արդյունք չեն: Դրանք հենց աստվածաշունչ խոսքեր են, որ քրիստոնյա ժողովուրդը երգում է՝ ի նշան երախտագիտության կամ պաշտամունքի, խնդրանքների կամ հովանավորության: Խոսքը մասնավորապես հուգենոտյան սաղմոսագրքի՝ կրոնական այն հրաշալի երաժշտական նմուշների մասին է, որոնք իրենց գոյությամբ պարտական են Քլեման Մարոյի կամ Լուի Բուրժուայի կողմից XVI դարում իրականացված տաղաչափությանը:

Աստծու թողության ու մեղավոր մարդու՝ հավիտենական փրկության վստահ լինելու մասին հայտարարված է Աստվածաշնչի խոսքերում: Քրիստոնեական դավանաբանությունը՝ առաքյալների Հավատո հանգանակը նույնպես Աստվածաշնչում Աստծու հայտնության հարուստ բովանդակության հավատարիմ մեկնիչն է: Անգամ այն զոհը, որ կիրակնօրյա պատարագի ժամանակ հավատացյալները մատուցում են Աստծուն, ոչ այնքան մարդու բնածին սրտի առատաձեռնության արդյունք է, որքան հնագանդություն՝ մեր մարմիններն ու ունեցվածքը Ազատարար Աստծուն նվիրաբերելու աստվածաշնչյան հորդորին:

Տեսնենք նաև չափահասների աստվածաշնչյան ուսումնասիրության կամ երեխաների կիրակնօրյա դպրոցների դասարանները: Իմանալ, թե ինչ է ասում Աստվածաշունչը, հասկանալ նրա պատմության իմաստը և ըմբռնել վարդապետությունների արժեքը՝ ահա կատեխիզիստական կամ աստվածաշնչյան ուսումնառության այս դասարանների գոյության հիմքը:

Քննենք նաև աստվածաբանական դասընթացները: Դրանց առաքելությունը Խոսքի միջնորդներ, հովիվներ, ավետարանիչներ, ասվածաբանության պրոֆեսորներ պատրաստելն է: Ի՞նչ են անում նրանք: Տարբեր գիտաճյուղերում մեկնաբանելով խորացնում են Սուրբ Գրքի իմացությունը, իսկ քարոզչական մեթոդներով ու աստվածաշնչյան բարոյականության սկզբունքներով բանասիրությունը, բիբլիական համակարգված աստվածաբանությունը: Հենց այսպիսին պետք է մնա աստվածաբանական դպրոցի առաքելությունը: Այն նախ պետք է լինի Աստվածաշնչի դպրոց:

Սակայն Եկեղեցի – հասարակությունից դուրս հավատացյալն անհատապես կամ ընտանիքի հետ ընթերցում է Աստվածաշունչն ու խորհրդածում նրա շուրջ՝ իր ամենօրյա հավատքով կյանքի համար: Նա դրանից ստանում է սնունդ և ուժ, ներշնչանք ու լույս, վստահելի ուսուցում, քրիստոսով նոր կյանքի զարգացող պատկերացում:

Հասարակական և մշակութային, ինչպես նաև հոգևոր կյանքում կամ էլ հավատացյալի անձնական հավատքում, այժմեականությունը հաստատվելու համար շատ փաստարկների կարիք չունի: Աստվածաշունչը Աստծու թագավորության գիրքն է: Եթե այդ թագավորությունը պատկերացնենք ընդարձակ շրջանի տեսքով, ապա կենտրոնում կտեղադրենք Եկեղեցին՝ իր ճառագայթներով կամ համակենտրոն շրջաններով, որոնք կկոչենք ինտենսիվ: Ինտենսիվ շրջանից այն կողմ կգծենք էքստենսիվ կոչված ճառագայթներ, որոնք ընդգրկում են մարդկային գործունեության բոլոր բնագավառներն ու նրա կյանքի բոլոր ոլորտները: Որոշ քրիստոնյաներ Աստվածաշնչի այժմեականությունը սահմանափակում են միայն ինտենսիվ շրջաններով: Աստվածաշնչի ճշգրիտ քննությունը չի անտեսի էքստենսիվ ոչ մի ճառագայթ և ոչ մի ոլորտ:

Դա այդպես է, օրինակ, *հասարակական բարոյականության* մեջ: Ներկայումս լուրջ հիմնախնդիրներ են ծագում քրիստոնեական գիտակցության և ընդհանուր առմամբ՝ մեր ժամանակակիցների բանականության մեջ: Արհեստական վիժեցումը՝ ամեն մի ցեղասպանության պես անտանելի այս ցեղասպանությունը, այժմ դիտվում է որպես կանոնավոր պրակտիկա: Առանց տարբերության՝ մահվան հեշտացումը նույնպես դառնում է բժշկական նորագույն դեօնթոլոգիայի սովորական կանոն ու գործ: Սեռական սանձարձակությունները՝ պոռնկությունից մինչև պոռնկագրություն, միասեռականությունից մինչև մանկապղծություն, եթե ոչինչ չասենք դիապղծության մասին՝ այժմ դիտվում են իբրև անառակ սիրո ազատ ու երանավետ արտահայտություններ: Մտածենք նաև մահապատիժը չեղյալ հայտարարելու մասին, երբ շատ հաճախ մեղավորն արդարացվում է, իսկ զոհը մնում անպաշտպան: Հասարակական մտածողության ու գործունեության բաբելոնյան այս խառնաշփոթի մեջ որտե՞ղ գտնել պատասխան և ուղղություն, եթե ոչ՝ Սուրբ Գրքում՝ աստվածային կարգավորիչ Խոսքում: Մենք այստեղ կստանանք ոչ միայն բարոյագիտության նեղ մասնագետի պատասխաններ, այլև առանց կողմնացույցի նավարկող, քամուց քշված հասարակության համար անհրաժեշտ գերագույն կանոնն ու բացառիկ սկզբունքը:

Տասը պատվիրանները՝ աստվածային կամքի հրաշալի արտահայտությունը, պարզևկած են նույնքան Եկեղեցուն, որքան աշխարհին՝ կյանքում կողմնորոշվելու, հասարակական գործերի և մարդկային բոլոր հարաբերությունների համար: Ավետարանի սիրո Աստվածը նաև կարգուկանոն ու արդարություն մարմնավորող է: Նա մեզ տեղավորել է լիովին օբյեկ-

տիվ բարոյական աշխարհում, ոչ թե կամայականորեն, այլ մեր փրկության ու բարեբախտության նպատակով:

Հիշենք արդարության հարցը: Հայտնի է ժամանակակիցների մոլագարությունը մի արդարության հանդեպ, որ նրանք անվանում են «սոցիալական»: Պերճախոս ճառեր են արտասանվել մարդկային արժանապատվության վերաբերյալ, պրոֆեսիոնալ զեկուցողները ուժասպառ են լինում՝ մեզ ներկայացնելու մարդու իրավունքների վերաբերյալ ոգեշունչ տեսակետներ: Սակայն սոցիալական արդարության որևէ սկզբունք, առավելապես բանաստեղծական և ռոմանտիկ, ապրած իրողություններից կտրված հասկացություն չէ՞ արդյոք, թեկուզ հենց այն փաստով, որ զուրկ է բարոյական ամեն արմատից, Աստծու կողմից և Աստծու Օրենքում հայտնված բարոյականությունից: Արդ, Աստված ինքն է արդարություն պահանջում զոհերի և իրավունք՝ յուրաքանչյուր ճնշվածի համար:

Նույն այս սկզբունքը կիրառվում է նաև *համաշխարհային տնտեսագիտության* մեջ: Այս թեմայով ևս Աստվածաշունչն առաջարկում է ճշգրիտ կանոններ: Կարելի է ապշել՝ այստեղ գտնելով այնպիսի սկզբունքներ, որ ժամանակակից ամենալավ տնտեսագետն անգամ չէր կարող հերքել՝ այնքան իրական ու որոշակի է և զարմանալի այժմեականություն ունի աստվածաշնչյան ռեալիզմը: Տնտեսագիտությունը, ինչպես այս անվանն արժանի ցանկացած բնապահպանություն, իր ուժը կարող է քաղել միայն Աստվածաշնչից և նրա հիմնական դատողություններից մեկից. «Աշխարհը և այն ամենն, ինչ կա այնտեղ՝ Տիրոջն է»:

Ինչպե՞ս է գործը քաղաքական հաստատություններում: *Քաղաքական* գործի ժամանակակից մասնագետների համար, սկսած ժամ-ժակ Ռուսոյից, հասարակական դաշինքը եղել է Պետության քաղաքական իշխանության բացառիկ հիմքը: Եթե բացենք Աստվածաշունչը, անմիջապես կնկատենք, որ քաղաքական կամ պետական հաստատությունը աստվածային ծագում ունի (ավելի վատ՝ ժամանակակից որոշ քրիստոնյաների համար, նրանց, ովքեր փառաբանում են անիշխանությունը հանուն մի Աստվածաշնչի, որը ենթարկում են մեկնաբանության իրենց ցանցին): Աստված հաստատում է դատավորներին ոչ միայն հետագայում, իբրև նախագուշակական միջոց՝ ժամանակավորապես վերացնելու չարությունն ու խռովությունը, այլ և ի սկզբանե՝ հաստատելով ստորակարգություն և մարդկանց վստահելով առանձնահատուկ գործեր: Ուստի, նախ և առաջ, դատավորը պետք է դրականորեն արտացոլի աստվածային գերագույն իշխանությունը: Մենք չենք ընդունում հասարակական – քաղաքական ծեծված լոզունգը՝ «կառավարությունը ժողովրդի միջոցով և ժողովրդի համար»՝ արտահայտվելու առողջ, աստվածաշունչ և զարգացող աստվածապետության, այսինքն՝ քաղաքական այնպիսի կարգի օգտին, որտեղ հարգվի Աստծու կամքը, որպեսզի, առանց խտրականության, ազատություն և պաշտպանություն պարզի ամեն մարդու: Նման ձևով հասկացված և կիրառված աստվածապետությունն է, որ հիմք կդնի իսկական ժողովրդավարության, և թող բարի լինեն այստեղ չտեսնել ո՛չ գիտագրերի հակասություն, ո՛չ էլ ավետարանչական մտքի քաղաքական շփոթ: Արդար և անկողմնակալ քաղաքական կարգը կարող է վերապրել միայն այն ժամանակ, եթե այն ենթարկվում է մեր փրկության Աստծու կարգավորող խոսքին: Այլապես, անիշխանության մեջ սուզված, այն իր տեղը կզիջի բռնապետություններին և հոգևոր այաթուլլայի կամ մեկ ուրիշ կողմնորոշման ապարատավարների կարգերին:

Աստվածաշնչի այժմեականությունն արտահայտվում է նաև *մշակութային ոլորտում*: Համոզվելու համար բավական է պարզապես թվարկել դրա ճյուղերը՝ անգամ եթե թեմայի վերաբերյալ չենք ուզում զարգացնել մեր միտքը: Հիշենք, օրինակ, ճարտարապետությունը, նկարչությունը, քանդակագործությունը, երաժշտությունը, բանաստեղծությունը, գրականությունը և, վերջապես, ինչո՞ւ ոչ, ժամանակակից գիտությունն ու զարգացած ողջ տեխնիկան: Պե՞տք է արդյոք մոռանալ համաշխարհային համբավ ունեցող քրիստոնյա մեծ մտածողներին՝ հներին կամ ավելի նորերին՝ Օգոստինոսին և Թովմա Աբվինացուն, Կալվինին կամ ուրիշ մեծ գիտնականների, ովքեր մտածեցին քրիստոնյայի պես և գործեցին աստվածաշնչյան սեփական համոզմունքների համաձայն:

Եզրակացնելու համար թերևս հարկ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ժամանակակից գիտության ճյուղերից մեկին, որը ներկայանում է իբրև ամենից ավելի անսխալականը. ուզում եմ խոսել ժամանակակից *հոգեբանության* մասին: Մենք չենք վիճարկի վերջինիս նպաստավոր ձեռքբերումները, որոնք մեկ դար ի վեր գնահատելի ծառայություն են մատուցել մարդուն մոտենալու և նրա հոգեկան մեխանիզմները ճանաչելու գործին: Սակայն, մարդկային ամեն իսկական ճանաչողություն կարող է բխել միայն Աստծու և նրա հետ իր ունեցած ճիշտ հարաբերության իմացությունից: Ինչպե՞ս չնշել ժան Կալվինի «Քրիստոնեական կրոնի ուսուցանումը» աշխատության¹ հրաշալի սկիզբը. «Իսկական իմացության գործնական ողջ գումարը Աստծուն ճանաչելն է և նրան ճանաչելով՝ ինքներս մեզ ճանաչելը»: Ինչպե՞ս կարող է այլ կերպ լինել, քանզի մենք նրա պատկերը կրողն ենք, անգամ եթե առաջին մեղքից ի վեր և մեր ամենօրյա բազմաթիվ անձնական մոլորություններից խռովված, այնքան ենք խորթացել նրանից: Բայցևայնպես, մենք համոզված ենք, որ Աստծու միջոցով կվերահաստատվենք ու կվերականգնվենք ողորմածության ուխտի մեջ, ինչպես նաև ձեռք կբերենք մերձավորի նկատմամբ մեր ներդաշնակ հարաբերությունները վերահաստատելու և պահպանելու, համաշխարհային բնապահպանության մեջ կարգուկանոն մշակելու հնարավորություն: Այս ամենը հնարավոր է դարձել փրկությամբ, որ մեզ համար ձեռք է բերել Հիսուս Քրիստոսը՝ Աստծու Որդին՝ մարդկանց աստվածային Փրկիչը՝ իր Սուրբ Հոգու գործողությամբ ու հաղորդությամբ:

Աստվածաշունչը մեզ պատմում է արարման, մեղքի և փրկության մասին: Այն ամենը, ինչ հին աշխարհի մարդիկ պետք է իմանային իրենց իսկ, Աստծու և իրենց աշխարհի վերաբերյալ, այն ամենը, ինչ մենք, մեր հերթին, պետք է իմանայինք, հայտնված է այս եզակի գրքի էջերում: Աստվածաշնչի արդիականությունն այնպիսին է, որ առաջին դարի մարդը և 20-րդ դարի վերջում ապրողը այնտեղ գտնում են բավարար, պարզ և անհրաժեշտ պատասխաններ: Մի լույս նրանց կլուսավորի նաև այս աշխարհում՝ հավատքի նրանց ուխտագնացության ամենօրյա ընթացքի համար:

Կալվինի, ինչպես նաև անցյալի այլ խոշոր քրիստոնյաների ու հովիվների հայտարարությամբ, նման իմացությունը Սուրբ Գրքում է՝ Աստծու Խոսքի մեջ: Այն տալիս է կատարյալ և գործնական գիտելիք յուրաքանչյուր դարաշրջանի, յուրաքանչյուր նոր սերնդի համար՝ մինչև դարերի վերջը:

¹ Jean Calvin, «Institution de la religion chretienne»

Գ Լ ՈՒ Խ 2

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԼԵԶՈՒՆ

Ա. ԱՌԱՋԻՆ ԴԱՐՈՒՄ ԳՈՐԾԱԾՎՈՂ ԶԻՄՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ

Մ. թ. առաջին դարում Միջերկրականի ավազանում խոսում էին չորս հիմնական լեզուներով՝ լատիներեն, եբրայերեն, արամերեն և «կոյնե» կոչված հունարեն՝ դասական հունարենից առաջացած տեղական խոսվածքով:

Հռոմում *լատիներենը* ծառայում էր որպես արդարադատության և գրականության լեզու: Լինելով լայնորեն տարածված ժողովրդական լեզու՝ այն գործածվում էր Յուսիսային Աֆրիկայում, Իսպանիայում, Գալիայում, Բրիտանիայում և, իհարկե, Իտալիայում: Դա նվաճողների և հպատակ ժողովուրդների լեզուն էր: Նրանք սովորում էին այն՝ հարմարեցնելով իրենց արտասանությանը և ներմուծելով սեփական բառապաշարի որոշ բառեր:

Եբրայերենը, Եզրասի ժամանակաշրջանից ի վեր, մ. թ. ա. V դարում դադարել կամ համարյա դադարել է խոսվել ժողովրդի կողմից՝ կիրառվելով միայն դպիրների շրջանում, որոնք դրանից օգտվում էին իրենց աստվածաբանության համար:

Արամերենը դասական եբրայերենից ավելի լայնորեն էր տարածված Պաղեստինում. լինելով սեմական լեզու՝ այն մոտ է եբրայերենին: Սուրբ Պողոսը արամերենով է դիմում Երուսաղեմի իր ժողովրդին, երբ Անտոնիա ամրոցի աստիճաններին՝ իրեն մեղադրողների առջև, հանպատրաստից պաշտպանում է առաքյալի իր միջնորդությունը (Գործք. 22:2): Հիսուսի քարոզները, գրավոր որոշ փաստաթղթեր ցույց են տալիս, որ մեր Տերը օգտվել է արամերենից (Հովհաննես 1:42, Մարկոս 7:34, Մատթեոս 27:46): Այս լեզուն հանդիպում է նաև նախնական շրջանի Եկեղեցու աստվածաբանական բառարանում: Արամերենի հետքեր կան այնպիսի բառերում, ինչպիսիք են՝ Abba, որը նշանակում է Հայր (Հռոմ. 8:15) կամ maranatha՝ Տերը մոտ է (Ա. Կորնթ. 16:22):

Ո՛չ լատիներենը, ո՛չ էլ դասական եբրայերենը այնպիսի գերակշիռ ու վճռական դեր չեն խաղացել հավատքի տարածման գործում, ինչպես արամերենն ու հունարենը: Ի միջիայլոց, նշենք, որ Քրիստոսի խաչի վրայի մակագրությունը լատիներեն էր, եբրայերեն և հունարեն (Հովհաննես 19:20), մի բան, որն ապացուցում է այդ դարաշրջանում հիշյալ լեզուների կարևորությունը:

Չստուգված մի ավանդույթի համաձայն՝ Հիսուսի կյանքին ու վարդապետությանը վերաբերող որոշ փաստաթղթեր նախապես գրվել են արամերեն և միայն հետո են թարգմանվել հունարեն: Մեր կարծիքով, այս թեմայով միակ հավաստի բանն այն է, որ կանոնական քսանյոթ գրքերից կազմված Նոր Կտակարանը շրջանառության մեջ է դրվել բացառապես հունարենով: Բոլոր նամակները շարադրվել են այս լեզվով, անգամ եթե հարկ է եղել համաձայնել (չնայած ոչ մի փաստարկ մեզ չի հարկադրում այդ բանն անել), որ Հիսուսի խոսքերի որոշ պատահիկներ կարող էին հավաքված ու վերջնականապես շարադրված լինել արամերեն: Ուրեմն «կոյնե» հունարենն է եղել Նոր Կտակարանի գրքերի լեզուն: Լինելով մի-

ջերկրականի ավազանի աշխարհի մշակույթի լեզուն՝ այն ծառայում էր իբրև Lingua franca. գուցե՞ մեր Տերը այն ճանաչել և օգտագործել է ոչ հրեաների հետ ունեցած իր զրույցներում:

Հունարենը մտնում է հնդեվրոպական կոչվող լեզվաընտանիքի հարավեվրոպական լեզվախմբի հելլենական ճյուղի մեջ և ունի այնպիսի ստորաբաժանումներ ու բարբառներ, ինչպիսիք են դորեական, էոլյան, իոնիական և աստիկյան բարբառները: Գրական «կոյնե»-ն և ժողովրդական «կոյնե»-ն, cathareoussa-ների բաժանված ժամանակակից հունարենը՝ պուրիստների ակադեմիական ու գրական լեզուն և ժողովրդական հունարենը ծագել են դասական հունարենից:

Նոր Կտակարանի «կոյնե»-ն տարբեր է դասական հունարենից: Ամեն մի կենդանի լեզու ենթակա է փոփոխությունների, որոնք պարտադրված են հասարակական, քաղաքական կամ մշակութային փոփոխություններով, ինչպես նաև իրադարձությունների ճնշման տակ ի հայտ եկող նորանոր հարկադրանքներով: Այսպիսին եղավ դասական հունարենի ճակատագիրը:

Բ. ԻՆՉՈՒՒ Է ՀՈՒՆԱՐԵՆԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԼԵԶՈՒ

Նոր Կտակարանը գրելուն ինչո՞ւ է ծառայել «կոյնե» հունարենը, այլ ոչ թե՛ մեկ ուրիշ լեզու: Նախքան պատասխանելը, քանի որ դա ուղղակիորեն կապված է միջերկրական աշխարհի գրականության զարգացման հետ, արտահայտենք աստվածաբանական մի համոզումը:

Մեր կարծիքով, Միջերկրական աշխարհում, աստվածային նախախնամությամբ է հունարենը տարածվել որպես Lingua franca՝ ընտրության գործիք ծառայելու Նոր Կտակարանի գրքերը շարադրելու և, այդպիսով, քրիստոնեության տարածմանը նպաստելու համար: Մենք այն տեղավորում ենք նախապատրաստական կամ մարդկային ճակատագրերին վերաբերող տարրերի շարքում, տարրեր, որ Սուրբ Հոգին ընտրել է, որպեսզի Նոր Ուխտի փաստաթուղթը, որը ևս նրա գործն է և գրվել է նրա ներշնչանքի ներքո, հնարավորություն տա հայտարարելու Ավետարանը: Հունարենն ուներ բոլոր առավելությունները՝ Աստծու մտքերը հրաշալիորեն արտահայտելու և քրիստոնեությունը քարոզելու սեփական միջոց դառնալու համար:

Մեր համոզումներն այն է, որ փրկչության տնտեսության մեջ բացարձակապես ոչինչ պատահականության արդյունք չէ: Եթե ընդունում ենք, որ Սուրբ Հոգին է Նոր Կտակարանի քսանյոթ գրքերի գլխավոր հեղինակը, ապա տրամաբանական չէ մտածել, որ «կոյնե» հունարենը չի մտնում ներշնչանքի նրա ծրագրի մեջ՝ աստվածային լուրը հաղորդելու նպատակով ընտրված լեզու ծառայելու համար:

Հռոմեացիների գալուստից հետո և հերովդեսյանների արքայատոհմի ժամանակ հունարենը դարձավ կառավարության պաշտոնական լեզու, թեպետ օգտագործվում էր նաև լատիներենը: Ի՞նչ չափով է հունարենն ընդունվել բնակչության կողմից: Հայտնի է, որ քրիստոնեական դարաշրջանից առաջ հելլենական կենտրոնները Պաղեստինում ունեին հունարեն գրող բազմաթիվ գրողներ: Բացի այդ՝ հունարենն օգտագործվում էր Երուսաղեմի

հոգևորականության շրջաններում: Կարելի է ենթադրել, որ երեխաների կրթության գործը ևս իրականացվել է այս լեզվով, ոչ թե հունական մտածողության ու փիլիսոփայության պատճառով, այլ Սփյուռքի հրեաների հետ հաստատվելիք կապերի նպատակով: Երուսաղեմի մեծ թվով դպրոցներ վարժ տիրապետում էին հունարենին: Կարելի է նմանապես ենթադրել, որ պաղեստինցի հրեան պետք է որ լավ տիրապետած լիներ հունարենին: Պողոս առաքյալը, որը երիտասարդ տարիքից բնակություն է հաստատել Երուսաղեմում, սովորեց այն (տես Գործք. 21:37 և հաջորդ էջերը): Յեշու չէ որոշել հունարեն խոսելու ընդունակ բնակչության թիվը, սակայն փոխարենը կարելի է վստահ լինել, որ մի սովոր հատված խոսում էր միայն արամեերեն: Համարյա ընդհանուր համոզմունքով առաջ են քաշում այն կարծիքը, որ մ. թ. ա. առաջին դարում և դրանից քիչ ժամանակ անց, Պաղեստինում խոսում էին երեք լեզվով: Դա չի նշանակում, որ երեքն էլ օգտագործվել են պաշտոնապես, ինչպես այժմ Շվեյցարիայում է՝ գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն: Դրանով, ընդհակառակը, ակնարկ է արվում այն մասին, որ բնակչության այս կամ այն հատվածը խոսում էր այս կամ այն լեզվով: Արամեերենից ու եբրայերենից բացի՝ հունարենի իմացությունը տարածված էր հատկապես քաղաքների կենտրոններում:

Պաղեստինում և Մերձավոր Արևելքում հունարենը նախ և առաջ տարածվել է առևտրի կամ զինվորական ժամանակավոր ծառայության միջոցով, սկսած Ալեքսանդր III-ից, որը պարսկական կայսրության դեմ տարած հաղթանակից հետո (մ. թ. ա. 334-324թթ.) հայտնի էր որպես Մեծ: Հունարենը տարածվել է նաև մշտական ծառայության մեջ գտնվող սպաների և ռազմավարական այլ կետերում, ինչպես ասենք, Սամարիա քաղաքում, տեղադրված ռազմական ջոկատների միջոցով: Նորագույն այս նվաճողները խոսում էին ատտիկյան բարբառով: Դա Աթենքի բարբառն էր, քաղաք, որը երկար ժամանակ նշանակալից դեր կխաղա հունական քաղաքականության մեջ և ծավալուն առևտրական հարաբերություններ կպահպանի հունական մնացած աշխարհի հետ:

Հույներն ու մակեդոնացիները (վերջիններս, ավելի ստույգ, ոչ թե հույներ են, այլ մասամբ հունացած մարդիկ) ատտիկյան բարբառն օգտագործել են իբրև հաղորդակցության միջոց: Ատտիկյան բարբառը գործում էր նաև մակեդոնյան թագավորական պալատում՝ Պելլաի մատավայրում:

Ալեքսանդրի ընդունած պաշտոնական լեզուն հազիվ էր տարբերվում ատտիկյան բարբառից, չնայած մասնակիորեն երանգավորված էր հունական մեկ այլ՝ իոնիական բարբառով:

Ալեքսանդրի մահվանից ու նրա կայսրության քայքայումից հետո, որը ծնունդ տվեց չորս նոր արքայատոհմերի, ատտիկյան բարբառը մնաց որպես կենտրոնական իշխանության մնացորդների վրա ձևավորված նոր թագավորությունների պաշտոնական լեզու: Այսպես եղավ, օրինակ, Պաղեստինում, որն անհաջողություն կրեց Պտղոմյաններից (եգիպտական արքայատոհմ) ու նրանց հետնորդներից՝ մինչև Ք. ա. 198 թվականը: Նոր դերի պատճառով այս հունարենը կնքվեց Koine՝ dialektos անվամբ: Պաղեստինում և Սիրիայում, Սելևկյանների մակեդոնական արքայատոհմի գերակայության կարճատև շրջանում, երկրի լեզվական վիճակը փոփոխություն չկրեց:

Հիշեցնենք, որ հունարենի ներմուծումը Պաղեստին տեղի է ունեցել ավելի վաղ, քան Ալեքսանդր Մեծի նվաճումները: Արդեն իսկ մ. թ. ա. VI դարում, Դանիել մարգարեի գրքում,

հանդիպում ենք հունարեն այնպիսի բառերի, ինչպիսիք են՝ kitharis, psalterion, sumphoni. Անշուշտ, այս բառերը մասնակիորեն արամեականացվել են, մի բան, որն ապացուցում է, որ հրեաների մոտ հունարենն արդեն ներմուծված էր: Այդ լեզվի ներկայության սկիզբը Դանիելի դարաշրջանից հավանաբար էլ ավելի վաղ շրջանում է՝ հունական գաղթերի և դեպի Արևելք առաջին ակիքների, Յավանի որդիների օրոք կատարված խաղաղ ներխուժումների ժամանակ (տե՛ս՝ Ծննդ. 10:4, Ա. Մնաց. 1:7):

Բայցևայնպես, Պաղեստինում ու հարևան այլ շրջաններում, հունարենն առաջին անգամ հայտնվում է միջերկրական նվաճումների ժամանակ: Ռազմական նվաճումն ուղեկցվում է լեզվականով: Վերջինս ամբողջական է. նրա գերակշռությունը կտևի էլ ավելի երկար, քան ռազմական իշխանությունը: Մեծ մակերդոնացուն հաջորդած դինաստիայի ստեղծած պետությունների անհետացումից և Հռոմի՝ որոշ երկրներ իրեն ձուլելուց հետո, երկրներ, որոնք մինչ այդ ենթարկված էին Պաղոմյանների և Սելևկյանների գերիշխանությանը, հունարենը կմնա իբրև խոսակցական լեզու և մեծ մասսայականություն կվայելի՝ մինչևիսկ կայսրության մայրաքաղաքում: Եվ դա այն աստիճան, որ պատմաբանները խոսում են Հռոմը հունարենով նվաճելու մասին. պարտվածի մշակութային հաղթանակ՝ հաղթողի նկատմամբ: Եթե հունարենին չի հաջողվել ամբողջապես դուրս մղել լատիներենը, ապա, այսուհանդերձ, կարողացել է այնպես անել, որ նրա կողքին ճանաչեն նաև իրեն և վարժ խոսեն Իտալիայում: Բարձր շրջանակներում այն ժառայեց որպես մշակութային լեզու: Ժողովրդական խավերը չանտեսեցին այն, մանավանդ որ մայրաքաղաքում բնակվող (ավելի քան մեկ միլիոն) ստրուկների մեծ մասը, իբրև մայրենի լեզու, օգտագործում էր հունարենը:

Այսպիսով, մ. թ. ա. 325 և 63 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում, հունարենը հաստատվեց Միջերկրականի շուրջն ընկած աշխարհում: Այն հնարավորություն տվեց հունական մշակույթի առավել լայն տարածմանն ու ընդունմանը՝ իր հետ ձուլելով բնիկ ժողովուրդների մշակույթը: Տարածվելու ընթացքում այն էլ ավելի պարզեցվեց ու բաժանվեց բարբառների, որով խոսում էին հույներն ու ոչ հույները:

Սելևկյանների նոր մայրաքաղաքը, որը ստեղծվեց Բաբելոնի մոտակայքում, մ. թ. ա. 312 թվականին, ամբողջապես հունական էր: Այդտեղ՝ Սյուզում և Սելևկիայում, ապրում էին հրեաներ (600.000՝ ըստ դարաշրջանի հաշվարկների)՝ կազմելով շատ մեծ գաղութ: Հունարեն խոսող մեծաթիվ հրեաներ Արևելքից կարող էին գալ և մասնակցել Հոգեգալստյան հանդիսավոր արարողությանը: Պետրոսը, որի մայրենի լեզուն եղել է, հավանաբար, արամերենը, ավելի ուշ կօգտվի հունարենից՝ Կոռնիլիոսի հետ զրուցելու համար (Գործք 10:25-28):

Իրենց նոր երկրում գտնվող հույն տարագիրները, արդեն բազմաթիվ սերունդներ ի վեր, աննշան չափով էին տիրապետում եբրայերենին ու արամերենին, չէին խոսում անգամ սեփական օջախներում: Թեպետ դեռևս կարող էին կարդալ ու հասկանալ՝ առօրյա զրույցներում դրանք այլևս չէին օգտագործվում: Անշուշտ, զգալի թիվ էին կազմում այս լեզուներին ամենևին չտիրապետողները: Դրանով, ինքնին, բացատրվում է այն փաստը, թե ինչու Սփյուռքի հրեաներին ուղղված նամակների մեծ մասը գրվել է հունարեն: Խոսքը ոչ միայն Հունաստանի կամ էլ Մակեդոնիայի հրեաների մասին է, այլև կայսրության բոլոր այն տարածքների, որտեղ կային հրեական գաղութներ, ինչպես Հռոմում, այնպես էլ Փոքր Ասիայում: Ինչ վերաբերում է մասնավոր անձանց, ապա հայտնի է, օրինակ, որ Տիմոթեոսը հոր

կողմից կիսով չափ հրեա է, Տիտոսն ամբողջապես հրեա է, իսկ Փիլիմոնին ու Գայոսին, չնայած չունենք շատ ճշգրիտ տվյալներ, հարազատ էր այդ լեզուն: «Գործք Առաքելոց»-ն ու Ղուկասի Ավետարանը ձևավորված են ոմն Թեոփիլի, որն, անշուշտ, հույն է, ինչպես և հեղինակը՝ սիրված բժիշկ Ղուկասը:

Պաղեստինը ևս իր հերթին ենթարկվեց լեզվական նույն բնակարգին. դարձավ եռալեզու: Այստեղ, անկասկած, գործածում էին ինչպես արամերենը, այնպես էլ հունարենն ու լատիներենը: Կապված այն լեզվի հետ, որով այդ դարաշրջանում խոսում էին հույները, նրանց կարելի է բաժանել երկու հստակ խմբերի՝ եբրայերեն գործածողներ, ովքեր ներկայացնում են նախնիների սովորույթներից կառչած պահպանողական խումբը և «հելլենիստներ», ովքեր կազմում են Սփյուռքի՝ արտագաղթված ժողովրդի խումբը: Վերջիններս խիստ կրում են հունական մշակույթի և քաղաքակրթության ազդեցությունը: Հունարենը դառնում է նրանց մայրենի լեզուն:

Արդեն իսկ մ. թ. ա. III և II դարերի ընթացքում, նրանց կարիքները բավարարելու նպատակով, Հին Կտակարանը թարգմանվեց մի տարբերակով, որը հայտնի է «Յոթանասնից» թարգմանություն (LXX) անվամբ:

Հետաքրքիր է նշել, որ դա իրադարձություն եղավ եբրայեցի և հույն հրեաների մեջ տեղի տալով առաքելական Եկեղեցու առաջին սարկավազների ընտրությանն ու ձեռնարկմանը (Գործք 6): Վերջիններիս անունները հունական են, մի բան, որը պարզորոշ խոսում է նրանց ծագման մասին:

Հավանական է, որ Հոգեգալստյան օրը (Գործք 2), բոլորին հասկանալի լինելու նպատակով, Պետրոսը հունարենով դիմեց ամբոխին, որը հավաքվել էր առաքյալների ու աշակերտների հանդիպման վայր ծառայող տան առջև:

Հավանական է, որ Դեկապոլիս կատարած շրջագայությունների ժամանակ, մեր Տերը հունարեն է խոսել ոչ հրեական ծագում ունեցող անձանց հետ: Մատթեոսը հաղորդում է, որ Լեռան քարոզի լսարանը կազմող բազմության մեջ կային Դեկապոլիսից և Պիրեայից եկած մարդիկ. սրանից կարելի է ենթադրել, որ Հիսուսը գործածել է հունարեն բառեր և կամ էլ նրա հիշյալ քարոզի որոշ հատվածներ արտաբերվել են այդ լեզվով: Եվ, վերջապես, հաղորդում են, որ երբ ավետարանիչը որևէ հատված է մեջբերում Հին Կտակարանից, նա այն թարգմանում է յուրովի, մինչդեռ երբ դառնում է Հիսուսի կողմից արված մեջբերմանը, ապա այն քաղում է «Յոթանասնից» տարբերակից: Սրանով ակնարկ է արվում այն մասին, որ հունարեն այս թարգմանությունը հարազատ էր Հիսուսին: Անկասկած, ամեն քարոզի ժամանակ նա հարմարվել է իր լսարանին:

Նոր Կտակարանի կանոնական քսանյոթ գրքերը գրվել են «կոյնե» հունարենով. դա չպետք է առաջ բերի որևէ առարկություն: Սակայն, այս առումով, հարկ է ճշգրտում կատարել: Խոսքը Նոր Կտակարանի՝ արամերենից հունարեն թարգմանության մի փորձի վերաբերյալ է, փորձ, որն արվել է (ինչպես պնդում են) Հիսուսի քարոզների իմաստն ավելի լավ ըմբռնելու նպատակով: Ինչքան էլ որ այդ փորձը հետաքրքիր լինի, մեր կարծիքով, այն կասկածի տակ է առնում Նոր Կտակարանի լեզվի և բնագրի ներշնչանքն ու զորությունը: Խոսքն այստեղ այլևս թարգմանության մասին չէ, այլ, ավելի շուտ, Հիսուսի քարոզների՝ ապրիորիներով նշանավորված աստվածաբանական հմուտ մեկնաբանության, մի բան, որը

շատ զարմանալի է իրեն խիստ ճշգրիտ համարող և հարգանք ակնկալող գիտական աշխատության համար:

Գ. «ԿՈՅՆԵ» ՀՈՒՆԱՐԵՆՆ ԻՍԱՆԱԼՈՒ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Անտիկ ժամանակներից ի վեր գիտնականներից շատերը դրսևորել են դրական, ոմանք էլ՝ բացասական վերաբերմունք Նոր Կտակարանի լեզվի հանդեպ:

Նրանք, ովքեր թերութուններ էին տեսնում, դրանք բացատրում էին մահկանացուների մեծ մասին և հաճախ էլ անուսում ստրուկներին հասկանալի լեզվով գրելու անհրաժեշտությամբ: Փոխարենը, նրանք, ովքեր դրվատում են գրական արժանիքները, ինքնին պաշտում են այն՝ իբրև աստվածաշունչ լեզու: Մենք մանրամասն դատողություններ չենք անի տարբեր գնահատականների վերաբերյալ: Իմիջիայլոց նշենք միայն, որ Նոր Կտակարանի՝ լեզվական տեսակետից առավել մեծ արժեք ներկայացնող մասերն են Ղուկասի երկու գրքերը՝ նրա անունը կրող Ավետարանն ու «Գործք Առաքելոց»-ը: Պողոսի թղթերը (թվով տասներեք) և Եբրայեցիներին ուղղված անանուն նամակը, որը, լեզվական ու գրական ոճի առումով, ամենալավ կառուցվածքն ունի, մյուս գրքերը, Ավետարանները, «ընդհանրական» կոչված նամակներն ու Հովհաննեսի գրվածքները գրական աննշան արժեք ունեն:

Նոր Կտակարանը կազմող բոլոր մասերի համար հիմնականը բանասիրական ու գրական սեփական միջոցներով այդ լեզվի առանձնահատկությունները ճանաչելը, դրա օգնությամբ նախնական իմաստը վեր հանելն ու փրկության լուրը հավատարմորեն փոխանցելն է:

Դ. «ԿՈՅՆԵ» ՀՈՒՆԱՐԵՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աչքի ընկնող առանձնահատկություններից մեկը սեմիտաբանությունների, այսինքն՝ այս կամ այն հեղինակի ոճի մեջ և բառարանում առկա եբրայերեն կամ արամերեն արտահայտությունների ազդեցությունն է: Ելնելով ասվածից՝ հարկ է խուսափել այն մտքից, որ Նոր Կտակարանի «կոյնե»-ն եղել է ընդամենը մի նոր բարբառ՝ հունարենի և արամերենի կամ էլ եբրայերենի խառնուրդ: Այնուհանդերձ, եբրայաբանություններն այստեղ ավելի մեծ թիվ են կազմում: Կարելի է նշմարել դրանց երկու աղբյուր: Առաջինը արամերեն արտասանված խոսքերը հնարավորին չափ հավատարմորեն ներկայացնելու ջանքն է հեղինակների կողմից: Սեմիտաբանությունների ազդեցությունը զգալի է հատկապես թվերգային հատվածներում կամ զրույցներում: Ուրիշ տեղերում այն պակաս զգալի է: Մյուս աղբյուրը «Յոթանասնից»-ի հունական թարգմանության ազդեցությունն է Նոր Կտակարանի հեղինակների մտածելակերպի, բառապաշարի և կրոնական պահվածքի վրա: Որպես օրինակ կարելի է բերել «տեսնելով տեսավ» կամ էլ հանրահայտ «ճշմարիտ, ճշմարիտ» արտահայտությունները, որոնք եբրայերեն խոսելու հուզաարտահայտչական ձևեր են:

Նույն այս ազդեցությունը թույլ է տվել կազմել աստվածաբանական բառարան, որի կարիքն այլապես կզգացվեր: Այսպես, ilaskomai (քավություն) կամ dikaiosune (արդարություն) բառերն այնպիսին են, որոնց Հին Կտակարանը հաղորդել է ավելի լայն իմաստ ու

բովանդակություն, քան դրանք ունեին աշխարհիկ կյանքում: Եվ այսպես, Նոր Կտակարանը գրելու ժամանակ, գոյություն ուներ հեղինակների հայտնած հարմար աստվածաբանական բառապաշար:

«Կոյնե»-ն ուսումնասիրելու անհրաժեշտության գլխավոր պատճառներից մեկը Եգիպտոսում Նեղոսի ավազանի տաք ավազների մեջ, XIX դարում հայտնաբերված, պապիրուսի վրա արված մեծաթիվ ձեռագրերն են: Նմանապես, հիշատակենք նաև ostraka-ների ընթերցանությունը, որոնք հայտնաբերվել են երկրաբանական հետազոտությունների ժամանակ: Ներկայումս գիտնականներն ունեն հին աշխարհից եկող բազմաթիվ նյութեր ու փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս դրանք համեմատել Նոր Կտակարանի հեղինակների օգտագործած լեզվի հետ: Ինչքան շատ է «կոյնե»-ն ուսումնասիրվում այս փաստաթղթերի լույսի ներքո, այնքան ավելի են ի հայտ գալիս գրական սերտ մանություններ Նոր Կտակարանի լեզվի հետ: Այն համոզմունքն է առաջանում, որ դա ճիշտ և ճիշտ այն լեզուն է, որ օգտագործել են ժամանակի հույն հեղինակները, ինչպես, օրինակ, Պոլիբիոսը, Ստրաբոնը, Էպիկտետոսը, Լուկանոսը, Պլուտարքոսը: Անգամ ավելի հին շրջանի մի հեղինակ, ինչպիսին Արիստոֆանեսն է, բավականին մերձ առնչություններ է դրսևորում Նոր Կտակարանի «կոյնե»-ի հետ:

Բանասիրական տեսանկյունից «կոյնե»-ն բնութագրվում է բառապաշարի պարզությամբ և շարահյուսական կանոնների պարզեցմամբ: Դասական հունարենի համեմատ՝ կարելի է գտնել հնչյունական, ինչպես նաև՝ երկհնչյունների փոփոխություններ, մի բան, որ այդ լեզուն ավելի շատ մոտեցնում է ժամանակակից հունարենին, քան՝ աստիկյան բարբառին:

Պապիրուսի վրայի արձանագրություններում ու գրվածքներում կարելի է գտնել ոճական որոշ թերություններ: Օրինակ՝ ոճն Ermocrate, որը գրում է իր որդի Cherée-ին, դասական éan-ի (եթե) փոխարեն գրում է aian, kidineuo ճիշտ ձևի փոխարեն kindinevo (ես վտանգի մեջ եմ) և նույն ձևով էլ epei-ի փոխարեն գրում է epi, դասական déomai (ես պետք է) ձևի փոխարեն գործածում է déome՝ ձևը:

Նմանատիպ առանձնահատկություններով են բացատրվում նաև աստվածաբանական իրական դժվարություն ներկայացնող որոշ հատվածներ, ինչպես, օրինակ, Մարկոսի Ավետարանում է (4:12). «բայց նրանց համար, որ դրսից են, ամեն բան առակներով է լինում, որպեսզի (ina) տեսնելով տեսնեն ու չտեսնեն...»: Հունարեն բնագրում ina-ն (որպեսզի) բնավ էլ չի մատնանշում նպատակ՝ առակի նպատակը, այլ ավելի շուտ՝ գոյություն ունեցող պայման, որի հետ առակները պետք է համակերպվեն, համաձայնեն: Մատթեոսի 13:13 զուգահեռն է՛լ ավելի լավ է բացատրում այս միտքը: Այստեղ ina-ի փոխարեն օգտագործված է oti շաղկապը, սակայն երկուսն էլ նույն իմաստն ունեն:

Հունարենի իմացությունը հնարավորություն կտա ոչ միայն գիտնականին ինչպես հարկն է կատարելու իր գործը, այլև քարոզիչ հովվին՝ բնագիր տեքստի խորացված ուսումնասիրությամբ ավելի լավ պատրաստելու իր լուրը: Նոր Կտակարանի ուսումնասիրությունը անվերապահորեն անհրաժեշտ է աստվածաբանություն ուսումնասիրողին, իսկ Ավետարանը հայտարարելու գործով զբաղվող ամեն հովիվ այն պետք է կիրառի մշտապես: Նման ուսումնասիրությունը թույլ կտա խուսափել արտառոց որոշ թարգմանությունների ձևախախտումներից (օրինակ՝ ամերիկյան Living Bible վշտացնող, եթե ոչ՝ հերետիկոս տարբերա-

կից) կամ էլ որևէ մեկնիչի կողմից ամեն գնով հրատարակված խոսքն իբրև Ավետարանի խոսք ընդունելու վտանգից: Քարոզիչը Աստծու առջև պատասխանատու է փրկության աստվածային լուրը հաղորդելու և հասկանալի դարձնելու ձևի համար: Ահա չորրորդ Ավետարանից քաղված մի օրինակ:

Հովհաննու Ավետարանը, որը պարզության պատճառով, իբրև ուսումնասիրության տեքստ, առաջարկվում է սկսնակին, ունի կառուցվածքային այնպիսի մեթոդ, որը տարբերվում է Պողոս առաքյալի գրվածքների մեթոդից: Դա նկատելի կլինի միայն նրան, ով այն կուսումնասիրի հունարեն բնագրում: Այսպես, շատ հաճախ, քերականական տեքստերից խիստ հետևողական kai (հունարենի «և») շաղկապի գործածությամբ, նախադասությունների բազմաթիվ խմբերից նա կազմում է մեկ ամբողջություն: «Դրանից հետո Հիսուսն իր աշակերտների հետ գալիս է Հրեաստան և այնտեղ նրանց հետ մնում և մկրտում էր: Եվ Հովհաննեսն էլ Այնճոնում էր մկրտում՝ Սաղեմի մոտ, որովհետև այնտեղ շատ ջուր կար, և գալիս (բազմությունը) ու մկրտվում էին»: Այս ոճը ցույց է տալիս, թե չորրորդ Ավետարանի լեզուն որքան մոտ է տեղական խոսվածքին: Երբեմն դա տեղիք է տալիս երկիմաստության, որն, ինչպես հարկն է, չի հասկացվում զրուցակցի կողմից: Դա եղավ, օրինակ, Նիկոդեմոսի հետ, որը նոր ծննդի անհրաժեշտությունը շփոթեց կենսաբանական ծննդի հետ: Կան շատ ու շատ ուրիշ օրինակներ և:

Բերված մի քանի օրինակների նպատակն է ցույց տալ, թե ինչ «հիմնախնդիրներ» կարող են առաջանալ որևէ գրողի տարբեր ոճի պատճառով և սեմիտաբանությունների ազդեցությամբ:

Իբրև եզրակացություն՝ մեջբերում կատարենք Ս. Վան դեր Վուդից:

«Արագորեն աչքի անցկացնելով Նոր Կտակարանի բնագիրը, որտեղ Հին Կտակարանից կատարված մեջբերումները տպագրված են թանձր տառատեսակով կամ էլ տարբերակիչ որևէ այլ եղանակով, կտեսնենք, որ Նոր Կտակարանը հեղեղված է Հին Կտակարանից արված մեջբերումներով: Դրանք քաղված են «Յոթանասնից»-ի հունարեն թարգմանությունից՝ բացառությամբ Դանիելի գրքի մի քանի հատվածի, որոնցում հեղինակն օգտագործում է ուրիշ հունարեն... Նմանապես, Նոր Կտակարանը պարունակում է բազմաթիվ եբրայաբանություններ ու արամեաբանություններ, որոնք չեն գալիս հունարեն «Յոթանասնից»-ից, հատկապես Ավետարաններում և Հովհաննու «Հայտնության» մեջ (տես՝ Մարկոս 6:39–40): Հունարենում գոյականը չի կարող գործածվել կրկնության եղանակով, մինչդեռ արամեերենում նման կառուցվածքը գոյականին հաղորդում է բաշխման իմաստ: Այս առանձնահատկությունների պատճառով «Յոթանասնից»-ի և Նոր Կտակարանի լեզուները տարբերվում են նույն դարաշրջանի հեթանոս գրողների օգտագործած լեզվից»¹:

¹ S. Van der Woude, «The World of the Bible», Eerdmans, Grand Rapids, p.152.

Գ Լ ՈՒ Խ 3

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Նոր Կտակարանի կանոնին նվիրված գլխում քննության կառնենք այն հարցը, թե Եկեղեցին, Հին Կտակարանի երեսունինը գրքերի պես, Նոր Կտակարանը կազմող քսանյոթ գրքերն ինչպես է դարձրել իր հավատքի կանոնը՝ Աստծու ձեռքից Նրա Խոսքի պես ստացված Սուրբ Գիրք:

Աստվածաշնչի երկրորդ մասի արժանահավատությանը հետևելու հետ մեկտեղ, Աստված հոգ է տարել նաև նրա պահպանության ու փոխանցման, ինչպես և բնագրերից արտագրած տեքստերի նկատմամբ: Դա արվեց այնպիսի խնամքով, որ Աստվածաշնչի, այսպես կոչված, Ա. Տ. Թ. (Աստվածաշնչի տիեզերական թարգմանության) հրատարակիչների հետ կարող ենք ասել, որ «... Նոր Կտակարանի բնագրի վերաբերյալ 150 տարվա ընթացքում արված քննադատության արդյունքները նշանակալից են»: Ներկայումս Նոր Կտակարանը կարող է համարվել լավ հաստատված: Առանց վարանելու կարող ենք ասել, որ Նոր Կտակարանի հունարեն բնագիրը Սուրբ Գրքի՝ Հոգուց ներշնչված և Եկեղեցուն վստահված Աստծու Խոսքի՝ քրիստոնեական Աստվածաշնչի երկրորդ մասն է: Աստվածային նախախնամությունը դա հոգացել է նախքան Եկեղեցին: Մենք չպետք է հոգս դարձնենք ինքնագրերի (նախնական ձեռագրերի) անհետացումը, ձեռագրեր, որոնք շարունակ արտագրվելով՝ կարող էին խեղաթյուրվել՝ մեր ձեռքի տակ թողնելով ոչ թե հավատարիմ առաքյալների փոխանցած Խոսքը, այլ գրական ու պատմական արժեքից զատ ոչինչ չունեցող աղավաղված տեքստ: Ահավասիկ, մենք ամուր համոզմունքներ ունենք հունարեն Նոր Կտակարանի՝ Աստծու կամքն արտահայտող տեքստի վերաբերյալ, և յուրաքանչյուր սերնդի ամեն մի մարդ, այսպիսով, կբախվի Աստծու հայտնությանը: Այս հրաշքը կատարվել է հավատարիմ հավատացյալների աջակցությամբ: Մարդիկ նույնպես հոգ են տարել՝ փոխանցելու բնագիր տեքստերը՝ իրենց հերթին հսկելով, որ ոչինչ չխեղաթյուրվի:

Նախնական ձեռագրերի պատճենները փոխանցելու եղանակի ուսումնաքննությունն այսպես կոչված բառացի (տեքստուալ) քննադատության գործն է: Այդ գործընթացի ողջ պատմության մանրագնին ուսումնասիրությունը մեր գործը չէ: Մենք կնշենք գործընթացի խոշոր փուլերը միայն, իմիջիայլոց հիշատակելով գրելու հին եղանակը կամ եղանակները՝ տեքստերը գրառելու պահին:

Ա. ԳՐԵԼՈՒ ՆՅՈՒԹԵՐԸ

Սկսենք փոխանցման՝ մեզ զբաղեցնող կարևոր դիտանկյունից: Որո՞նք էին գրելու նյութերը, որ հնում մարդիկ օգտագործում էին նախքան թղթին դիմելն ու այն համակարգչի գյուտը, որի վրա արձանագրում ենք ներկա աշխատության բոլոր բառերն ու նշանները:

1. Պապիրուս

Առաջինը հիշատակենք պապիրուսը, որից էլ ծագում է ֆրանսերենի papier¹ բառը: Առաջին անգամ պապիրուսը հայտնաբերվել ու օգտագործվել է Եգիպտոսում, որտեղ աճում են նրա արտադրության հիմքը կազմող եղեգներ: Եգիպտոսում է, որ վաղուց ի վեր կարելի է գտնել գրելու դիրքում ներկայացված դպիրների գեղանկարչական պատկերներ: Պապիրուսի վրա արված ամենաինչև ձեռագիրը կամ ձեռագրի հատվածը թվագրված է փարավոնների հինգերորդ արքայատոհմով. այս դարաշրջանից ի վեր պապիրուսի կիրառությունն ընդլայնվում է: Գործածության մեջ այն մնում է մինչև մ. թ. մոտավորապես 640 թվականը, մասնավորապես՝ Արաբիայում: Բազմաթիվ գրադարաններում ու թանգարաններում հավաքված են եբրայերեն, հունարեն, լատիներեն, արամերեն, ղպտիերեն ու արաբերեն լեզուներով արձանագրություններ պարունակող պապիրուսի պատառիկներ: Մեզ հետաքրքրում է գլխավորապես այն հարցը, թե այս նյութն ինչպես է կիրառվել Պաղեստինում, որտեղ գրվել է քրիստոնեական Աստվածաշունչը կազմող գրքերի մեծ մասը:

Պաղեստինի խոնավ կլիման նպաստավոր չէր պապիրուսի ո՛չ երկարաժամկետ պահպանման, ո՛չ էլ ընդհանրական գործածության համար: Նոր Կտակարանի գրքերը գրվել են հենց այս ժամանակ: Պապիրուսը նմանապես օգտագործվել է անտիկ աշխարհի մշակութային այնպիսի կենտրոններում, ինչպիսիք են Ալեքսանդրիա քաղաքը՝ Եգիպտոսում և Անտիոքը՝ Սիրիայում: Առևտրական որևէ հաշիվ, օրինակ՝ ապրանքագիր կամ տնտեսական այլ փաստաթուղթ գրելու համար Հռոմում օգտվում էին միջին որակի պապիրուսից: Մինչդեռ կնոջը կամ սիրեկանին սիրային նամակ ուղարկելու համար օգտագործում էին լավագույն որակի նյութ:

Եգիպտոսում՝ Նեղոսի հովտում, պապիրուսը չափազանց առատ էր: «Բնական պատմություն» աշխատության մեջ հռոմեացի Պլինիոս Ավագը մանրամասն բացատրում է պապիրուսի արտադրության եղանակը: Հորիզոնական կամ ուղղահայաց կտրտված կտորները կազմում են թերթիկներ, որոնք այնուհետև կպցվում կամ սոսնձվում են՝ ստանալու ավելի երկար թերթ, որպեսզի հնարավոր լինի այն ոլորել: Այս մեթոդով են բացատրվում մեզ հասած *փաթեթների* չափերի բազմազանությունը. որոշ փաթեթներ կարող էին ունենալ հինգից մինչև քառասունհինգ մետր երկարություն: Նոր Կտակարանի այնպիսի գրքեր, ինչպիսիք են Պողոսի նամակը Փիլիմոնին, կամ էլ Հովհաննեսի առաջին և երկրորդ նամակները գրվել են, անշուշտ, մեկ թերթի վրա: Պլինիոսը ճշգրտում է, որ մեկ փաթեթը չպետք է անցներ քսան թերթից, որի դեպքում նրա երկարությունը հասնում էր հինգ մետրի: Եթե փաստաթուղթն ավելի երկար էր, փաթեթին ավելացնում էին մեկ կամ ավելի լրացուցիչ թերթեր, մինչդեռ կարճ լինելու դեպքում որոշ թերթեր պոկում էին: Տրամաբանական է մտածել, որ Նոր Կտակարանի սովորական փաթեթը կարող էր ունենալ մոտավորապես տասից տասներկու մետր երկարություն: Փաթաթելուց հետո պապիրուսը ստանում էր քսանհինգ սանտիմետր հաստությամբ և երեքից չորս սանտիմետր տրամագծով գլանակի ձև: Չորս Ավետարաններից ամենաերկարի՝ Ղուկասի Ավետարանի համար անհրաժեշտ եղավ տասից մինչև տասնմեկ մետր երկարությամբ փաթեթ: Նույն հեղինակի «Գործք Առաքելոց»-ի համար պահանջվեց մի երկրորդ փաթեթ. պատճառը ներա-

¹ Թուղթ

ծությունն է, որտեղ խոսվում է «առաջին գրքի» մասին՝ առանց որևէ կասկած - ակնարկ անելու Ղուկասի Ավետարանի վերաբերյալ: Պողոսի՝ Եկեղեցուն ուղղված որոշ նամակներ ևս պահանջեցին մեկից ավելի փաթեթ:

Շիտակ երեսին գրված թերթի հորիզոնական երակներից կախված՝ երակներ կարող են լինել նաև հակառակ երեսին՝ ուղղահայաց ձևով: Այս դեպքում, կարող էին գրել նաև հակառակ կողմի վրա: Կարդալով Հայտնության 5:1 հատվածը՝ հասկանալի է դառնում, թե հեղինակն ինչ նկատի ունի, երբ խոսում է ներսից գրված փաթեթի կամ գրքի մասին:

Գրելու համար անհրաժեշտ նյութեր են նաև, ինքնին հասկանալի է, թանաքն ու գրիչը: Գրիչը պատրաստված է եղեգի երկար կտորից, հունարենում՝ *kallamos*, բառ, որ հիշատակվում է Հովհաննեսի 3-րդ թղթի 13-րդ հատվածում: Գրչի ծայրը բաժանված է երկու մասի և թաթախվում է թանաքի մեջ, որի մասին հիշատակված է Կորնթացիներին ուղղված երկրորդ նամակի 3:3 և Հովհաննեսի երկրորդ թղթի 12-րդ հատվածներում:

Գործածության առումով, պապիրուսի փաթեթը բազմաթիվ անհարմարություններ ունի: Այսպես, մի կողմից՝ հարկավոր էր մեծ խնամքով բացել այն, որպեսզի հնարավոր լիներ կարդալ բնագիրը, մյուս կողմից էլ՝ բնագրի ընթերցանությանը զուգահեռ, դարձյալ մեծ խնամքով, այն ուղորել: Այս մեթոդը դժվարացնում էր նրա գործը, ով պետք է ճշգրիտ տեղեկություն տար բնագրի վերաբերյալ, կամ էլ նայեր փաթեթի մեջտեղում գտնվող այս կամ այն հատվածը: Ահա թե ինչու մտածեցին *կողեքսի* մասին: Վերջինիս էությունն այն էր, որ պապիրուսի թերթերը երկարությամբ այլևս չէին սոսնձվում, այլ դրվում էին իրար վրա՝ հիշեցնելով գրքեր կազմելու ներկայիս եղանակը: Կարծում ենք, որ այս մեթոդը սկսել է կիրառվել մ. թ. մոտ II դարում, և որ առաջինը կիրառել են քրիստոնյաները: Նրանք, գուցե, առաջին հայտնաբերողներն էին: Նմանատիպ կողեքսի հնագույն հատվածը հայտնաբերվել է մեր դարի 20-ական թվականներին և կոչվում է Ռայլանդսի պապիրուս՝ Անգլիայի Մանչեստր քաղաքի այն գրադարանի անվամբ, որտեղ պահպանվում է: Այն բովանդակում է Հովհաննու Ավետարանից մի հատված և թվագրված է մ. թ. II դարի երկրորդ կեսով: Նոր եղանակը փոխում էր նաև հին թերթերի վրա օգտագործվող սյունակների դասավորությունն ու երկարությունը:

2. Մագաղաթ

Պապիրուսի հարաբերական ոչ դիմացկունությունը, հատկապես անբարենպաստ, չափազանց խոնավ կլիմայի պայմաններում, ինչպես Պաղեստինի դեպքում է, նրան երկարակեցություն չապահովեց, այն փոխարինվեց ավելի ամուր նյութով՝ մագաղաթով: Ավանդույթի համաձայն՝ վերջինիս հայտնաբերման ու գործածության աղբյուրը համարվում է Փոքր Ասիայի Պերգամոն քաղաքը, որտեղից էլ մագաղաթի հունարեն անվանումը՝ *pergame'ne'*: Պատմում են, որ Մեգիդոնյում, մ. թ. ա. մոտ VII դարում, Թութոս III-ի հաղթանակի ժամանակ, նրա քաջության մասին գրվեց կաշվե փաթեթի վրա, որը պահվում էր Մունի տաճարում: Ըստ անտիկ աշխարհի հույն պատմաբան Հերոդոտոսի՝ հոները (հույն ազգը կազմող էթնիկական միավորներից մեկը), չկարողանալով հեշտությամբ պապիրուս ձեռք բերել, իրենց տեքստերը գրելու համար, հավանաբար, օգտվել են այս նյութից:

Երբայեցիներն անմիջապես այն ընդունեցին: Մենք տեղեկանում ենք, որ Երեմիա մար-

գարեն գուշակությունների իր գրքերը թելադրել է իր քարտուղար Բարուքին՝ Եր. 36:4: Կարողավ գրվածը՝ Յովակիմ թագավորը անսահման զայրույթի պահին դանակով մաս-մաս է անում և նետում կրակը (36-23):

Ըստ հրեական այժմյան սուրբ գրքի՝ Թալմուդի, Օրենքը գրվել է անասունի կաշվի վրա: Մ. թ. առաջին դարի հրեա պատմաբան Յովսեփոսը տեղեկացնում է, որ հունարեն թարգմանվելու համար («Յոթանասնից» թարգմանություն) Ալեքսանդրիա են ուղարկվել այն մագաղաթները, որոնց վրա գրված էին Յին Կտակարանի գրքերը: Աստիճանաբար մագաղաթի կիրառությունն ընդարձակվեց: Տինոթեսին ուղղված երկրորդ նամակի 4:13 հատվածում առաքյալն իր աշխատակցին խնդրում է բերել membranas-ները՝ գրքերը, դրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ՝ մագաղաթներ: Նշում են, որ մագաղաթը պապիրուսի նկատմամբ վերջնական հաղթանակ է տարել մ. թ. IV դարի ընթացքում: Օրիգենեսի հռչակավոր գրադարանը, ինչպես նաև Պամփիլիոսի գրադարանը Կեսարիայում կործանվելու սպառնալիքի տակ էին: Այդ ժամանակ երկու վանականներ սկսեցին ամեն ինչ արտագրել մագաղաթի կամ vellum-ի վրա: Կոստանդին կայսրը (նույնպես IV դար) Եկեղեցու առաջին պատմաբան Յովսեփոսին խնդրեց մագաղաթի վրա արտագրել հիսուն Աստվածաշունչ: Այդ ժամանակից սկսած՝ կողերքը վերջնականապես ընդունվեց Աստվածաշունչ և այլ գրքեր արտագրելու համար: Գրության կանոնավոր ուղղությունը պահպանելու նպատակով թափանցիկ դարձած հակառակ երեսին գծեր էին քաշում և սյունակները դրվում էին կանոնավոր ձևով:

Palimpseste-ը¹ հունարեն palin (նորից) և psao (քերել) բառերից, մագաղաթ է, որի վրա յից ջնջել են առաջին գրվածքը՝ նոր տեքստ գրելու համար: Ժամանակակից եղանակները թույլ են տվել ընթերցել անգամ քերված գրվածքների հատվածներ:

Երկար ժամանակ օգտվել են ունցիալ կոչվող մեծատառ տառատեսակներից, որոնք եղունգի մեծություն ունեին: Փոքրատառերն սկսեցին օգտագործել ավելի ուշ՝ IX դարից սկսած: Երբ Սուրբ Գրքում տառերը կապվում են իրար, ապա տեքստը կոչվում է «արագագիր»: IX դարից հետո մեծատառերը գործածվում էին միայն գլուխների վերնագրերում: Մեծատառերով են գրվել նաև լատիներեն ձեռագրերը: Առօրյա կյանքին վերաբերող գործերը, սակայն, հիմնականում գրվում էին փոքրատառերով: Արագագիր տեքստերում, առանձին մասերն իրարից անջատելու համար, օգտագործվում էր մի նշան, որը հունարենում կոչվում էր paragraphos: Թվում է, թե կետադրությունն ու եղջերադրությունը երկրորդական էին: Կրճատ գրություններն առատ էին: Տեքստի վերջում հաճախ որևէ նշում (լատիներեն՝ inscriptio) վերարտադրում կամ լրացնում էր վերնագիրը (suscriptio): Երբեմն նշում էին նաև տողերի (stikhos՝ տասնվեց վանկից բաղկացած տող) թիվը, որը թույլ էր տալիս գնահատել դպիրի աշխատանքը և աշխատավարձ նշանակել:

Չրապարակավ ընթերցելու համար նախատեսված ձեռագիր տեքստը, ըստ իմաստի, բաժանվում էր մասերի՝ յուրաքանչյուր կարճ նախադասություն, որ մեկ շնչով ընթերցելու համար էր, սկսելով նոր տողից:

Մագաղաթ կամ պապիրուս չլինելու պատճառով կրկնագիր մագաղաթների օգտագործման դեպքերը VI-IX դարերում ավելի հաճախակի են²:

¹ (Ֆր.) կրկնագիր մագաղաթ

² Steu G. Millon, cours d'introduction à la Bible, étude dactylographiée

Բ. Ձեռագրերը

Բնագիր տեքստը հնարավորին չափ ճշգրիտ ձևով վերականգնելու նպատակով գիտական որոշ առարկաներ ենթարկվում են բառացի քննադատության: Վերջինս նախ և առաջ զբաղվում է հնագիտության՝ հին գրվածքներ ուսումնասիրող գիտության հետ անխուսափելիորեն կապված փաստաթղթերով: Այնուհետև բաղդատման՝ փաստաթղթերի ներքին հարաբերությունն ուսումնասիրելու միջոցով այն կարող է ճշգրտել ազգակցական կապերն ու ձեռագրերի ծագումնաբանությունը՝ տվյալ տեքստի նախատիպը՝ մոդելը, վերականգնելու համար:

Չետո գալիս է փաստաթղթերի տարբերակների միջև ընտրություն կատարելու՝ անլուծելի կամ իբրև ենթադրություն մնացած որևէ դժվար խնդիր լուծելու գործընթացը: Դա հսկայական ջանք պահանջող աշխատանք է և, սակայն, թույլ է տվել մեծ ճշգրտությամբ վերականգնել հունարեն Նոր Կտակարանը կազմող ներկայիս տեքստերը, հատկապես՝ դարի շրջադարձից ի վեր, երբ հրատարակվեց E. Nestle-ի հունարեն Նոր Կտակարանը, իսկ ավելի վերջերս էլ՝ գիտնականներ Kurt Aland-ի, Matthew Black-ի, Bruce Metzger-ի և Allen Wikgren-ի հոգատարության արդյունք աշխատանքը:

Վերջերս հաշվվում էր 81 պապիրոս, 266 ունցիալ, 2754 փոքրատառ և 2135 lectionnaire¹ կոչված ձեռագրեր: Չետևապես, դժվարությունն ընտրելն է: Բացի այդ՝ հունարեն բնագրի ձեռագրերի հետ մեկտեղ անհրաժեշտ է դիմել նաև հնագույն տարբերակներին, ինչպես նաև եկեղեցական Չայրերի գրվածքներում սփռված ասույթներին:

Չավատքի համար ամենակարևորը մեր գլխում առավել հաճախ ծագող այն հարցն է, որ շատ շատերն են բարձրացրել՝ տալով, դժբախտաբար, վատ պատասխան. արդյոք այժմ կարո՞ղ ենք հաստատել, որ ձեռքի տակ գտնվող Աստվածաշնչի տեքստը մեզ հասել է առանց աղավաղման և խորապես խեղաթյուրվելու:

Ներկա գլխում մեր տված պատասխանը դրական է. աստվածային առանձնահատուկ նախախնամությամբ՝ Չոգին, որ հավատարմորեն ներշնչել է հեղինակներին ու նրանց ձեռքով գրված գործերը, նաև հսկել է, որ այդ տեքստերը, անգամ՝ բազմաթիվ պատճենները մեզ հասնեն առանց հայտնության բովանդակությունը խեղաթյուրող աղավաղումների՝ առանց նվազագույն վնաս հասցնելու փրկության գործին, որից ժամանակավորապես և հավիտյան հավիտենից օգտվողներ ենք դարձել Եռաստվածության անսահման ողորմածության շնորհիվ: Սա մեզ համար համարյա անառարկելի պնդում է:

Սակայն, եթե նույնիսկ նախախնամությամբ փոխանցված հնագույն ձեռագրերի վերաբերյալ մեր համոզմունքը կատարյալ է, այնուամենայնիվ, որոշ գրվածքների տարբերակների առաջ բերած մի շարք խնդիրներ բաց են մնում:

Նա, ով երբևէ ձեռնամուխ է եղել քիչ թե շատ երկար որևէ տեքստ օգտագործելու գործին, անմիջապես իրեն հաշիվ կտա, որ արտագրության ժամանակ սխալ թույլ չտալը գործնականորեն անհնար է: Իսկ եթե այս արտագրված առաջին տեքստից անհրաժեշտ է հանել այլ պատճեններ, ապա հասկանալի է դառնում, որ առանձին սխալներին կավելանան այլ սխալներ ևս, այնպես, որ արտագրությունների շղթան հարյուր տոկոսով այլևս նման չի լինի բնագրին:

¹ Սուրբ Գրքի զանազան նյութերի շուրջ հատվածներ, որ կարդացվել են պատարագների ժամանակ:

Ուստի, չենք վախենում ընդունել, որ Նոր Կտակարանը մեզ հասել է բազմաթիվ «վթարներից» հետո, մի բան, որը թերևս հատուկ է անտիկ աշխարհի կտակած ցանկացած արժեքի:

Դպիրների սխալների պատճառը նաև գրության պարզունակ մեթոդն է: Իրոք, արագագիր գրությունը հնարավորություն չի տալիս հեշտությամբ ընթերցել տողերն ու բառերը, քանզի դժվար է տարբերակել միասին գրված երկու տառերը և կամ էլ գտնել որևէ նախադասության ճիշտ ավարտը: Երբեմն սխալ անջատված մեկ վանկի կամ ենթազլխի սկզբի պատճառով արտագրողը սխալմունքի մեջ է ընկել:

Մեկ այլ դեպքում էլ բառին այլ իմաստ կարող է հաղորդել սխալ շեշտը: Չափազանց տարածված է omikron-ը՝ փոքր «o»-ն, omega-ով՝ մեծ «o»-ով փոխարինելու սխալը:

Սխալն անխուսափելի էր, երբ ուղղելու նպատակով վերընթերցելու գործը հանձնարարում էին ստրուկներին, որոնք չունեին գրական կայուն գիտելիքներ: Ինչ արած, խնայողությունն էր պահանջում: Մինչդեռ էժանագին աշխատուժը բավականին թանկ էր՝ բացարձակապես առանց սխալի գրական արժեքներ փոխանցելու առումով: Եվ զարմանալի չէ, որ հունարեն Նոր Կտակարանի հազարավոր ձեռագրերից մեր տրամադրության տակ գտնվող ավելի քան հինգ հազար ձեռագրերի մեջ չկան սկզբից մինչև վերջ բացարձակապես նման գոնե երկուսը: Բացի այդ, եթե հաշվի առնենք նաև այն փաստը, որ հունարեն բնագիր տեքստից մինչև արտագրված ամենահին ձեռագիր տեքստ անցումը, առնվազն, երկու հարյուր հիսուն տարի է, ապա կհասկանանք, թե որքան մեծ էր բնագիրն աղավաղելու վտանգը:

Ջարմանալի բան, որն է՛լ ավելի է մեծացնում վստահությունը մեր հավատին լիովին արժանի ձեռագրերի հանդեպ. ձեռքի տակ եղած ամենահին ձեռագիրը թվագրված է բնագրից 250 տարի հետո ընկած ժամանակով, իսկ ձեռագրերի հատվածները՝ 150 տարի, մինչդեռ, երբ խոսքը վերաբերում է դասական այլ բնագրերի, օրինակ՝ հռոմեացի հեղինակ Վերգիլիոսի գրվածքներին, ապա ամենահին արտագրությունն արվել է 350 տարի անց, հույն հեղինակ Դեմոսթենեսինը՝ 1200, Աթենքի Ակադեմիայից Պլատոնի գրվածքներինը՝ 1300, հույն ողբերգակներինը՝ 1400 և ավելի տարի անց: Ներկայումս ունենք էսքիլեսի ողբերգությունների մոտ հիսուն ընդօրինակություն միայն, Սոֆոկլեսից՝ հազիվ հարյուր: Մինչդեռ Նոր Կտակարանը հարուստ բերք է պարգևել մեզ. ավելի քան 5000 ամբողջական բնագրեր կամ բնագրերի հատվածներ: Հնագույն թարգմանությունների ձեռագրերը մոտ 10 000-ի են հասնում: Կարելի է հասկանալ, որ դրանց մեջ նաև փոփոխված տարբերակներ են, որոնք, սակայն, բրիտանացի երկու նշանավոր մասնագետների՝ Westcott-ի և Hort-ի կարծիքով, չեն գերազանցում Նոր Կտակարանի բովանդակության հազարերորդ մասը: Իսկ Նոր Կտակարանի մեկ այլ մասնագետի՝ Sir Frederic G. Kenyon-ի պնդմամբ՝ քրիստոնեական հավատքի և աստվածաշնչական դոգմայի և ոչ մի հոդված չի հենվում վիճելի տեքստի վրա:

Ելնելով բառացի քննադատությունից՝ կարելի է պնդել, որ Նոր Կտակարանի հունարեն բնագիրը Աստվածաշնչով ներշնչված առաջին հեղինակների ձեռքի գործն է: Նոր Կտակարանի հատուկ թողարկման տողատակի քննադատական ապարատը ներկայացնում է հավաքված բոլոր տարբերակները և բնագիրը վերահսկելու, քննության առնելու հսկայական հնարավորություն ընձեռում:

Պատմությունը ուսումնասիրելու (որը, ճիշտն ասած, հափշտակող է), Նոր Կտակարանի բնագիրը հաստատելու (սկսած Էրազմից՝ XVI դար. Textus Receptus՝ ստացված տեքստ)

անհնարինության, ինչպես նաև այդ բնագրի և Nestle-Aland-յան ժամանակակից տեքստի պարտիզանների միջև ծագած վեճին չխառնվելու պատճառով կսահմանափակվենք միայն ձեռագրերի աղբյուրների թվարկմամբ: Դրանք երեքն են՝ Նոր Կտակարանի հունարեն ձեռագրեր, հնագույն թարգմանությունների ձեռագրեր, Նոր Կտակարանից հատվածաբար մեջբերումներ պարունակող, եկեղեցական Չայրերին վերագրվող ձեռագրեր:

Ինչ վերաբերում է ձեռագրերի ուսումնասիրության պատմությանը, ապա այն բաժանվում է երեք շրջանների՝ պապիրուսի (սկսած Քրիստոսից առաջ 2000 թվականից, մինչև մ. թ. ա. VII դար), այսպես կոչված մագաղաթի (տարածվում է հատկապես մ. թ. ա. III դարից մինչև Չիսուս Քրիստոսից հետո XV դար) և, վերջապես, քղթի շրջան, որը սկիզբ է առնում արդեն իսկ XIV դարից: Քանի որ վերջինս համընկնում է տպագրության շրջանին, դրան անդրադառնալու անհրաժեշտություն չենք տեսնում:

Մենք տեսանք, որ պապիրուսի շրջանն ամենաերկարն է: Ինչ վերաբերում է գրության եղանակին կամ գրելու արվեստին, ապա այն ևս բաժանվում է երկու մասի՝ մեծատառերի շրջան, որը տարածվում է մինչև X դարի վերջը, և քծոն-ի կամ փոքրատառերի շրջան, որը սկիզբ է առնում մ. թ. VIII դարից:

Այդքան ձեռագրերի առկայության պայմաններում զգացվում է ծայրաստիճան մանրակրկիտ համեմատական ուսումնասիրության անհրաժեշտություն: Դրանք տարբերակելու համար հարկ եղավ նաև նշագրումներ անել: Չատուկ նշանով բոլոր ձեռագրերն իրարից տարբերվում են (ովքեր հնարավորություն ունեն, խորհուրդ ենք տալիս կարդալ Nestle-Aland-ի հրատարակած հունարեն Նոր Կտակարանի ներածությունը):

Պապիրուսի վրա արված ձեռագրերը համեմատաբար փոքրաթիվ են: Դրանք նշագրվում են որևէ թվով ուղեկցված «p» տառով: Որոշ ձեռագրեր (խումբը կոչվում է Chester Beatty) հայտնաբերվել են Եգիպտոսում՝ 1930 թվականին՝ առատ լույս սփռելով ինչպես Նոր Կտակարանի բնագրի, այնպես էլ վերջինիս բովանդակությանը վերաբերող այլ հարցերի վրա:

Մագաղաթի վրայի ձեռագրերը նշագրված են այլ մեթոդով: Ներկայումս ուժի մեջ գտնվող համակարգը մշակվել է գիտնական J. J. Westsein-ի, այնուհետև՝ C. R. Gregory-ի կողմից: Մեծատառերով գրված ձեռագրերը նշվում են կամ լատիներենով (A, B, C, D...), կամ հունարենով (Γ, Δ, Θ), կամ էլ արաբական թվերով (1,2,3...):

Նոր Կտակարանի ձեռագրերի մի կարգն էլ պաշտամունքային արարողությունների ժամանակ տրվող պատարագի տեքստերի lectionnaire-ներ են: Դրանք բաժանվում են Ավետարանների, եթե հատվածներ են բովանդակում Ավետարաններից, կամ էլ Առաքյալների, եթե խոսքը նրանց թղթերի մասին է: Վերը նշված տեքստերի համեմատ, վերջիններս չնչին արժեք են ներկայացնում, քանի որ պաշտամունքի կարիքներից ելնելով՝ հաճախ հարկ էր լինում դրանք հարմարեցնել բնագրին: Չիշյալ տեքստերը նշվում են «L» տառով նախորդված արաբական թվանշանով:

Վերջացնելով թվարկենք ամենահայտնի ձեռագրերը. codex Vaticanus (B), codex Alexandrinus (A), codex Sinaiticue, Palimpseste d'Ephraim le Siriaque (C), codex Bezae (D), codex Claramontanus (Dc):

Գ. ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Այստեղ վերարտադրում ենք մեր փաստաթղթերի մեջ գտնվող անստորագիր մի տեքստ, որը համառոտ տալիս է ձեռագրերը լույս տեսնելու տարեթվերը՝ հնագույն ձեռագրերից մինչև ավելի նորերը:

Ք. ա. V - I դ. – Աստիճանաբար հավաքվում են Հին Կտակարանի գրքերը (Օրենք, Մարգարեություններ, Սաղմոսներ և այլ գրվածքներ):

Ք. ա. 300-130 թթ. – Եգիպտոս, հունարեն Հին Կտակարանի «Յոթանասնից» կոչված թարգմանություն:

Ք. ա. III դ. – Սամուելի փաթեթից եբրայերեն մի հատված՝ Qumran-ից. աստվածաշնչյան բնագրի հնագույն վկան:

Ք. ա. II դ. – Ռայլանդսի պապիրուսները (հուն.՝ 458 թ.) Մանչեստրում և Fouad-ինը (266 թ.) Կահիրեում. «Յոթանասնից»-ի հնագույն վկաները:

Ք. ա. I դ. – Եսայի մարգարեի փաթեթը (Qumran) եբրայերենով: Nash-ի (Քենթրիջ) պապիրուսը՝ եբրայերենով: Հատված Ղևտացիների գրքից (Qumran). «Յոթանասնից»-ի թարգմանությունից: Ջատիկ 30 թ. (?) – Հիսուս Քրիստոսի մահը:

50 - 64 թթ. – Պողոսի նամակների կամ թղթերի, Ավետարանների և «ընդհանրական» նամակների շարադրումը հունարենով:

I դ. վերջ – աստվածաշնչյան բազմաթիվ գրվածքներ հաճախ I դարից են՝ արտագրված Եգիպտոսում, պապիրուսի վրա: Անցում փաթեթից՝ գրքին (կողեքս):

Մոտ 125 թ. – Ռայլանդսի պապիրուսը (p 52)՝ Նոր Կտակարանի հնագույն հատվածը (Հովհ. 18:31-33 և 37-38):

Մոտ 125 թ. – Մարկիոնը (85-160) ի մի է բերում Ղուկասի Ավետարանն ու Պողոսի տասը թղթերը: Բացառիկ այս ընտրությունը Եկեղեցուն մղում է ուսումնասիրել քրիստոնյաների արդեն մեծաթիվ գրվածքները և ընդունել Նոր Կտակարանի կանոնը:

Մոտ 150-170 թթ. – Նոր Կտակարանի թարգմանումը. լատիներեն՝ Արևմտյան Եվրոպայում (հին լատիներեն, իտալա), սիրիերեն՝ Արևմտյան Ասիայում (Քառամատյան կամ Ավետարանների սինոպսիս Դաթիանոսի կողմից (120-173):

Մոտ 200 թ. – Նոր Կտակարանի գրվածքները՝ իբրև կանոնական գործեր, ներկայացվում են Եկեղեցու դատին:

Մոտ 200-250 թթ. – Bodmer պապիրուսը (p 66). Հովհաննու Ավետարանի երկու երրորդը (գլուխներ 1-14): Chester Beatty-ի պապիրուսները. Ավետարանների և «Գործք Առաքելոց»-ի մեկ քառորդը (p 45), Պողոսի թղթերի հինգ վեցերորդը (p 46), հատված «Հայտնություն»-ից (p 47):

III դ. – Նոր Կտակարանի թարգմանումը ղպտիերեն (Վերին և Ստորին Եգիպտոս):

Մոտ 232 թ. – Նոր Կտակարանից ներշնչված՝ նկարիչները նկարազարդում են Եփրատի (Արևմտյան Սիրիա) ափին գտնվող քրիստոնեական Doura-Europos մատուռը:

240-245 թթ. – Օրիգենեսը (185-254) գրում է Hexaples¹ մեծածավալ գործը, որը վեց սյունակներում բովանդակում է եբրայերեն երկու տեքստ և Հին Կտակարանի հունարեն չորս տարբերակ:

¹ Վեցամատյան

303 թ. – Քրիստոնյաների հալածումը Դիոկղետիանոսի օրոք (284-305):

313 թ. – Քրիստոնեության և հռոմեական կրոնի միջև հավասար իրավունքների հռչակում Կոստանդին Մեծի կողմից (կայսր՝ 306-337 թթ.):

350-380 թթ. – Վուլֆիլան (311-383)՝ գոթերի առաքյալը. ստեղծում է այբուբեն և ներկայիս Բուլղարիայում գոթերեն թարգմանում Աստվածաշունչը:

IV-V դդ. – Մագաղաթն մեծ կողեքսները:

Մոտ 350 թ. – Vaticanus և Sinaiticus կողեքսները:

Մոտ 430 թ. - Alexandrinus կողեքսը:

Մոտ 450 թ. - Ephraem կողեքսը:

Մոտ 500 թ. - Bezae կողեքսը:

381 թ. – Քրիստոնեությունը հռչակվում է Հռոմեական կայսրության պետական կրոն:

382-420 թթ. – Հերոնիմոսը (331-420) իրականացնում է լատիներեն Աստվածաշունչի՝ Վուլգատայի նոր թարգմանություն: Նույն շրջանում Աստվածաշունչը թարգմանվում է հայերեն:

Մոտ 500 թ. - «Արծաթյա կողեքս» (Վուլֆիլայի գոթերեն Աստվածաշունչ):

Մոտ 530 թ. – Դիոնիսիոսը ջանում է գտնել Քրիստոսի ծննդյան թիվը: Նա մտցնում է նոր՝ քրիստոնեական դարաշրջանի սկիզբը Քրիստոսի ծննդից հաշվելու կիրառությունը:

V-X դդ. – Մասորետների (հրեա գիտնականների) աշխատանքը Տիբերիայում և Բաբելոնում՝ Հին Կտակարանի եբրայերեն բնագրի վրա:

Մոտ 800 թ. – Կայսր Շառլեմանյի սահրանքով Վուլգատան ստուգման է ենթարկվում Ալբրուինի (726-804) կողմից: Մատթեոսի Ավետարանի թարգմանումը հին վերին գերմաներեն (ֆրանկյան - բավարական):

X դ. – Հին Կտակարանի եբրայերեն բնագիրը Տիբերիայում վերանայվում է Moise ben Ascher-ի կողմից՝ մեկնաբանություններով: Notkker le Lippu-ն (952-1022 թթ.) Սեն Գալում Սաղմոսները թարգմանում է գերմաներեն:

Մոտ 1100 թ. – «Սաղմոսագրի» հին ֆրանսերենով (նորմանդական խոսվածք) թարգմանումը Լանֆրանի (1005-1089 թթ.) վանական աշակերտների կողմից: Էդուինի՝ 1120 թվականի արտագրությունը:

XII դարի վերջ – Պիեռ Վալդոն ֆրանսերեն է թարգմանել տալիս Աստվածաշունչի մի քանի գրքեր (Ավետարաններ):

XIII դարի սկիզբ – Էթիեն Լանգտոնը (Կանտորբերիից. դասախոս՝ Փարիզում և Շառլոանի Աստվածամոր Տաճարում) Աստվածաշունչը բաժանում է գլուխների:

XI-XV դդ. – Մեր գրադարաններում գտնվող Աստվածաշունչի ձեռագրերի մեծ մասն այս դարաշրջանից է: Անցում մագաղաթից թղթին:

1226-1250 թթ. – Ֆրանսերեն առաջին Աստվածաշունչը Փարիզի համալսարանի դասախոսների կողմից՝ ս. Լյուդովիկոսի թագավորության օրոք:

1382 թ. – Վուլգատայի հիման վրա Աստվածաշունչի անգլերեն առաջին թարգմանության իրականացումը Ջոն Ուիքլիֆի կողմից:

Գ Լ ՈՒ Խ 4.

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն գլխում քննության կառնվի Աստու խոսքը հաղորդելու նպատակով Աստվածաշնչի թարգմանության հարցը: Փրկության Ավետիսը՝ Աստվածաշնչի լուրը, քրիստոնյա միսիոներների կողմից թարգմանվել և արտագրվել է տվյալ ժողովրդի խոսակցական լեզվով: Ասիայում սիրիերեն կամ արամերեն, Եվրոպայում՝ լատիներեն կամ գոթերեն, Աֆրիկայում՝ դպտիերեն կամ եթովպերեն: Ներկայումս Աստվածաշունչը թարգմանված է հարյուրավոր լեզուներով ու խոսվածքներով, մի բան, որը հնարավորություն է տալիս ավետարանել մեր մոլորակի ժողովուրդներին ու ցեղերին:

Չնագույն ժամանակներից ի վեր, Աստվածաշունչը թարգմանելու և գրավոր լեզու չունեցող ժողովուրդներին մատչելի դարձնելու նպատակով բազմաթիվ թարգմանիչներ բախվել են (օրինակ՝ հայերեն թարգմանելու համար) գրավոր լեզուներ ստեղծելու անհրաժեշտության խնդրին:

Թարգմանության, մասնավորապես գրավիչ պատմություն ունեցող հնագույն որոշ թարգմանությունների քննությանն անցնելուց առաջ ասենք, որ միջնադարյան Եվրոպայում շատ քրիստոնյաներ տառաճանաչ չէին: Ուստի, Եկեղեցու առջև ծառայալ կարդալ չիմացող ժողովրդին լուրը հաղորդելու խնդիրը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ թուղթ դեռևս չկար, իսկ սակավաթիվ ձեռագրերն արտոնված էին ուսյալ մարդկանց, իսկական շքեղություն ամբողջ ժողովրդի համար: Տաճարների քանդակները, նկարներն ու ապակեմախշերը՝ «քարե աստվածաշնչերը» ձգտել են լուրը մատչելի դարձնել քրիստոնյա յուրաքանչյուր ժողովրդի:

Ա. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ «ՅՈԹՆԱՍՆԻՑ» ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նոր Կտակարանի թարգմանությունների վերաբերյալ թռուցիկ ակնարկից առաջ մի քանի խոսք ասենք «Յոթանասնից» թարգմանության մասին, որը երբայերեն Հին Կտակարանի հունարեն թարգմանությունն է:

Աստվածաշնչի հնագույն թարգմանիչները մեզ անծանոթ են, նրանք եգիպտացի հրեաներ են, ովքեր Ք. ա. III դարից սկսած, Ալեքսանդրիայի իրենց համակրոնակիցների համար ձեռնարկել են Չնգամատյանը, այնուհետև Հին Կտակարանի մնացած մասը հունարեն թարգմանելու գործը: Այս թարգմանիչներն, իրոք, համարյա այլևս չէին խոսում եբրայերեն, իսկ մյուս կողմից էլ մտահոգված էին իրենց սուրբ գրվածքներն ու հավատքը այն ազգություններին (gouim) ճանաչել տալու խնդրով, որոնց մեջ հաստատվել էին:

Արիստեին վերագրվող ավանդության համաձայն, որը մեզ է հասել Փիլոն Ալեքսանդրացու և Հովսեպոսի կողմից, «Յոթանասնից» թարգմանությունը, Պտղոմեոս 2-րդ Փիլադելփոսի խնդրանքով, իբր իրականացրել են Պաղեստինից ժամանած յոթանասուններկու հրեա գիտնականներ (յուրաքանչյուր ցեղից՝ վեցական): Այս աշխատանքը կատարելու համար տեղավորվելով Փարոս կղզում՝ յուրաքանչյուրն իր հերթին, իբր, թարգմանությունն ավար-

տել է յոթանասուներկու օրում, և որ արդյունքների համադրումն ու համեմատումը հնարավորություն է ընձեռել հաստատելու եղած յոթանասուներկու տեքստերի կատարյալ նմանությունը: Հին Կտակարանի հունարեն թարգմանությունը՝ «Յոթանասնից»-ը, իր անունը ստացել է յոթանասուներկու թվից:

Մինչդեռ, իրականում այս թարգմանությունն, անշուշտ, իրականացվել է աստիճանաբար և տարբեր եղանակներով: Չափազանց մեծ տարածում ստանալու պատճառով «Յոթանասնից»-ը դարձել է Նոր Կտակարանի հեղինակների մեծ մասի վկայակոչման աղբյուրը, ինչպես նաև առաջին դարերի քրիստոնեական համայնքների մեծամասնության Աստվածաշունչը, իսկ Արևելքի Եկեղեցիներում այն այսօր ևս հեղինակություն է վայելում: «Յոթանասնից»-ի՝ հետաքրքրություն ներկայացնող գլխավոր գծերից մեկն այն է, որ ելնում է ոչ թե Հին Կտակարանի ավանդական բնագրից, այլ եբրայերենից:

Բ. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոր Կտակարանի հնագույն թարգմանությունները կանոնական այս ժողովածուի բնագրի մեջ իմացության երկրորդ աղբյուրն են: Դրանց նշանակությունը կկարևորվի, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ սիրիերեն ու լատիներեն թարգմանությունների իրականացման գործին ձեռնամուխ են եղել ներկայումս ձեռքի տակ եղած Codex Vaticanus-ից 200 տարի առաջ: Ուստի, եթե հնարավոր լիներ վերականգնել հունարեն այն բնագիրը, որ իրենց աշխատանքն իրականացնելու համար թարգմանիչներն ունեին աչքի առաջ, համարյա թե կկարողանայինք ձեռք բերել հունարեն հին ձեռագրերից 200 տարով ավելի վաղեմություն ունեցող բնագիր տեքստ: Այստեղից էլ՝ հնագույն թարգմանությունների շատ կարևոր լինելու հանգամանքը: Ակնհայտ է, որ մնացորդակա աշխատանքի արդյունքները կարող են մատուցել իրական ծառայություններ: Հարկ է նաև հասկանալ, որ սկզբնաղբյուրների առկայության դեպքում հիշյալ թարգմանությունների արժեքն ավելի կմեծանար: Սակայն, դժբախտաբար, սկզբնաղբյուրները ևս անհետացել են, ունենք սոսկ պատճենները և բախվում ենք հունարեն բնագրին վերաբերող նույն խնդրին: Այստեղ ևս հարկ կլինի հաշիվ տալ մեր հավատքին արժանի և հունարեն բնագիրը հնարավորին չափ հավատարմորեն գտնելու գործում մեզ օգնող տեքստի մասին:

1. Սիրիերեն թարգմանություններ

Ամբողջ Աստվածաշնչի Հին և Նոր Կտակարանների թարգմանության գործը ձեռնարկվել է սիրիերեն լեզվով:

Անտիոքում Ավետարանի թարգմանության վերաբերյալ տեղեկություններ է հաղորդում Ղուկասը (Գործք 11:19): Անտիոքը շրջանի երկրորդ կարևոր քաղաքն էր, որ կարող էր մրցել Եգիպտոսում՝ Ալեքսանդրիայի, իսկ Փոքր Ասիայում՝ Եփեսոսի հետ: Այն փաստը, որ Ավետարանը քարոզել է քաղաքում կամ էլ շրջակա տարածքներում, և որ այստեղ խոսում էին հունարեն, հունարեն բնագրերը բավարար էին նշված շրջանում Եկեղեցի ստեղծելու համար: Բայց երբ Ավետարանը թափանցեց Սիրիայի խորքերը, ինչպես նաև Միջագետք, զգացվեց Աստվածաշունչը սիրիերեն թարգմանելու կարիքը:

Եղան թարգմանական բազմաթիվ փորձեր, որոնցից հնագույնը նշանավոր Diatessaron-ն¹ է՝ մի տեսակ սինոպսիս, բառացիորեն՝ «չորսի Ավետարան»: Սա Նոր Կտակարանի ամենահին թարգմանությունն է և թվագրված է երկրորդ դարով: Համարվել է հերետիկոսական տեքստ: Դժբախտաբար, բնագիր ոչ մի տեքստ ամբողջապես չի պահպանվել: Նշված թարգմանությանը կարելի է հանդիպել արաբերեն մի տարբերակում՝ Ephraim le Syriacque-ի մի մեկնության մեջ, ինչպես նաև սիրիացի հեղինակների ասույթներում, Fuldensis կողմից պահպանված լատիներեն Քառամատյանում, միգուցե՝ ֆլամանդերեն տարբերակի ներդաշնակության մեջ և, վերջապես, Doura-Europos-ում վերջերս հայտնաբերված հունարեն մի թերթիկում: «Քառամատյան»-ը չէր կարող բոլորին գոհացնել: Բավականին վաղ ի հայտ եկան չորս Ավետարանների այլ թարգմանություններ, որոնք հայտնի են «Mephareresche Ավետարան», այսինքն՝ «Առանձինների Ավետարան» կամ «Առանձին Ավետարաններ» անվամբ՝ Դաթիանոսի «Քառամատյան»-ից տարբերելու նպատակով: Ամենահին ձեռագիրը IV դարի կրկնագիր մի մագաղաթի վրա է: Հայտնաբերվել է 1892 թվականին Սինա լեռան վրա գտնվող Սուրբ Եկատերինա վանքում: Կարելի է գտնել սիրիերեն հնագույն թարգմանությունների այլ հետքեր ևս:

Peschita-ն, որը թարգմանաբար նշանակում է «պարզ», Հին Կտակարանի սիրիերեն թարգմանությունն է, բայց թվում է, թե Նոր Կտակարանի թարգմանությունը Հին Կտակարանի թարգմանությունից ավելի նոր է: Ավելի շուտ՝ խոսքը Միջագետքի Եդեսիա քաղաքի եպիսկոպոս Ռամբուլայի (411-435) կատարած թարգմանության վերանայված տարբերակի մասին է: Այս թարգմանության վերանայման ժամանակ Կոստանդնուպոլիսը դարձել էր Եկեղեցու խոշոր կենտրոն: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Peschita-ի բնագիրը համապատասխանում է Կոստանդնուպոլսից եկող հունարեն ձեռագրերի բնագրին:

Հետևապես, նշված թարգմանությունը IV դարում գոյություն է ունեցել, փաստ, որը հաստատվում է Իսահակ Անտիոքցու կողմից: Դժվար է ավելի հին տարեթիվ առաջարկել Peschita-ի համար: Սիրիացիների կարծիքով, այս թարգմանությունը չի բովանդակում չորս փոքրիկ թղթերը (Պետրոսի երկու, Հովհաննեսի 1-ին, 2-րդ և 3-րդ թղթերը, Հուդայի թուղթը), Հովհաննու «Հայտնությունը», ոչ էլ մի քանի այլ հատվածներ: Սրանք ավելացվել են հավանաբար ավելի ուշ:

Ֆիլոքսենյան թարգմանությունը եպիսկոպոս Ֆիլոքսեն Սիրիացու պահանջած նոր թարգմանությունն է, թվագրված 508 թվականով: Պահպանվել է մի քանի հատված:

Հերակլյան թարգմանությունը իր անունն ստացել է Հերակլես եպիսկոպոսի անունից: Հունարեն ձեռագրերի օգնությամբ՝ վերջինս ձեռնարկել էր ֆիլոքսենյան թարգմանության վերանայման գործը: Պահպանվել է մոտ երեսուն ձեռագիր: Թարգմանությունը հավատարիմ է հունարենին:

Սիրիա-պաղեստինյան թարգմանությունը իրականացվել է արամեական այլ թարգմանություններին ավելի մոտ խոսվածքով, այն լեզվով, որով խոսել է մեր Տերը: Պահպանվել է միայն մի քանի հատված: Մեզ է հասել նաև Ավետարանների՝ XI և XII դարերի երեք թարգմանություն lectionnaire-ներում, մյուսները (Գործք Առաքելոց, Թղթեր) թվագրված են 842 թվականով:

¹ Քառամատյան

2. Ղպտիերեն (կամ եգիպտերեն) թարգմանություններ

Հիշենք, որ Ալեքսանդր Մեծի ժամանակաշրջանից ի վեր եգիպտոսում խոսում էին հունարեն, և Ալեքսանդրիան դարձել էր հունական մշակույթի ու գրականության ամենահայտնի կենտրոններից մեկը: Ալեքսանդրիայի գրադարանում պահվում էին դասական փաստաթղթերի անգնահատելի գանձեր: Եգիպտոսը նաև մի շրջան էր, որտեղ հրեաներն ապրում էին մեծ համայնքներով և, մոռանալով մայրենի լեզուն, խոսում էին միայն հունարեն: Հենց այստեղ ձեռնարկվեց Աստվածաշնչի «Յոթանասնից» թարգմանության գործը: Երբ Ավետարանը թափանցեց այս երկիրը, ավելի ճիշտ՝ ժողովրդական խավերի մեջ, ապա զգացվեց Նոր Կտակարանը բազմաթիվ բարբառներով թարգմանելու անհրաժեշտությունը:

Հին եգիպտերեն թարգմանությունը, որը գրվել է հարավում՝ Նեղոս գետի աղբյուրների մոտ գտնվող Վերին Եգիպտոսի բարբառով, հավանաբար եգիպտերեն հնագույն թարգմանությունն է: Թվագրված է, հավանաբար, Ք. հ. 200 թվականով, սակայն Ստորին Եգիպտոսի հյուսիսում գործածվող բոհարական թարգմանությունից պակաս հավատարիմ է:

Եգիպտերեն խոսվածքներից ամենից ավելի տարածվածը Նեղոսի ավազանի խոսակցական լեզուն էր: Հենց այս լեզվով է ղպտիական Եկեղեցու պաշտոնական թարգմանությունը:

Կան Միջին Եգիպտոսի՝ վերջերս հայտնաբերված այլ թարգմանություններ ևս, որոնց ուսումնասիրությունը դեռևս ավարտված չէ:

3. Հայերեն թարգմանություններ

Աստվածաշնչի հայերեն թարգմանության իրականացումը չափազանց հետաքրքիր պատմություն ունի, այս մասին արժե երկար խոսել: Եթե ընդհանուր առմամբ հայտնի է «Յոթանասնից»-ի կամ Վուլգատայի պատմությունը, ապա քրիստոնյաները հազվադեպ են լսել Աստվածաշնչի հայերեն թարգմանության հետ կապված արտառոց պատմությունը:

Լինելով առաջին երկիրը, որը 301 թվականին, Տրդատ թագավորի օրոք և Գրիգոր Լուսավորչի արտասովոր առաքելությամբ, քրիստոնեությունն ընդունեց իբրև պաշտոնական կրոն, հայկական Եկեղեցին մեկ դար շարունակ Աստվածաշունչն ընթերցում էր սիրիերենով կամ հունարենով: Այդ ժամանակ հայերեն Աստվածաշունչ չկար, քանզի չկար նաև հայկական այբուբեն: Քրիստոնեական հավատքը սասանյան պարսիկ հարևանի՝ մազդեզական կրոնի հարձակումներից պաշտպանելու, ինչպես նաև բյուզանդական կայսրության ճնշմանը դիմադրություն ցույց տալու նպատակով Սահակն ու նրա աջ թևը՝ Մեսրոպ քահանան, աշխատեցին հայ ժողովրդի հոգևոր ու ազգային միասնության հաստատման ուղղությամբ: Վերջինս հորինեց հայկական այբուբենը և, անմիջապես, հայտնի եկեղեցականների համագործակցությամբ, ձեռնամուխ եղավ Աստվածաշնչի թարգմանության գործին, որի արդյունքը V դարի սկզբում (409 թ.) Աստվածաշնչի թարգմանության գոհարներից մեկի ստեղծումն էր: Չափազանց անկայուն քաղաքական պարագաներում, երբ մազդեզական արևելքի, ինչպես նաև քրիստոնեական Բյուզանդիայի կողմից եկող վտանգը Հայաստանը սուզել էր քաոսի մեջ, այդ մարդկանց հավատքն ու քաջությունը ժողովրդին եզակի գործիք և բացառիկ զենք պարզևեցին՝ դիմակայելու ինչպես հոգևոր հեթանոսությանը, այնպես էլ օտարերկրյա պետությունների ռազմաքաղաքական ճնշմանը:

Իր տեսակի մեջ եզակի փաստ է՝ ստեղծել ավարտուն այբուբեն՝ բացառապես ամբողջ մի ժողովրդի քրիստոնեական Աստվածաշունչ պարզևեղու նպատակով: Գիտնականները Աստվածաշունչի հայերեն թարգմանությունն անվանել են «թարգմանությունների թագուհի»: Յուրաքանչյուր հայ հավատացյալ հպարտանում է՝ լսելով, որ միայն իր լեզուն է բառացիորեն վերարտադրում Աստվածաշունչի հունարեն վերնագիրը՝ հայտնի theopneustos-ը հայերենի «Աստվածաշունչ»-ն է, որը նշանակում է՝ Աստուծոց ներշնչված: Վերոհիշյալ մարդիկ ձեռնամուխ են եղել նաև հարևան ժողովրդի՝ վրացիների համար այբուբեն ստեղծելու գործին, որպեսզի նրանք ևս կարողանան Աստվածաշունչը թարգմանել իրենց լեզվով: Ներկայումս կան վրացերեն մոտ տասնյոթ ձեռագիր տեքստեր, որոնցից երկուսը թվագրված են IX դարով, ինչպես նաև կրկնագիր մագաղաթի վրա արված, VII դարից եկող մի քանի հատված: Հայերեն Աստվածաշունչի ամենահին ձեռագիրը թվագրված է 887 թվականով, իսկ ձեռագրերի մեկ այլ խումբ՝ X և XI դարերով:

4. Լատիներեն թարգմանություններ

Մենք տեսանք, որ Ք. ա. II դարից սկսած՝ հունարենը տարածվեց Իտալիայում՝ դառնալով խոսակցական երկրորդ լեզուն և դա հատկապես Կորնթոսի կործանումից հետո (146 թ.), երբ բազմաթիվ հույն փախստականներ բնակություն հաստատեցին թերակղզում: Հռոմեական հասարակությունը դարձավ երկլեզու. երբ ուզում էին խոսել հունարեն կամ լատիներեն, ապա դա նշում էին *utraque lingue* արտահայտությամբ, որ նշանակում է՝ «այս կամ այն լեզվով»:

Շատ վաղ՝ II և III դարերում, լատիներեն թարգմանություններ հայտնվեցին Իտալիայում, Գալիայում, Իսպանիայում և Հյուսիսային Աֆրիկայում: Մեծ տարածում գտան հին լատիներենով (*vetus latina* և *itala*) թարգմանությունները: Կիպրիանոսը օգտագործում է հատվածներ աֆրիկյան, *Ruffin*-ը՝ եվրոպական, իսկ Օգոստինոսը՝ իտալերեն թարգմանությունից: Այս ձեռագրերի քիչ պատճեններ են պահպանվել: Որոշ «կողեքսներ» բովանդակում են առանձին թերթիկներ, մյուսները լատիներեն հին թարգմանության և Վուլգատայի խառնուրդ են: Մի քանի ձեռագրեր էլ գալիս են IV դարից և նշագրված են փոքրատառերով: Հիշատակենք *Bobbiensis* և *Palatinus* կողեքսները, *Floriacensis* կրկնագիր մագաղաթը, հատվածներ *Freisig*-ից, *Vercellensis*-ի, *Veronesis*-ի կողեքսները. այս երկուսը բովանդակում են Ավետարաններ: Բազմազան թարգմանությունների միջև տարբերությունները առաջացրին վերանայման կարիք. դրան ձեռնամուխ եղան Իտալիայում IV դարում:

Ծնված լինելով ներկայիս Վենետիկում՝ Հերոնիմոսն ուղարկվեց Հռոմ, որտեղ քսան տարեկանում մկրտվեց: Երեսուն տարեկանին մոտ, անապատի վանականների հետ հինգ տարի անցկացրեց Արաբիայում և, օգտվելով առիթից, նախքան Անտիոքի քահանա կարգվելն ու Կոստանդնուպոլսում Գրիգոր Նազիանզացու ղեկավարությամբ Աստվածաշունչի ուսումնասիրությանն անցնելը, սկսեց սովորել եբրայերեն: Հռոմի տիեզերաժողովի ժամանակ (382 թ.) նա հիսուներկու տարեկան էր: Գնահատելով Հերոնիմոսին՝ Դամասոս պապը խնդրեց ձեռնարկել լատիներեն ամբողջ Աստվածաշունչի վերանայման գործը: Գոյություն ունեցող լատիներեն թարգմանությունները տարբերվում էին մեկը մյուսից. խիստ բառացի էին և քիչ հասկանալի:

Յերոնիմոսն, ի վերջո, ընդունեց պապի խնդրանքը: Նա ավարտեց նախ Նոր Կտակարանի չափավոր վերանայումը, այնուհետև հաստատվեց Բեթղեհեմում և անցավ Յին Կտակարանի վերանայման գործին: Բազմիցս ենթարկվելով քննադատությունների, ինչպես նաև մեղադրվելով վերանայման գործում չափազանց հեռուն գնալու մեջ՝ Յերոնիմոսը հարկադրված թողեց վերանայման աշխատանքը և, ելնելով երբայերեն բնագրից, ձեռնամուխ եղավ ամբողջովին նոր թարգմանության իրականացմանը: Աշխատանքն ավարտեց 405 թ.: Մինչև նոր թարգմանությունների իրականացումը, Յերոնիմոսի տարբերակը Աստվածաշնչի լավագույն թարգմանություններից էր: Բացի գրական արժեքից՝ այս տարբերակն ունի մեկ առավելություն ևս. թարգմանվել է երբայերեն շատ հին բնագրերից, որոնց քննությունը ցույց է տալիս, որ շատ մոտ են ներկայիս ավանդական երբայերեն բնագրին:

Պահպանվել է Վուլգատայի մոտ 2500 ծրագիր կամ հատված: Յինական մասը ստեղծվել է IX դարից հետո: Մյուսն ավելի հին է: Այս փաստը հնարավորություն չի ընձեռել ձեռնարկել բոլոր ձեռագրերի սպառիչ ուսումնասիրություն:

Առանց երկար անդրադառնալու Աստվածաշնչի բոլոր հին թարգմանություններին՝ հիշենք նաև Արևելյան Աֆրիկայի եթովպերեն թարգմանությունը, որից պահպանվել է մոտ տասը ձեռագիր. մեծ մասը պարունակում է հատվածներ միայն Նոր Կտակարանից, արաբերեն թարգմանությունը, որի տարեթիվը հայտնի չէ, իսկ Եվրոպայում՝ գոթերեն թարգմանությունը:

9. ԱՅԼ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ջոն Ուիքլիֆի անգլերեն թարգմանությունը

Պետք չէ մոռանալ նաև XIV դարում Ջոն Ուիքլիֆի կողմից Աստվածաշունչը անգլերեն թարգմանելու հետ կապված նույնքան հրաշալի պատմությունը: Լինելով Lutterworth-ի ծխական համայնքի քահանա՝ նա ստիպված է կանգնել եկեղեցական դատարանի առջև՝ Եկեղեցու կաշառակերության դեմ բացահայտորեն հարձակվելու, պապերի անհանդուրժողականությունները մատնելու և երկրի խոսակցական լեզվով Աստվածաշունչը թարգմանելու համար: Այս փաստը, ժամանակագիրներից մեկի վկայությամբ, «Աստվածաշունչը դարձնում էր մատչելի, ինչպես աշխարհականներին, այնպես էլ կանանց... Սրանով իսկ գոհար Ավետարանը տրորվում էր խոզերի ոտքերի տակ» (ոչ ավել, ոչ պակաս): Համայնքից վնդվելով՝ Ուիքլիֆը վերադարձավ Lutterworth և շատ համարձակորեն մնացած ժամանակն օգտագործեց՝ ավարտին հասցնելու Սուրբ գրքերի անգլերեն առաջին թարգմանությունը: Աշխատանքն ավարտվեց 1382 թվականին: Այս ժամանակից սկսած՝ Ուիքլիֆի թարգմանությունը տարածվեց քաղաքից քաղաք՝ բարեհաճորեն տրամադրված շրջիկ վաճառականների ու քարոզիչների միջոցով. վերջիններս Ավետարանը հասցրին բոլորին: Ընթերցողներից շատերն այրվեցին խարույկների վրա, երբեմն էլ՝ արգելված Աստվածաշնչի օրինակները վզից կախած: Ուիքլիֆը մահացավ 1384 թվականին՝ արյան զեղումից: Ներկայումս հաշվվում է Ուիքլիֆի թարգմանած Աստվածաշնչի 170 ձեռագիր օրինակ. փաստ, որն ապացուցում է ժամանակին վայելած մեծ հեղինակության մասին:

XVI դարում Անգլիան իրեն շնորհ արեց ավետարանական Եկեղեցու նշանավոր գիտ-

նական ու գործիչ William Tyndale-ի լավագույն թարգմանությամբ, որը XVII դարի սկզբում, Ջեյմս 1-ին թագավորի օրոք, թույլատրված թարգմանությունն էր (King James' Version). Լս մի հրաշալի գործ թե՛ գրական, թե՛ աստվածաբանական տեսակետից:

2. Գերմաներեն թարգմանություն

Մարտին Լյութերն առաջինը չէր, որ Աստվածաշունչը թարգմանեց գերմաներեն՝ չնայած նրանից առաջ ոչ ոք իր ժողովրդին չէր նվիրել նման որակի թարգմանություն՝ արված երբայերեն և հունարեն բնագրերից:

Հիշենք Աստվածաշնչի գերմաներեն թարգմանության հետ կապված պատմությունը, որը սերտորեն աղերսվում է Ռեֆորմացիայի առաջին ժամերին: Worms-ի Սեյմի (կայսրության ղեկավար ասամբլեա՝ 1521 թ.) դատին ներկայանալուց հետո, փակվելով Վարտբուրգի դղյակում, Լյութերը նախ ձեռնամուխ եղավ Նոր Կտակարանի թարգմանությանը, որն ավարտեց հաջորդ տարում: Ամբողջ Աստվածաշնչի թարգմանությունն ավարտվեց 1534 թվականին:

Ինչ վերաբերում է Հին Կտակարանին՝ Լյութերն աշխատեց մի խմբի հետ, որի մեջ էր նաև նրա լավագույն ընկեր ու աշխատակից Philippe Melancthon-ը: Ամեն շաբաթ խումբը ժամեր շարունակ հավաքվում էր Լյութերի մոտ: Հիշելով համատեղ հավաքները՝ Լյութերը սիրում էր խոսել երկարատև այս աշխատանքի պատճառած չարչարանքների մասին: Հոբի գրքի միայն մի տուն թարգմանելու համար երբեմն ամբողջ մի օր նրանց աշխատանքը կարող էր ընդհատվել: «Հաճախ,- պատմում է նա,- երկու, երեք, չորս շաբաթ շարունակ փնտրել ենք որևէ բառի իմաստը՝ փորձելով տեղեկանալ ամենուր... Երեք տող գրելու համար երբեմն կորցնում էինք չորս օր: Այսօր, երբ աշխատանքն արդեն պատրաստ է, բոլորը կարող են այն տեսնել ու քննադատել: Աչքի ես անցկացնում երեք, չորս թերթ՝ առանց աչք անգամ թարթելու: Աչքի համար նկատելի չեն ո՛չ քարերը, ո՛չ էլ կոշտերը, որ ընկած էին այնտեղ, ուր այժմ քայլում ես ասես հարթեցված մակերեսի վրայով ու չես մտածում ո՛չ քրտինքի, ո՛չ էլ այն տազնապների մասին, որ ապրել են՝ զբոսնել ցանկացողի համար այսօրան հարմարավետ ճանապարհի հարթելու: Ես ձգտել եմ խոսել ոչ թե հունարեն կամ լատիներեն, այլ գերմաներեն»:

1545 թվականին Լյութերի մահվանից մեկ տարի առաջ, միմյանց հաջորդեցին Աստվածաշնչի ամբողջական տասը հրատարակություն: Թվերը վկայում են, թե Լյութերի գեղեցիկ աշխատանքն ինչ ծարավ է հագեցրել:

Կարելի է նաև ավելացնել, որ վերին գերմաներենով իրականացրած իր թարգմանությամբ Լյութերը մեծապես նպաստել է գերմանացիների՝ ասամբլեայի համար ընդհանուր լեզվի ձևավորմանը, լեզու, որն այդուհետ ընդունակ է դառնալու հարուստ ու հրաշալի մի ամբողջ գրականության հենարանը: Լյութերի Աստվածաշունչը գերմաներենով գրված դասական առաջին գործն է:

Հարկ է հիշել նաև, որ գերմաներենի մեկ ուրիշ բարենորոգիչ՝ շվեյցարացի Ուլրիխ Ցվինգլին ևս 1525 թ. ձեռնամուխ եղավ գերմաներեն լեզվի տեղական խոսվածքով Աստվածաշունչը թարգմանելու գործին: Ամբողջ Աստվածաշնչի թարգմանությունն ավարտվեց 1530 թ.՝ Լյութերի Աստվածաշնչի թարգմանությունից չորս և շվեյցարացի բարենորոգչի մահվանից մեկ տարի առաջ:

3. Աստվածաշնչի թարգմանումը ֆրանսերեն

Հին Ֆրանսիայում Աստվածաշնչի բնագիրը հիմնականում փոխանցվել է լատիներեն լեզվով: Մեր մայր քաղաքների յուրաքանչյուր մեծ գրադարանում կարելի է գտնել Ավետարանների կամ Սաղմոսագրքի լատիներեն առնվազն մեկ ձեռագիր: Թերթելով այս ձեռագրերը՝ միայն կարելի է հիանալ արտագրողների մանրակրկիտ աշխատանքով. որոշ թարգմանություններ հրաշալիորեն պատկերազարդված են:

Ասկայն, XII դարից սկսած, երկրի խոսակցական կամ ժողովրդական լեզուներով լույս տեսան թարգմանական փորձեր: Մոտավորապես 1100 թ. արքեպիսկոպոս Լանֆրանի (1005-1089) աշակերտ վանականներն ամբողջ Սաղմոսագիրքը թարգմանեցին հին ֆրանսերեն (նորմանդերեն): Քիչ ավելի ուշ, Պիեռ Վալդոն (հետագայում՝ Ավետարանի մեծ քարոզիչ), Լիոն քաղաքում, Ավետարանները թարգմանել է տալիս պրովանսալերեն: 1250 թ. մոտ, ս. Լյուդովիկոսի օրոք, լույս է տեսնում ֆրանսերեն առաջին Աստվածաշունչը՝ Փարիզի համալսարանի դասախոսների՝ լատիներենից արված թարգմանության հիման վրա:

4. Լեֆելր դ'Էտապլի թարգմանությունը

Ֆրանսիայում XVI դարի առաջին իսկ տարիներին ռեֆորմիստական շարժումը, Ֆրանցիսկ 1-ին թագավորի քույր Մարգարիտ Անգուլեմցու հովանավորյալ Լեֆելր դ'Էտապլի գլխավորությամբ, ծնունդ տվեց Աստվածաշնչի ժամանակակից թարգմանությանը:

Ելնելով Վուլգատայից՝ Լեֆելրը ֆրանսերենով հրատարակում է Նոր Կտակարանը: Առանձին հրատարակությամբ լույս են տեսնում նաև չորս Ավետարանները: Աստվածաշունչն ամբողջապես հրատարակվում է Անվերում՝ 1530 թվականին: Լեֆելրը հոգ է տանում հրատարակելու (Անվեր, 1534 թ.) նույն Աստվածաշնչի վերանայված տարբերակը՝ «Եբրայերենից և հունարենից արված փոփոխություններով»:

XVI դարից սկսած՝ բողոքական Եվրոպայի երկրներն իրենց ազգային լեզուներով ունենին Աստվածաշնչի թարգմանություններ. սրանք ձևավորեցին ժողովրդի, ժողովուրդների ոգին:

Պիեռ Ռոբեր Օլիվեթանը (իսկական անունը՝ Լուի Օլիվիե)՝ Կալվինի զարմիկն ու եբրայերենի հրաշալի գիտակը, ապագա բողոքականին հաղորդակից դարձրեց Ավետարանին: Հետապնդվելով ստիպված էր թողնել հայրենի քաղաքը (Նուայոնը, 1528 թ.): Նա ապաստան է գտնում Ստրասբուրգում, որտեղ ազատ քաղաքի բողոքականներ Bucar-ի և Կապիտոնի ղեկավարությամբ սովորում է հունարեն ու եբրայերեն: Երեք տարի անց դառնում է Նյուշատելի դպրոցի ուսուցիչ: Լինելով համեստ բնավորության տեր անձնավորություն՝ մեկ տարի շարունակ ժնևի առաջին բողոքական, ազգությամբ դարձյալ ֆրանսիացի Գիյոմ Ֆարելը նրան համոզում էր եբրայերեն ու հունարեն բնագրերից Աստվածաշունչը թարգմանել ֆրանսերեն: Նա աշխատեց եռանդազին, քանզի թարգմանությունը լույս տեսավ 1535 թ., դա բնագիր տեքստերից կատարված առաջին թարգմանությունն էր: Նոր Աստվածաշնչի հրատարակության գործը վստահվեց Wingle de Serrière-ին և ամբողջապես ֆինանսավորվեց Փիեմոնի Եկեղեցիների կողմից, որոնք, թեև ծայրահեղ աղքատ էին, այս նպատակով հավաքել էին շոշափելի գումար՝ 500 ոսկե էկյու:

Օլիվեթանի թարգմանությունը բազմիցս վերանայվեց հեղինակի և Կալվինի (1544, 1551, 1560 թթ.), ինչպես նաև Թեոդոր դը Բեզի՝ ժնևում Կալվինի ընկերոջ ու հետևորդի կողմից

(1588 թ.), այնուհետև, մեկ դար շարունակ, ժնկի աստվածաբանության պրոֆեսորների, հետո՝ Daniel Mayer-ի (1707 թ.) և, վերջապես, ժան Ֆրեդերիկ Օստերվալդի կողմից (1744 թ.): Սինոդալ անվանվող թարգմանությունը (1910 և 1950 թթ.) վերանայված վերջին տարբերակն է: Օլիվեթանը խորհրդավոր պայմաններում մահացավ 30 տարեկանում՝ 1538 թ.:

Յոնի կաթոլիկությունն անգործ չմնաց. Լուվենի համալսարանի դասախոսները վերանայեցին Լեֆեվրի թարգմանությունը, որն էլ ավելի քան մեկ ու կես դար կաթոլիկական հիմնական տարբերակն էր:

Կաթոլիկության առումով, սակայն, մեզ հետաքրքրում է հատկապես Lemaistre de Sacy-ն: Ծնվելով Փարիզում 1613 թ.՝ de Sacy-ն, հետապնդումների պատճառով իրենց ընտանիքներից պոկված երիտասարդ բողոքականների հետ մեկտեղ, դաստիարակվեց կաթոլիկական կրոնի ոգով: Նա դարձավ քահանա և 35 տարեկանում հրավիրվեց ղեկավարելու Պոր-Ռուայալի միանձնուհիներին ու մենակյացներին:

1640 թվականից սկսած՝ վերջիններս ձեռնամուխ եղան Նոր Կտակարանը ֆրանսերեն թարգմանելու գործին: Isaac Lemaistre-ը, որն այդուհետև հանդես է գալիս Lemaistre de Sacy անվամբ, ակտիվ մասնակցում է այս աշխատանքի իրականացմանը՝ համագործակցելով այնպիսի մարդկանց հետ, ինչպիսիք են՝ Բլեզ Պասկալը, ժան Ռասինը և մեծ Առնոն: Պոր-Ռուայալի արքայության դեմ ձեռնարկված անախորժությունների պատճառով 1660-1666 թթ. աշխատանքն ընդհատվեց. այն շարունակվեց անլեզու ձևով: Սայիսի 13-ին, երբ de Sacy-ն պատրաստվում էր վերանայել Նոր Կտակարանի առաջաբանը, ձերբակալվեց և բանտարկվեց Բաստիլում: Այդժամ, հարկադիր ազատ ժամանակը նա օգտագործեց շահավետ ձևով՝ սկսեց Յին Կտակարանի թարգմանության գործը, որն ավարտին հասցրեց նախքան բանտից ազատվելը՝ 1668 թ.:

Յանսենիստները Աստվածաշունչը բաշխում էին ինքնարժեքով: Մեծ թվով օրինակներ էլ շրջիկ վաճառականների միջոցով ուղարկվեցին Փարիզ. աշխատանքը մեծ հաջողությամբ պսակվեց՝ 1683 թ. վաճառել էին արդեն 40 000 օրինակ: Յին Կտակարանը լույս տեսավ միայն 1696 թ.՝ թարգմանչի մահվանից տասներկու տարի անց: Այս թարգմանությունը և գրական նույն արժանիքներն ունի, ինչը Նոր Կտակարանի համբավի պատճառն է: Այս արժանիքների շնորհիվ Lemaistre de Sacy-ի թարգմանությունն ունեցավ մեծ հաջողություն և արժանի տևական կյանք՝ դառնալով արդյունավետ գործիք Ֆրանսիայի ավետարանացման համար:

Ֆրանսերեն ժամանակակից թարգմանություններից բողոքականության առումով հիշենք պարզապես Լուի Սեկոնդի հայտնի թարգմանությունը, որը վերջերս է վերանայվել ու անվանվել Bible à la Colombe. ծայրահեղ բառացի թարգմանություն, որի համար պարտական ենք Ջոն Նելսոն Դարբիին՝ անգլիկան հովվին, և, վերջապես, խոսակցական ֆրանսերենով Աստվածաշունչը:

Ընդհանրական թարգմանություններից հիշատակենք Maredsous-ի, Քրամպոնի թարգմանությունները, Երուսաղեմի Աստվածաշունչը: Յիշենք նաև Աստվածաշնչի տիեզերական կոչված թարգմանությունը (Ա. Տ. Թ.), որը վերջերս է ստեղծվել հռոմեացի կաթոլիկների, արևելքի ուղղափառների և բողոքականների համատեղ ջանքերով:

Դ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՀԱՅՐԵՐԻ ԱՍՈՒՅԹՆԵՐԸ

Նոր Կտակարանի ներկայիս բնագրի ճշգրտությունն ապահովելու համար, հունարեն ձեռագրից և հնագույն թարգմանություններից բացի, ունենք նաև Եկեղեցու հոգևոր առաջնորդների՝ Առաքյալների ժամանակներին անմիջականորեն հաջորդած Առաքելական Հայրերի գրչին պատկանող ասույթներ: Այս ասույթները շատ հետաքրքիր աղբյուր են, մանավանդ որ ամենահին կողքսի և հունարեն բնագրի միջև խզումը, ինչպես արդեն նշել ենք, 250 տարի է:

Կղեմես Հռոմեացին (95 թ.) հատվածներ է մեջբերում Նոր Կտակարանից. պահպանվել են նրա գրվածքների բազմաթիվ պատճեններ: Խանգարող հանգամանքներից մեկը աշխատող ձեռքի բացակայությունն էր. աստվածաշնչյան շատ հատվածներ Հայրերը մեջբերում էին հիշողությամբ:

Ասվածին հարկ է ավելացնել նաև այն փաստը, որ նրանց գործերը ևս հասել են արտագրությունների տեսքով և ունեն նույն թերություններն, ինչ արտագրության հիմք բնագրերը: Չնայած այս բանին ու նրանց ձեռագրերի ավելի նոր արտագրություններում արտագրողների ուղղումներ մտցնելուն՝ կարելի է համեմատել ու տեսնել հունարենից շեղվելու աստիճանը:

Մեծ համոզվածությամբ կարող ենք հավաստել, որ այս աղբյուրը յուրովի ծառայություններ է մատուցում Նոր Կտակարանի բնագիրն ուսումնասիրելու գործում:

Ե. ԱՍՏՎԱԾԱՆՉԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Եվ այսպես, ելնելով հին լատիներեն թարգմանություններից, անցնելով դասական տարբեր լեզուներով կատարված թարգմանությունների միջով և հասնելով Վուլգատա՝ Սուրբ Գիրքն ու կանոնական համարվող գրքերը դրվեցին ավելի ու ավելի մեծ թիվ կազմող հավատացյալների տրամադրության տակ, և, ի վերջո, հասարակ մարդը կարողացավ լսել, անգամ կարդալ Աստծու հոսքը:

Սակայն Աստվածաշնչի թարգմանության պատմությունն ամենևին էլ ավարտված չէ. ասես մեծ դրամա լինի, որը շարունակում է խաղացվել մեր օրերում՝ նրանում հարյուրավոր քրիստոնյա միսիոներների գրաված դերով:

Մենք չենք համարձակվի տալ աշխարհում գոյություն ունեցող լեզուների ու բարբառների ճշգրիտ որևէ թիվ (հինգ հազար են, թե՞ յոթ հազար): Ինչ էլ որ լինի, այս լեզուների ու բարբառների մի փոքրիկ մասն է միայն օգտվել Աստվածաշնչի թարգմանությունից: Ավետարանն ամեն ազգի ու ցեղի հայտարարելու համար միսիոներները արտառոց մի գործ ևս պետք է կատարեն: Ինչպես նախկինում՝ հաճախ պարտավոր են ստեղծել գրավոր լեզու՝ Աստվածաշունչը կամ էլ նրանից հատվածներ թարգմանելու համար:

Թարգմանիչների՝ «Ուիքլիֆ» անունը կրող հայտնի ընկերությունը ներառված է ընդարձակ այդ դաշտում: Աշխատանքն սկսելուց առաջ՝ միսիոներները լեզվաբանական լուրջ պատրաստվածություն են ստանում: Այնուհետև նրանց ուղարկում են աշխարհի ամենահեռավոր անկյունները՝ Հարավային Ամերիկայի հնդկացիների, Աֆրիկայում ցրված ցեղերի

կամ էլ Ավստրալիայի բնիկների մոտ: Այսպես, օրինակ, Նոր Գվինեայի ամեն առանձին գյուղ նոր ցեղ է՝ նոր լեզվով: Ասում են՝ ընդամենը մոտ յոթ հարյուր:

Որպես օրինակ վերցնենք տղամարդ կամ կին որևէ միսիոների, որն ամեն օր զբոսնելով գյուղի փողոցներում՝ ընտելանում է տեղի սովորույթներին: Նա պետք է սովորի խոսակցական լեզուն՝ մատնացույց անելով որևէ առարկա և այնուհետև հնչյուններով գրի այն անունը, որ գյուղացին տալիս է այդ առարկային: Վերջինս երբևէ գրիչ չի տեսել, որպեսզի գրի, ուստի գրիչը կանվանի «փուշ»: Թուղթ ևս չի տեսել. նա այն կանվանի «բանանի տերև»: Երբեք ականատես չի եղել նաև գրելու գործընթացին, որը կներկայացնի այսպես. «փորել բանանի տերևը»: Միսիոներն այս կերպ կկարողանա ստեղծել այբուբեն, որը հիմքում կունենա «Ուիքլիֆ» ընկերության կողմից ստեղծված անփոփոխ մանրատիպ:

Ավգբում գյուղացին տառացիորեն կապշի՝ տեսնելով «բանանի տերևի» վրա փորագրված բառերը, բայց և այնպես շատ արագ ու մեծ խանդավառությամբ կհամաձայնի մասնակցել դասերին, որոնց ընթացքում հնարավորություն կունենա թափանցել ընթերցանության ու գրության հիասքանչ աշխարհը: Նշենք, որ խոսքը միայն գրավոր լեզու սովորեցնելն ու տառաճանաչ դարձնելը չէ, այլ, հատկապես, միակ ու ճշմարիտ Արարիչ Աստծու և Փրկչի լուրը հայտնելն է: Հետո գալիս է Աստվածաշնչի գրքերի թարգմանության հարցը՝ առաջնությունը տալով Ավետարաններին:

Գյուղի առաջին քրիստոնյաները կմկրտվեն: Մի նոր հույսով ու անսահման ուրախությամբ կլցվեն նրանց ու գյուղի բոլոր մարդկանց սրտերը: Այնուհետև, մարդիկ միասին մատուռ կկառուցեն: Շուտով շենքում կլսվեն սեփական լեզվով օրհներգեր երգող հավատացյալների ձայները: Նույնիսկ սահմանափակ հնարավորություններով, քանզի գյուղն ունի Նոր Կտակարանի կամ Հովհաննու Ավետարանի ընդամենը մի օրինակ, հոգևոր առաջնորդները ոտքի կկանգնեն՝ Սուրբ Հոգու առաջնորդությամբ քարոզելու և վկայելու Աստծու գործը:

Աստվածաշնչի թարգմանիչները պետք է չափազանց ուշադիր լինեն՝ հավատարիմ մնալու Սուրբ Գրքին, ոչ միայն գրական արժեքի, այլև մեկնաբանության տեսանկյունից: Օրինակ, Հարավային Ամերիկայի ցեղերից մեկի համար ստամոքսն է կյանքի ու զգացմունքների աղբյուրը, մինչդեռ Նոր Գվինեայում՝ կոկորդը:

Աստվածաշնչի թարգմանությունը ավելի քան երկու հազար տարվա պատմություն ունի: Այն սերտորեն աղերսվում է հազարավոր ու միլիոնավոր մարդկանց կյանքին ու գործունեությանը: Յուրաքանչյուր նոր լեզվով ու բարբառով հնարավորություն է ընձեռվում նոր ժողովրդի կյանք ներմուծելու Աստծու ճշմարտությունը: Ամբողջ պատմության ընթացքում հազարավոր միսիոներներ Աստվածաշունչը թարգմանել են ամենահայտնի լեզուներով ու բարբառներով, որպեսզի Աստծու՝ Հիսուս Քրիստոսի ձեռնարկած և Սուրբ Հոգու գործողությամբ ու հաղորդությամբ կիրառված մեծ գործը ավարտին հասցվի՝ հանուն քրիստոնեական Աստվածաշնչի Հին ու Նոր Կտակարանների էջերում հայտնված Սուրբ Երրորդության փառքի:

Գ Լ ՈՒ Խ 5

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԸ

Ա. ԲԱՌԻ ՍԱՅՄԱՆՈՒՄԸ

Յունարեն *kanon* բառը հավանաբար առաջացել է *kanna*, *kanè* «եղեգ» բառից, եթե մոտեցնելու լինենք սեմականին: Եբրայերենում *qaneh* նշանակում է «եղեգ», իսկ երկրորդ իմաստով՝ «երկարության չափի միավոր», քանզի, հավանաբար, երկարություն չափելու համար օգտվում էին եղեգից (Եզեկ. 40:5):

Եբրայերենում այս բառը մատնանշում է եղեգ՝ *kalamus*, իսկ հետագայում, ինչպես ասորերենում՝ չափ: Եվ, վերջապես, այն օգտագործվել է նաև մոմակալի թևը աստիճանավորելու համար: «Յոթանասնից»-ի մեջ բառը հանդիպում է երեք անգամ՝ Յուդիթի պարականոն գրքում (13:6), Միքիա մարգարեի մոտ (7:4) և, ինչպես սխալմամբ ասում են, Մակաբեցների պարականոն չորրորդ գրքում (7:21):

Յոթի 38:5 հատվածի թարգմանության մեջ Ազիլան *canon* բառը, չափի միավոր նշանակությամբ, օգտագործել է «Յոթանասնից»-ի *spartion*, իսկ *symmaque* թարգմանության *schinion métrou* բառերի փոխարեն:

Աշխարհիկ լեզվում սեմականի հիմնական իմաստը դուրս է մղվել փոխաբերական կիրառության օգտին, այն է՝ ուղիղ ձող: Նախ՝ բառը ստանում է ընդհանուր իմաստ՝ մատնանշելով չափելու համար նախատեսված ձող կամ էլ կիրառվելով ճարտարապետության մեջ՝ որպես քանոն: Այս իմաստը, օգտագործվելով տարբեր ոլորտներում, արագորեն ստացավ պատկերավոր, ինչպես նաև տեխնիկական բացատրություն: Այստեղ *kanon*-ը նորմայի՝ կատարյալ ձևի համարժեքն է, հետևապես և՛ հետազոտության նպատակը՝ առարկաների չափման անսխալ չափանիշը (*kritèrion*): Յունարենը որոնում է իդեալականը, այն, ինչ կատարյալ է, ազատ ու ներդաշնակ: Չափն է որոշում ընդունում. սա համապատասխանում է *kanon*-ին, որ հունարենն ամրագրել է իբրև ցանկալի կատարելության բարձրաստիճան չափ: Յունական աշխարհում ըմբռնումն աղերսվում է գեղագիտական ու բարոյական գեղեցկությամբ: Կանոններ ամրագրող օրենքը *kanon* է, իսկ արտահայտված առանձնահատուկ գաղափարները՝ *kanonés*: Էպիկուրը մի աշխատություն է գրել (այժմ չի պահպանվում), որի վերնագիրն էր՝ *Péri kritèriou è kanon*:

Փիլիսոփայության գործն է գտնել *kanon*՝ հիմք, որը հնարավորություն տա իմանալ ճիշտն ու սխալը, որոշել, թե ինչն է արժանի ուսումնասիրության և ինչից պետք է խուսափել: *Kanon*-ը տարբերակում է իսկական ու թվացյալ իմացությունը: Նման չափանիշներ բնությունից տրված են մարդկանց, բայց նրանք պետք է դրանք զարգացնեն ու կիրառեն՝ ընդհուպ մինչև փիլիսոփայական մտախորհում: Կանոնները ազատ կամքի դրսևորման հիմնական սկզբունքներն են: Բառն օգտագործվում է նաև աստղագիտության, ինչպես նաև՝ պատմագիտության (*chromikai*) բնագավառում՝ մաթեմատիկական ցուցակ կամ աղյուսակ հաստատելու նպատակով. այստեղ *kanonés*-ները պատմական իրադարձությունների տարեթվերն ամրագրող աղյուսակներ են: Ալեքսանդրիայում քերականագետները *kanonés* են

անվանում որպես մանրատիպեր ծառայող գրական ստեղծագործությունների հավաքածուները: Ըստ Պլինիուսի՝ «Պոլիկտետոսի կանոն» են անվանվում այս քանակագործի օգտագործած սկզբունքներն ու համաչափությունները: Էպիկտետոսը *kanōn*՝ «մոդել» է համարում նշանավոր մարդու արդար բարքերով կյանքը:

Եվ այսպես, կարելի է եզրակացնել, որ արդեն իսկ հունական մտածողության մեջ *kanōn*-ը մատնանշում է չափ, կանոն, մոդել և չափվող կամ կանոնին համապատասխանող առարկա:

Բ. ԲԱՌԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Թեև հազվադեպ՝ ս. Պողոսն օգտագործում է *kanōn* բառը՝ երբեք չնտածելով նախնական իմաստի մասին: Բառը նրա գրվածքներում ունի գործողության կանոնի երկակի իմաստ՝ ստանդարտ կամ չափ, որով պետք է դատել ուրիշի գործը (Գաղտ. 6:16): Այս հատվածը ամփոփում է ոչ միայն հիշյալ թղթի, այլև քրիստոնեական ճշմարիտ վարքին վերաբերող ողջ ուսմունքի բովանդակությունը: Խաչով փրկվելը հավատացյալին պոկում է աշխարհից ու նախկին կյանքի չափանիշներից՝ նրան տեղավորելու կատարելապես նոր մեկ այլ իրականության մեջ: Քրիստոնյան ճանաչում է լոկ մի *kanōn*: Հավատքի տեսանկյունից հին աշխարհի պատկերացումները խախտւտ են, ամբողջ կյանքն այսուհետ սահմանված է Քրիստոսով ազատության նոր իրողությամբ: *Canōn*-ը համարյա այն հողն է, որի վրա կարելի է ճանաչել քրիստոնյա դարձած մարդուն: Թեև անցումը դժվար է, ասենք, որ բառը հանդիպում է նաև Կորնթացիներին ուղղված երկրորդ թղթի 10:13 – 16 հատվածում՝ Աստծու կողմից առաքյալին վստահված գործունեության դաշտի առնչությամբ (տես նաև՝ Փիլ. 3:6՝ *K* և *L* ձեռագրերում): Ոմանց կարծիքով, Կորնթացիներին ուղղված երկրորդ նամակի տեքստը ոչ այնքան աշխարհագրական սահմանափակում, որքան տրված *charis*՝ կողմնորոշում է:

Գ. ԲԱՌԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Քրիստոնեության պատմության ընթացքում *kanōn* բառն օգտագործվել է՝ եկեղեցական առումով կանոնորոշ բան ցույց տալու համար: Պատճառը իսկական քրիստոնյա լինելու հարցի շուրջ եղած վիճաբանություններն էին: Իր ուսմունքը, ինչպես նաև երկրպագությունը սահմանելու և պահպանելու նպատակով վաղ շրջանի Եկեղեցին մշտապես փորձել է սահմանել կանոններ: Նրան պետք էր մի բառ, որը կարողանար ցույց տալ այն, ինչ պիտանի էր իր հավատքի իրականացման և եկեղեցական պրակտիկայի համար: Հունարեն *kanōn* և *kanonikos* բառերը գործածության մեջ մտան լատիներենում: Հռոմեական Եկեղեցու համար այս բառերը ստացան վերջնական նշանակություն:

Հույն Հայրերը խոսել են «ավանդական կանոնի» (*kanōn tēs paradoseōs*. Կղեմես Հռոմեացի), «հավատքի կանոնի» (*o kanōn tēs pisteōs*), «ճշմարտության կանոնի» (*o kanōn alēthéias*. Իրինեոս, Կղեմես Ալեքսանդրացի) մասին:

Հռոմեացիները խոսել են «հավատքի կանոնի» (regula fidei) կամ «ճշմարտության կանոնի» (regula veritatis) մասին: Այս դեպքում խոսքը Եկեղեցու ուսմունքի, առաքյալների՝ Եկեղեցուն հաղորդած ուսմունքի կամ Սուրբ Գրքի մասին է:

Կղեմես Ալեքսանդրացին և Օրիգենեսը խոսում են արդեն «Եկեղեցու կանոնի» կամ «եկեղեցական կանոնի» մասին՝ նկատի ունենալով ուսուցանվող առարկան: IV դարում եկեղեցական որոշումներն անվանվել են «կանոններ» (Անտիոքի տիեզերաժողով, 341 թ.):

Kanôn-ն ունի նաև «կատալոգ», «ինդեքս» իմաստը: Հովսեփոսի kanonès chronikoi-ները ոչ այլ ինչ են, եթե ոչ՝ ժամանակագրական աղյուսակներ:

Կղեմես Հռոմեացու մոտ բառն օգտագործվում է այնպիսի մի ավանդույթի վեհ ու փառավոր կանոնի իմաստով, որով պետք է ապրել: Խոսքն այստեղ բարոյական կոննոտացիայի մասին է:

Եկեղեցու գոյության առաջին երեք դարերի ընթացքում kanôn tès alèthéias-ը ցույց է տալիս ճշմարտություն, որը միմյանց հետ կապում է Եկեղեցու հայտարարածն ու քարոզով որոշակի ձև ստացածը: Արտահայտությունը հանդիպում է Իրինեոսի մոտ. E upo tès ecclèsiàs kuretcméné alèthéia, to tès alèthéias sèmateton կամ kanôn tès alèthéis. մոտ է նաև kanôn tès pistéos կամ regula fidei արտահայտությունը: Kanôn tès ecclèsiàs-ը բովանդակում է այս երկուսը՝ ներառելով մկրտության հաղորդությունը: Կղեմեսի քրիստոնեական ամբողջ ուսմունքը, ինչպես նաև Եկեղեցուն առնչվող գործերի բարի կատարումն արտահայտվում են kanôn բառով, որի բովանդակությունը, բնականաբար, ընդունվեց իբրև աստվածաշնչյան կանոն: Կղեմեսն իբրև Եկեղեցու կանոն է նկարագրում այն ներդաշնակությունը, որ կա մի կողմից՝ օրենքի ու մարգարեությունների և մյուս կողմից՝ Տիրոջ մարմնացմամբ ստեղծված ուխտի միջև:

Այսպիսով, կանոնացնել՝ նշանակում է ընդունել, կանոնի մաս դարձնել: Կարելի է ասել, որ IV դարի Եկեղեցու համար կանոնը մատնանշում էր այն, ինչն այժմ աստվածային է, սրբազան, անսխալ և անպայմանորեն՝ կանոնորոշ: Այս դարի կեսից բառը ցույց է տալիս Հին Կտակարանի՝ ժողովարան ընդունված բոլոր սրբերին, իսկ Նոր Կտակարանը էական ձև ստացել է սկսած երկրորդ դարի վերջից:

Դ. ԱՍՏՎԱԾԱՆՁՅԱՆ ԿԱՆՈՆԻ ՀԱՐՑԸ

Gabriel Millon-ի կարծիքով, եթե Աստված Սուրբ Գրքեր է ներշնչել իր ժողովրդին՝ դրանք վստահելով նրան, ապա հարց է ծագում՝ որո՞նք են Աստծու ներշնչանքով գրված, նրանից ստացած, Աստծու ժողովրդի սեփականություն համարվող գրքերը: Սա Սուրբ Գրքերի կանոնի, այսինքն՝ Իսրայելի, այնուհետև Եկեղեցու՝ այս գրքերի նկատմամբ օրինական սեփականության խնդիրն է:

Երբ Աստված իր ժողովրդին գրել է տալիս որևէ գիրք, այդ գիրքն անմիջապես դառնում է նրա սեփականությունը՝ իրավական կամ փաստացի. սեփականության այս երկու պահերը կարող են լինել առանձին - առանձին: Կարող է պատահել այնպես, որ ժողովրդի ինչ-որ հատված տեղյակ չլինի Աստծուց ներշնչված այս կամ այն գրքի իրավական սեփականության մասին: Հռոմեացիներին ուղղված թուղթը, Կորնթոսի Եկեղեցուն հայտնի դառնալուց

առաջ, եղել է Հռոմի Եկեղեցու սեփականությունը: Հետևապես, իրավացիորեն հարց է ծագում, թե Աստծու ամբողջ ժողովուրդը և նրա առանձին մասերը ինչպես են դարձել բոլոր Սուրբ Գրքերի փաստացի սեփականատերերը: Աստվածաշնչական կանոնի խնդիրն ուսումնասիրելիս հաշվի է առնվում հենց սեփականատեր դառնալու գործընթացի իրողությունը:

Թեմային առնչվող մի քանի դիտողություն.

ա) Եկեղեցու այս կամ այն մասի կողմից կանոնի չհմացությունը չի դիպչում գրքերի կանոնական լինելուն:

բ) Չհմացությունն ու վարանումներն այս հարցում ամենևին էլ չեն նշանակում, որ չհմացողները կամ վարանողները խորթ են Աստծու ժողովրդին:

գ) Աստծու ժողովուրդը (կամ նրա մի մասը) կարող է հաստատել այն գրքերի ցուցակը, որը նա համարում է Աստծու կողմից տրված. սրանով նա ոչ թե ստեղծում է նշված գրքերի կանոնականությունը, այլ հաստատում է այն:

դ) Այս գրքերն ունեն նույն արժեքը, ինչ արժեք ունի դրանք կարդացողի համոզմունքը: Մենք պետք է փորձարկենք ամեն ինչ, անգամ այս ցուցակները:

ե) Կանոնին առնչվող համոզմունքը պետք է լինի հոգևոր բնույթի. այն չի հաստատվում նույն կերպ Հին ու Նոր Կտակարանների համար:

Արժե ուշադրություն դարձնել համոզմունքի խնդրին: Համոզմունքի հիմքը Սուրբ գրվածքների հայտարարությունը չէ. սրանք ճանաչել չեն տալիս Սուրբ գրքերի ցուցակը: Համոզմունքը չի հիմնվում նաև ներշնչանքով ու առանց ներշնչանքի գրված գրքերի սուբյեկտիվ տարբերակման վրա: Այս միջոցը հնարավոր չէ կիրառել և երբեք չի կիրառվի: Համոզմունքը հենվում է տարբեր վկայությունների վրա և առնչվում է ոչ թե ինքնին գրքին, այլ այն գրքին, որը պատկանում է Աստծու ժողովրդին: Գիրքը գոյություն չունի Աստծու ժողովրդից դուրս, և չկա Աստծու իսկական ժողովուրդ՝ առանց իր Գրքի: «Գիրք - Աստծու ժողովուրդ» զույգը այնպիսի միություն է, որի արժեքը հոգևոր ձևով ընկալվում ենք ներքին միասնության, կամ Աստծու հետ նրա հարաբերության մեջ, կամ էլ նրա գործերում, հետևապես և Աստծու ծրագրի հետ ունեցած հարաբերության մեջ:

Մեր համոզմունքը հոգևոր բնույթի է: Այն անհատական է ու հավաքական: Ենթադրում է Հոգու ողորմածություն, օգնություն. օգնությունը հայտնություն չէ, սակայն հնարավորություն է տալիս հոգով նշմարել «Սուրբ գրվածք - Աստծու ժողովուրդ» զույգի արժեքը: Քրիստոնյայի այս համոզմունքը ենթադրում է, անշուշտ, տարբերակման ընդունակություն: Տարբերակումն ուղղակի է, եթե աղերսվում է «Սուրբ գրվածք - Աստծու ժողովուրդ» զույգը կազմող տարրերին ու նրանց փոխհարաբերություններին, և անուղղակի է, եթե աղերսվում է նախ Եկեղեցուն, ապա միայն նրա ավանդին: Հոգևոր այս համոզմունքը չպետք է շփոթել պատմական փաստարկների վրա հիմնված կարիքների հետ:

Ե. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԸ

Թեև սույն գլխում քննության կառավի առավելապես Նոր Կտակարանի կանոնը, այնուամենայնիվ, ավելորդ չէր լինի ընդհանուր գծերով վերհիշել այն սկզբունքները, որոնցով ղեկավարվել է Հին Կտակարանի կանոնը: Կտակարան, որն Աստվածաշունչ եղավ ինչպես

մեր Տիրոջ, այնպես էլ առաքելական Եկեղեցու համար, և որը կարևոր տեղ է զբաղեցնում թե՛ Քրիստոսի ուսմունքում և թե՛ առաջին համայնքների հավատքի կյանքում: Հին Կտակարանը կոչվել է այդպես, քանի որ ծածկում է Աստծու հայտնության պատմության առաջին մասը՝ սկսած ակունքներից (արարում), անցնելով եբրայեցի նահապետների, մեծ առաջնորդ ու օրենսդիր Մովսեսի, Իսրայելի ժողովրդի կյանքով, Թագավորությամբ ու Աքսորով, հասնելով մինչև Հիսուս Քրիստոսի ծնունդը: Կտակարան է, քանզի, իրոք, պատմությունից, բանաստեղծությունից կամ մարգարեությունից առավել, կնքում է Աստծու ողորմածության ուխտը Իսրայելի ազգի հետ, ուխտ, որի կայունությունը Աստծու կողմից մշտապես հաստատվում է այն մեծ գործերով, որոնք վկայում են հավերժության համար նրա մտահղացած ծրագիրը ավարտին հասցնելու վճռականությունը: Բերված բոլոր փաստերը կատարվում են նույն այս ծրագրին համապատասխան՝ լինի այն Ջրհեղեղ, Բաբելոնյան աշտարակի կործանում, թե հրեաների գաղթ, ուխտագնացություն անապատում, պետության հաստատում, Բաբելոնյան աքսոր և այլն: Սրանք Իսրայելի առօրյա, ազգային, կրոնական, մշակութային ու ռազմաքաղաքական պատմության ընթացքում աստվածային միջամտության հավաստի նշաններ են: Սրանք նաև մարդկության պատմությունն ավարտին հասցնող մեծ իրադարձության վերջնական գործողության նախանշաններն են: Եվ այսպես, ողորմածության ուխտի կամ, եթե ուզում եք, փրկության պատմության էությունը խոստում է ու կատարում, ապագայի սպասում է ու իրականացում:

Իբրև գվարճալի պատմություն հիշեցնենք, որ մ. թ. առաջին դարի վերջերին, Յամնիա քաղաքում, հրեական մի սինոդ հաստատել էր Հին Կտակարանի կանոնը, որն աստվածաշնչյան կանոնի երեսունինը գրքերի ցուցակն է. ինչպիսին էլ որ լինի այս փաստի պատմական ճշմարտացիությունը, դրանից հետևում է, որ Քրիստոսին ժամանակակից հրեական ժողովարանն ընդունել է Աստվածաշնչի հեղինակությունը՝ մշելով ալեքսանդրյան կանոնի՝ «Յոթանասնից» թարգմանությունից հեռանալու փաստը: Նշված երեսունինը գրքերի արժանահավատության վերաբերյալ հրեական ժողովարանը ոչ մի հարց չէր առաջադրում: Միակ օրինական խնդիրն առնչվում է այս գրքերի թարգմանմանը. մենք լիովին համոզված ենք, որ Հին Կտակարանը ստեղծվել է համարյա հազար տարվա՝ Քրիստոսի ծննդին նախորդող առաջին հազարամյակի ընթացքում:

Մեռյալ ծովի շրջանում ձեռագրեր հայտնաբերելու փաստը բավական է ապացուցելու, որ Հին Կտակարանի գրքերը շրջագայել են իբրև սուրբ գրականություն և, ինչ խոսք, տարվել է մանրակրկիտ ու ճշգրիտ գիտական աշխատանք՝ այս գրքերն անվնաս պահելու ընդհուպ մինչև հեսեների խորհրդավոր համայնքի ժամանակաշրջանը: Հին Կտակարանի հայտնության հավատքի թանկարժեք պահեստը՝ սուրբ համարված գրվածքները կորցնելու վախից, հեսեները մագաղաթները թաքցրել են թրծած կավից պատրաստված կճուճներում, պահել ապահով տեղերում: Մեռյալ ծովի շրջակա կիրճերում: Երջանիկ պատահականությամբ՝ մի բեդվին, կորած այծը փնտրելիս, կիրճերից մեկում գլորեց մի քար, քարը դիպավ կճուճներից մեկին և ջարդեց այն: Հովիվն իջավ կիրճ և այստեղ հայտնաբերեց մեր դարի հնագիտական ամենազգայացունց գտածոներից մեկը: Շուտով գտան նաև Հին Կտակարանի ձեռագրեր պարունակող այլ կճուճներ և:

Անշուշտ, Հին Կտակարանի երեսունինը գրքերը տվյալ ժամանակ գոյություն ունեցող

Եբրայերեն գրքերի սովորական ժողովածու կամ էլ աստվածաշնչյան ընթերցանության համար ընդունված գրվածքներ չեն, այլ ժողովարաններում իբրև հեղինակություն ընդունված կանոնական գրքերի հավաքածու:

Առավել տարածված ավանդույթի համաձայն՝ Յին Կտակարանի կանոնի ձևավորման գործում գլխավոր դերը հատկացվում է Եզրասին և «մեծ ժողովարանին»:

Յին Կտակարանում բազմիցս խոսվում է ուխտի տապանակի մոտ դրված օրենքների մասին (Երկր. օրինաց 31:26, Յեսու 24:26, Բ. Թագավ. 22), սակայն ոչինչ թույլ չի տալիս հաստատել, թե այս գործերը տարագրությունից առաջ հավաքվել են պաշտոնական որևէ ժողովածուի մեջ: Աքսորից վերադառնալուց հետո է միայն ժողովրդի բարենորոգիչ, հայտնի անձնավորություն համարվող Եզրասը, իր բարեպաշտությամբ ու գիտելիքներով արթնացրել կրոնական միտքը, մի բան, որն արտահայտվեց Սուրբ գրվածքներին վերադառնալու փաստով: Ոչ մի կասկած չկա, որ Եզրասն էական դեր է խաղացել ինչպես արդեն գոյություն ունեցող սրբազան գրքերն անձամբ հավաքելու (ավանդության համաձայն), այնպես էլ ժողովրդի ուշադրությունը կանոնական ժողովածուի վրա հրավիրելու, նրա ընթերցանությունն ու կիրառությունը խորհուրդ տալու գործում:

Աստվածաշնչերում Յին Կտակարանի գրվածքները դասակարգվում են չորս մեծ խմբերի մեջ՝ Յնգամատյան, պատմական բնույթի գրքեր, բանաստեղծական գրքեր և մարգարեությունների գրքեր: Ինչ վերաբերում է եբրայերեն Աստվածաշնչին, ապա այն բաղկացած էր երեք գլխավոր մասից՝ Օրենք (Torah), Մարգարեներ (Nebiim), Գրքեր (Ketoubim): Երեք մասերը ցույց են տալիս Յին Կտակարանի կանոնի կազմավորման երեք շրջանները:

1. Օրենքը

«Օրենք» վերնագրով մատնանշված գրքերը ոչ այլ ինչ են, եթե ոչ՝ Յնգամատյանի գրքերը: Իրոք, հրեաները «Օրենք» էին անվանում ոչ միայն Տասը պատվիրանները կամ էլ որոշումները, այլև Աստվածաշնչի առաջին հինգ գրքերը միասին, որոնց կենտրոնական գաղափարը օրենքի, ուխտի գաղափարն է: Աստծու ուխտը Աբրահամի, իսկ հետո էլ Յակոբի, Մովսեսի հետ. ահա ամբողջ Յնգամատյանի թեման: Սա, արդյոք, ամփոփված չէ՞ Ղևտացիների հրաշալի աղոթքում, որ արվել է օրենքն ընթերցելուց հետո (Նեեմիա 9:13-14). *«Տեր, դո՛ւ ես ընտրել Աբրահամին, դո՛ւ ես իջել Սինա լեռան վրա և քո ծառայի՝ Մովսեսի միջոցով տվել պատվիրաններ, պատգամներ և օրենք»:*

2. Մարգարեները

444 թվականի Տաղավարահարաց տոնին, յոթ օր շարունակ, օրենքն ամբողջությամբ կարդացվել է ժողովրդին, իսկ յոթերորդ ամսվա քսանչորսերորդ օրը Տիրոջ հետ նոր ուխտ է կնքվել այս կողբսի հիման վրա: Այդ պահից ի վեր օրենքն արդեն ոչ միայն իրավական, այլև փաստացի առումով, բացարձակ հեղինակություն է: Յատուկ մարդիկ՝ դպիրներ կամ օրենքի դոկտորներ են նշանակվում՝ ուսումնասիրելու, արտագրելու օրենքը, իսկ նրանց համար, ովքեր չէին հասկանում Յայրերի հին լեզուն, թարգմանում էին ժողովրդական լեզվով և հրապարակային ընթերցման, ինչպես նաև ժողովարաններում ուսումնասիրելու միջոցով ժողովրդին ճանաչել էին տալիս այն:

Այս խումբը բաժանվում է երկու մասի՝ առաջին կամ նախորդող մարզարեններ (Հեսու, Դատավորներ, Սամուել և Թագավորներ) և վերջին կամ հաջորդող մարզարեններ (Եսայի, Երեմիա, Եզեկիել և տասներկու փոքր առաքյալներ):

Օրենքի ընթերցմանն ավելացել է, բնականաբար, նաև պատմության ու մարզարեության ընթերցումը: Աքսորյալներն իրենց հետ Բաբելոն տարան անավարտ, բայց և արդեն այնքան հարուստ ու փառաբանված Աստվածաշունչը, որն էլ եղավ նրանց մխիթարությունն ու հույսը:

Աքսորից հետո Եզրասը խնամքով ի մի բերեց անցյալի բոլոր փաստաթղթերը, որոնց ավելացան Եզեկիելի, իսկ ավելի ուշ՝ Ագիայի, Ջաքարիայի և Մաղաքիայի գրվածքները:

3. Սուրբ գրվածքները կամ վարքագրությունները

Այս խումբը բաժանվում է երեք մասի. նախ՝ Սաղմոսները, «Առակաց»-ը և Հոբի գիրքը, այնուհետև «Երգ երգոց»-ը, Հռութի գիրքը, Ողբերը, «Ժողովող»-ն ու Եսթերի գիրքը, որոնք կազմում են Meguilloth կոչված հինգ փաթեթները, և վերջապես Դանիելի, Եզրասի, Նեեմիայի ու «Մնացորդաց» գրքերը:

Հավանաբար, Եզրասն է ի մի բերել Դավթի, Ասափի, Աքսորի և Ետաքսորյան շրջանի բոլոր Սաղմոսները, որոնք էլ կազմում են հավատքով ու ցավով ներծծված այս հրաշալի ժողովածուն:

Ավելի ուշ Աքսորի շրջանի ժողովրդի ստորացման ու վերջնական վերականգնման նկատմամբ հավատի հուշը հավերժացնող այլ գրվածքները ժողովրդի կողմից ընդունվեցին իբրև մեծ արժեք ունեցող մարգարիտներ:

4. Հավելված. պարականոն գրքեր

Չնայած պատմական իրական արժեքին, ինչպես նաև բարոյական ու կրոնական որոշակի արժեքին, պարականոն գրվածքները չեն կարող համեմատվել կանոնական գրքերի հետ: Հրեաները հասկացել են, որ Մաղաքիայով ավարտվել էր մարզարեական ներշնչանքը:

Նոր Կտակարանը մեջբերումներ է կատարել Հին Կտակարանի համարյա բոլոր գրքերից, որոնք, իբրև անժխտելի հեղինակություն, ներկայացված են այս բառերով. «Սուրբ Գիրքը» կամ «Ինչպես գրված է»: Փոխարենը, հետաքրքիր է հաստատել, որ Նոր Կտակարանի հեղինակները մեջբերումներ չեն արել պարականոն գրքերից, որոնց, այսուհանդերձ, չափազանց լավատեսյակ էին, քանզի այդ գրվածքները, լինելով ոչ կանոնական, եկեղեցական հարցերում չունեին կանոնորոշ հեղինակություն:

Ապիանոսի դեմ գրած հայտնի խոսքում (գլուխ 1-ին), Փլավիոս Հովսեպոսը հայտարարում է. «Արտաքսերքսեսից մինչև մեր օրերը, գրվել են բազմաթիվ գրքեր, բայց ոչ ոք չի ասել, թե, արդյոք, սրանք ևս արժանի են մինչև այդ գրած գրքերին պարզևս լատինականը, որովհետև մարգարեններն անվերջ հաջորդել են միմյանց: Սա է Սուրբ գրքերի նկատմամբ հարգանքի պապացույցը: Թեև երկար տարածություն է մեզ բաժանում այն ժամանակից, ինչ այս գրքերը փակվել են, ոչ ոք չի համարձակվել վանկ անգամ ավելացնել, հանել կամ ձևափոխել: Բոլոր հրեաները ծննդյան օրվանից բնազդով Սուրբ գրքերը համարում են Աստծու ուսմունքը և, նրանց հավատարիմ լինելու պատրաստակամությամբ, պատրաստ են ուրախությամբ տալ իրենց կյանքը»:

Ձ. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԸ

Նոր Կտակարանը Աստվածաշունչը կազմող վաթսուներեք գրքերի ժողովածուի երկրորդ մասն է և հաստատում է Աստծու խոստումների, նրա ողորմածության ուխտի իրականացումը Հիսուս Քրիստոսի կյանքով ու առաքելությամբ, տանջանքներով ու հարությամբ:

Սուրբ Գրքերը ստացվել են իբրև վարդապետության և կյանքի կանոն բովանդակող փաստաթղթեր և, հետևապես, «կանոն» են (Օրիգենես): Մոտ 350 թ. Աթանասն ասում էր, որ Հերմասի «Հովիվ»-ը չի պատկանում «կանոն»-ին, այսինքն՝ կանոնական Սուրբ Գրքին: Լատինկիայի տիեզերածղովը (մոտ 360 թ.) հայտարարում է, որ պետք է կարդալ միայն «կանոնական» գրքերը (ta kanonika): Լատինական Աֆրիկայից մեզ հասած Mommsen քարտագրացուցակում խոսք է գնում կանոնական գրքերի մասին (canonici):

«Կանոնական գիրք» արտահայտության տակ պետք է հասկանալ վարդապետության և կյանքի կանոններ բովանդակող «կանոնորոշ գիրք»: Այս գրքերը միայն հետո են անվանվել «կանոնական», քանզի առնչվում էին պաշտոնական ցուցակի՝ «կանոնի»: Գերապատվություն ստացել է ավելի ուշ ծեռք բերած անվանումը: Հետո ցույց կտանք, որ հեղինակները միշտ չէ, որ համաձայն են բնագրերի՝ եկեղեցական հայրերի մեկնաբանությանը. ոմանց համար ամենից ավելի հին է երկրորդ անվանումը: Պատճառն այն է, որ «կանոն» բառը դարձել է երկիմաստ, և որ նրա ճշգրիտ իմաստը կարող է որոշվել միայն համատեքստով կամ էլ այս բառի գործածության ժամանակաշրջանում ընդհանուր մտածողության վրա հիմնված տեղեկություններով:

Նշենք նաև, որ երբեմն օգտվել են նաև Աթանասի ta kanonizomena՝ «կանոնականացված գրքեր» (kanonizein՝ «կանոնականացնել» բայից) արտահայտությունից՝ «կանոնի» մեջ ներառված, այսինքն՝ կանոնական գրքերի մասին խոսելու համար: Սա անհաջող արտահայտություն էր, քանզի ստեղծվում էր այն տպավորությունը, թե Եկեղեցին Սուրբ Գրքերը դարձնում էր կանոնական: Իրականում Եկեղեցին ընդամենը այս գրքերը համարել է կանոնական:

Նոր Կտակարանի կանոնի առաջադրած խնդրի լուծումը հենվում է մի քանի սկզբունքների վրա, որոնց մասին էլ կխոսենք:

1. Մի քանի սկզբունքներ

ա) Առաքելական Եկեղեցու «կատարելության» սկզբունքը

Այս սկզբունքի տակ հասկանում ենք, որ «առաքելական» Եկեղեցին առաջնորդվել է ողջ ճշմարտությամբ՝ համաձայն Հիսուսի խոստման (Հովհաննես 16:12-13): Ուստի, առաքելական Եկեղեցին չուներ ոչ մի «թաքուն բան». ամեն ինչ բացահայտորեն ուսուցանվում էր բոլորին: «Առանց որևէ բան թաքցնելու՝ ես ձեզ հայտնեցի Աստծու ամբողջ խորհուրդը». այսպես է ասում Պողոսը՝ Միլետոսում հավաքված եփեսացի երեցներին (Գործք 20:25, տես նաև 20-րդ տողը): Սա համապատասխանում է Աստծու մտադրություններից մեկին, Աստված, որը կամենում է, որ բոլոր մարդիկ իմանան ճշմարտությունը (Ա. Տիմոթ. 2:4):

Բացի այդ՝ Պետրոսի միջոցով իմանում ենք, որ կյանքին ու բարեպաշտությանը նպաստող ամեն բան տվել ու հայտնել է Եկեղեցին (Բ. Պետրոս 1:3): Բավական է ուսումնասիրել

քրիստոնյաների և Եկեղեցու վերաբերյալ Աստծու ծրագրերի մասին խոսող բազմաթիվ բնագրեր, որպեսզի տեսնել, որ Եկեղեցին ի սկզբանե ունեցել է կյանքի կատարյալ ծրագիր:

Առաքելական Եկեղեցին (ընդհուպ մինչև վերջին առաքյալի մահը) եղել է ամբողջ նոր հայտնության տերը: Ունեցել է նաև Նոր Սուրբ Գրքեր, ինչպես ասում է Պետրոսը՝ խոսելով Պողոսի գրվածքների մասին: Սուրբ Գրքով Աստված ամրագրում էր այն, ինչը չպետք է մոռացվեր:

Հետևապես, զարմանալի չէ հաստատել, որ Հայրերի առաջին իսկ գրվածքներից սկսած՝ ամեն «նորություն» մերժված էր: «Նորության» տակ հարկ է հասկանալ այն, ինչն առաքելական չէ: Բանն այն չէ, թե Եկեղեցիներն իրականում «նորություններ» չեն ընդունել. միշտ չէ, որ նրանք արթուն են եղել: Բայց ամեն անգամ, երբ ինչ-որ տարածայնություն էր առաջանում, վերադառնում էին «առաքելականության» սկզբունքին, ինչպես անում էր, օրինակ, Իրինեսոսը՝ պայքարելով գնոստիկների դեմ: Հռոմեական Եկեղեցին միշտ ձգտել է լինել առաքելական: Ուստի, ստիպված է եղել հորինել չգրված հայտնության տեսությունը՝ արդարացնելու իր ուսմունքներն ու արարողությունները, որոնք, սակայն, չունեն Սուրբ Գրքերի թույլտվությունը: Բողոքականները ևս վկայակոչում են առաքելականության սկզբունքը:

բ) Եկեղեցին երբեք գոյություն չի ունեցել առանց Սուրբ Գրքերի

Հռոմեացիները հաճույքով ասում են, որ, նախքան Նոր Կտակարանը գրելը, սկզբնական շրջանի Եկեղեցին սնվել է ավանդույթներից: Դա, թվում է, նրանց իրավունք է տալիս մերժել ավետարանական մտածողությունը, որի համաձայն ուսմունքի և կյանքի մասին դատելու միակ չափանիշը Սուրբ Գիրքն է: Ավանդույթի հիմքի վրա Հռոմի Եկեղեցուն տարածում գտած և ավանդույթը Սուրբ Գրքի միայն մի կողմը դարձնել ջանացող ժամանակակից տեսությունները ևս հարմարվում են այն գաղափարին, որ Եկեղեցին կարողացել է գոյություն ունենալ առանց Սուրբ Գրքի: Նկատենք, որ ազատամիտ բողոքական որոշ դիրքորոշումներ, որոնք Աստվածաշնչի մեջ տեսնում են միայն քրիստոնեական շրջանակներում արդեն իսկ զարգացում գտած մտածողության ուշացած բյուրեղացում, հիմնվում են նույն կանխադրույթի վրա:

Նշված կարծիքները, թեպետև արտաքին դրսևորումներին, հաշվի չեն առնում փաստերը: Հիսուսի պես Եկեղեցին էլ ուներ հնագույն Սուրբ Գրքեր, որոնք իրեն, ինչպես Հիսուսին, վկայություն էին տալիս: Ուսուցանելու ժամանակ առաքյալները դիմում էին Հին Կտակարանին, որն, այսպիսով, վկայում էր նրանց ուսմունքի մասին: Ավելի ուշ, երբ հայտնության մասին գրվեց Նոր Կտակարանի գրքերում, սրանք էլ, իրենց հերթին, վկայություն ստացան Հին Կտակարանից: Ուրեմն, կարելի է հաստատել, որ Եկեղեցին միշտ էլ ունեցել է Հին Կտակարանի Սուրբ Գրքերը, որոնք, այսպիսով, արդարացնում էին ինչպես Եկեղեցու գոյությունը, այնպես էլ նրա ավանդը, իսկ երբ հիմնվեց Եկեղեցի – Նոր Կտակարան զույգը՝ նույն վկայությունը նա ստացավ Հին Կտակարանից:

գ) Առաքելական Եկեղեցին աստիճանաբար տեր դարձավ նրա ավանդը կազմող նոր Սուրբ Գրքերի

Նոր Կտակարանի առանձին գրվածքներ ունեն որոշակի հասցեատերեր՝ Հռոմի, Կորնթոսի, Եփեսոսի, Փիլիպպեի, Կողոսայի, Թեսաղոնիկեի Եկեղեցիներ: Այլ գրվածքներ էլ հասցե-

ագրված են մարդկանց. նամակներ Տիմոթեոսին, Տիտոսին, Փիլիմոնին: Բազմաթիվ գրվածքներ չունեն ճշգրիտ հասցեատերեր կամ էլ ուղղված են Եկեղեցիների խմբերի: Ավետարաններ, Գործք առաքելոց, Գաղատացիներին, Եբրայեցիներին ուղղված նամակներ, Պետրոսի, Յովհաննեսի, Հակոբոսի, Հուդայի թղթերը, Յովհաննու «Հայտնություն»-ը:

Հարց է ծագում, թե անհատ անձնավորության, Եկեղեցու կամ էլ Եկեղեցիների խմբի ձեռքի տակ գտնվող, ներշնչանքով գրված այս կամ այն գործը ինչպես է ընդունվել բոլոր Եկեղեցիների կողմից: Իրավական առումով, յուրաքանչյուր գիրք ամբողջ Եկեղեցու սեփականությունն էր, սակայն հարկ էր իրավականից անցնել փաստացի տիրապետության: Սա «սրբերի հաղորդության» տեսանկյուններից մեկն էր:

Պատմությունը որոշ հիշողություն է պահպանել Եկեղեցու կողմից ամբողջ Գրքի սեփականացման երկար գործընթացի վերաբերյալ: Խոսքն ամենևին էլ «կանոնի» մշակման մասին չէ, այլ արդեն իսկ գոյություն ունեցող կանոնի սեփականացման: Հետևապես, Եկեղեցին ոչ թե սահմանել է կանոնը, այլ միայն ընդունել է նրա գոյության փաստը:

**դ) Նոր Կտակարանի կանոնի վերաբերյալ համոզմունքը
հիմնված է Քրիստոսի մարմնում ունեցած մեր դիրքով:
Մենք տեր ենք այն ամենին, ինչ Եկեղեցին ստացել է Աստծուց:**

Եկեղեցին, որի անդամներն ենք, Քրիստոսի մարմինն է, որ ծնվել է Հոգեգալստյան օրը և արդիական է: Մեր հաղորդությունը ոչ թե տեղական այս կամ այն Եկեղեցու, այս կամ այն տիեզերածողովի հետ է, այլ ամբողջ Եկեղեցու: Հենց այս հաղորդության վրա է հենվում մեր՝ ամբողջ ավանդին տեր լինելու իրողությունը:

Նոր Կտակարանի կանոնի պատմության մեջ հանդիպող տեղային կամ շրջանային սահմանափակումները չեն պարտադրվում մեզ, քանզի տեղական նշանակության են:

Ձեռք բերելով ամբողջ Եկեղեցու ստացած գրքերը՝ մենք նրա նկատմամբ հավատի հողի վրա ենք, Եկեղեցի, որն իր ավանդին չի դավաճանել, առավել, քան Իսրայելը՝ սեփական ավանդին: Սուրբ գրքերը չեն կարող ոչնչացվել (Յովհաննես 10:35), լինեն դրանք Իսրայելին վստահված հին, թե Եկեղեցուն վստահված նոր Գրքեր (Բ. Պետրոս 3:16, Հայտն. 22:18-19):

Այսպիսով, մեր համոզմունքը հենվում է հավատքի վրա, բայց նաև ենթադրում է, եթե խոսքը Եկեղեցու միջոցով ստացած գրքերի ցուցակի մասին է, հոգևոր տարբերակում, որը վերաբերում է ոչ թե առանձին գրքերի, այլ այն գրքերին, որ Եկեղեցին ստացել է Աստծուց: Այս տարբերակումը ինչպես Եկեղեցու, այնպես էլ նրա յուրաքանչյուր անդամի գործն է, թեև տարբեր եղանակներով, սակայն միասնական Հոգով: Սա ևս «սրբերի հաղորդության» ասպեկտներից է:

2. Նոր Կտակարանի կանոնի ձևավորման գործընթացը

Փաստերի քննության ճանապարհին մեզ կառաջնորդի Եվսեբիոս Կեսարացին: Ապրել է IV դարի սկզբին, երբ վերջ էր տրվել հալածանքներին, և արևելյան ու արևմտյան Եկեղեցիների հարաբերությունները բնականոն դառնալու միտում ունեին. սա արժանի է ուշադրության, քանի որ Եվսեբիոսը քննության է առել տարբեր Եկեղեցիներից ստացած, կանոնա-

կան համարվող գրքերը: Քննության արդյունքները ներկայացրել է 334 թ. ավարտին հասցրած «Եկեղեցական պատմություն» գրքում:

Եվսեբիոսի կարծիքով, գոյություն ունեին երեք տեսակ գրքեր. բոլորի կողմից *ստացված գրքեր* (հունարեն՝ *ta homologouména*), որոնց մեջ մտնում են չորս Ավետարանները, «Գործք Առաքելոց»-ը, Պողոսի տասներեք նամակները, Եբրայեցիներին ուղղված թուղթը (տեղական նշանակություն ունեցող որոշ առարկություններով), Հովհաննեսի, Պետրոսի առաջին թղթերը, Հովհաննեսի «Հայտնություն»-ը (վերապահումով), *վիճելի գրքերը* (հունարեն՝ *ta antilegouména*), որոնց մեջ է Հակոբոսի թուղթը, Հովհաննեսի երկրորդ և երրորդ թղթերը, Պետրոսի երկրորդ թուղթը և Հուդայի թուղթը, *պարականոն գրքեր* (հունարեն՝ *ta northa*) Պողոսի «Գործք»-ը, Հերմասի «Հովիվ»-ը, Պետրոսի «Հայտնություն»-ը, Բարնաբեի թուղթը, տասներկու առաքյալների Didachè-ն: Ոմանք այս ցուցակի մեջ ավելացնում են նաև Հովհաննեսի «Հայտնություն»-ը: Եվսեբիոսի ժամանակաշրջանում բոլոր Եկեղեցիները կամ դրանց որոշ մասը ծանոթ էին Նոր Կտակարանի բոլոր գրքերին և ստացել էին դրանք: Սակայն, հարկ է հիշել, որ ներշնչված կանոնական գիրքը անպայմանորեն ստանում են բոլորը: III դարում Օրիգենեսը ստացել է չորս Ավետարանները, «Գործք Առաքելոց»-ը, Պողոսի թղթերը, Եբրայեցիներին ուղղված նամակը, «Հայտնություն»-ը, Պողոսի և Հովհաննեսի առաջին թղթերը: Օրիգենեսին ծանոթ էր, և նա ստացել էր «ընդհանրական» կոչված յոթ նամակները, որոնք որոշակի հասցեատեր չունեն. ինչպիսիք են, օրինակ, Պետրոսի 2-րդ, Հովհաննեսի 2-րդ և 3-րդ թղթերը, Հակոբոսի թուղթը և Հուդայի թուղթը: Օրիգենեսը ծանոթ էր բոլոր գրքերին: Երկընտրանքները վերաբերում են ճշգրիտ հասցեատեր չունեցող որոշ գրքերի: Այնուհայտ է, որ այս դեպքում ավելի դժվար էր հոգևոր հաղորդություն հաստատել հասցեատերերի հետ:

Նախքան Օրիգենեսը, III դարի սկզբում, Կղենես Ալեքսանդրացին ծանոթ էր չորս Ավետարաններին, «Գործք Առաքելոց»-ին, Պողոսի թղթերին, Եբրայեցիներին ուղղված թղթին, Պետրոսի առաջին, Հովհաննեսի առաջին և երկրորդ, Հուդայի թղթերին և Հայտնությանը: Այս ցուցակն ավելի երկար է, քան Օրիգենեսինը: Նշենք, որ վերջինս իր գրվածքներում մեջբերումներ է անում նշված ցուցակի մեջ տեղ չգտած ուրիշ գրքերից, որոնց ծանոթ էր և որոնցից օգտվում էր: Եթե նույնիսկ չգիտենք, թե Օրիգենեսը ինչպես էր գնահատում այդ գրքերը, գոնե կարող ենք ասել, որ հիշյալ դարաշրջանում ծանոթ էին ամբողջ Նոր Կտակարանին:

Մոտավորապես նույն ժամանակաշրջանում Տերտուլիանոսն առաջին անգամ օգտագործում է *Novum Testamentum* արտահայտությունը. ներառում է չորս Ավետարանները և չորս *apostolica instrumenta*-ն, այսինքն՝ «Գործք Առաքելոց»-ը, Պողոսի թղթերը (թվով տասներեք), Հովհաննեսի առաջին թուղթը և «Հայտնություն»-ը, ինչպես նաև *instrumentum apostolicum* (Պետրոսի առաջին թուղթը և Հուդայի թուղթը): Նա ծանոթ է Եբրայեցիներին ուղղված թղթին, սակայն այն չի ներառում *Novum Testamentum*-ի կազմում: Չի օգտվել Հովհաննեսի 2-րդ և 3-րդ թղթերից:

Ինչպես տեսնում եք՝ երկընտրանքները միշտ վերաբերում են նույն թղթերին: Մենք մինևույն ժամանակ շոշափում ենք Եբրայեցիներին ուղղված նամակում առաջադրված խնդիրը, նամակ, որը նույնպես որոշակի հասցեատեր չունի:

Իրինեսու Լիոնացին, նախքան Տերտուլիանոսը, մեջբերումներ է կատարում Նոր Կտակարանի բոլոր գրքերից, սակայն չի տալիս դրանց ցուցակը: Նա ստացել է Պետրոսի առաջին թուղթը, ծանոթ էր Եբրայեցիներին ուղղված նամակին, Հակոբոսի թղթին, բայց ոչ իբրև Սուրբ գրվածքներ: Ստացել է նաև Հերմասի «Հովիվ»-ը:

Իտալացի պատմաբան Մուրատորին Միլանի ամբրուազյան գրադարանում պահպանվող, VII կամ VIII դարի ձեռագրերից մեկում հայտնաբերեց չափազանց կարևոր մի փաստաթուղթ, որն անվանվում է «Մուրատորիի կանոն»: Այս փաստաթղթի հեղինակը, ըստ երևույթին, եղել է Հռոմի Եկեղեցու անդամ և ապրել է II դարում: Նա քաղվածքներ է արել չորս Ավետարաններից, Պողոսի տասներեք թղթերից (հետևյալ հաջորդականությամբ՝ Կորնթացիներին ուղղված 1-ին և 2-րդ, Եփեսացիներին, Փիլիպպեցիներին, Կողոսացիներին, Գաղատացիներին ուղղված նամակներ, Թեսաղոնիկեցիներին հասցեագրված 1-ին և 2-րդ, Հռոմեացիներին, Փիլիմոնին, Տիտոսին, Տիմոթեոսին ուղղված 1-ին և 2-րդ նամակներ), Հուդայի թղթից, Հովհաննեսի 1-ին և 2-րդ թղթերից, Հովհաննու «Հայտնություն»-ից և Պետրոսի «Հայտնություն»-ից: Հարկ է նշել, որ ոմանք թույլ չէին տալիս ընթերցել այս վերջին գիրքը: Փաստաթղթի հեղինակը խոսում է «Իմաստություն» և «Հովիվ» գրվածքների մասին այնպես, ասես կարդացել է: Ակնարկում է մերժված գրքերի մասին: Ցուցակի մեջ, այսպիսով, տեղ չեն գտել Հակոբոսի, Պետրոսի թղթերը, Հովհաննեսի 3-րդ և Եբրայեցիներին ուղղված թղթերը:

Պողոսի 2-րդ դարով թվագրված թղթերի մարկիոնյան նախաբաններում կա մի ցուցակ, որի մեջ մտնում են Հռոմեացիներին ուղղված թուղթը, Կորնթացիներին հասցեագրված երկու, Գաղատացիներին, Եփեսացիներին, Փիլիպպեցիներին, Կողոսացիներին, Տիմոթեոսին, Տիտոսին, Փիլիմոնին ուղղված նամակները: Ավետարանների վերաբերյալ կան հակամարկիոնյան նախաբաններ:

Կարելի է ի մի բերել նաև Պոլիկարպոսի, Իգնասիո Անտիոքցու, Կղենես Հռոմեացու գրվածքների վկայությունները:

Հարց է ծագում՝ ինչպե՞ս է կայացել համաձայնությունը Նոր Կտակարանի գրքերի ամբողջական ցուցակի վերաբերյալ: Այս մասին նշենք հետևյալը.

1. Կոստանդին կայսեր օրոք հաստատված խաղաղությունը հնարավոր դարձրեց Եկեղեցիների միջև կանոնավոր կապերի հաստատումն ու տիեզերական ժողովների գումարումը: Առաջին մեծ տիեզերաժողովը գումարվել է Նիկիայում՝ 325 թվականին. մինչ այդ եղել են նաև ուրիշ ժողովներ:

2. Ավանդույթը սկսում էր անել իր գործը: Առաջվա պես Սուրբ Գիրքն այլևս առաջին պլանում չէր: Եվ ահա, II դարի վերջին, Արևելքի և Արևմուտքի Եկեղեցիներն արդեն հակադրվում են Հոգեգալստյան տոնի ավանդույթի հարցում: Բանը դեռևս ավանդույթը (չգրված հայտնությունը) չէ, այլ կանոնական դարձող սովորույթները: Ուստի, կանոնի խնդիրը պակաս կարևոր է: Ռեֆորմացիան Սուրբ Գիրքը մղեց առաջին պլան և նորից սուր ձևով դրվեց կանոնի հարցը:

3. Գաղափարների փոթորկմանը նպաստեցին նորանոր հանգամանքներ: Արևմուտք աքսորված Աթանասը՝ վերադառնալով Արևելք, ծանոթացրեց Արևմուտքի դիրքորոշմանը, այն նպաստավոր էր «Հայտնության» համար: Նմանօրինակ միջամտություն արվեց նաև

Dydime-ի և Կիրիլ Ալեքսանդրացու կողմից: Եվ, ընդհակառակը, Արևելք աքսորված Իպոլիտ դե Պուլատիեն, Լյուցիֆեր դե Կալիարին Արևմուտքին ծանոթացրին Արևելքի դիրքորոշմանը, որը նպաստավոր էր Եբրայեցիներին ուղղված մամակի համար: Նույն ազդեցությունն ավելի ուշ գործվեց Victorin-ի, Priscillien-ի, Յերոնիմոսի կողմից:

«Ընդհանրական» մամակների հարցը վիճարկվեց ավելի երկար: Համաձայնություն հաստատվեց միայն VI դարում: Հակոբոսի թղթերը, Պետրոսի 2-րդ, Հուդայի, Հովհաննեսի 2-րդ և 3-րդ թղթերը և նույնիսկ «Հայտնություն»-ը Junillius-ը համարում է «միջակ հեղինակություն» ունեցող գրվածքներ: Սիքստ դե Սիենը ավելի ուշ կիսոսի Նոր Կտակարանի այնպիսի գրվածքների մասին, որոնք կանոնական են դարձել մյուսներից հետո: Այս տարբերակումները չեն պահպանվել: Շատ կուզենայինք իմանալ, թե ինչու: Նոր Կտակարանի բոլոր գրքերը բովանդակող ցուցակներն ընդունվեցին տիեզերաժողովների կողմից, որոնք, չնայած իրենց կանոններին, վերջ չդրեցին ամեն երկրնտրանքի:

3. Եզրակացություն

Իբրև եզրակացություն՝ ասենք, որ Նոր Կտակարանի գրքերը կարելի է տարբերակել՝ հենվելով բազմաթիվ վկայությունների վրա:

1. Փաստերի վկայության, քանզի հաստատում ենք առաքելական դարաշրջանի վերջին (սկսած I դարի վերջից կամ II դարի սկզբից) բոլոր գրքերի գոյության փաստը:

2. Հին Կտակարանի վկայության. վկայությունը տրվել է Եկեղեցուն և Նոր Կտակարանում հաստատված նրա ավանդին: Այսպես է դրված մասնավորապես հայտնության միասնության խնդիրը:

3. Հոգու վկայության. վկայությունը տրված է սկզբնական շրջանի առաքելական Եկեղեցու միաբանությանը, Եկեղեցի, որի հետ հաղորդության մեջ ենք: Թեև Նոր Կտակարանի կանոնին առնչվող երկրնտրանքներին՝ այս միաբանությունը դրսևորվում է. երկրնտրանքները վերաբերում են ոչ թե հավատքի միասնականությանը, այլ Եկեղեցուն տրված գրքերի տարբերակմանը, երևույթ, որը կախված էր նպաստավոր կամ ոչ նպաստավոր տարբեր հանգամանքներից, որոնք կարելի է հասկանալ: Նման հանգամանքներ այլևս չկան, և մենք չունենք նոր պատճառներ՝ Նոր Կտակարանի կանոնի այս կամ այն մասը կասկածի տակ առնելու համար:

Հռոմեական Եկեղեցին, որի կարծիքով, Նոր Կտակարանի կանոնը կապված է Եկեղեցու որոշումների հետ, Ռեֆորմացիային հանդիմանում է Եկեղեցու հեղինակությունը չընդունելու և, մինչև նույն ժամանակ, նույն այս հեղինակության կողմից իբրև կանոնական ճանաչվող գրքերի վրա հիմնվելու համար: Պատասխանը հետևյալն է. մեր համոզմունքն ամենևին էլ չի հենվում նորկտակարանային կանոն ամրագրող Եկեղեցու որևէ որոշման վրա: Բանը աստվածաշնչյան հայտնության մեջ ուսմունք գտնելը չէ, այլ փաստեր տարբերակելը: Ինչպես արդեն վերը նշել ենք, կանոնին վերաբերող երկրնտրանքները չեն հակադրվում հավատքին, թեև հավատքը մոլորեցնելու վտանգ են պարունակում. արտահայտում են տարբերակման երկրնտրանքներ: Տարբերակումը կախված է հոգևոր և նույնիսկ նյութական բազմաթիվ պայմաններից: Երբ խոսքը հանրույթի տարբերակման կամ էլ նույն տարբերակմանը հաղորդակցվելու մասին է, պայմաններն էլ ավելի բարդ են: Վերջին հաշ-

վով, առավել անհրաժեշտ է բացատրել ստեղծված ու պահպանված միասնությունը, քան նախորդող երկընտրանքները: Մենք ոչ մի պատրանք չենք ստեղծում Նոր Կտակարանի ամբողջ կանոնը ստացած մարդկանց համոզմունքի, ոչ էլ նրանց փաստած պատճառների որակի վերաբերյալ:

Մենք նկատեցինք, որ եթե Նոր Կտակարանի կանոնի խնդիրը չի դրվում Յնի պես, այսուամենայնիվ, առաջարկված լուծումների միջև կա որոշ նմանություն:

1. Երկու դեպքում էլ համոզմունքը հոգևոր կարգի է, քանզի Յին Կտակարանի դեպքում հենվում է Քրիստոսի մեջ մեր ներառվելու փաստի վրա, այսինքն՝ որպեսզի, շնորհիվ Յին Կտակարանի, ունենանք նույն զգացումները, ինչ Յիսուս Քրիստոսը: Նոր Կտակարանի դեպքում այս համոզմունքը ենթադրում է Քրիստոսի մարմնի՝ Եկեղեցու մեջ մեր ներառվելու փաստը, Եկեղեցի, որի հետ այս կետում պարտավոր ենք լինել կատարյալ ընդհանրության մեջ:

2. Երկու դեպքում էլ համոզմունքը ենթադրում է տարբերակում. մի կողմից՝ Յին Կտակարանի բովանդակության տարբերակում, Կտակարան, որը ժողովարանների ձեռքին էր, և որը ստացել է Քրիստոսը, մյուս կողմից էլ առաքելական Եկեղեցու ստացած Նոր Կտակարանի բովանդակության տարբերակում, Կտակարան, որ ամբողջ Եկեղեցին աստիճանաբար իրականացրել է¹:

Գ Լ ՈՒ Խ 6

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ա. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պաղեստին անունը գործածական չէր հռոմեացիների մեջ: Առաջացել է Եգեյան ծովի ափերին, Կրետե կղզու կողմերում հաստատված բնակիչների՝ փղշտացիների անունից, բնակիչներ, որոնք այստեղ հինգ քաղաք կառուցեցին այն ժամանակ, երբ արևմուտքի անապատից ու սարերից ներխուժեցին քոչվոր եբրայեցիները: Այս ընթացքում տեղի ունեցավ առաջին բախումը Եվրոպայի և Ասիայի միջև. գոնե այն, որը հայտնի է պատմագրությունից: Երկիրը երբեք հստակորեն սահմանազատված չի եղել մինչև այն պահը, երբ Բրիտանական կայսրությունն այստեղ կիրառեց իր մանդատը և ամենայն ճշգրտությամբ գծեց սահմաններ: Հռոմեացիների կարծիքով, Պաղեստինը կազմվել է Յրեաստանից և Սամարայից, առավելապես՝ առաջինից: Նրանց այստեղ ճանաչեցին իբրև փոքր պետություններ և զավառը պահեցին Սիրիայից անկախ:

Հողը, որի վրա ծնվել է մեր Փրկիչը, հիշեցնում է Բեթղեհեմ գյուղը, որը հիշատակված է որպես Յրեաստանի ամենափոքր գյուղ:

¹ Stéu G. Millon, cours professé à la Faculté de Théologie d'Aix-en-Provence.

Այժմ ամփոփ ներկայացնենք H.H. Rowley-ի «Աստվածաշնչյան քարտեզ» հրաշալի գործը (ֆրանսերեն թարգմանությունը լույս է տեսել Centurion հրատարակչության կողմից):

«Աշխարհագրությունն, իրոք, խորապես ազդում է պատմության վրա, և, հատկապես, Հին Կտակարանի մի շարք հատվածներ չեն կարող, ինչպես հարկն է, հասկացվել, եթե դրանք կրկին տեղավորենք աշխարհագրական իրենց համատեքստում:

Պաղեստինը հրաշալի երկիր է շատ առումներով: Նրա երկարությունը՝ Դանից մինչև Բերսաբե (Դատավորաց 20:1), 240 կմ է, ամենամեծ լայնությունը՝ հազիվ 120 կմ: Մինչդեռ աշխարհում խաղացել է չափերի հետ ամենևին կապ չունեցող դեր:

Պաղեստինը փռված էր «Արգավանդ մահիկ»-ի (այսպես էր կոչվում մշակովի այն շրջանը, որն սկսվում էր Արաբական թերակղզու ծայր հյուսիսից՝ ներառելով Տիգրիսի ու Եփրատի հարթավայրերը, Սիրիան, Պաղեստինը՝ ընդհուպ մինչև Եգիպտոսի սահմանը) արևմտյան ծայրամասում: Նա կամուրջ էր Միջագետքի և Փոքր Ասիայի հնագույն կայսրությունների, ինչպես նաև Մերձավոր Արևելքի քաղաքակրթության մեկ այլ օրրանի՝ Եգիպտոսի կայսրության միջև: Պաղեստինը քաղաքականապես երբեք զորեղ չեղավ, թեև նրա ժողովուրդը հաճախ էր երազում մեծ դեր խաղալ: Սակայն երկիրը շրջապատող հսկա կայսրությունները շատ լավ էին հասկանում այս «կամրջի» կարևորությունը: Երկար ժամանակ իսրայելացիները ենթարկվեցին իրենց կողմից պարտության մատնված քանանացի ազգաբնակչության մշակութային ու կրոնական ճնշումներին. Աստվածաշունչն ընդունում է այս փաստը: Նմանապես, ողջ պատմության ընթացքում, կրեցին նաև իրենց հաղթող հարևանների՝ պարսիկների, հույների ու հռոմեացիների ազդեցությունը:

Թեպետ այս ամենին Պաղեստինը աշխարհում խաղացել է ավելի կարևոր ու տևական դեր, քան համեմատելի տարածք ունեցող որևէ այլ երկիր: Եթե նրա ներդրումը, արվեստի տեսակետից, համարյա չնչին է, ապա փոխարենը Աստվածաշնչում տեղ գտած գրականությունը թարգմանվել է անթիվ - անհամար լեզուներով և սիրով պահպանվել: Այս հարգանքը բացատրվում է ոչ թե Աստվածաշնչի գրական արժանիքներով (ինչքան էլ սրանք մեծ լինեն), այլ նրա բովանդակած լուրով ու հոգևոր հատկանիշներով: Արժանիքի պատճառը Իսրայելի արտաքին շրջանակը չէ, այլ Աստծու և նրա զորության հարցում իր փորձառությունը: Իսրայելի կրոնական գործիչները տարածում էին ոչ թե մտացածին լուր, այլ միայն այն, ինչը, նրանց կարծիքով, Աստծու Խոսքն էր: Ուստի, այս լուրը չի կարող հասկացվել՝ առանց դիմելու երկրի աշխարհագրությանն ու պատմությանը: Աշխարհագրությունն ազդում էր պատմության վրա, իսկ Աստծու մունետիկների բերած լուրը հաճախ վերաբերում էր պահի որոշակի իրավիճակին: Անշուշտ, խոսքը մարդուն հրավիրում էր պաշտելու Աստծուն և լսելու նրա ձայնը, առաջնորդում էր նրա բոլոր ձեռնարկումներում ու վստահեցնում, որ իսկական բարիքը Աստծու Օրենքն է:

Աշխարհագրական առումով Պաղեստինը շատ փոփոխական երկիր է: Արևմուտքից Արևելք կարելի է տարբերել չորս շրջան.

1. *Ափամերձ հարթավայրը*, որի մեջ մտնում է փղշտացիների երկիրն ու Սարոնի հարթավայրը և ձգվում է մինչև այնտեղ, որտեղ Կարմեղոս սարը ելուստ է առաջացնում ծովի մեջ: Քիչ ավելի հյուսիս՝ Ակկոյի հովիտն է և փյունիկեցիների երկիրը: Հարավում հարթավայրը տարածվում է Հրեաստանի լեռնային շրջանի ուղղությամբ:

2. *Բարձրավանդակների շրջան*. Ափամերձ հարթավայրից արևելք, երկրի հյուսիսից հարավ փռվում է լեռնային մի շրջան, որը երբեմն-երբեմն տեղի է տալիս ավելի ցածրադիր գոտիների: Հարավում Հուդայի բարձրավանդակը հասնում է գագաթնակետին՝ 1000 մ: Հյուսիսում բլուրների բարձրությունը նվազում է, իսկ էլ ավելի հյուսիսում Եփրայիմի շրջանն է, որտեղ՝ Սյուքեմի այս ու այն կողմում, աչքի են զարնում Էբալ և Գարիզիմ սարերը: Հետո բլուրները նահանջում են՝ տեղը զիջելով մի հարթավայրի, որը Կարմեղոս սարից ձգվում է դեպի Հորդանան, հարթավայրի արևմտյան մասն անվանվում է Esdrelon հարթավայր, իսկ արևելյանը՝ Եզրայելի հովիտ: Սրանից հարավ Գեղբուե սարն է:

Ստորին Գալիլիայի լեռները, որոնք ներառում են Թաբոր սարը, ավելի ցածր են, քան Վերին Գալիլիայի լեռները, որոնք ձգվում են մինչև Լիբանանի սահմանը: Այստեղ ափամերձ հարթավայրը շատ նեղ է, որով էլ հենց բացատրվում է այն հանգամանքը, թե փյունիկեցիները ինչու են իրենց հայացքները միշտ հառել դեպի ծով և դարձել նավարկող մեծ ազգ:

Հուդայի երկրի սարերից հարավ՝ Բերսաբեի և Կադես Բառնեայի միջև, փռվում է Նեգևը, որի սահմանները, սակայն, բավականին աղոտ են: Անբավարար քանակության անձրևների պատճառով Նեգևը մշակության համար պիտանի չէր և օգտագործվում էր իբրև արոտավայր:

3. *Հորդանանի հովիտը* ընկած է մեծ խորության մեջ, միմյանցից բաժանում է Արևմտյան ու Արևելյան Պաղեստինները և շարունակվում է մինչև Կարմիր ծով: Հորդանանը սկիզբ է առնում Լիբանանի և Անդիլիբանանի լեռներից. գետը հոսում է Տիբերիա լճով և թափվում է Մեռյալ ծովը: Տիբերիա լիճը ծովի մակարդակից ցածր է 212, իսկ Մեռյալ ծովը՝ 392 մետրով: Լճի ու ծովի միջև Հորդանան գետը խիստ ճյուղավորվում է, իսկ ափերը մասամբ անտառապատ են: Մեռյալ ծովի մերձակայքում Հորդանանի հովիտն ընդարձակվում է: Հենց այստեղ է գտնվում Երիթովը՝ հեղձուցիչ կլիմայով ու արևադարձային բուսականությամբ: Մեռյալ ծովը ոչ մի ելք չունի, իսկ ջրերն այնքան աղի են, որ կյանքն այնտեղ հնարավոր չէ: Հարավ-արևմտյան մասն առաջանում և կազմում է թերակղզի, որն արտաքին տեսքի պատճառով անվանվել է «լեզու». այս թերակղզու հարավում ծովի խորությունը փոքրանում է:

Մեռյալ ծովի արևմտյան մասում տարածվում է Հուդայի անապատը, որտեղ Սավուդից խուսափելու համար Դավիթն ապաստան է փնտրել: Հենց այս անապատում՝ Qumrân-ում և Murabb'at-ում են հայտնաբերվել Մեռյալ ծովի շրջանի ձեռագրերը:

Հուդայի լեռները կտրուկ խորանում են դեպի Մեռյալ ծով. իրոք, Երուսաղեմից մինչև Երիթով, 22 կիլոմետրի վրա, ուղիղ գծով, ճանապարհն իջնում է ավելի քան 200 մետրով:

Մեռյալ ծովի հարավում փռվում է Էլ-Արաբան (2-րդ Օրինաց 2:8), որն իջնում է դեպի Աբաբայի ծովածոցը:

4. Հորդանանի արևելյան հատվածը բարձրադիր հարթավայր է՝ բաժանված չորս գետերով՝ Յարմուկ, Յաբոկ, Առնոն և Ջերեդ: Առնոնն ու Ջերեդը հոսում են շրջանը սերտորեն շրջափակող խոր ձորերով: Յարմուկից հյուսիս Bashan-ի երկիրն է, իսկ մյուս կողմում՝ Անդիլիբանանը՝ Հերմոն լեռով, որի ձյունապատ կատարները տեսանելի են Տիբերիա լճից: Յարմուկի և Յաբոկի միջև տարածվում է Գադաադ սարահարթը, Յաբոկի ու Առնոնի միջև Գադի և Ռուբենի ցեղերի տարածքն է, որը հաճախ է ներխուժումների ենթարկվել արևելքից եկած անորհացիների կողմից: Այստեղ վեր է խոյանում Նաբավ սարը, որտեղից Մովսեսը

նկատեց ավետյաց երկիրը (2-րդ Օրինաց 34:1): Առնոնի և Ձերեդի միջև մովաբացիների հողն է, իսկ Ձերեդից հարավ՝ եղովմացիներինը:

Պաղեստինի մակերևութի մասին այս թռուցիկ ակնարկը լույս է սփռում նրա պատմության վրա: Բնական բազմաթիվ խոչընդոտները դժվարացնում էին հաղորդակցությունները և զգալիորեն խանգարում քաղաքական միասնության պահպանման գործին: Ամբողջ երկրով մեկ անցնում էր գլխավոր մի ճանապարհ, որն օգտագործվում էր պատերազմների ժամանակ՝ հարևան երկրների բանակների, իսկ խաղաղ ժամանակներում՝ վաճառականների կողմից: Ճանապարհը սկսվում էր Դամասկոսից, կտրում-անցնում էր Գալիլիան, այնուհետև՝ հարթավայրը, թեքվում էր Կարմեղոսի հարավային ծովափը և անցնելով ավամերձ հարթավայրով՝ հասնում Եգիպտոսի սահմանը: Հուդայի երկիրն, այսպիսով, գտնվում էր ճանապարհից այն կողմ. սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ քիչ է ենթարկվել երկիրը հեղեղող արտասահմանցիների ալիքին:

Փղշտացիների երկրին հարող ծովափը բնական լավ նավահանգիստներ չի առաջարկում. գարնանն ու աշնանը շատ առատ անձրևներ են տեղում, սակայն ինչքան իջնում ենք դեպի հարավ, տեղումների քանակը նվազում է:

Ուստի, ջուրն այստեղ թանկ արժեր. Երուսաղեմում ու մյուս քաղաքներում այն պահում էին տների տակ փորված ջրամբարներում: Երուսաղեմի պատնեշներից այն կողմ մի աղբյուր է ցայտում: Նախքան Դավթի կողմից քաղաքը գրավելը՝ աղբյուրից թունելով ջուր էին բերել մինչև այնտեղ, ուր բնակիչները կարող էին գալ և ջուր վերցնել ժայռի մեջ անտաշ ձևով փորված ջրամբարից: Բայց թշնամիները կարող էին շեղել ջրի ընթացքը. ահա թե ինչու Եգեկիան փորել տվեց մի թունել և ջրմուղով ջուրը հասցրեց քաղաքի ներքևի մասը՝ Սիլովամ շատրվանը (Բ. Թագավորաց 20:20)»¹:

Բ. ԿԼԻՄԱՆ

Պաղեստինի կլիման կարող է ներկայացվել իբրև մերձարևադարձային. ամռանը չոր է ու շոգ, ձմռանը՝ խոնավ ու ավելի քան զով:

Ամռան սկսվում է մայիսից և տևում է մինչև հոկտեմբեր ամիսը: Ամռան սկզբի ու վերջի համար հնարավոր չէ տալ ճշգրիտ ամսաթվեր: Հունիսը, հուլիսն ու օգոստոսը հիմնական ամիսներն են: Տարվա այս եղանակին կլիման ամեն օր համարյա նույնն է, քանզի հիմնականում պայմանավորված է Պարսկական ծովածոցի վրայի ցածր և Ազորի մոտերքում եղած բարձր ճնշմամբ: Ամռանը յուրաքանչյուր շրջանում ջերմաստիճանը տարբեր է: Օգոստոսը տարվա ամենաշոգ ամիսն է:

Ջերմաստիճանից ու քամուց են կախված կյանքի պայմանները: Ամռան սովորական օրը հարկ է հաշվի առնել հետևյալ գործոնները: Ցամաքի վրա օդը տաքանում է ավելի արագ, քան ծովի վրա: Թեև ամռանն ամպերը հազվադեպ չեն, անձրև հաճախ չի տեղում: Ծովին մոտ լինելու և արևմուտքից փչող քամու պատճառով օդը բավականաչափ խոնավ է՝ ցողի վերածվելու համար:

¹ H.H.Rowley, Atlas de la Bible (Centurion).

Չմեռը, որը ներառում է հոկտեմբերից ապրիլ ընկած ժամանակահատվածը, իր հետ բերում է ավելի մեծ բազմազանություն: Չմեռը լիովին տարբեր է նրանով, որ տարվա այս եղանակին բնորոշ են անձրևները: Նույնիսկ ձմռանը արևոտ օրերի թիվը գերազանցում է անձրևոտ օրերի քանակը: Սովորաբար երկու հարյուր տասը օրերից միայն քառասունհինգն են անձրևային: Յետևապես, հազիվ թե կարելի է ձմեռը համեմատել Արևմտյան Եվրոպայի ձմռան կամ էլ արևադարձային երկրների խոնավ սարերի հետ: Շատ հաճախ անձրևը տեղում է ծանր շիթերով, սակայն, բարեբախտաբար, միշտ այսպես չէ, այլապես կարող է ողբերգական հետևանքներ ունենալ:

Ամենացածր ջերմաստիճանները բնորոշ են լեռնային, ինչպես նաև արևմտյան շրջաններին:

Առատ անձրևի և կրաքարային հաստ շերտերի առկայության պատճառով կան բազմաթիվ աղբյուրներ: Քանի որ այս աղբյուրների գոյությունը կախված է անձրևներից, նրանց քանակությունն ու վարարությունը նվազում են հյուսիսից հարավ և արևմուտքից արևելք: Աղբյուրներ կան ամենուրեք, նույնիսկ էլ Աբաբայից արևմուտք ընկած անապատում, ինչպես և Սինայի անապատում:

9. ԲՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՂԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Պաղեստինի բուսական և կենդանական աշխարհները մեծ մասամբ ու մեծ չափով պայմանավորված են մթնոլորտային տեղումներով:

Պաղեստինի վերը նշված բոլոր շրջաններն ունեն բուսական ու կենդանական նույն աշխարհը, ինչ Միջերկրական ծովի ավազանի երկրները:

Ինչ վերաբերում է կենդանական աշխարհին, ապա Աստվածաշունչը, եթե հիշում եք, կենդանիներին բաժանում էր երկու խմբի՝ ձեռնասուն ու վայրի:

Ձեռնասուն կենդանիների մեջ նախ հիշատակենք խարտյաշ պոչով սպիտակ ոչխարը, որին պահում էին բրդի, կաթի, մսի ու կաշվի համար, և սև այծը, որն օգտակար էր նույն պատճառներով: Անասնաբուծությամբ զբաղվում էին միայն որոշ շրջաններում: Ավանակը կամ վայրի էլը բեռնակիր կենդանի է, զվարակն օգտագործվում էր հողի մշակության գործում:

Վայրի կենդանիների թվում հարկ է նշել պաղեստինյան առյուծը: Նա շատ ավելի փոքր է, քան աֆրիկյան իր ցեղակիցը, որը խաչակրաց արշավանքներից ի վեր ամբողջապես անհետացել է: Խոսքը չի վերաբերում սիրիական արջին, որն, ասում են, դեռևս գոյություն ունի իբրևանյան հավերժ անմատչելի լեռներում: Փոքր կոկորդիլոսը նույնպես անհետացել է: Աղվեսը մշտապես որս է անում, և չախկալներն էլ կանոնավորապես դեռ երևում են:

Պաղեստինում միշտ էլ եղել են տարատեսակ թռչուններ, որոնց կարելի է դասակարգել հետևյալ կերպ. չվող թռչուններ, ինչպիսիք են արագիլները, որոնք գարնանը գալիս են հարավից և չվում են հյուսիս՝ ձմռանը վերադառնալով հարավ, թռչուններ, որոնք չոր եղանակին մայրցամաք են մտնում ծովից և առաջին անձրևների հետ լքում ցամաքը, թռչուններ, որոնք հյուսիսից են թափանցում Պաղեստին և այնտեղ մնում ողջ ձմեռ և, վերջապես, թռչուններ, որոնք մշտապես մնում են Պաղեստինում:

Ձանձրալի կլիներ մանրամասն թվարկել Պաղեստինի բուսական ու կենդանական աշխարհի բոլոր տեսակները. անհրաժեշտության դեպքում կարելի է դիմել աստվածաշնչյան բառարանի կամ հանրագիտարանի:

Դ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

Ջուրն անհրաժեշտ է մարդկային ցանկացած համայնքի: Քանի որ Պաղեստինը քիչ ունի ամբողջ տարին ջրով լեցուն գետեր, աղբյուրները շատ թանկ արժեն: Ամռան երաշտին մարդիկ այս աղբյուրների մոտ են ապահովում կենսական գոյությունը:

Ջրի պաշարից բացի՝ այլ գործոններ ևս վճռորոշ դեր ունեն այն հարցում, թե արդյոք մարդկային որևէ համայնք կարող է ապրել որոշ վայրերում: Օրինակ, գյուղը պետք է ունենա բավականաչափ վարելահող ու արոտավայր: Նույնիսկ Միջերկրականի գոտում այսպիսի հողեր ամենուրեք չէ, որ կան: Որոշ շրջաններում որևէ համայնք կարող էր ապրել այնտեղ, որտեղ հողը հարթ էր. օրինակ, Սյուքեմի մոտ: Մեկ այլ տեղ էլ ձեռք էին բերում վարելահողեր՝ բլուրների վրա պատնեշներ կամ էլ ծովի ափերին պատեր կառուցելով և այս կերպ ստեղծում նեղ ու երկար հողահարթակներ: Սովորաբար արոտավայրերն ավելի մատչելի են: Պաղեստինը, Արևմտյան Եվրոպայի պես, չունի մարգագետիններ, սակայն ծնռանը այծերը բավականաչափ խոտ են գտնում արածելու այնտեղ, որտեղ հնարավոր չէ զբաղվել գյուղատնտեսությամբ, իսկ ամռանը հողը հարուստ է թողնել:

Ե. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

1. Ցամաքային ուղիներ

Մարդկային համայնքի զարգացմանը նպաստող մեկ այլ գործոն էլ մարդկային այլ խմբերի հետ շփումն է ու կապերը, մի բան, որն անհրաժեշտաբար մղում է կառուցել երկրի տնտեսության ու բարգավաճման համար անհրաժեշտ առանցքային ճանապարհներ: Միջազգային ուղիները կապեր էին ապահովում հարևան երկրների հետ: Ամենից ավելի մեծ նշանակություն ուներ Միջագետքը Եգիպտոսի հետ կապող ճանապարհը:

Ծայրահեղ կարևոր գործոն է, անշուշտ, օգտագործվող ուղիների ապահովությունը: «Հռոմեացիներն աշխարհին պարզևեղ են խաղաղություն, - երկրորդ դարում գրել է Իրինեոս Լիոնացին, - և մենք անվախ ընթանում ենք ճանապարհներով, իսկ ցանկության դեպքում՝ կտրում-անցնում ծովեր»: Ոսկե (ռազմական) սահմանասյունը Հռոմում էր, և առաջին դարի վերջին միմյանցից հեռացող ճանապարհների մեկնակետը Անտոնիա բերդի պարսպի մոտ էր՝ հյուսիսում, ընդհուպ մինչև Եփրատի ու Երուսաղեմի հարավը: Սահմանասյուները ծառայում էին ճշգրիտ կանգառները չափելուն: Լեգեոնների պես ուժեղ այս ճանապարհները ուղիղ ընթանում էին սարերի ու գետերի վրայով և, հնարամտորեն կառուցված հիմքի շնորհիվ, ձգվում վտակներից էլ վեր: Պատմաբան Գիբոնի կարծիքով, այս ճանապարհները միմյանց էին կապում ամենահեռավոր գավառների մարդկանց, բայց գլխավոր նպատակը

¹ Stu in Blaiclock, The World of the New Testament, p. 57-58.

լեգեոնների առաջընթացը հեշտացնելն էր...»¹: Քրիստոնյաները ևս օգտվել են այդ ճանապարհից (տես՝ Փիլիպպոս ավետարանիչ և եթովպացի սպա՝ ըստ «Գործք Առաքելոց»-ի 8-րդ գլխի), ինչպես նաև մայր քաղաքներն իրար կապող մայրուղիներից. այս ճանապարհներով է ս. Պողոսը ձեռնարկել առաքելական իր ճանապարհորդությունները: Եթե առաքյալի վրա մեծ ավազակներ են հարձակվել, և եթե Երուսաղեմից Երիքով տանող ճանապարհը շատ ապահով չէր, ապա պատճառն այն էր, որ այս վայրերում դեռևս չէին իշխում հռոմեական կարգուկանոնն ու ոստիկանությունը: Պողոսին Կեսարիա ուղեկցող սպայի՝ Լյուսիասի ձեռնարկած պաշտպանական միջոցներն առավելապես բացատրվում են հրեա հակառակորդների կողմից ծրագրված դավադրությամբ (ովքեր բացահայտ փորձում էին սպանել Պողոսին), քան մեծ ճանապարհների վրա հանդիպող պատահական ավազակների սպառնալիքով:

2. Ծովային ուղիները

Ծովային հաղորդակցությունները, եթե դրանք լիովին գերծ չէին խանգարումներից, կազմում էին լայն ցանց: Միջերկրականի ավազանի բոլոր երկրներն ունեն բազմաթիվ նավահանգիստներ: Հերովդես Մեծը ավելի քան տասներկու տարի է նվիրել Կեսարիայի նավահանգստի կառուցմանը: Ինչ վերաբերում է Միջերկրական ծովի վրա նավարկող մեծ նավերին, ապա կարելի է աչք ածել Պոմպեյի և Հերկուլանոմի նկարներից, քաղաքներ, որոնք 79 թ. օգոստոսին՝ Վեզուվի ժայթքման ժամանակ, լիովին ավերվել են: Այս նկարներում պատկերված են ալեքսանդրյան տիպի բեռնանավեր, որոնցից մեկը Պողոսին տեղափոխել է Հռոմ: Այս նավերը համարյա չեն տարբերվում նրանցից, որոնք ծառայել են հաջորդ տասնութ դարերի ընթացքում: Եվսեբիոսը պատմում է, որ մի անգամ հարկադրված էր Հռոմ վերադառնալ վեցհարյուրհոգիանոց նավով: Նավը խրվեց ծանծաղուտի մեջ, և ուղևորները ստիպված եղան ամբողջ գիշեր լողալ՝ ավի հասնելու համար: Մոտ ութսուն այլ փրկվածների հետ նրան նստեցրին սիրիական մի նավ, մինչդեռ կատաղած ծովի ալիքները կուլ տվեցին մյուսներին:

Ձմռանը սովորաբար խուսափում էին ծովային ճանապարհորդությունից՝ այն դիտելով իբրև վտանգավոր ձեռնարկում: Դժվար է որոշել մեկ օրում անցած ճանապարհը: Համարում էին, որ դա մոտավորապես հիսուն մղոն է. այս հաշվարկով Ալեքսանդրիայից Հռոմ հասնելու համար պետք էր մոտ երեք ամիս ժամանակ:

Վերջին հաշվով, ազգաբնակչության արտագաղթն ու ճամփորդական բոլոր շարժումները առաջին դարում շատ չէին տարբերվում այսօր եղածից, բացառությամբ արագության, քանզի ինքնաթիռով շուրջերկրյա ճանապարհորդությունն իրականացվում է գրեթե 24 ժամում: Այնուամենայնիվ, առաջին դարում Պողոսի ուղևորությունները հնարավոր են եղել և, ինչպես հաղորդում է Blaiclock-ը, մեկ դար առաջ կամ հետո այս ճանապարհորդությունները կամ հնարավոր չէին լինի, կամ էլ չէին ձեռնարկվի նույն կերպ:

Ձ. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ ԻՇՆԱՏԱԿՎԱԾ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Այբբենական կարգով թվարկենք միայն մեր Տիրոջ և առաքյալների, մասնավորապես Պողոսի գործունեությանն առնչվող գլխավոր քաղաքները:

1. Քրիստոսի առաքելության ընթացքում հիշատակված քաղաքները

Բեթղեհեմ. Տիրոջ ծննդավայրը (Ղուկաս 2), *Բեթսայիդա, Կանա,* որտեղ Հիսուսը կատարեց իր առաջին հրաշքը (Հովհաննես 2), *Կափառնայում.* քաղաք, որտեղ ծնվել են աշակերտներից Պետրոսը, Անդրեասը, Հովհաննեսն ու Հակոբոսը, *Փիլիպպոսի Կեսարիա.* հռոմեական կառավարության նստավայրը Պաղեստինում, *Քորազին.* Քրիստոսի այցելած և նրա կանչին անհավատ մնացած քաղաք, *Դեկապոլիս* կամ տասը քաղաքներ հեթանոսների տարածքում. Տերն այստեղ բուժեց սիրիափյունիկեցի կնոջ աղջկան, *Գեննեսարթ.* քաղաք Տիրիիա լճի ափին, *Երիբով.* քաղաք, որով Քրիստոսն անցավ Երուսաղեմ վերադառնալիս և որտեղ կայացավ հայտնի հանդիպումը Չաքեոսի հետ, *Երուսաղեմ.* Հրեաստանի մայրաքաղաքն ու Քրիստոսի միջնորդ գործունեության մեծ քառերաբեմը, *Նային.* քաղաք, որտեղ վերակենդանացրեց այրի կնոջ որդուն (Ղուկաս 18), *Նազարեթ.* Քրիստոսը մեծացավ այստեղ՝ Եգիպտոսից վերադառնալուց հետո, *Սիդոն, Սյուքար.* այստեղ՝ Հակոբ Նահապետի ջրհորի մոտ, հանդիպեց սամարացի մի կնոջ (Հովհաննես 4), *Տյուրոս.* ծովափնյա քաղաք:

Հիշատակենք վարչական չորս մեծ գավառներ՝ Հրեաստան, Սամարիա, Գալիլիա և Հերովդես Մեծի որդիներին հատկացված տարածքը:

2. Ս. Պողոսի այցելած քաղաքներն ու երկրները

Պիսիդիայի Անտիոք (Փոքր Ասիայում), Սիրիայի Անտիոք, Աթենք (Հունաստանում), Բերիա (Մակեդոնիայում), Կեսարիա (Պաղեստինյան ափին), Կիպրոս (կղզի), Կողոսա (Փոքր Ասիայում), Կորնթոս (Պելոպոնեսում), Կրետե (կղզի), Դամասկոս (Սիրիայում), Դերբե (Փոքր Ասիայում), Եփեսոս, Իկոնիոն, Լյուստրա, Պափոս (Կիպրոսում), Փիլիպպե (Մակեդոնիայում), Հռոդոս (կղզի), Հռոմ (Իտալիայում), Սաղամինա (Կիպրոսում), Սամոթրակե (կղզի), Թեսաղոնիկե (Մակեդոնիայում), Տրոյա (Փոքր Ասիայում):

3. Փոքր Ասիայի յոթ Եկեղեցիները

Համաձայն «Հայտնության» 2-րդ և 3-րդ գլուխների՝ այս յոթ Եկեղեցիները գտնվում էին Եփեսոսում, Չմյուռնիայում, Պերգամոնում, Թյուատիրայում, Սարդեսում, Փիլադելփիայում և Լաոդիկիայում:

Իմիջիայլոց, նշենք միայն, որ այս մեծ քաղաքներից յուրաքանչյուրը՝ Փոքր Ասիայում, թե այլուր, տվյալ դարաշրջանում եղել է մշակույթի ու քաղաքակրթության ծաղկման մեծ կենտրոն, եթե նույնիսկ ոչինչ չչասենք առևտրական ու տնտեսական բնագավառներում այդ քաղաքների նշանակության մասին:

Է. ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐ

Քանի որ անհնարին է ուշադրության առնել ինչպես Պաղեստինի, այնպես էլ Նոր Կտակարանում հիշատակված այլ երկրների աշխարհագրությանն առնչվող բոլոր հետաքրքիր հարցերը, սահմանափակվենք միայն սովորական ցուցակ հաստատելով:

Անշուշտ, հարկ է սկսել աֆրիկյան մայրցամաքում գտնվող մի երկրից՝ Եգիպտոսից, և, մասնավորապես, Եթովպիայից՝ այս երկրի թագուհու սպաներից մեկի հետ Փիլիպպոս ավետարանչի հանդիպման հետ կապված (Գործք 8):

Հին Կտակարանին ամենից ավելի հետաքրքրում է *Միջագետքը*՝ Փոքր Ասիայում: *Պարսկաստանը* ևս կարևոր տեղ է գրավում ու նշանակալից դեր խաղում աստվածաշնչյան պատմության մի շարք իրադարձություններ, մասնավորապես՝ Հին Կտակարանում, հասկանալու համար:

Նոր Կտակարանի հետ ավելի անմիջական կապի մեջ է *Փոքր Ասիան*:

Հունաստանը եվրոպական մայրցամաքի առաջին երկիրն է, որը, եթե առաջինը չի ավետարանացվել, ապա, գոնե, այն երկիրն է, որի մասին ունենք քարոզչական գործունեության և Ավետարանի թափանցման հետ կապված ամենից շատ տեղեկություններ:

Մենք արդեն հիշատակել ենք *Կրետե կղզին*, որտեղ Պողոսն իր ուղեկցին՝ Տիտոսին, կարգեց առաջին եպիսկոպոս: Եվրոպական մայրցամաքի երկրների մեր ցուցակում այնուհետև *Իտալիան* է: Անշուշտ, հիշում եք Պողոս առաքյալի այցը Հռոմ և կայսրության մայրաքաղաքում հիմնված Եկեղեցուն ուղղված հայտնի թուղթը:

Իտալիայի հարավում *Մելիտե* կղզին է, ուր Հռոմի ճանապարհին Պողոս առաքյալի ու նրա ճամփակիցների նավը խրվեց ծանծաղուտի մեջ (Գործք 28):

Եվ, վերջապես, *Իսպանիան*, որտեղ Պողոսը ծրագրում է գնալ հռոմեական առաջին գերությունից ու ազատագրումից հետո:

Գ Լ ՈՒ Ն 7

ՄԻՋԿՏԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ՀԻՍՈՒՄԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Աստծու վերջին մարգարեով՝ Մաղաքիայով, ավարտին է հասնում Հին Ուխտի պատմությունը: Մոտ չորս դար շարունակ Աստված իր խոսքն այլևս չի հաղորդի անմիջականորեն մարգարեների միջոցով: Քրիստոսի ծննդին նախորդող չորս դարերը կոչվել են միջկտակարանային շրջան. դա «Աստծու լռության» շրջանն է:

Սրանից չեզրակացնենք, թե այս ժամանակը ոչ մի կարևորություն չի ներկայացնում. «մթին» այս չորս հարյուր տարիների ընթացքում Աստված նախապատրաստում էր Մեսիայի գալուստը: Այսպիսով, մեսիական հույսի լույսը չմարեց Իսրայելի ժողովրդի հավատաց-

յալ մնացորդի սրտում: Խոստացվածին սպասեց ո՛չ միայն հավատացյալ մնացորդը. Քրիստոսի գալուստին յուրովի և անուղակիորեն ծառայել են նաև թագավորներ ու մեծ կայսրություններ: Համաշխարհային պատմության թատերաբեմում ստեղծվեցին ու անհետացան քաղաքական հզորություններ: Դանիելի գիրքը մեզ է ներկայացնում ժամանակագրական մի աղյուսակ, որը ցնցող ձևով լույս է սփռում ժամանակի համաշխարհային կայսրությունների հաջորդականության վրա: Դանիելը մարգարեաբար կանխասեց գալիք այն իրադարձությունները, որոնք տեղի էին ունենալու Հին Կտակարանի վերջի, այսինքն՝ Մաղաքիայից սկսած, և Նոր Կտակարանի սկզբի, այսինքն՝ Հիսուսի ծննդի ու միջնորդության միջև: Այս առումով, Դանիելի գրքի 2-րդ և 7-րդ գլուխները առատ լույս են սփռում այս շրջանի վրա, որն ընդհանուր գծերով կարելի է բաժանել չորս մասի:

Ա. ՄԵՂԵՐԻ ՈՒ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ՇՐՋԱՆ (538-332)

Բաբելոնցի Նաբուգոդոնոսորի կողմից գերված հրեաները երկիր վերադարձան Կյուրոսի, ինչպես նաև Արտաքսերքսեսի օրոք: Իշխանական ժառանգում ունեցող Չորրբաբելի օրոք, Ագիայի ու Ջաքարիայի հորդորներից քաջալերված, վերակառուցեցին Երուսաղեմի Երկրորդ Տաճարը: Նեեմիայի բուռն գործունեության շնորհիվ՝ վերստին կառուցվեցին հին մայրաքաղաքի պարիսպները: Աստվածաշնչի հետ կապ չունեցող աղբյուրները հաղորդում են, որ այս ժամանակաշրջանում քահանայապետը ձեռք բերեց ավելի մեծ կարևորություն, քան աքսորից առաջ էր՝ խաղալով ամենաառաջնակարգ ազգային քաղաքական դեկավարի դեր: Խոսակցական լեզուն այլևս եբրայերենը չէ. այն փոխարինվեց արամերենով (կամ խալդերենով), որը եբրայերենին մոտ, սեմական ժառանգում ունեցող լեզու է: Այսուամենայնիվ, հին եբրայերենը մնաց որպես պաշտամունքային լեզու: Հին Կտակարանն ավելի հասկանալի դարձնելու նպատակով կրոնական առաջնորդներն սկսեցին հարասություններ անել ժողովրդական որևէ լեզվով: Այս հարասությունները կոչվում են Targums: Հիշյալ ժամանակաշրջանում սամարացիները Գարիզին լեռան վրա կառուցեցին իրենց տաճարը՝ մրցակցելով Երուսաղեմի տաճարի հետ:

Բ. ՀՈՒՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ (332-167)

Ալեքսանդր Մեծը՝ մակեդոնացի ռազմական հանճարը, տապալեց մեդա-պարսկական կայսրությունը և նվաճեց Միջերկրականի ավազանը՝ անցնելով Միջերկրականից էլ այն կողմ, ընդհուպ մինչև Հնդկաստանի մատույցները: Ալեքսանդրը աթենացի մտածող Արիստոտելի աշակերտն ու հունական մշակույթի փայլուն երկրպագուն էր: Նրա գլխավոր նպատակը ենթարկված ժողովուրդներին հունական, այսուհետ՝ հելլենական կոչված մշակույթը պարտադրելն ու սրանով իսկ իր ընդարձակ, թեև շատ կարճ կյանք ունեցող կայսրությունը միավորելն է: Նա նաև փորձում է հելլենականացնել հրեաներին, սակայն՝ առանց ուժի դիմելու՝ թույլ տալով պաշտամունքի կատարյալ ազատություն:

312 թվականին, հազիվ երեսուներկու տարեկանում, Ալեքսանդրը մահացավ արևելյան մի հիվանդությունից: Նրա կայսրությունն անմիջապես բաժանվեց չորս մասի. ամենակարևոր խմբերն էին Պտղոմյանները, որոնք կգրավեն Եգիպտոսը, և Սելևկյանները, որոնք պարտություն կկրեն Սիրիայի ու Պաղեստինի կողմից և որոնք, այնուամենայնիվ, մինչև Ք. ա. 198 թվականը կգրավեն Պաղեստինը: Այս ընթացքում հրեաներն ամրապնդում են իրենց Օրենքի ուսումնասիրությունն ու կիրառությունը և, ի վերջո, կառուցում խստագույն ուղղափառ համակարգ, որը, ինչպես իմանում ենք Ավետարանից, խստորեն քննադատվել է և՛ մեր Տիրոջ, և՛ ամբողջ Նոր Կտակարանի կողմից: Նմանապես, հելլենիստական այս շրջանում է Հին Կտակարանը թարգմանվել հունարեն («Յոթանասնից») կոչված թարգմանությունը): Մեծ թվով հրեաներ կարտագաղթեն այլ վայրեր՝ կազմելով Սփյուռքը, Պաղեստինից դուրս գտնվող շատ երկրներում հիմնելով հրեական գաղութներ: Հրեաները կշարունակեն հուսալ Մեսիայի գալուստը և շրջապատին մասնակից դարձնել վախճանաբանական իրենց սպասմանը: Պտղոմյանների օրոք մի խումբ երեցներ կազմավորում են Ատյանը, որի առաքելությունը հոգևոր գործերում քահանայապետին աջակցելն է:

198 թ. էր, որ Սելևկյանները մտան Պաղեստին ու այն գրավեցին՝ ընդհուպ մինչև հռոմեացիների ժամանումը առաջին դարում: Սելևկյաններից ամենաճանաչվածը՝ նշանավոր Անտիոքոս Եպիփանեսը՝ վայրագ հելլենիստը, կղիմի ուժի՝ հեթանոսական մշակույթին անհնազանդ հրեաներին հունացնելու համար: Նշում են նաև, որ նա ձգտում էր, հատկապես, հրեաներից հսկայական գումարներ կորզելով, լցնել իր կայսրության դատարկ գանձարկղերը: Հրեաներին ոչնչացնելու կամ էլ նրանց կրոնը վերացնելու ջանքերը հաջողությամբ չպսակվեցին: Անտիոքոս Եպիփանեսը հրեական հին աշխարհի ամենավատթար բռնակալներից է: Հրեական կրոնական արարողություններն արգելվում են, տաճարը պղծվում է խոզի զոհաբերությամբ և վերջնականապես ավերվում հենց հրեաների կողմից: Սոսկալի ճնշման պայմաններում եղան ուրացողներ, բայց մեծ մասը գերադասեց նահատակվել, իսկ վերապրողները, Մակաբե եղբայրների ղեկավարությամբ, միացան դիմադրողների շարքերին: Մակաբեներն, այսպիսով, կանգնեցին զինված ապստամբության գլուխ:

Ահա Պտղոմյանների և Սելևկյանների արքայացանկը.

Պտղոմեոս 1-ին	Սոտեր	323-285
Պտղոմեոս 2-րդ	Փիլադելփոս	285-246
Պտղոմեոս 3-րդ	Եվերգետես	246-221
Պտղոմեոս 4-րդ	Փիլոպատոր	221-203
Պտղոմեոս 5-րդ	Եպիփանես	203-181
Պտղոմեոս 6-րդ	Փիլոմետոր	181-145
Պտղոմեոս 7-րդ	Նեո Փիլոպատոր	145
Պտղոմեոս 8-րդ	Եվերգետես 2-րդ	145-116
Պտղոմեոս 9-րդ	Սոտեր 2-րդ	116-107
Պտղոմեոս 10-րդ	Ալեքսանդր 1-ին	107- 89
Պտղոմեոս 9-րդ	Սոտեր 2-րդ	88 – 80
Պտղոմեոս 11-րդ	Ալեքսանդր 2-րդ	80
Պտղոմեոս 12-րդ	Ավլետես	80 – 51

Սելևկոս 1-ին	Նիկոտոր	312-280
Անտիոքոս 1-ին	Սոտեր	280-261
Անտիոքոս 2-րդ	Թեոս	261-247
Սելևկոս 2-րդ	Կալլինիկոս	247-223
Անտիոքոս 3-րդ	Մեծ	223-187
Սելևկոս 4-րդ	Փիլիպիտոր	187-175
Անտիոքոս 4-րդ	Եպիփանես	175-163

(երկրորդ տաճարի պղծումը)

Անտիոքոս 5-րդ	Եվպատոր	163-162
Դեմետրիոս 1-ին	Սոտեր	162-150
Ալեքսանդր 1-ին	Բալաս	150-145
Անտիոքոս 6-րդ	Դիոնիսոս	145-142
Դեմետրիոս 2-րդ	Նիկոտոր	142-139
Անտիոքոս 7-րդ	Սիդետես	139-129
Դեմետրիոս 2-րդ	Նիկատոր	129-125
Անտիոքոս 8-րդ	Փիլոմետոր	125- 96
Անտիոքոս 9-րդ	Փիլոպատոր	115–95

Գ. ՍԱԿԱԲԵՆԵՐԻ ՇՐՋԱՆ (167-63)

Վերջնական հուզումը ծագեց այն ժամանակ, երբ տարեց մի քահանա՝ Մատաթիան, հրաման ստացավ հրապարակավ զոհողություններ մատուցել հեթանոս աստվածների: Նա հրաժարվում է, շուրջն է համախմբում որդիներին և դիմադրության ընդհանուր կոչ անում. «Նա, ով օրենքի ջատագովն է և ուզում է պահպանել ուխտը, թող հետևի ինձ» (Ա. Սակաբե 2:27): Կազմակերպվեց պարտիզանական ջոկատ, որն էլ դարձավ դիմադրության մեծ բանակի միջուկը:

Մատաթիայի մահից հետո նրա որդիներից մեկը՝ Յուդան («Մուրճ» մականվամբ), բացառիկ հավատքի և ռազմական մեծ ընդունակությունների տեր մի մարդ, իր ձեռքն է վերցնում բանակի ղեկավարության գործը: Չնայած ծանր արգելքներին՝ Յուդան փայլուն հաղթանակներ է տանում սիրիացիների և այլ հարևանների նկատմամբ, որի հետևանքը Յրեաստանի գավառում ապրող հրեաների կրոնական ազատությունն է: Տաճարը մաքրվեց, պաշտամունքը վերականգնվեց, մատուցվեց պատարագ, որը հայտնի է իբրև Նավակատիքի (կամ ճրագալույցի) տոն (Ա. Սակաբե 4:45-49): Խորամանկ Ջոնաթանին՝ Մատաթիայի ճարպիկ ու խարդախ եղբորը, հաջողվեց փոխարինել եղբորորդուն: Ձեռք բերելով քաղաքական ազատություն և կրոնական լիակատար անկախություն՝ նա նաև ձեռնամուխ եղավ Երուսաղեմն անրապնդելու գործին: Դժբախտաբար, պարծենում է քահանայապետի արտոնություններով, թեև Ահարոնի ցեղից չէ: Յովնաթանը բարեկամ դեսպաններ է ուղարկում

հռոմեացիների մոտ. երկու ձեռնարկում, որոնք հետագայում հրեաների համար ողբերգական հետևանք կունենան: Նրան դավաճանաբար սպանում են: Հովնաթանին հաջորդում է եղբայրը՝ Սիմոնը՝ «Գանձ» մականունով:

Սիմոնի ղեկավարությամբ Պաղեստինի բոլոր հրեաները ձեռք են բերում ազգային անկախություն (143 թ.): Սիմոնը կարողանում է ավարտին հասցնել Երուսաղեմն ամրապնդելու գործը, քաղաքն այնուհետ ձեռք է բերում անառիկ լինելու համբավ: Մակաբեների ընտանիքի համար քահանայապետի կոչումը Սիմոնը դարձնում է ժառանգական. ժողովուրդը համաձայնում է, քանզի վայելում է քաղաքական հարաբերական ազատություն և նյութական շոշափելի բարեկեցություն: Բարեկամական կապեր պահպանելու նպատակով նա դեսպաններ է ուղարկում Հռոմ: Հռոմը բացահայտորեն հասկացնում է Սիրիային ու Եգիպտոսին, որ Պաղեստինն այդուհետ իր պաշտպանության ներքո է:

Սիմոնի որդու՝ Հովնան Յուրկիանոսի օրոք սկսվում է մակաբեական շրջանի անկումը: Հրեա առաջնորդները չունեն հայրերի թափը և իրենց նախորդների չափ հայրենասեր կամ էլ նախնիների կրոնի մեծ ջատագովներ չեն: Լինելով հելլենիստական մշակույթի երկրպագուներ՝ նրանք, առանց խղճի խայթի, ընդունում են աշխարհականացված կրոնը:

Յուրկիանոսը, սակայն, ռազմական մեծ առաջնորդ է: Նա ընդարձակում է երկրի նախկին սահմանները, ենթարկեցնում է եղովնացիներին և պարտադրում ընդունել հրեական կրոնը: Յուրկիանոսը ներխուժում է նաև Սամարիա և ավերում տաճարը: Թեև այս հաջողություններին ներքին հուզումներն ամենևին չեն հանդարտվում: Բարեպաշտ հրեաները Յուրկիանոսին չեն ընդունում իբրև քահանայապետ: Այս ընթացքում ի դերև են ելնում կրոնական թշնամական աղանդներ: Այս մասին՝ ավելի ուշ:

Յուրկիանոսի մահվանից հետո, շատ կարճ ժամանակով՝ ընդամենը մեկ տարով, ազգի ճակատագիրը տնօրինում է նրա որդին՝ Արիստոբուղոսը: Վերջինիս եղբայրը՝ Ալեքսանդր Յաննեոսը, հաջորդում է նրան՝ իրեն պահելով ատելի, խղճի խայթից զուրկ, դաժան մարդու, հելլենիստների բացահայտ համախոհի պես: Նա բնաջնջում է կառավարման իր կարգին հակադրվող համաքաղաքացիների մի մասին: Հուզումներն ուժգնանում են, և հրեաները չեն կարող խուսափել Սիրիայի վասալները դառնալուց: Հենց այս ժամանակ է հայտնվում Անտիպասը՝ Հերովդես Մեծի պապը. նա նշանակվում է Եղովմի կառավարիչ: Ալեքսանդրի մահվանից հետո գահ է բարձրանում նրա այրին՝ Ալեքսանդրան: Չնայած ազնիվ ու համարձակ գաղափարներին՝ նա չունի միջոցներ դրանք պարտադրելու հրեաներին: Կաշառակերությունը թափանցել է ազգաբնակչության բոլոր շերտերը. պալատն ինքը դավադրությունների բույն և անվերջանալի մատնությունների օջախ էր: Անտիպասի տիրապետության ընթացքում Եղովմի գահ կբարձրանա նրա որդի Անտիպատրոսը՝ Հերովդես Մեծի հայրը: Նույն այդ ժամանակ առանձին դպիրներ, փարիսեցիների կուսակցության անդամների հետ մեկտեղ, կմիանան ատյանին. ամենուրեք կբացվեն ժողովարաններ:

69 թ.՝ Ալեքսանդրայի մահվանից հետո, նրա որդիները՝ Յուրկիանոս 2-րդը և Արիստոբուղոսը, կպայքարեն գահի համար: Երկուսն էլ օգնություն ստանալու խնդրանքով կդիմեն Հռոմին: Այդ ժամանակ Պոմպեոսը՝ Փոքր Ասիայի և Սիրիայի մարտերում հաղթանակ տարած հռոմեացիների գեներալը, վճռում է շարժվել դեպի Երուսաղեմ, որտեղ մտնում է իրապես իբրև ազատարար: Պոմպեոսը Յուրկիանոս 2-րդին նշանակում է քահանայապետ:

Վերջինս, որ սովորական տիկնիկ էր նոր տիրոջ ձեռքին, իր առաջին մինիստրի՝ Եդուվից Զուդայի երկիր տեղափոխված Անտիպատրոսի օգնությամբ, ժառայություններ կմատուցի Պոմպեոսին: 37 թ. Անտիպատրոսի որդին՝ Զերովդես Մեծն, ամուսնանում է մի մակաբեուհու՝ Մարիամնեի հետ և, հռոմեացիների հովանավորությամբ, հաջորդում հորը՝ դառնալով Զրեաստանի ու Սամարիայի նոր տիրակալը:

Ահա Մակաբեների դինաստիան.

Մատաթիա	168-166
Զուդա Մակաբե	166-160
Զովնաթան Մակաբե	160-142
Սիմոն Մակաբե	142-135
Զովհան Զյուրկիանոս	135-104
Արիստոբուղոս	104-103
Ալեքսանդր Յաննեսոս	103-76
Ալեքսանդր Սալոն	76-67
Զյուրկիանոս 2-րդը՝	
Արիստոբուղոս 2-րդի դեմ	67-63
Զյուրկիանոս 2-րդ	63-40
Անտիգոնե	40-37

Դ. ԶՈՍԵԱԿԱՆ ՇՐՋԱՆ (–37-ից +70)

1. Զոմեական կայսրության վերելքը

Նոր Կտակարանը գրվելու ժամանակաշրջանը՝ առաջին դարը, նշանավորված է այդ ժամանակ հայտնի քաղաքակիրթ աշխարհի վրա (չհաշված Զեռավոր Արևելքի փոքր թագավորությունները) հռոմեական տիրապետության փաստով: Այն տարածվում է արևմուտքում՝ Ատլանտյան օվկիանոսից մինչև Կարմիր ծով ու Եփրատ, արևելքում՝ Ռոնից (Գալիա) մինչև Դանուբ և Սև ծով, հյուսիսում հասնում է մինչև Կովկասյան լեռնաշխարհի երկրները, իսկ Զարավում՝ մինչև Սահարա: Այս բոլոր շրջանները Զոմեական կայսերական կառավարության ներքո էին: Ղուկասի մոտ (2:1) կայսրը անվանվում էր Օգոստոս, իսկ Պետրոսի մոտ (Ա. Պետրոս 2:17)՝ թագավոր:

Զոմեական կայսրությունն իր անունն ստացել է Իտալիայի Զոմն քաղաքից: Զենց այս երկրից է կայսրությունը տարածվել դեպի դուրս: Ստեղծվելով Ք. ա. 753 թ.՝ Զոմը սկզբնական շրջանում գյուղերից կազմված փոքրիկ համայնք էր, որը կառավարվում էր իշխան-թագավորի կողմից: V դարի սկզբում ստեղծվում է իբրև հանրապետություն, կազմակերպված մի կառավարություն: Այլ համայնքների հետ կնքված դաշինքների, ինչպես նաև հյուսիսում՝ էտրուսկների և հարավում՝ այլ ցեղերի դեմ մղած երկարատև պատերազմների հետևանքով, արդեն իսկ 265 թ. Զոմին հաջողվեց տնօրինել ամբողջ Իտալական թերակղզին: Խաղաղություն պահպանելու նպատակով ենթակա ժողովուրդները պայմանագրով դաշնակցում էին կայսրության հետ, սակայն աստիճանաբար ձուլվում էին նրան: Զաջորդ

երկու դարերի ընթացքում Հռոմը մեծ ընդհարման մեջ է մտնում Հյուսիսային Աֆրիկայում գտնվող Կարթագենի հետ՝ վտանգավոր ախոյան Միջերկրական ծովի արևելքում: Սկզբում Կարթագենն ընդամենը փյունիկյան փոքրիկ գաղութ էր, բայց Ալեքսանդր Մեծի օրոք մայր հայրենիքի տապալման հետևանքով գաղութն անկախացավ: Հետևելով փյունիկեցիների նմուշօրինակին՝ Կարթագենը ծաղկեց և ստեղծեց հզոր ազգ: Նրա նավերն իրենց վրա էին առնում Միջերկրական ծովի ամբողջ առևտուրը: Կարթագենի քաղաքակրթությունը խորապես արևելյան էր, հասարակությունը ղեկավարվում էր վարձկանների բանակով պահվող խմբիչխանության կողմից. կառավարության գլխին ինքնակալ իշխանն էր: Հռոմի ընդարձակմանը զուգահեռ՝ նրա և Կարթագենի միջև բախումը դառնում է անխուսափելի, հատկապես կարթագենյան կայսրության առաջատար կետերում: Բացի նրանից, որ ռասայական առումով և քաղաքական ըմբռնումներով, այս երկու քաղաքակրթությունները խորթ են միմյանց, այդ ժամանակ հնարավոր չէր նաև խաղաղ գոյակցությունը: Հետևապես, դրանցից մեկը պետք է կործանվեր հանուն մյուսի: Երկու ուժերի միջև երկարատև ու արյունահեղ բախումները հայտնի են «Պունիկյան պատերազմներ» անվամբ: Սրանք դադարեցին մ. թ. ա. 146 թ., երբ Սկիպիոնը ներխուժեց Կարթագեն քաղաք և լիովին ոչնչացրեց այն: Այսպիսով, Հռոմն այդուհետ կարողացավ իր իշխանությունը տարածել նաև Իսպանիայի և Հյուսիսային Աֆրիկայի մի մեծ մասի վրա: Միևնույն ժամանակ Մակեդոնիան հայտարարվեց Հռոմեական գավառ. ենթարկվելով սուկալի թալանի՝ Կորնթոսը մոտ մեկ դար կմոռանա Մակեդոնիայի մասին: Հունաստանի հարավային հատվածը՝ Աքայան, նմանապես հռոմեական կայսրության խիստ հսկողության տակ էր:

133 թ. Ատտալոս Պերգամոնցին մեռնելիս իր տարածքները կտակեց հռոմեական կայսրությանը: Այս շրջանները կազմեցին «Ասիա» անվամբ հռոմեական գավառը, որը ներկայիս Փոքր Ասիայի մեծ մասն էր:

Փոքր Ասիայի արևելյան մասում տեղի ունեցան այլ բախումներ ևս, մինչև որ Պոմպեոսը կարողացավ նվաճել նաև Պոնտոսն ու Կովկասը: 63 թ. նա Սիրիան դարձնում է գավառ՝ այն կցելով Հրեաստանին: 58 և 57 թթ., Հուլիոս Կեսարը վարում է Գալիայի հայտնի արշավանքը և շուտով Գալիան դարձնում հռոմեական մեկ այլ գավառ:

Եվ, այսպես, մոտ հինգ դար շարունակ պատերազմելուց հետո Հռոմը Տիրեր գետի ափին գտնվող աչքի չընկնող գյուղից դարձավ հին աշխարհի ամենահզոր ու հեղինակավոր կայսրություններից մեկը: Սակայն տարածքի ընդարձակումը իր հետ բերում է նաև խոր ցնցումներ բարձրում: Իսկ ռազմական առաջնորդները ազահորեն ճաշակում են իշխանության պտուղները՝ բանակից օգտվելով ոչ թե արտաքին նվաճումների, այլ կայսրության սանձը իրենց ձեռքերում պահելու համար: Կարթագենի և Հունաստանի նվաճումից մինչև Հուլիոս Կեսարի մահն ընկած դարերը նշանավորվում են անվերջանալի քաղաքացիական պատերազմներով. Մարիոսը, Սուլլան, Կեսարը, Անտոնիոսը, Օկտավիանոսը մեկը մյուսի հետևից դաժան մարտերում ջանում են ոչնչացնել միմյանց մինչև այն պահը, երբ Օկտավիանոսին, որին Սենատը անվանում էր Օգոստոս Կեսար, հաջողվում է հաղթանակ տանել մրցակիցների նկատմամբ. մ. թ. ա. 30 թ. նա իր ձեռքում կենտրոնացնում է բացարձակ իշխանությունը (թ. ա. 27 – թ. հ. 14 թթ.):

2. Կայսրերը

Օգոստոսի թագավորության օրոք Յոնանեական կայսրությունը և կայսերական պետության հզորությունը լիովին հաստատվեցին: Պատերազմից հոգնած ժողովուրդն ազահորեն խաղաղություն էր փնտրում: Օգոստոսը դարձավ «պրինցեպս», այսինքն՝ երկրի առաջին քաղաքացին: Նա թագավորեց չափավոր ձևով՝ ի բարօրություն իր հպատակների: Քաղաքական տեսանկյունից նոր պետությունը նախկին հանրապետության և Կեսարի երազած բռնապետության միջինն էր: Ծերակույտը գոնե տեսականորեն պահպանվեց իբրև իսկական գործադիր խորհուրդ: Ք. ա. 27 թ. ծերակույտը Օգոստոսին նշանակում է զինված ուժերի հրամանատարի պաշտոնում: 23 թ. Օգոստոսը ստանում է ցպահանջ տրիբունի, այսինքն՝ ժողովրդական ասամբլեաները վերահսկելու իշխանություն, ծերակույտում առաջինը ելույթ ունենալու արտոնություն և ժողովներ հրավիրելու իրավունք: Նրա բոլոր իրավունքները հիմնված են ավելի շուտ սահմանադրական, քան կենտրոնական կառավարության անօրինության հիմքի վրա: Օգոստոսի տիրապետության տակ տեղի են ունեցել բազմաթիվ բարեփոխումներ: Ծերակույտն ազատվեց իր անկարող անդամներից: Բանակի մեծ մասը զորացրվեց, իսկ ազատված վետերանները հաստատվեցին գաղութներում կամ էլ իրենց հատկացված հողերի վրա: Ստեղծվեց կանոնավոր մասնագիտացված բանակ, որը դարձավ դպրոց բոլոր քաղաքացիների համար: Թոշակի անցնելիս վետերանները ստանում էին օրդեր և բնակություն հաստատում գավառներում, որտեղ կարող էին վարել ապահով կյանք ու դառնալ հռոմեական համայնքի առաջնորդներ:

Օգոստոսը հոգ տարավ նաև ժողովրդի բարոյական վիճակը բարվոքելու մասին: Նա վերակենդանացրեց նախնիների կրոնը և վերականգնեց բազմաթիվ տաճարներ: Կայսերական պաշտամունքը, որը սկզբում Յոնանում էր, այժմ ներմուծվեց նաև նվաճված գավառները: Բազմաթիվ վայրերում կայսեր անձը պաշտամունքի առարկա էր՝ «Dominus et Deus» (Տեր և Աստված), թեև նա չէր պահանջում դա: Ք. ա. 19 և 18 թթ. հուլիան օրենքներով փորձ արվեց վերականգնել ընտանեկան կյանքը՝ խրախուսելով ամուսնությունն ու ընտանեկան օջախների ստեղծումը: Կայսրությունն ամրապնդելու նպատակով Օգոստոսը բնակչության և ամեն տեսակ սեփականության հաշվարկ կատարեց, որը պետք է հիմք ծառայեր բանակ հավաքագրելու և հարկերի համար: Իսպանիան, Գալիան և ալպյան շրջանները ենթարկվում էին այս կարգին: Օգոստոսն ուժեղացրեց սահմանների պաշտպանությունը, մի բան, որը, սակայն, չխանգարեց, որ Teutoberg-ի անտառում բանակը պարտություն կրի գերմանացիներից: Օգոստոսը ստեղծեց Յոնանի ոստիկանությունն ու դեպարտամենտները և նշանակեց հսկիչ՝ հացահատիկ մթերելու համար: Իր ղեկավարության 41 տարիների ընթացքում նա քառսի մեջ կարգուկանոն մտցրեց, վերականգնեց հավատը կայսերական կառավարության մեջ, կայունացրեց գանձարանը, ապահովեց խաղաղություն և նյութական բարգավաճում: Օգոստոսի կառավարման օրոք՝ նրա կարգադրությամբ անցկացված մարդահամարի ժամանակ, ծնվեց աշխարհի փրկիչը:

Օգոստոսի հետևորդը՝ Տիբերիոսը (Ք. հ. 14-37), նրա որդեգրած զավակն է: Կայսրությունը, որի համար Օգոստոսը սահմանափակ ժամանակով մտահոգացել էր սահմանադրական կանոններ, այժմ ցմահ անցավ Տիբերիոսի ձեռքը: Իշխանության գլուխ անցնելու ժամանակ Տիբերիոսը 56 տարեկան էր. կյանքի մնացած մեծ մասը նա նվիրեց պետությանը

ծառայելու գործին: Նոր կայսրը նորեկ չէր կայսերական քաղաքականության առումով: Օգոստոսը դժբախտ միտք հղացավ՝ ստիպելով Տիբերիոսին՝ ամուսնալուծվել կնոջից և ամուսնանալ իր դստեր՝ Յուլիայի հետ, որը, ինչպես հաղորդում են, թեթևաբար կին էր: Խղճի խայթը Տիբերիոսին դարձրեց մռայլ խառնվածքի տեր մարդ: Լինելով անմարդամտ, անգամ գոռոզ, զգայուն ու շուտ բռնկվող՝ նա, այնուամենայնիվ, մեծ հմտությամբ ղեկավարեց կայսրությունը: Թեև այս ամենին՝ նա չի վայելել իր նախորդի և հոգեհոր ժողովրդականությունը: Նրանից վախենում էին, բայց չէին սիրում: Գերմանիայում նրա բանակները բազմիցս անհաջողություններ կրեցին՝ ստիպելով նահանջել Հռենոսից այն կողմ: Ներքին այլ հուզումներ և էլ ավելի մթագնեցին նրա կյանքի վերջին տարիները: 26 թ. Տիբերիոսը, հեռանալով Կապրի, կառավարությունը թողեց Հռոմ քաղաքի ոստիկանապետի ձեռքում: Սակայն նրա բացակայությունը առիթ եղավ, որպեսզի գվարդիայի մի կապիտան՝ Աելիոս Սեյանոսը, կառավարությունը զավթելու նպատակով դավադրության փորձ կատարի: 31 թ. նա համարյա իրականացրել էր իր ծրագիրը, երբ Տիբերիոսը բացահայտեց դավադրությունը: Խռովարարը մահապատժի ենթարկվեց, դավադրությունը ձախողվեց, սակայն այս իրադարձությունը չարագուշակ հետևանք ունեցավ կայսրի համար: Դառնալով ավելի ու ավելի զգայուն, անգամ դաժան՝ ամենափոքր շռուկն անգամ չէր վրիպում նրա ուշադրությունից: Երբ 37 թ. Տիբերիոսը մահացավ, ժերակույտը վերջապես կարողացավ թեթև շունչ քաշել:

Հովհաննես Մկրտչի և մեր Տիրոջ միջնորդ գործունեությունները, ինչպես նաև Տիրոջ խաչելությունը, տեղի ունեցան Տիբերիոսի կառավարման շրջանում:

Տիբերիոսին հաջորդեց ԿԱԼԻԳՈՒԼԱՆ (37-41): Գործունեության սկզբում նա մեծ ժողովրդականություն էր վայելում, որը, սակայն, աստիճանաբար մարեց: Ի հայտ եկան մտավոր հիվանդության նշաններ. պահանջում էր, որ իրեն պաշտեն, մի բան, որն այլափոխեց հրեաների նկատմամբ համակրանքը: Երբ Հերոդլոն Ագրիպասն այցելեց Ալեքսանդրիա, բնակիչները հրապարակայնորեն նրան հայիոյեցին՝ ստիպելով երկրպագել Գայոսի պատկերները: Հրեաները կոչով դիմեցին կայսրին, սակայն վերջինս նրանց լսելու փոխարեն Սիրիայի պատվիրակին կարգադրեց արձան կանգնեցնել Երուսաղեմի տաճարում: Պատվիրակը շրջափակեց և շրջափակեց կայսերական հրամանի կատարումը: Նոր Կտակարանի մասնագետների կարծիքով, «ավերածի պղծությունը», որի մասին խոսում է Մարկոսը (13:14), ակնարկ է հենց կայսեր արձանի առկայության սպառնալիքի մասին: Շռայլ ծախսերի հետևանքով Կալիգուլան դատարկեց գանձարանը, իսկ հետո էլ այն լցնելու նպատակով դիմեց դաժանությունների, ներառյալ նաև՝ գույքի բռնագրավման: Կալիգուլայի բռնությունը դառնում է ավելի ու ավելի անտանելի: Ի վերջո, նա սպանվեց կայսերական գվարդիայի մի տրիբունի կողմից:

ԿԱԼՎԴԴԻՈՍ (41-54): Կալիգուլայի մահվանից հետո ժերակույտը նախատեսում է վերադառնալ հանրապետական կարգին: Սակայն պրետորական գվարդիան Տիբերիոս Կլավդիոս Գերմանիկոսին ողջունեց իբրև նոր ղեկավար ու կայսր: Միջին տարիքի, միջինից ցածր ընդունակություններ ունեցող, ավելի շատ գրականությանը, քան կառավարության գործերին հակված Կլավդիոսը խաբվում էր իր քարտուղարների ու կանանց կողմից: Քաղաքացիության արտոնությունը նա տարածեց նաև գավառի բնակիչների վրա: Կլավդիոսի գեներալներին հաջողվեց հիմնավորվել Բրիտանիայում՝ հասնելով մինչև Թեմզա: Թրակիան, որի իշխանը մահացել էր, իր հերթին դարձավ հռոմեական նոր գավառ: Կլավդիոսի

կառավարման օրոք Յժնմի հրեաները (որոնց մեջ՝ Ակյուղասը և Պրիսկիղան), ըստ հռոմեացի պատմաբան Սվետոնիոսի, իբր թե ոմն Քրեստոսի սադրանքով, ագիտատորներ լինելու մեղադրանքով, վտարվում են Յժնմից. հավանական է, որ պատմաբանն այս Քրեստոսին շփոթում է Քրիստոսի հետ: Կլավդիոսը չորրորդ ամուսնությունը կնքում է եղբոր աղջկա՝ Ագրիպպինայի հետ: Վերջինս նրան որդեգրել տվեց նախորդ ամուսնուց ունեցած որդուն՝ Դոմիցիոսին՝ ժառանգություն ստանալու նպատակով: Այդժամ, Դոմիցիոսը ստանում է Ներոն Կլավդիոս Կեսար անունը, 53 թ. ամուսնանում Կլավդիոսի դստեր՝ Օկտավիայի հետ: Հաջորդ տարում Կլավդիոսը մահանում է՝ Ներոնին թողնելով գահը:

ՆԵՐՈՆ (54-68): Նոր կայսեր կառավարման առաջին հինգ տարիները խաղաղ էին: Պրետորական գվարդիայի ոստիկանապետի՝ Ափրանիոս Բուրրոսի և փիլիսոփա ու գրող Աննեոս Սենեկայի հետ նրան հաջողվեց, ինչպես հարկն է, կառավարել կայսրությունը: Ագրիպպինան փորձեց որդու նկատմամբ իշխանություն բանեցնել. Ներոնն ու իր խորհրդականները ընդգծված ձևով զգում են նրա միջամտությունը: 59 թ. նա սպանել է տալիս մորը՝ առանց խոչընդոտի իշխելու համար: Խառնվածքով Ներոնը ավելի շուտ դերասան էր, քան քաղաքական գործիչ: Բայց անհեթեթորեն ու անհոգաբար հասարակական եկամուտը ծախսելու պատճառով գանձատուներ շուտով դատարկվում է. նախորդի պես Ներոնը ևս դիմում է միջոցներ կորզելու մեթոդին, որով և արժանանում է ինչպես բնակչության ատելությանը, այնպես էլ ծերակույտի կշտամբանքներին: Այս ասամբլեայի անդամները վախենում են, որ կայսրը կարող է կարգադրել սպանելու իրենց: 64 թ. ծագած հրդեհը ամայացնում է Յժնմը՝ ավերելով քաղաքի մեծ մասը: Կայսրին իրավացիորեն կասկածում են հրդեհը հրահրելու և, ուրբանիզմի կատարելապես նոր նախագծի համաձայն, մայրաքաղաքը վերստին կառուցելու խելահեղ մտադրության մեջ: Վախենալով կյանքի համար՝ ողբերգության պատասխանատվությունը զգում է քրիստոնյաների վրա՝ նրանց նկատմամբ գրգռելով հասարակ ժողովրդի գայրույթը: Այսպես է սկսվում քրիստոնյաների առաջին մեծ հալածանքը, քրիստոնյաներ, որոնք մեծ կորուստներ կունենան: Ավանդության համաձայն՝ առաջին պաշտոնական ամենադաժան հալածանքներից մեկի ժամանակ են, հավանաբար, սպանվել Պոդոս և Պետրոս առաքյալները:

Սակայն հպատակների, անգամ հեթանոսների աչքին կայսրը մշտապես ավելի կասկածելի ու ատելի է: Բազմաթիվ դավադրություններ սանձազերծվեցին, հակառակվողներին սպանեցին: Բայց, ի վերջո, Գալիայում և Իսպանիայում զորքերի ու զավառաբնակների խռովությունը հաղթական ելք է ունենում. Ներոնը փախչում է Յժնմից, սակայն բռնվում է. անպատիվ մահից խուսափելու նպատակով իր ազատարձակներից մեկին հրամայում է սպանել իրեն:

ԳԱԼԲԱ (68): Հիշյալ խռովությունը կազմակերպել էր բանակը. առանց դիմելու ծերակույտին՝ նա գահ է բարձրացնում Գալբային, որն էլ շուտով սպանվում է իր հաջորդի կողմից:

ՕՏՈՆ (69): Թեև ծերակույտը խրախուսում է Օտոնի ընտրությունը, Գերմանիայի պատվիրակը՝ Վիտելլիոսը, իր զորքերի գլուխն անցած, արշավում է Յժնմի վրա և իշխանություն ստանալու նպատակով սպանում նոր կայսրին:

ՎԻՏԵԼԼԻՈՍ (69): Ընդունվում է ծերակույտի կողմից, սակայն անկարող է վերահսկողություն սահմանել կայսրության վրա և պահպանել կայուն կառավարություն: Արևելքի

բանակը միջամտում է պետության գործերին և Վեսպասիանոսին հայտարարում նոր կայսր: Այդ ժամանակ նա զբաղեցնում էր կառավարչի պաշտոնը: Պարտականությունները հանձնելով որդեգրած զավակին՝ Տիտոսին, նա վերադառնում է Եգիպտոս, որտեղից իրականացնում է երկրի հսկողությունը՝ կտրելով մթերումների ճանապարհները: Նրա լեյտենանտ Մուցիանոսն այդժամ արշավում է Իտալիայի վրա: Հակառակ Վիտելլիոսի զորքերի քաջարի դիմադրությանը՝ Վեսպասիանոսի պարտիզանները մտնում են Հռոմ և թալանում մայրաքաղաքը: Կայսրը սպանվում է, իսկ Վեսպասիանոսը հռչակվում է նոր կայսր:

ՎԵՍՊԱՍԻԱՆՈՍ (69-79): Ծեր զինվոր է, որին զորքը գահ է բարձրացնում: Սովորույթների մեջ զուսպ է, իսկ կառավարման գործում՝ ուժեղ: Վեսպասիանոսին հաջողվում է վերացնել հին հուլանդացիների և գալիացիների խռովությունը, մինչ Տիտոսն ավարտին է հասցնում Երուսաղեմն հպատակեցնելու գործը: Երուսաղեմն ամբողջովին կավերվի հայտնի պաշարման ժամանակ, և Պաղեստինի գավառն այդուհետ կորվի ոմն պատվիրակի ղեկավարության ներքո: Կայսրության նոր սահմանները կուժեղացվեն՝ իշխանական երկրներին տալով գավառի կարգավիճակ. գանձարանի հարցը լուծվում է նոր հարկմամբ իրականացվող տնտեսումների հաշվին: Վեսպասիանոսը մայրաքաղաքում կառուցել է տալիս նոր շենքեր, որոնք հետագայում հայտնի կդառնան. սրանց թվում է նաև Կոլիզեյը: Վեսպասիանոսը մահացավ՝ կայսրի պարտականությունները թողնելով Տիտոսին, որն արդեն իսկ դարձել էր համակայսր: Վեսպասիանոսն առաջինն է Փլաբիոսների արքայատոհմից, որին պատկանում են նաև Տիտոսն ու Դոմիցիանոսը:

ՏԻՏՈՍ (79-81): Ղեկավարման կարճատևությունը Տիտոսին հնարավորություն չտվեց իրականացնելու հրաշալի գործեր: Սակայն նա մեծ հեղինակություն ուներ ինչպես իր կազմակերպած հասարակական գործերով, այնպես էլ անձնական առատաձեռնությամբ: Նրան են վերագրում *Diem perditum* (Ես կորցրի օրը) հայտնի նախադասությունը, որը սիրում էր արտասանել այն ժամանակ, երբ որևէ օր անցնում էր՝ առանց բարի գործ կատարելու: Նրա տիրակալությունը Վեզուվի ժայթքման հետևանքով ակնատես եղավ Պոմպեյի, Հերկուլանոմի, ինչպես նաև Նեապոլի ծոցին հարող շրջանի այլ գյուղերի կործանմանը: Աղետյալներով զբաղվելու, նրանց օգնելու համար Տիտոսը նշանակեց հանձնաժողով: Մի քանի ամիս հետո մայրաքաղաքն ամայացավ՝ նմանը չունեցող հրդեհի պատճառով. կործանվեցին Կապիտոլիոնն ու Ագրիպպասի բաղնիքը: Ասում են, որ Տիտոսը վաճառեց իր կավածքների կահավորանքը՝ տուժածներին օգնելու նպատակով: Նա կառուցել տվեց հասարակական նոր շինություններ, որոնց թվում շատ ամֆիթատրոններ:

ԴՈՄԻՏԻԱՆՈՍ (81-96): Տիտոսը գահի համար ժառանգ չի թողել, ահա թե ինչու ծերակույտը հետևորդ նշանակեց նրա փոքր եղբորը՝ Դոմիցիանոսին: Վերջինս ճանաչված է իբրև ինքնակալ ու դաժան բռնապետ: Նա կծգոտի բարձրացնել հռոմեական հասարակության բարոյական մակարդակը՝ վերացնելով գոյություն ունեցող կաշառակերության բոլոր ձևերը և խստորեն կանոնավորելով հասարակական անբարոյականությունը: Վերակառուցվեցին հին աստվածների տաճարները: Օտար կրոնները, հատկապես հավատորսությամբ զբաղվողները, վերացվեցին կամ արգելվեցին: Դոմիցիանոսին վերագրում են նաև այն, որ հալածել է քրիստոնյաներին՝ չնայած այս մասին պաշտոնական որոշում չկա: Սակայն նա պահանջել է երկրպագել իր անձը, իրեն անվանել *Dominus et Deus* (Տեր և Աստված): Իբրև

տնտեսագետ՝ հրաշալի ղեկավար էր: Սակայն չունեի առատածեռնության նույն ոգին, ինչ եղբայրը՝ Տիտոսը: Ծնշելով դավադրությունները՝ նա անխղճորեն էր վարվում հակառակորդների հետ: Կառավարման վերջին տարիները ծերակույտի համար իսկական մղձավանջ էին: Անգամ նրա ընտանիքի անվտանգությունն այլևս ապահովված չէր և, ի վերջո, ընդհանուրի խաղաղությունն ու անվտանգությունն ապահովելու համար նա ֆիզիկապես ոչնչացվեց:

ՆԵՐՎԱ (96-98): Ընտրվեց ծերակույտի կողմից: Լինելով տարիքն առած և չափավոր խառնվածքի տեր մարդ՝ նա ընդհանուր առմամբ լավ ղեկավար է. կայսրությունը ճաշակուն է ներքին լարվածություններից զուրկ շրջան: Իբրև հետևորդ՝ ընտրում է Տրայանոսին՝ գտնելով, որ վերջինս ընդունակ է պահել բանակը:

ՏՐԱՅԱՆՈՍ (98-117): Ներվայի մահից հետո հերթափոխը վերցնում է Տրայանոսը: Նոր կայսրը ծագումով իսպանացի է, մասնագիտությամբ՝ զինվորական, եռանդուն է և խառնվածքով՝ նախածեռնող: Նա բռնագրավում է Դանուբից հյուսիս ընկած տարածքը (ներկայիս Ռումինիան), կայսրության սահմաններն ընդարձակում է դեպի Արևելք՝ գրավելով Չայաստանը, Ասորեստանը, Միջագետքը: Մերձավոր Արևելքում ճնշում է հրեաների կողմից կազմակերպված մի խռովություն (115 թ.), սակայն հուզումներ ու ապստամբություններ են բռնկվում նաև Աֆրիկայում, Բրիտանիայում և Դանուբի մատույցներում՝ Տրայանոսին ստիպելով վերադառնալ Հռոմ: Դեպի Կիլիկիա շարժվելու ճանապարհին նա մահանում է:

3. Գավառային կառավարությունը

Հռոմեական կայսրությունը խառնուրդ է անկախ քաղաքների, կիսանկախ, անկախ պետությունների, Հռոմի կողմից կիսով չափ կառավարվող տարածքների, որոնք բոլորն էլ, սակայն, ենթարկվում են կենտրոնական կառավարությանը: Դրանցից շատերը կամավոր են մտել նրա կազմի մեջ, մյուսները միացվել են թրի ուժով: Մինչ Հռոմը գերիշխանությունն էր տարածում իրեն ենթակա դաշնակիցների վրա, նրա կառավարական մեքենան զարգանում էր՝ դառնալու այն, ինչը հայտնի է իբրև հռոմեական համակարգ:

Ծագմամբ «պրովինցիա» (գավառ) բառը նշանակում է պատերազմ վարելու գործառույթ կամ զորահրամանատարի պաշտոն: Կիրառվելով ընդհանրապես կառավարության նկատմամբ՝ այն տարածվում է իշխանության ոլորտի և նվաճված տարածքի վրա, որը նույնպես կկոչվի *provincia*՝ գավառ: Նոր տարածքներ բռնակցելուց հետո սրանք ևս կկազմակերպվեն իբրև գավառներ՝ դառնալով կայսերական ընդհանուր համակարգի մասեր: Գավառների ձեռք բերման գործը Հռոմը սկսում է Սիկիլիայով և Կարթագենի գրավմամբ (264-241 թթ.): Այնուհետև հերթը հասնում է Սարդիների, Իսպանիայի երկու գավառներին, Մակեդոնիային, Աֆրիկային, Ասիային: Անդրալպյան և Այսրալպյան Գալիան կցվում են 118 թ.: Կյուրենը Հռոմին է հանձնվում 75 թ.: 67 թ. Պոմպեոսը բռնակցում է Կիլիկիան և Կրետեն, 63 թ. գրավում է Պաղեստինը: Բացառությամբ Իտալիայի՝ հռոմեական աշխարհի մեծ մասը կազմված է գավառական կառավարության ներքո գտնվող տարածքներից: Այս կառավարությունը երկու տիպի է. Հռոմի հանդեպ հարաբերականորեն խաղաղ և հավատարմորեն տրամադրված գավառներ, որոնք ղեկավարվում են պրովինսուլների կողմից (Գործք 13:7) ու անմիջականորեն պատասխանատու են ծերակույտի առջև և կայսրի ան-

միջական իշխանության տակ գտնվող ավելի խռովահույզ գավառներ. կայսրը հաճախ այստեղ բանակ է պահում: Այս տարածքները ղեկավարում են ոստիկանապետերը, պրոկուրատորները, պրետորները, որոնք նշանակվում են կայսեր կողմից և պատասխանատու են նրան: Աքայան մտնում է առաջինի մեջ. Պողոսի՝ Կորնթոսում գտնվելու ժամանակ Աքայայի պրոկոնսուլը Գաղիոնն էր (Գործք 18:12):

Հիսուսի ժամանակներում Պաղեստինը կայսրի հսկողության տակ է, իսկ կայսրի ներկայացուցիչ Պոնտացի Պիղատոսը պրոկուրատոր–կուսակալն է: Պրոկոնսուլները հանձնարարություն են ստանում մեկ տարվա համար և հիմնականում տարին մեկ փոխվում են: Պրոկուրատորն ու պրետորն իրենց պաշտոնում կարող են մնալ այնքան ժամանակ, ինչքան կայսրը թույլատրում է: Այս սպաների ղեկավարության օրոք գավառները զգալի ազատություն են վայելում: Առանձին քաղաք – պետությունն իրավասու էր պահպանելու տեղաշին գերիշխանություն և նույնիսկ ունենալու սեփական դրամ: Հռոմեացիները չէին ճնշում նվաճված ժողովուրդների կրոնական ազատությունը, այնպես որ բնիկ պաշտամունքը սովորաբար պահպանվում էր: Հռոմեացի կառավարիչները, իրենց ղեկավարման օրոք, սովորաբար հաշվի են նստում գավառական խորհրդականների կարծիքի հետ:

Ենթակաների հանդեպ չարաշահումներ թույլ տվող ֆունկցիոներները պետք է հաշվետու լինեն՝ կանգնելով դատարանի առաջ և հեռացվելով պաշտոնից: Թեև որոշ բարձր պաշտոնյաներ չեն հրաժարվում կաշառակերության նախկին սովորույթից, նրանց մեծ մասը գավառը ղեկավարում էր արդարացիորեն ու պատշաճ ձևով: Կառուցվում են ճանապարհներ, հասարակական շինություններ, արագորեն զարգանում է առևտուրը:

Գավառները մայր քաղաքին ավելի սերտորեն կապելու նպատակով ռազմավարական շրջաններում տեղավորվում են հռոմեական փոքրիկ գաղութներ: Հռոմեական քաղաքակրթությունն աստիճանաբար կտարածվի՝ ստեղծելով կառավարվող գավառներ, որոնք Հռոմից ավելի հռոմեական են. մ. թ. ա. II դարում, մինչդեռ Հռոմում խոսում էին հունարեն, Գալիան, Իսպանիան, Աֆրիկան լայնորեն օգտագործում էին լատիներենը:

Կայսերական պաշտամունքն ավելի շատ տարածված էր գավառում, քան հայրենիքում. Օգոստոսը հրաման էր արձակել տաճարներ կառուցել Հուլիոս Կեսարի պատվին: Եփեսոսում և Նիկիայում տաճարներ կառուցվեցին այստեղ ապրող հռոմեացիների, կամ էլ բնիկների կողմից: Պետական պաշտամունքն ընդունվում էր շրջանային կամ տեղական խորհրդականների կողմից, որոնք էլ ապահովում էին դրա իրականացումը: Գավառական խորհուրդը հրաշալի լուսաբանված է «Գործք Առաքելոց»-ի 19:31 հատվածում, որտեղ հիշատակված են ասիացիները: Սրանք դատավորներ են և համարվում են գավառների պատասխանատուները: Կարող էին լինել նույնիսկ կայսրության կրոնական արարողություններն իրականացնող քահանա: «Գործք»-ում նրանք բարեկամաբար են տրամադրված Պողոսի հանդեպ. վերջինիս զգուշացնում են չմտնել թատրոնի շենքը, որպեսզի չենթարկվի այստեղ հավաքված ամբոխի զայրույթին:

Նոր Կտակարանում հիշատակված գավառներն են՝ Լյուրիկե, Մակեդոնիա, Աքայա, Ասիա, Պոնտոս, Բյուքանիա, Գաղատիա, Կապադովկիա, Կիլիկիա, Սիրիա, Հրեաստան, Կիպրոս, Պամփիլիա, Լիկիա: Դրանցից շատերը հիշատակված են ավելի քան մեկ անգամ: Լյուրիկեն ունի մեկ ուրիշ անուն ևս՝ Դալմատիա: Պողոս առաքյալը սովորաբար գործա-

ծում է գավառների անվանումներ՝ նշելու կայսրության բաժանմունքները, մինչդեռ Ղուկասն առավելաբար օգտվում է ազգային բաժանումներ մատնանշող անուններից: Գավառները հաճախ ներառում են էթնիկական մեկից ավելի խմբավորում. օրինակ՝ Լյուստրայի և Դերբեի լիկայոնիացիները՝ Գաղատիայում:

Գավառների կուսակալությունը գրավում էր պաշտոնատար անձանց, քանզի մեծ միջոցների աղբյուր էր: Որոշ կուսակալներ այնքան էին գռվում, որ ծանր հարկերից գավառներն արագորեն աղքատանում էին: Մյուսները կիրառում էին չափավոր հարկում և առևտուրը զարգացնելու, տնտեսական մակարդակը բարձրացնելու նպատակով կառուցել էին տալիս ճանապարհներ ու նավահանգիստներ: Մինչև Կոստանդին Մեծի շրջանը (IV դար), գավառները կենտրոնական կառավարության խնամակալության ներքո են և երբեք չեն համարվում համադաշնակցության մեջ մտնող հավասար պետություններ:

Ահա I դարի Հրեաստանի պրոկուրատորների ցանկը.

Կոպոնիոս	6-10
Ամբիվիոս	10-13
Աննիոս Ռուփոս	13-15
Վալերիոս Գրատոս	15-26
Պոնտոս Պիղատոս	26-36
Մարցելլոս	36-38
Մարուլլոս	38-41

Հերովդես Ագրիպպոս Մեծի իշխանության օրոք Հրեաստանում պրոկուրատորներ չեն լինի (41-44)

Կուսպիոս Փադոս	44-46
Վենտիդիոս Կունանոս	46-48
Մ. Անտոնիոս Փելիքս	48-52
Տիբերիոս Հուլիոս Ալեքսանդր	52-59
Պորցիոս Փեստոս	59-61
(Պողոսը կկանգնի վերջին երկուսի առջև)	
Ալբինիոս	61-65
Կասիուս Ֆլորուզա	65-67
Վետտուլենոս Սերիալիս	67-72
(Երուսաղեմի կործանումը 70 թ.)	
Լուցիլիոս Բասոս	72-75
Մ. Սալվենիոս	75-86
Պոմպեոս Լոնգինոս	86

4. Հերովդեսի և Նրա հետևորդների իշխանությունը

Հրեաստանի գահը Հերոֆոլդեսը կզբաղեցնի Բ. ա. 37-4 թթ.: Նա ոչ թե հրեա էր, այլ եդրվմացի: Նա խորապես հեթանոս է, թեև ամուսնացել է հրեա կնոջ հետ, և հրեական հավատքի դառնալը թվացյալ է: Ի մեծ տհաճություն փարիսեցիների՝ նա Պաղեստին է ներմուծում հրեական թատրոնը, ցլամարտերը, ինչպես նաև կենդանիների հետ կապված այլ տո-

ներ ու մարտեր: Լինելով խորամանկ քաղաքագետ՝ Չերովդեսն արեց ամեն ինչ՝ Ռոմի բարեհաճությունն իր հանդեպ պահպանելու համար: Սակայն իր տխրահռչակ իշխանության ընթացքում նրան կհետապնդեն մրցակցության կասկածն ու վախը: Բանը կհասնի նրան, որ սեփական անձի դեմ նյութվող դավադրությունները կանխարգելելու պատրվակով, կսպանի իր ընտանիքի անդամներին, նաև Սարիամներին: Բայց նա կդրսևորի նաև հմուտ ղեկավարի մեծ ընդունակություններ և արվեստագետի փորձված ճաշակ. նրա ժամանակաշրջանի ճարտարապետությունը դրա պերճախոս վկան է:

Քրիստոսը ծնվել է Չերովդեսի իշխանության օրոք (Մ. թ. ա. 6 և 5 թթ. միջև): Այս շրջանի կարևոր իրադարձություններից մեկն էլ Երուսաղեմի երրորդ տաճարի վերակառուցումն է: Ասում են, թե Չերովդեսը տաճարը վերակառուցել է տվել՝ ցույց տալու համար, որ ցավում է Սարիամներին՝ քահանայի աղջկան՝ սպանելու համար:

Չերովդեսի կառավարման շրջանում փարիսեցիների աղանդը կբաժանվի մրցակցի երկու դպրոցների՝ Բիլելի դպրոց, որը ազատամտական էր, և Շամսայի դպրոց, որը պահպանողական էր: Ի հայտ կգան հրեական քաղաքական երկու ուրիշ կուսակցություններ և՛ հերովդեսականները, որոնք թագավորական տան կողմնակիցներ են, և նախանձահույզները, որոնք օտար զավթիչին վռնդել ջանացող մոլի ազգայնականներ են:

Անկախության այս ցանկությանը միանում է նաև հայտնութենական մի անձնավորության՝ Մեսիայի սպասումը, անձնավորություն, որն ավելի շատ քաղաքական ազատարար է, քան ճշմարիտ կրոն հաստատող. Եսայի մարգարեի գրքի տառապող Ծառան: Այս հատկանիշով է բացատրվում այն, որ ժամանակակից որոշ մարդիկ Բիսուսից սպասում էին ռազմաքաղաքական բուռն գործունեություն: Բիսուսը դա կմերժի, քանզի նրա առաքելությունը փրկության գործն է, որը Բին Կտակարանի մարգարեական գրքերում արդեն իսկ հայտնված ու կանխասված Աստծու հավիտենական կամքով է:

ՉԵՐՈՎԴԵՍ ԱՆՏԻՊԱՍԻ մասին հարկ է ավելի շատ խոսել այն պատճառով, որ դատավարության ժամանակ Բիսուսը ներկայացել է նրան:

Միայն Ղուկասի Ավետարանում է հիշատակվում Բիսուսի՝ Չերովդեսի առջև կանգնելու փաստը: Չորրորդ դատավորը, որը Բիսուսին ներկայանում է, Չերովդես Մեծի և նրա հինգ կանանցից մեկի՝ սամարուհի Մաղթակեի որդին է: Նա հորից չէ, որ այլասերված էր՝ լինելով նրա պես դաժան նաև յուրայինների հանդեպ. այսպես է գրում Ջովաննի Պապինին: Երբ հարազատ եղբորը՝ Արքեղայոսին, իր ենթակաները մեղադրեցին, Չերովդեսն ինքը զբաղվեց նրան աքսորելու գործով: Տասնյոթ տարեկանում, իբրև չորրորդապետ, սկսեց իշխել Գալիլիայում ու Պիլեայում, իսկ Տիբերիոսի բարեհաճությանն արժանանալու համար դարձավ գաղտնի գործակալ՝ հաղորդելու իր եղբայրների, ինչպես նաև Պաղեստինի պաշտոնատար անձանց հետ կապված փաստերն ու նրանց ասածները: Ռոմում կատարած մի ճանապարհորդության ժամանակ նա սիրահարվում է Չերովդիային, որն իր եղբոր՝ Արիստոբուլոսի աղջիկն էր և մյուս եղբոր՝ Չերովդես Փիլիպպոսի կինը: Առանց կանգ առնելու կրկնակի սրբապղծության առաջ՝ Չերովդիային համոզում է աղջկա՝ Սողոմեի հետ հետևել իրեն: Նրա առաջին կինը՝ նաբաթացիների թագավոր Արետասի դուստրը, ապաստան գտավ հոր մոտ, որը հարձակվեց Չերովդեսի վրա և մարտահրավեր նետեց նրան:

Այս ժամանակաշրջանում էր Զովհաննես Մկրտիչը անուն հանուն ժողովրդի մեջ: Նա

հանդիմանական խոսքեր էր ասել այս երկու արյունապիղծ դավաճանության մասին, ու դա բավական էր, որպեսզի Հերովդիան իր նոր ամուսնուն ստիպեր ձերբակալել տալ նրան և բանտարկել Մակերոս ամրոցում: Բուլոբին է հայտնի, թե չորրորդապետը, Հերովդիայի դստեր՝ դեռատի Սողոմեի վավաշոտ պարերից գրգռված, գուցե և խորհելով մի նոր արյունապղծության մասին, ինչպես ստիպված եղավ ոսկե սկուտեղի վրա նրան մատուցել Հովհաննես Մկրտչի գլուխը:

Բայց նույնիսկ գլխատումից հետո մարգարեի ստվերը հետապնդում էր Հերովդեսին, և երբ սկսեցին խոսել Հիսուսի ու նրա հրաշքների մասին, նա իր պալատականներին ասաց. «Դա հարություն առած Հովհաննես Մկրտիչն է»: Թվում է, թե Հերովդեսը հսկողություն է սահմանել Հիսուսի վրա և մտադրվել է նրան ևս արժանացնել նախորդի բախտին: Բայց երկար խորհելուց հետո, սնահավատությունից՝ թե՞ քաղաքականությունից ելնելով, վճռեց այլևս գործ չունենալ մարգարեների հետ՝ հասկանալով, որ ավելի լավ կլիներ, եթե Քրիստոսին հանձնվեր հեռանալ իր չորրորդապետությունից: Մի օր մի քանի փարիսեցիներ, հավանաբար Հերովդեսի ցուցմունքով, եկան Հիսուսի մոտ ու ասացին. «Հերովդեսն ուզում է քեզ սպանել, հեռացի՛ր այս երկրից»: «Գնացե՛ք,- ասաց Հիսուսը,- և ասացե՛ք այդ աղվեսին, որ ես պետք է ճանապարհվեմ այսօր, վաղը և հաջորդ օրը, քանզի անհնարին է, որ մարգարեն մահանա Երուսաղեմից դուրս»:

Եվ ահա Երուսաղեմում մահվանից առաջ նա ներկայանում է «աղվեսին»: Լինելով մատնիչ, լրտես, անհավատարիմ ու արյունապիղծ՝ Հերովդեսը լիովին հարմար է ամենդրություն դատելու համար: Հիսուսը ճիշտ անուն է տվել նրան. Հերովդեսն ավելի շուտ աղվես է, քան վագր և այնքան անամոթ չէ, որ գրավի Պիղատոսի տեղը: Դուրևսը պատմում է, որ տեսնելով Քրիստոսին՝ նա նույնիսկ շատ ուրախացավ, քանի որ երկար ժամանակ ցանկություն ուներ նրան տեսնելու. լսել էր նրա մասին և ակնկալում էր ականատես լինել նրա ձեռքով կատարված որևէ հրաշքի:

Դուրևսի հաղորդած այս միջադեպը համապատասխանում է այն ամենին, ինչը մեզ հայտնի է Հերովդես Անտիպասի՝ անհանգիստ, սնահավատ, դաժան արքայորդու մասին: Հերովդեսը Հիսուսին տեսնելու այս առիթը համարում է անսպասելի հաջողություն: Նա հույս ուներ գոհացում տալ իր հետաքրքրասիրությանը՝ տեսնել նրա կողմից կատարված ինչ-որ հրաշք, ինչպես ձեռնածուն է պալատականներին զվարճացնում աչքակապության իր հնարքներով: «Եղովմացու և սամարուհու որդին, որ վառվել է Հովհաննես Մկրտչի կրակի մեջ, Հիսուսին ընդունում է թևի վրա առյուծի ատամնահետքեր ունեցող հմուտ գազանազպիչի պես՝ նայելով իրեն ներկայացված նոր վայրի գազանին: Արևելքի բոլոր բարբարոսների պես, շատ է ուզում մասնակից լինել ինչ-որ հրաշքի և մտածում է, որ Հիսուսը թափառական հրաշագործ է՝ ընդունակ, ինչքան ուզես, վերարտադրելու կախարդական իր հնարանքները: Հերովդեսը ատում է նրան, ինչպես ատում էր Հովհաննեսին, ատում է Հիսուսին, քանզի նրանից վախենում է. մարգարեներն ինչ-որ զորություն ունեն, որը Հերովդեսին հասկանալի չէ, բայց նրան սարսափ է պատճառում: Հովհաննեսի գլխատումը գուցե իրեն դժբախտություն է բերել: Հերովդեսն էլ է ուզում, որ Հիսուսը սպանվի, բայց ոչ մի ցանկություն չունի մեղսակից լինելու նրա մահվանը: Նրա առջև կանգնած Հիսուսի լռությունը կատարյալ էր և արտահայտում էր անարժան այս ղեկավարի նկատմամբ զգա-

ցած արհամարհանքը, առաջնորդ, որին Յիսուսը համարել էր չախկալ: Եվ այսպես, Յովհաննես Մկրտչին սպանողի, այլասերված ու դաժան արքայորդու առջև Յիսուսը պաշտպանվում է լռությամբ: Թեպետ կուսակալը ճնշող բազմաթիվ հարցեր տվեց Յիսուսին, իսկ քահանայապետերն ու դպիրները չարախոսում էին՝ նրան մեղավոր հանելու նպատակով, Քրիստոսը լուռ մնաց: Տեսնելով, որ ոչ մի հրաշքի ականատես չի լինի՝ Յերովդեսը երկար հարցուփորձ արեց Յիսուսին, սակայն վերջինս չպատասխանեց ոչ մի հարցի. ուրիշ դատավորների առջև նա խոսել է, բայց թագակիր այս խաբեբայի համար չի խոսի:

Արհամարհական այս լռությունից ստորացված՝ Յերովդեսն իր բանտարկյալից վրեժ լուծեց՝ նրան ծաղրուծանակի ենթարկելով: Ծաղրելու նպատակով Յիսուսին հրաշալի հանդերձներ հագնել տվեց, այնպիսիք, որ իշխաններն էին կրում և վերստին ուղարկեց Պիղատոսի մոտ: Խորամանկ Յերովդեսը կամենում է Յիսուսի մտադրությունը ծաղրել ներկայի հեզմանքով, բայց և միևնույն ժամանակ նրան հագցնելով գերագույն իշխանություն ու անմեղություն խորհրդանշող սպիտակ պատմուճան, աղվեսը Պիղատոսի մոտ է ուղարկում խորհրդանշական մի պատվիրակ, որն ականա հաստատում է կոնսուլի կնոջ լուրը, Կայիափայի մեղադրանքը և Քրիստոսի խոստովանությունը:

ՅԵՐՈՎԴԵՍ ԱՐԹԵՂԱՅՈՍԸ Յերովդես Մեծի և Մաղթակեի մյուս որդին է՝ Անտիպասից փոքրը:

ՅԵՐՈՎԴԵՍ ՓԻԼԻՊՊՈՍ 1-Ը անվանվում է նաև Յերովդես Փիլիպպոս (Մատթեոս 14:3, Մարկոս 6:17 և Ղուկաս 3:19): Նրան պետք է տարբերել իտուրացիների և տրաքոնացիների երկրի Փիլիպպոս Չորրորդապետից (Ղուկաս 3:1): Նա Յերովդեսի և Սիմոն քահանայապետի աղջկա՝ Մարիամնեի որդին է:

ՅԵՐՈՎԴԵՍ ՓԻԼԻՊՊՈՍ 2-ՐԴԸ հայտնի է որպես Փիլիպպոս Չորրորդապետ. Յերովդեսի և երուսաղեմցի Կլեոպատրայի որդին է: Նա կթագավորի Յիսուս Քրիստոսից առաջ, հայտնի է չափավոր կյանքով և արդար կառավարմամբ: Նա կառուցեց Կեսարիան՝ Փիլիպպե մականվամբ և Բեթսայիդա Յուլիան քաղաքը, որտեղ Յերովդես Անտիպասի հետապնդումներից խուսափելու համար ավելի ուշ ապաստան կգտնի մեր Տերը (Ղուկաս 9:10): Նրա կինը Սողոմնե է՝ Յերովդես Փիլիպպոս 1-ի և Յերովդիայի դուստրը (Մատթեոս 14:1, Մարկոս 6:14 և Ղուկաս 13:19):

ՅԵՐՈՎԴԵՍ ՅԵՐՈՎԴԵՍԻ ՈՐԴԻ Արիստոբուղոսի դուստրն է: Առաջին անգամ ամուսնացել է հորեղբոր՝ Յերովդես Փիլիպպոս 1-ի հետ, որից ունի Սողոմնե անունով մի աղջիկ. Յերովդեսի ծննդյան տարեդարձին նա է պարել պալատականների բազմության առջև և կուսակալից պահանջել Յովհաննես Մկրտչին առանց դատաստանի գլխատել տալու իրավունք:

ՅԵՐՈՎԴԵՍ ԱԳՐԻՊՊԱՍ 1-Ը (կոչվում է նաև Ագրիպպաս Մեծ), Արիստոբուղոսի ու Բերենիկեի որդին է և Յերովդես Մեծի թոռը: Երբ Կալիգուլան գահ է բարձրանում, նրան է զիջում 34 թ. մահացած Փիլիպպոսի չորրորդապետությունը: 38 թ. կավելացնի նաև արքայազն Անտիպասի չորրորդապետությունը՝ Գալիլիան և Պիրեան: Կլավդիոս կայսրին մատուցած ծառայությունների դիմաց Յերովդես Ագրիպպաս 1-ը հետագայում կստանա նաև Յրեաստանն ու Սամարիան՝ թագավորի կոչումով: Այժմ նա կառավարում է մի ժամանակ Յերովդես Մեծի հսկողության տակ գտնվող տարածքները: Նա ապրեց Երուսաղեմում, հետևեց մովսիսական օրենքին և բաց չթողեց ոչ մի օր՝ առանց զոհեր մատուցելու: Օրենքի հան-

դեպ նկրտումը նրան մղեց հալածել եկեղեցուն (Գործք 12): Մահացավ 44 թ.: Նրա ողբերգական մահվան պատմությունը տրված է նաև Հովսեփոս Փլավիոսի կողմից, որը հավաստում է այն, ինչ Ղուկասը հաղորդում է «Գործք Առաքելոց»-ում: Նրա կնոջ անունը Cypros է: Երեխաներից են՝ Հերովդես 2-րդը, Բերենիկեն և Դրուսիդան:

ՀԵՐՈՎՂԵՍ ԱԳՐԻՊՊԱՍ 2-ՐԴԸ նախորդի և Cypros-ի որդին է: Հայրը մահացավ, երբ նա ընդամենը 17 տարեկան էր: Իշխանությունն իրականացնելու համար նրան չափազանց երիտասարդ համարելով՝ Կլավդիոսը երկիրը հայտարարում է հռոմեական գավառ: 48 թ. Կլավդիոսը նրան կտա Քաղկիսի փոքրիկ թագավորությունը, իսկ 53 թ., փոխարենը՝ Փիլիպպոսի չորրորդապետությունը՝ թագավորի կոչումով: Ավելի ուշ Ներոնը նրան կտա Գալիլիայի և Պիրեայի որոշ քաղաքներ: Բացի այդ՝ նա իրականացնում է նաև այն տաճարի ընդհանուր հսկողությունը, որի կառուցման աշխատանքների ավարտումը նրա արժանիքն է: Հերովդեսը Ագրիպպաս 2-րդի մայրաքաղաքը Փիլիպպոսի Կեսարիայում է. նա այն կընդարձակի և իր մեծ բարերարի պատվին կանվանի Ներոնիա: Համաքաղաքացիներին Հերովդեսը խորհուրդ է տալիս չըմբոստանալ Հռոմի դեմ, իսկ երբ պատերազմ է ծագում, անցնում է Հռոմի կողմը: 70 թ.՝ Երուսաղեմի անկումից հետո, նա ստանում է նորանոր տարածքներ: Կյանքի վերջին տարիներն անցկացնում է Հռոմում, որտեղ էլ մահանում է մոտ 100 թվականին՝ ավարտին հասցնելով հերովդեսյան արքայատոհմի բարդ համալիրը: Լավատեղյակ էր հրեաների բոլոր խնդիրներին և ձևավորվել էր ուղղափառ հավատքի մեջ: Պողոսը նրան անվանում է անկանոն կյանք վարող մարդ (Գործք 25:26):

ԲԵՐԵՆԻԿԵՆ (Գործք 25:13) և ԴՐՈՒՍԻՊԱՆ (Գործք 24:24) հերովդեսյան արքայատոհմի մյուս սերունդներն են:

Գ Լ ՈՒ Ն 8

ՀՐԵԱ-ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

I. Հրեական միջավայր

Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեև հրեական կրոնը հիմնվում է Աստծու հայտնության վրա և հիմնականում հավատարիմ է մնացել ակունքներին՝ Հին Կտակարանի կրոնն, այսուամենայնիվ, զարգացում է ապրել, անցել է տարբեր փուլերով, որոնց ընթացքում խորապես ենթարկվել է օտար ազդեցությունների և ձևափոխվել: Նոր Կտակարանում մեզ ներկայացվող կրոնը տարբերվում է Հին Կտակարանի կրոնից: Երկու կտակարաններն իրարից բաժանող դարերին բնորոշ են եղել ոչ միայն քաղաքական շարժումներ, սոցիալական կյանքի իրապես արտասովոր փոփոխություններ ու ցնցումներ, այլև առավելապես մտավոր գործունեություն: Այս փոփոխություն-

ներն ազդեցին հրեական կրոնի կիրառության վրա: Ներմուծվեցին նոր գաղափարներ՝ ճանապարհի հարթելով այլ փոփոխությունների համար: Ասվածը նկատելի է հատկապես տվյալ շրջանի գրականության մեջ, ուստի հարկ է հստակ պատկերացում կազմել այս մասին՝ հասկանալու, առավել ևս՝ գնահատելու և լավագույնս ըմբռնելու Քրիստոսի ու առաքյալների լուրը:

Աքսորի ընթացքում (Ք. ա. 6-րդ դար) կրոնը համարյա ամբողջապես աղտոտվեց նախորդ դարաշրջանի հեթանոսական մակաբույծ տարրերից ու այլասերումներից: Ազգային նվաստացման մռայլ ու ճնշող այս շրջանում ստացած անվերջ հավաստիացումների ու կրած պատիժների հետևանքով և փրկարար տառապանքի գնով՝ Իսրայելը սովորեց հրաժարվել օտարամուտ եղծված սովորույթներից և, իբրև գերագույն Աստված, պաշտել միայն Աստծուն՝ իր միակ ազատարարին ու օրենսդրին: Իսրայելը վերջնականապես մերժեց կռապաշտությունը: Նույնիսկ ծայրահեղ խիստ հալածանքները, օրինակ, Անտիոքոս Եպիփանեսի օրոք, ծառայեցին Աստծու միաբանությանն ու հոգևոր բնույթին իր կապվածությունը հավաստելու և ամրապնդելու գործին: Մինչ ազգային անօգնական վիճակի ու հուսահատության զգացումը մեծանում և հրեա աստվածաբանների ուսմունքների մեջ թափանցում է հունական մտածելակերպը, սկիզբ է առնում մեկ այլ միտում, այն է՝ մաքրել ու վերականգնել Աստծու, ինչպես նաև Իսրայելի և աշխարհի հետ նրա հարաբերությունների գաղափարը: Այսուհետև գերակշռողը Աստծու տրամսցենդենցիայի հասկացությունն է, որը դառնում է նույնիսկ հավատքի բացառիկ տարրը: Նախկինում Աստված չափազանց մտերմիկ ձևով ապրում էր իր ժողովրդի մեջ, նրա հետ մոտիկից խոսում էր մարգարեների միջոցով: Այժմ նա ապրում է անմատչելի շրջաններում, և նրա հարաբերություններն առաջվա պես անձնական ու մտերմիկ չեն: Աստծու այս ըմբռնումն իր դրոշմը կրնի հիշյալ ժամանակաշրջանի ողջ գրականության վրա: Բարեպաշտ իսրայելցին կզուլանա արտասանել Աստծու անունը՝ այն փոխարինելով որևէ համարժեքով, օրինակ՝ ha shamaim (երկինք): Ամբողջապես ներծծված աստվածաբանական այս նոր գաղափարով՝ Հիսուսի ժամանակակիցները կիրառել են հավատ ընծայել մտերմիկ տոնին, որով նա խոսում էր Աստծու մասին և նրան համարում իր Հայրը:

Ընդունելով Հիսուսի ժամանակակից հրեական աստվածաբանական մտածողության ձևավորման գործընթացում այսպիսի փուլերի գոյության փաստը, մենք գոհացում չենք տալիս Հին Կտակարանի կրոնի և հայտնության բարեշրջական գաղափարին, որը բնորոշ է քրնադատական ու ազատամիտ ամեն մի մտածողության: Ուզում ենք պարզապես ընդգծել հայտնության առաջընթաց բնույթը, մի բան, որ ավելորդ չէ հիշեցնել: Հայտնությունն, անշուշտ, այն է, ինչ եղել է սկզբնական շրջանում, սակայն հետևել է մանկավարժական մի մեթոդի, որը, Իսրայելի կրոնաքաղաքական պատմության հյուսվածքը կազմող արտաքին իրադարձությունների շղթայի հետ կապված՝ հաստատվել է, նրբացել՝ փորձելով ժողովրդին առաջնորդել դեպի առավել հասուն հավատք: Մենք քննության կառնենք հիշյալ շրջանի կրոնական որոշ հաստատում գործոններ: Այսօրինակ քննությունը, կարծում ենք, հնարավորություն կտա ավելի պայծառ լույս սփռել Նոր Կտակարանի ընթերցման վրա:

Բ. ՀՐԵԱԿԱՆ ԿՐՈՆԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՉԾԵՐՈ

1. Օրենքը

Այս դարաշրջանի ընթացքում Աստու վերաբերյալ ամենակատարյալ և ամենամաքուր գաղափարն ուղեկցվել է Օրենքի հանդեպ աճող հարգանքով: Երբ անցյալում Աստված քաշվում է անմատչելի ամպերի մեջ՝ վերջ դնելով իր ժողովրդի հետ հաղորդակցմանը, ապա նրա կամքի մասին հնարավոր էր իմանալ միայն անուղղակիորեն՝ իր գործերով և անցյալում ասած խոսքերով:

Ներկայումս, այլևս չունենալով իրեն ղեկավարող կենդանի ձայն, Իսրայելը կարող է հիմնվել միայն գրված խոսքի վրա. պայմանների ծանրացման և հավատացյալների շփոթահար վիճակին զուգընթաց՝ զգացվում է Օրենքն ուսումնասիրելու հրատապ անհրաժեշտություն: Աքսորից ուժ առնելով՝ Օրենքի նկատմամբ ուշադրությունը մեծացավ և հաստատվեց նույնիսկ ազգային աղետների ազդեցության տակ՝ հասնելով համարյա խանդավառության աստիճանի, մանավանդ փարիսեցիների աղանդում: Այսպես, երբ որևէ շղթա ճնշում է ազգին՝ սպառնալով ազգային կյանքի ամբողջական ու վերջնական քայքայմանը, ապա դիմում են Օրենքին, որը դառնում է ոչ միայն քաղաքացիական միասնության հիմքը, այլև անհատական վարքի գերագույն կանոնն ու չափանիշը: Դպիրները, որոնց դերը Օրենքը շարադրել է, հասնում են շատ բարձր դիրքի և, ի վերջո, մեծ ազդեցություն գործում մարդկանց գիտակցության վրա:

Նոր Կտակարանի այժմ իբրև կանոնական ճանաչված գրքերը, որպես սրբազան գրվածքներ, հավաքվել են մոտ III դարում: Ավելի ուշ՝ մ. թ. I դարի վերջերին, Յամնիայի հրեական սինոդն այս գրքերը հայտարարել է իբրև կանոնական:

Ձուգահեռաբար զարգացել է նաև բանավոր մի ավանդույթ: Այն բաժանվում է երկու մասի. առաջինը կոչվում է Halaka, թարգմանաբար՝ «քայլել», իսկ երկրորդը՝ Hagaddah, որը կթարգմանենք «վարդապետություն» բառով: Halaka-ն սահմանում էր օրենքը, իսկ Hagaddah-ը այն բացատրում և լուսաբանում էր պատմողական նյութերով: Ամբողջը, որին բնորոշ է մանրամասների ու կանոնների մանրազնին քննությունը, հանձնվում է դպիրների, ընդհանրապես փարիսեցիների հայեցողությանը: Սա է հենց ծերերի այն ավանդույթը, որի մասին խոսվում է Ավետարաններում (Մատթեոս 15:2, Մարկոս 7:3, Մատթեոս 5:21, Փարիսեցիների բեռը՝ Մատթեոս 23:4 և Դուկաս 11:46):

Մ. թ. առաջին դարերի ընթացքում բանավոր Օրենքն իր ծավալումներով և դրա քննարկումների շնորհիվ կուտակված արդյունքներով, գրավոր ներկայացվեց երկու տարբեր կենտրոններում և երկու տարբեր Թալմուդներում՝ բաբելոնյան և պաղեստինյան:

Նոր ընթացմամբ շեշտը ազգայինից տեղափոխվեց առավելապես դեպի անձնականը: Մինչ այժմ ժողովուրդն եղել է ազգի պարտականությունների ու արտոնությունների կրոնական դիտարկման գլխավոր առարկան. ժողովրդի մոլորություններն ու մեղքերը կրոնական մտքի հիմնական մտահոգությունն էին: Այժմ մտածելակերպը փոխվել է. խիստ ընդգծված են անհատական պատասխանատվությունն ու պահանջները: Աքսորի ընթացքում ազգի հնարավոր կործանման գիտակցությունն արթնացրեց անձնական մեղքի զգա-

ցումը և խթանեց աստվածային բարեհաճության անհատական հետազոտությունը:

Ազգային վերականգնման հույսն ամբողջապես չէր մարել, ոչ էլ՝ հեթանոսական կրոնների վերացման ակնկալիքն ու Իսրայելի Աստծուն ճանաչելու գիտակցությունը: Սակայն դա պետք է իրականանար միայն անձնական բարեպաշտությամբ: Դրա նշանակալից արդյունքներից էր անհատական գիտակցության զարգացումն ու ամրապնդումը, որի վկաներն են Դանիելի գրքի կանոնական պատմություններն ու Շուշանին վերագրվող պարականոն գրվածքները: Քարոզչական կամ հավատադարձական եռանդը մարդկանց շուտով կստիպի ընդունել Իսրայելի Աստծու հանդեպ հավատքը: Այս բարեշրջումը մասնավորապես Սփյուռքում հասկանալու համար հարկ է հիշել, որ Աքսորից ի վեր, բացառությամբ հասնոնյան շրջանի, հրեա ժողովուրդը կազմել է ավելի շուտ կրոնական համայնք, քան կրոնական սովորույթներով միավորված անհատների ամբողջությունը:

Այս ժամանակաշրջանում Օրենքի դերի և իրական բնույթի քննությունը նմանապես թույլ կտա անգամ Նոր Կտակարանն ընթերցելիս խուսափել թյուրիմացություններից: Հնարավորություն տանք Ֆրանկ Միքայելիին ներմուծելու Օրենքի աստվածաշնչյան հասկացությունը:

«Այս հարցին պատասխանելու համար հարկ է նախ՝ ճշգրտորեն ըմբռնել, թե *Օրենք* բառն ինչ ընդգրկում ունի Աստվածաշնչում: Եբրայերենում սովորաբար *օրենք* բառը չունի իրավաբանական նեղ այն իմաստը, որ բառին հաճախ հաղորդում ենք մեր օրերում: Օրենքը (եբրայերեն՝ *thora*) Աստծու հետ խորհրդակցելուց հետո, նրա անունից խոսող մարդու արտասանած *կենդանի խոսքն է*: Դա *վարդապետություն է՝* Եհովայի մարգարեությունը, ինչպես մարգարեների՝ անմիջապես Աստծու ներշնչանքով ստացած խոսքերը: Դա որոշակի ժամանակում և որոշակի վայրում, ճշմարիտ հայտնության ընթացքում Աստծու կողմից մարդկանց տրված հրահանգ է: Բառի ամենաճշգրիտ իմաստով՝ *կենդանի Աստծու խոսք է*, Աստված, որը միջամտում է իր ժողովրդի կյանքին, առաջնորդում է այդ ժողովրդին, նրան փրկում ու սիրում՝ ակնկալելով միայն իր հրահանգների հավատարիմ կատարում: Օրենքը վարդապետություն է, որ Իսրայելը պարտավոր է ստանալ իբրև պատգամներ, որոնց, անշուշտ, պետք է անսալ, բայց և իբրև Աստծու բարությամբ տված խոստումներ այն ժողովրդին, որին ընտրել է իր համար՝ մյուս ազգերի առջև նրա ընդարձակ գերիշխանությունը ցուցադրելու նպատակով: Գոյություն ունի օրենքի *պարզ*, որը ողորմածություն է Աստծու կողմից, քանզի Եկեղեցու պատմության մեջ հայտնի դարձած խոսքի համաձայն, *Աստված տալիս է այն, ինչ կարգադրում է*: Աստծու օրենքը, որ հեռու է ծանր ու տեսական պատվիրան լինելուց, յուրայինների հանդեպ Տիրոջ սիրո արտահայտությունն է և, հետևապես, դառնում է հավատացյալների *ուրախության* առարկան: Դժբախտաբար, այս հասկացությունն աստիճանաբար քարացել է՝ ստանալով իրավաբանական կարգադրագրի իմաստ, մինչ կդառնար այն բեռը, որի տակ Հիսուսի ժամանակաշրջանում ապրում էր հրեա հավատացյալը՝ փորձելով ջանասիրաբար պարզաբանել ոգուց զրկված Սուրբ Գրքերի տառը, ոգի, որով այդ գրքերն արտասանվել են: Հիսուսը խիստ է արտահայտվել նրանց հասցեին, ովքեր հրեական կրոնական կյանքը վերափոխել են կեղծավոր ու խաբուսիկ օրինապաշտության:

Եթե, ինչպես հարկն է, հասկացվի օրենքի *կենդանի* բնույթը Նոր Կտակարանում և

այնտեղ Աստծու կողմից հայտնաբերվի իր ժողովուրդը, նրա ողջ պատմության ընթացքում, ասված խոսքերը, ապա բնագրերում հանդիպող այս կամ այն պատվիրանի էական տարբերությունները զարմանք չեն հարուցի: Կան Աստծու օրենքներ, որոնք այնպիսի գործություն ունեն, որ վեր են այն հանգամանքներից, որոնցում արտասանվել կամ ձևակերպվել են: Սակայն նույն Աստծու և նույն գործությունն ունեցող այլ օրենքներ վերաբերում էին մասնավոր դեպքերի, որոնք անցյալում են՝ մեզանից շատ հեռու»¹:

2. Իմաստությունը

Նոր Կտակարանի, ինչպես նաև միջկտակարանային շրջանի՝ «Իմաստության գրականություն» կոչված գրականության մի ամբողջ բաժնի իմաստ ու արժեք է հաղորդում իմաստության գաղափարը, օրինակ՝ Դոբի գրքում, Սաղմոսներում, Առակներում, Ben Sirak-ում, Ecclesiastique-ում (չշփոթել կանոնական «ժողովուրդ»-ի հետ), «ժողովուրդ»-ում, Սողոմոնի «Իմաստություն»-ում: Այս բնագավառում նույնպես արմատները գալիս են նախաաքսորային ժամանակաշրջանից, սակայն իմաստության գաղափարի զարգացումը ծաղկում է ապրում հետագայում: Իմաստությունը շատ առանձնահատուկ ձևով արտահայտում է Աստծու մտածողությունն ու կամքը՝ հանուն իր գերագույն դրսևորումների: Իմաստությունը զուգորդվեց Աստծու խոսքին, որը նույնիսկ անձնականացվեց. անշուշտ, բանաստեղծորեն, ոչ թե գոյաբանորեն, այսինքն՝ առանց այդ խոսքին վերագրելու Աստծու էակի հատկորոշումները: Իմաստությունը Աստծու գործակալը կամ լրաբերն է. դրանով նա հայտնում է իր կամքը և աշխարհին պարզում իր բարեհաճության ու գործության արտահայտությունը (Առակաց 8): Իմաստությունը աստվածային բոլոր ստեղծագործություններից առաջինն է՝ իմաստություն սիրողների բարեկամուհին (Ecclesiastique 1:4-100):

Նրա մտքերը ծովերից խորն են, խորհուրդներն ավելի մեծ են, քան օվկիանոսների տարածքը (Ecclesiastique 24:29): Սողոմոնի «Իմաստություն»-ում առավել կենդանի ոճով նկարագրվում են իմաստության ծագումն ու բնույթը, գովաբանվում և շեշտվում ձեռք բերած առավելությունները (7, 8, 90): Այն, որ այս մտածելակերպն ընդունվեց հրեական աստվածաբանության կողմից, հրաշալիորեն երևում է Targums-ների ընթերցանությունից. սրանք Նոր Կտակարանի՝ վաղ քրիստոնեության ժամանակ լայնորեն տարածված արամեերեն լեզվով շարադրանքներն են: Targums-ներում Աստծու խոսքը հայտնվում է իբրև որոշակի անձնավորություն, որը գրավում է նույնիսկ Աստծու տեղը՝ իբրև նրա ինքնարտահայտման գործիք, որով աշխարհն իրականացնում է իր ծրագիրը:

Համարյա նման, սակայն առավելապես հելլենիստական մտածողությամբ ազդված մեկ այլ ուսմունք էլ կգարգանա Ալեքսանդրիայում՝ հրեա մտածող Փիլոնի կողմից: Ընդունելով աստվածային տրանսցենդենցիայի հրեական ըմբռնումը՝ Փիլոնը Նոր Կտակարանի գրվածքների Բանի (Լոգոսի) մեջ տեսնում է գործություն և գործիք, որոնցով իր բանականությունն ու եռանդը կապի մեջ են մտնում աշխարհի հետ: Լոգոսը առաջնածին որդի է, որն ստեղծվել է Զրեշտակապետի՝ Աստծու օգնականի կողմից: Աշխարհը նրանով է ստեղծվել:

¹ F. Michaéli, L'Ancien Testament et l'Eglise chrétienne d'aujourd'hui. Deleachaux et Niestle, pages 24-26.

3. Հելլենականությունը

Հունական մտածողության ազդեցությունը կարող է ի հայտ գալ ավելի ուշ շրջանի հրեական որոշ հավատալիքներում: Հակառակ միակողմանի միտումին՝ հելլենիստական շարժման ալիքը, որը Ալեքսանդր Մեծի նվաճումների հետևանքով տարածվեց Միջերկրականի ավազանում, դիպավ նաև հրեաներին, հատկապես Սփյուռքում ապրողներին, քանի որ անմիջական շփման ու կապերի մեջ էին Արևմուտքի ամենահին տեղեկտուալ ազգի հետ: Նրանց լեզվի իմացությունը, ինչպես նաև սովորույթների ու գաղափարների հարազատությունը նոր շունչ կհաղորդեն ոչ միայն ուշ շրջանի հրեական գրականությանը, այլև Նոր Կտակարանի գրվածքների ոճին: Սողոմոնի «Իմաստություն»-ը, օրինակ, մտածելակերպով և հունական փիլիսոփայական դպրոցներից փոխառած դարձվածաբանությամբ, խորապես ներծծված է հելլենիզմով: Այստեղ թվարկվում և ընդունվում են հունական բարոյականության չորս գլխավոր առաքելություններն՝ արտահայտված անձն մատերիայի հիման վրա ստեղծված աշխարհի վերաբերյալ պատոհմյան գիտաեզրերով (տերմիններով), մանա՛նան անվանվում է աստվածային սնունդ, իսկ առաքինությունը ներկայացվում է նիզակամարտում հաղթող մարզիկի պես՝ պսակը գլխին: Հովհաննու Հայտնության՝ սրբերին վերաբերող նկարագրությունը (7:9) հիշեցնում է հունական մրցումները, որոնք նախորդ ժամանակներում պետք է որ տիաճություն պատճառած լինեին հրեաներին: Սրանք մտածողության փոխանակման նկատելի նշաններ են, որի ընթացքում հաղորդվում ու ստացվում էին ոչ միայն բարոյականությանն ու քաղաքականությանը, այլև փիլիսոփայությանն ու կրոնին վերաբերող գաղափարներ: Հրեաներն այս առումով գաղափարական մեծ պարտք ունեն. նրանք, անշուշտ, հույն մտածողների գործերում գտնում էին ճշմարտությունների հստակ ու ճշգրիտ սահմանումներ, ինչպես, օրինակ, հոգու անմահության, այնկողմնային աշխարհում հատուցման կամ պատժի արժանանալու գաղափարները: Արևմտյան լեզվի ու մտածողության հետ ունեցած մտերմության ամենանշանակալից արդյունքները, սակայն, հրեաների ու հեթանոսների նախկին տարբերակման մեղմացումն էր և համընդհանուր Ավետարանի քարոզման նախապատրաստումը: Հելլենիստական և հունական բացառիկ լույսի ներքո է միայն հնարավոր հասկանալ ոչ պակաս արտասովոր այն հաջողության պատճառը, որ իրենց գործում ունեցան Պողոսն ու մյուս առաքյալները:

4. Մեսիական հույսը

Անդրադառնա՛նք մեսիական հույսին, որը ոգեշնչում է միջկտակարանային շրջանի հրեաներին ու Հիսուսի ժամանակակիցներին:

Ըստ էության, մեսիական հույսը Իսրայելի՝ Մեսիայից ակնկալվող հույսն է. հավաստի համոզվածություն (այս մասին վկայում են մարգարեներից ներշնչված հավատացյալները), որ Աստված Դավթի շառավղից կուղարկի ազատարար մի թագավոր՝ օտար ճնշողների ձեռքից նրանց ազատելու, ուխտի ժողովրդին նախկին փառքը պարգևելու, աղետների բոլոր հետքերը մաքրելու, աշխարհում խաղաղության և բարգավաճման աննախադեպ շրջան ստեղծելու համար: Ավելի ընդարձակ մի մեկնաբանություն թույլ կտա հույսն ընկալել որպես շողշողուն ապագայի հանդեպ հավատի նշան, ապագա, երբ Աստված վերջ կդնի տառապանքներին և իր օրհնանքը կտարածի ժողովրդի վրա՝ ընդգծված միապետական ցանկացած դիտարկումից դուրս:

Թեման ամբողջապես աղոտ է ու բազմաբնույթ: Հույսն ընդունում է մերթ այս, մերթ այն ձևը: Մարգարեների աստվածաբանական դպրոցը պաշտպանում է հույսի գաղափարը, մինչդեռ մյուս դպրոցը, որը ներառում է «Իմաստության գրականության» այլ հեղինակների, թվում է, լիովին անտեղյակ է դրան: Այս դեպքում դպրոցն ունի սեփական գաղափարատիպը՝ իմաստության ըմբռնումը, որը մեփական հույս է, այլ մտածողություն, որի իրականացումն ու ավարտը քրիստոնյաները տեսել են Հիսուս Քրիստոսի մեջ՝ ազատարար թագավորի նույն կոչմամբ ու աստիճանով: Այլ կերպ ասած՝ մեր Տերն իր անձի մեջ միավորել է Իսրայելի հավատքին ու կրոնին հատուկ որոշ հույսեր ու գաղափարներ՝ դրանք իրականացնելով յուրովի, մի բան, որը, սակայն, առաջին երազողների կողմից ակնկալածի ճշգրիտ պատասխանը չէ: Այնուամենայնիվ, այս պատասխանն ավելի ամբողջական է ու կատարյալ: Թեմայի ընդհանուր այս հասկացությամբ զինված՝ մենք պատրաստ ենք էտել ավելորդ ճյուղերը և նրա զարգացմանը հետևել վաղ հայտնության մեջ սփռված շողերում, որ հետագայում ի մի բերվել և շեշտվել են Ավետարանում:

Առաջին հերթին, մենք հանդիպում ենք Իսրայելի վաղ շրջանի պետության սրբազան բնույթի գաղափարին, որը ցայտուն ձևով երևում է Սավուղի օծման պարզ պատմության մեջ (Ա. Սամուել 9:16): Այստեղ տեսնում ենք ազգը թշնամիներից ազատելու նպատակով Աստծու կողմից ընդունված մի թագավոր, որը, ի նշան Աստծու համաձայնության, օծվելու է նրա ուղարկած մարգարեի կողմից: Այսպիսով, գահը մեծ հույսեր է բովանդակում: Սակայն հույսը շատ արագ է ցրվում: Սավուղը բռնում է սեփական պատվախնդության ուղին և հանդիմանելով՝ Սամուել մարգարեն հայտնում է նրա մերժվելու լուրը:

Նույն գործընթացը կրկնվում է նաև Դավթի ընտրության ու օծման հետ կապված, բայց այս անգամ՝ ավելի երջանիկ ավարտով: Իսրայելի երկրորդ միապետը, լինելով առաջին զինվորը, դարձավ նաև շատ մեծ իշխան: Ազգը ոչ միայն ազատվեց կողոպտիչ քոչվոր հարևանների ճնշումից ու նրանց պատճառած ավերածություններից, այլև ընդարձակեց պետության սահմանները՝ կազմելով իսկական կայսրություն և դրսևորելով կայսերական հզոր պետություն խոստանալու նշաններ: Որոշ ժամանակ անցողիկ այս կայսրությունը աչք է շլացնում իր փայլով: Ավաղ, ժողովուրդը շուտով նոր հուսահատություն է ապրում: Սկզբնական շրջանում, Սողոմոնի թագավորությունն ավելի փառապանծ էր, քան հորը, բայց հետագայում դարձավ դժվարին ու ծայրահեղորեն ծանր: Շրջապատված լինելով վատ խորհրդականներով՝ նրա որդին ու ժառանգորդը՝ Ռոբովամը, իրեն պահեց ինքնակալի պես և հոր դեմ ապստամբություն բորբոքեց: Ի վերջո խռովությունը հասցրեց այն բանին, որ Իսրայելը բաժանվեց երկու թագավորությունների՝ Հյուսիսային, որը կոչվեց Իսրայել, և Հարավային, որը ստացավ Հուդայի երկիր անունը: Հետևեցին լավ ու վատ իշխաններ: Եսայի մարգարեի ժամանակ Իսրայելը նայում էր դեպի իր անցյալը՝ դեպի լուսաշող ու հրաշալի փառքն այն, որ թվում էր ընդմիշտ անցած:

Դավիթը՝ գերագույն իդեալը (թե՞ իդեալականացվածը), այժմ դառնում էր պատմական իրականության Դավթից ավելի մեծ անձնավորություն: Մոռացել էին սակայն ազգային այս հերոսի գործած հանցանքները. հիշում էին միայն ռազմական հաջողությունները: Այդ ժամանակ ծնվեց մի երկրորդ հույս, թե կհայտնվի երկրորդ Դավիթը և վերջնականապես կիրականացնի այն, ինչը ժամանակին չէր կարողացել ավարտել օրինական արքայատոհմի հիմնադիրը:

Քանի որ Ասորեստանը փյուռիկեցիների և փղշտացիների երկրներից ավելի վտանգավոր հակառակորդ էր, զգացվում էր զինվոր թագավորից է՛լ ավելի մեծ Դավթի կարիքը՝ թոթափելու ասորական լուծը: Այս փուլում ժողովրդին օգնելու եկան մարգարեները՝ իրենց ներշնչված խոսքերով պատասխան տալով նրա կարիքներին, հույսը տեղադրելով քաղաքական սովորական մակարդակից բարձր մեկ ուրիշ հարթության վրա (Եսայի 11:1-9): Այս մեծ գուշակությամբ առաջինն է ճշգրտորեն արտահայտված այն միտքը, որ Մեսիան լինելու է Դավթի սերնդից:

Ապագա ազատության վերաբերյալ ցուցումներ ու ենթադրություններ նախապես արվել էին, սակայն, վերջապես, որոշակիորեն խոստում տրվեց երկրորդ Դավթի վերաբերյալ: Այս մարգարեության կրոնական արժեքն ուրվագծված է ապագա Մեսիայի բարոյական ու հոգևոր նկարագրում: Վերջինս ավելի քան նվաճող է: Նա արդար, կարեկցանքով լի, խաղաղ թագավոր է, քանզի ոգեշնչված է Տիրոջ հանդեպ ունեցած վախով:

Չիշյալ մեծ գուշակության լույսի ներքո, որը, ճշմարիտն ասած, մեսիական հույսի բանալին է, կարող ենք դառնալ դեպի ավելի վաղ արված աղոտ գուշակությունները: Առաջինը Եսայու մոտ է (7). ավետվում է Էմմանուելի ծնունդը: Սակայն դժվարություն է առաջանում, քանզի հարկ է ճշմարտորեն որոշել, թե կանխասացությունն ում է վերաբերում: Չիշենք, որ այս գուշակությունը խոր արմատներ ունի Իսրայելի պատմության մեջ: Ոմանք դա մեկնաբանում են իբրև ակնարկ հենց մարգարեի ակնկալած որդու ծննդի վերաբերյալ, մյուսները մարգարեության մեջ տեսնում են թագավորական պալատի մի իշխանի: Ուշադրության առնելով վաղ շրջանի այս գուշակություններից երկրորդը՝ մեր առջև հառնում է խորհրդավոր մի մանուկ 9-րդ գլխի 6-րդ հատվածի հրաշալի կոչումներով. այս նոր նկարագրությունը Մեսիայի վերաբերյալ Յին Կտակարանում արված ամենափառահեղ նկարագրությունն է: Պե՞տք էր, արդյոք, նկարագրված էանիշներն ու կոչումները վերագրել միայն մարգարեին ժամանակակից մի երեխայի: 9-րդ գլխի գուշակությունը մեզ ուղարկում է դեպի 11-րդ գլխի գուշակությունը, որը խորապես ժամանակակից է: Խնդրի լուծման դժվարությունը մեսիական մարգարեության մի կարևոր դիտանկյան մեջ է: Մենք պարտավոր ենք տարբերակել մի կողմից՝ գաղափարները, մյուս կողմից էլ՝ այս գաղափարների տեղական, ժամանակավոր ու անհատական կիրառությունը:

Յին Կտակարանի մարգարեները ներշնչված էին՝ ընկալելու երկնքի լուսատուների պես իրենց գլխավերևում փայլող գաղափարները: Սակայն նրանց տրված չէր իմանալ գալստյան ճշգրիտ ժամկետները: Նույնիսկ Տեր Յիսուս Քրիստոսն է խոստովանել, որ իրեն տրված չէր իմանալ իր առաջին գալստյան օրն ու ժամը:

Յենց այս պատճառով էլ հարկ է այս բանն ակնկալել Յին Կտակարանի մարգարեներից, երբ վերջիններս խոսում էին մարդու Որդու մասին: Յետևապես, պետք չէ զարմանալ, որ ազատարարի հայտնվելուն նրանք սպասում էին ավելի վաղ: Լինելով մեծ ոգևորության տեր մարդիկ՝ նրանցից ոմանք պատրաստ էին այս կամ այն երիտասարդ իշխանին ողջունել իբրև Աստծու խոստացած:

Եսային ստիպված եղավ երազել, որ սիրիական ճգնաժամի ընթացքում ծնված երեխան պետք է ունենար 9-րդ գլխում նկարագրված հատկանիշները: Յետևապես, նա հայտնվում է 11-րդ գլխի խաղաղ ու հաղթանակող իշխանի պես: Պատմությունն ականատես չե-

ղավ մարգարեի երազանքի իրականացմանը: Աստված իր ժողովրդին, նույնիսկ մարգարեներին չէր դաստիարակում նրանց տեսիլքների պատճառով առաջացած, ժամանակի մեջ սահմանափակված պատրանքների միջոցով: Մարգարեական գաղափարներում, սակայն, չկար ոչ մի պատրանք. պատրանքը սահմանափակված էր միայն պատմական շրջանակներում:

Այստեղ հասնում ենք մեսիական հույսի հրաշալի կենսունակ բնույթին: Պատրանքների ցրումը բնավ չի ոչնչացրել հույսը: Մատնացույց են արվել բազմաթիվ մարդիկ, որոնք իբր իրականացնելու էին խոստումը՝ Եզեկիա, Ջորոբաբել, նույնիսկ՝ հեթանոս Կյուրոս, իսկ ավելի ուշ՝ Յուդա Մակաբե: Բոլորն էլ եղել են եռանդուն, նրանց գործողությունները համապատասխանում են մեսիական հույսին: Սակայն հույսի գաղափարը շատ ավելի մեծ էր, և կիրառությունը միայն նրանց չէր վստահված: Եվ այսպես, ի վերջո, ստիպված եղան ընդունել, որ սպասումը պատվաբեր չի եղել: Յույսը, սակայն, չի մեռնի: Հասկացան, որ Աստված, կատարումն ունեցնելով, փորձում էր ազգի համբերությունը՝ առանց, այսուհանդերձ, մարելու հույսն ու նրա անպարտելի կենսունակությունը: Հավատքի ու հուսահատության այս հրաշալի զուգորդության հետ կապված է, որ պետք է ընթերցենք սովորաբար «մեսիական հատվածներ» անվանվող բազմաթիվ հատվածներ, թեև ձևով սրանք մարգարեական չեն: Օրինակ, Սաղմոս 2-ը կիրառվել է բազմաթիվ անձանց նկատմամբ, ինչպիսիք են Դավիթը, Սողոմոնը, Հովսափաթը, Աբազը, Եզեկիան, Ալեքսանդր Յաննեսը: Ստիպված ենք այս շրջանի իսրայելցիների հետ հաստատել, որ աստվածային փառաբանված թագավորությունը պատմության ընթացքում նշված անձանցից և ոչ մեկի կողմից չիրականացավ:

Յույսը կմնա իբրև ամուր դավանանք: Սաղմոսագիրը չէր փորձում պարզապես արտահայտել շռայլ հավատ: Վստահելով Աստծուն՝ նա պարզորոշ տեսնում էր, թե ինչ պետք է իրականացնեն Աստծու ընտրած իսկական թագավորը: Թագավորին ներկայացնելով իբրև Աստծու որդի՝ սաղմոսագիրը չի հասել Պողոսի և Հովհաննեսի՝ մարմնացած Քրիստոսի մեջ ընկալած խորհրդավորության տեսիլքին: Բայց ժամանակին նա տեղափոխվել է լուսավոր մի ամպի, հույսի ամպի վրա, և նրան այնպես է թվացել, թե նոր ուխտի հայտնության օրհնություններով լի օրն անխուսափելի է:

Նույն ձևով էլ Սաղմոս 72-ը կիրառվել է Սողոմոնի, Եզեկիայի, այլ մարդկանց նկատմամբ: Բայց իր հարուստ ու խոր իմաստը նրանցից և ոչ մեկի մոտ սաղմոսը չէր սպառում: Իսրայելի մեծ իշխաններից յուրաքանչյուրը միայն մասնակիորեն է իրականացրել ազգային գաղափարատիպը. ամբողջական իրականացումը հետո էր լինելու՝ Քրիստոսի գալստյան ժամանակ: Երբեմն այն, ինչ անվանում ենք մեսիական հույս, սահմանափակվում է քչով, դա առավել, քան դավթյան շառավղի թագավորների անվերջանալի գիծն է: Որոշ մարգարեություններ լինելու են Տիրոջ օրը. Սաղմոս 89-ը գրված է այս ոգով: Նույնիսկ այստեղ հրաշալի է, որ Դավթի արմատի հետ կապվող հույսն այդքան համառ է ու վստահելի: Մյուս կողմից՝ կա մարգարեությունների մի խումբ, որն աղերս չունի մեսիական որոշակի հույսի հետ, սակայն կապված է Տիրոջ օրվան և ավետում է գալիք փրկություն: Այնտեղ Աստված անվանվում է Ազատարար: Չկա ոչ մի տեղ մարդկային գործոնի համար:

Դավթի տան որևէ իշխան, որն իշխանից առավել չէր, չէր կարող իրականացնել ակնկալածը: Ժամանակների ցավերը չափազանց շատ էին, իսկ գալիք ոսկե դարի հույսերը՝ չափա-

զանց փայլուն, նույնիսկ Աստծու կողմից ընտրված և օժված ամենանշանավոր տիրակալի համար: Հրեաները հուսախաբ եղան Դավթի գահի նկատմամբ ունեցած համոզվածության մեջ: Այս հույսը թանկ էր նստել նրանց վրա: Ահա թե ինչու շատ հաճախ տրվեցին հոգնության ու հուսահատության, մինչև հույսը կենդանացավ մեկ ուրիշ բնագավառում:

Միայն անձամբ ինքը՝ Աստվածն էր դառնում իրենց Փրկիչը. սա է Եսայու գրքի երկրորդ մասի իշխող գաղափարն այն դեպքում, երբ մարդկային ոչ մի օգնություն չէր կարող մեղմել ժողովրդի ցավերը: Բայց Տիրոջ օրվա (yom Jahvé) գաղափարը նախորդում է սրան: Անովսը տեղեկացնում է Աստծու դատաստանի մասին: Սովորական տեսնում է աստվածային վրեժխնդրության օրը, Իսրայելի թշնամիները կոչնչացվեն, և Իսրայելը կփառաբանվի: Այստեղ տեսնում ենք փրկչության ամենատարրական գաղափարը: Ավելի խոր մեկ այլ նմուշի համաձայն էլ՝ դատաստանը տարածվելու է նաև Իսրայելի՝ Աստծու ժողովրդի վրա, որը կփրկվի. դատաստանից դուրս կմնա միայն հավատացյալ մի մնացորդ: Ուրեմն՝ հավատացյալ այս մնացորդի առանձնաշնորհը մեծ հույս է: Նոր Կտակարանում Դավթի փառաբանված որդու և աստվածային ուղղակի միջամտության գաղափարները երբեք որոշակիորեն միավորված չեն: Այս երկու գաղափարները կհամեմատվեն նրանց վրա ընկնող երկու լույսերի հետ, որոնց վերամիավորման ակնկալիքը Նոր Կտակարանի հայտնության կատարման մեջ է:

Կարևորություն ներկայացնող երեք այլ գաղափարներ ժամանակին չեն ընդունվել որպես մեսիական հույս.

1. «2-րդ Օրինաց»-ի 18:18 հատվածում բովանդակվող՝ ապագա մարգարեի հայտնության գաղափարը երբեք չի աղերսվել Հին Կտակարանի Մեսիային, ինչպես դա արվել է Նոր Կտակարանում, որտեղ Հիսուսը հայտնվում է նախ իբրև մարգարե, իսկ այնուհետև նրան ողջունում են որպես Քրիստոս – Մեսիա:

2. Եսայու գրքի երկրորդ մասի Տիրոջ տառապող ծառայի մեծ գաղափարը վերաբերում է ամբողջ Իսրայելի՞ն, թե՞ Երեմիային, պատմական մեկ այլ անձնավորությա՞ն, թե՞ Իսրայելի հավատացյալ մնացորդին: Մեսիայի գաղափարն այստեղ նույնիսկ չի շոշափվում: Բայց քանի որ գաղափարը ներշնչել է Աստված, կարևորը այդ գաղափարի՝ պատմության ընթացքում իրականացումը չէ. էականն այն է, որ այն զրանցվի մարգարեական գրքի էջերում:

3. Երեմիայի՝ նոր ուխտին առնչվող մարգարեությունը (Եր. 31:31-34) ուղղակիորեն չի աղերսվում մեսիական հույսին, այլ սպասման բնորոշ ոչ պարզ կանխագուշակություն է: Հին Կտակարանում այս մասին Հիսուսը կխոսի Հաղորդության Խորհրդի հաստատման ժամանակ, իսկ Ավետարանն այն կկիրառի Աստծու նոր ժողովրդի՝ Եկեղեցու հիմնադրման համար:

Հիսուս Քրիստոսի անձով, մարգարեության կատարման հարցը դիտարկելիս, պետք է տեսնենք, որ նա չի փորձել այս բանն անել ցուցադրաբար: Հիսուսը եկավ Թագավորի պես. հաստատեց Աստծու Թագավորությունը: Նա եկավ իբրև Ազատարար, մեղք Քավող, մի բան, որն ամենավատթար ճնշումն է, եկավ նաև որպես Աստծու մարդկանց պարզևած գերագույն ու վերջին հայտնություն: Հիսուսը միևնույն ժամանակ տառապող Ծառա է և նոր ուխտի Հիմնադիր: Այն, որ նա իր համար պահանջում է Մեսիայի կոչում, հնարավոր չէ ժխտել՝ առանց խարխլելու. ողջ Ավետարանը: Եվ այսպես, մեսիականության հոգևոր էությունը Հիսուսի միջնորդ գործունեության կենսական տարրն է: Նա սրան ավելացրել է նաև

Տիրոջ օրվա գաղափարները՝ Փրկիչ Աստծու, ինչպես նաև տառապանքի և ուխտի մարգարեական տարրի գաղափարները, որոնք Նոր Կտակարանում չեն միավորվել. բոլոր այս տեսակետները կիրականացնող Ռիտուսի առաքելության մեջ:

5. Միաստվածությունը

Բաբելոնյան Աքսորը Իսրայելը մեկնաբանեց որպես Աստծու կողմից պարտադրված գիտաճյուղ՝ իրեն սովորեցնելու, որպեսզի չպաշտի այլ աստվածների: Սկսած Աքսորից՝ Իսրայելի կրոնական ու ազգային ամբողջ կյանքը կենտրոնացավ միաստվածությանը: Մեծ shema-ն՝ «Լսիր, ո՛վ Իսրայել, մեր Եհովա Աստվածը միակ Աստվածն է» (2-րդ Օրինաց 6:4), դարձավ կրոնի և հավատացյալների հիմնական հավատամքը և երբեք լրջորեն հարցականի տակ չդրվեց: Այդ ժամանակաշրջանի հրեա հավատացյալների ու աստվածաբանների հետ մեկտեղ՝ շեշտը դնում ենք Աստծու սուրբ և այնկողմնային լինելու հատկանիշի վրա, որը, սակայն, չի բացառում նրա հետ անձնական կապի հնարավորությունը: Բացարձակ միաստվածությանը կապված լինելու պատճառով բազմաթիվ հրեաներ կորցրել են իրենց կյանքը. ծայրահեղ բարձր գին՝ առանց արատավորվելու կռապաշտությունից հրաժարվելու դիմաց:

6. Ընտրությունը

Ինչպես միաստվածության դեպքում էր, եբրայեցիների՝ Աստծու ընտրած ժողովուրդը լինելու համոզմունքն էլ ավելի կամրապնդվի, իբրև Աքսորի հետևանք: Եզրասի ժամանակներից ի վեր ազգին բնորոշ կլինեն ծայրահեղականությունն ու բաժանությունը: Այս բաժանությունը երևում էր կրոնական առանձնահատուկ այնպիսի արարողություններից, որոնք առնչվում են քլիստամանը, շաբաթին, Օրենքին, հոգևորականությանը, օտար կանանց հետ չամուսնանալուն և այլն: Իսրայելի ընտրությունը կապված է պաղեստինյան հողի հետ. հողը դառնում կամ դիտվում էր իբրև եբրայեցիների մշտական սեփականություն: Հենց ենթարկվում էին հնագանդության պահանջներին, քաղաքական վերելքն ապահովված էր:

7. Հավիտենական ճակատագիրը

Առաջին դարի հրեական կրոնը միաբան չէր այնկողմնային հավատքի հարցում: Պարականոն որոշ հեղինակներ, որոնց մեջ՝ Sirak-ը, խոսում են Հին Կտակարանի մեծ մասի կողմից ընդունված այնպիսի հավատքի մասին, որի համաձայն դժոխք (shéol) մտնելը թույլ է տալիս ապրել ստվերների մեջ, թեև այս գաղափարն այնքան էլ հստակ չէ: Սողոմոնի «իմաստության» մեջ և Մակաբեների 4-րդ գրքում հաստատվում է հոգու անմահությունը: Հարության գաղափարը, որը երբեք չի հիշատակվում Հին Կտակարանում, պաշտպանվում է Մակաբեների 2-րդ գրքում: Հարության գաղափարը ընդունողների տեսակետները բնութագրվում են: Ոմանց համար ապագա կյանքը լինելու է ներկա դարաշրջանի փառավոր արտահայտություն: Մյուսները չեն ընդունում ֆիզիկական հաճույքները (տոներ, սեռական հաճույք և այլն), որոնք կներառվեն հարության մեջ: Shéol-ը (հունարենում hadès) գնալով դիտվում է որպես անօրենների բնակավայր. այստեղ նրանք պատժվում են, սովորաբար՝ կրակով: Պատիժը երբեմն փոխարինվում է ոչնչացմամբ, իսկ թեթև մեղք գործած-

ները սահմանափակ ժամկետից հետո ազատվում են: Այսպիսով, տեսնում ենք, որ հրեական այնկողմնային աստվածաբանությունը լավ հաստատված ու կայուն դոգմա չէր:

Գ. ՊԱՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐՁԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՊԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Պարականոն» բառն առաջացել է հունարեն մի բառից, որն ունի «գաղտնի» կամ «թաքուն» իմաստ: Այն ցույց է տալիս կրոնական գրվածքներ կամ փիլիսոփայական աղանդներ, որոնք գաղտնի են աշխարհին և նույնիսկ՝ այդ աղանդների բազմաթիվ անդամների: Հիմքում ամենակին էլ առարկություն չկար: Բառը ցույց է տալիս, պարզապես, որ տվյալ գրքերի կիրառությունը սահմանափակված էր միայն մի փոքրիկ շրջանակով: Բայց քանի որ այդպիսի որոշ գրքեր արժանահավատություն չէին ներշնչում, բառը ձեռք բերեց արհամարհական իմաստ և սկսեց նշանակել «կեղծ» կամ «մտացածին»: Սակայն դա չի խանգարում նշված գրքերի պատմական իրական արժեքին:

Պարականոն են հետևյալ գրքերը՝ Ա. Եզրաս, Բ. Եզրաս, Թոր, Հուդիթ, Եսթերի գրքի մնացած մասը, Իմաստության գիրքը, Ecclesiastique-ը, Երեք երեխաների Երգը, Բարության գիրքը, Շուշանի պատմությունը, Բելն ու Վիշապը, Մանասեի աղոթքը, Ա. Մակաբե, Բ. Մակաբե:

Գրքերի այս հավաքածուն բավականին կարևոր է կանոնականի հեղինակություն պահանջելու համար: Այսուհանդերձ, դրանք երբեք չեն արժանանա ո՛չ հրեաների, ո՛չ էլ, ավելի ուշ, քրիստոնեական Եկեղեցու ընդհանուր հավանությանը: Ալեքսանդրիայի հրեաների շրջանում նշված գրքերը, բացառությամբ Եզրասի 2-րդ գրքի, շատ բարձր են գնահատվում, այն աստիճան, որ ներառված են «Յոթանասնից» թարգմանության մեջ: Եկեղեցական հայրերից ոմանք, մասնավորապես Օգոստինոսը, կընդունեն պարականոն գրքերը և դրանց գործածությունն ավանդույթ կդարձնեն հռոմեական Եկեղեցում, որտեղ, Տրիենտի տիեզերաժողովում (1545-1563 թթ.), դրանք կճանաչվեն իբրև *երկրորդ կարգի կանոնական գրքեր*⁴:

Deutérocanonique բառը ցույց է տալիս, որ հիշյալ գրքերը պատկանում են Սուրբ գրքերի կանոնին, սակայն մասամբ ցածր են դասված իբրև կանոնական ճանաչված գրականությունից: Պաղեստինի հրեաները այս գրքերը բացառել են իրենց կանոնից՝ հետևելով V դարի աստվածաշնչյան մեծ գիտակ Յերոնիմոսի օրինակին. վերջինիս դիրքորոշումը գերակշիռ դեր է խաղում Ռեֆորմացիայից սերված Եկեղեցիներում: Լյութերական Եկեղեցիները խորհուրդ են տալիս հիշյալ գրքերն օգտագործել ոչ թե իբրև ուսմունքի ձևավորման հիմք, այլ անհատական հավատքի հաստատման համար:

Կանոնական որոշ գրքեր ևս նույն վիճակում են՝ թե՛ արժանահավատության և թե՛ սկզբնաղբյուրի վերաբերյալ կասկածի տեսակետից: Պարականոն գրքերը պետք է գնահատել որոշակի արժանիքի համար, դրանք չպետք է համարել, անգամ մասնակիորեն, հավատքի հիմք: Այս գրքերն ամենահին վկայություններն են բովանդակում գերեվարության և վաղ քրիստոնեական շրջանի վերաբերյալ, տեղեկություններ են հաղորդում այս շրջանում կանոնական գրքերին տրված արժեքի մասին, իրենց գոյությամբ հավաստում

⁴ Ֆր.՝ deutérocanonique.

են հունական մտածողության և հրեական հավատալիքների ակնհայտ հակադրությունը լեզվի և մշակույթի բնագավառում:

Պարականոն մյուս գրքերն են՝ Եսայու Չամբարծումը, Յոբեյանական գիրքը, Մովսեսի Մահը, Տասներկու հովվապետերի կտակարանը, Սողոմոնի Սաղմոսները, Չանելուկային գուշակությունները:

Աստծու արդարությանն ու Օրենքը պահպանողին խոստացված հատույցին հավատացող հրեա մտածողը չէր կարող հանգստանալ առկա իրավիճակներում, որտեղ Աստծու ծառաները ենթարկվում էին աղետների ու ճնշման, մինչդեռ հեթանոսները ծաղկում ու հզորանում էին: Անհրաժեշտ էր գտնել մի մեթոդ՝ բարեպաշտի տառապանքների իրողությունը կրոնական գիտակցության պահանջի հետ հաշտեցնելու համար: Այս մեթոդը գտնվեց պարականոն գրքերի հեղինակների գործերում և համաշխարհային պատմության՝ նրանց կողմից արված կրոնական մեկնաբանություններում: Արևելքի ու Արևմուտքի հետ շփումները զարգացրել են նրանց միտքը և նրանց ընտելացրել համաշխարհային պատմության ամենածավալուն շարժումներին:

Մարդկանց ճակատագիրը և ազգերի վերելքն ու անկումը ականատես եղան աստվածային ծրագրի աստիճանական զարգացմանը, ծրագրի, որի ամբողջական կատարումը ապագայում է: Աստծու արդարությունը պետք է շռայլորեն ապացուցվի, և նրա ժողովուրդը պետք է վրեժ լուծի հեթանոս ճնշումից: Չինականում որևէ մարգարեի անվանն առնչվող մի շարք տեսիլքներում ու հայտնություններում տրվում է համաշխարհային պատմության համառոտ գծապատկեր՝ մատնանշելով փառավոր ավարտը, որին կատարյալ վստահությամբ սպասում էին:

Այս գրվածքների ոճերի բազմազանությունն ու բովանդակությունը նշանակալից են: Որոշ գրվածքներ ուղղված են հեթանոսներին՝ ցույց տալու հրեական կրոնի գերազանցությունը և աստվածային պատվիրանների բարոյական պահանջներն արհամարհելու վտանգը: Մյուսները գրվել են հավատացյալներին մխիթարելու և քաջալերելու համար: Երրորդներն ամբողջապես խորհրդավոր են ու հայտնութենական, իսկ մյուսներում էլ ավելի լայնորեն է շարադրված օրենքը: Որոշ գրվածքներում ուշադրությունն ուղղվում է դեպի Իսրայելի փառքի ու իշխանության վերականգնումը: Մյուսներն ակնկալում են առավելապես մեսիական բնույթի թագավորություն, կյանքի հարություն, որի բնույթն ու տևողությունը փոփոխական են: Այս գրվածքները վճռական ազդեցություն են ունեցել հիշյալ դարաշրջանի և ամբողջ մի քանի դարերի հրեական կրոնական կյանքի զարգացման վրա: Պարականոն գրվածքները նախապատրաստել են հրեական կրոնի մեծ մտածողներին՝ ըմբռնելու Ավետարանն իր համընդհանուր օրենքով ու ապագայի փառահեղ տեսիլքով: Խթանել են նաև մարդկանց հայրենասիրական եռանդը, ովքեր ջանացել են ազատագրվել օտար լծից, եռանդ, որն ընդամենը հանգեցրեց Երուսաղեմի վերջնական կործանմանը:

Մեր կանոնի մեջ կարելի է հաշվել հայտնութենական գրականության երկու օրինակ՝ Դանիելի գիրքը՝ Չին Կտակարանում և Չովհաննու «Հայտնություն»-ը՝ Նոր Կտակարանում:

Դ. ՀՈԳԵՎՈՐ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Նախաբան

Հրեական ամբողջ կյանքը, ինչպես Հիսուսի ժամանակաշրջանում, այնպես էլ դրանից առաջ, նշանավորված է կրոնական ուժեղ արարողակարգով: Խոսենք դրանց վերաբերյալ ամենահայտնի տվյալներից մի քանիսի, ինչպես նաև իրականացման վայրերի ու այն անձանց մասին, ովքեր զբաղվում են դրանցով:

Բարեխոսության արարողի ընթացքում նախկինից էլ ավելի ուժեղ հոգևոր մի նշան է իշխում ազգի գոյության վրա: Հրեաները զրկված են Տաճարից և սովորական դարձած ծիսակատարություններից, բայց թլփատությունը կիրառվում է և խստորեն պահպանվում է շաբաթը: Բացի այս՝ քննության է առնվում Աստծու Օրենքը: Շատ հավանական է, որ կրոնական իրենց եռանդից դրդված՝ հրեաները ժողովներ են կազմակերպում՝ միմյանց քաջալերելու նպատակով: Այս հավաքները կայանում էին ժողովարաններում՝ վայրեր, որոնց մասին կխոսենք ավելի ուշ: Աքսորի շրջանում ծիսակատարությունը կարող էր լինել միայն ցրված անհատների գործ. այն չէր կարող լինել ազգային կրոնական արարողություն: Ահա թե ինչու այն շատ բան կորցրեց պաշտոնական բնույթից և ձեռք բերեց առավելապես անձնական բարեպաշտության բնույթ:

Աքսորից վերադառնալուց հետո, արարողակարգի նոր մշակման շնորհիվ, Տաճարը կրկին ականատես եղավ զոհողությունների մատուցման արարողությանը. զոհաբերությունը առավոտյան և երեկոյան մատուցվում էր մինչև Անտիոքոս Եպիփանես 4-րդի կառավարման շրջանը, նրա, ով, ինչպես տեսանք, պղծեց սուրբ վայրը՝ զոհաբերելու նպատակով այնտեղ մտցնելով մի խոզ:

Ողջակեզները (հունարենի *olokautoma*՝ ամբողջությամբ այրված զոհ) և մեղքերի թողության համար արված զոհաբերությունները մատուցվում են շաբաթ օրը և նորալուսնին, ինչպես նաև տարվա մեծ տոներին: Տարիներ, անգամ դարեր շարունակ գոյություն ունեցող և աքսորից առաջ նշվող տոներին, մասնավորապես՝ Փուրիմի տոնին, որով հիշվում է հրեաների՝ պարսկական պալատի թագուհի Եսթերի միջնորդությամբ ազատվելու փաստը, կավելանան ուրիշ տոներ ևս, նաև՝ Նավակատիքի տոնը, որը նշանն է Ք. ա. 165 թ. Հուդա Մակաբեի կողմից Տաճարի մաքրման:

Այս ծիսակատարություններին, սակայն, ավելանում են այլ տարրեր, հատկապես՝ Սփյուռքում ժողովարանների ավելացման հետ կապված: Դրանց մեջ՝ մարգարեական գրքերի և Թորայի, ինչպես նաև գովաբանություններով և ողորմածության գործողություններով ուղեկցվող աղոթքի ուսումնասիրություն: Այս շրջանի վախճանաբանական հայեցակարգերի համաձայն՝ մահացածների համար տրվող աղոթքը, թվում է, տարածում է գտել Ք. ա. II դարի ընթացքում: Ծագումը կապվում է հեթանոսների ազդեցությանը և մահացածների գերեզմանի վրա վերջիններիս մատուցած զոհերին: Տարբերությունն այն է, որ հրեական հավատքը ներշնչվում է ավելի վեհ գաղափարներից, և աղոթքներն ուղղված են ոչ թե մահացածներին, այլ Աստծուն, սակայն՝ նրանց անվամբ: Միջնորդությունից օգտված հոգիները կարող էին իրենց հերթին նեցուկ լինել ողջերին: Բացառությամբ սակավաթիվ բարեպաշտների շրջանակի՝ հրեական կրոնը վերածվեց զուտ ձևապաշտության և ուղղափառ համա-

կարգի: Աստվածային տրանսցենդենցիայի գաղափարն իսկ թվում է բավականին ձևափոխված, քանզի բարեպաշտները պատկերացնում են դատողությունների մեջ առավելապես կամայական մի Աստծու: Օրենքի խստիվ պահպանումը միայն, օրենք, որը լսվում է և կիրառվում իբրև խիստ ուղղափառ կանոնների ամբողջություն, ինչպես ասում են՝ փարիսեցիների ձևով, կարող էր ապահովել արդարացումը: Նույն ձևապաշտությամբ դիմեցին նաև արտաքին, անգամ երեսպաշտ միջոցների՝ կանխելու անհաջողություններն ու այլ բացթողումներ: Եվ այսպես, Թորայով ու ավանդույթներով չնախատեսված բարեպաշտ գործերը և ավելորդ մանրամասների մանրազնին ուսումնասիրությունը բարեպաշտ մարդուն, այսինքն՝ փարիսեցուն, կդարձնեն գոռոզ և ինքն իրեն արդարացնող մարդ: Բարեպաշտության այս խեղաթյուրման դեմ է, որ Հիսուսը խիստ կըմբոստանա:

2. Տաճարը

Ամեն տեսակետից Տաճարը Իսրայելի կյանքի կենտրոնն է: Առաջինը, ինչպես հիշում եք, կառուցվել է Սողոմոնի օրոք և կործանվել VI դարի սկզբին (586 թ.)՝ Նաբուգոդոնոսորի բանակների կողմից Երուսաղեմը գրավելու ժամանակ:

Երկրորդ Տաճարը բարձրացավ Աքսորից հետո՝ Չորրբաբելի կառավարման ժամանակ՝ Ազիա մարգարեի տված հոգևոր խթանի շնորհիվ: Ունենալով համեստ չափեր, այն կկործանվի՝ պղծվելով հեթանոս կայսեր կողմից: Երրորդ և վերջին Տաճարը Քրիստոսի ժամանակակիցն է, կառուցվել է, թեպետև կառուցումն ամբողջությամբ ավարտին չի հասցվել, Հերովդես Մեծի ջանքերով: Կործանվել է քրիստոնեական դարաշրջանի 70 թվականին՝ Երուսաղեմի պաշարման ժամանակ: Հրեա պատմաբան Փլավիոս Հովսեպոսը *շենքը* նկարագրում է հետևյալ խոսքերով.

«Տաճարի արտաքին տեսքի մեջ չկար ոչինչ, որն ապշեցուցիչ չլիներ մտքի ու հայացքի համար: Եվ, իրոք, բոլոր կողմերից պատված լինելով ոսկու հաստ շերտերով, արևը բացվելուն պես Տաճարն անդրադարձնում էր լույսը այնպիսի ուժգնությամբ, որ նայողներին ստիպում էր հայացքը թաքցնել, ինչպես արևի շողերից: Դրսից ժամանած օտարականներին հեռվից այն թվում էր ձյունապատ սար, քանզի այն մասերը, որոնք ոսկեպատ չէին, ծածկված էին ամենասպիտակ մարմարներով: Կատարին վեր էին խոյանում ոսկյա սուր ցցեր, որոնք թռչուններին խանգարում էին վայրէջք կատարել այստեղ և կեղտոտեծ կտուրը»¹:

Հրաշալի այս տպավորությունը արտահայտում են նաև ժամանակի այլ վկայություններ: Հիսուսի ժամանակակիցները պետք է, որ հիշած լինեին, երբ հասնելով բլրի գագաթ՝ այստեղից երևացող քաղաքի կենտրոնում հայտնաբերում էին տասնհինգհարկանի տան բարձրությանը համարժեք, 50 մետրանոց մի աշտարակ, որը վեր էր խոյանում 480 մետր երկարություն, 300 մետր լայնություն ունեցող ընդարձակ հողահարթակին՝ կախվելով քաղաքի մեծ մասի վրա, քաղաք, որն իր հերթին շրջապատված էր իսկական ամրոցապարիսպ կազմող պատով: Մտնենք հողահարթակ. այս/տեղ մուտք ունեն թե՛ հրեաները, թե՛ հեթանոսները: Նկատելի են երկու հսկայական դռներ, որոնց տակ տեղավորված են եզներ, ոչխարներ, ղավմիներ, ձեթ ու օճառ վաճառողները. նշված ապրանքներն անհրաժեշտ էին ծիսակատարության համար: Չմոռանանք ասել՝ նաև դրամափոխները, քանզի այսպի-

¹ Flavius Josephus, Cuerre des Juifs, v. 222-224.

սի մասնագիտության առկայությունն անհրաժեշտ էր դառնում Պաղեստինի ներսում տարբեր դրամների շրջանառության պատճառով: Տաճարի պաշտոնական դրամը ստեղծվել է Ալեքսանդր Յաննենուսի կողմից (Ք. ա. 103-76 թթ.) և ունի նույն կշիռը, ինչ Տյուրոսի դրամը (այս պատճառով էլ կոչվում է «Տյուրոսյան դրամ»): Հողահարթակի կենտրոնը ընդհանուրի համեմատ բարձր է. քարակոթողների վրայի հունարեն ու լատիներեն արձանագրությունները, մահապատժի սպառնալիքով, արգելում են չթլփատվածների մուտքը: Աստիճաններով բարձրանում ես կենտրոնական հարթակ, որի վրա բարձրանում է Տաճարի շենքը: Այստեղ կարելի է մտնել ինը շքամուտքով, չորսը՝ հյուսիսում, չորսը՝ հարավում և մեկը՝ արևմուտքում: Այս ինը շքամուտքերը «ամբողջ մակերեսով ծածկված էին ոսկով ու արծաթով: Ոսկուց ու արծաթից էին նաև հենակներն ու սողնակները. միայն մի շքամուտք՝ սրբարանի արտաքին մասում, Կորնթոսի բրոնզից էր և արժեքով խիստ գերազանցում էր ոսկեպատ ու արծաթապատ շքամուտքերին: Յուրաքանչյուր մուտք ուներ երեսուն կանգուն (15 մետր) երկարությամբ և տասնհինգ կանգուն լայնությամբ երկուական դուռ», - գրում է Հովսեփոսը: Կորնթական այս դուռը, հավանաբար, «Գործք Առաքելոց»-ում հիշատակված (3:2) Գեղեցիկ դուռն է: Այնուհետև անցնում են կանանց, հետո տղամարդկանց ու քահանաների գավիթներով. վերջինս շրջապատում է զոհասեղանը: Ձոհասեղանի հետևում վեր է խոյանում բուն Տաճարը՝ 50 մետր երկարությամբ, բարձրությամբ ու լայնությամբ խորանարդ հիշեցնող կառույց: Ներսում՝ Սուրբ կոչված սրահի զոհասեղանի կենտրոնում, պահվում էին օծանելիքներ, սեղանի ձախ կողմում՝ նշխարը կամ զոհաբերության հացը, աջ կողմում՝ յոթյուղանի մոմակալը: Սուրբ Սրբոցն, ինքը, ամբողջապես դատարկ է (Սողոմոնի Տաճարում այստեղ էր ուխտի տապանակը): Փակված էր ոչ թե պատով, այլ կրկնակի վարագույրով (Տաճարի շղարշը): Միայն քահանայապետն իրավունք ուներ, թեև մեծ վախով, տարին մեկ անգամ՝ Քավության օրը, մտնել այնտեղ: Սա Տիրոջ ներկայության վայրն է հենց: Տաճարի պատին կից կան մի քանի շինություններ. ատյանի դահլիճը, արարողությունների համար նախատեսված փայտի, գինու, ձեթի պահեստները, գանձատունը: Ձարդարվեստային այլ տարրեր, ինչպես ասենք, ոսկուց պատրաստված խաղողի մարդաբոյ ողկույզներ կարելի է տեսնել ճակատային մասում, ինչպես նաև հեռավոր երկրներից ներմուծված թանկարժեք կտորների վրա արված բազմաթիվ զարդանկարներում:

Երբ Հովսեփոսը խոսում է սպիտակության ու ոսկու փայլի մասին, ապա գույները բավականին խտացնում է այն դեպքում, երբ քահանաները (զոհասեղանի այս մասը թափանցելու համար իրավունք ունեցող միակ մարդիկ) կանոնավորապես չեն մաքրում պատերը. զոհասեղանն, իրոք, աղտոտման լուրջ օջախ է, այն ընդհանուր ոչ մի եզր չունի հռոմեական եկեղեցիների զոհասեղանների հետ: 25 մետր կողեր և 7,5 մետր բարձրություն ունեցող քառակուսի այս զոհասեղանը, որտեղ կարելի է մտնել աստիճանով, ավելի շատ հիշեցնում է թափուկների վերաօգտագործման համակարգից և ծխի զտումից զուրկ դիակիզարան. չէ՞ որ *արարողության* էությունը զոհն ամբողջությամբ (ողջակեզ) կամ էլ գոնե ներքին օրգաններն ու ճարպը այրելն է (մեղքերի թողության և հաղորդության համար մատուցվող պարագաներ): Միայն կաշին է, որ չեն այրում. այն վերցնում են քրմերը: Կրակ վառելու համար օգտագործում են համեմատաբար թանկարժեք փայտ՝ խունկի հետ, որի բույրը չեզոքացնում է ածխացող մսի հոտը:

Ամեն օր, իբրև Իսրայելի կողմից Աստծուն մատուցվող հավերժական զոհ, զոհաբերում են մեկ տարեկան երկու գառ. մեկն՝ առավուտյան, մյուսը՝ երեկոյան: Հռոմեական կայսրը, իբրև զոհ, մատուցում էր (սեփական ծախսերով) նաև երկու անասուն (հայտնի չէ, թե ինչ կենդանի էին). մեկը՝ իր, մյուսը կայսրության համար: Իմիջիայլոց, նշենք նաև կարևոր մի տարբերություն. այն դեպքում, երբ կայսրության բոլոր մյուս ժողովուրդները պարտավոր են զոհ մատուցել հանուն կայսեր, այս կայսրությունում զոհ է մատուցվում նաև նրա անունից: Մեզ հայտնի չէ պաշտոնական այս արարողությունների ճշգրիտ կարգը. եթե քահանայապետը, ճակատագրի բերումով, իրականացրել է արարողությունը, ապա հնարավոր է, որ մյուս քահանաները օգնել են նրան, և որ գործին միջամտել են նաև ղևտացի երաժիշտները: Օրվա մնացած ժամանակ իրար են հաջորդում մասնավոր զոհողությունները. ճշգրիտ թիվն այստեղ ևս հայտնի չէ, բայց պետք է, որ բավականին մեծ լինի, հատկապես ամառվա (ճանապարհորդությունների) շրջանում և, մասնավորապես, խոշոր ուխտագնացությունների ժամանակ: Եթե մ. թ. ա. 20 թվականին, Հերովդեսը որոշել էր մեծացնել Տաճարը, ապա պատճառն, իհարկե, զուտ քաղաքական էր, քանզի ուզում էր արժանանալ հրեաների բարեհաճությանը: Սակայն վերջիններս չկարողացան ընդունել այս ձեռնարկումը. այն, հավանաբար, առաջ էր բերել ծիսական բնույթի խնդիրներ և արարողությունները պահպանելու հետ կապված դժվարություններ, եթե չէր համապատասխանել իրական պահանջի: «Գործք Առաքելոց»-ի 21:26 հատվածից կարելի է ենթադրել, որ զոհ մատուցելու համար պետք է նախապես պայմանավորվել: Ճշմարիտ է նաև այն, որ «Գործք Առաքելոց»-ի 20-16 հատվածում ակնարկվում է, որ Պողոսը եկել է ուխտագնացության ժամանակ, սակայն սրանից չի կարելի եզրակացնել, թե քահանաները չէին դադարեցրել իրենց ծառայությունը:

Ձոհ մատուցել ցանկացող իսրայելցին նախ մտնում է Տաճար՝ գնելու բոլոր զոհաբերությունների համար անհրաժեշտ այլուր և ձեթ: Այնուհետև մտնում է երկրորդ գավիթ և ուղղվում դեպի Իսրայելի գավիթը: Նա ներկայանում է մի քահանայի, որին կարելի է ճանաչել հատուկ հագուստի (սպիտակ վուշե հագուստ) շնորհիվ: Վերջինս նրան տանում է քահանաների գավիթով, որով աշխարհիկ մարդը, հանգամանքների բերումով, կարող է գնալ մինչև զոհասեղանի մոտ: Եթե Նոր Կտակարանում զոհաբերողն ինքն էր մորթում զոհը, ապա թվում է, թե մեր թվարկության առաջին դարում այս գործը դրվել է քահանայի վրա՝ բացառությամբ Ձատկի գառան դեպքի, որը մորթվում է ընտանիքի գլխավորի կողմից, քանզի, ըստ Փիլոն Ալեքսանդրացու, այդ երեկո ամբողջ ժողովուրդն է ոտքի ելել հանուն քահանայական արժանապատվության: Այնուհետև կենդանին, ըստ օրենքի, մասնատվում է: Այս արարողություններն ուղեկցվում են մեզ անհայտ աղոթքներով ու օրհնություններով: Ձոհ կարող են մատուցել նաև կանայք ու չթլփատվածները, սակայն նրանց արգելվում է մտնել Տաճարի ներսը. նրանք չեն կարող ուղեկցել և օգնել քահանային:

3. Սրբության շրջանակները

Քիչ առաջ խոսեցինք որոշակի վայրերի՝ գավիթների (կանանց, իսրայելցիների) մասին, և դա մեզ մղում է ավելի խորությամբ քննության առնել սրբության հրեական ըմբռնումը: Հազիվ թե ծաղրի վերածելով՝ կարելի է ասել, որ Իսրայելի համար միայն Աստվածն է Սուրբ,

Մաքուր, Բաժանված, Կատարյալ, իսկ մարդը և, ընդհանրապես, ստեղծագործությունը պիղծ է, անմաքուր, անգամ հասարակ, անկատար: Սովորական մոտիկությունը կամ ֆիզիկական շփումը ինչ-որ բան փոխանցելու կամ վարակելու վտանգ է պարունակում: Մարդն իր նմանին կարող է փոխանցել սեփական արատավորությունը, այլ ոչ թե սրբությունը: Աստված իր սրբությունն է հաղորդում իրեն մոտեցող ամեն մեկին, սրբություն, որն Աստծուց հեռանալուն զուգընթաց, ավելի ու ավելի է ցրվում և թուլանում: Այս բանը կարելի է ներկայացնել համակենտրոն շրջանների տեսքով: Կենտրոնում գերագույն սրբության վայրն է, վայր, որն Աստված լցրել է իր փառքով (Ա. Թագավորաց 8:10): Սուրբ Սրբոցը: Այնուհետև գալիս է Սրբարանը, որտեղ իրավունք ունեն մտնել միայն քահանաները, հետո՝ զոհասեղանը, որի վրա մատուցվում են ամեն տեսակի պատարագներ, այնուհետև՝ զոհասեղանի ու Սրբարանի միջև ընկած տարածությունը, որտեղ մտնելու իրավունք ունեն միայն քահանաները, իսկ հետո՝ քահանաների գավիթը, որտեղ մուտք ունեն արարողության համար ոչ պիտանի, ամեն առունով հաշմանդամ քահանաները: Հինգերորդ և վեցերորդ դիրքերում չափահաս իսրայելցիներն են, այնուհետև՝ կանայք: Հեթանոսները վերջինն են թափանցում այս շրջան: Շրջաններն իրենք էլ ներառվում են շատ ավելի լայն համատեքստի մեջ: Տաճարի՝ գերագույն սրբության վայրի շուրջը Երուսաղեմ քաղաքն է, հետո Իսրայելը և, վերջապես, աշխարհի մնացած մասը:

Ելնելով իր վիճակից՝ թլփատված կամ չթլփատված, մաքուր կամ անմաքուր՝ մարդը կարող է այս կամ այն չափով առաջ ընթանալ սրբության այս «աստիճաններով»: Քանի դեռ նա իրեն հատկացված սահմաններում է, չկա ոչ մի խնդիր, բայց երբ անցնում է այս սահմանները, նրա անմաքրությունը «պղծում է» այն վայրը, որտեղ մտել է անպատշաճ ձևով և այդժամ խզում է Տիրոջ կամեցած հավասարակշռությունը: Գիշտ այսպես էլ, եթե Հիսուսը բուժման նպատակով ձեռք է տալիս բորոտներին, ապա ուզում է մաքրել նրան, տալ իր սրբությունը, մինչդեռ հրեաներից ստանում է միայն պղծություն:

4. Ժողովարանը

Տաճարն այն վայրն է, որտեղ բեռնանում է Իսրայելի կրոնական, քաղաքական, տնտեսական կյանքը: Սակայն առօրյա կյանքում մեծ նշանակություն է ձեռք բերել մեկ այլ հաստատություն՝ ժողովարանը: Գոյություն ունի միայն մեկ Տաճար, որտեղ բարձրանում են որոշակի առիթներով (առնվազն՝ կյանքում մեկ անգամ, եթե ապրում ես Պաղեստինից հեռու): Սակայն ամենափոքր գյուղն անգամ ունի իր ժողովարանը, և այստեղ են դարբնվում Իսրայելի մտայնությունն ու բարեպաշտությունը:

Ինչպես «եկեղեցի» բառը, «ժողովարանը» ևս, թվում է, ամփոփում է երկու իրողություն. հավատացյալների աղոթքի համար նախատեսված ժողով և նյութեղեն շենք, որտեղ այն կայանում է: «Գործք Առաքելոց»-ի 16:14 հատվածում ակնարկվում է, որ շենքն երկրորդական է ժողովի համեմատ:

Ընդհանուր առմամբ, ժողովարանը դեպի Տաճար ուղղված ուղղանկյուն *շենք* է: Հիմնական կահավորանքը մի պահարան է, որի մեջ խնամքով պահվում են Թորայի և Մարգարեների փաթեթները: Որոշ ժողովարանների պատերի երկայնքով դրված են քարե կամ փայտե նստարաններ: Այս շենքն օգտագործվում է առավելագույն չափով և ոչ միայն շաբաթօր-

յա արարողության համար: Ժողովարանն արագորեն դառնում է երեխաների ու երիտասարդների դաստիարակության վայրը: Ո՞ւմ է պատկանում այս շենքը: Սովորաբար թվում է՝ տեղական համայնքին. յուրաքանչյուր ոք մասնակցում է նրա կառուցման ու պահպանության գործին: Սակայն պատահում է, որ ժողովարանը մեկ անհատի սեփականություն է, որը տրվել կամ նվիրվել է համայնքին:

Ժողովարանային հավաքների ակունքներին ծանոթ ենք միայն գրական աղբյուրներից, որոնք, հատկապես այս հարցում, աղոտ տեղեկություններ են տալիս: Եշմարիտ է թվում այն, որ նշված հավաքների ակունքը պետք է փնտրել բաբելոնյան Աքսորի մեջ: Ինչպես արդեն նշել ենք, ազգային այս աղետը ցավալի փորձություն եղավ հավատքի համար՝ տեղի տալով ընդհուպ մինչև ուրացությունների, Տաճարի ավերմանն ու արարողությունների դադարեցմանը: Թվում է՝ արարողությունների դադարեցումն ապացույց է այն բանի, որ բաբելոնյան աստվածներն ուժեղ էին Իսրայելի Աստծուց: Սակայն Երեմիայի և, հատկապես, Եզեկիելի (որը հրեաների հետ միասին տարագրության մեջ էր) քարոզներով սնված հրեաները մեկ ուրիշ իմաստ են հայտնաբերում կատարվածի մեջ. Աստված չի լքում իր ժողովրդին, ընդհակառակը՝ փորձում է նրան մաքրել: Պաշտոնական արարողությունն արտահայտվում է ներկա և անցյալ իրադարձությունների և աղոթքի վրա կենտրոնացված խորհրդածությամբ: Հավատացյալներն, ըստ կարելվույն, սկսում են հավաքվել՝ փոխադարձաբար վերակենդանացնելու ընդհանուր հավատքը աստվածային միջամտության հանդեպ: Քահանաներն, անշուշտ, կարևոր դեր են խաղում, և վերադարձից հետո խորհրդածության այս ամբողջ ջանքը լայնորեն նպաստում է քահանայական ավանդույթի ձևավորմանն ու դարաշրջանի գրական ակտիվ գործունեությանը: Պատահում է, որ խորհրդածելու նպատակով հավաքվում են քաղաքի մերձակայքում կամ էլ գետափին:

Այս հավաքների սովորույթը, արդյոք, Պաղեստինում պահպանվե՞լ է վերադարձից հետո: Նախ՝ սկսեցին վերակառուցել Տաճարը և վերականգնել պաշտոնական արարողությունը: Սակայն հենց Պաղեստինում էլ ժողովարանային այս շարժումը, թվում է, զարգանում է Եզրասի և Նեեմիայի ազդեցության տակ. Նեեմիայի նկարագրությունը (8) մնան հավաքի գեղեցիկ օրինակ է: Բաբելոնում մնացած հրեաներն ու նրանք, ովքեր ցրված են այն ժամանակ հայտնի ընդարձակ աշխարհում (Սփյուռքում), իրենց հերթին զգում են այս ժողովների կարիքը, հավաքներ, որոնք անհրաժեշտ են Տիրոջ նկատմամբ հավատքը պահպանելու և ընտրյալ ժողովրդին մշտապես պատկանելու գիտակցությունը հաստատելու համար: Շարժումն ընդհանրանում է, և մեր թվարկության առաջին դարում հրեական յուրաքանչյուր համայնք ունենում է սեփական ժողովարան: Այնպիսի քաղաքներ, ինչպիսիք են Երուսաղեմը, Հռոմը, Ալեքսանդրիան կամ Անտիոքը, ունեն մեծ թվով ժողովարաններ (համաձայն ռաբբիական ավանդույթի՝ 480-ը Երուսաղեմում): Այս դարաշրջանում կարծում են, թե ժողովարանը նույնպիսի վաղեմություն ունի, ինչ ժողովուրդն ինքը:

Ժողովարանում արարողության ընթացքը կենտրոնացված է աղոթքի և Սուրբ գրքերի շուրջ խորհրդածությանը: Սկսում են Shema-ի՝ Իսրայելի հավատո հանգանակի արտասանությամբ: Իսկույններ հաստատում են Աստծու միաբանությունն ու իր ժողովրդի հետ նրան միացնող չափազանց ուժեղ կապը: Հետո արարողությունն իրականացնողի պատասխանատվությամբ՝ արտասանվում են մի քանի աղոթքներ, որոնց հանդիսավոր «ամեն»-ով մի-

անում են բոլոր հավաքվածները: Աղոթքները վերաբերում են և՛ առօրյա կյանքի կարիքներին, և՛ մեսիական դարաշրջանի հաստատումը տեսնելու ժողովրդի ցանկությանը: Տալմուդը մեզ է փոխանցել Shémoneh Eshré՝ «տասնութ օրհնություն» կոչված աղոթքը, բայց նաև սիրում է համակարգել տարրեր, որոնք մշտապես այսպիսին չէին առաջին դարում: Որոշ օրհնություններ հաստատապես հաջորդում էին Տաճարի ավերմանը, և այս աղոթքի հայտնի երկու տարբերակներ նույնական չեն: Ահա թե ինչու հարց է առաջանում առաջին դարում գործ չունե՞նք առավելապես աղոթքի հենքի, քան թե հաստատված տեքստի հետ: Այնուհետև ընթերցվում է Աստծու խոսքը: Խոսքն անպայմանորեն թորայի տեքստի մասին է: Անգիր արտասանելու մասին հարց չկա. պետք է կարդալ եբրայերեն տեքստը: Սակայն շատ հրեաներ չգիտեն կամ այլևս չգիտեն իրենց դասական լեզուն: Ուստի, բանաստեղծական յուրաքանչյուր տողից հետո ընթերցողը դադար է տալիս, և համայնքի մեկ այլ անդամ այս տողը թարգմանում է արամերեն: Թարգմանությունը երբեմն տառացի է, բայց հաճախ հարասությունների միջոցով կապ է հաստատվում աստվածաշնչական ուրիշ հատվածների հետ և կամ էլ ներմուծվում է մի ամբողջ աստվածաբանություն: Դա Targum-ն է: Արական սեռի չափահաս, այսինքն՝ տասներկու տարեկանից բարձր յուրաքանչյուր հրեա կարող է ընթերցել Թորան: Անկասկած, տրվում է որոշ ազատություն՝ ընտրելու ընթերցվող հատվածը, թեև տոներից առաջ փնտրում են այնպիսի տեքստեր, որոնցում խոսվում է տվյալ հանդիսության մասին: Յուրաքանչյուր շաբաթվա համար ընտրվող հատվածների ցուցակը հաստատվում է շատ ավելի ուշ: Հետո, նույն սկզբունքներով, բայց էլ ավելի լայն ընտրությամբ՝ ընթերցվում են մարգարեական որոշ հատվածներ: Հաճախ տեքստը, հատկապես մարգարեական տեքստը, ընտրվում է Թորայի ընթերցանության հետ կապված, բայց համակարգումը կատարվում է էլ ավելի դանդաղ: Այս ընթերցումից առաջ կամ հետո կարդացվում է քարոզ, որ կարող է անել չափահաս յուրաքանչյուր հրեա: Թվում է, թե այս քարոզը հաճախ իրենից ներկայացնում է աստվածաշնչյան տեքստի բացատրական հարասություններ՝ ցանկացած համատեքստից կամ պատմական բնույթի ցանկացած դիտարկումից դուրս վերցված մեջբերումների օգնությամբ: Այս մեկնաբանությունները միաժամանակ և՛ հուզավառություն են, և՛ Ամենաբարձրյալի փառաբանում, ամբողջ ժողովրդին տրված աստվածաբանական գիտելիքների և Օրենքի համաձայն ապրելու հորդոր: Արարողությունը սրանով ավարտվում է:

Այս պատարագը զոհաբերության ոչ մի տարր չի բովանդակում. քահանան այստեղ չունի որոշակի որևէ դեր, եթե ոչ՝ օրհնության համար, որն արվում է առաջին մասի վերջում և որը, սովորաբար, նրան է հատկացված: Եթե քահանա չկա, նրան փոխարինում է ժողովի նախագահը:

Յուրաքանչյուր հրեա կարող է ընթերցել Թորան և մեկնաբանել, սակայն բոլորը չէ, որ դա անում են. մանր արհեստավորը կամ գյուղացին, որն ամբողջ շաբաթ ֆիզիկական աշխատանք է կատարել, խոսելու համար հաճախ անհրաժեշտ չափով իրազեկ չէ և պետք է որ ուրախ լինի՝ տեղը զիջելու ավելի իրավասու մեկին (դպիրի) կամ էլ պատահական որևէ անձի: Գործնականորեն, մշակութային այս հավաքույթներին աշխուժություն են հաղորդում դպիրներն ու փարիսեցիները: Հավաքները նրանց հնարավորություն են տալիս տարածել իրենց գաղափարները և մեծացնել ազդեցությունը ժողովրդի մեջ: Առանց ժողովա-

րանի՝ նրանք երբեք չէին ունենա այն դերը, որ ստանձնել են և հեղինակությունը, որ վայելում են: Ընդհանուր աղոթք կարդալու համար հարկ է համախմբել առնվազն տասը չափահաս ազատ մարդկանց, այլապես աղոթքը չի կարողացվի: Լինում է այնպես, որ կարգադրագրով հրեա որևէ ստրուկ ազատ է արձակվում ժամանակից շուտ. առանց այս գործողության մասնակիցների նվազագույն թիվը չէր ապահովվի:

5. Տոները

Իսրայելում երեք տոն խաղում են կարևոր դեր: Դրանք այնպիսի պահեր են, երբ ժողովուրդը ձգտում է հավաքվել՝ դրսևորելու իր անդամներին միավորող համերաշխություն և տոնելու Տիրոջ՝ ժողովրդի Ազատարարի խոշոր միջամտությունները: Խոսքն ուխտագնացության երեք՝ Չատկի, Յոգեգալստյան և Տաղավարահարաց կամ Վրանների տոների մասին է:

ա) Չատիկ

Չատիկը տոնվում է ի հիշատակ Եգիպտոսից ազատագրվելու: Չատկի տոնի օրը 180 հազար ուխտավորներ հավաքվում են քաղաքում, որտեղ սովորական պայմաններում բնակչության թիվն ընդամենը, գուցե, 25 հազար է: Բոլոր այս ուխտավորները չեն կարող մնալ սուրբ քաղաքում, ուստի հանգամանքների բերումով քաղաքի սահմաններն ընդարձակվում են: Նիսանի 14-ի երեկոյան ընտանիքի առաջնորդները մատաղացու գառով գալիս են Տաճար: Յետո յուրաքանչյուրը վերադառնում է իր տուն, որտեղ մաշկում են կենդանուն ու խորովում: Այս ընթացքում տանտիրուհին տնից հանում է այն ամենը, ինչը կարող է հիշեցնել թթխմորով հաց, պատրաստում է առանց թթխմոր բաղաբլի և եռացնում դառը խոտեր: Տոնական ճաշն սկսվում է. այն ընդունում են հռոմեական ձևով՝ բազմոցների վրա փռված դիրքով: Գինին պարտադիր է: Եթե որևէ մեկն աղքատ է՝ գինի ծեռք բերելու համար, Տաճարը նրան տալիս է այնքան գինի, որքան անհրաժեշտ է կանոնով սահմանված չորս գավաթները լցնելու համար: Գաշի ընթացքում ամբողջ ընտանիքը երգում է Hallel-ի Սաղմոսները (113-118), իսկ հայրն օրհնություններ է կարդում գինու թասերի վերաբերյալ:

Երեխաները զարմացած հարցեր են տալիս. «Ինչի՞ համար է այս ամենը»: Այդ ժամանակ հայրը նրանց բացատրում է տարբեր ծեսերի իմաստը և զարգացնում հատկապես Եգիպտոսից դուրս գալու ժամանակ Աստծու միջամտության մասին հուշը:

Յաջորդ շաբաթ վայելքների օրեր են Աստծու առջև: Տիրում է այնպիսի աշխուժություն, որ հռոմեական կայսրը, որին միշտ մտահոգում է կարգուկանոնի խնդիրը, ստիպված է լինում լքել ծովափնյա Կեսարիա քաղաքը՝ իրավիճակն ավելի մոտիկից հսկելու համար: Յովսեփոսը նշում է, որ 66 թ. հրեական խռովության հիմնական նախանշաններն եղել են հենց այսօրինակ ուխտագնացությունների առիթով:

բ) Յոգեգալստյան տոն

Ինչպես ցույց է տալիս բառի հունական ստուգաբանությունը, այս տոնն ընկնում է Չատկից 50 օր հետո (2-րդ Օրինաց 16:9): «Ելից»-ն այն անվանում է հունձքի կամ շաբաթների տոն: Այս տոնակատարության հետ կապված է Սինայի ուխտը. առիթ՝ ուխտը վերականգնելու համար:

գ) Կրանների տոնը

Համաձայն դևտագիների 23:4 հատվածի՝ այս տոնը հիշեցնում է, որ Եգիպտոսից դուրս գալու ժամանակ Աստված Իսրայելի զավակներին բնակեցրել էր վրանների տակ: Սողոմոնի տաճարի օծումը զուգահեյալում է այս տոնակատարությանը: Սա բոլոր տոներից ամենից ավելի տեսարանային է: Տոնի առթիվ, Երուսաղեմի անմիջապես մերձակայքում, ամեն ընտանիք ճյուղերից պետք է կառուցի վրան և նրա տակ ապրի մեկ շաբաթ (Հովհաննես 7:37):

Մյուս տոներից հիշատակենք Քավության օրը, Rosh Hoshanah-ը, Նավակատիքի տոնը, Փուրիմը:

դ) Շաբաթը

Աստծու տոները (Ղևտաց. 23:4) բառ առ բառ Աստծու տարեկան ժամադրություններ են, որ ժամանակը սրբազնացնելու նպատակով նա պարզաբանում է իր ժողովրդին: Շաբաթը խաղում է նույն դերը՝ հարմարվելով, սակայն, ամբողջ շաբաթվա ռիթմին:

Շաբաթ օրվա կրոնական արժեքը զարգացվել է երկու ուղղություններով: Սեկով շեշտվում է հասարակական տեսանկյունը. մարդը, առանձնապես ստրուկը, պետք է կարողանա հանգստանալ: Շաբաթվա ազատագրող այս տեսանկյունը կապված է Գաղթի ժամանակ Աստծու կողմից պարզաբանում ազատությանը: Շաբաթը նույնպես կապված է ստեղծագործությանը. յոթերորդ օրը Աստված դադարեցրեց իր գործը, բառացիորեն՝ շաբաթ «արեց»:

Շաբաթ օրվա կիրառությունը տարիների ընթացքում ավելի ու ավելի համակարգվեց՝ ձգտելով դառնալ երբեմն մի տեսակ բացարձակ բան՝ ծանրորեն կախվելով մարդու գլխին. «Շաբաթը ստեղծվել է մարդու համար, այլ ոչ թե մարդը՝ շաբաթվա համար (Մարկոս 2: 27)»:

ե) Կրոնական ու քաղաքացիական օրացույց

Աստղագիտական ճշգրիտ գիտելիքների բացակայության պատճառով հին աշխարհի մարդիկ չէին կարող կարդալ իրենց օրացույցները՝ առանց լուրջ անճշտություններ թույլ տալու: Հնարված և ոչ մի մեթոդի միջոցով չէր հաջողվում իրականացնել ժամանակի այնպիսի բաժանում, որը տարվա ընթացքում ինչ-որ դատարկ տեղ չթողներ: Եգիպտացիներն, օրինակ, իրենց հաշվարկների համար իբրև հիմք էին ընդունում օրը: Նրանք մեզ պես հաշվում էին տարեկան երեք հարյուր վաթսուհինգ օր և տարին բաժանում էին երեսունական օր ունեցող տասներկու ամիսների՝ առանց հաշվի առնելու լուսնային ամիսները: Այսպիսով, մնում էր ամիսների կազմի մեջ չմտնող հինգ օր: Հին եբրայեցիների հաշվարկների հիմքում ընկած է տարին, որի տևողությունը խստորեն սահմանված չէ, ինչպես արել են Եգիպտացիները, բայց որը, սակայն, գործնականում, բավականաչափ սահմանազատում էր տարվա եղանակների կանոնավոր գալուստը: Տասներկու ամիսները, ինչպես ավելի ուշ՝ մուսուլմանների մոտ լուսնային ամիսներ էին, որոնք հաջորդում էին միմյանց: Ոչ ոք, սակայն, իրեն նեղություն չէր պատճառում տարվա սկիզբը համատեղել որևէ առաջին ամսվա առաջին օրվան: Մի խոսքով, մի կողմից՝ տարիները, մյուս կողմից՝ ամիսներն անցնում էին, և ոչ ոք չէր փորձում դրանք դարձնել համաժամանակյա: Այս համակարգի անհարմարությունն ի հայտ էր գալիս տարվա մեջ, ժամանակ առ ժամանակ, տասներեքերորդ ամիսներն ունեցնելու անհրաժեշտությամբ:

Հին ժամանակներում իսրայելական տարին ավարտվում էր աշնանով: Դա գյուղատնտեսական տարի էր: Գյուղատնտեսական կյանքի փակման շրջանը, բնականաբար, վերջին բերքի ամբարումն էր: Տարվա բոլոր տոների շրջափուլն ավարտվում էր բերքի տոնով (տես՝ Ելից 23:16, 33:32): Աքսորի տագնապը, այս և շատ ու շատ ուրիշ հարցերի վերաբերյալ իսրայել ներմուծեց նորանոր սովորություններ: Բաբելոնցիների գիտական և ավելի հավասարակշիռ օրացույցի ընդունումը զայթակղիչ էր դառնում տարագրյալների համար: Այսպես, օրինակ, տարվա սկիզբը աշնանից տեղափոխվեց գարուն՝ համընկնելով Ջատկի տոնին (Ելից 12:2): Ավելի ուշ, Սելևկյանների օրոք և նրանց օրացույցի ազդեցությամբ՝ վերադարձան (զոնե քաղաքացիական կյանքում) աշնանով սկսվող տարուն, սակայն պահպանելով գարնանն սկսվող կրոնական տարի:

Լուսնային ամիսը կազմված էր մերթ քսանինը, մերթ երեսուն օրից: Փոփոխական այս տևողությունը կախված չէր որևէ կանոնից, որը հնարավորություն տար նախապես սահմանել, թե այս կամ այն ամիսն ունենալու է քսանինը, թե երեսուն օր: Տարին էմպիրիկ ձևով սկսվում էր այն ժամանակ, երբ նորալուսինը տեսանելի էր երկնքում:

Ամիսների երթայերեն անվանումները պատմության ընթացքում փոփոխվել են: Հին Կտակարանում պահպանված հնագույն անվանումներից են ապիպը՝ ցորենի հասկերի հասունացման ամիսը, զիվը՝ փայլի, ծաղիկների ամիսը, անթանը՝ ամիս, որի ժամանակ առունները վերստին սկսում են հոսել, բուլը՝ անծրևի ամիսը: Այս և մյուս ութ անվանումները, որոնք մեզ հայտնի չեն, Աքսորի հետ փոխանցվեցին և փոխարինվեցին դասական թվականներով, որոնք համապատասխանում էին նոր օրացույցում գրաված դիրքին, օրացույց, որի համաձայն՝ տարին սկսվում է գարնանից: Ապիպը դառնում է առաջին ամիս, զիվը՝ երկրորդ, անթանը՝ յոթերորդ, բուլը՝ ութերորդ և այլն: Ավելի ուշ, հրեաների մոտ սովորություն դարձավ ամիսներն անվանել ոչ թե իրենց կարգի համարով, այլ բաբելոնյան անվանումներով. Հին Կտակարանում հիշատակված են հետևյալ անվանումները՝ նիսան, սիվան, էբուլ, քասուլ, սեբաթ և ադար:

Ինչ վերաբերում է շաբաթվան, ապա երթայեցիները, հավանաբար, սկսեցին հետևել բաբելոնյան մեթոդին, որի համաձայն՝ լուսնային ամսվա առաջին քսանութ օրերը բաժանում էին չորս շրջանի, որոնք ավարտվում էին յոթերորդ, տասնչորսերորդ, քսանմեկերորդ և քսանութերորդ օրերին, ընդ որում՝ ամսվա առաջին շաբաթը միշտ սկսվում էր նորալուսնին: Այս բաժանման անհարմարությունն այն էր, որ ամեն ամսվա մեկ կամ երկու օր մնում էր հաշվից դուրս: Գուցե հենց այս անհարմարության պատճառով արագորեն հրաժարվեցին ամսվա և շաբաթվա սերտ կապից: Շաբաթներն այդուհետ հաջորդեցին միմյանց՝ առանց անտրամաբանական հատվածների, բայց արդյունքում, աստղագիտական բնույթի ցանկացած դիտարկումներից դուրս, շաբաթվա օրերը, թվում է, անուններով չէին տարբերվում իրարից: Հին Կտակարանը, զոնե, մեզ ներկայացնում է միայն մեկը՝ յոթերորդ օրվանը. հանգստյան օր՝ շաբաթ: Հավանաբար, իրենց հետաքրքրող օրվա մասին խոսելիս գոհանում էին նշել միայն շաբաթվա մեջ այդ օրվա զբաղեցրած դիրքը. շաբաթվա երրորդ, չորրորդ օրը: Նոր Կտակարանը, բացի այդ, տալիս է նաև վեցերորդ օրվա՝ շաբաթին նախապատրաստվելու կամ շաբաթից առաջ ընկած օրը: Ահա հրեական կրոնական և քաղաքացիական տարվա սինօպտիկական մի աղյուսակ.

1 (7) ՆԻՍԱՆ (մարտ-ապրիլ)՝ գարու բերքահավաքի սկիզբը, 14-ին՝ Չատիկ, 15-ին՝ առանց թթխմոր բաղարջ, 21-ին՝ Չատկի ավարտը:

2 (8) ԻԱՐ (ապրիլ-մայիս)՝ գարու բերքահավաք:

3 (9) Սիվան (մայիս-հունիս)՝ ցորենի բերքահավաք, Հոգեգալստյան տոն՝ Չատկից յոթ շաբաթ հետո նշանավորում է բերքահավաքի ավարտը:

4 (10) ԹԱՍՈՒԶ (հունիս-հուլիս):

5 (11) ԱՊ (հուլիս-օգոստոս)՝ որթ, թզենիներ, հասած ձիթապտուղ:

6 (12) ԻԼՈՒԼ (օգոստոս-սեպտեմբեր)՝ խաղողի բերքահավաքի սկիզբը:

7 (1) ԹՇՐԻ (սեպտեմբեր-հոկտեմբեր)՝ առաջին անձրևներ, հերկ, 1-2-ը՝ Տաղավարահարաց, Բերքահավաքի տոները, քաղաքացիական տարվա սկիզբը, խաղողաքաղի և ձիթապտղի բերքահավաքի ավարտը, 10-ին՝ Քավության օրը՝ Yom Kippour, ազգային զղջման օրը. պաս և քավություն, 15-21-ը՝ Վրանների տոնը. ուրախ տոն՝ ի հիշատակ Քանանի ճանապարհին վրանների տակ մնալու:

8 (2) ԲՈՒԼ (հոկտեմբեր-նոյեմբեր)՝ ցորենի և գարու ցանքս:

9 (3) ՔԱՍԴԵՎ (նոյեմբեր-դեկտեմբեր). 25՝ ճրագալույցի տոնը՝ Hanukhah, ի հիշատակ Հուդա Մակաբեի կողմից Տաճարի օծման (Ք. ա. 164 թ.). փայլող լույսեր՝ Տաճարում, շրջանում և հրեական տներում:

10 (4) ԹԵԲԹ (դեկտեմբեր-հունվար)՝ անձրևտ ամիս:

11 (5) ՍԵԲԱԹ (հունվար-փետրվար)՝ Նոր տարի:

12 (6) ԱԴԱՐ (փետրվար-մարտ)՝ ծաղկող նշենիներ, 14-ին՝ Փուրիմի տոնը Եսթեր թագուհու օրոք Իսրայելի ազատագրման պատվին. Եսթերի գրքի հրապարակային ընթերցում ժողովարաններում:

13 ԱԴԱՐ ՍԵՄԻ՝ ընդմիջարկված ամիս:

Նշենք նաև, որ առավոտյան՝ ցանկացած գործ սկսելուց առաջ, և երեկոյան չափահաս մարդիկ աղոթում են: Դեմքերը դարձրած դեպի Տաճար՝ նրանք արտասանում են օրհնության որևէ աղոթք, այնուհետև՝ Shema-ն, ինչպես նաև Shémoune Esré-ի՝ արդեն գործածության մեջ մտած տասնութ օրհնություններից առաջինն ու վերջինը:

6. Հոգևորականությունը

ա) Քահանայապետը

Աստիճանակարգության գագաթին քահանայապետն է: Աքսորից վերադառնալուց ի վեր՝ 538 թ., քանզի միապետությունը տապալվել էր, քահանայապետը գնալով դարձավ հրեական հասարակության հիմքը: Քահանայապետը պատասխանատու է օրենքի և տաճարի ու արարողության համար, նա Ատյանի նախագահն է: Միայն նա կարող է տարին մեկ անգամ՝ քավության օրը, մտնել Տաճարի կենտրոն՝ Սուրբ սրբոց: Նրա մահը համարվում է քավիչ, քանզի այդ առիթով հանցագործներին ներում է շնորհվում:

Իր գործառույթներով քահանայապետը մեծ արժեք է ներկայացնում, որն էլ նրան ապահովում է նյութական բարեկեցիկ վիճակ. ամեն երեկո առաջինը նա է իր մասնաբաժինը վերցնում Տաճարին պարզևած և քահանաների համար նախատեսված նվիրատվություններից: Քահանայապետի համար Տաճարը նաև եկամտի աղբյուր է, քանզի, իրավամբ,

դարձել է գոհաբերվող կենդանիների մաքրության վերաբերյալ գործող կանոններին պարտական առևտրի կարևոր կենտրոն. ուխտագնացները, փաստորեն, հարկադրված են մատակարար կենդանիները գնել հենց Տաճարում: Բացի այդ՝ գնում են նաև թանկարժեք շատ փայտ և Տիրոջ պատվին արժանի շքեղ այլ առարկաներ: Այս ամբողջ առևտուրը կատարում է քահանայապետի ընտանիքը, կամ էլ գործը վստահվում է խոշոր վաճառականների, որոնք վճարում են հավելյալ գումար՝ շուկային տիրանալու համար: Քանի որ հիշյալ միջոցները միշտ չէ, որ բավարարում են քահանայապետի ու նրա ընտանիքի գայլային ավտրո-ժակները, քահանայապետը հաճախ փնտրում է այլ միջոցներ: Նա ուժով սեփականացնում է գլխատված անասունների կաշին, որոնք սկզբունքորեն պետք է պատկանեն մյուս քահանաներին: Նա գնում է ագարակներ՝ գողանալու դարձյալ քահանաների համար նախատեսված տասանորդը: Քահանայապետը դիմում է բանասարկության, նենգաշորթության և անգամ սպանության:

Կարելի է ենթադրել, որ նմանօրինակ պահվածքը հազիվ թե նպաստի քահանայապետի ժողովրդականացմանը, որն ավելի ու ավելի է ընկնում Հռոմեական կայսրությունում: Սելևկյանները, իսկ հետո Պոմպեոսը, իրենց թույլ էին տալիս քահանայապետ նշանակել միայն այն ժամանակ, երբ տեղը թափուր էր, ծայրահեղ դեպքում նրան նշանակում էին ցմահ: Հերոդոս Մեծը, իսկ հետո էլ հռոմեացի պրոկուրատորները համարձակվեցին ուզած ժամանակ փոխել քահանայապետին. մեկ և կես դարից ավել ժամանակահատվածում եղան ընդամենը տասներեք քահանայապետեր, մինչդեռ հետագայում, մեկ դարի ընթացքում՝ քսանվեց: Այլ կերպ ասած՝ տեղում մնալու համար անպայմանորեն հարկավոր էր դուր գալ իշխանին: Ժամանակավորապես նշանակված քսանվեց քահանաներից քսանհինգը սերում էին չորս ընտանիքից: Դա խոսում է այս ընտանիքների ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական ազդեցության և նրանց միջև ծրագրված բանասարկությունների մասին: Այդ ընտանիքները սաղուկեցիների կուսակցության կմախքն էին կազմում:

Իր գործառույթները կատարելու գործում քահանայապետին օգնում էին որոշակի թիվ կազմող ֆունկցիոներներ, որոնք կոչվում էին քահանաների առաջնորդներ. Տաճարի կառավարիչը՝ Սրբարանի արարողության և ոստիկանության պատասխանատուն, որն անհրաժեշտության դեպքում փոխարինում է քահանայապետին, ամենշաբաթյա քսանչորս բաժինների առաջնորդը, տաճարի յոթ հսկիչները՝ պահպանության պատասխանատուները և երեք գանձապահները: Այս տեղերն զբաղեցնում են քահանայապետի ընտանիքի անդամները կամ էլ նրա բարեկամները:

բ) Քահանաները

Թվով մոտավորապես յոթ հազար քահանաների գործը պատարագների մատուցումն ու Տաճարի կենտրոնական մասը պահպանելն է: Սակայն արարողության սովորական կարիքները հոգալու համար այսքան մարդկանց անհրաժեշտություն չկա: Նրանք բաժանվում են ծառայության քսանչորս դասերի կամ խմբերի (մեկ շաբաթվա ընթացքում՝ յուրաքանչյուրն իր հերթին): Շաբաթվա ամեն առավոտ վիճակ են հանում և որոշում, թե ովքեր պետք է հատուկ դեր ունենան արարողության ժամանակ (Ղուկաս 1:9): Ուխտագնացության երեք մեծ տոների ժամանակ են միայն բոլոր դասերը միաժամանակ մասնակցում արարողությանը: Յուրաքանչյուր քահանա Տաճարում իր դերը կատարում է տարեկան

հինգ շաբաթ: Մնացած ժամանակ քահանան պարապ է. առիթ ներկայանալու դեպքում, իբրև խորհրդական, նա նստում է իր բնակավայրի դատարանում, երբ քննվում է քահանայի ներկայությունը պահանջող գործ:

Այս հոգևորականությունն աղքատ է: Նրա եկամուտների աղբյուրները երկուսն են՝ գոհաբերություններից ստացված մասնաբաժինն ու տասանորդը: Սակայն, երկար ժամանակ ի վեր, որոշ հրեաներ մոռանում էին տասանորդ վճարել ըստ էության, հնարավոր չէ պատկերացնել, թե հարկերի տակ կքված գյուղացիներն ու հազիվ ծայրը ծայրին հասցնող վարձու աշխատողներն ինչպես կարող էին դա վճարել: Հավանական է նաև, որ վերջիններս մի կողմ են դրվում, քանի որ նրանց արհեստը արհամարիված է և, ուստի, չեն շտապի տալ իրենց եկամուտի տասներորդ մասը: Ահա թե ինչու գոյությունը պահպանելու համար քահանաները պետք է զբաղվեին որևէ արհեստով. նրանք ատաղձագործներ են, քարտաշներ, առևտրականներ, մսագործներ: Ոմանք էլ շարունակում են ուսումը՝ դառնալով դպիրներ:

Ինչպես եկամուտներով, այնպես էլ աշխատանքի ու կյանքի պայմաններով շատ մոտ լինելով հասարակ ժողովրդին, իսկ հաճախ էլ նրանից պակաս, ուսյալ քահանաներն ընդունում են նրա գաղափարները: Հրեական պատերազմի ժամանակ, թվում է, շատ քահանաներ համատեղ գործել են նախանձահույզների հետ՝ հույս փայփայելով, որ հռոմեացիների մեկնումն իրենց համար կապահովի ավելի որոշակի եկամուտ և հասարակական ավելի բարձր կարգավիճակ:

Քահանայությունը ժառանգական է, այն որդիներին է փոխանցվում երկու պայմանով. կինը պետք է լինի ոչ թե ապօրինի, այլ իսկական հրեուհի, իսկ որդին՝ մարմնապես ու մտավոր առունով առողջ:

գ) Ղևտացիները

Ղևտացիները տաճարի հիմնական ենթապրոլետարներն են: Նրանք մոտավորապես տասը հազար են՝ իրենց հերթին դարձյալ բաժանված քսանչորս դասի՝ տարեկան հինգ շաբաթ ծառայությամբ: Այս ծառայության համար նրանք, թվում է, եկամուտներ չունեն: Երբևէ իրավունք չեն ունեցել պատարագներից ու տասանորդից ստացված մասնաբաժնի վրա, մի բան, որը, սակայն, մի ժամանակ հատկացվում էր. այս մասնաբաժինը, հայտնի չէ, թե երբևէ, բռնագրավվեց քահանաների օգտին: Իրենց ծառայությունից դուրս, վերջիններիս պես, Ղևտացիները զբաղվում էին զանազան արհեստներով:

Տաճարում նրանք բաժանվում են երկու խմբի. երաժիշտ Ղևտացիներ, որոնք տեղ են գրավում Ղևտացիների ու քահանաների գավիթների միջև և երգով կամ նվագով աշխուժացնում արարողությունը, և դռնպահ Ղևտացիներ, որոնք հոգ են տանում Տաճարի խնամքի մասին, սրբության տարբեր շրջանակներում հսկում մուտքը, սրբարանում ապահովում պարեկության և ոստիկանության գործը: Այս խմբերը խիստ տարբեր են, քանզի սկզբունքորեն մյուս խմբի վրա դրված գործը կատարողին մահապատիժ է սպասվում:

դ) Ատյանը

Մեծ ատյանը (հունարենում՝ sunèdrión) Իսրայելի գերագույն դատարանն է: Նրա ակունքները պետք է փնտրել, հավանաբար, պարսկական դարաշրջանում, իսկ նրա մասին առա-

ջին հիշատակությունները՝ Անտիոքոս 3-րդի թագավորության օրոք (223-187 թթ.): Վերականգնվել է Հովհան Յուրկիանոսի օրոք (134-104 թթ.):

Ինչպես հելլենիստական քաղաքներում՝ ատյանը խորհուրդ է, որն օգնում է քահանայապետին՝ ազգի գերագույն առաջնորդին, որն այդ խորհրդի նախագահն է: Խորհուրդը բաղկացած է յոթանասունմեկ անդամներից՝ երեցներից. պաշտոնաթող քահանայապետեր, սաղուկեցի քահանաներ, իսկ հետո էլ՝ առավելապես փարիսեցի դպիրներ:

Հերովդես Մեծը սահմանափակեց իր իշխանությունը, բայց հռոմեական բռնազավթման օրոք այն վերականգնվեց և անգամ ընդարձակվեց: Լինելով արդարադատության պալատ՝ ատյանը դատում է օրինախախտումները, սահմանում ուսմունքը և խստորեն հետևում կրոնական կյանքին: Շատ վիճաբանություններ են եղել, առանց հստակություն մտցնելու, իմանալու համար, թե Հիսուսի ժամանակաշրջանում այն իր ձեռքում էր պահում արդյոք մայրաքաղաքի գործադիր իշխանությունը: Համենայն դեպս, մահապատժի վճիռ կայացնելու համար անհրաժեշտ էր քսանչորս ժամ ընդմիջմամբ երկու նիստ գումարել: Դատարանն իր տրամադրության տակ ուներ զինվորների գունդ (Հովհաննես 18:3, 12):

70 թ. աղետից հետո ատյանը կվերականգնվի Յամնիայում, բայց այսուհետ, իր իրավասությամբ ու ոգով՝ իբրև լիովին տարբեր հաստատություն:

Ամբողջ Պաղեստինում գոյություն ունեն երեք անդամից բաղկացած (որոնցից մեկը դատավորն է) ատյաններ (Մատթեոս 5:25):

Ե. ԿՐՈՆԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

70 թ.՝ Երուսաղեմի անկումից հետո, հրեական կրոնը կվերապրի փարիսեցիների շնորհիվ. նրանց ավանդույթներն են մինչև օրս էլ կազմում հրեական օրենքի հիմքը: Ահա թե ինչու, երբեմն միտում կա այս իրավիճակը տարածել 70 թվականին նախորդող շրջանի վրա՝ մտածելով, որ Քրիստոսի ժամանակ էլ այդպես էր: Անշուշտ, Ավետարաններում խոսվում է սարդուկեցիների, սամարացիների մասին. նշվում է, որ Սիմոն անունով աշակերտն անվանվել է նախանձահույզ, սակայն ուսմունքի առումով, միակ հակառակորդները մնում են փարիսեցիները: Նման պարզեցումը, սակայն, հաշիվ չի տալիս գաղափարական այն հուզումների մասին, որոնցով այդ ժամանակ տարբերակվում էր հրեական կրոնը: Հովսեպոսը խոսում է երեք «աղանդների» մասին՝ իրականում ներկայացնելով չորսը՝ փարիսեցիներ, սաղուկեցիներ, հեսեներ և նախանձահույզներ:

1. Hassidim

Hassidim բառը նշանակում է «բարեպաշտ»: Բարեպաշտների մտածողության առարկան, հիմնականում, մ. թ. ա. IV և III դարերի մոտերքում կազմակերպված կրոնական բարենորոգումն է: Նրանք կազմել են մակաբեացիների խռովության միջուկը և սիրիացիների օրոք դիմադրել հելլենիստականացմանը: Կրոնին հավատարիմ հետևելու պատճառով նրանց միացնում են հեսեներին, բայց ավելի հավանական է, որ բարեպաշտները եղել են փարիսեցիների հոգևոր նախնիները: Նշվում է, որ խստորեն հետևում են օրենքին ու պատվիրաններին. աղոթքները ջերմեռանդ են, շաբաթօրյա ծիսակատարությունները՝ ծայրա-

հեղորեն խիստ: Նոր Կտակարանում չեն հիշատակվում: Հնարավոր է, որ Հիսուսի ժամանակաշրջանում նրանց շփոթել են փարիսեցիների հետ:

2. Սադուկեցիները

Այս անվանումը, թվում է, կապված է Սադուկ անվան հետ: Սադուկեցիներն իրենց համարում են Եզեկիելի գծի 40 և 46 թթ. քահանայության օրինական իրավունք ունեցողներ, մի բան, որ պահանջում են նաև Qumrân-ի «Սադուկի որդիները»: Նրանց կարելի է համարել մակաբեական դարաշրջանի հոգևորականության ու արիստոկրատիայի սերունդներ, որոնք սիրալիր են հելլենիզմի հանդեպ և հավատարիմ են հասմոնյան արքայատոհմին: Այս խումբը կազմավորվել է Հյուրկիանոսի (135-104 թթ.) օրոք, որը քահանայապետի ու ատյանի միջոցով մշտապես միջամտում է երկրի քաղաքական կյանքին (տես՝ Բ. Սամուել 8:17, 15:24, Ա. Թագավորաց 1:34-35, Ա. Մնացորդաց 12:28, Եզեկիել 40:46, 43:19, 44:10-15):

Իբրև քահանայական արիստոկրատիայի ներկայացուցիչներ՝ նրանք հսկում են Տաճարն ու երկրի գործերը՝ նեցուկ լինելով հասմոնյան իշխաններին: Նույնիսկ հռոմեական օրենքի օրոք նրանք քաղաքական նշանակալից հսկողություն կիրականացնեն: Սադուկեցիներն առավել հակված են ընդունելու հելլենիստական մշակույթը, քան մյուս խմբավորումներն ու հռոմեացիների համախոհները:

Աստծու նրանց ըմբռնումն ավելի մարդակերպական է, քան փարիսեցիներինը: Իբրև կրոնը պահպանող տարր, նրանք մերժում են բանավոր Օրենքը և ընդունում միայն Մովսեսի կողմից գրված Օրենքը. սադուկեցիները ժխտում են մարմինների հարությունն ու հրեշտակների գոյությունը, ընդգծում են զոհաբերությունների արարողությունը Տաճարում, Աստծուն համարում են մարդկային գործերի նկատմամբ անտարբեր և չեն հավատում նախախնամությանը: Իբրև քաղաքական խմբավորում՝ սադուկեցիները զգալիորեն հակադրվում են քրիստոնեական հավատքին (Մատթեոս 22:23, Մարկոս 12:18, Գործք 4:5, 23:8): Վաղ շրջանի Եկեղեցիներն ավելի շատ վախենում են նրանցից, քան այլ հակառակորդներից: Սադուկեցիները կանհետանան Տաճարի կործանման հետ:

3. Փարիսեցիները

Իբրև քաղաքական ու կրոնական կուսակցություն՝ փարիսեցիներն ի հայտ են գալիս երկրորդ Տաճարի ընթացքում՝ մակաբեական առաջին խռովությունից քիչ հետո, Բ. ա. 165-160 թթ. միջև: Հավանաբար նրանց ակունքները գալիս են բարեպաշտներից: «Փարիսեցի» բառը կարող է ծագած լինել նաև եբրայերենի «անջատված, բաժանված լինելու, հեթանոսական արարողություններից և ուժերից անջատվելու» իմաստ արտահայտող մի արմատից:

Ներկայացնելով հիմնականում ժողովրդական շարժում՝ փարիսեցիները կատաղի պայքար կնդեն կրոնը քահանաների իշխանությունից ու հսկողությունից ազատելու համար: Նրանք վերականգնում են Տաճարի բազմաթիվ արարողություններ և դրանք մտցնում իրեական օջախները: Մինչդեռ սադուկեցիները զբաղվում են Տաճարով, փարիսեցիները սովորեցնում են Աստծու Օրենքը: Օրենքի մեկնաբանման գործում ավելի ազատամիտ ու առավել ճկուն են, քան սադուկեցիները: Նրանց աստվածաբանությունը ամենակարող, խելացի, ամենազետ ու ամենագո Աստծուն հավատալն է: Աստված մարդու մեջ ստեղծել է երկու

էական ազդակ. մեկը՝ չարի, մյուսը՝ բարու համար: Բարոյական ընտրություն կատարելու համար մարդն ունի ազատ դատավոր: Թորայի էությունը ինչպես հայտնված գրավոր, այնպես էլ բանավոր, ինչպես նաև՝ Մովսեսին տրված գրավոր Օրենքն է: Օրենքը պետք է մեկնաբանվի Աստծու կողմից տրված բանականության և յուրաքանչյուր տարիքին հատուկ գաղափարների ու ճանաչողության օգնությամբ: Իսկական պաշտամունքի առարկա դարձավ ոչ թե գոհաբերությունը, այլ Թորայի ուսումնասիրումը: Աստված գործադրում է բացարձակ իշխանություն՝ մարդկանց օգնելով կատարելու բարի գործ, բայց թույլ տալով նաև չարի գոյությունը, այսինքն՝ գործել նաև չարիք: Մարդիկ հավատում են այնկողմնային գոյությանը, մեռելների հարությանը, հրեշտակների ու չար ոգիների գոյությանը:

Փարիսեցիների նկատմամբ թշնամական բոլոր հղումները, որ գտնում ենք Նոր Կտակարանում, վերաբերում էին բոլոր նրանց, ովքեր երեսպաշտներ էին, ովքեր դատապարտվել են նույնիսկ իրենց եղբայրակիցների կողմից (Մատթեոս 23:3, Ղուկաս 18:1): Պողոսը հպարտ է փարիսեցու կրոնական իր ժառանգությամբ (Գործք 22): Փարիսեցիների հավատալիքները բավականին մոտ են վաղ շրջանի քրիստոնյաների հավատալիքներին:

Փարիսեցիներն իրենք էլ, դաժան հումորով, կարողանում են իրենց մեջ տարբերել լավն ու վատը: Թալմուդի չորս տեքստ տալիս են նրանց վերաբերյալ տարբեր ցուցակներ: Ահա մի քանի հատված, որտեղ ներկայացված են յոթ կարգի փարիսեցիներ:

Ուժեղ ուսեր ունեցողներ, ովքեր իրենց արածները գրում են իրենց մեջքին, մարդկանց կողմից հարգանքի արժանանալու համար: *Քարշ եկողներ*, ովքեր պատրվակ են բերում, թե կարևոր պատվիրան ունեն կատարելու, որպեսզի ուշացնեն բանվորների աշխատավարձը: *Չաշվարկողներ*, ովքեր իրենք իրենց ասում են. «Քանի որ իմ ակտիվում շատ արժանիքներ ունեմ, կարող եմ ինձ թույլ տալ որևէ վատ արարք»: *Տնտեսողներ*, ովքեր իրենց հարց են տալիս. «Ի՞նչ փոքր բան պետք է կատարեմ, որպեսզի ավելացնեմ արժանիքներս»: *Փափկանկատներ*, ովքեր իրենց հարց են տալիս. «Ի՞նչ մեղք եմ գործել, որպեսզի դրա համար հատուցեմ բարի գործով»: *Վախկոտ փարիսեցիներ*, ովքեր վարվում են Չոբի պես: *Սիրող փարիսեցիներ*, ովքեր գործում են Աբրահամի պես. վերջիններս իսկական փարիսեցիներ են:

4. Նախանձահույզները

Կարելի է կարծել, որ նախանձահույզներն ակտիվացել են սկսած մ. թ. ա. 37 թվականից և կմնան մինչև մ. թ. 70 թվականը. ենթադրվում է, որ նրանց ակունքները հասնում են ընդհուպ մինչև բարեպաշտների ակունքները: Նախանձահույզները հռոմեական բնակարգին դիմադրող վայրի հակառակորդներ են և չեն հանդուրժում ոչ մի զիջում հեթանոս իշխանության հետ: Անվանումն ստացել են կրոնական հույզի պատճառով. նախանձահույզները հրաժարվում են հարկ վճարել և սարսափեցնում են ինչպես քաղաքական հակառակորդներին, այնպես էլ զավթիչին: Լինելով հավատքի ու Թորայի մոլեռանդ պաշտպաններ՝ նրանք թատերաբեմ են ելնում Ղուկասի մոտ՝ 4:15. նա խոսում է Հիսուսի մի աշակերտի՝ Սիմոնի մասին (Ղուկաս 6:15, Գործք 1:13): «Նախանձահույզ» բառին կարելի է մոտեցնել նաև *cana* բառը, որը եբրայերենում նշանակում է «ջանք, բուռն ձգտում» (Մատթեոս 10:4, Մարկոս 3:18): Նախանձահույզները թատերաբեմից կհեռանան 70 թ. աղետից հետո:

5. «Չեղափոխականները» (Sicaires)

Օայրահեղական նախանձահույզների խմբավորում է, որը գլուխ է բարձրացրել հռոմեական բռնազավթման դեմ: Անվանումն ստացել է հունարենի «դաշույն» բառից և ցույց էր տալիս նրան, ով գլխատում էր հռոմեացիների բարեկամներին, երբ մատնանշված զոհը բազմամարդ ամբոխի մեջ էր:

Մ. թ. մոտավորապես 50-70 թթ. «հեղափոխականների» հրոսակները թալանել են Յրեաստանը և ահ ու սարսափ պատճառել: Նրանք են այն խռովության պատճառը, որի հետևանքը եղավ Երուսաղեմի կործանումը. նրանցից շատերն ապաստան կգտնեն Մասադայում: Դավանում են նույն աստվածաբանությունը, ինչ՝ նախանձահույզները: «Գործք Առաքելոց»-ում հիշատակվում են իբրև ահաբեկիչներ (21:28):

6. Չերովդեսականները

Չերովդեսականների շարժումը երևան է գալիս հերովդեսյան արքայատոհմի կառավարման օրոք: Սրանք նեցուկ են կանգնում Չերովդեսին ու նրա ընտանիքին, ընդունում են հելլենականացումն ու օտարերկրյա իշխանությունը և, անկասկած, ապահով խավի պատկանող մարդիկ են, ունեն քաղաքական բավականին մեծ ազդեցություն: Չերովդեսականները կրոնական որևէ կուսակցության անդամ չեն: Չիշատակվում են Մատթեոսի (22:16), Մարկոսի (3:6, 12:13) Ավետարանում՝ իբրև Չիսուսի հակառակորդներ:

7. Չեսները

Նոր Կտակարանում այս խմբավորումը հիշատակված չէ, թեև ժամանակակից է Չիսուսին: Նրանք հանդիպում ենք արդեն իսկ մակաբեների շրջանում՝ սկսած մ. թ. ա. երկրորդ դարի երկրորդ կեսից: Անվանման հիմքն անորոշ է:

Չեսներից մոտ 4 հազարը սփռված են Յրեաստանի գյուղերում ու քաղաքներում: Ոմանք ապրում են Qumrân-ում՝ Մեռյալ ծովի մոտ: Շարժումը կծավալվի, գուցե, իբրև հոգևորականությանը հակադրվող խմբավորում, հոգևորականություն, որը կազմված էր սադուկեցիներից: Չեսներին նույնացնում են բարեպաշտների, նախանձահույզների և իրանական տարրերի խառնուրդ պարունակող հունական չտարբերակված խմբերի հետ:

Աստվածաբանական տեսակետից, հեսներն ամենախստաբարոն են. ձեռնպահ են մնում ամուսնությունից, մենակյացներ են, հավատում են ընդհանուր սեփականությանը, իրենց համարում են Իսրայելի՝ մարգարեների միջոցով ստացված խոստումներից օգտվողներ, մերժում են Տաճարի պաշտամունքը՝ այն համարելով արատավորված, ունեն շաբաթօրյա խստագույն պահանջները, խստորեն կատարում են ոտնվան, ամենօրյա աղոթքները և ուսումնասիրում են Չին Կտակարանը, ունեն խիստ արտահայտված հայտնութենական կողմնորոշում: Չնարավոր է, որ Չովհաննես Սկրտիչը մասնակցել է շարժմանը: Չայտնի չէ, թե հրեաները երբևանից են անհետացել կրոնական թատերաբեմից:

8. Սամարացիները

«Երկրի ժողովրդի» շրջանակում սամարացիները նույնպես պետք է հիշատակվեն, քանզի նրանք հրեաների ազգային նախապաշարմունքների զոհեր են: Մ. թ. ա. VIII դա-

րում, պառակտումից մոտ երկու դար հետո, ասորիները իրենց ենթարկեցին Յուսիսային թագավորությունը (Սամարիա): Պարտադրված մի ծրագրով, այս հատվածի իսրայելցիները հարկադրված եղան արտաքսվել Ասորեստան: Ասորիները բնակություն կհաստատեն Իսրայելի ազգային տարածքում: Կկնքվեն խառն ամուսնություններ, որի հետևանքը կլինեն չտարբերակված կրոնն ու մշակույթը: Հարավային թագավորության (Հուդայի երկրի) մյուս իսրայելցիները Սամարիայի այս նոր զավթիչներին, իբրև համակրոնակիցների, համարեցին պիղծ ու անընդունելի: Աքսորից վերադառնալուց հետո նրանք մերժեցին սամարացիների՝ Տաճարի կառուցմանն օգնելու առաջարկը: Մերժումն առաջ բերեց ուժեղ թշնամանք, խռովություններ, տեղի տվեց սպանությունների, ինչպես նաև Նեեմիայի՝ Հուդայի երկրի իսրայելցիների (հրեաների) առաջնորդի դեմ ծրագրված մահափորձի: IV դարի ընթացքում սամարացիները ստրկամտորեն մոտեցան Ալեքսանդր Մեծին և նրանից թույլտվություն ստացան Գարիզին լեռան վրա կառուցելու Երուսաղեմի Տաճարը հիշեցնող մի տաճար: Հրեաներն այս արարքը համարեցին Թորայի ոտնահարում: Երկու ժողովուրդների միջև բախումն ու բռնությունը դուրս եկավ Պաղեստինի սահմաններից և տարածվեց Սփյուռքում: Անտիոքոս Եպիփանեսի օրոք, երբ հրեաներն ուժեղ ճնշման ենթարկվեցին, սամարացիները նրան հայտարարեցին, որ ամենևին էլ կապ չունեն նրանց հետ. պնդեցին, որ պարսկաստանաբնակների անմիջական սերունդներն են: Բացի այդ պահանջեցին, որ Գարիզին լեռան վրա կառուցված իրենց տաճարը նվիրվի Ջևա աստծուն, մի բան, որը, հրեաների կարծիքով, զարչելի մեկ այլ արարք էր: Վերջիններիս և Անտիոքոսի միջև տեղի ունեցած բախման ժամանակ ոմն Ապոլոնիոս՝ Սամարիայի կառավարիչը, իր բանակներն առաջնորդեց մակաբեական բանակի դեմ: Ավելի ուշ՝ նույն այդ դարում, Յուդեայի հանուր ռևանչ վերցրեց, արշավեց Սամարիայի դեմ, այն պաշարեց մի ամբողջ տարի և վերջնականապես գետնին հավասարեցրեց:

Պոմպեոսը Սամարիան խլեց հրեաների ձեռքից, այն վերականգնեց ու դարձրեց մի նոր գավառ: Ասես սա էլ բավականաչափ վիրավորական չէ հրեաների համար. սամարացիները կդառնան նաև Հերովդեսի համախոհները, նրա, ով հրեաների կատաղի թշնամին է՝ նրանց եղովմական ակունքների պատճառով: 37 թ., երբ Հերովդեսը պաշարեց Երուսաղեմը, սամարացիներն ակտիվորեն օգնեցին նրան: Այսօրինակ բախումները կշարունակվեն մինչև մ. թ. I դարը և կուժեղանան միջուսասյական ճնշումները: Պատմական այս ետնապլանը կօգնի հասկանալ Հիսուսի պատմած առակը բարի սամարացու մասին: Այս առակը ավելի քան յոթ դար շարունակ մոլեգնող կրոնաառասպական խոր նախապաշարումների սուր քննադատություն է:

9. Նորադարձներն ու աստվածավախները

Հրեաների ու հեթանոսների միջև ընկած է մի տեսակ միջանկյալ խավ, որին պատկանող մարդիկ ունեն հեթանոսական ծագում և քիչ թե շատ կապված են հրեական կրոնին:

Նորադարձները, որոնք իրենց անվանումն ստացել են հունարենում «մոտեմալ» իմաստն արտահայտող մի բառից, այն հեթանոսներն են, ովքեր ընդունել են հրեական կրոնն ու նրա ծիսակատարությունները, մասնավորապես՝ թլփատումը: Նրանք չեն համարվում կատարյալ հրեաներ, բայց պարտավոր են կատարել ամբողջ օրենքը: Բավականին մեծ թիվ

են կազմում Սփյուռքում, և առանձին ռաբուհիներ, ըստ Մատթեոսի, թվում է՝ մեծ ջանք են գործադրում նրանց հավատափոխության համար (Մատթ. 23:15). Երուսաղեմի յոթ սարկավագներից մեկը նորահավատ էր (Գործք 6:5):

Աստվածավախները նույնպես հրեական կրոն ընդունած հեթանոսներ են, որոնք, սակայն, մերժում են այս կրոնի արարողությունները, մասնավորապես՝ թլփատումը: Օրինականորեն նրանք մնում են իբրև հեթանոսներ (Գործք 10:1-2):

10. Ապոկալիպտականները

Ապոկալիպտականներն, ըստ էության, չեն կազմում որոշակի կուսակցություն, բայց 200-100 թթ. միջև ընկած ժամանակաշրջանի բազմաթիվ հրեաներ համոզված էին անխուսափելի հայտնութենական վախճանաբանության հարցում:

Ահա թե ինչպես են բնութագրվում նրանց համոզմունքների ցցուն հատկանիշները:

Հին Կտակարանի մարգարեության գալիք հույսը անշեղորեն դառնում է «վախճանաբանություն»: Նոր վախճանաբանությունը դուալիստական է, արտահայտվում է երկու դարերի մի ուսմունքում, որը բովանդակում է գալիք Թագավորության տրանսցենդենտալ պատկերացում: Նոր կարգը ձեռք է բերում նոր սկզբի ձև, սկիզբ, որը ազատագրված է ամեն արատավորումից: Ձևափոխությունը լինելու է ոչ թե բարեշրջական, այլ հեղաբեկումային եղանակով՝ գերբնական գործությամբ. այն չի լինի մարդկային գործ: Ձևափոխությունը կընդունի տիեզերական դրամայի տեսք, դրամա, որին կմասնակցեն սատանայական ու աստվածային ուժերը: Ձևափոխությունը տեղի կունենա հավիտենական ճակատագրի հետ կապված և կբովանդակի հարությունն ու դատաստանը: Ամեն ինչի վերջում կլինի Աստծու գործը, և Աստված կպսակի ամբողջ տիեզերքին վերաբերող իր կամքը:

Գոյություն ունեցող մի կարծիքի համաձայն՝ հայտնութենական վախճանաբանությունը, սաղմնային վիճակում, արդեն իսկ ակնհայտ էր աստվածաշնչյան գրականության որոշ գրվածքներում: Այլ կարծիքների համաձայն էլ՝ նոր վախճանաբանությունը կատարյալ ձև չի ստացել՝ նախքան հայտնութենական գրվածքների մեծ մասի ստեղծմանն ականատես լինելը, այսինքն, Ք. ա. 200-100 թթ. միջև ընկած շրջանը: 200 թ. մոտ, Իսրայելն արդեն համարյա 350 տարի ի վեր խոստացված երկրում է և դեռևս չի հասել հին մարգարեների խոստացած մեծությանը: Գուցե Իսրայելը չի՞ դարձել ամբողջապես սուրբ ազգ, ինչպես օրենքն էր պահանջում: Այսուամենայնիվ, իսրայելցիները թողել են երբեմնի կռապաշտությունը, և կարելի է վստահորեն պնդել, որ բարոյական առումով նրանք վեր էին իրենց հարևաններից: Սակայն խոստացված թագավորությունը չէր եկել: Թվում է, թե Իսրայելը շախմատային հասարակ զինվոր է դարձել բախման մեջ գտնվող օտարերկրյա իշխանությունների ձեռքին:

Այսպիսով, ապոկալիպտականների կարծիքով, Իսրայելի վիճակը թվում էր աղետալի: Դա վստահություն պատճառող դարաշրջան էր վախճանաբանական երազների, չկայացած հույսերի համար, որը չուներ իրավամբ մարգարեական մունետիկ: Բացի այդ՝ հալածանքն աղետալի եղավ նրանց համար, ովքեր հավատարիմ էին Թորային ու ավանդական կրոնին,

¹ Stui' La Palestine au temps de Jésus, cahier N27, page 27.

մինչդեռ բարգավաճում էին նրանք, ովքեր համաձայնում էին հունականացմանը: Տագնապալի այս վիճակը ապոկալիպտականներին ստիպեց փնտրել ստեղծագործ լուծումներ, մի բան, որն էլ ծնունդ տվեց վախճանաբանությանը: Սա պատմության ու մարդկային ճակատագրի նոր մեկնաբանություն է՝ նոր շեշտադրությամբ ու լիովին նոր ներըմբռնողությամբ (հնտուփցիայով):

II. Հեթանոսական միջավայր

«Մ. թ. առաջին դարի հունա-հռոմեական աշխարհում հեթանոսությունը շատ կենդանի էր՝ ազգային ավանդական իր ծիսակատարություններով: Եթե ծերացել էր, Օգոստոսի պես կայսրերը հոգ էին տանում նրա վերականգնման մասին: Կառուցում էին տաճարներ, որոնցից շատերը չափազանց գեղեցիկ էին:

Հունական և հռոմեական դամբարանները ներդաշնակում էին: Հաստատվում էին արժույթներ: Կայսրության մեջ միավորելու միտում ունեցող արարողությունը դառնում էր հավատարմության նշան կայսրության տերերի հանդեպ:

Խոշոր արարողությունների կողքին ժողովուրդը պահպանում էր երկրորդականները, տեղական՝ հարազատ, տնային աստվածներին, ջրերի, անտառների աստվածությունները... Այսօրինակ պաշտամունքները, ինչպես քրիստոնեության, այնպես էլ մուսուլմանական ճգնափոխության մեջ հիմք հանդիսացան սրբերի պաշտամունքի, մեռյալների հետ հարաբերության համար»¹:

Թեև հունա-հռոմեական կրոնական արտահայտությունը ձեռք է բերել զանազան ձևեր, այսուամենայնիվ, կարելի է կատարել որոշ ընդհանրացումներ: Նախ՝ հունա-հռոմեական կրոնը ներառողական է, այսինքն՝ ցանկացած ազգության պատկանող մեկը կարող է տեղ գտնել Դամբարանում: Այնուհետև, լայնորեն տարածված սինկրետիզմի պատճառով աստվածաբանությունները սկսել են խառնվել իրար և միտվել դեպի մի աստվածություն: Երրորդ՝ ճակատագրականության զորությունը շեշտվում է, այն իր արդարացումը գտնում է ստոիկյան փիլիսոփայության մեջ և անգամ պաշտվում իբրև աստվածություն: Ճակատագրականության հանդեպ այս հավատամքը հաճախ կապվում է աստղերի հետ, այնպես որ աստղագիտությունն արժանացավ էլ ավելի մեծ ուշադրության: Չորրորդ՝ կախարդանքը աշխարհը կառավարելու միջոցն է: Ուրվագծվում են սնահավատությունը, կախարդությունը, հմայիլները, բուժիչ խոսքերը, գուշակությունները: Հինգերորդ՝ կրոնը մասնավոր ձեռնարկում չէ, ընդհակառակը՝ ունի միավորող բնույթ և խիստ զարգացած սոցիալական կողմնորոշում: Բարեպաշտությունն ամենևին էլ անհատական չէ: Ընտանիքը, կրոնը, բարոյականությունը սերտորեն կապված են իրար: Ծիսական մաքրության կանոնները զուտ բարոյական արժեք չունեն, այլ, սովորաբար, ծիսակարգային են:

¹ Gabriel Millon, cours professé a' la faculté de Théologie évangélique, Aix-en-Provence.

Ա. ՀՈՒՆԱԿԱՆ ԶՈՂԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Նոր Կտակարանում բովանդակող լուրի հենց կենտրոնում այն պնդումն է, որի համաձայն՝ ինչ-որ մեկի մահն առաջարկվում էր իբրև քավիչ զոհաբերություն: Հունա-հռոմեական աշխարհը կարող էր հրաշալիորեն հասկանալ այս լուրի իմաստը, քանզի արարողությունների ժամանակ զոհեր էին մատուցում միմյանց, և մարդու զոհաբերության աստվածաբանությունն ընդհանուր իմացություն էր, թեև պետք է տարբերել օլիմպոսյան և կիթերյան արարողությունները: Վերջինիս նպատակը չար հոգիներ հանգստացնելն է, հոգիներ, որոնք պատճառում են հիվանդություններ, ծերություն, մահ, ինչպես նաև վերացնել աղտոտությունն ու ներքին ուժերը: Կրոնական ծեսերի ժամանակ չարաղետ այս ուժերը բնավ էլ սպասված հյուրեր չեն: Նշված ծեսերը կատարվում են գիշերը և իրականացվում են սարսափի ոգով՝ հակադրվելով օլիմպիացիների տոնակատարությունների ցերեկային ծիսակատարություններին: Առաջինները դիտվում են որպես հունական կրոնի ամենամախնական տեսակետը: Զոհաբերության տոնակատարությունները սոցիալական ամեն տեսակ ճգնաժամ հաղթահարելու միջոց են: Արտակարգ իրավիճակները, սովն ու հիվանդությունները շարունակ տեղի են տալիս մարդկային զոհերի:

Հույն հեղինակ Եվրիպիդեսի բազմաթիվ ողբերգություններում մարդկային քավիչ զոհաբերությունը զբաղեցնում է էական դեր: Իրոք, կամավոր զոհաբերությունը այս գրողի ստեղծագործության մեջ դառնում է համարյա հնապաշտություն: Այլ հեղինակներ նույնպես, ինչպիսիք են Էսքիլեսը կամ Սոֆոկլեսը, բարձր են գնահատում նշված թեման: Վերջին մի օրինակ էլ գալիս է Սենեկայի ազգական և Պողոսին ժամանակակից Լուկանոսից: Իր Pharsalia¹-ներում Կատոնի մահը նա նկարագրում է իբրև քավիչ զոհաբերություն: Իր գործի գագաթնակետում Կատոնն ասում է. «Հռոմեացիների խստապահանջ աստվածները գոնե կարողանային ընդունել լիակատար քավություն, երկու բանակները գոնե խոցեին ինձ. արյունս կքավի ժողովրդի մեղքերը, իմ մահով ավարտին կհասցվի քավությունն այն ամենի, ինչին հռոմեացիները արժանացել են բարոյական իրենց անկմամբ»: Այս խոսքերն օգնում են հասկանալ, թե քրիստոնեական ամենապարզունակ գրվածքներն ինչու կարող էին հասկացվել հույների ու հռոմեացիների կողմից:

Բ. ԽՈՐՀՐԴԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՂ ԿՐՈՆՆԵՐ

Հեթանոսական կրոնն աշխույժ էր հատկապես Արևելքի հռոմեական գավառներում՝ Կապադովկիայում, Սիրիայում ու Եգիպտոսում: Գալով Ալեքսանդրիայից՝ Իսիսի և Սերապիսի պաշտամունքները, մեր թվարկությանը նախորդող վերջին երկու դարերի ընթացքում, հունա-հռոմեական աշխարհում տարածվեցին ծովայինների ու վաճառականների կողմից: Փյունիկյան ծովայինների ու վաճառականների ջանքերով՝ տարածվեցին Ատարգատիսի (Աստարտե, Ափրոդիտե) պաշտամունքները, որոնք եկել են Սիրիայից: Փռյուզիայից են գալիս Ատտիսի և Կիբելայի պաշտամունքները, որոնք Հռոմի կողմից պաշտոնապես ընդունվել են

¹ Խոսքը «Փարսալիա կամ քաղաքացիական պատերազմի մասին» պատմական անավարտ պոեմի մասին է:

սկսած մ. թ. ա. 204 թվականից: Էլ ավելի հեռվից է գալիս Միթրասի՝ իրանական աստծու պաշտամունքը:

«Խորհրդավորությունները» գաղտնիքին հաղորդակից դարձնելուն միտված ծիսակատարություններ են: Խորհրդավորություն պարունակող կրոնները՝ արևելյան և հելլենիստական, փոխադարձաբար ազդեցություն են գործում միմյանց վրա: Նշենք Դեմետրայի (Էլևսիս), Դիոնիսոսի, Կիբելայի, Իսիսի պաշտամունքները... Վերջին երեքը տեղայնացված չեն, ունեն համաշխարհային բնույթ: Գաղտնիքներին հաղորդակից դարձնելը բարոյական ոչ մի բնույթ չունի, սակայն նպաստել է կրոնական զգացմունքների խորացմանը՝ արթնացնելով այնպիսի զգացողությունը, մահվանից հետո այնպիսի կյանքի հույսը, Աստծուն միանալու ցանկությունը, «փրկիչ-աստվածների» գաղափարը:

Որոշ հեթանոսների մոտ Աստծու որոնումը զարմանալիորեն նուրբ գործ է: Պլատոնականությունը, այնուհետև՝ Պլատոնի նեոպլատոնականությունը, այլ ճանապարհներով, քան գնոստիցիզմի կամ gnose¹-ի ուղին է, փորձում են մոտենալ Աստծուն: Այս միտումներն իրենց տեղը պետք է գտնեն խորհրդապաշտ այն համադրման մեջ, որն իրականացավ, մասնավորապես, Դիոնիսոս Արեոպագացու (V դար) միջոցով:

Հեթանոս լավագույն փիլիսոփաներից ոմանք գոյության, այն կառավարող իմաստության սկզբունքների շուրջ խորհրդածելու փորձեր արեցին: Ժողովրդական մտայնությունից վեր մշակվում է ընտրյալների կողմից ընդունված մշակույթ: Առաջարկվում էր ոչ միայն ապրելու, այլև մտածելու արվեստ: Բարոյական ու մտավոր այս մշակույթը չանտեսվեց նորաստեղծ Եկեղեցու կողմից: Հետադարձում ու հավատափոխ փիլիսոփաները այն տարան Եկեղեցի: Ստոիցիզմն ու պլատոնականությունը տեղ գտան մի համադրման կազմում, որի դրական տարրերը կարող էին փոխառվել վաղ շրջանի քրիստոնեության կողմից և փոխառվեցին: Երբ, սկսած XVI դարից, աշխարհը դուրս եկավ Եկեղեցուց, ապա իր հետ տարավ այն, ինչ մի ժամանակ բերել էր՝ ստանալով քրիստոնեացված աշխարհի տեսք, որը բավականին տարբեր էր աշխարհականացող, իր կողմից ժխտվող աշխարհից:

Ավելի դժվար է նկարագրել ժողովրդի ներմուծած ավանդը, բայց դա եղավ իրական: Բարոյական մակարդակը ցածր էր: Այս մասին գաղափար կարելի է կազմել Պողոսի բնագրից, որտեղ նկարագրված են հեթանոսների բարքերը և այն, ինչ դրանցից մնացել է հեթանոսությունից սերված քրիստոնյաների մոտ: Կրոնական տեսանկյունից իշխում էին դյուրահավատությունն ու սնահավատությունը: Չնայած կայսերական հրովարտակին՝ աստղագիտությունը, ինչպես նաև կախարդությունն ու գուշակությունը ծաղկում էին ապրում: Ժողովրդի միջոցով քրիստոնեություն են թափանցում կրոնական նախնական ձևերը. մահացածների պաշտամունքը և նրանց հետ ունեցած հարաբերությունները, սնահավատությունները, խորհուրդների ներգործությունը կախարդի (որ քահանան է) միջոցով:

Հիմնադիր ու ավանդական կրոնի կանոնավոր անկման հետ մեկտեղ, զգալիորեն աճեց մասնակցությունը այսպես կոչված «խորհրդավորություն» պարունակող ծիսակատարություններին: Այս ծիսակատարությունը կարող է սահմանվել իբրև գաղտնի ծես, որով մասնավոր անձինք ընտրում են գաղտնիքին հաղորդակից դարձած մարդկանց, հատուկ հարաբերու-

¹ Փիլիսոփայական ելլեկտիզմ, որը հավանում է հաշտեցնել բոլոր կրոնները և դրանց խորունկ իմաստը բացատրել աստվածային բաների էզոտերիկ (ներքին) իմացությամբ:

թյան մեջ են մտնում Աստծու հետ և համոզված են, որ դրանից օգուտ կստանան: Օրինակ, Դիոնիսոսն այն աստվածն է, ով մեռնում է, հարություն առնում՝ ապահովելով հողի բերրիությունն ու զինու խնորունը: Ամբրոսյան նեկտարի սպառումը, եթե այս նեկտարն առնչվում է անգուսպ ծեսերի, պաշտողի մեջ այն զգացումն է առաջացնում, իբր ինքը հաղորդության մեջ է Դիոնիսոսի հարության ու առեղծվածի հետ: Գյուղատնտեսության շրջանակում առեղծված պարունակող կրոնները Աստծու մահվան ու հարության իրադարձությունները նշում են ցանքսի և հունձքի պահին: Քաղաքային շրջանակներում առեղծվածները պաշտողին ազատագրում են սովորական գոյությունից. մահվան ու հարության հետ նույնացումը ծեսն իրականացողին ընդունակ է դարձնում կիսելու կյանքի առեղծվածը և խառնվելու տիեզերական կարգին:

Գ. ՑԻՆԻԿՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Ցինիզմը նույն այս դարաշրջանի հունական մտքի մեկ այլ կարևոր ծավալում է: Ցինիզմի գլխավոր մունետիկներից մեկը՝ Դիոգենես Լաերտացին, ցինիկների նախակարապետին՝ Անտիսթենեսին է վերագրում հեղափոխական այն նախազգացումը, որի համաձայն տառապանքն ունի առաքինություններ ու արժանիքներ: Դիոգենեսն ընդունել, զարգացրել, շարադրել ու մասսայականացրել է իր նախորդի ուսմունքը: Կյանքի նրա գլխավոր նպատակը հարստությունը, փառքը, հաճույքը, կյանքն արհամարհելը և դրանց հակառակ հասկացությունների՝ աղքատության, վատ համբավի, դաժան բարքերի ու մահվան գերապատվությունն արժեքավորելն է:

Ցինիզմի բնույթի ցինիկյան հասկացողության հիմքում չորս էական տարրեր են՝ աշխարհի հռետեսական պատկերացում, իմաստունի՝ արհամարհված փոքրամասնության մաս կազմելը, մագոլիզմի միտումը, տառապանքի՝ բնության մաս կազմելը, որով էլ բացատրվում է դրա օգտակար լինելը:

Անժխտելի է այն, որ թափառաշրջիկ ցինիկ փիլիսոփաները գունազարդել են այն ձևը, որով Նոր Կտակարանի ժամանակակիցները դիտում էին քրիստոնյաներին: Սակայն անհեթեթ կլիներ, ինչպես փորձել են անել, ցինիզմի հետքեր փնտրել Պողոսի որոշ գրվածքներում, մասնավորապես նրանցում, որտեղ խոսվում է նրա տառապանքների, ծանր աշխատանքի մասին և կամ էլ՝ Հիսուսի գործելակերպի որոշ դրսևորումներում (Մարկոս 6:8, Ղուկաս 9, Մատթեոս 6:19-34):

Դ. ԱՏՈՒՑԻԶՄ

Ցինիկներին կարելի է նմանեցնել ստոիկներին: Սակայն վերջիններս որդեգրում են առավելապես փիլիսոփայական դիրքորոշում և տալիս աշխարհի այնպիսի բացատրություն, որ ցինիկները չեն արել: Նրանք մտածել են ավելի համակարգված ձևով: Թվում է՝ ստոիցիզմն ունի երեք հիմնական մտահոգություն՝ ֆիզիկա, տրամաբանություն ու բարոյագիտություն: Համաձայն ֆիզիկայի՝ աշխարհը մասամբ ակտիվ, մասամբ էլ պասիվ ոչ նյութե-

դեն ուժի մարմնացումն է: Ակտիվ մասնաբաժինը կոչվում է հոգի: Աստվածային լոգոսը վերահսկում է տիեզերքը և թափանցում ամբողջ արարչագործության մեջ: Ընդհանուր առմամբ կարծում են, որ աստվածային այս լոգոսը տիեզերքի հոգին է, իսկ մարդ անհատի հոգին դիտվում է որպես լոգոսի արտահոսք. հետևապես, այն ևս աստվածային է: Ստոիկների կարծիքով, Աստված սահմանում է աշխարհն ու բոլոր իրադարձությունները: Նախախնամությունը նրա ռացիոնալությունն է: Չէ՞ որ պատմական գործընթացն ունի որոշակի նպատակ. նախախնամությունը հնարավորություն է տալիս աշխարհը պահպանել կարգուկանոնի մեջ և նպաստավոր է մարդկության համար: Ցավը, տառապանքն ու չարիքը գործում են արդարացիորեն և որոշակի նպատակով: Ցինիկների պես ստոիկները նույնպես ցավը համարում են դրական գործոն:

Լինելով լիովին խորթ Յին Կտակարանի հիմնական ոգուն (Յին Կտակարանը հաստատում է հատուցման սկզբունք. բարին հատուցվում է, չարը՝ պատժվում) հասկացությունը, որի համաձայն տառապանքն ինչ-որ չափով բարերար է, բավականին հարազատ է Նոր Կտակարանին (Յռոմ. 5:3-5, Եբր. 12:4-13, Յակոբոս 1:2-4):

Ոմանք գտնում են, որ Պողոսը, հավանաբար, կրել է ստոիցիզմի ազդեցությունը, մի բան, որը երևում էր սուր քննադատություններ անելու, բանավեճերի մեջ մտնելու նրա կարողությունից՝ իրեն պատկերացնելով երևակայական հակառակորդ: Բացի այդ՝ Նոր Կտակարանում կարելի է գտնել երկուսի համար ընդհանուր բառեր, ինչպիսիք են՝ ինքնաբավություն, ոգի, խիղճ, լոգոս, առաքինություն և այլն: Եվ, վերջապես, օրենքների ամբողջությունը (Եփես. 5:21-6:9, Կողոս. 3:13-4:1, Ա. Պետրոս 2:13-3:7), ինչպես ձևով, այնպես էլ բովանդակությամբ, թույլ են տալիս ենթադրություն անել ստոիկյան ազդեցության մասին:

Ե. ԳՆՈՍՏԻՑԻԶՄ

Գաղտնիքին հաղորդակից լինելու միջոցով իրականացվող փրկության հասկացությանն ավելանում կամ հակադրվում էր իմացությամբ իրականացվող փրկության գաղափարը (գնոստիկների տեսությունը): Օրփեոսականությունն ու նեոպլաթոնիզմն իրենց չարաշահումներով մոտենում էին փիլիսոփայությանն ու ճանապարհի հարթում գնոստիցիզմի համար: Գնոստիկների տեսությունը գտնվում է մտքին անմատչելի գրվածքներում: Այս գործերում հունարենի ու եգիպտերենի տարրերը միաձուլված և ներկայացված են Յերմես Տրիսեմեգիստոս (Տոտ աստծու հետ նույնացված) անվամբ: Գնոստիցիզմը ձեռք է բերել հրեական տեսակետներ, որ կարելի է գտնել հեսեների և Փիլոն Ալեքսանդրացու՝ մ. թ. առաջին դարի հրեա ոչ ուղղափառ հեղինակի մոտ: Գնոստիկ յուրաքանչյուր դոկտոր նյութը ձևավորել է անհատականության զգացումով, այնպես որ գնոստիցիզմը դարձել է ավելի շուտ անհատական կառույցների խառնաշփոթ մի կարգի համապատասխանող ընդհանուր գիտաբան: Եթե դա չմոռանանք, ապա կկարողանանք կազմել կրոնաառասպելական մտքի այս հոսանքի ընդհանուր գծապատկեր: Գնոստիկների մեծ մասը կարծում է, թե նյութն ինքնին վատն է. մինչդեռ հոգին լավն է: Գնոստիցիզմի տեսությունը դուալիզմն է, որն այնպիսի-նային աշխարհը բաժանում է այսպիսի-նայինից, ճշմարտությունը՝ ստից, իմացությունն՝ անգիտությունից, լույսը՝ խավարից, հոգին՝ նյութից: Սակայն սրանք այնպիսի բաժանում-

ներ ու հակադրություններ են, որոնք ելնում են ոչ թե բարոյական, ինչպես աստվածային հայտնության դեպքում է, այլ էության՝ մետաֆիզիկայի կարգից: Ըստ գնոստիկական մարդաբանության՝ մարդիկ անգետ են ու կույրեր, ստեղծված են անգիտության խավարի մեջ աննպատակ արկածախնդրությամբ զբաղվելու նպատակով: Նրանցից ոմանք աստվածային կայծ ունեն: Աստված մի փրկիչ է ուղարկել, որն էլ միջամտել ու լուսավորել է մոլորյալներին. հայտնել է նյութական աշխարհից խուսափելու ուղին: Մեկ անգամ լուսավորելով և տեր դառնալով հատուկ իմացության (հունարեն՝ gnosis)՝ գնոստիկներն ընդունում են երկնային իրենց քաղաքացիությունը, ծագումը, ճակատագիրը:

Գնոստիցիզմին բնորոշ որոշ թեմաներ բովանդակում են հետևյալ գաղափարները. միջնորդ հոգու գոյություն՝ նախասկզբի արտահոսք, մարդկային էակների դասակարգեր, որոնք սահմանում են սեփական ճակատագիրը, հոգևոր գոյության շեշտադրում, ազատություն բարոյական օրենքի հանդեպ, մի բան, որը հանգեցնում է կամ ճգնափորության, կամ էլ սանձարձակության ու կատարյալ խառնաշփոթի, տիեզերքի գաղտնիքները իմանալու ցանկություն, օտարացման զգացում՝ աշխարհի և մտահոգություն՝ չարիքի խնդրի հանդեպ:

Նոր Կտակարանում քննադատված որոշ կեղծ ուսմունքների թիրախը ստոիկյան տարրերն են: Կորնթացիներին ուղղված նամակների որոշ թեմաների, ինչպես, օրինակ, իմաստությանը, ճանաչողությանը, ազատությանը, հոգևոր փորձառությանը և այլն, վերաբերող դատողությունները տարօրինակորեն նման են գնոստիկյան գաղափարներին: Յովհաննու Ավետարանի երկվությունները (կյանք-մահ, ճշմարտություն-սուտ, լույս-խավար) նման են գնոստիկյան դպրոցին հարազատ երկվություններին: Կողոսացիներին ուղղված նամակը պայքարում է տիեզերական չարաշահման միտում ունեցող մի հերետիկոսության դեմ: Յովվական (Տիմոթեսին և Տիտոսին ուղղված) նամակները պայքար են մղում ասկետության, ոգիների չարաշահման պրակտիկային վերաբերող կեղծ ուսմունքի, գերագույն իմացության բացառիկ հավակնության և սանձարձակ վարքի միտման դեմ: Այս ուրվագծերը ուղղակի նմանություններ ունեն Կորնթացիներին ուղղված նամակների թեմաների հետ:

Մենք արդեն նկարագրել ենք, թեև անբավարար ձևով, Նոր Կտակարանի հոգևոր ետնախորքը, որը, սակայն, հնարավորություն կտա ըմբռնել, թե ինչ շրջանակում է գրվել Նոր Կտակարանը, և թե ինչ միջավայրերում են ապրել ու վկայություններ տվել քրիստոնեական առաջին համայնքները: Մենք նշել ենք գլխավոր շարժումները, բայց կան նաև ուրիշները, որոնց ներառումն այս գլխի մեջ համարել ենք ոչ օգտակար: Նրանք, ովքեր ուզում են խորացնել իրենց գիտելիքները, լավ կանեն, եթե ընթերցեն Նոր Կտակարանի մեկնաբանության, կամ էլ նրան ժամանակակից պատմության խորացված ուսումնասիրություններ:

Գ Լ ՈՒ Խ 9.

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Ա. ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

1. Մեկնության գիտությունը

«Չերմենևտիկան հին տեքստեր մեկնաբանող գիտություն է»,- ասում էր H. Blocher-ը՝ քրիստոնյա բողոքականների միության կազմակերպած մի գիտաժողովի ժամանակ: Դասական այս սահմանումը, որը համապատասխանում է ստուգաբանությանը, ապահովում է գիտաբանի օգտակարությունն, այն դեպքում, երբ տարածում գտնող հեղինակը կամ այլաբանական կիրառությունն այն վերածում է բառ-լուզուճի, բառ-նշանի, բորբոքում քաղաքական կրթեր՝ ցանկանալով ամաչեցնել այլադավաններին:

Մեկնաբանել՝ նշանակում է իմաստն արտահայտել այնպես ու այնպիսի լեզվով, որը կհեշտացնե՛ր հասկանալը: Հարկ չկա «մեկնաբանություն» բառին տալ խորհրդանշանին հատուկ «երկակի» իմաստ՝ սրանք արհեստականորեն բաժանելով նշաններից: Հասկանալ՝ նշանակում է ստանալ ուրիշի խոսքով սահմանված իմաստը:

Հարկ է ընդգծել հետևյալ կետերը.

ա) Իմաստն ելնում է ոչ թե լեզվի (կող, «organon»), այլ խոսքի կարգից.

բ) Իմաստն օբյեկտիվորեն նախորդում է հասկացության իրողության մեջ իր ըմբռնմանը.

գ) Իմաստի ընդունումը, իբրև այդպիսին, ակտ է. իմաստը մտածվում է երկու անգամ:

Մենք հասկանում ենք, երբ տեսնում ենք միաժամանակ և՛ ուրիշների, և՛ մեր աչքերով, երբ ներքուստ պատկերացնում և ինտեգրում ենք մեր մտածողությանը այն, ինչ առաջինն է մտահղացվել: Աստծու խոսքի խելացիությունն այս կառուցվածքն արտացոլում է սաղմոսագրի խոսքերով. «Քո լույսի մեջ մենք տեսնում ենք լույս» (Սաղմ. 36:9), իսկ Որդու՝ Հորն ուղղված գովասանքում՝ բարձրագույն պարադիգմա. Exomologoumais soi, Patèr (Մատթեոս 11:25):

Հարկավոր է մերժել՝ մեկնաբանին իմաստ արտադրող դարձնելու միտումը: Ընդհանրապես, սխալ է ըմբռնողությունը սահմանափակել ինքնաըմբռնողությամբ. թող այն, իբրև գուտ վճիռ, հակադրեն փաստերի վերաբերյալ տեղեկությանն ու պատճառական բացատրությանը (հայտնությանը խորթ բնություն-ազատություն անտիմոնիայի ազդեցությամբ) կամ էլ մարդկային մշակույթի խորհրդանշանների ու պատկերների շնորհիվ հավակնեն, թե յուրացրել են նրա էությունն ու լինեն այդպիսին (առանց հարգելու այլափոխությունը, ընդհակառակը՝ հակվելով դեպի մոնիստական հեռանկարներ):

2. Մեկնության ծավալումը

1. *Պայմանները:* Մեկնաբանության գործընթացը ենթադրում է երկու լեզուների գոյություն. առաջինն ընդհանուր է խոսքի հեղինակին ու նրա մեկնաբանին, իսկ երկրորդը հատուկ է մեկնաբանին և նրան, ով հասկանում է (երբ մեկնիչն ինքը չէ), և ընդունակ են արտահայտելու համարժեք իմաստներ:

Չեղիմակը, մեկնիչը և նա, ով հասկանում է, պետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ունենան խոսքի մատնանշված առարկայի նախընթացնությունը, առարկա, որի հիմքում նրա հետ ունեցած «կենսական» հարաբերությունն է, առանց որի ոչ մի ըմբռնություն հնարավոր չէ:

2. Լեզուների համապատասխանությունը: Ոչ մի լեզու չի անջատվում պատմահասարակական իրավիճակից: Լեզուների միջև եղած տարածությունն անցնող մեկնաբանությունը պահանջում է, որ իրավիճակները չլինեն արմատապես տարբեր, որ նրանց միջև լինեն բավականաչափ ընդհանրություն ու նմանություն:

Մարդկային սեռի միասնականության, մարդկային բնույթի հավիտենականության և Աստծու առաջնորդած պատմության միասնականության աստվածաշնչյան պատկերացումը երաշխավորում է մեկնաբանության հնարավորությունը:

Իրավիճակների բազմազանությունը, սակայն, մեկնաբանության ծավալումը ներառում է երկու բևեռների միջև. հեղիմակի պատմական համատեքստին վերաբերող իմաստի արտահայտության մեկնաբանման բևեռ և հասկացողի պատմական ենթատեքստին վերաբերող նույն իմաստի («համարժեք» իմաստի) արտահայտության մեկնաբանության բևեռ: Մեկնաբանությունը չպետք է շփոթել ո՛չ կիրառության, ո՛չ էլ հետևանքների արտածման հետ, ինչպես հարկ է տարբերել խոսքերի ու բերված փաստերի մեկնաբանությունները (նշանի իմաստի և առարկայի իմաստի տարբերակում):

Մեկնաբանությունը կլինի հավատարիմ, եթե երկու լեզուներում էլ արտահայտությունները «համարժեք» են:

3. Մտքերի երկվությունը: Հասկանալ՝ նշանակում է դատել յուրովի, նշանակում է տեսնել միաժամանակ թե՛ իր և թե՛ ուրիշների աչքերով: Որևէ խոսքի լիակատար ըմբռնումը ներառում է այս խոսքի արժեքի գնահատականն ու նրա ստեղծման վերաբերյալ կարծիքը. ուրիշի առաջարկած տեսակետը ներառվում է ընդունողի ամբողջական տեսակետի մեջ:

Սրանից հետևում է, որ կարելի է տարբերել իրականության մեջ միմյանց հետ սերտ կապված երկու «պահ» ընթերցանության պահը, երբ ուրիշի միտքը թափառում է մեր մեջ, և «կրկնության» (ոմանք օգտագործում են «մեկնաբանություն» անվանումը) պահը, երբ, իր հերթին, մտածում ենք այդ մտքի շուրջ:

Երբ դրանք հեռանում են միմյանցից, մեկնաբանությունն ավելի ու ավելի է ձեռք բերում անկախ խոսքի հատկանիշներ:

Մեկնաբանությունը կլինի ճիշտ ոչ միայն հավատարիմ լինելու, այլև առաջարկված իմաստն ինտեգրող մտքի ճշտության դեպքում:

N. B.¹ Գրավոր ավանդը էական ոչինչ չի փոխում խոսքի կարգավիճակում: Շաղակրատել «մեռած խոսքի» մասին, որին մեկնիչը, իբր, կյանք կպարգևի, նշանակում է օգտագործել խաբուսիկ ու անհիմն փոխաբերություն:

4. Կանոնները: Մեկնիչն առաջնորդվում է երկու գլխավոր սկզբունքներով. ա) խոսքի ինքնաներկայացում, խոսողի կողմից լեզվի ըմբռնում ու կիրառում (նախածեռնությունը նրանն է), բ) ամբողջական պատկերացում, որի մեջ ընդունում և ինտեգրում է իր հասկացած խոսքերը:

¹ (լատ.) nota bene՝ լավ հիշել

3. Սուրբ Գրքի մեկնությունը

Սուրբ Գիրքը եզակի է նրանով, որ Աստծու ներշնչված պատգամաբերների կողմից հայտնված խոսքն է և որ նախ խոսում է Աստծու ու նրա գործի մասին:

Պայմանները: Հարկ է հաստատել Աստծու՝ իր միտքն արտահայտելու համար օգտագործած մարդկային լեզուների պիտանիությունը (Ա. Կորնթ. 2): Այն հիմնվում է արարիչ Աստծու հետ ունեցած կապի վրա («Ընդհանուր հայտնություն»):

Արարմանը վերաբերող ուսմունքը նմանապես ցույց է տալիս, որ մարդը խոսքի առարկային կապված է կենսական հարաբերությամբ ու նախընթացությամբ (մեղքի դեպքում՝ նախա-անընթացությամբ), որոնց վրա էլ հիմնվում է ըմբռնողության ձևական հնարավորությունը (Գործք 17 և Հռոմ. 1):

Նոր ստեղծագործության իրողություններում, որը միայն շտկում է աղավաղված նախասկզբնական հարաբերությունը և ընծեռում ճիշտ ըմբռնողության հնարավորություն, հարաբերությունը Սուրբ Հոգու գործունեության մեջ է. յուրաքանչյուրին այն հատկացված է անհատապես, իսկ Եկեղեցուն՝ խմբակային ձևով:

2. Լեզուների հաղորդակցությունը: Սուրբ գրքի սկզբնական լեզուներից մինչև մեր լեզուներն ընկած տարածությունն անցնելն ավելի է հեշտանում, եթե, ընդհանուր առմամբ, տեքստերը վերաբերում են պատմության համար արժեք ներկայացնող փաստերին և մարդկային փորձի հաստատուն տարրերին:

Հին տնտեսության լեզվի համարժեքների համար Նոր Կտակարանն ինքն է ներկայացնում հիմնական գծերը: Հարկ չկա բազմապատկել իմաստները: «Լիարժեք իմաստը» կարող է լինել ընդամենը բառացի, լավագույն դեպքում՝ ողջ ծավալով հասկանալի «գրական» իմաստ:

3. Մտքերի երկվությունը: Եթե հավատացյալը հասկանում է Սուրբ Գիրքը, ապա իր տիրուջից ստանում է միտք: Ուստի, այս միտքն իր սեփական մտքին ինտեգրել կարողանալու համար նա պետք է թույլ տա, որ առաջինն ամբողջապես իշխի իր մտածողությանը և ինքնիշխան ձևով վերափոխի այն, ինչ ինքը մտածում էր: Եզակի այս դեպքում մեկնաբանություն-«կրկնությունը» կարող է լինել ընդամենը ազատ և ազատագրող հնազանդություն: Աստծու խոսքը հասկանալ կարող ենք միայն այն դեպքում, եթե տեսնենք այնպես, ինչպես նա է տեսնում:

Այս իմաստով, պետք է հրաժարվենք ցանկացած «մեկնաբանությունից», որը կհավակներ լինել այլ բան, քան «ընթերցում»: Բնորոշ այս գծով է տարբերվում Սուրբ Գրքի մեկնությունը:

Մեր ըմբռնման բարեփոխումը բախվում է մեր բնական ցանկությանը. այս պատճառով ևս Սուրբ Հոգու գործն անհրաժեշտ է ճիշտ մեկնաբանության համար:

4. Ընդհանուր կանոնը: Եթե մեկնիչի մտածողությունն ամբողջապես ենթարկվում է բնագրի մտածողությանը, այն այլևս կանոն չէ, այլ կանոնացված:

Միակ կանոնը Սուրբ Գրքի ինքնաներկայացումն է. *Scriptura semetipsam interpretans.*

4. Աստվածաշնչյան մեկնության պրակտիկան

Բողոքականների հետ մեկտեղ պետք է փառաբանել Սուրբ Գրքին հատուկ պարզությունը: Ինչ վերաբերում է փրկությանն անհրաժեշտ ճշմարտությանը, ապա այն հարաբերական է դարձնում մեկնաբանության կանոնների կարևորությունը՝ թույլ չտալով, սակայն, դրանք անտեսել:

1. *Աստվածաշնչյան ինքնաներկայացումը երկակի բնույթ ունի:* Սուրբ Գիրքը ներկայացնում է որպես տարբեր իրավիճակներում ասված մարդկային խոսքերի ժողովածու: Սակայն այս մարդիկ իրենց խոսքերին վերագրում են տրանսցենդենտալ ծագում՝ եզակի գոություն (exousia):

2. *Իր առաջին տեսանկյունում այս ինքնաներկայացումը մեզ թույլատրում* և պահանջում է գործի դնել գիտական մեկնության գոյություն ունեցող բոլոր մեթոդները. բանասիրական, պատմաքերականական մեթոդ, գրական ժանրերի և արտահայտության միջոցների հետազոտություն (ոչ մեկը ապրիորի բացառված չէ, մինչդեռ կարելի է ենթադրել, որ ստեղծվել է լրիվ յուրահատուկ խոսք, և կամ, որ այս խոսքը վերստին կռում է իր գործիքները), կառուցվածքային մոտեցում՝ միայն թե չչփոթել լեզուն ու խոսքը:

3. *Իր երկրորդ տեսանկյունում* Սուրբ Գրքի ինքնաներկայացումը ցանկացած մեկնիչից պահանջում է բացարձակ համակրանքի ցանկալի չափաբաժին: Դա ենթադրում է, որ մեկնիչն իր դատողությունը երբեք չի կառուցի այն բանի դեմ, ինչ տեքստն, իր կարծիքով, ուզում է ասել:

Զգուշանալով հարկադրական ներդաշնակումից՝ մեկնաբանը պետք է աշխատի Սուրբ գրվածքների ներդաշնակության հանդեպ ունեցած վստահությամբ, ճիշտ այնպես, ինչպես գիտնական ֆիզիկոսը ենթադրում է, որ իրականը չի հակասում ինքն իրեն: Նրա առաջին օգնությունը բնագրերի համեմատությունն է (հավատի համամանություն):

4. Քանզի Սուրբ Հոգին անհրաժեշտ է իրեն, և այն Եկեղեցուն տրված Հոգի է, մեկնաբանը պետք է գործի անցյալի ու ներկայի հավատարիմ Եկեղեցու հաղորդության մեջ և մասնավորապես օգուվի այն ողորմածությունից, որ Սուրբ Հոգին բաշխել է Խոսքի միջնորդ գործունեության համար¹:

Բ. ԱՍԾՈՒ ԽՈՍՔՆ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԼԵԶՎՈՎ

Այս վերնագրի տակ կվերարտադրենք մեկ այլ ուսումնասիրություն, որը լույս է տեսել «Ավետարանական հեռանկարներ»-ի մի հին համարում:

1.Լեզվաբանությունը

Այս բաժնում համառոտ կխոսենք այն մասին, թե ինչ կարող ենք սովորել կամ չսովորել ընդհանուր լեզվաբանության մասին:

Արդի լեզվաբանության գլխավոր գաղափարներից մեկն այն կարծիքն է, որ չկա օրգանական կապ բառի և նրա մատնանշած իմաստի միջև: Այս դեպքում նշվում է այն փաստը, որ մեզ հայտնի կաթնամթերքն, օրինակ, նայած, թե ինչ լեզվով են խոսում, կարող է մատ-

¹ Henri Blocher; texte d'une étude présentée lors des journées d'études, organisées par l' ACRC à Paris.

նանշվել «պանիր» «fromage», «cheese», «kaas», «käse» և այլն, բառերով: Այստեղ անվանված իրականությունն ամբողջ աշխարհում մատնանշվում է մեծ քանակությամբ բառերով, այնպես որ չի կարող հարց լինել բառի և նրա անվանման միջև եղած օրգանական կապի մասին: Սա է ընդհանուր լեզվաբանության դրույթը:

Որքան էլ որ այս տվյալը հետաքրքիր լինի ուսումնասիրության համար, այն կարևոր չէ անգամ տվյալ լեզուն կրողի կյանքի համար: Ֆրանսիացու, հոլանդացու կամ կորեացու համար սերտ կապ կա իր լեզվի բառի և այդ բառի անվանած գաղափարի կամ իրողության միջև, կապ, որտեղ խոսք կարող է լինել կյանքի կամ մահվան մասին: Կարևորն այն է, որ տվյալ լեզվակրի համար գոյություն ունի հենց այս կապը, որն էլ արժանի է մեր ուշադրությանը:

Որքանով որ դա հնարավոր է՝ լեզվաբանները փորձել են գաղափար կազմել այսօրվա խոսակցական լեզուների բարեշրջման մասին: Այսպես, նրանց կարծիքով, ազգակցական կապեր կան լատիներենի, հունարենի, սանսկրիտի, գերմանական, սլավոնական ու կելտական լեզուների միջև: Փորձում են ձևակերպել հնչունաբանական օրենքներ, որոնց համաձայն որոշ լեզուներ առաջացել են այլ լեզուներից, օրինակ, ռոմանական լեզուներն առաջացել են ժողովրդական լատիներենից:

Լեզվաբանության համար լեզվի ծագման հարցը անլուծելի խնդիր է: XIX դարում դարձյալ փորձել են հարցի պատասխանը գտնել բնական գիտությունների սկզբունքների ու մեթոդների, այսինքն՝ բարեշրջման ուսմունքին համապատասխան: Մեր դարում, սակայն, այս խնդիրը դրվել է մի կողմ, և լեզվաբանությունն ամենից առաջ զբաղվում է լեզուների հիօ և ոսոց (այստեղ և այժմ) գործառնությամբ, այս կամ այն լեզվի համակարգի գործառնությամբ, այն հարցով, թե տարբեր լեզուների կրողները ինչպես են շարադասում բառերը և ինչպես են կառուցում նախադասություններ:

2. Լեզվի ծագումը

Այն, ինչը լեզվաբանների համար մնում է իբրև հիմնախնդիր, հավատացյալներիս համար չպետք է հանելուկ մնա: Սուրբ Գրքերը մեզ սովորեցնում են, որ ամեն ինչ Աստծուց է: Մեր Աստված միշտ և ամեն ինչում եղել է առաջինը: Նա նաև առաջինն է խոսել: Աշխարհի արարումից սկսած՝ նա ասել է այնպիսի բառեր, որոնք մարդը, եթե ուզում էր լինել հնազանդ, պետք է կրկներ՝ հարգելով դրանց ձևն ու բովանդակությունը:

Մեր Փրկիչը նաև վկայակոչել է այս խոսող Աստծու մասին: Հովհաննես առաքյալը, որը կարող էր ուրախանալ Տեր Հիսուսի՝ իր նկատմամբ ունեցած սիրո համար, և որը ընթրիքի ժամանակ գլուխը դրել էր իր կրծքին, նշել է, որ Տերը չարչարանքներից առաջ, այլ խոսքերից բացի, ասել է նաև հետևյալը.

«Նա, ով ինձ մերժում է և չի ընդունում իմ խոսքերը, ունի դատավոր. խոսքը, որ հայտնել եմ, վերջին օրը դատաստան կտեսնի նրա նկատմամբ: Չէ՞ որ բնավ չեմ խոսել իմ մասին. Հայրը, որ ուղարկել է ինձ, նախապես հայտնել է, թե ինչ պետք է ասել ու հայտարարել: Եվ ես գիտեմ, որ նրա պատվիրանը հավիտենական կյանքն է: Ահա թե ինչու այն, ինչ ասում եմ, ասում եմ այնպես, ինչպես Հայրն է ինձ ասել»:

Քանի որ մեր Փրկիչը եղել է հնազանդ, հնազանդ է եղել նաև խոսելիս: Նա չէր ասում իր

սրտով բխող բառեր, այլ կրկնում էր այն, ինչ առաջինը Հայրն էր ասել: Այսօր կան մարդիկ, ովքեր իրենց համարում են քրիստոնյաներ և կասկածում են, որ Տեր Հիսուսի՝ Աստվածաշնչում գրված քարոզներն իսկապես ասվել են մեր Փրկչի կողմից այնպես, ինչպես գրված են: Մենք, սակայն, ելնում ենք հավատքի վերաբերյալ կանխակալ այն կարծիքից, որ ամբողջ Սուրբ Գիրքը թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ Աստծու անսխալ ու արժանահավատ խոսքն է, որը գործությամբ հասնում է մեզ: Մենք հավատում ենք, որ Աստվածաշունչը Աստծու վկայությունն է, որը մարգարեների ու առաքյալների միջոցով գրվել է Սուրբ Հոգուն հարմար ձևով ու բովանդակությամբ: Սուրբ Գիրքը սովորեցնում է, որ առաջին մարդը՝ Ադամը, լեզու սովորել է հենց իրեն Արարող Աստծուց: Աստված իր կատարած որոշ գործերի անուններ տվեց: Այսպես, նա լույսն անվանեց «ցերեկ», իսկ մութը՝ «գիշեր»: Տարածությանը նա տվեց «երկինք» անվանումը, չոր մասն անվանեց «ցամաք», իսկ ջրերի զբաղեցրած տարածքը՝ «ծովեր»: Աստծու այս գործերը (նրա ձեռքերի) պետք է, որ ունենային Աստծու կողմից տրված անվանումներ: Մենք չգիտենք, թե այդ բառերն ինչպես էին հնչում Ադամի ու նրա կնոջ լեզվում:

Սա այնքան էլ կարևոր չէ: Կարևորն այն է, որ Ադամն ու իր կինը, ինչպես նաև նրանց երեխաները, խոսելով արարման այս գործերի մասին, դրանք մատնանշում էին այն բառերով, որ Աստված նշանակել և ասել էր առաջին անգամ: Եվ այսպես, Աստված, ստեղծելով մարդուն, նրան նաև սովորեցրել է իր լեզուն: Իրոք, Աստվածաշնչից հայտնի է, որ Աստված Ադամի հետ խոսում էր ամեն տեսակ բաների մասին: Երբ Ադամը լսում էր ծանոթ ու հարազատ ձայնը, գիտեր, որ Եհովան շրջում է այգում: Աստված նրա հետ խոսել է չարի ու բարու իմացության ծառի ու մահվան մասին, սովորեցրել է բառերը և դրանց մատնանշած գաղափարները, ինչպես, օրինակ՝ «բեղուն լինել», «բազմանալ», «լցնել երկիրը», «իշխել ձկների ու թռչունների վրա», «անասուններ», «սողուններ»: Աստված Ադամի հետ խոսել է նրա սննդի՝ սերմ պարունակող խոտի, ինչպես նաև երկրի ամեն կենդանու սննդի՝ կանաչ խոտի մասին: Աստված բոլոր այս բառերը սովորեցրել է մարդուն, որպեսզի վերջինս դրանք արտասանի իր լեզվով, խոսի այդ բառերով, դրանցից նախադասություններ կազմի:

Այն փաստը, որ մարդը կարողանում է հրաշալիորեն գործածել իր լեզուն, ակնհայտ է, քանզի նա անուններ է տվել կենդանի ամեն արարածի, բոլոր անասուններին, երկնքի թռչուններին, դաշտերի բոլոր կենդանիներին: Եհովան բոլոր այս կենդանիներին կանչեց իր մոտ, որպեսզի տեսներ, թե ինչ անուններ էր տալու նրանց: Ամեն կենդանի արարած անվանվելու էր մարդու կողմից: Եհովան մի պահ, այսպես ասած, մի կողմ քաշվեց՝ մարդուն ազատություն տալով գործելու իր իսկ սովորեցրած լեզվով: Չթերագնահատենք այն աշխատանքը, որ Ադամը կատարել է Աստծու ուշադիր հայացքի ներքո: Մարդն ինչքա՞ն անուններ պետք է տար՝ հարյուրավո՞ր, հազարավո՞ր, տասնյակ հազարավո՞ր: Անուն յուրաքանչյուր կենդանու, յուրաքանչյուր կենդանի արարածի համար՝ ըստ տեսակի: Բառարանը, որ Աստված սովորեցրել էր, և որին դիմում էր մարդը, ինչքա՞ն մեծ պետք է լիներ արդեն: Եվ հետո, նա ի՞նչ ծավալ հաղորդեց իր իսկ տրամադրության տակ գտնվող լեզվին: Խոսքն այստեղ համակարգի, լեզվական համակարգի մասին է, այլ ոչ թե միայն բառարանի, մի բան, որ երևում է մարդու՝ կնոջը տված անվանումից: Ադամը կնոջը նույնպես անուն տվեց, նա կոչվելու էր «կին»: Այն փաստից, որ «տղամարդ» բառից (եբրայերենում՝ ish)

կազմվում է իզական սեռի բառ (ashah), թվում է, կարելի է եզրակացնել, որ Ադամն իր լեզվում, լեզվական իր համակարգով, ինչպես էլ որ այն գործեր, ընդունակ էր արդեն իսկ գոյություն ունեցող արական սեռի բառից կազմել իզական սեռի բառ:

3. Բառի և առարկայի կապը

Աստված մարդուն սովորեցրել է իր լեզուն, որպեսզի նա անվանի որևէ գործողություն, իրադարձություն, վիճակ, հատկանիշ կամ առարկա՝ հաստատելով (դա այն է, ինչ պետք է իրականացնենք) բառի և առարկայի միջև կապը: Հնագանդ մարդը ինչքան երկար ժամանակ հարգեր այս կապը՝ նրա հարաբերությունն Աստծու հետ այնքան ավելի լավ կլիներ և անհնար կլիներ որևէ թյուրիմացություն նրա, նրա կնոջ ու երեխաների միջև: Այսպիսով, նրանց համար գոյություն ունի սերտ կապ Աստծու ձեռքի գործերի և այն բառերի միջև, որոնցից օգտվում էր՝ խոսելու արարման մասին, կապ, որ Աստված էր հաստատել: Մարդու և իր արարչի, մարդու՝ իր կնոջ ու սերունդների միջև լավ հարաբերություններ և իսկական հաղորդակցություն հնարավոր կլինեին միայն այն պայմանով, եթե մարդը գոհանար Աստծու կողմից հաստատված այս կապով, օգտվեր Աստծու տված անուններից և կրկներ այն, ինչ իր արարիչն առաջինն էր ասել: Ադամի գործածած բառերի և դրանց մատնանշած կենդանիների միջև կապը ևս կամայական չէր, այլ տրված էր տևականորեն. իրոք, այս կենդանիները կրելու էին Ադամի տված անունները, որոնք, սակայն, հավանություն են ստանում Աստծու կողմից, և նրանց գործածությունը պարտադիր էր Ադամի երեխաների համար:

4. Ջուգորդումներ

Ադամն ու իր կինը տնօրինում էին լեզվական մի համակարգ, որ Աստված ստեղծել էր իրենց համար, թելադրել էր իրենց, որով սովորեցրել էր աշխատել, զուգորդել բառերը և նախադասություններ կազմել, մի բան, որը մեզ ստիպում է մի կողմ նետել բառի ու նրա մատնանշած առարկայի, բառի և իրականության միջև կամայական կապի վերաբերյալ ցանկացած գաղափար: Աստծու հաստատած այս կապի յուրաքանչյուր խախտում, Աստծու կամեցած ու խրախուսած անունների յուրաքանչյուր չարաշահում կարող էր աղետալի հետևանքներ ունենալ:

Քիչ առաջ խոսեցինք մարդու՝ բառեր զուգորդելու ընդունակության մասին: Սրա տակ հասկանում ենք ոչ այնքան բարդ բառերի, ինչպես, օրինակ՝ arc-en-ciel¹ կազմը, որքան բառերի՝ մեկը մյուսի կողքին լինելը կամ նույն նախադասության մեջ մեկը մյուսին միանալը, այն, ինչ լեզվաբաններն անվանում են խոսքի շղթա: Աստված մարդուն տվել է այս հրամանը. «Դու կարող ես ուտել այգու բոլոր ծառերի պտուղները, բայց չպետք է ուտես բարու և չարի իմացության ծառի պտուղը, քանզի այն օրը, երբ դրանից ուտես՝ կմեռնես»: Այս հրամանի վերջին մասում գտնում ենք երեք գլխավոր տարր՝ ուտել, բարու և չարի իմացության ծառ, մեռնել: Պարզ է, որ այս բառերի զուգորդումը կամայական չէր, և որ նշված զուգորդությունը խախտելը կամ չխախտելը կյանքի կամ մահվան հարց էր: Մարդու համար գոյություն ուներ նաև անխախտելի կապ այս երեք բառերից յուրաքանչյուրի և

¹ Ֆրանս.՝ ծիածան (բառացիորեն՝ երկնակամար):

դրանց բովանդակության կամ նշանակության միջև: Ադամը ճշգրիտ գիտեր, թե ինչ էին նշանակում այս բառերը և, լսելով դրանք, մտածում էր այն բառերի, իրադարձությունների, գործողությունների մասին, որ Աստված անխախտելիորեն կապել էր այդ հնչյունների հետ: Եվ, վերջապես, անխախտ կապ կար այս զուգորդության բովանդակության, նշանակության և մարդու կյանքում դրա իրականացման միջև: Իրոք, Աստված գործում է ըստ իր խոսքի, իրականացնում է այն, ինչ ասել է: Նրա խոսքերն ունայն չեն:

Եթե մարդը խոսելիս գոհանար Աստծու տված այս զուգորդությամբ, եթե հնազանդորեն կրկներ բառերի այդ շարքը և գործեր դրանց արտահայտած իմաստին համապատասխան՝ ամեն ինչ լավ կլիներ: Մինչդեռ, հայտնի է պատմության շարունակությունը: Օձը՝ սատանան, ստի հայրը, դիմեց Եվային՝ Ադամի կնոջը, իր իսկ զուգորդությամբ: Օձի խոսքերում նույնպես գտնում ենք երեք հիմնական տարր. ուտել, բարու և չարի իմացության ծառ, լինել Աստծու պես: Աստծու տված զուգորդությունը փոխվել էր, և դրանով իսկ սուտը թափանցել էր Աստծու աշխարհ: Օձը լավ օգտվեց Աստծու՝ մարդուն սովորեցրած բառերից և հարգեց կապը այս բառերի ու նրանց մատնանշած առարկաների միջև: Դա այն էր, ինչ հարկ եղավ անել այս փուլում, այլապես նրա մտադրությունը կծախողվեր: Բայց նա չհարգեց զուգորդության անխախտելի կապը. ուտել, ծառ, մեռնել: Բառերի զուգորդությունը փոխվեց. ուտել, ծառ, լինել Աստծու պես: Քանի որ զուգորդման բովանդակությունը՝ սուտը, չէր համապատասխանում Աստծու թելադրած զուգորդության բովանդակությանը, նրա իրականացումը մարդու կյանքում անհնարին էր: Դա ունայն խոսք էր:

Թեև մարդու գործած մեղքին ու նրա անհնազանդությանը՝ Աստված շարունակել է խոսել նրա հետ, բառեր է սովորեցրել: Դրանք մասամբ նոր բառեր էին, որոնց հետ Աստված անքակտելիորեն կապում էր մարդկային լեզվով արտահայտված նոր գաղափարներ. երկնել ցավով, փշեր ու տատասկներ, չարչարանքով հողից սնունդ քաղել, վերստին փոշու վերածվել, բայց նաև՝ թշնամանք կնոջ և օձի սերունդների միջև:

5. Լեզուների խառնումը

Մինչև Բաբելոնի աշտարակաշինությունը, որի մասին հիշատակվում է «Ծննդոց»-ի 11-րդ գլխում, տղամարդը, կինը, իսկ հետագայում՝ նրանց բոլոր սերունդները խոսել են այն լեզվով, որի մեծ Ուսուցիչը եղել է Եհովա Աստված: Նրանք օգտվում էին բառերից, իսկ հնազանդ լինելու դեպքում նաև բառակապակցություններից՝ վերը նշված այն իմաստով, որ Աստված թելադրել էր իրենց հայր Ադամին: Կենդանիներին անուններ տալու համար մարդիկ օգտվում էին այն բառերից, որ Ադամն օգտագործել էր առաջին անգամ, և որոնք հավանության են արժանացել Աստծու կողմից: Ադամից մինչև Նոյ և Նոյից՝ Փաղեկ (Ծննդոց 10:25), լեզվի բառապաշարն ու համակարգը ծնողներից փոխանցվել են երեխաներին: Այս միակ լեզվով ու նույն բառերով խոսում են մարդու միլիոնավոր սերունդներ: Բացի այդ՝ բառի ու նրա մատնանշած առարկայի միջև կապը կամայական չէր, այլ Աստծու կամքով ու հաստատմամբ: Նշված կապի չարաշահումը լեզվի մեկ կամ բազմաթիվ օգտագործողների կողմից տեղի կտար թյուրիմացությունների և հաղորդակցության խզման:

Ինչ վերաբերում է Աստծու կողմից հաստատված բառազուգորդումներին, ապա մարդը կարող էր կամ դրանք կրկնել և, օգտվելով իր լեզվից, պահպանել կապակցությունների

բովանդակությունը. այս դեպքում նա հնազանդ էր, կամ էլ չհնազանդվելու դեպքում կրճատել դրանք, արմատախիլ անել, այլափոխել և, այսպիսով, իր խոսքերի մեջ ներմուծել սուտը՝ բորբոքելով Աստծու զայրույթը:

Ամբողջ երկիրն, այսպիսով, խոսում էր մի լեզվով և նույն բառերով: «Ծննդոց»-ի 11-րդ գլխի եբրայերեն բնագրում օգտագործված բառերից կարելի է ենթադրել, որ խոսքը նույն բառապաշարի և լեզվական նույն համակարգի մասին է: Լեզվական այս միակ համակարգում յուրաքանչյուր լեզվակրի համար նույն այս բառերին համապատասխանում էին այնպիսի գաղափարներ ու առարկաներ, որոնց կապն ի սկզբանե Աստված էր սահմանել: Նրանք, ովքեր վախենում էին Աստծուց, օգտագործում էին նաև նրա սահմանած այն բառազուգորդումները, որ ուրիշները խախտում էին: Ոչ թե մարդիկ, այլ Աստված ինքն է վերջ դրել այս իրավիճակին Սենաար երկրում, այնպես որ բառի ու նրա մատնանշած առարկայի նախնական կապը իսկապես խզվեց: Բայց, չնայած դրան, Աստծու կողմից հաստատված բառակապակցությունների անխզելի կապը յուրաքանչյուր նոր լեզվում մնում էր անելծ: Չպետք է մոռանալ, որ Աստված ինքն է խառնել լեզուները: Այս դեպքում ևս խոսքը Աստծու գործի մասին է, գործ, որտեղ բարեշրջական կամ էլ կամայական ամեն մի գաղափար մերժելի է: «Ծննդոց»-ի 11-րդ գլխից տեղեկանում ենք, որ Աստված է Սենաար երկրում խառնել մարդկանց զավակների, ամբողջ երկրի լեզուն, որպեսզի մարդիկ միմյանցից այլևս չլսեն այն: Քանի որ Աստված է, մեզ անհայտ ու անհասկանալի ձևով, առաջ բերել այս խառնաշփոթը, և որ չի կարող հարց լինել բնական գործընթացի, բնական զարգացման կամ տարբերակման մասին, հետևաբար մարդիկ կամ մարդկանց խմբերը սկսեցին խոսել Աստծու պարզևած լեզուներով:

Աստված էր մարդկային տարբեր խմբերի գործածած լեզուների, բառերի ու լեզվական համակարգերի հեղինակն ու մեծ արհեստավորը: Այս լեզուները նա է ստեղծել իր Հոգով: Նրա միջոցով են ազգերը այդ վայրում ու տվյալ դարաշրջանում սկսել խոսել յուրաքանչյուրին հատկացված լեզվով՝ կղզիաբնակ ազգերի (Ծննդոց 10:5), Քանի որդիների (Ծննդոց 10:20), Սենի որդիների (Ծննդոց 10:31) լեզուներով: Մենք պետք է հասկանանք, որ Եհովան ինքն է հաստատել իր ստեղծած յուրաքանչյուր լեզվի բառերի ու այդ բառերի մատնանշած առարկաների, այս կամ այն լեզվի բառի և նրա բովանդակության կապը: Այս կապը ինքն է հաստատել այնպես, որ յուրաքանչյուր լեզվախմբի, յուրաքանչյուր ազգի պատկանող մարդկանց հաղորդակցությունն ու նրանց մտքերի արտահայտումը մշտապես հնարավոր էին ըստ Աստծու ծրագրի:

Ցանկացած ազգի պատկանող մարդ ընդունակ էր սեփական լեզվով կրկնել և իր խոսքերում պահպանել Աստծու հաստատած բառազուգորդումները, ինչպես նաև նրանք, որ սովորեցնելու է ավելի ուշ, իր ցանկացած եղանակով:

6. Լեզվի խառնաշփոթից հետո

Սենաար երկրում լեզուները խառնելու ժամանակ Աստծու՝ տարբեր ազգերի տված լեզուները հետո են զարգացել. որոշ լեզուներ անհետացել են, մինչդեռ մյուսները տարբերակվել են ի վերջո ծնունդ տալով նոր լեզուների ու բարբառների: Ինչ վերաբերում է լեզուների խառնումից հետո ընկած առաջին դարերին, ապա ոչինչ, կամ էլ համարյա ոչինչ

հայտնի չէ իրադարձությունների, իրավիճակների, կյանքի պայմանների, այս իրադարձություններն առաջ բերող, դրանց ընթացք տվող կամ էլ արգելակող գործընթացների մասին: Ինչպես գրել ենք բաժնի սկզբում, լեզվաբանությունը զբաղվում է նաև այս հարցերով՝ մեծ տեղ հատկացնելով հիս և ոսոս տարբեր լեզուների գործառնության հետազոտման խնդիրներին: Որքան էլ գրավիչ ու օգտակար լինի այս ուսումնասիրությունը, այն մեզ չի առաջնորդում դեպի հետապնդած նպատակը: Մեր ուշադրությունն առաջին հերթին պահանջող խնդիրներն այլ են և ավելի կարևոր, քան նրանք, որ լեզվաբանները ջանում են լուծել: Այժմ մեզ զբաղեցնող հարցի համար մտածում ենք, հատկապես, Հակոբոսի խոսքերի շուրջ, որ գրվել են «Գործք»-ի 15-րդ գլխում: Հիշյալ գլխի տասնութերորդ հատվածում կարդում ենք այն մասին, որ Տիրոջ բոլոր գործերը նրան հայտնի են հավիտենից: Սուրբ Գրքի այս խոսքը երբեք չպետք է մոռացության մատնենք, երբ խորհում ենք Սենաար երկրում լեզուների խառնման շուրջ:

7. Կայուն կապ բառի և նրա մատնանշած առարկայի միջև

Երբ Աստված խառնեց լեզուները, լավ գիտեր, որ ավելի ուշ, իր ընտրյալներին փրկելու համար փրկության իր ծրագիրը պետք է հայտարարի և հայտարարել տա մարդկանց լեզուներով: Նա լավ գիտեր, որ փրկչության բոլոր մեծ գործերը, բոլոր հրաշքները պետք է հայտնվեին մարդկային բոլոր լեզուներով, և որ մարդիկ պետք է հասկանային: Ահա թե ինչու Սենաար երկրում նա ստեղծեց լեզուներ, որպեսզի արտահայտվեին մարդկային լեզվով:

Ազատամիտ որոշ աստվածաբաններ գործում են ճակատագրական սխալ՝ ստեղծելով հակադրություն մարդկային լեզվի և Աստծու խոսքի միջև, պնդելով, որ Աստծու խոսքերը (այն, ինչ ուզում է հայտնել) չեն կարող արտահայտվել մարդկային լեզվով, և որ Աստծու նորությունները չեն կարող տեղավորվել մարդկային լեզուներում, հետևաբար և՛ հարմարացվել մարդկանց լեզուներին ու մտքերին:

Հեռու մեզնից այս մտածողությունը: Աստված ինքն է ստեղծել գործիք հանդիսացող լեզուները՝ իր նորությունների մուներտիկները, որոնք պիտանի էին այս նորությունների մասին պատմելու համար: Սա՝ առաջին հերթին:

Այնուհետև, պետք է գիտակցենք, որ Աստված ինքն էլ է օգտվելու այն մարդկանց լեզվից, ում հայտնվելու է, ավելի ճշգրտորեն՝ Սենաար երկրի իրադարձություններից հետո: Ինչպես Ադամի և Նոյի հետ էր խոսել նրանց լեզվով՝ պահպանելով բառի ու նրա մատնանշած առարկայի՝ իր իսկ հաստատած կապը, այնպես էլ Աբրահամի, Իսահակի, Հակոբի, Մովսեսի հետ խոսելու էր նրանց լեզուներով՝ դրանով իսկ ընդմիջտ հաստատելով բառի և նրա մատնանշած առարկայի կապը կամ էլ դարձյալ կապ հաստատելով որոշ բառերի և դրանց մատնանշած առարկաների կամ գաղափարների միջև:

Քանի որ Աստված կրկին սկսեց խոսել մարդկանց հետ, ապա անխախտելի կապ հաստատվեց փրկչության իր գործի և դրանց անվանումների միջև, անվանումներ, որոնք լեզվում արտահայտված են այնպիսի բառերով, որոնցով մարդիկ խոսում էին իր հայտնվելու ժամանակ:

8. Մի քանի օրինակ

Սուրբ Գիրքը հաստատում է, որ Աստված անձամբ ճանաչում էր Մովսեսին (2-րդ Օրինաց 34:10): Շատ տեղերում Աստվածաշունչը հիշատակում է այն փաստը, որ Աստված խոսում էր նրա հետ: Հայտնվելու և իր գործերը ճանաչել տալու համար Աստված օգտվում էր Մովսեսի և Իսրայելի զավակների՝ այդ ժամանակ գոյություն ունեցող լեզվից: Այս լեզվով Աստված հայտնի դարձրեց իր անունը. Աբրահամի Աստված, Իսահակի Աստված, Հակոբի Աստված: Այս լեզվով Աստված ասաց Մովսեսին (Ելից 4:3-4), որպեսզի գետնին զարկի իր գավազանը, ու երբ վերջինս օձ դառնա՝ բռնի նրա պոչից: Մովսեսի համար իր լեզվում անքակտելի կապ կար «գավազան» բառի ու նրա մատնանշած առարկայի, «օձ» բառի ու նրա մատնանշած կենդանու միջև: Խոսելիս Աստված օգտվում էր գոյություն ունեցող այս կապերից այնպես, որ Մովսեսը հասկանում էր նրա ասածը: Ահա թե ինչու պատմությունը կարդալիս նաև պետք է պահպանենք այս կապը: Կան գիտնականներ, ովքեր հրաշքներն ու Աստծու միջամտության իրողությունը չընդունելու պատճառով աղավաղում են այս պատմությունը: Նրանց կարծիքով, Սուրբ Գրքում հիշատակված հրաշքները պետք է մեկնաբանել աշխարհի ժամանակակից ըմբռնման լույսի ներքո: Այն, ինչ Աստվածաշունչն ուզում է հաղորդել, այլ է, քան Սուրբ Գրքի խոսքերն են արտահայտում: Նման մտածելակերպի դեպքում խզվում է բառի ու նրա մատնանշած առարկայի կապը, այն, որից Աստված օգտվում էր խոսելիս: Երբ Մովսեսը լսեց «գավազան» բառն ու «կենդանի բռնել պոչից» արտահայտությունը, նա ճշգրտորեն գիտեր, թե Աստված ինչ էր մատնանշում այս բառերով: Ուստի մեծ չարիք է այսօր պնդել, իբր այս բառերն այլ բան են ուզում արտահայտել, քան այն, ինչ Մովսեսը հասկանում էր դրանց տակ: Նշանակում է՝ խզել կապը, որ Աստված ինքն էր ընդունել, որից օգտվել էր և որը, հետևապես, պետք է պահպանենք: Ահա թե ինչու այս հրաշալի պատմությունը թարգմանելիս պետք է զգույշ լինել և Մովսեսի լեզվում մատնանշած առարկաներն անվանել այն բառերով, որոնցից մյուս լեզուները սովորաբար օգտվում են նույն այս առարկաներն անվանելու համար: Նույնը վերաբերում է նաև Սուրբ Գրքի բոլոր խոսքերին:

Մատթեոս Ավետարանիչը գրել է, որ Տեր Հիսուսն ասել է հետևյալը. «Երբ Հարություն առնեմ, դուք ինձ կտեսնեք Գալիլիայում»: Ինչպես տեսանք այս բաժնի սկզբում, Տեր Հիսուսը հնազանդորեն կրկնել է այն, ինչ Հայրը հրամայել էր ասել: Մեր Փրկչի նշված խոսքերում գտնում ենք երկու գլխավոր տարր՝ հարություն առնել և ավելի շուտ լինել Գալիլիայում: Ինչպես Ադամի հետ խոսելիս, այստեղ ևս անխախտելի կապ կա այս բառերի միջև: Տեր Հիսուսի գործածած լեզվով խոսողների համար նման կապ գոյություն ունի նաև «հարություն առնել» բառի և նրա մատնանշած իրողության միջև: Նույնը, բնականաբար, վերաբերում է նաև «ավելի շուտ լինել Գալիլիայում» արտահայտությանը: Եվ, վերջապես, մարդու կյանքում անխախտելի կապ կա նաև այս զուգորդության բովանդակության, իմաստի ու հետևանքների միջև: Բայց Սուրբ Գրքի այս խոսքերը նույնպես խեղաթյուրվել են պարծենկոտ աստվածաբանների կողմից: Նրանք ժխտում են Տեր Հիսուսի մարմնական հարության փաստը՝ պնդելով, որ այս խոսքերի տակ պետք է հասկանալ ուրիշ բան, այն է՝ Տեր Հիսուսը հարություն է առնում մարդկանց սրտերում: Այս ստով՝ նրանք խզում են առարկայի և դրա համար հիշյալ դարաշրջանում, հրեաների լեզվում գործածված բառը, կապ,

որից Աստված օգտվել է, և որը պետք է հարգենք: Նրանք քանդում են Աստծու միավորած զուգորդությունը՝ հարություն առնել, ավելի շուտ լինել Գալիլիայում՝ այն դարձնելով հարություն առնել, գալ մարդկանց սրտերի մեջ: Հետևապես, նրանք ևս անմասն կմնան այն փրկությունից, որին կարժանանան Աստծու հաստատած զուգորդությանը հավատացողներն ու այն հարգողները:

Կենսական հարցը մեր բոլոր խոսքերում Աստծու հաստատած հարաբերությունները՝ հայտնության լեզվի բառի և նրա մատնանշած իմաստի, ինչպես նաև տված զուգորդությունների կապն ընդունելն ու հարգելն է: Նույնը վերաբերում է նաև բառերի թարգմանությանը, որովհետև ոչ մի կապ և ոչ մի բառակապակցություն կամայական չէ: Թարգմանչի համար կլինեն դժվարություններ, երբեմն էլ՝ մեծ դժվարություններ: Միշտ չէ, որ հնարավոր կլինի մեկ ուրիշ լեզվով, լիովին նույնական ձևով վերարտադրել որոշ բառերի իմաստը, բովանդակությունը, բառեր, որոնցով Աստված հայտնվել է իր ծառաներին ու դիմել նրանց: Նաև սա է լեզուները խառնելու հետևանքը: Ուստի, հարկ կլինի գտնել այնպիսի բառեր ու դարձվածքներ, որոնք հնարավորին չափ ճշգրիտ ձևով արտահայտեն նախնական նշանակությունը: Նախնական լեզվի բառի ճշգրիտ իմաստը և մյուս լեզվի՝ դրան համարժեք բառերի նման որոնումները դյուրին չեն, սակայն անհրաժեշտ են՝ հնարավորին չափ պահպանելու կապը բառի (որից Աստված սկզբնապես օգտվել է) և հիշյալ ժամանակաշրջանում դրա մատնանշած առարկայի միջև:

Գ. ԱՍՏՎԱԾԱՆՉԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

1. Ինչո՞ւ և ինչպե՞ս ընթերցել Աստվածաշունչը:

Ինչո՞ւ պետք է ընթերցել Աստվածաշունչը: Արդյոք ընթերցանությունը հավատքի՞ է բերում: Հավատափոխությունը մղո՞ւմ է արդյոք ընթերցել այն ու խորհրդածել նրա շուրջ:

Գերմանացի մի քարոզչաբանի կարծիքով, հավատքի եկած շատ մարդիկ հայտարարում են, որ իրենց գրավել է Եկեղեցին, քանզի այստեղ նշմարել են «մեկ ուրիշ ապրելաձև, գոյության մեկ ուրիշ չափում, որի մեջ գործում է մեկ այլ զորություն՝ դրսևորվելով միայն զարմանալիորեն նոր նշաններով ու արտահայտություններով»:

Այս բանի հավաստումը հարց է առաջացնում. արդյոք Աստվածաշունչը գլխավորապես Եկեղեցու վարդապետության և ծիսակատարությունների համար նախատեսված գի՞րք է, ինչպես և՛ անխուսափելիորեն անհրաժեշտ հետևյալ հարցը. Աստվածաշունչի խելացի ուսումնասիրությունը քրիստոնեական համայնքում, որը նրան օգնում է տարածելու իր հավատքը, հավասարաժեք չէ՞ արդյոք քարոզչական գործունեությանը, որն ավելի արդյունավետ է, քան Աստվածաշունչի օրինակների սովորական բաշխումը:

Պատմությունից քաղած դասն ապացուցում է, որ Աստվածաշունչը նպաստում է կրոնական կյանքի ցանկացած ցուցադրում, ներքին տրամադրվածությունը բացասող ամեն տեսակ մտահոգություն վերացնելու համար, իսկ մյուս կողմից էլ՝ այն չի նպաստում անպտուղ ինքնավերլուծությանը, այլ փոխարենը, Ավետարանի գործնական հաղորդակցման միջոցով, մեզ տրամադրում է ուրիշի հանդեպ, մատուցում իր ծառայությունը:

Եականը միշտ էլ Աստվածաշունչն ինչպես կարդալու հարցն է: Չէ՞ որ յուրաքանչյուրն Աստվածաշունչն ընթերցում է իրեն ուղղված խոսքը լսելու համար: Եթե այն ընթերցվի աղոթքի ու հավատքի ոգով, ապա աստվածաշնչյան յուրաքանչյուր խոսք իրոք կլսվի իբրև Աստծու խոսք:

Առաջ են գալիս մի քանի կարևոր հարցեր, որոնց օրինական է պատասխանել առանց գործածելու անսխալականության՝ երբեմն մթագնող բանաձևումներ:

Եվ այսպես՝ իրավունք ունե՞մ սեփականացնելու մեկ ուրիշին և այլ ժամանակներում հասցեագրված խոսքը: Իրավունք ունե՞մ ինձ ուղղված խոսքը կիրառել ուրիշի նկատմամբ: Ինչպե՞ս վարվել այն հատվածների հետ, որոնք խոսք չեն: Ինչպե՞ս որոշել, որ այս խոսքը ինձ համար Աստծու խոսքն է, իսկ այս մյուսը չի վերաբերում ինձ:

Եկեղեցում Աստվածաշնչի ընթերցանությունը ոմանց հնարավորություն է տվել նրանում փնտրելու խորհրդանշական իմաստ: Լայնորեն կիրառվել են հին ձեռագրերի տիպաբանական (Հովնանի հրաշքը հարության վերաբերյալ ամենատիպականն է) և այլաբանական (Աբրահամի երկու կանայք Հին ու Նոր Ուխտերի փոխաբերությունն են. Գաղատ. 4:21-30) մեկնաբանությունները: Սակայն իրավացիորեն հարց է ծագում, թե սիմվոլիզմն, արդյոք, երբեմն առաջ չի՞ բերում երևակայամուլների անսանձ բռնկումներ՝ Աստվածաշնչին ասել տալու այն, ինչ ուզում են, որ նա ասի:

Մյուս կողմից էլ, Աստվածաշնչի գիտական կոչված ուսումնասիրությունը, արդյոք, բավական է պատասխանելու բոլոր այն հարցերին, որ ժամանակակից միտքը կարող է առաջադրել մի գրքի՝ Աստվածաշնչի հետ կապված, գիրք, որը Իսրայել անունը կրող ժողովրդի Եկեղեցու ակունքների, ինչպես նաև Աստվածաշնչից ներշնչված կրոնի պատմությունն է: Ո՞վ է գրել այս գիրքը: Ինչպե՞ս է այն գրվել: Ի՞նչ հանգամանքներում և դարաշրջանում:

Վստահություն պարգևելու համար նշենք նաև, որ աստվածաշնչյան ժամանակակից գիտությունը հնարավորություն է տալիս հասկանալ Աստվածաշնչի ինչպես արժանահավատությանը, այնպես էլ հեղինակությանը տրված վկայությունները լեզվական առումով, այնպես, ինչպես վերևում դա ցույց ենք տվել նաև իբրև հեղինակների մտադրություն:

Օգտակար է հիշեցնել, որ գիտությունը բացարձակ ճշմարտության հոմանիշ չէ. այն, ինչ հաստատում ենք աստվածաշնչյան գիտությունների արդյունքների հիման վրա, մեզ առավելապես երևում է իբրև ճշմարտանման: Եվ, վերջապես, մնում է որոշել, թե այս բնագրերն ի՞նչ են մեզ համար:

Որոշակի հայացքով կարդալ աստվածաշնչյան հիմնական թեմաները, դիմել լեզվաբանությանը՝ կապ հաստատելու ասվածի և այն բանի միջև, ինչը ցանկալի է, որ ասված լինի. ահա ժամանակակից որոշ գիտնականների կողմից ձեռնարկված փորձերը: Այն կոչվում է հին բնագրերի կառուցվածքաբանական մեկնաբանություն:

Ինչ վերաբերում է ապառաջասպելականացմանը, ապա պե՞տք է, արդյոք, այն հասկանալ իբրև հրաժարում որոշ պատկերներից, որոնց դիմել են աստվածաշնչյան առանձին հեղինակներ, և որոնք այլևս չեն համապատասխանում ժամանակակից մեր մտայնություններին ու այժմեական բառերով չեն արտահայտում հավատքի նշանավոր իրողությունները (Հայր Աստված, Հիսուս Քրիստոս, Որդի, Սուրբ Հոգի, մարմնի, մարմինների հարություն): Թե՞ իրականում դա այլ բան է:

Եթե հարկ լիներ հետևել առասպելականացմանը, ապա ստիպված կլինեինք դարձնել ապառաջի հին առասպելները փոխարինել նույնքան անցողիկ մեկ այլ ապառաջի նոր առասպելներով: Գալիք սերունդն իր հերթին մեծ դժվարությամբ կջանա առասպելագրած անել այն, ինչ հաստատել ենք իբրև պահի ճշմարտություն:

2. Թարգմանել՝ նշանակում է դավաճանել

Աստվածաշնչի ընթերցողների մեծ մասը այն կարդում է թարգմանաբար: Մինչև վերջին տարիներս (և դեռ այժմ էլ), հակառակ այլ գիտաճյուղերի արհեստավարժ թարգմանիչների, աստվածաշնչյան բնագրերի թարգմանիչների մեծ մասը գտնում է, որ բնագիր տեքստին հավատարիմ լինելը առաջին հերթին այդ տեքստի ձևին հավատարիմ լինելն է: Ջանում են պահպանել բառերի քերականական բնույթը, նախադասությունների չափերը, ոճական դարձվածքները և այլն: Վրդյունքն այն է, որ շրջանառության մեջ գտնվող թարգմանությունների մեծ մասը մնում է անմատչելի նրանց համար, ովքեր երկար ժամանակ չեն ուսումնասիրել թարգմանությունների առանձնահատուկ լեզուն:

Աստվածաշունչն ընթերցելու համար պե՞տք է արդյոք քաջություն ունենալ ուսումնասիրելու նախ բառապաշարը, ինչպես վարվում են, օրինակ, որևէ օտար լեզու սովորելիս: Մեկ ուրիշ մոտեցում էլ (մենք ընդամենը նշում ենք՝ առանց խրախուսելու) ընթացիկ լեզվով նոր թարգմանություններ կատարելն է՝ ելնելով զարգացող համարժեքության սկզբունքից. համատեքստին համապատասխանելու սկզբունք, որն առավելություն ունի բայական համաձայնության, ունկնդրում լուռ ընթերցանության և ընթերցողների կարիքները՝ գրական ձևերի նկատմամբ արտահայտելու առումով:

Հարցեր են առաջանում. ո՞ր գրքից է քաղվել տվյալ տեքստը: Ո՞վ է հեղինակը, և ո՞րն է գիրքը գրելու նպատակը: Ո՞ր դարաշրջանում և պատմական ի՞նչ շրջանակում է հեղինակը գրել այս հատվածը: Ո՞րն է քննարկվող հատվածում նկարագրված ճշգրիտ իրավիճակը: Խոսքը երկխոսությամբ, քարոզի, պոեմի, թե՞ ինչ-որ հարցի պատասխանի մասին է: Ովքե՞ր են նկարագրված իրադարձության գլխավոր հերոսները, ի՞նչ կապերի մեջ են միմյանց հետ: Ո՞րն է նրանց դերը հասարակության մեջ: Որո՞նք են տեքստի հեղինակի օգտագործած խորհրդանիշերն ու հասկացությունները. դրանք անմիջականորեն ինչպե՞ս էին հասկացվում ընթերցողների կամ ունկնդիրների կողմից: Այս խորհրդանշաններն ու հասկացություններն ինչպե՞ս արտահայտել բոլորին հասկանալի ձևով: Ո՞րն է մեր խմբի էկզիստենցիալ վիճակը: Ո՞ւմ հետ ենք ուզում հաղորդակցվել: Ինչպիսի՞ն է այս հասարակության վիճակը: Այս սահմանումներից ելնելով՝ որո՞նք են այդ խորհրդանշանների ու հասկացությունների ներկա համարժեքները: Ի՞նչ բառեր պետք է ընտրել՝ դրանք նկարագրելու այն խմբին, ում դիմում ենք: Մեր տրամադրության տակ եղած գրական տեսակներից ո՞րը կարող ենք օգտագործել որպես բնագրում (քարոզ, կանխագուշակություն, առակ) նկարագրվածի համարժեք և այլն:

3. Գրական տարբեր ոճերը

Նախքան ներկա բաժինն ամփոփելը՝ մեզ մնում է սկսել Աստվածաշնչում հանդիպող գրական տարբեր ոճերին նվիրված մի ենթագլուխ: Քրիստոսի առակներին նվիրված ավելի երկար մեկ ուրիշ ենթագլուխ կներառենք հաջորդ գլխում, որտեղ խոսվում է Հիսուսի քարոզների մասին: Մենք մերժում ենք ցանկացած վիճաբանություն, որը վերաբերում է աստվածաշնչական ժամանակակից քննադատության կողմից «աստվածաշնչյան առասպել» կամ *saga* կոչվածին: Մենք հրաժարվում ենք հավատալ, որ Աստվածաշնչում այն բովանդակված է:

Փոխարենը այստեղ առկա են *փոխաբերություններ*՝ գրական այնպիսի միջոց, որով որևէ բառի նշանակությունը փոխարինվում է մեկ այլ նշանակությամբ, որն այն բառին համապատասխանում է միայն ակնարկվող համեմատության ուժով: Այստեղ գործ ունենք բանաստեղծությանը վերաբերող բնագավառի հետ: Այսպես, 29-րդ սաղմոսում Աստուծո ձայնը համեմատվում է ամպրոպի հետ: Նմանապես, մտածենք նաև «երկրի (կամ երկնքի) սյուներ», «երկնականար» կամ էլ «երկնքի պատուհաններ» արտահայտությունների շուրջ: Իրականության հրաշալի նկարագրություններ, որոնք, սակայն, լիովին բանաստեղծական են: Աստվածաշնչի ընթերցանության ժամանակ ի հայտ եկած բազմաթիվ դժվարությունները կվերանային, եթե մշտապես հիշենք փոխաբերությունների առկայության փաստը:

Մտածենք նաև Աստվածաշնչի *մարդակերպական* լեզվի շուրջը: Աստված Հայր է: Մարդու արարումը համեմատվում է բրուտի աշխատանքի հետ: Աստված կյանք է պարգևում՝ հոգի փչելով ռուսգերի մեջ: Նոյի կատարած զոհաբերություններից (Ծննդոց 9) հետո Աստված հաճույք է զգում հաճելի բույրից: Մեկ ուրիշ տեղ էլ նրա գործը նման է մարդկային գործին. նա իջնում է երկնքից, զբոսնում այգում, այցելում Բաբելոնյան աշտարակ, մարդկային կերպարանքով հայտնվում է Աբրահամին, իսկ Եզեկիելին հայտնվում է սպիտակ թիկնոցով:

խորհրդանիշն ինքը որևէ առարկայի, իրադարձության կամ էլ անձնավորության իրական պատկերը կամ տեսիլքն է, որը չունի սեփական նշանակություն. իմաստ է ստանում միայն այն բանի մեջ, ինչը լուսաբանում է: Տիպական է Եզեկիելի օրինակը. վերջինս ձեռքին ունի երկու փայտ և հավատացնում է, որ ընդամենը մեկն է: Այս խորհրդանիշով մարգարեն պատկերում է Հուդայի երկիրն ու Իսրայելը, որոնք կազմում են միայն մեկ ժողովուրդ (Եզեկիել 37:15-28): Դանիելի մարգարեությունն ու Հովհաննու «Հայտնություն»-ը, ինչպես նաև մարգարեական բազմաթիվ այլ գրքեր, լի են խորհրդանիշերով: Առանց Աստծու ստեղծած բանականությանը վիրավորանք հասցնելու՝ հնարավոր չէ կենդանիների, եղջյուրների, փողերի առկայությունը հասկանալ բառացիորեն և կամ էլ երկնային պատկերները՝ իբրև տառացիորեն մեկնաբանվող բառեր: Բարեբախտաբար, Աստվածաշունչն օգնության է գալիս մեզ, երբ խոսքը խորհրդանշական այս կամ այն անձի կամ առարկան ճշգրիտ ձևով ընկալելու մասին է:

Տիպը կայուն և ավելի մեծ ճշմարտության պատկերումն է որևէ իրադարձությամբ, առարկայով կամ անձով, որոնք ունեն սեփական գոյություն և ինքնին իմաստ են արտահայտում: Այսպես, հին ուխտի ծիսական օրենքը Հիսուսի միջնորդ գործունեության տիպն է: Եբրայեցիներին ուղղված նամակում տրվում է դրա հիմնավորված, պերճախոս մեկնաբանությունը:

Քրիստոնյայի համար այս օրենքը իրական արժեք չունի, մինչդեռ նախքան Աստծու Որդու մարմնացումը, այն ուներ իրեն հատուկ նշանակություն՝ լինելով այն բանի տիպաբանական պատկերը, ինչը հետո էր լինելու: Հին Կտակարանի հավատացյալները մեղքերի թողություն կարող էին ստանալ Օրենքի ժամանակավոր միջնորդության շնորհիվ: Տիպի ժամանակակից համարժեքը թղթադրամն է, որը ներկայացնում է իրականում գոյություն ունեցող ոսկու կամ արծաթի արժեքը: Ազգային որևէ բանկի թողարկած թուղթն ինքնին չունի որևէ արժեք, սակայն դրա թույլատրված բազմացումը կամ արտադրությունը առաջ են բերում արժեզրկում սղաճով: Նույն ձևով էլ, արժեզրկել են Քրիստոսին՝ օգտվելով տիպաբանությունից ու այն չարաշահելով: Հիսուսն անձամբ մեզ օգնում է՝ տեսնելու, թե ովքեր են իր անձի իսկական տիպերը (Չովնան, կամ Դավիթ, կամ Օվսե մարգարե և այլն):

Աստվածաշնչին հատուկ գրական ոճերի դասակարգումն ավարտենք *այլաբանության մասին* հիշատակությամբ: Այլաբանությունը որևէ ճշմարտության նկարագրումն է այնպիսի պատմելաձևով, որն ընդունվում է իբրև «պատմություն», թեև իրականում իրադարձությունները տեղի չեն ունեցել այնպես, ինչպես ներկայացվում են (քրիստոնեական ներշնչանքով գրված այնպիսի գործ, ինչպիսին է «Ուխտավորի ճանապարհորդությունը» և աշխարհիկ գրականության այնպիսի նմուշ, ինչպիսին է «Ալիսը՝ Հրաշքների աշխարհում»՝ այլաբանական ոճի հրաշալի օրինակներ են):

Որոշ քրիստոնյաներ չարաշահում են այլաբանության կիրառությունը: Դրանից պետք է զգուշանալ: Երբ Աստվածաշունչը դիմում է այս լեզվին (Դատավորաց 9:7-15, 2-րդ Թագավորաց 14:9), նա այն հասկանալի է դարձնում: Սակայն պետք է ուշադիր լինել և «Ծննդոց»-ի պատմությունը չդիտել իբրև այլաբանություն: Աշխարհագրական ենթատեքստը պարզ է դարձնում, որ մարդկային ցեղի ակունքների աստվածաշնչյան պատմությունն ունի պատմական ճշմարիտ ետնապլան: Հիսուսի օգտագործած *ասույթների* վերաբերյալ E. Hoskyns-ը և F. N. Davey-ը առաջ են քաշում այն, ինչը շարադրված է «ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ»¹ գրքում, որից էլ փոխ ենք առել ներքոհիշյալ տողերը.

«Գիտնականների՝ Հիսուսի վարդապետության մեջ բարոյագիտական նոր ուսմունք հայտնաբերելու փորձը, այսպես ասած, լիովին ձախողվել է: Հրեա մասնագետները, ովքեր իրենց առջև խնդիր էին դրել Հիսուսի բարոյագիտությունը համեմատելու ռաբունիների բարոյագիտության հետ, եկել են այն եզրակացության, որ չկա Հիսուսին վերագրվող գոնե մի ասույթ, որն իր, հաճախ բառացի, զուգահեռը չունենար ռաբբիական գրականության մեջ: Իրենց կողմից, ռաբբիական գիտության քրիստոնյա մասնագետները, թվում է, ավելի ու ավելի են համաձայն այս եզրակացությանը: Օրինակ, ակնհայտ է, որ «շաբաթը ստեղծվել է մարդու համար, այլ ոչ թե մարդը՝ շաբաթվա համար» նախադասությունը, իհարկե, կարող էր ընդունվել ամենամանրախնդիր ռաբունու կողմից: Նմանապես նաև հաճախակի արվող այն պնդումը, որի համաձայն Աստծու պահանջած արդարությունն այն է, ինչը բխում է սրտից՝ ինքնին ամենևին էլ նորություն չէր: Մատթեոսի Ավետարանում Հիսուսն ինքը հստակորեն հայտարարում է. «Դպիրներն ու փարիսեցիները նստած են Մովսեսի աթոռին: Ուստի ամեն ինչ արեք այնպես, ինչպես ձեզ ասում են»: Հայտնի ոսկե կանոնը (Մատթեոս 7:12) իր զուգահեռն ունի ռաբ-

¹ L'Enigme du Nouveau Testament.

բիական ուսմունքի մեջ: Այս զուգահեռականությունը վերաբերում է ասույթների ոչ միայն խորքին, այլև ձևին: Այսպես, օրինակ, երբ Հիսուսն արտասանում է երանիները. «Երանի՛ ձեզ, որ աղքատ եք...», ապա օգտագործում է ունկնդիրներին արդեն իսկ հարազատ ձև: Մյուս կողմից՝ իրենց խոսքը պարզ դարձնելու նպատակով ռաբունիները լայնորեն օգտվում էին առակներից. Հիսուսն ընդամենը շարունակում էր նրանց սովորույթը: Ներածական այնպիսի բանաձևեր, ինչպես, օրինակ, «Ինչի՞՞ հետ ենք համեմատվելու», ինչպես նաև ռիթմավորված նախադասության գործածումը Ղուկասի Ավետարանի 6:27-28, 6:44 հատվածներում, հատկանշական էին ռաբբիական ուսմունքի համար:

Հիսուսի բարոյագիտական ուսմունքը ոչ այլ ինչ է, եթե ոչ Իսրայելին հայտնված օրենքի կրկնություն և մեկնաբանություն: Նրա պահանջած արդարությունը բնավ էլ նոր չէ, ոչ թե այն պատճառով, որ նմանօրինակ ձևով ձևակերպվել է ռաբունիների կողմից, այլ որ ներկայացնում է Հին Կտակարանի Աստծու ամբողջ կամքը՝ պարզապես դիմելով օրենքի երկու հատվածների և դրանք բառացիորեն մեջբերելով (Մարկոս 12:29-31, համեմատել 2-րդ Օրինաց 6:4-5, Ղևտացիներին 19:18 տողերի հետ):

Ներկայացնենք Ավետարաններից քաղված որոշ հատվածների ցուցակ, որտեղ հանդիպում են Հիսուսի արտասանած ասույթները. Մատթ. 13:16, Ղուկաս 10:23, Մատթ. 8:22, Ղուկ. 9:60, Մատթ. 5:13, 14 և 20: Վերոհիշյալ երկու հեղինակները շարունակում են.

«Եվ այսպես, հնարավոր չէ Հիսուսին պարզապես տեղավորել դարաշրջանի հրեական կրոնի շրջանակներում: Նա հասնում է ընդհուպ մինչև Օրենքն ու մարգարեները և, իհարկե, հայտարարում, որ ներկա ժամանակաշրջանը նշանավորվում է դրանց կատարմամբ: «Ես եկել եմ ոչ թե քանդելու, այլ կառուցելու: Ոչ ոք մահուդե նոր կտոր չի կարում հին հազուստին»:

Եզրակացությունը, որին հանգում է ասույթների քննությունը, հետևյալն է. դրանք Մեսիայի խոսքերն են, նրա, ով սկիզբ է դնում Աստծու թագավորությանը՝ եբրայեցի ժողովրդին հայտնված Օրենքի գերագույն պսակին: Այս թագավորությունը սկսվում է նվաստացման մեջ՝ հալածանքի ու համընդհանուր անհասկացողության մթնոլորտում, և այս նկարագրությունը թագավորության վերջնական հաստատման նախերգանքը չէ միայն. դա նեղ դուռն է, որով այնտեղ են մտնում հավատացյալները: Ուստի, Հիսուսի ասույթները չի կարելի անջատել իրենց մեսիական ետնապլանից և, մասնավորապես, այն իրադարձություններից, որոնք տեղի են ունեցել Պաղեստինում մ. թ. 30 թվականի մոտերքում: Այս ասույթները բարոյախոսական սովորական հորդորներ չեն. դրանք հռչակում են Աստծու թագավորությունը և արմատավորված են պատմական յուրահատուկ մի փաստի՝ Մեսիայի գալուստի մեջ»¹:

¹ Նշված աշխատությունը, էջ 145-157:

Գ Լ ՈՒ Խ 10.

ՀԻՍՈՒՄԻ ՔԱՐՈՋՆԵՐՆ ՈՒ ԱՌԱԿՆԵՐԸ

Ա. ՀԻՍՈՒՄԻ ՔԱՐՈՋՆԵՐԸ

Ներկա գլխի առաջին մասում կներկայացնենք Հիսուսի քարոզների սինօպտիկական մի աղյուսակ: Նրանք, ովքեր կցանկանան ունենալ նույն այս քարոզների համառոտ շարադրանքը, հրավիրում ենք դիմելու մեր հեղինակած «Հիսուս Քրիստոս, Աստված և մարդ» աշխատության՝ քարոզին նվիրված գլխին:

ՎԱՅՐԸ	ԲՆՈՒՅԹԸ կամ ոճը	ՋՐՈՒՑԱԿԻՑԸ	ՀՂՈՒՄ
Երուսաղեմ	Ջրույց	Նիկողեմոս	Հովհ. 3:1-21
Հակոբի ջրհոր	Ջրույց	Սամարուհի	Հովհ. 4:4-26
Հակոբի ջրհոր	Ջրույց	Սամարացիներ	Հովհ. 4:31-38
Նազարեթ	Քարոզ	Աշակերտներ	Ղուկ. 4:16-31
Լեռ Գալիլիայում	Քարոզ	Աշակերտներ-ամբոխ	Ղուկ. 6:17-49
Բեթհեզդա	Ջրույց	Հրեաներ	Հովհ. 5:1-47
Երուսաղեմի մոտ	Ջրույց	Փարիսեցիներ	Ղուկ. 6:1-11
Նային	Գովք	Ժողովուրդ	Ղուկ. 7:18-37
Կափառնայում	Ջրույց	Փարիսեցիներ	Մարկ. 3:19-30 Մատթ. 12:22-45
Կափառնայում	Ջրույց	Աշակերտներ	Մարկ. 6:6-13 Մատթ. 10:1-42
Կափառնայում	Ջրույց	Պատգամաբեր	Մատթ. 12:46-50 Մարկ. 3:31-35
Կափառնայում	Քարոզ	Ամբոխ	Հովհ. 6:22-71
Կափառնայում	Քննադատություն	Դպիրներ- Փարիսեցիներ	Մատթ. 15:1-20 Մարկ. 7:1-23
Կափառնայում	Օրինակ	Աշակերտներ	Մատթ. 18:1-14 Մարկ. 9:33-50
Տաճար	Հրահանգ	Հրեաներ	Հովհ. 7:11-40
Տաճար	Հրահանգ	Հրեաներ	Հովհ. 8:12-59
Տաճար	Հրահանգ	Փարիսեցիներ	Հովհ. 10:1-21
Կափառնայում	Առաքելություն	Յոթանասունը	Ղուկ. 10:1-24
Բեթանիա	Հրահանգ	Աշակերտներ	Ղուկ. 11:1-13
Բեթանիա	Ջրույց	Ամբոխ	Ղուկ. 11:14-36

¹ A.R. Kayayan, Jésus Christ: Dieu et homme.

Մի փարիսեցու մոտ	Քննադատություն	Փարիսեցիներ	Ղուկ. 11:37-54
Հորդանանից այն կողմ	Հորդոր	Ամբոխ	Ղուկ. 12:1-21
Պիրեա	Դաս	Աշակերտներ	Ղուկ. 12:22-34
Երուսաղեմ	Հորդոր	Ամբոխ	Հովհ. 12:20-50
Երուսաղեմ	Մատնություն	Փարիսեցիներ	Մատթ. 23:1-39
Ձիթենյաց լեռ	Գուշակություններ	Աշակերտներ	Մատթ. 24:1-50
			Մարկ. 13:1-37
			Ղուկ. 21:5-36
Երուսաղեմ	Հորդոր		Հովհ. 13:1-20
Երուսաղեմ	Հորդոր		Հովհ. 14:16

Բ. ՄԵՐ ՏԻՐՈՋ ԱՌԱԿՆԵՐԸ

ՎԵՐՆԱԳԻՐ

Ծղոտն ու գերանը
Երկու տները
Երեխաները հրապարակում
Երկու պարտատերերը
Պիղծ հոգին
Հարուստ մարդու խորհրդածությունները
Անպտուղ թզեմին
Սերմնացանը

Որոմը
Սերմը
Մանանեխի հատիկը

ԹՅՄՈՐՐ

Գրագը

ՈՒՆԿԱՆՆԵՐ

Թաքնված գանձը
Թանգարժեք մարգարիտը
Տանտերը
Անուսնությունը

Պատահողոված հագուստը

ՀՂՈՒՄ

Մատթ. 7:1-6, Ղուկ. 6:37-43
Մատթ. 7:24-27, Ղուկ. 6:47-49
Մատթ. 11:16, Ղուկ. 7:32
Ղուկ. 7:41
Մատթ. 12:43-45, Ղուկ. 11:24-26
Ղուկ. 12:16
Ղուկ. 13:6-9
Մատթ. 13:3-8, Մարկ. 4:3-8,
Ղուկ. 8:5-8
Մատթ. 13:24-30
Մարկ. 4:20
Մատթ. 13:31, Մարկ. 4:31,
Ղուկ. 13:19
Մատթ. 13:33, Ղուկ. 13:21
Մատթ. 5:15, Մարկ. 4:21,
Ղուկ. 8:16, 11:33
Մատթ. 13:47
Մատթ. 13:44
Մատթ. 13:45-46
Մատթ. 13:52
Մատթ. 9:15, Մարկ. 2:19,
Ղուկ. 5:34-35
Մատթ. 9:16, Մարկ. 2:21,
Ղուկ. 5:37

Գինու տիկերը	Մատթ. 9:17, Մարկ. 2:22 Ղուկ. 5:37
Հունձքը	Մատթ. 9:37, Ղուկ. 10:12
Ոսոխը	Մատթ. 5:25, Ղուկ. 12:58
Անվճարունակ պարտատերը	Մատթ. 18:23-25
Բարի սամարացին	Ղուկ. 10:30-37
Երեք հացը	Ղուկ. 11:5-8
Բարի հովիվը	Հովհ. 10:1-16
Նեղ դուռը	Մատթ. 7:14, Ղուկ. 13:24
Հրավիրվածները	Ղուկ. 14:7-11
Հարսանյաց խնջույքը	Մատթ. 22:2-9, Ղուկ. 14:16-23
Հարսանեկան հանդերձները	Մատթ. 22:10-14
Աշտարակը	Ղուկ. 14:28-30
Պատերազմ գնացող թագավորը	Ղուկ. 14:31
Կորած ոչխարը	Մատթ. 18:12, Ղուկ. 15:4-7
Կորած դրամը	Ղուկ. 15:8-9
Անառակ որդին	Ղուկ. 15:11-32
Անարդար տնտեսը	Ղուկ. 16:1-9
Հարուստն ու Ղազարոսը	Ղուկ. 16:19-31
Չանձրացնող որբևայրին	Ղուկ. 18:2-5
Փարիսեցին ու նաքավորը	Ղուկ. 18:10-14
Ծառայի պարտականությունը	Ղուկ. 17:7-10
Մշակներն այգում	Մատթ. 20:1-16
Քանքարները	Մատթ. 25:14-30, Ղուկ. 19:1-27
Երկու որդիները	Մատթ. 21:28
Մարդասպան մշակները	Մատթ. 21:33-40, Մարկ. 12:1-9, Ղուկ. 20:9-16
Թզենին	Մատթ. 24:32, Մարկ. 13:28-29, Ղուկ. 21:29-30
Արթուն ծառան	Մատթ. 24:43, Ղուկ. 12:39
Ճանապարհորդ մարդը	Մարկ. 13:34
Երկու ծառաների բնավորությունը	Մատթ. 24:45-51, Ղուկ. 12:42
Երկու կույսերը	Մատթ. 25:1-12
Արթուն ծառան	Ղուկ. 12:36-38
Խաղողի որթն ու ընծյուղները	Հովհ. 15:1-6

Գ. ԻՆՉ Է ԱՌԱԿԸ

Ավետարանական առակը սահմանվել է իբրև երկրային պատմություն՝ երկնային իմաստով: Դա բավական հաջող ու պարզ սահմանում է: Միշտ չէ, որ առակը ճշմարիտ ապրած

պատմություն է, այն չի պատմում իրականում տեղի ունեցած իրադարձության մասին: Սակայն բացառված չէ, որ առակը կապված լինի նաև իրական որևէ փաստի հետ:

Հիսուսի՝ առակներով խոսելու մեջ մեծ սկզբունք կա: Նույն օրերնքները կիրառվում են թե՛ բնական և թե՛ հոգևոր աշխարհի նկատմամբ: Դա զարմանալի չէ, քանզի երկու աշխարհների Յեղիմակը՝ Արարիչը, նույն Աստվածն է: Նա է ղեկավարում ու վերահսկում երկու աշխարհները: Հիսուսը հրաշալիորեն տեսել է այս երկուսի միասնությունը: Ահա թե ինչու էր կարողանում ազատորեն օգտվել ներկա զգայական աշխարհից՝ իբրև հոգևոր իրողություններ լուսաբանելու աղբյուր: Օրինակ, սերմնացանի առակում Հիսուսը սովորեցնում է, որ հողագործի ցանած ոչ բոլոր սերմերն են բերք տալիս, ուստի և եզրակացնում է, որ Ավետարանի քարոզը ունկնդիրների լսարանում միշտ չէ, որ քրիստոնյաներ է շահում:

Դ. ԿԱՐԴԱԼ ԱՌԱԿՆԵՐԸ

Որքան էլ տարօրինակ թվա՝ Եկեղեցու ստեղծման առաջին դարից մինչև մեր օրերը, Քրիստոսի առակները հաճախ վատ են մեկնաբանվել: Այս թյուրիմացությունը այն սխալ գաղափարների հետևանքն էր, որի համաձայն առակը այլաբանական պատմություն է:

Այլաբանության, ինչպես, օրինակ, Եփեսեցիներին ուղղված նամակի վեցերորդ գլխի մարտնչող քրիստոնյայի՝ Պողոսի ստեղծած կերպարի մեջ և կամ John Bunyan-ի «Ուխտավորի ճանապարհորդությունը» գրվածքում, յուրաքանչյուր մանրամասն միավոր է՝ անկախ, սեփական իմաստով օժտված փոխաբերություն, մինչդեռ առակում ուշադրությունը հրավիրվում է հիմնական որևէ կետի վրա: Այսպես, անառակ որդու մասին առակը (Ղուկ. 15), որը կարելի է անվանել, ավելի շուտ, գթասիրտ հոր առակ, քանզի նա է իշխող կերպարը, ամենից առաջ լուսաբանում է մեղանշած և ապաշխարող մարդուն տրված անշահախնդիր թողության ճշմարտությունը:

Լսենք հետառաքելական Եկեղեցու ամենանշանավոր հայրերից մեկի՝ Տերտուլիանոսի մեկնաբանությունը: Հայտնի աստվածաբանի՝ Եկեղեցու դոկտորի կարծիքով, ավագ որդին ներկայացնում է հրեաներին, կրտսեր (անառակ) որդին՝ քրիստոնյային, ժառանգությունը, որ նա հորից պահանջում է և ստանում՝ Աստծուն ճանաչելն է, որ ի ծնե կա յուրաքանչյուր մարդու մեջ, իսկ օտարերկրյա քաղաքացին, որին նա ծառայություններ է մատուցում՝ սատանան: Վերադառնալուց հետո նրան տրված գեղեցիկ զգեստը սերունդն է, որից Ադամը զրկված էր, իսկ խնջույքը՝ Հաղորդության Խորհուրդը... Կարելի է երախտապարտ լինել Տերտուլիանոսին, որ տվյալ հանգամանքի համար զոհաբերված գեր հորթը չի նույնացրել անմեղ մի անձնավորության հետ, որը զոհաբերվել է՝ ծառայելու իբր օժան մուշօրինակ:

Բայց Տերտուլիանոսի այս մեծ հնարամտությունն անգամ խամրում է Օգոստինոսի՝ բոլոր ժամանակների Եկեղեցու, անշուշտ, ամենամեծ դոկտորի (չցանկանալով դիպչել որևէ մեկի զգայունությանը. ո՛չ հռոմեական կաթոլիկությանը՝ անտեսելով ս. Թովմասին, ոչ էլ բողոքական կողմին՝ չհիշատակելով Մեծն Կալվինի անունը) հայտնագործությունների համեմատ, հայտնագործություններ, որ նա կատարել է Բարի սամարացու առակի մեկնաբանության մեջ:

Երուսաղեմից Երիքով իջած «ոմն մարդը» եղել է, հավանաբար, Ադամը. Երուսաղեմը ներկայանում է իբրև խաղաղության երկնային քաղաք, որտեղից Ադամը հեռանում է և, այսպիսով, զրկվում քաղաքացիությունից, իսկ Երիքովը խորհրդանշում է մարդու մահկանացու բնույթը: Նրա վրա հարձակվող ավազակները, իհարկե, նրան անմահությունից զրկող սատանան ու դիվական իր հրոսակներն են: Քահանան ու Ղևտացին, որոնք, առանց ուշադրության արժանացնելու զոհին, անցնում են կողքով, կարող էին լինել միայն հին ուխտի դրույթները՝ անկարող օգնելու և փրկելու մոլորված մարդուն: Բարի սամարացին անձամբ Քրիստոսն է, և դրանում առարկություն չկա: Ամխոհեն ճանապարհորդի վիրակապունը կնշանակեր վերջինիս մեղքի ուժի նվազում, իսկ վերքերի վրա լցված յուղը՝ մխիթարություն, որ իր հետ բերում է հույսը: Ճանապարհորդին մոտակա ագարակ փոխադրող կենդանին միսն է, որի մեջ Քրիստոսը մարմնացել էր, իսկ ագարակն, ինչ խոսք, Եկեղեցին: Ագարակատերը ոչ այլ ոք է, եթե ոչ՝ ս. Պողոսը, իսկ գրավ դրված երկու արծաթադրամները՝ սիրո պատվիրանները:

Եթե նմանօրինակ երևակայությունը կարող է զվարճացնել մեզ, ապա այն չի օգնում ճշգրտորեն հասկանալ Տիրոջ հրաշալի առակի իմաստը: Մենք կարող ենք ժպտալ՝ ի վնաս Եկեղեցու մեծ դոկտորի, որով այսուամենայնիվ շարունակում ենք հիանալ, սակայն նման ընդհանրացումներն, ավա՞ղ, տարածված են նաև մեր օրերում:

Նոր Կտակարանի մի մեկնիչ՝ գերմանացի Adolf Jülicher-ը, անցյալ դարի վերջին իր բողոքը հայտնեց հին տեքստերի մեկնաբանության այսպիսի կամայականությունների դեմ: Նրա համար առակները այլաբանական քարոզներ և կամ էլ ճկուն ու հնարամիտ մեկնությանը վերժանվելիք ծածկագրեր չեն: Դրանք ունեն գլխավոր մի կետ, որը միակն է: Յուրաքանչյուր համեմատություն չպետք է կենտրոնացվի դրա վրա: Մանրամասները նրա համար են, որպեսզի պատմածը դառնա ճշմարտանման և թույլ տա հասնել թիրախին, ճիշտ այնպես, ինչպես փետուրներն են հեշտացնում նետի թափն ու անցումը:

Jülicher-ը հիմնավորապես իրավացի է, բայց, այս հայտնագործությունից ոգևորված, նա, անկասկած, քիչ ավելի հեռուն է գնացել եզրակացությունների մեջ: Այսպես, հարց է առաջանում, թե, արդյոք, ճշմարիտ է այն, որ Հիսուսի առակները չեն բովանդակում որևէ այլաբանություն: Օրինակ, փեսայի բարեկամների մասին առակում որոշակի ակնարկ չի՞ արվում արդյոք Հիսուսի մասին: Իսկ, էլ ավելի պարզ, մշակների մասին առակում այգու տերն անձամբ Աստված չէ՞ արդյոք, ծառաները՝ մարգարեները, իսկ սիրելի որդին՝ Քրիստոսը:

Եթե առակն ամենից առաջ շեշտում է կենտրոնական մի խնդիր, ապա ի՞նչ է հարկավոր ընդգծել: Այս հարցում է, որ Jülicher-ի ուսումնասիրությունը, հենմելով միակ կետի հասկացության վրա, մոտ էր բավարար պատասխան տալուն: Նրա սխալը եղել է այն, որ առակը համարել է բարոյախոսական ծեծված ճշմարտություն: Նրա կարծիքով, ո՞րն է տասը քանքարների առակում բովանդակվող լուրը: Ահա դրա բարոյախոսական դասը. գեղեցիկ ու ազնիվ ճանապարհով ձեռք բերված հաջողությունից հետո կարելի է ակնկալել հավաստի հատույց... Նմանապես, անարդար տնտեսի առակը սովորեցնում է, որ ներկա ժամանակից խելացի օգտվելը երաշխավորում և պայմանավորում է գալիք երջանկությունը: Անմիտ հարուստի առակի գլխավոր լուրի էությունն այն է, որպեսզի հասկացնի, որ ամենահարուստ մարդն ամբողջապես կախված է աստվածային իշխանությունից ու ողորմածություն-

նից և այսպես շարունակ: Սրանք այնպիսի մեկնաբանություններ են, որոնց հավանականություններն, անշուշտ, բարեպաշտական են, սակայն դուրս են խոսքից, զուտ բարոյախոսական են և ի վերջո՝ անպտուղ:

Jülicher-ի աստվածաբանության Հիսուսը գեղեցիկ և հուզիչ կերպար է, բայց չունի ավետարանական բարձրություն, ստեղծված է բողոքական կամ կաթոլիկական ազատամտականության կողմից: Բարի ուսուցիչը, որ սարեր ու դաշտեր էր անցնում՝ մարդկանց սովորեցնելու բարոյախոսական մի ճշմարտություն, ճարակորեն ու մեծ տաղանդով օգտվելով առակներ կոչված հովվերգական պատմություններից, Ավետարանների Հիսուսը չէ՝ իրականը... Այս դեպքում, արդյոք, իրենց նեղություն կպատճառեի՞նք նրան խաչելու: Իհարկե՞ ո՛չ:

Ինչ վերաբերում է մեզ, ապա կփորձենք հասկանալ, թե, ընդհանուր առմամբ, ինչի շուրջ են պտտվում Հիսուսի առակները:

Նախ՝ դրանք մեզ հայտնում են, թե *ինչպես է գալիս ու ծավալվում Աստծու Թագավորությունը*: Ահա, օրինակ, հին տիկերի ու նոր գինու առակը. այն ուզում է հասկացնել, որ *Թագավորությունը* ամբողջովին նոր է և ցույց է տալիս այդ *Թագավորությունը* հին մանրատիպերին հարմարեցնելու փորձի ոչ խելամտությունը: Չորս այլ առակներում խոսվում է այն մասին, թե ինչպես է գալիս *Թագավորությունը* ու ծավալվում՝ նույնիսկ առաջ բերելով անսպասելի արդյունքներ, մանանեխի հատիկի, թթխմորի, որոնք հանգիստ, սակայն անդիմադրելիորեն անում են իրենց գործը, հատիկի, որը թաքուն քնած է և, չնայած փորձանքներին, առատ բերք է տալիս և վերջապես՝ սերմնացանի առակները:

Բայց Հիսուսը չի սահմանափակվում միայն գյուղատնտեսությունից քաղված պատկերներով: *Թագավորության* մեջ նա տեսնում է *Աստծու* մեծ տոնակատարություն, որին հրավիրված են բոլորը. «Եկե՛ք, քանզի ամեն ինչ պատրաստ է» և կամ էլ՝ սատանայի *Թագավորության* դեմ մղվող խոշոր պատերազմ, որի ժամանակ ինքը՝ Մեսիան է հարձակում գործում (*Թագավորությունը* բաժանված է, ուժեղ մարդը՝ թալանված):

Սի խուճբ առակներ էլ կարող են վերնագրվել *«Թագավորության օրհնությունները. Աստծու ողորմածությունը մեղավորների նկատմամբ»* անվամբ: Այս խմբերից և ոչ մեկը մեզ չի մոտեցնում Ավետիսի էությանը, որքան այն առակը, որում ողորմածությունը իշխող նոտան է: Մենք դա լսում ենք ժամը տասնմեկի մոտ եկած բանվորների մասին առակում. *Աստծու* հատույցը կտրվի ոչ թե ըստ մարդկային արժանիքների, այլ զուտ աստվածային ողորմածության: Այս առակը այն քննադատության պատասխանն է, որն ուղղված էր Հիսուսին՝ *Թագավորության* դռները մաքսավորների ու պոռնիկների առաջ բացելու համար: Այս խմբի բոլոր առակները պատմվել են քննադատների ներկայությամբ՝ Ավետարանը պաշտպանելու նպատակով: Հիշատակենք կորած ոչխարի և կորած դրամի մասին առակները, որոնք պատմվել են փարիսեցիների ներկայությամբ. վերջիններս գանգատվում էին, թե Քրիստոսն ընդունում է հայտնի մեղավորների: Այս առակներում ասվում է. եթե մարդն իր կորած հարստությունը գտնելու համար այդքան չարչարվում է, ապա *Աստված* ինչքան նեղություն է կրում իր մոլորված որդիների համար: Իբրև *Աստծու* առաքյալ՝ նրա առաքելությունն էլ հենց աստվածային այս վճռի մասին հիշեցնելն է, ապացուցելը, որ *Աստված*, իսկապես, ձեռնամուխ է եղել փրկելու կորած մարդուն, բուժելու հիվանդներին, ինչ գնով էլ որ լինի: Նույնը, նաև, ամենամեծ առակի՝ անառակ որդու մասին պատմող առակի մասին: Ամենա-

պարզ բացատրությունը հետևյալն է. հայրը ներկայացնում է *Աստծուն*, ավագ եղբայրը՝ նախանձ փարիսեցիներին, ովքեր գանգատվում են, իսկ կրտսեր որդին՝ Հիսուսի ընդունած մեղավոր մարդկանց:

Առակների երրորդ խմբում նկարագրվում է *Հիսուսին հետևելու եղանակը*՝ իրապես նրա աշակերտը լինելու համար: Լինել նրա աշակերտը, նշանակում է գտնվել *Թագավորության մեջ*, քանզի Հիսուսն իր անձով մարմնավորում է *Աստծու* կամ երկնքի *Թագավորությունը*: Նմանօրինակ առակները օգնում են հասկանալ Հիսուսին հետևելու իսկական իմաստը: Նրա կանչը լսում ենք հունձքի և մշակների առակում: Բայց նախքան վճիռ կայացնելը, պետք է հաշվարկել գինը, մի բան, որը խորհուրդ է տրվում անավարտ աշտարակի և պատերազմի պատրաստվող թագավորի մասին պատմող առակում: *Թագավորության* հարստության մեջ մաս ունենալու համար հարկավոր է նախապես համաձայնել զոհողությունների. այս ճշմարտությունը վերստին ներկայացված է թաքնված գանձի մասին պատմող առակում: Ձանձրացնող այրի կնոջ և գիշերով դուռը թակող բարեկամի առակում Հիսուսը մարդկանց մղում է հրաժարվել բացասական պատասխանից և հավատքով սպասել Աստծու պատասխանին ու նրա մեծ գործերին: Իսկական աշակերտը նա է, ում մեջ ԱՍՏՎԱԾ վառել է իր լույսը և ով, Եսայի մարգարեի գրքի ծառայի պես, ճրագով ու կոտով իր հերթին լուսավորում է հեթանոսների աշխարհը: Նրանց անկեղծությունը, ովքեր, առանց չափի ու հաշվարկի, կարող են ներել (անխիղճ ծառան), կապացուցվի ոչ թե դավանանքով, այլ ավելի շուտ գործերով (երկու կառուցողները և ծառն ու իր պտուղները):

Վերջապես, հասնում ենք կարևոր մի խմբի, որում խոսվում է *Թագավորության* ճգնաժամի մասին: Հիսուսն այստեղ խոսում է իր միջնորդ գործունեության մասին, որով սկիզբ է դրվում *Աստծու* իշխանությանը՝ այն հասցնում գերագույն ճգնաժամի՝ *Աստծու* հետ ժողովրդի հարաբերությունների վատացման պատճառով. այն կհանգեցնի ոչ միայն Մեսիայի մահվանն ու նրա հաղթանակին, այլև ընտրյալ ժողովրդին մերժելուն, Տաճարի փլուզմանն ու նոր Իսրայելի հայտնվելուն: Այս ետնապլանի դեմ, զրոյական ժամի և ընդհանուրի շտապողականության մասին խոսող բոլոր առակները ամբողջապես լուսավոր են: Որոշ առակներում նա տեղեկացնում է *Աստծու* այցելության ժամի մասին, ինչպես օրինակ, հրապարակում խաղացող երեխաների, ժամանակի նշանների, մնասների մասին առակներում: Անպտուղ թզենու, փակ դռան, դռնապանի, գիշերային գողի, տասը կույսերի առակներում նա Իսրայելին կոչ է անում պտուղներ տալ:

Բայց քանի որ Իսրայելը չգիտեր ո՛չ *Աստծու* այցելության, ո՛չ էլ իր խաղաղությանը վերաբերող իրողությունների ժամը, ապա մեծ դրաման հանգուցալուծվել է Սուրբ Ուրբաթի մոլուցքի մեջ: Այսպիսով, մարդու Որդին՝ նա, ով պատմում է առակներ, մնում է իբրև դրամայի կենտրոնական դեմք. 30, թե 33 տարեկանում, կարևոր չէ, ապրիլյան մի առավոտ, նա գնաց Երուսաղեմ, և ճգնաժամը գազաթնակետին հասավ քաղաքի պատերից դուրս նրա խաչելությամբ, որին երեք օր անց հետևեց դատարկ գերեզմանի իրադարձությունը:

Մեծ, կիսով չափ այլաբանական է անօրեն մշակների առակը, որն իբրև վերջին պատվիրան, ուղղված է հրեա ժողովրդի ղեկավարներին: Ավա՛ղ, դա եղավ խռովարար մի ժողովրդի ուղղված վերջին կանչը, ժողովուրդ, որն ըմբոստության պատճառով ընդմիշտ զրկվեց *Աստծու* ընտրյալ ազգ լինելու դիրքից:

Ե. ԱՌԱՎՆԵՐԻ ՀԵՏԱՊՆԴԱԾ ՆՊԱՏԱԿԸ

Ամփոփենք Հիսուսի առակների մեր մեկնաբանությունը: Ինչո՞ւ է Հիսուսն օգտվել առակներից: Կարելի՞ է կարծել, որ նա դրանից օգտվում է այնպես, ինչպես ներկայիս գուշակն է օգտվում պարզաբանող որևէ օրինակից՝ իր լուրն ունկնդրին մատչելի դարձնելու նպատակով: Սակայն Հիսուսը բացատրում է, որ նրա նպատակը այլ է (տես՝ Մատթ. 13:13): Նա առակների է դիմել մարդկանց՝ իր վարդապետությունը լսելու ժամանակ ցուցաբերած անհավատության պատճառով. անհավատություն կամ անըմբռնողություն, որի պատճառը հոգևոր կուրությունն է: Նույնիսկ այն ժամանակ, երբ նա սովորեցնում է հասկանալի ու բացահայտ ձևով, իրեն մերժողները չէին ցանկանում հասկանալ: Այդ իսկ պատճառով նա կերտում էր իր սկզբունքը. ով որ ունի, նրան կտրվի ու կավելանա, իսկ ով չունի, ունեցածն էլ կառնվի նրանից (տես՝ Մատթ. 13:12):

Քանի որ մարդիկ չհավատացին նրա պարզ վարդապետությանը, ապա նա օգտվեց առակներից, որոնք ճշմարտությունը հայտնում էին նրանց, ովքեր հոգևոր տրամադրվածություն ունեին, բայց նույն այս վարդապետությունը թաքցրել է նրանցից, ովքեր գերադասում էին իր ներկայությամբ մնալ կույր: Ներքոհիշյալ մի քանի կանոնները կլրացնեն առակների ընթերցանության մասին վերևում ասվածը.

1. Փորձել իմանալ, թե առակն արդյոք մեկնաբանվել է Հիսուսի կողմից: Նրա մեկնաբանությունը այնտեղ, որտեղ դա արվել է, միակ ճիշտն է և չպետք է փնտրել այլ մեկնաբանություններ:

2. Ավետարանի հեղինակը երբեմն բացատրում է առակն ասելու պատճառը (Ղուկ. 18:1):

3. Ուսումնասիրել այն իրադարձությունները, որոնք Հիսուսին մղել են պատմելու տվյալ առակը (Մատթ. 18):

4. Փնտրել առակի իմաստն ու դասը: Յուրաքանչյուր առակ ունի նյութական ու հոգևոր երկու աշխարհների միջև գոյություն ունեցող նմանության միայն մի կետ: Դա առակի գլխավոր դասն է, որը հարկ է հիշել ու ընդգծել, թեև սերմնացանի առակում Հիսուսը բացատրում է նաև մի քանի մանրամասն: Բայց, ինչպես ասել ենք ավելի վերևում, երկրորդական մանրամասները մեզ չպետք է շեղեն գլխավոր հարցից:

5. Հետևել, որպեսզի առակները չհակասեն Հիսուսի կամ Նոր Կտակարանի այս կամ այն հատվածի կողմից տրված որևէ տեղեկության:

Հիշել, որ առակներն ընդամենը բանավոր պատկերներ են: Նման պատկերները Աստվածաշնչի ուսմունքը դարձնում են ինչպես կենդանի, այնպես էլ գրավիչ: Բայց դրանք պարունակում են նաև թյուրիմացությունների վտանգ:

Գ Լ Ո Ւ Խ 11

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԶՐԱՇՔՆԵՐԸ

Նախքան սկսելը՝ ներկայացնենք Հիսուսի և առաքյալների հրաշքների վերաբերյալ Նոր Կտակարանի հղումների ցուցակը, ինչպես դա արել ենք առակների հետ կապված, հրաշքներ, որոնք վերաբերում են ինչպես բուժումներին, այնպես էլ անշունչ բնությանը:

Ա. ԲՈՒԺՈՒՄՆԵՐԸ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ «ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ»-ՈՒՄ

1. Հիսուսի անհատական բուժումները

Թագավորի սպայի որդին	Հովհ. 4:46-54
Պիղծ հոգով մարդը	Մարկ. 1:21-28, Ղուկ.4:31-37
Սինոնի զոքանչը	Մատթ. 8:14-15, Մարկ.1:29-31 Ղուկ. 4:38-39
Բորոտը	Մատթ. 8:1-4, Մարկ.1:40-45
Անդամալույծը	Ղուկ.5:12-16, Մատթ.9:1-8, Մարկ.2:1-12, Ղուկ.5:17-26
Բեթհեզդայի հաշմանդամը	Հովհ. 5:2-18
Չորացած ձեռքով մարդը	Մատթ.12:9-14, Մարկ.3:1-6 Ղուկ. 6:6-11
Հարյուրապետի ծառան	Մատթ.8:5-13, Ղուկ.7:2-10
Այրի կնոջ որդու հարությունը	Ղուկ,7:11-17
Գերդեսացի դիվահարները	Մատթ.8:28-34, Մարկ.5:1-20 Ղուկ. 8:26-35
Արյուն կորցրած կինը	Մատթ.9:20-22, Մարկ.5:25-35 Ղուկ.8:43-48
Հայրուսի դստեր հարությունը	Մատթ.9:18-26, Մարկ.5:21-43 Ղուկ.8:40-56
Երկու կույրերը տան մեջ	Մատթ. 9:27-31
Համր դիվահարը	Մատթ.9:32-34
Ասորեցի-փյունիկեցի կնոջ դուստրը	Մատթ.15:21-28, Մարկ.7:24-30
Դժվարությամբ խոսող խուլը	Մարկ. 7:32-37
Բեթսայիդայի կույրը	Մարկ.8:22-26
Ընկնավոր երեխան	Մատթ.7:14-21, Մարկ.9:14-19, Ղուկ. 9:37-43
Սիլովամ ուղարկված բնածին կույրը	Հովհ. 9:1-14
Կույր և համր դիվահարը	Մատթ.12:22-30, Ղուկ.11:14-26
18 տարի ի վեր կոր մեջքով կինը	Ղուկ. 13:10-17

Ջրգողությամբ տառապող մարդը	Ղուկ. 14:2-6
Ղազարոսի հարությունը	Յովհ. 11:1-44
Տասը բորոտները	Ղուկ. 17:11-19
Բարտիմեոսի կույրը	Մատթ.20:29-34, Մարկ.10:46-52, Ղուկ.18:35-43
Մաղքոսի ականջը	Ղուկ. 22:50-51

2. Հիսուսը բժշկում է ամբոխին

Ամբոխը Սիմոն-Պետրոսի դռանը	Մարկ.1:32-34, Մատթ.8:16-17, Ղուկ.4:40-41
Ամբոխը բորոտի բժշկումից հետո	Ղուկ.5:14-16
Ամբոխը Կափառնայունի մոտ	Մատթ.12:15-21, Մարկ.3:7-12, Ղուկ.6:17-19
Բազմաթիվ հիվանդներ	Մատթ.11:2-6, Ղուկ.16:18-23
Ամբոխը հացի առաջին բազմացումից առաջ	Մատթ.14:13-14, Ղուկ.9:11
Ամբոխը Գեննեսարեթում	Մատթ.14:34-36, Մարկ.6:53-55
Ամբոխը հացի երկրորդ բազմացումից առաջ	Մատթ.15:29-31
Ամբոխները Հորդանանից այն կողմ	Մատթ.19:1-2
Կույրեր և կաղեր՝ տաճարում	Մատթ.21:14
Նազարեթի մի քանի հիվանդներ	Մատթ.13:53-58, Մարկ.6:1-6

3. Ուղիանուր հայտարարություններ

բժշկող Քրիստոսի վերաբերյալ

Բուժում է ամեն հիվանդություն և հաշմանդամություն	Մատթ. 4:23, 9:35
Նրան դիպչողները բուժվում էին	Մարկ.6:56
Բուժում է սատանայից հարստահարվածներին	Գործք 10:38

4. Քրիստոսը բժշկում է աշակերտների միջոցով

12 աշակերտների առաքելությունը	Մատթ.10:1, 7:8, Մարկ.6:7-13, 9:1-6
70 աշակերտների առաքելությունը	Ղուկ.10:1-20

5. Աշակերտների անհատական բժշկումները

Բնածին կաղը	Գործք 3:1, 4:22
Պողոսը վերականգնում է տեսողությունը	Գործք 9:9-19, 22:11-13
Անդամալույծ Ենեսան	Գործք 9:32-35
Տաբիթայի հարությունը	Գործք 9:36-42
Լյուստրայի տկարը	Գործք 14:8-18
Կախարդուհին	Գործք 16:16-18
Կենդանացած Եվտիքոսը	Գործք 20:7-12

Պողոսը բուժվում է իժի խայթոցից
 Պոպլիոսի հայրը

Գործք 28:3-6
 Գործք 28:8

6. Աշակերտների խմբակային բժշկումները

Հավատացյալներին հետևող նշանները
 Շատ հրաշքներ ու նշաններ
 Երուսաղեմում բոլորը բուժվեցին
 Ստեփաննոսը բազմաթիվ հրաշքներ է գործում
 Սամարիայում Փիլիպպոսը բուժում է մի
 շարք հիվանդների
 Պողոսն ու Բառնաբասը. շատ հրաշքներ
 Արտասովոր հրաշքներ Եփեսոսում
 Մելիտե կղզում

Մարկ. 16:20
 Գործք 2:43
 Գործք 5:12-16
 Գործք 6:8
 Գործք 8:5-8
 Գործք 14:3
 Գործք 19:11-12
 Գործք 28:9

7. Բնության հրաշքներ

Գինու փոխված ջուրը
 Խաղաղված փոթորիկը
 Հացի առաջին բազմացումը
 Հիսուսը քայլում է լճի վրայով
 Հացի երկրորդ բազմացումը
 Հրաշալի որս

Հովհ. 2:1
 Մատթ.8:23, Մարկ.4:35,Ղուկ.8:22
 Մատթ. 14:15, Մարկ. 6:35, 9:12
 Հովհ. 6:1
 Մատթ.14:12,Մարկ.6:45,Հովհ.6:16
 Մատթ. 15:32, Մարկ. 8:1
 Ղուկ. 5:4, Հովհ. 21:1-5

Բ. ՀՐԱՇՔԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեր խնդիրը ընդհանրապես աստվածաշնչյան հրաշքը և մասնավորապես մեր Տեր Հիսուսի կատարած հրաշքներն այս գլխում համակարգված ուսումնասիրությամբ ներկայացնելը չէ: Ավելի ուշ կխոսենք հրաշքի մասին՝ իբրև Թագավորության նշան և ապացույց այն բանի, որ փրկությունն արդեն իսկ իրականանում է հրաշալի բուժումների և կամ բնության մեջ կատարված հրաշքների ժամանակ:

Նոր Կտակարանի մասնագետ շատ քրիստոնյաների հետ մեկտեղ նշենք, որ ժամանակակից մարդը, երբեմն նույնիսկ՝ քրիստոնյան, տիաճություն է զգում հրաշքներից: Դաստիարակվելով, թեկուզ և անգիտակից ձևով, բնության և հաստատուն օրենքներ ենթադրող գիտության ու տեխնիկայի պաշտամունքի բովում, նա չի կարող ընդունել, որ այդ օրենքները կարող են ունենալ շեղումներ, ընդհատումներ, բացառություններ: Իսկ եթե կան, ապա դրանք, ընդամենը, թվացյալ են, և գիտության առաջընթացը, վաղ թե ուշ, կբացահայտի այս շեղումները:

Արդ, Ավետարանը լի է հրաշքներով: Արդյոք դա բավական չէ՞, որպեսզի այն որակագրկվի՝ համարվելով առասպելների մանկական գիրք: Այս դատողությունը չափազանց մա-

կերեսային է, քանի որ Նոր Կտակարանում բովանդակված հրաշքները չեն խանգարում այս գիրքն ընթերցել հասկանալի ձևով:

Ակզբից մինչև վերջ Ավետարանն (իսկ մեր մտածողության մեջ Ավետարանը համապատասխանում է աստվածաշնչյան ամբողջ գրականությանը) ունի աստվածային անխուսափելի խորք: Սա բավական է, որպեսզի հրաշքը դիտվի իբրև մեր հավատքին արժանի բան և փրկության բաղկացուցիչ մաս նրա համար, «ով հավատում է»:

Հրաշքի ավետարանական բառարանը հարուստ է: Ինչպես հիշեցնում է A. M. Roguet-ն, ֆրանսերենի *miracle*¹ բառը ծագում է լատիներեն *mirari* բայից, որն ավելի շատ նշանակում է զարմանալ, քան հիանալ: Ստուգաբանորեն «հրաշք»-ը ցույց է տալիս արտասովոր իրադարձություն: Ավետարաններում հանդիպում է համապատասխան բառը՝ *thaumaston*, որը գալիս է հունարենի *thauazein*՝ «զարմանալ» բայից: Այստեղ կարելի է գտնել նաև *teras* (հոգնակի թվում՝ *terata*, որը ֆրանսերենին տվել է *teratologie*՝ հրաշագիտություն բառը), որը կարելի է թարգմանել «հրաշք» ձևով: Մեկ այլ բառ էլ՝ *sèmeion*-ը (նշան), ամենից հաճախ մատնանշում է Հիսուսի հրաշքները ոչ միայն Հովհաննու, այլև երեք՝ սինոպտիկական կոչված Ավետարաններում:

Հրաշքը գործողություն է, տեսանելի իրադարձություն: Բավական է աչքեր ունենալ՝ հաստատելու որևէ հիվանդի վայրկենական բուժումը, փոթորկի խաղաղեցումը, հացի բազմացումը: Բայց տեսանելի այս իրադարձության նպատակը սոսկ զարմացնելը չէ: Իմաստը կռահելու գործը թողնվում է մեզ, իսկ ամենաանմիջական նշանակությունն այն է, որ Աստված ներկա է: Այդ նա է միջամտում: Նիկողեմոսն ասում է Հիսուսին. «Դու Աստծու կողմից ուղարկված ուսուցիչ ես, ոչ ոք եթե Աստված նրա հետ չէ չի կարող կատարել այն նշանները, որ դու ես կատարում» (Հովհ. 3 : 2):

Նյութական բնության վրա կատարված նշանն ունի ուսուցողական ընդգրկում հատկապես այն հրաշքներում, որոնց թեման է: Դրանք ամենից ավելի հետաքրքրություն շարժող հրաշքներն են: Բայց, ի հակադրություն պարականոն ավետարանների, որոնցում դրանք շատ մեծ թիվ են կազմում, կանոնական Ավետարանում այնքան շատ չեն:

Կան նշաններ, որոնք հրաշքներ չեն: Դրանք մեսիական և վախճանաբանական նշաններ են: Ասենք, *sèmeia* բառը միշտ չէ, որ կարելի է թարգմանել «հրաշք» իմաստով, բառն ունի ավելի լայն ու ճկուն իմաստ:

«Գործեր»-ը ավետարանական մեկ ուրիշ բառ է, որը տվյալ պարագայում կարող է մատնանշել հրաշք: Դա հունարենի *ergon* կամ հոգնակի թվի *erga* բառի թարգմանությունն է: Շատ ընդհանրական հասկացություն է և ցույց է տալիս արվող ամեն ինչ՝ աշխատանք, զբաղմունք, գործեր, վարք, խորամանկ քայլեր: Ֆրանսերենին տվել է *ergie* և *urgie* վերջավորություն ունեցող բառեր: Այդպես է Հովհաննու 6:27-30 հատվածում:

Եվ վերջապես հիշատակենք «գորություններ» բառը, որը հրաշքի ավետարանական բառապաշարում ունի նախորդներից ավելի կայուն իմաստ: Դա հունարենի *dunamis* բառն է (որտեղից՝ ֆրանսերենի *dynamisme*՝ «դինամիզմ» բառը): Այս բառին հաճախ ենք հանդիպում Նոր Կտակարանում, օրինակ՝ Սիմոն մոզի հետ տեղի ունեցած միջադեպում (Գործք 8:10-13), Թեսաղոնիկեցիների ուղղված առաջին թղթում(1:5): Ներկայումս այս բառն, ան-

¹ Հրաշք

շուշտ, ամենահարմարն է՝ բացատրելու կամ ցույց տալու բնության սովորական օրենքները գերազանցող աստվածային էներգիայի տարածումը (տես՝ Մատթ. 13:58, Մարկ. 6:5-6, Մատթ. 11:21-23, 14:2):

«Մենք ուզում ենք հրաշք անվանել արտասովոր, բնության բնականոն ընթացքից դուրս գտնվող ամեն փաստ, որ այն իրականացնողը, դրա վկաները, կամ էլ հոգևոր հանգամանքները, որոնցում կատարվել է, վերագրում են աստվածային պատճառաբանությանը: Հրաշքներն այնպիսի փաստեր կամ իրադարձություններ են, որոնք, իրենց նյութականությանը ու հոգևոր ենթատեքստով, հայտնում են Աստծու հատուկ միջամտության մասին: Անօգուտ է խոսել հրաշքի մասին, եթե չեն հավատում եսասեր և աշխարհի տիրակալ Աստծուն: Անկասկած, Աստված գործում և մասնակցում է ամեն գործի: Նրա գործունեությունը, որ համապատասխանում է բնության օրենքներին, կարող է ներկայանալ իբրև ամենազորության և բարության հրաշալի դրսևորում, իսկ երբեմն էլ ավելի վառ է, քան բնության ընթացքից դուրս կատարվող որևէ փաստ նրա համար, ով ուզում է խորհել դրա շուրջ: Բայց բնականոն այս գործին մենք վարժված ենք, և հարկ է, որ բնության ընթացքը երբեմն խախտվի՝ գրավելու մեր ուշադրությունը՝»:

Կուզենայինք, այսուամենայնիվ, ամմիջապես լրացնել կաթոլիկ հեղինակին՝ ճշգրտելով, որ խոսքը վերաբերում է ոչ թե Աստծու՝ ամենուրեք և կարևոր չէ՝ որտեղ, իբրև այդպիսին հասկացվող միջամտությանը, այլ միայն բացառապես այն միջամտությանը, որ Ավետարանը հավաստում է գերագույն ու կանոնական իր իշխանությամբ՝ այն համարելով, իրոք, հրաշք: Այլապես, ամեն տեսակ կախարդանք և բոլոր անհավատությունները, որոնք աղետների պես մոլեգնել են Եկեղեցում՝ նրա պատմության ընթացքում՝ խեղաթյուրելով նրա հավատքը, կարող էին դիտվել իբրև հրաշքի և, միևնույն ժամանակ, աստվածային փրկչության ծրագրի բաղկացուցիչ տարր: Պատմությունը մեզ դասեր է տվել այս կարգի սխալների վերաբերյալ, որ ավետարանական ռեֆորմացիան և աստվածաշնչյան աստվածաբանությունը, բարեբախտաբար, վերջնականապես ուղղել են: Այժմ քննության առնենք հրաշքի՝ իբրև նշանի, հասկացությունը:

Գ. ՀՐԱՇՔՆ ԻԲՐԵՎ ՆՇԱՆ

Աստվածաշնչյան հրաշքը նշանն է նոր դիսպանսացիայի կամ տնտեսության հաստատված Հիսուս Քրիստոսի գալուստով: Լինելով փրկչության մեսիական գործեր՝ հրաշքներն ունեն վախճանաբանական բնույթ:

Սա հետևանք է այն բանի, ինչ Եկեղեցին հիվանդության և մարդկությանը սպառնացող կամ էլ վրա հասնող աղետների մեջ հաստատում է ախոյանի՝ սատանայի գործունեության մեջ: Դա երևում է նաև այն փաստից, որ բժշկումը միշտ էլ վերաստեղծում է. հիվանդ անձնավորության և ստեղծված ամբողջ կարգի առողջացում: Հրաշքներն ընդամենը «պատահական» գործողություններ են և չպետք է ընդունվեն իբրև տրամաբանորեն զարգացող նոր դարաշրջանի սկիզբ: Հրաշքները Թագավորության գալստյան պատահական նշաններն են

¹ Jean Jnlien Weber, «Croyez à l'Évangile», p. 218-219.

միայն. Հիսուսի բժշկումներն ունեն ընդամենը ժամանակավոր իմաստ: Նրանք, ովքեր բուժվել կամ հարություն են առել, կարող են դարձյալ հիվանդանալ և, անշուշտ, կմահանան: Այս իմաստով, Հիսուսի հրաշքներն երբեք նպատակ չեն, այլ միջոց, որից նա օգտվում է փրկչության իր ամբողջ գործունեությունն իրականացնելու համար: Դրանք ենթարկվում են Ավետարանի քարոզներին:

Փորձության ժամանակ արդեն ակնհայտ է, որ Հիսուսի հրաշագործ կարողություններն ի սպաս են դրված այն առաքելությանը, որ Հայրը վստահել է նրան: Այն, որ Հիսուսը ունի հրաշքներ գործելու զորություն, հավաստի է, վեր ամեն կասկածից: Բայց նրան կճանաչեն միայն Հոր կողմից ընտրված ժամին: Իսկ մինչ այդ նա պետք է ենթարկվի Հոր խոսքին: Ջորավոր գործերով՝ նա չպետք է շահի մարդկանց բարեհաճությունը:

Իր զորությունը նա կծառայեցնի Հոր կամքին: Հիսուսի՝ հրաշքներ գործելու կարողությունը և Թագավորությունը, որը կարող է հայտնվել հրաշքում և նրա միջոցով, դեռևս ժամանակավորապես են կապված այլ օրենքների հետ: Հիսուսը զորությամբ կօժտվի ստորացման ու տառապանքի գնով:

Երբ մի կողմ ենք դնում Քրիստոսի ինքնահայտնության յուրահատուկ ձևը և մեսիական գործի բնույթը, ապա Հիսուսի հրաշքները տեսնում ենք նրա քարոզի ետնախորքում: Ինքնին՝ դրանք չունեն նպատակ, այլ ծառայում են ակնհայտ դարձնելու նրա գոյությունը (տես՝ Մարկ. 1:36-38):

Երբ հրաշքը ազդեցություն է գործում բազմության վրա, Հիսուսը քաշվում, առանձնանում է: Աշակերտների՝ կրկին ամբոխի մոտ վերադառնալու խնդրանքին նա պատասխանում է. «Գնանք մեկ ուրիշ քաղաք, չէ՞ որ դրա համար եմ ուղարկված» (Ղուկ. 4:43):

Նրա գլխավոր նպատակն, ուստի, ոչ թե «բազմաթիվ» բժշկումներն են, այլ երկրի վրա հայտնված Թագավորության հայտնությունը: Հրաշքները, թեև դրանք սերտորեն կապված են քարոզին, ընդամենը նշաններ են, երկրորդական երևույթներ, հայտնված այն ճշմարտության նշանները, որ «Թագավորությունն արդեն երկրի վրա է»:

Այս պատճառով էլ սերտ կապ գոյություն ունի Հիսուսի կատարած հրաշքի և ժողովրդի հավատքի միջև: Մի կողմից՝ հրաշքը ամրապնդում է հավատը Հիսուսի առաքելության և նրա իշխանության նկատմամբ (Մարկ. 2:1-12), իսկ մյուս կողմից էլ չկա հրաշք, եթե դրան չեն սպասում հավատքով (Մարկ. 6:5):

Այն փաստը, որ Հիսուսը չի գործել շատ հրաշքներ, երբեմն բացատրվել է նրան դիմող մարդկանց հոգեբանական կախվածության ու տրամադրության լույսի ներքո: Խնդիրն այն չէ, որպեսզի իմանանք, թե Հիսուսն արդյոք ունի՞ հրաշքներ կատարելու զորություն, այլ թե արդյոք նա ազա՞տ էր այդ բանն անելու բոլոր պարագաներում: Այնտեղ, որտեղ բացակայում է հավատքը, տեղ չկա հրաշքի համար:

«Նա չէր կարող» արտահայտությունը չի խոսում Հիսուսին ներհատուկ անկարողության մասին, այլ, ավելի շուտ, այն մարդկանց ըմբռնողության բացակայության մասին, ովքեր հրաշքներ էին ուզում՝ առանց հավատքի պայմանի: «Նշան» բառը միանշանակ այն ապացույցն է, որ բանն ունի աստվածային ծագում, որ այն գալիս է երկնքից: Այսպիսով, Հիսուսը գործել է աստվածային ու մեսիական կարողությամբ: Ամբոխն ունի աչքեր՝ տեսնելու համար և, սակայն, երբեմն չի տեսնում:

Եվ այսպես, հրաշքներն ավետում են Թագավորության գալուստն ու տիեզերական նորոգչությունը (Մատթ. 19:2): Այսուամենայնիվ, դրանք նոր ստեղծագործության սկիզբ չեն այլևս: Արարումը գալիք է վախճանաբանական իմաստով և պատկանում է վախճանաբանական ոգուն: Այն ներառելու է մեռյալների հարությունը, ենթադրում է նաև տիեզերական աղետ:

Այս պահին, հրաշքը Հիսուսի՝ Սատանայի նկատմամբ ունեցած իշխանության ապացույցն է: Ավետարանում ոչ մի տեղ այն չունի անկախ, քարոզից կտրված իմաստ: Ամեն անգամ, երբ այդ ձևով հրաշք է պահանջվել, ապա դա եղել է զայթակղությունը շեղելու նշան: Հրաշք գործելը երաշխիք չէ դատաստանի դեմ (Ղուկաս 10:20):

Գ Լ ՈՒ Խ 12

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս գլխում կվերարտադրենք հարությանը նվիրված մի քանի ռադիոհաղորդումների տեքստը՝ առանց որևէ փոփոխության:

Ա. ՀԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

Ծնունդն ու մահը այն երկու փաստերն են, որոնք բացում են և փակում, սկիզբ դնում ու ավարտին են հասցնում մեր կյանքի ընթացքը: Որևէ կենսագիր կարող է հակվել մեր ծագումնաբանության վրա, ուսումնասիրել արտաքին, մշակութային, սոցիալական, քաղաքական այն պարագաները, որոնցում ծնվել ենք, մեծացել, գործել ու նաև վեր հանել այն ազդեցությունը, որ մեզ վրա գործել է ազգային այս կամ այն հերոսը կամ հայտնի անձնավորությունը: Սակայն, նա չի կարող ավելին ասել, քան այն, ինչ բովանդակվում է այս երկու կետերի՝ մեր ծննդի ու մահվան միջև: Մտացածին կենսագրությունն անգամ կարող է ներշնչվել միայն մեր կյանքի իրական ընթացքից: Այսպես, դրամատիկ և ոչ մի հեղինակ չի համարձակվի ստեղծագործության մեջ ներառել իր հերոսի նախակյանքի պատմությունը, քանի որ այն չունի... Եվ, առավել ևս, թույլ չի տա, որպեսզի իր երևակայությունը թափառի այնկողմնային աշխարհի միգամածության մեջ՝ նկարագրելով այն, ինչ զգում կամ կրում են այնտեղ, քանզի այդ մասին ոչինչ չգիտի: Սա ճշմարիտ է ցանկացած մեկի համար, ում կենսագրությունը պատմվում է կա՛մ խիստ պատմական, կա՛մ էլ ձևական ոճով: Այս ընդհանուր, համաշխարհային կանոնից կա միայն մեկ բացառություն՝ Հիսուս Քրիստոսը:

Համաձայն Ավետարանների և Նոր Կտակարանի մնացած մասի՝ Հիսուսը նախապես գոյություն է ունեցել իր մարմնացումից ու ծննդից առաջ: Մահվանից հետո, որը պաշտոնապես, օրինական ձևով հաստատվել է, նրան տեսել են տղամարդկանց ու կանանց ընկերակցությամբ: Այս պնդումները ոչ մի կասկած չեն հարուցում: Լսենք դրանք. «Ճշմարիտ, ճշմարիտ են ասում ձեզ, Աբրահամից առաջ ե՛ս են եղել» (Հովհ. 8:58): «Իսկ եթե դուք մար-

դու Որդուն տեսնեիք բարձրանալիս այնտեղ, ուր առաջ էր» (Յովհ. 6:62): «Որովհետև գիտենք մեր Տեր Յիսուսի շնորհքը, նրա, ով հարուստ էր և ձեզ համար աղքատացավ, որ իր աղքատությամբ դուք հարստանաք» (Բ. Կորնթ. 8:9): «Նա, որ Աստծու ճակատագիր ուներ, հափշտակվեց Աստծուն հավասար լինելու մտքով» (Փիլիպ. 2:6):

Քրիստոսի նախակյանքի վերաբերյալ նմանօրինակ պնդումները ենթակա չեն ստուգվելու խիստ գիտական հետազոտության մեթոդներով: Կամ դրանց հավատում են ու ընդունում, կամ էլ ժխտում են և վերջնականապես մերժում՝ նայած թե ինչպես են վերաբերում հավատքին և, ընդհանրապես, քրիստոնեական հայտնությանը:

Ինչ վերաբերում է մահվանից հետո Քրիստոսի գործունեությանը, ապա բանն այլ է: Անշուշտ, այստեղ ևս կան պնդումներ, որոնք չի կարելի ստուգել այնպես, ինչպես կատուգվի, օրինակ, Յուդիոս Կեսարի կյանքը: Համաձայնել կարելի է միայն Յիսուսի՝ ամենազոր Չայր Աստծու աջ կողքին նստած լինելու փաստի նկատմամբ հավատքով, այն փաստով, որ նա այնտեղ բարեխոսում է մեր օգտին և կամ էլ, որ ուղարկում է իր Սուրբ Հոգին: Այս ամենը չի ենթարկվում գիտահետազոտական որևէ մեթոդի: Բայց Յիսուսի մարմնական հարությունը, որ հաստատում են աշակերտները, նրանց հետ ունեցած բազմաթիվ զրույցները, աշակերտների հետ լինելը ճանապարհին, ծովափին կամ փակ սենյակում, այն փաստը, որ տեսնում են, թե նա ինչպես է իրենց ներկայությամբ մեղր ճաշակում կամ ուտում հաց և ձուկ, հնարավորություն են տալիս կատարել միաժամանակ ազնիվ և խիստ հետազոտություն՝ ճշմարտացիությունը ստուգելու նպատակով: Ուստի հնարավոր և անգամ ցանկալի է դիմել խիստ մեթոդի, որպեսզի թափանցել Քրիստոսի հարությունից հետո նրա մասին բերված փաստերի պատմականության մանրամասների մեջ: Լիովին օրինական է քննության առնել Նոր Կտակարանի փաստաթղթերը, որոնցում տեղ են գտել այս մանրամասները, ինչպես նաև համաշխարհային եկեղեցու հավատքը, եկեղեցի, որը հայտնում է դրանք: Բայց ես առաջ եմ ընկնում իմ եզրակացությունների մեջ. հնարավոր է նաև, անգամ հրամայական է, ամբողջապես վստահել դրանց, եթե նույնիսկ ուշադրությունը կենտրոնացվում է ավելի մեծ պարզաբանում պահանջող այս կամ այն մանրամասին:

Նախքան սկսելը՝ կուզենայի նշել լայնորեն տարածված մի սխալ, համաձայն որի՝ Քրիստոսի հարության նկատմամբ հավատքը հիմնվում է Նոր Կտակարանի բնագրերի ներշնչանքն ընդունելու գաղափարի վրա: Եթե հավատում ենք Նոր Կտակարանի՝ Աստծու կողմից ներշնչված փաստաթուղթ լինելու փաստին, պետք է նաև ընդունենք հարության պատմականությանը, քանի որ այս մեկը բխում է առաջինից: Ինչ վերաբերում է ինձ, ապա ուզում եմ գործել հակառակ կարգով: Ներշնչանքի նկատմամբ մեր հավատքը ընդամենը հետևում է հարությանը: Դա հենց պատմական կարգն է: Նախքան Նոր Կտակարանի փաստաթղթերը գրվելը՝ քրիստոնեական առաջին սերունդն արդեն դավանում էր հարության նկատմամբ հավատքը: Նոր Կտակարանի վերջին գիրքը ավարտին հասցվեց միայն երկրորդ սերնդից հետո: Մինչ այդ վաղ շրջանի եկեղեցին իր հույսն ու հավատքը ուրախությամբ նվիրեց Տիրոջ մարմնական հարությանը: Մեր դրությամբ անրապնդող կարևոր մեկ ուրիշ մանրամասն. այս փաստաթղթերը համընդհանուր ընդունելության արժանացան գրվելուց և բոլոր եկեղեցիներում շրջանառության մեջ դրվելուց մեկ դար հետո միայն: Դա, կարծում եմ, բավարար հիմք է՝ ենթադրելու, որ հարության փաստացի լինելը հաստատելուց հետո

նաև ձեռք ենք բերում անհրաժեշտ բոլոր երաշխիքները՝ ընդունելու Սուրբ Գրքի՝ աստվածային ներշնչանքի արդյունք լինելու իրողությունը: Այս գրքում չեն ուզում շարադրել Սուրբ Գրքի՝ աստվածային ներշնչանքի արդյունք լինելու մասին ուսմունքը: Դրան հավատում են և, մի օր, առիթի դեպքում, թերևս անդրադառնան այս հարցին: Ուզում են, պարզապես, ճշգրտել, որ ներշնչանքի նկատմամբ հավատը ոչ թե նախորդում, այլ հաջորդում է հարության հանդեպ հավատին:

Իսկ այժմ ահա այն էականը, ինչին քրիստոնեական ամբողջ Եկեղեցին հավատում է Հիսուս Քրիստոսի հարության վերաբերյալ հարցում: Հիսուս Նազովրեցին խաչվել է հռոմեացի կուսակալ Պոնտացի Պիղատոսի կառավարման օրոք՝ մեր թվարկության մոտ 30-ական թթ.: Նա մահացել է, ինչպես և մահանալու է յուրաքանչյուր մահկանացու: Անշուշտ, մենք ճշգրտորեն չգիտենք, թե ինչ ասել է Ֆիզիկական մահ, որովհետև անձնապես չունենք դրա փորձը: Նույնը՝ նաև Հիսուս Քրիստոսի մահվան մասին: Դժվար է բացատրել, թե ինչ է կատարվել, պատահել նրա հոգուն, երբ նա այդ հոգին դրել է Հոր ձեռքերի մեջ և մահացել: Սակայն գիտենք, որ նա, իրոք, մահացել է: Եթե Հիսուսի դեպքում գերակայեր բնական կարգը, ապա կհաստատեին, որ պաղեստինյան մի գերեզմանում թաղված նրա մարմինը փտել է: Սակայն հենց նրա դեպքում, բնության բնականոն կարգը չգործեց. երրորդ օրը Հիսուսը կենդանացավ, հարություն առավ մեռյալներից: Նա կենդանի դուրս եկավ գերեզմանից, որ նոր էր փորվել ժայռի մեջ՝ Հովսեփ Արիմաթացի անվամբ աշակերտի այգում:

Մերձավորները տեսել են նրան՝ հեռվից կամ մոտիկից, տարբեր ժամերի ու տարբեր վայրերում դիպել են նրան և դա՝ քառասուն օր շարունակ: Այս երկար շաբաթների ընթացքում աշակերտներն ու բարեկամները քայլել են նրա կողքից, կերել են նրա հետ: Հիսուսը նրանց ցույց է տվել իր վիրավոր ծայրանդամները, որոնց սպիները տեսանելի են մնացել մոր մարմնի վրա: Նրանք նկատել են, որ մարմինը որոշ փոփոխություններ է կրել (եթե կարելի է այսպես արտահայտվել), փոփոխություններ, որոնք այդ մարմինը դարձնում էին իրենց և մեր սովորական մահկանացու մարմիններից տարբերվող: Նա օժտված էր այնպիսի կարողություններով, որ չի կարելի ակնկալել մարդկային ոչ մի էակից:

Սակայն, խաչելության վերքերը նրա վրա թողել էին իրենց դրոշմը՝ խոր սպիները: Աշակերտները հրաշալիորեն գիտեին, որ անձը, որի հետ գործ էին ունեցել, նույնն էր, ում մարմինը, այս հայտնություններից մի քանի տասնյակ ժամեր առաջ թաղվել էր: Դա նույն մարմինն էր, որ նրանք, ինչպիսի մտասուզությամբ ու անասելի ցավով, փակեցին վիմափոր գերեզմանում և ծածկեցին ծանր քարով...

Այս ամենը՝ հաստատելու համար, որ Քրիստոսի հարությունը ոչ միայն մեր հավատքի հողվածներից է, այլ և այնպիսի փաստ, իրադարձություն, որի պատմականությունը կարելի է քննության առնել և ապացուցել, եթե ունեն հաստատուն հավատք: Չեն պնդում, թե ի վիճակի ենք տալու կասկածի ամեն հնարավորությունից դուրս ապացույցներ: Նմանօրինակ համոզմունքները հատուկ են միայն ճշգրիտ գիտություններին՝ մաթեմատիկային, ֆիզիկային: Սակայն պնդում են, որ հնարավոր է ապացուցել հիմնավոր ամեն կասկածից դուրս գտնվող հարության իրողությունը՝ խիստ համառելով «հիմնավոր» բառի վրա: Ուստի և հնարավոր է բերել այնպիսի ապացույցներ, որոնք ընդունելի լինեն արդարադատության և անկողմնակալ պատմաբանների համար:

Քրիստոսի հարությունը համարում ենք ոչ միայն ապացուցելի փաստ, այլև նրա վրա ենք հիմնում մեր հավատքն ու քրիստոնեական կրոնի բոլոր կողմերը: Այլապես քրիստոնեական, իմ, ինչպես նաև անցյալի միսիոներների ու ներկայիս գուշակների քարոզչությունը չէր ունենա ոչ մի իմաստ: Երկրի վրա սփռված քրիստոնյաների և Եկեղեցու հավատքը, Եկեղեցի, որը քսան դար ի վեր դավանում է այն, կլիներ զուտ սնահավատություն, գուցե հրաշալի առասպել, այսուհանդերձ՝ առասպել:

Բայց եթե կարողանում ենք առաջ քաշել հարության վերաբերյալ ապացույցներ, ուստի նաև ի վիճակի ենք ողջամտորեն ապացուցելու քրիստոնեական հավատքի արմատական բոլոր ուսմունքների հիմնավորվածությունը: Առանձին - առանձին վերցրած՝ այս հավատքի տարրերը կարող են լինել վիճաբանության առարկա: Սակայն Քրիստոսի հարությունը դրանք միավորում է հրաշալի ներդաշնակությամբ և սերտ կապով: Այն արձակում է պայծառ լույս, որը լուսավորում է բոլոր մանրամասները: Ուստի, դրա շնորհիվ մենք մոտենում ենք քրիստոնեական հավատքի հենց միջուկին:

Բ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՎԱՏԸ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԲ

Նոր Կտակարանում բերված և ոչ մի մանրամասն զուրկ չէ կարևորությունից: Սակայն, բոլորը հավասարաբեռ են: Որոշ փաստեր բերվել են միայն իմիջիայլոց, հեղինակներն ակնարկում են ինչ-որ բան՝ առանց երկար կանգ առնելու: Դրանք չունեն էական արժեք՝ ո՛չ բերված վկայությունների ամբողջության, ո՛չ էլ Եկեղեցու հավատքի համար:

Ինչ վերաբերում է Քրիստոսի հարությանը, ապա հաստատում ենք այնքանով, որքանով ուսումնասիրում ենք Նոր Կտակարանը, որ այն զբաղեցնում է կենտրոնական տեղ, որ այն իշխում է վաղ շրջանի Եկեղեցու կազմավորման ողջ շրջանի, ինչպես նաև քրիստոնյաների առաջին սերնդի մտածողության վրա: Հանե՛ք հարությունը Նոր Կտակարանի էջերից, և Եկեղեցին հոգս կցնդի՝ առանց հետքեր թողնելու: Բայց, քանզի դուք դա հաստատում եք ամեն քայլափոխի, ապա այն առաջնային է քարոզիչների ու ավետարանիչների ելույթներում:

Այժմ, եթե կարող եք, վերցրեք ձեր Աստվածաշունչը և Նոր Կտակարանի էջերի վրա ընդգծեք Քրիստոսի հարության հետ կապված հատվածները: Դուք կզարմանաք՝ հաստատելով, թե ինչքան հաճախ է այն հանդիպում: Հարությունը այն անկյունաքարն է, որի վրա հիմնվում է քրիստոնեական ավանդույթի շենքը:

Առաջին կետը, որը կգրավի ձեր ուշադրությունը, հարության պատմությունն է, որ գրվել է չորս ավետարանիչների՝ Մատթեոսի, Մարկոսի, Դուկասի, Հովհաննեսի գրչով: Ընդհանուր առմամբ, Ավետարանները չեն բերում նույն փաստերը՝ բացառությամբ հացի բազմացման հրաշքի: Կույսից ծնվելու պատմությունն անգամ, որը, սակայն, էական է Քրիստոսի անձն ու գործը հասկանալու տեսակետից, տրված է միայն երկու ավետարանիչների՝ Մատթեոսի և Դուկասի կողմից: Նույն ձևով էլ համբարձման պատմությունը հանդիպում է միայն Մարկոսի և Դուկասի Ավետարաններում:

Այժմ, եթե աչքի անցկացնենք «Գործք Առաքելոց»-ը, ապա կհանդիպենք առաքյալների մոտավորապես տասնութ կամ տասնինը քարոզի, որոնցից տասներեքում պարզորոշ խոս-

վում է հարության մասին: Այս գրքի առաջին գլխում պատմվում է Հիսուսի ու նրա աշակերտների միջև կայացած մի զրույց: Հեղինակն ընդգծում է, որ քառասուն օր շարունակ Հիսուսը երևացել է նրանց: «Հիսուսը տանջանքներ կրելուց հետո, բազմաթիվ ապացույցներով, կենդանի է ներկայացել նրանց, քառասուն օր երևացել է խոսելով Աստծու թագավորության մասին»: Հիսուսի իրական ու մարմնական ներկայությունը նրանց աչքին դարձել էր անհերքելի փաստ:

Նույն այս գլխի վերջում հարության վկա լինելը ներկայացված է իբրև առաքյալ լինելու համար պահանջվող պայման (Գործք 1:22), և ս. Պողոսի՝ Կորնթացիներին ուղղված առաջին թղթի մի տող (9:1) հաստատում է այս պայմանը: Նաև՝ հետևյալ հատվածը. «Եվ առաքյալները մեծ զորությամբ վկայություն էին տալիս Տեր Հիսուսի հարության համար, և մեծ շնորհք կար ամենքի վրա» (Գործք 4:33):

«Գործք Առաքելոց»-ի ընթերցանության ժամանակ մեկ ուրիշ կետ էլ վեր է հանում այն, որ երկու կողմերի՝ առաքյալների ու նրանց հակառակորդ հրեաների միջև կրքոտ ձևով վիճարկվող թեման հենց Քրիստոսի հարությունն է (4:33 և 23:6):

Պաղեստինի հռոմեացի կուսակալներից մեկը՝ Պորկիոս Փեստոսը՝ լսելով, թե Պողոս առաքյալն ու իր հակառակորդներն ինչպես են վիճաբանում Քրիստոսի հարության թեմայով, այս մասին հաշվետու եղավ Ազրիպաս արքային՝ ամփոփ ներկայացնելով վեճը: Վեճն, ասում էր նա, պատվում էր ոմն Հիսուսի շուրջը, որը մահացել էր, մինչդեռ Պողոսը հայտարարում էր, իբր տեսել էր նրան:

Սա հենց այն պնդումն էր, որ Պողոսն անում էր ամենուրեք, ուր քարոզում էր: Հիսուսը ողջ էր: Տեղի էր ունեցել մարմնական հարություն: Կանգնելով նշանավոր Արեոպագոսի առաջ՝ Աթենքի Մարս բլրի վրա, Պողոսը չի վարանում թերահավատ, անգամ սարկազմի ոգով տրամադրված ունկնդիրների առաջ հաստատել Հիսուսի հարության իրողությունը (Գործք 17:18):

Բացելով Պողոսի և մյուս առաքյալների թղթերը՝ դարձյալ մեզ հաշիվ ենք տալիս հարության կենտրոնական իրադարձություն լինելու մասին: Այս համոզմունքի վրա հիմնվում են ուրիշ համոզմունքներ՝ հնարավորություն տալով մշակել ուսմունքի այլ կետեր:

Հայտնի է անտիկ աշխարհի հույն գիտնական ու մտածող Արքիմեդի խոսքը. «Տվե՛ք ինձ հենման կետ, և ես կշրջեմ երկրագունդը»: Կարելի է ասել, որ առաջին քրիստոնյաները Քրիստոսի հարության մեջ հայտնաբերել էին այս կետը, այդ իսկ պատճառով էլ ի վիճակի եղան իրապես բարձրացնելու երկրագունդը, տակնուվրա անելու պատմության ընթացքը, վերափոխելու կյանքը: Վաղ շրջանի Եկեղեցու՝ Քրիստոսի մասին ունեցած պատկերացումը ձևավորվել էր մարմնական հարության լուսի ներքո (Հռոմեաց. 1:14): Մեղավորի արդարացման հիմքում հարությունն էր (Հռոմեաց. 4:25):

Քրիստոնեական բարոյագիտությունը հիմնվում էր հարության վրա (Հռոմեաց. 6:4): Այն-կողմնային կյանքի և անմահության նկատմամբ քրիստոնեական հույսը ևս ներշնչվում էր դրանից (Ա. Թեսաղոնիկ. 4:14): Վերջնական դատաստանի համոզմունքը ևս բխում էր հարությունից (Գործք 17:31):

Եբրայեցիներին ուղղված թուղթը (որ ոմանք վերագրում են Պողոսի գրչին) նույն համոզմունքն է արտահայտում Քրիստոսի հարության նկատմամբ (Եբր. 13:20): Իր հերթին, ս. Պետրոսը արմատական է համարում հարության պատմականությունը (Ա. Պետրոս 1:3):

Եվ, վերջապես, Հովհաննու «Հայտնություն»-ը՝ Նոր Կտակարանի վերջին գիրքը, բացահայտ է. «Ե՛ս եմ առաջինը և վերջինը: Եվ ողջը: Ես մեռած էի և ահա կենդանի եմ հավիտյանս հավիտենից և ունեմ դժոխքի ու մահվան բանալիները» (Հայտն. 1:18):

Նոր Կտակարանի բնագրերն ուսումնասիրելիս շլացուցիչ պայծառությամբ աչքի են զարնում երկու կետ, որ կարողացել ենք շոշափել միայն այստեղ: Բոլոր առաքյալները, ինչպես նաև սովորական հավատացյալները, Քրիստոսի մարմնական հարությունն ընդունել են իբրև կասկածից դուրս գտնվող փաստ: Հարությունն առասպել չէ: Նրանք ոչ միայն դրան հավատում, այլև ուժեղ ու զվարթ համոզմունքով այն հայտարարում են:

Եվ այսպես, նա, ով հարության նկատմամբ հավատքը չի ներառի քրիստոնեական իր համակարգի մեջ, ով կհարաբերականացնի դրա կարևորությունը և կամ էլ այն կտեղավորի կրոնական անստուգելի հավատամքների թանգարանում, ինքնաբերաբար դուրս կմղվի համաշխարհային Եկեղեցու հավատքից: Դա ճշմարիտ է, եթե անգամ նա համամիտ էր քրիստոնեական ներշնչանքով որոշ գաղափարների և կամ ընդունում էր քրիստոնեական վարդապետության հոգևոր որևէ արժեք:

Գ. ՀԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ

Քրիստոսի հարության պատմությունն այնպես, ինչպես ընթերցում ենք Նոր Կտակարանում, այնքան արտասովոր է, իսկ դրանից բխող հետևանքներն՝ այնքան խորը, որ արժե այն բացատրել ու ամրապնդել ամենամանրագույն ապացույցներով:

Մենք՝ քրիստոնյաներս, առաջինն ենք համոզվել ոչ միայն ամբողջական, խստագույն բարոյականություն կիրառելու անհրաժեշտության, այլև մտավոր խիստ անաչառության ապացույցներ տալու մեջ: Մենք չենք ուզում ո՛չ խաբվել, ո՛չ էլ խաբել մեր մերձավորին: Սա պետք է արսիոմա լինի իր անվանն արժանի յուրաքանչյուր քրիստոնյայի համար:

Գրելով Կորնթոսի Եկեղեցուն՝ Ս. Պողոսը նշում է, որ եթե քրիստոնեական հույսը վերաբերեր միայն ներկա կյանքին, ապա քրիստոնյաները կլինեին բոլոր մարդկանցից ամենաթշվառները: Այս պատճառով էլ ուսմունքի և ոչ մի հողված չի ենթարկվել նույնքան խիստ քննության, որքան հարության մասին հողվածը: Անկողմնակալ որոշ հետազոտողներ խոստովանում են, որ մարդկության պատմության տարեգրությունները չեն բովանդակում նույնքան լավ ներկայացված և այնքան շատ փաստերով ամրապնդված ոչ մի այլ իրադարձություն, ինչպես Քրիստոսի հարությունը: Այս մարդիկ, որոնք գիտնականներ են և, միևնույն ժամանակ, հավատացյալներ, հայտարարում են, որ հարությունը ամբողջ պատմության ամենից ավելի լավ հաստատված փաստն է, և որ բացասական քննադատությամբ նրա դեմ սանձազերծված ալիքները կզարկվեն անսասան ժայռի:

Նա, ով չի ընդունում հարության պատմական անկողմնակալությունը, անում է ոչ թե այն պատճառով, որ ի վիճակի է բերել հակառակ փաստեր (այդպիսիք չկան), այլ որովհետև նրան մղում է հակառակ մի հավատք. նա հարում է գերբնականի ժխտող մի փիլիսոփայության, մերժում է հայտնությունը և չի ընդունում դրա իրողությունը, առավել ևս՝ օրինականությունը: Բնագրային ամենամուր ապացույցների օգնությամբ անգամ հնարավոր չէր սասանել նրանց ապրիորին: Նրանք մեկընդմիջտ ընդունել են այնպիսի դիրքորոշ-

ոււմ, որը կարելի է որակել իբրև կրոնական, բայց որը շրջված կրոն է՝ թշնամի է տրանսցենդենտալ հայտնությանը: Նրանց աչքերով, հայտնված կրոնի առեղծվածը, հրաշքն ու գերբնականը չունեն կենսական հիմք:

Այսքան կարճ շարադրանքի մեջ, իհարկե, չեմ կարող բավականաչափ ներկայացնել գոյություն ունեցող բոլոր ապացույցներն ու փաստարկները՝ պաշտպանելու այն դիրքորոշումները, որոնք, հիշեցնում եմ, համաշխարհային եկեղեցունն են: Ուզում եմ պարզաբանել այն փաստը, որ ես հին և առավել ևս ժամանակակից աղանդների պատգամաբերը չեմ, աղանդներ, որոնք արդիականության պատրվակով սողոսկում են եկեղեցի, որը մեկն է, սուրբ է, առաքելական է և համաշխարհային՝ վնասելու և խարխլելու նրա հավատքի հիմքերը: Առաքյալների Չավատո հանգանակով, Նիկիայի խորհրդանշով, խաղաղ, զվարթ ու խորունկ համոզմունքս եմ հայտնում մեր Տեր և Փրկիչ Յիսուս Քրիստոսի հարության վերաբերյալ:

Ինչպես արդեն ասել եմք, այս իրադարձությունը կենտրոնական տեղ է զբաղեցնում Նոր Կտակարանում: Հնարավոր չէ ընթերցել Ավետարաններն ու թղթերը՝ առանց ազդվելու դրանցում արված հղումներից ու ակնարկներից: Առանց որևէ կասկածի՝ վաղ շրջանի եկեղեցին հավատաց հարությանը և իր հավատքի շենքը կառուցեց նրա վրա: Այս համոզմունքի շնորհիվ, հարությունը սենց նրա հավատքը, պահպանեց հույսը և աշխուժացրեց գութը: Առաքյալ դառնալու նպատակով պաշտոնապես մատնացույց արված ականատեսներն այս մասին փոխանցել են էականը: Ոչ ոք չէր համարվի առաքյալ, եթե եղած չլիներ Փրկչի հարության ականատեսը:

Բայց առաքյալները հարության միակ վկաները չէին: Նրանք պաշտոնապես նշանակված վկաներն էին: Աստվածաշնչյան պատմություններում հիշատակվում են բազմաթիվ անուններ, այդ թվում՝ կանանց: Որոշակի մի պահի նրանց թիվը հասնում է հարյուր քսանի, իսկ մեկ ուրիշ տեղ էլ տեղեկանում եմք, որ բոլոր աշակերտների ամբողջական թիվն անցնում էր հինգ հարյուրը: Վերջիններիս գրավոր վկայությունը չի պահպանվել, սակայն կասկածից վեր է, որ առաջին դարերի ընթացքում այն թանկարժեք նեցուկ է եղել նոր հավատափոխների ձեռք բերելու և մյուսների հավատքն ամրապնդելու համար:

Արդյո՞ք տրամաբանական է մտածել, որ այս տղամարդիկ ու կանայք ստել են: Արդյո՞ք սուտ լուրեր տարածելու անպատասխանատվությունն են ունեցել: Արտաքին հանգամանքներն, անշուշտ, դրան կխանգարեին: Նրանք ոչ մի պատճառ չունեին չարաշահելու անգետ մարդկանց ու դյուրահավատների հավատքը: Նման բնույթ ու ընդգրկում ունեցող ստից նրանք չէին կարող ակնկալել ո՛չ շահ, ո՛չ էլ չնչին առավելություն, չէին կարող հուսալ, թե նման բարոյախոսությամբ հասարակության մեջ բարձր դիրքեր կգրավեն: Բացի այդ, ընդունելով հարության նկատմամբ հավատքը, նրանք կանգնում էին դաժան մահով մեռնելու վտանգի առջև: Համարյա բոլոր առաքյալները մահացել են Մարտիրոսի մահվամբ, բազմաթիվ հավատացյալներ հալածվել են, բանտարկվել, կտտանքների ենթարկվել ու սպանվել:

Եթե խոսք լիներ ստի մասին, ապա հրեական հոգևոր իշխանությունները վաղ թե ուշ նրանց դիմակազերծ կանեին և ի վերջո կվկայակոչեին Նազովրեցի մարգարեի փտող դիակը՝ այսպիսով՝ վճռականորեն հերքելով անհավանական համարվող պնդումները: Հարությունից հիսուն օր հետո Պետրոս առաքյալը հրապարակայնորեն հայտարարում է, որ Աստ-

ված Հիսուս Քրիստոսին հարություն է պարգևել մեռյալներից: Հրեա քահանաներն, ուստի, պետք է, որ բավականաչափ ժամանակ ունենային հակառակն ասելու և հերքելու նրա անհավատալի պնդումները: Կարող էին փնտրել, գտնել այդ մարմինը և այն ի ցույց դնել Պետրոսի ապշահար ունկնդիրներին: Արդ, հայտնի է, որ նրանք ոչինչ չեն արել:

Ստի վարկածը բովանդակում է ակնհայտ անհնարինություններ: Այն ենթադրում է, որ տասներկու առաքյալները և նրանց հետ հինգ հարյուր վկաները համաձայնության են եկել ու դարձել խոշոր մի խարդախության մեղսակիցներ: Կանոնավոր բանականությամբ օժտված մարդը կարող է արդյոք հուսալ, որ ուրիշների վզին կփաթաթի նման կեղծիքը: Բացի այդ՝ այսուհետ նրանք հարկադրված կլինեին այն պահպանել մինչև իրենց կյանքի վերջը, պետք է պատրաստ լինեին կյանքն անգամ նվիրաբերելու երևակայական հավատամքի գոհասեղանին: Տրամաբանակա՞ն է արդյոք մտածել, որ, նույնիսկ մահվանից առաջ, նրանք իրենց դավադրությունը կարող են հասցնել այս աստիճանի՝ չհրաժարվելով այդ մտքից: Չգիտեի՞ն արդյոք որ կանգնելու էին ոչ թե մարդկային դատարանների, այլ տիեզերքի գերագույն Դատավորի առջև:

Հավատքի ամենավայրագ հակառակորդների մեջ միշտ էլ եղել են այնպիսիք, ովքեր կամավոր ընդունել են, որ առաջին քրիստոնյաներն, իրոք, հավատացել են Քրիստոսի հարությանը: Նրանք կարծիքով, Պողոսը հարության պատմությունը լսել է Պետրոսի ու մյուս առաջնորդների բերանից, և նրա սեփական փորձը՝ Դամասկոսի ճանապարհին, նրան համոզել է այն Հիսուսի հարության իրական լինելու մեջ, որին այնպիսի հափշտակվածությամբ հետևում էր:

Ամեն դեպքում թե՛ առաքյալները, թե՛ հասարակ հավատացյալները կատարելապես անկեղծ էին հայտարարելով հարության լուրը: Նրանք հավատացին հաստատապես, որովհետև, իրոք, տեսել էին Հիսուսին: Եթե դեռևս չնչին կասկած ունեք, խորհուրդ են տալիս ընթերցել կամ վերընթերցել Նոր Կտակարանը: Դուք կտեսնեք, որ այդ մարդիկ շատ ավելի անկեղծ ու վստահելի էին իրենց վկայության մեջ, քան մեծաթիվ ժամանակակիցներ, ովքեր պատմում են միայն իրենց հարուստ երևակայության արդյունք հանդիսացող ճամարտակություններ:

Այսուամենայնիվ, պետք է պատրաստ լինել նաև մեկ ուրիշ առարկության. այս անկեղծությունն ինքնին բավարար ու գոհացուցիչ հիմք չէ՝ կիսելու նրանց համոզմունքը: Գուցե զգայապատրանքների (հայլուցինացիաների) զո՞հ են դարձել՝ կարծելով, թե տեսել են Հիսուսին, մինչդեռ, թերևս, դա եղել է տեսիլք, անմարմին հոգի: Անգամ մեր օրերում լսում ես անկեղծ, սակայն ամեն անաչառությունից զուրկ պնդումներ: Առաքյալներն, արդյոք, զոհ չե՞ն դարձել իրենց երևակայությանը: Այս միտքը կարող է թվալ բանական, բայց միայն՝ առաջին հայացքից: Ի գիտություն ընդունենք այն, որ գոյություն ունեն մի շարք անհավանական պատմություններ տեսիլքների վերաբերյալ, սակայն կա հարության միայն մեկ պատմություն: Կա առասպել կյանքի՝ տարվա եղանակների պես միմյանց հաջորդող շրջափուլերի մասին, և հունական դիցաբանությունը մեզ է հասցրել մի հրաշալի առասպել Դեմետրայի ու նրա դուստր Պերսեփոնեի մասին, որն ամեն գարնան գալիս է արգասաբեր դարձնելու և կրկին կանաչեցնելու բնությունը: Սակայն այստեղ խոսքը ոչ թե պատմության, օբյեկտիվ իրականության մասին է, այլ առասպելի:

Ինձ հայտնի է, որ ժամանակակից որոշ աստվածաբաններ առասպելի հետ նույնացնում են այն ամենը, ինչն Աստվածաշնչում ելնում է գերբնականից, որը նրանք մեկնաբանում են՝ հիմք ընդունելով մտածողության ժամանակակից կարգերը: Ես կսահմանափակվեմ միայն ընդգծելով մեր հավատքի համար էականը: Կյանքի կոչվելու մասին հեթանոսական առասպելի և Քրիստոսի մարմնական հարության միջև բացարձակապես չկա ընդհանուր որևէ բան: Բացի այդ՝ դուք նկատե՞լ եք արդյոք որ տեսիլքների պատմություններում ոչ մի բառ չի ասվում նրանց մարմինների մասին: Այն պարզ պատճառով, որ զուրկ են դրանցից՝ լինելով միայն անմարմին հոգիներ:

Արդ, հակառակ ասվածի, դատարկ գերեզմանի հարցը էական է՝ հասկանալու հարության պատմությունը (Գործք 2:29-31): Ավետարանները խուսափում են տեսիլքի հայտնվելու և Քրիստոսի մարմնական հարության միջև ամեն տեսակ շփոթությունից (Ղուկ. 24:36-43): Հիսուսը ցույց է տվել իր խոցված ձեռքերը, ինչպես նաև սպիները: Նա կերել է իր բարեկամների ներկայությամբ: Եթե որևէ մեկը երբևէ հոգի է տեսել, հնարավոր բա՞ն է, որ հոգին ուտի կամ ցույց տա իր մարմինը:

Կարող է առաջանալ մեկ ուրիշ առարկություն ևս, որի մասին կուզենայի համառոտ խոսել: Չի՞ կարելի զգայապատրանքների զոհ լինել՝ դրանք ընդունելով իբրև իրական: Ի՞նչ մտածել նրա մասին, ով *delirium tremens*-ի զոհ է: Մարդը կատարելապես անկեղծ է, երբ ասում է, որ շրջապատված է զզվելի սողուններով, հսկա սարդերով և կամ այլ տհաճ կենդանիներով: Սակայն, այս ամենը գոյություն չունի՝ տանջելու խեղճ թշվառականին: Ուստի կասեն, որ մարդիկ միշտ էլ եղել են տեսիլքների ու զգայապատրանքների զոհ, և որոնցից մի քանիսին հանդիպում ենք Աստվածաշնչում. այսուամենայնիվ, դրանք մնում են որպես նյութական իրականությունից զուրկ տեսիլքներ: Կարելի է ընդունել մարդկանց անկեղծությունը՝ առանց բավականաչափ հավատ ընծայելու նրանց ասածի անաչառությամբ: Եվ Քրիստոսի հարությունը կդասվի նույն կարգին:

Դա ինձ թվում է աներևակայելի՝ նախ և առաջ այն պատճառով, որ զգայապատրանքների տեղի ունենալու պայմանները ո՛չ մնան, ո՛չ էլ համեմատելի են Քրիստոսի հարության պայմաններին: Դրանց պատճառ կարող է լինել մտավոր, երբեմն էլ ֆիզիկական թերությունը, կամ էլ բարձր ջերմությունը, ծայրահեղ գրգռվածությունը, որևէ իրադարձության տենդագին սպասումը և այլն: Այս ամենը նպաստում է զգայապատրանքների առաջացմանը: Երբ մեկը նմիշտ վերանում են այս պայմանները, դրանց հետքն անգամ չի մնում:

Զգայապատրանքներին բնորոշ գծերը լիովին բացակայում են հարության մասին պատմության մեջ: Ենթարկվող վկաների թիվը և, հատկապես, բնույթը բացառում են մտավոր խանգարման իրողությունը: Առաքյալները պատկանում էին պարզ, աշխատավոր, ողջամիտ մարդկանց դասի և անհավանական է, թե ենթարկվել են անսովոր տեսիլքների: Մանավանդ որ՝ նրանք սպասում էին հենց Հիսուսի հարությանը: Կանայք, ովքեր վաղ առավոտյան գնացին գերեզման, իրենց հետ տանելով անուշահոտ քսուքներ՝ թաղված Վարդապետի մարմինն օծելու համար, ակնկալում էին գտնել դիակ և ոչ թե ականատես լինել կենդանի Փրկչի հայտնությանը: Երբ վերջինս հայտնվեց աշակերտներին, ապա դա եղավ ոչ թե մթին ու փակ վայրում, այլ օրը ցերեկով, երբ քայլում էին ճանապարհով, կամ էլ լճափին ձուկ էին որսում: Դա կրկնվեց քառասուն օր: Վերջին հայտնության ժամանակ

Հիսուսը բոլորին կանչեց մի բլրի վրա և, նրանցից հեռանալով, անհետացավ, որից հետո նրա բոլոր հայտնությունները դադարեցին:

Եվ վերջապես, հիշեցնենք դատարկ գերեզմանը: Այս իմաստով ս.Պողոսի հայտարարությունն այն մասին, որ Քրիստոսը հայտնվել է ավելի քան հինգ հարյուր եղբայրների, անգնահատելի արժեք ունի: Հայտարարությունն արված է Եկեղեցիներից մեկին ուղղված թղթում, որտեղ առաքյալն ուներ դաժան հակառակորդներ: Սրանք երջանիկ էին՝ նրան համարելով հոգեկան հիվանդ, անպատասխանատու խրատաբան և կեղծիքներ հորինող: Հինգ հարյուր մարդիկ, որոնց մասին նա խոսում էր, սփռված էին Գալիլիայի համարյա ողջ տարածքով: Առաքյալները ստիպված էին եղել նշված ժամին նրանց կանչել հիշյալ վայր՝ հարություն առածի հետ մի վերջին գրույց ունենալու համար: Եթե ուզում են մնալ ազնիվ, ապա չի կարելի խոսել զգայապատրանքի մասին հրապարակային ու այդքան երկարատև մի իրադարձության կապակցությամբ:

Անհնարին է, որ բոլոր այս վկաները հանկարծակիորեն և տարօրինակ ձևով մտավոր խանգարում ստացած լինեին: Բնական համարվող և ոչ մի էակ չէր կարող ստեղծել նման առասպել, մանավանդ որ, եթե աշակերտները կանչված լինեին երդում տալու ու եթե պարզվեր, որ նրանց կողմից բերված փաստերը կեղծ էին, ապա կկանգնեին դատարանի առջև:

Ինձ մնում է միայն կրկնել, որ այս մարդիկ ոչ պայծառատես էին և ոչ էլ, առավել ևս, խաբեբաներ: Ընդհակառակը, մեր աչքին նրանք երկրի վրա եղած մարդկանցից ամենաիրատեսներն էին՝ հայտարարելով ամենաարտասովոր, ամենակենդանի, ամենաերջանկաբեր նորությունը՝ Քրիստոսի մարմնական հարության լուրը:

Նրանց հետ, նաև միանալով համաշխարհային Եկեղեցու հավատքին, ես նույնպես կարող եմ հայտարարել. «Քրիստոսն իսկապես հարություն է առել»:

Գ Լ ՈՒ Խ 13

ՍՈՒՐԲ ՊՈՂՈՍ. ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առաքելական դարաշրջանի բոլոր անձնավորությունների մեջ ս. Պողոսի փայլն, իրավամբ, բացառիկ է: Նրա գործունեությունն ու մտածողությունը տարբեր կերպ են մեկնաբանվել քրիստոնեական հավատքի ժամանակակից հակառակորդների կողմից: Սրանք, այսուամենայնիվ, չեն կարողացել լուծել այն խնդիրը, որ իրենք էին ամբողջապես կռում: Ոմանք նրան մեղադրել են Հիսուսի ավետարանական քրիստոնեությունը խեղաթյուրելու մեջ: Մյուսները համարել են քրիստոնեության հիմնադիրը՝ հակառակ այն փաստի, որ նա իրեն համարում է Քրիստոսի աշակերտը, անգամ ստրուկը: Ոչ ոք չի հանդգնել, եթե չասենք՝ անխոհեմ գտնվել պնդելու, որ նրա անունը կրող նամակներից և ոչ մեկը վավերական

չէ: Այսուհանդերձ, նրա քննադատներից ոչ մեկը, անգամ ամենաթունոտը, չի ժխտել, որ Պողոսը որոշակի տպավորություն է թողել ոչ միայն իր դարաշրջանում, այլև քրիստոնեության պատմության քսան դարերի ընթացքում: Իրոք, ուրիշ ո՞վ, եթե ոչ առաքյալը կարող էր իրեն նեղություն պատճառել ու գրել և անհավանական վարկածի դեպքում շարադրել նամակներ ու անձամբ ստորագրել: Ներկայումս միաձայն ընդունվում է ինչպես քրիստոնյաների, այնպես էլ ոչ քրիստոնյաների կողմից, որ նա ավելի խորն է հերկել՝ Եկեղեցու սերմերը ցանելու համար, քան որևէ մեկն իր դարաշրջանում ու հետագայում:

Նրա կյանքի ու առաքելական գործունեության վերաբերյալ մեր գիտելիքների աղբյուրը «Գործք Առաքելոց»-ն ու նրա թղթերն են: Անշուշտ, նախնական որոշ ավանդություններ ինչ-որ չափով տեղեկություններ են հաղորդում նրա մասին: Այստեղ կարելի է գտնել «վավերական» որոշ գծեր, ինչպես, օրինակ, «Պողոսն ու Թեկլան» պարականոն գրվածքում վիպականացված փաստաթուղթ, որը թվագրված է երկրորդ դարով: Ըստ Կղեմես Զոռմեացու՝ Պողոսը հավանաբար այցելել է Արևմուտքի ծայրամասերը, մի բան, որը կարող էր լինել միայն Իսպանիան: Կարելի է հավատ ընծայել այն ավանդությանը, համաձայն որի՝ նա նահատակվել է Զոռմում: Ներկայումս ուղղափառ հավատքի չափավոր հակառակորդներն ընդունում են, որ երկրորդ դարից եկող համոզմունքները խորապես հաստատում են այն ամենը, ինչ Ղուկասն ու Պողոսը հայտնում են հեթանոսների մեծ առաքյալի մասին: Նրա 13 նամակներին նվիրված մեր ներածության մեջ արտահայտել ենք այն համոզմունքը, համաձայն որի՝ տասներեք նամակներն, առանց բացառության, պատկանում են նրա գրչին: Այստեղ չենք վիճարկի Եբրայեցիներին ուղղված թղթի վավերականությունը, որը, ինչպես հայտնի է, մի շարք հարցեր է բարձրացնում անգամ պահպանողական աստվածաբանների շրջանում, բացառությամբ հռոմեական Եկեղեցու, որի կարծիքով, դա ևս պատկանում է Պողոսի գրչին:

Բ. ՊՈՂՈՍԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Ո՞վ է Պողոսն իր ժամանակակիցների համար: «Դու հունարեն գիտե՞ս», - հարցնում է տրիբունը, որը 58 թվականին նրան ձերբակալում է Երուսաղեմում: «Ուրեմն, դու այն եգիպտացին չե՞ս, որը վերջերս հուզում է առաջացրել 4000 ավազակների մեջ ու նրանց տարել անապատ»: «Ես, - ասում է Պողոսը, - հրեա մարդ եմ՝ Կիլիկիայի Տարսոնից, մի քաղաքի բնակիչ, որի անունը հայտնի է: Խնդրում եմ, թույլ տուր խոսել ժողովրդի հետ»:

«Ութերորդ օրը՝ թլփատված, Իսրայելի ազգից, Բենիամինի ցեղից, Եբրայեցի՝ Եբրայեցիներից, օրենքի տեսանկյունից՝ փարիսեցի» (Փիլ. 3:5): Պողոսը ծնվել է հրեական ընտանիքում, հպարտ է իր ծագումնաբանությամբ, Թորայի ջերմեռանդ պաշտպան է: Նրա ծննդյան թիվը չի կարող ճշգրտվել, բայց ենթադրում են, որ մոտավորապես մ. թ. 10 թվականն է: Ենթադրվում է, որ նրա հայրը վրամագործ էր, ինչպես ավելի ուշ՝ ապագա առաքյալը: Անկասկած, ընտանիքի պայմանները բարեկեցիկ են, որովհետև որդուն ուղարկել են սովորելու Երուսաղեմում: Ընտանիքը ընդունել էր հռոմեական քաղաքացիություն:

Ավելի քան հավանական է, որ կրոնին առաջին անգամ առնչվել է հայրական օջախում: Նրա ծնողների հավատարմությունը հրեական ավանդույթներին նշանակալից է, դրա-

նով է պայմանավորված Պողոսի հպարտությունը: Վեց տարեկանում ժողովարանում և դպրոցում կարողացել է մասնակցել տոնակատարություններին:

Երուսաղեմում նրա ուսուցիչը եղել է մեծ ռաբբի Գամաղիելը: Հիմնվելով «Գործք»-ի 26:10 հատվածի վրա՝ ենթադրում են, որ նա, հավանաբար, եղել է ատյանի անդամ, սակայն դա քիչ հավանական է՝ հաշվի առնելով երիտասարդ տարիքը: Առավել ևս հավանական չէ, որ երիտասարդության տարիներին և Երուսաղեմում գտնվելու ժամանակ հանդիպած լինի Հիսուսին:

Նրա նամակներն ամենևին էլ չեն մեր Տիրոջ երկրային կյանքի վերաբերյալ առատ տեղեկություններով:

«Պողոսն ու Թեկլան» պարականոն գրքում առաքյալը պատկերվում է իբրև փոքրահասակ ու ճաղատ մարդ, կորացած ոտքերով, խիտ թարթիչներով, քիչ կճատ քթով: Իր իսկ ասելով՝ հակառակորդները նրան ներկայացնում են տկար արտաքինով: Նրա խոսքն, ասում են, անարգ է (Բ. Կորնթ. 10:10): Նրա ֆիզիկական թուլությունը լավ է բնութագրված «Փուշ՝ մարմնի մեջ» արտահայտությամբ (Բ. Կորնթ. 12:7): Փուշը, Գաղատացիներին ուղղված նամակի 4:13-15 և 6:11 հղումներով, տարբեր կերպ է մեկնաբանվել. Պողոսը տառապում էր կամ աչքերի հիվանդությամբ, կամ խրոնիկական մալարիայով, կամ էլ այլ հիվանդություններով ու գլխացավով: Թեպետև անորոշ հիվանդությամբ՝ Պողոսը քաջություն ունեցավ հաղթահարել ծայրահեղ լուրջ ֆիզիկական խոչընդոտները (Բ. Կորնթ. 11:24-28): Ինչպես կտեսնենք, նա օժտված, ուժեղ անձնավորություն է. լինելով քրիստոնյաների դաժան հալածող՝ հետո դառնում է Քրիստոսի ամենաեռանդուն ու ներշնչված առաքյալներից մեկը ու նաև հակառակորդների ու կեղծ եղբայրների անզիջում թշնամին (Գաղ. 5:12, Բ. Կորնթ. 11:13):

Նամակներում միշտ ներկայանում էր Պողոս անվամբ, անգամ եթե վկայակոչում էր հրեական ակունքները:

«Գործք Առաքելոց»-ում Ղուկասը պահպանել է եբրայական Սողոս անունը:

Պողոսի մասին նա խոսում է միայն առաքյալի՝ Կիպրոսի պրոկոնսուլ Սերգիոս Պողոսի հետ ունեցած հանդիպումից հետո: Դրանից չի կարելի եզրակացնել, իբր այս հանդիպումից հետո է Սողոսը եբրայական իր անունը փոխարինել հռոմեական Պողոս անվամբ: Այս երկու անունների գործածությունը, որոնցից մեկը էթնիկական ծագում ուներ, իսկ մյուսը փոխառված էր, երբ խոսքը վերաբերում էր հատկապես հռոմեական անվանը, տարածված երևույթ էր անտիկ աշխարհում:

Նախկինում Տարսոնը եղել է բարգավաճ քաղաք՝ շնորհիվ աշխարհագրական դիրքի: Կառուցված լինելով ծովից ոչ հեռու՝ քաղաքը կարևոր մի նավահանգիստ ուներ Կյուդնոս գետի վրա: Քաղաքն ընդունում էր Անտիոքից Սիրիա եկած քարավանները և, բացի այդ՝ հարաբերությունների մեջ էր Անատոլիայի մյուս կենտրոնների հետ: Տարսոնը հայտնի էր քոչվորների վրանների համար անհրաժեշտ քուրձի՝ այծի մազերից հյուսված կոշտ գործվածքի արտադրությամբ: Անկասկած, հայրական տանն է Սողոսը սովորել ջուլիակի արհեստը: Տարսոնը աշխույժ քաղաք է՝ 300 000 բնակչով, որոնց (ինչպես և բոլոր նավահանգիստներում) խառնվում են տարբեր տարրեր: Այն նաև մշակութային կարևոր կենտրոն է՝ հայտնի համալսարանով:

Մեզ համար շատ ավելի կարևոր է Սողոս – Պողոսի պատկանելիությունը հրեական Սփյուռքին՝ Միջերկրականի շուրջ գտնվող երկրներում սփռված հրեաներին: Խոսելով Երու-

սաղեմի մասին՝ նա կասի. «Այստեղ, այս քաղաքում են մեծացել, Գամաղիելի ոտքերի մոտ կրթվել՝ ճշգրտորեն հետևելու մեր հայրերի օրենքին: Աստծու հանդեպ նախանձավոր էի, ինչպես այսօր ամենքդ եք» (Գործք 22:3):

Իր նամակներում Պողոսը բազմիցս օգտագործում է «նախանձավոր» բառը, որը ստանում է իր ողջ իմաստը, եթե այն մոտեցնում ենք Հին Կտակարանի որոշ հատվածների և նախանձահույզների ուսմունքին: Կարելի՞ է ճշգրտել այն դրդապատճառները, որոնք Սողոսին մղել են հալածելու Հիսուս Նազովրեցու հետևորդներին: Արդյո՞ք դա այն գաղափարն է, որ խաչվածը չի կարող Մեսիա լինել, որովհետև իր մահապատժով դարձել է Աստծու անիծածը՝ համաձայն Երկրորդ օրինաց 21:23 հատվածի, որ Պողոսը ճարպկորեն շրջում է Գաղատացիներին ուղղված թղթի 3:13 հատվածում: Նմանօրինակ մեկնաբանությունը թույլ չի տալիս հասկանալ, որ հալածելու նպատակը միայն հելլենիստներն են, այլ ոչ թե տասներկու առաքյալները, որոնք շարունակում են հաճախել Տաճար: Մեսիա հռչակել մահապատժի ենթարկված մեկին՝ անհեթեթություն է և ոչ թե աստվածանարգություն: Աստվածանարգություն կլինի միայն այն դեպքում, եթե խաչվածը դատապարտվել է իր ժողովրդի հոգևոր բարձր իշխանությունների կողմից և չի եղել սոսկ քաղաքական մեքենայության զոհ: Ավելի լուրջ մեկ ուրիշ պատճառ ևս, թվում է, կողմնորոշել է Պողոսի դիրքորոշումը: Աստվածաբանի իր հանճարով, նա պետք է որ արդեն ընկալած լինի Ստեփաննոսի՝ Տաճարի հանդեպ ունեցած դիրքորոշման ծայրահեղ հետևանքները: Սպառնալիքի տակ օրենքի ամբողջ համակարգն էր և, դրանով իսկ՝ Իսրայելի տեղը աշխարհում, եթե ճշմարիտ է, որ Օրենքը ժողովրդի համար ապահովում է նրա կյանքի շրջանակը:

Պողոսի վարքագիծը ենթադրում է, որ քրիստոնեությունը նրան հայտնվել է իբրև ուրացություն Օրենքի հանդեպ, իսկ քրիստոնեական հավատքը՝ որպես Օրենքի կարգադրագիրը խստորեն պահպանելու իր գաղափարատիպի ժխտում:

Զի կարելի ասել, որ նրա ֆիզիկական ընդունակությունները հավասար էին մտավորին: Սովորել է ռաբբիական մի դպրոցում, անկասկած, սովորել է նաև հունարեն: Վարել է անբասիր կյանք: Ստացած կրթությունը նրա մեջ զարգացրել է աստվածային պայծառափայլության ու նրա Օրենքի զգացում, այն իմաստով, որ Օրենքը տրվել է ամրապնդելու մեղքի զգացումը: Կյանքի համար նախատեսված պատվիրանը դարձել է մահվան պատճառ:

Ներքին պարտության այս զգացումը պետք է, որ ավելի շատ խթանած լինի Օրենքի հանդեպ արտաքին հույզը: Քրիստոնեությունը համարել է իբրև կոպիտ խաբեություն և իր պարտքն է համարել հալածել նրան:

Քրիստոնեության բացահայտ թշնամին էր՝ նախքան Ստեփաննոսի մարտիրոսությունը:

Գ. ՀԱՎԱՏԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Սողոս հետապնդողի հավատափոխությունը վճռական պահ է ծնվող Եկեղեցու կյանքում, քանզի նա է Եկեղեցու սահմանները տարածելու հեռու՝ մինչ այն ժամանակ հայտնի աշխարհի ծայրամասերը:

«Գործք»-ը Ստեփաննոսի հալածումը սերտորեն կապում է ապագա հավատափոխու-

թյանը. համարյա կարելի է հայտարարել, որ անսացել են առաջին մարտիրոսի դահիճների խնդրանքին:

Ստեփաննոսի մահվան ու դամասկոսյան հալածանքների միջև ընկած ժամանակահատվածի վերաբերյալ, Գաղատացիներին ուղղված թղթի 1-ին և 2-րդ գլուխներում, առաքյալը տվել է ժամանակագրական ցուցում: Պողոսը ամրագրում է մոտավորապես երեք տարվա ժամկետ Դամասկոսում իր հավատափոխության ու Երուսաղեմում կատարած առաջին ճանապարհորդության միջև:

Հետո նա նշում է տասնչորս տարվա մեկ ուրիշ ժամանակահատված՝ Երուսաղեմի տիեզերաժողովից առաջ: Ցուցումներն անհավատալիորեն պակաս ճշգրիտ են դառնում, քանզի համաձայն մեր նախնիների հաշվելու եղանակի՝ տարին, անգամ եթե նոր է սկսվել, լրիվ տարվա արժեք ունի: Հետևաբար, առաջին ժամանակահատվածը կարող է կրճատվել – հասցվել երկու տարի մի քանի ամսվա, իսկ երկրորդը՝ մոտավորապես տասներեք տարվա:

Հարկավոր է գումարել այս երկու թվերը՝ ստանալու Պողոսի հավատափոխության և Երուսաղեմի տիեզերաժողովի միջև ընկած ժամանակամիջոցը: Եվ այսպես, իբրև կողմնորոշման կետ ընդունելով Պողոսի քարոզչական երկրորդ ուղևորությունը և Կորնթոսում Գաղիոնի առջև ներկայանալը, առանց չափազանց մեծ վտանգի, կարելի է այն տեղավորել 48 թ. մոտերքում: Չնայած որոշ առարկությունների՝ այս կողմնորոշիչը մնում է իբրև հավաստի Պողոսի՝ Գաղիոնի առջև ներկայանալու փաստով. վերջինիս պրոկոնսուլությունը Կորնթոսում դեկտյան մի արձանագրությամբ թվագրված է 51-52 (կամ 50-51) թվականներով: Պողոսի՝ Կորնթոսում մնալու ժամանակաշրջանը համարվում է 49-50 թթ. ձմեռը և 51 թ. ամառը: Առաջարկված մյուս կողմնորոշիչներն այնքան էլ հավաստի չեն. Արետաս 4-րդի իշխանությունը 9-39 թթ., Չերովդես Արքեպոստոսի մահը 44 թ., հրեաների արտաքսումը Հռոմից 49-50 թթ., Հրեաստանի պրոկոնսուլի փոխվելը 59-60 թթ.: 50 թ. առաջ, իրադարձությունների թվագրումը, անգամ հաջորդականությունը, միշտ չէ, որ հավաստի են, սակայն հարկ չկա կասկածի տակ առնել «Գործք»-ի ներկայացրած իրադարձությունների իրողությունը: Հանելով ամենաշատը տասնյոթ տարի՝ հավատափոխության համար կունենանք 31 թ.: Սակայն, նմանատիպ վարկածը ամենամահավանական վարկածներից է, քանի որ մինչև Դամասկոս թափանցելու և Երուսաղեմը խռովեցնելու համար քրիստոնեությանը պետք է եղել ժամանակ: Հաշվի առնելով Պողոսի կողմից բերված տվյալների հոսունությունը՝ հավատափոխության համար իբրև ամենից ավելի ճշմարտանման է թվում 33-34 թթ. մերձակայքում մի տարեթիվ:

«Գործք»-ը տալիս է Պողոսի հավատափոխության երեք պատմություն. մեկը՝ 9:1-19 հատվածում, իսկ մյուս երկուսը՝ իբրև պաշտպանական քարոզ, որտեղ Պողոսն իրեն պաշտպանում է Երուսաղեմի հրեաների և կուսակալ Փեստոսի ու Ազրիպպաս արքայի առջև: Հեղինակը Ղուկասը, ընդգծում է Անանիայի դերը. վերջինիս հանձնարարված էր առաքյալին մտցնել քրիստոնեական համայնք: Հրեա ղեկավարների առջև իրեն պաշտպանելու ժամանակ արտասանած քարոզում, Պողոսը համառորեն հիշեցնում է նախանձահույզ հրեայի իր անցյալը: Դամասկոսյան տեսիլքը նա տարբերում է Տաճարի տեսիլքից, Տաճար, որտեղ նա հրաման է ստանում քարոզել հեթանոս ազգերին (Գործք 22:21): Փեստոսի ու Ազրիպպասի առջև Պողոսը չի խոսում Անանիայի մասին: Իր հավատափոխությունից անմիջապես հետո երեկվա հալածողը վերափոխվում և իրեն դրսևորում է իբրև մարտնչող

քարոզիչ (Գործք 9:22): Մեզ անհայտ պատճառով Պողոսն այդ ժամանակ որոշում է գնալ Արաբիա: Պետք չէ մտածել Սինա կատարած ուխտագնացության մասին. «Արաբիա» բառը ցույց էր տալիս Հորդանանից հյուսիս ընկած բոլոր տարածքները, որոնց մի մասը ենթարկվում էր Հռոմին, իսկ մյուսները կախված էին արաբացիների թագավոր Արետաս 4-րդից: Հիշատակում են, որ հրեական համայնքները մեծ թիվ էին կազմում Անդրհորդանանում, և որ մոտ երկու տարի Պողոսը փորձել է դրանց բերել նոր հավատքի:

Կարծիք կա, որ իր քարոզի առաջ բերած հուզումների պատճառով նա դարձել էր անցանկալի: Երբ վերադարձավ Դամասկոս, Արետաս արքայի կառավարիչը ցանկացավ նրան ձերբակալել: Փաստը զարմանալի է, քանի որ Դամասկոս քաղաքն այդ ժամանակ կախված էր Հռոմից: Ահա թե ինչու կառավարչին պետք է պատկերացնել իբրև արաբական գաղութի պատասխանատու, գաղութ, որը խմբված էր Դամասկոսի հատուկ մի թաղամասում: Հսկողությունից խուսափելու համար Պողոսը, զամբյուղի մեջ նստած, իջել է ամրոցի պատով:

Երեք օր Դամասկոսում անցկացնելուց հետո հեթանոսների ապագա առաքյալը մկրտվեց Անանիայի կողմից: Այդժամ, իբրև Քրիստոսի Եկեղեցու անդամ, ժողովարաններում սկսում է հայտարարել, որ Քրիստոսը Աստծու Որդին է: Դամասկոս ճանապարհվելուց հետո կրած մտավոր կամ հոգեբանական մեծ հարվածը նրան երբեք չի հարկադրի հանգստանալ: Արաբիայից վերադառնալուց հետո նոր ուժերով՝ նա վերադառնում է Դամասկոս: Հրեական համայնքը խռովություն է բարձրացնում նրա դեմ, ու նա վճռում է վերադառնալ Երուսաղեմ: Նա այնտեղ մնում է մոտ տասնհինգ օր, ուր և ծանոթանում է Պետրոսի հետ: Սակայն համաձայն միսիոներական իր ռազմավարության՝ առանց Բառնաբասին (ոչ մեկ այլ առաքյալի) դիմելու, նա չի փորձել կառուցել այնտեղ, որտեղ ուրիշները նախորդել են իրեն:

Պողոսն իր հուշերը չի գրել ժամանակակիցների ձևով: Նա ոչ թե ժամանակագիր է, այլ առաքյալ: Նրա մտահոգությունը Ավետարանը հայտարարելն է, և եթե վերադառնում է դեպի անցյալ, ապա պատճառը հանգամանքներն են:

Դ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

1. Առաջին շրջանը. Դամասկոս և Երուսաղեմ

Հավատափոխությունից հետո սկսվում է ոչ այնքան հայտնի մի շրջան: Այս ժամանակ է Պողոսը որոշում գնալ Երուսաղեմ (Գաղատացիներին 1:18)՝ ծանոթանալու Կեփասի՝ Պետրոսի հետ: Այստեղ օգտագործված բայը (historein) գործածվում է որևէ հուշարձան քննելու և այն այցելելու հետ կապված: Հավատափոխության նպատակով Երուսաղեմ մեկնած Պետրոսն ու Պողոսը սովորական խոսքեր չէ, որ պետք է փոխանակեին: Կարելի է պատկերացնել նրանց փորձառության բախումն ու Պողոսի՝ Նազովրեցի Հիսուսի խոսքերն ավելի լավ ճանաչելու ցանկությունը:

Երուսաղեմի քրիստոնեական համայնքը, թվում է, այնքան էլ ջերմ չի ընդունել նախկինում հալածող մարդուն: Բարեբախտաբար, Բառնաբասին հաջողվեց ընդունել տալ նրա հավատափոխության իսկության փաստը և նրան ներկայացնել եղբայրներին, որոնց մեջ Պետրոսը հիշատակված չէ: Բայց և Պողոսին ստիպեցին վերադառնալ իր հայրենիք: Այստեղ է, որ Բառնաբասը անհրաժեշտության դեպքում կկարողանա փնտրել նրան:

2. Քարոզչական առաջին ճանապարհորդությունը (Գործք 13:15-35)

Բառնաբասին օգնելու համար նրա կողմից Անտիոք կանչված Պողոսը կարևոր այդ եկեղեցուն զբաղեցրեց չափազանց բարձր դիրք: Հաջորդ տարի (46 թ.) Բառնաբասի հետ նրան ուղարկեցին Պաղեստինի կարիքավոր քրիստոնյաների մոտ (Գործք 11:30): Դրանից հետո, ողջ կայսրության ճշգրիտ ավետարանացման նպատակով, Սուրբ Հոգին բաժանում է երկու բարեկամներին:

Հովհաննես Մարկոսի ընկերակցությամբ նա ուղղվում է դեպի Կիպրոս, որտեղ հաջողության են հասնում հռոմեացի պրոկոնսուլի՝ Սերգիոս Պողոսի հավատափոխության փաստով: Կիպրոսում Պողոսը հանդիպում է Բարեյեսու անվամբ և Եղիմաս մականունով հրեական ծագում ունեցող մի մոգի: Նրանք սկսում են նավարկել դեպի Պերգե՝ ցամաք, ու թեև Հովհաննես Մարկոսը լքում է նրանց, Պողոսն անվեհեր ծնով Ավետարանը քարոզում է Գաղատիայի հարավում: Պողոսը համառորեն քարոզում էր հրեաներին: Ի պատասխան՝ նրան մի քաղաքից մյուսն էին վռնդում:

Քարոզիչները գտան, որ ամենուրեք նորադարձները նրանց լսում էին ուրախությամբ, և որ անգամ հեթանոսներն էին ցանկություն արտահայտում լսելու Ավետարանը: Միսիոներների վտանգավոր փորձությունները զուր չէին: Եկեղեցիներ հիմնվեցին Պիսիդիայում, Անտիոքում, Իկոնիոնում, Լյուստրայում, Դերբեում և, անկասկած, այլուր: Պարզ էր դառնում, որ Աստված հեթանոսների մեջ դռներ էր բացել հավատքի համար, և որ Պողոսը հատուկ կոչում ուներ հավատափոխ անելու իր ազգին օտար մարդկանց:

3. Երուսաղեմի տիեզերածողովը (Գործք 15:1-29)

Պողոսի ազդեցությունն զգացվում էր մեծ չափով, նրա առաքելությունը նոր ճանաչում է ստանում: Մի հայտնությամբ (Գաղատ. 2:2), Անտիոքից նա ուղղվում է Երուսաղեմ, որտեղ առաքյալներին է ներկայացնում հեթանոսներին քարոզած Ավետարանը: Դա եղավ սուր ճգնաժամի շրջան: Առաջին առաքյալների կողմից հավատքի եկած որոշ հրեաներ գտնում էին, որ Ավետարանի խոստումները վերաբերում էին բացառապես նրանց, ովքեր շարունակ հետևում էին մովսիսական Օրենքին: Մինչդեռ Պողոսը պաշտպանում է բոլոր հեթանոսների արդարացումը: Նրանք հավատում էին Հիսուսին՝ առանց տեղավորվելու Օրենքի բնակարգի ներքո: Նա իրեն հաշիվ տվեց, որ եթե հեթանոսները պարտավոր էին թլփատվել, ապա նախապես պետք է ընդունեին հրեական կրոնը և հետո միայն ողորմածության Ավետարանը: Բայց այս դեպքում Ավետարանը դառնում էր ամբողջովին երկրորդական: Սյուները՝ գլխավոր առաքյալները, պաշտպանեցին Պողոսին՝ նրան տալով հաղորդության աջ ձեռքը: Պողոսը վերադարձավ Անտիոք՝ չթլփատվածների մեջ ազատորեն գործելու իբրև առաքելության ղեկավար: Եվ այսպես, Քրիստոսի նկատմամբ հավատքը աղանդ դարձնելու վտանգը վերացված էր:

4. Քարոզչական երկրորդ ճանապարհորդությունը (Գործք 15:36-18:22)

Պուկասը «Գործք Առաքելոց»-ի հեղինակը, հաշիվ է տալիս ամենամեծ հաջողությամբ նշանավորված այս շրջանի մասին: Այդ ժամանակ է Պողոսը գրել Թեսաղոնիկեցիներին

ուղղված երկու նամակները, որ առաջիններն էին, ու ծավալել առաքելական գործունեությունը Եվրոպական մայրցամաքում:

Այդ շրջանի սկզբում է, սակայն, տեղի ունեցել ցավալի մի իրադարձություն՝ խզումը Պողոսի ու Բառնաբասի միջև, որի պատճառը կես ճանապարհին իրենց լքած երիտասարդ Յովհաննես Մարկոսին իրենց կողմը քաշելու Պողոսի հրաժարականն էր: Հետո տեղեկանում ենք, որ հաշտություն է կայացել: Հռոմի քաղաքացի, հրեա քրիստոնյա Շիղայի ընկերակցությամբ՝ Պողոսը կրկին այցելում է միսիոներական առաջին ուղևորության ժամանակ հիմնված Եկեղեցիները:

Լյուստրայում Պողոսն իբրև օգնական է վերցնում Տիմոթեոս անվամբ մի երիտասարդի, որին թլփատել տվեց, քանի որ հրեա հորից էր: Սուրբ Հոգին նրան արգելեց քարոզել Ասիայում, և Պողոսը տեսիլք տեսավ՝ վերադառնալ Եվրոպա: Տրոյայում նրան միացավ Ղուկասը, որն այսուհետ պատմությունները կպատմի իբրև ականատես, քանի որ այս հատվածից սկսած է «Գործք Առաքելոց»-ի հեղինակն օգտագործում «մենք» անձնական դերանունը: Բոլորը կմեկնեն Մակեդոնիա և կքարոզեն Փիլիպպե մեծ քաղաքում: Բացի Անտիոքից՝ Պողոսը դեռևս չէր քարոզել և ոչ մի մայրաքաղաքում: Այսուհետ, նա կզնա միայն քաղաքային մեծ կենտրոններ: Սակայն այստեղ է առաջին անգամ հանդիպում մեծ դիմադրության քաղաքացիական իշխանությունների կողմից: Դիմադրությունը, որին առավել ուժգնությամբ կհանդիպի Եփեսոսում, ո՛չ տեղական իշխանության թշնամության արդյունք էր, ո՛չ էլ անգամ հոգևոր բնույթի էր. այն ծագել էր քաղաքի՝ Դիանա (Արտեմիս) աստվածուհու պատվին արձանիկներ արտադրող արհեստավորների ու ոսկերիչների կողմից: Սրանք այնպիսի մարդիկ էին, որոնց նյութական շահերը, Ավետարանի քարոզման փաստով, լուրջ վնասներ կրելու վտանգի տակ էին: Թեսաղոնիկեում ու Բերիայում, ուր Պողոսը հետագայում գնալու էր, նա ձեռք կբերի հավատափոխներ՝ չնայած հրեաների դիմադրությանն ու հալածանքին:

Բերիայից նա կզնա Աթենք՝ Հունաստանի մշակութային ու մտավոր կենտրոն, որտեղ Մարս բլրի վրա՝ Արիսպագոսում, կարտասանի իր հայտնի քարոզը: Այս բարձր ատյանի անդամներից մեկը հավատափոխ եղավ, մինչդեռ Աթենքի մտավորականները, թվում է, բավարար չափով չէին հասկանում իրենց բարոյական ձախողումը՝ Ավետարանի հայտարարությունը լրջորեն ունկնդրելու համար: Հունաստանի առևտրական մայրաքաղաքը՝ Կորնթոս մեծ քաղաքը, այլ կերպ կընդունի նրան:

Քաղաքը հայտնի էր քայքայված բարբերով. ոմանց հարստությունն ու մյուսների դժբախտությունը կողք կողքի էին: Այստեղ եղած ժամանակ Պողոսն աղքատների մեջ ապրեց աղքատի պես: Նա որոշեց քարոզել միայն Հիսուս Քրիստոս և խաչված Հիսուս Քրիստոս: Պաշտպանության արժանանալով հռոմեական օրենքի կողմից՝ նա այստեղ ձեռք բերեց հավատափոխներ՝ ներառյալ նաև ազնվականներից: Այստեղից է ուղարկել Թեսաղոնիկեցիներին հասցեագրված երկու թղթերը: Քարոզչական երկրորդ ճանապարհորդությունն ավարտվում է Երուսաղեմ կատարած այցով:

Հավանաբար, քիչ ժամանակ անց տեղի ունեցած դեպքն է ցույց տվել Եկեղեցիների միջև խռովություն առաջացնող, հրեականացնող կուսակցության կենսունակությունը: Վերջինս այլևս չէր ժխտում հեթանոսների հավատափոխության օրինականությունը, սակայն

հրեականը համարում էր ավելի բարձր մակարդակի: Քրիստոնեական այս հրեականության կողմնակիցներին վիրավորելու վախից, Անտիոք գնալու համար լքելով Երուսաղեմը, Պետրոսը մեղսակից է դառնում. հեթանոս հավատափոխների հետ մեկտեղ, հրաժարվում է ուտել: Պողոսը խստորեն հանդիմանում է նրան (Գաղատացիներին 2:11)՝ սեփական համոզմունքներին հակառակ գնալու համար: Որոշ մեկնաբաններ գտնում են, որ այս դեպքը տեղի է ունեցել ավելի վաղ՝ Երուսաղեմի տիեզերաժողովից առաջ: Վիճարկվում է նաև այն հարցը, թե արդյոք երկրորդ ուղևորության ընթացքում Պողոսը եղել է փոյուզիացիների ու գաղատացիների երկրի՝ Գաղատիայի հյուսիսային մասում (Գործք 16:6): Գաղատիան զբաղեցնում էր տարբեր անուններով հայտնի մի տարածք, որը տարածվում էր Իկոնիոնից մինչև Պիսիդիայի Անտիոք և որը էթնիկական առումով փոյուզիական էր, իսկ վարչական տեսակետից՝ Գաղատյան:

5. Զարոգչական երրորդ ճանապարհորդությունը (Գործք 18:23-21:14)

Հրեական կրոն տարածողները ռևանշ վերցրին՝ այցելելով Պողոսի հիմնած Եկեղեցիները և կամ ուղարկելով հանձնարարական նամակներ. հավակնելով, որ առաջին առաքյալներն էին, նրանք զրպարտում էին Պողոսին ու դեմ դուրս գալիս նրա վարդապետությանը:

Այս ընթացքում վերջինս այցելում է Գաղատիա ու Փոյուզիա, երկար ժամանակ մնում Եփեսոսում՝ գնալով նաև Մակեդոնիա ու Հունաստան: Այս մի քանի տարիների ընթացքում առաքյալը հասնում է հզորության գագաթնակետին: Դեմ գնալով վիճաբանության մեջ մտնելու իր կամքին՝ նա գրում է չորս նամակ՝ Կորնթացիներին ուղղված 1-ին և 2-րդ, Գաղատացիներին ու Հռոմեացիներին ուղղված նամակները, որոնք, անկասկած, դասական ցանկացած գրականության ամենամեծ գլուխգործոցների շարքում են: Ժամանակաշրջանը շատ դժվարին էր, բայց նա մշտապես հաղթահարում էր ամենասուր ճգնաժամերը: «Գործք»-ի 19-րդ գլխից իմանում ենք Արտեմիսի (Դիանայի) տաճարը կառուցող վարպետների ապստամբության դրամատիկ պատմությունը: Թողնելով Եփեսոսը՝ նա Ավետարանը բերում է Տրոյա, կրկին այցելում է Մակեդոնիա, Լյուրիկե, Հունաստան, Կորնթոսը դարձնում իր գլխավոր նպատակը: Նա նախապես տխուր այցելություն էր արել իրեն այնքան հոգս պատճառած Եկեղեցի (Եփեսոսից) Բ. Կորնթ. 2:1, 13:1-2): Նոր վեճերի պատճառով նա ստիպված է կրկին գնալ այնտեղ: Դրանք առաքյալին մեծ տազնապ են պատճառում, թեև Կորնթացիներին ուղղված երկրորդ նամակից երևում է, որ այն մասնակիորեն փարատվում է՝ նախքան Մակեդոնիան թողնելը. նա շարունակում է ճանապարհորդությունը և 55 թ. վերջին հասնում Կորնթոս, որտեղ մնում է երեք ամիս (Գործք 20:3): Այս ընթացքում է գրվում Հռոմեացիներին ուղղված թուղթը: Ցանկանում է գնալ Սիրիա, սակայն չի կարողանում՝ հրեական մի խռովության պատճառով: Այդժամ շրջագայում է Փիլիպպեում, որտեղ անցկացնում է 56 թ. Ձատիկը և գնում Տրոյա: Դուկասը շուրջերկրյա այս ճանապարհորդությունները նկարագրում է «Գործք»-ի 20-րդ և 21-րդ գլուխներում: Երուսաղեմում Պողոսը բարեկամական ընդունելության է արժանանում Հակոբոսի ու երեցների կողմից, մի բան, որն ապացուցում էր, որ չկար բախում Եկեղեցու գլխավոր առաջնորդների միջև, թեև նրանց կողմնակիցները կարող էին ունենալ տարածայնություններ: Տաճարում ճանաչվելով Ասիայի ոմն հրեայի

կողմից՝ առաքյալը հարձակման է ենթարկվում թշամաբար տրամադրված ամբոխի կողմից և, ժողովրդի ու ատյանի առջև կարդացած երկու քարոզներով պաշտպանելով իրեն, ուղարկվում է Կեսարիա՝ հռոմեացի պրոկուրատոր Փելիքսի մոտ:

6. Բանտարկության շրջանը (Գործք 21:15-28:30)

Պողոսը Հռոմի քաղաքացի էր: Հռոմեացի պրոկուրատորները նույնպես, շահ ստանալու հիվանդագին հույսով, ավելի շուտ տրամադրված էին նրան հանձնելու հրեաների ձեռքը: Այս վտանգից խուսափելու համար Պողոսն, ի վերջո, վճռում է դիմել կայսրին, մի բան, որ հռոմեացի կուսակալը չէր կարող մերժել: Հռոմ կատարած ճանապարհորդությունը Ղուկասը նկարագրել է հրաշալի ճշգրտությամբ, արտահայտիչ ձևով, ու նաև երևում է, թե ամենատագնապալի իրավիճակներում Պողոսն ինչպես է կարողանում ազդեցություն գործել իր ուղեկից, անգամ հեթանոս ընկերների վրա:

Հռոմում հրեա առաջնորդները նրան լքեցին: Այստեղ նա մնում է մինչև 61 թ.՝ ոստիկանության հսկողության տակ ապրելով իր կողմից վարձված մի տան մեջ:

Այս ժամանակ են գրվել նրա՝ «Գերության նամակներ» կոչված թղթերը՝ ուղղված Կողոսացիներին, Փիլիպպեցիներին, Եփեսացիներին ու Փիլիմոնին: Նրա մեղմությունն ու նվիրվածությունը, հեղինակությունն ու հնազանդությունը, Ավետարանի նկատմամբ հավատքի ընթացումը ցույց են տալիս, որ գերված առաքյալը ուժի առունով ոչ թե կորցնում, այլ շահում էր:

7. Պողոսի վախճանը

Առաջին բանտարկությունից Պողոսն ազատագրվում է՝ ինչպես և հույս ուներ (Փիլիպ. 1:26 և 2:24): Նա երկար էր փայփայել Իսպանիա այցելելու հույսը (Հռոմ. 15:28): Թեև նրա նամակներում բացակայում է այս փաստը՝ Կղեմես Հռոմեացին 95 թ. ասում է, որ Պողոսը պետք է որ գնացած լինի մինչև աշխարհի ժայրամասերը, որը, ըստ հռոմեացի մի հեղինակի, նշանակում է Իսպանիա: Տիմոթեոսին ու Տիտոսին գրված նամակներից տեղեկանում ենք, որ նա վերադառնում է Արևելք: Վերջին թուղթը՝ Տիմոթեոսին ուղղված երկրորդ նամակը, գրվել է ձմռանը՝ իր դատավարության առաջին փուլից հետո: Ոչ վաղուց եղել էր Տրոյայում ու Կրետեում, ինչպես նաև Միլետոսում ու Կորնթոսում: Տիմոթեոսին ուղղված երկրորդ նամակն, անկասկած, գրվել է Մակեդոնիայից՝ Կորնթոս ուղևորվելու ճանապարհին, Տիտոսին ուղղվածը՝ Կորնթոսից, երբ մտադիր էր հաջորդ ձմեռն անցկացնել Նիկոպոլիսում՝ Իտալիային հանդիման: Հավանական է, որ ձերբակալվել է Տիտոսին հասցեագրված թուղթը գրելուց հետո:

Վաղ շրջանի Եկեղեցու ավանդության համաձայն՝ նա գլխատվել է Հռոմի մոտերքում՝ այժմ ս. Պողոսի տաճարն զբաղեցնող վայրին մոտ: Ասում են, որ նրա գերեզմանն ամփոփված է տաճարում՝ 4-րդ դարով թվագրվող արձանագրությամբ: Մահվան տարին, հավանաբար, 64 թ. է:

Պատմության ընթացքում ոչ մի քրիստոնյա քսանութ տարիների ընթացքում չի կատարել այնքան բան, որքան Պողոսը՝ Դամասկոսի ճանապարհին հավատքի եկած մարդը, հեթանոսների մեծ առաքյալը, քրիստոսի վկան ու հավատարիմ աշակերտը:

8. Պողոսի կյանքի իրադարձությունների համառոտ ակնարկ

10 թ. Ծնունդը: Դաստիարակությունը Տարսոսում

34-35 թթ. Հավատափոխությունը

Արաբիայում անցկացրած երեք տարիները

37 թ. Առաջին այցը Երուսաղեմ

49-50 թթ. Թեսաղոնիկեցիներին ուղղված առաջին թղթի շարադրումը

50-51 թթ. Հանդիպում Գաղիոնի հետ՝ Կորնթոսում

50-51 թթ. Երուսաղեմի տիեզերածոփով

52-54 թթ. Եփեսոս

53-55 թթ. Գաղատացիներին, Ա. Կորնթացիներին, Փիլիպպեցիներին ուղղված թղթերի շարադրումը

55-56 թթ. Կորնթոսում

55-58 թթ. Հռոմեացիներին ուղղված թուղթը

62 կամ 64 թթ. մահապատիժ՝ Հռոմում բանտարկվելուց հետո

Ե. ՊՈՂՈՍԸ՝ ԱՌԱՔՅԱԼ

1. Պողոսն արժեքավորում է իր առաքելությունը

Մենք արդեն նշել ենք, որ Պողոսն իրեն միշտ համարում է «Աստծու կամքով Հիսուս Քրիստոսի առաքյալ»: Նա պնդում է հաճախ, հազվադեպ ջերմեռանդությամբ, որ առաքելությունն իրեն վստահվել է ոչ թե ինչ-որ մարդու միջնորդությամբ, այլ ստացել է Հիսուս Քրիստոսի հայտնությամբ (Գաղ. 1:1, 12): Իբրև առաքելության ապացույց, նա առաջարկում է հենց իր հաստատած Եկեղեցիների գոյությունը (Ա. Կորնթ. 9:2), ինչպես նաև այն «նշաններն ու հրաշքները», որ իր միջոցով հավատքի եկածները հավաստել են (Բ. Կորնթ. 12:12): Որպես առաքյալ՝ նա իրավունք ունի օգտվել Եկեղեցիների նյութական նեցուկից, թեև ինքը վախենում էր նմանատիպ պահանջ ներկայացնել՝ մտածելով, թե իրեն կարող են կասկածել նյութապաշտական դրդապատճառներով (Ա. Թեսաղ. 2:6, Ա. Կորնթ. 9:4-18, Բ. Կորնթ. 11:7-11):

Առաքյալի իր հատկության մասին նա խոսում է տարբեր ձևերով, սակայն միշտ էլ շեշտը դնում է Ավետարանի քարոզի վրա: Նրան են ստորադասված խորհուրդները. «Քրիստոսն ինձ ուղարկել է ոչ թե մկրտելու, այլ Ավետարանը քարոզելու նպատակով» (Ա. Կորնթ. 1:17): Նա խոսում է «Ավետարանի մասին, որի մասին դուք լսել եք, և որի առաքյալն եմ դարձել ես՝ Պողոսը» (Կող. 13 և 25): Հռոմի քրիստոնյաներին տեղեկացնելու նպատակով աչքի անցկացնելով իր գործունեությունը՝ Պողոսն ամփոփում է. «Չէի համարձակվի իիշտակել որևէ բան, որ Քրիստոսը չի արել իմ միջոցով» (Հռոմ. 15:18-19):

Աթենքում Պողոսին համարում են օտար աստվածություններ տարածող, իսկ ոչ բարյացակամորեն տրամադրված հակառակորդները՝ քաղաքական մունետիկ: Նա արձագանքում է բոլոր մեղադրանքներին և աշխուժորեն պաշտպանվում դրանցից՝ գրելով առաջին թուղթը (տես՝ Ա. Թեսաղ. 2:5-8):

Հույն մտածողներն օգտագործել էին «մուսետիկ»՝ kérux կամ «ժամապահ»՝ katascopos բառերը: Պողոսը գերադասում է apostolos՝ «Առաքյալ» բառը: Նա ի ցույց է դրել առաքելական գործի առանձնահատկությունը՝ իրեն ներկայացնելով իբրև Քրիստոսի մարգարե, նոր ուխտի առաքյալ Հոգու մեջ (տե՛ս, մասնավորապես, Հռոմեացիներին ուղղված թղթի նախաբանը): Klétos apostolos-ը արտահայտում է եականը: Ինչպես մարգարեները և տասներկու առաքյալները Քալիլիայում, Պողոսը ևս կամավոր ընտրվել է և օգտվում է կանչից՝ մշտապես ավելի ու ավելի ծավալուն առաքելություն իրականացնելու նպատակով:

Գրելով իր կողմից հիմնված համայնքներին՝ Պողոսը չէր խոսում իրեն կանչելու հանգամանքների մասին՝ համեստորեն լռելով նաև այն շնորհների մասին, որի առարկան էր եղել: Մինչդեռ եղան այնպիսի հանգամանքներ, երբ քարոզելու և բանավիճելու անհրաժեշտությունը նրան հարկադրեցին խոսել իր առաքելության առանձնահատկության մասին: Ահա մի քանի հիմնական հատված՝ Ա. Կորնթ. 9:11 և 15:1-11, Գաղ. 1:11-17, Փիլիպ. 3:4-16, Ա. Տիմոթ. 1:12-14:

Նշենք, որ Պողոսը երբեք չի նկարագրում իրեն հայտնված տեսիլքը: Նա համոզված է, որ տեսել է Տիրոջը: Նախածեռնությունը գալիս է Հորից, ինչպես այդ բանն ընդօրժվում է Գաղատացիներին ուղղված նամակի 1:15 հատվածում: Քրիստոսն ինքն է երևացել: Եվ Քրիստոսի գործը ոչ միայն տեսիլք էր ու լուր, այլև փոխակերպություն:

Պողոսին ուղարկելու նպատակը հատկապես ազգերն էին: Այս կապակցությամբ կարելի է ասել, որ առաքյալը աստիճանաբար լիովին գիտակցել է այդ բանը: Այդ են ապացուցում սկզբնական շրջանում նրա անվստահ քայլերը: Այսուամենայնիվ, նրա կյանքում ամեն ինչ կապվում է սկզբնական շրջանի հանդիպման հետ:

Հալածողի անցյալից Պողոսը կեղծ ամոթ չի զգում: Նա կարող է վկայել, որ գործել է ազնվորեն: Նրա հավատափոխությունը աստվածային ողորմածության ամենազոր լինելու ցայտուն օրինակ է: Պողոսն իր լուրի մեջ չի մոռանա այդ բանը:

Ավետարանացման գործը նա լրացնում է հովվական աշխատանքով: Այսպես՝ առաքյալն իրեն համենատուն է երեխաների նկատմամբ հոգ տանող դայակի հետ (Ա. Թեսաղ. 2:7), հոր հետ, որը հորդորում, քաջալերում է երեխաներին՝ նրանց խնդրելով «վարել Աստծուն արժանի կյանք» (Ա. Թեսաղ. 2:12), մոր հետ, որին ծանոթ են երկունքի ցավերը՝ «մինչև Քրիստոսը ձևավորվի ձեր մեջ» (Գաղատ. 4:19): Նա չարչարվում և պայքարում է, որպեսզի կատարյալ ամեն մարդու կարողանա ներկայացնել Քրիստոսի մեջ՝ նրանց խրատելով և ուսուցանելով ամեն իմաստությամբ (Կողոս. 1:28):

«Եկեղեցիների հոգսը» նրա ամենօրյա բեռն է (Բ. Կորնթ. 11:28): Եկեղեցիների հաստատումից հետո նա իր վրա է վերցնում գործերի կառավարումը՝ ջանալով նրանց մեջ զարգացնել պատասխանատվություն ստանձնելու կամք՝ իր բարձր հեղինակությամբ միջամտելով միայն այնտեղ, որտեղ այդ եկեղեցիներին սպառնում էին հերետիկոսությունները, որոնք կարող էին զրոյի վերածել Ավետարանը (Գաղատիա) և կամ էլ Ավետարանի բարոյական պահանջներին անհամատեղելի գործառնությունների ընդունումը (Կորնթոս): Բացասական առումով, Պողոսը երբեք չի առաջարկում իրեն օժտել այնպիսի իշխանությամբ, որպեսզի ընտրի կամ հրամայի նրանց առաջնորդներին, կամ էլ հաստատի նրանց կատարած որևէ ընտրություն:

2. «Առաքյալ» բառի իմաստը

Առաքյալի կոչումը պարզորոշ ձևով հայտնի է apostello՝ «ուղարկել» բայով, սակայն ավելի սահմանափակ է տեխնիկական կիրառությամբ: Հովհաննես Մկրտիչը, թեև ինքն էլ է ուղարկվել, առաքյալ չէ այս բառի իմաստով: Ընդհանուր առմամբ, հունարենում apostolos բառը գործածվում է մատնանշելու ոչ թե «ուղարկված» մարդ, այլ կապվում է առավելապես նավատորմի, նավի, ավելի հաճախ պատերազմական բեռնանավի հետ: Առիթի դեպքում մատնանշում է նաև արշավախմբի, երբեմն էլ մայր քաղաքում նոր գաղութ հիմնելու նպատակով ուղարկված գաղութաբնակների խմբի ուղեկցորդին: Այս վերջին նշանակությունը կատարելապես նորություն է հույների ու նրանց համար, ում հարազատ է հունարենը: Դա պարզորոշ երևում է այն փաստով, որ այս բառը հնարավոր չէ թարգմանել. փոխառվել է լատիներենից՝ իբրև օտար բառ: Քրիստոնեական գործածությամբ այն պարզապես արամերենի Shaliach-ի թարգմանությունն է՝ կոչում, որը հետագայում լայնորեն օգտագործվում է հրեական կրոնի մեջ՝ ցույց տալու որևէ դատավորի կամ գերագույն իշխանի պաշտոնական ներկայացուցչին, որը լիիրավ իշխանություն է ստացել՝ կատարելու իր ստանձնած առաքելությունը: Նա լիազոր գործակալ է: Նրա արժանապատվությունն ու իրավունքը բխում են իրեն ուղարկողի արժանապատվությունից ու հեղինակությունից, այլ ոչ թե իր անձնական հատկանիշներից: Shaliach-ի՝ ուղարկվածի իր ընդունակությամբ՝ իրեն վստահված առաքելությունը կատարելիս վերադասն է խոսում ու գործում իր մեջ:

Հետևաբար, Պողոսը կարող է ասել. «Արդ, Քրիստոսի համար պատգամավորներ ենք, ասես Աստված է հորդորում մեզանով. Քրիստոսի անունից աղաչում ենք ձեզ, հաշտվեցեք Աստծու հետ» (Բ. Կորնթ. 5:20): Մեր Տերը նույնպես կարող է ասել տասներկուսին. «Ձեզ ընդունողը ինձ է ընդունում, իսկ ինձ ընդունողը ընդունում է նրան, ով ինձ ուղարկել է» (Մատթ. 10:40): «Ձեզ լսողը ինձ է լսում, ձեզ անարգողը ինձ է անարգում, իսկ ինձ անարգողը անարգում է նրան, ով ինձ ուղարկել է» (Ղուկ. 10:16): «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ծառան մեծ չէ տիրոջից, ոչ էլ առաքյալն է մեծ իրեն ուղարկողից» (Հովհ. 13:16): Այս խոսքերը լիովին համապատասխանում են Թալմուդում բազմիցս արտահայտված Shaliach բառի իմաստին: Որևէ մեկի shaliach-ը ասես հենց ինքն է:

Առաքելությունն, անշուշտ, յուրահատուկ պաշտոն է, այլ ոչ թե սովորական գործ, թեև այս բանը կարելի է ասել վաղ շրջանի Եկեղեցում իրականացված մյուս գործերի մասին: Խոսքն, անկասկած, առանձնահատուկ կարևորություն ունեցող մի ծառայության մասին է, որ Տերը տվել է ոչ թե քանդելու, այլ կառուցելու համար (Բ. Կորնթ. 13:10): Պաշտոններն ընդհանրապես բաժանվում են այնպիսի մարդկանց կողմից, ինչպիսին Տիմոթեոսն է: Վերջինս անվանվում է «Մեր եղբայր» և «Աստծու ծառա Քրիստոսի Ավետարանում» եղբայրներին հավատքի մեջ հաստատելու և մխիթարելու համար (Ա. Թեսալ. 3:2):

Առաքյալը Կորնթացիներին վստահեցնում է, որ իր երիտասարդ գործընկերը «իր պես Տիրոջ գործն է անում» (Ա. Կորնթ. 16:10): Սակայն ոչ մի տեղ Տիմոթեոսը չի անվանվում առաքյալ: Անգամ, երբ Պողոսի նամակների ողջույններում նրա անունը կցվում է Պողոսի անվանը, եթե օգտագործվում է առաքյալի կոչումը, ապա սահմանափակվում է միայն Պողոսով, և քաղաքավարական ձևը ստանում է հետևյալ տեսքը. «Պողոսը՝ Աստծու կամքով Հիսուս Քրիստոսի առաքյալը, և Տիմոթեոսը՝ մեր եղբայրը»: Տիմոթեոսը կարող է կատարել

նույն գործերը, բայց դրա համար առաքյալ չի կոչվում: Սա արդարացնում է մեր այն միտքը, որ «Առաքյալ» կոչումը մատնանշում է Եկեղեցում իրականացվող ոչ միայն միջնորդ, այլև շատ առանձնահատուկ մի գործունեություն ևս: Այսուհանդերձ, կարելի է ասել, որ դա Պողոսի կողմից իրականացվող միակ գործն է: Եթե անգամ նա խոսում է այլ գործերի մասին, ապա սրանք այնպիսի պաշտոններ են, որ կատարում են Աստծու հոգու կողմից անհրաժեշտ ձիրք ստացած մարդիկ:

Ովքեր են, ըստ նրա, մյուս առաքյալները: Մեր առաջին դիտողությունն այն է, որ նա իրեն չի նույնացնում տասներկու առաքյալների շրջանակներում իրականացվող ծառայությանը: Նա առաքյալ է համարում Պետրոսին, Հակոբոսին՝ Տիրոջ եղբորը, և թույլ է տալիս ենթադրել, որ Երուսաղեմում պետք է որ այլ առաքյալներ էլ լինեն: Երբ հավատափոխությունից հետո առաջին անգամ այցելել է Երուսաղեմ, այնտեղ հանդիպել է նրանց (Գաղ. 1:17-19): Այսուամենայնիվ, բնավ էլ նրանց չի համարում տասներկուսի առաքելական յուրօրինակ կոլեգիայի անդամներ, որոնց կարող է տալ առաքյալի կոչում: Հակոբոսը, Պետրոսն ու Հովհաննեսը հայտնի են իբրև այուներ, ովքեր իրեն, ինչպես նաև Բառնաբասին համագործակցության ձեռք մեկնեցին՝ ընդունելով հեթանոսների մեջ տարվող առաքելության պիտանիությունը: Այս էական վճիռը Պողոսին ներկայացնում է ոչ թե իբրև առաքյալների կոլեգիայից բխող ձևական գործողություն, որը գերագույն հեղինակությամբ նիստեր էր գումարում Եկեղեցում, այլ իբրև մասնավոր համաձայնագիր հրեական Եկեղեցու երեք «այուների» և հեթանոսների երկու առաքյալների միջև:

Երուսաղեմյան իր ուղեկիցներից բացի՝ Պողոսը առաքյալի կոչում է շնորհում Բառնաբասին, ակնհայտորեն Սիդուանոսին և երկու հոգու ևս, ովքեր այլ կերպ հայտնի են Անդրոնիկոս և Յունիա (Junias) անուններով և որ «առաքյալների մեջ երևելի մարդիկ են» (Հռոմ. 16:7): Ոմանց կարծիքով էլ՝ Յունիան կնոջ անուն է (Junia):

6. ՊՈՂՈՍԻ ԽԱՌՆՎԱԾՔԸ

Վատ տրամադրված հակառակորդները նրան համարում են քաղաքական մունետկող (ագիտատոր): Նա արձագանքում է բոլոր մեղադրանքներին և աշխուժորեն պաշտպանվում՝ գրելով իր առաջին թուղթը (Ա. Թեսաղ. 2:5-8):

Նրա լեցուն կյանքը բնութագրել իբրև գործարար մարդու կյանք՝ պարզամտություն է: Դամասկոսի ճանապարհը բռնելուց հետո նրա գործն ամբողջապես կախված է լսված կանչից (Ա. Կորնթ. 1:17): Նա ինքն իրեն ներկայացնում է իբրև մարզադաշտի վագրող (Փիլ. 3:14): Սեփական առաքելության պաշտպանության համար պատահում է, որ հիշեցնում է իր այս գործունեությունը: Բայց այս մարտնչողի նկարագրին բնորոշ է նաև հնազանդության շեշտը (Ա. Կորնթ. 15:17): Ավետարանացումն իրեն վստահված գործ է, և նա այդ բանը պետք է անի անվարձահատույց (Ա. Կորնթ. 9:17-18), առանց դրա արդյունավետությունից փառք կամ շահ ակնկալելու: Միայն երկրորդ քննության ժամանակ նրա մեջ չի դրսևորվում խիստ զգայունություն, որը նույնպես պայմանավորված է կանչված լինելու հանգամանքով: Հակասությունը նրա մեջ առաջ է բերում հակառակ հակազդումներ, կախված նրանից, թե այդ հակասությունը ազդում է, թե չի ազդում գործի հաջողությանը: Ավետարա-

նիչները նրա նկատմամբ տրամադրված են անբարյացակամորեն: Կարևոր չէ, միայն թե Քրիստոսը հայտարարված լինի (Փիլ. 1:15-18):

Երբ մտածում է, որ ավետարանացունն արատավորված կամ այլափոխված է, ապա ծայրահեղորեն բորբոքվում է: Նա չի նահանջում ո՛չ վիրավորանքի («զգուշացե՛ք շներից» Փիլ. 3:9), ո՛չ էլ անեծքի առջև («Նրանց վախճանն իրենց կորուստը կլինի, նրանց աստվածն իրենց փորն է» Փիլ. 3:19): Սրանք ոչ թե ատելության, այլ ցավի ճիչեր են (Փիլ. 3:18): Լիովին անշահախնդիր ձևով, նրան բնորոշ են պաթետիկ շեշտերը, երբ, կասկածի տակ առնելով առաքյալի կոչումը, փորձում են հերքել նրա քարոզած Ավետարանը: Գաղատացիներին, ինչպես նաև Կորնթացիներին ուղղված երկրորդ թղթերը առատ են նմանատիպ գծերով: Այդժամ նա հպարտանում է, սակայն՝ Տիրոջ մեջ (Ա. Կորնթ. 1:31): Պարծենում է իր թուլություններով, որոնք ավելի լավ են ցուցադրում Տիրոջ զորությունն իր մեջ (Բ. Կորնթ. 12:5-10, Գաղ. 6:14):

Հրեա եղբայրների հանդեպ նա մերթ կայացնում է ահավոր դատավճիռներ, ընդհուպ մինչև հանդիմանելով մարդկային ցեղի նկատմամբ ատելության մեջ, ինչպես անում էին հեթանոսները, քանի որ խանգարում էին քարոզը, որը կփրկեր ոչ հրեաներին՝ «այս կերպ լրման հասցնելու նրանց մեղքերը» (Ա. Թեսաղ. 2:15-16), մերթ էլ ծայրահեղ ցավի ու անվերջանալի տառապանքի մեջ ցանկություն էր հայտնում, որ ինքն էլ արժանանար բանադրանքի, կտրվեր Քրիստոսից՝ հանուն իր ցեղի մարմնական եղբայրների (Հռոմ. 9:2-3): Պաակնհայտ է, քանի որ առաքյալը նրանց համարում է մարդկանց փրկության գործին խանգարողներ և թե փրկության կանչվածներ:

Նրա զգացմունքները հորդում են հատկապես փիլիսոփայեցիների հետ եղած ժամանակ (Փիլ. 4:1): Նա այդ բանն ասում է համարձակորեն (1:6-8): Տարված այս սիրով՝ փափագում է մահանալ ու Քրիստոսի հետ լինել միայն այն հույսով, որ էլ ավելի օգտակար լինի փիլիսոփայեցիներին (1:24): Եղբայրական սերը, որ նա արտահայտում է իբրև հայր (Ա. Կորնթ. 4:14-15), վերածվում է անգամ մայրական սիրո (Գաղ. 5:19-20): Չարմանալի ոչինչ չկա այն բանում, որ ունեցել է կրքոտ զգացմունքներ (Գործք 20:27-28) և որ ցուցաբերել է ծայրահեղ նվիրվածություն (Գաղ. 4:15): Բայց նրա մտերմական կապերի մեջ Քրիստոսը միշտ ներկա է, ինչպես առկա է այն ամենում, ինչով առաքյալն ապրում է (տես՝ Աստվածաշնչի հանրագիտարանային բառարանը):

Է. ՆԱՍԱԿՆԵՐԻ (ԹՂԹԵՐԻ) ՀԵՂԻՆԱԿԸ

Տասներեք վավերագրական թղթերի հեղինակը Աստծու կողմից ընտրված անձնավորություն է: Նախախնամության խիստ առանձնահատուկ չափը, ոչ մի կասկածի տեղիք չտվող ներշնչանքը, Պողոսին դարձնում են Ավետարանի առաջին աստվածաբանը, Աստծու լիազոր խոսափողը, վաղ շրջանի Եկեղեցու և համաշխարհային Եկեղեցու գերազանց քարոզիչ հովիվը:

Նախախնամության չափը երևում է այն փաստում, որ ծագմամբ լինելով հրեա՝ Պողոսը հրաշալիորեն ծանաչում է ինչպես Հին Կտակարանը, այնպես էլ փրկչության պատմության ետնապլանը: Բացի այդ՝ նա Սփյուռքի հրեա է, ապրում է Պաղեստինի սահմաններից դուրս

և հարազատ է հեթանոսական կրոններին ու մշակույթին: Եվ այսպես, նա արդեն իսկ ավելի մեծ հեռանկարներ ուներ, քան պաղեստինցի հրեան: Դաստիարակությունը Տարսոսում՝ կոստոպոլիտ ու մշակութային կենտրոնում, ամենակատարյալն ու լավագույնն էր, որ կարող էր երազել: Օժտված լինելով Ավետարանի խորունկ իմաստը հասկանալու փայլուն մտածողությամբ՝ ուներ նաև ջերմ սիրտ ու այնպիսի եռանդ, որ ոչ միայն Եկեղեցու ավետարանացնող առաջին ողջ առաքելությունն է դրանից օգտվել, այլ նաև հաջորդ սերունդները:

Ինչպես կհավաստիանանք՝ կարդալով նրա թղթերը (և մենք ընթերցողներին խորհուրդ ենք տալիս սկսել ընթերցանությամբ), դրանք կա՛մ անհատական բնույթի են՝ ուղղված մերձավոր ընկերների, հավատքով բարեկամ մարդկանց ու եղբայրների, կա՛մ էլ ընդհանրական. այն Եկեղեցիներին հասցեագրված ուղերձներ, որ ինքն է հիմնադրել կամ էլ այցելելու մտադրություն ունի:

Բոլորն էլ բովանդակում են հիմնավոր ուսմունք, ներառյալ նաև ամենամանակյալն ու մտերմիկը՝ Փիլիմոնին գրած թուղթը: Այսպիսով, կարելի է ասել, որ հայտնությանն ու փրկության ճանաչմանը վերաբերող հիմնավոր ու ամենախորունկ այս ուսմունքները մեզ չեն հասել իբրև շահախարդախ ու վերացական հոգևոր փորձեր: Դրանք այսօր էլ կարդալով՝ գիտենք, որ գրվել են մեզ համար: Դեռ ավելին, դա ևս ապացույց է այս նամակների՝ աստվածային ներշնչանքի արդյունք լինելու մասին, նամակներ, որոնք քրիստոնեական Սուրբ գրքի կանոնի մաս են կազմում. գրավոր խոսք՝ օժտված հավատքի ու կյանքի հանդեպ գերագույն զորությամբ:

Այսուհանդերձ, կարդալով և ուսումնասիրելով թղթերը, հարկ է հաշվի առնել նաև նրանց պատմական ետնապլանն ու այն պայմանները, որոնցում գրվել են: Այս կամ այն նամակը գրելու շարժառիթներ եղել են առանձնահատուկ հանգամանքները: Օրինակ, Կորնթացիներին ուղղված առաջին թուղթը գրվել է այն ժամանակ, երբ Եկեղեցին զգում էր խիստ միջամտության և հրատապ որոշ հարցերի պատասխանը, կամ էլ այս կամ այն վիճելի (օրինակ՝ հարությանը վերաբերող) հարցի շուրջ հոգիները խաղաղեցնող միջոցների կարիքը:

Սովորաբար, առաքյալն իր նամակները թելադրում է իր քարտուղարին կամ քարտուղարներին: Դա բացատրվում է գուցե նրա վատ տեսողությամբ, կամ էլ այդպես էր դարաշրջանի սովորույթը:

Որոշ նամակներում նա հիշատակում է քարտուղարի անունը (Յոնն. 16:23), իսկ այլ նամակներ էլ ենթադրել են տալիս, որ առաքյալն, իրոք, դիմել է քարտուղարի ծառայությանը: Թղթերից մեկը միայն, թվում է, գրվել է նրա ձեռքով (Գաղատացիներին): Նամակներն իրենց հասցեատերերին էին հասնում միջնորդ բարեկամների կամ մերձավոր ընկերների միջոցով:

Պողոսի թղթերը կարելի է դասակարգել ժամանակագրական հետևյալ հաջորդականությամբ. ա) Թեսաղոնիկեցիներին (Ա-Բ), Գաղատացիներին, Կորնթացիներին (Ա-Բ), Յոննեացիներին, բ) Գերության նամակներ. Կողոսացիներին, Փիլիմոնին, Եփեսացիներին, Փիլիպպեցիներին, գ) Հովվական թղթեր. Տիմոթեոսին (Ա-Բ), Տիտոսին: Դրանք կարող ենք բաժանել նաև երկու դասի՝ ըստ հասցեատերերի. մասնավոր անձանց և համայնքների հղված նամակներ:

Ի՞ՆՉ Է ԱՎԵՏԱՐԱՆԸ

Ի՞նչ են Ավետարանները. Հիսուսի կենսագրությունները՝ ժամանակակից պատմաբանների հասկացած իմաստով, թողարկումների կամ վարչական գործողությունների նմանվող հաշվետվություններ, արձանագրություններ՝ Տիրոջ կատարած գործերի մասին: Խոսքն արդյոք աստվածապաշտությանը, Հիսուսի՝ առեղծվածային կյանքին վերաբերող ուսմունքի մասին է, թե՞ Եկեղեցուն, կամ էլ քրիստոնեական պետությանը հատուկ օրենսգրքի: Մի խոսքով՝ գրական ի՞նչ ժանրի հետ կապել այս գրվածքները¹:

Evangile բառը հունարենի euangellion բառի ֆրանսերեն ձևն է՝ բարդ բառ, որը կազմված է eu (բարի) և aggelein (ավետել) բառերից: Ավետարանը բարի ավետում է կամ Ավետիս:

Հունարեն Նոր Կտակարանում (նախնական տեքստում) բառը հանդիպում է մոտ յոթանասունհինգ անգամ: Առանց բացառության՝ այն միշտ նշանակում է լուր, այլ ոչ թե գրվածք: Այն լուրն է, ինչը վերաբերում է Հիսուս Քրիստոսով փրկվելուն: Խոսքը Ավետիսի և անգամ հայտնության մասին է, որը տրվում է Աստծու կողմից և, որպես այդպիսին, Աստված քարոզի և վարդապետության (կատեխիզիսի) առարկան է: Մենք պետք է միշտ հիշենք այս բառի առաջին իմաստը, երբ ձգտում ենք մեր հավատքը հաղորդել անհավատներին՝ լինեն դրանք անհավատներ կամ այնպիսի կրոնի հավատացյալներ, ինչպիսիք են Իսլամը, Հինդուիզմը և այլն:

Մենք պետք է լավ հիշենք նշված բառի առաջին իմաստը, երբ խոսում ենք Մարկոսի, Հովհաննու և կամ Ղուկասի Ավետարանների մասին: Անշուշտ, սխալ չէ այս գրվածքները համարել ավետարաններ, բայց չմոռանանք, որ բառի առաջին իմաստը լուրն է, ինչպես նաև այդ լուրի հայտնումը: Քրիստոնյաների առաջին սերունդը «ավետարան» բառը միշտ օգտագործել է նշված իմաստով:

Այսպես, երբ Մարկոսն իր գրվածքն սկսում է սովորական բառերով. «Հիսուսի Ավետարանի սկիզբը» (1:1), ապա այս նախադասությամբ չի մատնանշում իր գրքի ներածությունը, այլ դիմում է սկզբին՝ այն Լուրի սկզբին, որը վերաբերում է Հիսուս Քրիստոսին՝ Աստծու Որդուն: Իր հերթին, Ղուկասը ձեռնամուխ է եղել գրելու «պատմություն» այն բաների մասին, որոնք կապված են Հիսուս Քրիստոսի հետ և գրում է Թեոփիլին՝ կարգով այն իրեն ներկայացնելու համար (1:1-3):

Հեռու լինելով նշված բառը որպես մեկ գրքի և կամ գրքերի վերնագիր համարելու հավակնությունից՝ վաղ շրջանի եկեղեցին այն կիրառել է ամբողջ Լուր-վկայության նկատմամբ, անգամ եթե այս բառով է վերնագրել «ավետարաններ» կոչված չորս գրվածքները: Եղել են չորս գրվածքներ՝ գրված չորս տարբեր հեղինակների կողմից, որոնց միակ հոգսը, սակայն, եղել է մեկ Լուր-Ավետարանը՝ Ավետիսը ներկայացնելը:

Դրանք վկայություններ են. ահա և բոլորը: Մարդիկ հավատարմորեն հաղորդում են այն, ինչ տեսել կամ լսել են և կամ էլ այն, ինչ նրանց հաղորդվել է Հիսուսի գործերի ու քարոզների մասին: Լավ գիրք գրելու նպատակով չէ, որ նրանք գրում են, ոչ էլ մեզ դաս-

¹ Manuel Biblique, III, p. 14.

տիարակելու կամ հետաքրքրելու, այլ «որ դուք հավատաք, որ Հիսուսը Քրիստոսն է Աստուծու Որդին և որ հավատալով՝ դուք կունենաք հավիտենական կյանք» (Հովհաննես 20:31):

Նա, ով բացում է Ավետարանները՝ այնտեղ հանդիպելու Հիսուսին, նա, ով ուզում է լսել և հետևել նրան, հուսախաբ չի լինի, քանզի կենդանի Հիսուս Քրիստոսն ապրում է այնտեղ: Հրաշալի կամ արտառոց պատմության, պարզ ու լուսավոր քարոզների և կամ «կոպիտ» ու մերկ խոսքերի ներքո մեզ հանկարծ պարուրում է նրա ձայնը: Նա գալիս է: Նա քայլում է մեզ հետ և, ինչպես դա եղավ նրա աշակերտների հետ հարության երեկոյան, մեր սիրտն սկսում է այրվել, մինչ նա բացատրում է Սուրբ գրքերը և հայտնում, որ Քրիստոսը պետք է կրեր այս բաները և փառաբանվեր (Ղուկաս 24:32, 26-27):

Երբ Հիսուս Քրիստոսի նկատմամբ ունեցած մեր հավատքի մասին խոսում ենք ոչ քրիստոնյաների, աթեիստների, ագնոստիկների և կամ այլ կրոնների (Իսլամ, Հինդուիզմ, Հուդայականություն) կողմնակիցների հետ, պետք է ուշադիր լինենք, որպեսզի ընդգծենք Ավետարանի առաջին իմաստը: Լավ կլինի հիշեցնել մեր գրուցակիցներին, որ Հիսուս Քրիստոսին ճանաչելու այլ աղբյուրներ ևս գոյություն ունեն, և որ դրանք վերաբերում են միակ, նույն լուրին: Այսպես, օրինակ, մենք հաշվում ենք 21 ուղերձ, որոնցից 14-ը պատկանում են Պողոս առաքյալի գրչին, «Հայտնություն» կոչվող մի գիրք, որը ծայրաստիճան մարգարեական է, և որտեղ խորհրդանշական - ապոկալիպտիկ լեզվով նկարագրվում է եկեղեցու անցյալ, ներկա և գալիք վիճակը: «Գործք Առաքելոց»-ը անցնում է չորս Ավետարանների ու Նոր Կտակարանի մնացած մասի միջով և հաղորդում է «այն ամենի շարունակման մասին, ինչ Հիսուսն սկսել է անել և ուսուցանել» (1:1) Ավետարաններում:

Նա նկարագրում է եկեղեցու ծնունդն ու զարգացումը, եկեղեցի, որի հավատքը փորձում են սնուցել, կառուցել ու ամրապնդել, հույս արթնացնել և գթությունն ակտիվացնել ուղերձներն ու «Հայտնություն»-ը:

Բայց այս դեպքում ինչո՞ւ «չորս Ավետարան»:

Յուրաքանչյուր Ավետարան ասում է ինչ-որ բան, որ մյուս երեքը չեն ասում և կամ էլ չեն հաղորդում նույն ձևով: Ավետարանների ստեղծումից հետո եկեղեցին դրանք ընդունեց իբրև հեղինակություն ունեցող և անառարկելի արժանապատվություն վայելող գրքեր: Միաժամանակ, նա մերժեց քառակի լուրը մեկ լուրի հանգեցնելու ամեն ջանք: Այսպես, ինչպես կտեսնենք Սինոպտիկական Ավետարաններին մվիրված գլխում, եկեղեցին չընդունեց երկրորդ դարի երկրորդ կեսի սիրիացի քրիստոնյա Դաթիանոսի՝ չորս Ավետարանների բովանդակությունը ներդաշնակելու առաջին փորձը:

Ահա մի օրինակ այդ գրքից.

«Եվ ծառաներն ու զինվորները վեր կացան, բակի կենտրոնում կրակ վառեցին՝ տաքանալու, քանի որ ցուրտ էր: Սիմոնը նույնպես եկավ ու նստեց նրանց մեջ՝ տաքանալու, տեսնելու, թե վերջում ինչ է լինելու» (Հովհաննես 18:8, Ղուկաս 22:55, Մատթ. 26:58):

Այս ՔԱՌԱՄԱՏՅԱՆԸ (հունարեն՝ quadruple) իբրև կանոնական գրվածք ընդունվեց մախ սիրիական եկեղեցու կողմից: Բայց երբ եկեղեցին պաշտոնապես սահմանեց Նոր Կտակարանի Կանոնը (367 թ. և ապա՝ 397 թ.) սիրիական եկեղեցիները մերժեցին քառամատյանը, որը շուտով լիովին դուրս մղվեց եկեղեցու գործածությունից: Այժմ դրանից հայտնի է միայն մի քանի հատված և հայերեն լեզվով մի մեկնաբանություն:

Մակերեսային ուսումնասիրությամբ թվում է, թե Ավետարանները Հիսուսի կենսագրություններ են: Մենք արդեն ասացինք, որ սխալ կլիներ նշված չորս գրվածքները համարել Հիսուսի կյանքի պատմություն: Այսպես, օրինակ, Մարկոսն ու Ռովիանները բացարձակապես ոչինչ չեն ասում Հիսուսի՝ հասարակական առաքելությանը նախորդած կյանքի մասին: Միայն Մատթեոսն ու Ղուկասն են տալիս Հիսուսի ծննդյան պատմությունը, իսկ Ղուկասն ավելացնում է նրա պատանեկության ժամանակ տեղի ունեցած մի դեպք: Այսպիսով, «կենսագրություն» գրելու համար անհրաժեշտ է կատարելապես իմանալ տվյալ անձնավորության կյանքի առաջին երեսուն տարիները, որոնք որոշիչ են նրա գործունեության համար և կարևոր՝ բնավորությունը ճանաչելու տեսակետից: Արդ, մենք բացարձակապես ոչինչ չգիտենք Քրիստոսի կյանքի, այսպես կոչված, մութ տարիների մասին. տասներկու տարեկանից մինչև բուռն գործունեության մեջ մտնելը:

Մեզ մի փաստ է միայն հայտնի, այն, որ նա հնազանդ է եղել իր ծնողներին, զարգացել է իմաստությամբ, հասակով և շնորհքով՝ Աստծու և մարդկանց մոտ (Ղուկաս 2:51, 52):

Մինչև իսկ Քրիստոսի հասարակական գործունեությունը չի հաղորդվել ամբողջապես, ամենայն մանրամասներով: Այս մասին պատմող գլուխների մեկ երրորդը նվիրված է խաչի վրա մահվանը նախորդած մեկ կամ երկու շաբաթներին:

Ռովիաննու Ավետարանի 12-20 գլուխներում պատկերվում են վերջին ինը թե տասը օրերը: Ուստի, ակնհայտ է, որ Քրիստոսի մահը աշակերտների համար եղել է նույնքան նշանակալից ու կարևոր, որքան ամբողջ կյանքը:

Բացի այդ՝ բոլոր Ավետարանները, բացառությամբ Մարկոսի Ավետարանի, մեծ տեղ են տալիս հարությանը: Առաջին գլուխներում խոսվում է, հատկապես, Հիսուսի բուժող գործունեության մասին: Այլ հետաքրքրություն կամ դիտարկում լռության է մատնվում կամ էլ մնում է հետին պլանում:

Եվ այսպես, Ավետարանները Հիսուս Քրիստոսի կենսագրություններ չեն: Մենք արդեն ասել ենք, թե որն է նրանց առաջին նպատակը. հայտնել Հիսուսին վերաբերող Ավետիսը և, հատկապես, այն Ավետիսը, որ Հիսուսն ինքն է՝ իր Անձով. Աստծու Մարմնացած Որդին: Իր կյանքում ու առաքելության, բանտարկության ու տանջանքների, Մահվան ու Հարության մեջ բարի Լուրն է հաղորդվում նույնքան ջերմությամբ, որքան ճշմարտացիությամբ: Ավետարանումը հիմնված է վկայության վրա, որը, չորս ու անպտուղ արձանագրություն լինելու փոխարեն, դառնում է ջերմ ու վարակիչ քարոզ:

Քրիստոսը հաղթել է Աստծու և մարդկանց թշնամուն՝ Սատանային, մահվանն ու մեղքին: Մարդկանց սրտերում նա հաստատել է իր իշխանությունը և մի օր էլ կգա այն հաստատելու ամբողջ երկրի երեսին և Աստծու ստեղծած աշխարհում: Այսպիսին է չորս Ավետարանների *Martyria – Kerygma*-ն: Դրանով է բացատրվում այն, որ նրանք մի կողմ են թողել մյուս բոլոր մանրամասները, որոնք կարևոր են, սակայն բացարձակ անհրաժեշտություն չեն այս լուրը հաղորդելու համար:

Ինչո՞ւ են գրվել Ավետարանները:

Չուտ գործնական պատճառով՝ Եկեղեցու ներսում կիրառելու համար: Դրանց ստեղծման ժամանակը (60-65 թթ. և 95 թվականի միջև) նաև այն պահն է, երբ Հիսուսի կյանքի ականատես վկաներն սկսում են անհետանալ: Իբրև բանավոր լուր՝ Ավետարանը պահ-

պանվել էր մեկ և, անգամ, երկու սերունդների ժամանակ: Անպայմանորեն անհրաժեշտ էր վկայությունը տալ գրավոր ձևով: Առաքյալները Հիսուսին շրջապատողներից ամենից ավելի մոտն էին: Նրանք Հիսուսի կյանքի ու առաքելության թարգմանիչներն էին: Հիսուսը նրանց տվել էր իր անունից խոսելու զորություն: Սրանից զատ՝ Եկեղեցու հոգևոր ղեկավարությունը նրանց էր վստահված: Հետևաբար պետք էր վկայություն, թույլատրված և նույնքան էլ ճշմարտացի հաշվետվություն: Եկեղեցին գտավ, որ այս վկայությունը արվել էր Մատթեոսի և Հովհաննու՝ երկու առաքյալների, Մարկոսի՝ Պետրոսի ու Պողոսի մոտ ընկերոջ և Ղուկասի՝ Պողոսի ընկերոջ կողմից:

Նրանք հավաստի աղբյուրներ էին, քանզի հնարավորություն էին տվել քարոզելու հավատքը և հիմնելու եկեղեցիներ: Մեր դարաշրջանն սկսվում է Հիսուսի ծննդով (մի քանի տարիների տարբերությունը հաշվարկի հետ կապված սխալ է):

Առաջին դարի առաջին երեսուն տարիներն ականատես եղան Հիսուսի ծննդին ու կյանքին, երկրորդ երեսուն տարիները՝ Եկեղեցու հաստատմանը, իսկ վերջին երեսուն տարիները՝ ավետարանների շարադրմանը: Թեև համարյա ոչինչ չգիտենք այս վերջին տարիների մասին, նույնիսկ ավելի քիչ, քան Եկեղեցու կյանքի մյուս բոլոր ժամանակաշրջանների մասին, այդ տարիներին են վերագրվում մեր փաստաթղթերի շարադրումն ու կազմումը: Ուստի նշանակալից է, որ այս «դատարկությունը» լցվել է չորս ավետարանների հայտնվելու փաստով: Ավետարանների շարադրմանը վերաբերող տեխնիկական այլ խնդիրներ, ինչպես, օրինակ, բնագիր տեքստերի, Կանոնի և Սինոպտիկական խնդրի հարցը, կքննարկվեն այլ տեղ (վերջինը՝ ավելի ուշ, մյուսները՝ Նոր Կտակարանին նվիրված Ընդհանուր Առաջաբանում):

Գ Լ ՈՒՆ 15

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ

Ա. ՀԵՂԻՆԱԿԸ

Մատթեոսի՝ այս անունը կրող Ավետարանի ենթադրյալ հեղինակի վերաբերյալ կենսագրական տեղեկություններն այնքան էլ շատ չեն: Նրա անունը արամեերենի *Եհովայի պարզև* մատնանշող մի անվան հունարեն վերարտադրությունն է՝ հունարենի THEODOROS-ի համարժեքը: Հիսուսին հանդիպելուց և իր հավատափոխությունից առաջ նրա անունը Ղևի էր: Տասներկու առաքյալների ցուցակում նա հանդես է գալիս մերթ իբրև Ղևի, մերթ Մատթեոս (Մատթեոս 10:3, Մարկոս 3:18, Ղուկաս 6:15, Գործք 1:13):

Նա Ալիփեոսի որդին է և Գալիլիայի չորրորդապետության մեջ իրականացնում է հարկահավաքի գործը: Նա, հավանաբար, ունեցել է կրթական որոշ մակարդակ, նրա գործը Կափառնայում քաղաքում հռոմեական հարկեր հավաքելն էր: Հարկահավաք լինելը երևում է նրա ոճում, երբ խնամքով նշում է թվերին ու դրամին վերաբերող բոլոր մանրամասները:

Նա անմիջապես հնազանդվում է Հիսուսի կանչին, կազմակերպում է ճաշկերույթ, որին հրավիրում է նախկին ընկերներին՝ նրանց ներկայացնելու իր նոր Տիրոջը (տես՝ Ղուկաս 5:27-32, Մատթեոս 9:9-17, Մարկոս 2:13-17):

Սա է նոտավորապես այն ամենը, ինչ գիտենք նրա մասին՝ ըստ Նոր Կտակարանի: Ավանդույթի համաձայն՝ նա, հավանաբար, 15 տարի քարոզել է Պաղեստինում, այնուհետև գնացել է ավետարանելու հեթանոս այլ ժողովուրդների: Հավանաբար մահացել է բնական մահով՝ Եթովպիայում կամ էլ Մակեդոնիայում:

Հռոմեական բռնազավթման ժամանակ հարկահավաքները պաղեստինյան հասարակության մեջ ամենից արհամարհվածն էին հրեաների կողմից: «Հարկահավաքներն ու մեղավորները» արտահայտությունը կարելի է գտնել Մատթեոսի (9:10-11), Մարկոսի (2:15-16) և Ղուկասի (5:30) Ավետարաններում: Մատթեոսի Ավետարանում (21:31) հարկահավաքները պատկանում են բարոյական նույն կարգին, ինչ պոռնիկները: Դրա համար կային հիմնավոր պատճառներ: Հռոմեացիները ծանր հարկեր էին դնում իրենց նվաճած երկրների վրա՝ դրանք բաժանելով գավառների, իսկ սրանք էլ՝ շրջանների: Որևէ շրջանում հարկերի հավաքման ղեկավարումը սովորաբար ինչ-որ հռոմեացու գործն էր: Իր հերթին վերջինս տվյալ ազգի միջից ծառայողներ էր վարձում և նրանց հանձնարարում հարկեր հավաքելու գործը: Այն, ինչ հարկահավաքները կարող էին հավաքել դրված հարկերից բացի, մտնում էր նրանց գրպանը: Ուստի, հարկահավաքները ճնշում էին համաքաղաքացիներին, և ատելի թշնամու ատելի գործակալներն էին: Մատթեոսը պատկանում էր այս մարդկանց դասին:

Ընտրելով տասներկու առաքյալներին՝ Հիսուսը միավորեց մի խումբ մարդկանց, ովքեր ինքնին չունեին աչքի ընկնող որևէ բան՝ նրանց դարձնելու իր Եկեղեցու հիմնադիրները: Հակոբոսն ու Հովհաննեսը, որոնց անվանում էին «որդիք որոտման», Թովմասը, որը կասկածում էր, մատնիչ Հուդան, Պետրոսը՝ անճարակ սնապարծը, Սիմոնը՝ ոմն արմատական, քաղաքական մունետկող, Մատթեոսը՝ թշնամու գործակալ: Բոլորը, բացի Հուդայից, ապացուցեցին, որ Աստծու թագավորության մեջ վերջինը դառնում է առաջին:

Բ. ՎԱԿԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Ըստ Մատթեոսի» կոչվող Ավետարանի՝ վավերականության հարցն այնպիսի խնդիր է, որն ամբողջապես լուծված չէ: Մենք կհաղորդենք միայն վարկածներ՝ պաշտպանելով այն, ինչը մեզ ամենահավանականն է թվում:

Հայտնի է, որ «ըստ» բառը բացարձակ ձևով ցույց չի տալիս, որ հիշատակված անձնավորությունը, իրոք, եղել է իր անունը կրող գրքի հեղինակը: Ընդհակառակը, այն կարող էր ցույց տալ համապատասխանություն այդ անձնավորությանը և կամ էլ ընդհանրություն աստվածաբանական այն տիպին, որը նա ներկայացնում էր: Հետևաբար, ավետարանական որևէ գրվածքի վավերականության ընդունումը կախված է այլ փաստերից և ոչ թե միայն անվան հիշատակումից: Ահա թե ինչու, որոշ մասնագետներ, անգամ նրանք, ովքեր ոչ մի կապ չունեն աստվածաշնչյան քննադատության հետ, ընդունում են այն վարկածը, որի համաձայն՝ Մատթեոսի Ավետարանը, ներկա ձևով, կարող է և շարադրված չլինել անձամբ առաքյալի կողմից:

Դիտարկենք որոշ փաստարկներ այս վարկածի օգտին:

Հայտնի է, որ Ավետարանը բացահայտորեն չի ասում, որ Մատթեոսը դրա հեղինակն է: Անտիկ աշխարհում, պատմաբան Եվսեբիոսը հաղորդում է առաջին դարի կամ երկրորդ դարի սկզբի մի հեղինակի՝ Պապիաս անվամբ մի քրիստոնյայի վկայությունը: Ըստ Պապիասի՝ Մատթեոսը պետք է, որ արամերենով գրած լիներ LOGIA-ներ կոչվող մի փաստաթուղթ՝ մեջբերմամբ ներկայացնելով Հիսուսի գուշակություններն ու քարոզները, որոնք այնուհետև թարգմանվել են կամ հնարավոր է թարգմանվել են հունարեն: Արդեն իսկ Իրինեոսը Եվսեբիոսից 150 տարի առաջ գրում է, որ Մատթեոսը գրել էր Ավետարան եբրայեցիների համար՝ նրանց բարբառով, մինչդեռ Պողոսն ու Պետրոսը քարոզում էին Հռոմում՝ այնտեղ դնելով Եկեղեցու հիմքերը:

Ահա, սակայն, Պապիասի՝ Հերապոլիսի եպիսկոպոսի նախադասության թարգմանությունն այնպես, ինչպես այն տալիս է Եվսեբիոսը. «Այսպիսով, Մատթեոսը, իսկապես, եբրայերենով միավորեց (կազմեց) LOGIA-ները: Ինչ վերաբերում է մեկնաբանությանը, ապա յուրաքանչյուրը դրանց վերաբերում էր իր ընդունակությանը համապատասխան»: Սակայն ոչ ոք վստահ չէ այս LOGIA-ների իմաստի մեջ (ուսմունքնե՞ր, թե՞ քարոզներ): 3-րդ դարի վերջում Օրիգենեսի վկայությունը տեղ չի թողնում այս թեմայով միահամուռ հավատին վերաբերող կասկածի համար, որը գալիս էր արդեն իսկ 2-րդ դարի վերջից: Նա ասում է. «Քանի որ սովորել են չորս ավետարաններին վերաբերող ավանդույթը, ավետարաններ, որ անվիճելիորեն ստացված են Աստծու Եկեղեցու կողմից՝ երկնքի տակ. առաջինը գրվել է Մատթեոսի կողմից, որը նախկինում հարկահավաք էր, իսկ հետո դարձել է Հիսուս Քրիստոսի առաքյալը: Նա այն հրապարակեց հրեա հավատափոխների համար՝ կազմելով եբրայերենով»:

Այս հայտարարությունը, թվում է, լուծում է խնդիրը, բայց կան դժվարություններ, որոնք չի կարելի անտեսել: Հիշատակենք միայն երկուսը:

Կարելի է ճշմարիտ համարել այն, որ կանոնական մեր Ավետարանը գրվել է ոչ թե եբրայերեն (կամ արամերեն), այլ հունարեն, մի բան, որը հակասում է Օրիգենեսի ու Պապիասի վկայությանը, եթե հանրահայտ LOGIA-ի տակ հասկանանք մեր Ավետարանը:

Մատթեոսի Ավետարանում գտնում ենք Ղուկասի Ավետարանում պարունակվող 661 տողերից 606-ի նյութը և կամ, այլ կերպ ասած, Մատթեոսի 1068 տողերից միայն 462-ն են անկախ Մարկոսից: Այսպիսով, կարելի է ասել, որ Մարկոսի Ավետարանը համարյա ամբողջությամբ ներառված է Մատթեոսի Ավետարանում՝ բացառությամբ 55 տողի:

Առարկել են ասելով, որ Մատթեոսը մոտիկից և ուղղակիորեն ճանաչում էր Տիրոջը, հետևաբար, կարիք չունեն փոխ առնելու այնպիսի մեկի պատմությունից, որը Հիսուսի կյանքի ու գործունեության ականատես վկան չի եղել:

Ինչպե՞ս հաշտեցնել այս երկու տարբեր տեսակետները:

Նախ՝ դիտարկենք երկրորդ առարկությունը: Պապիասը գրում է, որ Մարկոսը դարձավ Պետրոսի թարգմանիչը և ճշգրտորեն գրեց այն ամենը, ինչը հիշում էր Տիրոջ խոսքերից ու գործերից: Օրիգենեսը, խոսելով Ավետարանների մասին, ասում է. «Երկրորդը (Ավետարանը) Մարկոսինն է, որը նա գրեց Պետրոսի ղեկավարությամբ»:

Նման վկայություն է տրվել նաև Հուստինոս Վկայի, Տերտուլիանոսի, Իրինեոսի, Հերո-

նիմոսի և Եվսեբիոսի կողմից: Չեռևապես, օգտվելով Մարկոսի Ավետարանից, Մատթեոսն օգտագործում էր նաև Պետրոսի քարոզների նյութը, որ Մարկոսը լսել և հիշել էր և, հավանաբար, շարադրել էր այն նուտաները, որոնք երկրորդ Ավետարանի նյութն են կազմում: Կեսարիայում Պետրոսի Քարոզը (Գործք 10:34-43) կատարելապես նման է Մարկոսի Ավետարանի որդեգրած ընդհանուր պլանին: Օգտվելով Մարկոսից՝ Մատթեոսը մեջբերել է մեկ այլ առաքյալի հուշերից, որը կանչվել էր իրենից առաջ:

Ինչ վերաբերում է առաջին առարկությանը, ապա ամեն ինչ պտտվում է այն հարցի շուրջը, թե, արդյոք, կանոնական Ավետարանը պետք է նույնացնել այն LOGIA-ներին, որոնց մասին խոսում է Պապիասը՝ հայտարարելով, որ դրանք գրվել են Մատթեոսի կողմից: Եթե այս երկու գրվածքները նույնն են, ապա բախվում ենք անլուծելի մի խնդրի, որը հետևյալն է. Պապիասը հայտարարում է, որ Մատթեոսը գրել է եբրայերեն, սակայն հայտնի է, որ մեր Ավետարանը եբրայերենից չի թարգմանվել հունարեն, այլ անմիջականորեն շարադրվել է վերջին լեզվով: Սակայն հարկ չկա մտածելու, որ LOGIA-ները, որոնց մասին խոսում է Պապիասը, և մեր Ավետարանը նույնն են, ինչքան էլ թվա, որ Մատթեոսը եբրայերեն ինչ-որ փաստաթուղթ է գրել հրեաների համար, ինչպես հավաստում են Պապիասը, Իրինեոսը և Օրիգենեսը, և կան հրաշալի պատճառներ՝ ենթադրելու, որ այդ փաստաթուղթը, զոնե մասամբ, ներառվել է կանոնական այն Ավետարանի մեջ, որը նա գրել է հունարենով:

Այս պարզ վարկածը փորձում է (և կարծում ենք՝ նրան հաջողվում է) լուծել հակասությունը և իր օգտին ունի ծանրակշիռ մեկ ուրիշ օրինակ՝ հրեա գրող Յովսեպոսինը, որն իր գրվածքները նախ գրել է եբրայերենով, իսկ այնուհետև՝ հունարենով, որպեսզի դրանք համընդհանուր տարածում վայելեն:

Ամեն դեպքում Ավետարանի արժեքը կախված է ոչ թե հեղինակից, այլ բովանդակությունից: Այսուամենայնիվ, հակառակն ապացուցելու համար բացարձակ փաստի բացակայության պայմաններում ամենևին էլ անհիմն չէ մտածել, որ Մատթեոսի Ավետարանը առաքելական ծագում ունի: Թեև մասնագետների մեծ մասի կողմից այն վերագրվում է անհայտ ավետարանչի, որին նրանք անվանում են բանաքաղ, մենք ընդունում ենք Օրիգենեսի՝ արդեն հիշատակված վճիռը. ըստ վավերականության կողմնակիցների՝ Ավետարանը գրվել է Մատթեոսի կողմից:

Ուշադրության առնելով Մատթեոսի՝ տասներկու առաքյալների շրջանում ունեցած համեմատաբար աննկատ դերը, անհիմն է մտածել, որ փորձում են նրան վերագրել զեղծարարի գործ: Արդ, ամեն բանաքաղ (կամ զեղծարար) իր գործին այլ անուն կտար, փոխառյալ անուն, իր անունից էլ նշանավոր: Մատթեոսի Ավետարանի բնույթի վերաբերյալ քրիստոնյա առաջին հեղինակների ընդհանուր համաձայնությունը ամրապնդում է այս դիրքորոշումը: Անշուշտ, սա վարկած է, բայց մենք կարծում ենք, որ շատ հավանական է: T. Manley-ը իր առաջաբանում գրում է. «Ընդգծված իմաստով՝ բոլոր ավետարանները անանուն են: Ոչ մեկը չի կրում իր հեղինակի անունը: Միայն արտաքին պատճառներն են մեզ թույլ տալիս առաջին Ավետարանի վրա գրել Մատթեոսի անունը»:

Չաճախ են մերժել Պապիասի վկայությունը, քանի որ արամերեն տեքստի հետք չկա, իսկ Ավետարանի հունարենն էլ չունի թարգմանության հետք: Արամերեն Ավետարանը արա-

գործն անհետացել է: Հունարեն տեքստը հին է, և հավանաբար պետք է դիտվի ավելի շուտ իբրև բնագիր հրատարակություն, քան արամեերենի թարգմանություն: Ավետարանը հրաշալի շփման մեջ է հուդայականության հետ, թեև աստիճանաբար անկախանում է նրանից: Այն լողում է մեսիական սպասման մթնոլորտում, չնայած լուրը նախատեսված է ամբողջ աշխարհի համար, պահպանում է աբրահամյան դաշինքի էությունը, որն ընդգծում է Աբրահամի ու նրա սերունդների առավելությունը՝ ավելացնելով, սակայն, «Ծննդոց»-ում պարունակվող խոստումը: Ավետարանի բովանդակությունը պարզորոշ ցույց է տալիս, որ այն հասցեագրված է հրեաներին կամ էլ, համեմայն դեպս, առաջին հերթին՝ հրեաներին: Եթե ընդունենք LOGIA-ների նախնական ժողովածուի գոյության վարկածը, ապա նույն հրեաների մեջ կարելի է տարբերել ընթերցողների երկու խումբ:

Գ. ՀԱՍՑԵԱՏԵՐԵՐԸ

Որևէ գրքի հասցեատերերը ընդունված է որոշել այն նպատակով, ինչ նպատակով գրվել է տվյալ գիրքը: Նկատի ունենալով այն մեծ հետաքրքրությունը, որ Մատթեոսը դարձնում է Հին Կտակարանի մեսիական կատարմանը, նա, անկասկած, հրեաներին համարել է իր հիմնական ընթերցողները: Նրանք պետք է որ եղած լինեին երկու տեսակ. ոմանք քրիստոնյաներ էին, իսկ մեծ մասը՝ հրեաներ: Հնարավոր է, որ այս երկու խմբերն առկա են եղել իր մտքում: Նրա գրվածքի նպատակն էր ամրապնդել առաջինների հավատքը, իսկ հետո էլ ավետարանել հրեաներին: Ցույց տալով, որ Հիսուսը Հին Կտակարանի մարգարեությունների կատարումն էր, նա ուզում է դիմել հրեաներին՝ պարզելով, որ նրա կյանքն ու միջնորդ գործունեությունը նրանց համար մեծ պարզև էին Աստծու կողմից: Միաժամանակ Մատթեոսը մտածել է նաև հեթանոսական ծագում ունեցող ընթերցողների մասին: Հեթանոսներին վկայակոչելը, որոնք թագավորություն մտնելու համար երբեմն - երբեմն գերապատվություն ունեն հրեաների նկատմամբ, և Ավետարանի ընդհանուր առմամբ համընդհանուր բնույթը ցույց են տալիս այս բանը: Պատահեց այնպես, որ առաջին դարի վերջին Մատթեոսի Ավետարանը դարձավ առավել հայտնի Եկեղեցիներում, որոնք մեծ մասամբ հեթանոսական էին: Նրա հինկտակարանային արմատներն ու համաշխարհային տեսիլքը, կատարվածի ու վարդապետության հավասարակշռությունը, տեքստի հաջող, խիստ կառուցվածքն ու յուրահատուկ հարմարումը՝ ծառայելու և՛ վարդապետության, և՛ հրապարակավ ընթերցանության համար, նպաստեցին այդ մեծ ժողովրդականությանը: Ժամանակի հետ հրեա ընթերցողները, որոնց նա նկատի ուներ, անհետացան, իսկ հեթանոս ընթերցողները, որոնք մասամբ միայն տեղ ունեին իր մտքում, դարձան իր գրվածքից հիմնական օգտվողները:

Բազմաթիվ են ներքին, ակնհայտ այն բաները, որոնք խոսում են նաև հրեաների օգտին: Այսպես, մշանակալիորեն բացակայում են հրեական սովորությունների բացատրությունները (7:3-4 և 15:1-2, հմմ. Մարկոս 14:12 և Դուկաս 22:7-ը Մատթեոսի 26:17-ի հետ):

Կարելի է նմանապես գտնել նաև չափազանց շատ մեջբերումներ ու ակնարկներ Հին Կտակարանում, որոնք կարող էին հասկացվել միայն Օրենքն ու Մարգարեներին ճանաչելու դեպքում:

Առաջին գլխի ծագումնաբանությունը հասնում է ընդհուպ մինչև Աբրահամին՝ հրեա ժողովրդի նախահորը, և Դավթին, որի սերունդը պետք է ընդմիջտ հաստատեր Աստծու իշխանությունը: Լեռան Քարոզի հաշվետվությունը Օրենքի ավետարանական մեկնաբանություն և հակադրություն է Հիսուսի վարդապետության և փարիսեցիների ուսմունքի մեջ:

Նրանք, ովքեր խոսում են արամերեն, ապրում են Պաղեստինում և արդեն հավատափոխ են եղել: Նրանք, ովքեր, լինելով հելլենիստ հրեաներ, չգիտեն եբրայերեն, մեծ մասամբ Պաղեստինի շրջապատում գտնվող երկրների հրեախոս սինագոգներում են (տես՝ որոշ բառերի թարգմանությունը, ինչպես, ասենք՝ EMMANUEL, GOLGOTHA, ELOI, LAMA SABACHTHANI):

Դ. ԱՏԵՂԾՄԱՆ ՏԱՐԵԹԻՎՆ ՈՒ ՎԱՅՐԸ

Նոր Կտակարանի մասնագետների միահամուռ կարծիքով, Մարկոսի Ավետարանը պետք է որ գրված լինի Մատթեոսի Ավետարանից առաջ՝ 65 և 70 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում, մի բան, որով էլ բացատրվում է այն փաստը, որ այս վերջինը կախված է առաջինից: Բայց ի՞նչ ժամանակաշրջան է ընկած այս երկու ավետարանների ստեղծման միջև: Մասնագետների կարծիքները տարբեր են: Ոմանք այն տեղավորում են մոտավորապես 70-ական թթ., մյուսները՝ մոտավորապես 80-ական թվականների, իսկ երրորդներն էլ ավելի ուշ՝ 90-ական թթ. և անգամ, անհավանական ձևով, երկրորդ դարի սկզբի հատվածում:

Մատթեոսի Ավետարանի ժողովրդականությունը թույլ է տալիս ենթադրել, որ այն, անշուշտ, շարադրվել է նախքան առաջին դարի վերջը: Նույնիսկ կարելի է առաջ քաշել այն վարկածը, որ ներկայիս տեսքով Ավետարանը չի գրվել 75 թվականից հետո: Ընդհակառակը: Ահա մեր փաստարկները այդ տարեթվի օգտին:

Քանի որ LOGIA-ներ կոչված գիրքը գրվել է արամերեն լեզվով, ապա կարելի է ենթադրել, որ այդ լեզուն գործածական էր հատկապես Պաղեստինում կամ էլ, հավանական է, նրա շրջակայքում: Անտիոքը հիշվում է որպես այդ գիրքը գրվելու հավանական վայր: Ավետարաններից կատարված քաղվածքները, որոնք կարելի է գտնել եկեղեցական հայրերի՝ Պապիասի, Իրինեոսի, Իգնասիոսի գրվածքներում, համապատասխանում են Մատթեոսի տեքստին և ցույց են տալիս, որ, հավանաբար, առաջին Ավետարանը նպաստավոր էր սիրիա-հրեական Եկեղեցու համար: Բացի այդ՝ Անտիոքի Եկեղեցին առաջինն էր, որ ուներ հեթանոս հավատափոխների համար նախատեսված ստեղծագործություն՝ հավատափոխներ, որոնք խոսում էին ինչպես արամերեն, այնպես էլ հունարեն: Այս վարկածն ամրապնդելու համար չդիմելով բացարձակ որևէ ապացույցի, իրավացիորեն կարելի է մտածել Անտիոքի՝ իբրև մեր Ավետարանի շարադրման վայրի մասին: Այստեղ միմյանց հանդիպում են հրեաներն ու հեթանոսները. քաղաքը կոսմոպոլիտ մեծ կենտրոն է՝ շատ մոտ հրեաների *Յայրե-նիքին*: Այն ունի ծաղկուն եկեղեցի, որը խաղացել է առաքելական առաջին կարգի դեր՝ հիմք ծառայելով Պողոսի ուղևորության համար: Ուստի, հեղինակի տեսակետից, Անտիոքը և Մատթեոսը սերտորեն կապված են միմյանց, և քաղաքը իրաշալիորեն ծառայում է հեղինակի մտադրությանը: Այսուամենայնիվ, սա ընդամենը վարկած է: Վայրի ու ստեղծման հարցն, այսպիսով, սերտորեն կապված է տարեթվի հետ: Մենք մտածում ենք, որ տրա-

մաքանական կլիներ տարեթիվը տեղավորել 70 թվականի՝ Երուսաղեմի ավերման տարեթվի մերձակայքում (տես՝ 24:16):

LOGIA-ների գիրքը հավանաբար գրվել է 66 թ. կամ ավելի շուտ՝ առաքյալների ցրման տարեթվին:

Ըստ Եվսեբիոսի՝ Ավետարանը գրվել է այն ժամանակ, երբ եբրայեցիներին քարոզելուց հետո Մատթեոսը որոշեց դիմել ուրիշներին՝ հեթանոսներին: Եվ այդ ժամանակ նա առաջինների ձեռքում թողեց գրավոր մի փաստաթուղթ: Մեզ համար բավականին դժվար է թվում շարադրման տարեթիվը տեղադրել Երուսաղեմի քրիստոնյաների ցրվելու տարեթվից առաջ (տես՝ Գործք 8:14): Չէ՞ որ տեղական Եկեղեցին կարիք չէր ունենա գրավոր Ավետարանի, քանի որ առաքյալներն ու աշակերտները ներկա էին պատասխանելու Յիսուսի առաքելությանը վերաբերող հարցերին և իրենց տրված գորությանը ուսուցանելու Ավետարանը:

Տարեթիվը 70 թվականից հետո տեղադրելը թվում է դժվար ընդունելի այն պատճառով, որ ոչ մի ակնարկ չի արվում քաղաքի կործանման մասին: Իրիներսը այն տեղադրում էր 60-68 թթ. մերձակայքում: Եթե ընդունենք այս տարեթիվը, ապա կընդունենք նաև, որ Ավետարանը սկզբնապես գրվել է արամերեն խոսող ոչ պաղեստինցիների համար, որոնք ոչ մի մուտք չունեին առաքյալների մոտ, և որոնց իմացությունը Քրիստոսի Կյանքի ու Միջնորդության մասին սերտորեն կախված էր գրավոր ինչ-որ տեքստից:

Ե. ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի հակադրություն մյուս երեք Ավետարանների՝ Մատթեոսի Ավետարանը ճշգրիտ ոչ մի ցուցում (ենթավերնագիր, առաջաբան կամ եզրակացություն) չի բովանդակում հեղինակի հետապնդած նպատակի մասին (համեմատել Մարկոս 1:1, Ղուկաս 1:1-4, Հովհաննես 20:30-31):

Այսուամենայնիվ, այս նպատակը քիչ թե շատ հստակորեն դրսևորվում է ընդհանուր այն տպավորությամբ, որն աչքի է զարնում:

Ոչ ավելի, քան Մարկոսի Ավետարանը, որի պլանին խստորեն հետևում է, առաջին Ավետարանը չի ձգտում շարադրել Յիսուսի հետևողական պատմությունը: Նա վերարտադրում է, երբեմն ամփոփ ձևով ներկայացնելով, երկրորդ Ավետարանի գլխավոր պատմությունները, սակայն փոխարենը էական տեղ է հատկացնում Յիսուսի վարդապետությանն ու քարոզին:

Ավելին, Մատթեոսը տալիս է որոշ թվով պատմություններ ու զրույցներ՝ կա՛մ աշակերտների, կա՛մ էլ թշնամիների հետ՝ Յիսուսի այս կամ այն վարդապետությունը պահպանելու ակնհայտ նպատակով, որը հաճախ էլ ավելի կարևոր զարգացում է ստանում, այսպիսիք են 11-13 կամ 19-20 գլուխներում բերված միջադեպերը, որոնց «ողջ հետաքրքրությունն այն փաստն է, որ Յիսուսին տալիս են վարդապետության առիթ, որն անմատչելի է «պատահար» հասկացությանը»¹:

Յիսուսի միջնորդության յուրաքանչյուր փաստ, յուրաքանչյուր գործողություն, միջադեպ, այս կամ այն ձևով, քիչ թե շատ սերտորեն կապվում են նրա քարոզին. դրա լուսաբա-

¹ Herbert Roux.

նունն ու հաստատունն են: Այսպես, Մատթեոսի պատմության կառուցվածքն անգամ նպաստում է Հիսուսի զորության վրա լույս սփռելուն. ծանոթագրությունը, որով Ավետարանիչը եզրափակում է Լեռան Քարոզը՝ «Նա սովորեցնում էր զորություն ունեցողի պես» (7:29), վեր է հանում նրա գործի իշխող մտահոգությունը՝ ցույց տալ, որ նա, ով խոսում է, այդ բանն անելու զորություն ունի: Երկնքի թագավորության քարոզն արվում է անծամբ Թագավորի կողմից: Նա դիմում է ամբոխին, աշակերտներին, թե դպիրներին ու փարիսեցիներին, միևնույն է, նրա խոսքը միշտ ձեռք է բերում անառարկելի գերիշխանության մույն բնույթը: Նա ներկայանում է որպես Օրենքի տեր, նախնիների ավանդույթի դատավոր, ավելի ուժեղ, քան դևերն ու հիվանդությունը, ավելի մեծ, քան Սողոմոնն ու տաճարը, մեղքին ու մահվանը հաղթող, որ միշտ դրսևորում է թագավորական իր իշխանությունը: Նրա խոսքն ու գործերը միասին վկայում են թագավորության գալուստը, որի իրողությունն ու առկայությունը անբաժան են նրա սեփական անձից²:

Մատթեոսի Ավետարանը շատ մեծ խնամքով կազմված գիրք է: Մենք նշել ենք, թե հեղինակն ինչպես է վերաբերվում բերված մանրամասներին, ինչպես է վկայություն տալիս և թե ինչպիսի ճշգրտությամբ է ներկայացնում իր պատմությունը: Կարելի է նշել նաև այն, թե Մատթեոսն ինչպիսի խնամքով է Քրիստոսի առաքելությունը տեղավորում հինգ քարոզների կամ քարոզների խմբի շուրջ: Մեկ անգամ հաշվի նստելով այս կառուցվածքի հետ՝ նկատում ենք այն ողջ ջանքը, որ հեղինակը թափում է իր գիրքը կազմելիս: Հիսուսի օգտին արված նրա ջատագովությունն ու կոչը՝ պատրաստվելու Ամուսնու գալստյանը, բաժանված ու կազմակերպված է: Մի ժամանակ գրողներն ավելի համաչափ ձևով էին կազմակերպում իրենց գրվածքները: Կարևոր է նշել այդ համաչափ բաժանումները, եթե ուզում ենք հասկանալ գրքի իմաստն ու նրա առանձնահատուկ լուրը:

Նշենք «Հայր մեր»-ի յոթ խնդրանքները, 13-րդ գլխի յոթ Առակները, 23-րդ գլխի յոթ անեծքները:

Էմանուելի (Աստված մեզ հետ) թեման հայտնվում է հենց սկզբից (1:23), ինչպես նաև՝ վերջում, երբ Քրիստոսը խոստանում է մինչև դարերի վերջը լինել յուրայինների հետ:

Ավետարանների հեղինակներն, այսպիսով, աստվածաբանական ամեն հետաքրքրությունից զուրկ, սովորական ժամանակակիցներ չէին, որոնք հաղորդում էին իրադարձություն իրադարձության հետևից, քարոզ քարոզի հետևից: Աստվածաշունչը չի գրվել ռոբոտների կողմից: Ավետարանները, ինչպես նաև աստվածաշնչյան Կանոնի յուրաքանչյուր գիրք գրվել են շատ մեծ խնամքով:

Այս Ավետարանի առանձնահատուկ գծերը ցույց են տալիս, որ հեղինակն ավելի քիչ է շեշտում անհատական կերպարները, քան մյուս երկու սինօպտիկները (Հովհաննես Մկրտիչ, Մարիամ Հիսուսի մայրը, Տասներկուսը, Կայիափան, Պիղատոսը, Սիմոն Կյուրենացին, Հովսեփ Արիմաթացին և այլ փոքր կերպարներ, որոնք դեր են խաղում պատմություններում, և բոլորն էլ երկրորդական են պատմության միջուկի համեմատ):

Հիսուսի կյանքի որոշ իրադարձություններ առանձնահատուկ են Մատթեոսի Ավետարանին: Հովսեփի տեսիլքը (1:20-24), Մոգերի այցը (2:1-12), փախուստը Եգիպտոս (2:13-15), անմեղների ջարդը (2:16), Պիղատոսի կնոջ երազը (27:19), Հուդայի մահը (27:3-10),

¹ Herbert Roux.

Հիսուսի խաչելության ժամանակ սրբերի հարությունը (27:32), Հիսուսի հարության մասին լռություն պահպանելու նպատակով հրեաների կողմից գնված հռոմեացի պահապանները (28:12-15), մկրտության կարգը (28:18-20):

Առակների շարքում որոմի, թաքնված գանձի, թանկարժեք մարգարիտի, ուռկանի, անխիղճ ծառայի, խաղողի այգու մշակների, երկու որդիների, քանքարների առակները հատուկ են Մատթեոսի Ավետարանին:

Միայն երեք հրաշքի համար նրան ենք պարտական՝ երկու կույրերի (9:27), համր դիվահարի (9:32-33), ձկան բերանի դրամի (17:24-27): Մատթեոսի կողմից հրաշքների պատմումը քվում է, թե արվում է ոչ թե պատմությունն առաջ տանելու (թեև այս փաստերի կրկնօրինակները հայտնվում են Մարկոսի և Դուկասի մոտ), այլ, ավելի շուտ, Հիսուսի մեսիական իշխանությունն ապացուցելու նպատակով: Մատթեոսի Ավետարանն ուսուցողական է իր շեշտով, որը նա դնում է ինչպես Հիսուսի վարդապետության, այնպես էլ նրա առաքելության այլ կողմերի վրա:

Այս հարցին կրկին կանդախտաբանաբար ավելի ուշ:

Ավետարանի մեջ ընդգծված է նրա առանձնահատկությունը կազմող կետերից նշենք հետևյալները.

1. Երկու Կտակարանների շարունակականությունը

Մենք ասել ենք, որ Մատթեոսն է շարունակականություն հաստատել Հին և Նոր Կտակարանների միջև: Սկզբունքորեն նա այդ բանն անում է՝ մեջբերումներ կատարելով Հին Կտակարանից և նրա մասին ակնարկներ անելով: Ի դեպ, այս իրողությունը նա վկայաբերում է շատ հաճախ՝ «Որպեսզի կատարվեն» արտահայտությամբ (1:23, 2:15, 17, 23, 3:3, 4:14-16, 8:17, 12:17-21, 13:35, 21:4, 26:56):

Այստեղ կարելի է գտնել 129 քաղվածք Հին Կտակարանից, որոնցից 53-ը մեջբերումներ են, իսկ 76-ը՝ ակնարկներ:

Դրանցից 25-ը վերցված են Հին Կտակարանի 39 գրքերից և ներկայացնում են նրա բոլոր մասերը՝ Օրենք, Մարգարեներ և Սաղմոսներ (Հնգամատյան, Ա. Սամուել, Ա. Թագավորաց, Բ. Թվոց, Եզրաս, Նեեմիա, Հոբ, Սաղմոսներ, Առակաց, Եսայի, Երեմիա, Եզեկիել, Դանիել, Օվսեա, Հովել, Ամովս, Հովման, Միքիա, Սոփոնիա, Ջաքարիա, Մաղաքիա):

Չհիշատակված 14 գրքերից 9-ը երկրորդական նշանակություն ունեն: Այս քաղվածքներից 89-ը արվել են Հիսուսի կողմից. 35-ը մեջբերումներ են, 54-ը՝ ակնարկներ, մեջբերումներից 18-ը և ակնարկներից 22-ը Ավետարանի պատմողական մասում են:

2. Պարտիկուլյարիզմ¹ և ունիվերսալիզմ

Գրվածքում կա երկու զուգահեռ շեշտ: Մեկը վերաբերում է այն տեղին, որ Իսրայելը զբաղեցնում է Աստծու ծրագրի մեջ, իսկ մյուսը՝ փրկչագործության նույն այս ծրագրի մեջ հեթանոսների ներառմանը: Այս ամենը Իսրայելի պարտիկուլյարիզմի և հեթանոսների ունիվերսալիզմի մասին է:

Տեղաբանությունը, որով Մատթեոսն սկսում է իր Ավետարանը, ցույց է տալիս, որ Հի-

¹ Աստվածաբանական ուսմունք, որի համաձայն Քրիստոսը մահացել է հանուն ընտրյալների փրկության:

սուսը եղել է Իսրայելի իսկական զավակ: Նա սերում է ազգի հայր Աբրահամից և Իսրայելի փառապանծ թագավոր Դավթից: Նա ուղարկվել է միայն Իսրայելի ազգի կորած ոչխարների մոտ (15:24), և հենց նրանց մոտ է ինքն ուղարկում իր աշակերտներին՝ քարոզելու և բուժելու: Նրա ապրելակերպը, հոգևոր կյանքը, հասարակական միջավայրն ու ամենամոտ ընկերները հրեաներ են: Միաժամանակ երևան է գալիս ունիվերսալիզմի ուժեղ հայտագիր: Իրականում դրա արմատները պարտիկուլյարիզմի մեջ են: Օրինակ, Հիսուսի հրեական ծագումը հաստատող ցեղաբանության մեջ ներառված են անգամ չորս կանայք, որոնք հրեական ծագում չունեն (Թամար, Ռախաբ, Հռութ և Բաթշեբա): Պետք է նաև նշել, որ, Մարիամից բացի, նրանք միակն են, որ հիշատակված են ցեղաբանության մեջ:

Բացի այդ՝ Արևելքի Մոզերը հեթանոսներ են, Եգիպտոսը՝ սուրբ ընտանիքի պատսպարման վայրը, նույնպես հեթանոսական է: Ամբողջ Ավետարանի երկայնքով քաղվածքներ ենք գտնում հեթանոսների մասին: Քանանացի մի կնոջ գովում են իր հավատքի համար (15:28), ինչպես նաև՝ հռոմեացի սպային (8:10): Հիսուսը օրհնություն կլինի հեթանոսների համար (12:18-21), և շատ-շատերը կգան Արևելքից ու Արևմուտքից՝ մտնելու Թագավորություն (8:11-12): Այլ հատվածներ ևս կան, որոնք ընդգծում են ունիվերսալիզմը, սակայն ամենից ավելի հայտնին 28:18-20 հատվածն է:

3. Ընդհատականություն երկու Կտակարանների միջև

Երկու այնպես, ինչպես ունիվերսալիզմն է զուգահեռ պարտիկուլյարիզմին, այնպես էլ ընդհատականությունը զուգահեռ է Հին և Նոր Կտակարանների շարունակականությանը: Ավետարանն ընդգծված ձևով շեշտում է այս երկու կողմերը: Հիսուսով ստեղծված նոր վիճակը կազմում է հնի անքակտելի մասը, որից սերվել է և, սակայն, նաև լրիվ առանձին է: «Դուք լսել եք, թե ինչ է ասվել հներից, ... բայց ես ձեզ ասում եմ» արտահայտությունը ոչ պակաս, քան վեց անգամ հանդիպում է Լեռան քարոզում: Հիսուսը շրջանցում է նաև հրեական օրենքը կամ հուդայական սովորույթները՝ հաստատելու մի նոր բարոյականություն՝ լիովին նոր հոգևոր խորությամբ (9:10-13, 9:14-17, 12:1-8, 15:1-20, 22:23-33): Օրենքը չի շրջանցվում կամ չի փոխվում, այլ ստանում է նոր նշանակություն: Ավետարանն, այսպիսով, ամրապնդվում է Իսրայելի կյանքում ու պատմության մեջ, բայց նրա պտուղը ողջ աշխարհի համար է:

4. Երկնքի Թագավորությունը

Ավետարանի ամենից ավելի ցայտուն կողմերից մեկը ԵՐԿՆՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆն արտահայտությունն է: Այն չունի այլ իմաստ, քան Աստծու Թագավորությունը, որ կարելի է գտնել մյուս սինոպտիկների մոտ: Պատճառը, որը Մատթեոսին ստիպում է օգտագործել այդ արտահայտությունը, հավանաբար այն է, որ հրեաները խորշում էին արտասանել Ուխտի Աստծու՝ *Եհովայի* անունը՝ փոխարենը դիմելով Ադոնայ՝ Տեր ձևին: Ինչ էլ որ լինի, թագավորության Ավետարանը ակնհայտ է դարձել: Առաջին գլխի ծագումնաբանությունը հետևում է Հուդայի թագավորական գծին: Հիսուսի ծննդի ժամանակ Հերովդեսից ունեցած վախը բացատրվում է այն գաղափարով, որ նա նորածին երեխայի մեջ տեսնում է հնարավոր ախոյանի: Հիսուսի՝ Երուսաղեմ մտնելը նույնպես շեշտում է նրա առաքելության թա-

գավորական կողմը (21:5-7): Վախճանաբանական քարոզում նա կանխատեսում է, որ մատե-
լու է իր փառքի գահին (25:31): Խաչի վրայի մակագրությունը նրան ներկայացնում է որ-
պես Յիսուս՝ հրեաների թագավոր (27:37):

5. Եկեղեցու Ավետարանը

Հաճախ են դիմում Մատթեոսի Ավետարանին՝ իբրև Եկեղեցու Ավետարանի: Ոչ միայն
այն բանի համար, որ Մատթեոսը միակն է, որ օգտագործել է «Եկեղեցի» բառը, այլև որ
առավել, քան մյուս Ավետարանները, այս Ավետարանը, թվում է, գրվել է՝ ելնելով ծնունդ
առնող եկեղեցական համայնքի առանձնահատուկ կարիքներից (16:18, 18:17): Այդ նա է
խոսում միսիոներական կոչի մասին (28:18-20):

Այն միակ Ավետարանն է, որի մկրտության մասին խոսում է Հոր, Որդու և Սուրբ Հոգու
անունից, ձևակերպում, որն այդ ժամանակից ի վեր թույլ է տալիս մտնել տեսանելի Եկեղե-
ցի: Անկասկած, այն ժամանակի ընթացքում, երբ առաջին քրիստոնյաները չունեին գրա-
վոր Ավետարան, Մատթեոսի այս ձևակերպումը լայնորեն օգտագործվեց եկեղեցական պա-
տարագի ժամանակ: Նախնական շրջանի Եկեղեցու դոկտորներն ու կատեխիզիստներն,
անկասկած, ստիպված են եղել իբրև ձևակերպում այն օգտագործել իրենց վարդապետու-
թյուններում: Ավետարանիչները՝ նույնպես: Ավետարանը մի քանի կանոններ է առաջադրում՝
լուծելու Եկեղեցու տարբեր անդամների միջև ի հայտ եկող խնդիրներն ու դժվարություննե-
րը (18:15-18): Հետևաբար, Եկեղեցու վրա իշխանություն է դրված՝ լուծելու իր ներսում ծա-
գած խնդիրները:

Եկեղեցու պաշտամունքը, ինչպես նաև քարոզչական վկայությունը, սրբագործվեց և
արդյունավետ դարձավ Քրիստոսի ներկայությամբ (18:20, 28:18-20): Այս ամենն, անշուշտ,
ցույց է տալիս, որ Ավետարանը գրվել է երիտասարդ և դեռևս թույլ Եկեղեցու հավատքն
ամրապնդելու նպատակով:

6. Վարդապետության Ավետարանը

Եիշտ այնպես, ինչպես Ավետարանը կարելի է անվանել Եկեղեցու, այն կարելի է որա-
կել նաև իբրև վարդապետության Ավետարան: Մենք դա հատուկ կոփտարկենք կառուց-
վածքին նվիրված ենթագլխում: Նրա նոր գլուխը նվիրված է բանավոր վարդապետության-
ընդմեջ: Լեռան Քարոզը (5-7), միսիոներական կոչը (10), վարդապետության առակները (13),
երկնքի թագավորության մեջ մեծության և թողության մասին քարոզը (18), ժամանակների
վախճանի մասին քարոզը (24-25):

Չպետք է, սակայն, մոռանալ, որ Յիսուսը ուսուցանել է ինչպես իր գործերով, այնպես էլ
խոսքերով: Նրա հնազանդ մկրտությունը, փորձությանը դիմելը, բուժումները, ձևապաշ-
տական մի կրոնի քննադատությունը, հակառակորդների՝ հատկապես փարիսեցիների դեմ
ցուցաբերած քաջությունը, համբերությունը, բարությունը, աղոթքի մեջ համառությունը,
հնազանդության սեփական օրինակը, դիմացկունությունը՝ ընդհուպ մինչև մահ. այս ամե-
նը, որ արդեն իսկ նախատեսված էր նրա իջնելով ու ծայրահեղ նվաստացուցիչ վիճակում
ծնվելով, անշուշտ, կազմում են վարդապետական որոշակի առաքելության մաս:

Աստծու կամքին հնազանդ նրա կյանքը բանավոր իր վարդապետության վրա դրված

ճշմարտության ու անկեղծության կնիք է: Նրա բարոյական կյանքի օրինակն, այսպիսով, հաստատում է նրա վարդապետությունը:

Այս ենթագլխում ներկայացնենք նաև Քրիստոսի այն առակների ցուցակը, որոնք կարելի է գտնել հիշյալ Ավետարանում:

Դրանք քառասունն են. թիվը վերցված է լայն իմաստով: Դրանցից 13-ը հատուկ են Մատթեոսին:

Երկրի աղը՝ 5:13

աշխարհի լույսը՝ 5:14-16

հակառակորդը՝ 5:25-26

անդամները, որոնք վիրավորում կամ վիճաբանության տեղիք են տալիս՝ 5:29-30

շյուղն ու գերանը՝ 7:1-5

շներ և խոզեր՝ 7:6

լայն ճանապարհն ու նեղ ճանապարհը՝ 7:13-14

լավ ծառը և վատ ծառը՝ 7:15-20

անմիտ կառուցողներն ու խելացի կառուցողները՝ 7:24-27

բժիշկն ու հիվանդը՝ 9:12-13

փեսան ու հարսը՝ 9:14-15

նոր կարկատան՝ հին զգեստի վրա՝ 9:16

նոր գինին ու հին տիկերը՝ 9:17

Թագավորությանը և Սատանային վերաբերող առակները՝ 12:24-28

ուժեղ մարդը՝ 12:29

լավ և վատ գանձը՝ 12:33-37

վերադարձի չար ոգին՝ 12:43-45

լավ սերմն ու որոմը՝ 13:24-30 և 36-43

մանանեխի հատիկը՝ 13:31-32

սերմացանն ու ցանվող հողը՝ 13:3-9 և 18-23

թխմորը՝ 13:33

թաքնված գանձը՝ 13:44

թանկարժեք մարգարիտը՝ 13:45-46

ձկնորսի ցանցը՝ 13:47

տնտեսն ու նրա գանձերը՝ 13:52

պղծության աղբյուրը՝ 15:11 և 15-20

կույրերին ուղեկցող կույրը՝ 15:14

կարմիր երկինքը՝ 16:2-3

մոլորված ոչխարը՝ 18:12-14

անխիղճ ծառան՝ 18:23-35

մշակներն այգում՝ 20:1-16

աշխատանքի կանչված երկու որդիները՝ 21:28-32

չար մշակները՝ 21:33-41

մերժված քարը՝ 21:42-44

թագավորի որդու ամուսնությունը՝ 22:1-14
ծաղկող թզենին՝ 24:32
տանտերն ու գողը՝ 24:43-44
հավատարիմ ու անհավատարիմ ծառաները՝ 24:45-51
տասը կույսերը՝ 25:1-13
քանքարները՝ 25:14-30

7. Հրաշքները Մատթեոսի Ավետարանում

բորոտների մաքրումը՝ 8:1-4
հարյուրապետի ծառայի բուժումը՝ 8:5-13
Պետրոսի զոքանչի բուժումը՝ 8:14-17
հանդարտված փոթորիկը՝ 8:23-27
գերդեսացիների երկրում մի դիվահարի բուժումը՝ 8:28-34
անդամալուծի բուժումը՝ 9:1-8
արյունահոսությամբ տառապող կնոջ բուժումը՝ 9:20-22
Հայրոսի աղջկա հարությունը՝ 9:18-19 և 23-26
երկու կույրերի բուժումը՝ 9:27-31
համր դիվահարի բուժումը՝ 9:32-33
կույր և համր դիվահարի բուժումը՝ 12:22
հացի բազմացումը՝ 14:15-21
ծովի վրայով քայլելը՝ 14:25-33
սիրիա - փյունիկեցի կնոջ աղջկա բուժումը՝ 15:21-28
հացի երկրորդ բազմացումը (մոտ 4000 կերակրված)՝ 15:32-38
լուսնոտ երեխայի բուժումը՝ 17:14-18
դրամի հայտնաբերումը՝ 17:24-27
կույրի բուժումը Երիքովի մոտ՝ 20:29-34
անպտուղ դարձած թզենին՝ 21:18-22

Այս հրաշքներից երեքը հատուկ են Մատթեոսին. տեսողությունը վերականգնող երկու կույրերը, համր դիվահարի բուժումը և դրամի հայտնաբերումը: Հրաշքները կարելի է բաժանել այսպես.

- Ա) Մարդկային բնագավառ՝ ութ
- Բ) Տիեզերական բնագավառ՝ վեց
- Գ) Մտավոր բնագավառ՝ վեց

Ձ. ԱՎԵՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Նոր Կտակարանում չկա որևէ այլ գիրք, որը զուտ գրական առումով և կառուցվածքով լինի այնպես խելամիտ կազմված, ինչպիսին Մատթեոսի Ավետարանն է: Այն սկսվում է կարճ ներածությամբ, որին հետևում է Հիսուսի առաքելության մասին պատմող կենտրոնական

մեծ մասը (3-25): Այս բաժինն իրենից ներկայացնում է փոքրիկ ենթաբաժիններ, որոնք հերթով հայտնվում են իբրև պատմական կամ ուսուցողական նյութեր: Դրանք մենք կկոչենք իրադարձությունների ու վարդապետության բաժիններ:

Գրվածքն ավարտվում է Հիսուս Քրիստոսի Տանջանքների, Մահվան ու Հարության մասին պատմությամբ (26-28):

Ահա այդ կառուցվածքը.

1. Ներածություն 1:1 – 2:23

Հիսուսի ծագումնաբանությունն ու ծնունդը
 Մոգերի այցը
 Հերովդես Մեծ թագավորի թշնամությունը
 Փախուստը Եգիպտոս
 Անմեղների կոտորածը
 Վերադարձը Նազարեթ

2. Հասարակական գործունեություն

Իրադարձություններ	3-4	Վարդապետություն
Մկրտչի կանխասացությունը		
Փորձություն, կյանքը Գալիլիայում		
Քարոզչության սկիզբը, առաջին աշակերտներին կանչելը, բուժումներ	8:1-9:34	5, 6, 7 Լեռան Քարոզը
Հիսուսի գործերը	11-12	9:35-10:42 Աշակերտների գործերը
Մկրտչի հարցաքննությունը		
Երեք քաղաքների դատապարտումը բանավեճ	14-17	13. Թագավորության առակը
Մկրտչի մահը		
Հրաշքներ, Պետրոսի խոստովանությունը		
Տանջանքների հայտնումը: Պայծառակերպություն		
Դրամ հարկի դիմաց (և հրաշքը)	18.	Ուսմունք հնազանդության մասին 19-23
Մեկնումը Գալիլիայից		
Բանավեճ, հրաշքներ, զանազան վարդապետություններ, Տանջանքների նոր հայտարարումը		
Մուտքը Երուսաղեմ		
Դպիրների ու Փարիսեցիների դեմ		24-25 վախճանաբանական մարգարեություններ

3. Տանջանքներ և հարություն

26, 27, 28

Վերջին ընթրիք, Մատնություն, Դատավարություն, Խաչելություն, Հարություն, Միսիոներական կոչ:

Ահա մի քանի դիտանկյուն, որոնք կարող են բացատրել այս տասը բաժինների կառուցվածքը:

1) Վարդապետության յուրաքանչյուր բաժին խնամքով կապվում է նախորդող իրադարձություններին առնչվող մի նախադասությամբ: Անցման նման օրինակ կարելի է գտնել 14-17 գլուխների միջև ընկած բաժնում, որին հետևում են 18-րդ գլխի բաժինն ու 19-րդ գլխի իրադարձությունների սկիզբն ազդարարող անցումը: 18-րդ գլուխը սկսվում է նախորդ բաժնի իրադարձությունների վերաբերյալ արտասանված հետևյալ բառերով. «Այն ժամանակ», մի բան, որը ճանապարհ է բացում հաջորդող խոսքի համար: Այնուհետև, 19-րդ գլխում. «Երբ Հիսուսն ավարտեց այս խոսքերը», մի բան, որով նշվում է անցումը հաջորդ գլխի իրադարձություններին:

2) 8-9:34 հատվածն ընդգրկող բաժին – իրադարձություններում տեղ են գտել երեք խումբ կազմող իրաչքեր. 8:1-17, 8:23-9:8 և 9:18-34:

14:1 – ից մինչև 17:27 բաժին – իրադարձություններում կա իրաչքերի երեք այլ խումբ ևս (14:13-26, 15:21-39 և 17:1-27):

Կարդալով Ավետարանը՝ պետք է հիշել, որ Ավետարանի, ինչպես նաև Աստվածաշնչի բոլոր գրքերի՝ գլուխների բաժանման ներկայիս փաստը բնագիր տեքստինը չէ: Հետևաբար, Ավետարանի կառուցվածքն ըմբռնելու համար չպետք է հաշվի առնել այդ բաժանումը: Յուրաքանչյուր բաժնում իրաչքերի տարբեր խմբերն իրարից բաժանվում են անցումներով, որոնք հիմնականում օգտագործվում են ուսուցման նպատակով: 13-րդ գլխի բաժին – վարդապետությունում առակները թվով 7-ն են, որը խորհրդանիշ թիվ է ամբողջ Աստվածաշնչում:

3) Վարդապետության հինգ բաժիններից չորսում քննարկվում է Հիսուսի մասնավոր գործունեությունն աշակերտների մեջ: Միայն Լեռան քարոզն է ժողովրդական: 13-րդ գլխի առակներն ասվել են մասամբ հրապարակավ, մասամբ էլ մասնավոր ձևով: Նշենք, սակայն, որ դրանց բացատրությունը տրվել է միայն աշակերտներին: Փոխարենը, բաժին – իրադարձություններում քննարկվում են գլխավորապես Հիսուսի հրապարակային քարոզներն ու գործերը, թեև տարբեր հատվածներ առնչվում են աշակերտներին, ինչպես, օրինակ՝ 4:18-22, 14:22-33, 16:5-28, 19:25-30:

Լեռան քարոզի բաժինը (5-7) շատ առանձնահատուկ է ոչ միայն Ավետարանում, այլև ամբողջ Աստվածաշնչում: Աստվածաշնչական ոչ մի այլ բաժին բարոյական ու հոգևոր առումով չի հասնում նման բարձրության: Կնշենք նրան հատուկ կառուցվածքն ու մեծ շահ կստանանք, եթե հաշվի առնենք հետևյալը:

Ըստ A. HUNTER-ի՝ ահա հետևողական մոուլտիվներ.

ա) Կյանքի ծրագրի առաջին մասը, որ Հիսուսն առաջարկում է թագավորությունում, Երանելի այդ կյանքի նկարագրությունն է (5:1-12): Այդ կյանքի արդյունքը կլինի շրջակա կյանքի հարստացումը, ինչպես աղի և լույսի դեպքում է (5:13-16):

բ) Երանելի այս կյանքը կապվում է այն կյանքին, որ հրեաները վարում էին օրենքի

ներքո, բայց այս կյանքը գերազանցում է նրան: Հիսուսը գալիս է ոչ թե խարխուլելու, այլ կատարելու օրենքը (5:17-20):

Վեց պարբերություն սկսվում է հայտնի «Դուք լսել եք այն, ինչ ասվել է ... բայց ես ձեզ ասում եմ» (5:41-48) խոսքերով:

Քրիստոսով Օրենքն իր կիրառությունն է գտնում Թագավորության մեջ:

գ) Ավելի կարճ մի բաժնում (6:1-18) ուշադրության կենտրոնում պաշտամունքն է: Այն հակադրվում է ընթացիկ արարողությանը՝ հոգևոր պահանջներով: Հիսուսը շոշափում է գոհաբերության, աղոթքի և պասի հարցերը:

դ) Չորրորդ և վերջին բաժնում (6:19-23) խոսվում է թագավորության մեջ կյանքի զարգացման ու իրականացման մասին: Դա արվում է երկու ձևով: Առաջինը (6:19-34) բացառապես զբաղվում է հոգևոր կյանքի անձնական զարգացմամբ: Այն չի զբաղվում հարևանով: Այստեղ ընդգծվում են մարդու՝ Աստծու և իր հետ ունեցած հարաբերությունները: Երկրորդին (7:1-23) զբաղեցնում է հոգևոր այնպիսի զարգացում, որը ձեռք է բերվում ուրիշի հետ ունեցած հարաբերությամբ:

ե) Քարոզը եզրափակվում է այն երկու տան հայտնի առակով (7:24-28), որոնցից մեկը կառուցվել է ավազի վրա, իսկ մյուսը՝ ժայռի:

Է. ԼՈՒՐԸ

Մատթեոսի Ավետարանը գրվել է՝ ցույց տալու, որ Հիսուսը մեսիական մարգարեության կատարումն է, և որ նա ծավալում ու բացատրում է Հին Կտակարանի մարգարեություններում սկսված Հայտնությունը: Մեսիա բառը իրեական ծագում ունի (Meschiah) և նշանակում է *Օծված*: Հին Իսրայելում քահանաներն օծվում էին՝ հոգևորական իրենց գործը կամ միջնորդությունը ստանձնելու համար: Երբեմն մարգարեները նույնպես օծվել են: Սակայն հիմնականում օծվող անձնավորությունը պետք է ունենար այնպիսի հատկանիշներ, որ դառնար *թագավոր*: Իսրայելի թագավորներից ամենամեծն ու ամենահռչակավորը՝ Դավիթը, դարձավ գալիք Մեսիայի խորհրդանիշը, տիպը կամ կերպարը: Մատթեոսը Հիսուսի մասին խոսում է որպես Դավթի, Աբրահամի որդի: Ավելի ազնիվ սերում հնարավոր չէր պատկերացնել: Հիսուսը ծնվել է Բեթղեհեմում՝ Դավթի քաղաքում: Կույրերը նրան ողջունեցին որպես Դավթի որդի: Նրա բուժումները ժողովրդի մեջ հարց առաջացրին, թե նա արդյոք Դավթի որդին չէ՞ (12:23): Քանանացի մի կին նրան այդպիսին համարեց, իսկ ժողովուրդը Երուսաղեմ նրա մուտքը դիմավորեց բացականչություններով, դիմավորեց որպես Դավթի որդի, որը գալիս է Տիրոջ անունից: Մինչդեռ թշնամիները ծաղրեցին իբրև թագավոր ներկայանալու նրա հավակնությունը:

Պիղատոսը հրամայեց խաչի վրա անել հետևյալ մակագրությունը. «Նա իրեաների թագավորն է»: Եվ այսպես, Հիսուսի Մեսիա լինելու մասին Մատթեոսի տված վկայությունը Հին Կտակարանի հենց ենթատեքստում է: Հիսուսն իրականացրեց այդ գործառնությունը՝ դրան տալով ավելի լայն ու հարուստ իմաստ, քան Հին Կտակարանի վարդապետությունն է: Լեռան քարոզը թագավորական այդ գործի ամենաբարձր օրինակն է: Հին Կտակարանի բազմաթիվ մեջբերումների ու ակնարկների մեկ քառորդը կապված է, իբրև Մեսիա, նրա

գործունեությանը: Այդ գործունեությունն այնքան հիմնավոր էր, որ Հիսուսը ստանում է նաև ՔՐԻՍՏՈՍ հունական կոչումը, որը նույնպես նշանակում է օծված: Դա Պետրոսի խոստովանության հենց կենտրոնում է. «Դու Քրիստոսն ես՝ Կենդանի Աստծու Որդին» (16:16): Մեսիական մարգարեությունները ներառում էին հիմնական տարրեր: Մեսիան պետք է լիներ հրեա, լիովին նման իր ժողովրդին: Նա պետք է նրան օրհներ հոգևոր նոր վերածննդով, որը պետք է տարածվեր հրեաներից էլ այն կողմ և փրկություն բերեր աշխարհին: Հրեաների հայր Աբրահամը կանչվել էր այն բանի համար, որպեսզի նրա միջոցով երկրի բոլոր ազգերը օրհնություն ստանային: Ավետարանի համընդհանուր ընդգրկման թեման, այսպիսով, շատ ակնհայտ է և կազմում է Հին Կտակարանի կատարման էական մասերից մեկը՝ հասնելով Միսիոներական կոչին:

Herbert Roux-ի հետ մեկտեղ կարծում ենք, որ *Աստծու Թագավորություն* արտահայտությունը, որը հանդիպում է միայն Մատթեոսի Ավետարանում (4:23 և 24:14), միակն է, որը ճշգրտորեն հետևում է Հիսուսի քարոզին, այնպես, ինչպես դա հաստատել ու պահպանել է վաղ շրջանի եկեղեցին: Բայց Հիսուսի՝ Մատթեոսի կողմից բերված քարոզներն, իրոք, հաստատապես վերաբերում են Երկնքի թագավորությանը: Նոր Կտակարանի և ոչ մի մասում չենք հանդիպում այս արտահայտության որևէ սահմանում: Թվում է, թե Հիսուսի ունկնդիրները, ինչպես նաև՝ Սկրտչինը, կարիք չունեին այս արտահայտության բացատրությանը, և որ Հիսուսին ժամանակակից միջավայրը վարժվել էր մարգարեների լեզվից փոխառված այդ երևույթին: Եվ, սակայն, ողջ Ավետարանի երկայնքով մի տեսակ երկիմաստություն է թևածում թագավորության այս իրողության վրա: Հիսուսը դրա մասին խոսում է իբրև անմատչելի, սակայն հայտնված առեղծվածի մասին, որպես նոր աշխարհի (որը գալիս է) և, միաժամանակ, անմիջականորեն առկա իրականության: Ավելին, Թագավորության գալստյան բարոյական ու հոգևոր բոլոր հետևանքները, կանչը, որ նրա հայտարարումն իրենից ներկայացնում է և այնտեղ մտնելու համար պահպանվող պայմաններն անբաժան են Քրիստոսի անծից և աշխարհում մարդու կերպարանքով նրա ներկայությունից: Այն ամենը, ինչ նա ուսուցանում է Երկնքի Թագավորության վերաբերյալ, միշտ առնչվում է գլխավոր իրադարձությանը, դեպք, որը կողմնորոշում է նրա գործունեությունը. Խաչի վրա մահը, որը նա ներկայացնում է իբրև Աստծու արդարության անհրաժեշտ կատարում: Վերլուծելով Հիսուսի՝ Մատթեոսի կողմից ներկայացված քարոզները՝ կնկատենք, որ նրանցից յուրաքանչյուրում սերտ կապ կա քարոզած թագավորության և այն փրկության իրականացման միջև, որի հեղինակն է: Ահա թե ինչու մեզ թվացել է, թե Ավետարանին այդքան հատուկ Երկնքի Թագավորություն հասկացությունը կարող էր դիտվել իբրև այնպիսին, որը կամուրջ է հաստատում Հիսուսի քարոզած և «Թագավորություն» բառով սահմանված Ավետիսի ու այն Ավետիսի միջև, որը կքարոզվի իր մասին, այսինքն, որ նա խոստացված Մեսիան է, ում մահն ու հարությունը սրբացնում են թագավորությունը¹:

Այս լուրը զարգանում է երկու փուլով: Առաջինը, որը վերաբերում է Թագավորության քարոզմանը, սկսվում է 4:12 հատվածից և շարունակվում է մինչև 16:20: 4:17 հատվածում բաժնի թեման տրված է հետևյալ հայտարարությամբ. «Այդ ժամանակվանից Հիսուսը սկսում է քարոզել ու ասել. «Չղջացե՛ք, քանզի մոտ է Երկնքի Թագավորությունը»»:

¹ In «L'Évangile du Royaume», p. 16, Labor et Fides.

Երկրորդ փուլն սկսվում է 16:21 հատվածից և շարունակվում է մինչև Ավետարանի վերջը: Թեման հայտնի է դառնում առաջին իսկ տողից. «Այդ ժամանակվանից Հիսուսը սկսեց ցույց տալ իր աշակերտներին, որ հարկավոր էր գնալ Երուսաղեմ, շատ տառապանքներ կրել հներից...»: Դա նշանակում է, որ Ավետարանի այս երկու թեմաները կապ չունեն իրար հետ: Հայտարարված թագավորությունն իրականացվում է թագավորի տանջանքներով ու մահով: Լինելով ուսուցողական, երբեմն էլ բանավիճային՝ Մատթեոսի Ավետարանը նաև Միսիոներական է: Այն դիմում է ինչպես հրեաներին, այնպես էլ հեթանոսներին՝ թե՛ առաջիններին և թե՛ մյուսներին խնդրելու, որպեսզի նրանք դիրքորոշվեն ընդունեն՝ կա՛մ հետևել Քրիստոսին և նրան խոստովանել, կա՛մ էլ մերժել Թագավորին և դրանով իսկ կորցնել սեփական կյանքը:

Գ Լ ՈՒ Խ 16

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

Ա. ՀԵՂԻՆԱԿԸ

Կանոնական երկրորդ Ավետարանի հեղինակ Հովհաննես – Մարկոսը (Հովհաննես՝ հրեական և Մարկոս՝ հռոմեական անուն), թվում է, եղել է Երուսաղեմի քրիստոնյա: Նրա անունը չի հիշատակվում չորս Ավետարաններում, բայց բազմիցս հանդիպում է «Գործք Առաքելոց»-ում և Պողոսի ու Պետրոսի նամակների մի քանի հատվածներում: Նրա կենսագրության մեծ մասը հնարավոր է վերականգնել՝ հենվելով ինչպես աստվածաշնչյան տվյալների, այնպես էլ բանավոր ավանդույթի վրա: Առաջին անգամ նրան հանդիպում ենք մոտավորապես 41 և 44 թթ. մոտերքում, երբ Հուդայի երկրում իշխում է Հերովդես Ագրիպպասը: Նա որդին է ոմն Մարիամի, որի Երուսաղեմի տունը դարձել էր առաջին քրիստոնյաների հավաքատեղին: Հնարավոր է, որ մայրն ու որդին հավատքի են եկել Պետրոսի քարոզով (տես՝ Գործք 12 և Ա. Պետրոս 5:13): Նոր Կտակարանի մասնագետների մեծ մասի կարծիքով, մեր Ավետարանի 14:51-52 հատվածի՝ մերկ վիճակում փախչող երիտասարդի մասին պատմող դիպվածում խոսքը, հավանաբար, Հովհաննես–Մարկոսի մասին է:

Ելնելով այս միջադեպից, որոշ հավանականությամբ, կարելի է հաստատել հետևյալ ժամանակագրությունը:

30 թվականին մոտ Մարկոսը մասնակցում է Գեթսեմանիի տեսարանին: 45 թ. նա ուղեկցում է Պողոսին ու Բառնաբասին՝ քարոզչական առաջին ճանապարհորդության ժամանակ: Այդ ժամանակ նա մոտավորապես 30 տարեկան է (տես՝ Գործք 13):

Նա պետք է, որ մոտ տասը տարով փոքր լինի երկու քարոզիչներից. հավանաբար 15 կամ 20 տարեկան էր խաչելության պահին: Պետրոսին ազատելու նպատակով կազմակերպված աղոթքի հավաքույթը տեղի ունեցավ նրա տանը, որը Երուսաղեմի քրիստոնյաների

համար ծառայում էր իբրև գլխավոր շտաբ: Հրաշքով ազատվելուց հետո Պետրոսը կվերադառնա այստեղ: Գուցե վերնատունը ևս, որտեղ Քրիստոսը վերջին անգամ կընթրի, գտնվում էր Մարկոսի տանը: Աշակերտները, հավանաբար, այստեղ էին հավաքվել Հոգեգալուստի առավոտյան՝ Հոգու բխման պահին: Երևում է, որ Մարկոսն այն մարդկանցից է, ովքեր շրջապատում են քրիստոնեության ամենաառաջին ժամվա առաջնորդներին: Նրա ընտանիքն ունևոր է, քանի որ մայրն ունի ծառաներ: Բառնաբասը նրա զարմիկն է, նա նույնպես ունևոր էր և, համաձայն «Գործք»-ի 4:37 հատվածի վկայության, մեծ սեփականություն ուներ: Անկասկած, թե՛ մեկը և թե՛ մյուսը ծագումով Կիպրոսից էին, որտեղից եկել էր Բառնաբասը:

Շատ հավանական է, որ երիտասարդ Մարկոսը դաստիարակվել է կիրթ և միևնույն ժամանակ բարեպաշտ միջավայրում: Գործունեության մեջ նրան մտցրել է Բառնաբասը՝ Պողոսի ուղեկցությամբ Երուսաղեմ այցելելուց հետո (Գործք 11:30):

Քարոզչական առաջին ճանապարհորդության ժամանակ երիտասարդ Մարկոսը երկու ավագներին կծառայի իբրև օգնական: Նրանց հետ մնաց Կիպրոսում, բայց երբ ավագները թողեցին կղզին՝ վերադառնալու Փոքր Ասիա, Մարկոսը չուղեկցեց նրանց, այլ վերադարձավ Երուսաղեմ:

Դրա պատճառը հայտնի չէ: Կարծիքներ եղան, որ նրան, հավանաբար, չի հետաքրքրել առաքելությունը հեթանոսների մեջ: Բայց, եթե դա այդպես է, ինչո՞ւ գրել մի գործ, որը նախատեսված էր հենց հեթանոսների և, մասնավորապես, հռոմեացի ընթերցողների համար:

Լուրջ անհամաձայնություն առաջացնելով Պողոսի ու Բառնաբասի միջև՝ Մարկոսն անհետանում է Նոր Կտակարանի պատմությունից և կրկին հայտնվում միայն տասը տարի հետո: 52 թվականին՝ Երուսաղեմի տիեզերաժողովից հետո, Բառնաբասի հետ նա վերադառնում է Անտիոք: Քանի որ Պողոսը հրաժարվում է նրան տանել իր հետ քարոզչական երկրորդ ուղևորության (Գործք 15:36-39), Մարկոսը կգնա հիմնելու Եգիպտոսի Եկեղեցին (համաձայն Եվսեբիոսի և Հերոնիմոսի վկայության), մի բան, որը, թվում է, հաստատվում է Հռոմեացիներին ուղղված տեքստի 15:18-23 հատվածով:

Պողոսը մոռացե՞լ էր արդյոք Եգիպտոսի և այնտեղ հաստատված հրեական համայնքի կարևորության մասին:

54-61 թթ. Մարկոսը Պետրոսի օգնականն է: Նա առաքյալին հետևում է մինչև Անտիոք (Գաղատացիներին 2:11), նրա հետ այցելում է Փոքր Ասիայի Եկեղեցիները (Ա. Պետրոս 5:13): 62-63 թթ. Պողոսի հետ աշխատում է Հռոմում (Կողոսացիներին 4:10, Փիլիմոնին 24):

Պարզ է, որ հին վեճը ցրվել էր, և որ հեթանոսների մեծ առաքյալն իր երիտասարդ գործընկերոջը երաշխավորում է աշխատել այդ քաղաքի Եկեղեցիներում: Տիմոթեոսին ուղղված երկրորդ թղթում Պողոսը նրան օգտակար է համարում միջնորդ գործունեության համար: 63 թ. Մարկոսը վերադառնում է Փոքր Ասիա (Կողոսացիներին 4:10): 64 թ. գտնվում է Հռոմում, որտեղ գրում է իր Ավետարանը և, ըստ Եկեղեցական Հայրերի, վերադառնում է Եգիպտոս, որտեղ էլ շարունակում ու վերահսկում է սկսած գործը: Անորոշ ժամանակ Եգիպտոսում մնալուց հետո հավանաբար մահացել է Ալեքսանդրիայում՝ հուզումներից մեկի ժամանակ: Եթե անգամ Մարկոսն անձնապես մեծ դեր չի խաղացել, այնուամենայնիվ օղակել է քարոզչական երեք ոլորտները՝ Ասիա (Պետրոս), Եվրոպա (Պողոս), Աֆրիկա (Բառնաբաս):

Պետրոսն իր առաջին թղթի 5:13 տողի համաձայն՝ նրան համարում է իր «որդին», մի բան, որը ցույց է տալիս այդ առաքյալի հետ խիստ կախյալ հարաբերությունը և որով էլ բացատրվում է նաև նրա Ավետարանի պետրոսյան խիստ որոշակի հնչողությունը:

Բ. ՎԱԿԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս ենթազխում հիմնականում կհետևենք Gunther Dehn-ի՝ Մարկոսի Ավետարանին նվիրված մեկնության առաջաբանում (LE FILS DE DIEU, LABOR ET FIDES) տեղ գտած եզրակացություններին:

Երկրորդ Ավետարանի հեղինակի մասին ամենահին տեղեկությունները տալիս է Եվսեբիոսը՝ իր «Եկեղեցու պատմության» մեջ: Նա վկայակոչում է վաղ քրիստոնեության շրջանի գրող Պապիաս Յերապոլիսցուն, որը Պոլիկարպոսի ժամանակակիցն է և մահացել է 156 թ.: «Տիրոջ քարոզների մեկնություն» վերնագիրը կրող իր գրքում, որը, դժբախտաբար, չի պահպանվում, Պապիասը, իբրև հեղինակություն նշում է «պրեսբիտեր» Յովհաննես Եփեսացուն, որն ապրել է մինչև Տրայանոսի դարաշրջանը (98-117) և որին, թվում է, անձնապես ճանաչել է: Նա նրանից փոխ է առնում այս բառերը՝ Ավետարանչի մասին. «Մարկոսը՝ Պետրոսի մեկնիչը, ճշգրտորեն գրառել է Տիրոջ խոսքերի ու գործերի մասին բոլոր իր հուշերը: Սակայն նա չի հետևել փաստերի հաջորդական կարգին: Իրոք, նա ո՛չ էլսել, ո՛չ էլ հետևել է Տիրոջը, այլ, ավելի ուշ, ինչպես ասացի, ուղեկցել է Պետրոսին, որն ուսուցանում էր՝ ելնելով կարիքներից, առանց Տիրոջ խոսքերին հետևողական գրավոր տեսք հաղորդելու ցանկության»: Փաստերն, այսպիսով, պարզորոշ, ամփոփ ներկայացված են: Պետրոսը հայտարարում է Ավետարանը, այսինքն՝ խաչվածի ու Հարություն առածի լուրը. իր քարոզչությունը նա լրացնում է հանգամանքների բերումով՝ այն լուսաբանելով Հիսուսի Վարդապետությունից ու կյանքից փոխ առած օրինակներով ու իրադարձություններով: Դեռևս չէր զգացվում հետևողական կենսագրության կարիքը: Ուղեկցելով Պետրոսին՝ Մարկոսը հաճախ է էլսել նրա պատմածները և հետագայում դրանք օգտագործել իր Ավետարանի համար: Ավելին ասել հնարավոր չէ, քանի որ ակնհայտ է, որ Ավետարանը չի վկայակոչում միայն Պետրոսի պատմածները: Պապիասի տեքստը ցույց է տալիս, որ վաղ շրջանի քրիստոնեությունը պարզորոշ ձևով արդեն ընդունել էր երկրորդ Ավետարանչի առանձնահատուկ ոճը: Նա նաև հասկացել էր, որ Մարկոսն ինքը ականատես չէր, և որ նրա գրվածքն ընդամենը ժամանակագրական անկատար կապ է:

Պապիասի հիշատակած Մարկոսն, անկասկած, Յովհաննես – Մարկոսն է, որին Նոր Կտակարանը ներկայացնում է շատ առանձնահատուկ ցայտունությամբ: Ավելի նոր շրջանի մի քանի հեղինակներ ճշգրտումներ են մտցրել և պարզաբանել որոշ հարցեր՝ առանց, այսուհանդերձ, կարևոր որևէ բան ավելացնելու այս վկայությանը: Մարկոսի Ավետարանի հակամարկիոնյան առաջաբանում, որը թվագրվում է մոտավորապես 170 թվականով, ավելացվում է, որ հեղինակն իր Ավետարանը կազմել է Իտալիայի շրջաններում՝ Պետրոսի մահվանից հետո: Դա շատ հնարավոր է, գոնե՝ այն առումով, ինչը վերաբերում է մեզ հասած շարադրանքին: Այնտեղ գտնում ենք, օրինակ, բացատրություններ հրեական ծիսակատարությունների մասին, որոնք Պաղեստինում ավելորդ կլինեին

(7:3), իսկ լատիներեն բառերն ու արտահայտությունները, որոնք սփռված են Մարկոսի Ավետարանի հունարեն տեքստում, կարող են հաստատել այս վարկածը: Բացի արտաքին ապացույցներից՝ պետք է հաշվի առնել նաև Հուստինոս Վկայի՝ Պետրոսին վկայակոչելու փաստը (Երկխոսություն 106), որը, հավանաբար, վերաբերում է Մարկոսին, քանի որ մեջբերված խոսքերը միայն Մարկոսի մոտ են: Նույն ձևով Իրինեոսը համաձայն է հակամարկիոնյան առաջաբանին, ըստ որի Ավետարանը գրվել է Պետրոսի մահվանից հետո: Դեռ ավելին, կան նաև ներքին ապացույցներ: Օրինակ, Մարկոսի Ավետարանի հոգնակի թվի երրորդ դեմքը (հավանաբար՝ վերադարձնելով Պետրոսի *մենք*-ը) մյուս Ավետարաններում փոխարինված է *ճա*-ով, Ավետարաններ, որոնց հեղինակները մտածում էին միայն Տիրոջ մասին:

Երբ հին հեղինակներն ասում են, որ Մարկոսը Պետրոսի մեկնիչն էր, ապա պետք չէ այս բառը զրկել նրա նախնական թարգմանիչ իմաստից: Չէ՞ որ Մարկոսի Ավետարանի հունարեն բազմաթիվ հատվածներում զգացվում են արամեերենի նշաններ: Հնագույն ավանդույթները Ավետարանիչ Մարկոսին նույնացրել են Գործք 12:12 հատվածի Հովհաննես – Մարկոսի հետ, իսկ ավելի ուշ Նոր Կտակարանում ոչինչ չի հակասում ավանդույթին: Ավետարանը Պետրոսի հետ կապելու ավանդույթը բերվում է նաև այլ հեղինակների կողմից՝ այդ բանը շեշտելու միտումով: Կղեմես Ալեքսանդրացու կարծիքով, օրինակ, Ավետարանը գրվել է Պետրոսի կյանքի ընթացքում, թեև մեկ այլ տեղ նա ասում է, որ Պետրոսը հատուկ չի երաշխավորել, ոչ էլ խանգարել է դրա շարադրմանը (Եվսեբիոս, Եկեղեցական պատմություն 6:1): Մեկ ուրիշ տեղ էլ նա պնդում է, որ առաքյալը գրվածքը հաստատել է եկեղեցիներում ընթերցելու համար: Մարկոսի Ավետարանի վավերականությանը վերաբերող նախնական ավանդության վկայությունը ընդհանուր է, իսկ ինչ վերաբերում է Պետրոսի ու Մարկոսի կապին, նույնքան պարզ է: Ավետարանի Պետրոսի մահվանից հետո գրված լինելու պնդումն ավելի վաղ է և արժանահավատ:

Եվ այսպես, վաղ շրջանի Եկեղեցին միաձայն ընդունում է Ավետարանը Հովհաննես – Մարկոսին Պետրոսի գործընկերոջը վերագրելու ավանդույթը: Վավերականության մասին առարկությունները համոզիչ են թվում: Դրանցից հիշատակենք այն պնդումը, թե հնարավոր է, որ Ավետարանը գրվել է Պետրոսի հռոմեացի մի ընկերոջ կողմից, քանի որ Մարկոս անունը բավականին տարածված էր հռոմեացիների մոտ: Մեկ այլ առարկության համաձայն էլ Ավետարանում կան Պաղեստինի աշխարհագրական տվյալների հետ կապված որոշ անճշտություններ:

Gunther Dehn-ի հետ մեկտեղ եզրակացնենք, որ «Բավական է միայն հաստատել, որ այս գրվածքի թե՛ ոճը, թե՛ բովանդակությունը մեզ ոչ մի կերպ չեն խանգարում այն վերագրել Մարկոսին: Իրոք, ավետարանական գրվածքի բոլոր այն մասերը, որոնցում երևում է Պետրոսի մասնակցությունը, թողնում են վավերականության առանձնահատուկ տպավորություն, ինչ էլ որ մտածեն, օրինակ Կափառնայումի առաջին օրվա պատմության և կամ Կեսարիայում Հիսուսի՝ Մեսիա լինելու վերաբերյալ տրված պատասխանների հարաբերության, կամ էլ Պետրոսի ուրացության մասին: Գիշտ նույն ձևով էլ, Հիսուսի մահվան փրկչարար իմաստի և հավատքի՝ իբրև փրկչության էությունն ըմբռնելու իմաստի վրա դրված ուժեղ շեշտը ցույց է տալիս, որ հեղինակը հավանաբար քաջատեղյակ է եղել Պետրոսի մտածողությանը»:

Գ. ՀԱՍՅԵԱՏԵՐԵՐԸ

Մենք բազմաթիվ պատճառներ ունենք մտածելու, որ Ավետարանը գրվել է՝ նկատի առնելով հեթանոսական ծագում ունեցող ընթերցողներին: Մարկոսի հետաքրքրությունը նույնը չէ, ինչ Մատթեոսինը՝ ցայտուն դարձնելու ուժեղ այն աղերսը, որը Հիսուսին կապում է հրեա ժողովրդին և հրեաների միջոցով՝ Հին Կտակարանին: Հիսուսն այստեղ չի հայտնվում իբրև Հին Կտակարանի իրականացում: Անգամ, եթե Մարկոսը մեջբերում է Հին Կտակարանը կամ էլ ակնարկում դրա մասին, ապա նա այդ բանը չի անում Հիսուսի Մեսիա լինելն ապացուցելու մտադրությամբ:

Բազմաթիվ հատվածներում, որոնք նույնն են, ինչ Մարկոսի մոտ, Մատթեոսն ավելացնում է այն ամենը, ինչն ընդունակ է ցույց տալու հայտնության հրեական, ինչպես նաև Հիսուսի անձի ու գործի մեսիական բնույթը: Այս բանը Մարկոսի մոտ բացակայում է: Օրինակ, վախճանաբանական տառապանքների կապակցությամբ Մարկոսը գրում է 13:18 հատվածում. «Աղոթե՛ք, որպեսզի դա չլինի ձմռանը»: Ինչ վերաբերում է Մատթեոսին, ապա նա գրում է. «Շաբաթվա մի օր» (24:20): Երկուսն էլ տալիս են սիրիա-փյունիկեցի կնոջ հետ Հիսուսի գրույցը. Մատթեոսը մեջբերում է Հիսուսի խոսքը. «Ինձ ուղարկել են հրեա կորած ոչխարների մոտ» (15:24), մինչդեռ Մարկոսի Ավետարանում դա չկա (7:24-30):

Մարկոսի 6:7-11 հատվածում, տասներկուսն ուղարկվել են միայն ուսուցանելու և բուժելու նպատակով: Մատթեոսի մոտ, համպատասխան հատվածում (10:5-6), Հիսուսը աշակերտներին սովորեցնում է չզնալ հեթանոսների կամ էլ սամարացիների մոտ, այլ միայն՝ Իսրայելի կորած ոչխարների: Այսպիսով, Մարկոսի մոտ հրեական տարրերի բացակայությունը վկայություն է այն մասին, որ իր Ավետարանը շարադրելիս, նա նկատի է ունեցել ոչ հրեա ընթերցողների:

Այսուհանդերձ, Մարկոսի Ավետարանի շրջանակն ամբողջապես պաղեստինյան է: Հրեական «ենթատեքստը» հայտնվում է ամենուր, այնպես որ ոչ հրեա ընթերցողը չէր կարողանա հասկանալ ներկայացված իրադարձությունների ու քարոզների իմաստը՝ առանց Մարկոսի բացատրությունների (տես՝ 7:3-4, 15:42, 14:12):

Ասվածը, սակայն, ամենևին էլ չի մթագնում Ավետարանի համընդհանուր լինելու մտադրությունը: Դժվար կլինե՞ր Ավետարանի համար պատկերացնել ընդհանրական ավելի լավ ներածություն, քան տեքստի առաջին բառերն են. «ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԱՍՏԾՈՒ ՈՐԴՈՒ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՍԿԻԶԲԸ»:

Սակայն այս նախադասությանն անմիջապես հետևում է Հին Կտակարանից քաղված մի մեջբերում: Համընդհանուրի և զուտ հրեականի տվյալ զուգորդումն է հենց Մարկոսի Ավետարանը դարձնում իդեալական՝ գլխավորապես հեթանոսներից կազմված այնպիսի մի համայնքի համար, որի մեջ ներառված են նաև հրեական տարրեր. Հռոմի Եկեղեցին հենց այսպիսի համայնք էր: Մատթեոսն ընդգծել է Ավետարանի առավելապես հրեական բնույթը: Սա է երկու գրվածքների էական տարբերություններից մեկը:

Ասվածին կարելի է ավելացնել հետևյալը. պատմողական ոճը (ճշգրիտ ու հասկանալի) ցույց է տալիս, որ այն նախատեսված է հատկապես հռոմեացի ընթերցողների համար:

Դ. ԱՏԵՂԾՄԱՆ ՏԱՐԵԹԻՎՆ ՈՒ ՎԱՅՐԸ

Մարկոսը ոչ մի ցուցում չի տալիս իր Ավետարանի ստեղծման տարեթվի մասին: Իսկ ինչ կարող ենք ասել այս առումով, այն է, որ կազմվել է Մատթեոսի և Ղուկասի Ավետարաններից առաջ: Այս մասին կխոսենք սինոպտիկական խնդրին առնչվող գլխում: Այսուհանդերձ, կան արտաքին ակնհայտ հատկանիշներ, որոնք թույլ են տալիս մոտավոր ձևով որոշել նրա ստեղծման տարեթիվը:

Իրիներոսը, որը գրել է մոտ 200 թ., ասում է, որ Մարկոսն իր Ավետարանը ստեղծել է Պետրոսի մահվանից հետո: Մյուս կողմից՝ Կղեմես Ալեքսանդրացին, որը գրում էր Իրիներոսից մոտ 25 տարի առաջ, ասում է, որ այն գրվել է Պետրոսի կենդանության օրոք: Պարզ է, որ շարադրանքը կապվում է Պետրոսի անվան հետ. լինի դա առաքյալի մահվանից առաջ, թե՛ հետո:

Ընդհանուրի կողմից ընդունված կարծիքի համաձայն՝ Պետրոսը, հավանաբար, մահապատժի է ենթարկվել Ներոնի իշխանության օրոք, 64 թ.: Երբ մենք հաշվի ենք առնում այդ փաստը, ինչպես նաև Մատթեոսի ու Ղուկասի Ավետարանների՝ Մարկոսի Ավետարանի հետ ունեցած կապը, ապա դրանից ենթադրում ենք, որ Մարկոսի Ավետարանը պետք է որ գրված լինի ոչ ուշ, քան մինչև 65 թվականը:

Gunther Dehn-ը այն համարում է 60 թվականը, մինչև հրեական պատերազմի ծագումը: Ինչպես, համենայն դեպս, նա հիշեցնում է՝ այդ ժամանակ տաճարը, թվում է, դեռևս չէր կործանվել (13:14): Հին մի ավանդույթի համաձայն՝ մեր Ավետարանի ստեղծման վայրը Հռոմն է: Պատճառը դարձյալ հեղինակի՝ Պետրոսի և նրա գործունեության հետ ունեցած սերտ կապն է: Ա. Պետրոս 5:13 տողից պարզ է դառնում, որ Պետրոսն այդտեղ էր: Կղեմես Ալեքսանդրացին և Իրիներոսը նույնպես կարծում են, որ Ավետարանը գրվել է Հռոմում կամ Իտալիայում: Բացի այդ՝ պետք է հիշել, որ այս Ավետարանը նույնքան տարածված չէր, որքան մյուս երկուսը: Այն կանոնական է համարվել և ընդունվել, թերևս, Հռոմի եկեղեցու օժանդակությամբ: Առանց կարողանալու այդ բանն ապացուցել՝ մեզ թույլատրված է մտածել, որ հիշյալ Ավետարանը գրվել է Հռոմում:

Ե. ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարկոսի Ավետարանի ակունքների ուսումնասիրությունը շատ ավելի պարզ է, քան Մատթեոսինը, քանզի ավանդույթի մատուցած տվյալներն ու գրքի ներքին նշանները համապատասխանում են հիմնական կետերին: Գիտական հետազոտության եզրակացությունը կարող է ընդունել հաստատման ձև և չմնալ իբրև վարկած: Հակառակ այն վարկածի, որի համաձայն՝ Մարկոսն իր տվյալները քաղել է Մատթեոսի Ավետարանից՝ նշենք այս երկու Ավետարանների ոճի ու կառուցվածքի աչքի զարնող տարբերությունը: Մատթեոսը մեզ ներկայացնում է Հիսուսի գործը, իսկ Մարկոսը՝ առավելապես կատարողին: Առաջինը մեզ թափանցել է տալիս հրեա ազգի պատմության մեջ, երկրորդը՝ Հիսուսի: Մատթեոսը հեռանկարներ է բացում աստվածային գործի համար, Մարկոսը տալիս է հստակ կերպարներ: Մատթեոսը մեծ տաղանդի տեր է և վարժ շարադրում է իր գրվածքը, Մարկոսն առաջարկում է պարզ շարադրանք: Մենք արդեն նշել ենք, թե որոնք կարող են լինել Մարկոսի

Ավետարանի ակունքները. Պետրոսի քարոզները և գուցե Յովհաննեսի մի քանի քարոզը, ինչպես նաև առաքելական բանավոր ավանդույթն ու հեղինակի անձնական հուշերը: Ինչ վերաբերում է Մարկոսի կամ Մատթեոսի առաջնությանը, ապա այն կքննարկենք սինոպտիկական խնդրին նվիրված գլխում:

Ավետարանական պատմության բոլոր մասերը, որոնցում երևում է Պետրոսի մասնակցությունը, վավերականության առանձնահատուկ տպավորություն են թողնում՝ խոսքը վերաբերի Կափառնայումի առաջին օրվա պատմությանը, Քրիստոսի՝ Մեսիա լինելու հարցին, Կեսարիայում Յիսուսի գտնվելուն, թե դարձյալ Պետրոսի ուրացությանը: Նույն ձևով, Յիսուսի մահվան փրկչարար իմաստի և հավատքի՝ իբրև փրկչության միջոցի վրա դրված ուժեղ շեշտը ցույց է տալիս, որ հեղինակը քաջատեղյակ է Պետրոսի մտածողությանը: Ավետարանում Մարկոսը չի թողել իր անհատականության կնիքը: Ընդհակառակը, նա համեստորեն անհետանում է թեմայի առջև: Նրա համար կարևորը քննարկվող նյութն է: Կասկածից դուրս է, սակայն, որ հատվածների բաժանելիս նա առաջնորդվել է իրեն հատուկ հասուն, մտածված ծրագրով:

Գուցե, գրողի նրա ծիրքին ենք պարտական գունեղ ու կենդանի բազմաթիվ նկարագրությունների համար, որ հանդիպում ենք Ավետարանում: Բայց գուցե նաև նա ընդամենը միայն արտագրել է այն, ինչ մտահղացել էր առաջին առաքյալի այնքան կենդանի միտքը: Այս Ավետարանը գրել է «անանուն» մեկը, սակայն այդ անանունությունը, այդ համեստ օբյեկտիվությունը, որը սեփական անձը կամավոր ձևով արժեքավորելուց բացի, մտածում է ամեն ինչի մասին, այն է, ինչը մեծապես ապահովում է մեր համակրանքն ու երախտագիտությունը Մարկոսի Ավետարանի նկատմամբ: Այնտեղ քիչ են յուրօրինակ պատմությունները: Ահա մի քանի փաստ, որոնք չկան մյուս ավետարաններում. խուլ-համրի բուժումը (7:32-37), կույրի աստիճանական բուժումը (8:22 և հաջորդ տողեր), փախչող երիտասարդը (14:51):

Քարոզները քիչ են, գերապատվությունը տրվում է բուժումներին: Հաշվվում է 16 հրաշք, մինչդեռ՝ 4 առակ: Օրգանական աճի սերմերի մասին Մարկոսի Ավետարանում չենք հանդիպում, իսկ Մատթեոսի մեծ քարոզներից միայն մեկը համարյա ամբողջությամբ տեղ է գտել այստեղ (13): Ինչո՞վ բացատրել դա: Արդեն ասել ենք, որ Մարկոսը դիմում է հռոմեական ծագում ունեցող քրիստոնյաներին: Արդ, հռոմեացիները ո՛չ աստվածաբաններ են, ո՛չ էլ խորհրդապաշտներ: Նրանք հայտնի են որպես գործնական ժողովուրդ: Ուստի, նրանց հարմար էր Յիսուսի գործունեության նկարագրությունը: Ավելին, Պետրոսը, որից Մարկոսը քաղել է իր պատմությունները, գործունյա մարդ էր: Մարկոսը Յիսուսին նկարագրում է, ինչ-որ իմաստով իր արիեստանոցում աշխատանքի պահին՝ դրանով իսկ ցուցաբերելով անխոնջ վերաբերմունք մարդկանց ծառայելու գործին՝ զորության ու իմաստության բոլոր այն աղբյուրներով, որ նա շարունակ ստանում է Հոր հետ ունեցած հաղորդությունից: Պատմությունը թարմությամբ ու կյանքով կենդանի պատկերների շարք է: Մարկոսը անմիջապես Հավիտենական ծառային ներկայացնում է գործի մեջ՝ առանց տալու նրա ծննդին առնչվող պատմությունն ու Նազարեթում անցկացրած երեսուն տարիների մասնավոր կյանքի նկարագրությունը: Նա հաճախ է օգտագործում «անմիջապես» բառը: Նոր Կտակարանում այս բառը հանդիպում է 80 տողում, որից քառասունը՝ մեր Ավետարանում: Նրա պատմության մեջ տեսնում ենք մի Յիսուսի, որը շտապ քայլերով գնում է հաղթանակից հաղթա-

նակ՝ արագորեն (երեք տարուց ավելի քիչ ժամանակում) իրականացնելով աշխարհի նվաճումը: Մարկոսը դիմում է ոչ թե հրեաներին, այլ հեթանոսներին: Նա թարգմանում է արամեերենի այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ Boanerges, Talitha Goumi, Corban, Ephratha, Bartimée, Abba, Golgotha, Eloi ..., բացատրում է հրեական սովորույթներն ու ոչ հրեական անհայտ այլ բաներ ևս: Լվացումները, անթթխմոր բաղադրիչ օրը, Լեռան նկարագրությունը: Թվում է՝ ընթերցողները հռոմեացիներ են, քանի որ երկու lepton-ը նա թարգմանում է հռոմեական դրամով (12:42): Հիշատակում է Սիմոն Կյուրենացու երկու որդիների՝ Ալեքսանդրի և Ռուփոսի անունները (15:21): Դրանից կարելի է եզրակացնել, որ Մարկոսն ու իր ընթերցողները ճանաչում էին այս երկու մարդկանց, թվում է՝ այդ է ապացուցում նաև Պողոսի՝ Հռոմեացիներին ուղղված թղթի 16:13 տողի ողջույնը, և այն, որ Ռուփոսի եղբոր ընտանիքն ապրել է Երուսաղեմում այն ժամանակ, երբ Երուսաղեմի Եկեղեցի մեկնելուց առաջ այստեղ ապրել է նաև Պողոսն ինքը:

Ավետարանում գերակշիռ տեղ է հատկացված տասներկու առաքյալների նշանակմանը: Հեռու լինելով նրանց փառաբանելուց՝ ինչպես տարածված առասպելների դեպքում է, Մարկոսն այդ մարդկանց նկարագրում է այնպես, ինչպես կան՝ թերություններով, մոլորություններով, հոգևոր անհասկացողությամբ (4:10-13, 5:31, 8:16, 9:32):

Կարևոր դեր է խաղում Պետրոսը (1:29-39, 3:16, 9:5-6, 11:21, 13:3, 14:29, 37, 68, 72, 16:7):

Այստեղ բացակայում են Հիսուսի գովասանական խոսքերը Պետրոսի հասցեին՝ վերջինիս՝ Կեսարիայում արված խոստովանությունից հետո, ինչպես նաև առաքյալի պատմությունը՝ ջրի վրայով քայլելու մասին. արդյոք դա առաքյալին նվաստացնելու նշան չէ՞:

Մարկոսի մոտ գտնում ենք նաև արտահայտիչ շատ գծեր՝ ճշգրիտ տեղեկություններ ժամանակի ու ժամի վերաբերյալ, Հիսուսի տարբեր պահվածքների նկարագրություններ, հաճախակի ակնարկներ նրա «վերադարձ»-ի մասին, այն տպավորության նկարագրությունը, որ ականատեսների վրա թողել են Հիսուսի գործերը: Մանրամասներ են տրվում ամբոխի մասին և նկարագրվում թշնամիների աճող ատելությունը: Նշենք Հիսուսին հատուկ մի քանի հայտարարություն. Շաբաթը մարդու համար է (2:27), սրտից է դուրս գալիս ամեն խենթություն (7:22), ամեն մարդ պետք է «կրակով աղովանա» (9:49), նա ամեն ինչ անում է հրաշալի (7:37):

Միշտ հեշտ չէ սահմանել ու շարադրել Մարկոսի Ավետարանի հետապնդած նպատակը: Իրոք, թվում է, թե այս Ավետարանը գրվել է ոչ թե ինչ-որ արդյունքի հասնելու համար, այլ ավելի շուտ Հիսուսի կյանքի պատմությամբ առաջացած շատ մեծ հուզմունքի մղումով: Այս պատմության մեջ չփնտրենք ջատագովություն, բանավիճային և կամ ուսուցողական միտում, այլ պարզապես Փրկչի անձի նկատմամբ հիացմունքով լի ոգևորության ինքնաբուխ արտահայտություն: Գործող Հիսուսի ներկայության հանդեպ հեղինակի հիացական և ուրախ զարմանքը ամբոխների զարմանքի արձագանքը չէ, որ նա հաճույքով նկարագրում է: Հիշենք, այսուհանդերձ, Ավետիսի ակունքը ճանաչելու կարիքը՝ համոզվելու ճշմարտության մեջ, սակայն դժվար է ասել, թե Մարկոսը, գրելով Հիսուսի վերաբերյալ իր պատմությունը, ինչպես նաև նկարագրելով նրա խոսքերի ու գործերի՝ ժամանակակիցների վրա թողած անմիջական տպավորությունը, իրոք, գիտակցորեն պատասխանե՞լ է այս կարիքին, թե՞ ոչ:

Մարկոսի Ավետարանում կարելի է գտնել էական տարրեր, որոնք հանդիպում են Մատթեոսի և Ղուկասի Ավետարաններում: Դրանով են բացատրվում երեք գրքերի նմանությունները: Հիշեցնենք նաև Մարկոսի Ավետարանի ամենաառանձնահատուկ գծերը.

1. Վերնագիրը.

Այն միակն է, որը հենց տեքստի մեջ ունի ընդհանուր վերնագիր՝ «Հիսուս Քրիստոսի՝ Աստծու Որդու Ավետարանի սկիզբը»: Այսինքն՝ առաջարկում է ցույց տալ, թե ինչ ձևով է հայտնվել Հիսուս Քրիստոսի բարի լուրի «ավետարանացումը»: Ձեռնամուխ լինելով դրան՝ Ավետարանը նկարագրում է հենց այս բարի լուրը: Հնարավոր է, որ Մարկոսի հենց այս բառն է եկեղեցին կիրառել բարի Լուրը՝ Ավետիսը հայտնող չորս գրքերում:

2. Սահմանափակ ներածությունը.

Հիսուսի պատմությունն ու գործունեությունը ներածությամբ ներկայացնելու համար Մարկոսը բավարարվել է ընդամենը տասներեք տողով: Դրանցից ութը վերաբերում են Մկրտչին առնչվող ծանոթագրություններին, երեքը՝ Հիսուսի մկրտությանը և երկուսը՝ անապատի փորձությանը: Այնուհետև, ավետարանիչը տալիս է բուն գործունեությունը: Մարկոսի Ավետարանում, այսպիսով, բացակայում է Հիսուսի ծննդյան, ինչպես նաև մկրտությունից առաջ ապրած կյանքի պատմությունը: Անկասկած, հեղինակն անհրաժեշտ չի համարել իր ավետարանի ընթերցողների ուշադրությանը ներկայացնել այս տարրերը:

3. Տեր բառի բացակայությունը.

Իբրև կոչում՝ Տեր բառի համարյա կատարյալ բացակայությունը բնորոշ է Մարկոսի Ավետարանին: Հունարենում դա KURIOS բառն է՝ տեր: Մատթեոսն ու Ղուկասը այն օգտագործում են հաճախ. Հիսուսին նրանք դիմում են որպես Տիրոջ: Աշակերտները նրան դիմում էին այս բառով (Ղուկաս 10:17): Նրանց բերանով էլ հենց Քրիստոսն իր մասին խոսում է իբրև Տեր (Մատթեոս 7:21):

Ինչ վերաբերում է Մարկոսին, ապա նա այդ բառը երբևէ չի օգտագործում: Մարկոսի, Մատթեոսի և Ղուկասի Ավետարանների տարբերությունն ակնառու է: Վերջին երկուսը Քրիստոսի մասին գրում են հետհարությանը հատուկ տեսանկյունից: Նախքան հարությունը՝ աշակերտները շատ վատ էին ճանաչում Քրիստոսին, նրա բնավորությունն ու առաքելությունը: Հարությունից հետո նրանում տեսան Աստծու Որդուն՝ փառքի Արքայազնին՝ մարդկանց Փրկչին: Հարությունից հետո եկեղեցին Հիսուսին անվանում է նրա սիրած Տեր՝ անվամբ: Սինոպտիկական երկու հեղինակները այս կոչումը բերում են հարությանը նախորդող շրջան, իսկ Մարկոսը՝ համարյա երբեք: Նա շեշտում է Քրիստոսի՝ նախքան հարությունը իրականացրած գործունեությունը: Նրա սիրած բառը «Վարդապետն» է՝ Ուսուցիչ - Դուրսորդ իմաստով:

4. Մարդկային բնույթը.

Դա մեզ մղում է Մարկոսի Ավետարանում տեսնել Քրիստոսի անձի հանդեպ մեկ այլ հետաքրքրություն: Գալիլիայի ծովի փոթորկի ժամանակ, մինչ Հիսուսը քնած էր նավակի մեջ, Մարկոսը աշակերտների մասին գրում է հետևյալը (4:38).

Ղուկասը, ակնհայտորեն անհանգիստ անտարբերության այն տպավորության համար, որ կարող է թողնել Հիսուսը, փոթորկի ժամանակ գրում է հետևյալը՝ 8:24, նկարագրելով աշակերտների վախը: Նույնը՝ նաև Մատթեոսը (8:25): Մարկոսի մոտ օգտագործված է DIDASKALOS՝ «Վարդապետ» բառը:

Մարկոսի Ավետարանի «նա չէր կարողանում»-ը Մատթեոսի մոտ դառնում է «նա չարեց», իսկ «զորավոր գործեր»-ը դառնում է «զորավոր շատ գործերով»: Մատթեոսը Հիսուսի զորությունը պաշտպանում է անգամ անհավատությունից: Մարկոսը պատմում է, որ ինչ-որ մեկը մոտեցավ Հիսուսին և դիմեց նրան «Բարի Վարդապետ» բառերով: Հիսուսը պատասխանեց այսպես (տես՝ 10:18): Ինչ վերաբերում է Մատթեոսին՝ նա գրում է (տես՝ 19:17): «Բարի» բառը կիրառելով ոչ թե «Վարդապետ» և «ինձ», այլ «գործ» բառի փոխարեն, Մատթեոսը Հիսուսին պաշտպանում է այնպիսի մտածողությունից, համաձայն որի նա կարող էր լինել նաև անմեղ (սա ամենևին էլ Մարկոսի մտադրությունը չէ): Այս կապակցությամբ նշեմք այն, ինչ Մարկոսը տալիս է և ինչը չի հանդիպում սինօպտիկական մյուս երկու ավետարաններում. «Եվ տեսնելով նրան՝ Քրիստոսը նրան սիրեց»:

5. Աստվածային ծագումը.

Այն փաստը, որ Մարկոսը շեշտը դրել է Հիսուսի մարդ լինելու վրա, չի նշանակում, թե անտեսում է նրա աստվածային բնույթը: Իրականում, նա զուգահեռաբար դնում է երկու բնույթը՝ առանց այս կամ այն կերպ թերագնահատելու մեկը կամ մյուսը: Ավետարանը սկսվում է Հիսուս Քրիստոսի աստվածային ծագման մասին պնդումով: Երկնային տերը երկու անգամ հաստատում է աստվածային այս ծագումը և անգամ դևերն են նրան ընդունում իբրև այդպիսին (1:24, 3:11, 5:7):

12:7 և 37 հատվածներում այն ենթադրվում է:

13:32 և 14:61-62 տողերում Հիսուսը բացահայտորեն հաստատում է իր ով լինելը: Նա ներում է մեղքերը (2:5-12): Այս հատվածների կողքին պետք է տեսնել նաև Հիսուսի խոսքերն ու գործերը, որոնք բոլորն էլ շնչում են նրա անձի նկատմամբ հեղինակությամբ ու հարգանքով: Մարկոսը (ինչպես նաև մյուս երկու սինօպտիկները) ունի հետհարության տեսակետ, նկարագրում է Հիսուսի՝ հարությանը նախորդած կյանքը: Այսուամենայնիվ, Ավետարանը չի ցանկացել, որ այս տեսակետը մթագնի Տիրոջ՝ երկրային կյանքին բնորոշ անսահման մարդկայնությունը: Տանջանքները նկարագրող պատմությունների տեղը. բոլոր Ավետարաններում Քրիստոսի Տանջանքներն ու Հարությունը զբաղեցնում են կենտրոնական տեղ և այդ գրվածքների գագաթնակետն են: Արդ, Մարկոսի Ավետարանի մի մեծ մաս (10:32 – 15:47) նվիրված է Հիսուսի տանջանքներին ու վերջին շաբաթվան: Այն նաև իբրև նմուշօրինակ է ծառայում մյուս ավետարաններին:

6. Գործի Ավետարանը.

Մարկոսն ընդգծում է գործը. նա պակաս ուշադրություն է հատկացնում վարդապետությանը: Անշուշտ, այստեղ տեղ է գտնում նաև վարդապետությունը, բայց ավելի շուտ գործով ու օրինակով, քան խոսքով: Եթե նա խոսում է, ապա նրա խոսքերն ավելի շատ դիտողություններ են, քան քարոզներ և ընդհանուր առմամբ չեն անցնում 5-ական տողից:

Երբեմն չկա ոչ մի բացատրություն Յիսուսի կատարած որևէ գործի մասին: Ավելի շուտ կա մշտական շարժում (տես՝ 1:29-31 հատվածի օրինակը):

7. Վարդապետությունը.

Քարոզն, այսուհանդերձ, չի բացակայում Ավետարանում: 4-րդ գլուխն ամբողջապես նվիրված է մի քարոզի: 13-րդ գլուխը վախճանաբանական երկար քարոզ է: Այլ գլուխներում ևս կան 8, 11, 12 և 17 տողերից բաղկացած հատվածներ: Էլ ավելի կարևոր են այն վարդապետությունների մասին բազմաթիվ հղումները, որոնք տեղ չեն գտել Ավետարանում (1:14, 1:22, 2:13, 4:11): Ժողովուրդը նրան լսեց ուրախությամբ (12:37): Պայծառակերպության ժամանակ երկնային մի ձայն ասաց (տես՝ 9:7): Այս ամենը ցույց է տալիս, որ Մարկոսի Ավետարանում Յիսուսի վարդապետությունն ու քարոզչությունն, այնուհանդերձ, զբաղեցնում են մեծ տեղ:

Ահա այն առակների (բառիս լայն իմաստով) ցուցակը, որոնք հանդիպում են Մարկոսի Ավետարանում:

մարդկանց որսորդներ՝	1:16-17	
հիվանդն ու բժիշկը՝	2:17	
անուսինը՝	2:19-20	
հագուստն ու նոր կարկատանը՝	2:21	
նոր գինին հին տիկերում՝	2:22	
բաժանված թագավորությունը՝	3:24	
բաժանված տունը՝	3:25	
պարտված զորավոր մարդը՝	3:27	
սերմնացանը՝	4:2-8	
ճրագը՝	4:21-22	
սերմի դանդաղ աճը՝	4:26-29	
մանանեխի հատիկը՝	4:30-32	
ներքին պղծությունը՝	7:14-23	
գայթակղության մասին պատմող անդամները՝	9:43, 45, 47	
վատ կառավարիչները՝	12:1-9	
մերժված քարը՝	12:10-11	
թզենին՝	13:28-29	
դռնապանը՝	13:34-37	

Կազմված լինելով ընդամենը 16 գլխից՝ Մարկոսի Ավետարանն ամենակարճն է: Այնուհանդերձ, հասկանա՞նք այս կարճության պատճառը: Այն ոչինչ չի տալիս Յիսուսի հասարակական գործունեությանը նախորդող շրջանի վերաբերյալ և, ինչպես քիչ առաջ տեսանք, ուսուցողական քիչ նյութ է պարունակում. ահա և կարճության պատճառը:

Մարկոսի Ավետարանի ամենահին ձեռագրերն ընդհատվում են 16-րդ գլխի 8-րդ տողով: Ընդհանուր առմամբ այն կարծիքը կա, որ դա Ավետարանի վերջն է: Սակայն կան նաև հիմնավոր կարծիքներ այս կարծիքի դեմ: Յարության մասին պատմության մեջ մենք իսկապես չենք հանդիպում հարություն առած Քրիստոսին, այլ լսում ենք միայն հրեշտակի

խոսքը: Դա տարօրինակ է թվում: Չկա նաև աշակերտներին ուղղված միսիոներական կարգադրություն: 9-20 տողերի բացակայության ամենահիմնավոր պատճառն այն է, որ դրանք չկան երկու ամենակարևոր կոդեքսներում՝ Sinaiticus-ում և Vaticanus-ում:

Այլ ձեռագրեր էլ ունեն ավելի կարճ եզրափակում՝ 8-րդ տողից հետո. «Բայց նրանք Պետրոսին և նրա հետ եղած մարդկանց կարճ հաղորդեցին այն ամենը, ինչ նա ասել էր»:

«Այնուհետև, նրանց միջոցով Հիսուսն ինքը Արևելքից Արևմուտք ուղարկեց Փրկչության սուրբ և անկործանելի լուրը»:

Սրանից հետևում է, որ, հավանաբար, վաղ շրջանի եկեղեցուն ոմանք չգոհացան ո՛չ երկար եզրափակումով, ո՛չ էլ 8-րդ տողի եզրափակիչ խոսքով: Թույլատրված է մտածել, որ եզրափակման խոսքի ամենահինքնատիպ մասը կորել է, և փորձեցին այն փոխարինել 9-20 տողերով:

Ներկայացնենք Մարկոսի Ավետարանում տեղ գտած հրաշքների ցուցակը:

Չորս Ավետարաններում բովանդակող 35 հրաշքներից 13-ը հանդիպում են Մարկոսի Ավետարանում.

խուլ-համրի բուժումը՝	7:31-37
Բեթսայիդայի կույրի բուժումը՝	8:22-26
դիվահարի բուժումը ժողովարանում՝	1:23-28
սիրիա-փյունիկեցի աղջկա բուժումը՝	7:24-30
կերակրված չորս հազար մարդ՝	8:1-9
թզնուլ անեծքը՝	11:20-24
Պետրոսի զոքանջի բուժումը՝	1:29-31
բորոտի բուժումը՝	1:40-45
անդամալույծի բուժումը՝	2:2-12
չորացած ձեռքով մարդու բուժումը՝	3:1-5
հանդարտված փոթորիկը՝	4:35-41
գերդեսացի դիվահարի բուժումը՝	5:1-20
Հայրոսի աղջկա հարությունը՝	5:22-43
արյունահոսությամբ տառապող կնոջ բուժումը՝	5:24-34
ջրերի վրայով քայլելը՝	6:45-52
լուսնոտ երեխան՝	9:14-29
կույր Բերտիմեոսը և մեկ ուրիշ կույր՝	10:46-52
հինգ հազար կերակրվածների բազմությունը՝	6:36-44

Ձ. ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մարկոսի Ավետարանը գրվել է բոլորովին այլ ձևով, քան Մատթեոսինը: Իրադարձությունների ու քարոզների կանոնավոր հերթագայությունը բացակայում է: Ընդհակառակը, այստեղ, երկու՝ 4-րդ և 13-րդ գլուխներում, իրադարձությունների կապը երկու կետում խզվում է քարոզներ բովանդակող հատվածներով: 13-րդ գլուխը կարող է դիտվել իբրև մի գիծ, որը միմյանցից անջատում է Հիսուսի հասարակական գործունեությունը Հուդայի

երկրում (10, 11 և 12) և Չարչարանքները ու Չարությունը նկարագրող պատմությունները (14, 15 և 16):

Սակայն գլխում նման բաժանում չի կատարվում: Նյութը, որ նախորդում և հաջորդում է նրան, էապես պատմողական բնույթի է: Այսուամենայնիվ, ահա Մարկոսի Ավետարանի՝ աշխարհագրական տեսանկյունից մի բաժանում.

I. Հրեաստան: Գործունեության նախապատրաստություն՝ 1:1-13

II. Գալիլիա և նրա մերձակայք՝ 1:14 – 9:50

Ա) Կանխասացություն, վարդապետություն, բուժումներ

Բ) Տանջանքների անխուսափելիության շեշտումը

III. Վերադարձ Գալիլիայից Հրեաստան՝ 10:1-52

IV. Հրեաստան և Երուսաղեմ՝ 11:1, 13:37

Ա) Բանավեճ

Բ) Վախճանաբանական քարոզ

V. Երուսաղեմ: Հաղորդության խորհուրդ, հարություն՝ 14:1 - 16:8(9-20)

Է. ԼՈՒՐԸ

Հեղինակի ցանկությունը լավ հասկանալու համար նրա գրքին չպետք է մոտենալ ժամանակակից կանխակալ գաղափարներով: Մենք հակված ենք որևէ Ավետարանում տեսնել միայն Հիսուսի կյանքի պատմությունը՝ պարզ մի կենսագրություն: Որևէ կենսագրությունից ակնկալում ենք, որ այն մեզ ծանոթացնի իր հերոսի հոգևոր զարգացմանը: Ահա թե ինչու, բոլոր շրջանակներում ընդունել են, որ Ավետարանը չի կարող ընթերցվել իբրև կենսագրություն: Այն չի ներկայացնում դիմանկարը մարդ-Աստծու, որն, ինչպես յուրաքանչյուր մարդ, անշուշտ, կմնար իբրև առեղծված, հատկապես հոգևոր իր կյանքով, սակայն որի ձևավորումը, զարգացումը, վճռորոշ տագնապները մատչելի կլինեին մեր գիտակցությանը և, որոշ առումով, մեր սեփական հոգևոր փորձին: Իրականում Հիսուսի կյանքի վերաբերյալ ուսումնասիրություններին չի հաջողվել թափանցել նրա անհատականության մեջ և ոչ էլ այն մատչելի դարձնել մեր հոգեբանությանը: Խոսելով Հիսուսի մասին՝ մի հեղինակ գրում է, որ նրա արտառոց լինելը գալիս է նրա անհատականությունից, իսկ մեկ ուրիշը՝ թե «ավետարանները հարություն են շնչում»: Նույն բանն ասվել է նաև ժամանակակից բառերով. «Ավետարանները պատկանում են Աստծու հրաշքների հայտնությանը»: Քրիստոսով դրսևորված փրկության լուրը հայտարարված է: Դա հենց առաքելական քարոզչության լուրն է: Աստված մարդկանց մոտեցել է Քրիստոսով: Նա մարդկանց իր հետ հաշտեցրել է իր Որդու մահվամբ ու հարությանը: Որ այս է եղել քրիստոնեական առաջին քարոզի բովանդակությունը, անկասկած, գիտենք Պողոսի միջոցով. «Ամենից առաջ ես ձեզ հաղորդել եմ այն, ինչ ստացել եմ. այն, որ Քրիստոսը, համաձայն Սուրբ Գրքերի, մահացել է մեր մեղքերի համար» (Ա. Կորնթ. 15:3):

Կենտրոնական թեման այն է, որ Հիսուսը մահացել է մեզ համար և որ հարություն է առել՝ հանուն մեր փրկության: Աստծու Որդու մահն ու հարությունը մնում են իբրև էական փաստեր: Պարզապես, թեման դրված է լայնացված շրջանակում՝ ավելացնելով Հիսուսի

կյանքից փոխառված գծերով: Մահացածն ու հարություն առածը, որի տանջանքները մանրամասն պատմվում են ամեն Ավետարանում, նմանապես ապացուցել է նաև աստվածային իր ծագումը՝ իր իսկ խոսքերով ու հրաշքներով գործելով երկիրը շրջագայելու ժամանակ:

Այսպիսով, ինչպես իրավացիորեն ասել են, Ավետարանում խոսքը Հիսուսի պատմության մասին չէ, այլ Հիսուսի՝ Աստծու Որդու վերաբերյալ պատմությունների: Աստծու Որդին ինչպե՞ս կարող էր զարգացում ապրել: Աստված իր Որդուն ուղարկել է աշխարհ, իսկ այն, ինչ մեզ հաղորդում են, ժամանակի և հավերժության այս կապի հետևանքներն են: Այս տեսակետից հեշտ է ճշգրտել մեր Ավետարանի նպատակը: Այն ծնվել է Եկեղեցուց և գրվել է նրա համար: Դա աշխարհի համար նախատեսված գիրք չէ՝ արդարացուցիչ աշխատություն, որի նպատակը Հիսուսի մեծությունն ու զորությունը, ինչպես նաև քրիստոնեության բոլոր մյուս կրոնների նկատմամբ առավելությունն աշխարհում ներկայացնելն է: Նա չի ուզում հեթանոսներին համոզել՝ հավատալու Հիսուսին: Լիովին հասկանալի է, որ ամենից առաջ այն պատասխանում է Եկեղեցու՝ Տիրոջ կյանքի ու գործերի վերաբերյալ առաքյալների քարոզի միջոցով սովորած ամեն ինչը պահպանելու պահանջին: Խոսքն, ուստի, ամենևին էլ հոգեբանական կամ պատմական հետաքրքրությունը բավարարելը չէր, այլ միայն հավատքն ամրապնդելը: 2-րդ Ավետարանի նկատմամբ կարելի է կիրառել այն, ինչ գրում է 4-րդ Ավետարանի հեղինակը. «Որպեսզի հավատաք, որ Հիսուսը Քրիստոսն է, և որ հավատալով կունենաք հավիտենական կյանք»: Պատմության կուլմինացիոն պահերին աստվածային ծագումը համարձակ վճռականությամբ շեշտվում և կրկին ու կրկին հաստատվում է: Մկրտության ժամանակ ասվում է, որ նա Աստծու Որդին է: Պայծառակերպության լեռան վրա Պետրոսը խոստովանում է նրան՝ իբրև Աստծու Որդուն. աստվածային ծագման մի նոր հաստատում, հանդիսավոր հայտարարում քահանայապետի առջև և, վերջապես, խաչի առջև խոստովանում հեթանոսական աշխարհի առաջին վկայի՝ հռոմեացի հարյուրապետի կողմից:

Բացի դեռից՝ միայն աշակերտներն են Հիսուսին ընդունել իբրև Քրիստոս: Եիշտ նույն ձևով էլ՝ մեսիական գաղտնիքի (որ Մարկոսը շարունակ հիշեցնում է) վերջնական նպատակն է՝ ցույց տալ, որ հավատքի գործերը չպետք է հանձնվեն սրբապիղծ աչքերի ու ականջների:

Ահա, ուրեմն, այն լուրը, որ Մարկոսն ուզում է հայտնել իր գրքում: Հիսուս Քրիստոսը՝ Աստծու Որդին, հայտնվում է մարդկանց մեջ. գաղտնիքի մեջ նա քարոզում և հրաշքներ է գործում, վիճում է իր թշնամիների հետ, օգնում է, բուժում և, ի վերջո, մահանում է Աստծու կամքով. նրա մահը դառնում է շատերի փրկությունը: Վերջապես, նա հարություն է առնում: Աստվածային այս իրադարձությունը մատչելի է հավատացյալ Եկեղեցուն, որին էլ հայտնված է՝ հավատքն ամրապնդելու նպատակով:

Մարկոսի Ավետարանը ծառայության Ավետարան է: Հիսուսը մեզ ներկայացված է տարբեր վայրեր գնալիս, բարի գործեր կատարելիս և թագավորության Ավետիսը քարոզելիս: Հիսուսի ծառայության ներշնչող մոտիվը սերն է: Իսկ որո՞նք էին օրենքները: Գութը, թեև տանել չէր կարողանում մեղքերը, խղճում էր մարդկանց: Դատապարտման ոչ մի խոսք դուրս չէր գալիս նրա բերանից, անգամ ամենամեծ մեղսագործի հասցեին: Միայն երկերեսանիությունն է նրա կողմից արժանացել դատապարտող խոսքերի: Հիսուսը իր վրա է կրել մարդկանց բեռները: Սակայն չկա ծառայություն՝ առանց զոհաբերության: Խաչն է Հիսուսի

ծառայության գազաթնակետը: Հիսուսի կյանքը, չնայած բեղուն գործունեությանն ու անխոնջ աշխատանքին, հրաշալիորեն հավասարակշռված էր: Նա կարողանում էր առանձնանալ՝ մենակ մնալու և աղոթելու համար: Նաև սա է նրա հաջողության ու ծառայության արգասավորության գաղտնիքը:

Գ Լ ՈՒ Խ 17

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ

Ա. ՀԵՂԻՆԱԿԸ

Ավետարանի ներածության համաձայն՝ Ղուկասը (տես՝ հաջորդ ենթագլուխը), չի եղել այն իրադարձությունների ակնամատեսը, որոնց մասին պատմում է իր գրվածքում: Ի՞նչ զգիտենք նրա մասին: Ահա բավականին վստահելի մի քանի տեղեկություն: Ծագումով հույն է, մասնագիտությամբ՝ բժիշկ, նաև պատմաբան և «Գործք Առաքելոց» գրքի հեղինակը: Նա Պողոսի ուղեկիցն է՝ հեթանոսների մեծ առաքյալի քարոզչական ճանապարհորդությունների ժամանակ: Անվանապես հիշատակված է Նոր Կտակարանի որոշ հատվածներում. Կողոսացիներին 4:3, Փիլիմոնին 24, Բ. Տիմոթեոսին 4:11, որտեղ հանդես է գալիս իբրև Պողոս առաքյալի մոտ ընկեր:

Հավատափոխությունից առաջ նրա վարած կյանքի մասին ճշգրտորեն ոչինչ չզգիտենք: Գուցե թե ծագումով Փոքր Ասիայից էր՝ Լիկայոնիայից, եթե ոչ (մեկ ուրիշ ենթադրություն)՝ Հարավային Իտալիայից: Վաղ շրջանի Եկեղեցու պատմաբան Եվսեբիոսի և հռոմեացի աստվածաբան Հերոնիմոսի կարծիքով, Ղուկասը, թերևս, ծագումով Սիրիայից էր՝ Անտիոքից: Ինչ էլ որ լինի, թեոփիլ անվամբ չափազանց հարուստ մի մարդ նրան ընդունել է իբրև ստրուկ (որը ևս չստուգված վարկած է), և որ վերջինս նրան է նվիրել իր անունը կրող Ավետարանն ու «Գործք Առաքելոց»-ը:

Հնարավոր է, որ թեոփիլը նկատել է Ղուկասի մտավոր ընդունակությունները և ազատ արձակել նրան, որպեսզի կարողանար շարունակել ուսումը: Չէ՞ որ այդ դարաշրջանում, ընդհանուր առմամբ, բժիշկները պատկանում էին ազատագրված ստրուկների դասին: Բժշկագիտության՝ այս խիստ առարկայի դասերը դժվար էին, բայց նաև սրանով է բացատրվում մյուս Ավետարանների համեմատ Ղուկասի Ավետարանի բարձր ոճը: Հավանական է, որ քրիստոնեական հավատքը ընդունել է Անտիոքի Եկեղեցու հիմնադրման ժամանակ (36 թ. մոտ՝ Ստեփանոսի մահվան տարում, կամ էլ 44 թ.՝ Հերովդես Ագրիպասի մահվան տարում):

Այնուհետև նրան գտնում ենք Տրոյայում՝ Պողոսի քարոզչական 2-րդ ուղևորության ժամանակ (Գործք 16:10): Առաքյալը պետք է, որ նրան ճանաչելիս լիներ Անտիոքից, սակայն մինչև Պողոսի հետ Ղուկասի հանդիպումը լռություն է տիրում:

Մեր տրամադրության տակ եղած միակ տեղեկությունները «Գործք»-ի հատվածներն են, որոնցում ասված է՝ «ՄԵՆՔ»: Արդ, հոգնակի թվի առաջին դեմքի այս դերանունը անհետանում է քարոզչական խմբի՝ Փիլիպպեից Մակեդոնիա մեկնելուց անմիջապես հետո: Ղուկասը մնում է քաղաքում՝ երիտասարդ Եկեղեցին ամրապնդելու նպատակով և, այդ ժամանակից սկսած, անկասկած, փայլում է շրջապատում: Մեծ առաքյալին նա միանում է միայն քարոզչական 3-րդ ճանապարհորդության ժամանակ (Գործք 20:6), քանի որ ճանապարհորդության նկարագրությունն այնքան մանրամասն է, որ կարող է դիտվել միայն որպես հատված հեղինակի օրագրից: «Մենք»-ը վերանում է՝ սկսած «Գործք»-ի 21:27 հատվածից, Երուսաղեմում՝ Հակոբոսի հետ զրուցելուց հետո: Պողոսի՝ երկու տարի բանտում մնալուց հետո, Ղուկասը հավաքում է իր Ավետարանը գրելու համար անհրաժեշտ նյութերը: Նա կապի մեջ է մտնում առաքյալի հետ, քանի որ հենց որ վերջինս մեկնում է Հռոմ, Ղուկասը ուղեկցում է նրան (Գործք 27:1): Պատմությունը ակնհայտապես պատմած է: Ղուկասը գնում է մինչև Հռոմ և Պողոսի հետ է նրա բանտարկության սկզբնական շրջանում:

Պողոսը նրա անունը հիշում է Կողոսայի Եկեղեցիներին և Փիլիմոնին ուղղված ողջույններում, հետո լքում է նրան (ոչ մի ողջույն) Փիլիպպեցիներին ուղղված թղթում, որը, հավանաբար, վերջինն է, որ Պողոսը գրել է առաջին բանտարկության ընթացքում: Ինչո՞ւ է Ղուկասն անհետանում: Որտե՞ղ է գնում: Ղուկասը վերադառնում է Հռոմ Պողոսի 2-րդ բանտարկության ժամանակ (Բ. Տիմոթեոսին 4:11): Հավանաբար նահատակվել է Բյուզանդիայում՝ խաչվելով ծառի բնին և կամ էլ Հունաստանում՝ 80 տարեկանում:

Ավանդույթի համաձայն՝ նրա աճյունը Անդրեասի աճյունի հետ տեղափոխվել է Կոնստանդնուպոլիս՝ Կոնստանդին կայսեր օրոք: Լիովին ակնհայտ է այն մեծ հարգանքը, որ Պողոսը տածում էր իր ուղեկցի հանդեպ: Նրա գրչի տակ ծնված երկու գրքերը վկայում են մտավոր բարձր ունակություններ ունեցող, բարձրարվեստ, ինչպես նաև թշվառների ու աղքատների հանդեպ սիրով լի, Եկեղեցու ծառայությանն ամբողջապես նվիրված մարդու մասին:

Բ. ՎԱԿԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ղուկասն իր նյութերը քաղել է առաջին հերթին բանավոր ավանդույթից (1:2), բայց նաև մասնավոր աղբյուրներից՝ առաջին վկաներից ստացած տեղեկությունները լրացնելու, ճշգրտելու և համակարգելու նպատակով (1:3): Այս տեղեկությունները պետք է որ եղած լինեն արամերենով և հունարենով՝ բանավոր կամ գրավոր: Այսպես, մանկությունը նկարագրող պատմությունները նույն աղբյուրից չեն, ինչ Մատթեոսի պատմությունները: Tenney-ը հետևյալն է պնդում Ավետարանի ստեղծման մասին. «Թեև երրորդ Ավետարանի հեղինակը չի տալիս իր անունը, նա չի ցանկացել ստեղծել անանուն գործ: Առաջաբանում իր մասին խոսում է երրորդ դեմքով և իր անվամբ է կոչում առաջին ընթերցողին, որին նվիրված է Ավետարանը: Ավանդույթը, համաձայն որի՝ սիրված բժիշկ Ղուկասը (Կողոսացիներին 4:14) և Ավետարանի, և՛ «Գործք»-ի հեղինակն է, գալիս է 2-րդ դարի երկրորդ կեսից: Միմյանցից այնքան հեռու աստվածաբանական այնպիսի հեղինակություններ, ինչպիսիք են՝ Տերտուլիանոսը՝ Յուսիսային Աֆրիկայում, Իրինեոսը՝ Գալիայում, Օրիգենեսը՝

Ալեքսանդրիայում և Մարկիոնը՝ Փոքր Ասիայում, Ղուկասին համարում են Ավետարանի հեղինակ: Այս տվյալները ամրապնդված են նաև այն փաստով, որ Եկեղեցու գոյության առաջին շրջանում Ղուկասի Ավետարանի արժանահավատությունը երբեք կասկածի տակ չի առնվել»:

Նախ՝ քննարկենք երրորդ Ավետարանի վավերականության արտաքին ապացույցները:

180 թ. մոտ էր, որ Լիոնի եպիսկոպոս Իրինեոսի գրչին պատկանող առաջին հայտնի տեքստը Ավետարանի հեղինակային իրավունքը միանշանակ վերագրում է Պողոսի ընկեր, բժիշկ Ղուկասին, անուն, որը երեք անգամ հիշատակված է Նոր Կտակարանում (տես՝ վերևում):

Ավանդությունը, որի համաձայն՝ Ղուկասը նաև «Գործք»-ի հեղինակն է, նախորդում է Իրինեոսի տեքստին և արտահայտում է առաջին ութ դարերի ընթացքում Եկեղեցու միաձայն կարծիքը: Վերագրման այս փաստը հետագայում հաճախ կասկածի տակ առնվեց ինչպես Ավետարանի, այնպես էլ «Գործք»-ի հետ կապված, սակայն մեզ չի թվում, թե դրա դեմ առաջ են քաշվել կտրուկ պատճառաբանություններ: Երկրորդ դարում Յուստինոս Վկան օգտվում է Ղուկասի Ավետարանից, իսկ Դաթիանոսը այն ներառում է իր հայտնի ՔԱՌԱՄԱՏՅԱՆԻ մեջ: Մարկիոնը՝ նույնպես՝ չնայած վերանայված ձևով. պատճառը կրոնական նրա ունիվերսալիզմն է: Եվ այսպես, 2-րդ դարի վերջին Ավետարանը համարվում է Ղուկասի գրչի գործ: Տերտուլիանոսն այս մասին հիշատակում կամ էլ ակնարկում է մոտ 500 անգամ:

Հետքեր են պարունակվում նաև Կղեմես Հռոմեացու նամակում, ինչպես նաև DIDACHE-ում: Հետաքրքիր է հաստատել Պապիասի լռությունը Ղուկասի վերաբերյալ: Քանի որ Ավետարանի նախաբանում Ղուկասն ինքը տեղեկություններ է տվել իր գրվածքի ստեղծման մասին, հավանական է, որ Պապիասը անհրաժեշտ չի համարել այն լրացնել այլ մանրամասներով: Երկրորդ դարում Ղուկասի Ավետարանից օգտվել են գնոստիկական շարժման երեք ղեկավարներ, որն ապացուցում է այս գրքին տրված բարձր գնահատականը. արդեն հիշատակել ենք Մարկիոնին, հիշենք նաև Վալենտինին և Վասիլիդեսին:

Յուստինոս Վկան մեծաթիվ քաղվածքներ է անում միայն Ղուկասից: Մուրատորիի մի հատվածում Ղուկասն առաջին անգամ համարվում է Ավետարանի հեղինակ: 180 թ. Իրինեոսն իր «Հերետիկոսների դեմ» տրակտատում գրում է. «Ղուկասը՝ Պողոսի ուղեկիցը, իր գրքում գրեց Պողոսի հայտնած Ավետարանը»:

Եվ վերջապես՝ Ղուկասի անվանը հանդիպում ենք Կղեմես Ալեքսանդրացու, Օրիգենեսի և Հերոնիմոսի գրվածքներում:

Այս գլխի մնացած մասը նվիրենք ներքին ապացույցներին:

Ըստ Tenney-ի՝ երեք սինօպտիկներից Ղուկասն է ամենից շատ տեղեկություններ տալիս իր ծագման մասին: Հեղինակն իրեն չի անվանում, սակայն ներածության մեջ շարադրում է իր մտադրությունները, նպատակը, մեթոդներն ու հարաբերությունները այն ժամանակակիցների հետ, ովքեր ևս նման ձեռնարկման փորձ էին արել: Ներածությունը (1:1-4) գրքի, ինչպես նաև «Գործք»-ի բանալին է: Ահա, նախ, մի քանի եզրակացություններածության վերաբերյալ.

1) Այն պահին, երբ հեղինակը սկսում է շարադրել իր գիրքը, արդեն իսկ շրջանառության մեջ էին մի քանի տեղեկություններ, որոնց մի մասը մասնավոր էր, բայց չէր կարող հիմք

ծառայել Հիսուսի կյանքն ու գործունեությունը պատկերող պատմության համար: Հեղինակը երբեք Ավետարան չէր գրի, եթե լիովին բավարարված լիներ գոյություն ունեցող նյութերով:

2) Այս պատմություններով փորձ էր արվել համակարգել ձեռքի տակ եղած փաստերը (1:1):

3) Այս նույն փաստերը հայտնի էին քրիստոնեական աշխարհին և, անկախ պատմիչներից՝ ընդունված: Դուկասը խոսում է «մեր մեջ կատարված իրադարձությունների» մասին (1:1):

4) Հեղինակն իրեն զգացել է առնվազն նույնքան տեղյակ որքան մյուսները և ի վիճակի իր իսկ պատասխանատվությամբ պատմություն գրելու. «գրելն ինձ թվաց բարի»:

5) Նրա տեղեկությունը հավատի արժանի աղբյուրից է (1:2):

6) Նա ծանոթ էր որոշ իրադարձությունների՝ կա՛մ դիտելու, կա՛մ էլ հարցաքննության ճանապարհով և, անշուշտ, ժամանակակիցն է գործողության հիմնական ընթացքի, այն իմաստով, որ ապրել էր վկայություններ տված մարդկանց սերնդի ժամանակաշրջանում: «Գծելով ամեն բանի ընթացքը» արտահայտությունը նույնն է, ինչ Բ. Տիմոթեոսին ուղղված թղթի 3:10-11 տողը, որտեղ ասված է, որ Տիմոթեոսը «հետևել» էր նրա վարպետությանը, վարքին և այլն: Օգտագործված բառերը չեն բովանդակում միայն այն միտքը, որ Տիմոթեոսը ամեն առիթով Պողոսի հետ էր քաղաքները շրջագայելիս, այլ, օրինակ, *anathen* (թարգմ.՝ «ի սկզբանե») բառի միջոցով արտահայտում է այն գաղափարը, որ նա եղել է Պողոսի ժամանակակիցը և որ շատ կայուն գիտելիքներ ուներ (բանավեճի աղբյուր), քանզի Հովհաննեսի և Հակոբոսի գրվածքներում դրանք անփոփոխ գնահատվում են «ի վերուստ»: Դուկասն այս բառն օգտագործում է երկու անգամ՝ մեկ անգամ այստեղ, իսկ երկրորդ անգամ «Գործք»-ում (26:5):

Այս վերջին հատվածում, որը տալիս է Պողոսի մի քարոզը, այն չի կարող նշանակել «ի վերուստ», այլ ավելի շուտ՝ առաջ, այսինքն՝ որոշ ժամանակ ի վեր: Գաղատացիներին ուղղված թղթի 4:9 հատվածում Պողոսն այն օգտագործում է Երուսաղեմում ստացած իր կրթության վերաբերյալ, այսինքն՝ դիմում է անցյալին: Եթե հնարավոր է Դուկասի 1:3 հատվածը թարգմանել «ի վերուստ» ձևով, ապա ենթատեքստը չի թուլատրում նման բան և, անշուշտ, չպետք է շփոթվի Պողոսի և Դուկասի լեզվի այլ կիրառությունների հետ: Երկիմաստ բառի թարգմանությունը պետք է որոշվի ընթացիկ գործածությամբ, որ մեկ այլ տեղ հանդիպում է նույն հեղինակի մոտ:

Հիմնվելով այս կանոնի վրա՝ կարելի է եզրակացնել, որ *anathen* բառով Դուկասն ի նկատի է ունեցել այն գիտելիքները, որ ունեցել է նախնինում: Քրիստոսի նրա իմացությունը ոչ վաղ անցյալում մի քանի տարվա պատմություն ունի: Այն ժամանակ, երբ միացել է ականատես աշակերտներին, հավանաբար մոտ հարաբերությունների մեջ է եղել Հիսուսի մտերիմների հետ: Այսպիսով, մեր կարծիքով, Սուրբ Հոգին հսկել է բոլոր այս նյութերի, ինչպես նաև գրվածքի լեզվի վրա:

7) Նրա իմացությունն ընդգրկում է Քրիստոսի կյանքի համարյա բոլոր կարևոր փաստերը, Ավետարանը պարունակում է առանձնահատուկ այնպիսի փաստեր, որոնք ոչ մի այլ տեղ չեն հանդիպում և որոնք շատ բնութագրական են Հիսուսի կյանքի համար:

8) Նա գրում է ճշգրտորեն և տրամաբանական կարգով: «Կարգով» բառի նրա կողմից

գործածումն անպայմանորեն չի ենթադրում ժամանակագրական կարգ, այլ, ընդհակառակը, այն, որ ունեն ճշգրիտ ծրագիր և վճռել էր դրան հավատարիմ մնալ:

Ինչքան էլ որ ուժեղ լինեն Ավետարանի վավերականությունն ապացուցող արտաքին փաստերը, ներքին փաստերը գերիշխող են: Կա երկու փաստ, որոնց մասին ամենևին չպետք է կասկածել, որ Ավետարանն ու «Գործք»-ը ունեն նույն հեղինակը, որ թե՛ մեկը և թե՛ մյուսը նվիրվել են Թեոփիլ կոչված մի անձնավորության: «Գործք»-ի վավերականության մասին կիսոսենք հետագա գլուխներից մեկում:

Բավարարվենք ընդգծել, որ եթե «Գործք Առաքելոց»-ի վավերականության ապացույցներն այնպես, ինչպես կներկայացնենք այս գրքին նվիրված գլխում, արժեքավոր են, ուրեմն այն, ինչ ասվում է «Գործք»-ի 1:1 հատվածում, արժեքավոր կլինի նաև Ղուկասի 1:1-4 հատվածի համար:

Գ. ՀԱՍՏԵԱՏԵՐԵՐԸ

Նախորդ ենթագլխում արդեն որոշ տեղեկություններ են տրվել մեր Ավետարանի հավանական հասցեատերերի մասին: Եվս մի քանի ճշգրտում: Հեղինակի նպատակն է ձեռք բերել ընթերցողներ՝ հունական ծագում ունեցող քրիստոնյաներ: Ավետարանը, ինչպես նաև «Գործք Առաքելոց»-ը, ձոնվել է ոմն Թեոփիլի:

Որոշ մասնագետների կարծիքով, այս անվան տակ պետք է հասկանալ ընդհանուր առմամբ քրիստոնյա ընթերցողների: Մյուսների համար նա հարուստ մարդ է, որին Ղուկասը ճանաչում է, և որը կարող էր հրատարակել իր գիրքը: Թեոփիլն, այսպիսով, հավանաբար, հարուստ ստրկատեր էր, որն ազատել էր Ղուկասին և նրան ուղարկել Տարսոսի համալսարան՝ բժշկություն սովորելու: Ղուկասն այնտեղ, ըստ երևույթին, հանդիպել է Պողոսին, որն էլ նրան հավատափոխ է արել: Ղուկասը ջանում է ծառայություն մատուցել իր ընկերոջն ու տիրոջը՝ շարադրելով իր Ավետարանն ու նվիրելով նրան:

Հավանական է նաև այն, որ Թեոփիլն ազնվական դասի պատկանող հույն է՝ կան հավատափոխ եղած և կան էլ քրիստոնեական հավատքն ուսումնասիրող նորադարձ: Որպես այդպիսին՝ նա ներկայացնում է այն դասակարգը, ընթերցողի այն տեսակը, որ Ղուկասը կցանկանար ձեռք բերել հույների մեջ: Մենք գիտենք, որ նա խուսափում է եբրայերեն կամ արամերեն բառերից և դրանք փոխարինում է հունարեն համարժեք բառերով, որոնք ծանոթ են ընթերցողներին: Այսպես, նա ասում է «Տեր» (18:41)՝ «Ռաբբունի»-ի փոխարեն, «Հայր» (12:42)՝ «Աբբա»-ի փոխարեն: Հույների հետաքրքրությունն ընդհանրական էր, որտեղից էլ Ղուկասի՝ Հիսուսի Անձի ու Առաքելության համընդհանրությունը շեշտելու համառությունը: Դա երևում է նրա ծագումնաբանությունից, որը հասնում է մինչև Ադամ: Գրում է, որ հրեշտակները բարի լուր են հայտնում ամբողջ ժողովրդին: Սիմոնը կանխագուշակում է, որ նոր ծնվելիք երեխան լույս է լինելու հրեաների համար ու նաև՝ Իսրայելի փառքը: Աշակերտները հանձնարարություն են ստանում Հիսուսի անունը հայտնել բոլոր ազգերին (24:47):

Մարդասիրական հետաքրքրությունը հույների մեջ բավական ընդգծված էր, այստեղից էլ՝ նրանց նկարագրություններում Մեսիան խղճում է բոլորին, հատկապես ամենազուրկ ու

ամենաաղքատ մարդկանց: Ուստի Ղուկասը նրան ներկայացնում է իբրև իսկական բարի Սամարացի (10:33):

Ավելացվում է «գերազանցագույն» (kratiste) ածականը, որն ընդհանրապես գործածվում է պաշտոնական անձանց կամ էլ արիստոկրատիայի նկատմամբ: Ղուկասի նպատակն է՝ իր ընկերոջը հնարավորին չափ ամբողջական գիտելիք տալ նույն այս ճշմարտության վերաբերյալ: Ելնելով այս արտածումներից՝ կարելի է եզրակացնել, որ հեղինակը գրական տաղանդով օժտված մարդ էր, տաղանդ, որից կարողացավ օգտվել նաև Քրիստոսի՝ իր նկարագրություններում:

Անցյալ դարում գերմանացի աստվածաբան Théodore Zahn-ը հետևյալ կերպ էր պատճառաբանում այն փաստը, որ հին աշխարհի հեղինակներն իրենց գործերը ձոնում էին ծանոթ մարդկանց. «... այն հետաքրքրության պատճառով, որ տեր-մեկենասը տածում էր կամ գործի, կամ էլ հեղինակի նկատմամբ: Ահա թե ինչու, վերջինս ակնկալում էր նյութական օգնություն, որը նրան թույլ կտար լայն շրջանառության մեջ դնել իր գիրքը: Այս կերպ նա հասնում էր երկու նպատակի. նյութական առումով հաջողեցնում էր իր ձեռնարկումը և դրանով իսկ մեծ թվով ընթերցողներ ձեռք բերում այն դասակարգի շրջանակներում, որի ներկայացուցիչներից մեկին ձոնել էր իր գրվածքը»:

Ղուկասը ուրիշ տեղ ևս երեք անգամ օգտագործել է kratiste բառը: Առաջաբանից բացի՝ այն հանդիպում է Գործք 23:26, 24:3 և 26:25 հատվածներում:

Ելնելով Ղուկասի 1:3, 1:1 և «Գործք»-ի 1:3 տողերից՝ կարելի է կարծել, որ Թեոփիլը բարձր դիրք էր գրավում, որպեսզի հեղինակը դիմեր նրան այս խոսքերով: Գուցե պատկանում էր արիստոկրատիայի խավին՝ ունենալով մեծ ազդեցություն, զբաղեցնելով բարձր պաշտոն կայսերական կառավարության մեջ: Լինելով անկեղծ հետազոտող՝ նա արդեն իրազեկ է քրիստոնեական ճշմարտությանը (1:4): Որ նա ցանկացել է անձնապես իրազեկ դառնալ՝ շատ կարևոր փաստ է, որն ապացուցում է նրա մեծ հետաքրքրությունը Ավետարանի հանդեպ: Այսուհանդերձ, թվում է, թե Ղուկասն ինչ-որ կասկածներ ունի Թեոփիլի ունեցած տեղեկությունների լրջության ու ճշգրտության նկատմամբ: Ուստի գրում է, որ վերջինս ավելի լավ իմանա փաստերը: Վստահորեն չի կարելի ասել, թե նա մկրտվել է և ոչ էլ կարելի է օգուտ քաղել նրա անվան ստուգաբանությունից (Թեոփիլ - Աստու բարեկամ), անուն, որը բավականին տարածված էր հրեաների շրջանում:

Հռոմեական կայսրությունը նրա պես շատ մարդկանց է ճանաչում: Բոլորն էլ հոգնել էին պաշտոնական կրոնի ձևապաշտությունից ու սառնությունից: Նրանք չափից ավելի շատ կրթված էին՝ գոհանալու հեթանոսության սնահավատություններով, բայց և դժգոհ էին փիլիսոփայության անպտուղ ինտելեկտուալիզմից, որպեսզի կարողանան նրա պատասխաններն ընդունել իբրև հավասարաթեք: Ճշմարտությանը նրանց հետամուտ լինելն ու կրոնական ծարավն, ուստի, չէր հազեցնում: Անշուշտ, հուդայականությունը բավականին լավ ճանաչված և նույնիսկ հարգված կրոն էր: Սակայն հույներն ու հռոմեացիները տրամադրված չէին թողնելու մշակութային իրենց ժառանգությունը և, իբրև նորադարձներ, նետվել հրեական կրոնի գիրկը:

Ահա թե ինչու, այս մարդկանցից շատերն ընդունեցին քրիստոնեական հավատքը: Դիմելով Թեոփիլին՝ Ղուկասն իրավացիորեն դիմում էր նաև կրթված հեթանոսների մի լայն խմբի:

Այսուհանդերձ, ձգտելով հագեցնել հեթանոսների հոգևոր ծարավը, Ղուկասը չէր անտեսում նաև արդեն հավատափոխ եղած հրեաներին: ՅՈԹԱՆԱՍՆԻՑ թարգմանության նրա իմացությունը ամուր ետնապլան էր նրանց մոտենալու համար: Ահա թե ինչու, հունական իր ոճին նա ավելացնում է սեմական երանգավորում, որը նրան համակրելի է դարձնում նրանց աչքերում և, միաժամանակ՝ մատչելի: Չէ՞ որ քրիստոնյաները ևս իրենց հերթին պետք է ավելի լավ իրազեկ լինեին իրենց հավատքին և այդ հավատքի առարկա Անձին վերաբերող փաստերին:

Ղուկասի գրվածքը, իրավ, ծնունդ է առել ավետարանացման կարիքից և, պատասխանելով դրա մասնավոր պահանջներին, խորացնում է նաև գոյություն ունեցող համայնքի կարիքները:

Դ. ԱՏԵՂԾՄԱՆ ՏԱՐԵԹԻՎՆ ՈՒ ՎԱՅՐԸ

Ներքին ոչ մի նշան ճշգրտորեն ոչինչ չի ասում 3-րդ Ավետարանի ստեղծման տարեթվի ու վայրի մասին: Եվսերիոսն ու Յերոնիմոսը խոսում են Ավետարանի անտիոքյան ծագման մասին: Նմանապես խոսել են նաև Հռոմի ու Ալեքսանդրիայի մասին: Խելացի կլիներ չհիշել այս վարկածներից և ոչ մեկը:

Ինչ վերաբերում է տարեթվին, ապա այն տատանվում է 64 և 150 թթ. միջև: 100 և 150 թթ. միջև ընկած տարիները չեն կարող հիշվել հենց նախաբանի պատճառով: 70-80 թթ. անհավանական են Երուսաղեմի մարգարեությունը բացատրելու համար (գլուխ 21): Շատ հավանական է, որ տարեթիվը նախորդում է 70 թ.: Դրա ապացույցները ճշգրիտ այն մանրամասներն են, որ բովանդակում է Ավետարանը, և որի հիշողությունը դժվար թե կարողանար դիմանալ Երուսաղեմի անկման ողբերգությանը:

Երկու termini կարող են համարյա բացարձակ ճշգրտությամբ ամրագրել տարեթիվը:

Ավետարանը գրվել է նախքան «Գործք»-ը և քրիստոնեության տարածումից հետո, այնպես, որ կարող էր գրավել այնպիսի մի հեթանոսի ուշադրությունը, ինչպիսին Թեոփիլն էր: Որոշ մասնագետների կարծիքով, «Գործք»-ը գրվել է Հռոմում, Պողոսի առաջին բանտարկության վերջում, քանի որ գրքի կտրուկ ավարտը ենթադրել է տալիս, որ հեղինակն այլևս ասելիք չուներ: Ինչ վերաբերում է Ավետարանին, ապա այն գրվել է Հիսուսի կյանքի ավարտից հետո: Իբրև միջին տարեթիվ կարող է ծառայել 60 թվականը, քանի որ այդ ժամանակ Ղուկասն արդեն երկար ժամանակ (առնվազն տասը տարի) ի վեր հավատքով դարձել էր Ավետարանին: Նա, հավանաբար, շատ է ճանապարհորդել Պաղեստինում, որտեղ էլ հանդիպել է Հիսուսի մտերիմ շատ մարդկանց: Պողոսի բանտարկության ժամանակ նա ուսումնասիրություններ է կատարել իր Ավետարանը գրելու նպատակով: Հավանական է, որ Ղուկասն ու Հովհաննես Մարկոսը անձնական կապեր են ունեցել, երբ վերջինս Բառնաբասի և Պողոսի ուղեկիցն է եղել քարոզչական ճանապարհորդության ժամանակ: Թեև կտրականապես հնարավոր չէ ապացուցել, որ մ. թ. 60 թվականը Ավետարանի ստեղծման տարեթիվն է, այնուամենայնիվ հիշենք այս և կամ էլ նրան մերձակա տարիները՝ իբրև ընդունելի վարկած: Այն ամենն, ինչ գրեցինք Թեոփիլի՝ Ղուկասի գրվածքի առաջին հասցեատիրոջ մասին, չի սպառում հասցեատերերի հարցը ինչպես արդեն պատճա-

ռաբանեցինք: Հասցեատեր կարող էր լինել, անկասկած, Ղուկասին ժամանակակից հասարակությունը, որը կազմված էր գերազանցապես հեթանոսներից այն գաղութներում, որտեղ հաստատվել էին հրեաներ ու, Պողոսի առաքելության շնորհիվ, բազմաթիվ հավատափոխներ: Գրքի բազմաթիվ մանրամասներ ցույց են տալիս, որ Ղուկասը չի դիմում հիմնականում հրեաներից կազմված հասարակության: Նա ճշգրտում է Պաղեստինի որոշ քաղաքների աշխարհագրական դիրքը: Նազարեթ և Կափառնայում՝ Գալիլիայի քաղաքներ, Արիմաթա՝ Հրեաստանում, Էմմավուս՝ գյուղ Երուսաղեմի մոտ և այլն: Նա բացատրում է, թե ինչ է անթթմոր բաղադրիչ առաջին՝ Ձատկի ողջակեզի օրը:

Մոտավոր տարեթիվ գտնելու համար պետք է հաշվի առնենք այն փաստը, որ Ղուկասն օգտվել է Մարկոսի Ավետարանից, ուստի գրվել է նրանից հետո: Նկատի առնելով այն, որ Մարկոսի Ավետարանը, անկասկած, չի գրվել 65 թ. հետո, կարելի է եզրակացնել, որ Ղուկասի Ավետարանը գրվել է մինչև 70 թ.: Հնարավոր չէ ճշգրիտ տվյալներ տալ Ղուկասի Ավետարանի այլ աղբյուրների վերաբերյալ:

Ե. ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մենք արդեն խոսել ենք Ղուկասի գրվածքների մի շարք առանձնահատկությունների մասին: Այստեղ ևս վեր հանենք առավել ցայտունները:

Ըստ J. S. Javet-ի՝ «3-րդ Ավետարանի ամենացայտուն առանձնահատկությունն այն հոգատարությունն է, որով հեղինակն ընդգծում է Աստծու՝ Հիսուս Քրիստոսով դրսևորված ողորմածությունը: Իրոք, նա շատ տրամադրված ձևով գրում է, որ Աստծու՝ Հիսուս Քրիստոսով ցուցաբերած սերն ուղղվում է հատկապես նրանց, ովքեր ո՛չ պատվավոր վարք ունեն, ո՛չ էլ մաքուր հավատք՝ Աստծու թագավորություն մտնելու համար: Թվում է՝ ողորմածության են արժանանում խայտառակ մեղք գործածները: Եվ եթե Ղուկասը ականատես չի եղել Հիսուսի առաքելությանը, ավետարանիչներից թերևս միայն նա է ամենից ավելի լավ հասկացել Հիսուսի ասածը, երբ հաստատում էր, որ եկել էր փնտրելու և փրկելու կորած մարդուն: 3-րդ Ավետարանն անվանել ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅԱՆ ԱՎԵՏԱՐԱՆ, նշանակում է հավատարիմ մնալ նրա մտադրությանը»:

Իրոք, 3-րդ Ավետարանի էջերում Տերը հայտնվում է՝ մարդկանց հանդեպ մեծ համակրանքով լցված: Ղուկասը հիացմունքով է ցույց տալիս Տիրոջ հետաքրքրությունը թշվառների և արտոնություններից զուրկ մարդկանց՝ կանանց, սամարացիների, աղքատների նկատմամբ: Մենք, իրոք, կարող ենք խոսել նրա ծայրաստիճան «ընդհանրական» բնույթի մասին՝ բառիս լավագույն իմաստով: Հիսուսը կլինի հեթանոսների լույսը, և փրկչության՝ Ղուկասի տեսակետը տարածվում է Իսրայելից այն կողմ՝ երկրի բոլոր ժողովուրդների վրա:

Հիսուսը «հասարակական» էակ է: Այս Ավետարանում հիշատակված են տասներեք կանայք: Հիսուսի աչքից չեն վրիպում կյանքի տխրությունները: Այսպես, ասված է, որ Նային քաղաքում Հիսուսի կենդանացրած երիտասարդը այրի մի կնոջ միակ որդին էր:

Նմանապես, Հայրոսը միայն մի աղջիկ ուներ: Այսօրինակ հատվածները վկայում են մարդկանց նկատմամբ մեծ հետաքրքրության և նրանց վրա հասնող ողբերգությունների խոր իմացության մասին:

Հիշենք նաև Հիսուսի՝ Էմմավուսի ճանապարհին երկու աշակերտների հետ ունեցած զրույցը, կամ էլ Հիսուսի բացատրությունը և Ջաքեոսին արված ընդունելությունը, նրա կապը աղքատների ու հասարակությունից օտարված մարդկանց հետ, հարուստներիս ուղղված խիստ քննադատությունները:

Իշխող մի գիծն էլ ցուցաբերած պատմական հետաքրքրությունն է: Ուրիշ ոչ մի Ավետարան չի տալիս նույնքան ճշգրիտ տարեթվեր: Այսուհանդերձ, ուրիշ ոչ մի փորձ չի արվում Հիսուսի կյանքի ծրագիրը տալու՝ ելնելով նրա մանկությունից ու կյանքի որոշակի շրջաններից: Ղուկասը Հիսուսին նայում է ունիվերսալիստի աչքերով: Նրա համար չկա ո՛չ հույն, ո՛չ հրեա, ո՛չ ստրուկ, ո՛չ ազատագրված: Նրա պատմությունը իրադարձությունների ծանձրալի ժամանակագրություն չէ, այլ Սուրբ Հոգու ներշնչանքով գրված կենդանի մեկնություն:

Ըստ Manley-ի՝ «պատմական ոչ մի գրվածք նույնքան արժանի չէ վստահության, որքան Ղուկասինը»: Նրան պետք է դասել մեծ պատմաբանների շարքին: Նա միակ ավետարանիչն է, որն Ավետարանի պատմությունը տեղադրում է համաշխարհային պատմության շրջանակում, ինչպես դա ցայտուն ձևով երևում է կայսրերի ու նրանց ֆունկցիոներների, ինչպես նաև վասալ թագավորների անունների համաժամանակյա թվարկումներից ու հաճախակի հիշատակումներից:

Նրա Ավետարանում կարող ենք նկատել նաև մյուս ավետարանիչների մոտ բացակայող մի զգացում՝ մի տեսակ կենսագրական հետաքրքրություն Քրիստոսի հանդեպ, ինչպես դա երևում է նրա մանկությանն ու պատանեկությանը վերաբերող մանրամասն տեղեկություններից: Ավելի մոտիկից քննության առնենք Քրիստոսի ծննդյան պատմությունները:

Մինչդեռ Մատթեոսը Փրկչի ծնունդը կապում է այդ ժամանակ տեղի ունեցող ողբերգական իրադարձությունների հետ, Ղուկասն այդ իրողությունը ներկայացնում է հրճվանքի նոտայով: Հասարակ հովիվներին հայտնվում են հրեշտակներ և երգելով հայտնում Փրկչի ծննդյան լուրը, նրան ուղեկցում ախռո՝ պաշտելու մանուկ Հիսուսին: Մարիամն այստեղ ավելի կարևոր դեր ունի, քան Մատթեոսի Ավետարանում:

Բացի այդ՝ պատմությունը ներառված է ավելի լայն ենթատեքստում. հաջորդում է Սկրտչի ծննդյան պատմությանը, բերվում են Մարիամի ու Ջաքարիայի սաղմոսները: Ղուկասն, այսպիսով, մարմնացման պատմությունը ներկայացնում է հազվադեպ գեղեցկություն և հոգևոր մեծ ուժ բովանդակող նկարագրությամբ: Մատթեոսի պես, նա էլ է շեշտում Քրիստոսի կուսական ծննդի փաստը: Այս կապակցությամբ հարկ է, իմիջիայլոց, նշել, որ մանրամասների տարբերությունը երկու ավետարանիչների մոտ խոսում է տարբեր աղբյուրներից օգտվելու փաստի օգտին:

Ղուկասը շեշտում է նաև ուսմունքը: Ճանապարհորդելով Պողոսի հետ՝ նա չէր կարող իրեն հաշիվ չտալ վարդապետության կարևորության մասին: Թեև իր գրվածքը չի բաժանում աստվածաբանական թեմատիկ բաժինների, բառապաշարն ապացուցում է աստվածաշնչյան ճշմարտության նրա խոր իմացությունն ու հետաքրքրությունը:

Աստծու Որդու՝ Քրիստոսի անձը ընդունվում է հրեշտակների, դևերի, Հոր կողմից, այն ներկայացվում է իբրև աստվածային և մարդկային: Փրկությունը ներկա է, և առակների մեծ մասը, հատկապես 15-րդ գլխինը, հրաշալիորեն լուսաբանում են փրկչության բնույթը:

Պողոսի գրվածքներում հանդիպող «արդարացնել» բառը հայտնվում է Ղուկասի մոտ,

նաև «Գործք»-ում, չնայած ոչ միշտ՝ աստվածաբանական իմաստով: Փարիսեցու և հարկահավաքի առակում (18:14) նա ցույց է տալիս մարդու դիրքը Աստծու դիմաց: Ինչպես մյուս Ավետարաններում, Ղուկասն ավելի շուտ աստվածաբանության հիմքեր է դնում, քան զարգացնում նման թեմա: Բայց Քրիստոսի Անձի ուսմունքը, զոջման, փրկության, մեղքի, արդարացման, փրկչության և էլի այլ բաների բնույթն ու նշանակությունը շատ ակնհայտ են:

Սուրբ Չոգու ուսմունքը ստանում է պատվավոր տեղ: Այստեղ հղումներն ավելի շատ են, քան Մարկոսի և Մատթեոսի մոտ՝ միասին վերցված: Ավետարանի գլխավոր գործիչները՝ Չովհաննես Մկրտիչը, Մարիամը, Եղիսաբեթը, Ջաքարեն, Սիմոնն ու Տերն ինքը, լցվեցին Սուրբ Չոգով՝ կատարելու իրենց վստահված առաքելությունը: Չիսուսը մկրտվեց Սուրբ Չոգով և տարվեց անապատ՝ փորձվելու: Նա ստանում է Սուրբ Չոգի, ուրախանում է և հույս փայփայում, որ իր աշակերտներն էլ կստանան այն՝ նրա շնորհիվ կատարելու իրենց առաքելությունը: «Գործք Առաքելոց»-ը էլ ավելի հեռուն է տանում Չոգու այս գործը:

Որոշ դասակարգերի պատկանող մարդիկ արժանանում են մյուսներից ավելի մեծ ուշադրության (կանայք՝ 43 անգամ, Մատթեոսի և Մարկոսի մոտ միասին՝ 49 անգամ): Նշենք նաև Եղիսաբեթին՝ Չովհաննես Մկրտչի մորը, Աննա մարգարեուհուն, Տիրոջը ծառայող կանանց, ինչպես նաև նրանց, ովքեր ներկա են խաչելությանն ու լալիս են նրա համար:

Երեխաները նույնպես առանձնահատուկ ուշադրության առարկա են, ավելի մեծ ուշադրության, քան հին աշխարհից եկող այլ տարեգրություններում է: Ղուկասը երեք գուլիս է նվիրում Չովհաննեսի և Չիսուսի մանկության նկարագրությանը: Չիսուսը հրաշք է գործում մի երեխայի համար: Նա աղքատների ու մերժվածների պաշտպանն է: Յոթ, թե ութ առակում շոշափվում է աղքատության և ճնշման հարցը: Նկարագրվում է չար հարուստը, վատ տնտեսը, անօրեն դատավորը: Լինելով տաղանդավոր գրող՝ Ղուկասը պատմում է առակներ, որոնք գեղեցիկ են ոչ միայն հոգևոր առումով, այլև գրական կառուցվածքով: Անառակ որդու մասին պատմող առակը ամբողջ համաշխարհային գրականության նովելներից ամենամեծն է: Չունարենում դա պարզության հրաշալի նմուշ է: Ոչ մի թեմա չէր կարող պատմվել այնպիսի նրբանկատությամբ, ինչպիսին Ղուկասի պատմածն է Չիսուսի ծննդի մասին:

Նույնը նաև՝ երկու աշակերտների պատմության մասին, որոնց Չիսուսը հանդիպում է Էմմավուսի ճանապարհին. սա ևս հուզիչ և ուսանելի իրողություններով լեցուն պատմություն է: Նա, ով Ավետարանը կարդում է նրա գրական արժանիքների համար, կտեսնի, որ Ղուկասի Ավետարանն արտառոց օրինակ է:

Ղուկասը վեր է հանում նաև իսկական հարստության բնույթը, քանզի մարդու կյանքը կախված չէ նրա ունեցվածքի առատությունից:

Նրա մոտ կարելի է գտնել այս թեմայով այլ տեղեկություններ ևս. անմիտ հարուստը (12:16), անհավատարիմ տնտեսը (16:1), Ղազարոսն ու չար հարուստը (16:19), ինչպես նաև խորհուրդը, որ Չիսուսը տալիս է իրեն հյուրընկալողին (14:12-14):

Հարկ է նշել նաև մի առանձնահատկություն՝ Գալիլիայից մինչև Երուսաղեմ Չիսուսի կատարած երկար ճանապարհորդության գրական տեսանկյունը. նկարագրությունը զբաղեցնում է 9:51-ից մինչև 19:27 տողը:

10 գլխից բաղկացած այս երկար միջերգը չի հետևում ժամանակագրական ոչ մի կարգի: 9:51 տողում Չիսուսն ու իր աշակերտները թողնում են Գալիլիան՝ Երուսաղեմ վերադառնալու

համար: 17:11 հատվածում նրանք կտրում-անցնում են Սամարիան՝ Գալիլիայի մոտ, որտեղից սկսել են իրենց ճանապարհորդությունը: Քանի որ այստեղ Ղուկասի պատմածը տարբեր է Մարկոսի պատմությունից, այն անվանել են ՄԵԾ ՆԵՐԱՌՈՒՄ:

Վերադարձի նկարագրությունը պակաս նշանակալից չէ՝ թե՛ բովանդակությամբ և թե՛ երկարությամբ: Այն բովանդակում է մի շարք նյութեր, որոնք չեն հանդիպում մյուս երկու Ավետարաններում, ինչպես, օրինակ՝ բարի սամարացու, անմիտ հարուստի, կորած ոչխարի, կորած դրամի, անառակ որդու, անհավատարիմ տնտեսի, հարուստի և Ղազարոսի մասին գրված պատմությունները:

Գրական մեկ այլ առանձնահատկություն կարող է նկատել միայն նա, ով ուսումնասիրել է սինօպտիկական խնդիրը: Ղուկասը հիմնվում է Մարկոսի վրա՝ փոխ առնելով նրա Ավետարանի մոտ 50 տոկոսը: Բայց տոկոսային այս հարաբերությունը քաղված է ոչ թե հատուկ ինչ-որ բաժնից, այլ ամբողջ Ավետարանից: Ուստի և զարմանալի է, որ Ղուկասը չի օգտագործում այն նյութը, որ հանդիպում է Մարկոսի Ավետարանում (6:45 – 8:10): Այս բացակայությունն էլ անվանվում է ՄԵԾ ԲԱՅԹՈՂՈՒՄ:

Զ. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Չեչտ չէ խիստ տրամաբանական կարգով ներկայացնել երրորդ Ավետարանի պլանն ու կառուցվածքը:

Ձեռնարկումն էլ ավելի է դժվարանում Մեծ Ներառման պատճառով: Ավետարանի բաժանումը հնարավոր է միայն ըստ աշխարհագրական բաժինների: Արդ, սինօպտիկական երեք Ավետարանների նմանությունն ի հայտ է գալիս հատկապես աշխարհագրական մանրամասներում: Կառուցվածքային միասնությունը, որ բնութագրական է բոլոր երեք Ավետարաններին, Հիսուսի Մկրտությունն ու Փրկությունն է Հուդայի երկրում, նրա առաքելությունը Գալիլիայում, վերադարձը Հուդայի երկիր և, վերջապես, Տանջանքները, Մահն ու Հարությունը Երուսաղեմում:

Հիմնական այս մանրատիպին Ղուկասն ավելացնում է ծննդյան մանրամասն պատմությունը, մի շարք մանրամասներ Երուսաղեմ վերադառնալու մասին, որի հետքն անգամ չկա առաջին երկու Ավետարաններում, ինչպես նաև նախաբանը, որը շատ կարևոր նշանակություն ունի:

Փորձենք Ղուկասի Ավետարանը ներկայացնել հետևյալ պլանով.

Նախաբան՝ 1:1-4

Քրիստոսի ծնունդը՝ 1:15 – 2:52

Հովհաննես Մկրտչի նախապատրաստական աշխատանքը: Քրիստոսի Մկրտությունը, Ծագումնաբանությունը, Փորձությունը 3:1 – 4:14

Գործունեությունը Գալիլիայում՝ 4:14 – 9:50

Վերադարձ Երուսաղեմ՝ 9:51 – 19:27

Գործունեությունը Երուսաղեմում՝ 19:28 – 21:38

Հիսուսի վերջին Ընթրիքը, Չարչարանքները և Հարությունը՝ 22:1 – 24:53

Հրաշքները

Ղուկասի Ավետարանում տրվում են այնպիսի հրաշքների նկարագրություններ, որոնք չեն հանդիպում մյուս Ավետարաններում: Դրանք են՝

Հրաշալի որս՝ 5:1-11

Նային քաղաքի այրի կնոջ որդու հարությունը՝ 7:11-17

Հիվանդության ոգի ունեցող կնոջ բուժումը՝ 13:10-17

Ջրգողությամբ տառապող մարդու բուժումը՝ 14:1-6

Տասը բորոտների բուժումը՝ 17:11-19

Քահանայապետի ծառայի՝ Մաղքոսի բուժումը՝ 22:51

Առակները

Ավետարանում տեղ գտած 35 առակներից 19-ը առանձնահատուկ են նրան.

Երկու պարտատերեր՝ 7:41-43

Բարի սամարացին՝ 10:30-37

Ձանձրալի բարեկամը՝ 11:5-8

Ամնիտ հարուստը՝ 12:13-21

Զգոն ծառաները՝ 12:35-38

Հավատարիմ տնտեսը՝ 12:41-48

Անպտուղ թզենին՝ 13:6-9

Գլխավոր տեղերը՝ 14:7-14

Մեծ ճաշկերույթը՝ 14:16-24

Անավարտ աշտարակը՝ 14:28-30

Պատերազմը՝ 14:31-32

Կորած դրամը՝ 15:8-10

Անառակ որդին՝ 15:11-32

Անհավատարիմ տնտեսը՝ 16:1-13

Հարուստն ու Ղազարոսը՝ 16:19-31

Վատ ծառաները՝ 17:7-10

Անօրեն դատավորը՝ 18:1-8

Փարիսեցին ու հարկահավաքը՝ 18:9-14

Քանքարները՝ 19:11-27

Է. ԼՈՒՐԸ

Ավետարանի առանձնահատուկ լուրը պարզորոշ ձևով ակնբախ է դառնում նրա մտադրությունից. Հիսուսին փառաբանել որպես կատարյալ մարդ և մարդկության Փրկիչ: Ավետարանում ընդգծվում է Հիսուսի կյանքի ու նրա վարդապետության պատմական հավաստիությունը՝ նաև տարբերակում կատարելով մի կողմից՝ քրիստոնեական հավատքի և մյուս կողմից՝ հունական շահախարդախ փիլիսոփայությունների, նույնքան էլ հրեական առակների միջև: Նա ապացուցում է, որ քրիստոնեական հավատքը կարող է ընդունվել

իբրև հավատքի արժանի միակ կրոն, որի մեջ մարդը կարող է հուսալ, որ փրկություն կգտնի ժամանակի և հավերժության մեջ: Ղուկասի մտադրությունը խիստ քարոզչական է, ահա թե ինչու հեղինակի նպատակը հռոմեական հասարակության կրթված զանգված շահելն է: Թեոփիլը և նրանք, ում ներկայացնում է, պետք է իմանան այն տեղեկությունների արժանահավատության ու հիմնավորվածության մասին, որ ժողովել էին Հիսուսի՝ Քրիստոսի վերաբերյալ: Կարելի է ավելացնել, որ Ղուկասը հիմք է տալիս Պողոս առաքյալի վարդապետական ուսմունքի համար: Նա ձգտում է ապացուցել, որ առաքյալի՝ փրկության անկաշառ և համընդհանուր լինելու մասին լուրը հնարանք չէ իր կողմից, այլ հենց Վարդապետի մտքի արծազանքը: Ղուկասը, ինչպես ասենք, մյուս ավետարանիչները ևս, չի պատմում պատմություն՝ պատմության համար: Նա պատմում է իր ընթերցողների հավատքի ու փրկության համար: Նրա հայացքն ուղղված է դեպի ապագա: Հիսուսը եկել է ստեղծելու նոր ներդաշնակություն, որը հեղափոխում է ամբողջ աշխարհը: «Գործք Առաքելոց»-ի պատմությունն ընդամենը Ավետարանների պատմության շարունակությունն է: Ղուկասը Մարմնացումը վեր է հանում Սուրբ Հոգու ուժով: Հրաշալի իր ծննդով՝ նա դարձավ մեր մարմնի մարմինը և նրանք եղբայրը, ում Աստված կանչում է իր մոտ: Աստվածային իր ընտրությամբ, իր մեջ դրսևորված ողորմածությամբ՝ նա փրկում է նրանց: Հարկահավաքներն ու վատ կյանք վարող մարդիկ ևս մտնում են փրկվածների ցուցակի մեջ: Նրանում վերանում են հասարակական ու ռասայական բոլոր խոչընդոտները:

Ո՞րն էր այս լուրի կարևորությունը Ղուկասի ժամանակակիցների համար:

Ընդհանուր գծերով ներկայացնենք Հռոմեական կայսրության ու նրա վիճակի նկարագիրը:

Այն ժամանակվա կայսրությունը Հռոմում հաստատված կենտրոնական կառավարության իշխանության ներքո գտնվող պետությունների, ցեղերի, քաղաքների, շրջանների ու ժողովուրդների հրաշալի միավորում էր: Այն տարածվում էր Անգլիայից, Եվրոպայից, Հյուսիսային Աֆրիկայից մինչև Միջին Արևելք, մինչև Եփրատի ափերը՝ Միջագետքում: Անկասկած, Ավետարանը գրելիս Ղուկասի մտքում առկա էին այս ընդարձակ կայսրությունն ու նրանում ապրող ժողովուրդները: Որ մոտիկից էր ճանաչում այս կայսրությունը, երևում է «Գործք»-ի 2-րդ գլխի՝ ժողովուրդների մանրամասն նկարագրությունից, ժողովուրդներ, որոնցում ցրված էին նաև հրեաներ:

«Գործք»-ի 18-րդ գլխում դարձյալ հանդիպում է Ղուկասի՝ ավետարանացման ու քարոզչական պատասխանատվության հանդեպ հետաքրքրության նշանը: Հետևաբար զարմանալի չէ, որ նա զբաղվում է Եկեղեցու և Պետության հարաբերություններով: Այն ժամանակ, երբ նա շարադրում էր իր գրվածքը, ողբերգական շրջան էր սկսվում Պաղեստինի և Հռոմեական կայսրության հարաբերությունների համար: Հրեաներն ըմբոստացել էին Հռոմի դեմ: Կայսրական բանակը նրանց մատնել էր անկարողության, և Երուսաղեմը մեծ չափով ավերվել էր: Ղուկասը, թվում է, վախենում էր, որ հռոմեացիների այս թշնամությունը կարող էր տարածվել նաև քրիստոնյաների հանդեպ: Թեև այս մասին բացահայտորեն չի խոսում, սակայն Ավետարանից բավականաչափ հասկանալի է դառնում, որ նա ջանում է ցրել հռոմեացիների կողմից կասկածի ամեն զգացում Եկեղեցու նկատմամբ:

Ավետարանը գրելուց մոտ քառասուն տարի առաջ Հիսուսը քաղաքական խռովության

պատրվակով մեղադրվել և խաչվել էր հռոմեական իշխանության օրոք: 60-ական թթ. սկզբում, քրիստոնյաները հալածվում են Ներոնի կողմից. Պետրոսն ու Պողոսը մահապատժի են ենթարկվում: Մտքում ունենալով այս ամենը և դիմելով հռոմեացիներին՝ Ղուկասը ջանում է ցրել հռոմեացիների՝ քրիստոնյաների հետ կապված ամեն վախ: Այդ բանը նա անում է՝ շեշտը դնելով Հիսուսի կենտրոնական լինելու հանգամանքի վրա, նրան ներկայացնում է որպես խաղաղության մարդ: Պատճառաբանությունները զուտ կրոնական են. նա անմեղ է քաղաքական ամեն տեսակ ազդարարումների հարցում (օրինակ՝ 23:2 և 13-16, 22):

Կուսակալը Հիսուսին խաչելության է դատապարտում միայն հրեաների ճնշման ներքո: Սակայն, անգամ այս կերպ, հռոմեական կառավարությունն ավելի շատ հանդես է գալիս որպես պաշտպան և ոչ թե՛ թշնամի: Բացի այդ՝ Հիսուսը ծնվել է ամենամեծ կայսրերից մեկի՝ Օգոստոս Կեսարի իշխանության ներքո, և նրա ծնունդը համընկնում է կայսերական մի հրովարտակի հետ: Երբ Հիսուսը սկսում է իր գործունեությունը, Տիբերիոսը իշխող կայսրն էր, իսկ Պոնտացի Պիղատոսը՝ Հրեաստանի կուսակալը: Երուսաղեմի ավերումը, որը տեղի էր ունեցել գուցե այն ժամանակ, երբ Ղուկասը շարադրում էր իր գիրքը, հիշատակված չէ ո՛չ այստեղ, ո՛չ էլ «Գործք Առաքելոց»-ում:

Մենք արդեն ընդգծել ենք այն փաստը, որ Ղուկասը Հիսուսին ներկայացնում է ոչ միայն որպես հրեա, ինչպես Մատթեոսն է անում, այլև իբրև ունիվերսալ մարդ: Ղուկասի լուրը պարզ երևում է քարոզչական նրա մտադրությունից: Նա փորձում է ցրել ծնվող Եկեղեցու կողմից բարձրացված քաղաքական հուզումնի ամեն վախ: Այսուամենայնիվ, Ավետարանը նաև թանկարժեք փաստաթուղթ է եկեղեցու և նրա հավատքի համար: Այն քարոզչական սովորական գիրք չէ: Սկսած Հիսուսի ծննդի ու առաքելության պատմությունից մինչև նրա Տանջանքները՝ Ղուկասը ընթերցողներին հասցնում է մինչև այն մեծ իրադարձությունները, որոնք Աստծու ժողովրդի փրկության փաստերն են: Ահա թե ինչու նա այդ լուրն ավարտում է միսիոներական հրամանով՝ Ավետարանը քարոզելու բոլոր ժողովուրդներին՝ սկսած Երուսաղեմից:

Գ Լ ՈՒ Խ 18

ՄԻՆՕՊՏԻԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՈՂ

Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի Ավետարանների առանձին-առանձին ուսումնասիրությունը մեզ մղում է քննության առնել նաև նրանց փոխհարաբերությունները: Եվ, իրոք, ուշադիր ընթերցելու դեպքում զարմանում ենք երեք Ավետարանների նմանությամբ: Միևնույն ժամանակ նկատում ենք նաև զգալի տարբերություններ: Երբեմն այս տարբերություններն ի հայտ են գալիս հենց նմանությունների մեջ, օրինակ՝ երբ նույն իրադարձությունը կամ քարոզը գրված է տարբեր բառերով կամ էլ ներկայացված է այլ լույսի ներքո: Արդեն հաստատել ենք, որ Մատթեոսի և Ղուկասի Ավետարաններն ավելի շատ քարոզներ են բովանդակում, քան Մարկոսինը: Մենք նկատում ենք, որ առաջինի մոտ այս նյութն ավելի

լավ է կազմակերպված, քան երկրորդի: Մյուս կողմից, հաստատել ենք նաև, որ Մարկոսը հակված է ավելի շատ ներկայացնելու Հիսուսի գործերը, այլ ոչ թե քարոզները, թեև բերում է ամենամեծ քարոզներից առնվազն երկուսը: Սակայն, ընթերցելով Ավետարանները, հասկանում ենք, որ պատասխանների թեման, եղանակը և տրամադրությունը, որ նրանք ստեղծում են ընթերցողների մեջ, ում հանդիպում ենք, և փորձը, որ ձեռք ենք բերում դրանք ընթերցելիս, և ամեն ինչից վեր` Հիսուսի կերպարն ինքը, մեկ միասնություն են կազմում: Հետևաբար, իրավունք ունենք երեք տարբեր հեղինակների այս գրվածքներն անվանել Ավետարան:

Նշված հանգամանքների խտացված միասնությունն է նրանց տալիս «Ավետարան» միակ անվանումը` դրանք որակելով նաև իբրև Սինօպտիկ Ավետարաններ:

Հունարեն *synopticon* բառը նշանակում է «ընդհանուր, ամբողջական պատկեր»: Այն նաև վեր է հանում երեք Ավետարանների նմանությունների ու տարբերությունների` մեր կողմից հաստատված խնդիրը: Քննության առնենք այս երեք գրքերի նմանություններն ու տարբերությունները:

Ա. ՆՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) Երեք Ավետարաններին ընդհանուր հատվածները.

Մարկոսի Ավետարանի նյութի մոտ 90 տոկոսը այս կամ այն ձևով հանդիպում է Մատթեոսի և Ղուկասի Ավետարաններում:

2) Երկու Ավետարաններին ընդհանուր հատվածներ.

Մարկոսի և Մատթեոսի Ավետարանները բովանդակում են տասներկու ընդհանուր հատվածներ, որոնք չեն հանդիպում Ղուկասի մոտ: Մարկոսի և Ղուկասի Ավետարանների չորս հատվածներ չեն հանդիպում Մատթեոսի մոտ: Դրանցից երկուսը վերաբերում են Մարկոսի Ավետարանի վիճահարույց 16:9-20 հատվածի երկրորդ մասին: Նկատելի համապատասխանություն կա նաև Մատթեոսի և Ղուկասի Ավետարանների միջև, որի մեջ Մարկոսը ոչ մի դեր չի խաղում: Նրանք ունեն ընդհանուր 28 տող, որը համապատասխանում է յուրաքանչյուր գրքի ավելի քան 200 տողի:

3) Ընդհանուր հատվածների թիվը.

Եթե Մատթեոսի Ավետարանը նշանակենք Ա, Մարկոսինը` Բ և Ղուկասինը` Գ տառերով, ապա նրանց մոտ կհայտնաբերենք ընդհանրություն կազմող նյութի հետևյալ զուգորդումները.

Ա-ն, Բ-ն և Գ-ն ունեն ընդհանուր 93 հատված, Ա-ն և Բ-ն` ընդամենը տասներկու, Ա-ն և Գ-ն` քսանութ, Բ-ն և Գ-ն` միայն չորս:

4) Բառապաշարի նմանությունները.

Բազմաթիվ հատվածներում օգտագործված է այնպիսի բառապաշար, որը ենթադրաբար նման է մյուս գրքի կամ գրքերի համապատասխան հատվածի բառապաշարին: Քսան, երեսուն կամ ավելի շատ բառեր քիչ են տարբերվում կամ համարյա չեն տարբերվում` խոսքը վերաբերում է թե՛ այդ բառերին, թե՛ նախադասության մեջ նրանց շարադասությանը:

5) Կառուցվածքային նմանություններ.

Երեք Ավետարաններն ունեն ընդհանուր հիմնավոր կառուցվածք: Դա շատ պարզ երևում է Մարկոսի մոտ: Խոսքը վերաբերում է այն բաժնին, որտեղ խոսվում է Հիսուսի՝ Հրեաստանում ունենալիք առաքելության նախապատրաստության, Գալիլիայում նրա գործունեության, Հրեաստան վերադառնալու, Հրեաստանում և Երուսաղեմում նրա առաքելության և, վերջապես, Տանջանքների, Մահվան ու Հարության մասին:

Բ. ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) Պատմական շրջանակում.

Նույն նյութը կարող է հանդիպել մեկ ուրիշ ենթատեքստում, և կամ էլ նույն փաստը կարող է տեղի ունենալ մեկ այլ պահի՝ այլ առիթով և իբրև վկաներ ունենալ ուրիշ գործոններ: Ցնցող օրինակ է Ձեբեղոսի որդիների խնդրանքի հետ կապված միջադեպը. Մատթեոս 20:20-28, Մարկոս 10:35-45, Դուկաս 22:24-27:

2) Գրական կառուցվածքն ու բովանդակությունների բնույթը.

Մատթեոսի Ավետարանի գրական կառուցվածքը, ինչպես արդեն նշել ենք, բավականին տարբերվում է Մարկոսի և Դուկասի Ավետարանների կառուցվածքից: Բացի այդ՝ Մարկոսի Ավետարանի պլան-կառուցվածքը տարբեր է Մատթեոսի և Դուկասի Ավետարանների պլան-կառուցվածքից հենց այն փաստով, որ պատմողական նյութը գերակշռում է (փաստերի ու իրադարձությունների պատմություններ): Մինչդեռ Դուկասի Ավետարանը մյուս երկուսից տարբերվում է Հիսուսի՝ Երուսաղեմ կատարած ճանապարհորդության մասին պատմությամբ (9:51 – 18:14): Մարկոսի Ավետարանում չի տրվում ծագումնաբանությունն ու Հիսուսի ծննդյան պատմությունը: Մատթեոսի և Դուկասի մոտ դրանք կան, սակայն բավականին տարբեր են:

3) Բառապաշարն ու պատմական մանրամասները.

Նույն նյութը, տարբեր աստիճանի փոփոխություններով, կարող է շարադրվել տարբեր կերպ՝ կապված գրական և պատմական ներկայացման հետ:

4) Իմաստը.

Նույն թեման կարող է ներկայացվել իմաստային էական տարբերությամբ՝ նույն բառերին հաղորդելով տարբեր գործառույթներ: Այս առումով տես, հատկապես, երիտասարդ հարուստի հետ կապված պատմության զուգահեռները:

Գ. ՆՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԶՈՒԳԱՅԵՌ ՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ

Քիչ հետո բերվող օրինակներում կտեսնենք, թե որքան բարդ ու խորն են նմանություններն ու տարբերությունները: Դա երևում է, հատկապես, զուգահեռ հատվածներն ուշադրությամբ ընթերցելու, վերընթերցելու և համեմատելու դեպքում: Ահա մի օրինակ.

1) Նույն իրադարձությունը՝ տարբեր բառերով և բառերի շարադասությամբ. Մատթեոս

3:11, Մարկոս 1:7-8, Ղուկաս 3:16: Ահա թե ինչ է պարզվում սովորական վերլուծությունից:
ա) Մատթեոսի և Ղուկասի Ավետարաններում նախ ներկայացվում է Հովհաննես Սկրտչի քարոզը. «Ես ձեզ մկրտեցի ջրով»: Մարկոսի մոտ նույն այս նախադասությունը հանդիպում է վերջում:

բ) Միայն Մատթեոսն է տալիս «զղջալու համար» արտահայտությունը:

գ) Քերականական ենթատեքստը, որտեղ հանդես են գալիս «ավելի ուժեղ, քան ես» բառերը, երեք Ավետարաններում տարբեր է:

դ) Մատթեոսի Ավետարանում Հովհաննես Սկրտչին արժանի չէ հազմելու Հիսուսի սանդալները: Ղուկասի մոտ նա արժանի չէ արծակելու Հիսուսի կոշիկի թելերը: Մարկոսի Ավետարանում արժանի չէ կռանալու՝ արծակելու Հիսուսի կոշիկների թելերը:

2) Գործողության թեմայի տարբերություններ. տես՝ Մատթեոս 8:5-13 և Ղուկաս 7:1-10:

3) Մեջբերման փոփոխում՝ մի Ավետարանում, կրճատում՝ մյուս երկուսում. Մատթեոս 19:16, 17, 19, 20, Մարկոս 10:17-21, Ղուկաս 18:18-21: Այս հատվածներում առանձնապես կարևոր է նշել տարբեր այն մեջբերումները, որ Մատթեոսը կատարում է «բարի» ածականի հետ կապված՝ այս բառի առաջին երկու գործածությունների ժամանակ. համեմատել Մարկոսի և Ղուկասի Ավետարանների հետ:

4) Տեղի և թվի փոփոխություն. Մատթեոս 20:29-30, Մարկոս 10:46-47, Ղուկաս 18:35-38:

5) Բացառության կետի ավելացում Ավետարանում. համեմատել Մատթեոս 19:9 և 5:32, Մարկոս 10:11-12, Ղուկաս 16:18:

Մենք հիշատակեցինք տարբերությունների և նմանությունների ամենանկատելի դեպքերը միայն:

Ուշադիր ընթերցանության դեպքում կարելի է վեր հանել մի շարք այլ փոքր կետեր ևս, մասնավորապես՝ բառապաշարի մեջ: Պատահական ընթերցանության ժամանակ հազիվ թե հնարավոր է դրանք նկատել: Դրանք վեր հանելու և քննության առնելու լավագույն եղանակը Ավետարաններին զուգահեռաբար դիմելն է: Այնուհանդերձ, անգամ մնան մեթոդը չի կարող վեր հանել առաջին երեք Ավետարանների բոլոր ընդհանրություններն ու տարբերությունները: Լավ հասկանալու համար անհրաժեշտ կլիներ կատարյալ Ավետարանների կատարյալ ներդաշնակություն:

Դ. ՍԻՆՕՊՏԻԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված տարբերություններն ու նմանությունները պատահական չեն: Խնդիրը բարձրացվել էր դեռևս Եկեղեցու ստեղծման սկզբում (կամ՝ համարյա սկզբում), քանի որ սիրիական ծագում ունեցող մի հեղինակ՝ Դաթիանոսը, մ. թ. 170 թ. կազմել է Ավետարանների եզակի մի տարբերակ (ներառյալ նաև Հովհաննու Ավետարանը): Իր այս ներդաշնակ գործը նա անվանեց ՔԱՌԱՄԱՏՅԱՆ:

Մեզ հայտնի չէ, թե ինչ էլեզվով է ՔԱՌԱՄԱՏՅԱՆ-ի բնագիրը: Պահպանվել են արաբերեն, հայերեն, լատիներեն թարգմանության հին օրինակներ:

Հեղինակը մտադիր էր մեկ հատորով ներկայացնել չորս Ավետարանների բովանդակությունը: Դաթիանոսն իր գործն իրականացրեց մեծ իրազեկությամբ: Բայց ընտրության ժամանակ նա մի կողմ է թողել տող-հատվածների համարյա մեկ քառորդը, որոնք գրեթե

բոլորն էլ մտնում են առաջին երեք Ավետարանների մեջ: Եկեղեցին, սակայն, չի պահպանել Դաթիանոսի այս տարբերակը, և գերիշխել է Ավետարանների առանձին - առանձին ընթերցանությունը:

Սակայն այս գաղափարը երկար ճանապարհ է անցել, քանի որ ժան Կալվինն ինքը մեկ մեկնաբանություն (ներդաշնակություն) է գրել առաջին երեք Ավետարանների վերաբերյալ: Մեծ բողոքականը դրանք մեկնաբանել է իբրև *անբաժանելի* միասնություն՝ քիչ ուշադրություն դարձնելով տարբերություններին:

Մասնագետները մեծ հոգատարություն ցուցաբերեցին՝ հասկանալու երեք Ավետարանների հարաբերությունների բնույթը: Ասում են, որ Հովհաննու Ավետարանն իրավացիորեն առանձնակի տեղ է գրավում:

Սուրբ Օգոստինոսի կարծիքով, Մատթեոսի Ավետարանն առաջինն է կազմվել: Դրանից տեղեկություններ են քաղել ինչպես Ղուկասը, այնպես էլ Մարկոսը: Նրա այս կարծիքը շատ երկար ժամանակ իշխող էր: Միայն 18-րդ և 19-րդ դարերում են ծնունդ առել նոր վարկածներ:

Նոր Կտակարանի որոշ մասնագետների կարծիքով, նախնական մի Ավետարան հավանաբար գրվել է *արամերենով*՝ Հիսուսի և նրա աշակերտների օրոք Պաղեստինում խոսվող լեզվով: Երեք Սինոպտիկները, հավանաբար, օգտվել են դրանից՝ գրելու իրենց գրքերը: Ոմանք էլ գտան, որ առաքյալները գրել են պատմություններ Հիսուսի խոսքերի ու Գործերի մասին, որոնք էլ հետագայում օգտագործել են միսիոներներն ու հեթանոսները: Դրանք հավաքվել են հունարեն լեզվով՝ տարիների ընթացքում հիմք կազմելով երեք Ավետարանների համար:

Մեկ ուրիշ դպրոց էլ մեծ ուշադրություն է դարձնում բանավոր ավանդության: Հիսուսի կյանքին վերաբերող բազմաթիվ պատմություններ հավանաբար փոխանցվել են բերնեբերան կամ պատմելու, կամ կատեխիզիկ ուսուցման և կամ էլ բանավոր քարոզի միջոցով:

Ակզբում դա արվել է արամերենով, սակայն Ավետարանը տարածվելուն զուգընթաց, այս պատմությունները թարգմանվել են հունարեն: Հունարեն թարգմանությունը դարձել է Ավետարանների վերջնական շարադրման հիմքը:

Ելնելով տարբեր վարկածներից՝ Ավետարանների ծագման վերաբերյալ ձևավորվեց մի կարևոր կարծիք՝ այն հիմքը, որի վրա մշակվեցին նորագույն այլ վարկածներ: Դրանցից մեկը վերաբերում է Մարկոսի Ավետարանի Q, M և L կոչված աղբյուրների բնույթին ու գործառույթին:

Համառոտ ներկայացնենք այս կարևոր վարկածը:

Սինոպտիկական խնդրի ամեն մի ուսումնասիրություն ելնում է այն պնդումից, որ առաջին երեք Ավետարանների միջև գոյություն ունի գրական հիմնավոր կապ: Մեկ Ավետարանը կախված է մյուսից: Հարցը հետևյալն է՝ ո՞րն է նախորդել մյուսներին և հիմք դարձել նրանց համար: Եթե կան այլ աղբյուրներ, ինչպե՞ս նկարագրել կան ճանաչել: Այս հարցերին հատկացված ուշադրությամբ ծնունդ առան բազմաթիվ համաձայնություններ:

Ա) Մարկոսի Ավետարանն է հիմնայինը: Այն գրվել է Մատթեոսի և Ղուկասի Ավետարաններից առաջ. այս երկուսը զգալիորեն հենվում են առաջինի վրա: Գոյություն ունեն հիմնավոր պատճառներ Մարկոսի Ավետարանի առաջնային լինելն ընդունելու համար:

Բ) Մատթեոսի և Ղուկասի Ավետարաններում կան ընդհանուր մի շարք նյութեր, որոնք

բացակայում են Մարկոսի Ավետարանում. մոտ 230 տող-հատված՝ Մատթեոսի և 200-ը Ղուկասի մոտ: Խոսքն այնպիսի նյութի մասին է, որը մասնատում է Հիսուսի քարոզը: Նկատելի նմանության պատճառով եզրակացրել են, որ, հավանաբար, երկուսն էլ օգտվել են նույն աղբյուրից: Գերմանացի մի գիտնական ենթադրյալ այս աղբյուրին տվեց QUELLE անունը, որը գերմաներենում կոչվում է ԱՂԲՅՈՒՐ (կրճատ՝ Q): Բավականին հավանական վարկած: Բայց, հակառակ Մարկոսի Ավետարանի, այն չունեցավ գրական որոշակի գոյություն: Ոչ մի բանավոր կամ գրավոր ապացույց չկա Quelle-ի գոյության մասին:

Այնուհանդերձ, այն ընդունվում է իբրև պարզ հիմք՝ ելնելով Մատթեոսի ու Ղուկասի Ավետարանների նմանությունների դիտարկումից բխող սովորական ենթադրությունից ու նաև՝ որ այս նյութերը չեն հանդիպում Մարկոսի մոտ:

Եվ այսպես, վարկածի համաձայն, Մատթեոսն ու Ղուկասը, Մարկոսի գրքից բացի, օգտագործել են նաև ընդհանուր այս աղբյուրը՝ իրենց Ավետարանները գրելու համար:

Գ) Բացի այդ՝ նշենք, որ Մատթեոսի, ինչպես նաև Ղուկասի Ավետարաններում կան այնպիսի նյութեր, որոնք հատուկ են միայն նրանց և չեն հանդիպում մեկ այլ Ավետարանում: Այսպես, օրինակ՝ ծննդի մասին պատմող պատմությունների մանրամասները Մատթեոսի և Ղուկասի Ավետարաններում և կամ միայն Մատթեոսի կամ Ղուկասի Ավետարաններին հատուկ քարոզներում, ինչպես և Հիսուսի Տանջանքներն ու Հարությունը ներկայացնող պատմություններում տեղ գտած որոշ իրադարձություններ՝ հատկապես Ղուկասի Ավետարանի 24-րդ գլխում:

Հիսուսի՝ Մատթեոսի Ավետարանում տեղ գտած մի շարք քարոզների համար իբրև աղբյուր է համարվում M կոչված անհայտ մի քարոզ, մինչդեռ Ղուկասը հավանաբար օգտվել է L տառով նշվող մեկ այլ աղբյուրից: Բայց M-ին և L-ին հատկացված այս դերը նույնքան քիչ է հաստատված, որքան Q-ի դերը: Պետք է, սակայն, հաշվի առնել այն հանգամանքը, որ M-ը և L-ը ամենևին էլ չեն մատնանշում երկու Ավետարաններն իրենց այժմյան տեսքով: Դրանք նշում են միայն ենթադրյալ երկու աղբյուր: Ինչպես QUELLE-ի դեպքում՝ *բացարձակապես* համոզվածություն չկա այն հարցում, որ դրանք գոյություն են ունեցել:

Այսուամենայնիվ, պարզ և լիովին համոզիչ ապացույցի բացակայությունը չպետք է նշանակի, թե այդ աղբյուրները գոյություն չեն ունեցել: Հարցը խորացնելու համար հարկ է կարդալ Նոր Կտակարանի գրականությանը վերաբերող հրաշալի մի ներածություն: Աստվածաշնչի միահատոր մեկնաբանությունը (Աստվածաշնչյան Նոր Մեկնություն) կարող է այլ տեղեկություններ ևս հաղորդել խնդրի վերաբերյալ:

Ինչ վերաբերում է մեզ, ապա կեզրափակենք հետևյալ դիտարկումներով: Չպետք է զարմանալ, որ Ավետարանները ստեղծվել են այս կերպ, այսինքն՝ նախապես գոյություն ունեցող փաստաթղթերն ու աղբյուրներն ի մի բերելով: Հին Կտակարանը նույնպես մեջբերումներ է անում այնպիսի գրքերից ու փաստաթղթերից, որոնք չկան ձեռքի տակ, բայց որոնցից օգտվել են կանոնական 39 գրքերի հեղինակները՝ տեղեկություններ քաղելու նպատակով: Նույնը նաև՝ «Հավիտենականի պատերազմները» գրքի, Ժաշերի, Սամուելի, Նաթանի, Գադի գրքերի, ինչպես նաև Իսրայելի թագավորների ժամանակագրության և Հուդայի գրքի մասին:

Եզրասի և Նենմիայի գրքերը բովանդակում են ծագումնաբանություն, ուղարկված կամ

ստացված նամակներ, ինչպես նաև փոխառյալ այլ փաստաթղթեր: «Գործք Առաքելոց»-ը տալիս է Պողոսի մի քարոզը, որտեղ մեջբերումներ են արվում հույն բանաստեղծներից, իսկ ուղերձները մեզ են ներկայացնում վաղ շրջանի Եկեղեցու օրհներգեր ու դավանաբանություններ, ինչպես նաև մեջբերումներ հեթանոսական աղբյուրներից:

Գ Լ ՈՒ Խ 19

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎԻՏՆՆՈՒ

Ա. ՀԵՂԻՆԱԿԸ

Չորրորդ Ավետարանի ընթերցումը մեզ թույլ է տալիս մի շարք փաստեր վեր հանել նրա հեղինակի վերաբերյալ: Նա աշակերտ է և, թվում է, սովոր է մտածել արամերենով, չնայած նրա Ավետարանը գրված է հունարենով: Այստեղ քիչ են ստորադասական նախադասությունները, բավականին հաճախ են օգտագործվում արամերեն կամ եբրայերեն բառեր, որոնք, սակայն, բացատրվում են: Թվում է՝ հեղինակը տեղյակ է հրեական ավանդույթին: 1:19-28 հատվածն ակնարկում է Մեսիայի սպասման մասին: Նա բավականին լավատեղյակ է հրեաների՝ Սամարացիների հանդեպ ունեցած զգացմունքներին (4:20):

«Հովհաննես» նշանակում է՝ «Աստված շնորհալի է»: Հիսուսի կյանքի այն դրվագները, որոնց մասնակցում է Հովհաննեսը, չափազանց մեծ թիվ են կազմում բոլորը թվարկելու համար:

Հովհաննեսը Գալիլիայի Բեթսայիդա քաղաքից էր. դա նաև Անդրեասի և Պետրոսի քաղաքն էր: Մենք ծանոթ ենք նրա ընտանիքի երեք անդամի և՛ նրա եղբայր Հակոբոսը, հայրը՝ Ջեբեդոսը, և մայրը՝ Սողոմեն: Թվում է՝ ծնողները նպաստավոր դիրք ունեն: Եթե Ջեբեդոսը Սողոմեի՝ Կույս Մարիամի քրոջ ամուսինն է, ինչպես ենթադրում են, ապա Հովհաննեսը պետք է, որ լինի Հիսուսի առաջին զարմիկը: Նա առաջիններից մեկն էր, որ հետևեց Տիրոջը: Նրա անունը նշված է իբրև այնպիսի մեկը, որին Հիսուսը սիրում էր (21:24) և Տիրոջ երեք մտերիմներից մեկն էր (Մարկոս 5:37, 9:2, 14:33):

Նրան կոչել են «որդի որոտման» (Մարկոս 3:17):

Տիրոջ և մյուսների հետ ունեցած նրա հարաբերություններում եղել է սեր, հավատարմություն և անզուսպ եռանդ: Առաջին անգամ նրան հանդիպում ենք Հուդայի երկրում, որտեղ շտապել էր՝ ընդունվելու Մկրտչի դպրոց: Սակայն Գալիլիայում է նա պատասխան տալիս պարզ ու որոշակի մի կանչի. թողնում է ամեն ինչ՝ հետևելու Հիսուսին: Ավելի ուշ ընտրվում է տասներկուսի կազմում: Պետրոսի, Անդրեասի և Հակոբոսի՝ իր եղբոր հետ միշտ առաջինն է աշակերտների շարքում: Պետրոսի ընկերն է: Հավանական է, որ Հիսուսի՝ Նիկողեմոսի հետ ունեցած զրույցը կայացել է նրա տանը: Հովհաննեսը մասնակցում է տասներկու առաքյալների՝ Մատթեոսի Ավետարանի 10-րդ գլխում նկարագրված առաքելու-

թյանը: Եղբոր հետ պատրաստ է վանելու նրան, ով խրատում է Հիսուսի անունից (Ղուկ. 9:49): Եվ անհավատներին պատժելու բուռն ցանկությամբ՝ նա էլ եղբոր պես ուզում է, որ կրակ թափվի Սամարացիների մի գյուղի վրա (Ղուկաս 9:52-54):

Երկու եղբայրները խնդրում են մորը՝ Հիսուսին ներկայացնելու իրենց աղերսը՝ կապված այն դիրքի հետ, որ նրանք կուզենային զբաղեցնել Աստծու թագավորության մեջ (Մատթեոս 20:20-28): Վերջին ընթրիքին Հովհաննեսը Հիսուսի կողքին էր՝ օգտվելով մտերմության արտոնությունից (Հովհ. 13:23):

Հիսուսի դատավարության ժամանակ նա թույլտվություն է ստանում մտնել քահանայապետի մոտ (18:15): Նա մասնակցեց Աստուծոյ դատին, վկա եղավ խաչելությանը, ինչպես երևում է 19:26-27 հատվածից: Հիսուսը նրան խնդրեց հոգ տանել իր մոր նկատմամբ: Հիսուսի մահվանն ու թաղմանը հաջորդած երկու գիշերները նա անցկացրել է Պետրոսի մոտ, առաջինն այցելել դատարկ գերեզման և «տեսնելով հավատացել» (20:8):

Ավետարանի ավարտը ցույց է տալիս, որ քրիստոնեական դարն սկսվելուց հետո Հովհաննեսը երկար է ապրել, քանզի այլ կերպ չի կարելի ապացուցել նրա բացառիկ երկարակեցությունը: Եկեղեցու պատմության առաջին տարիներին Հովհաննեսը շարունակում է ունենալ ավելի աննշան դեր, այնպիսին, ինչպիսին Ավետարանում է: «Գործք Առաքելոց»-ում նա հայտնվում է ընդամենը երեք անգամ, քանի որ նախաձեռնությունը միշտ վերցնում է Պետրոսը: Սակայն հոգու խորքում խոշոր գործ էր կատարում՝ նրան նախապատրաստելով գալիք առաքելությանը: Ըստ ուղերձների՝ թվում է, թե Եկեղեցուն նա զբաղեցնում է բարձր դիրք: Գուցե մահացել է առաջին դարի վերջին: Համաձայն Գաղատացիներին ուղղված թղթի 2-րդ գլխի՝ նա ներկա էր, երբ Պողոսը Երուսաղեմի գլխավոր առաքյալների հետ գրուցում էր մովսիսական օրենքի բոլոր կանխադրույթները պահպանելու վիճահարույց հարցի շուրջ: Երուսաղեմի տիեզերաժողովից հետո (Գործք 15) այլևս ոչինչ չգիտենք նրա մասին՝ մինչև Փոքր Ասիայի եկեղեցիներում գործունեություն ծավալելը, որի վերաբերյալ խոսվում է 2-րդ դարից եկող ավանդության համաձայն: Հավանական է, որ նա ոչ թե թողել է Երուսաղեմը՝ նախքան 70 թ. նրա ավերվելը, այլ հետևել է Եկեղեցու՝ 67 թ. Պիրեա տարագրվելուն, և որ Պողոսի ու նրա գլխավոր օգնականների՝ Տիտոսի և Տիմոթեոսի մահվանից հետո հաստատվել է Փոքր Ասիայում՝ դառնալով լքված հոտերի հովիվ:

Դարձյալ ավանդության համաձայն՝ ուրիշները ևս հետևել են նրան: Նա, հավանաբար, հիմնել է Եփեսոսի Եկեղեցին, թեև քննադատությունը հերքում է այս փաստի պատմականությունը: «Կռվի մեծ ձին» արտահայտությունը Պապիասից կատարված մեջբերում է՝ փոխանցված Եվսեբիոսի կողմից. այստեղ խոսք է գնում Հովհաննես անունը կրող ոմն սարկավագի մասին: Խոսքն, արդյոք, Հովհաննես առաքյալի⁶, թե՞ մեկ ուրիշ Հովհաննեսի մասին է: Վարկածներն անսահման են: Բավական է միայն ասել, որ 2-րդ դարի ավանդությունը բավականին ճշգրիտ տվյալներ է տալիս՝ հավատալու Եփեսոսում Հովհաննես առաքյալի գործունեությանը:

Ահա մի մեջբերում Իրիմեսոսից.

«Բոլոր սարկավագները, որոնք Ասիայում հանդիպել են Հովհաննեսին՝ աշակերտին, վկայում են, որ նա իրենց հաղորդել է այս բաները, քանի որ ապրել է նրանց հետ մինչև Տրայանոսի դարաշրջանը: Իսկ ոմանք էլ տեսել են ոչ միայն Հովհաննեսին, այլև ուրիշ առաքյալների և»:

Իր բուռն, Վարդապետի ազդեցությամբ չափավոր դարձած բնույթով և Փրկչության շնորհիվ՝ Հովհաննեսը դարձավ սիրո առաքյալը, և նրա բարեպաշտությունը վարակեց նաև մյուս առաքյալներին: Բայց և այնպես կրակը, որը նրա բնույթի մեջ էր, ավելի ուշ երևում է նաև նրա լեզվում (8:44՝ անհավատների դեմ և Ա. Հովհաննես 3:10 «սատանայի զավակները»): Նույն մարդն է խոսում նաև Ա. Հովհ. 4:7 հատվածում: Մենք կարծում ենք, որ այս երկու մոտեցումներն ամենևին էլ հակասական չեն. Հովհաննեսը տալիս է նույն մարդու կերպարը, որը կարող էր եղած լինել մեծ «մեղսագործ», և որին Քրիստոսը դարձրել էր իր Ավետարանի վկաներից մեկը:

Իմիջիայլոց, նշենք, որ նրա եղբայր Հակոբոսը 44 թ.՝ Հերովդեսի օրոք, մահվան դատապարտվեց, և, ավանդության համաձայն՝ Մարիամը՝ Տիրոջ մայրը, որին Հովհաննեսն իր մոտ էր վերցրել, մահացել է, հավանաբար, 47 թվականին:

Ինչ վերաբերում է Հովհաննեսին, ապա նա մահացել է, հավանաբար, առաջին դարի վերջին: Եթե կանչվելու ժամանակ եղել է ընդամենը 20 կամ 25 տարեկան, ապա պետք է, որ մահացած լինի 90 կամ 95 տարեկանում: Պոլիկարպոսն ու Պապիասը, որոնք ծնվել են 70 թ. մոտերքում, պետք է, որ անձնապես լավ ճանաչած լինեն նրան: 9-րդ դարի ժամանակագրության համաձայն՝ Հովհաննեսը նահատակվել է հրեաների ձեռքով: Պողոսի պես, նա էլ չի ամուսնացել: Եվ, վերջապես, նշենք նաև Հիսուսի հետ նրա առաջին հանդիպման վառ հուշը. նա ճշգրտում է ժամը՝ «ժամը մոտավորապես տասն էր» (1:39):

Բ. ՎԱՎԵՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Չորս Ավետարանների մեջ ամենից ավելի շատ հավաստի ապացույցներ բովանդակում է Հովհաննու Ավետարանը (20:20-24): Ինչ վերաբերում է ներքին ապացույցներին, ապա դրանք հենվում են «սիրված աշակերտ» հայտնի արտահայտության վրա: Ո՞վ է նա: Անշուշտ, չկա ուղղակի վկայություն այն մասին, որ Հովհաննեսն է եղել այն սիրված աշակերտը, որի մասին խոսվում է Ավետարանում: Այնուամենայնիվ, հետևյալ հատվածները խոսում են այս դրույթի օգտին. 13:23-25, 19:25-26, 20:2-10, 21:7, 21:20-23, 21:24:

Բացի այդ՝ հնարավոր է, որ նա, ով տեսել է, թե գինվորներն ինչպես են նետով ծակում Հիսուսի կողերը (19:26, 34, 35), Ավետարանի հեղինակն է: Այս վկայություններից հեշտությամբ կարելի է եզրակացնել, որ սիրված աշակերտը տասներկուսից մեկն է: Փաստը, որ սիրված աշակերտը տասներկու առաքյալներից է, բացարձակորեն չի խոսում այն բանի օգտին, որ Հովհաննեսի մասին է: Դա ապացուցելու համար պետք է դիտարկենք սինօպտիկական Ավետարանների որոշ տվյալներ: Ջեբեդոսի որդիները՝ Հակոբոսն ու Հովհաննեսը, Պետրոսի հետ միայն ներկայացնում են մտերիմների շրջանակը (Դուկաս 8:51, Մարկոս 9:2, Մատթեոս 17:1, Դուկաս 9:28, Մարկոս 14:33, Մատթեոս 26:37):

Սոտ հարաբերություն գոյություն ունի նաև Պետրոսի ու Հովհաննեսի միջև (Գործք 3:1-11, 8:14 և այլն): Հերովդեսի կողմից Հակոբոսը մահվան դատապարտվեց (Գործք 12)՝ թողնելով Պետրոսին ու Հովհաննեսին: Հետևաբար, 4-րդ Ավետարանի՝ սիրված աշակերտի մասին հիշատակումը մեծ կարևորություն է ներկայացնում (բացառությամբ 19:26 հատվածի): Պետրոսը մտերիմ է նրա հետ: Այս դիտարկումները ճշգրիտ ձևով ցույց են տալիս, որ

սիրված աշակերտը ոչ այլ ոք է, եթե ոչ՝ Յովհաննեսը, և որ նա է իր անունը կրող Ավետարանի հեղինակը:

Բացի այդ՝ արժանահավատությունը, թեև անուղղակիորեն, հաստատվում է նաև այն փաստով, որ Ավետարանում ոչ մի տեղ նրա անունը հիշատակված չէ: Յովհաննեսն ամենից ավելի մոտ անձնական հղումը 21:2 հատվածում է, որտեղ ասվում է, որ Յիսուսը, մյուսներից բացի, հայտնվում է նաև Ձեբեդոսի որդիներին (սակայն հավանական է, որ այս գլուխը շարադրվել է ոչ թե Ավետարանի հեղինակի, այլ խմբագրի կողմից): Մի խոսքով՝ հեղինակ Յովհաննեսը ձգտում է մնալ անանուն:

Հարց է ծագում՝ ինչո՞ւ է նա իր մասին խոսում իբրև սիրված աշակերտի: Եթե համեստությունից դրդված՝ մնում է անանուն, ինչո՞ւ այդքան հիշատակել այս արտահայտությունը: Իր մասին խոսելիս չէ՞ր կարող չփառաբանել սեփական անձը:

21-րդ գլխի ընթերցանությունը ևս կարող է լույս սփռել. Նոր Կտակարանի բազմաթիվ մասնագետներ, անգամ ամենապահպանողականները գտնում են, որ այս գլուխը նախնական տեքստի մասը չէ, այլ հավելում է: Ավետարանը վերջանում է, հավանաբար, 20-րդ գլխի 31-րդ տողով: Արդ, 21:24 հատվածի «մենք գիտենք» բառերում, որոնք վերաբերում են «նրա վկայությանը», «մենք»-ը, թվում է, մատնանշում է այս վերջաբանի խմբագիրներին, իսկ «նրա» բառը՝ սիրված աշակերտի վկայությունը, այսինքն՝ ամբողջ գիրքը: Այս առումով հետաքրքիր է նշել, որ հեղինակը տարբեր ձևերով է դիմում սիրված աշակերտին (տես՝ 13:23, 19:27, 20:2-10, չորս անգամ՝ 18:15-16 հատվածում):

Լիովին հնարավոր է, որ Յովհաննեսն այս արտահայտությունն օգտագործել է իր անձը մատնանշելու համար և կամ էլ խմբագրողներն են նրան ներկայացրել իբրև Յիսուսի սիրված աշակերտ (13:23): Շատ հնարավոր է, որ խմբագիրն է այս արտահայտությունը մտցրել բնագրի մեջ: Այս կարգի դիտարկումներին ավելանում են նաև մեր կողմից «ներքին ապացույցներ» անվանվող այլ դիտարկումներ ևս:

Հեղինակը, որը հրեական ծագում ունի, հրաշալիորեն ճանաչում էր Պաղեստինը (4:6): Նա զարմանալի մանրամասներ է հաղորդում, օրինակ, ժամանակի (1:39), տարածությունների (6:19, 21:8) մասին: Նման մանրամասներ կարող են գրվել միայն ականատեսի գրչով: Նա լավ գիտե նաև Հին Կտակարանն ու հրեական սովորույթները:

Ավետարանի՝ ոչ թե Յովհաննես առաքյալին, այլ Յովհաննես Երեցին վերագրող հակադիր դրույթի օգտին առաջ քաշված մի փաստարկ հենվում է այն մարգարեության վրա, որ Յովհաննեսը ու նրա եղբայրը՝ Հակոբոսը, պետք է, որ արժանացած լինեն Տիրոջ ճակատագրին: Ըստ այս վարկածի կողմնակիցների՝ երկու եղբայրները ևս, հավանաբար, մահացել են իբրև նահատակներ: Ահա թե ինչու նրանք պնդում են, որ Յովհաննեսը մահացել է նախքան Ավետարանի ստեղծումը: Սակայն, համեմատելով Հայտնության 1:9, ինչպես նաև 3:21, 5:10, 20:6, 22:5 հատվածները, հասկանում ենք, որ Յովհաննեսը նստել է Թագավորության գահին, բայց որ մինչ այդ նա պետք է դատարկեր տառապանքի գավաթը, իրոք, տեղի ունեցավ Պատմոս կղզում նրա բանտարկության ժամանակ:

Բացի այդ՝ մասնակցել «գավաթին» անպայմանորեն չի նշանակում նահատակվել, այլ որ, եթե ուզում ես հավատարմորեն կապված մնալ Յիսուսին և համաձայնել կրելու նրա խաչը, խնում ես նաև այդ բաժակը: Հաստատելու համար այն փաստը, որ Յովհաննեսը

անմահ էր լինելու (առասպելի համաձայն, նա իր գերեզմանում էլ է շնչել), հիմնվում էին 21:22 հատվածի վրա: Մեզ համար բավական է պարզապես մտածել, որ Յովհաննեսն, առանձնահատուկ իր առաքելության պատճառով, ավելի երկար է ապրել իր եղբորից ու Պետրոսից:

Այժմ հիշատակենք Ավետարանի վավերականության մի քանի արտաքին ապացույց:

Ավանդության համաձայն՝ Յովհաննեսը իր անունը կրող Ավետարանի հեղինակն է և այն գրել է Եփեսոսում: Սինոպտիկական Ավետարանները պետք է, որ հայտնի լինեին նախքան առաջին դարի վերջը: Բայց քանի որ կենդանի վերջին մարգարեի անձնական հուշերի և առաջին երեք Ավետարանների բովանդակության տարբերությունը մեծ էր, Յովհաննեսը ստիպված եղավ գրել իր անունը կրող Ավետարան:

Ավետարանի մասին առաջին ակնարկները հանդիպում են 2-րդ դարի առաջին իսկ տարիներից սկսած՝ Իգնատիոսի, հերետիկոս Վասիլիդեսի, Յուստինոս Վկայի, Դաթիանոսի և այլոց գրվածքներում: Յովհաննես Ավետարանի հնագույն հատվածներից մեկը գալիս է 2-րդ դարի առաջին կեսից: Նույն այս դարի վերջին քառորդում Իրինեոսը, որը հաճախակի կապեր է ունեցել Փոքր Ասիայի և Գալիայի հետ, հաստատում է ընդհանուր այն գաղափարը, որի համաձայն Ավետարանիչն, իրոք, Յովհաննես առաքյալն էր: Նրա վկայությունը հաստատվում է Կղեմես Ալեքսանդրացու, անտիոքցի Թեոփիլի, կարթագենցի Տերտուլիանոսի, իտալացի գնոստիկ Յերակլետոնի կողմից, Մուրատորիի Կանոնով, ինչպես նաև Յոհաննիս Եկոլո Ավետարանների հակամարկիոնյան նախաբանով:

Կղեմես Ալեքսանդրացին գրում է. «Յովհաննեսը՝ վերջին առաքյալը, տեսնելով, որ մարմնական բաներն արդեն հաղորդվել են մյուս Ավետարանների կողմից, ստեղծեց հոգևոր Ավետարան»:

Իրինեոսը գրում է. «Յովհաննեսը նույնպես՝ նա, ով հենվել է Տիրոջ կրծքին, Ավետարան է հրապարակել Եփեսոսում մնալու ժամանակ»:

Մուրատորիի հատվածում Յովհաննեսի մասին խոսվում է իբրև 4-րդ Ավետարանի հեղինակի: Եթե 2-րդ դարի սկզբում հնարավոր չէ գտնել Սինոպտիկական Ավետարանների պես լուսավոր գործերի հետքերը, ապա չմոռանանք, որ Յովհաննես Ավետարանը վերջինն է գրվել, և որ անհրաժեշտ է եղել որոշ ժամանակ, որպեսզի այն շրջագայի Եկեղեցիներում: Որոշ քննադատների կարծիքով, 4-րդ Ավետարանը զուրկ է պատմական ամեն արժեքից: Այն ընդամենը առաջին դարի փիլիսոփայության պարզ արդյունքն է: Վերջապես, ավարտելով ավելացնենք, որ, ընդունելով հանդերձ Ավետարանի անհերքելի վավերականությունը, հնարավոր է, որ ներկայիս տեսքով այն լինի խմբագիրների գործ, ովքեր պահպանել են Յովհաննեսի գրվածքի էական մասը և կամ էլ, նրա թելադրանքով, նաև տեղյակ լինելով ժամանակաշրջանի փիլիսոփայական կարևոր թեմաներին, գրվածքին տվել են «ավարտուն տեսք»: Այս դարաշրջանում որևէ գրքի արժանահավատությունը նույն ձևն ու իմաստը չունի, ինչ ժամանակակից ըմբռնումով: Այսուհանդերձ, հաշվի առնելով ներքին ու արտաքին բոլոր փաստարկները, կարծում ենք, որ ամբողջ Ավետարանը նրա գործն է, ուն անունը կրում է:

Գ. ՀԱՍՅԵԱՏԵՐԵՐԸ

4-րդ Ավետարանի հասցեատերերը բոլորն էլ «քրիստոնյաներ» են: Հեղինակը ոչ թե դիմում է առանձին որևէ խմբի, այլ ավելի շուտ ցուցադրում է Քրիստոսի ընդհանրականությունը (1:7, 9, 29, 3:16, 4:24, 10:16, 11:52):

Մատթեոսը գրել է հատկապես հավատափոխ հրեաների համար, Մարկոսը՝ հռոմեական ծագում ունեցող քրիստոնյաների, իսկ Ղուկասը՝ հույն հեթանոսների: Մինչդեռ Հովհաննեսը նկատի ունի բոլորին և նրանց համար է մեկնաբանում Մեսիային՝ Աստծու Որդուն: Աշխարհի ստեղծումից առաջ նրա գոյությունը, Հոր հետ կապը, գալուստը՝ իբրև «մարմնացած խոսք» և աշխարհում կատարած նրա գործն իր գազաթնակետին է հասնում Խաչի վրա քափչ մահվամբ, հաղթական Հարությանը և, վերջապես, Հոր մոտ վերադարձով: Փրկչի նմանօրինակ ըմբռնումը դարձավ քրիստոնեական վաղ համայնքի համոզմունք, որի պատմությունը տրված է «Գործք Առաքելոց»-ում: Հովհաննու նպատակը պարզորոշ երևում է Քրիստոս Հիսուսի Աստվածության Ավետարանը ընդհանուր ձևով բոլորին հաղորդելու մտահոգությունից: Հովհաննեսը ձգտում է հաստատել ու խորացնել Փրկչի՝ նախապես գոյություն ունեցած Աստծու Որդու նկատմամբ հավատքը, նրա, ով մարմնացել է, խաչվել ու հարություն առել, «որպեսզի դուք հավատաք, որ Հիսուսը Քրիստոսն է՝ Աստծու Որդին, և որ հավատալով ունենաք «հավիտենական կյանք իր անունով» (20:31): Սրանով է բացատրվում *հավատալ և ճանաչել* բառերի հաճախակի գործածությունը:

Դ. ԳՐԵԼՈՒ ՏԱՐԵԹԻՎՆ ՈՒ ՎԱՅՐԸ

19-րդ դարից ի վեր, Ավետարանի ստեղծման տարեթվի ու վայրի հարցը տեղիք է տվել բավականին բուռն վիճաբանությունների: Արմատական քննադատներն այս տարեթիվը տեղավորեցին մոտավորապես 2-րդ դարի կեսերում: Ինչ վերաբերում է ուղղափառ աստվածաբաններին, ապա նրանք այն տեղավորեցին առաջին դարի վերջին տասնամյակի մոտերքում:

Մեզ թվում է, որ առաջնությունը պետք է տալ երկրորդ կարծիքին, որը բխում է բազմաթիվ պատճառներից: Կարելի է ենթադրել, որ 4-րդ Ավետարանը մեծ չափով կախված է մյուս երեք Ավետարաններից: Քննադատների կարծիքով, հեղինակի աստվածաբանական միտքը կարող էր զարգանալ միայն վաղ շրջանի Եկեղեցու ստեղծումից ու զարգացումից հետո և, անկասկած, գնոստիկական մտածողության հետ ունեցած որոշ կապի պատճառով: Վերջին քառասուն տարիների հետազոտությունները զգալիորեն ձևափոխել են արմատական կարծիքները և նպաստել Ավետարանի ստեղծման տարեթիվը առաջին դարի վերջից առաջ տեղավորելու գործին: Եզիպտոսում հայտնաբերված պապիրուսի հատվածներն ապացուցում են, որ Ավետարանը 2-րդ դարի սկզբին լավ ճանաչված էր:

Նրա կազմումը (հավանաբար Եփեսոս քաղաքում) պետք է, որ ավարտված լինի նախքան այդ տարեթիվը: Այնուհետև, խիստ անհավանական է, որ 4-րդ Ավետարանը այդքան շատ կախված լինի մյուս երեքից: Որ որոշ ժամանակ է անհրաժեշտ եղել աստվածաբանական մտքի զարգացման համար, կարելի է հեշտությամբ ընդունել, և Ավետարանի նախաբանը շատ էական փաստաթուղթ է այս փաստարկի օգտին: Սակայն թեման հանդիպում է նաև Նոր Կտակարանի մեկ այլ գրվածքում և ներկայացված է Պողոսի կողմից՝ Կողո-

սացիներին ուղղված թղթում (1:15-20), և որի տարեթիվը բավականին վաղեմություն ունի արմատական քննադատների առաջ քաշած չարաշահումների համեմատ:

Խոսում փաստ է նաև այն, որ Ավետարանը չէր կարող գրված լինել Փոքր Ասիայում ՔԱՌԱՄՍՏՅԱՆԻՑ հետո, որի կազմի մեջ մտնում է, և որի ստեղծման տարեթիվը ճշգրիտ է՝ 2-րդ դարի կեսեր: Ինչ վերաբերում է ստեղծման վայրին, ապա, ընդհանուր առմամբ, հիշատակվում է Եփեսոսը: Շրջապատը հեթանոսական էր, քանի որ հեղինակը հաճախ է բացատրում հրեական տոների ու սովորույթների իմաստը: 2-րդ դարի վերջերին Իրինեոսը գրում է. «Չովհաննեսը՝ Տիրոջ աշակերտը, որը հակվել էր նրա վրա (խորհրդավոր Ընթրիքի ժամանակ), Եփեսոսում ապրելու ժամանակ գրեց Ավետարանը»¹:

Այլ աղբյուրների համաձայն՝ Չովհաննեսը կյանքի վերջին տարիներն անց է կացրել այդ քաղաքում և այնտեղ էլ թաղվել: Ավանդությունն ասում է նաև, որ Եփեսոսում ապրում էին Չովհաննես անունով երկու մարդիկ, որոնցից մեկը Տիրոջ առաքյալն էր, իսկ մյուսը՝ սարկավագ:

Նշենք նաև Իգնասիոսի՝ Սիրիայի Անտիոք քաղաքի եպիսկոպոսի լռությունը. դեպի Չռոմ մարտիրոսական իր ճանապարհին նա մի շարք նամակներ գրեց Եկեղեցիներին, որոնց մեջ նաև Եփեսոսի Եկեղեցուն՝ առանց, սակայն, հիշատակելու առաքյալի անունը: Դժվար է հասկանալ այս լռության պատճառը, քանի որ Չովհաննեսը պետք է, որ շատ հայտնի լիներ այդ քաղաքում: Այսուամենայնիվ, թվում է, որ Եփեսոսն է 4-րդ Ավետարանի ստեղծման ամենից ավելի մատնանշված ու հավանական վայրը:

Ե. ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Լիովին տարբերվելով մյուս երեք Ավետարաններից՝ *Չովհաննու Ավետարանի ոճը* քիչ բազմազանություն ու նրբերանգներ է առաջարկում: Աստվածաշնչում գործածված որոշ բառեր այստեղ բացակայում են (Ավետարան, առակ, զոջում, հավատք, քարոզել և այլն): Փոխարենը նրան հատուկ է մի ամբողջ բառարան, որն այս գիրքը ճանաչելի է դարձնում առաջին հայացքից (տեսնել, ճանաչել, հավատալ, ապրել, գտնել, դրսևորել, կյանք, սեր և այլն): Չիսուսի քարոզների կենտրոնում երբեմն փոխաբերաբար շարադրված հիմնավոր պատկերներ են (Չոգին ու քամին, կենդանի ջուրը, կյանքի հացը, մանանան, հովիվը): Չին Կտակարանին արդեն իսկ ժամոթ էին մտքի կենտրոնացմանն ուղղված այս էական ճշմարտությունները: Ավետարանիչը անդրադառնում է պարզ ու հակադրությամբ այս պնդումներին և դրանք զարգացնում մտքի դանդաղ ու ռիթմիկ այնպիսի շարժմամբ, որը համեմատել են պարուրած զարգացման հետ: Դեղուկտիվ դատողության բացակայության փաստը, խաղաղ խորհրդածության ընթացքը այս Ավետարանը դարձնում են պաշտամունքի հաստատուն կանչ, պատմական տվյալների ու հավիտենական իրողությունների միջև նետված կամուրջ: Գրավոր զուսպ խոսքը ավելի հեշտ է դարձնում Աստծու խոսքի ունկնդրումը. մոռանալով, որ ինչ-որ մարդ է գրել այս բաները՝ Սուրբ Չովհաննեսի գրքի էջերի միջով լսում ենք Աստծու խոսքը՝ Չիսուս Զրիստոսին»²:

¹ Euse`be: Histoire Eccl., V, 20.

² Manuel Biblique, Vol. 4.

Հիսուսի քարոզներում խոսքն առավելապես նրա անձի մասին է, քան Թագավորության: Անձնական հարցազրույցները բազմաթիվ են, իսկ մասնավոր անձանց հետ ունեցած հարաբերություններն ավելի շատ են ընդգծված, քան մեծ հանրության հետ ունեցած կապերը: Ավետարանը խիստ աստվածաբանական է. շոշափում է հատկապես Քրիստոսի Անձի բնույթի և նրա Անձի նկատմամբ ունեցած հավատի իմաստի հարցը:

Առանձին մարդկանց հետ Հիսուսի կապերի այս ընդգծումը երևում է 27 դեպքերում, որոնց մեծ մասը բավականին ընդարձակ ձևով է ներկայացված, իսկ մյուսները, ավելի համառոտ (տես՝ 4:46-54 և Պիղատոսի առջև դատավարությունը՝ 18:28-19:16): Հիսուսի հետաքրքրության առարկան ավելի շուտ մարդն է, քան գործը: Դա Պիղատոսի առջև ներկայանալու դեպքն է, մինչդեռ մյուս Ավետարաններն ավելի շատ ուշադրության են առնում կատարվող իրադարձությունը: 4-րդ Ավետարանի բառապաշարը ևս անսովոր է այն աստիճան, որ մեկ կամ երկու նախադասություն համատեքստից դուրս կարելի է անմիջապես ճանաչել: Բանալի հանդիսացող որոշ բառեր կրկնվում են Ավետարանի ճշմարտության պատճառով, բառեր, որոնք գոհարի պես պետք է դիտվեն բոլոր կողմերից (կյանք, լույս, խավար, գործ, աշխարհ, հավատալ, մարմին, ժամ): Մյուսներն ավելի վերացական են և ունեն փիլիսոփայական բովանդակություն. ճշմարտություն, ճշմարիտ ատելություն, ստանալ, սեր (արտահայտվում է երկու տարբեր բայերով), հանել, ուղարկել, սկսել, ճանաչել (արտահայտվում է երկու տարբեր բայերով), փառք, փառաբանել, վկա (գոյական և բայ), մնալ, Հայր:

Հովհաննեսը ընդգծում է Հիսուսի աստվածային բնույթը, նա Աստծու Որդին է: Սակայն տալիս է նաև մարդկային կերպարը (1:1, 10:30, 8:58, 14:9, 20:28):

Մարդկային նրա բնույթն ընդգծված է. հոգնությունը՝ 4:6, ծարավը՝ 4:7, անհամբերությունը՝ 6:26, հուսախաբությունը՝ 6:67, խռովքը՝ 12:27, սերը՝ 13:1, հավատարմությունը՝ 18:8, քաջությունը՝ 18:23:

Պատահականորեն հանդիպած ժամանակակիցների համար նա մարդ Հիսուսն է (9:11), մինչդեռ նրանց համար, ովքեր ապրել են նրա կողքին, նա դարձավ Աստծու Սուրբը (6:69):

Իր «Փաստարկ»-ում, Ավետարանի մեկնության հենց սկզբում, ժամ Կալվինը գրում է. «Ես սովորություն ունեմ այս Ավետարանն անվանել բանալի, որը բացում է առաջին երեք Ավետարանները հասկանալու դուռը»:

1. Հովհաննու և մյուս Ավետարանների նմանությունները

Դրանք գոյություն ունեն: Հովհաննու Ավետարանը նույնպես պատմում է մի շարք իրադարձությունների մասին. Սուրբ Հոգու էջքը Հիսուսի վրա (1:32-34), Տաճարի մաքրումը (2:13-16), հացի բազմացումը (6:1-13), լճի վրայով քայլելը (6:16-21), օծումը Բեթանիայում (12:8) և հաղթական մուտքը Երուսաղեմ (12:13-19): Բացի այդ՝ Չարչարանքները, Մահը, ինչպես նաև Հարությունը նկարագրող պատմությունները շատ նման են: Անհատական որոշ հատվածներ ելնում են մյուս Ավետարաններից և անգամ նման են նրանց համապատասխան հատվածներին (5:8-9 և Մարկոս 2:11-12, 6:7 և Մարկոս 6:37, 13:38 և Դուկաս 22:34, 14:31 և Մարկոս 14:42, 18:10 և Դուկաս 22:50):

4-րդ Ավետարանի բովանդակության ութ տոկոսն է ամբողջությամբ համապատասխանում մյուս Ավետարանների բովանդակությանը:

2. Տարբերությունները

Չովհաննեսը առակներ չի բերում, թեև պատմում է «Չիսուսի ասածները»․ յուրաքանչ-յուր խոսք ունի իր թեման: Նա տալիս է մյուս երեք Ավետարաններում տեղ գտած 29 հրաշք-ներից միայն 2-ը, սակայն հինգ հրաշք հանդիպում է միայն այստեղ: Նրա Ավետարանը բովանդակում է ավելի շատ մեկնաբանություններ, քան փաստեր ու իրադարձություններ: Այն փորձում է ավելի խորանալ Քրիստոսի անձի առեղծվածի մեջ: Այս Ավետարանը խստորեն հակադրվում է հրեաների անհավատությանը, ովքեր ժխտում են ամեն փաստ և մերժում Չիսուսի աստվածային բնույթը (5:18, 8:40-48, դավադրություն Չիսուսի կյանքի դեմ՝ 11:8-50, աշակերտների վտարումը իշխանությունների կողմից՝ 9:22, 12:42, որոնց կարծիքով, աշակերտներին սպանելով, հարգանքի տուրք էին մատուցում Աստծուն՝ 16:2): Վերոհիշյալ տեքստերի՝ նույնիսկ ուշադիր ընթերցանությունը ցույց կտա, որ 4-րդ և մյուս երեք Ավետարանների միջև կան տարբերություններ: Ահա երկու օրինակ. Չովհաննու Ավետարանում Տաճարի մաքրումը տեղի է ունեցել Չիսուսի առաքելության սկզբում, մինչդեռ մյուս Ավետարաններում նրա գործունեության վերջում: Չովհաննու Ավետարանում Չիսուսին օծող կնոջ անունը Մարիամ է. նա Մարթայի և Ղազարոսի քույրն է: Մինչդեռ Մատթեոսի և Մարկոսի Ավետարաններում նա անանուն է, իսկ Ղուկասի մոտ՝ վատ համբավ ունեցող կին: Մենք տեսանք, որ սինօպտիկական Ավետարանները ընդհանուր առմամբ ունեն միատեսակ մոտեցում Չիսուսի գործունեությանը: Սկրտությունից ու փորձվելուց, նաև Չովհաննես Մկրտչի մահվանից հետո Չիսուսը գնում է Գալիլիա (Մարկոս 1:14): Նրա կանխագուշակած համարյա ողջ գործունեությունը, վարդապետությունն ու բուժումները տեղի են ունենում Պաղեստինի այս շրջանում: Այնուհետև նա վերադառնում է Չուդայի երկիր, ուր անմիջապես բախում է առաջանում նրա և հրեական իշխանությունների միջև, որն ավարտվում է նրա բանտարկությամբ ու խաչելությամբ:

Հարությունից հետո նրա բոլոր հայտնությունները տեղի են ունենում Գալիլիայում և Երուսաղեմում: Չովհաննու Ավետարանում Չիսուսի գործունեությունը չի սկսվում Մկրտչի բանտարկությամբ. այն ընթանում է իր նախորդի գործունեությանը զուգահեռ: Միայն 2:1-12 և 4:43-45 հատվածներում է Չովհաննեսը խոսում Չիսուսի՝ Գալիլիայում ունեցած գործունեության մասին:

Տես՝ նաև առնչություններ հացի բազմացման և 6:1-59 հատվածի երկար քարոզի միջև:

4:1-42 հատվածում Չիսուսը Սամարիայում է: Չովհաննու Ավետարանում Չիսուսի առաքելության ամենամեծ մասը տեղի է ունենում Չուդայի երկրում: Հարությունից հետո Չիսուսը հայտնվում է ինչպես Գալիլիայում, այնպես էլ Երուսաղեմում: Չովհաննեսը հիշատակում է Չիսուսի գործունեության ժամանակ նշված Ջատկի երեք տոն (2:13, 6:4, 12:1): Մյուս երեք Ավետարանները նշում են միայն մեկը, այն, որը նախորդել է Չիսուսի բանտարկությանը: Ըստ Չովհաննու՝ Չիսուսի գործունեությունը տևել է առնվազն երկու և կես տարի, մինչդեռ մյուս Ավետարաններում՝ հազիվ մեկ տարի: Շատ հնարավոր է, որ նրանք չեն հիշատակել Չիսուսի առաքելության ընթացքում նշված Ջատկի տոնը: Առավել կարևոր է այն, թե Չովհաննեսն ինչ առանձնահատկությամբ է Չիսուսին ներկայացնում ընթերցողներին: Մյուս երեք Ավետարաններում Չիսուսի մեսիական բնույթի հայտնաբերումը աստիճանական է, ավելի շուտ՝ համեստ, մինչդեռ Չովհաննու մոտ այն արվում է ուղղակիորեն,

բավականին շուտ, առանց համեստության ու վերապահման և համարյա կայուն է: Մյուս Ավետարաններում գործունեության վերջում Հիսուսը հարց է տալիս աշակերտներին. «Մարդկանց ասելով՝ ո՞վ եմ ես»: Մատթեոսի Ավետարանում պատասխանում է Պետրոսը. «Դու Քրիստոսն ես՝ կենդանի Աստծու որդին» (16:16): Ասվածին Մատթեոսն ավելացնում է. «Նա հրամայեց ոչինչ չասել իր անձի ու Մեսիա լինելու մասին»: Հովհաննու Ավետարանում, ընդհակառակը, Մկրտիչը Հիսուսին նրա առաքելության սկզբում ներկայացնում է իբրև Աստծու գառ: Նույն ձևով էլ Նաթանայելը հանդիպում է Փիլիպպոսին, որը նրան հայտնում է հետևյալը. «Մենք գտել ենք նրան, ում մասին Մովսեսն ասում էր...»: Նաթանայելը նույնպես հանդիպում է Հիսուսին և բացականչում. «Տե՛ր, դու Աստծու Որդին ես՝ Իսրայելի թագավորը»: Սյուքարի ջրհորի մոտ՝ Սամարիայում, կինը, որի հետ Հիսուսը զրուցում է, լսում է հետևյալը. «Ես Մեսիան եմ», իսկ 8:58 հատվածում կարդում ենք. «Աբրահամի լինելուց առաջ եմ ես»:

Ամբողջ գիրքը՝ սկզբից մինչև վերջ, վկայություն է Հիսուսի աստվածային բնույթի մասին, նրա, ով գալիս է երկնքից և բոլորից վեր է: Նա վկայում է տեսածի ու լսածի մասին: Նա, ով խնում է երկրային ջուր, դարձյալ ծարավ կմնա, մինչդեռ նա, ով կխմի Հիսուսի տված ջուրը, ոչ մի ծարավ չի զգա: Որդին կարող է անել այն, ինչ տեսնում է Հոր մեջ: Հայրը սիրում է Որդուն և նրան ցույց է տալիս այն ամենն, ինչ անում է: Հիսուսն աշխարհի լույսն է և գալիս է վերևից: Հայրը նրա մեջ է, և նա Հոր հետ է: Նա հարություն է և կյանք: Այս վկայությունը հանգում է Թովմասի խոստովանությանը: Նրա մեսիական բնույթը երևում է ոչ միայն նմանօրինակ հատվածներում, այլև հրաշքների, քարոզների, անգամ վեճերի մեջ: Անշուշտ, թեման հանդիպում է սինոպտիկական Ավետարաններում: Պետրոսը այդ բանը խոստովանում է Քրիստոսի պես: Որդին ճանաչում է Հորը և միայն Որդին կարող է նրան վկայություն տալ: Նա ունի ներելու կարողություն (Մարկոս 2:10): Նրա «բայց ես ձեզ ասում եմ» արտահայտությունը (Մատթեոս 5:22, 28, 32) խոսում է Հին Կտակարանի զորությունից էլ բարձր զորության մասին: Բայց այդ զորությունը նույնքան անմիջական չէ, կամ էլ թեման այնպես ամբողջական չէ, ինչպես 4-րդ Ավետարանում:

Բացի այդ՝ սինոպտիկական Ավետարաններում գտնում ենք այնպիսի հատվածներ, որտեղ Հիսուսի բնույթի բացահայտումից հետո վերջինս հրամայում է այդ բանը չտարածել: Մեկ այլ տարբերություն ևս Հովհաննու և առաջին երեք Ավետարանների միջև, որն հակադիր ուղղությամբ է: Հիսուսի վարդապետությունը հնազանդության մասին հարուստ ու բազմազան է սինոպտիկական Ավետարաններում: Լեռան քարոզը և շատ այլ քարոզներ ավետարանացման մասին, թագավորության, օրենքի պահպանման, ունեցվածքը հավատարմությամբ տնօրինելու, փոխադարձ ներման, թշնամության, եկեղեցական կարգապահության, անուսնալուծության, խոնարհության, բարեպաշտ ու աղոթքով ընթացող կյանքի մասին առակները շատ են և լուսաբանող մեծ ուժ ունեն: Հովհաննեսն ուսուցանում է նաև հավատքով կյանքի մասին, բայց այդ բանն անում է պակաս ուժով ու ճշգրտությամբ, հատկապես՝ իբրև սիրելու պատվիրան (14:15, 15:12):

Ոչ մի Ավետարան ամբողջությամբ չի ներկայացնում մեր Տիրոջ Անձի, Առաքելության ու Քարոզների հարուստ ու խորունկ ճշմարտությունը: Ինչպես երեք Ավետարաններն են լրացնում մեկը մյուսին, այնպես էլ Հովհաննու Ավետարանն է լրացնում նախորդ երեքին:

3. Հրաշքները Հովհաննու Ավետարանում

Գինի դարձած ջուրը՝ 2:1-11

Ազնվականի որդու բուժումը՝ 4:43-54

Անկարող մարդու բուժումը Բեթսաիդայում՝ 5:1-9

Ի ծնե կույր մարդու բուժումը՝ 9:1-7

Ղազարոսի հարությունը՝ 11:17-44

Հրաշալի որս՝ 21:1-14

4. Հիսուսի՝ Հովհաննու Ավետարանին հատուկ քարոզները

Վերստին ծնվելը՝ 3:1-21

Կյանքի ջուրը՝ 4:4-26

Կյանքի աղբյուրն ու վկայությունը՝ 5:17-47

Նա, ով կյանքի նեցուկն է՝ 6:26-59

Ճշմարտության աղբյուրը՝ 7:14-29

Աշխարհի լույսը՝ 8:12-20

Հավատքի իսկական առարկան՝ 8:21-30

Հոգևոր ազատությունն ու մարմնական սերունդը՝ 8:31-59

Հովիվն ու նրա հոտը՝ 10:1-21

Քրիստոսի և Հոր միասնությունը՝ 10:22-38

Աշխարհի Փրկիչը՝ 12:20-36

Կապը Քրիստոսի հետ՝ գլուխ 15

Գալիք բաժանումն ու հարաբերությունների խնդիրը՝ 13:31-14:31

Սուրբ Հոգին և ապագան՝ գլուխ 16

Վերջին քարոզները բաժանվում են երկու մասի՝ հասարակական, որոնցում Հիսուսը ներկայանում է իբրև ծայրագույն իրականություն և մասնակի քարոզներ, երբ Քրիստոսը աշակերտներին հայտնվում է հավիտենական իր բացարձակ ինքնաբավությամբ:

Զ. ԼՈՒՐԸ

Հովհաննու Ավետարանը մշտապես դիտվել է իբրև չորս Ավետարաններից ամենաաստվածաբանականը: Իրականում, ինչպես ասում են, այս Ավետարանն ասես ջրավազան է, որում կարող էր լողալ ինչպես փոքր երեխան (որն այնտեղ կարող է կանգնած մնալ), այնպես էլ չափահաս փիղը: Ամենահասարակ հավատացյալները կարող են հասկանալ նրա լուրը և, հատկապես, հաճույք ստանալ դրանից, անգամ եթե տարիների ուսումնասիրությունը չի սպառում նրա խոր բովանդակությունը: Նրա էջերում շոշափված ու զարգացված տարբեր թեմաներն ըմբռնելը հնարավոր է միայն համակարգված ուսումնասիրությամբ: Գրքի կենտրոնական լուրը համառոտ ներկայացված է վերջին էջում. այս գիրքը գրվել է, որպեսզի հավատան և հավատալով հավիտենական կյանք ունենան:

Այն, որ այս գիրքը մյուսներից ավելի աստվածաբանական է, նշանակում է՝ այստեղ զարգացող միտքն ավելի միասնական ու համակարգված է: Ճշմարիտ է նաև, որ լեզուն

ավելի խորհրդանշային է: Օգտակար կլինի այստեղ շոշափել նաև 4-րդ Ավետարանի կարևորագույն թեմաների հարցը:

1. Քրիստոսաբանությունը

«Հովհաննու Քրիստոսին համեմատում են տաղանդավոր նկարչի դիմանկարի հետ, մինչդեռ մյուս Ավետարանները Քրիստոսին ներկայացնում են լուսանկարչական ակնթաթների տեսքով: Առանց այս համեմատությունը բառացիորեն ընդունելու՝ կարելի է ըմբռնել ավետարանչի տեսակետը, որի համաձայն՝ ամենակարևորը փաստերի խորհրդանշական խոր իմաստն է, նրանց աստվածաբանական կամ սրբազան նշանակությունը, որոնք նա միահյուսում է հավերժության հյուսվածքին: Ահա թե ինչու զուտ պատմական ընթացքին վերաբերող պատմություններն իրենց տեղը զիջում են տիպական դրվագների. կույրերի կամ մոլորվածների բախում Տիրոջ հետ, կյանքի հացի բաշխում ամբոխին, աշխարհի Փրկությունն ավետող հարություն: Քրիստոսի վարդապետությունը, նույն պատճառաբանությամբ, պակաս տարբերակված է, պակաս գործնական, քան մյուս երեք Ավետարաններում, քիչ է կամ համարյա բացակայում է ցուցումը աշակերտների պարտավորությունների ու հատկանիշների վերաբերյալ, ոչ մի հիշատակում նրանց ապառնացող վտանգների մասին, ոչ մի հրահանգ աղոթքի, փողի գործածության, մերձավորներին ծառայելու և այլնի մասին: Փոխարենն այստեղ, առավել, քան մյուս Ավետարաններում, բացահայտորեն է յուրաքանչյուրին ցույց է տրվում փրկությունը: Դրա էությունը հավատալն ու ճանաչելն է, սակայն այնպիսի հավատքով ու իմացությամբ, որոնք սերտորեն կապված են կյանքին» (7:17):

Փրկության միջոցը Քրիստոսի մեջ մնալն է, փրկության վերջը՝ պտուղ տալը, մերձավորներին այնպես սիրելն է, ինչպես Քրիստոսն է մեզ սիրում, և կատարյալ ուրախություն տալը: Հիսուսի սովորեցրած կատարյալ ուրախությունը, կատարյալ սերը մարդկային քիչ թե շատ ջերմ ու վարակիչ զգացումներ չեն, այլ Քրիստոսի կյանքին իրական մասնակցություն: Դրանք աշակերտի՝ նոր (հավիտենական) կյանքին անհրաժեշտ բնական արտահայտություններն են: Այս հեռանկարում այլևս բաժանում կամ հակադրություն չկա հավատքի ու գործերի, «Քրիստոսով կյանքի» և ամենօրյա կիրառության, ճշմարտության ճանաչման ու հնազանդության միջև: Որդու հետ Հոր հաղորդությունը, որը բազմաթիվ էջերում հիշատակվում է խորհրդավոր ձևով, Որդու հետ մեր իսկ հաղորդության գերագույն արտահայտությունն է: Եվ, վերջապես, կարևորը ոչ միայն ինքնին նման հաղորդությունն է, այլև տարբեր այն փուլերը, որոնցով անցնում ենք:

«Ավետարանը ոչ թե առեղծվածային ուղեցույց է, այլ աստվածային Քրիստոսի պատմությունը երկրային գործունեության մթության մեջ, որտեղ նրա փառքը փայլատակում է հանկարծակի բռնկումներով. դա հավիտենական Քրիստոսի ներկայանալն է Եկեղեցուն: Հավատալ այն բանին, որ Քրիստոսն Աստծու գառն է, որը քավում է աշխարհի մեղքերը՝ հավատալով, որ նա իմ Փրկիչն ու Աստվածն է՝ նշանակում է արդեն իսկ մտնել հավիտենական կյանք: Քանզի գերագույն (կարելի է ասել՝ միակ) մեղքը անհավատությունն է, Հիսուս Քրիստոսի կյանքին չմասնակցելն ու նրան Աստծու Որդի չհամարելը»¹:

³ Manuel Biblique, vol.4, p. 12-13.

2. Քրիստոսով Նոր կյանքը

Ավետարանի ամենից ավելի հարուստ տարրերից մեկը կյանքի վերաբերյալ ուսմունքն է: Նոր Կտակարանի ոչ մի գիրք ճշմարիտ կյանքի մասին չի խոսում ավելի ողջամիտ ու հասկանալի ձևով, ինչպես Յովհաննու Ավետարանը: Այս նախադասությունը՝ «Որպեսզի դուք հավատաք», համառոտ ներկայացնում է փրկությամբ ձեռք բերվող բոլոր առավելությունները:

Հավատացյալի ճշմարիտ կյանքի արմատները հենց Աստծու կյանքի խորքում են: Կյանքը Հոր մեջ է, և նա այն տվել է նաև Որդուն (5:26):

Որդու կյանքը մարդկանց Լույսն է (1:4): Նա, ով նրան հավատում է, հավիտենական կյանք ունի (3:36): Այս կյանքը պարզևե է Սուրբ Հոգին (3:8): Բոլոր նրանք, ովքեր հավատում են Քրիստոսին, ստանում են այդ կյանքը (7:38-39): Որդին տալիս է հավիտենական սնունդ (6:26), քանի որ նա, ով ուտում է նրա մարմինն ու խմում արյունը, հավիտենական կյանք ունի (6:54):

Հիսուսը Հարությունն է և կյանքը (11:25): Այդ կյանքը կուշտ կլինի ու կպահպանվի, եթե ապրենք Քրիստոսի մեջ (15:7): Փառաբանելով Աստծուն՝ կյանքը շատ պտուղներ է տալիս (15:8), դա միմյանց սիրելն է այնպես, ինչպես Քրիստոսն է մեզ սիրում (15:17):

Այս լեզուն չի հանդիպում սինոպտիկական Ավետարաններում: Այսուհանդերձ, սխալ կլիներ ենթադրել, որ այս բառերով ակնարկվող թեման բացակայում է: Ո՛չ: Այն արտահայտվում է այլ բառերով, ինչպես, օրինակ՝ «Աստծու կամ երկնքի թագավորություն»: «Ստնել թագավորություն» արտահայտությունը, որը հանդիպում է Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի մոտ, ունի նույն իմաստը, ինչ Յովհաննու Ավետարանի «ունենալ կյանք»-ը:

Քրիստոսով կյանքը Աստծու թագավորության պես արդեն առկա իրողություն է: Հավիտենական կյանքն ու թագավորության իրողությունը չեն սկսվում մահվանից հետո: Երկուսն էլ սկիզբ են առնում Քրիստոսին հետևելու վճռով. ճանաչել միակ ճշմարիտ Աստծուն. Հիսուս Քրիստոսը, որին նա ուղարկել է, հավիտենական կյանքն է (17:3):

3. Եկեղեցին և խորհուրդները

Ոմանք մտածում են, որ 4-րդ Ավետարանում խոսվում է միայն հավատացյալի և Քրիստոսի միջև անհատական կապերի մասին: «Եկեղեցի» և «խորհուրդներ» բառերի բացակայությունից չի կարելի եզրակացնել, որ Ավետարանն անտեսում է նոր իրականության այս դիտանկյունը: Իրոք, գրքի շատ հատվածներ անհնարին կլիներ մեկնաբանել հեղինակի՝ Եկեղեցու հետ ունեցած առնչություններից դուրս:

ա) Եկեղեցին

17:20 և 20:21 հատվածների լեզուն գուտ եկեղեցական է: Քարոզչական հետաքրքրություն է դրսևորվում 4:35 և 13:20 հատվածներում: 20:23 հատվածում ակնարկվում է այն մասին, որ աշակերտները, միասին վերցված, կազմում են Եկեղեցին, որը շարունակում է գործել առաքելական իշխանության կողքին: Բացի այդ՝ եկեղեցական քարոզների բազմաթիվ օրինակներ կան խաղողի որթին ու ընծյուղին (15), ոչխարների հովվին, հոտին (10), Պետրոսին տրված հրահանգին (21) վերաբերող քարոզներում: Խոսքն առավել քան Հի-

սուսին անձնապես հետևելու մասին է: Հարցը Քրիստոսի ու նրա ժողովրդի միջև մտերիմ հաղորդության, ինչպես նաև Քրիստոսի զորությունը նրանց մեջ կիրառելու մասին է:

բ) Խորհուրդները

Նույն դիտարկումները վերաբերում են նաև Խորհուրդներին: Հիսուսն իրո՞ք լռել է դրանց շուրջ: Չի կարելի, սակայն, չմտածել Մկրտության մասին՝ ընթերցելով 5:5 հատվածը: Նմանապես՝ 13:10 հատվածի ոտքերի լվացումը առաջին հայացքից մատնանշում է ոչ թե Մկրտությունը, այլ թողության անհրաժեշտությունը:

Այսուհանդերձ, նշանակալից է այն, որ երբ Պետրոսը ավելին է փնտրում, քան ոտքերի լվացումը, Հիսուսը նրան հիշեցնում է, որ նա, ում ոտքերը լվացած են, այլևս կարիք չունի մեկ ուրիշ մաքրագործման: Կարելի է եզրակացնել, որ այստեղ ակնարկ է արվում Մկրտության մասին: Ինչ վերաբերում է Խորհրդավոր Ընթրիքին, ապա դրա Խորհրդանիշը կարելի է գտնել 6-րդ գլխում, հատկապես 53-րդ տողում: 15:1-11 հատվածում հատուկ չի խոսվում հացի ու գինու մասին, այլ լուսաբանվում է մտերիմ կապը խաղողի որթի ու ընծյուղների միջև: Եվ վերջապես, 19:34 հրաշալի հատվածը. թե՛ հաղորդության գինով օրհնված արյունը և թե՛ մկրտության ջրով օրհնված մաքրագործող ջուրը հոսում են խաչվածի կողից: Դա հասկանալի կլինի, եթե համենատվի սինօպտիկական Ավետարանների վարդապետության հետ: Այս վերջին Ավետարաններում վախճանաբանությունը հենվում է Հին Կտակարանի ուսմունքի վրա: Ըստ այս ըմբռնման՝ պատմությունը շարունակվող գիծ է: Այն հասնում է դատաստանի, իսկ դատաստանից հետո վրա է հասնում վերջը: Սինօպտիկները անդրադառնում են նույն այս գաղափարին և այն հարստացնում Քրիստոսի՝ իբրև Դատավորի ու Ազատարարի գաղափարով: Հովհաննու Ավետարանում վախճանի գաղափարը ո՛չ անտեսվում, ո՛չ էլ հերքվում է: Վախճանն սկսվում է այստեղ և այժմ: Նոր դարաշրջանը առկա իրողություն է (5:24):

Մահացածներն այդպիսին են հոգևոր ձևով: Աստծու Որդու ձայնի ճշմարիտ ունկնդրումը հավատքի պատասխանն է՝ տրված Ավետարանին: Հավիտենական կյանքն ու նոր դարաշրջանն ուրվագծվում են ներկա դարաշրջանում: Միաժամանակ, Հովհաննեսն ընդունում է Սինօպտիկների՝ պատմության վախճանի մասին ուսմունքը: Հավատացյալների հարությունը կավարտվի ժամանակների վախճանին կայանալիք մարմնական հարության ժամանակ: Բայց նա, ով ուտում է Քրիստոսի մարմինն ու խմում արյունը, արդեն հավիտենական կյանք ունի: Հովհաննեսն ընդգծում է, որ վախճանը առկա իրողություն է՝ չմոռանալով ասել, որ նաև գալիք իրողություն է: Սինօպտիկները Վախճանը ներկայացնում են իբրև գալիք՝ չանտեսելով, որ այն նաև ներկա (սեներոլոգիական) է:

Հետաքրքիր է ասվածին ավելացնել ոմն մեկնաբանի այս մի քանի տողը.

«Անկասկած, Հովհաննեսի Ավետարանը գրված վերջին գիրքն է. Պողոսն ու Պետրոսը մահացել էին: Հովհաննեսը դեռևս կենդանի է, սակայն ծերանում է: Հիսուսի վերադարձը տեղի՞ է ունենալու արդյոք: Ուշանալո՞ւ է: Հիսուսը 21:18 հատվածում ակնարկում է Պետրոսի և Հովհաննեսի ճակատագրի մասին: Նրա քարոզն ուղղված է Պետրոսին: Թվում է, թե այն տեղեկացնում, անգամ նկարագրում է նրա ճաշակելիք մահը (մարտիրոսությունը): Սինչդեռ այն, ինչ կանխասվում է Հովհաննեսի մասին, տարբեր է: Ահա թե ինչու առաջին աշակերտների մեջ լուր տարածվեց այն մասին, իբր Հիսուսը Հովհաննեսին խոստացել է,

որ վերջինս չի մահանա մինչև իր վերադարձը: Սակայն Հիսուսը նման ոչինչ չի ասել: Հավատքը չի կարող հենվել կեղծ լուրերի և կամ էլ սխալ հաշվարկների վրա: Նմանօրինակ հաշվարկներն ու հույսերը վնասակար են քրիստոնյաների կյանքի համար: Եթե մեր հավատքը հիմնվի միայն ոչ ճշմարիտ լուրերի վրա, ապա հեշտությամբ կարող է ցրվել: Ուստի, հեղինակի մտադրությունը հիմքից զուրկ այս հույսը շտկելն է: Հավատքը չի կարող հիմնվել Քրիստոսի Վերադարձի վրա. Քրիստոսը մահացել է առաքյալից առաջ: Ավետարանիչը ոչ միայն ուղղում է այդ մոլորությունը, այլև ուշադրությունը հրավիրում է ճշմարիտ հարցերի վրա: Ավետարանը քիչ ցուցումներ է տալիս Քրիստոսի վերադարձի վերաբերյալ, մինչդեռ նրա կանոնավոր ու մշտական ներկայության հարցում լիովին բավարարում է:

Հիսուսը ներկա է, նա ապրում է յուրայինների հետ: Հենց այժմվանից նա պարզևում է հավիտենական կյանք: Նա փրկում է գալիք դատաստանից, ստեղծում է մի նոր ժողովուրդ, որը պետք է իրագործի փոխադարձ սերը: Եթե նոր կենսառճն ակնհայտ է, ուրեմն Քրիստոսի վերադարձի ժամը, անգամ ուշացումը, այնքան էլ կարևոր չեն»:

Է. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ակնհայտ է, որ Հովհաննու Ավետարանի մասին չենք կարող խոսել այնպես, ինչպես խոսել ենք Սինոպտիկական Ավետարանների մասին: Այս երեք Ավետարանները «կառուցվել» են ելնելով աշխարհագրական ճշգրիտ շրջանակից. այն շրջանակից, ուր Հիսուսն այցելել և որտեղ իրականացրել է հասարակական գործունեություն: Հովհաննու Ավետարանը խոր կառուցվածք ունի: Նա ոչ այնքան դիմում է իր գրվածքի առանձին մասերի կարգին, որքան դրանք միավորելու և միմյանց հետ հարաբերակցելու ձևին: Այս կերպ հաստատենք հետևյալը.

1) 1-ին գլխի կապը գրքի մնացած մասի հետ.

Նախաբանում Քրիստոսը ներկայացվում է իբրև Աստծու մարմնացած Որդի, ամեն ինչի Ստեղծողը, որը Աստծու հետ է և նույնիսկ Աստված է, և որը դառնում է մարդ: Հովհաննես Մկրտչի վկայությունը հաստատում է դա. «Ահա Աստծու գառը»: Այսպիսով, Աստված և մարդ լինելու թեմաներն անցնում են Քրիստոսի առաքելության երկայնքով և իշխում են ամբողջ գրվածքում:

2) Իրադարձությունների կապը հասարակական գործունեության ընթացքում կարդացած քարոզների հետ.

Սինոպտիկական Ավետարաններում և, մասնավորապես, Մատթեոսի մոտ, իրադարձություններն ու քարոզները միմյանց նկատմամբ հարաբերությունների տարբեր աստիճանների վրա են: Հովհաննեսի մոտ դրանք անբաժան են: Իրադարձությունը վարդապետության հիմքն է: Քարոզն այս դեպքում մեկնություն է, այն շարադրում ու զարգացնում է իրադարձության խոր իմաստը: Տաճարի մաքրումը, Նիկողեմոսի այցը, հացի բազմացումը, ի ծնե կույրի բուժումը, Ղազարոսի հարությունը, հույների՝ Հիսուսին հանդիպելու խնդրանքը կամ քարոզի ներածություն են, կամ էլ՝ վարդապետություն:

Քանի որ մի շարք իրադարձություններ Հիսուսի կատարած հրաշքներն են՝ «նշաններ»-ը, ապա 2-րդ գլխից մինչև 12-րդ գլուխը ներառող բաժինը կոչվում է «Նշանների գիրք»:

Անշուշտ, Յովհաննեսը բացարձակ ձևով չի հետևում այս մանրատիպին: Այսպես, ջրի՝ գինու վերածումը կամ սպայի որդու բուժումը բանավոր մեկնաբանություն չեն ստանում: Իրադարձությունն ինքնին ունի իմաստ: Այսուհանդերձ, երկուսն էլ անվանվում են «նշաններ»: Յովհաննեսն ակնկալում է, որ այս իրադարձությունների մեջ նշաններ տեսնող հավատացյալը նկատի նաև Քրիստոսի Փառքը: Ճշգրիտ ձևով ի՞նչ ենք հասկանում «քարոզ» բառի տակ: Խոսքը կարող է լինել չընդհատվող խոսքի, ասենք՝ ընթերցանության մասին, բայց այն կարող է նշանակել նաև զրույց և երկխոսություն: Յովհաննու մոտ գտնում ենք այս երկու տեսակ «քարոզ»-ը: Այսպես, 5:19-47 հատվածը չընդհատված քարոզ է, 10:1-18 հատվածում խոսքը ընդհատվում է միայն մեկ անգամ, իսկ 6:25-65 հատվածում Յիսուսի վարդապետությունը բազմիցս ընդհատվում է: 2-12 գլուխների մնացած մասը բովանդակում է երկխոսություններ կամ զրույցներ:

3) Մասնավոր Յրահանգ (13-17).

Չորս Ավետարանները բովանդակում են Յիսուսի՝ աշակերտների հետ ունեցած մասնավոր, ինչպես նաև ընդհանուր քարոզի բոլոր օրինակները: Սինոպտիկական Ավետարաններում մասնավոր քարոզների թիվը, Տանջանքների մոտեցնալուն զուգընթաց, մեծանում է:

Յովհաննեսը հստակ տարբերակում է քարոզների այս երկու տիպերը. 2-12 գլուխները բովանդակում են ընդհանուր, իսկ 13-17-ը՝ մասնավոր քարոզներ: Բացառությամբ 13-րդ գլխի՝ ամեն ինչ թվում է անընդհատ: Մասնավոր վարդապետությունը երկու նպատակ է հետապնդում.

ա) Յովհաննու բնորոշ ձևով ներկայացնել այլ տեղից գտած մի շարք քարոզներ.

բ) զարգացնել ու հարստացնել նշանների գրքի որոշ կարևոր վարդապետություններ.

4) 1-17 գլուխների կապը 18-21 գլուխների հետ:

Նշված երկու բաժինների կապը շատ սերտ է: Առաջին իսկ գլխից, Յովհաննու ընթերցողին հայտնի են Քրիստոսի Չարչարանքներն ու Մահը: Բացի այդ՝ դրա նախապատրաստումը շարունակվում է հաջորդ 16 գլուխներում: Սինոպտիկները ևս նախապատրաստում էին, բայց պակաս կանոնավոր ձևով: Առանձնահատուկ պահերին ակնարկներ են արվում, հատկապես առաքելության վերջում: Մարկոսի Ավետարանում դա սկսվում է 8:31 հատվածում (տես՝ Մատթեոս՝ 16:21, Ղուկաս՝ 9:22): Սինչդեռ Յովհաննու Ավետարանում Յովհաննես Մկրտիչը Չարչարանքների մասին հայտնում է հենց սկզբից (1:29, 36):

«Գառ» անվանումը ցույց է տալիս զոհողությունը, որ Քրիստոսն անելու է: Իր գործունեության հենց սկզբից Յիսուսը ձեռնամուխ է լինում Տաճարը մաքրելու և մաքրագործելու աշխատանքին և դա՝ իբրև իր մահվան կանխագուշակություն: Մարդու Որդին պետք է բարձրացվի, նրա մարմինը կյանք է պարգևում աշխարհին, իր կյանքը նա տալիս է իր ոչխարների համար: Յովվապետը գտնում է, որ ինքն անհրաժեշտ է, որպեսզի կործանվի ոչ թե ամբողջ ազգը, այլ միայն մեկը: Յույների հարցերից մեկին ի պատասխան՝ Քրիստոսը կանխատեսում է իր մահվան փրկիչ գործության մասին (12:20-28):

13-17 գլուխներում Յիսուսն իր մահվան մասին խոսում է իբրև սեփական անձի փառաբանում և «Վերադարձ» Յոր մոտ:

Յիսուսի գործունեության ու Տանջանքների սերտ կապի պատճառով նրա մահվան սպա-

սումն ու նախապատրաստումը Հովհաննու Ավետարանում ավելի վաղ են արտահայտվում, քան մյուս երեք Ավետարաններում: Տանջանքները, Սահն ու Հարությունը 18-21 գլուխներում կապված են այդ նախապատրաստության իրագործման հետ:

Գ Լ ՈՒ Խ 20

ՀԻՍՈՒՍԻ ԿՅԱՆՔԸ

Մեր տիրոջ կյանքը բոլոր առումներով եզակի է: Երկրային իր գոյության ընթացքում, ինչպես տեսանք, կատարվեցին Հին Կտակարանի շատ մարգարեություններ, որոնք բոլորն էլ արվել էին նախքան նրա հայտնվելը: Հիսուսն անձամբ ասում է իր աշակերտներին, որ, համաձայն Սուրբ Գրքի կանխասացությունների և կամ դրանց համապատասխան, ինքը պետք է տառապի, մահանա և հարություն առնի մեռելներից (Ղուկաս 18:31-34): Նմանապես, հարություն առնելուց հետո, նա բացահայտորեն հայտարարում է, որ երկրային իր գործունեությամբ, Տանջանքներով ու Հարությամբ կատարվեցին Սուրբ Գրքերի ասածները (Ղուկաս 24:25-27 և 44:48):

Նույն ձևով էլ, առանձին աշակերտների, հատկապես Ստեփաննոսի, Պետրոսի և Պողոսի (Գործք Առաքելոց) կանխագուշակությունները, ինչպես նաև Նոր Կտակարանի մնացած մասում արվածները, Հիսուսի կյանքը, տառապանքներն ու հաղթական փառաբանումը ներկայացնում են իբրև Սուրբ գրքերի կանխասացությունների իրականացում: Համաշխարհային պատմությունը նման այլ բան չի ճանաչում: Հարյուրավոր տարիներ առաջ Հիսուսի ծնունդը (և անգամ՝ ծնվելու վայրը) հայտնվել էր Հին Կտակարանում (տես՝ Միքիա 5:2): Հրաշքով կատարված բեղմնավորումից մինչև փառաբանված համբարձումը, նրա կյանքը եզակի է իր տեսակի մեջ: Միայն նրա երկրային կյանքում ենք տեսնում մարմնացած Աստծուն՝ ապրելով իբրև մարդ՝ բառիս լայն իմաստով: Եթե կրոնների հիմնադիրների կյանքն ու գործունեությունը բարոյական մեծ սկզբունքների և հոգևոր ճշմարտությունների հասնելուն միտվող հետազոտության վկայություն են, ապա Հիսուսի կյանքը վկայություն է միայն Սիրո և Արդարության Աստծու մասին, ով գալիս է փնտրելու և փրկելու ընկած ու կորած մարդուն:

Աստվածային իր ծագման վերաբերյալ նրա բոլոր պնդումները, ծագումը, որը ոչ թե «գործառութային» (կամ որդեգրված) է, այլ հավիտենական, հաստատվել են նրա կյանքով, մահվամբ ու հարությամբ, ինչպես նաև հաղթական համբարձմամբ: Իրոք, Հիսուս Քրիստոսը ՄԻԱԿՆ է ամբողջ մարդկության մեջ:

Քննության առնենք նրա կյանքի ու երկրային գոյության շրջանները:

Մեզ համար համարյա անհնարին է կազմել նրա կյանքի կենսագրական տվյալների ժամանակագրական ցանկ, ինչպես երբեմն հաջողվում է անել պատմական այլ անձնավորությունների պարագայում: Ավետարանները չեն տալիս պատմական բավարար նյութ՝ ձեռնամուխ լինե-

լու Յիսուսի կենսագրության ամբողջական շարադրմանը: Նրա կյանքի շրջանները տարբերակելու նպատակով այստեղ հիմք ենք ընդունում չորս Ավետարանների ընձեռած տվյալները:

Ա. ԾՆՈՒՆԳԸ

Նոր Ավետարանների հեղինակները լայնորեն առիթ են ունեցել հայտնաբերելու Յիսուսի ծննդին վերաբերող ճշմարտությունը: Բացի այն փաստից, որ Յիսուսի մոր՝ կույս Մարիամի խնամքը հանձնվել էր սիրված աշակերտին (Յովհաննես 19:26-27), նաև հիշում ենք, որ Յակոբոսը՝ Յիսուսի եղբայրը, առաքելական Եկեղեցու առաջնորդներից էր: Յարությունից ու համբարձումից հետո Մարիամը և Յիսուսի եղբայրները այլևս կասկած չունեին նրա տիրապետության և աստվածային ծագման մասին: Նրանք երկար ապրեցին մյուս առաքյալների և Երուսաղեմի ամբողջ Եկեղեցու սերտ հաղորդության մեջ (Գործք 1:14): Երբ Ղուկասը Պողոսին ուղեկցեց Երուսաղեմյան նրա առաջին ճանապարհորդության ժամանակ (56 կամ 57 թ.), նրան հանդիպած անձանցից մեկը Յակոբոսն էր (Գործք 21:17-18): Այս դարաշրջանում, եթե դատելու լինենք նրա Ավետարանի առաջաբանից, Ղուկասին չափազանց շատ էին հետաքրքրում մեր Տիրոջ կյանքին վերաբերող բոլոր իրադարձությունները (տես՝ Ավետարանի նախաբանը): Մեզ հայտնի չէ, թե արդյոք կարողացել է անձամբ հանդիպել Մարիամին: Այսուամենայնիվ, ակնհայտ է, որ նա հնարավորություն է ունեցել այնպիսի տեղեկություններ ստանալ Փրկչի ծննդի վերաբերյալ, որոնք, ի վերջո, կարող էին ստացվել միայն Յիսուսի մորից: Յիմնականում, վերջինիս տեսակետից ելնելով է Ղուկասը շարադրում Յիսուսի գերբնական ծննդի պատմությունը (Ղուկաս՝ 1:26-56, 2:1-51):

Մատթեոսն էլ իր հերթին նույն պատմությունը տալիս է մեկ այլ՝ Յովսեփի տեսակետից: Սակայն երկու Ավետարաններն էլ համաձայն են այն հարցում, որ Յիսուսը մարդ-հոր երեխան չէ, այլ բեղմնավորվել է Սուրբ Յոզու գործությամբ և ծնվել է իբրև Աստծու Որդին (համեմատել՝ Ղուկաս 1:35 և Մատթեոս՝ 1:18-25): Նույն այս փաստին լիովին համաձայն Յովհաննեսն է իր Ավետարանն սկսում է նախաբանում ասված խոսքերով (Յովհ. 1:1-14):

Բ. ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆ

Ղուկասի Ավետարանի 2:40 և 52 հատվածներից իմանում ենք, որ Յիսուսի մանկությունն ու պատանեկությունը եղել են բնականոն, բայց նաև՝ հրաշալի: Նրա կյանքով լիովին ու ամբողջապես իրականացել է մարդկային կատարյալ կյանքի գաղափարատիպը, չնայած ապրել է ընդամենը Նազարեթի մի տան համեստ կտուրի տակ, Մարիամի ու Յովսեփի և իրենից ավելի փոքր եղբայրների ու քույրերի հետ (Ղուկաս 2:52):

Մանուկ հասակից նա գիտեր աստվածային իր ծագման մասին և դա՝ շատ առանձնահատուկ ձևով: Ղուկասի Ավետարանի 2:46-47 հատվածը հնարավորություն է տալիս եզրակացնել, որ մանկությունից ի վեր նա լրջորեն ուսումնասիրել է Յին Կտակարանի Սուրբ Գրքերը: Թեև Յովսեփը մահացել է շատ վաղ, ու Յիսուսը՝ ամբողջ ընտանիքի հոգսերը հոգալու համար ստիպված է եղել աշխատել իբրև հյուսն (Մատթեոս 13:55-56), այնուամենայնիվ անհրաժեշտ ժամանակ է նվիրել Աստվածաշնչի ուսումնասիրությանն ու նրա շուրջ խորհրդածու-

թյանը: Հիսուսի մանկությանն ու պատանեկությանը վերաբերող որոշ մանրամասներից բացի՝ կարելի է Ավետարանների վրա հենվող որոշ ենթադրություններ միայն անել, սակայն հայտնի է, որ հասունությունը վրա է հասել նրա բոլոր ընդունակությունների հետ ներդաշնակ, և որ մեծացել է բնական ու հրաշալի ձևով: Հիսուսի կյանքի «մութ» կոչված տարիների մնացած մասի վերաբերյալ Նոր Կտակարանը կատարյալ լռություն է պահպանում:

Գ. ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՓՈՐՁԿԵԼԸ

Երբ Հիսուսը անհրաժեշտ հասուն տարիքին էր, գուցե 30 տարեկան (ըստ Ղուկասի 3:23 հատվածի), թողեց Նազարեթը և մկրտվեց Հովհաննեսի կողմից: Հրապարակային այս գործողությամբ՝ նա ընդունում էր իր Մեսիա՝ Աստծու Որդի և Փրկիչ լինելը, որը, թեև առանց մեղքի, նույնանում էր ընկած մարդու հետ և իր վրա վերցնում մոլորված ու անտեսված մարդու բոլոր անհնազանդությունների մեղքը:

Հայր Աստվածը խրախուսեց այս արարքը՝ նրան ուղարկելով Սուրբ Հոգին, որն աղավճու տեսքով իջավ երկնքից՝ ասելով. «Դու ես իմ սիրելի Որդին, ես քեզ հավանեցի» (Ղուկաս 3:22):

Սրանք 2-րդ Սաղմոսի 7-րդ և Եսայու գրքի 42:1 տողերի խոսքերն են, որոնք հայտնում են ինչպես նրա Մեսիա լինելը, այնպես էլ բացահայտում են Եսայու գրքի երկրորդ մասում խոսվող Տառապող ծառայի դերը:

Այս համոզվածությամբ՝ Սուրբ Հոգին Քրիստոսին տարավ անապատ՝ փորձվելու (Մատթեոս 4:1): Կոչված լինելով դառնալ մարդկանց փրկիչը՝ նա նախ պետք է բացարձակ հավատարմության և գաթակալությունը հաղթահարելու զորության ապացույց տար Երկնային Տիրոջը: Փորձության մասին պատմող պատմությունը հակադրվում է առաջին զույգի գործած մեղքին (Ծննդոց 3): Եվ այսպես, մինչ հնազանդ ու Աստծու հետ համատեղ կյանք վարելուն ուղղված բոլոր պայմանների ձեռնարկումը, առաջին զույգը տեղի տվեց փորձությանը, Հիսուսը՝ գաթակալության թիրախը, անապատում, առանց նպաստավոր որևէ հանգամանքի, հաղթանակ տարավ: Քառասուն օրվա հոգևոր ու մարմնական փորձությունից հետո նա պետք է կան կործանվեր Սատանայի հարվածներից, կան էլ ենթարկվեր Հոր ուրվագծած ուղուն: Նա դիմադրեց ամենախորամանկ ու վտանգավոր փորձությունների, և նրա հնազանդությունն ու ենթարկվելը Հայր Աստծուն հավիտենական էին: Հոգևոր մարտից դուրս եկավ իբրև Աստծու Որդի և հավատարիմ ծառա (Մատթեոս 4:1-11, Մարկոս 1:12-13, Ղուկաս 4:1-13):

Դ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԸ

Հրեշավոր բախման ժամանակ հաղթանակ տանելուց հետո Հիսուսը ձեռնամուխ եղավ հասարակական բուռն գործունեության, որի համար նշանակվել էր: Նա կանչեց առաջին աշակերտներին (Հովհ. 1:35-51), նրանց մոտ դրսևորեց իր գերմարդկային փրկիչ զորությունը՝ ջուրը դարձնելով գինի (Հովհ. 2:1-11), կատարելով այլ հրաշքեր (Հովհ. 2:23), Նիկողեմոսին դաս տալով երկրորդ ծննդի մասին, ազատություն տալով Սամարիայի արհա-

մարիվածներին (Յովհ. 4): Նրա գործունեության այս շրջանը, որը նախապատրաստվել էր Մկրտչի կողմից, գազաթնակետին հասավ սամարացիների խոստովանությամբ (Յովհ. 4:42):

Ե. ԵՂԱՆՂՈՒՆ ՎԱՐՂԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԱԼԻԼԻԱՅՈՒՄ

Յովհաննես Մկրտչի բանտարկությունը Յիսուսի հասարակական գործունեության սկիզբն ազդարարող նշանն էր: Նա հայտնեց Ողորմածության տարվա և Աստուծու Թագավորության ներկայության լուրը (Մարկոս 1:14): Երբ Նազարեթի ժողովարաններում չընդունվեց իբրև Մեսիա (Ղուկաս 4:16 և հաջորդ էջեր), Կափառնայումը դարձրեց իր նոր Ընդհանուր թաղամասը: Անկասկած, մեկ տարի շարունակ նա գործեց և ուսուցանեց ինչպես այս, այնպես էլ Գալիլիա գավառի այլ գյուղերում:

Նա ցույց տվեց աստվածային իր գորությունը բնության (Մարկոս 4:35-41, 6:34-51 և այլն), չար ոգիների ու դևերի աշխարհի (Ղուկաս 8:26-39, 9:37-45), մարդկային մարմնի և մարմնական ու հոգևոր հիվանդությունների (Մատթեոս 8:1-17, 9:1-8), կյանքի ու մահվան (Ղուկաս 7:11-17, Մատթեոս 8:18-26) վրա: Բացի այդ՝ հայտարարեց, որ իր ձեռքին է մարդկության հավիտենական ճակատագրի վերջնական իշխանությունը. «Լեռան քարոզ»-ում, ինչպես նաև այլ քարոզներում, նա բացահայտեց իր բացառիկ գորությունը՝ հռչակելով Երկնքի թագավորության օրենքները (Մատթեոս 5-7:29):

Քրիստոսի խոստացած գերագույն գորությունը բացահայտելուն զուգընթաց՝ Յիսուսը միաժամանակ իր սերն ու մխիթարությունը բերեց մարմնական ու հոգևոր ցավերով տառապողներին (Մատթեոս 9:1-8, Ղուկաս 8:43-48): Նա բազմիցս հայտարարեց, որ եկել էր փնտրելու և գտնելու մոլորյալներին՝ կիրառելով վիրավորանքները ներելու աստվածային իր կարողությունը (Ղուկաս 5:20-26, 7:48-50):

Բազմաթիվ աշակերտներից նա ընտրեց տասներկուսին, որոնց առանձնահատուկ ուսուցանեց ու ձևավորեց իբրև իր ապագա առաքյալներ (Մատթեոս 10:1-4, Ղուկաս 6:12-16): Լսարանին սովորեցնելու ուժը, ատելի հակառակորդների (լիներն դրանք իրեն ղեկավարներ, թե փարիսեցի աղանդավորներ) հարձակումներին դիմադրելը և արարածի վրա գործած նրա զորության այլ դրսևորումներ (Ղուկաս 4:33-41, Մարկոս 5:1-42), գալիլիական զանգվածների մեջ մեծ ժողովրդականություն ստացան (Ղուկաս 4:40-42, 5:15-16, 6:17-19): Այս հեղինակությունն իր գազաթնակետին հասավ հացի բազմացման ժամանակ (հինգ հազար կերակրվածներ. Մատթեոս 14:13-21, Մարկոս 6:30-44, Ղուկաս 9:10-17, Յովհաննես 6:5-13), և նրա՝ Մեսիա լինելու այս ապացույցը ամբոխին մղեց նրան հռչակելու իբրև թագավոր (Յովհաննես 6:15):

Զ. ՏԱՍՆԵՐԿՈՒՄԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Երբ Յիսուսը մերժեց երկրային Մեսիա թագադրվելու պահանջը, ամբոխը, ինչպես նաև շատ աշակերտներ, լքեցին նրան (Յովհ. 6:26-27, 66-67): Այդ ժամանակ նա քաշվեց Տյու-

րոսի, Սիդոնի և Փիլիպպոսի Կեսարիայի տարածքները (Մատթեոս 15:21, 16:13, Մարկոս 7:31), սակայն դրանով չէր կարող խույս տալ ժողովրդի ուշադրությունից:

Երբ նորից վերադարձավ դեպի Գալիլիայի ծովափերը, բուժեց և օգնության հասավ հաշմանդամ ու վշտահար էլի շատ մարդկանց: Երկրորդ անգամ կերակրեց բազմությանը՝ բազմացնելով հացն ու ձուկը (չորս հազար կերակրվածներ. Մատթեոս 14:29-39):

Այնուհետև, բաժանվելով ամբոխից, նա առանձնացավ աշակերտների հետ: Այդ ժամանակ է, որ նրանց տվեց գլխավոր հարցը. «Իսկ ձեր ասելով՝ ո՞վ եմ ես ձեզ համար» (Մատթեոս 16:15): Այնուհետև գալիս է Սիմոն Պետրոսի կայծակնային պատասխանը. խոսելով բոլոր ընկերների անունից՝ աշակերտը հայտարարեց. «Ռու Քրիստոսն ես, Կենդանի Աստծու Որդին»: Այս պահից ի վեր Հիսուսը սկսեց աշակերտներին լրջորեն պատրաստել մայրաքաղաք Երուսաղեմին սպասվող ահավոր հարվածին (Մատթեոս 16:21-26): Բայց, մինչև ժամանակ, նրանց վստահեցրեց վերջնական հաղթանակի հաշվով, ուստի և հավատացյալները վախենալու ոչինչ չունեին (Ղուկաս 12:4-12 և 32-34): Իր անձի՝ աշակերտների առջև բացահայտումը նոր աստիճանի հասավ երեք մտերիմ աշակերտների առաջ իր պայծառակերպության ժամանակ, երբ վերջիններս նրան տեսան աստվածային փառքով պարուրված (Մատթեոս 17:1-11, Մարկոս 9:2-10, Ղուկաս 9:28-35): Քանի որ նա եկել էր իրականացնելու և՛ Օրենքը, և՛ Մարգարեությունները, հայտնվեցին Մովսեսն ու Եղիան և զրուցեցին նրա հետ: Պայծառակերպությունից քիչ ժամանակ առաջ նա ճանապարհվել էր Երուսաղեմ, որտեղ պետք է տանջանքներ կրեր և մահանար հրեա կրոնական ղեկավարների ձեռքով: Սակայն մեկընդմիջտ նա լսեց Հոր ձայնը, որը հավանություն էր տալիս իր գործունեությանը:

Է. ԱՃՈՂ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Հայտնվելով աշակերտներին և ընդունվելով իբրև Աստծու Որդի՝ Հիսուսն էլ ավելի բացահայտորեն, քան անցյալում էր, նրանց նախապատրաստեց իր Եկեղեցու հիմնադիրները լինելու ապագա գործին: Ուսուցանեց և՛ ուղղակիորեն, և՛ առակներով լուսաբանելով՝ շարունակելով բացահայտել աստվածային իր գործությունը՝ բուժելով հաշմանդամներին (Ղուկաս 14:1-6, 17:11-19) և կույրերին (Մարկոս 10:46-52): Սակայն հակադրությունը նրա դեմ սկսեց աճել, և հրեա կրոնական ղեկավարները նրա հանդեպ մահացու ատելություն տածեցին (Մարկոս 14:1): Նրան տանջելու և նրա աճող հեղինակությանը վերջ դնելու նպատակով չէին խնայում ոչ մի միջոց: Ի վերջո, պատրվակ գտան Հիսուսին հռոմեական կառավարությանը մատնելու և մահապատժի ենթարկելու համար (Մատթեոս 19:1-3, Ղուկաս 11:53-54): Նրա ճշմարիտ ու արդիական ուսմունքը, որը ծնունդ տվեց հավատափոխության, էլ ավելի բորբոքեց փարիսեցիների հակադրությունն ու ատելությունը Հիսուսի նկատմամբ (Հովհ. 11:46-53):

Ը. ԿԵՐՋԻՆ ՇԱԲԱԹԸ ԵՐՈՒՄԱՂԵՍՈՒՄ

Բացահայտ ձևով մտնելով մայրաքաղաք՝ Երուսաղեմ, իբրև Մեսիա - Թագավոր, շրջապատված ինքնամոռաց ոգևորությամբ իրեն ողջունող ամբոխով (Մարկոս 11:1-10, Յովհաննես 12:12-19), Հիսուսը Տաճարից վնդեց դրամափոխներին ու այլ վաճառականների՝ մեկընդմիջտ բացահայտելով Մեսիայի ու Թագավորի իր իշխանությունը (Ղուկաս 19:45, Մատթեոս 21:12): Այսուամենայնիվ, հանգույցի լուծումը մոտ էր: Նա անվերջ բացահայտում էր իր հակառակորդների երկերեսանիությունը (Մատթեոս 23:1-39, Ղուկաս 20:1-47): Առաքելության վերջին վճռական օրերի ընթացքում, Տաճարում, նա հրապարակավ վարդապետություն արեց (Մատթեոս 21:23, 22:1-14, Մարկոս 12:1-12, Ղուկաս 20:9-47): Նա կանխագուշակեց այն, ինչ կատարվելու էր Հրեաստանի ժողովրդի հետ՝ Երուսաղեմում և Տաճարում (Ղուկաս 21:20-24):

Կանխագուշակեց, որ համաշխարհային պատմությունը վերջ է ունենալու իր փառքով գալուստի ժամանակ, երբ բոլորի, նաև ատելի հակառակորդների առջև բացահայտի իր զորությունը: Այդ ժամանակ նա կհաստատի հավիտենական իր իշխանությունը (Մատթեոս 24:29-31): Խաչելության նախորդ օրվա երեկոյան՝ բանտարկությունից քիչ առաջ, իբրև անխուսափելի, քավիչ զոհողության նախապատրաստություն, աշակերտների հետ նա կերավ Ջատիկը, վերջին անգամ ուսուցանեց նրանց գալիք առաքելության հետ կապված, լվաց նրանց ոտքերը (Յովհաննես 13:1-11), սովորեցրեց լինել հնազանդ, կանխագուշակեց նրանցից մեկի՝ Ղուդայի մատնությունը, կազմակերպեց Սուրբ Ընթրիքը և աղոթեց բոլոր նրանց համար, ովքեր հավատալու էին իր անվանը (Յովհաննես 17):

Վրա հասավ Գեթսեմանիի պարտեզում Հոր կամքին ենթարկվելու վերջին վճռական ժամը (Մատթեոս 26:39-46): Իր վրա վերցնելով բոլոր մարդկանց մեղքերի բեռը՝ նա թույլ տվեց, որ իրեն բանտարկեն: Նրա հետ վատ վերաբերվեցին, դատեցին անօրինաբար, անարդարացիորեն դատապարտեցին և անմեղ ճանաչելուն հակառակ՝ խաչեցին: Նրա քավիչ զոհողությունը զագաթնակետին հասավ խավարի ու լքվածության ժամերին, ու նրա ճիչը միաժամանակ և՛ հուսահատության, և՛ գերագույն այն առաքելությունը կատարելու նշան էր, որի համար եկել էր մարդկանց մոտ: «Աստված իմ, Աստված իմ, ինչո՞ւ ես ինձ լքել» (Մատթեոս 27:46): Աշակերտներին ասել էր, որ եկել էր ոչ թե աշխարհը դատելու, այլ իր կյանքը, իբրև փրկագին, տալու բազմաթիվ կյանքերի համար (Մատթեոս 26:28, Մարկոս 10:45): Կամավոր զոհաբերվելով իբրև Ջատիկ գառ (Աստծու Գառ, որի մասին խոսում էր Մկրտիչը)՝ երկրային նրա գործը ավարտին էր հասնում: Սակայն, հոգին Աստծու ձեռքերի մեջ դնելուց առաջ նաև հաղթականորեն հայտարարեց. «ԱՄԵՆ ԻՆՉ ԿԱՏԱՐՎԱԾ Է» (Յովհաննես 19:30):

Թ. ԹՎՂՈՒՄ, ՀԱՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԲԱՐՁՈՒՄ

Մահվանից հետո Հիսուսն այլևս թշնամիների տրամադրության տակ չէր: Նրա մարմինը իջեցվեց խաչից (Ղուկաս 23:50-53) և թաղվեց մի այգում՝ թարմ փորված գերեզմանում: Հարություն առնելու նրա խոստումը շուտով կատարվեց: Իրոք, հայտնվելով կենդանի՝ նա ցրեց աշակերտների վախն ու տագնապը: Քառասուն օր շարունակ հայտնվեց, զրուցեց ու կերավ

Նրանց հետ՝ ապացուցելով մարմնական իր հարության իրականությունը: Հիսուսը նրանց խոստացավ ուղարկել Սուրբ Հոգին, ըստ Հովհաննու Ավետարանի՝ Մխիթարիչը: Աշակերտները նրա վկաներն էին դառնալու Երուսաղեմից մինչև երկրի ծայրամասերը: Վերջին անգամ հաստատելով համաշխարհային իր գործությունը (Մատթեոս 28:18-20)՝ նա հրամայեց բոլոր ազգերի միջից աշակերտներ պատրաստել և մկրտել նրանց, ովքեր հավատում էին իրեն: Խոստացավ հավատարմորեն ներկա լինել մինչև դարերի վերջը: Այնուհետև, մինչ օրհնում էր, նրանց աչքերի առջև «երկինք համբարձվեց» (Համբարձում, Ղուկաս 24:51):

Նրա կյանքն ու գործունեությունն ավարտվում էին կատարյալ հաղթանակով: Ուստի և Պետրոսն, իրավամբ, կարող էր հայտարարել. «Աստված Տեր և Քրիստոս դարձրեց նրան, ում դուք խաչել եք» (Գործք 2:36):

Ժ. ԱՎԵՏԱՐԱՆՈՒՄ ԵՎ «ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ»-ՈՒՄ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ ԱՆՁԻՆՔ

Հիսուս Քրիստոսի առնչությամբ

Ա. Հին Կտակարան

Աբել, Աբիաթար, Աբրահամ, Դանիել, Դավիթ, Եղիա, Եղիսե, Իսահակ, Եսայի, Հակոբոս, Երեմիա, Հովնան, Դովտ, Մովսես, Նեեման, Նոյ, Ռաբել, Սողոմե, Ջաքարիա

Բ. Հիսուսի հետ կապված

Աննա՝ մարգարեուհի (Ղուկաս 2:36-38)

Եղիսաբեթ՝ Ջաքարիայի կինը՝ Հովհաննես Մկրտչի մայրը (Ղուկաս 1:5-45)

Հովհաննա՝ Քուզայի՝ Հերովդեսի նախարարի կինը (Ղուկաս 8:3, 24:10)

Մարթա՝ Մարիամի և Ղազարոսի քույրը

Մարիամ՝ Տիրոջ կույս մայրը, Հովսեփի կինը (Մատթեոս 1:18)

Մարիամ՝ Կղեոպասի կինը, փոքր Հակոբոսի և Հովսեփի մայրը (Մարկոս 15:40)

Մարիամ Մագթաղեմացի՝ կին, որին Հիսուսն ազատեց չար ոգիներից, և որը դարձավ իր աշակերտը. հարությունից հետո Հիսուսն առաջինը նրան հայտնվեց (Մարկոս 16:9 և Ղուկաս 8:2)

Մարիամ՝ Մարթայի և Ղազարոսի քույրը՝ Բեթանիայից (Ղուկաս 10:38-42, Հովհաննես 11:1 և 12:1-3)

Սողոմե՝ Հիսուսին ուղեկցող կանանցից մեկը, որը նրան ծառայել էր վերջինիս գործունեության ընթացքում և որը ներկա էր խաչելությանն ու հարությանը (Մարկոս 15:40, 16:1-2): Մատթեոսը (27:56) նրան նույնացնում է Ջեբեդոսի կնոջ հետ: Ուստի, նա Հովհաննեսի և Հակոբոսի՝ Տիրոջ մտերիմ երկու առաքյալների մայրն է (Մատթեոս 20:20-24, Մարկոս 10:35-40): Համաձայն Հովհաննու Ավետարանի 19:25 հատվածի՝ կարելի է եզրակացնել, որ նա Հիսուսի մոր՝ Մարիամի քույրն է, մի բան, որը խիստ հավանական է:

Սողոմե՝ Պաղեստինի չորրորդապետ Փիլիպպոսի և Հերովդիայի դուստրը, որը պարեց Հերովդես թագավորի առջև՝ առիթ տալով դավաճան մորը թագավորից խնդրելու Հովհաննես Մկրտչի գլուխը:

Շուշան՝ կին, որը Տիրոջը ծառայել է նրա գործունեության ընթացքում (Ղուկաս 8:3):

Գ. Առաքյալները

Անդրեաս՝ Հովհաննես Մկրտչի աշակերտը. դարձավ դեպի Հիսուսը և իր եղբայր Պետրոսին տարավ Տիրոջ մոտ (Մատթեոս 10:2 և Մարկոս 1:16-18, 13:3, Հովհաննի 1:35-42):

Քարղուղենիոս, որի մյուս անունը գուցե թե Նաթանայել է. Հիսուսի մոտ նրան տարավ Փիլիպպոսը (Մատթեոս 1:3, Հովհաննես 1:45-46):

Հակոբոս՝ Հովհաննեսի եղբայրը՝ Ջեբեդոսի և Սողոմեի որդին: Եղբոր հետ միասին, նա Պետրոսի և Անդրեասի գործընկերն է երկու ընտանիքների կողմից ղեկավարած ձկան որսի ժամանակ: Առաջին մարտիրոսն է, առաքյալ (Մատթեոս 4:21, Մարկոս 1:19, Ղուկաս 5:10, Գործք 12):

Հակոբոս՝ Ալփեոսի և Մարիամի որդին: Ալփեոսը հայտնի էր նաև Քղեոպաս անվամբ (Հովհաննես 19:25): Նրան կոչում են նաև Փոքր կամ Կարճահասակ Հակոբոս՝ կազմվածքի, գուցե նաև տարիքի պատճառով:

Հովհաննես՝ Ջեբեդոսի և Սողոմեի որդին, Հակոբոսի եղբայրը, Հիսուսի զարմիկը: Եղբոր և հոր պես լինելով վարպետ ձկնորս՝ նա Քրիստոսի սիրած երեք աշակերտներից է՝ եղբոր և Պետրոսի հետ մեկտեղ: Ավետարանում անվանվում է նաև «նա, ում Քրիստոսը սիրում էր»: Առաքելական Եկեղեցուն գրավում է գերակշիռ դիրք: Աշխատել է Եփեսոսում, այնուհետև, Դոմիցիանոսի իշխանության օրոք, աքսորվել է Պատմոս կղզի: Գրել է իր անունը կրող Ավետարանը, դարձյալ իր անունը կրող երեք նամակ և, իհարկե՝ «Հայտնությունը»: Մահացել է Տրայանոս կայսրի օրոք (Մատթեոս 17:1, Մարկոս 1:19, Ղուկաս 5:10, Հովհաննես 13:23, Գործք 3:1, Հայտնություն 1:4):

Հուդա՝ անվանվում է նաև Ղեբեոս կամ Թադեոս (Մատթեոս 10:3, Հովհաննես 14:22):

Հուդա՝ Սիմոն Իսկարիոփտացու որդին, որտեղից էլ Հուդա Իսկարիոփտացի անվանումը: Լինելով առաքյալների խմբի գանձապահը՝ նա երեսուն արծաթադրամի դիմաց մատնեց Հիսուսին, խոստովանեց մեղքը և կախվեց՝ սակայն, առանց զղջալու (Մատթեոս 26:14-16, 47-50, 27:3-5, Ղուկաս 6:16, Հովհաննես 12:6, Գործք 1:18):

Մատթեոս, անվանվում է նաև Ղևի, մասնագիտությամբ՝ հռոմեացիների հարկահավաք: Նա իր անունը կրող Ավետարանի հեղինակն է (Մարկոս 2:14-17, Ղուկաս 5:27-32):

Պետրոս, կանչվելուց առաջ անվանվում էր Սիմոն: Հովնանի որդին է, ծագումով՝ Բեթսայիդայից: Մասնագիտությամբ լինելով ձկնորս՝ տասներկու առաքյալների մեջ միշտ առաջինն է անվանվում: Հիսուսի մեջ նա ճանաչեց Աստծու Որդուն: Հիսուսի դատավարության ժամանակ ուրացավ Տիրոջը, սակայն զղջաց և ներում ստացավ: Նա դարձավ ծնունդ առնող Եկեղեցու մունետիկը: Գրեց իր անունը կրող երկու նամակ: Ավանդության համաձայն մահացել է Հռոմում՝ նահատակի մահով (գլխիվայր խաչվել է):

Սիմոն Նախանձաժույգ կամ Քանանացի (Մատթեոս 10:4, Ղուկաս 6:15):

Թովմաս, անվանվում է նաև Երկվորյակ (Մատթեոս 10:3, Հովհաննես 11:16, 14:5):

Դ. Հիսուսի հետ կապված այլ անձինք

Ալեքսանդր՝ Սիմոն Կյուրենացու որդին, նրա, ով տարել է Հիսուսի Խաչը (Մարկոս 15:21):

Աննա՝ ըստ «Գործք»-ի՝ Կայիափա քահանայապետի աները: Բանտարկությունից հետո

Հիսուսը ստիպված եղավ ներկայանալ նրան. որն էլ Հիսուսին ուղարկեց իր փեսայի՝ Կալիսթիանի մոտ: Թվում է, որ քահանայապետի պաշտոնը նա իրականացրել է մ. թ. 16 թվականին՝ Վալերոս Գրատոսի կողմից վտարվելուց հետո: Դրանով է բացատրվում այն, որ երկուսն էլ կոչվում են Քահանայապետեր (Ղուկաս 3:2, Հովհաննես 18:13):

Բարաբբա՝ մուսուլմանական (ազիտատոր) և մարդասպան, գուցե և՛ քաղաքական հեղափոխական: Դատապարտված լինելով մահվան՝ նա Հիսուսի փոխարեն ազատ արձակվեց (Մատթեոս 27:16-26):

Բարտիմեոս՝ Տիմեի՝ կույր մի մուրացկանի որդին, որին Հիսուսը բուժել է (Մարկոս 10):

Օգոստոս Կեսար՝ հռոմեական առաջին կայսր: Հիսուսը ծնվել է նրա իշխանության օրոք: Նրա պատվին Հերովդես Մեծը կառուցել է Կեսարիա քաղաքը:

Տիբերիոս Կեսար՝ Օգոստոսի փեսան ու հետնորդը: Հերովդես Անտիպասը նրա պատվին կառուցել տվեց Տիբերիա քաղաքը. Հիսուսը խաչվել է նրա իշխանության օրոք:

Կայիափա՝ քահանայապետ, որը Հիսուսին դատապարտել է մահվան:

Քուզա՝ Հերովդես Անտիպասի սպան: Նրա կինը՝ Հովհաննան, Տիրոջը ծառայողների մեջ է (Ղուկաս 8:3):

Կղեոպաս՝ Հիսուսի աշակերտը, որին, ինչպես և անանուն մեկ այլ աշակերտի, Հիսուսը էմմավուսի ճանապարհին հանդիպեց հարությունից հետո (Ղուկաս 24:18):

Կյուրեն՝ Սիրիայի հռոմեացի կուսակալ, որը կառավարում էր Հիսուսի ծննդից ի վեր: Նա հրաման արձակեց մարդահամար անցկացնելու մասին, մի բան, որը Հովսեփին ու նրա հղի կնոջը՝ Մարիամին, ստիպեց գրանցվել Բեթղեհեմում՝ իրենց ծննդավայրում (Ղուկաս 2:1-5):

Հերովդես Մեծ՝ Անտիպատերի որդին, եղովմացի, ծնվել է մ. թ. ա. 62 թ., մահացել է Հիսուսի ծննդից քիչ ժամանակ առաջ՝ 4թ.: 47 թ. Հուլիոս Կեսարը նրան նշանակեց Գալիլիայի կառավարիչ: Ավելի ուշ նա կառավարեց համարյա ամբողջ Պաղեստինը: Ունեցավ յոթ կին: Սարսափազդու բռնակալ էր. բնաջնջեց Բեթղեհեմ քաղաքի փոքր երեխաներին՝ հույս ունենալով ոչնչացնել նաև նորածին Հիսուսին՝ իր ապագա հակառակորդին:

Հերովդես Փիլիպպոս՝ նախորդի և Մարիամնեի որդին: Կինը՝ Հերովդիան, լքեց նրան և գնաց ապրելու իր կիսաեղբայր Հերովդեսի հետ (Մատթեոս 14:3-6):

Հերովդես Արքեղայոս՝ Հերովդես Մեծի և Մաղթակեի որդին, հոր մահվանից հետո՝ Հուդայի երկրի թագավոր. Հիսուսն այդ ժամանակ Եգիպտոսում էր (Մատթեոս 2:22):

Հերովդես Անթիպաս՝ Հերովդես Մեծի և Մաղթակեի որդին, Չորրորդապետ (թագավոր): Հերովդիայի՝ իր կիսաեղբոր դավաճան կնոջ սադրանքով գլխատել տվեց Հովհաննես Սկրտչին: Բանտարկությունից հետո Հիսուսը ներկայացել է նրան (Մատթեոս 14:1-12, Մարկոս 6:14-28):

Հովհաննես Սկրտիչ՝ Չաքարիայի և Եղիսաբեթի որդին, մեր Տեր Հիսուսի մոր՝ Մարիամի զարմիկը: Նա Փրկչի Նախակարապետը եղավ՝ հայտնելով գալիք իրադարձության մասին: Նա զղջում ու մկրտություն քարոզեց մեղքերի թողության նպատակով: Մատնելով Հերովդես Անտիպասի դավաճանությունը՝ նա բանտարկվեց, իսկ անօրեն Հերովդիայի ու նրա անբարոյական աղջկա՝ Սողոմեի պահանջով՝ գլխատվեց: Եբրայեցի վերջին մարգարեն էր (Մատթեոս 3:1-17, Ղուկաս 1:5-8, 3:1-3, Հովհաննես 3:22-36):

Յոժսեփ՝ Մարիամի ամուսինը, մեր Տիրոջ հայրացուն, մասնագիտությամբ՝ հյուսն: Ծնվել է Նազարեթում (Մատթեոս 1:25, 2:19-23):

Յոժսեփ՝ Ատյանի անդամ, սերուն է Յիսուսի աշակերտ Արիմաթայից: Հռոմեացի կառավարչից խնդրեց Յիսուսի մարմինը և թաղեց իր այգում (Մատթեոս 27:58-60, Մարկոս 15:43-46):

Յակոբոս, Յոժսես, Յուդա՝ Յոժսեփի ու Մարիամի որդիները՝ Քրիստոսի եղբայրները: Հակոբոսն ու Յուդան գրել են իրենց անունը կրող երկու թուղթ (Մատթեոս 13:55, Մարկոս 6:3, Հովհաննես 7:1-5):

Յայրոս՝ Կափառնայումի ժողովարանի ղեկավար, հայրն այն աղջկա, որին Քրիստոսը հարություն պարգևեց:

Ղազարոս՝ Մարթայի և Մարիամի եղբայրը, Բեթանիա քաղաքի բնակիչ, Յիսուսի մոտ ընկերն ու նրա աշակերտներից: Հիվանդանալով մահացավ, սակայն Յիսուսը նրան կենդանացրեց (Հովհաննես 11):

Մաղքոս՝ Ատյանի սպա, որի ականջը, Յիսուսի բանտարկության ժամանակ, Պետրոսը պոկեց Գեթսեմանի պարտեզում:

Նիկողոզեմոս՝ փարիսեցի, ատյանի անդամ: Գիշերով եկավ Յիսուսի մոտ՝ նրա հետ գրուցելու: Ատյանի մեղադրանքներից պաշտպանեց Յիսուսին, ներկա եղավ Փրկչի թաղմանը (Հովհաննես 3 և 7:50-52, 19:39):

Պոնտացի Պիղատոս՝ Հուդայի երկրի կառավարիչ կամ ենթակառավարիչ, մ. թ. 26-36 թթ.: Հրեական իր դատավորությունից հետո Յիսուսը ներկայացավ նրա առաջ: Պիղատոսը նրան դատապարտեց խաչման՝ զուր փորձելով ազատ արձակել. նա անկարող եղավ Յիսուսին բաց թողնել՝ զուտ թուլամորթությունից ելնելով կամ հանգամանքների թելադրանքով: Ավելի ուշ, հավանաբար, ինքնասպան է եղել իր լողասենյակում:

Ռուփոս՝ Սիմոն Կյուրենացու որդին է (Մարկոս 15:21):

Սիմեոն՝ իսրայելցի բարեպաշտ, որը Տաճարում մանուկ Յիսուսի մեջ ճանաչեց ապագա Փրկչին (Ղուկաս 2:3):

Սիմոն՝ մատնիչ Հուդայի հայրը:

Սիմոն՝ փարիսեցի, որը Յիսուսին հրավիրեց ճաշի: Վատ վարքի տեր մի կին, խնջույքի ժամանակ օժեց Քրիստոսի ոտքերը: Այս առիթով, Յիսուսը պատմեց երկու պարտատերերի առակը (Ղուկաս 7:36-50):

Սիմոն՝ Բեթանիայում ապրող բորոտ, գուցե Մարթայի ամուսինը (Մատթեոս 26:6-13, Մարկոս 14:3-9, Հովհաննես 12:1-8):

Սիմոն՝ կյուրենացի է: Հռոմեացի զինվորները նրան կրել տվեցին Յիսուսի խաչը: Ալեքսանդրի և Ռուփոսի հայրն է, նրանց, ովքեր դարձան Յիսուսի աշակերտները (Մատթեոս 27:32, Մարկոս 15:21):

Ե. Անանուն անձինք

Չորս Ավետարաններում պահպանված անունները ներկայացնող ցուցակից բացի՝ կան նաև տարբեր առիթներով Յիսուսի հետ կապված այլ անձանց անվանացանկեր.

Սամարացի մի կին՝ Հովհաննես 4

Դավաճան կինը՝ Հովհաննես 8

Ի ծնե կույր մարդը՝ Հովհաննես 9

Անդամալույծ, որին ընկերները տարան Յիսուսի մոտ՝ Մարկոս 2
Մեղավոր մի կին՝ Ղուկաս 7
Ժողովարանի մի կառավարիչ
Հռոմեացի սպա՝ Ղուկաս 7
Հարուստ երիտասարդ՝ Մարկոս 10
Սիրիա-փյունիկեցի կին՝ Մարկոս 7
Կույր մարդ Բեթսայիդայից՝ Մարկոս 8
Դիվահար տղա՝ Մարկոս 9
Փոքր երեխաներ՝ Մարկոս 10
Արևելքի մոզեր՝ Մատթեոս 2
Հովիվներ՝ Բեթղեհեմում՝ Ղուկաս 2
Բորոտ տասը մարդ, որոնց մեջ՝ մի սամարացի՝ Ղուկաս 17
Սակավարյունությամբ տառապող կին՝ Ղուկաս 8
Որդուն կորցրած այրի կին՝ Ղուկաս 7
Չորացած ձեռքով մարդ՝ Ղուկաս 6

Գ Լ ՈՒ Խ 21

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԿՅԱՆՔԸ

(ըստ R. P. Tellier-ի «Նոր Կտակարանի պատմական քարտեզ»-ի)

ՆԱԽԱԲԱՆ

1. Մարմնացած Խոսքը և նրա նախակարապետը, Հ. 1, 1-18
2. Ինչո՞ւ և ինչպե՞ս է գրել Ս. Ղուկասը, Ղ. 1, 1-4

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՓՐԿՈՒԹՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅԱԸ

3. Նախակարապետի ծննդի ավետումը: Երուսաղեմ: Տաճար: Ղ. 1, 5-25
4. Մարմնացած Խոսքի ծննդյան ավետումը: Նազարեթ: Ղ. 1, 26-38
5. Այցը: Ային: Ղ. 1, 39-56
6. Հովհաննես Մկրտչի ծնունդն ու թլփատումը: Նույնը, Ղ. 1, 57-80
7. Հովսեփի տեսիլքը: Նազարեթ: Մ. 1, 18-25 ա
8. Յիսուսի ծնունդը: Բեթղեհեմ: Ղ. 2, 1-20
9. Յիսուսի թլփատումն ու անվանակոչությունը: Նույնը, Մ. 1, 25բ, Ղ. 2, 21

- 10.Տաճար ներկայանալը: Երուսաղեմ: Ղ. 2, 22-38
- 11.Մոզերը: Փախուստը Եգիպտոս: Սուրբ Անմեղները: Բեթղեհեմ: Մ. 2, 2-18: Մոզերը ստիպված եղան հասնել Երիթով և վերադառնալ Մեռյալ ծովի հարավային կածաններով: 12-13.Վերադարձը Նազարեթ:
- Նազարեթ: Մ. 2, 19-23, Ղ. 2, 39: Հերովդեսը մահանում է Ք. Ա. 4 թ.՝ Ջատկից առաջ:
- Հռոմի հիմնադրման 750-րդ տարի: Կարճատև այց Եգիպտոսում:
- 14.Տաճարում մնալը: Թաքնված կյանքը: Երուսաղեմ: Ղ. 2, 40-52

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՀՈՎԻԱՆՆԵՍԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ՄԵՍԻԱՅԻ ՉԱԼՈՒՄՏԸ

- 15-18.Հովհաննես Մկրտչի Առաքելությունն ու կանխասացությունը: Մ.3, 1-12, մ. 1, 1-8, Ղ. 3,1-18
- 19.Մկրտության ժամանակ Հիսուսի հռչակումը Աստծու Որդի: Հորդանան, Մ. 3, 14-17, մ. 1, 9-11, Ղ. 3, 21-22
- 20.Քրիստոսի մարդկային ծագումնաբանությունը, Մ. 1, 1-17, Ղ. 3, 23-38
- 21.Քրիստոսի պատճառն ու փորձությունը, Մ. 4, 1-11, մ. 1, 12-13, Ղ. 4, 1-13
- 22-24.Մկրտչի վկայությունը: Առաջին կանչերը: Անդրհորդանանյան Բեթանիա, Հ. 1, 19-42
- 25.Երկու նոր աշակերտ: Բեթսայիդայի մոտերքում, Հ. 1, 43-51
- Մեր Տերը վերադառնում է Գալիլիա՝ Սիմոնի, Անդրեասի և Հովհաննեսի հետ: Հավանաբար, այսպես կարելի է ներկայացնել նրանց երթուղին, Հորդանան մինչև լճի հարավային սահմանը, իսկ հյուսիսում՝ Բեթսայիդա: Փիլիպպոսին ուղղված կանչը այս փոքրիկ քաղաքի մերձակայքում: Այնուհետև կանայացի Նաթանայելին կանչելը: Մեր Տերը, գուցե, Բեթանիայից ուղիղ գնացել է դեպի Կանա:
- 26.Կանայի հարսանիքում:
- Կանա. Հ. 2, 1-11, Նաթանայելից երկու օր հետո, կամ մեկնումը Բեթանիայից:
- 27.Կարճատև այց Կափառնայում: Կափառնայում: Հ. 2, 12
- 28-29.Առևտրականների վտարումը Տաճարից: Երուսաղեմ: Մ. 21, 12-13, մ. 11, 15-17, Ղ. 19, 45-46, Հ. 2, 13-22
- 30-31. Ջրույց Նիկոդեմոսի հետ: Նույնը Հ. 2, 23-3, 21
- 32-33. Նախակարապետի վերջին վկայությունը: Աստծու Որդու հայտնությունը: Այենոն՝ Սաղեմի մոտ, Հ. 3, 22-36: Մեր Տիրոջ առաքելությունը: Հուդայի երկրում նրա աշակերտները մկրտում են: Հովհաննեսի աշակերտներն անհանգստանում են. դա նշան է այն բանի, որ Մեր Տերը հեռու չէ Այենոնից:
- 34.Ս.Հովհաննես Մկրտիչը բանտ է նետվում: Մակերոս: Մ. 14, 3-5, մ. 6, 17-20, Ղ. 3, 18-20: Մայիս ամսվա սկիզբը:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ ԳՈՐԾՈՒՆԵՈՒՅՈՒՆԸ ԳԱԼԻԼԻԱՅՈՒՄ

- 1-ին բաժին. Հիսուսը հեռանում է Հուդայի երկրից և գնում է քարոզելու Գալիլիայում:
35-36. Վերադարձ Գալիլիա: Զրույց սամարացի կնոջ հետ: Հակոբի ջրհոր: Մ. 4, 12, մ. 1, 14, Հ. 4, 1-42:
37. Սպայի որդու բուժումը: Կանա: Հ. 4, 43-54:
- 38-39. Գալիլիայում իրականացված գործունեության սկիզբը: Առաջին անգամ Հիսուսը քարոզում է Նազարեթում: Նազարեթ: Մ. 4, 16, մ. 1, 14-15, Ղ. 4, 14-22, Հ. 4, 45:
- Հովհաննես Մկրտչի բանտարկությունից հետո Մեր Տերը, փարիսեցիների բանտարկություններից խուսափելու նպատակով, գնում է Գալիլիա: Հորդանանից վերադարձել է, հավանաբար, կա՛մ Aqrabeh-ով, կա՛մ էլ ouadi Fara-ով:
- 40-44. Մի շաբաթ օր Կափառնայում: Կափառնայում: Մ. 4, 13-16, 7, 28-29, 8, 14-17, մ. 1, 21-34, 3, 11-12, Ղ. 4, 31-41:
- Հիսուսը քարոզում է Կափառնայում: Ղկի վտարումը: Ս. Պետրոսի զոքանջի բուժումը: Նույն օրվա երեկոյան բազմաթիվ այլ բուժումներ:
45. Քարոզելու նպատակով Հիսուսը թողնում է Կափառնայում: Գալիլիա: Մ. 4, 23, մ. 1, 35-39, Ղ. 4, 42-44:
46. Հրաշալի որս և առաջին չորս առաքյալներին վերջնականապես կանչելը: Լճափ: Մ. 4, 18-22, մ. 1, 16-20, Ղ. 5, 1-11:
47. Բորոտի բուժումը. Գալիլիա: Մ. 8, 1-4, մ. 1, 40-45, Ղ. 5, 12-16 2-րդ բաժին. հինգ բախում փարիսեցիների հետ:
- 48-50. Առաջին բախում. անդամալույծը Կափառնայումից: Երկրորդ բախում. Ս. Մատթեոսին ուղղված կանչը: Երրորդ բախում. հարց պասի վերաբերյալ: Կափառնայում: Մ. 9, 1-17, մ. 2, 1-22, Ղ. 5, 17-39: Հունիս ամսվա սկիզբը:
51. Չորրորդ բախում. աշակերտները հասկ են պոկում: Կափառնայումի մոտ: Մ. 12, 1-8, մ. 2, 23-28, Ղ. 6, 1-5:
52. Հինգերորդ բախում. չորացած ձեռքով մարդը: Մի ժողովարանում: Մ. 12, 9-13, մ. 3, 1-5, Ղ. 6, 6-10:
53. Հիսուսին վերացնելու առաջին մտադրությունը: Մ. 12, 14, մ. 3, 6, Ղ. 6, 11: 3-րդ բաժին. Հիսուսի առաջին քարոզը:
- 54-75. Տասներկուսի ընտրումը: Լեռան քարոզը: Երանիների լեռ: Մ. 5-7, 27, 10, 1-4, մ. 3, 7-19, Ղ. 6, 12-49. Երանիները: Հիսուսն ու օրենքը: Ոսկե կանոնը: Թշնամիներին սիրելը: Ամեն ինչ Աստծու համար: Ողորմություն, աղոթք: Պաս: Մի՛ դատեք, ծղոտն ու գերանը: Մարգարիտներ՝ խոզերին: Նեղ ճանապարհը: Սուտ մարգարեները: Ծառը պտուղներից ճանաչելը: Գործերի անհրաժեշտությունը: Կառուցել ոչ թե ավազի, այլ ժայռի վրա:
- 4-րդ բաժին. Երկընտրանքներ ու հարումներ:
76. Կափառնայումի հարյուրապետը: Կափառնայում: Մ. 8, 5-13, Ղ. 7, 1-10:
77. Նայինցի այրի կնոջ որդու հարությունը: Նային: Ղ. 7, 11-17:

- 78-81. Տարբեր փաստեր: Գալիլիա: Մ. 11, 2-19, Ղ. 7, 18-8, 3, 16, 16:
Նախակարապետի լուրը: Խնջույք Սիմոնի տանը, մեղավոր կնոջը ներելը: Սուրբ կանայք,
ովքեր մասնակցում են Եկեղեցու ստեղծմանը:
- 82-83. Հիսուսի ծնողների անհանգստությունը: Նրա իսկական ծնողները: Կափառնայում:
Մ. 12, 46-50, մ. 3, 20-21, 31-35, Ղ. 8, 19-21:
- 5-րդ բաժին. առակներ Աստծու թագավորության մասին:
- 84-96. Առակներ: Լճափ: Մ. 13, 1-15, 18-52, մ. 4, 1-34, Ղ. 8, 4-18, 13, 18-21: Առակներ
սերմնացանի, առանց խնամքի աճած սերմի, որոմի, մանանեխի, հատիկի, թթխմորի,
գանձի և թանկագին աղամանդի, ցանցի, բարի տանտիրոջ մասին:
- 6-րդ բաժին. Առաքելությունը Տիբերիա լճի Արևելքում:
97. Փոթորկի հանդարտեցումը: Տիբերիա լիճ: Մ. 13, 53, 8, 18-27, մ. 4, 35-41, Ղ. 8, 22-25:
98. Հիսուսը Գերդեսացիների երկրում. Լճի արևելյան հատված: Մ. 8, 28-9, 1, մ. 5, 1-20, Ղ.
8, 26-39:
99. Հայրոսի աղջիկն ու արյունահոսությունն ունեցող կինը (163. երկու կույրերի և մեկ համ-
րի բուժումը) Կափառնայում: Մ. 9, 1բ, 18-26, մ. 5, 21-43, Ղ. 8, 40-56:
100. Հիսուսը մերժվում է Նազարեթում: Նազարեթ: Մ. 13, 54-58, մ. 6, 1-6ա, Ղ. 4, 22բ-30, Հ.
6, 42; 4, 44:
- 7-րդ բաժին. Տասներկու Առաքյալների գործունեությունը:
- 101-102. Փրկչի հրահանգները: Առաքելությունը: Գալիլիա: Մ. 9, 35-38, 10, 5-16; 11, 1, մ. 6,
6բ-12, Ղ. 9, 1-5.
- 103-104. Հովհաննես Մկրտչի մահը: Հերովդես Անտիպասի կարծիքը Հիսուսի վերաբերյալ:
Մարկոս, Մ. 14, 6-12, մ. 6, 14-16, 21-29, Ղ. 9, 7:
105. Առաքյալների վերադարձը Կափառնայում: Մ. 6, 30, Ղ. 9, 10ա:
- 8-րդ բաժին. Կյանքի Հացը:
106. Հացի առաջին բազմացումը. Լճի հյուսիս- արևելք: Մ. 14, 13-21, մ. 6, 31-44, Ղ. 9, 10բ-
17, Հ. 6, 1-15. Առաքելությունից հետո առաքյալները կրկին հանդիպում են Կափառ-
նայում: Մեր Տերը որոշում է նրանց հետ միասին գնալ Բեթսայիդայից այն կողմ.
ամբոխը հետևում է նրանց: Հարթավայրը կանաչ է միայն գարնանը:
107. Հիսուսն ու ս. Պետրոսը քայլում են ջրերի վրայով: Տիբերիա լիճ:
Մ. 14, 22-23, մ. 6, 45-52, Հ. 6, 16-21:
108. Բուժումներ Գեննեսարեթում և նրա մերձակայքում: Լճի արևմտյան հատված: Մ. 14,
34-36, մ. 6, 53-56:
- 109-110. Քարոզ կյանքի հացի մասին: Կափառնայում: Հ. 6, 22-71:

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

ՀԻՍՈՒՍԻ ՀՐԱՏԱԿ ԶԱՐՈՋՉՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏԿԱԴԵՍ ԳԱԼԻԼԻԱՅԻՑ ԴՈՒՐԱ

Կյանքի հացի վերաբերյալ քարոզին հաջորդած անհաջողությունից հետո, Հիսուսը
ավելի շատ է նվիրվում աշակերտներին պատրաստելու գործին: Նա հեռանում է Գալիլիա-

յից և գնում կամ Յիուսիսային սահմանները (Յոզեգալուստ, Տաղավարահարաց տոն, Նավակատիք) կամ էլ Յուդայի երկիր (Տաղավարահարաց և Նավակատիքի տոների միջև ընկած ժամանակահատվածում), կամ էլ Պիրեա (Նավակատիքի և վերջին անգամ Երուսաղեմ գնալու միջև ընկած ժամանակաշրջանում):

1-ին բաժին. Երկրորդ տարվա Յոզեգալստյան տոնը:

111. Յիսուսը Բեթեզդայի ավազանում բուժում է մի հաշմանդամի: Երուսաղեմ: Յ. 5, 1-18: Մեր Տերը Ջատկի ժամանակ մնում է Գալիլիայում, բարձրանում է Երուսաղեմ մի տոնի համար, որը կարող է լինել միայն Յոզեգալստյան տոնը (29 թ.): Բեթեզդա ջրավազանը գտնվում էր Անտոնիա ամրոցի հյուսիսում:

112-113. Յիսուսը տալիս է իր առաքելության ապացույցները: Նույնը: Յ. 5, 19-47, 7, 1:

2-րդ բաժին. Աշակերտների կազմավորումը:

114. Աստծուն ճշմարիտ ծառայելը: Գալիլիա: Մ. 15, 1-20, մ. 7, 1-23, Ղ. 11, 39:

115. Քանանացի կինը: Փյունիկիա: Մ. 15, 21-28, մ. 7, 24-30: Երուսաղեմից վերադառնալուց հետո Մեր Տերը, թվում է, ամենից ավելի երկար մնացել է Կափառնայում: Այնուհետև նա գնում է հյուսիս՝ դեպի Տյուրոս և Սիդոն: Բայց անմիջապես վերադառնում է Գալիլիայի լճի արևելյան շրջան՝ Դեկապոլիս և, վերջապես, հասնում Բեթսայիդա՝ Փիլիպպոսի երկրները (Այս տեղաշարժերի պատճառների վերաբերյալ տես՝ Lagrange, էջ 238):

116. Խուլ և կակազող մարդու բուժումը: Դեկապոլիս լճի մոտ: Մ. 15, 29-31, մ. 7, 31-37: Յիսուսը կարճ ժամանակ մնում է Սիդոնում, անցնում է Լիբանանի հարավում գտնվող շատ բարձր սարերով, ուղղվում դեպի հարավ-արևելք, Յակոբի աղջիկների կամրջով անցնում է Յորդանան գետը և հասնում Դեկապոլիս:

117. Յացի երկրորդ բազմացումը. Դեկապոլիս՝ լճի արևելյան շրջան: Մ. 15, 32-39, մ. 8, 1-10: Մեր Տերը, այնուհետև, նավակ է նստում՝ գնալու Մագդաղե լճից արևմուտք:

118. Անօգուտ հրաշք կատարելուց հրաժարվելը: Մագդաղե: Մ. 16, 1-4, մ. 8, 11-13:

119. Վտանգավոր ուսմունքներից զգուշանալը: Լճի վրա: Մ. 16, 4-12, մ. 8, 14-21, Ղ. 12, 1բ:

120. Կույրը Բեթսայիդայից: Լճի հյուսիս-արևելք: մ. 8, 22-26:

121. Պետրոսի խոստովանությունը. Փիլիպպոսի Կեսարիայի մերձակայք: Մ. 16, 13-20, մ. 8, 27-30, Ղ. 9, 18-21:

122-124. Չարչարանքների վերաբերյալ առաջին կանխագուշակությունը: Մ. 16, 21-28, մ. 8, 31-9, 1, Ղ. 9, 22-27, Յ. 12, 25:

125. Յիսուսի Պայծառակերպությունը. Թաբոր: Մ. 17, 1-8, մ. 9, 2-8, Ղ. 9, 28-36: Պետրոսի խոստովանությունից չորս օր անց:

126. Եղիայի գալուստը Յովիաննես Մկրտչի տեսքով: Թաբորից իջնելիս: Մ. 17, 9-13, մ. 9, 9-13:

127. Դիվահար ընկնավորի բուժումը: Թաբորի ստորոտ: Մ. 17, 14-21, մ. 9, 14-29, Ղ. 9, 37-43ա, 17, 5-6:

128. Երկրորդ կանխասացությունը Տանջանքների և Յարության մասին: Գալիլիա: Մ. 17, 22-23, մ. 9, 30-32, Ղ. 9, 43-45:

129-134. Մեր Տիրոջ՝ աշակերտներին ուղղված տարբեր տեղեկություններ: Կափառնայում:

- Մ. 18, 1-35, 10, 41-42, 5, 13, մ. 9, 33-50, Ղ. 9, 46-50, 14, 34-35, 17, 1-4: Հոգևոր մանկությունը: Համբերատարությունը: Խայտառակ արարքի ծանրությունը: Երկրի աղբ: Եղբորն ուղղելն ու վճիռ կայացնելու կարողությունը: Անխիղճ պարտատերը:
135. Հիսուսը վճարել է տալիս Տաճարի պարտքը: Նույնը: Մ. 17, 24-27:
136. Հրաժեշտ լճափի քաղաքներին: Մ. 11, 20-24, Ղ. 10, 13-15: 3-րդ բաժին. Տաղավարահարաց տոնը:
137. Հիսուսը հրաժարվում է Երուսաղեմ հանդիսավոր մուտք գործելուց: Գալիլիա: Հ. 7, 2-13:
138. Վատ ընդունելություն սամարացիների կողմից: Սամարիա: Ղ. 9, 51-56:
- 139-143. Տաղավարահարաց տոնը: Երուսաղեմ: Հ. 7, 14-52:
- 144-147. Դավաճան կինը: Տարբեր ուսմունքներ: Նույնը: Հ. 7, 53-8, 59: Տոնից հետո: Տոնակատարության վերջին օրվա երեկոյան, Հիսուսը առանձնանում է Ձիթենյաց լեռան վրա, իսկ վաղ առավոտյան տաճարում է՝ ուսուցանելու: Լույսը վկայում է Հայր Աստծու հաստատածը: Վտանգ կա Աստծու ուղարկվածին չճանաչելու մեջ: Հրեաներն այլևս Աբրահամի որդիները չեն:
- 148-150. Ի ծնե կույրը: Բարի Հովիվը: Երուսաղեմ: Տաճարից դուրս: Հ. 9, 1-10, 21: 4-րդ բաժին. Տաղավարահարաց տոնից՝ Նավակատիք: ճանապարհորդություն Հուդայի երկրում Երուսաղեմից արևմուտք: Մեր Տերը գնացել է, հավանաբար, ընդհուպ մինչև Էմմավուս Նիկոպոլիս (Տես՝ Lagrange, էջ 307-308, 352-353, 357): ճանապարհորդությունը տևում է մոտ երեք ամիս:
151. Երեք կանչ: Հուդայի երկիր: Մ. 8, 18-22, Ղ. 9, 57-62:
152. Յոթանասուներկու աշակերտների առաքելությունը: Նույնը: Մ. 10, 40, Ղ. 10, 1-12, 16: Տևում է տասից տասնհինգ օր:
153. Աշակերտների վերադարձը: Հոր, նաև Որդու հայտնությունը: Քրիստոսի լուծը: Բեթանիայի մոտ: Մ. 11, 25-30, 13, 16-17, Ղ. 10, 17-24:
- 154-158. Բարի սամարացու առակը: Նույնը: Մ. 22, 34-40, մ. 12, 28-34ա, Ղ. 10, 25-37:
159. Մարթան և Մարիամը: Բեթանիա: Ղ. 10, 38-42:
- 160-162. Կիրակնօրյա աղոթք: Չանձրացնող բարեկամը: Ձիթենյաց լեռ: Մ. 6, 7-15, 7, 7-11, մ. 11, 25-26, Ղ. 11, 1-13:
163. Երկու կույրերի և մի համրի բուժումը (տես՝ թիվ 99):
- 164-167. Դևի վտարումը: Մեղք Սուրբ Հոգու դեմ: Սատանայի վերադառնալու վտանգը: Հուդայի երկիր: Մ. 12, 22-32, 43-45, մ. 3, 22-30, Ղ. 11, 14-26, 12, 10:
- 168-182. Տիրոջ այլևայլ ուսմունքներ: Նույնը: Մ. 12, 38-45, և այլ հատվածներ, մ. 13, 11, 33-37, Ղ. 11, 27-13, 9, 8, 21, 6, 40: Հիսուսի երանելի մայրը: Հովհաննի նշանը: Աշխարհի լույսը: Մարդու լույսը: Մեղադրական խոսք փարիսեցիների դեմ: Վախենալ միայն Աստծուց: Հիսուսը խոստանում է ուղարկել Սուրբ Հոգին: Անմիտ հարուստը: Կատարյալ հանգստություն Աստծու մեջ: Իսկական հարստությունը: Միշտ լինենք պատրաստ: Մահը: Ծառային վստահող տերը: Կրակը երկրի վրա: Ժամանակը հաշտեցում է պահանջում: Անպտուղ թզենին:
183. Կորացած մեջքով կնոջ բուժումը: Շաբաթ օրը: Նույնը: Ղ. 13, 10-17: 5-րդ բաժին. Նավակատիքից մինչև վերջին Ջատկի համար մեկնելը:

184. Հիսուսը գնում է Երուսաղեմ. Ղ. 13, 22:
185. Նավակատիքի տոնակատարության հանդիսավոր հայտարարումը: Երուսաղեմ: Տաճար Սողոմոնի դարպասի տակ: Հ. 10, 22-39:
186. Հիսուսը գնում է Անդրիհորդանան: Պիրեա: Մ. 19, 1-2, մ. 10, 1, Հ. 10, 40-42:
- 187-203. Մեր Տիրոջ այլևայլ ուսմունքներ: Նույնը: Մ. 7, 13-14, 22-23, 8, 11-12, 22, 1-4, 18, 12-14, 10, 37-38, 6, 24, 5, 18-19, Ղ. 13, 23-33, 14, 1-15, 31, 17, 7-10: Նեղ դուռը: Ջրգողությամբ տառապող հիվանդի բուժումը Շաբաթ օրով: Տեղերի ընտրությունը: Պետք է հրավիրել աղքատներին: Հարսանեկան զգեստը: Կտրվել ամեն ինչից և վերցնել իր խաչը: Աշտարակի և պատերազմի մասին առակը: Աստվածային ներումը: Կորած դրամը: Անառակ որդին: Անհավատարիմ տնտեսը: Չի կարելի ծառայել երկու տիրոջ: Հավատարմություն օրենքի ենթակետերին: Ղազարոսն ու չար հարուստը: Խոնարհության հրավերք:
- 6-րդ բաժին. Վերջին ճանապարհորդությունը Երուսաղեմ բարձրանալուց առաջ:
- 204-205. Երկու բորոտների բուժումը: Սամարիայի և Գալիլիայի միջև ընկած տարածք: Ղ. 17, 11-19:
- Նավակատիքից հետո վերադառնալով Գալիլիա՝ Հիսուսն անցնում է Գալիլիայի ու Սամարիայի սահմանների երկայնքով և հասնում Հորդանանի հովիտ ու Երիքով:
206. Փարիսեցիներին. ինչպես է գալիս Աստուծո իշխանությունը: Ղ. 17, 20-21: 207-219. Մեր Տիրոջ՝ աշակերտներին ուղղված այլևայլ ուսմունքներ: Պիրեա: Մ. 24, 26-41, 10, 39, 19, 3-20, 16, մ. 10, 13-31, Ղ. 17, 22-18, 30: Մարդու Որդու գալուստը: Դատավորի ու այրի կնոջ, փարիսեցու և վարձակալի մասին առակները: Ամուսնության կայունությունը: Հարուստ երիտասարդը: Խաղողի այգի ուղարկված մշակները:
220. Ղազարոսի հարությունը: Բեթանիա: Հ. 11, 1-44:
221. Քահանայապետի անձնական միջամտությունը: Հ. 11, 45-53:
222. Եփրայեմում մնալը: Եփրայեմ: Հ. 11, 54-57:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ
ՀԻՍՈՒՄԻ ՎԵՐՋԻՆ ԿԱՆԽԱՍԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 1-ին բաժին. վերջին այցը Երուսաղեմ. Եփրայեմից Մեր Տերը Ain Douk-ով հասնում է Երիքով, այնուհետև բարձրանում է Բեթանիա:
- 223-224. Երրորդ կանխասացությունը Չարչարանքների ու Հարության մասին: Ջերեդոսի որդիները: Հորդանանի հովիտ: Մ. 20, 17-24, մ. 10, 32-41, Ղ. 18, 31-34:
225. Երկու կույրերի բուժումը Երիքովի մոտ: Հին և Նոր Երիքովների միջև ընկած տարածք: Մ. 20, 29-34, մ. 10, 46-52, Ղ. 18, 35-43:
226. Ջաքեոսը հյուրընկալում է Հիսուսին. Երիքով: Ղ. 19, 1-10:
227. Առակ քանքարների մասին: Ջաքեոսի մոտ: Մ. 25, 14-30, Ղ. 19, 11-28:
- 2-րդ բաժին. Շաբաթը:
228. Օծումը Բեթանիայում: Բեթանիա: Մ. 26, 6-13, մ. 14, 3-9, Հ. 12, 1-11:
- Երիքովից մեկնելով հավանաբար ուրբաթ օրը, Մեր Տերը շաբաթ առավոտյան հասնում է

- Բեթանիա՝ Ձատիկից վեց օր առաջ: Դեպքը տեղի է ունենում բորոտ Սիմոնի տանը: 3-րդ բաժին. ծառագարդի Կիրակին:
229. Քրիստոսի հաղթական մուտքը Սուրբ քաղաք: Երուսաղեմ: Մ. 21, 1-16, մ. 11, 1-11, Ղ. 19, 29-45, Հ. 12, 12-19:
- Ամբոխը տեղեկանում է, որ Մեր Տերը Բեթանիայում է և գնում է այնտեղ. կամենում էին տեսնել նաև Ղազարոսին, որին նա հարություն էր պարգևել: Թափորը կազմված է Երուսաղեմից եկող մարդկանցից և Հիսուսին ուղեկցող գալիլիացիներից: Բեթփագեն գտնվում էր Ձիթենյաց լեռան զառիվայրերի վրա՝ Բեթանիայի ու Երուսաղեմի միջև:
230. Քրիստոսը ամբոխին հայտնում է իր մտալուտ մահը: Երուսաղեմ, Տաճար: Հ. 12, 20-36: Հիսուսը հասնում է Երուսաղեմ և մտնում Տաճար: Այնուհետև, առավոտվա ոգևորությունը քիչ-քիչ հանգչում է, և ամեն ոք գնում է մի քիչ սնունդ ընդունելու: Երեկոյան Մեր Տերը, հավանաբար, վերադարձել է Տաճար: Փիլիպպոսի և Անդրեասի շնորհիվ ինչ-որ հրեաներ կապ են ունենում Հիսուսի հետ: Հիսուսը փառաբանվում է երկնքից լսվող ձայնով: Նրա մահվան մասին լուրը լսելով՝ ամբոխը սկսում է կասկածել: Արդեն գիշեր է, երբ Հիսուսը խոսում է լույսի մասին:
231. Հիսուսը գիշերում է Բեթանիայում: Բեթանիա: Մ. 21, 17, մ. 11, 11բ: 4-րդ բաժին. Սուրբ Երկուշաբթի:
- Չորս օր Մեր Տերը ցերեկն ուսուցանում է Տաճարում, իսկ գիշերն առանձնանում Ձիթենյաց լեռան վրա կամ Բեթանիայում: Ս. Մարկոսը խոսում է երեք օրվա մասին, սակայն բոլոր քարոզները տեղավորում է Սուրբ Երեքշաբթի օրվա մեջ:
232. Անիծված թզենին: Բեթանիայի մոտ: Մ. 21, 18-19ա, մ. 11, 12-14:
233. Հիսուսին վերացնելու երրորդ խառնաժողովը: Երուսաղեմ: մ. 11, 15ա, 18, Ղ. 19, 47-48:
234. Հիսուսը դուրս է գալիս Երուսաղեմից և վերադառնում Բեթանիա: Բեթանիա: մ. 11, 19: 5-րդ բաժին. ապրիլի 4՝ Սուրբ Երկուշաբթի:
235. Չորացած թզենին: Բեթանիայի մոտ: Մ. 21, 19բ-22, մ. 11, 20-26:
- 236-243. Հիսուսը հաջորդաբար հարցաքննության է ենթարկվում. Ատյանի անդամների կողմից՝ իր առաքելության վերաբերյալ, փարիսեցիների կողմից՝ Կեսարին պարտական հարկի, սադուկեցիների կողմից՝ Հարության: Հիսուսին վերացնելու չորրորդ փորձը: Երուսաղեմ: Տաճար: Մ. 21, 23-46, 22, 15-23, 39, մ. 11, 27-12, 27; 12; 34բ-40, Ղ. 20, 1-47, 13, 34-35:
244. Հետադարձ հայացք Հիսուսի գործունեությանը: Հ. 12, 37-50:
245. Հիսուսը դրվատում է աղքատ այրի կնոջ առատաձեռնությունը: Փանծանակի մոտ. մ. 12, 41-44, Ղ. 21, 1-4:
- 246-252. Աշակերտներին. Տաճարի փլուզումն ու մարդու Որդու գալուստը: Տասը կույսերի մասին առակը: Ոսկեգօծ դռան և Ձիթենյաց լեռան մոտ: Մ. 24, 1-25, 46, 10, 17-23, մ. 13, 1-32, Ղ. 21, 5-36:
253. Հիսուսի պահվածքը այս վերջին օրերին: Ղ. 21, 37-38, Հ. 18, 2: 6-րդ բաժին. Սուրբ Չորեքշաբթին:
254. Դուդայի և Ատյանի անդամների դավադրությունը: Երուսաղեմ: Մ. 26, 1-5, 14-16, մ. 14, 1-11, Ղ. 22, 1-6:

7-րդ բաժին. Սուրբ Հինգշաբթին՝ ապրիլի 6:

255. Տերունական ընթրիքի նախապատրաստումը. Մ. 6, 26, 17-19, մ. 14, 12-15, Ղ. 22, 7-13:

256-262. Տերունական ընթրիք: Երուսաղեմ, Վերնատուն: Մ. 26, 20-35, 20, 25-28, մ. 14, 17-31, 10, 42-45, Ղ. 22, 14-28, Հ. 13, 1-38:

Տերունական ընթրիք: Ուտնվա: Հիսուսը դուրս է գալիս Վերնատնից: Հաստատում է Հաղորդության Խորհուրդը և Կարգը: «Սիրեցեք միմյանց»: Հիսուսը կանխագուշակում է Պետրոսի ուրացությունը: Մոտենում է մեծ փորձությունը:

263-267. Քարոզ Ընթրիքից հետո: Նույնը: Հ. 14, 1-17, 26:

Հիսուսի մեկնման վերաբերյալ առաջին զրույցը: Հիսուսը՝ սուրբ և սրբազան որթ: Աշխարհի ատելությունն ու Սուրբ Հոգու աջակցությունը: Սուրբ Հոգու դերը: Հիսուսի վերադարձը: Հավատքը նրա աստվածային ծագման հանդեպ: Հիսուսի աղոթքը միաբանության մասին:

ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍ ՏԱՆՋԱՆՔՆԵՐ

1-ին բաժին. Գեթսեմանի:

268. Վերնատնից՝ Գեթսեմանիի պարտեզ. Մ. 26, 30, մ. 14, 26, Ղ. 22, 39, Հ. 18, 1:

269. Հիսուսի հոգեվարքն ու աղոթքը: Գեթսեմանի: Մ. 26, 36-46, մ. 14, 32-43, Ղ. 22, 40-46:

2-րդ բաժին. Հիսուսը Քահանայապետի առաջ:

270. Բանտարկությունը: Գեթսեմանի: Մ. 26, 47-56, մ. 14, 43-52, Ղ. 22, 47-53, Հ. 18, 2-11:

271-274. Հիսուսը տարվում է Աննայի և Կայիափայի մոտ: Երուսաղեմ, Կայիափայի պալատ: Մ. 26, 57-75, 27, 1, մ. 14, 43-72, 15, 1, Ղ. 22, 54-71, Հ. 18, 12-27: Հիսուսը Աննայի մոտ, այնուհետև Քահանայապետի առաջ (զիշերային դատավարություն): Պետրոսի երեք ուրացությունները: Գիշերվա ծաղրուծանակի տեսարանը: Արշալույսին Ատյանը դատապարտում է Հիսուսին:

275. Մատնիչի հուսահատությունն ու ինքնասպանությունը: Մ. 27, 3-10.

3-րդ բաժին. Հիսուսը կուսակալի առջև:

276-279. Հիսուսը հանձնվում է կուսակալին: Անտոնիա: Մ. 27, 2, 11-14, մ. 15, 1-5, Ղ. 23, 1-3, Հ. 18, 28-38ա:

280. Գործն ուղարկվում է Գալիլիայի չորրորդապետին: Հերովդես Անտիպասի պալատ: Ղ. 23, 4-12ա, Հ. 18, 38բ:

281-286. Հիսուսը տարվում է Պիղատոսի մոտ: Բարաբբա, գանակոծություն, փշե պսակ, դատապարտում: Անտոնիա: Մ. 27, 15-31ա, մ. 15, 6-20ա, Ղ. 23, 13-25, Հ. 18, 39-40, 19, 16ա:

4-րդ բաժին. Հիսուսի խաչելությունն ու մահը:

287. Տառապալից ուղին: Անտոնիայից՝ Գողգոթա: Մ. 27, 31բ-32, մ. 15, 20բ-21, Ղ. 23, 26-31, Հ. 19, 16բ-17:

288-299. խաչելությունը: Գողգոթա: Մ. 27, 33-49, մ. 15, 22-36, Ղ.23, 33-46ա, Հ. 19, 17բ-30ա:

300. Հիսուսի մահը: Նույնը: Մ. 27, 50, մ. 15, 37, Ղ. 23, 40բ, Հ. 19, 30բ:

5-րդ բաժին. Սուրբ Ուրբաթ երեկո:

301-304. Քրիստոսի մահվան պահին: Հովսեփ Արիմաթացին, գեղարդը, իջեցումը գերեզման: Մ. 27, 51-61, մ. 15, 38-47, Ղ. 23, 47-56, Հ. 19, 31-42:

6-րդ բաժին. Սուրբ Շաբաթ:

305. Գերեզմանի պահպանումը: Նույնը: Մ. 27, 62-66:

ՄԱՍ ՅՈԹԵՐՈՐԴ

ՀԻՍՈՒՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

306. Ս. Կանայք գնում են Սուրբ գերեզման: Սուրբ գերեզման: Մ. 28, 1-4, մ. 16, 1-4, Ղ. 24, 1-2, Հ. 20, 1:

307. Մագթաղենացին տեղեկացնում է Պետրոսին և Հովհաննեսին: Հ. 20, 2:

308-309. Հրեշտակները հայտնվում են սուրբ կանանց, որոնք լուրը տանում են աշակերտներին: Սուրբ գերեզման: Մ. 28, 5-8, մ. 16, 5-8, Ղ. 24, 3-11:

310. Պետրոսն ու Հովհաննեսը Սուրբ Գերեզմանում: Նույնը: Ղ. 24, 12, Հ. 20, 3-10:

311. Հիսուսը հայտնվում է Մարիամ Մագթաղենացուն: Նույնը: Մ. 28, 9-10, մ. 16, 9-11, Հ. 20, 11-18:

312. Պահպանների վկայությունը: Մ. 28, 11-15:

313-314. Էմմավուսցի աշակերտներին հայտնվելը: Էմմավուս Նիկոպոլիս. մ. 16, 12-13, Ղ. 24, 13-35:

315. Առաքյալներին հայտնվելը: Երուսաղեմ: Ղ. 24, 36-43, Հ. 20, 19-23:

316. Թովմասի ներկայությամբ հայտնվելը: Նույնը. մ. 16, 14, Հ. 20, 24-29:

317. Հայտնություն և հրաշալի որս: Տիբերիա լիճ: Հ. 21, 1-23:

318. Հայտնությունը Գալիլիայի բլուրներից մեկի վրա: Գալիլիա: Մ. 28, 16-20, մ. 16, 14-18:

319-320. Վերջին հայտնությունն ու Համբարձումը: Երուսաղեմ և Ջիթենյաց լեռ. մ. 16, 19-20, Հ. 24, 44-53:

ՎԵՐՋԱԲԱՆ

321. Ս. Հովհաննես Ավետարանչի ու նրա աշակերտների վերջաբան – վկայությունը: Հ. 20, 30-31, 21, 24-25:

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

Ա. ՀԵՂԻՆԱԿՆ ՈՒ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Գործք Առաքելոց»-ի հեղինակն, անկասկած, Պողոս առաքյալի ուղեկիցն է, և, հետևաբար, բերված փաստերի մեծ մասի ականատես վկան: Դա երևում է, մի կողմից, գրքի «մենք» կոչված հատվածներից (16:10-11, 20:5-15, 21:1-18, 27:1 և 28:16), իսկ մյուս կողմից էլ՝ Պողոսի թղթերի կարճ հատվածներից (Կողոսացիներին 4:14, Փիլիմոնին 24), որոնք վկայում են, որ հեղինակը եղել է առաքյալի ուղեկիցը նրա բանտարկության ընթացքում:

Ղուկասի Ավետարանն ու «Գործք»-ը նույն գրքի երկու մասերն են, որոնք կարելի է անվանել «Հիսուսի Խոսքերն ու Գործերը»: Առաջին հատորում քննարկվում է Հիսուսի երկրային գործունեությունը (Գործք 1:1բ), մինչդեռ երկրորդի ուշադրության կենտրոնում Տիրոջ ներկայիս գործունեությունն է՝ սկսած իր փառաբանումից մինչև Աստծու աջ կողմում նստելը: Կարելի է ասել, որ Ղուկասը մեզ տալիս է հրաշալի ակնարկ քրիստոնեական շարժման վերաբերյալ՝ հրեաներից մինչև հեթանոս աշխարհ: Մենք չենք անդրադառնա հեղինակի անձին, քանզի նրա մասին բավականաչափ խոսել ենք Ղուկասի Ավետարանին վերաբերող գլխում: Այստեղ կքննարկենք գրքի վավերականության հարցը:

Ղուկասի գրքի վավերականության օգտին խոսող ներքին ապացույցներից մեկն էլ երկու գրվածքների նույնական ոճն է: Կարդալով դրանք՝ բավականին արագ համոզվում ես, որ հեղինակը նույն մարդն է: Երկրորդ հատորում, ինչպես և առաջինում, ընդգծվում է փրկության համընդհանուր լինելու հայտագիրը: Հետևապես, այն հավանաբար գրվել է ոչ հրեական ծագում ունեցող քրիստոնյայի կողմից: Կողոսացիներին ուղղված թղթի 4:11-14 հատվածում Ղուկասը ներկայացվում է Պողոսի մյուս գործընկերներից տարբերվող ձևով, ընկերներ, որոնք «թլփատումից են»: Հեղինակը տալիս է նաև ճշգրիտ մանրամասներ հիվանդության վերաբերյալ (3:2-7, 9:33, 14:8, 28:8-9):

Դարձյալ Կողոսացիներին ուղղված թղթից (4:14) տեղեկանում ենք, որ Ղուկասը բժիշկ էր: Պարզապես զարմանում ես պատումի պատմական ճշգրտության (5:34-39, 12:1-3, 20:24) և Հռոմի ներկայացուցիչներին նկարագրելու համար օգտագործված պաշտոնական գիտաբերքի իմացության համար (պրոկոնսուլ, 13:7, Պրետոր, 16:22): Այսպիսով, Ղուկասը գիտության մարդ էր, որն իր գրական ստեղծագործություններում կատարում էր պատմական ճշգրիտ հետազոտություններ (1:1-4): Ավելի մանրամասնորեն քննության առնենք հեղինակի՝ մեծ առաքյալի գործընկերը լինելու փաստը: Համաձայն «մենք» կոչված հատվածների՝ նա պետք է որ առաքյալին ուղեկցած լինի քարոզչական երկրորդ ճանապարհորդության ընթացքում՝ Տրոյայում և Փիլիպպեում: Հավանաբար, նա ստիպված է եղել մնալ հետևում ինչ-որ տեղ (տես՝ 16:17): 3-րդ ճանապարհորդության վերջում Պողոսին միանում է Փիլիպպեում (20:6): Խիստ հավանական է, որ նա Պողոսի կողքին է նաև վերջինիս Կեսարիայում եղած ժամանակ: Համենայն դեպս, թվում է, որ նա ամբողջ ժամանակ Պողոսի հետ է դեպի Հռոմ կատարած ճանապարհորդության ընթացքում (27:1): Փաստը, որ Ղուկասի անունը

գրքում հիշատակված չէ, ամրապնդում է այն համոզմունքը, որ խոսքը հենց նրա մասին է: Սակայն Տիտոսի անունը ևս շատ չի հիշատակված: Այսուամենայնիվ, ինչպես Ավետարանի, այնպես էլ «Գործք»-ի բժշկագիտական լեզուն նպաստում է խոսելու Ղուկասի՝ «սիրված բժշկի» գործի վավերականության օգտին:

Փորձեր են արվել ապացուցելու, որ բժշկական լեզուն այդ ժամանակաշրջանի մշակութային ընդհանուր լեզվի մասն էր կազմում: Սակայն հարցը վերաբերում է ոչ միայն այնպիսի գիտագրերի, ինչպիսիք ներկայացված են Ղուկաս 5:18 և Մարկոս 2:3, Ղուկաս 18:25 և Մարկոս 10:25 հատվածների նախնական տեքստում, այլև, մասնավորապես, բժշկության նկատմամբ հետաքրքրությանը:

Այս ակնհայտ փաստը ևս խոսում է Ղուկասի՝ «Գործք»-ի հեղինակը լինելու օգտին: Հայտնի է նաև, որ այս գրվածքի տեսակետը շատ խիստ նման է Պողոսի տեսակետին (Գործք 13:46, Եփեսացիներին 3:1):

Ղուկասն այնքան ճշգրիտ պատմաբան է, որ քննադատները, որոնք սկզբում կասկածում էին նրա կողմից բերված որոշ փաստերի պատմականության հարցում, ի վերջո, ճշգրիտ հետազոտություններից հետո եկան հակառակ եզրակացության ու փոխեցին կարծիքը:

Սրանք նույն այն քննադատներն են, ովքեր կասկածի տակ էին առել Ղուկասի պնդումը Ավետարանում, համաձայն որի Օգոստոս կայսեր հրամանը մարդահամար անցկացնելու մասին կատարվել է Կյուրենի՝ Սիրիայի կուսակալի կողմից (2:2):

Այս դժվարությունը, սակայն, հաջողությամբ լուծվեց սրբազանի կողմից, որը Անտիոքի մոտ՝ Պիսիդիայում, գտավ արձանագրություններ, որոնք հավաստում էին, որ Հիսուսի ծննդից առաջ Կյուրենն, իսկապես, Սիրիայի կուսակալն էր: Բացի այդ՝ ամենայն հավանականությամբ, մարդահամարի մասին հրամանը պետք է, որ Հերոդիանի թագավորության մեջ մի քանի տարով ուշացած լինի: Ղուկասի գրքի 3:1 հատվածը կանգնեցնում է մեկ այլ դժվարության առջև: Հեղինակն ասում է, որ Մկրտչի քարոզչությունը սկսվել է Տիբերիոսի կառավարման 15-րդ տարում: Տիբերիոսի իշխանությունը սկսվել է մ. թ. 14 թ., Օգոստոսի մահից հետո: Տասնհինգերորդ տարին մոտենում է մ. թ. 28 թվականին, որը պետք է, որ եղած լինի Մկրտչի քարոզչության սկիզբը: Բայց եթե Հիսուսն իր գործունեությունն սկսել է 26 թվականին, ապա այս դեպքում նախակարապետի հրապարակային առաջին հայտնությունը պետք է, որ նախորդած լինի Տիրոջ հայտնությանը: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ այստեղ տարեթվի հետ կապված սխալմունք կա, որը սակայն ոչ թե Ղուկասի մեղքով է, այլ, ավելի շուտ, տարեթվերը հաշվելու մեր եղանակի:

Քանի որ Տիբերիոսը Օգոստոս կայսեր հետ մեկտեղ ղեկավարել է մ. թ. 12 թվականից ի վեր գրավված գավառները, ապա, ուրեմն, կառավարել է հենց այս թվականից սկսած: Մկրտչի քարոզչությունն, ուստի, սկսվել է մ. թ. 26 թ.: Ղուկասի հիշողության մեջ Տիբերիոսի իրական (de facto) իշխանությունն է, այլ ոչ թե այն տարին, երբ նա պաշտոնապես հաջորդեց Օգոստոս կայսերը: Այս բանը հաստատվել է մեկ այլ տեղ հանդիպող համաժամանակության փաստով (Ղուկաս 3:2. Աննան Քահանայապետ չէր, սակայն իշխում էր իր փեսա Կայիափայի հետ մեկտեղ):

«Պրետոր» բառի փոխարեն «պրոկոնսուլ» բառի գործածումը «Գործք»-ի 13-7 հատվածում հնարավորություն կտա մի նոր լուսաբանման: Կիպրոս կղզին սենատորական գա-

վառ էր, որտեղից էլ «պրոկոնսուլ» բառի՝ կարճ ժամանակով գործածությունը. Պողոսի և Բառնաբասի քարոզչական ճանապարհորդության ժամանակ կղզին, իրոք, ղեկավարում էր պրոկոնսուլը: Նույն ձևով էլ, Թեսաղոնիկե քաղաքի կառավարիչներն անվանվում են politarches: Այս քաղաքում գտնված մի արձանագրության մեջ հանդիպում է նույն այս բառը: Ղուկասը՝ տեղեկություններ քաղելու համար ունի թե՛ գրավոր, թե՛ բանավոր բազմաթիվ աղբյուրներ: Նա կարող էր հիմնվել նաև սեփական դիտարկումների վրա (մտածել այն հատվածների շուրջ, որտեղ ասվում է «մենք»): Նույն ձևով էլ, ուղղակիորեն և անձամբ, տեղեկություններ կարող էր ստանալ ավագ ընկերոջից՝ Պողոսից: Չնայած հավաստի չէ, որ նա տեսել է բուլոհին՝ տեղեկություններ է քաղում նաև այլ աղբյուրներից ու վկաներից (Փիլիպպոս Ավետարանիչ, երուսաղեմցի եղբայրներ, Յակոբոս՝ Հիսուսի եղբայրը, Մարկոս, նամակների պատճեններ և այլն):

Որոշ մասնագետների կարծիքով, նա հնարավորություն է ունեցել դիմելու արամեերեն գրավոր մի աղբյուրի՝ «Գործք»-ի 1-15 գլուխները գրելու համար: Այնուամենայնիվ, հավաստի գլխավոր փաստն այն է, որ նրան ուղեկցել է նաև Սուրբ Հոգին՝ ինչպես նյութեր ընտրելու, այնպես էլ դրանք վերջնականորեն շարադրելու գործում:

Ներքին այս ապացույցներից բացի՝ Ղուկասի «Գործք»-ի վավերականությունն ընդունելու նպատակով կհիմնվենք նաև նախնական Ավանդության ընծեռած փաստերի վրա: Նպաստավոր վկայությունների շարքում նշենք Մուրատորիի Կանոնը, որը թվագրվում է 2-րդ դարի երկրորդ կեսով: Իրինեոսը, Կղեմես Ալեքսանդրացին, Տերտուլիանոսը և այլոք նույնպես ընդգծում են գրքի վավերականությունը:

Եվ, վերջապես, այս ենթագլուխն ավարտելուց առաջ, ինչպես նաև «Կեսարիոնը Կեսարին տալու» նպատակով հիշեցնենք, որ Ղուկասի գրքի վավերականության անհերքելի ապացույց է տվել նաև 19-րդ դարի գերմանացի աստվածաբան Théodore Zahn-ը: Ելնելով մեր կողմից «մենք» անվանվող հատվածներից՝ նա առաջինն է եզրակացրել, որ խոսքը Պողոսի մի ուղեկցի մասին է: Արդ, դա կարող էր լինել Ղուկասը, Տիմոթեոսը, Տիտոսը և կամ էլ Շիղան: Տիմոթեոսն ու Շիղան չեն կարող համարվել հեղինակներ, քանի որ ներկա չէին հիշյալ հատվածներում նկարագրված ուղևորության ժամանակ: Տիտոսը՝ նույնպես, քանի որ երբեք Պողոսին Հռոմ չի ուղեկցել: Ուստի, մնում է Ղուկասը: Այն փաստը, որ նա հեթանոս ծագում ունի, պարզորոշ երևում է 28:2 հատվածից, որտեղ «բարբարոս» բառով մատնանշվում են Մելիտեի բնակիչները: Այս ժամանակաշրջանում ոչ մի հրեա չէր կարող այդ բառն օգտագործել հիշյալ մարդկանց նկատմամբ, որոնք փյունիկեցիներ էին և, հետևապես, ազգական հրեաներին (սեմիտներին): Դժվար է ընդունել նաև Ղուկասի մակեդոնացի լինելու գաղափարը (Ղուկաս 16:9):

Բ. ՀԱՍՑԵԱՏԵՐԵՐԸ

Ինչպես և 3-րդ Ավետարանը՝ «Գործք»-ը նվիրված է Թեոփիլին, սակայն ուղղված է նաև հրեական ծագում ունեցող ընթերցողների:

Գ. ԳՐԵԼՈՒ ՏԱՐԵԹԻՎՆ ՈՒ ՎԱՅՐԸ

Գիրքը գրելու ճշգրիտ տարեթիվը հայտնի չէ: Շատերի կարծիքով, գրվել է Հռոմում, Պողոսի մահվանից առաջ, մոտավորապես այն ժամանակաշրջանում, երբ գրվածքն ավարտին է հասնում: Ըստ Թյուրինգենի աստվածաբանական դպրոցի՝ գիրքը գրվել է Պետրոսի և Պողոսի աշակերտներին հաշտեցնելու նպատակով, հետևապես՝ երկրորդ դարում: Սակայն, հնարավոր չէ ընդունել այս տեսակետը, քանի որ այն ուղղակիորեն հակադրվում է Աստծու Խոսքի ուժին, Խոսք, որը ոչ մի անհամաձայնություն չի ճանաչում երկու առաքյալների միջև:

Գրքի ստեղծման տարեթիվը որոշելու համար կարելի է առաջ քաշել մի քանի գործոն: Համաձայն «Գործք»-ի 1:1 հատվածի՝ Ավետարանը նախորդել է այս գրքին:

Ավետարանից հասկանում ենք, որ Երուսաղեմն արդեն ավերվել էր, թեև դա հիշատակված չէ: «Գործք»-ը նույնպես ոչինչ չի ասում այս մասին, սակայն լռում է նաև նրա կանգուն լինելու մասին:

Այսպիսով՝ չենք կարող երկու գրքերն անջատել միմյանցից, եթե ձգտում ենք որոշել նրանց շարադրման տարեթիվն ու այն տեղադրել 70 թ. մոտերքում: 11:28 հատվածի համաձայն՝ Կլավդիոսը կայսրն է: Գիրքը չի կարող գրված լինել 70 թ. հետո: Պողոսը երկու անգամ բանտարկվել է Հռոմում. նրա ազատվելու մասին իմանում ենք «Գործք»-ի 28:30 հատվածից: Կարելի է հասնել մինչև 75 թվականը, որը կհանգեցնի Եկեղեցու Հայրերի ժամանակաշրջանի հետ բախման. նրանք լավ ծանոթ էին գրքին և օգտվում էին դրանից: «Գործք»-ը լուսաբանում է Սուրբ Հոգու՝ Եկեղեցում գործելու եղանակը. աստիճանաբար, ինչպես կենդանի օրգանիզմում է: Անհրաժեշտ է վարդապետություն, պատշաճագացում, համբերություն, մեղմություն, համառություն՝ հրեաներին համոզելու Ավետարանի պահանջների մեջ և այն բանում, որ հեթանոսներն իրենց տեղն ունեին փրկչության ծրագրում:

Հոգեգալուստը սերմեր ցանեց, այն չտնկեց մեծ ծառեր: Աստծու ժողովրդի կյանքին տվեց մի նոր ուղղություն, ավելի լայն տեսադաշտ, սակայն իրականացնելու եղանակը պետք է կատարելագործվեր: Համոզմունքը, որ Ավետարանը նախատեսված էր ինչպես հեթանոսների, այնպես էլ հրեաների համար, դրսևորվեց աստիճանաբար և դանդաղ: Մենք պետք է ընդունենք «երկրի ծայրամասերը» արտահայտության սահմանափակ լինելու գաղափարը: Հասնելով Հռոմ՝ Պողոսը չհասավ երկրի ծայրամասերը, այն իմաստով, ինչ իմաստով սովորաբար հասկանում ենք այս բառը: Մեզ համար արտահայտությունն ունի աշխարհագրական իմաստ՝ Արևմուտքում գտնվող անհայտ վայրեր: Դա արտահայտվում է այնպիսի բառերով, ինչպիսիք են՝ «արտաքին կամ անդրծովյան առաքելություն»: Անշուշտ, Հիսուսի գլխում եղել է աշխարհագրական ինչ-որ չափում, երբ արել է Քարոզչական իր Կոչը: Բայց Ղուկասը դրան ավելացնում է խորհրդանշական իմաստ. Հռոմը աշխարհի և անգամ հռոմեական կայսրության ծայրամասը չէր: Բացի այս՝ Ավետարանն այստեղ արդեն հայտարարվել էր:

Դ. ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Մենք չենք կարող ճշգրտորեն վերականգնել առաքյալների պատմության փաստերի հաջորդականությունը: Հավձադեպ են ճշգրտումները տարեթվերի վերաբերյալ, պատա-

հական են համընկումները «մեծ պատմության» իրադարձությունների հետ, և դա զարմանալի չէ. անտիկ աշխարհում տարիները հաշվարկելու եղանակը հաճախ է փոխվել: Հեղինակի համար կարևորը ոչ այնքան տվյալ փաստի տարեթիվն էր, որքան բովանդակությունն ու հոգևոր նշանակությունը: Ինչքա՞ն ժամանակ է հոսում Հոգեգալուստից մինչև սարկավագների հաստատումը: Տարսնցի Սողոսը ե՞րբ է սարսափահար լինում հարություն առած Քրիստոսի տեսիլքից Դամասկոսի ճանապարհին: Ի՞նչ մտածել իրենց քարոզիչներ համարողների հարցում Գամաղիելի խոսքի մեջ ներթափանցած պատմական անճշտությունների մասին: Պողոսն ինչքա՞ն ժամանակ է մնում Եփեսոսում: Ի՞նչ է պատահում նրան գերության երկու տարիներից հետո, որ նա անցկացրեց Հռոմում՝ վարձակալած մի բնակարանում: Մենք երբեք ճշգրտորեն չենք իմանա այս հարցերի պատասխանը: Բավարարվենք, ուրեմն, աշխարհիկ պատմության ընձեռած փաստերի օգնությամբ հաստատված մոտավոր ժամանակագրությամբ (Հերովդես Ագրիպպասի մահը՝ 44 թ., սով Հուդայի երկրում՝ 46 թ., Գաղիոնի իշխանությունը Կորնթոսում՝ 52 թ., Փելիքսինը՝ Կեսարիայում՝ 52-58 թթ. միջև): Միաժամանակ պետք է հաշվի նստել նաև Պողոսի կողմից բերված տեղեկությունների հետ (մասնավորապես Գաղատացիներին ուղղված թղթում)»¹:

«Պողոսի ուղևորություններում բացարձակ ժամանակագրության միակ ուղեցույցը Գաղիոնի պրոկոնսուլությունն է, որը թվագրվում է 50 թ. հուլիսի մեկից մինչև 52 թ. հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածով. դա հաստատվում է 1907 թ. Դելփիքում հայտնաբերված մի արձանագրությամբ:

Սրանով Կորնթոսի Եկեղեցու հիմնադրման տարեթիվը, Եկեղեցի, որը երկրորդ առաքելության կենտրոնում է, տեղադրվում է 49-51 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում, քանի որ առաքյալը տասնութ ամիս մնացել է այս քաղաքում:

Առաջին Հոգեգալուստը՝ 29 թվականի՞ն:

Սողոս Տարսնցու հավատափոխությունը՝ 30-36 թթ. միջև:

Հակոբոսի մարտիրոսությունն ու Հերովդեսի մահը (Գործք 12)՝ 44 թ.:

Պողոսի առաջին այցը Երուսաղեմ, նրա առաքելության սկիզբը Տարսնում և Անտիոքում. 46 թ. առաջ (հաջորդում է Ագրիպպաս Առաջինի մահվանը՝ 44-55 թթ. և Կլավդիոս կայսեր օրոք մոլեզմած քաղցին՝ 46-47 թ., նախորդում է Երուսաղեմի տիեզերաժողովին՝ 48-49 թթ.): Սերգիոս Պողոսը՝ Կիպրոսի պրոկոնսուլը, հայտնի է չթվագրված մի արձանագրությամբ: Կլավդիոսի իշխանությունը:

Պողոսը Կիպրոսում. ճանապարհորդություն Պամփիլիայում, Պիսիդիայում, Լիկայոնիայում, Պիսիդիայի Անտիոքում, Իկոնիոնում, Լյուստրայում, Դերբեում:

Վերադարձ Անտիոք՝ Պիսիդիայի Ատալիա քաղաքի ճանապարհով և մեկնում Երուսաղեմ:

Երկրորդ առաքելություն (մոտ 49-51 կամ 46-51 թթ.):

ճանապարհորդություն Փոքր Ասիայում. գարուն-ամառ, 49 թ.:

Լիկայոնիա, Փռյուզիա և Գաղատիա: Նավարկություն Տրոյայից Նեապոլիս: Այց՝ Մակեդոնիա, աշուն – ձմեռ 49 թ., Փիլիպպե, Թեսաղոնիկե, Բերիա:

Անցում Աթենք: Տասնութ ամիս Կորնթոսում. գարուն 50 թ. - աշուն 51 թ. (հուլիս. Գաղիո-

¹ Manuel Biblique, vol. 4, p. 171.

նի ժամանումը Կորնթոս): Նավարկություն Կենքրայից Եփեսոս և վերադարձ Անտիոք:

Երրորդ առաքելություն (մոտ 52-58 թթ.). ճանապարհորդություն Գաղատիայում և Փոյուգիայում. Երեք տարի Եփեսոսում՝ 52-56 թթ. միջև, որտեղից էլ՝ Կորնթոս և կրկին՝ ետ (55 թ. վերջի^օն, այնուհետև Մակեդոնիա՝ 56 թվակա^օն):

Երկարատև այց Մակեդոնիա. 56 թ. վերջ: Երեքամսյա այց Կորնթոս. ձմեռ, 56-57 թթ.: Նավարկություն Մակեդոնիայից Տրոյայի Ալեքսանդրիա՝ 57 թ. ապրի^օլ: Վերադարձ նավով. Ասոն, Միտիլենե, Քիոս, Սամոս, Միլետոս, Հռոդոն, Պատարա, Տյուրոս:

Գերության ճանապարհորդություն, 60-61. Հաջորդել է Հուդայի երկրի պրոկուրատոր Փեստոսի՝ 59-60 թթ. իր պարտականությունների մեջ մտնելու տարեթվին: Մեկնումը Սիրոնից դեպի Ադրիմեթիում: Ափ իջնելը Մեռայում, Կնիդոս, Մելիտե (նավաբեկություն):

Մելիտեում (60-61 թթ. ձմեռ):

Մելիտե, Սիրակուսա, Հռոմ:

Մահապատիժը Հռոմում. 62, 64, թե^օ 67 թ.:

Այս տարեթվերը թույլ են տալիս Պողոսի թղթերի կապակցությամբ առաջարկել հետևյալը. Թեսաղոնիկցիներին ուղղված առաջին և երկրորդ թղթերը գրվել են Աթենքում և Կորնթոսում, հավանաբար 49-50 թթ.: Գաղատացիներին ուղղվածը՝ 48-49 կամ 50-51 թթ. կամ էլ՝ 55 թ.:

Կորնթացիներին ուղղված առաջին մամակը Եփեսոսից գրվել է հավանաբար 53 թ., իսկ երկրորդը՝ 55 թ., ինչպես նաև՝ Կորնթոսից Հռոմեացիներին ուղղված ուղերձը: Կողոսացիներին, Եփեսացիներին և Փիլիմոնին ուղղված թղթերը գրվել են Կեսարիայի բանտում՝ 57 թ. կամ էլ Հռոմի բանտում՝ 60 թ.: Փիլիպպեցիներին ուղղված թուղթը գրվել է Հռոմում՝ 60 թ.:

Հովվական երեք ուղերձները (Տիմոթեոսին և Տիտոսին) արտացոլում են Եկեղեցու՝ ավելի ուշ վիճակը: Դրանցից կարելի է ենթադրել, որ 61 կամ 62 թ., ազատվելով բանտից, առաքյալն անմիջապես վերսկսել է իր գործունեությունը՝ նախքան նոր ձերբակալությունը՝ 67 թ. մոտ:

«Գործք»-ն ամփոփում է Նոր Կտակարանի պատմական մասը: Այն տալիս է պատմական փաստերը մինչև մ. թ. 60 թ.՝ Պողոսի Հռոմ ժամանելու տարեթիվը: Հաջորդ հիսուն տարիները, ինչ վերաբերում է վաղ շրջանի Եկեղեցու պատմությանը, մութ են մնում: Երկու գլխավոր առաքյալների՝ Պետրոսի ու Պողոսի նահատակության և Ներոնի ու Դոմիցիանոսի կայսրության օրոք հալածվելու փաստերից բացի, չունենք Եկեղեցու այս շրջանի կյանքին վերաբերող և ոչ մի տեղեկություն:

Երբ այս կես դարի վերջին նորից է սկսում նկատվել Եկեղեցական պատմության մի հետք, մարդիկ իրենց հաշիվ են տալիս այն մասին, որ տեղի են ունեցել նշանակալի փոփոխություններ: Եկեղեցական կառավարության՝ Խրիստոսիների, Պատարագի ու վարդապետության պրակտիկական կրեց այնպիսի փոփոխություններ, որոնք անհայտ էին անգամ Պողոսի ու Պետրոսի գործունեության վերջում: Հետևաբար, չափազանց կարևոր է ուսումնասիրել նշված գրքի բովանդակությունը, որը լույս կսփռի հիշատակված ժամանակաշրջանի վրա: Ամեն դեպքում, այն մեզ հնարավորություն կտա հասկանալ Եկեղեցու և՛ հոգևոր, և՛ պատմական հիմքերը:

Ե. ԳՐԵՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հիշենք, որ աստվածաշնչյան գրքերը սկզբնական շրջանում բաժանված չէին գլուխների, ինչպես այժմ: Այստեղ-այնտեղ կարելի էր նշմարել նոր պարբերության սկիզբը: Մենք պետք է ափսոսանք Աստվածաշնչի՝ ներկա անհաջող բաժանման (գլուխներ) համար: Ինչպես Մատթեոսի Ավետարանը, «Գործք»-ի գրական կառուցվածքը ևս խնամքով մտահղացվել է: Սակայն առաջին հայացքից դա չի երևում: Ուշադիր ընթերցանությունը միայն թույլ կտա նկատել այդ՝ գիրքը տարբեր մասերի բաժանելու համար: Բաժանումներ, սակայն, կան: Պլանը սերտորեն կապված է մտադրությանն ու հաղորդվող լուրին:

Հեղինակը՝ Ղուկասը, խնամքով ընտրել է բերված նյութերը: 12-րդ գլխից հետո համարյա ոչինչ չենք լսում Պետրոսի մասին: Նշենք նաև այն, որ Պողոսի՝ այստեղ պատմվող գործը միայն մի մասն է նրա քարոզչական ողջ գործունեության:

Մի քանի բառ է միայն ասված Յովհաննեսի մասին, քիչ ավելի երկար է խոսվում Յակոբոսի մասին, սակայն ոչինչ չի ասվում մնացած առաքյալների վերաբերյալ: Առաջին երկու գլուխները էական են ամբողջությամբ վերցված գրքի և նրա յուրաքանչյուր մասի համար: Առաջին գլուխը ներկայացնում է ծրագիրը, որը պետք է կատարվի, երկրորդը՝ զորությունը, որով այն իրականացվել է, իսկ երրորդ գլխից սկսած հեղինակը գրում է, թե ինչպես պետք է քարոզվի Ավետարանը, և Եկեղեցին հաստատվի Սուրբ Հոգու ազդեցությամբ:

Այս նպատակը նա իրականացնում է մեծ փուլերով, որոնք միմյանցից բաժանված են անցման շրջաններով: Առաջինը Ավետարանի տարածումն է հրեաների (գլ. 3-9:31), իսկ երկրորդը՝ հեթանոս ազգերի մեջ (13-18):

Անցումային գլուխները 9:32-ից մինչև 12:25-ն են: Յուրաքանչյուր փուլ ունի իր կենտրոնական դեմքը: Նախ՝ Պետրոսը, այնուհետև՝ Պողոսը: Այսուամենայնիվ, երկու փուլերի տարբերակումը չպետք է ընկալել շատ խիստ ձևով, քանի որ առաջինում կարելի է գտնել էական հղումներ հեթանոսներին, իսկ երկրորդում՝ հրեաների առջև կարդացած քարոզի օրինակներ: Բայց ընդհանուր տարբերակումը պարզ է ու արժեքավոր: Մենք առաջարկում ենք «Գործք»-ի հետևյալ բաժանումը.

1. Առաքելությունն ու բնութագիրը, 1-2:47

2. Եկեղեցին հրեաների մեջ (Պետրոս)

ա) Ավետարանը Երուսաղեմում (3:1-5:42)

բ) Տարածումը Հրեաստանում, Սամարիայում, Գալիլիայում ու Դամասկոսում (6:1-9:31):

3. Անցում դեպի հեթանոսական Առաքելություն (9:32-12:35)

4. Եկեղեցին հեթանոսների մեջ (Պողոս)

ա) Տարածումը Փոքր Ասիայում (13:1-16:5)

բ) Հաջողությունը Եվրոպայում (16:6-19:20)

գ) Բարձրակետը. Ավետարանը Հռոմում (19:21-28-31)

Զ. ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Գործք»-ի հեղինակը՝ Ղուկասը, Ավետարանի ընթացքը նկարագրում է իբրև Քրիստոսի ու նրա Սուրբ Հոգու գործ, Հոգի, որը, Եկեղեցու միջոցով, հիմնում է այլ Եկեղեցիներ, ինչ-

պես հեթանոսների, այնպես էլ հրեաների մեջ: Նա նկարագրում է նաև հակադրությունները, որոնցից ամենակարևորն այն է, որով հակադրվում են Պողոսն ու նեղմիտ ու մոլեռանդ հրեաները (21:27, 28:28): Սակայն վերջիններս ի վիճակի չեն վնասելու կամ ոչնչացնելու Քրիստոսի ու նրա Սուրբ Հոգու գործը:

Այս մտադրությամբ յուրովի է բացատրվում նաև գրքի կտրուկ ավարտը: Վերջը վրա է հասնում այն ժամանակ, երբ Ավետարանը հայտարարված է Հռոմում՝ աշխարհի մայրաքաղաքում: Այն հայտարարված է առանց խոչընդոտի ու դիմադրության: Այսպիսով, եզրակացությունը ցույց է տալիս, որ գործն ավարտված է: Մենք չէինք կարող ընդունել, որ Ղուկասը գրել է ևս մի երրորդ գիրք՝ նկարագրելու Պետրոսի ու Պողոսի մահը: Ասենք՝ նման գրքի հետքն անգամ չկա: Եկեղեցական ոչ մի Հայր երբեք չի հիշատակել Ղուկասի գրչին պարտական մի երրորդ գործի մասին: Ոչ մի հատված չի հասել մեզ:

1. Արտասանված խոսքերը

«Գործք»-ը բովանդակում է թվով 16 գրույց: Դրանց բնույթի վերաբերյալ կարող են լինել տարբեր կարծիքներ: Կարելի է տարբերակել գրույցն ու քարոզը: Վերջինս ձևով պատկանում է համատեքստին, մինչդեռ առաջինն այդպես չէ: Օրինակ, Հիսուսի արտասանած և առաջին գլխում մեջբերված հրաժեշտի խոսքերը, չնայած շատ մեծ արժեքին, պատկանում են աշակերտների հետ կայացող երկխոսության կարգին և, հետևաբար, քարոզներ չեն: Նույնը՝ նաև 28-րդ գլխում Պողոսի ու նախկին հույների միջև եղած գրույցների վերաբերյալ:

Զպետք է ենթադրել, թե բերված խոսքերն ասվածի բանավոր ճշգրիտ վերարտադրություններ են: Հունական աշխարհում ընդունված էր կատարել այնպիսի մեջբերումներ, որ հեղինակն ինքն էր հիշում, և կամ էլ նրան հաղորդել էին: Բացի այդ՝ «Գործք»-ում մենք, ամենայն հավանականությամբ, ունենք «խտացված» խոսքեր: Դրանք հաղորդում են հռետորի ասածի էությունը: Դա վերաբերում է նաև «Գործք»-ի 2-րդ գլխում Պետրոսի արտասանած խոսքին: Ղուկասն այս հատվածը եզրափակում է 2:40 տողով:

Քիչ հավանական է, որ փաստաբան Տերտյուղոսի՝ կուսակալի առջև արտասանած խոսքը բաղկացած լինի միայն Ղուկասի ներկայացրած վեց տողից (24:2-8), կամ Պողոսի պաշտպանությունը՝ տասը տողից (24:10-21): Սա չի նշանակում, թե դրանք չեն ներկայացվել ճշգրիտ ու աղեկվատ ձևով, այլ որ, պարզապես, չի տրվել այն ամենն, ինչ ասվել է:

Խոսքերի մեծ մասն ունի քարոզի բնույթ: Իբրև այդպիսիք՝ դրանք լավ գաղափար են տալիս առաքելական քարոզչության մասին: Նշենք Քրիստոսի հարությանը կենտրոնական տեղ հատկացնելու փաստը: Հարությանն արված հղումներն, անշուշտ, ենթադրում են մահը, մի բան, որով էլ բացատրվում է այն հանգամանքը, որ մահն այստեղ քիչ տեղ է զբաղեցնում: Բացի այդ՝ պետք է հիշել, որ նույն հեղինակն արդեն մի Ավետարան էր գրել: Հիսուսի մահվանն արված հղումների մեծ մասը կապվում է հրեաների հանցավոր արարքի համար նրանց ուղղված հանդիմանական խոսքերի հետ: Սակայն Քրիստոսի մահը, իբրև փրկչական գործ, գերակշռություն չի ստանում: Հնարավոր է, որ Հարությունն ու Հոգեգալուստի խաչը մղած լինեն հետին պլան: Բայց Պողոսի նամակները, որ գրվել են «Գործք»-ից առնվազն տասնհինգ տարի առաջ, ներկայացնում են խաչը, մահը, հարությունը, համբարձումն ու Հոր աջ կողքին նստելը, ինչպես նաև Հոգու գործը՝ փոխադարձ հարաբերություններում:

Հարկ է արտասանված խոսքերն ուշադրությամբ ընթերցել ու վերընթերցել: Հինգ խոսք պատկանում է Պետրոսին, վեցը՝ Պողոսին, մեկը՝ Գամաղիելին, մեկը՝ Ստեփաննոսին, մեկը՝ Հակոբոսին, մեկը՝ փաստաբան Տերտյուղոսին, մեկն էլ Երուսաղեմի երեցների մունետիկներից մեկին, որը դիմում է Պողոսին:

- 2:14-40. Պետրոս, Հոգեգալստյան ժամանակ արտասանած քարոզը.
- 3:12-26. Պետրոս, Սողոմոնի սրահի քարոզը
- 4:8-12. Պետրոս, պաշտպանություն Ասյանի առջև
- 5:34-39. Գամաղիել, զգուշության հորդոր՝ ուղղված Ասյանին
- 7:1-53. Ստեփաննոս
- 10:34-43. Պետրոսը Կոռնելիոսի մոտ
- 11:5-17. Պետրոսի պաշտպանությունը Երուսաղեմում
- 13:16-41. Պողոսը Պիսիդիայի Անտիոքում
- 15:13-21. Հակոբոսը Երուսաղեմի տիեզերաժողովում
- 17:22-31. Պողոսը Արեոպագոսի առջև
- 20:18-35. Պողոսի հրաժեշտը Եփեսոսի ծերերին
- 22:1-21. Պողոսի պաշտպանությունը Երուսաղեմում
- 24:2-8. Տերտյուղոսի մեղադրանքը Պողոսի դեմ
- 26:2-29. Պողոսի պաշտպանությունը Ագրիպաս արքայի առջև

2. Ընտրված կյուրերը

Ավետարանների պես «Գործք»-ը նույնպես ընտրում է իր նյութերը: Այդ բանը նա անում է յուրովի, սակայն Եկեղեցում գործող Սուրբ Հոգու ղեկավարությամբ: Ղուկասը ևս կարող էր ամփոփել Հովհաննու Ավետարանի ձևով (20:30-31): Ուստի, այս գիրքը չպետք է դիտել իբրև այնպիսի գրվածք, որը ներկայացնում է Եկեղեցու գոյության առաջին երեսուն տարիների ավարտուն պատմությունը: Մեկնաբանության բանալին 1:8 հատվածում է. հեղինակն այս թեման հետո է զարգացնելու: Գրքում բերված պատմության կենտրոնում Պետրոսի կերպարն է մի շրջանում, որը ներկայացված է Երուսաղեմով, Հրեաստանով ու Սամարիայով, ինչպես և մեկ այլ իշխող անձ՝ Պողոսը՝ «երկրի ծայրամասերը» արտահայտությամբ մատնանշվող շրջանի համար: Այս շրջանների մեջ են մտնում, ուստի, Երուսաղեմը, Սամարիան, Լիդիան, Յոպպեն, Կեսարիան, իսկ հաջորդ զոնայում՝ Անտիոքը, մեծ թվով քաղաքներ Փոքր Ասիայում, Հունաստանը, ինչպես նաև մինչև Հռոմ ընկած ճանապարհը: Այս է պատճառը, որ ոչինչ չենք գտնում Պողոսի փորձառությունների կամ էլ Ավետարանը քարոզելու գործոնների ու մեթոդների մասին: Ո՞վ կարող է ասել, թե քանի անգամ է կրկնվել 11:20-21 տողով ներկայացված ավետարանացման տիպը:

3. Պատմականությունը

Ժամանակակից ուսումնասիրությունները, որով հաստատվում են Ղուկասի կողմից բերված փաստերի պատմականությունը, ապշեցուցիչ են: Սըր Ուիլյամ Ռանգելը Փոքր Ասիայում կատարած հետազոտություններում ապացուցել է, որ «Գործք»-ում ակնարկված վայրերը, անունները, կոչումները, ճանապարհները, սովորույթները համապատասխանում են

այն փաստերին ու գործածություններին, որ ուժի մեջ էին գրքի ընդգրկած ժամանակաշրջանի ընթացքում: Սակայն առաջանում են որոշ խնդիրներ, որ հարկ է ուսումնասիրել: Ոչ մի տեղ Ղուկասը չի ակնարկում Պողոսի Նամակների մասին, թեև շատերը գրվել են իր ներկայությամբ (Կողոսաց. 4:14 և Բ. Տիմոթ. 4:11, Փիլիմ. 24): Եվ հետո բոլոր նամակներն էլ գրվել են «Գործք»-ից բազմաթիվ տարիներ առաջ:

Մեկ այլ խնդիր էլ գրքի տվյալները Պողոսի՝ Երուսաղեմ կատարած ճանապարհորդության հետ համաձայնեցնելու անհնարինությունն է, ճանապարհորդություն, որի մասին հենց ինքն է խոսում (Գործք 9:26-30, 11:30 և 12:25, 15:1-35 և 21:1-19):

Բացի այդ՝ ոմանք կարծում են, որ 18:22 տողում բովանդակված խոսքերը մի հինգերորդ այցի մասին են: Արդ, Գաղատացիներին ուղղված նամակի 1:18-24 և 2:1-10 տողերը թույլ են տալիս ենթադրել երկու այցելություն: Անհնարին է մտնել առավել տեխնիկական մանրամասների մեջ: Այսուամենայնիվ, ամենք երկու նշում.

ա) Ղուկասն իր Ավետարանն սկսում է նախաբանի հայտնի բառերով: Քանի որ «Գործք»-ը սերտորեն կապված է Ավետարանին՝ իբրև նրա շարունակություն, որ գրված է նույն հեղինակի կողմից և ձևոված է նույն թեոփիլին, ապա հիմք չկա կասկածի տակ առնել այն, որ Ավետարանի ղուկասյան գրելածնը չի կարող կիրառվել նաև «Գործք»-ի նկատմամբ: Դա հաստատվում է այն ճշգրտությամբ, որի մասին խոսել ենք այնպիսի թեմաների առնչությամբ, որոնց լուրջ ու ճշգրիտ բնույթը կարելի է հաստատել: Փութաջանությունը, որով Ղուկասն աշխատում է, նման չէ ժամանակակից գրողների գրելածնին. նա գրում է յուրովի՝ պահպանելով գրական այն կանոնները, որոնցով ղեկավարվում են ժամանակակից գրողներն իրենց գրվածքներում:

բ) Ինչպես արդեն նշվել է սինոպտիկների ու Յովհաննու առնչությամբ, Նոր Կտակարանի հեղինակներին նախ մտահոգել է լուրի հաղորդումը: Նրանք նույն սերնդից են, ինչ Յեսուն, Սամուելը, թագավորները, որոնք եբրայերեն Աստվածաշնչում անվանվում են ոչ թե պատմաբաններ, այլ առաջին մարգարեներ, ինչպես Եսային, Երեմիան, Եզեկիելն ու փոքր մարգարեները՝ Օվսեն, Մաղաքիան և այլն, անվանվել են «Վերջին Մարգարեներ»:

Տվյալների շրջանակը (շարունակություն, ապացույց և ձև), որի վրա մեր դարաշրջանի աստվածաշնչյան գիտությունն ու շաղկությունն է դարձնում, չէր իշխում աստվածաշնչյան մարգարեական լուր պարունակող գրվածքների վրա: Ամեն հեղինակ փաստերի մասին գրում է այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ էին իր իսկ նպատակի իրականացմանն ու կապված էին գլխավոր լուրի հետ: Այն փաստը, որ Ղուկասը հղում չի կատարել Պողոսի նամակների մասին, պետք է դիտվի դարձյալ նույն լուսի ներքո: Ոչ մի հիմք չունենք մտածելու, որ Ղուկասն անտեղյակ էր իր մեծ բարեկամի թղթերին: Սակայն առավել կարևոր է իմանալ, որ Ղուկասի օրոք Պողոսը կենդանի էր: Ինչքան էլ որ Պողոսը գրեր ու խոսեր, նրա նամակներն ունեին ընդամենը տեղական նշանակություն, քանզի ամենայն հավանականությամբ՝ ուղղված էին մասնավոր համայնքների: Պողոսն, անկասկած, գրել է ավելի շատ նամակներ, քան մեզ հասել են (Լաոդիկե՞. Կողոս. 4:16): Մահվանից հետո են աստիճանաբար դրանք դարձել Եկեղեցու ժառանգություն:

4. Հարությունը

«Գործք Առաքելոց»-ի աչքի զարնող առանձնահատկություններից մեկն էլ Քրիստոսի Հարության իրողության շեշտումն է: Տասներեք անգամ հիշատակվում է այս փաստը, ութ անգամ՝ ընդհանուր հարությունը: Դա հակասում է Խաչելությանն արված սակավաթիվ հղումների փաստին: Խաչելությունը ներկայացվում է իբրև հրեաների կողմից կատարված հանցանք: Բայց այս մեղքի դեմ հայտնվում է Աստծու զորությունը, և Քրիստոսը հարություն է առնում: Հարության փրկչական թեմային արված նման վերապատվությունը պատահական չէ: Գրքի առաջին մասերում խոսվում է Հարությանն անմիջականորեն հաջորդած ժամանակաշրջանի մասին: Այս իրադարձությունը չափազանց մեծ տպավորություն էր թողել աշակերտների վրա և անգամ դարձել հայտարարության թեմա:

Երկրորդ հերթին հարությունը նշանակալից տեղ է գրավում Պողոսի երկու քարոզներում (13:30-37՝ արված հրեաներին, 17:30-32՝ հեթանոսներին): Դա չպետք է զարմացնի, քանզի Հարության թեման պողոսյան աստվածաբանության անկյունաքարն է, այն զարգացվում է նաև նամակներում:

5. Սուրբ Հոգու դրսևորումն ու Հրաշքերը

«Հոգեգալստյանը հաջորդող հրաշքերը ոմանց վրա գուցե այն տպավորությունն են թողնում, թե «Գործք»-ը հիշեցնում է արդեն անցած, մի քիչ առասպելական դարաշրջան, որի վարդապետությունը ժամանակ առ ժամանակ կարող է արթնանալ Եկեղեցում՝ առանց մշտական օրինակ ծառայելու այսօրվա համայնքների համար: Անկասկած, ներկայիս աշխարհն այլևս այն աշխարհը չէ (կամ կարծում են, որ այլևս այն աշխարհը չէ), որտեղ գերբնականը մշտապես գտնվում է նյութականի կողքին: Անշուշտ, մտասբանչության դրսևորումները, ինչպես՝ օտար լեզուներով խոսելը, ավելի շուտ հազվադեպ են, և միշտ չէ, որ նպաստում են համայնքի հաստատման գործին: Սակայն «Գործք Առաքելոց»-ում էականն արդեն իսկ դա չէ:

Ո՛չ: Գրվածքի հիմնական հրաշքը, որը հիմք է մյուս հրաշքների համար, հարությունն առած Հիսուսն է՝ Քրիստոսը, որն այսուհետ նստած է Աստծու աջ կողքին ու չի լքել աշխարհը:

Նա իր Սուրբ Հոգին է հաղորդում նրանց, ովքեր սպասում են թագավորության գալստյանը: Նա հավաքում է մի ժողովուրդ, որի միակ գործն արդեն կենդանի Տիրոջ առկայության մասին վկայություն տալն է: Մեկնեն հեռավոր առաքելության, թե իրենց քաղաքում ապրեն վերածնված կյանքով՝ քրիստոնյաները հայտարարում են, որ սկիզբ է առել մի նոր աշխարհի, քանզի Աստծու Որդին, որ մահացել է հանուն մեզ, մտել է փառքի մեջ: Հրաշքն այն է, որ նրանք, թեև աշխարհում ապրում են օտարների պես, համերաշխ են այդ աշխարհի հետ: Նրանց սերը զարմացնում է դրսի մարդկանց, նաև՝ քաջությունը, փորձանքի մեջ հանդարտությունը, բոլորին ցուցաբերած ընդունելությունը, ձևը, որով Տերը յուրաքանչյուրին օգտագործում է՝ իրեն ծառայելու նրանց տրված ձիրքերին համապատասխան: Ավետարանի ուրախությունն, այսպիսով, աստիճանաբար համակում է բոլորին, և ամեն ինչի վրա՝ իրադարձությունների, մարդկանց, Հոգին տարածում է իր ազդեցությունը¹:

¹ Manuel Biblique, vol. IV, p.172.

6. «Գործք»-ն ու Պողոսի Թղթերը

Պողոսի թղթերի ներածությունը կտրվի Նոր Կտակարանի մեր ներածության մեկ այլ մասում: Բայց այն փաստը, որ «Գործք»-ի պատմություններն արդեն իսկ առատ լույս են սփռում հեթանոսների մեծ մարգարեի վրա, մեզ հնարավորություն է ընձեռում առիթից օգտվելով մի քանի խոսք ասել նրա մասին:

Առաքելության առաջին փուլերն անցել են՝ նախքան Պողոսի թատերաբեմ դուրս գալը: Հոգեգալստյան ժամանակ, Պողոսի քարոզից ի վեր, Ավետարանն իր կողմը գրավեց հրեաների՝ նորադարձների: Եղավ նաև Ստեփանոսի բացառիկ վկայությունը. առաքելությունը Սամարիայում և Ավետարանի թափանցումը հեթանոսների մեջ (Կոռնելիոս):

Այսուամենայնիվ, կարելի է ասել, որ ինչպես Պետրոսը, այնպես էլ նրա գործընկերները որոշակի դժվարությամբ էին ընկալում Ավետարանի քարոզման համաշխարհային ընդգրկումը: Ահա թե ինչու նրանք դեռևս ապրում էին Տաճարի ստվերում՝ ժողովարանների հետ սերտ կապի մեջ: Ուստի հարկ եղավ հաղթահարել հրեական կրոնի պատմեշները և դառնալ Համաշխարհային Եկեղեցի, որտեղ այլևս չկա ո՛չ հրեա, ո՛չ հույն, ո՛չ ստրուկ, ո՛չ ազատ մարդ, ո՛չ տղամարդ, ո՛չ կին, քանի որ բոլորն էլ Քրիստոսի մեջ են (Գաղատ. 3:28):

Պողոսի՝ աշակերտներին մի ժամանակ հետապնդողի, կոփված փարիսեցու վրա էր ընկնելու, հեթանոս աշխարհին համապատասխան, հրեա-հեթանոսական փոքրիկ եկեղեցիներն ընդարձակելու գործը: Տեսիլքի այս տարածումը ոչ առանց դժվարության է իրականացվում հրեական համայնքների կողմից. Պողոսի ուղերձները կրում են անհասկացությամբ առաքյալին պատճառված տագնապի հետքերը:

Այն տպավորությունն է ստեղծվում, որ Ղուկասը, թեև եղել է Պողոսի աշակերտը, նույն սրությամբ չի զգացել բախման ուժը: Ժամանակի ընթացքում, գուցե, խամրել է տպավորությունն այնտեղ, որտեղ Պողոսը՝ ավետարանացման գործի պատասխանատուն, մինչև ոսկորներն զգում էր Եկեղեցու տկարություններն ու անհավատարմությունները (Բ. Կորնթ. 11:29): Ղուկասը՝ նախկին հեթանոսը, որ պակաս աստվածաբան է, զարմացած էր հատկապես Եկեղեցու հաղթական առաջընթացով և իր պատմության մեջ ընդգծում էր միավորող Հոգու հավատարմությունը¹:

7. Սուրբ Գիրքն ու Սարգարեությունը

«Բոլոր առաքյալներն ընդունում են Սուրբ Գրքի հեղինակությունը: Նրանց Աստվածաշունչը մոտավորապես համապատասխանում է ներկայիս Հին Կտակարանին, որն, անկասկած, կարդացվել է հունարենով՝ «Յոթանասնից» կոչված թարգմանությամբ, Հրեաստանից դուրս ապրողների կողմից: Քանի դեռ նրանք դիմում են հրեաների կամ նորադարձների, հայտնում են, որ Աստվածի ու հռոմեացիների կողմից դատապարտված Հիսուս Նազովրեցին Սուրբ գրվածքների հայտնած Մեսիան է: Սարգարեություններն, արդյոք, ցույց չէ՞ն տվել, որ Աստծու Որդին տառապելու էր աշխարհի մեղքերի համար և Աստծու զորությամբ հարություն առնելու: Պողոսի ուղերձների բազմաթիվ հատվածներ ապացուցում են Սուրբ Գրքերի և Հիսուսի առաքելության նման կողմի համապատասխանությունը: Որոշ մոտեցումներ զարմացնում են իրենց բարդ բնույթով:

¹ Manuel Biblique.

Մենք՝ այսօրվա ընթերցողներս, Հին Կտակարանի վկայությամբ ամրապնդելով մեր հավատքը Քրիստոսի հանդեպ, գտնում ենք հատկապես, որ Հին Կտակարանն է լուսավորում, երբ, այս կամ այն կերպ, Փրկչի հայտարարումը և կամ նախատիպն է: Փոխարենը, երբ խոսքը վերաբերում է առաքյալներին, ժամանակակից հավատացյալներին, ապա Հին Կտակարանի որևէ տեքստի հղումը առաքելական վարդապետության ճշմարտության վառ ապացույց է: Իսկ երբ մտածում ենք Սուրբ Գրքերի այլաբանական մեկնության տարբերությունների մասին այնպես, ինչպես դա կիրառվում էր Ալեքսանդրիայում կամ ռաբբիական դպրոցներում, ապա ընդունում ենք, որ այս բնագավառում առաքյալները ցուցաբերել են մեծ զսպվածություն: Իրոք, նրանք ջանացել են գրվածքներն ընթերցել Սուրբ Հոգու Լուսի ներքո, ու նրանց մեկնությունը մեզ համար Հին Կտակարանի գրքերի քրիստոսաբանական մեկնաբանության մոուլտիմանակ է ու սահման:

Այս ժամանակաշրջանում, և առանց «Գործք Առաքելոց»-ում այդ մասին հստակորեն հիշատակելու, Հիսուսի կյանքի բանավոր պատումները, նրա քարոզների ժողովածուներն ավելի ու ավելի մեծ հեղինակություն են ստանում Եկեղեցուն: Շատ շուտով Տիրոջ կատարած որևէ գործ կամ արտասանած խոսք ստանում է ավելի մեծ հեղինակություն, քան Հին Կտակարանի որևէ տեքստ կամ օրենք: Եվ, վերջապես, հավատացյալների հավատքի երրորդ նեցուկը մարգարեության ու քարոզչության բնագավառում ներշնչանքն էր: Ստացվելով ու փոխանցվելով Քրիստոսի մարմնի հաղորդության մեջ՝ համապատասխան Սուրբ Գրքին ու Հիսուսի վարդապետությանը, առաքելական դարաշրջանի ողջ ընթացքում մարգարեությունը սնունդ է տվել քրիստոնեական կյանքին¹:

8. Հեղինակի մտադրությունը

Գրքի նպատակներից մեկն է հայտ է գալիս այն ձևի մեջ, որով հեղինակն ապացուցում է, որ հռոմեական իշխանությունները ողջ կայսրության մեջ, իբրև այդպիսիք, երբեք չեն հակադրվել Եկեղեցուն, քանի որ քրիստոնեությունը, թվում է, հակառակ չէ հաստատված օրենքներին: Այսպես, Կիպրոսի պրոկոնսուլը դրականորեն է տրամադրված Պողոսի և Բառնաբասի նկատմամբ: Փիլիպպե քաղաքի փոխատուները ներողություն են խնդրում այն բանի համար, որ անօրինական ձևով վատ են վերաբերվել Պողոսի ու Շիղայի հետ: Եփեսոսում բնակվող ասիացիները Պողոսի բարեկամներն էին: Այս քաղաքի քարտուղարն անգամ նրան պաշտպանում է ավագակախմբի մեղադրանքներից: Աքայայի պրոկոնսուլ Գաղիոնը հրաժարվում է լսել Կորնթոսի հրեաների կողմից առաքյալի դեմ ներկայացված մեղադրանքի հիմնական կետերը և նրան համարում օտարերկրացի կամ հռոմեական օրենքից լիովին ազատված մարդ: Կեսարիայի պրոկուրատորներ Փելիքսն ու Փեստոսը, ինչպես նաև վասալ թագավոր Հերոդիան Ագոբիպաս 2-րդը, կարծիք են հայտնում Պողոսի անմեղության մասին:

Այդ ժամանակաշրջանում քրիստոնեությունն ինչո՞ւ է բախվել այդքան խոչընդոտների: Իբրև պատասխան՝ Ղուկասը վեր է հանում ողջ կայսրության հրեաների դիրքորոշումը: Քրիստոնյաների դեմ նրա կողմից հիշատակված բոլոր հարձակումների ներշնչողները հրեաներն են, բացառությամբ Փիլիպպեում տեղի ունեցած մտրակահարության ու թունավորման դեպքի և Եփեսոսյան ապստամբության:

¹ Manuel Brique.

Երկու դեպքում էլ հեթանոսները մտածում են, որ Ավետարանը սպառնում է իրենց շահերին: Պողոսն ու իր ընկերները գնում են քաղաքից քաղաք՝ ավետիսն առաջարկելով նախ հրեաներին, անցնելով ժողովարանից ժողովարան, սակայն նրանց լուրը, համարյա առանց բացառության, մերժվում է:

Այդժամ, քրիստոնյա քարոզիչներն իրենց դեմքով դարձան դեպի հեթանոսները, թեև Ավետարանը հաջողությունների էր հասնում նաև կայսրության համայնքներում, մինչդեռ միևնույն ժամանակ նաև մերժվում էր հրեական համայնքների մեծ մասի կողմից: Այս մերժումն ամփոփ ներկայացված է գրքի վերջում, Եսայի մարգարեից արված մեջբերման մեջ (6:9), խոսք, որ Տեր Հիսուսն ինքը մեջբերել էր նույն իմաստով, ինչ առաքյալը:

Թեև «Գործք»-ը պատմական գիրք է, այն նաև ապացույց է Ավետարանի առաջընթացի օգտին, Ավետարան, որը թափանցում է հայտնի երեք մայրցամաքները՝ իբրև աստվածաբանության գիրք:

Պողոսի, Ստեփաննոսի և այլոց քարոզներից ակնհայտորեն երևում է, որ քրիստոնեական հավատքի հիմնական փաստերը Եկեղեցու վարդապետության էական մասերն են: Քրիստոնեական առաջին ժողովը՝ Երուսաղեմի սինոդը, արգելեց քրիստոնեական ուսմունքի առաջին էական կետը, այն է՝ միայն հավատքով արդարացումն ու Աստծու ամենազոր ողորմածությամբ փրկությունը: Այս թեմաները հետագայում զարգացում կստանան Պողոսի՝ գաղատացիներին ու հռոմեացիներին ուղղված թղթերում: Եվ այսպես, «Գործք»-ը օգտակար ներածություն է Նոր Կտակարանի թղթերի համար, որոնք, ինչպես հայտնի է, տալիս են քրիստոնեական հավատքի ճշգրիտ ու թույլատրված մեկնաբանություն ինչպես վաղ շրջանի, այնպես էլ բոլոր դարաշրջանների համաշխարհային Եկեղեցու համար: Ճշմարիտ իմաստով, այս թղթերը քարոզչական նամակներ են՝ ուղղված առաքելություն իրականացնող Եկեղեցիների:

«Գործք Առաքելոց»-ի գլխավոր թեման տրված է առաջին գլխում՝ 8-րդ տողում. «Դուք կգորանաք, երբ Սուրբ Հոգին ձեզ վրա իջնի, և կլինեք իմ վկաները»:

Կարելի է ասել, որ ամբողջ գիրքը համակարգված ձևով զբաղվում է այս միակ թեմայով: 2-րդ և 12-րդ գլուխներում խոսվում է Երուսաղեմում տրված այս վկայության մասին, իսկ գրքի մնացած մասում՝ մինչև երկրի ժայրամասերը նրա տարածվելու մասին:

Առաջին մասի գլխավոր կերպարը, ինչպես տեսանք, Պետրոսն է, իսկ երկրորդ մասինը՝ Պողոսը:

Սակայն հրեական ու հեթանոսական առաքելությունների միջև սահմանաբաժանումը նույնքան հստակ չէ: Չէ՞ որ հեթանոսների մոտ Առաքելության հիմքն արդեն իսկ Քրիստոսի խոսքն է (1:8): Հոգու բխումը (1:1-13), եթովպացի սպայի հավատափոխությունը (8), Սողոսի հավատափոխությունը (9), մաքուր ու անմաքուր կենդանիների վերաբերյալ Պետրոսի տեսիլքը (10:9-16), Կոռնելիոսի ու նրա ընտանիքի հավատափոխությունը (10:23-48) և Ավետարանի քարոզումը հեթանոսներին՝ Սիրիայի Անտիոքում (10:19-25):

Նմանապես, հեթանոսների մեջ իրականացրած առաքելությունը ակնհայտորեն խոսում է Պողոսի քարոզչական գործունեության ու ճանապարհորդությունների մասին, սակայն այն ամենն ինչ էլ չի անտեսել ո՛չ սփյուռքի հրեաներին, ո՛չ էլ Երուսաղեմի Եկեղեցու կարիքներն ու հեղինակությունը (13:13-52, 4:1-7, 16:11-15, 17:10-15, 18:1-7, 19:1-10, 22:1-23, 26:1-29, 28:17-28):

Հեթանոսների ներառումը Աստու ընտանիքում և Իսրայելի արտոնության կորուստն այնպես, ինչպես դա հասկացել էին հրեաները, տեղի ունեցավ ո՛չ առանց դժվարության, ո՛չ էլ առանց բախման: Բայց 28:14 տողը («մենք հասանք Յոն»») շատ պերճախոս է: Ավետարանի մի ցատկահենարան տեղադրվել էր աշխարհի ամենահզոր կայսրության մայրաքաղաքում: Յոնում ապրում էին զինվորներ, արվեստագետներ, առևտրականներ, գրողներ և կայսրության բոլոր կողմերից ու նրանից դուրս գտնվող երկրներից եկող այցելուներ: Վաղ շրջանի քրիստոնեությունը կողմնորոշված էր դեպի քաղաք, և քաղաքային կենտրոններից Ավետարանը տարածվեց դեպի շրջապատի գյուղերը: Այսպիսով, Պողոսը կարող է գրել Թեսաղոնիկեի Եկեղեցուն... (1:1-8): Ղուկասը Յոնի Եկեղեցու վկայությունն ամբողջությամբ կարող է դիտարկել այնպես, ինչպես Պողոսը Թեսաղոնիկեն կապում էր Սակեդոնիայի ու Աբայայի հետ:

Առաջնահերթ այս մտադրությունից բացի՝ այն է՝ ցույց տալ, թե Եկեղեցու կողմից ինչպես է իրականացվել Հիսուսի՝ Յոնու գործության մեջ Ավետարանը քարոզելու հրամանը, Ղուկասն ուներ ևս մի նպատակ: Դա նույն է, ինչի մասին հիշատակել ենք նրա անունը կրող Ավետարանի ներածության մեջ: Թեև ուղղակիորեն չի խոսվում, Ավետարանը հաճախ է ապացույց տալիս այն ջանքի մասին, որ արվում է՝ ցրելու Եկեղեցու ու քրիստոնյաների հանդեպ հռոմեական իշխանությունների անվստահությունը: Թեման հաճախ է հանդիպում «Գործք»-ում: Հենց սկզբից Ղուկասը հիմնավոր կապ է հաստատում Ավետարանի և Իսրայելի նախկին հավատքի միջև (2:14):

Սա շատ կարևոր է քաղաքական տեսակետից, քանզի հռոմեացիների աչքին հրեական կրոնը *religio licita* էր: Հետևապես, քրիստոնեությունը պետք է ընդունվեր իբրև Իսրայելի կրոնի բնական իրականացում կամ զարգացում: Յոնու բխումը մարգարեացվել էր Հին Կտակարանում, և Մեսիան սերում էր հարությունը կանխատուող հրեա ամենամեծ միապետից: Մենք չենք ուզում հաստատել, որ Ղուկասը «Գործք»-ի 2-րդ գլուխը գրել է՝ նկատի ունենալով հռոմեացի սպաներին: Պետրոսի քարոզն ուղղված է հրեաներին: Այս խոսքերը հասկանալի ու արդարացված են միայն այս տեսակետից: Բայց նրա լուրը հետագա պաշտպանության այն հիմքն է, որ Պողոսը կօգտագործի հռոմեական իշխանությունների առջև: Ուստի, հռոմեացիներն ազատված են ցանկացած ուղղագիծ պատասխանատվությունից, և Պողոսը կարող է սեփական տուն վարձել՝ ազատորեն ուսուցանելու Յոնում անցկացրած երկու տարիների ընթացքում:

Կրոնական, քաղաքացիական ու իրավաբանական տեսանկյունից՝ Ղուկասը Պողոսին ներկայացնում է իբրև քրիստոնեական գլխավոր մունետիկ հեթանոս աշխարհում, այնպես որ մի կողմից իր նկատմամբ նպաստավոր ձևով է տրամադրում հռոմեացիներին, մյուս կողմից էլ Եկեղեցուն՝ իր լուրի նկատմամբ: Նրա մտադրությունն է՝ հռոմեացիների մեջ ստեղծել նպաստավոր մթնոլորտ Ավետարանի նկատմամբ, բայց և՛ բացատրել, թե ինչպես է իրականացվել առաքելությունը:

Ղուկասը տեղեկություն չի հաղորդում Պողոսի մահվան մասին: Հնարավոր է, որ Ղուկասը Պողոսի գործունեության այս կետի շուրջ լռում է, որպեսզի չհիշատակի հռոմեական իշխանությունների կողմից նրա մահապատժի մասին:

Քրիստոսն ու իր Եկեղեցին. ահա գրքի հիմնական թեման: Այս էջում առանձնացող, կյանքով լի լուրի էությունն այն է, որ Եկեղեցին Հիսուս Քրիստոսի, նրա հայտարարած

Խոսքի ու բխած Յոզու ստեղծագործությունն է հենց: Նա այն ծնել է իր կյանքով, առաքելությամբ, տանջանքներով և մեղքի ու մահվան դեմ տարած հաղթանակով: Նրա հաղթական Չարությամբ, փառապանծ համբարծմամբ ու սուրբ Յոզու բխումով է բացատրվում այն, որ կրթություն չունեցող, հասարակական ու մշակութային ազդեցությունից զուրկ մի քանի մարդուց բաղկացած թույլ համայնքը կարողացավ դառնալ Աստծու ժողովուրդ՝ ստանձնելով ամենադիմադիր ու ամենահեղափոխական առաքելությունը: Նրանք, ովքեր Յոզով միացել են Քրիստոսին, այժմ նրա Եկեղեցու մասն են կազմում: Եվ այսպես, Եկեղեցու միաբանությունը ո՛չ տեսական է, ո՛չ էլ մեխանիկական: Յոզու մկրտությամբ միաբանությունն է կենդանի Քրիստոսի հետ կապում բոլոր նրանց, ովքեր նրան հավատում են: Եկեղեցու դերը ծնունդ է տալիս Յիսուսի կյանքին: Յոզին ուղեկցում է նրան՝ կոչ անելով տղամարդկանց ու կանանց, ցույց տալիս նրանց գործունեության վայրը, հաղորդում Տիրոջ սերը, Տեր, որը դառնում է իր կիրքը, ամեն գործողության պատճառը: Եկեղեցու նպատակը Աստծու փառքն է երկրի վրա, կանոնը՝ հավատարմությունն իր առաջնորդ Յիսուս Քրիստոսի նկատմամբ, իսկ հզորությունը՝ նրանում Սուրբ Յոզու առկայությունը: Այլ կերպ հնարավոր չէ բացատրել այն, թե կրթություն չունեցող այս քարոզիչներն ինչպես են կարողացել այդօրինակ խոր տպավորություն թողնել ժամանակակից աշխարհի վրա և անգամ վերափոխել այն:

Ուղերձների վարդապետությունը՝ կապված Ավետարանների վարդապետության հետ, հրեաների մեջ սկիզբ առած և հրեա Մեսիայի շուրջը կենտրոնացած շարժումը՝ հենվելով հրեական գրվածքների վրա, հանգեցրին համաշխարհային կրոնի՝ ծնունդ տալով արևմտյան քաղաքակրթությանը: Այս և բազմաթիվ այլ հարցեր իրենց պատասխանն են գտնում «Գործք Առաքելոց»-ում: Մի կողմից՝ Քրիստոսի վարդապետության ու գործունեության, իսկ մյուս կողմից՝ քրիստոնեության միջև կապը միանգամայն զարգացած ձևով երևում է արդեն Նոր Կտակարանի ուղերձներում:

9. Սուրբ Յոզին

«Գործք»-ի երկրորդ գլխում տեղ գտած Յոզեգալստյան պատմությունը տարօրինակ ու անսովոր բնույթի է: Անգամ առաքելության մեջ ընդգրկված քիչ մարդիկ գիտեն, թե ինչպես պետք է այն ըմբռնել: Այս թեմայով հազվադեպ են քարոզում, եթե ոչ՝ ընդհանուր ձևով, մի բան, որը քիչ է կապվում ինքնին փաստի հետ:

Թվում է, թե ամեն ինչ գործի մեջ է դրվում ավելի շուտ այն բանի համար, որ Յոզեգալստը կարողանա մնալ խորհրդավոր ինչ-որ բան:

Այս անհասկացությունը հանգեցնում է Սուրբ Յոզու՝ իբրև գործության ըմբռնմանը, որը բազմաթիվ քրիստոնյաների մղում է շատ տարօրինակ հավատամքների ու վարքի: Բայց հազիվ թե կապված է Պողոսի վարդապետության հետ, որ նա իրականացրել է Կորնթոսի Եկեղեցուն՝ Սուրբ Յոզու ու նրա շնորհների վերաբերյալ:

Վկայակոչելով հատկապես լեզուներով խոսելու շնորհը՝ նա ասում է (տես՝ Ա. Կորնթ. 14:39-40):

«Գործք»-ի 2:1-13 հատվածից պարզ է դառնում, որ Սուրբ Յոզին ամենևին էլ արժանի չէ զուգորդվելու հայտնի խառնաշփոթին ու ոչ բնականոն վարքին: Այն պետք է կապել ավելի շուտ Քրիստոսի Եկեղեցու հիմնավոր կառուցվածքի հետ: Մենք, իրոք, կտեսնենք, որ Յոզե-

գալստյան պատմության մեջ կա ինչ-որ խորհրդավոր բան: Բայց, ինչպես արարման ժամանակ, դա ծայրաստիճան կարգավորված ու արտասովոր խորհրդավորություն է:

«Չոգեգալուստ» բառը (Պենտեկոստե) հունարենում նշանակում է «հիսուներորդ»: Դա Յին Կտակարանի հունձքի տոնն է՝ Ձատկից հիսուն օր հետո: Յին Կտակարանում այն կոչվում է Շաբաթների տոն: «Գործք»-ի երկրորդ գլխում նկարագրված օրը Յիսուսի աշակերտները, թվով 120 հոգի, հավաքվում են: Չոգին նրանց հայտնվում է տարբերակիչ երեք հրաշալի նշաններով: Չոգին չի եկել միայն հենց Չոգեգալստյան օրը՝ ասես երբեք չէր եկել, կամ էլ մինչ այդ հայտնի չէր: Նա եկավ՝ առանձնահատուկ ձևով մնալու:

Եթե հանենք այս նոր ձևը, ապա Չոգին կհանենք Չոգեգալուստից, և այլևս ոչինչ չի մնա, քանի որ նշանները նրա գալստյան իմաստն ու բնույթն են: Դրանք են՝ կրակ, քամի, լեզուներ:

Նշենք այս երեք նշանների բնույթն ու փոխհարաբերությունը: Քամու ու կրակի նշանները չեն հայտնվում իրական քամու ու կրակի ձևով: Լսվում է, ասես, քամու ձայն, բայց քամի բնավ չկա, երևում են, ասես, կրակե լեզուներ, բայց իրականում կրակ չկա: Դրանք խորհրդանշական հայտնություններ են: Ղուկասի մոտ լեզուներով խոսելը մի կողմից ներկայացված է իբրև իսկական խոսք, վկայություն, հայտարարություն՝ հռոմեական կայսրության տարբեր մասերում այդ դարաշրջանում խոսվող լեզուների լիովին հասկանալի խոսքերով, բայց և մյուս կողմից, քամին ու կրակն ունեն իրենց նշանակությունը: Քամին խորհրդանշում է հզորությունն ու փոթորկի ուժը: Եվ քամի որ կրակը մաքրագործում և լույս է տալիս, ապա, քամու հետ մեկտեղ, այն մնում է իբրև Չոգու գործունեության և զորության խորհրդանիշ: Բայց պատմության մեջ շեշտը մեծ չափով դրվում է լեզուներով խոսելու վրա: «Քամու» խորհրդանիշը հիշատակված է միայն այստեղ և այլևս ոչ մի տեղ չի հանդիպում: Նույնը՝ նաև կրակե լեզվակների վերաբերյալ: Մյուս տողերում խոսվում է լեզուներով խոսելու մասին. ինչպես այստեղ, այնպես էլ Պետրոսի քարոզում, դա ներկայացված է տարբեր ձևերով: Քամին ու կրակը մնում են հետին պլանում, քանի որ ուշադրության կենտրոնում խոսելն է: Քննարկենք, թե ինչ է տեղի ունենում այս կապակցությամբ:

Ձանազան պատճառներով, հազարավոր հրեաներ, սկսած արդեն իսկ բաբելոնյան արքայից (Ք. ա. 6-րդ դար), ապրում են սփյուռքում: Մյուսները երկիրը թողել են գերության պատճառով կամ էլ գործի բերումով: Սակայն նրանք պահպանում են իրենց կրոնը: Ամեն տարի հազարավոր մարդիկ վերադառնում են իրենց երկիր՝ տոնելու Չոգեգալստյան կամ Ձատկի տոները (կրոնական սիրված երկու տոները): Այս պատճառով են Երուսաղեմում այդքան շատ հրեաներ եղել Չոգեգալստյան դրամայի ժամանակ:

Չեթանոսները Սուրբ Չոգի չստացան: Ավետարանի նախապատրաստությունը՝ սկսած Աբրահամից մինչև Յիսուսի համբարձումը, տեղի ունեցավ զուտ հրեական շրջանակում: Բայց Ղուկասը սփռված հազարավոր այս հրեաներին համարում է «երկրի ծայրամասերի» ներկայացուցիչներ և հեթանոս ժողովուրդներ, որոնք, մոտ օրերից մի օր, պետք է միանային Ավետարանին: Ավետարանի հայտարարումը տարբեր լեզուներով՝ Քրիստոսի Եկեղեցու բնույթի ու մտադրության երկակի խորհրդանիշ է:

Հռոմեական աշխարհի բոլոր մասերից եկող մարդկանց հետ լեզուներով խոսելը Եկեղեցին դարձնում է այնպիսի մարմին, որը վկայություն է տալիս ու համընդհանուր է: Չոգե-

գալստյան ժամանակ Սուրբ Հոգին դարձավ Աստծու ժողովրդի կազմավորման և կյանքի անքակտելի ու կայուն մասը, ինչպիսին երբեք չէր եղել: Քահանային փոխարինեց քարոզիչը, ամբիոնը գրավեց զոհասեղանի տեղը, քարոզն ու ժամերգությունը՝ զոհաբերության: Եկեղեցին դարձավ քարոզող, ուսուցանող ու խոսող համայնք: Ժողովարանին ու Տաճարին փոխարինելու եկավ քրիստոնեական ժողովը: Այսպիսով, իրական դարձավ Հիսուսի խոստումը. «Դուք կլինեք իմ վկաները»: Դա նշանակում է, որ քարոզը, վարդապետությունն ու վկայությունը փոքր գործեր չեն եկեղեցու առավել կարևոր գործերի կողքին: Խոսքը եկեղեցու լինելիության էական բնույթի մասին է: Եկեղեցին պետք է քարոզեր, ուսուցաներ ու վկայություն տար: Դրանք այնպիսի գործեր չեն, որ ինքն է հորինել. դրանք իրականացնելով՝ եկեղեցին ցույց է տալիս իր բնույթն ու էությունը: Մեսիական գալուստի հիմնկտակարանային սպասումը փոխարինված է Մեսիայի գալստյան նորկտակարանային հայտարարությամբ:

Արա հետ մեկտեղ, Տաճարի, զոհաբերության, քահանայի սիմվոլիզմն անհետացավ ու նրան փոխարինելու եկավ Քրիստոսի եկեղեցին, որի գոյության կենտրոնում նրա հայտարարությունն էր և Խորհուրդը:

Նույն օրը և նույն պատճառով եկեղեցին դարձավ համաշխարհային. Հրեաստանից գնաց մինչև երկրի ծայրամասերը:

Լինելով համաշխարհային՝ բառիս նախնական ու աստվածաշնչյան իմաստով՝ տիեզերական մարմին, եկեղեցին բնավ չճանաչեց պատնեշներ: Հոգեգալուստը հանեց Բաբելոնյան անեծքը: Աստծու մեծ գործերը փառաբանվեցին այդ օրը: Ճշմարիտ է, որ այս մեծ փոփոխության էությունն անմիջապես չհասկացվեց: Բայց գրքի ընթերցանության ընթացքում հաճախ ենք հանդիպում Հոգուն:

Խոսքը լսելու առիթները Հիսուսի հրամանն են՝ վկայակոչելու Հոգու գալուստը, հավատափոխության առաջին դեպքերը, Անանիայի ու Սափիրայի դատապարտումը, Ստեփանոսի հանդիմանությունն ուղղված հրեա առաջնորդներին, Կռնելիոսի ու իր ընտանիքի հավատափոխությունը, Սողոսին ու Բառնաբասին՝ իբրև հեթանոսների մոտ ուղարկված առաջին քարոզիչների, հեթանոսների պաշտոնապես ընդունումը եկեղեցու կողմից, վարակված Եվրոպան, Ապոլոսի ու նրա բարեկամների մկրտությունը, երեցների ջանքը եկեղեցում, Ավետարանի կապը հրեաների ու հեթանոսների հետ:

Ահա, թե ինչու բազմաթիվ մասնագետներ այս գիրքն անվանում են Սուրբ Հոգու Գիրք կամ Սուրբ Հոգու Գործք, և որը մենք, իբրև եզրափակում, կանվանենք ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԳԻՐՔ:

ՀՈՈՍԵԱՑԻՆԵՐԻՆ ՈՒՂՎԱԾ ՆԱՄԱԿԸ

Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առանց հուզմունքի հնարավոր չէ ձեռնամուխ լինել այն հանգամանքների քննությանը, որոնք հիմք են այս բացառիկ նամակը գրելու համար:

Գրելու տարեթիվը համապատասխանում է մի ժամանակաշրջանի, երբ քրիստոնյաների մեջ դեռևս շատ էին նրանք, ովքեր ճանաչել և այցելել են Քրիստոսին: Հեղինակը բարեկամական ամուր կապեր է հաստատել առաջնակարգ առաքյալների և առաջին ժամվա բազմաթիվ աշակերտների հետ: Այս նամակը մեզ տալիս է ամենավաղ շրջանի քրիստոնեական Ավետարանի ճշգրիտ պատկերը: Մեր հավատքն, ուստի, չի տարբերվում Պողոսի և ոչ էլ առաջին աշակերտների հավատքից, նրանց, ովքեր Աստվածային Փրկչի շուրթերից լսեցին փրկության և հավիտենական կյանքի խոսքերը: Մեր ուսմունքը չի հիմնվում առասպելների և հմտորեն հյուսված այլ ստահող պատմությունների վրա: Քրիստոնեական մեր ամբողջ ուսմունքը վկայակոչում և հիմնվում է ամենամեծ ճշգրտությամբ ստուգման ենթակա պատմական կարևորագույն իրադարձությունների վրա:

Պողոսը Կորնթոսում է: Դա պետք է որ եղած լինի 57-58 թթ. ծննանը: Երեք տարի շարունակ, քարոզչական երրորդ ճանապարհորդության ընթացքում, նա ծավալում է բեղուն գործունեություն: Առաջինի ժամանակ նա այցելել էր Կիպրոս կղզի և Փոքր Ասիա: Երկրորդի ժամանակ կտրել-անցել էր Փոքր Ասիան ու վերադարձել Եվրոպա, որտեղ եկեղեցիներ է հիմնել Փիլիպպեում, Թեսաղոնիկեում ու Կորնթոսում: Այս վերջին եկեղեցուց նա կուղարկի իր երկու նամակները թեսաղոնիկեցիներին: Երրորդ ճանապարհորդության ժամանակ Պողոսը քարոզչական մեծ հաջողության է հասնում Եփեսոսում: Ավետարանն արդեն հայտարարվել և ընդունվել էր ողջ Հռոմեական Պրովինցիայում ու դրանից այն կողմ՝ Փոքր Ասիայում: Այստեղ, մայրաքաղաքից դուրս է նա գրում Գաղատացիներին ուղղված նամակը: Կորնթացիներին հասցեագրված առաջին նամակը նույնպես գրվել է այստեղ: Այժմ նա ծրագրում է այցելել Հռոմ: Մինչ այդ հարկ կլինի, որ մեկնի Երուսաղեմ՝ «սրբերին» հանձնելու Մակեդոնիայի ու Հունաստանի համայնքներում նրանց օգտին հանգամանակված նվիրատվությունը: Այս նպատակով նա թողնում է Եփեսոսը՝ մեկնելու ավելի Արևելք, մինչև Մակեդոնիա: Կորնթացիներին ուղղված երկրորդ նամակը կուղարկվի այստեղից: Այժմ նա ծրագրում է այցելել «ձանձրալի» եկեղեցին, ու երբ ավարտի այս առաքելությունը և գտնի, որ իր գործն ավարտին է հասցված, մտադիր է կրկին գնալ Արևմուտք՝ մի ճանապարհորդությամբ, որը, նրա կարծիքով, լի է վտանգներով, մասնավորապես՝ եթե վերադառնա Երուսաղեմ, և չի անտեսում Հռոմի քրիստոնյաներին այցելելու մեծ ցանկությունը: Ուստի, նա գրում է ահա այս նամակը, կայսերական մայրաքաղաքի աշակերտներին հղում է եղբայրական ուղերձ, տեղեկացնում նրանց իրենց հանդիպելու մտադրությունը՝ հաղորդելու Ավետարանից այն էականը, որ այլուր արդեն հայտարարել էր:

Միանգամայն բնական էր, որ առաքյալը նրանց ուղարկել է քրիստոնեական հավատքի

«համառոտագիր», եթե կարելի է այսպիսի հասարակ բառով որակել պարզ ու հզոր այս շարադրանքը՝ աստվածաշնչյան գրականության իսկական գլուխգործոցը: Հասցեատերը հեթանոսության հենց սրտում գտնվող եկեղեցին է: Բացի այդ՝ նա ցանկանում է Հռոմը դարձնել այլ առաքելությունների համար նախատեսված մեկնակետ և հասնել դարաշրջանի քաղաքակիրթ երկրի ծայրամասերը՝ Իսպանիա: Նա Հռոմը պետք է դարձներ այն կենտրոնը, որտեղից պիտի փայլատակեր առաքելական իր վկայությունը, եկեղեցիներ հիմնադրողի իր գործունեության մշտական օջախ, որտեղից նրանց պետք է հաղորդեր Փրկության Ավետարանը:

Հռոմը հանդիպումների մեծ կենտրոն է: Նրանք, ովքեր գալիս են ժամանակի ճանաչված բոլոր վայրերից, այստեղ տարածում են իրենց պաշտամունքներն ու կռապաշտությունները, բարոյական աղտոտությունները՝ աշխարհիկ մայրաքաղաքի արդեն իսկ ծանր անօրինականություններին ավելացնելով սեփականը: Հռոմը հեթանոսական աշխարհի հայելին է՝ իր թշվառություններով ու անհավատությամբ: Այն դիտվում է , հատկապես, իբրև աստվածային զայրույթի թիրախ: Առաքյալն, ուստի, շտապում է ուժով ու հասկանալի ձևով հայտարարել Փրկիչ Քրիստոսի Ավետիսը: Նամակի նպատակը քաղաքի քրիստոնյաներին քաջալերելն է, որպեսզի նրանք եռանդով վկայություն տան իրենց հավատքի մասին, քանզի հեթանոս աշխարհի ավետարանացունը մեծ մասամբ կախված է նրանց եռանդից ու ակտիվությունից:

Բ. ՀԵՂԻՆԱԿՆ ՈՒ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մենք չենք շոշափի նամակի հեղինակի ու վավերականության հարցը, մեր կարծիքով դա անհնաստ է, քանզի ոչ ոք կասկածի տակ չի առնում այն փաստը, որ Պողոս առաքյալն է դրա հեղինակը: Եթե անցյալ դարում մի քանի քննադատներ կասկած հայտնեցին նամակի վավերականության մասին, ապա «խոսքն ընդամենը սուբյեկտիվ ու կամայական համակարգումների մասին էր», - գրում են Sangy-ն ու Headlam-ը:

Գ. ԳՐԵԼՈՒ ՏԱՐԵԹԻՎՆ ՈՒ ՎԱՅՐԸ

Բոլոր մասնագետները միաձայն ընդունում են, որ նամակը գրվել է 57 թ., իսկ վայրը Աքայայում է՝ Կորնթոս քաղաքում: Պողոսն այստեղ էր քարոզչական իր երրորդ ճանապարհորդության ընթացքում: Գայոսը՝ նրան հյուրընկալողը, որի տունը եկեղեցու հավաքատեղին էր, այստեղ մկրտվել էր նրա կողմից: Երաստոսը, որն ավելացնում է իր ողջույնները, քաղաքի գանձապահն էր (տես՝ նաև Բ. Տիմոթեոսին 4:20), իսկ Փիրեն, ում վրա դրված էր նամակը տանելու պարտականությունը, Կորնթոսի երկու նավահանգիստներից մեկի՝ Կենքրայի եկեղեցու սպասավորը (16:1):

Դա հանդիսավոր պահ է առաքյալի կյանքում: Նրա միտքը խռովված է, երբ նայում է դեպի անցյալ՝ հեթանոսների մեջ, Հունաստանում ու Փոքր Ասիայում արդեն իրականացրած առաքելությանը: Նրա դեմ ծագել է ատելությամբ լի հակադրություն: Նրա առաքելական գործունեությունը մեկնաբանվում էր կեղծ ձևով (Բ. Կորնթ. և Գաղատ.): Չնայած դաժան թշնամություններին՝ նա կարող է հրճվել «իր Ավետարանով» տարած հաղթանակով: Այսուամենայնիվ, նա պետք է դիմակայի հրեական ուղղափառությանը, որը նրան հետապնդում է իր արտառոց գործունեության ողջ ընթացքում:

Հեթանոսների մեջ իրականացված առաքելությունը, եթե անգամ դա նրան հնարավորություն է տալիս պաղեստինցի հրեաների օգտին ֆոնդեր հավաքագրել, որոշ հակառա-

կորդների մեջ կասկած է առաջացնում եբրայերեն սուրբ գրվածքների նկատմամբ հավատարիմ լինելու վերաբերյալ: Արդ, աստվածաշնչյան նրա մարդասիրությունը, որ գալիս էր ավելանալու հռոմեական քաղաքացիությանը, կարծես դուր չէր գալիս ազգայնական, սուր բնույթ ստացած ու մոլեռանդ զգացմունքներ ունեցող համաքաղաքացիներին: Բայց ինչպես Արևմուտքը, այնպես էլ Արևելքը պարտավոր էին լսել Քրիստոսի Տիրակալության հայտարարությունը և տեղ գտնել նրա փրկչական գերագույն իշխանության ներքո:

Աստվածաշնչյան գրականության այս գլուխգործոցը գրվել է պայծառ մտքի, համակողմանի խելքի, հերոսական հոգու կողմից: Հաղթական շեշտադրումը գերիշխում է բանավիճային թեմաներում: Առաքյալի աչքին Աստուծու Թագավորությունն ունի համաշխարհային ընդգրկում, իսկ մարդկային բնույթը դիտվում ու վերլուծվում է տարողունակ կապերի շրջանակում:

Մենք արդեն նշել ենք, որ Կորնթոսը նամակը գրելու վայրն է, նամակ, որը նա գրել է Սիրիա մեկնելու նախօրեին: Նշված տարեթիվը (57 թ.) զուգահեռաբանում է ՆԵՐՈՆԻ անօրեն իշխանության սկզբի հետ:

Դ. ՀՈՄԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԱԿՈՒՆՔԸ

Հոմի եկեղեցու ակունքը միանգամայն անորոշ է: Արտահայտվել է երկու կարծիք, որոնցից և ոչ մեկը մեզ չի գոհացնում: Առաջինի համաձայն՝ հռոմեացի հրեաները Երուսաղեմի ուխտագնացների բազմության մեջ, Հոգեգալստյան օրը լսեցին Պետրոսի քարոզը և եղան Հոմի եկեղեցու հիմնադիրները:

Երկրորդը նրա ստեղծումը կապում է ս. Պետրոսի հետ: Համաձայն այս վարկածի՝ նա եղել է առաջին քարոզիչն ու եպիսկոպոսը: Եթե անգամ ընդունենք այն վարկածը, որ Պետրոս առաքյալը այցելել է Հոմ, ապա մի հարց պարզ է. նա չի եղել եկեղեցու հիմնադիրը: Իր նամակում Պողոսը ոչ միայն որևէ ակնարկ չի անում դրա առկայության մասին, այլև հայտարարում է, որ գնալով Հոմ՝ նա չէր ցանկանա կառուցել կողմնակի անձի կողմից դրված հիմքի վրա: Էլ ավելի անհավանական է այն, որ Հոգեգալստյանը ներկա հռոմեացի հրեաները ակտիվ մասնակցություն են ունեցել համայնքի կազմավորման գործում:

Երուսաղեմի ու Հոմի միջև կային հաղորդակցության լավ ճանապարհներ: Եթե Երուսաղեմում հաստատվեք ռազմական ամուր իշխանություն, ապա հրեաների՝ գործեր վարելու ոգին, ինչպես նաև նրանց կրոնը չէին հապաղի թափանցել կայսրության մայրաքաղաք: Այստեղ հրեաների հետքը երևում է բավականին վաղ՝ Ք. ա. երկրորդ դարին մոտ: Պոմպեոսի նվաճումը մ. թ. ա. 63 թ. ականա այստեղ բերեց այլ հրեաների՝ իբրև ստրուկներ կամ ազատ մարդիկ: Նրանք հիմնեցին ժողովարան և առանձնաթաղ, որն օգտվում էր առաջին կայսրերի պաշտպանությունից ու ողորմածությունից: Իրենց բարձր բարոյականության ու հոգևոր գրականության պատճառով հրեաները շուտով շահեցին նորադարձներ: Այսուամենայնիվ, Տիբերիոս ու Կալիգուլա կայսրերը նրանցից խլեցին կայսերական այն ողորմածությունը, որից օգտվում էին: Կլավդիոսի օրոք (մ. թ. 52 թ.) բազմաթիվ հրեաներ ժամանակավորապես աքսորվեցին, որոնց մեջ նաև Ակյուղասն ու Պրիսկիդան: Այս աքսորի պատճառը գուցե թե հրեա ազգաբնակչության մեջ Քրիստոսի քարոզի առաջ բերած հուզումները կամ անկարգություններն էին: Բայց Ներոնի օրոք հրեաները կրկին ձեռք բերեցին մայրաքաղաքում գրաված նախկին դիրքերը:

Անշուշտ, Հիսուսի, նրա առաքելության ու Չարչարանքների մասին նորությունները Հռոմ հասան բավականին վաղ: Արդ, այն ամենը, ինչ տեղի էր ունենում Երուսաղեմում, ոգևորում էր մայրաքաղաքի հրեաներին: Ո՛չ Հիսուս Նազովրեցու բացառիկ բնույթը, ո՛չ էլ տարսոնցի ոմն Սողոսի արտառոց գրույցը չէին կարող անտարբեր թողնել համայնքին: Կլավդիոսի օրոք հրեաների աքսորումը, թվում է, ցույց է տալիս, որ Ավետարանն այնտեղ ուժեղ դիմադրության է հանդիպել: Նախ՝ հրեաների, ապա՝ հռոմեացիների կողմից: Պողոսի՝ Հռոմ ժամանելու պատմությունը (Գործք 28) ակնարկ է այն մասին, որ նրան ընդունել են, ու որ նա այնտեղ գտել է հեթանոսական ծագում ունեցող եղբայրների: Նաև ենթադրել է տալիս, որ հրեական իշխանություններն անտեղյակ չէին «նոր աղանդ»-ի գոյությանը, որի մասին արդեն ամենուրեք խոսում էին, բայց իբրև պաշտոնական մարմին, նրանք հեռու մնացին և, հատուկեմտ բացառություններով, պահպանեցին այս դիրքորոշումը: Հռոմում, ինչպես այլուր, նորադարձ հեթանոսների համար Քրիստոսին դառնալն ավելի հեշտ էր, քան հրեաների: Վերջիններիս է Պողոսն ուղղում իր նամակը՝ հուսալով կամ կանխատեսելով բարյացակամ ընդունելություն, որին կարժանանա՝ հակառակ հրեաների սառը վերաբերմունքի:

Եկեղեցին, թվում է, կազմված է մեծ մասամբ նախկին հեթանոսներից: Հավանաբար, առաջին Հոգեգալուստից շատ տարիներ հետո են հեթանոս ծագում ունեցող հրեաներն իմացել, որ հավատքի նոր համայնքում կարող են զբաղեցնել նույն կարգը, ինչ հրեական կրոնից եկողները:

Հավանական է, որ եկեղեցին ստեղծվել է հեթանոս այլ կենտրոններից եկած թափառական քարոզիչների և կամ քրիստոնյա ճանապարհորդների միջոցով: Թե՛ մեկը, թե՛ մյուսներն, անկասկած, ընդգծում են ավետարանչական լուրի համաշխարհային բնույթը:

Այսուամենայնիվ, Եկեղեցին բաղկացած է նաև հրեական կրոնից հավատափոխ եղած մեծ թվով քրիստոնյաներից: Իբրև այդպիսին, այն սերտ կապերի մեջ է մայրաքաղաքի հրեական համայնքի հետ: Մասնագետներն այն գաղափարն են հայտնում, որ Եկեղեցին կազմված է եղել նախկինում հրեա նորադարձ հեթանոսներից: Անշուշտ, գրելով այս նամակը, Պողոսը նկատի ուներ հրեաներին (իր հայրենակիցներին) ու նրանց «ճակատագիրը»: Եթե մենք մտքում չպահեինք նրանց նկատմամբ ցուցաբերած առանձնահատուկ հետաքրքրությունը, ոչինչ չէինք հասկանա նրա ամբողջ լուրից:

Այլ Եկեղեցիներ էլ, օրինակ՝ Գաղատիայինը, գալթակղվել էին հրեականացնող քարոզիչներով: Կայսերական մայրաքաղաքի Եկեղեցին, որը, ինչպես հավաստեցինք, կազմված է հատկապես հեթանոսներից, առավելապես ձգտում էր անտեսել հրեաներին և, հետևապես, այս կերպ մոռանալ հոգևոր այն առավելությունները, որ առանձին այս ժողովուրդը ձեռք էր բերել Աստծուն իր պատկանելությամբ: Հռոմի քրիստոնյաները, թվում է, ավելի շուտ անտարբեր են ընտրյալ նախկին ժողովրդի պատմական ճակատագրի հանդեպ:

Իրենց կողմից, քրիստոնյա դարձած հրեաները դեռևս պարծենում էին անցած բացառիկ իրավունքներով: Նրանք սխալ համոզվածություն ունեն մովսիսական օրենքի առումով: Պողոսն իր նամակը գրում է ոչ միայն Ավետարանի բովանդակությունը շարադրելու, այլև փրկչության նոր տնտեսության մեջ հրեաների ու հեթանոսների կապերի խնդիրը լուծելու մտադրությամբ: Թե՛ մեկը, թե՛ մյուսները կարիք ունեն Աստծու ողորմածության: Նրանք կազմում են ազգային ու հոգևոր նախկին նախախնամություններից ազատագրված մի

մարմին և ապրում են ազգերից, ժողովուրդներից, ցեղերից ու բազմազան լեզուներից կազմված եկեղեցու մանրատիպով ու օրինակով:

Մի քանի բառ Պողոսի ու Պետրոսի հարաբերությունների մասին:

Մենք արդեն նշել ենք, որ Պողոս առաքյալը ոչ մի մասնակցություն չէր ցուցաբերել հռոմեական եկեղեցու հիմնադրման աշխատանքներին: Այսուհանդերձ, տեղյակ է նրա գոյության փաստին: Ավանդությունը, որի համաձայն Պետրոսն է եղել Հռոմի եկեղեցու հիմնադիրը, անհամատեղելի է մեր տրամադրության տակ եղած պատմական վկայությունների հետ: Եթե այդպես լիներ, Պողոսն իր նամակում անպայմանորեն կհիշատակեր նրա մասին և կամ կհղեր առանձնահատուկ ողջույններ: Չկա Պողոս առաքյալի կողմից եկեղեցու հիմնադրման փաստը հաստատող ապացույց: Մի բան հավաստի է. հիմքը դրվել էր, Քրիստոսը՝ հայտարարվել, կան եկեղեցիներ (տների համայնքներ), բայց, ըստ էության, չկա միասնական եկեղեցի: Առաքելական միակ հիմքը, որի մասին տվյալ դեպքում կարելի է խոսել, դրված է մեր նամակով: Թեև Քրիստոսի նկատմամբ հավատն արդեն առկա է Հռոմում, և որ այն նախորդել է Պողոսի այցելությանը, հրեաներն ու հեթանոսները դեռևս չէին կազմում միասնական մարմին՝ մինչև մեծ քարոզչի առաքելական ու աստվածաբանական տաղանդը լիովին չարտահայտեց միաբանության իրողությունը:

Լինելով Կայսրության հեղինակավոր մայրաքաղաք՝ Հռոմը նաև այն կենտրոնն էր, դեպի ուր կայսրության բոլոր կետերից հոսում էր հարստությունը: «Մեր ուղերձը գրելու ժամանակ դեռևս Ներոնի իշխանության երանելի դարաշրջանն էր, կայսր, որի խորհրդատուն տվյալ ժամանակ Սենեկան էր: Ադմինիստրացիան բարի է: Բնակչության թիվը մոտ մեկ միլիոն է՝ պլեբեյներ, բայց նաև՝ ազատագրվածներ, ովքեր ապրում են նախախնամություն – Պետության կողմից արված շռայլ բաշխումներով: Այստեղ վխտում է նաև ստրուկների մի ստվար բազմություն: Մայրաքաղաքի կոսմոպոլիտ բնակչությունը Սենեկան նկարագրում է թունոտ բառերով: Քաղաքը գերբնակեցված է. դա ընդարձակ կայսրության բոլոր անկյուններից ժամանող արկածախնդիր մարդկանց հոսք է, մարդիկ, ովքեր առաջնորդվում են պետական պարտականությունների հավակնությամբ, հեշտ վայելքների ծարավով, հարստություն դիզելու ցանկությամբ: Չգիտեմ, թե նշանավոր մտածողը ինչ կարգի մեջ կարող էր դասել քրիստոնյաներին: Բայց վերջիններս հավաքվում են ստորակարգ թաղամասերում, որտեղ բնակվում են բոլոր գավառներից այստեղ հոսող օտարերկրացիներ»¹: Քաղաքում հրեաները կազմում էին առանձնակիորեն համասեռ ու հզոր խումբ. պեղումները լույս աշխարհ են հանել առաջին դարում արդեն իսկ գոյություն ունեցող բազմաթիվ ժողովարաններ ու գերեզմանոցներ:

Ե. ԱՌԻՔՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

Ինչպես առաքյալի մյուս թղթերում, այս դեպքում ևս խոսքն իսկական նամակի մասին է, այլ ոչ թե ուղերձային տրակտատի: Իր բացառիկ բնույթի համար նամակը պարտական է իրադրության հանդիսավորությանն ու մեծությանը, իրավիճակ, որով թելադրված է որքան նամակը շարադրելը, նույնքան էլ նրանում շոշափվող թեման և թեմաները: Երուսա-

¹ L. Cerfaux.

դեմն ու Ջոնը զբաղեցնում են ամբողջ մտածողությունը: Աստծու Փառքից զրկված հրեաներն ու հեթանոսները կարիք ունեն Փրկչի: Այս մտածողությունը հավատքի այրող հայացքի առաջ է բերում Քրիստոսի պատկերը, մի բան, որ նախկինում գուցե երբևէ չի եղել: Պողոսը կրկին տեսնում է սեփական հոգևոր փորձն ու ազատագրումը. եբրայեցու որդի եբրայեցի, փարիսեցու որդի փարիսեցի, Ջոնի քաղաքացի, տարսոնցի երեխա. Տարսոնը մշակույթի կոսմոպոլիտ ու հեղինակավոր մեկ այլ կենտրոն էր:

Դառնալով աշխարհաքաղաքացի՝ նա պետք է վերադառնա Ջոն: Այստեղ նույնպես, հրեական ժողովարանում, օրենքը պետք է հրաժարվի իր միակողմանիությունից և տեղը զիջի Քրիստոսով հայտնված աստվածային ողորմածության փրկիչ Ավետարանին (մի բան, որը տեղի էր ունեցել սեփական կյանքում):

Նա հիմնականում հոգ է տանում ներկայանալու հռոմեացի ընթերցողներին՝ մի Եկեղեցու անդամներին, որին չի ճանաչում: Նրանց մեջ առաքյալն ունի բազմաթիվ բարեկամներ. լսել է նրանց ու այս ճանապարհին հանդիպած դժվարությունների, հնազանդության, նաև բաժանությունների, նրանց բնորոշ զայթակողությունների մասին: Հավանական է նաև, որ Պողոսի ընթերցողները վատ տեղեկություններ ստացած լինեն նրա անձի, աստվածաբանության ու առաքելությունների մասին: Առաքյալը տեղեկացնում է, որ երկար չի մնա նրանց հետ և որ, պարզապես, կցանկանար Ջոնը դարձնել դեպի Արևմտյան Եվրոպայի ծայրագույն կետը տանող մի նոր ռազմավարության ու առաջընթացի մեկնակետ, քանզի Արևելքում իր գործը կարող է ավարտված համարել: Նա, այսուամենայնիվ, հույս ունի հիմնել, արմատավորել նրանց Քրիստոսի շռայլ օրհնության մեջ:

Նա իր առջև դրել է նաև ավելի հավակնոտ մի ուրիշ նպատակ: Վառ երևակայությամբ՝ կանխավ տեսնում է իր ժամանումը Ջոն: Գիտե, որ վաղ թե ուշ, ամեն ինչ ձգտում է դեպի մայրաքաղաք: Այստեղ կանխատեսում է բացասական ազդեցություններ, ինչպես Եկեղեցու ներսում, այնպես էլ նրանից դուրս, ազդեցություններ, որոնց դեմ պայքարում է:

Բայց այստեղ քրիստոնյաներն ի վիճակի են փոխադարձաբար խրատել միմյանց (15:14): Իբրև Քրիստոսի սպասավոր՝ նա ընդամենը փորձում է հեթանոսներին հիշեցնել այն, ինչը նրանք արդեն մասամբ ստացել էին (15:15): Թեև նրանց դեռևս օտար էր, ու նրանք հիմնականում ունեին հեթանոսական ծագում, կուզենար օգտակար լինել հեթանոսների առաքյալի իր փորձով: Չլինելով անձնական գովք և կամ բանավիճային ջատագովություն՝ նրա նամակն, այսպիսով, ունի առաքելական բնույթ և ի վիճակի է պատասխանել հռոմեացի ընթերցողների առանձնահատուկ կարիքներին: Արդ, առաքյալի բերանից ու գրչից հնարավոր էր սպասել միայն Ավետարանի խոսք: Ջոնեացիներին հասցեագրված ամբողջ ուղերձն էլ հենց ամենամաքուր Ավետարանի հայտարարում է.

«Պողոսը գնում է հատկապես բացատրելու իր Ավետարանը՝ Քրիստոսի Ավետիսը ներկայացնելու իր ձևը: Հավատափոխությունից սկսած՝ նա բացառիկ հստակությամբ նկատել է Քրիստոսի՝ փրկչության գործում խաղացած եզակի դերը: Առաքելական գործունեության նպատակով անձնապես կանչվելով հեթանոսների մոտ, առաջին այս ներընթերցողության մեջ նա գտել է Սուրբ Գրքի և հրեական օրենքի կիրառությունների հանդեպ իր դիրքորոշման կանոնը: Հանդիպելով հրեաների դիմադրությանը իր առաքելության ընթացքում, մինչև իսկ հրեա քրիստոնյաների հակադրությանը՝ նրա մտքերն առավելապես ուղղվել են Քրիստոսի հավատքով փրկության գլխավոր խնդրին: Գաղատացի-

Ներքին ուղղված նամակը նրան արդեն իսկ հնարավորություն է ընձեռել պարզորոշ ձևով շարադրելու իր դրույթը, միայն թե՝ ավելի շուտ բանավիճային մթնոլորտում: Այժմ նա դրան վերադառնում է ավելի հանգիստ ու առավել հասուն ձևով: Այս դիտանկյունից ուսումնասիրելով միայն կարելի է տեսնել, որ Հռոմեացիներին ուղղված նամակը սերտորեն կապվում է Պողոսի առաքելական գործունեությանը: Նրա հասցեատերերը քիչ են պայմանավորում նամակի բովանդակությունն ու ձևը: Դա, առավել ևս, Պողոսի կողմից մշակված աստվածաբանական ավարտուն համադրություն չէ առաքելական գործունեության քսան տարիների ավարտին: Նա առիթը համարում է պատեհ՝ լայնորեն շարադրելով մի թեմա, որի շուրջ երկար է խորհել. Աստծու փրկությունը, որ Ավետարանի քարոզով բերվել է նախ հրեաներին, այնուհետև հեթանոսներին, աստվածային ուժ, որ անհրաժեշտ է բոլորին ու ձրի է բոլորի համար»:

2. ՀԱՍՑԵԱՏԵՐԵՐԸ

Բոլոր նրանք, ովքեր Հռոմում են, այսինքն՝ նրա Եկեղեցում, նամակի հասցեատերերն են: Նրանք սիրված են, կանչված են սրբանալու, պատկանելու Հիսուս Քրիստոսին: Խոսքն ինչպես հրեական, այնպես էլ հեթանոսական ծագում ունեցող քրիստոնյաների մասին է: Այսուամենայնիվ, ուզում ենք նշել, որ որոշ հատվածներ առավելապես վերաբերում են հեթանոսական ծագում ունեցող քրիստոնյաներին (հատկապես 9-11 գլուխները):

Ողջույնների արժանացածներից ոմանք ունեն հրեական անուններ, սակայն մեծամասնությունը կրում է հեթանոսական ծագմամբ անուններ: Նշենք նաև, որ ի հակադրություն Թեսաղոնիկեցիներին ուղղված երկու նամակների, ինչպես նաև Գաղատացիներին ու Կորնթացիներին հասցեագրված նամակների, այս անձինք միասին չեն անվանվում «Եկեղեցի»: 16:1-5 հատվածում Եկեղեցին, որը Պրիսկիլայի ու Ակյուղասի մոտ է, ընդգծված է: Շատ հավանական է, որ Հռոմում եղել են հանդիպման բազմաթիվ վայրեր: Ամբողջությամբ վերցրած՝ Հռոմի քրիստոնյաները ավելի շուտ ճկուն մարմին են, որի կրոնը, թվում է, դեռևս Հին Կտակարանին է, և ովքեր, իբրև քրիստոնյաներ, այժմ ձգտում են ճշգրտորեն հարմարեցնել ծիսակարգային, բարոյական ու հոգևոր իրենց հարաբերությունները:

Է. ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԼԵԶՈՒՆ, ՈՃԸ, ԳՐԱԿԱՆ ՁԵՎԸ

«Ջարմանալի ոչինչ չկա նրանում, որ Հռոմից ուղարկված այս նամակը գրվել է հունարենով: Բնակչության լայն շերտեր խոսում են այս լեզվով: Պողոսի լեզուն այստեղ գործնականորեն ձևավորված մտքի լեզուն է՝ թեև առանց գրական հավակնության. ողջ ուղերձը գրված է արժանավայել տոնով՝ խուսափելով մտերմիկ բառերից: Ոճը կարող է բնութագրվել այսպես. եռանդ ու կենսունակություն, վարպետություն ու պերճախոսության բոց, արագ ու թունոտ լեզու: Թվում է, թե մեր առջև մարտիկ է, որն աչքերը հառել է իր հակառակորդներին: Անկապակցության բազմաթիվ դեպքեր երբեմն հիշեցնում են, որ Պողոսը թելադրում էր. ավելի հաճախ դրանք Պողոսի խառնվածքի արտահայտությունն են, նրա, ում արագ միտքը մշտապես շարժման մեջ է: Այստեղ հաճախ առկա է պամֆլետը՝ վիճաբանության եղա-

նակով որևէ ուսմունք ներկայացնելու մեթոդը, որը հանրամատչելի է հատկապես ստոիկներին: Հիշյալ հատվածներում պետք է փնտրել Պողոսին առավելապես հարազատ գրական միջոցներ, քան ակնարկներ նրա որոշակի կյանքի մասին: Այս փաստը ծնունդ է տալիս Պողոսի՝ հելլենիստական, իրանական ու սեմական աշխարհի հասկացություններից ու ավանդույթներից կախված լինելու խնդրին: Սակայն միշտ էլ դժվար կլինի վեր հանել ճշգրիտ բաղադրիչները, որովհետև, ընդհանրապես, կանգնած ենք ամբողջ Մերձավոր Արևելքի համար ընդհանուր ունեցվածք դարձած մշակութային փաստերի առջև: Ամեն դեպքում, ոճն անհատական է: Տերտիոսը՝ նրա քարտուղարը, պետք է որ ազդած չլինի ո՛չ լեզվի, ո՛չ էլ կառուցվածքի վրա՝ հակառակ մի քննադատության ենթադրությունների: Շարադրանքի զարգացման ընթացքում նամակը ներկայացնում է գրական ձևերի մեծ բազմազանություն. պատարագի ոճ ունեցող հատվածներ, պամֆլետի ոճով բանավեճ, աստվածաշնչյան բնագրերին հիմնված ռաբբիական դրսևորումներ, օրհներգային հատվածներ: Ընդհանուր առմամբ, իշխողը քարոզչի աստվածաբանական խոսքն է՝ փակագծերով ու հորդորներով միախառնված: Պողոսի հունարեն նախադասությունների մեջ, հստակեցված ու հանգավորված, զգացվում է սեմական բանավոր ոճը»:

Նամակին նվիրված մեկնաբանության իր նախաբանում Լյուբերը գրում է. «Այս նամակը Նոր Կտակարանի ամենագլխավոր գիրքն է՝ ամենամաքուր Ավետարանը: Այն ոչ միայն արժանի է ամեն քրիստոնյայի կողմից բառ առ բառ իմացվելու, այլև դառնալու նրա ամենօրյա խորհրդածության առարկան, հոգու հանապազօրյա հացը: Ինչքան ավելի ես զբաղվում նրանով, այնքան ավելի թանկարժեք է դառնում»¹:

Եթե Լյուբերն այդքան բարձր է գնահատում ուղերձը, ապա բանն այն է, որ այնտեղ հայտնաբերել է հավատքով փրկվելու ազատագրող լուրը: Ռեֆորմացիան ծնունդ է առել այս հայտնագործությունից:

Հռոմեացիներին ուղղված նամակի իր մեկնության ներածության մեջ Ֆրեդերիկ Գոդեն գրում է. «Հավանական է, որ Եկեղեցու մեջ հոգևոր ամեն մի մեծ նորոգություն մշտապես, իբրև հետևանք ու պատճառ, առնչվում է այս գրվածքի ավելի խորունկ մտքին...»:

Եթե այս նամակը նման ազդեցություն է գործել քրիստոնեական մտքի պատմության վրա, ապա այն պատճառով, որ մեզ առաջարկում է Ավետարանի համակարգված ու ամենաավարտուն շարադրանք: Առաքյալն այստեղ միաժամանակ շոշափում է մեղքի ու ողորմածության, արդարացման, սրբագործման ու նախախնամության մեծ առեղծվածները: Պետք է խոստովանել, որ Հռոմեացիներին ուղղված նամակը դժվար է հասկանալ: Դա բացատրվում է որքան թեմայով, նույնքան էլ առաքյալի համարձակ, իսկ երբեմն էլ շփոթեցնող դիալեկտիկայով: Շատ քրիստոնյաների համար այն մնում է իբրև փակ նամակ, որի վերձանունից հրաժարվում և դրանով իսկ, իրենց զրկում են քրիստոնեական ճշմարտությունների խոր հասկացությունից:

«Դժվարը մընելիության պատճառով նամակը, առավել, քան աստվածաշնչյան մեկ ուրիշ գրվածք, կարիք է զգում բացահայտվելու»²:

Սա Պողոսի նամակներից, ինչպես նաև Նոր Կտակարանի գրքերից ամենաերկարն է. հունարեն բնագրում պարունակում է մոտ 7100 բառ: Եթե հիշենք, որ Ցիցերոնի ամենաեր-

¹ Մեջբերված Gaston Deluz-ի մոտ:

² Gaston Deluz.

կար նամակը բաղկացած էր 4500 բառից, ապա կհասկանանք, որ այսքան երկար նամակ գրելը իսկապես բացառիկ ձեռնարկում էր տվյալ դարաշրջանի համար: Այն փաստը, որ նամակը տեղ է գրավել առաքյալի մյուս նամակներից առաջ, պարտական է հենց երկարությանը և ոչ մի կապ չունի գրվելու տարեթվի հետ: Կորնթացիներին ուղղված առաջին նամակը բովանդակում է 6800 բառ, երկրորդը՝ 4600, Գաղատացիներին հասցեագրված նամակը՝ 2300, Եփեսացիներինը՝ 2400, Փիլիպպեցիներինը՝ 1700, Կողոսացիներինը՝ 1760, Թեսաղոնիկեցիներին հղված առաջին նամակը՝ 1550, իսկ երկրորդը՝ 850 բառ:

Պատրաստվելով վերադառնալ Երուսաղեմ՝ առաքյալն աշակերտներին խնդրում է աղոթել իր համար՝ նախքան այս վտանգավոր ճանապարհորդությանը ձեռնամուխ լինելը: Տողերի ենթատեքստում կարելի է նաև կարդալ, որ նրանց խնդրում է սերտ կապեր պահպանել ամենահին Եկեղեցու՝ Երուսաղեմի Եկեղեցու հետ, որը մշտապես իր աչքի առջև է: Նա չի ուզում կապերը խզել երկրագնդի ԿԵՆՏՐՈՆԻ հետ, այն օջախի, որտեղից մեկնել է փրկությունը տարածելու աշխարհում, քանի որ կապը զարգացել է փրկչության ողջ պատմության ընթացքում: Նա հուսով էր, որ իր հայրենակիցները բարի նախանձով կնախանձեին կենդանի Աստծուն դարձած հեթանոսներին, և որ նրանք նույնպես կդառնային իրենց Մեսիա Չիսուսին:

Այսուհանդերձ, նա իր հայացքն ուղղում է նաև դեպի Արևմուտք: Կապեր պետք է պահպանվեին ոչ միայն Երուսաղեմի հետ, այլև Ավետարանը պետք է հայտարարվեր ամբողջ աշխարհում՝ նախքան Երուսաղեմի դատապարտումը (Մատթեոս 24:14):

Նա իր ընթերցողներին մասնակից է դարձնում հրեաների ու բոլոր նրանց հետ ունեցած մշտական վեճերին, ովքեր տարածում են ողորմածության Ավետարանին անհամատեղելի վարդապետություն: Այս պատճառով էլ նա զինում է Հռոմի Եկեղեցուն, ինչպես վարվել է ուրիշ, հեթանոսական ծագում ունեցող Եկեղեցիների հետ՝ պայքարելու հանուն մաքուր Ավետարանի պաշտպանության և չկործանվելու սփյուռքի հրեաների մեջ:

Օգտվելով հիմնավոր մեկնաբանությունից՝ նա իր զենքերն օգտագործում է՝ արծագանքելու աղավաղված Սուրբ Գրքի կանչին»¹:

Ը. ԼՈՒՐԸ

Բացառության կարգով մենք կիրառվենք, անգամ հիմնական գծերով, ներկայացնել Հռոմեացիներին ուղղված նամակի լուրը: Փոքրածավալ այս ներածության մեջ հնարավոր է, որ աղքատանա ու ճգնվի այն, ինչ էությանը միանում կամ ձգտում է միանալ աստվածային Ողորմածության բարձրությանը: Ֆրանսերենում անգնահատելի ծառայություններ կմատուցեն Ֆրեդերիկ Գոդեի (գուցե չափից դուրս տեխնիկական) և հատկապես ժան Կալվինի մեկնաբանությունները. վերջինս ավետարանչական ու հովվական աստվածաբանության նմուշօրինակն է: Նամակի բովանդակության վերլուծությունը ընթերցողին հնարավորություն կտա ըմբռնել այս լուրի էությունը: Նրան, ով ցանկանում է անհատապես ուսումնասիրել նամակը, առաջարկում ենք հետևել այս նախագծին ու, այսպիսով, խորացնել այն թեմաների իմացությունը, որոնք առկա են նամակում.

- Հին Կտակարանի կիրառությունն ու մեկնաբանությունը

¹ Stu' C. Vanderwaal, Search the Scriptures, vol. 8, Romans.

- Նամակի կապը Քրիստոսի վարդապետության հետ
 - Աշխարհի իսկական կարիքները
 - Այս կարիքին պատասխանելու համար անհրաժեշտ օրենքի անբավարարությունը
 - Փրկչության նոր ճանապարհի անհրաժեշտությունը
 - Քրիստոսով հայտնված փրկությունը
 - Նոր ճշմարտություն, նոր կյանք՝ Հոգով
 - Կապը Աստծու, Քրիստոսի, Հոգու, հասարակության և սեփական անձի հետ:
- Այս ենթավերնագիրը եզրափակենք՝ Կալվինի հետ մեկտեղ ընդգծելով նամակի գործնական անսահման արժեքը. «Այն բացում է Սուրբ Գրքի բոլոր գանձերի դուռը»:
- Հայդելբերգի Կատախիզիսի երեք մասերը՝ Թշվառություն, Փրկչություն և Երախտագիտություն, ներշնչվել են Պողոսի՝ Հռոմեացիներին ուղղված նամակի բովանդակությունից:

Թ. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

1. Ներածություն (1:1-17)

Հեղինակն իրեն անվանում է Պողոս՝ Հիսուս Քրիստոսի ծառա (բոլոր մարդիկ ծառաներ են, կամ, ինչպես հավաստում է հունարեն բնագիրը՝ Աստծու և կամ Սատանայի ստրուկներ), որ կանչված է դառնալու ԱՌԱՔՅԱԼ Փրկչի՝ Տեր Հիսուս Քրիստոսի, Աստծու՝ մարմնացած ու մեռյալներից հարություն առած Որդու անձնական ծառայության մեջ:

Նա իր նամակը հղում է հռոմեական Եկեղեցու անդամներին, որոնք՝

1. Քրիստոսի կողմից կանչվել են աշխարհից դուրս՝ դառնալու փրկչության ծառանգորդները:

2. Կանչվել են սրբանալու, այսինքն՝ ապրելու անմեղսունակ կյանքով Աստծու օրհնությամբ:

3. Համընդհանուր ճանաչում ունեն իրենց ամուրի հավատքի համար, հանուն որի Պողոսը կատարում է ողորմածության գործեր:

4. Նա տենչում է անձամբ ծանոթանալ նրանց հետ՝ քարոզելու և հավատքի մեջ քաջալերելու համար:

Ներածության այս բաժինն առաքյալը եզրափակում է քարոզչական եռակի համոզմունքով.

ա) Մենք ուզում ենք բոլոր մարդկանց բերել դեպի Ավետարան:

բ) Աստծու զորության Ավետարանը՝ փրկչության համար:

գ) Ավետարանը հայտնում է Աստծու՝ միայն հավատքով ընկալվող Արդարությունը:

2. Փրկության համընդհանուր կարիքը (1:18-3:21)

Այստեղ գլխավոր միտքն այն է, որ բոլոր մարդիկ, առանց ռասայական, ազգային խտրականության կամ մաշկի գույնի, Աստծու աչքին մեղավորներ են: Չկա մեկը, որը մեղք չգործի (Բ. Մնացորդաց 6:36). սա է Աստվածաշնչի դատաստանը: Պողոսն աստվածաբանական իր միտքը զարգացնում է այս տողում՝ ապացուցելով, որ բոլոր մարդիկ անհուսալիորեն կորած են և իրենց փրկությունը կարող են գտնել միայն աստվածային Արդարության

Ավետարանով: Բոլոր մարդիկ զգում են նրա կարիքը:

Ա) Հեթանոսները (1:18-32, 2:14-15)

Իր բարությանը Աստված մոռացության չի մատնում հեթանոս աշխարհը: Նա հեթանոսներին տվել է.

1. Բնության կամ արարման լույսը, որը մենք անվանում ենք Ընդհանուր Հայտնություն:

2. Խղճի ծայն:

Նրանք, սակայն, իրենց դրսևորեցին անշնորհակալ ձևով. ձգտում են ապրել առանց Աստծու (1:28), հրաժարվում են լսել իրենց խղճի ծայնը: Ահա թե ինչու է Աստված նրանց մատնել անօրինության ու օտարման: Հեթանոսներն անօրեն են և անհուսալիորեն կարիք են զգում Աստծուց եկող արդարության, որը կարող են ձեռք բերել միայն հավատքով:

Բ) Հրեաները, Աստծու ընտրյալ ժողովուրդ լինելով, ևս կարիք ունեն փրկության (2:1-3 – 3:20):

Նրանք եղել են Աստծու շնորհներից բացառիկ ձևով օգտվողները: Աստվածաշունչը՝ Աստծու հատուկ Հայտնությունը, տրվել էր նրանց, ինչպես նաև Ողորմածության Ուխտի խորհուրդը՝ թլփատությունը: Մինչդեռ նրանք իրենց անշնորհակալ ձևով պահեցին նրա հանդեպ. գործեցին ծիսական ձևապաշտության (կապվեցին իրենց կրոնի արտաքին ձևերի պարզ հայեցողությանը) և կեղծավորության (չկիրառեցին այն, ինչ քարոզում էին) մեղքը: Այսպիսով, նրանք մատնեցին իրենց արտոնություններն ու դարձան ինքնարդարացողներ՝ երևակայելով, թե պահպանում են Օրենքը: Հետևաբար, նրանք ևս կարիք ունեն Աստծու Արդարությանը, որը ձեռք է բերվում միայն հավատքով:

3. Արդարություն – հավատքի բնույթը (3:21-31)

Աստվածաշնչյան բնագրերին հենվելով ու ապացուցելով մարդկային ցեղի համակողմանի մեղավորությունն ու Արդարության համընդհանուր կարիքը, Պողոսը նկարագրում է այդ Արդարությունը:

Ա) Այն տրվում է Աստծու կողմից և հնարավոր է դառնում Քրիստոսի քավիչ մահով: Աստված քավում է մեր մեղքերը Քրիստոսի արյամբ: Նրա Արդարությունն իր ողորմածության շնորհն է:

Բ) Այն կարող է ձեռք բերվել Քրիստոսի հանդեպ հավատով: Այս պայմանը կիրառվում է բոլորի նկատմամբ: «Բոլոր նրանք, ովքեր հավատում են», ձեռք կբերեն այդ Արդարությունը: Քանի որ հավատքը նույնպես ողորմածության շնորհն է, ապա մարդը ոչ մի հիմք չունի պարծենալու հոգևոր տեսանկյունից:

4. Արդարության աստվածաշնչյան հիմքը

3:21 տողում Պողոսը հայտարարում է, որ հավատքն ուսուցանվում է Օրենքում և Հին Կտակարանի մարգարեների վկայություններում, մի բան, որն ապացուցում է 4-րդ գլխում: Նա հիշում է Հին Կտակարանի ամբողջ պատմության հրաշալի կերպարի՝ Աբրահամի օրինակը: Աբրահամն այնքան մեծ նշանակություն ունի փրկչության պատմության մեջ, որ Աստված անվանվում է Աբրահամի Աստված: Ծեր նահապետը արդարացվեց ոչ թե իր գործերով, այլ Աստծու գործերի նկատմամբ հավատքով: Դավիթը նույնպես ընդունում է այս փաս-

տը Սաղմոս 32-ում: Աբրահամն անվանվում է իսկական հավատացյալների Չայր: Արդարացվելով, թեև դեռ թլփատված չէր, նա դարձավ հավատափոխ բոլոր հեթանոսների հայրը, նրանց, ում շարքերում նաև ինքն էր: Թլփատությունը տեղի ունեցավ հավատքի ակտից հետո: Թլփատվելով՝ նա դարձավ հրեաների հոգևոր Չայր-Նախնին ու նրանց մարմնական նախահայրը: Չետևաբար, նրա հավատքը բոլորիս համար կարող է ծառայել իբրև նմուշօրինակ: Նման հավատքի համար մենք, մեր հերթին, ձեռք կբերենք Աստծու Արդարությունը:

5. Արդարության երանելի հետևանքները (5:1-8:39)

Բոլոր այս հետևանքները կապված են Քրիստոսի հետ: Նշենք, թե որքան հաճախ է Քրիստոսը հիշատակված, և թե այս ամբողջ բաժինն ինչպես է վերջանում. «Չիսուս Քրիստոսը մեր Տերն է»:

Ա) Չոգևոր հետևանքները. գլուխ 5

1. Խաղաղությունն Աստծու հետ և թողություն ստացած մեղքերը:

2. Ուրախությունը փառքի հույսի մեջ՝ ի հեճուկս նեղությունների, քանի որ քրիստոնեական առաքիլություններն ակնհայտ են:

3. Փրկությունն ու կյանքը Քրիստոսի մեջ: Մահը Ադամի մեղքով թափանցում է աշխարհ, սակայն նոր կյանքը լցվում է Քրիստոսի միջոցով (մշենք, որ 15-17 տողերում հինգ անգամ այս կյանքը համարվում է պարզև):

Բ) Բարոյական հետևանքները. գլուխ 6, 7, 8.

1. Մեղքի սկզբունքը հաղթահարված է, քանի որ՝

ա) մենք հարություն ենք առել Քրիստոսով նոր կյանքում.

բ) մենք այլևս ոչ թե մեղքի, այլ արդարության ծառաներն ենք:

2. Մենք կարող ենք պահպանել Աստծու օրենքը:

3. Մեղքի սովորությունները մնում են, բայց դրանք հաղթահարվում են Քրիստոսի կողմից:

4. Մենք կարող ենք ապրել՝ լցված Չոգով և նրա կողմից առաջնորդված: Չոգու շնորհով մենք ընդունվել ենք իբրև Աստծու զավակներ և հավիտյանս հավիտենից համաժառանգորդներն ենք Չիսուսի՝ Աստծու Որդու (նա Աստծու որդեգրած զավակը չէ): Եթե մենք մասնակցենք նրա տառապանքներին, կմասնակցենք նաև նրա փառքին: Մեզ ոչինչ չի բաժանում Աստծու սիրուց:

6. Աստծու արդարությունն ու հրեաների ճակատագիրը (9-11)

Պողոսը սիրում է իր հայրենակիցներին: Սույն բաժնում նա բացատրում է, թե նրանց մեծ մասն ինչու է կորած, մինչդեռ հեթանոսներն արժանանում են փրկության:

Ա) Նրանց ներկա մերժումն արդարացված է: Աստված չի գործում կամայականորեն, երբ դատապարտում է հրեաներին: Ի վերջո՝ նա խոստումներ է տվել ոչ թե մարմնական Իսրայելին, այլ նրանց, ովքեր հավատում են նրա Խոսքին: Բացի այդ՝ Աստված գերիշխան է: Նա կարող է փրկել կամ մերժել ում ուզում է: Եթե դա ձեզ թվում է անարդարացի, ապա հիշենք, որ ոչ մի արարած իրավունք չունի քննադատել իրեն Արարողին: Բայց նա անմիջապես ավելացնում է. հիշեք նաև, որ հրեաներին մերժելն ունի բարերար նպատակ, այն է՝

կիրառել, տարածել փրկությունը հեթանոսների մեջ:

Բ) Ո՞րն է նրանց մերժելու իրական պատճառը: Պատասխանատվությունը դրվում է նրանց վրա, քանի որ համառել են իրենց անհավատության մեջ, փորձել արդարության հասնել ուղղահավատորեն հետևելով Օրենքին, համակերպվելով առանց աստվածային ողորմածության: Այսպիսով, ոչ մի ինքն իրեն արդարացնող մարդ չի օգտվի փրկությունից:

Գ) Մերժման սահմանների մասին: Մերժումը վերջնական չէ: Բոլոր հրեաները չէ, որ մերժված են: Իրոք, բազմաթիվ հրեաներ, որոնց մեջ՝ նաև Պողոսը, օգտվում են միայն ողորմածությամբ փրկությունից: Տարիների ընթացքում այլ հրեաներ ևս կմտնեն Թագավորություն: Այս հայտարարությունը պետք է, որ մխիթարեր քրիստոնյա հրեաներին: Բայց հեթանոսները թող չպարծենան ներկայիս իրենց փրկությամբ: Նրանք պետք է փառք տան Աստծուն:

7. Արդարությունը մղում է վարել առաքիևի կյանք (12:1-15:34)

Սովորության համաձայն՝ ուսմունքը վարպետորեն ներկայացնելուց հետո Պողոսը ձեռնամուխ է լինում նամակի գործնական կամ բարոյական մասին: Միայն հավատքով արդարացման վերաբերյալ ուսմունքը կկիրառվի աշակերտի կյանքում:

Ա) Արդարություն Աստծու հանդեպ, թլփատություն և սուրբ կյանք (12:1-2)

Բ) Արդարություն Եկեղեցու հանդեպ, հնազանդ ծառայություն (12:3-21)

Գ) Արդարություն Պետության հանդեպ (13:1-7)

Դ) Արդարություն հասարակության հանդեպ, սեր բոլորի նկատմամբ (13:8-10)

Ե) Արդարություն Տիրոջ վերադարձի հանդեպ, զգոնություն (13:11-14)

Զ) Արդարություն թույլերի հանդեպ (13:11-14)

Հավատքով ուժեղները պետք է ցուցաբերեն փոխօգնության ու բարության ոգի՝ թույլ հավատք ունեցողների նկատմամբ, իսկ վերջիններս չպետք է խստորեն դատապարտեն ուժեղ հավատք ունեցողներին: Բոլորի մեջ պետք է ներդաշնակություն տիրի: Միաբանությունը կլինի հավատքի արդարության պտուղը:

8. Եզրակացություն (15:14-16:27)

Ա) Անձնական գործեր (15:14-33)

Բ) Ողջույններ (16:1-23)

Գ) Փառաբանություն (16:25-27)

ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ ՈՒՂՂԱԾ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ա. ԿՈՐՆԹՈՍ ՔԱՂԱՔԸ

Չռոմեական տիրապետության օրոք Կորնթոսը, բազմաթիվ առումներով, ամբողջ Յունաստանի ամենանշանավոր քաղաքն էր: Այն դեպքում, երբ Աթենքն ընդամենը մտքի ու մտավոր գործունեությունների կենտրոն էր, հայտնի մի համալսարանի նստավայրը, Կորնթոսը դարձել էր զավթիչի կառավարության նստավայրը՝ միաժամանակ և՛ կառավարական, և՛ առևտրական կենտրոն, շատ ակտիվ քաղաք և ամբողջ երկրի տնտեսական զարգացման օջախ:

Կորնթոսը կառուցված էր Աքայան Պելոպոնեսի հետ կապող նեղ պարանոցի վրա և ուներ երկու նավահանգիստ. արևելյան կողմից (Գործք 18:18, Չռոմեացիներին 16:1), ուր գտնվում էր արևմտյան Lachaeum-ը, որը ծառայում էր Ադրիատիկին ու Իտալիային, և Կենքրան կողմում ու ծառայում էր Եգեյան ծովին ու Ասիային:

Զնայած գտնվում էր թերակղզու ներսում, այն վայելում էր ծովային կարևոր նավահանգստի բոլոր առավելությունները՝ կենտրոնական դիրք գրավելով Չռոմի ու Արևելքի միջև եղած հաղորդակցության ուղիների վրա: Փոքրիկ նավեր են կտրում-անցնում նեղուցը նավարկության համար խնամքով պատրաստված մի ճանապարհով՝ խուսափելով Պելոպոնեսի շուրջը ճանապարհորդելուց. Իտալիայից եկող և Արևմուտք գնացող ճանապարհորդներն ավի էին իջնում Lachaeum-ում՝ կրկին նավ նստելու Կենքրայում: Լինելով ճանապարհների խաչմերուկ՝ այստեղ մշտապես կողք կողքի էին առևտրականներն ու չինովնիկները: Բնակչությունը կազմված էր հույներից ու հռոմեացիներից, բայց նաև՝ հրեաներից և Արևելքից եկած մարդկանցից: Ամենից ավելի առևտրականներն ու ծովայիններն էին կտրում-անցնում Կորնթոսը՝ այստեղ բերելով իրենց քաղաքակրթության ու կրոնի տարրեր, ինչպես նաև տեղական բազմաթիվ սովորույթներ ու ավանդույթներ:

Ս. Պողոսի ժամանակաշրջանում Կորնթոսը հռոմեական գաղութ էր: Երկու դար անց նույն վայրում կառուցված հունական քաղաքն ավերվել էր հռոմեացի ներխուժողների ու նվաճողների կողմից: Ավելի քան մեկ դար շարունակ՝ իբրև փլատակների կույտ, կամ համարյա այդպիսին մնալուց հետո Յուլիոս Կեսարը Ք. ա. 46 թ. մոտ ձեռնամուխ եղավ այն վերակառուցելու և նախկինի պես բարգավաճ քաղաք դարձնելու գործին:

Առևտրական նշանակությունից բացի՝ Կորնթոսն ուներ նաև պարանոցային խաղերի կենտրոնի համաշխարհային համբավ, մի բան, որը դեպի իրեն էր ձգում մեծ թվով ըմբիշների ու սպորտի սիրահարների: Նրան ամենից ավելի հռչակ էր բերում, սակայն, Ափրոդիտեի կամ Վեներայի Տաճարը, որտեղ արարողությունը պահանջում էր զոհաբերել երիտասարդ աղջիկների կուսությունը, ուղջիկներ, ուլքեր նրան ծառայում էին իբրև «սուրբ պոռնիկներ» (hierodules): Այս դարաշրջանում բնակիչները հայտնի էին իրենց սանձարձակ բարբերով: Քաղաքի ակտիվում կարելի է հիշեցնել նաև հակադիր խմբավորումների առկայությունը: Կորնթացիները միշտ պատրաստ էին վիճարկել փիլիսոփայական ու բարոյական հարցեր և համարձակորեն հանդես գալ իրենց ճարտասանների ու «պրոֆետորների» որակավոր-

ման ու թերությունների շուրջ: Նման իրավիճակն առատ լույս է սփռում սանձարձակ բարքերով այս քաղաքի կենսապայմանների վրա: Կարող էին անգամ թատրոնի բեմահարթակ թողնել խիստ խմած մարդուն: «Ապրել կորնթոսյան ձևով» արտահայտությունը դարձել էր ասացվածք՝ ցույց տալու բարոյական անկման այնպիսի աստիճան, որ հազվադեպ էր հանդիպում այլուր: Պողոսի առաքելական գործունեության շրջանում քաղաքի բնակչությունը կազմված էր մոտ 200 հազար ազատ մարդկանցից և 400 հազար ստրուկներից:

Բ. ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆՈՒՄ

Պողոսի առաջին այցը Կորնթոս տեղի է ունեցել նրա քարոզչական երկրորդ ճանապարհորդության ընթացքում, Աթենքում կրած ակնհայտ պարտությունից հետո, հավանաբար մ. թ. 50 թ. աշման մոտերքում և կամ գուցե մեկ կամ երկու տարի անց (տարեթվերը կարող են նշվել միայն մոտավոր ձևով): Առաքյալն այստեղ մնաց 18 ամիս (Գործք 18): Ժամանելով՝ նա հանդիպեց Ակյուղասին ու նրա կնոջը՝ Պրիսկիլային. ազգությամբ հրեա մի զույգ, որը Կլավդիոսի որոշման հետևանքով, նոր էր վտարվել Յռոմից և ձգտում էր վերջ դնել մայրաքաղաքի հրեաների մեջ ունեցող CHRESTUS-ի (նա համոզված չէ, որ խոսքը Քրիստոսի մասին է, անուն, որը հունարենում պետք է գրվեր Christos ձևով) շուրջ ծագած բախումներին: Պողոսի պես՝ նրանք էլ վրաններ արտադրող արհեստավորներ էին: Առաքյալը աշխատանքով միանում է նրանց ու բնակվում նրանց մոտ:

Սովորությունների համաձայն (Գործք 13:5, 14, 14:1, 17:2)՝ Պողոսն սկսում է նախ քարոզել հրեական ժողովարաններում՝ ձգտելով իր համերկրացիներին համոզել Հիսուսի Մեսիա լինելու հարցում: Մերձավոր գործընկերներ Շիղայի ու Տիմոթեոսի ժամանումն ամրապնդեց նրա դիրքը, և սկսած գործը շուտով երջանիկ արդյունք տվեց: Մի շարք հրեաներ ընդունեցին նրա լուրը, որոնց մեջ էր ունեցող Կրիսպոս՝ ժողովարանի առաջնորդ, ինչպես նաև Տիտիուս Յուստոսը՝ ունեցող նորադարձ: Հրեաների մեծ մասը, այսուամենայնիվ, մնաց թշնամական տրամադրվածությամբ, և առաքյալը ստիպված եղավ թողնել նրանց շրջանակը: Նրա հեռացումը, սակայն, չհանգստացրեց հին դիսպանսացիային կապված ուղղահավատ հրեաների հուզումը: Ընդհակառակը, կրքերը բորբոքվեցին, և Պողոսին հանձնեցին Գաղիոնին՝ զավառի կուսակալին՝ կեղծ կրոն տարածելու մեղադրանքով: Հռոմեացի բարձր պաշտոնյան անտարբերություն ցուցաբերեց այս հարցի նկատմամբ. այն որակեց իբրև կարծիքների պայքար, որը չի ազդում քաղաքի հանգստի վրա: Հույները խրախուսեցին կուսակալի որոշումը և սկսեցին վատ վերաբերվել Սոսթենեսին՝ ժողովարանի նոր ղեկավարին: Պաշտպանվելով քաղաքացիական օրենքի կողմից՝ Պողոսը կարողացավ իր առաքելությունը շարունակել մինչև 52 թ. գարուն, երբ բռնեց Եփեսոսի ու Երուսաղեմի ճանապարհը՝ Ջատիկը տոնելու նպատակով:

Եփեսոսը լքելուց հետո Ապոլոսը՝ ալեքսանդրացի կրթված մի հրեա, որը նոր էր դարձել Ավետարանին, այստեղ ժամանեց և ներկայացավ Եկեղեցուն: Նրա քրիստոսաբանությունը մի քիչ անավարտ էր, սակայն Պողոսին Եփեսոս ուղեկցող Ակյուղաս զույգի ղեկավարությամբ՝ նա դարձավ պերճախոս ու ազդեցիկ ավետարանիչ: Կամեցավ վերադառնալ Եփեսոս, և որոշ ժամանակ անց այստեղի եղբայրները նրան երաշխավորեցին Եփեսոսի Եկեղեցուն (Գործք 18:27, Բ. Կորնթ. 3:1):

Եկեղեցին, ինչպես և քաղաքը, կազմված էր սոցիալական բոլոր խավերին պատկանող հրեա և հույն անդամներից (հիշենք, որ Պողոսի՝ Յոնանացիներին ուղղված նամակը գրվելու է Կորնթոսից): Անդամներից ոմանք պատկանում էին ունևոր դասակարգերի, մյուսները սերում էին ավելի շուտ ժողովրդական խավերից: Անշուշտ, Եկեղեցուն չկային ընտրյալ կամ բարձր իշխանություն իրականացնող մարդիկ, ոչ էլ տեղական ազնվականներից կազմված անդամներ: Մեծ մասը, որ համեստ հնարավորությունների տեր էր, պետք է ծանր աշխատանք կատարեր նյութականը ապահովելու համար: Հրեական ծագում ունեցող հավատափոխներից ոմանք դեռևս կարևորություն էին տալիս Հին Կտակարանի ծիսակարգին, մյուսները պարծենում էին իրենց ազատամիտ տեսակետներով, շատերն էլ կապված էին անկում ապրող բարքերին և պետք է ջանասիրաբար հետևեին իրենց վարքին:

Ավելի լավ հասկանալու համար այն իրավիճակը, որի մասին վկայում է առաջին նամակը, անհրաժեշտ է համառոտակի անդրադառնալ խռովարար խմբավորումների երևույթին: Նրա բովանդակության վերլուծությունը կկատարենք ավելի ուշ, որն էլ բավականին ամփոփ ձևով կներկայացնի այն:

Գ. ՀԵՂԻՆԱԿԸ

Երբեք ոչ մի կասկած չի եղել Պողոսի այս երկու նամակների վավերականության մասին: Ըստ Manley-ի՝ առաքյալի բնավորության գեղեցկությունն ու ուժը երևում են նամակի ողջ շարադրանքի ընթացքում՝ չթողնելով որևէ կասկած նրա հնության վերաբերյալ: Նամակի համար կան արտաքին ապացույցներ (նախքան առաջին դարի վերջը) Կղենոս Յոնանացու՝ Կորնթացիներին ուղղված նամակում, որտեղ հեղինակը հիշատակում է առաքյալի անունը: Նամակից մեջբերումներ արվել և դրանք օգտագործվել էր Իգնասիո Անտիոքցու (110 թ.) և Պոլիկարպոս Ջմյուռնիացու (115 թ.), հավանաբար՝ նաև Հերմասի «Հովվի» (120 թ.) կողմից: Նամակի մանրամասները համապատասխանում են «Գործք Առաքելոց»-ի փաստերին, ինչպես Կորնթոս քաղաքի ու նրա Եկեղեցու առանձնահատուկ պայմանների, այնպես էլ Պողոսի վարդապետության ու նրա փորձի առումով, որն իմանում ենք Գաղատացիներին ու Յոնանացիներին ուղղված նրա նամակներից:

Դ. ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ ԳՐԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԵԹԻՎԸ

Նամակը գրվել է այն ժամանակ, երբ Պողոսն իր առջև խնդիր էր դրել շուտով թողնել Եփեսոսը: Դա եղել է հավանաբար Ջատկից քիչ ժամանակ անց, և առաքյալը մտածում էր այստեղ մնալ մինչև Հոգեգալուստ: «Գործք»-ի 20:1 տողի համաձայն՝ նա հարկադրված էր արագորեն թողնել Եփեսոսը, ավելի շուտ, քան մտածում էր, եթե իհարկե 16:3-8 հատվածում արտահայտված ծրագրերն այդ ընթացքում չեն փոխվել: Կորնթացիներին ուղղված առաջին նամակից մինչև Պողոսի մեկնումը պետք է որ քիչ ժամանակ անցած լիներ, իսկ առաջին ու երկրորդ նամակների միջև՝ հազիվ մի քանի ամիս: Առաջինը, հետևաբար, պետք է որ գրված լիներ 57 թ. գարնանը: Հարկ էր առաջ քաշել անստուգելի շատ վարկածներ՝ տարեթիվը համարելու 55 թ. գարունը և կամ երկրորդ նամակը գրելուց երկու տարի առաջ:

Առաջին նամակը մեզ է հասել ամբողջությամբ: Կորնթոս մեկնելու տարեթվի (քաղաք, որտեղ նոր էր Եկեղեցի հիմնել) և առաջին նամակի միջև ընկած ժամանակահատվածում, առաքյալն այցելել էր Գաղատիայի և Փռյուզիայի Եկեղեցիները և վերադարձել Եփեսոս: Նա այստեղ մնացել է ավելի քան երկու տարի՝ ժամանելով կամ 53, կամ 65 թվականին և այն լքելով 56 կամ 57 թվականի մոտերքում: Եփեսոսում են նրան հասել Կորնթոսի Եկեղեցու վիճակին վերաբերող տագնապալի լուրերը: Նրա բազմաթիվ անդամներ նահանջում էին դեպի նախկին հեթանոսություն: Այդ ժամանակ նա գրեց մի նամակ, որի մեջ տալիս էր ճշգրիտ ցուցումներ և հորդորում վարել Ավետարանին վայել կյանք: Առաջին նամակում (5:9) նա վկայում է հենց այս բանը: Բայց այս նամակը լավ չընդունվեց նախկին ծխականների կողմից: Ոմանք վատ էին հասկանում ստացված ցուցումները, մյուսներն առարկում էին՝ ասելով, թե եթե պետք էր բառացիորեն հետևել ամեն ինչին, ապա հարկ կլիներ դուրս գալ աշխարհից: Գտնվեցին մարդիկ, ովքեր արգելեցին խառնվել իրենց անձնական գործերին և մի նամակով պատասխանեցին նրան. Պողոսը հաճախ է անդրադառնում այս նամակին (5:10, 7:1, 8:1-10, 10:25, 11:2): Պարզ էր դառնում, որ կորնթացիներն ամենևին էլ չէին շտապում լուծել անմահության հարցերը: Նրանք նաև պահանջում էին մի շարք խնդիրներ՝ հարցնելով նրա կարծիքը: Ենթադրում են, որ այս նամակը բերվել է Եկեղեցու երեք ճանաչված անդամների՝ Ստեփանոսի, Փորտունատի և Աքայիկոսի կողմից (16:17):

Այս ընթացքում Պողոսը լսել էր նաև համայնքի ներսում մոլեգնող խռովությունների մասին: Նորությունները նա իմացել էր կորնթացիներին լավ ծանոթ մի կնոջ՝ Քղուեի ընտանիքի անդամներից (1:11), սակայն մենք համոզված չենք, թե այս կինը քրիստոնյա է եղել:

Բոլոր այս տեղեկությունները մեծ ցավ պատճառեցին առաքյալին: Այդժամ նա Տիմոթեոսին ուղարկեց Մակեդոնիա (Գործք 19:22, Ա. Կորնթ. 4:17)՝ հիշեցնելու իր վարքի ու առաքելության էությունը: Մինևույն ժամանակ նա գրեց իր Առաջին նամակը, որն ուղարկեց թերևս Տիտոսի և մեկ ուրիշ եղբոր միջոցով (Բ. Կորնթ. 12:18)՝ ծովային ավելի կարճ ճանապարհով, որպեսզի տեղ հասնի՝ նախքան երիտասարդ Տիմոթեոսի Կորնթոս հասնելը, նամակ, որով կերաշխավորի քրիստոնյաների կողմից նրա լավ ընդունելությունը (16:10):

Նամակն սկսվում է բաժանումների վերաբերյալ արված հանդիմանություններով և միաբանության հորդորով: Այնուհետև Պողոսը հանգամանալից պատասխաններ է տալիս կորնթացիների հարցին: «Այս նամակի ոճը պակաս հանդիսավոր է, քան Յոմեացիներին ուղղված նամակինը, սակայն շատ ավելի անմիջական ու առավել անձնական է: Այն արտացոլում է Պողոսի սերը Քրիստոսի և նրանց հանդեպ, ում համարում է իր զավակները: Իրավացիորեն կրկնում են, որ այն հատվածները, որտեղ Պողոսն առավել ծաղրի է ենթարկում հունական փիլիսոփայությունն ու ճարտասանությունը, նրա նամակի ամենախոր ու ամենապերճախոս հատվածներն են: Դրանք ոչ թե ճարպիկ հռետորի, այլ հարզված մարդու փաստարկներ են, նրա, ով ուզում էր թղթակիցներ շահել իր տիրոջ՝ Քրիստոսի համար: Լեզուն Սփյուռքում դաստիարակված հրեայի լեզու է, որը հրաշալիորեն ծանոթ է ՅՈՒԹԱՆԱՍՆԻՑ-ին: Նամակի տեսական խտությունն ու սկզբնական շրջանի եկեղեցական համայնքին վերաբերող պատմական վավերագրությունն այն դարձնում են «պողոսյան կորպուս»-ի ամենաթանկարժեք գրվածքներից մեկը»¹:

¹ J. Cambier.

Ե. ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԻ ԼՈՒՐԸ

Կարելի է ընդունել, որ Կորնթացիներին ուղղված երկու նամակների բովանդակությունն ու լուրը կատարում են նույն գործառույթը, շոշափում են գլխավորապես Քրիստոսի հետ հավատարիմ միության հարցը: Գաղատացիներին հասցեագրված նամակում առաքյալը կայնդի հետևյալը. «Ես խաչվել եմ Քրիստոսի հետ, այսուամենայնիվ, կենդանի եմ ոչ թե ինձնով, այլ Քրիստոսն է իմ մեջ կենդանի» (2:20): Քրիստոսն ու իր առաքյալը հոգով ու մտքով այնպես են միավորված, որ Քրիստոսի կյանքով բաբախում է Պողոսի զարկերակը: Վերջինս այնքան ամբողջական ձևով է նվիրվում նրան և այնպիսի խորությամբ ենթարկվում նրա հոգու ազդեցությանը, որ ապրում, գործում, մտածում ու տառապում է «Քրիստոսով»: Քրիստոսի հետ ունեցած կապի զգացումը նրան նեցուկ է բոլոր ջանքերում ու ձեռնարկումներում, ու նա ցանկանում է Քրիստոսի ներկայությունը մշտապես զգալ ավելի մեծ չափով:

Այսպիսով, այն, ինչ նա կարողացել է իրականացնել իր կյանքում, փորձում է ներարկել նաև ընթերցողներին ու ունկնդիրներին: Քրիստոսի հետ նրանց միաբանությունն իրեն թվում է անկատար, այդ իսկ պատճառով էլ նրանց որակում է իբրև ծծկերներ հավատքի հարցում: Թեև նրանք այս բանը չեն հասկանում իրենց հոգևոր կյանքում, առաքյալը համոզված է, որ իրականում Քրիստոսն ապրում է նրանց մեջ: Առաքյալն ուզում է, որ նրանք միշտ ավելի շատ բան ստանան Քրիստոսից: Իշխող այս մտքից (Քրիստոսի ու քրիստոնյայի միջև կապից) ելնելով է նա հանգում երկու գլխավոր եզրակացության. մի կողմից՝ եղբայրների հետ միաբանության անհրաժեշտություն, մյուս կողմից՝ անեղծ կյանք:

Կան քրիստոնեական հավատքին վերաբերող բազմաթիվ հարցեր, որոնք խիստ ընդգծվում են այս նամակում:

Ամենացայտուն կողմերից մեկն անկախ այն վկայությունն է, որ արվում է Քրիստոսի կյանքի, մահվան ու հարության փաստերին: Առաքյալը շեշտը դնում է հատկապես խաչելության և Հարության վրա: Նամակը գրվել է նախքան Ավետարանները՝ Համբարձումից մոտ 25 տարի անց, սակայն կատարյալ համաձայնության մեջ է նրանցում բերված փաստերի հետ: Այս նամակից իմանում ենք, որ Խորհուրդները հաստատվել և կիրառվում էին, սակայն կորնթացիների մոտ, Իրիկնահացը պահպանելու հարցում, չկար կարգուկանոն: Մկրտվում են նրանք, ովքեր դավանում են իրենց հավատքը, իսկ Իրիկնահացը պահպանվում է հաց կտրելով ու գինի բաժանելով՝ Քրիստոսի նկատմամբ հավատքի քննությունից հետո:

Իրիկնահացի հետ կապված, սակայն, նրան նախորդելով, կիրառվում է նաև խնջույքը՝ համայնքի անդամների ընդունած համատեղ ճաշը: Խնջույքը նաև վկայում էր եղբայրների հաղորդության ոգու մասին: Դրա հետ կապված են նախ և առաջ չարաշահումներ արվել:

Նոր հավատքի հիմքը Հայր Աստծու (8:6), Տեր Հիսուսի (8:6, 11:1) և Սուրբ Հոգու (12:3) հանդեպ հավատն է: Քրիստոսն ազատագրել է մարդկանց: Նա մահացել է մարդկանց մեղքերի պատճառով: Նա կատարյալ օրինակ է, որին պետք է հետևեն (11:1), նրանց սիրո գլխավոր առարկան է (16:22): Նրա մահը վեր է հանում Աստծու զորությունը հավատացյալի փրկության համար (1:24) և մնում է որպես նրա սրբության ամենամեծ պատճառ (5:7-8): Նրա հարությունը մեռյալների հարության նկատմամբ հավատի հիմքն է (15:16), մեր անմահության հույսի հիմքն ու հողը (15:18), նաև՝ մեր թողության համոզմունքը:

Լուրը վկայում է նաև Եկեղեցու միաբանության գաղափարի (1:2, 3:11, 11:18), Քրիստո-

սի տված թողութեան (15:30), մարմնական հարության վերաբերյալ քրիստոնյաների պնդումների (15) և հավիտենական կյանքի մասին: Այս ճշմարտությունների հետ սերտորեն կապված է քրիստոնեական պատասխանատվության, ինքնուրաքանչյուր, սիրո մեջ միաբանության (9:30) և մաքրության (3:16-17) գաղափարը: Քրիստոսի մահը մարդկանց հոգիներում ծնունդ է տալիս Չոգով մի նոր կյանքի (1:30, 2:2-5, 6:20, 7:23):

Ժողովրդական պաշտամունքն արվում էր ինքնաբուխ ձևով: Ամեն ոք աղոթում կամ երգում էր օտար ունկնդիրների համար հաճախ անհասկանալի ոգեշունչ խոսքերով (14:12-17): Հասկանալի է, որ նման պաշտամունքը, թեև ջերմ էր ու նպաստում էր զգացմունքների ծաղկմանը, այսուամենայնիվ տեղիք էր տալիս չարաշահումների, որոնք ծանրանում էին համայնքի անդամների միջև՝ թշնամություններով: Բանը հասնում էր ընդհուպ մինչև Աստծու դեմ հայհոյանքներ տարածելուն: Առաքյալը կայուն կանոններ է պարտադրում արարողությունների համար: Սկզբունքն այն էր, որ ամեն ինչ պետք է տեղի ունենար միայն Աստծու փառքի ու Եկեղեցու հիմնադրմանն ուղղված կարգով:

Չի թվում, թե Կորնթոսում եղել է կազմակերպչական մեծ հոգս: Անկասկած, սա է այն պատճառը, որը Պողոսին մղել է խորհուրդ տալ՝ տեղավորվելու Ստեփանոսի ու երեցների տան հոգևոր ազդեցության ներքո:

Կարգապահության սկզբունքը Եկեղեցում ընդունված է, ու գիտեին, որ շատ ծանր սխալների համար պատիժը վտարումն էր (5:3-5, 11): Այսուամենայնիվ, կարգուկանոնի գործնական կիրառման վերաբերյալ գերիշխում էին տարակարծություններ: Այս նամակում նկարագրված է հատկապես Եկեղեցու կյանքի մութ կողմը: Կան նաև լուսավոր կետեր: Հավատացյալները ցուցաբերում են զարմանալի կենսունակություն: Նրանք պարզևներ (charismes) են ստացել: Առաջ են ընթանում Աստծու ողորմածության ու ճանաչողության մեջ (1:4-9) և, ի հեճուկս առավել մտախոգող մի իրավիճակի, առաքյալը կարող է շնորհակալ լինել Աստծուց՝ իրականացված առաջընթացի համար: Նա հուսով է, որ դեռ էլի տեղի կունենան լավ բաներ:

2. ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ ՈՒՂՂԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

1. Ներածություն (1:1-9)

Պողոսը ներկայանում և անվանում է նաև Սոսթենեսին, որը հավանաբար նրա քարտուղարն է: Նա գովում է Տիրոջը և հենց նամակի սկզբում շնորհակալ լինում նրան, քանի որ Կորնթոսի Եկեղեցին

1. Օծվել է Քրիստոսով
2. Կանչվել է սրբանալու
3. Քրիստոսով հարստացել է երկնային իմաստությամբ ու հոգևոր պարզաներով
4. Նշանավորված է Քրիստոսի վերադարձի հետ կապված զգոնության ոգով:

2. Խռովության ոգին (1:10-4:21)

Մինչդեռ մյուս նամակներն առաքյալն սկսում է տեսական մասով և ավարտում գործնական դասով, այս մեկն սկսում է խրատաբանություններով: Քղուեի ընտանիքը նրան

տեղեկացրել է, որ հուզումներն ու նախանձը խռովում են Եկեղեցու հանգիստը:

Ա. Գոյություն ունեն չորս կուսակցություններ, որոնք վկայակոչում են.

ա) Պողոսին

բ) Ապողոսին

գ) Պետրոսին

դ) Քրիստոսին՝ պարծենալով, որ չեն հետևում մարդ առաջնորդին

Բ. Պողոսը նրանց հանդիմանում է այս բաժանումների համար ու մեղադրում.

ա) Քրիստոսի մասին սխալ տպավորություն ունենալու մեջ: Քրիստոսը բաժանված չէ և, հետևաբար, նրա աշակերտները ևս պետք է այդպիսին լինեին: Քանի որ Քրիստոսը մեկն է, նույն ձևով էլ նրա մարմինը՝ Եկեղեցին, մեկն է:

բ) Ավետարանի մասին սխալ կարծիք ունենալու մեջ: Ավետարանը մարդկային իմաստություն չէ, որ գիտուն մարդիկ կարողանան վիճարկել, այլ Աստու գորություն՝ հավատացյալների փրկության համար:

գ) Առաքելության մասին սխալ պատկերացում ունենալու համար: Քրիստոսի առաքյալներն ախոյաններ չեն, որոնցից յուրաքանչյուրը ձգտում է շահել ավելի մեծ թվով կողմնակիցներ, այլ Աստու ծառաներ ու բանվորներ: «Աստված է աճի աղբյուրը»:

3. Բարոյական քայքայվածությունը (5:1-6:20)

Ա. Արյունապղծության ակնհայտ դեպք: Մեկն ամուսնական կյանքով ապրում է իր խորք մոր հետ, և դառն ճշմարտությունն այն է, որ Եկեղեցին միջոցներ չի ձեռնարկում անբարոյական այս զույգի դեմ: Եվ այսպես՝ պետք է կարգուկանոն լինի: Դա ունի երեք նպատակ.

1. դառնալ Աստու պատիվը

2. անեղծ պահել Եկեղեցին

3. փրկել անօրինություն գործողին

Բ. Քրիստոսյանների դատական գործեր հեթանոսական դատարանների առջև: Հավատացյալների միջև հուզում էր առաջացել (գուցե թե սեփականությունների և դրանց բաժանման հարցում), և Եկեղեցու անդամներն իրենց թույլ էին տվել դիմելու հեթանոսական դատարանների: Ըստ Պողոսի՝ սա անտանելի է: Շատ գերադասելի է, որ նման վեճերը դատի Եկեղեցու մեկ ուրիշ հավատացյալ: Պետք է խուսափել դատարան դիմելուց:

Գ. Անառակության դեպք: Որոշ անդամներ կապվում են վատ վարք ունեցող մարդկանց հետ: Արդ, անբարոյականությունը ծանր հանցանք է, որովհետև վիրավորում է Աստուն, քանզի քրիստոնյայի մարմինը Սուրբ Հոգու տաճարն է:

4. Ամուսնությանը վերաբերող հարցեր (7:1-40)

Ա. Ամուսնանա՞լ, թե՞ չամուսնանալ: Գերադասելի է ընտրություն կատարել ամուրի վիճակի օգտին՝ այսպես է պատասխանում առաքյալը (նշենք, սակայն, որ այստեղ խոսքն առաքյալի անձնական կարծիքի մասին է): Ամուսնությունը թույլ է տալիս խուսափել անժուժկալությունից, և եթե ինչ-որ մեկը ամուսնացած է, նա պետք է հավատարիմ լինի իր կողակցին:

Բ. Առանձնահատուկ խմբերն ու ամուսնությունը.

ա) Նախընտրելի է, որ կույսերն ու այրիները մնան ամուրի, թեև ոչ մի վատ բան չկա ամուսնանալու և կրկին ամուսնանալու մեջ:

բ) Ամուսինները պետք է միասին ապրեն, սակայն եթե որևէ պատճառով բաժանվում են, չպետք է ո՛չ ամուսնալուծվեն, ո՛չ էլ կրկին ամուսնանան: Պողոսն այս մասին խոսում է իբրև աստվածային պատվիրանի: Հավատացյալ կողակիցն անգամ պետք է համատեղ կյանքով ապրի իր ոչ հավատացյալ կողակցի հետ: Խոսքն այստեղ հանդուրժողականության մասին է՝ այսպես է բացատրում առաքյալը: Նշենք, որ այս տեքստը հիմք չի առաջարկում քրիստոնյաների ու ոչ քրիստոնյաների միջև կայացող ամուսնության համար և չի երաշխավորում այն: Հարկ է հիշել այն փաստը, որ երբ Ավետարանը քարոզվեց Կորնթոսում, հավատափոխությունների ժամանակ ոմանք չէին հետևում իրենց ամուսիններին կամ կանանց: Այստեղից էլ՝ նամակում բարձրացված մասնավոր խնդիրը:

5. Քրիստոնեական ազատությանը վերաբերող հարցեր (8:11-11:1)

Մի խնդիր է ծագել կուռքերին նվիրաբերված սննդամթերքի շուրջ: Եթե միսը նվիրաբերվել է որևէ կուռքի և այնուհետև կես գնով վաճառքի դրվել մսեղենի խանութում, քրիստոնյան իրավունք ունի՞ արդյոք գնել դրանից և ուտել: Եթե այս մսից գնելով չեն վիրավորում ու զայրացնում որևէ մեկին, ապա թույլատրվում է այդ բանն անել: Այս կերպ օգտվում են քրիստոնեական ազատությունից: Եթե մնան դեպքում ավելի թույլ որևէ եղբոր կարող է վիրավորանք հասցվել, ապա գերադասելի է ձեռնպահ մնալ այդ արարքից: Հանուն քրիստոնեական սիրո՞ պետք է հրաժարվենք մեր իրավունքներից: Քրիստոնեական ազատությունը եկեղեցու գլխավոր հոգսը չէ: Պետք է զբաղվել ուրիշի հոգևոր բարեկեցությամբ: Եթե անգամ անվնաս որևէ անձ համարձակվում է վիրավորել թույլ մեկին, ապա չպետք է իրեն թույլ տա այնպիսի ազատություն, որը դուռ է բացում խայտառակ արարքի համար: Անապատում իսրայելցիները չարաշահեցին իրենց ազատությունը և խստորեն պատժվեցին: Պողոսն անձամբ շատ բաներից է հրաժարվել հանուն եղբայրների հանդեպ տածած սիրո:

6. Անկարգությունը ժողովրդական պաշտամունքում (11:2-34)

Ա. Կանանց անօրինական տեղը: Կանայք բացում են գլուխները և պաշտամունքի ժամանակ սկսում հրապարակավ քարոզել ու աղոթել տղամարդկանց պես: Գուցե կարծում են, թե քրիստոնեական ազատությունը տալիս է մնան իրավունք: Պողոսը նրանց հանդիմանում է հանդգնության ու անհամեստության համար:

Բ. Սուրբ Իրիկնահացի տոնումը: Սեղան կամ Սիրո խնջույք (agapé) կոչվող ճաշկերույթը նախորդում էր Իրիկնահացի ժամերգությանը: Սննդամթերքն ու խմիչքը մատակարարում էին եկեղեցու անդամները, որից հետո հաց ու գինի էր նախատեսվում Իրիկնահացի համար: Աղքատներն ի վիճակի չէին իրենց նպաստը բերել և եսասիրությունից, կամ էլ աղանդավորի ոգուց դրդված՝ քաղցած էին մնում, մինչդեռ մյուսները ծայրահեղ շատ էին ուտում: Ոմանք էլ անգամ հարբում էին... Ի՛նչ անպատվություն՝ ուտել Տիրոջ ճաշը: Պողոսը նրանց մեղադրում է այս լուրջ շեղման համար և խորհուրդ է տալիս, որպեսզի յուրաքանչյուրն ուտի իր տանը: Տիրոջ Սեղանը չպետք է անպատվի:

7. Հոգևոր պարգևներն ու դրանց կիրառությունը (12:1-14:40)

Սուրբ Հոգու բխման պատճառով Կորնթոսի Եկեղեցին պարգևներ էր ստացել: Այսուամենայնիվ, նրա անդամները պետք է սովորեն ողջամտորեն օգտվել այս պարգևներից: Պողոսը հիշեցնում է, որ եթե պարգևները տարբեր են, դրանք բոլորն, այսուամենայնիվ, ունեն ընդհանուր աղբյուր, այն է՝ Աստծու Հոգին: Մարդկային մարմնի տարբեր մասերը (բոլորը) անհրաժեշտ են և ներդաշնակորեն համագործակցում են հանուն ամբողջի բարօրության: Նույն ձևով էլ Հոգու պարգևները պետք է օգտագործվեն հանուն Եկեղեցու բարօրության: 13-րդ հրաշալի գլխում, որն անվանվում է Նոր Կտակարանի Սիրո սաղմոս, Պողոսը շոշափում է միակ գերազանց պարգևի թեման, պարգև, որը մյուսներին հաղորդում է իրենց ողջ արժեքը. սիրելու պարգևը: 14-րդ գլխում նա մարգարեությունը (քարոզը) համեմատում է օտար լեզուներով խոսելու հետ: Թվում է, թե Եկեղեցու որոշ անդամներ պարծենում են օտար լեզուներով խոսելու համար: Բայց մարգարեությունը՝ կանխասացությունը, գերադասելի է, քանզի այն կարող են հասկանալ ինչպես ներկաները, այնպես էլ պատահական օտարականները: Բացի այդ՝ այն կառուցում է Եկեղեցին և հաստատում կարգուկանոն:

8. Քրիստոսի հարությունը (գլ. 15)

Եկեղեցու որոշ անդամներ սկսել էին կասկածի տակ առնել մեռյալներից հարություն առնելու փաստի իրողությունը: Մյուսները հուզված էին: Պողոսը քննության է առնում այս դիրքորոշումները: Նա պնդում է, որ այդ իրողությունը ժխտելն աղետաբեր է, քանի որ եթե Հարություն չի եղել, ապա Քրիստոսը հարություն չի առնի, և այդժամ մեր հավատքը կլինի սին: Ինչ վերաբերում է մեռելների մարմնական հարության հնարավորությանը, ապա դա չպետք է որևէ խնդրի առջև կանգնեցնի: Աստված, որ Ամենագործ է, մեզ տալիս է ֆիզիկական մեր մարմինը, քանզի նրա համար ամեն ինչ հնարավոր է: Մեր ստացած մարմինը կլինի անփտելի (երբեք չի ճանաչի քայքայում), փառապանծ (ինչպես Քրիստոսին), հոգևոր (Հոգու կողմից վերահսկվող) և անմահ:

9. Եզրակացություն (16:1-24)

Հրահանգներ են տրվում այն փողի վերաբերյալ, որ Պողոսը պետք է հանգանակեր Երուսաղեմի աղքատների օգտին: Տիրոջ ամեն Օր՝ Կիրակի օրերին, նրանք կանոնավորապես պետք է նվիրատվություններ անեն: Ի վերջո, Պողոսը հայտնում է նրանց այցելելու իր մտադրությունը, նրանց է հղում մի վերջին պատգամ և նամակն ավարտում ողջույններով:

ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ

Պողոսի՝ Կորնթացիներին ուղղված առաջին նամակն առաջադրում է ավելի շատ խնդիրներ, քան երկրորդը: Առաջին իսկ էջից մենք հայտնվում ենք նախորդից տարբերվող մթնոլորտում: Առաքյալը նամակը շարադրում է մեկ ուրիշ տոնով: Նա ակնարկում է այնպիսի թեմաների մասին, որոնք անհայտ էին առաջին նամակին: Հասկացնում է, որ Եկեղեցին ցնցած մեծ ճգնաժամն այժմ լուծված է: Վերականգնելով իրավիճակը՝ մենք մեզ հաշիվ ենք տալիս այն մասին, որ մեր տրամադրության տակ ընդամենը մի քանի պատահիկներ ու աղոտ ակնարկներ են: Առաջին նամակը, ինչպես արդեն ասել ենք, իրականում առաքյալի կողմից Եկեղեցուն ուղղված երկրորդ նամակն է: Երկրորդի 1-9 գլուխները, այսինքն՝ սույն նամակը, հավանաբար մի երրորդ նամակի մաս էին կազմում: Այս է, թերևս, Նոր Կտակարանի որոշ մասնագետների կարծիքը:

Ա. ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎԵԼ ԵՐԿՐՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՄԻՋԵԿ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՅԱՏՎԱԾՈՒՄ

1. Առաջին նամակի ստացումը: Ինչպես վերը նշել ենք, երբ առաքյալն իմացավ կորնթացիների կողմից թույլ տրված շեղումների մասին, տեղեկացրեց, որ հանձնարարությամբ իրենց մոտ է ուղարկում Տիմոթեոսին: Միևնույն ժամանակ, ծովային ճանապարհով ուղարկեց այս առաջին նամակը՝ հիշեցնելով, որ Տիմոթեոսը պետք է կտրեր-անցներ ամբողջ Հունաստանը՝ Մակեդոնիայից Կորնթոս հասնելու համար: Տիմոթեոսը պետք է զբաղվեր գլխավորապես մակեդոնացիներով և բացարձակապես վստահ չէր, թե կարող էր հասնել ընդհուպ մինչև Կորնթոս: Հանգանակությունը, որ կազմակերպվել էր գուցե Տիտոսի ջանքերով, դարձյալ տեղի էր ունեցել, և այս գործի քաջալերող լուրերը հասել էին ականջին, մի բան, որը նրան հիմք կտա դրվատելու կորնթացիների առատաձեռնությունը: Առաքելությունն ավարտելուց հետո Տիտոսը վերադարձավ Եփեսոս՝ Պողոսի մոտ, և նրան հանգամանալից զեկուցեց Կորնթոսի վիճակի մասին:

2. «Քրիստոսի կուսակցություն» կոչված խմբի ազդեցությունը: Այս փաստերից քիչ ժամանակ անց, թվում է, ուժեղացավ այն խմբավորման ազդեցությունը, որի անդամները վկայակոչում էին Քրիստոսին: Կարճ մի ժամանակահատվածում եղավ անգամ հրեական ուղղափառ որոշ ծիսակատարություններ պարտադրելու և, հատկապես, Պողոսի առաքելական գործունեությունը վարկաբեկելուն ուղղված արշավ կազմակերպելու փորձ: Խնդրի վերաբերյալ մեր ձեռքի տակ եղած տեղեկությունները ոչ շատ են, ոչ էլ՝ ճշգրիտ: Համարյա պայթյունավտանգ այս իրավիճակից ինչ-որ բան հասկանում ենք միայն Պողոսի հատուկենտ ակնարկներից ու իր առաքելության պաշտպանությանն ուղղված խոսքերից: Նա պարբերաբար հերքում է այն կեղծ մեղադրանքները, որի զոհն է: Հակապողոսյան այս կուսակցության առաջնորդները, որ գուցե թե նոր են ժամանել Կորնթոս, հավակնում են Քրիստոսի

անունից Պողոսի հետ խոսել տարբեր, անգամ հակառակ ձևով: Դրանք եբրայեցիներն են (12:22), որոնք ասում էին, թե առաքյալներ են, բայց հայտարարում էին մեկ ուրիշ Ավետարան և անգամ ուրիշ Հիսուս (11:4): Պողոսը նրանց անվանում է կեղծ առաքյալներ (11:3), խաբուսիկ բանվորներ, Սատանայի առաքյալներ: Թվում է, թե Քրիստոսի հավատք մուտք գործելու համար իբրև անհրաժեշտ պայման առաջարկում էին հրեական կրոնի ընդունումը: Նրանք գուցե չէին համառում թլփատման հարցի առումով, բայց պահանջում էին հնազանդվել հրեական ծիսակարգային օրենքին՝ նմանակելով Հիսուսին (Սատթես 3:15, 5:17): Նրանք շեշտն ուժգնորեն դնում էին Հին Կտակարանի արդարության օրինական կանոնները պահպանելու վրա:

Հետևապես, նրանք բացահայտորեն հակադրվում էին Պողոսի աստվածաբանությանը. վերջինիս ուսմունքը միայն հավատքով արդարանալու մասին հրեական ուղղադավանության հակոտնյան էր: Գուցե նրանք առաքյալին մեղադրում էին նաև այն պատճառով, որ որոշ կորնթացիներ վարում էին արատավոր կյանք՝ նրան համարելով տեսական ու բարոյական այս ծանր թյուրիմացության պատասխանատուն: Նրան մեղադրում էին նաև թուլամորթության ու անկայունության, ինչպես նաև իր իսկ քարոզածը հեղինակավոր ձևով պաշտպանելու անկարողության մեջ (11:7): Կշտամբում էին այն բանում, որ գրում էր ազդեցիկ, սակայն իրական ուժից զուրկ նամակներ: Մեղադրում էին նաև հավատափոխներին խաբելու, սնապարծ լինելու մեջ, ընդհուպ մինչև նրան համարելով անխելք մարդ:

Հրեական կրոն տարածողները փորձում էին վարկաբեկել Պողոսին: Գուցե նրանք իրենց կողմն էին քաշել նրանց, ովքեր կապվում էին «Պետրոսի կուսակցություն» կոչված խմբին և Քրիստոսին վկայակոչող խմբավորմանը: Համենայն դեպս, նրանք գործեցին մեծ ազդեցություն, ընդհուպ մինչև համայնքի ներսում պատկառելի մի մարմին կազմելը: Նրանք ներկայանում էին իբրև քրիստոնյաների ծառաներ, քարոզում էին Քրիստոսին իբրև մարմնական Մեսիա և պարծենում էին այն մարդկանց հետ ունեցած իրենց կապով, ովքեր իրոք տեսել էին Տիրոջը (10:7, 11:23, 12:1):

Կասկածից վեր է, որ նրանք նշանակալից հաջողության հասան: Նրանց հաջողվեց ամբողջ Եկեղեցին ոտքի հանել առաքյալի դեմ: Կորնթացիները նրանց ընդունեցին առանց որևէ վատ բան կասկածելու, հաճույքով լսեցին, հավատ ընծայեցին զրպարտություններին և, ի վերջո, հրաժարվեցին նրանցից, ով եղել էր իրենց հոգևոր իսկական հայրը (7:2, 11:3, 13:2,10):

Եկեղեցու որոշ անդամներ այնքան էին սիրահարված իրենց նոր աստվածաբաններին, որ կամավոր ընդունեցին մի նոր լուծ (11:20): Ինչքան ավելի շատ բան էին պահանջում այս նորեկները, այնքան ավելի էին երջանիկ: Այն ամենն, ինչ Պողոսն արել էր նրանց համար, որոշ ժամանակի ընթացքում մոռացության մատնվեց ու համակրանքը տեղափոխվեց սուտ դոկտորների կողմը:

3. Պողոսի հիշյալ ազդեցությունը: Այս խոսակցության մասին նորություններն արագորեն հասան Պողոսի ականջին: Հավանական է, որ Տիմոթեոսը նույնպես, իր ավագից ստացած ցուցումների համաձայն, դեպի Հարավ գնալիս ծանոթացել է խռովությանը և առաքյալից ստացած լուրը նրանց հաղորդելու փորձի ժամանակ ծանր վիրավորանքներ կրել: Եվ կամ էլ առաքյալն այս անհնազանդության մասին լուրերն ստացել է մեկ ուրիշ աղբյուրներից: Ինչ էլ որ լինի, նա գտնում է, որ ինքն անձամբ պարտավոր էր կարգավորել անտա-

Նելի դարձած իրավիճակը: Ահա թե ինչու, նա կարճատև այցելությամբ եղավ կորնթացիների մոտ՝ հաստատելու իր իշխանությունը:

Ո՛չ «Գործք Առաքելոց»-ը, ո՛չ էլ առավել ևս Պողոսի մյուս նամակները, ոչինչ չեն ասում այս այցելության առնչությամբ: Դա վկայակոչվում է միայն այստեղ: 2:1 տողում նա բացե-
իբաց խոսում է իր տխրության մասին: 12:14 և 13:1 տողերում հայտարարում է, որ երրորդ անգամ ևս գնալու է նրանց մոտ: Քանի որ այն միակ այցը, որն ուշադրության է առնվում «Գործք»-ում և Կորնթացիներին ուղղված առաջին նամակում, վերաբերում է Եկեղեցու հիմ-
նադրմանը, ապա բացահայտ է դառնում այն, որ պետք է մեկ անգամ ևս նրանց այցելած լինի այս ժամանակահատվածում, նախքան քննության առնվող հատվածները գրի առնե-
լը: 13:2 տողում Պողոսը պարզորոշ ձևով ակնարկ է անում այս մասին և հիշեցնում, որ այդ առթիվ նա ասել է, որ եթե գար ու տեսներ, որ չեն զոջացել, նրանց չէր խնայի: Անշուշտ, առաքյալը նրանց արժանացրեց ևս մի այցելության՝ վատ լուրերը լսելուց անմիջապես հետո: Ճանապարհն անցավ ծովով: Այսուամենայնիվ, Կորնթոսում նրա հայտնվելը չտվեց սպասվող արդյունքը: Հրեական կրոն տարածողներն այստեղ էլ ավելի մեծաթիվ էին: Հա-
ճախակի դրսևորվող մի հիվանդություն էլ ավելի էր ճնշում նրան: Մարմնական այս թուլու-
թյունը հակառակորդների կողմից մեկնաբանվեց իբրև աստվածային շնորհագրության նշան, ուստի և նոր առիթ՝ առաքելական նրա գործունեությունը վարկաբեկելու համար (12:7-10): Այդժամ նա հարկադրված եղավ քաշվել Եփեսոս, անշուշտ, հուսալքված, որ ամ-
բողջ Եկեղեցու ներկայությամբ իրեն վիրավորել է նույն այս Եկեղեցու մի կատաղի անդամ (հղումը ոչ թե Տիմոթեոսինն է, այլ հենց իրենը՝ 7:12 տողում):

4. Տիտոսի այցը: Հասնելով Եփեսոս՝ Պողոսը մի նոր նամակ գրեց ըմբոստ Եկեղեցուն՝ մոլորյալների մեջ լավագույն զգացմունքներ առաջացնելու նպատակով: Այս մասին նա ակնարկում է 2:3-4 և 7:8 տողերում: Նամակը գրվել է մեծ վշտով ու առատ արցունքներով: Այն խիստ էր, և նա ջանում էր հասցեսատերերին տխրեցնել՝ զոջման հասցնելու աստիճան: Բառերն այնքան դաժան էին, որ Պողոսը փոշմանեց դրանք գրելու համար: Ոմանց կարծի-
քով, այս նամակի (երրորդ) մի մեծ մաս կազմում է Երկրորդ նամակի 10-13-րդ գլուխները: Այս տեսությունը լուծում է մի շարք խնդիրներ: Ինչ էլ որ լինի՝ Եփեսոսից այն ուղարկվեց Տիտոսի միջոցով, որին, թվում է, Պողոսն ավելի ընդունակ համարեց դիմակայելու իրավի-
ճակին, քան երիտասարդ Տիմոթեոսին: Ստանալով նամակը՝ կորնթացիների գիտակցու-
թյունը պղտորվեց, և նրանք զոջացին իրենց հոգևոր հոր հանդեպ ունեցած անշնորհակալ վերաբերմունքի համար: Վտարեցին Պողոսին վիրավորողին (կամ էլ՝ նրա մունետիկին) և կրկին ընդունեցին իրենց հիմնադիր հորը: Տիտոսը պետք է, որ լրջորեն նպաստած լինի իրավիճակի կարգավորմանը: Անկասկած, նա հրճվանք էր ապրել դրական արդյունքների համար (7:6-7):

5. Պողոսի հանդիպումը Տիտոսին: Այս ընթացքում Պողոսը լքեց Եփեսոսը և կտրեց-
անցավ ծովը՝ հասնելու Փիլիպպե, և Տրոյայից ափ իջավ Եվրոպայում: Տրոյան նրան հրաշալի առիթ էր ընձեռում՝ ձեռնամուխ լինելու մի նոր առաքելության (2:12): Բայց Տիտոսը չէկավ, և Կորնթոսի հանդեպ տագնապն ուժեղացավ Պողոսի մեջ, այն աստիճան, որ կամեցավ գնալ այնտեղ: Երկուսը հանդիպեցին Մակեդոնիայում, գուցե՝ Փիլիպպեում (2:13, 7:5-6): Պողոսի հոգին հանգստացավ վստահեցնող նորություններից:

Մի նոր ուրախությամբ նա ծրագրեց նոր այց կատարել Կորնթոսի իր բարեկամներին, ինչպես նրանց տեղեկացրել էր առաջին նամակում (16:5): Նախապես ուղարկեց Տիտոսին՝ իր երախտագիտությունն արտահայտող մի նոր նամակով: Դա մեր այս Երկրորդ նամակն է, կամ էլ, ըստ քննադատների, այս նամակի 1-9-րդ գլուխները: Այցելության ծրագիրն իրականացավ: Բայց չնախատեսված հանգամանքները մի քիչ խանգարեցին ծրագրին, և նա հարկադրված եղավ Կորնթոս գնալուց առաջ նախ լինել Մակեդոնիայում:

6. Երախտագիտության նամակը: Կորնթացիներին ուղղված երկրորդ նամակը լավ նորությունների համար գրված երախտագիտական խոսք է: Նամակը հանձնելու պարտականությունը դրվեց Տիտոսի վրա. ահա թե ինչու է նրա անունը հաճախ մեծ դրվատանքով հիշատակվում առաքյալի կողմից: Պողոսին հաջողվեց անձամբ կրկին այցելել իր նախկին եկեղեցին: Առանց չնչին կասկածի՝ Երկրորդ նամակը առաքյալի գրչին պատկանող վավերական գրվածք է: Միակ խնդիրը, որ կարելի է բարձրացնել դրա առիթով, պայմանավորված է տարասեռ բնության: Բերենք J. Cambier-ի կարծիքը. «Ճշմարիտ է, որ 10-13 գլուխների խիստ տոնը խնդիր է առաջադրում, սակայն դա քննադատական չէ, այլ ավելի շուտ հոգեբանական: Պողոսի պես մտածողը կարող է գործել անսպասելի ձևով: Այսպես, Յոննեացիներին ուղղված նամակի վերջին ողջույնները կտրուկ ընդհատվում են խիստ զգացումով, որի վավերականությունը, սակայն, ոչ ոք չի առարկում: Պողոսն այնպիսի աստվածաբան չէ, որը պարբերաբար գրում է: Նա շատ գործնական հոգևոր առաջնորդ է և կազմակերպիչ: Կարողանալով վկայել իր կապվածությունը՝ առիթը ներկայացած դեպքում կարող է նաև պաշտպանել իր իրավունքները: Նա ի նկատի ունի ոչ միայն հրեական կրոն տարածող ինքնակոչներին, այլև բոլոր այն հավատացյալներին, ովքեր այս գերառաքյալներին թույլ են տալիս քարշ տալ իրենց և փորձում են չճանաչել իրենց առաքյալին ու հորը: Նա նաև ուղղակիորեն դիմում է նրանց, մինչդեռ հրեական կրոն տարածող քարոզիչների հետ խոսում է երրորդ դեմքով: Բացի այդ՝ նշենք նաև, որ Պողոսը խոսում է իր ծրագրերի մասին (ենթադրյալ ավելացրած մասի ավարտին), ինչպես դա անում է բոլոր նամակների վերջում. այս մանրուքն ավելի սերտորեն է միահյուսում 10-13-ը: Կարճ ասած՝ ժամանակակից քննադատների խղճի խայթերը կարող են մեզ ավելի զգայուն դարձնել շարադրանքի որոշ առանձնահատկությունների նկատմամբ, որոնցից երեցներն ամբողջապես չէին խուսափում. տարբեր մասերի հարաբերական անկախություն և անցումների բացակայություն: Բայց պետք էր զգուշությամբ մոտենալ վերակառուցումներին, որոնք հենվում են երկու կանխադրույթների վրա. Պողոսը չպետք է որդեգրեր նման ազատ ու անսովոր գրելաձև, նա չէր կարող հրաժարվել գրական կոմպոզիցիայի տարրական կանոններից»:

Բ. ԳՐԵԼՈՒ ՏԱՐԵԹԻՎԸ

Կորնթոսում Պողոսի գործունեությունն սկսվում է պրոկոնսուլ Գաղիոնի կառավարման օրոք: Դելփիքում հայտնաբերված և Կլավդիոսի մի հռչակագիր պարունակող արձանագրության համաձայն, դա եղել է 51 թ. հուլիս ամսվա մոտերքում: Իսկ գուցե տասներկու ամիս ավելի ո՞ւշ: Մի բան, որը մեզ թույլ է տալիս Պողոսի՝ Կորնթոսում եղած 18 ամիսները հաշվարկել սկսած 50 թվականից մինչև 52 թվականի աշուն: Առաջին նամակում (16:8) հիշա-

տակված Յոզեֆալուստը կարող էր լինել նաև 55 թվականին, քանի որ երկու նամակների միջև ընկած ժամանակահատվածը ծածկող իրադարձությունները տեղի են ունեցել 55 թվականի մնացած մասի ընթացքում: Կորնթացիներին ուղղված երկրորդ նամակի 8-րդ և 9-րդ գլուխներում վկայակոչված հանգանակությունը կարող է ենթադրել տալ, որ երկու նամակների միջև ընկած ժամանակահատվածը 9-15 ամիս է:

9. ԼՈՒՐԸ

Այս նամակի աստվածաբանությունը ևս, առաջինի պես, նվիրված է քրիստոնյաների միասնությանն ու հավատացյալի և Քրիստոսի միաբանությանը: Պողոսի տառապանքները Քրիստոսի չարչարանքներ են, իսկ մխիթարությունները՝ այն, որ ստանում է Քրիստոսից: Նա ներում է շնորհում Քրիստոսի անունից, նրա հայտարարած Ավետարանը քարոզված է Աստծու առջև Քրիստոսի մեջ: Նա իր մարմնի մեջ կրում է Տեր Յիսուսի մահը ու նրա հանդեպ սիրուց իրեն մահին է հանձնում, որպեսզի Յիսուսի կյանքը հայտնվի իրենում: Քրիստոսի հետ այս միությունն այնպիսին է, որը նա ցանկանում է նաև բոլոր հավատացյալների համար. «Եթե որևէ մեկը Քրիստոսի մեջ է, ապա նա նոր ստեղծված է» (5:17):

Հիմք ընդունելով էական այս ուսմունքը՝ նա պահանջում է փոխադարձ ներում, մղում է հաստատականության և հորդորում հաշտվել Աստծու հետ, վարել մաքուր ու սուրբ կյանք: Նամակի մի զգալի մաս նվիրված է հանգանակությանը:

10-13-րդ գլուխներում խոսքը վերաբերում է նրա առաքելական գործունեության պաշտպանությանը: Դրանց գլխավոր հետաքրքրությունը Եկեղեցու մեջ խռովություն հրահրողների դատապարտելի արարքների մասին տեղյակ պահելն է: Բայց դրանք տեղեկացնում են նաև առաքյալի անձնական կյանքի ու փորձառությունների մասին: Հիշատակվում են նրա կյանքի այնպիսի իրադարձություններ, որոնց մասին ոչ մի տեղեկություն չունեինք. այլ հալածանքներ ու վատ վերաբերմունք, նավաբեկություններ, քան դրանք նկարագրված են «Գործք»-ի 27-րդ գլխում: Նավաբեկություններից մեկի ժամանակ նա մի ամբողջ օր ու գիշեր անցկացրեց ծովի խորքում՝ հավանաբար մի բեկորից կառչած: Նա հիշեցնում է նաև իր փախուստը Դամասկոսից՝ այսպիսով՝ հաստատելով «Գործք»-ի 9:25 հատվածը:

Այս ամենը մեզ տեղեկացնում է մեծ քարոզչի ու Քրիստոսի ծառայի բացառիկ կյանքի ու գործունեության, ինչպես նաև հանուն իր Տիրոջ գործի նրա ճանապարհորդությունների, նեղությունների ու զրկանքների մասին:

Կորնթացիներին ուղղված 1-ին և 2-րդ նամակների իր մեկնության մեջ F. Baudraz-ը գրում է. «Շատ քրիստոնյաներ Կորնթացիներին ուղղված նամակներից հիշում են միայն գթասրտության օրհներգն ու հավերժական ունեցվածքի խոստումը. այս վերջին տեքստը հաճախ կարդացվում էր թաղման արարողությունների ժամանակ: Նրանց կարծիքով, մնացածը կարող է հետաքրքրել միայն պատմաբաններին ու աստվածաբաններին. հարցադրումները (որ այլևս չեն արվում), և երկար ժամանակ ի վեր լուծված բախումն ինչո՞վ են առնչվում այսօրվա հավատացյալներին:

Պետք է առաջ անցնել մակերեսային դատողությունից և սեփական անձին նեղություն պատճառել՝ երկու նամակներն ուշադիր կարդալով ամբողջապես: Այդ դեպքում կարելի է

հայտնաբերել, որ կանգնած լինելով գործնական որևէ խնդրի առջև, առաքյալն այն լուծում է ոչ թե ինչ-որ բարի խորհրդով, այլ միշտ գնում է դեպի ճշմարտության աղբյուրը՝ Հիսուս Քրիստոսի հայտնությունը: Իր սրբությամբ ու հեղինակությամբ՝ նա լսել է տալիս այն խոսքը, որը եկեղեցի է հիմնում և ղեկավարում: Հավատացյալների ու եկեղեցու որոշակի խնդիրների առիթով է Պողոսն արտահայտում խաչի ու հարության իր ուսմունքը, խոսքի առաքելության բնույթն ու այն կիրառելու ձևը: Քրիստոսին ճանաչելու անհրաժեշտ հետևանքը հավատքի հնազանդությունն է. երբ արդյունքները վատ են, առաքյալը միաժամանակ մարտնչում է նաև հավատացյալների կեղծ գաղափարների ու անկանոն վարքի դեմ:

Այնուհանդերձ, կորնթացիների բոլոր սխալներն ու մեղքերը նրանց սեփականը չեն: Համայնքի ներքին միաբանությանը սպառնում են անհատների ու կուսակցությունների վեճերը, և մարմնի ու սեռական կյանքի բարոյականության խնդիրը, օրինակ, մշտապես արդիական է: Հիշենք նաև երկու կետ, որոնց վերաբերյալ առաքյալի վարդապետությունն օգտակար կլինի մեր ժամանակներում.

1. Հոգու շնորհների և լեզուների շնորհի արժեքի հարցը, որ մշտապես դրվում է հոգեգալստյան ներշնչանք ունեցող շրջանակների կողմից:

2. Առաքյալը հավատացյալներին սովորեցնում է, թե քրիստոնեական փոքր համայնքն ինչպես պետք է ապրի հեթանոսական աշխարհում: Թող որ Աստված առաքյալների միջոցով դիմի մեզ, օգնի լսելու իր խոսքը:

Դ. ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն (1:1-11)

Սովորության համաձայն՝ Պողոսն սկսում է՝ հիշատակելով իր գործընկերների և քաղաքի մոտակայքում գտնվող հասցեատերերի անունները:

Այնուհետև, իր երախտագիտությունն է հայտնում Աստծուն: Երկու փաստ հիմնավորում են այն.

1. Աստված իրեն մխիթարել է բազմաթիվ նեղությունների ժամանակ:

2. Աստված վերականգնել է իր առողջությունը: Ասիայում Պողոսը ծանր հիվանդացել էր, այն աստիճան, որ կորցրել էր առողջանալու հույսը: Բարեկամները Կորնթոսում աղոթել էին նրա համար, և Աստված անսացել էր նրանց աղոթքներին:

2. Պողոսի և կորնթացիների կապերի վերլուծություն (1:12-7:16)

Ա. Նա պաշտպանվում է անկայուն ու ոչ հաստատուն լինելու մեղադրանքից: Պողոսը ծրագրել էր այցելել կորնթացիներին, սակայն միտքը փոխել էր ոչ թե անկայունության պատճառով, այլ որովհետև ուզում էր նրանց ազատել տխրության մի առիթից: Քանի դեռ այս եկեղեցուն պայմանները գոհացուցիչ չեն, Պողոսը կարող էր այնտեղ այցելել միայն վիատված հոգով: Եվ հետո, պարզապես նրանց հանդեպ ունեցած սիրուց դրված՝ նա այս այցը հետաձգում է ավելի ուշ ժամկետի համար, մինչև վերանան համայնքին տանջող ցավերը:

Բ. Նա խորհուրդ է տալիս վերջ դնել արյունապղծության մեջ մերկացված անձի գոր-

ծունենությանը: Երբ մեղավորը խոստովանում է իր սխալը, ապա պետք է նրան ներել ու կրկին վերադարձնել եղբայրական համայնք: Չպետք է նրան վիրավորել ու պախարակել: Հարկ է ներել նրան և մոռանալ նրա գործած արարքը:

Գ. Այնուհետև նա շոշափում է առաքելական գործունեության փառքի հարցը (2:14-6:10): Պողոսը ոգևորությամբ է խոսում իր առաքելության մասին: Նա կանչվել է Աստծու կողմից: Նրա առաքելությունը հաշտության է, որը Փրկիչ Քրիստոսի Միջնորդությամբ միավորում է մեղք գործած մարդուն ու Աստծուն. Քրիստոսի հանդեպ սերը նրան պարտավորեցնում է կատարել այս առաքելությունը: Նա տառապանք ունի այս առաքելության հետ կապված, բայց մոռանում է այդ բանը, երբ մտածում է, որ իր վարձը «ոչ թե մարդկային ձեռքերով պատրաստված, այլ հավերժական մի տուն է՝ իրեն հատկացված երկնքում»:

Դ. Նա պահանջում է, որպեսզի իրեն վերաբերվեն արդարությամբ (6:11-74): Չափազանց զգայուն է: Ցավ է զգում, երբ իրեն զրպարտում են: Փորձում են արատավորել նրա համբավը: Նրանցից պահանջում է բաց հոգի ունենալ և դրսևորել սեր: Այնուհետև նա տեղեկացնում է խառն ամուսնությունների ու կապերի մասին: Եկեղեցում գոյություն ունեն անհավատ տարրեր: Ջարմանալի չեն նաև այդքան հուզումներն ու անկարգությունները: Նա խոսում է Տիտոսի գալու մասին (7:5-16): Երջանիկ է, երբ իմանում է, որ մեղավորը վերջապես զղջացել է: Աստծու պատիվը վերականգնվեց, և Քրիստոսի գործը մեծ չափով առաջ ընթացավ: Կարգապահության շնորհիվ Եկեղեցին բուժվեց իր ցավերից:

3. Ցուցումներ Երուսաղեմի օգտին նվիրատվություններ անելու վերաբերյալ (8-9)

Երուսաղեմի աղքատների օգտին արվող նվիրատվությունը սպասել էր տալիս: Կորնթոսի Եկեղեցին խոստացել էր հանգանակություններ կատարել մայր Եկեղեցու անդամներին օգնելու նպատակով: Այժմ նրանք պարտավոր են իրենց խոստումը կատարել նույն առատաձեռնությամբ, ինչ Մակեդոնիայի Եկեղեցիները, եթե անգամ պահանջվեն զոհաբերություններ: Էլ ավելի պերճախոս օրինակ, քան Եկեղեցիներին, անձամբ Քրիստոսի օրինակն է: Նա աղքատ է դարձել այն դեպքում, երբ իր ձեռքին են աստվածային բոլոր հարստությունները: Քրիստոսի, ինչպես նաև տառապող եղբայրների հանդեպ սերը կորնթացիներին պետք է մղեր առատաձեռնության՝ տալ կամավոր ձևով, առանց հարկադրանքի, քանզի Աստված սիրում է նրան, ով տալիս է ուրախությամբ: Այս բաժինը Պողոսը եզրափակում է Աստծու մեծ շնորհի մասին հիշեցմամբ, որի համեմատ մեր նվիրատվություններն ընդամենը չնչին նմանակումներ են:

4. Առաքելական գործի պաշտպանությունը (10-13:10)

Այս բաժնում չկա ոչ մի գովասանք: Տոնը կոշտ է, մի բան, որ զարմանալի չէ, որովհետև Պողոսը Կորնթոս քաղաքում չափազանց ակտիվ կեղծ դոկտորներից պաշտպանում է առաքելական իր գործը: Նրան համարում էին վախկոտ և անգամ թուլամորթ: Ասում էին, իբրև հեռվից համարձակվում էր գրել, մինչդեռ մոտիկից վախկոտ էր: Առաքյալն այդժամ հիշատակում է այնպիսի փաստեր, որոնք պերճախոս ձևով խոսում են իր օգտին: Եթե բնույթով թուլամորթ լիներ, անդրդվելի չէր մնա հռոմեացի ամենաբարձր պաշտոնատար անձանց դեմ դի-

մաց՝ Ավետարանը նրանց հայտարարելիս: Կհամարձակվե՞ր արդյոք հարձակվել հեթանոսական ամրոցների վրա՝ Ավետարանը քարոզելու նպատակով: Պատասխանը պարզ է:

Պողոսն այդ ժամանակ իրեն համեմատում է կեղծ դոկտորների հետ, պարծենում է ոչ թե հիմարաբար կամ եսասիրաբար, այլ ցույց տալով, որ իր առաքելությունն իրականացնելու համար ունի բոլոր հատկանիշները: Այսուամենայնիվ, նրա մարմնի մեջ գտնվող մի փուշ նրան տանջում, պահում է հնազանդության մեջ: Բայց նրա աչքին փուշը դառնում է աստվածային շնորհ, օրհնություն: Մեզ հայտնի չէ այս տառապանքի ճշգրիտ բնույթը: Ոմանց կարծիքով, խոսքը ֆիզիկական ցավի, ասենք՝ մալարիայի կամ ռևմատիզմի, գլխացավերի կամ տենդի, ընկնավորության կամ տեսողական խանգարումների մասին է: Վերջին վարկածը, թվում է, ամենահավանականն է:

Որպեսզի ավելի լավ ապացուցի, որ ինքը Աստծու իսկական առաքյալ է, Պողոսը թվարկում է իր հատկանիշները.

- 1) նա տառապել էր Ավետարանի պատճառով.
- 2) հրաշալի հայտնություն էր ստացել Աստծու կողմից.
- 3) մեծ գործեր էր կատարել Տիրոջ համար:

5. Եզրակացություն (13:11-14)

Վերջում տեղ գտած ողջույններից բացի՝ այս հատվածը բովանդակում է եկեղեցիներին արված ամենից ավելի հարազատ օրհնություններից մեկը, որ բաղկացած է երեք մասից.

- ա) Քրիստոսի ողորմածությունը փրկության չվաստակած պարզևն է.
- բ) Հայր Աստծու սերը տալիս է իր պարզևները.
- գ) Սուրբ Հոգու հաղորդության պարզևները կիրառվում են քրիստոնյայի կյանքում:

Գ Լ ՈՒ Խ 26

ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿԸ

Ա. ՀԵՂԻՆԱԿՆ ՈՒ ՆԱՄԱԿԸ ԳՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿԸ

Այս նամակի վավերականությունը ոչ մի խնդիր չի առաջադրում: Գրելու պատճառը Պողոսի կողմից քարոզված մաքուր Ավետարանի պաշտպանությունն է: Ամեն պարբերություն կրում է մեծ առաքյալի գրչի ու անհատականության կնիքը: Հզոր հոգի, քնքուշ սիրտ և անհաղթահարելի կամք. սրանք են պահպանում աստվածաբանական այն ուժեղ հանդուժմունքը, որ գտնում ենք այս էջերում, և որոնք Նոր Կտակարանի ամենախորունկ էջերի թվում են: Առաքյալի բոլոր արժանիքները յուրահատուկ, միանգամայն բացառիկ կնիք են դրել: Ուրիշ ոչ մի տեղ առաքյալը հոգևոր պայքարին ձեռնամուխ չի լինում այդպես պարզ ու խոցող ոգով: Ոչ մի տեղ նրա երևակայությունը, որ միանգամայն արդարացված է, չի

հասնում նման բարձունքների: Նրա «ըստ Ավետարանի»՝ Ավետարանի միակ գործին նվիրումը, կասեինք, ամբողջական է: Նա հստակորեն գիտակցում է երկնային իր կոչման էությունը, որը չի ստացել մարդկանց ձեռքով: Ահա թե ինչու նա հաստատական է՝ զնալու ընդհուպ մինչև իր առաքելության վերջը, որը նրան վստահվել է անսովոր ձևով: Խիստ ոճ, հեզմանք, որը երբեք անքաղաքավարություն չէ, հուզիչ պաթոս, նաև՝ պոռթկումներ. այս ամենն ի սպաս է դրված ստացված Հայտնությանը: Դրանք ապացուցում են, որ նամակը գրելիս առաքյալն իր մտավոր հզորության գագաթնակետում է:

Գաղատացիներին ուղղված նամակի առանձնահատուկ խնդիրը մեկ ուրիշ փաստարկ է նամակի վավերականության օգտին: Մ. թ. առաջին դարի վերջին հրեաների ու հեթանոսների միջև հարաբերությունները դադարել էին հուզել Եկեղեցուն, բայց այն պահին, երբ Պողոսն իրականացնում է իր առաքելությունը, այս հարաբերությունները դեռևս քրիստոնեական իրականության սրտում են: Վեճերը առաքելական նրա հոգսերի կենտրոնում են: Դա շատ ավելի դժվարին աշխատանք էր, քան կարելի էր ենթադրել: Այսօր ոչ մեկը չէր մտածի, որ Եկեղեցու անդամ դառնալու համար հարկ է եղել, որ նա նախապես ենթարկվի հրեական ծիսակարգին՝ հետագայում հոգևոր ավելի բարձր աստիճանների հասնելու համար: Դա համարյա դարձել էր հավատքի հողմած հրեական ծագում ունեցող մի շարք հավատափոխների մեջ: Հավատքի այս մեկնաբանությունը հիմք է դարձել ոչ միայն այս նամակի, այլև այլ գրվածքների համար: Այն եղել է նաև Պողոսի որոշ գործունեությունների պատճառը: Դարաշրջանում հրեական կրոնն ու քրիստոնեությունը շատ սերտորեն կապված էին: Իսրայելը կամ հրեա ազգը եղել էր Աստծու ընտրյալ ժողովուրդը՝ «ազգերի» մեջ փրկչական հայտնությունը հաղորդելու նպատակով: Կարելի եղավ ասել, որ եթե հրեական կրոնը ծաղիկն է, ապա քրիստոնեությունը դարձավ նրա պտուղը: Առաքյալը Իսրայելը որակում է իբրև ձիթենու բուն, որի պատվաստված ճյուղերն են հավատափոխ հեթանոսները: Հին Կտակարանի մարգարեները կանխասել էին Մեսիայի գալուստը: Օրենքը (ծիսակարգային) ընդամենը գալիք իրականության ստվերն էր: Այս իրականությունը լինելու էր Քրիստոսով փրկություն, որն էլ ծնունդ էր տալու իսկական սրբությանը, նվիրմանը, որ Աստված պահանջում էր յուրաքանչյուր հավատացյալից: Այսպիսով, ըստ Պողոսի, ինչպես և ամբողջ Նոր Կտակարանի, երբ հայտնվում է իրականությունը, ստվերը պետք է զիջի իր տեղը: Քրիստոսը կատարեց Օրենքի պահանջները և վերջ դրեց նրա նվաստացուցիչ «իշխանությանը»: Պողոսը լավ էր հասկանում, որ անգամ նախկին դիսպանսացիայում հավատացյալները փրկության գիտակցմանը հասնում էին միայն հավատքի միջոցով, այլ ոչ թե ստրկական և ուղղակիորեն հնազանդությամբ: Քրիստոսով հրեային հեթանոսից ժամանակավորապես բաժանող Օրենքը չեղյալ էր հայտարարվել. սա էր հայտնված առեղծվածը: Այսուհետ, միայն Քրիստոսով հավատքն էր միավորում հրեաներին ու հեթանոսներին. երկուսն էլ դարձան Աստծու միակ ժողովուրդ:

Դժբախտաբար, բոլոր հավատացյալները համամիտ չէին այս համոզմունքին: Հրեական կրոն տարածող շատ-շատերը գտնում էին, որ, անգամ օգտվելով ողորմածաբար արվող փրկության գործից, Օրենքին հետևելը պարտադիր էր: Ուղղահավատներն ունեին բազմաթիվ փաստարկներ իրենց դրույթի օգտին: Անշուշտ, Սուրբ Գիրքն ինքն Օրենքի հանդեպ մեծ հարգանքի ապացույց է: Իր առաքելության ընթացքում Քրիստոսն անձամբ մանրա-

մասն ուսումնասիրել էր այն: Իրենց հերթին, առաքյալները ևս չէին խզել կապերը Տաճարի հետ: Նրանք Աստուծոն պաշտում էին հրեական սովորույթների համաձայն և, Օրենքի հանդեպ ազատություն հռչակելով, Պողոսն անձամբ հետևում էր հրեական տոնակատարություններին՝ անգամ պարծենալով, որ հրեական ծագում ունի: Այսուամենայնիվ, չենք զարմանում, որ ուղղադավանները նրան ատում էին՝ հրաժարվելով ճանաչել առաքյալի նրա հեղինակությունն ու հակադրվելով ավետարանչական առաքելությանը: Չէ՞ որ Պողոսը հրեական կրոն տարածող հակառակորդների վրա է հարձակվում. նա մեկընդմիջտ հաստատում է նաև Օրենքի ու Ավետարանի միջև եղած կապերի բնույթը: Միայն հավատքով արդարացումը այն մեծ գործողությունն է, որով Եկեղեցին դառնում է ոչ թե հրեական նոր աղանդ, այլ համապարփակ համայնք՝ կազմված նրանցից, ովքեր Հիսուսի մեջ ճանաչում էին հրեաներին խոստացված Մեսիայի ու համաշխարհային Տիրոջը: *Նրանով ազգերի ցանկությունը՝* անտիկ մարգարեությունների կատարումն իրականանում էր:

Առաքյալը հրաշալիորեն պատրաստվել էր նման առաքելությանը: Ծագմամբ լինելով եբրայեցի՝ նա պատկանում էր փարիսեցիների կրոնական աղանդին, որը բոլոր աղանդներից ամենախիստն էր: Օրենքն ուսումնասիրել էր Գամաղիելի օրոք, որը հայտնի հեղինակություն էր, շատ լավ էր ճանաչում հեթանոս աշխարհը, քանի որ ծագմամբ Կիլիկիայի Տարսոն քաղաքից էր, որը կայսրության ամենակոսմոպոլիտ քաղաքներից մեկն էր ու մշակութային հայտնի կենտրոն: Նա ստացել էր հռոմեական քաղաքացիություն, լավ դիրք ուներ հետևելու հրեական կրոնի և ժամանակակից հեթանոսության միջև եղած տարբերություններին, կրքոտ սիրում էր իր ժողովրդին և գործնականորեն կապվում նրա կրոնին: Դրա ինքնին ապացույցը հավատափոխությունից առաջ Եկեղեցուն հալածելն էր: Բայց երբ նրան պատեց երկնային տեսիլքը՝ սարսափահար անելով Դամասկոսի ճանապարհին, նա վերջապես հասկացավ, որ Քրիստոսի մահն ու հարությունը նրա Մեսիա լինելու անհերքելի ապացույցներն ու հաղթանակի համոզմունքն են: Այդ ժամանակից սկսած՝ այն ամենն, ինչ վերաբերում էր հրեա ուղղափավատների ծիսական արարողություններին, նրան չէր հետաքրքրում: Եթե պատահում էր այնպես, որ հետևում էր դրանց, ապա միայն ու միայն համաքաղաքացիներին զուր տեղը չվիրավորելու մտադրությամբ: Ինչ վերաբերում է հեթանոսներին, ապա վստահեցնում է, որ նրանք պարտավորված չեն հետևելու դրանց: Օրենքին իբրև փրկության պայման հետևելը նույնն էր, թե կտրուկ ձևով մերժել Քրիստոսի միջնորդ գործը:

Քարոզչական առաջին ճանապարհորդության ընթացքում առաքյալը բազմաթիվ հավատափոխներ էր հաշվել փոքրասիական ծագում ունեցող հեթանոսների մեջ՝ առանց նրանց հարկադրելու ենթարկվել մովսիսական Օրենքի պահանջներին: Վերադառնալով Անտիոք քաղաք, որը քարոզիչների համար ծառայում էր իբրև շտաբ, հրեական կրոն տարածողները նրան բռնի ուժով ներգրավեցին իրենց աշխատանքի մեջ՝ մեղադրելով այն բանում, որ հեթանոսությունից հավատափոխ եղածներին չէր պարտադրել Հին Կտակարանի կանոնները: Այս վեճը պատճառ եղավ Եկեղեցական առաջին տիեզերաժողովի գումարման համար. այն տեղի ունեցավ Երուսաղեմում, որին, քարոզիչներ Բառնաբասից ու Պողոսից բացի, մասնակցեցին մայրաքաղաքի Եկեղեցու բոլոր առաջնորդները: Միջոցներ ձեռք առան հավատափոխ հեթանոսների օգտին: Նրանց խորհուրդ տրվեց չուտել կուռքերին նվիրաբերված միս և, հատկապես, ձեռնպահ մնալ անառակությունից: Այսուամենայնիվ, նրանք ազատ էին մովսիսական Օրենքի հանդեպ:

Երուսաղեմի տիեզերաժողովին, սակայն, չհաջողվեց վերջ դնել հուզումներին ու հանգստացնել հոգիները: Քիչ ժամանակ անց Պետրոսն այցելեց Անտիոքի Եկեղեցի: Առանց հաշվի առնելու հրեական հին սովորույթները՝ նա մասնակցեց հավատափոխ հեթանոսների սեղաններին: Բայց երբ իրենց հերթին Անտիոք ժամանեցին Երուսաղեմի հրեական կրոն տարածող էմիսարները, Պետրոսը տեղին համարեց չափավորել իր վարքը և ձեռնպահ մնալ հեթանոսական ծագմամբ քրիստոնյաների հետ ուսելուց: Այսպիսով, նա ցուցաբերեց երկվություն, որը դուր չեկավ հեթանոսների առաքյալին: Ոչ միայն Պետրոսը, այլև Պողոսի գործընկերը Բառնաբասն, անձամբ, տեղի էր տվել նույն ամոթխածությանը: Պողոսն իզուր չհամարեց հրապարակավ քննադատելու իր գործընկերներին ու որոշ առաքյալներին:

Նույն այս դժվարություններն էլ հայտ եկան ամենուրեք, որտեղ ծնվում էր հավատափոխ հեթանոսներից կազմված նոր եկեղեցի: Այնտեղ, ուր Պողոսը ոտք էր դնում, հրեական կրոն տարածողները հետևում էին նրան, եթե չասենք՝ հետապնդում էին՝ նրա գործը խանգարելու մտադրությամբ: Անտիոքից հետո Կորնթոսն էր: Հարծակումները, որին ենթարկվեց, ոչ մի տեղ այնքան ուժեղ չէին, որքան Գաղատիայի շրջանի եկեղեցիներում: Հրեական կրոն տարածողներին հաջողվեց հուզումներ առաջացնել նոր հիմնված եկեղեցիներում: Համարյա բոլոր քրիստոնյաները միայն ողորմածությամբ՝ հավատքի միջոցով փրկվելու հնարավորությունը մերժողների ազդեցության տակ էին: Իրավիճակը պահանջում էր եռանդուն միջոցներ: Պողոսը ձեռնամուխ է լինում սույն նամակը գրելու գործին: Նա լույս աշխարհ է հանում մի բան, որ երբևէ չի եղել՝ ո՛չ առաջ, ո՛չ էլ հետագայում, այն ծանր վտանգները, որ հրեական ուղղադավանությունը ներկայացնում է Փրկչի Քրիստոսի ու Տիրոջ միակ փառքի, ինչպես նաև խաչի վրա թանկ գնով ձեռք բերված ազատության համար:

Այս նամակը իրավացիորեն կոչվել է «Քրիստոնեական Ազատության Մեծ Խարտիա», քանզի հաստատում է միակ հավատքով Արդարացման գլխավոր սկզբունքը: Հին Կտակարանի ո՛չ մի ծես և ո՛չ մի պաշտամունք, ինչպիսին էլ լինի նրա ծագումը, չի կարող ո՛չ հիմնել, ո՛չ էլ հռչակել փրկությունը: Մեղավոր մարդը կարիք ունի միայն Միջնորդ Քրիստոսի հանդեպ հավատքի: Արդ, իրական հավատքը ներառում է Փրկչի կամքին հնազանդություն: Այն իր կենսունակությունը ցույց կտա քրիստոնեական առաքինություններով և կիստևի սիրո կանոնին:

Ինչ վերաբերում է Գաղատացիներին ուղղված նամակի վավերականությանը, ապա այն երբեք կասկածի տակ չի առնվել: Նամակի առաջին իսկ տողից Պողոսը ներկայանում է իբրև նրա հեղինակ, նույնը՝ նաև 6:11 տողում, որտեղ հոգ է տանում սեփական ձեռքով գրելու «մեծատառերով»: Եկեղեցական ավանդությունը հաստատում է նամակի վավերականությունը: Առատ վկայություններ կան Պոլիկարպոսի, Իրինեոսի, Կղենես Ալեքսանդրացու, Գուստիոս Վկայի գրվածքներում: Առաջինը մեջբերումներ է կատարում 4:26 և 6:7 հատվածներից, իսկ մյուսները հավաստում են, որ նամակը պատկանում է Պողոսի գրչին:

Բ. ՀԱՍՑԵԱՏԵՐԵՐԸ

Նամակի առթիվ բարձրացված ամենամեծ հարցը վերաբերում է հասցեատերերին: Որո՞նք են Գաղատիայի այն եկեղեցիները, որ ստացել են նամակը: Խոսքն արդյոք այն

Եկեղեցիների^օ մասին է, որոնք գտնվում են հենց Գաղատիայում, թե^օ այն, որոնք հիմնվել են նույն այս անունը կրող հռոմեական գավառում: Նրանք, ովքեր պաշտպանում են առաջին ենթադրությունը, մտածում են, որ խոսքը Անկյուրա, Պեսինոնա և Տավիոն քաղաքներում Պողոսի քարոզչական երկրորդ ճանապարհորդության ժամանակ հիմնված Եկեղեցիների մասին էր: Երկրորդ վարկածի կողմնակիցները գտնում են, որ խոսքն, ընդհակառակը, Պիսիդիայի Անտիոքի, Իկոնիոնի, Լյուստրայի, Դերբեի Եկեղեցիների մասին է, որոնք հիմնվել են Պողոսի քարոզչական առաջին ուղևորության ընթացքում:

Բայց ի^օնչ է իրենից ներկայացնում Գաղատիան:

Ընդհանուր առմամբ հիշվում է, որ Հին Գալիան բաժանված էր երեք մասի, բայց ավելի քիչ է հիշվում, որ գալիական ցեղերը Եվրոպան լքել են մ. թ. ա. 278-277 թթ. մոտերքում և որ, կտրելով-անցնելով Հելլեսպոնտոսը, նրանք թալանեցին ու ամայացրին Փոքր Ասիան՝ վերջնականապես տեղավորվելու այն շրջանի հյուսիսային հարթավայրերում, որը հետագայում ստացավ «Գաղատիա» անունը, բառ, որն առաջացել է Gaulois¹ բառից: Տարածքը, որտեղ գալիացիները վերջնականապես հիմնվեցին, աշխարհագրական տեսակետից ձվաձև է, ունի 300 կմ երկարություն և 150 կմ լայնություն՝ հյուսիսից հարավ: Պողոսի այցելության ժամանակ այս շրջանում ապրում էր խառն ազգաբնակչություն, որոնց մեջ՝ նաև գալիացիների փոքրամասնություն կազմող սերունդները, իսկ մեծ մասը կազմված էր նախկին զավթիչների մնացորդներից, որոնց միացան հույներ, հռոմեացիներ և հրեաներ: Նույն այս ժամանակ շրջանը գտնվում էր հռոմեական տիրապետության ներքո և կազմում էր մի գավառ, որը ներառում էր Պողոսի՝ քարոզչական առաջին ճանապարհորդության ժամանակ այցելած քաղաքները: Այս անունը կրող գավառը ներառում է Պափլագոնիան, Պոնտոսի մի մասը, Փռյուգիան, Լիկայոնիան և Պիսիդիան: Նամակն ուղղված է Հյուսիսային^օ, թե^օ Հարավային Գաղատիային: Հարավային Գաղատիայի օգտին կարելի է առաջ քաշել հետևյալ փաստարկները: Պողոսն այն եկեղեցիները, ում ուղղել է իր նամակը, խմբավորում է ըստ հռոմեական վարչական այն գավառի, որի մեջ մտնում են: Նա միշտ գործում է այս կերպ, ինչպես, օրինակ, երբ խոսքը վերաբերում է Մակեդոնիային և Աքայային, անկասկած, նույն բանը նա արել է նաև Գաղատիայի դեպքում: Այստեղ գլխավոր քաղաքներն են Պիսիդիայի Անտիոքը, Լյուստրան ու Դերբեն՝ ճանապարհային առանցքի երկայնքով, քաղաքներ, որոնք ավելի մեծ կարևորություն ունեն, քան հենց Գաղատիայի՝ Հյուսիսային շրջանի քաղաքները: Հավանական է, որ առաքյալը դիմում է ոչ թե անհայտ, այլ մեծ քաղաքների ներսում գտնվող եկեղեցիներին: Բացի այդ՝ «Գործք Առաքելոց»-ում բազմաթիվ մանրամասներ են նվիրվում մեր հիշատակած եկեղեցիների հիմնադրմանը, մինչդեռ Պողոսի՝ Հյուսիսային շրջան կատարած այցի մասին հիշատակվում է հարևանցիորեն: Վերջապես, թվում է, թե այստեղ վիճարկվող աստվածաբանական հարցը վերաբերում է առաքելական գործունեության առաջին շրջանին՝ քարոզչական առաջին ճանապարհորդությանը, որի ընթացքում նա հիմնել է նույն այս եկեղեցիները:

Առարկություններն այս փաստարկների դեմ հետևյալն են: Ղուկասը, որը Պողոսի գործընկերն է և իրադարձությունների մասին պատմողը, օգտագործում է «Գաղատիայի շրջան» արտահայտությունը՝ ցույց տալու ոչ թե հռոմեական գավառը, այլ նրա հյուսիսային մասը

¹ Գալիացի (ֆր.):

(Գործք 16:6, 18:23): Թվում է, Պետրոսը նույնպես վկայակոչում է ավելի շուտ Յիուսիսային Գաղատիան, այլ ոչ թե հռոմեական գավառը (Ա. Պետրոս 1:1):

Պողոսին հաջողվել է բազմաթիվ նամակներ ուղարկել Յարավային Գաղատիա: Մեզ է հասել այս թղթակցության մի հատվածը միայն: Պահպանված նամակները տեղ են գտել Նոր Կտակարանում: Պողոսն իր նամակները չի գրում ըստ այս կամ այն եկեղեցու կարևորության, այլ ելնելով հավատացյալների կարիքներից, մտահոգություններից ու բարեկեցությունից: Ինչ վերաբերում է Յիուսիսում եկեղեցիներ հաստատելուն, ապա Ղուկասը վկայում է առաքյալի մի այցի մասին: Այս մասին Պողոսի նկարագրությունը համարյա եզրափակիչ է հյուսիսային եկեղեցիների վերաբերյալ վարկածի օգտին: Նա հայտարարում է, որ սկզբնական շրջանում իր առաքելությունը չէր կազմում սեփական ծրագրի մաս: Նրա ներկայության պատճառը մի հիվանդություն էր, որը նրան շեղեց ճանապարհից ու պահեց Գաղատիայում: Այսպիսի հանգամանքներում է նա քարոզել Ավետարանը: Այս հանգամանքներն անհամատեղելի են թվում պատմությունների հետ, որ Ղուկասը պատմում է Յարավային շրջաններ կատարած շատ ակտիվ, բայց հապճեպորեն իրականացված առաջին երթուղու մասին: Ինչքան ավելի ուշադիր ես ընթերցում «Գործք»-ի 13-րդ և 14-րդ գլուխներում Ղուկասի նկարագրությունը այս երթուղու մասին, այնքան քիչ փաստարկներ ես գտնում այն ծանր ճանապարհորդության օգտին, որի մասին առաքյալը տեղեկացնում է Գաղատացիներին ուղղված նամակի 4:13-15 հատվածում:

Ինչ վերաբերում է Օրենքին ու Ողորմածության մասին տեսական հարցերին, ապա դրանք շոշափվում են նախքան երրորդ ճանապարհորդությունը: Յետևապես, նամակը գրվել է ավելի շուտ: Սակայն, այդժամ առարկում են՝ ասելով, որ դրանից կարելի է կատարել հակառակ եզրակացություններ: Իրոք, Գաղատացիներին ուղղված նամակի որոշ կողմեր այնքան նման են այն տեսակետներին, որ կարելի է հանդիպել Յոնեսացիներին հասցեագրված նամակում. հավանական է՝ երկու նամակներն էլ գրվել են նույն ժամանակաշրջանում:

Ակնհայտ է, որ կան փաստարկներ այս երկու վարկածներից մեկի կամ մյուսի օգտին: Չկա լուրջ պատճառ՝ հրաժարվելու ավանդական կարծիքից, որի համաձայն նամակն ուղղվել է Յիուսիսային Գաղատիային: Եթե այդպես է, ապա ահա իրադարձությունների շարունակությունն ու ժամանակագրությունը, որ մենք նշում ենք իբրև աշխատանքային սովորական վարկած:

Քարոզչական առաջին ճանապարհորդության ընթացքում Պողոսը հիմնում է Անտիոքի, Պիսիդիայի, Իկոնիոնի, Լյուստրայի և Դերբեի եկեղեցիները: Երկրորդ ճանապարհորդության ընթացքում նա կտրում-անցնում է այս քաղաքները և, հիվանդության պատճառով մնալով հին Գաղատիայում, այստեղ քարոզում և հիմնում է «Գաղատիայի եկեղեցիները»: Այստեղից նա շարունակում է ճանապարհորդությունը դեպի Տրոյա ու Եվրոպա: Երրորդ ճանապարհորդության ժամանակ վերադառնում է Գաղատիա, այցելում հիմնված եկեղեցիները և, բռնելով շրջանը կտրող-անցնող թագավորական նախկին ճանապարհը, ուղղվում դեպի Արևելք՝ Փռյուզիա, և վերջապես վերադառնում Եփեսոս: Ուրեմն, հավանաբար Եփեսոսում և կամ մի քանի ամիս ավելի ուշ՝ Կորնթոսում է նա գրել իր նամակը. 57 կամ 58 թ.:

Երկրորդ տեսության (Յարավային Գաղատիայի օգտին) համաձայն՝ Պողոսն ուղղվում է դեպի Արևելք՝ Տրոյա, որտեղից վերադառնում է Եվրոպա և Փիլիպպեից, անգամ՝ Կորնթոսից, գրում իր նամակը: Ուրեմն, դա Պողոսի ամենաինն նամակներից է: Այս եկեղեցիների

աշխարհագրական ենթադրյալ վիճակը, դա վերաբերում է Յուսիսային, թե Յարավային շրջանին, իր ազդեցությունն է թողնում նամակը գրելու տարեթվի, ինչպես նաև այն տեղի վերաբերյալ ունեցած գաղափարի վրա, որ դրանք զբաղեցնում են առաքյալի գործունեության մեջ: Այսուամենայնիվ, դա ոչ մի վճռական նշանակություն չունի նամակի լուրը մեկնաբանելու համար: Խոսքն այստեղ զուտ աշխարհագրական կամ կենսագրական հարցերի մասին է: Մեր հավատքի համար կարևորը բովանդակությունն է: Որտեղ էլ որ լինեն նամակի առաջին հասցեատերերը, առաքյալի ձեռքից նրանք ստացել էին անգնահատելի արժեք ունեցող փաստաթուղթ: Նրանում Պողոսը շոշափել էր քրիստոնեական հավատքի հենց էության հարցը: Քրիստոսը բավակա՞ն էր արդյոք փրկության համար: Որևէ լրացում անելու՞ էր փրկչական իր գործին: Ի՞նչ պետք է անել փրկվելու համար: Իրոք, նամակն ընթերցողի համար, անգամ մեր օրերում, ունի վճռական նշանակություն:

Գ. ԳՐԵԼՈՒ ՏԱՐԵԹԻՎՆ ՈՒ ՎԱՅՐԸ

«Քննադատությունն այս նամակը գրելու տարեթիվը հաջորդաբար համարել է Պողոսի գործունեության բոլոր պահերը՝ այն դարձնելով նրա գրվածքներից առաջինը և անգամ վերջինը: Բոլոր այն վարկածները, որոնց համաձայն նամակը գրվել է Եփեսոսում լինելուց առաջ, պետք է հերքվեն: Այսպիսի նամակ կարող էր գրվել միայն Երուսաղեմի տիեզերաժողովից հետո. համաձայն Գաղատացիներին ուղղված նամակի 1:13 տողի՝ Պողոսը երկու անգամ այցելել էր եկեղեցիները՝ նախքան գրավոր նրանց դիմելը (Գործք 16:6 և 18:23): Վերջապես, ըստ Գաղատ. 1:5 տողի՝ դժվարությունները ծագել են նրա վերջին այցից անմիջապես հետո: Նամակը գրվել է հավանաբար Եփեսոսում, 55 թվականին: Հավանական է նաև, որ գրվել է քիչ ավելի ուշ, և որ այս դեպքում տարեթիվը պետք է տեղավորել Պողոսի՝ Կորնթոսում եղած երեք ամիսների ընթացքում (Գործք 20:3): Եվ ուստի՝ կընդունենք 57 թ. վարկածը»:

Դ. ՆԱՍԱԿԸ ԳՐԵԼՈՒ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

Երրորդ ճանապարհորդության ժամանակ Պողոսը կրկին այցելեց Գաղատիայի նոր հավատափոխներին՝ նրանց հավատքն ամրապնդելու նպատակով: Նրա հակառակորդները, հավանաբար, արդեն սկսել էին իրենց քայքայիչ աշխատանքը: Նամակի որոշ հատվածներից երևում է Պողոսի՝ երկրորդ այցելության ժամանակ ցուցաբերած խստությունը: Անկասկած, նա մեկնել է հանգստացած, քանզի գրում է. «Դուք լավ էիք վազում»: Մինչդեռ Եփեսոսում, որտեղ եկավ հաստատվելու, ստացավ վատ նորություններ. հրեական կրոն տարածողները և հատկապես նրանցից մեկը առաքյալից առաջ եղել էր Գաղատիայում և համարյա ամենուրեք կարճ ժամանակում, եկեղեցիներում հուզումներ առաջացրել, որով էլ բացատրվում է առաքյալի զարմանքը: Մյուսների հետ մեկտեղ՝ նշված անձնավորությունն անբարոյական էր համարում ողորմածության ուսմունքի հետևանքները: Անհանգստացած Ավետարանի գործի և հուզված՝ երիտասարդ հավատափոխներին սպառնացող վտանգի համար առաքյալը գրում է մի խիստ նամակ՝ իր զավակների հանդեպ քնքշորեն թրթռացող սրտից բխած տազնապի իսկական ճիշ (4:19-20): Կեղծ դոկտորները հարձակումներ էին

գործում քրիստոնեական ազատության դեմ: Նրանք սովորեցնում էին, որ որոշ օրերի, հատկապես՝ շաբաթվա խիստ պահպանումը, անհրաժեշտ չէր փրկություն ձեռք բերելու համար: Թվում էր, թե նրանք նշանակալից հաջողության էին հասել: Քանի որ Պողոսն ուսուցանում էր միայն հավատքով Արդարացման արմատական ուսմունքը, ապա կեղծ դոկտորներն սկսել էին քայքայել նրա առաքելությունը և այն կասկածի տակ առնել: Նրանք Գաղատացիներին մղում էին մերժել այն՝ իբրև հերետիկոսական ուսմունք: Պողոսը տխրեց և անզամ վիրավորվեց, մանավանդ որ Երուսաղեմի տիեզերաժողովը դատապարտել էր հենց ուղղադավան ամեն կիրառություն կամ պահանջ:

Ե. ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նամակ գրելիս Պողոսը սովորաբար օգտվում էր քարտուղարի ծառայությունից. ինքը գրում էր կամ եզրակացությունը, կամ էլ պարզապես ողջույնները: Գաղատացիներին ուղղված նամակը գրել է սեփական ձեռքով: Այն գրված է մեծ հուզմունքով, անզամ պոռթկումով: Գայթակղողների ու գայթակղվողների նկատմամբ զայրույթը պայթում է ամեն նախադասության մեջ: Դա մեկն է նրա այն նամակներից, որը բովանդակում է ամենաշատ ինքնակենսագրական տեղեկություններ: Նրա անձի դեմ ներկայացված մեղադրանքները հարցականի տակ են դնում ինչպես առաքելական գործունեությունը, այնպես էլ մյուս առաքյալների հետ ունեցած հարաբերությունները: Տեսական առումով նամակը մոտ է Հռոմեացիներին ուղղված նամակին: Երկու գրվածքներում էլ նրա աստվածաբանությունն ամուր ատաղծված է: Միայն հավատքով Արդարացումը քրիստոնեական նրա հայտարարության անկյունաքարն է, ինչպես նաև Աստծու կողմից ապաշխարածների ընդունումն ու ըստ Սուրբ Հոգու նրանց ընթանալը:

Զ. ԼՈՒՐԸ

«Գաղատացիներին ուղղված նամակի ընթերցանությունը առաջնակարգ դեր է խաղացել Եկեղեցու պատմության մեջ: Դա հավատացյալ մարդկության՝ օրենքի հանդեպ ազատ լինելու հռչակագիրն է, հոգևոր ազատության մոր դարաշրջանի հռչակագիրը»¹: Լյութերն այս նամակն ամենից ավելի էր սիրում: Նա այն կոչում էր «իր հարսնացուն»: Նամակը վճռական դեր խաղաց Ռեֆորմացիայի մեծ դրամայում: Այն գրելիս Պողոսն ունեցել է երեք նպատակ.

1. Պաշտպանել իր առաքելությունը՝ ցույց տալով, որ իր վարդապետությունն ու զորությունը ստացել է անմիջականորեն Հիսուս Քրիստոսից:

2. Շատ փաստարկներով ու օրինակներով ապացուցել Քրիստոսի հանդեպ հավատի բավարարությունը:

3. Ջգուշացնել քրիստոնեական ազատության չարաշահումից՝ ցույց տալով, որ հավատքով Արդարացման պտուղները սրբության պտուղներն են:

¹ F. Godet.

Այս նամակում շոշափված թեման, նամակ, որը գրված է շատ խիստ տոնով, և որտեղ բացակայում է ամեն գույք, ծայրահեղ կարևոր է: Խոսքը Օրենքի ու ողորմածության Ավետարանի և Քրիստոսով ազատության հռչակման միջև եղած հարաբերության մասին է, ազատություն, որը ձեռք է բերվում միայն հավատքով: Համառոտ ներկայացնենք այն:

Փրկությունը ձեռք է բերվում միայն հավատքով: Գաղատացիները օրենքի լծի տակ ընկնելու վտանգի մեջ էին, քանի որ հրեա քրիստոնյաներն ուզում էին հին Ուխտի ծիսակատարությունները պարտադրել նոր հավատափոխներին: Հետևելով նրանց օրինակին՝ շատ մարդիկ, ովքեր այսօր հենվում են իրենց մկրտությանը ներհատուկ արդյունավետության վրա, ի չիք են դարձնում Հիսուս Քրիստոսի փրկչական գործի արժեքը: Պողոսը չի վարանում Աստծուց բաժանված և ողորմածությունից զրկված հայտարարել նրանց, ովքեր չեն հավատում նրա բավարար գործին: Այնուհետև, հենվելով հրեական ու հեթանոսական ծագում ունեցող քրիստոնյաների փորձի, ինչպես նաև Հին Կտակարանի Գրվածքի վրա, նա ապացուցում է, որ արդարացման միակ միջոցը միայն Քրիստոսով հավատքն է: Ողորմածության Ուխտը չեղյալ չի համարում Օրենքի Ուխտը, այլ փոխարինում է նրան և կարիք չի զգում նրանով լրացվելու: Քրիստոսն ամեն ինչ է և կամ ոչինչ է: Մենք կամ փրկվում ենք միայն հավատքով, կամ էլ պարտավոր ենք կատարել ամբողջ Օրենքը: Խոստումը տրվել է Աբրահամին՝ Օրենքը հաստատելուց առաջ: Իսկ Օրենքը, որ մի տեսակ փակագիծ է խոստման պարզևի ու նրա կատարման միջև, նպատակ ուներ առաջնորդել դեպի Քրիստոսը, որի մեջ բոլորը՝ հրեաներն ու հեթանոսները, դարձել են մի մարմին: Այսուհետ, կամ Օրենքի ստրուկներն ենք, ուստի և՛ անչափահաս երեխաներ, կամ ժառանգության զավակներն ենք՝ արարված Քրիստոսով ազատության համար: Քրիստոսով ազատությունը ծնունդ է տալիս սրբությանը: Ազատագրվելով օրենքի ստրկությունից՝ ողորմածությունը մեզ դարձնում է սիրո ստրուկներ: Քրիստոնյան հավատքով ստանում է Սուրբ Հոգի, որի հրաշալի պտուղը սերն է: Այսուհետ, նա իրավունք չունի օգտվելու իր ազատությունից՝ մարմնապես ապրելու համար: Նա կոչված է ապրելու ըստ Հոգու: Նա կարող է կատարել Օրենքը, որն անփոփոխ է Աստծու և մերձավորի հանդեպ ունեցած սիրո երկակի պատվիրանի մեջ: Քրիստոնյան պետք է այնպես անի, որպեսզի չհիանա այնքան թանկ գնով ձեռք բերված այս ազատությամբ: Ազատության մեջ ապրելը նրա համար նշանակում է դառնալ աստվածային կամքի ստրուկը: Սիրո ստրուկը կընթանա սրբության մեջ և կվայելի ժառանգորդ դարձած որդու բոլոր արտոնությունները:

Նամակի գլխավոր թեման Ավետարանի գերազանցությունն է Օրենքի նկատմամբ: Հրեական կրոն տարածողները, որոնք փորձում են քայքայել գաղատացիներին, միացել էին քրիստոնեությանը և, սակայն, նախքան հավատափոխ լինելը, չէին թողնում հրեական իրենց լուծը: Պողոսն ուսուցանել էր այս հերետիկոսությանը հակառակ ուսմունք: Նա կրկին ցույց է տալիս, թե Օրենքն ինչպես էր անհաջողություն կրել՝ տալով սպասվող արդյունքը: Այն չի առաջարկում, ոչ էլ երաշխավորում է կյանքի սկզբունք, այլ կաթվածահարում է մարդու սիրտը, մինչդեռ պետք է կատարեր ժամանակավոր մի գործառույթ. դաստիարակեր գալիք Հայտնության համար և, այսպիսով, հաշիվ տար մարդկային մեղքի վիճակի մասին: Այժմ Քրիստոսի Ավետարանը առաջարկում է վերածնված կյանքի մի նոր սկզբունք՝ հավատքի սկզբունքը: Հավատքը Քրիստոսին միացնում է մարդուն, որի արդարությունը լիովին ծածկում է նրան: Քրիստոսն ապրում է նրա մեջ, իսկ նա Քրիստոսի մեջ է: Նա արդա-

րացվում է Քրիստոսով, ինչպես չէր կարող արդարացվել Օրենքով: Օրենքով ապրելը թուլացնում է հոգևոր կյանքը: Ավետարանը ձեռք է բերում բարոյական ու հոգևոր կյանքի սկզբունք: Որևէ աշակերտի մեջ Քրիստոսի ներկայությունը նրան մղում է սիրել մերձավորին, հրաժարվել մարմնի գործերից և կրել Հոգու պտուղները:

Նամակի գործնական արժեքն է, որ խստորեն դատապարտում է նրանց, ովքեր հայտարարում ու տարածում են կեղծ Ավետարան. սա կիրառվում է ոչ միայն Պետրոսի դարաշրջանի հրեական կրոն տարածողների, այլև հին ու նոր բոլոր հերետիկոսների նկատմամբ: «Մարդու բնածին այլասերվածությունը մշտապես երևան է հանվում այն փաստով, որ սերունդ սերնդի հետևից նա տենչում և ձգտում է բազմապատկել փրկության ճանապարհները, հնարել հեշտ ուղիներ, ողորմածության ու հավատքի այլընտրանք: Պողոսը համառում է՝ ասելով, որ կա միայն մի ճանապարհ, որը ոչ մի գնով չպետք է ձևափոխվի կամ շեղվի»¹:

Է. ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն (1:1-10)

Նամակն սկսվում է այլ կերպ, քան Պողոսի մյուս գրվածքները. այստեղ չկա երախտագիտության կամ գովասանքի առարկա: Առաքյալն արտաքուստ, թվում է, այնքան է ցնցված Գաղատիայի եկեղեցիների ու նրանց անհավատության մասին ստացած նորություններից, որ անմիջապես, առանց նախաբանի, ձեռնամուխ է լինում հիմնական թեմային: Նա օգտագործում է «ուժեղ» լեզու. «Թող անիծվի նա, ով քարոզում է մի ուրիշ Ավետարան և կամ խեղաթյուրում է այն»: Գաղատացիների անհավատության հետ կապված զգացումը բուռն է: Նրան կարելի է հասկանալ:

2. Քրիստոնեական ազատության Ավետարանը ստացված է Աստծուց (1:11-2:21)

Վարկաբեկվելով հրեական կրոն տարածող քարոզիչների կողմից՝ առաքյալը ձեռնամուխ է լինում իր առաքելության պաշտպանության գործին: Նրա հակառակորդները պնդում էին, որ Ավետարանը նա ստացել էր մարդկանցից (ոչ թե ուղղակի հայտնություն, այլ մարդկային ավանդույթ): Պողոսը պնդում է, որ դա անհնարին է: Չէ՞ որ հրեական կրոնը, որի մեջ դաստիարակվել էր, արմատապես հակադրվում է Ավետարանին: Նա, առավել ևս, չէր կարող ստացած լինել մյուս առաքյալներից, քանզի իր հավատափոխությունից անմիջապես հետո հեռացել ու մեկուսացել էր: Երբ, վերջապես, ծանոթանալու նպատակով հանդիպեց նրանց, ապա վերջիններս խոստովանեցին իր փորձի ու առաքելության, ինչպես նաև կրչման վավերականությունը. դրանք բոլորն էլ նա ստացել էր անմիջականորեն Աստծուց: Նրանք անգամ թույլ էին տվել, որ Տիտոսը չթլփատվի՝ գոհացնելու հրեական սովորույթի պահանջը, այս կերպ հատուկ ու հզոր նշան տալով քրիստոնեական ազատության մասին: Անգամ, երբ Պետրոսը տեղի տվեց ուղղահավատության նախկին մոլորությանը, նա համաձայնեց քննադատվել ու ուղղվել նոր առաքյալի կողմից: Այդ բանը նա չէր անի, եթե չընդուներ Պողոսի առաքելության վավերականությունը: Պողոսի քարոզած Ավետարանը վավերական է:

¹ Philip E. Hughes.

3. Քրիստոնեական ազատության Ավետարանն արգելված է (3:1-4:31)

Այն բանից հետո, երբ Պողոսն ապացուցեց, որ Ավետարանն ստացել էր ուղղակի հայտնությամբ, նա շարունակեց պաշտպանել այն. *Քրիստոնեական ազատությունը սերտորեն կապված է միայն հավատքով արդարացմանը:*

Միայն հավատքով արդարացվելու դեպքում կարելի է օգտվել քրիստոնեական ազատությունից, իսկ երբ այս արդարացումն ակնկալում են կատարած գործերի դիմաց, ապա դառնում են Օրենքի ստրուկը: Պողոսը հավատքով արդարացման մի լավ օրինակ է բերում Յին Կտակարանից (Աբրահամի օրինակը)՝ հավատացյալների հոր օրինակը: Եթե նահապետն արդարացվել է իր հավատքով, ապա նրա հոգևոր զավակները նույնպես, ովքեր հավատում են Աստծուն՝ առանց լինելու նրա մարմնական սերունդները, կարդարացվեն: Օրենքը բացահայտում է մեր մեղքը և մեզ դատապարտում, քանի որ անընդունակ ենք հետևելու նրան: Բայց Քրիստոսը մեզ ազատել է դատապարտումից, և մենք ազատագրվել ենք օրենքի լծից:

Այնուհետև տրվում է երկու օրինակ՝ ցույց տալու տարբերությունը Օրենքի ներքո ապրելու և ողորմածաբար ապրելու ձևերի միջև: Նախ՝ ժողովուրդն անվանվում է անչափահաս, հոգևոր առումով, մինչդեռ Նոր Կտակարանի քրիստոնյաները դարձել են չափահաս: «Ինչո՞ւ վերադառնալ դեպի մանկության տարիները», - հարցնում է նա: Դա հենց այն է, ինչ այժմ անում էք: Այնուհետև հրեական կրոն տարածողներին նա համեմատում է Հագարի՝ Աբրահամի սպասուհու և նրա հետ համատեղ կյանքով ապրողի զավակների հետ, իսկ քրիստոնյաներին՝ Սառայի՝ նահապետի օրինական կնոջ զավակների հետ: Եվ քանի որ Իսրայելը վատություն է արել Իսահակին, նույն ձևով էլ Գաղատիայի քրիստոնյաների մեջ հուզումներ առաջացնող հրեաները վատություն են անում նրանց:

4. Քրիստոնեական ազատության Ավետարանի կիրառությունը կյանքում (5:1-6:16)

Ազատությունը Քրիստոսի պարգևն է, և նրանից պետք է օգտվել այնպես, որպեսզի դա պատիվ բերի Տիրոջը: Այն չպետք է չարաշահել: Պետք է զգուշանալ՝ այն չվերածելու բացառիկ իրավունքի: Քրիստոնեական ազատությունը վայելելու փաստը չի նշանակում, որ մեզ թույլատրվում է անել ամեն ինչ: Մեր ազատությունը ազատություն է մեղքի հետ երես առ երես, այլևս մեղք չգործելու ազատություն, այն ազատությունը, որը մեզ լծում է Աստծուն ծառայելու գործին: Համաձայն այն բանի, ինչ նա գրել է կորնթացիներին, ազատության սկզբունքը ղեկավարվում է սիրո կողմից: Պետք է ընթանալ ոչ թե ըստ մարմնի, այլ Հոգու: Աշխարհում կան երկու տեսակ մարդիկ. նրանք, ովքեր առաջնորդվում են մարմնական սկզբունքով, և ենթարկվում են նրան, և նրանք, ովքեր առաջնորդվում են Հոգով ու ապրում են մի նոր կյանք Քրիստոսի մեջ: Վերջիններս իրենց ազատությունից երբևէ չեն օգտվի մեղավորին վնասելու համար: Ոմանք հակասություն են տեսնում Աստծու զավակների ազատություն ունենալու փաստի և միաժամանակ Քրիստոսին ծառայելու միջև: Պողոսը ոչ մի հակասություն չի տեսնում, որովհետև եթե մերձավորի, ինչպես Տիրոջ հանդեպ սերը լինի մեզ ղեկավարող սկզբունքն ու գործնականությունը, ապա հակասությունը կվերանա: Մերն, իրոք, Օրենքի ամփոփումն է:

Իր նամակի բարոյախոսական մասի վերջում Պողոսը դառնում է էլ ավելի բացահայտ: Նա հիշեցնում է, թե ինչպես պետք է վարվել Ավետարանի ուղուց հեռացողների հետ: Պետք է ցուցաբերել համբերություն և համբերատարություն, լինել բարի թույլերի հանդեպ, հնարավորին չափ օգնել նրանց: Եվ, վերջապես, նա ընդգծում է բարոյական կյանքի վրա հսկողություն սահմանելու անհրաժեշտությունը, քանզի «մարդն ինչ ցանի, այն էլ կհնծի»:

5. Եզրակացություն (6:11-18)

Մեկ անգամ ևս «Զգուշացե՛ք հրեական կրոն տարածող քարոզիչներից»: Նրանք ազնիվ չեն, անգամ չեն հետևում Օրենքին, պարծենում և առաջ են քաշում սեփական անձը: Ինչ վերաբերում է Պողոսին, ապա նա հպարտանում է Քրիստոսի Խաչով, որի միջոցով հավատացյալները դարձել են Թագավորության համար պատրաստ նոր ստեղծվածներ: Եվ վերջապես, թող ոչ ոք կասկածի տակ չառնի Ավետարանը: Նա ինքն իր սեփական մարմնի վրա կրում է «Քրիստոսի հետքերը»։ Խոսքն, անշուշտ, Քրիստոսի հակառակորդ հրեաների վատ վերաբերմունքի մասին է, մի բան, որն ևս ապացույց էր, որ նա իսկապես ուղարկվել էր Քրիստոսի կողմից: Նամակն ավարտվում է օրհնության խոսքով:

Գ Լ ՈՒ Խ 27

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿԸ

Ա. ՀԵՂԻՆԱԿԸ

Այս նամակի հեղինակը Պողոս առաքյալն է: Նա այն գրել է հռոմեական բանտից: Բանտարկության երկար ժամերի ընթացքում, անկասկած, նա ժամանակ ունեցավ ընդհանուր գծերով վերհիշելու իր հրաշալի ծառայությունն ու առաքելական գործունեությունը: Դամասկոսի ճանապարհին ստացել էր հարություն առած Քրիստոսի տեսիլքն ու իր կոչումը, հրաժարվել էր փարիսեցիությունից և վերջ դրել ծնվող Եկեղեցուն հալածելու գործին: Բայց նաև հարկադրված էր փախչել Դամասկոսից՝ վախենալով, որ հրեա նախկին համակրոնակիցները կարող էին սպանել իրեն՝ հավատափոխ լինելու պատճառով: Երուսաղեմում միացել էր քրիստոնյաների և Քրիստոսի առաքյալների շարքերին, բայց, այստեղ ևս, ատիպված էր փախչել բորբոքված ամբոխից, որը փորձում էր նրան վնաս հասցնել՝ մերժված Մեսիային հարելու պատճառով: Կիլիկիայում՝ հայրենի Տարսոն քաղաքում, որոշ ժամանակ մեկուսանալուց հետո նրան կանչել էին՝ աջակցելու Եկեղեցու առաջնորդներից մեկին՝ Բառնաբասին, որ իր ավագն էր՝ նրան օգնելու Անտիոքի Եկեղեցին հիմնելու առաքելության մեջ: Ավելի ուշ այս քաղաքից էր ձեռնարկելու քարոզչական թվով երեք ճանապարհորդությունները: Բառնաբասի հետ նրանք գնացին նախ՝ Կիպրոս, այնուհետև՝ այն տարածքի կենտրոնական հատվածը, որն այժմ կոչվում է Թուրքիա, Փոքր Ասիա: Երկրորդ

ճանապարհորդության ընթացքում կտրել-անցել էր Եվրոպան և հիմնել նոր եկեղեցիներ, այս անգամ՝ Մակեդոնիայում և Կենտրոնական Հունաստանում: Կարծատև այցով գնալով Եփեսոս՝ այստեղ է թողնում իր նոր բարեկամներին՝ Ակյուղասին ու Պրիսկիլային: Անտիոքում մնալուց հետո նորից վերադառնում է Եփեսոս, որտեղ անցկացնում է երեք տարի՝ աշխատելով հանուն առաքելության: Այստեղ նա հիմնել էր ոչ միայն ուժեղ եկեղեցի, այլև այս քաղաքն ընտրել էր իբրև ազդեցության տարածման կենտրոն. նա իր գործընկերներին ուղարկում էր Փոքր Ասիայի այլ երկրներ՝ ավետարանելու: Ստեղծվեցին նոր եկեղեցիներ: Եփեսոսում նա ծրագրել էր գնալ Հռոմ՝ Կայսրության մայրաքաղաք: Սակայն նախ պետք է լիներ իր հավատքի հոգևոր մայրաքաղաքում՝ Երուսաղեմում: Որոշ ժամանակ Հունաստանում և Սիրիայում անցկացնելուց հետո կանգ է առնում Միլետոսում՝ Եփեսոսին մոտ գտնվող նավահանգստում, որտեղ մարդ է ուղարկում Եկեղեցու Երեցների հետևից՝ նրանց հրաժեշտ տալու նպատակով: Նրան հանձնարարված էր բերել Երուսաղեմի համայնքի աղքատ անդամներին հատկացված նվիրատվությունը:

Այս քաղաքի հրեաները մշտապես ցանկանում էին վռնդել նրան, պատրաստ էին խռովություն առաջացնել՝ առաքյալին վարկաբեկելու նպատակով: Վերջին պահին նա փրկվեց հռոմեացի մի պաշտոնատար անձի կողմից, որը խառնամբոխի հետապնդումից փրկելու համար վերջինիս ուղեկցել տվեց մինչև Կեսարիա՝ հռոմեական կուսակալի նստավայր: Ամբողջ երկու տարի Պողոսը պետք է մնար այստեղ: Հուսահատվելով, որ չի արդարացվում, նա օգտվեց Հռոմի քաղաքացի լինելու իրավունքից և դիմեց Կեսարին: Դա միակ միջոցն էր Հռոմ գնալու համար: Բայց ճանապարհորդությունը պետք է անցներ միանգամայն տարբեր հանգամանքներում, քան ակնկալում էր: Այժմ այլևս իբրև ազատ քարոզիչ չէ, որ նավ էր նստում կայսրության մայրաքաղաք գնալու համար, այլ շղթայակապ բանտարկյալի պես:

Ոչ մի կասկած չկա, որ Հռոմի կայսերական բանտում անցկացրած այս երկար ամիսների ընթացքում մեծ առաքյալը հիշել է իր հուզիչ կյանքի բոլոր դրվագները: Բայց նա չգոհացավ միայն անցյալը վերհիշելով: Բանտարկությունն անցնում էր ավելի շուտ նպաստավոր պայմաններում: Բնակվում էր մի տան մեջ, որ կարողացել էր վարձել սեփական ծախսերով և, լիովին ազատ, այցելուներ էր ընդունում: Նա օգտվում էր նաև այլ առավելություններից, որոնցից մեկը քրիստոնյաների խմբերի հետ զրուցել կարողանալն էր: Մեծ թիվ էին կազմում նրանք, ովքեր կայսերական տանը (այդ ժամանակ կայսրը Ներոնն էր) կամենում էին ավելի շատ բան իմանալ այս նոր կրոնի վերաբերյալ, որը վկայակոչում էր Հիսուս անունով մի Հրեայի՝ Քրիստոսին:

Առանձնահատուկ այս հանգամանքները Եփեսացիներին ուղղված նամակի վերջում հիմնավորում են նրա խնդրանքը՝ աղոթելու իր օգտին, որպեսզի կարողանա բացել բերանը և խոսել այն Ավետարանի առեղծվածների մասին, որի շղթայակապ դեսպանն էր: Բանտարկյալ Պողոսն, այսուամենայնիվ, մնում էր նաև իբրև մեծ համարձակություն ունեցող քարոզիչ: Իրավունք ունենք մտածելու, որ բանտարկության այս տարիների ընթացքում նա ավելի շատ բան է արել, քան սովորական գործունեության տարիների: Նա այստեղ է գրել որոշ նամակներ, որոնք մեզ են հասել իբրև աստվածային Հայտնության միջնորդ: Մարդասիրական ու գրական առումով այս գրվածքները մեր աչքին թանկարժեք փաստաթղթեր են անտիկ աշխարհի վերաբերյալ: Ոչ մի պատճառ չունենք կասկածելու այս նամակի վավերականությանը:

Պողոսը երկու անգամ անվանում է իրեն (1:1 և 3:1):

Վավերականության արտաքին ապացույցները նույնպես բազմաթիվ են և դիմանում են գրպարտիչների բոլոր հարձակումներին: Նամակը հաստատվում է Պոլիկարպոսի, Իգնատիոսի, Իրինեոսի, Կղեմեն Ալեքսանդրացու վկայություններով և, անկասկած, հայտնի է եղել Կղեմեն Յոննացուն, ինչպես նաև Տերտուլիանոսին: Եվսեբիոսի Կառնոնում այս նամակը *homologoumena*-ների, այսինքն՝ այն նամակների շարքում է, որոնք ընդունվել են ինչպես Արևելքի, այնպես էլ Արևմուտքի Եկեղեցիների կողմից: Մուրատորիի Կառնոն այն տեղավորում է Պողոսի մյուս ինը նամակների կողքին (Հովվական նամակները չեն մտնում դրանց մեջ):

Երկար չենք անդրադառնա այս նամակի վավերականությանն առնչվող հարցերին՝ հիշատակելով միայն ներքին որոշ փաստարկներ (ինչպես՝ Պողոսի աստվածաբանությունը), որոնք յուրովի ապացուցում են այդ: Հակադիր փաստարկը, որի համաձայն նամակը Պողոսինը չէ, այլ նրա աշակերտներից մեկնունեկինը, քանի որ Պողոսը չի ներկայանում, ինչպես դա անում է մյուս գրվածքներում, թվում է միաժամանակ և՛ կամայական, և՛ ոչ գիտական: Պողոսի այլ նամակներում զարգացվում են նույն թեմաները, թեև տարբեր ձևով:

Բ. ԳՐԵԼՈՒ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

Նամակի ուղարկումը բացատրվում է տարբեր պատճառներով: Մի լրաբեր էր եկել Հռոմ՝ հաղորդելու առաքյալի մակեդոնացի բարեկամների տխրության արտահայտությունը: Ծանր հիվանդությունից հետո, որը թանկագին Եպափրոդիտոսին գամել էր անկողնում՝ երկար ժամանակ անշարժացնելով նրան, վերջինս ի վիճակի էր տուն վերադառնալ: Պողոսն օգտվում է առիթից՝ նրան վստահելով փիլիպպեցիներին հասցեագրված մի նամակ: Նա ջերմորեն շնորհավորում է այս Եկեղեցու անդամներին՝ բարեկամության ու նյութական մվիրատվությունների համար: Կիսում է նաև որոշ փորձառություններ, որոնցից անձամբ օգտվել էր: Հեռավոր Կողոսայից նույնպես նրան հասան նորություններ շրջանի եկեղեցիների վիճակի վերաբերյալ: Կողոսացիներին ուղղված նամակում առաքյալը բուռն կերպով պաշտպանում է Քրիստոսի հավիտենական աստվածությունը: Եվ հետո, այս քաղաքից փախած՝ Օնեսիմոս անվամբ մի ստրուկ, որը գտնվում է Հռոմում, ձերբակալվում է: Առաքյալի ջանքերով նա դառնում է դեպի Քրիստոսը: Այդժամ նա որոշում է վերադառնալ նախկին տիրոջ մոտ, որին ծանր վիրավորել էր, և որը նույնպես քրիստոնյա է՝ Պողոսի կողմից հավատափոխ եղած Փիլիմոնը: Պողոսը նամակ է գրում նրա անունով՝ խնդրելով ընդունել նախկին ստրուկին: Վերջինիս, մի բարեկամի ու գործընկերոջ՝ Տյուքիկոսի հետ ուղարկում է Փիլիմոնի մոտ: Տյուքիկոսը տանում է Կողոսացիներին ուղղված նամակը:

Սակայն Կողոսա քաղաքի քրիստոնյաներից բացի՝ քրիստոնյաներ կան նաև նույն շրջանում: Նրանց հոգևոր վիճակը Պողոսը համարում է իր պարտքը: Նրանց մասին մտածում է հռոմեական գերության ժամը շրջանում: Եվ այսպես, գրում է մի ուրիշ նամակ, որն անվանում ենք «Պողոսի՝ Եփեսացիներին ուղղված նամակ»: Տյուքիկոսը տանում է նաև այս նամակը:

Փիլիպպեցիներին, Կողոսացիներին և Փիլիմոնին ուղղված նամակների միջև եղած պատմական կապն էլ ավելի ցայտուն է վեր հանում սույն նամակի բովանդակությունը: Կարելի

է մտածել, որ այն ևս, ինչպես նախորդ երեքը, գրվել է 62 կամ 63 թ.: Եթե գերության երկու տարիներին նա չկարողացավ իրականացնել քարոզչական ուղղակի գործունեություն, ապա «Գերության նամակներ» կոչվող չորս նամակների շարադրումը կարելի է համարել իբրև առաքյալի քարոզչական ծառայության բացառիկ կարևոր իրադարձություն: Եփեսացիներին ուղղված նամակը պատասխան է իր խնդրանքին. «Խնդրում եմ չկորցնել ձեր քաջությունը իմ նեղությունների պատճառով, նեղություններ, որ ձեր փառքն են»:

Գ. ՀԱՍՏԵԱՏԵՐԵՐԸ

1. Քաղաքը

Նամակը հասցեագրված է Ասիայի (չչփոթել աշխարհագրական կամ քաղաքական ժամանակակից Ասիայի հետ) հռոմեական գավառում ապրող քրիստոնյաներին: Փոքր Ասիայում գտնվող այս գավառը փռվում է արևելյան ափի ողջ երկայնքով: Այստեղ են գտնվում բազմաթիվ մեծ կենտրոններ, որոնցից Եփեսոսն ամենակարևորն է: Հիմնվել էր աթենացիների կողմից, սակայն բնակչության մեծ մասը կազմված էր Արևելքից եկած մարդկանցից: Պողոսի դարաշրջանում Եփեսոսը մրցակցում էր Ալեքսանդրիայի և Անտիոքի հետ՝ իբրև Միջերկրականի արևելյան մասի առևտրական երեք գլխավոր կետերից մեկը: Այն միաժամանակ և՛ քաղաքական, և՛ առևտրական կենտրոն էր: Այստեղ՝ փողոցներում միմյանց էին հանդիպում հրեաներ ու հույներ: Նավահանգիստը Կաիստրոսի վրա էր. քաղաքի անկումը կարելի է բացատրել նավահանգստի անկմամբ: Առաջին դարի ընթացքում Եփեսոսը կայսրության ամենաբարգավաճ քաղաքներից մեկն էր: Բայց իր նշանակության համար քաղաքը պարտական էր վաղուց ի վեր այստեղ զարգացում ստացած հոգևոր հետաքրքրությանը: Իրոք, Դիանային (հունական Արտեմիսին) նվիրված տաճարը անտիկ աշխարհի յոթ հրաշալիքներից մեկն էր: Մարմարե այս հրաշալի կառույցը նայում էր դեպի Արևելք՝ քաղաքի սահմանից այն կողմ: Տաճարն ուներ հարյուր տասը մետր երկարություն և ութսուն մետր լայնություն: Մոտավորապես հարյուր սյուն պահում էին տաճարի մոտ քսան մետրանոց բարձրությունը. սյուներից յուրաքանչյուրը ճարտարապետական արվեստի գլուխգործոց էր՝ ոմն արքայազնի պարզև: Տաճարի կառուցումը պահանջել էր մոտ քսան տարի: Ձոհարանի ներսում աստվածուհու պատկերն էր. այնպես էր թվում, թե նա ընկնում է երկնքից:

Ձոհարանի հետևի մասում պահպանվում էին միապետերի ու բազմաթիվ ազգերի գանձերը: Հիշենք, որ Պողոսի դեմ մեղադրանք էր հարուցված. նրան պատասխանատու էին համարում արծաթյա փոքրիկ զոհասեղանների առևտրի անկման գործում: Դրան հաջորդող խռովությունը վերջ դրեց մեծ առաքյալի ավետարանչական գործունեությանը: Հիացմունքի արժանի ճարտարապետական մեկ այլ հուշարձան, որի մասին հիշատակված է «Գործք Առաքելոց»-ում, թատրոնն էր՝ հելլենիստական աշխարհի ընդարձակ թատրոններից մեկը՝ 50 000 հանդիսատեղով: Դեպի այս թատրոնն է անսանձ ամբոխը քարշ տվել Պողոսին: Հուզումը, սակայն, հանդարտվել է քաղաքի քարտուղարի, որը նաև սենատի նախագահն էր, խելացի խորհրդով:

Թատրոնի մոտ փռվում էր ըմբիշների վազքի ու կենդանիների մարտերի համար նախատեսված մի մարզադաշտ. այս մասին Պողոսն ակնարկում է Կորնթացիներին ուղղված

նամակում, անշուշտ, կիրառելով փոխաբերական լեզու: Հետաքրքիր է նշել, որ Դիանայի՝ այստեղ դրսևորվող պաշտամունքը այլուր նրան նվիրվող պաշտամունքի տարբերակն էր: Սիրիական կամ փյունիկյան ծագում ունեցող Աստարտեի պես, որի հետ նրան հաճախ նույնացնում էին, աստվածուհուն պատվում էին իբրև պտղաբերության աղբյուր և ցեղի բազմացման տիրուհի: Կարելի է պատկերացնել գինարբուքի ու ժգնությունը այս բնույթի կրոնական հովանավորության ներքո: Մոլեռանդության ու սնահավատության մի ընդարձակ ջունգլի է տարածվել աշխարհի յոթերորդ հրաշալիքի շուրջ: Լավ նախապատրաստված հողի վրա զարգանում էին սատանայական ամեն տեսակ այլանդակություններ, իսկ կախարդությունն ու ոգեհարցությունը աղտոտում էին մթնոլորտը: Այսուամենայնիվ, Տիրոջ Ամենագործությամբ՝ առաքյալը կարողացավ հարձակվել Սատանայի ամրոցների վրա և այնտեղ տնկել Խաչվառը: Նա ընտրվել էր լինելու Քրիստոսի վկան, և ձեռնարկման հաջողությունը նրա բացառիկ առաքելության պերճախոս վկան էր: Ավելացնենք, որ այս առաքելությունը Պողոսի կողմից իրականացված ձեռնարկումներից մեկն է միայն:

Հովհաննեսի «Հայտնություն»-ը տեղեկացնում է, որ Եփեսոսն այն յոթ Եկեղեցիների շարքում էր, որի «հրեշտակը» նամակ էր ստանում:

2. Եկեղեցին

Բացարձակապես հավաստի չէ, որ «Եփեսացիներին» անվանվող նամակն ուղարկվել է Եփեսոսի Եկեղեցուն: Կարելի է մտածել, որ այն եղել է միաժամանակ շրջանի բազմաթիվ եկեղեցիներ ուղարկված «շրջիկ» նամակ: Այս մասին՝ ավելի ուշ: Շատ հավանական է, որ Լաոդիկիայի և Հերապոլիսի Եկեղեցիները նույնպես այն ստացել ու կարդացել են: (1:13-15, 2:21, 6:21, Կողոս. 2:2-3):

Առաքյալի առաջին այցը Եփեսոս, որը կռապաշտության անպարկեշտ ու հայտնի նստավայրն է (ըստ Bengel-ի՝ arx Paganismi), կարճատև էր. դա ավելի շուտ երախտագիտության այց էր, քան այնտեղ եկեղեցի հիմնելու նպատակով քարոզչական գործ սկսելու համար ընտրված դաշտ: Ակյուղասն ու Պրիսկիղան այցից հետո մնացին այստեղ՝ իբրև գավառային ավետարանիչներ, զուցե իբրև առաքյալի օգնականներ (Ա. Կորնթ. 12:28), և նրանց առաքելությունը պտուղ տվեց: Երբ քարոզչական երրորդ ճանապարհորդության ժամանակ Պողոսը վերադարձավ Եփեսոս, ապա այստեղ մնաց ավելի քան երկու տարի: Նրա առաքելության դեմ շուտով ընդդիմություն ստեղծվեց. այն հրահրված էր հատկապես հրեաների կողմից: Համաձայն իր ռազմավարության՝ այս իրավիճակում Պողոսը շրջվեց ուղիղ դեպի հեթանոսները: Աստիճանաբար, Եկեղեցու ստեղծած կապերով համախմբվեցին ոմն Տյուրանի ընթերցասարահում, որն, անկասկած, փիլիսոփայության կամ ճարտասանության դպրոցի նստավայրն էր: Այս անունը կարող է պատկանել հրեայի կամ հույնի: Առաքյալը իր ժամանակի մի մասը հավանաբար նվիրաբերել է աշխատանքին՝ հոգալու իր կարիքները, իսկ մյուս մասը՝ ավետարանացմանը: Քրիստոնեական ասամբլեան ընդարձակվեց և թվով մեծացավ: Համայնքի կյանքի ալիքները տարածվեցին քաղաքի սահմաններից դուրս: Հավանաբար, առաքյալի քարոզչական գործունեության ժամանակ են հիմնվել Փոքր Ասիայի մյուս յոթ եկեղեցիները: Հենց Եփեսոսում ստեղծվեց քրիստոնեական ընդարձակ եղբայրություն, թեև մանրամասն տեղեկություններ չունենք նրա հիմնադրման ու տարածման մա-

սին: Կարելի է վստահ լինել, որ «Եբրայեցու որդի եբրայեցին», որ Պողոսն էր, վշտացրեց կռապաշտության տեսարանն ու դրան ուղեկցող կերուխումներն ու այլ սանձարձակություններ: Այսուամենայնիվ, լավ ռազմավարի պես, նա ճակատային հարձակում չգործեց Արտեմիս - Դիանայի պաշտամունքային արարողության վրա, քանի որ քաղաքը պարծենում էր *noéoloros*-ի՝ այսինքն՝ տաճարի պահապանի իր հատկանիշով: Սակայն նա առիթը բաց չթողեց դատապարտելու այս պաշտամունքը, և նրա քննադատությունները շուտով հասան եփեսացիների ականջը: Պողոսի քարոզի ուղղակի հետևանքները երևացին այն սպառնալիքի մեջ, որ թևածում էր ոսկերիչների եղբայրության բարձրաձև առևտրի գլխավերևում. վերջիններս հարստանում էին հեթանոսական պաշտամունքի առևտրից: Նոր հավատափոխները խարույկի վրա մեծ եռանդով այրեցին մոգության ու կախարդության վերաբերյալ գրքեր: Սա ևս ապացույց է արտասովոր այն ազդեցության, որ առաքյալը գործում էր ամբողջ քաղաքի վրա: Դուկասը հավատարմորեն ու կենդանի ձևով նկարագրել է գործարար մարդկանց՝ Պողոսին հակադրվելու տեսարանը: Բորբոքված ամբոխը, նրա տրամադրության տակ եղած ասիացիները, գոռոռացող խառնամբոխը, *eirenikon*-ի՝ քաղաքի ժանրումնեծ քարտուղարի ներկայությունը. այս ամենը վկայում է խռովության բացառիկ արձագանքի մասին. «Այս բաները չեն կատարվի որևէ անկյունում»:

Հարցադրումը հետևյալն է՝ իմանալ, թե արդյո՞ք նամակը գրելիս Պողոսը մտածում էր միայն Եփեսոսում իր հիմնած եկեղեցու կարևորության շուրջ: Մեր տրամադրության տակ եղած բոլոր ձեռագրերը կրում են հետևյալ մակագրությունը՝ «Եփեսոսում գտնվող բոլոր սրբերին»՝ բացառությամբ երեքի, բայց սրանցից յուրաքանչյուրում, հետագայում ինչ-որ մեկը ավելացրել է հասցեն: Այս նախադասությունը տեղ է գտել Նոր Կտակարանի բոլոր հին թարգմանություններում: Բացի այդ՝ Պողոսը սովորաբար նշում էր հասցեատերերին: Հավանական է, որ առաքյալն այս նամակը չի գրում միայն մեկ եկեղեցու, որի հետ կապված էր թանկարժեք հիշողություններով ու խոր զգացմունքով: Հունարեն երկու կարևոր ձեռագրեր չեն կրում այս մակագրությունը: Ենթադրվում է, որ դրանք նախորդում են մակագրություն ունեցողներին, հետևաբար և ունեն ավելի մեծ կշիռ: Համաձայն Առաքելական Հայրերի վկայության (առաջին դարի վերջ, երկրորդ դարի սկիզբ)՝ չկա «Եփեսոսի եկեղեցուն» հիշատակումը: Ըստ էության, պնդում են, որ արտահայտությունը չի հանդիպում առաջին երեք դարերով թվագրված ձեռագրերում:

Բավականին ուժեղ մեկ ուրիշ փաստարկ՝ նամակի բացառապես եփեսացիներին ուղղված լինելու տեսության դեմ, կարելի է գտնել Պողոսի՝ այս եկեղեցու հետ պահպանած առանձնահատուկ հարաբերությունների բնույթի մեջ, որոնք միաժամանակ և՛ մտերմիկ էին, և՛ տևական: Պողոսն է եղել այս եկեղեցու հիմնադիրը և երեք տարի շարունակ՝ հովիվը: Նա խոսում է «գիշեր-ցերեկ լացով ու արցունքներով» իր հորդորների մասին: Այս եկեղեցու հանդեպ նրա զգացմունքի խռովությունն արտահայտվում է Միլետոսում Երեցների առջև արտասանած հրաժեշտի խոսքում: «Նրանք իր վզովն ընկան, լացեցին ու տխրեցին՝ իմանալով, որ այլևս չեն տեսնելու»: Դժվար է պատկերացնել, որ Պողոսը կարողացել է նամակ գրել մի եկեղեցու, որի հետ կապված էր բազմաթիվ կապերով՝ առանց վկայակոչելու անցյալի դեպքերը, առանց հիշելու թանկարժեք հուշերը: Բայց նամակը չի բովանդակում ո՛չ տեղային նշանակության վկայությունների, ո՛չ անհատական ողջույնների, ո՛չ էլ արտոնյալ անձնական հարաբերու-

թյունների որևէ հետք: Որոշ հատվածներից անգամ թվում է, թե Պողոսը չի ճանաչել իր ընթերցողներին: Նամակի խորունկ հայտարարություններն ու գործնական խրատներն ավելի շուտ վերացական են ու անդեմ. համապատասխանաբար, բոլոր մասնագետները եկել են այն եզրակացության, որ այս նամակն ուղարկվել է ոչ թե որևէ առանձին եկեղեցու, այլ խոսքը Կոնդակի մասին է, որը նախատեսված է շրջանի քրիստոնեական բազմաթիվ համայնքների համար, որոնց մեջ՝ նաև Եփեսոսը:

Ընթերցողները հեթանոսական ծագում ունեն: Առաքյալը լսել է նրանց հավատքի ու սիրո մասին. իմացել էին, որ Պողոսը բանտարկված է և տխրել էին դրա համար: Հասկանալի է, որ նրանք ճանաչում էին Տյուքիկոսին: Բացի այդ՝ այս նամակն ուղեկցված էր մեկ ուրիշ նամակով, որը հասցեագրված է հատկապես Կողոսայի քրիստոնյաներին, և քանի որ սա ևս տարվել է Տյուքիկոսի հոգացությամբ, ապա իրավացիորեն կարելի էր ենթադրել, որ այն նախատեսված էր Լաոդիկիայի, Տերապոլիսի և Ասիայի՝ պրոկոնսուլության այլ քաղաքների եկեղեցիների համար, որոնց վարչական կենտրոնը Եփեսոսն էր:

Մի վարկածի համաձայն էլ՝ նամակում երևի ազատ տեղ է մնացել, և հետագայում մակագրություն է ավելացվել այստեղ՝ նայած թե որտեղ է նամակն ընթերցվել: Իրոք, կարելի է կարծել, որ «Եփեսոսին» մակագրությունն ավելացվել է հետագայում:

Արտահայտվելով կոնդակի օգտին՝ մենք, այսուամենայնիվ, ուզում ենք մշել, որ դա չէ էականը: Նրա բովանդակությունը վճռական նշանակություն ունի մեր սեփական հավատքի համար, իսկ ներշնչանքն այնպիսին է, որ շատ արագ տեղ է գտնում Նոր Կտակարանի՝ իբրև կանոնական դիտվող գրվածքների շարքում: Այս բովանդակությունը հրաշալիորեն հարմարվում է յուրաքանչյուր սերնդի քրիստոնեական ցանկացած եկեղեցու կարիքներին ու պայմաններին:

Հովհաննու «Հայտնության» մեջ հիշատակված եկեղեցիները ենթարկվեցին կեղծ տեղեկությունների հարձակմանը, և շատերը տեղի տվեցին: Եփեսոսը պահպանեց հավատքի ամբողջականությունը, չնայած այստեղ բացակայում էր եռանդն ու ջերմությունը: Մի հին ավանդության համաձայն՝ Հովհաննես առաքյալն այստեղ է անցկացրել կյանքի վերջին տարիները: Ժամանակավորապես, Տիմոթեոսը ղեկավարել է եկեղեցին: Մ. թ. 2-րդ դարի ընթացքում այս եկեղեցին դեռևս լավ համբավ ուներ: Իգնասիոսը նրան է հղել իր նամակներից մեկը: Ավելի ուշ, քաղաքն ընկավ հոգևորականության ազդեցության տակ, և դեկադենցիայի հետ Եփեսոսն էլ, իր հերթին, կորցրեց կենսունակությունը՝ թողնելով միայն այն նամակը, որ ընթերցում ենք «Եփեսացիներին» անվանման տակ:

Դ. ԼՈՒՐԸ

«Նամակի տոնն արքայական է»: Քրիստոսը համաշխարհային մի կայսրության Գերիշխանն է, որտեղ ամեն քրիստոնյա՝ հրեական, թե հեթանոսական ծագմամբ, ունի նույն իրավունքներն ու պարտականությունները: Քրիստոնեական կյանքի այսօրինակ ըմբռնումը կարող էր երևան գալ միայն Հռոմեական կայսրության մեջ, Կեսարների կայսերական պալատին շատ մոտ: Ահա թե ինչու առաքյալն այս նամակում չի դիմում որևէ անհատի, ինչպես Փիլիմոնի դեպքում էր, ոչ էլ տեղական որևէ եկեղեցու, ինչպես արվել է Կողոսայում,

այլ գրում և խոսում է urbi և orbi, քրիստոնեական ամբողջ մարմնին: Նամակի նպատակն ընդհանրական է՝ ամրապնդել ու խրախուսել եկեղեցու անդամների հավատքը:

Չի թվում, թե գոյություն ունի այս եկեղեցուն սպառնացող հերետիկոսության վտանգ: Սրանով է բացատրվում նամակի՝ ավելի շուտ դրական տոնը: Ընթերցողները պարտավոր են հասնել հավատքի գագաթ: Նրանք ներկա են Աստծու փրկչագործական ծրագրի լրությանը, նրա ակունքին ու Որդու մեջ սպառվել-վերջանալուն: Բովանդակությունը կարող է հիշեցնել ավելի շուտ «ավետարանչական սաղմոս», քան համակարգված տեսական շարադրանք: Այս նամակում ակնատես ենք Աստծու՝ իր եկեղեցուն տված գնահատականին: Եկեղեցին զուտ մարդկային կազմակերպություն չէ՝ կոչված իրականացնելու հասարակական ու մարդասիրական գործունեություն, ոչ էլ հոգևոր փորձ ունեցող կամավորների ընկերություն: Այն ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐՄԻՆՆ Է:

Ե. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն (1:1-2)

Նամակն սկսող տողում անմիջապես երևում է նրա վավերականության ապացույցը. ստորագրված է Պողոսի կողմից: Եկեղեցիների մի խմբի, որոնց մեջ՝ նաև Եփեսոսը, ուղղված այս նամակում Պողոսը ներկայանում է իբրև Քրիստոս-Յիսուսի առաքյալ՝ Աստծու կամքով:

2. Քրիստոսի մարմնի անդամ լինելու առավելությունը (1:3-3:21)

Քանի որ գլխավոր թեման Քրիստոսի եկեղեցին կազմող հավատացյալների միասնությունն է, ապա բնական է, որ Պողոսը խոսում է իր ծագման մասին: Եկեղեցու հիմքը աստվածային ընտրությունն է: Աստված նրա անդամներին ընտրել է նախապես, անգամ նախքան աշխարհի գոյությունը: Աստծու կողմից ընտրված, Քրիստոսի կողմից փրկված և Յոգով հաստատված. այսպես է կազմվել եկեղեցին:

Առաքյալը շարունակում է իր փաստարկը՝ հիշեցնելով, որ եկեղեցու անդամներ դառնալու առավելությունը պետք է ներշնչի նաև նման դիրքի հարստության, ինչպես նաև աստծու զորության հանդուժումը: Մինչդեռ նրանք հոգեպես մահացած էին, զայրույթի զավակներ, որոնք դարձել են Քրիստոսի որդեգրված զավակներ: Սա նրանց ջանքերի արդյունքը չէ: «Դուք փրկվել եք ողորմածությամբ, և այս փրկությունը ձեզանից չէ, դա Աստծու պարգևն է»:

Նոր Կտակարանի եկեղեցին համաշխարհային է: Այն չի սահմանափակվում միայն հրեաներով, ինչպես Յին Կտակարանի դեպքում էր: Յեթանոսներն ու բոլոր ցեղերը նրան կարող են մասնակցել նույն հիմունքով և հրեաների հետ հավասար: Նրանք, ովքեր մի ժամանակ հեռու էին Աստծուց, այժմ արյամբ մոտեցել են Քրիստոսին: Յրեայի ու հեթանոսի միջև տարբերությունը վերացել է: Այլևս հնարավոր չէ հաստատել էթնիկական, ռասայական, լեզվական ու մշակութային պատնեշներ, այլ միայն հոգևոր, այն, ինչը մարդկանց բաժանում է Քրիստոսի մարմնի անդամների. եկեղեցին, Փրկչի կողմից ներվածները և նրանք, ովքեր հրաժարվում են ենթարկվել Աստծուն և ապրել նրա ողորմածությամբ՝ հայտնված նրա Որդու՝ մեր Փրկչի մեջ: Ներկայումս զուտ հարմարության համար ենք մարդկանց բաժանում էթնիկական ու ռասայական կարգերի, բայց դա ամենևին էլ վճռական չէ նրանց հավերժական ընտ-

րության ու փրկության համար: Այս նոր մարմինը չի կարող բաժանվել մասերի: Առաքյալը շեշտը դնում է բոլոր հավատացյալների հոգևոր արմատական միասնության վրա:

Որպեսզի ընթերցողները չկասկածեն Եկեղեցու մեջ իրենց ներգրավմանը, Պողոսը նրանց հիշեցնում է, որ Աստված իրեն կանչել է դառնալու հեթանոսների քարոզիչը: Տեսական բաժինը եզրափակում է՝ աղաչելով Աստծուն՝

- ա) ամրապնդելու իրենց հավատքում,
- բ) որպեսզի Քրիստոսը կարողանա ապրել իրենց սրտում, և
- գ) որ նրանք կարողանան ճանաչել ու գնահատել Աստծու սիրո մեծությունը:

3. Քրիստոսի մարմնի անդամների պարտականությունները (4:1-6:20)

Իր նամակներում Պողոսը, սովորաբար, առաջին հերթին ձեռնամուխ է լինում իր վարդապետության տեսական մասին կամ հիմքին, վարդապետություն, որի վրա այնուհետև կառուցելու է երկրորդ մասը, որը կանվանենք էթիկա կամ բարոյագիտություն (թե նրանք ինչպես պետք է ապրեն իրենց քրիստոնեական կյանքը): Նրա աչքին ուսմունքն ու պրակտիկան, հավատքի դավանումն ու վարքը սերտորեն կապված են միմյանց: Նամակի վերջին երեք գլուխները գործնական բնույթի են:

Քանի որ նամակի գլխավոր թեման հավատացյալների միաբանությունն է, ապա այս բաժնում Պողոսը հորդորում է ընթերցողներին՝ պահպանել այն: Նրանք երբեք չպետք է դա համարեն մեկընդմիջ ձեռք բերված արժեք, այլ ապես միաբանություն չի լինի: Եշտարիտ է, որ Եկեղեցու անդամներն ունեն սեփական ընդունակություն և զբաղեցնում են տարբեր պաշտոններ ու ծառայություններ, բայց դա չի խթանում նրանց միաբանությունը: Այն կարող են պահպանել, եթե հիշում են.

- ա) որ իրենց պարզևների աղբյուրը երկինք բարձրացած Քրիստոսի մեջ է:
- բ) որ նպատակը, որի համար հատկացվել են, Եկեղեցու անդամներին ուսուցանելն է, մինչև բոլորը հասնեն քրիստոնեական հասունության վիճակին:

Եթե այս երկու կետերը պահենք հիշողության մեջ, հավատացյալների միջև բնավ բաժանություն չի լինի:

Եփեսացիները նույնպես պետք է մերժեն հին մարդուն, ազատվեն հին սովորույթներից ու մեղքի գործից՝ նոր մարդուն հանդերձներ հագցնելու համար: Նրանք պետք է «զարգացնեն քրիստոնեական առաքիլությունները»: Հին արատները կոչվում են «խավարի գործեր», և դրանք անմաքրությունը, սուտը, գողությունը, ցանկասիրությունը, նախանձն են: Անմաքրության մասին շատ է խոսվում, որովհետև բնութագրական է հեթանոսական ամբողջ կյանքի համար: Հեթանոսներն անմաքուր էին իրենց կրոնում, ժամանցներում, գործերում ու քաղաքականության մեջ: Նոր առաքիլությունները կոչվում են «լույսի գործեր»: Դրանք են՝ սերը, թողությունը, արդարությունը, սրբությունը: Ինչքան ավելի շատ ենք ազատվում հին մարդուց, այնքան ավելի ենք մոտենում Քրիստոսի պատկերին:

Քրիստոնեական ընտանիքի անդամների միջև հարաբերությունների մասին խոսվում է հետո: Սկզբում շոշափվում է ամուսնու և կնոջ հարաբերությունների հարցը: *Կանայք պետք է հնազանդվեն իրենց ամուսիններին*: Մենք պետք է հիշենք աստվածաշնչյան այս արտահայտությունը, որով ասվում է այն, ինչ ասում է Աստված: Իրենց հերթին *ամուսինները պետք*

է սիրեն իրենց կանանց: Դրա պատճառը խորն է. տղամարդու և կնոջ հարաբերությունները դառնում են Քրիստոսի և նրա Եկեղեցու միջև հարաբերությունների պատկերը:

Կանայք պարտավոր են հնազանդվել իրենց ամուսիններին, ինչպես Եկեղեցին պետք է հնազանդվի ու ենթարկվի Քրիստոսին: Ամուսինները պետք է սիրեն իրենց կանանց, քանզի Քրիստոսը սիրել է իր Եկեղեցուն և նվիրվել նրան:

Այնուհետև՝ ծնողների և երեխաների միջև հարաբերությունները. երեխաները պետք է հարգեն և ենթարկվեն իրենց ծնողներին, քանզի Աստված նրանց իշխանություն է տվել: Իրենց հերթին ծնողները չպետք է զուր տեղը զայրացնեն իրենց երեխաներին:

Եվ վերջապես՝ տերերի ու ծառաների միջև կապերը: Վերջիններս պետք է ենթարկվեն մարմնական իրենց տիրոջ հեղինակությանը, եթե անգամ խոսքը ոչ հավատացյալների մասին է: Քրիստոնյա տերերը պետք է իրենց ծառաների հետ մեղմորեն վերաբերվեին: Սերը պետք է լինի այս տարբեր հարաբերությունների գլխավոր գործոնը:

Յուրաքանչյուր քրիստոնյա պետք է իրեն պահի քաջ զինվորի պես: Նա կոչվում է սուրբ մարտ մղելու Տիրոջ բանակում: Ինչպես հարձակողական, այնպես էլ պաշտպանական զենքերը նրան տրվել են հենց Աստծու կողմից: Իր խոսքը լուսաբանելու համար առաքյալն օգտագործում է դարաշրջանի հռոմեացի զինվորի պատկերը:

4. Եզրակացություն

Տյուքիկոսի առաքելությունը, որին հանձնարարված էր տանել նամակը, երկակի է. պատասխանել նամակը ստացողների հարցերին, եթե դրանք կան, նրանց մխիթարել՝ հայտարարելով Պողոսի մոտալուստ այցը:

Գ Լ ՈՒ Խ 28

ՓԻԼԻՊՊԵՏԻՆԵՐԻՆ ՈՒՂՎԱԾ ՆԱՄԱԿԸ

Ա. ՀԵՂԻՆԱԿԸ

Հեղինակը Պողոս առաքյալն է: Գրվել է Հռոմում՝ 63 թ.: Պողոսը Մամերտինի բանտում է, եթե ոչ՝ Պրետորական գվարդիայի բարաքներում՝ Պալատին բլրի վրա: Նա համոզված չէ, թե շուտով կազատվի, այսուամենայնիվ ազատվում է, սակայն ավելի ուշ: Որոշ հույս է փայփայում: Իր դատավարությանը սպասում է հանգիստ ձևով:

Բ. ՓԻԼԻՊՊԵ ՔԱՂԱՔԸ

Քաղաքը համաշխարհային ճանաչում ստացավ ոչ այն պատճառով, որ կրում է մակերդնացի թագավոր Փիլիպպոսի՝ Ալեքսանդր Մեծի հոր անունը, այլ որ կապվում է Պողոսի առաքելական գործունեության հետ: Նրա անունը պատմության մեջ կմնա ոչ թե հռոմեա-

կան լեգեոնների մղած ճակատամարտով, այլ նամակով, որ հատուկ հանձնարարությամբ մի հրեա՝ քարոզիչ Պողոսը, նրան է հղում մ. թ. 1-ին դարում:

Սկզբում քաղաքը կրում է Cnides կամ «Փոքր շատրվաններ» անունը, քանի որ գտնվում է բազմաթիվ աղբյուրների մոտ: Շրջանը հարուստ է արծաթի, անգամ ոսկու հանքերով, որոնք հարավը եզերող սարերի տակ էին: Քաղաքով անցնող ճանապարհը Արևելքը կապում է Արևմուտքի հետ՝ ծառայելով իբրև առևտրական առանցք Ասիայի և Եվրոպայի միջև:

Փիլիպպոս 2-րդ Մակեդոնացին՝ Ալեքսանդր Մեծի հայրը, ընդունել է այս շրջանի կարևորությունը: Այն փռվում էր մինչև Թրակիայի սահմաններից այն կողմ: Ք. ա. 356 թ.՝ գահին նստելուց 4 տարի հետո, նա այս տարածքը բռնի ուժով միացրեց մակեդոնյան թագավորությանը: Այսժամ ընդարձակեց քաղաքն ու այն ամրացրեց՝ տալով իր անունը: Հանքերի շահագործումը կատարվում էր մեծ արդյունավետությամբ. տարեկան արդյունահանվում էր մոտ հազար քանքարի արժեքով ոսկի: Այս մեծ եկամուտները Փիլիպպոսին հնարավորություն տվեցին ոչ միայն ավելացնել ռազմական ուժերը, այլև գործողության մեջ դնել կաշառակերությունը, որի մեծ մասնագետն էր: Ավանդազրույցն ասում է, որ Մակեդոնյան տիրակալի կարծիքով, ամրոցն անառիկ չէ, եթե ոսկով բեռնավորված ավանակները, պատերին քավելով, պտույտ էին գործում նրա շուրջ:

Cnides-ի ոսկին բավականին արագ կտարածվի ամբողջ Հունաստանում՝ զնալով գորաբանակների առջևից և հեշտությամբ բացելով ծանր դռներ, որոնք չէին կարող խորտակվել ռազմական ծանր մարտկոցներով:

Հռոմեական նվաճումների շրջանում, մոտ երկու դար անց, այս հարուստ հանքերը համարյա կսպառվեն: Նվաճումն ավարտին է հասցվում Պյուդեյի ճակատամարտի ժամանակ, մ. թ. ա. 168 թ.: Դա վիճակվում է հռոմեացի կուսակալ Պողոս Էմիլիոսին, որը ձեռքը դնում է մակեդոնացի վերջին տիրակալի բոլոր գանձերի վրա: Մակեդոնյան գավառը պաշտոնապես հռչակվեց ու հաստատվեց: Այս դարաշրջանում, ըստ պատմաբան Ստրաբոնի, Փիլիպպե քաղաքը թուլացել էր:

Ք. ա. 42 թ. այն դուրս կգա անհայտությունից: Այս տարվա աշնանը քաղաքն ականատես կլինի երկու խմբավորումների, մի կողմից՝ Բրուտոսի և Կասիոսի դաշնակիցների, մյուս կողմից՝ Օկտավիանոսի և Մարկոս-Անտոնիոսի զորքերի միջև տեղի ունեցած հայտնի ճակատամարտին: Առաջին երկուսը Հուլիոս Կեսարի սպանության գլխավոր հրահրիչներն են եղել, սպանություն, որը կատարվել էր Հանրապետությունը վերահաստատելու հույսով: Հաջորդ երկուսից Օկտավիանոսը՝ Կեսարի որդեգրած զավակը, իր ձեռքը կվերցնի իշխանությունը և կդառնա առաջին կայսրը՝ Օգոստոս անվամբ: Այս բախումն, այսպիսով, որոշեց հռոմեական պատմության ընթացքը, և դրանով իսկ վրեժ լուծվեց Կեսարի մահվան համար: Քիչ ժամանակ հետո Փիլիպպե քաղաքը դարձավ գաղութ՝ կրելով Colonia Julia Philippensis կոչումը, որը վկայում էր Հուլիոս Կեսարի կողմնակիցների հաղթանակի մասին: Օկտավիանոսի՝ Մարկոս-Անտոնիոսի դեմ տարած հաղթանակից մոտ տասնմեկ տարի անց, Ակտիոնի ծովային հայտնի ճակատամարտի ժամանակ, մ. թ. ա. 31 թ., գաղութն ընդարձակվեց ու ամրապնդվեց Անտոնիոսի կողմնակիցների կողմից. վերջիններս կորցրել էին իտալական իրենց տարածքները Օկտավիանոսի համախոհների օգտին: Փիլիպպեի երկրորդ հիմնադրումը նշանավորվեց մեկ այլ կոչումով, այն է՝ AUGUSTA, և Փիլիպպե

քաղաքի ամբողջական անվանումն, այսպիսով, դարձավ COLONIA AUGUSTA JULIA (VITRIX) PHILIPPENSIVM: Կան այս գրառումով դաջված մետաղադրամներ: Պատմաբանը հավաստում է, որ, իրոք, Փիլիպպե քաղաքը եղել է հռոմեական գաղութ: Այս փաստն առատ լույս է սփռում Ղուկասի կողմից 16-րդ գլխում նկարագրված միջադեպի, ինչպես նաև մեր նամակի բովանդակության վրա:

Հռոմեական որևէ գավառ համարյա նշանակում էր Հռոմի ընդարձակում: Այն օգտվում էր բազմաթիվ առանձնաշնորհներից, որոնցից հիմնականը *jus italicum*-ն էր՝ արտոնություն, որ շատ էին տենչում կայսրության մյուս քաղաքացիները: Այս օրենքը գաղութներին տալիս էր ազատություն և իրավունքներ, որ հատուկ էին բնական իրավունք ունեցող Հռոմի քաղաքացուն, իսկ նոր քաղաքացիների անուններն ավելացվում էին հռոմեական ծագում ունեցող ցեղերի անուններին: Բացի այդ՝ նրանք ազատված էին հարկերից, հավասարապես օգտվում էին հռոմեական իրավասության տակ գտնվող հողեր ունենալու իրավունքից: Յուրաքանչյուր գաղութում դատավորները թվով երկուսն էին: Նրանք իրականացնում էին քաղաքացիական ու ռազմական իշխանություն՝ գաղութների գավառային ղեկավարներից անկախ:

Հռոմեական գաղութի իշխող մթնոլորտը դրսևորվում է «Գործք Առաքելոց»-ի, ինչպես նաև նամակի էջերում: Դատավորները յուրացնում են «ՊՐԵՏՈՐՆԵՐ» կամ «հրամանատարներ» կոչումը: Նրանց լեյտենանտները սերժանտներ կամ թիկնապահներ են: Իրենց համարում էին հռոմեացի կոնսուլներին հավասար: Փիլիպպեի դատավորները, թվում է, չափազանց հեշտությամբ են տրվում ամբոխի մեղադրանքների ազդեցությանը. Պողոսն ու Շիղան մեղադրվում են հռոմեական սովորույթներին անտեյակ լինելու և կարգուկանոնը խախտելու մեջ: Սակայն նրանք սարսափահար են լինում իմանալով, որ Պողոսը Հռոմի քաղաքացի է, և որ կայսրությանը ենթակա մարդկանց նկատմամբ ծանր անարդարություն է գործվել: Իր նամակում, որը գրվել է Հռոմում, Պողոսը հռոմեական գաղութներում ապրող քրիստոնյաներին հիշեցնում է նրանց քաղաքացիական արտոնությունները, ինչպես նաև պարտականություններն ու պարտավորությունները:

Չարգացումն ու բարգավաճումը, որ քաղաքը վայելում է մեր այս նամակի ժամանակաշրջանում, ոչ միայն հռոմեական գաղութի իր կարգավիճակի, այլև աշխարհագրական արտոնյալ վիճակի հետևանք են: Էգնատիա կոչվող մեծ ճանապարհը, որը փռվում է Ադրիատիկ ծովի վրա գտնվող Դիրաքիումից մինչև Էգեյան ծովի վրա գտնվող Նեսապոլ, և անգամ էլ ավելի հեռու՝ մինչև Յելլեսպոնտոս, այն ևս կտրում-անցնում է՝ հետևում թողնելով Թեսաղոնիկեն (որտեղ այժմ էլ գոյություն ունի): Քաղաքն ամբողջ շրջանում համարվում էր առաջինը՝ առանց հստակորեն իմանալու, թե ինչու: Գուցե այն պատճառով, որ առաջինն էր հանդիպում Մակեդոնիայի արևմտյան կողմից թափանցող ճանապարհորդին: Այն վարկածը, որի համաձայն Փիլիպպեն ամբողջ Մակեդոնիայի մայրաքաղաքն է, պակաս հավանական է, քանի որ հայտնի է, որ այս պատիվն ուներ Թեսաղոնիկեն, որին հետևել է մոտ 50 կմ դեպի հարավ ընկած Ամփիպոլիսը, որը տարածքով գերազանցում էր Փիլիպպեին: Գուցե հռոմեական քաղաք-գաղութի նրա դի՞րքն է պատճառը: Եկեղեցու հիմնադրմանը հաջորդող դարերի ընթացքում այն դարձյալ կորցրեց իր նշանակությունը: Ներկայումս հանդիպում են անտիկ քաղաքի փլատակները միայն: Մինչդեռ նրա փառքը կմնա, քանի որ եղել է Եվրոպայի առաջին քաղաքը, որն ավետարանացվել է և ականատես եղել առաջին եկեղեցու հիմնադրմանը:

9. ՓԻԼԻՊՊԵՑԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Եկեղեցու հիմնադրման պատմությունը, որի համար պարտական ենք Ղուկասի՝ «Գործք Առաքելոց»-ի հեղինակի գրչին (գլ. 16), մինևույն ժամանակ և՛ դրամատիկ է, և՛ ցնցող:

Քարոզչական առաջին ճանապարհորդության ընթացքում Պողոսն այցելել էր Անտիոք քաղաքը՝ Սիրիայում, Կիպրոս կղզին և հասել էր ընդհուպ մինչև Փոքր Ասիայի հյուսիս: Նա այստեղ հիմնել էր Պիսիդիայի Անտիոքի, Իկոնիոնի, Լյուստրայի և Դերբեի Եկեղեցիները: 50 թ. մոտերքում՝ Երուսաղեմի տիեզերաժողովից հետո, նա քարոզչական մի նոր ճանապարհորդություն է սկսում Սիրիայի Անտիոքից՝ այս անգամ Շիղայի ուղեկցությամբ: Նախ՝ այցելում է նախորդ ուղևորության ժամանակ հիմնած եկեղեցիները. նրան է միանում երիտասարդ Տիմոթեոսը՝ հավատափոխ, որը դարձել էր նրա ամենահավատարիմ ու մտերիմ գործընկերներից մեկը: Գնալով էլ ավելի արևմուտք՝ այն տպավորությունն է ստեղծվում, թե նա ուզում է տեղավորվել Եփեսոսից՝ Ասիայի պրոկոնսուլության մայրաքաղաքից մեկնող հռոմեական մեծ ճանապարհի վրա: Սուրբ Հոգին նրան խանգարում է քարոզել այս շրջաններում, այս պատճառով էլ նա ուղղվում է դեպի Փոքր Ասիայի հյուսիս՝ Բյուբանիա: Այնուհետև, նա կգնա ավելի արևմուտք, շուտով կհասնի Տրոյա՝ Եգեյան ծովի վրա գտնվող մի նավահանգիստ: Քարոզչական նրա ձեռնարկման համար Աստուծո կամքն այստեղ ավելի հստակ է դառնում: Գիշերային մի տեսիլքի ժամանակ նա իր առջև կանգնած է տեսնում մի մարդու, որը նրան խնդրում է անցնել Մակեդոնիա՝ փրկելու մակեդոնացիներին: Ղուկասն ավելացնում է, որ տեսիլքն ունենալուց հետո Պողոսը փորձում է ամփջապես գնալ Մակեդոնիա՝ համոզված, որ Աստված իրեն կանչում էր՝ քարոզելու Ավետարանը: Այս պահից սկսած՝ Ղուկասն անձամբ Պողոսի քարոզչական խմբում է: Այսուհետ պատմությունը հոգնակի թվի երրորդ դեմքից անցնում է հոգնակի թվի առաջին դեմքին՝ հայտնի «մենք»-ին: «Մենք»-ը, որ սկսվում է այս էջից, վստահելի ցուցում է այն մասին, որ պատմիչը բերված իրադարձությունների ականատես վկան էր: Ենթադրում են, որ Ղուկասը ծագմամբ մակեդոնացի էր, և որ Տրոյայում Պողոսի հետ իր հանդիպումն էր առաջացրել առաքյալի գիշերային հայտնի տեսիլքը: Համոզված, որ հետևում են աստվածային ուղղությանը, Պողոսն ու իր ընկերները թողնում են Տրոյան և կարճատև ու երջանիկ նավարկությունից հետո ափ են իջնում Նեապոլում: Առանց երկար մնալու այստեղ՝ բռնում են Էգնատիա ճանապարհը, որը մոտ 16 կմ դեպի խորք է ընկած, անցնում են ուղղաձիգ, բարձր սարերով պաշտպանված արգավանդ հովիտներով: Սովորաբար, Պողոսն իր քարոզչական աշխատանքն սկսում էր հայրենակից հրեաների մոտ. այս էր նրա մոտեցումը Անտիոքում և Լյուստրայում: Նույնը կանի նա Թեսաղոնիկեում ու Կորնթոսում: Փիլիպպեն չի համարվում հրեական ուժեղ գաղութ: Այստեղ չկա ժողովարան: Սակայն Շաբաթ օրը առաքյալն ու իր գործընկերները դուրս են գալիս քաղաքից և ուղղվում դեպի աղոթքի հայտնի մի վայր՝ գետի ափերին, որտեղ հանդիպում են բարեպաշտ կանանց: Նրանց մեջ է նաև ոմն Լիդիա՝ ծագումով, հավանաբար, Թյուատիրից, որ գտնվում է Փոքր Ասիայի Լիդիայում: Նա ծիրանի ներկ վաճառող է և, անկասկած, նորադարձ, եթե հաշվի առնենք այն փաստը, որ նրան անվանում են «աստվածապաշտ»: Նա փութաջանորեն ընդունում է Պողոսի հաղորդած Ավետարանը, մկրտվում է և դառնում եվրոպական մայրցամաքի անվամբ հայտնի առաջին հավատափոխը: Նա իր անկեղծ հավատի ապացույցը կտա՝ բոլոր տնեցիներին առաջնորդելով Քրիստոսի մոտ. ոչ մի-

այն իր ընտանիքի անմիջական անդամներին, այլև սպասավորներին ու սպասուհիներին: Նա տվեց նաև մեծ ու ջերմ հյուրընկալության ապացույց՝ իր մոտ հյուրընկալելով քրիստոնյա առաքյալներին: Այս կինն ուներ մեծ սեփականություն և հասարակական ուժեղ համբավ:

Կարելի է ենթադրել, որ նրա նյութական ու բարոյական նեցուկի շնորհիվ, Պողոսի ու նրա խմբի առաքելությունը հնարավոր դարձավ իրականացնել լավագույն պայմաններում: Լիդիայի հյուրընկալության ոգին գործի կրթվի նաև ավելի ուշ՝ Եկեղեցու կողմից Պողոսին տրված նյութական օգնությամբ: Նա շարունակեց հաճախել պաշտամունքի ու աղոթքի վայր՝ սովորության համաձայն՝ քարոզելով մինչև այն պահը, երբ մի տիպար միջադեպ վերջ դրեց այս գործունեությանը:

Երիտասարդ մի աղջիկ, հավանաբար՝ ստրուկ, մարգարեական ոգով համակված, սկսել էր կանոնավորապես հետևել քրիստոնյա քարոզիչներին ու նրանց հանգիստը խանգարել: Փողոցներում բարձրաձայն ասում էր, որ այս մարդիկ փրկության ուղին հռչակող Ամենաբարձրյալ Աստծու ծառաներն էին: Պողոսի ու նրա գործընկերների համար, ինչ խոսք, հարց չկար մնան համագործակցությունից օգտվելու մասին, մանավանդ որ այն չէր պահանջվել ու բացասական էր: Բացի այդ՝ իմանալով, որ խեղճ էակը սատանայի զոհ էր, Պողոսը փորձեց նրան ազատել տանջող հոգուց: Նա անմիջապես, Քրիստոսի անունից, վտարեց չար ոգուն, և աղջիկն առողջացավ:

Մակեդոնացու աղերսը գիշերային տեսիլքի մեջ բնավ էլ պատրանք չէր, այլ պատասխանում էր իրական կարիքի: Բայց շուտով, չար ոգով համակված աղջկա բուժումը առաջ բերեց դժգոհություն ու զայրույթ նրանց մեջ, ովքեր, առանց խղճի խայթ զգալու, շահագործում էին նրան, քանզի նրա «առանձնահատուկ շնորհն» իրենց մեծ վաստակ էր բերում: Հայրենասիրության ու հասարակական կարգի պաշտպանության կեղծ պատրվակով մատնեցին առաքյալներին՝ նրանց քարշ տալով դատարանների առջև: Ազգաբնակչությունը ևս խիստ բորբոքվեց այն մտքից, որ օտարերկրյա առանձին հրեաներ եկել էին խանգարելու իրենց խաղաղ ու բարգավաճ քաղաքի հանգիստը: Սպառնացող ամբոխը հավաքվեց քահանաների առջև, որոնք, իրենց հերթին, վարակված ժողովրդական զայրույթի փոթորկով և, անգամ, առանց անհանգստանալու քաղաքացիական իրենց վիճակի համար, ճիպոտահարեցին երկու քարոզիչներին: Պաշտպանությունից զուրկ, դաժանորեն ծեծված և առատ արյունահոսությամբ՝ մեր ավետարանիչները բանտ նետվեցին: Նրանց պահում էին խիստ պաշտպանված թաղամասերում՝ ոտքերն ամուր կապված: Պատմության շարունակությունը հայտնի է:

Եականն այն է, որ այս փորձությունից հետո քաղաքը կճանաչի առնվազն երեք հավատափոխ իրենց տնեցիներով: Լիդիան՝ նորադարձ, չար ոգուց ազատված ստրուկ աղջիկը և վերջապես՝ բանտապահը: Երեքն էլ ընդունեցին Ավետարանը, և նրանց կարելի էր դիտել իբրև ապագա Եկեղեցու միջուկ, Եկեղեցի, որն այնքան գրավիչ էր ու թանկ Պողոսի հոգու համար, պաշտոնապես առաջինն էր կազմավորվել եվրոպական մայրցամաքի վրա, և որի անունը պահպանվել է մեզ համար:

Ազատվելուց հետո բանտարկյալներն այցելում են Լիդիայի տուն՝ նոր հավատափոխներին քաջալերելով կանոնավորապես հանդիպել միմյանց, որից հետո Պողոսն ու իր գործընկերները հրաժեշտ են տալիս՝ տեղում թողնելով հավատարիմ և խոստումներով լի եկեղեցի:

ցի: Այսուամենայնիվ, Եկեղեցին կհալածվի և կճաշակի քաղցը: Եկեղեցու մասին վերջին անգամ կլսեն այն այցելության հետ կապված, որ նրան կարժանացնի 2-րդ դարի մի քրիստոնյա՝ Իգնասիո Անտիոքցին՝ դեպի Յոնն տանող ճանապարհին, քաղաք, որտեղ նա ևս գնում է նահատակվելու: Ավա՞ղ, քրիստոնեական դարաշրջանի արշալույսից հետո Եկեղեցին ոչ մի հետք չի թողնի: Չի թվում, թե նա ճանաչել է որևէ հերետիկոսություն և տանջվել նրանից: Նամակն ակնարկում է երկու կանանց միջև փոքր-ինչ անմիաբանության մասին:

Դ. ԼՈՒՐԸ

Պողոսի՝ Փիլիպպեցիներին ուղղված նամակը եղբայրական բարեկամության մեծ նամակ է: Այն առատ է քրիստոնեական սիրով, հավատով, բարի խորհրդով և հրաշալի տրամադրությամբ: Այն որակվում է իբրև Պողոսի գրած նամակներից ամենաերջանիկը: Քրիստոնեական համայնքի կազմավորման առաջին օրերից մինչև այս նամակը գրելը, հաղորդությունն այստեղ կատարյալ է: Այն մեզ հնարավորություն է տալիս ըմբռնել առաքյալի անձնավորության մի շարք գծեր: Այստեղ համարյա կարելի է խոսել հոգևոր ինքնակենսագրության մասին: Նրա բնավորության ամբողջ հարստությունն աչքի է զարնում, հատկապես՝ մեղմությունն ու նույն հավատքն ունեցող եղբայրների ու քույրերի հանդեպ ջերմ համակրանքը: Մինչդեռ Կորնթացիներին ուղղված նամակը մեզ մասնակից է դարձնում ներքին այն խռովություններին ու հուզումներին, որ նրան պատճառում է Եկեղեցու հոգևոր վիճակը, Փիլիպպեցիներին ուղղված նամակն արտացոլում է հռոմեական բանտում գտնվող մարդու բացառիկ ու զարմանալի հոգևոր ուժը: Մինևույն ժամանակ այն մեզ ցույց է տալիս նաև աշակերտ ու ծառա Պողոսի և նրա Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի միջև մտերիմ ու իրական հաղորդությունը: Այս նամակը կենտրոնական տեղ է գրավում Պողոսի կյանքի պատմության մեջ այնպես, ինչպես Գաղատացիներին ուղղված նամակը՝ նրա աստվածաբանության համար: Այստեղ հրաշալիորեն դրսևորվում են անշահախնդիր ու սիրով լի մի հոգի, հանդարտ քաջություն, լուռ ուրախություն և հատկապես հույս: Այս նամակը, չնայած մոտ է գերության նամակներին, առանձնակի տեղ է գրավում: Արդյոք գրվել է մյուս երեքից առա՞ջ: Այն փաստից, որ առաքյալը սպասում է իր մոտալուտ ազատագրմանը, կարելի է եզրակացնել, որ չորս նամակներից վերջինն է:

Սկզբի աղոթքը հիշեցնում է Եփեսացիներին ու Կողոսացիներին ուղղված նամակների աղոթքները: 2:5-11 հատվածի քրիստոսաբանական հրաշալի հատվածը վկայում է միաժամանակ Քրիստոսի Անձին ու Գործին վերաբերող աստվածաբանական խոր ըմբռնման, բայց և աստվածաբանության ու բարոյագիտության՝ նրա հիմնած անքակտելի կապի մասին: Քրիստոսը ոչ միայն Փրկիչ Տերն է, այլև նա, ում պետք է նմանվենք: Մեկ ուրիշ հատված (3:9) դարձյալ վկայում է այն փաստը, որ Պողոսի աստվածաբանական ուսմունքը երբեք վերացական տեսություն չէ, այլ որ անպայմանորեն տանում է դեպի գործնական կյանք: Արտահայտությունները, որ 1:23 և 2:16-17 հատվածներում հայտնում են նրա մահվան անխուսափելի սպասման մասին, հիշեցնում են Պողոսի վերջին հայտնի նամակի՝ Տիմոթեոսին ուղղված երկրորդ նամակի արտահայտությունները:

«Փիլիպպեցիներին հասցեագրված նամակը,- գրում է Suzanne de Diétrich-ը, բան-

տարկյալի նամակ է՝ ուղղված խաչի ներքո գտնվող Եկեղեցու: Աստված ձեզ ողորմացել է՝ Քրիստոսի հետ կապված, ոչ միայն նրան հավատալու, այլև նրա համար տառապելու՝ պաշտպանելով նույն մարտը, որը ես եմ պաշտպանել և որը, ինչպես ձեզ հայտնի է, դեռևս պաշտպանում եմ (1:30): Խոսքը ոչ թե սովորական, այլ Հիսուս Քրիստոսի անվամբ և հանուն նրա կրած տառապանքի մասին է: Խաչի ներքո գտնվող Եկեղեցին Վկա-Եկեղեցի է, որը հալածանքներ է կրում իր Տիրոջը (Մարտիրոս-Վկային) տված վկայության պատճառով: Խոսքը մարտի մասին է՝ ոչ թե սովորական, այլ հավատքի մարտի: Հիսուս Քրիստոսի ծառան, որը մեկ Վարդապետ ու մեկ Տեր է ընդունում և աշխարհի առջև հաստատում է այդ Տիրապետությունը, անմիջապես հարձակման է ենթարկվում այդ աշխարհի կողմից: Առաքյալին ծանոթ է այս հարձակման ողջ թույնն ու բոլոր նրբությունները: Նա գիտե, որ այն ոչ միայն «ճակատային» է, մի բան, որը հարաբերականորեն հեշտ կլիներ, այլև ներթափանցմամբ, ներքին քայքայմամբ: Փիլիպպեցիներին ուղղված նամակը այսօր շղթայակապ ծեր մարտիկի նամակն է երիտասարդ մարտնչող Եկեղեցուն, որը մարտական մկրտություն է ստանում: Սա մարդասիրական հրաշալի նամակ է, որտեղ քարոզչի զգացմունքները երբեմն-երբեմն հորդում են՝ ցուցադրելով նրա ուրախություններն ու անհանգստությունները: Բայց դա նաև կտակ է. ունի վերջին լուրի նշանակություն, գրված է մի մարդու կողմից, որը գիտե, որ մահը մոտ է, և մի վերջին անգամ ուզում է յուրայիններին տեղյակ դարձնել միակ կարևոր իրողությանը. «Պաշտպանե՛ք նույն մարտը,- ասում է առաքյալը,- որը ես եմ պաշտպանել և որը դեռ պաշտպանում եմ»: Բանտը, հալածանքը նրա համար նորություններ չեն: Դրանք ինչ-որ իմաստով նրա գոյության հանապազօրյա հացն են: Փիլիպպեցիները տեսել են, թե առաքյալն ինչպես է գործել իրենց մեջ: Տեսել են պայքարելիս ու չարչարվելիս: Ծնվող Եկեղեցին, ի սկզբանե, ունեցել է նրա հավատքի հաղթական զորությունն ու առաջ բերող հակասությունը, վտանգները: Այս ամենի իմացությունը ամենևին չի սառեցրել նրա եռանդը, այլ՝ ընդհակառակը: Նրա և առաքյալի միջև կպահպանվեն կենդանի կապեր: Միջազգային գործակալները բազմիցս կխոսեն Մակեդոնիայի Եկեղեցիների հավատքի, եռանդի, առատաձեռնության մասին: Փիլիպպեի Եկեղեցին միակն է, որից ստացել է անձնական նվիրատվություններ, և միայն այս փաստը շատ բան է ասում նրանց փոխադարձ մտերմիկ ու վստահելի կապերի մասին:

Գրված լինելով մահվան եզրին՝ այս նամակն ամբողջությամբ հարություն առած և հաղթանակած Քրիստոսի նշանի ներքո է, նրա նշանի, ուն անունը բարձր է բոլոր անուններից, որտեղից էլ նրան հատկանշական ուրախությունն ու խաղաղությունը: Այս ուրախությունը, խաղաղությունը ուրախություն և խաղաղություն են Տիրոջ մեջ:

Արժե մի պահ անդրադառնալ այս երկու արտահայտություններին, որոնք շարունակ հայտնվում են Պողոս առաքյալի գրչի տակ. «Քրիստոսի մեջ» և «Տիրոջ մեջ»: Կարևոր է լավ հասկանալ, եթե ուզում ենք ընկալել այն, թե ինչ է իրենից ներկայացնում հավատքով կյանքը, որի մասին կխոսվի նամակի ամբողջ ընթացքում:

Խոսքը խորհրդավոր հաղորդության, հոգու սուբյեկտիվ վիճակի մասին չէ, այլ օբյեկտիվ ճշմարտության՝ հայտնված հավատքով և միայն հավատքով, բայց որը, դրանով իսկ, պակաս իրական ու արդիական չէ:

Աստված միջամտել է մարդկության՝ Հիսուս Քրիստոսով պատմությանը: Մեր փոխարեն է Հիսուսն արել այն ամենը, ինչ արել է: Մեզ համար է հնագանդվել ընդհուպ մինչև մահ:

Մեզ համար է տանջվել ու քավել մահկանացուների՝ մեր մեղքերը: Նա մահացել է մեր մահով, այն մահով, որով տրամաբանորեն պետք է մեռնեինք մենք: Բայց և մեռելներից հարություն տալով նրան՝ Աստված հարություն է տվել, փառքի հասցրել նաև մեր մարդկությանը: Այդ ժամանակվանից Հիսուս Քրիստոսի մահը դառնում է մեր մահը, նրա քավությունը՝ մեր քավությունը, նրա հաղթանակը՝ մեր հաղթանակը: Նրանում մենք դատապարտված ենք և թողություն ստացած, ներված ենք, արդարացված, սրբացած, Աստծու աջ կողքը բարձրացած: Նրա հետ, նրանով մենք իշխում ենք: Նրա մեջ ապրում ենք նոր կյանքով, որն այլևս մարդու կյանք չէ, այլ Աստծու: Հենց սա ի նկատի ունի ս. Պողոսը, երբ հայտարարում է, որ մեր կյանքը Քրիստոսի հետ թաքնված է Աստծու մեջ (Կողոս. 3:1-4):

Նրա համար, ով ապրում է Քրիստոսի մեջ, այսինքն՝ նրա նկատմամբ հավատի զգացումը, թողությունը, ազատագրումը, թագավորությունը արդիական իրողություններ են: Ամեն ինչ տրված է: Խոսքը հավատալու և ապրելու մասին է: «Դարձե՛ք այն, ինչ կաք»: Հիսուս Քրիստոսի մեջ դուք ներված եք, ողորմած: Ձեզ պահե՛ք ներված, ողորմածության արժանացած մարդկանց պես, այսինքն՝ ձեր հերթին կիրառեցե՛ք զթասրտություն: Հիսուս Քրիստոսի մեջ դուք ազատ եք: Ձեզ պահե՛ք ազատ մարդկանց պես, իշխե՛ք մարմնի վրա: Հիսուս Քրիստոսի մեջ դուք արդարացված եք. կիրառեցե՛ք արդարություն:

Հավատքի կյանքը մեզ դնում է Աստծու թագավորության իրողության մեջ, որն այսկողմնայինի համեմատ այնկողմնային չէ, գալիք չէ անցյալի կամ ներկայի համեմատ, այլ կյանքի մեկ ուրիշ հարթություն՝ Աստծու, հավիտենական կյանքի հարթություն, կյանք, որը Հիսուս Քրիստոսով մեզ համար դառնում է մատչելի:

Հավատքը Հիսուս Քրիստոսի կատարածին, նրա անձին հավատալն է. ընդունել այն փաստը, որ առանց նրա մենք կորած ենք և որ նրանով փրկված ենք: Հավատքի էությունը Քրիստոսի խաչի մեջ բովանդակվող դատապարտման ու թողության բացարձակ լինելու իրողությունն ընդունելն է:

Ս. Պողոսը դիմում է իր եկեղեցիներին, իբրև այնպիսի եկեղեցիների, որոնք «Քրիստոսի մեջ» են, որոնք ապրում են հավատքի այդ կյանքը: Հավատքի կյանքը պատճառաբանում է նրանց հույսը, հիմնավորում նրանց սպասումը. Հիսուս Քրիստոսի գալստյան օրվա վերջնական հաղթանակի սպասումը ուղղություն է տալիս նրանց փոխհարաբերություններին, բարոյական ու հասարակական ողջ կյանքին: Քրիստոնեական համայնքը ամբողջ խստությամբ կրում է մարմնացման օրենքը: Այն ապրում է երկրային ու մարմնական կյանքով: Այն կրում է մեղքի օրենքը. «Փրկված է դեռևս միայն հույսով»: Բայց հավատքի մեջ այն ապրում է հարություն առած Քրիստոսի նշանի տակ, նրա նշանի, ում զորությունն անվերջ գործում է իր մեջ: Հավատքի մեջ նա արդեն ապրում է այնպիսի կյանքով, որն այս աշխարհից չէ. կյանքի խոսքը կրող ջահի պես այն փայլում է աշխարհի կենտրոնում: Հենց այս կոչման միակ բնույթը, Աստծու պարզևի մեծությունն ու դրանից հետևող պարտավորություններն է ս. Պողոսը հիշեցնում փիլիպպեցիներին՝ մեր այս նամակում: Ինչպիսիք էլ որ լինի քննարկվող թեման, հաստատուն մի շարժում ընթերցողին շարունակ տանում է դեպի կենտրոն՝ Հիսուս Քրիստոս: Այս շարժումն է կազմում միաբանությունը, որը պայթեցնում է մարդկային տրամաբանության բոլոր շրջանակները, միաբանություն, որի համաձայն ամեն ինչ գալիս է Հիսուս Քրիստոսից և ամեն ինչ վերադառնում է դեպի նա»¹:

¹ Suzanne de Diétrich; L'EPITRE AUX PHILIPPIENS, publication du Conseil Protestant de la jeunesse.

Ե. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն (1:1-2)

Ներածությունը մասնակիորեն տարբերվում է Պողոսի մյուս նամակների ներածություններից նրանով, որ նա այս մեկը հղում է Փիլիպպեոս գտնվող բոլոր սրբերին, որ Հիսուս Քրիստոսի մեջ են, իրենց եպիսկոպոսներով ու սարկավագներով: Ծառաների մասին հիշատակումը նրա կողմից ավելի շուտ անսովոր է, բայց բացատրվում է Երուսաղեմի Եկեղեցու օգտին հանգանակություններ կատարելու գործում ունեցած մասնակցությամբ: Համադրելով սրբերին, երեցներին ու սարկավագներին, Պողոսը ցույց է տալիս միաբանությունն այս Եկեղեցու անդամների ու հոգևոր առաջնորդների միջև: Մինչդեռ սովորաբար տեսական մասը նախորդում է գործնականին, այստեղ երկուսն էլ սերտորեն կապված են միմյանց և շարունակ խաչաձևվում են: Խիստ նախագիծ կազմելը հեշտ գործ չի լինի:

2. Բանտարկյալ Պողոսի մտորումները (1:3-26)

Եկեղեցու անդամները, որոնց Պողոսն անվանում է «ողորմածության համամասնակիցներ», զգալի հաջողությունների էին հասել քրիստոնեական վարքի մեջ: Նրանց հոգևոր կյանքը ոչ նահանջ էր ապրել, ոչ էլ լճացել, այլ, ընդհակառակը, ներդաշնակորեն զարգացել էր, մի բան, որը միանգամայն բնական է, և հենց սա է այն երախտագիտության պատճառը, որ Պողոսն արտահայտում է Աստծուն: Նա համոզված է, որ աստվածային օգնությամբ իրենք կշարունակեն իրենց զարգացումը: Ինչ վերաբերում է սեփական վիճակին, ապա նա երախտապարտ է բանտարկված լինելու համար, քանզի այս փորձությունը նրան արժանացրել է օրհնանքի: Նա կարողացել է Հիսուս Քրիստոսը հայտնել իրեն գիշեր-ցերեկ հսկող բանտապահներին: Նրանցից ոմանք հավատափոխ եղան, իսկ սրանցից մի քանիսը կայսերական գվարդիայից էին: Այսպիսով, Ավետարանի համար հնարավորություն ընձեռվեց թափանցել ընդհուպ մինչև կայսերական պալատ:

3. Քրիստոսին ընդօրինակելու հորդոր (1:27-2:18)

Քրիստոսյայի գերագույն նպատակը Քրիստոսին ընդօրինակելն է: Քրիստոսին նմանվելու այս փնտրտուքը հանգեցնում է.

ա) Եկեղեցու միաբանությանը, քանի որ անգամ այս համայնքի պես գովելի համայնքին խորթ չեն երկպառակությունները,

բ) նվաստացման, քանի որ խորապես հոգևոր անձնավորությանն անգամ սպառնում է հոգեպես պարծենալու գայթակղությունը,

գ) ինքնուրացման՝ հանուն ուրիշների իր անձը ժխտելու կամքի, ինչպես դա արել է Քրիստոսը՝ հանուն յուրայինների,

դ) բարեպաշտ կյանքի՝ մեղքով այլանդակված միջավայրում:

4. Հարաբերությունները եկեղեցու հետ (2:19-30)

Ծանր հիվանդությունից ապաքինվելուց հետո Եպափրոդիտոսը նրանց կրեթի առաքյալի նամակը: Նրան կընդունեն ուրախությամբ, քանի որ Տիրոջ իսկական ծառաներից է:

Այնուհետև, Պողոսը կուղարկի Տիմոթեոսին, որպեսզի հոգ տանի նրանց հոգևոր կարիքների նկատմամբ, և հուսով է, որ նրանց անծամբ կայցելի ազատագրվելուց հետո. չէ՞ որ բանտարկության երկու տարիների ավարտը մոտ է:

5. Պատգամներ (զլ. 3)

Հետևող պատգամներից չպետք է եզրակացնել, որ Եկեղեցին վատ վարդապետությունների ազդեցության տակ է: Թվում է, թե նա առավել լավ ձևի մեջ է, բայց պետք չէ որ կորցնի զգոնությունը՝

ա) հրեական կրոն տարածողների հանդեպ: Պողոսը նրանց համարում է «շներ»: Հրեաները սովորություն ունեին հեթանոսներին շներ անվանել՝ ելնելով կրոնական արհամարհանքից: Պողոսը նրանց նկատմամբ կիրառում է հայիոյական այս ածականը: Մերծավոր Արևելքում շներն անտեր, անտուն կենդանիներ էին, որոնք համարվում էին պիղծ, դրանք կղանք ուտողներ էին: Ինչպիսի համապատասխան մակդիր նրանց համար, ովքեր վնասում են Քրիստոսի Եկեղեցու առողջությանն ու բարօրությանը.

բ) կատարելության կեղծ գաղափարների հանդեպ: Ձեռք բերված հոգևոր հաջողություններով չեն գոհանում: Հարկ է համառել և շարունակ ընթանալ դեպի վերջնական նպատակ, քանի որ դա բոլորի կողմից ստացված կոչում է: Այս կերպ նրանք կդառնան Տիրոջ իսկական ընդօրինակողներ.

գ) աշխարհիկության հանդեպ: Աշխարհիկ մարդիկ ապրում են զգայական հաճույքների և երկրային բաների համար: Իսկական քրիստոնյան աշխարհից օգտվում է ճշգրիտ ձևով ու չի մոռանում, որ ամենախորունկ իմաստով նա երկնքի Թագավորության քաղաքացին է, որ նրա ժամանակավոր կյանքը գալիք կյանք մտնելու նախապատրաստություն է:

6. Վերջնական հորդորներ ու երախտագիտություն (4:1-20)

Առաքյալն իր բարեկամներին հորդորում է ամուր մնալ և չենթարկվել տեսական ամեն մի քամու, ապրել ներդաշնակության մեջ (Եվոդիան ու Սյունտիքը՝ Եկեղեցու երկու ակտիվ կանայք պետք է հաշտվեն միմյանց հետ), ապրել ուրախության մեջ, քանի որ հավատքը մեզ տալիս է ուրախության մշտական կիրառության հնարավորություն, թույլ է տալիս խուսափել ամեն տխրությունից, որովհետև Աստված հոգում է մեր մասին, մտածել որոշակիորեն, քանզի մեր մտածողությունը խոր ազդեցություն է թողնում մեր գործունեության վրա, բոլոր հանգամանքներում գոհ լինել ճակատագրից: Պողոսը շնորհակալություն է հայտնում իր ընթերցողներին՝ ստացած պարգևների համար:

7. Եզրակացություն

Ողջույններ ու օրհնություններ: «Կեսարի տան սրբերը» կայսերական պալատի հավատացյալներն են, ովքեր իրենց ողջույններն են հղում իրեն:

ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՍԱԿԸ

Ա. ՅԵՂԻՆԱԿՆ ՈՒ ՎԱԿԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պողոսն ու Տիմոթեոսը հիշատակված են իբրև նամակի հեղինակներ, բայց հայտնի է, որ այն պատկանում է միայն մեծ առաքյալի գրչին կամ էլ գրված է նրա թելադրանքով (տես՝ 1:23 և 4:18 տողերը, ինչպես նաև առաջին դեմքի անձնական դերանվան գործածությունը 1:24, 25, 29, 2:1, 4, 5, 4:18, 13 տողերում):

Պողոսը գործընկերներին հաճախ է կապում իր անվանն ու գործունեությանը՝ ցույց տալու, որ նրանց հետ կիսում է իր առաքելության պատասխանատվությունը: Նա ուշադրությունը հրավիրում է այն փաստի վրա, որ իր ձեռքով է գրում ու ստորագրում նամակի վերջի եզրակացությունն ու ողջույնները: Անկասկած, Տիմոթեոսը նրան ծառայել է իբրև քարտուղար:

Նամակի վավերականությունը երբեք կասկածի տակ չի առնվել մինչև 19-րդ դարի կեսերը, երբ բառապաշարի վերաբերյալ դիտողությունները՝ hapax legomena կոչված նոր բառերի (թվով 33) գործածությունը, առաջ բերեցին կասկածներ:

Բայց Նոր Կտակարանի ժամանակակից ուսումնասիրությունները համոզիչ կերպով հաստատում են նամակի վավերականությունը: Ուստի, մենք չենք քննարկի հակառակ փաստարկները: Նամակի կանոնական կարգավիճակն ընդունվել է ի սկզբանե:

Այն փաստը, որ Եփեսացիներին ուղղված նամակը թվացել էր առավել կարևոր, քան այս մեկը, բացատրվում է նրանով, որ հետառաքելական որոշ գրվածքներ (ինչպես, օրինակ՝ Ա. Կղեմես, Բ. Կղեմես կամ Յերմասի Յովիվ) այն չեն հիշատակել: Մինչդեռ մեր նամակը հայտնվում է Իգնասիո Անտիոքցու (մահացել է 117 թ.) հաստատած հավաքածուի մեջ. առանձին նախադասություններ, որոնց կրկին հանդիպում ենք Կողոսացիներին ուղղված նամակում: Նույն ձևով էլ Պոլիկարպոս Ջմյուննիացուն, որը 120 թ. մոտերքում գրել է փիլիպպեցիներին, հարազատ էր Պողոսի որոշ գրվածքներ, որոնցից են «Յովվական»-ը. այստեղից է նա քաղել Պողոսի «հավատքով ամուր» արտահայտությունը:

Բ. ՎԱԿԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ

Կողոսացիներին ուղղված նամակի վավերականության արտաքին հաստատումը Պողոսի՝ Եփեսացիներին ուղղված նամակի մեջ է:

Մեկ ուրիշ ապացույց էլ Մարկիոնի հերետիկոսական գրվածքում է, ինչպես նաև Իրինեոսի մոտ և Մուրատորիի Կանոնում կամ հատվածում:

Վավերականության դեմ առաջ է քաշվել այն փաստը, որ այլադավան ուսմունքների դեմ իր զգուշացումներում, նամակը քողարկված, բայց որոշակի ձևով ակնարկ է անում հեսեների ուսմունքի մասին: Սա զուտ երևակայության արդյունք է: Ոչինչ թույլ չի տալիս ենթադրել, որ մնաց պատվիրանները չեն կարող ուղղված լինել Կողոսայի Եկեղեցուն՝ 59 թ.

կամ նույնիսկ՝ ավելի շուտ: Պողոսի կանոնական գրվածքներից և ոչ մեկը չի հակասում նրա բովանդակությանը, թեև ոճը տարբեր է, և որոշ արտահայտություններ hapax-ներ են: Այսուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ նամակը գրվել է բանտում և այլ հանգամանքներում, քան Կորնթացիներին ու Գաղատացիներին ուղղված նամակները:

Գ. ԳՐԵԼՈՒ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԵԹԻՎԸ

Նամակը գրվել է նույն ժամանակաշրջանում, ինչ Եփեսացիներին ու Փիլիմոնին ուղղվածները, հավանաբար կայսրության մայրաքաղաքում առաքյալի առաջին բանտարկության ժամանակ:

Տարեթիվը կարող է սահմանվել միայն մոտավորապես՝ Պողոսի բանտարկության տարեթվի հետ կապված: Կորնթացիներին գրած առաջին նամակում Պողոսը վկայակոչում է բազմաթիվ բանտարկություններ (11:23): Հռոմեական ազատագրումից բացի՝ նա, հավանաբար, բանտարկվել է նաև Եփեսոսում: Բայց հավաստի չէ, որ մեր նամակը գրվել է այս շրջանում: Բազմաթիվ նշաններ կարող են հակասել այս փաստին, օրինակ՝ Մարկոսի անվան հիշատակումը 4:10 և Փիլիմոնին ուղղված նամակի 24-րդ տողերում. Մարկոսը Պողոսին չէր ուղեկցել նրա երկրորդ ուղևորության ժամանակ, որի ընթացքում պետք է որ տեղի ունեցած լիներ եփեսոսյան ենթադրյալ բանտարկությունը: Քանի որ Արիստարքոսի անունը հիշատակված է «Գործք»-ի 27:2 տողում, իբրև Պողոսին Հռոմ ուղեկցողներից մեկը, ապա կարելի է մտածել, որ խոսքը Հռոմի բանտարկության մասին է: Այս դեպքում նամակը պետք է որ գրված լիներ մոտ 59 թ.:

Դ. ՀԱՍՑԵԱՏԵՐԵՐԸ

Կողոսան առաքյալի գործունեության մեջ ամենաքիչ դեր խաղացած քաղաքներից է: Այսուամենայնիվ, նրա Եկեղեցուն հղել է իր ամենակարևոր նամակներից մեկը, որի մեջ կատարում է քրիստոսաբանական առաջնակարգ հայտարարություն: Նամակի հիմնական մասում նա հիշատակում է երկու հարևան քաղաքների մասին, որոնք կապված են Կողոսայի հետ՝ նրա կրոնական պատմությամբ (Լաոդիկիա և Չերապոլիս): Երեքն էլ գտնվում են Մեանդրի վտակ Լյուկոսի հովտում: Դրանք մտնում էին Ասիայի Հռոմեական գավառի՝ Փոքր Ասիայի կամ ներկայիս Անատոլիայի կազմի մեջ: Փռված լինելով Եփեսոսից (ամբողջ գավառի հայտնի մայրաքաղաքից) մոտ 200 կմ դեպի հարավ-արևելք և քաղաքը Արևելյան Ասիայի խոշոր շուկաներին կապող ճանապարհի առանցքի վրա, շրջանը հայտնի էր Փռյուզիա անվամբ, որը ծագել է Թրակիայից եկող ներխուժողների անունից: Փռյուզիացիները երկիրը գրավել էին Հռոմի այստեղ թափանցելուց և այն իր գերիշխանության տակ դնելուց առաջ: Այսուհանդերձ, ազգաբնակչությունը զուտ փռյուզիացիներից չէր կազմված. կային նաև հույներ ու հրեաներ: Երկրի աշխարհագրական ընդհանուր տեսքը խոսում էր այն մասին, որ դա ավելի շուտ լեռնային և հյուսիսային երկիր էր: Այն հաճախ էր անայանում երկրաշարժերից: Ջերմային ու հանքային աղբյուրներն այստեղ շատ առատ էին: Բացի այդ՝ Լյուկոսին սնուցող առվակները քշում-տանում էին մեծ քանակությամբ կրային նյու-

թեր, որոնք, նստվածք տալով սարերի փեշերին, արտառոց տեսք ունեցող կազմություններ էին առաջացնում: Չնայած տիղմի կարծրացմանն ու տեղանքի արտահայտված հրաբխա-
յին բնույթին՝ երկիրն ուներ նաև հարուստ արոտավայրեր առաջարկող արգավանդ հողեր,
որտեղ արածում էին ոչխարների բազմաթիվ հոտեր: Շրջանը հայտնի էր նաև գունավոր
բրդի արտադրությամբ, քանի որ բրդի հրաշալի որակից բացի, առավելները մատակարար-
ում էին նաև հարուստ հանքանյութեր՝ տարբեր տեսակի ներկանյութեր արտադրելու հա-
մար: Այս գործոնները երեք քաղաքների բացառիկ առավելության, այն է՝ առևտրական
գլխավոր ճանապարհի վրա տեղադրված լինելու հետ մեկտեղ, նպաստեցին դրանց նյու-
թական բարգավաճմանը: Խոսքը վերաբերում է հատկապես Լաոդիկիային¹: Հայտնի է, թե
քաղաքը շրջապատող ոգին ինչ ազդեցություն էր գործել Եկեղեցու վրա: Որտեղից էլ՝ հան-
դիսավոր այն զգուշացումը, որ նրան ուղղում է Տերը:

Ե. ՔՐԻՍՏՈՆԵՌՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔԸ ԿՈՂՈՍԱՅՈՒՄ

Ավետարանն ինչպե՞ս է թափանցել այս շրջան: Մանրամասները հայտնի չեն: Անկաս-
կած, դա եղել է Պողոսի ազդեցությամբ, քարոզչական երրորդ ճանապարհորդության ըն-
թացքում, երբ երկար ժամանակ Եփեսոսում էր: Հավաստի չէ Պողոսի՝ այս երկիրն անծանր
այցելելու փաստը: Սույն նամակում նա քիչ է ակնարկում այն հանգամանքների մասին,
որոնք նրան մղել են ճանաչելու քաղաքը և կամ Եկեղեցու որոշ անդամների: Այն, որ նա
հայտարարում է, թե լսել է նրանց հավատքի մասին, ենթադրել է տալիս, որ ընթերցողները
դեռևս չէին տեսել նրան: Քարոզչական երկրորդ ուղևորության ժամանակ, գնալով դեպի
Տրոյա և հաջորդ ճանապարհորդության ժամանակ, որը կատարել էր Եփեսոս հասնելու
համար, հնարավոր է, որ նա գնացել է Լյուկոսի հյուսիսային մասով անցնող ճանապար-
հով: Եփեսոսյան այցելության ընթացքում ավետարանացման գործը լայնորեն տարածվեց
Ասիայի ամբողջ գավառում: Գավառի բոլոր կողմերից եկած այցելուները շարունակ լցվում
էին մայրաքաղաք՝ առևտրական կամ մշակութային նկատառումներով և կամ էլ ժամանցի
համար: Մեծ թվով մարդիկ հանդիպեցին առաքյալին, որի վարդապետությունը տարած-
ված էր ամբողջ քաղաքում: Շատերը հավատափոխ եղան և, վերադառնալով իրենց երկիր,
այնտեղ տարածեցին Ավետիսը: Այնուհետև, Պողոսն իր գործընկերներին ու մուսնետիկներ
ուղարկեց մերձակա քաղաքներ՝ նորահավատների հավատքն ամրապնդելու նպատակով:
Շարժումն իրականում այնքան մեծ տարածում էր ստացել, որ, ըստ Ղուկասի, բոլոր նրանք,
ովքեր ապրում էին Ասիայի հռոմեական գավառում՝ թե՛ հրեաները, թե՛ հույները, լսեցին
Տիրոջ Խոսքը: Հերապոլիսը հավանաբար եղել է երկրի մշակութային հրաշալի կենտրոն:
Բազմաթիվ քահանաներ այստեղ տոնում էին Կիբելա աստվածուհուն նվիրված կրքոտ ու
աստիճանաբար այլասերվող ծիսակատարությունները: Այստեղ ծաղկում էին ապրում նաև
հրեական տարբեր պաշտամունքներ, որոնք, զուգորդվելով ավանդական կրոնին, ստեղ-
ծում էին անմաքուր և բարոյապես ճնշող մթնոլորտ: Քաղաքը հայտնի էր ոչ միայն սրբա-
րաններով, այլև տաք ջրերի կայաններով, որոնք անվերջ ենթարկվում էին ծարավը հա-
զեցնելու, առավել ևս՝ հեշտ ու առատ հաճույքներ փնտրելու նպատակով այցելող բազմա-

¹ Stuu` A. R. Kayayan, LE DIEU INVINCIBLE.

թիվ մարդկանց ներխուժումներին: Այն տաք ջրերի՝ Յին աշխարհի ամենահայտնի քաղաքներից մեկն է (կոչվում է նաև «ոսկե քաղաք») և Ասիայի ամենագեղեցիկ քաղաքը: Այսուամենայնիվ, պատմության մեջ զբաղեցրած տեղի համար քաղաքը պարտական է ո՛չ հոգևոր արարողություններին, ո՛չ էլ նյութական բարգավաճ վիճակին, կամ էլ հանքային ռեսուրսներին, այլ այն հիշատակմանը, որ իր գրվածքներում արել է քրիստոնյա անհայտ մի քարոզիչ, մ. թ. առաջին դարի մի հրեա՝ Պողոս առաքյալը:

Մոտ 20 կմ Լաոդիկիայից ու Յերապոլիսից դեպի հարավ և արևելք փռված է Կողոսա քաղաքը: Գետի երկու ափերին կարողացել են գտնել փլատակներ, որոնք, թվում է, հին քաղաքի ավերակներ են: Յարավում Կադմոս սարը բարձրանում է ավելի քան 2500 մ, մինչդեռ հյուսիսում տարածվում են Mesoggis-ի երկար լեռնաշղթաները: Հովիտը գրավում էր ռազմավարական հրաշալի դիրք՝ նրան տալով գերակշիռ վիճակ: Անտիկ աշխարհի հույն պատմաբան Յերոդոտոսն այն անվանում է «Փռյուզիայի մեծ քաղաք»: Քսենոֆոնը այն արդեն իսկ համարում է բարեբախտ մարդկանցով բնակեցված քաղաք, այն ժամանակ, երբ Կյուրոսը վրան խփեց այստեղ՝ մ. թ. ա. 401 թ. Արտաքսերքսեսի դեմ արշավի ժամանակ:

Նոր Կտակարանի որոշ անձինք, օրինակ՝ Եպափրասը, Փիլիմոնը, Ապիիան և Արքիպպոսը Կողոսայից են, մինչդեռ Նիմֆասը Լաոդիկիայից է: Այս մարդիկ Ավետարանն ստացել էին Պողոսից: Հովհաննես Մարկոսը իբրև ավետարանիչ ուղարկվել է այստեղ: Սակայն Եպափրասին է պատիվ վիճակվել լինելու Եկեղեցու հիմնադիրը: Պողոսին նա հանդիպել էր Եփեսոսում և հավատափոխությունից հետո, թվում է, նրա կողմից շտապ ուղարկվել է իբրև հատուկ պատգամաբեր: Եպափրասին չպետք է շփոթել Եպափրոդիտոսի հետ, որը ծագմամբ Մակեդոնիայից է՝ Փիլիպպե քաղաքից: Եպափրասի քարոզչական աշխատանքները ծավալվեցին հիշատակված երեք քաղաքներում, որտեղ նրան հաջողվեց կազմակերպել քրիստոնեական ամուր համայնքներ: Կողոսայի Եկեղեցու անդամներն, անշուշտ, եղել են հեթանոսական ծագմամբ, թեև ոչ բացարձակապես, քանի որ Լյուկոսի հովտում կարելի էր հանդիպել նաև հրեական լայնատարած ու բարգավաճ համայնքների: Մոտ երկու դար առաջ Անտիոքոս Մեծը հազարավոր հրեաների Բաբելոնից գաղթել տվեց դեպի Փռյուզիա և Լիդիա: Կարելի է իբրև ճշմարտաման ընդունել այն փաստը, որ այս Եկեղեցու հավատափոխների շարքում կային նաև բազմաթիվ հրեաներ: Նամակում արված որոշ վկայություններ թույլ են տալիս ենթադրել, որ ընթերցողներից ոմանց հարազատ էին հրեական օրենքները և սովորույթներն ու արարողությունները:

Կողոսայի Եկեղեցին արագորեն զարգացում է ապրում: Սկզբնական շրջանում նոր հավատափոխները հավաքվում են Պողոսի կողմից հավատափոխ եղածներից մեկի՝ Փիլիմոնի մոտ, որը հարուստ սեփականատեր է: Պողոսի հետ ունեցած սերտ կապերի շնորհիվ Եկեղեցու որոշ անդամներ ունեն ավետարանական ճշմարտությունների հստակ ու զարգացած իմացություն: Այս ճշմարտություններին նրանք կապվում են ամուր ձևով: Թեև գայթակղվել են այլակրոն ուսմունքներով և ենթարկվել հրեական ազդեցությունների, ընդհանուր առմամբ հավատարիմ են մնացել առաքելական ուսմունքին: Սակայն Եկեղեցու պատմության մեջ այս Եկեղեցին չի հասել գերակշիռ դիրքի: Թվում է, որ այն անհետացել է բավականին վաղ՝ ի հակադրություն Լաոդիկիայի և Յերապոլիսի Եկեղեցիների: Բայց հավատացյալների գալիք սերունդների համար պահպանել է Նոր Կտակարանի ամբողջ գրականության ամենաթանկարժեք գոհարներից մեկը:

Ձ. ԿՈՂՈՍՅԱՆ ՀԵՐԵՏԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ

Իր նամակները գրելիս Պողոսը մշտապես ունի ճշգրիտ նպատակ. դրանցից յուրաքանչյուրը պետք է պատասխան տա ճշգրիտ որևէ իրավիճակի: Կողոսացիներին ուղղված նամակի նպատակը յուրահատուկ մի մոլորության դեմ պայքարելն է: Եկեղեցու հիմնումից անցել էր մոտ 6 տարի: Եփեսոսում ունեցած ակտիվ գործունեության երեք տարիներից հետո Պողոսը մի ամբողջ ձմեռ անցկացրել էր Հունաստանում, այնուհետև վերադարձել Երուսաղեմ՝ համայնքի աղքատներին բերելու նրանց հատկացված նվիրատվությունը: Ժամանումից քիչ ժամանակ հետո ձերբակալվել էր և տեղափոխվել Կեսարիա: Թեև խիստ հսկողության տակ էր, կարողանում էր այցելություններ ընդունել ու զրուցել մեսիական հույսի և Աստծու Թագավորությանը վերաբերող թեմաներով: Այստեղ նրան հասնում են նաև Եկեղեցիների նորություններ: Նայած դեպքի՝ Պողոսը գրում էր նրանց քաջալերելու և կամ ինչ-որ բանից զգուշացնելու համար: Առաջին բանտարկության վերջերին, գուցե թե 63 թ. ընթացքում, Եպափրասը ժամանում է հեռավոր Կողոսայից՝ բերելով լավ նորություններ: Այսուհանդերձ, նա Պողոսին տեղյակ է պահում որոշ սխալ ուսմունքների առկայության մասին, որոնք սպառնում են հավատքի միաբանությանը: Մխալներն այնպիսի բնույթի են, որ առաքյալը իրավիճակի կարգավորման գործը հրատապ վերցնում է իր ձեռքը և տեղեկացնում ընկերներին: Հարաբերականորեն հեշտ է նշմարել վտանգավոր այս ուսմունքների տարրերը:

Ակզբում առկա է ծիսակարգային որոշակի գայթակղություն: Օրերի ու տարվա եղանակների պահպանումը ստանում է ծայրահեղ կարևորություն, այս ծեսերին ու կրոնական ձևերին հնազանդվելը զուրկ է իսկական հոգևոր ամեն բովանդակությունից:

Իրական վտանգ ներկայացնող մեկ այլ տարր էլ մարմնական ասկետիզմն է՝ իբրև սրբացման հետազոտության միջոց: Սեփական անձին պարտադրում էին մարմնական ինքնախոշտանգումներ՝ ընդհուպ մինչև հրաժարվելով ֆիզիկական ամենատարրական կարիքները բավարարելուց:

Հետո գալիս է հեթանոսական ներշնչմամբ միստիկան: Ոմանք պնդում են, իբր ենթարկվել են տեսիլքների, և որ օգտվողներն են հայտնություններից՝ բացառապես իրազեկ անդամներին հաղորդված և երկնային էակներով ուղեկցված... Կեղծ միստիկան անխուսափելիորեն կհանգեցնի անօրինական «հոգևոր արիստոկրատիայի» և գաղտնի ակումբների կազմավորմանը: Ճշգրտորեն հնարավոր չէ վեր հանել այս ուսմունքների ու արարողությունների ակունքը: Սակայն կարելի է կարծել, որ դրանք ունեն հրեական ծագում՝ կամ ամբողջապես և կամ մասնակիորեն: Այս բանը ցայտունորեն երևում է սիրված օրերի՝ նորալուսնի, Շաբաթվա և այլն, պահպանման փաստով:

Կողոսայի Եկեղեցուն տխրեցնող մոլորությունը, սակայն, տարբերվում է Գաղատիայում մոլեզունդ ցավից: Այս վերջինը փարիսեցիական բնույթի էր՝ այսուհանդերձ չբովանդակելով ասկետիզմ, խորհրդապաշտություն կամ հրեշտակի պաշտամունք:

Կարելի է կարծել, որ Կողոսյան հերետիկոսությունը քրիստոնեական հավատքի և հեսեական որոշ հավատալիքների միջև հաշտություն կայացնելու փորձ է: Այս կետի վերաբերյալ չենք ընդարձակի մեր տեսակետները, քանի որ մեկ ուրիշ կարծիք էլ հակված է ավելի շուտ դեպի գնոստիցիզմի հետ նրա նույնականացումը:

Գնոստիկ բառը ցույց է տալիս այնպիսի հավատամքներ, որոնք փորձում են արևելյան թեոսոֆիան զուգակցել հունական փիլիսոփայության և քրիստոնեական ուսմունքներին: Գլխավոր մոլորությունը նյութի բնույթի և աշխարհի ստեղծման վերաբերյալ է: Նյութին ներհատուկ է վատ բնույթը: Ուստի նրանք կարծում էին, որ աշխարհն ստեղծվել էր ոչ թե Աստծու, այլ Աստվածային էակից բխող մի շարք արտահոսքերից: Յուրաքանչյուր հաջորդ արտահոսքի մեջ աստվածային տարրը գնալով դառնում է ավելի ու ավելի պակաս գերիշխող: Արտահոսքերն ավելի ու ավելի են հեռանում ակունքից, որ Աստվածն է՝ ընդհուպ մինչև Դեմիուրգը, որը դիտվում է իբրև նյութական աշխարհի ստեղծող:

Աստծու և մարդու միջև ինչ-որ տեղ Քրիստոսն է, որ ինքն էլ ոգի է: Նյութի այս ըմբռնումը՝ իբրև ներհատուկ ձևով վատ, անխուսափելիորեն պետք է հանգեր ոչ միայն Քրիստոսի անձի մասին սխալ ըմբռնման, այլև գործնական բնույթի մոլորությունների. մի կողմից՝ ինքնին վատ համարվող մարմինը չարաշահող ասկետիզմ, մյուս կողմից էլ սանձազերծ կամայականություն: Գնոստիցիզմը շեշտը դնում է իմացություն—gnosis-ի, փիլիսոփայության և լրման (հուն. plerōme) վրա: Այս բառերը հանդիպում են մեր նամակում (հունարեն բնագրում): Որոշ մեկնիչների կարծիքով, դրանք մատնանշում են գնոստիկական մոլորություն: Մյուսներն էլ գտնում են, որ դա անպայմանորեն այդպես չէ: Եթե սխալը չունի հրեական ծագում, ապա այն կարելի է կապել արևելյան տեսությունների, կեղծ խորհրդապաշտության և փռյուզիական այն կրոնների հետ, որոնք միստիկա են բովանդակում:

Ակնհայտ է, որ կողոսյան մոլորությունն ունի հատկապես քրիստոնեական ներշնչանք՝ այն իմաստով, որ բովանդակում է Եկեղեցու կողմից արդեն իսկ ընդունված հավատալիքներ, սակայն փորձում է դրանց նույնացնել նաև Ավետարանին խորթ հավատամքներ ու սնահավատություններ: Այսպես, օրինական տեղ չի հատկացվում Քրիստոսի Անձին ու Գործին: Ստույգ է և այն, որ նույն սխալի ոգին առկա է նաև ժամանակակից Եկեղեցուն, որը ձգտում է ջլատել Եկեղեցու ուժը և աղավաղել նրա հավատքի մաքրությունը: Առաքյալն ընդգծում է, որ հրեշտակների պաշտամունքը թուլացնում է Քրիստոսի դիրքը: Կեղծ դոկտորները, որոնք շահախնդրորեն և եսասիրաբար ձգտում են հաղորդակցվել Աստծու հետ, զուրկ են ամենատարրական հնազանդությունից, դրսևորում են մեծամտություն և հոգևոր բավարարվածություն և ուսուցանում են միայն փիլիսոփայական-հոգևոր մի տեսություն՝ Ավետարանի վարդապետության փոխարեն, այնպես, ինչպես դա ստացել էին Կողոսացիները (2:16-23):

Ժամանակակից ընթերցմամբ՝ ավելի հեշտ կլինի հասկանալ այս նամակը, եթե այն մոտեցվի հրեշտակների ուսմունքին, այնպես, ինչպես դա ուսուցանվում էր դարաշրջանի հունական կրոնում:

Հրեշտակաբանությունը զարգացում էր ապրել բաբելոնյան աքսորից հետո: Պատկերացնում էին մի աշխարհ՝ լի հրեշտակներով ու դևերով, որոնք իշխում են բնության իրադարձությունների վրա և սերտ կապեր հաստատում մարդկանց հետ: Ծառի յուրաքանչյուր տերև, նրանց կարծիքով, ուներ սեփական հրեշտակը: Յուրաքանչյուր ազգ ուներ իր հրեշտակը, որն ուղղություն էր տալիս նրա ճակատագրին և վարում սեփական մարտերը: Անտեսում էին այն, որ, Աստվածաշնչի համաձայն, հրեշտակներն անբիժ են, անմեղ, սակայն, ըստ ընթացքի մեջ գտնվող հրեշտակաբանության, նրանցից լավագույններն անգամ վա-

րակված էին չարով: Հաշվի առնելով այն տարածությունը, որ ուշ շրջանի հունական կրոնը հաստատել էր Աստծու և մահկանացուների միջև, բնականոն է դառնում այն, որ գործերը կարգավորելու նպատակով վերջիններս դիմում էին հրեշտակներին: Հնարավոր է, որ «աշխարհիկ տարրեր» ասելով (2:2-20) Պողոսը նկատի ունի տարրական հոգիները և համարում է, որ մարդկային յուրաքանչյուր ցեղ, լինի հրեական, թե հեթանոսական, ենթակա է այս տարրերին, որոնք բնության աստվածային չեն (Գաղատ. 4:3-10): Հրեշտակային այս կանոնն իր արտահայտությունը գտավ Իսրայելի կյանքում: Անգամ Նոր Կտակարանը ցույց է տալիս, որ հրեշտակների դերը մեծ է եղել փրկչության դիսպանսացիայում (ըստ «Գործք Առաքելոց»-ի 7:5, Գաղատ. 3:19 և Եբրայեց. համապատասխան տողերի, օրենքը տրվել է նրանց միջոցով): Հետևապես, հրեական կրոն տարածող դոկտորների համար օրենքին ենթարկվելը նշանակում էր ենթարկում հրեշտակներին:

Եպափրասի կողմից հավատքի եկածների մի մեծ մաս, թվում է, համակվեց այս գաղափարներով, բայց հավատարիմ մասը տեղյակ պահեց իր հովվին՝ իմանալու նրա և հատկապես Պողոսի կարծիքը, որն էլ հիմք կդառնա գրելու այս նամակը՝ իբրև պատասխան իրեն տրված հարցերին:

Առաքյալը ճակատային հարձակում չի գործում կեղծ ուսմունքների վրա. նա փաստարկում է՝ ելնելով կողոսացիների փորձից: Զարգացնելով իր Քրիստոսաբանությունը՝ նա ցույց է տալիս, թեև անուղղակիորեն, որ ընթացքի մեջ գտնվող կեղծ աստվածաբանությունը անհամատեղելի էր Քրիստոսի՝ իրենց իմացության հետ. իջնող Որդու մեջ աստվածության ամբողջ լրությունն է: Միայն նա կարող է մարդկանց հաշտեցնել Աստծու հետ: Ոչ մի տեղ չպետք է լինի ո՛չ հրեշտակային ուժերի, ո՛չ էլ այլ միջնորդների համար, որոնք տեղավորվում են երկու գլխավոր մասերի միջև: Հրեշտակային ուժերն անբավարար, անգամ անընդունակ են կամուրջ գցելու Աստծու և մարդկանց միջև: Քրիստոսը լիովին բավական է: Հոր հետ կատարյալ համաձայնությամբ է նա ստեղծել աշխարհը: Նա Եկեղեցու առաջնորդն է: Անշուշտ, հին դիսպանսացիան կարգավորվել ու հաստատվել էր ուղղահավատ համակարգում, բայց այն փլուզվել է (Կողոս. 3:19, Եփեսաց. 2:15): Քրիստոսը իսկական և տևական կապ է ստեղծում հին և նոր դիսպանսացիաների միջև: Խաչի վրա նա մեխել է ցանկացած «այլ կրոն»: Նրա գործը հեռվից գերազանցում է ներքևում գտնվող գործին, որը ժամանակավորապես վստահվել է հրեշտակներին: Ինչպե՞ս կարելի էր այս կերպ ստորացնել այն պաշտամունքը, որը նախատեսված էր միայն Հավիտենական Որդու համար: Նրա գերիշխանությունը պետությունների և իշխանությունների համեմատ հաղթանակել էր վառ ձևով (2:14-15): Հրեշտակների պաշտամունքն ամենևին էլ հնազանդության նշան չէ, այլ անպատիվ սնահավատության, միակ և զուտ ողորմածության Ավետարանի համար: Դա ապացույց է Աստծու և մարդու միջև իսկական հարաբերության բնույթի մասին իրեն հաշիվ չտալու անկարողության: Ինչ վերաբերում է ասկետիզմի հրեական կանոններին, ապա դրանք առավել ևս անուժ են, քանզի աղավաղում են հավատքի և բարեպաշտության բնույթը: Դրանք չեն սահմանափակում մարմինը, այլ, ընդհակառակը, մղում են գոռոզամտության ու ինքնագոհության: Հիսուս Քրիստոսի Տիրակալության վրա իշխող այս շեշտադրումը այնուհետև թույլ է տալիս հղել գործնական բնույթի հորդորներ:

Առաքյալի լուրը, հետևապես, կարող էր ամփոփ ներկայացվել հետևյալ կերպ.

Հարկ է պայքար մղել կեղծ այն ուսմունքի դեմ, որը ժխտում է Քրիստոսի աստվածությունը և, այսպիսով, մերժում նրա միջնորդ գործի բավարար լինելու իրողությունը:

Պետք է քաջալերել քրիստոնյաներին՝ վարելու Ավետարանին վայել կյանք:

Նամակը մեկ անգամ ևս ընդգծում է նրա միջնորդ գործի բավարար լինելու փաստը: Դա նշանակում է չընդունել խաչի վրա նրա արտասանած խոսքերի, այն է՝ «ամեն ինչ կատարված է» ճշմարտությունը: Նշանակում է դիմել մարդկային խորամանկությունների և վերջնականապես խզել կապերը Հայտնության հետ: Նշանակում է իրեն թույլ տալ ամեն հիմքից զուրկ չարաշահում: Նման ուսմունքները պատիվ չեն բերում Քրիստոսին: Այսպիսով, նրա մեծությունն ակնհայտ է ինչպես արարման, այնպես էլ Փրկչության գործում, և նրա գերիշխանությունն աշխարհի ու եկեղեցու վրա պետք է զարնի բոլորի աչքերին:

Է. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

1. Ներածություն (1:1-13)

Արբերին և Քրիստոսի մեջ գտնվող եղբայրներին, որոնք Կողոսայում են, ողջունելուց հետո, առաքյալը հիշատակում է Աստծու հանդեպ Կողոսայի եկեղեցու երախտագիտության շարժառիթները: Նա երախտագետ է նրանց հավատքի և սրբերի նկատմամբ ունեցած սիրո, ինչպես նաև քրիստոնեական հույսի համար: Ուստի աղոթում է՝

1. որպեսզի նրանք լցվեն իմաստությամբ (Աստծու կամքի իմացություն)

2. որպեսզի, բարի գործ կատարելով, պտուղներ տան

3. որպեսզի ամրապնդվեն Աստծու զորությամբ, մի բան, որը նրան ստիպում է խոսել Քրիստոսի՝ իբրև հոգևոր առաջընթացի միակ ճանապարհի մասին:

2. Քրիստոսի անձի և գործի մասին ուսմունքը (1:14-2:3)

Պողոսը ձգտում է ցույց տալ Քրիստոսի անգերազանցելի մեծությունը: Իբրև անձ՝ նա իր ժողովրդի Փրկիչն է՝ աշխարհի արարիչը, Աստծու պատկերը. դա նրան դարձնում է ոչ միայն աշխարհի հոգևոր առաջնորդը (այսինքն՝ եկեղեցու առաջնորդը), այլև բնական արարած: Նա աշխարհի իսկական թագավորն է: Նրա գործը Աստծուն և Աշխարհին խաղաղությամբ հաշտեցնելն է: Հաշտեցման այս գործը նա ավարտին հասցրեց՝ իր արյունը թափելով, և ներկայումս հաշտեցման այս քարոզը դարձել է առաքելական գործ: Առաքյալը տենչում է կողոսացիներին սովորեցնել Աստծու առեղծվածը, որով հեթանոսները ձեռք կբերեն փրկություն: Այս ցանկության պատճառով նրանց զգուշացնում է այն բանից, ինչի մասին խոսվում է հաջորդ բաժնում:

3. Պատվիրաններ կեղծ վարդապետությունների (2:4-3:4)

Քրիստոսին անպատիվ անող ու վիրավորող վարդապետությունները հրեական, հեթանոսական և քրիստոնեական գաղափարների տարօրինակ խառնուրդ են: Դրանք կազմում էին վտանգավոր սինկրետիզմ: Այն կարծիքը կա, որ սկզբնավորվել են Սիրիայում կամ Ալեքսանդրիայում: Պողոսը դրանք որակում է իբրև փիլիսոփայություններ կամ խաբեություններ՝ ըստ մարդկանց ավանդույթների, աշխարհի վերաբերյալ տարրական գիտելիք-

ների, այլ ոչ թե ըստ Քրիստոսի (2:8): Թեև դժվար է այս կեղծ ուսմունքները նույնացնել «կողոսյան հերետիկոսություն» կոչվող տարրական գնոստիցիզմի հետ, մեզ հայտնի են, սակայն, դրանց հատկանշական որոշ տարրեր: Թվում է, թե հիմքը հրեական է՝ ուղղադավանության այնպիսի ծանր շեշտադրումով, ինչպիսիք են՝ թլփատումը, մաքուր-անմաքուր սնունդը, Շաբաթը և այլն: Այս հիմքի վրա էր կառուցված փիլիսոփայական այն համակարգը, որի մասին համառոտ խոսել ենք: Եվ այսպես, Քրիստոսը միակ Միջնորդն է Աստծու և մարդկանց միջև: Նրանում է իմաստության լրումը, որը նա տալիս է ոչ միայն որևէ ընտրյալ ժողովրդի, այլ բոլոր նրանց, ովքեր իրեն հավատում են: Նա գերագույն իշխանություն է իրականացնում ամբողջ տիեզերքի վրա: Հրեշտակներն ընդամենը պատգամաբերներ են. ոչ մի հիմք չկա նրանց պաշտելու համար: Եթե պաշտենք Քրիստոսին, ապա մեր կյանքը նրա միջոցով թաքնված կլինի Աստծու մեջ (3:3):

4. Քրիստոնեական կյանքը (3:4-4:6)

Քրիստոնյաներին կոչ անելով ունենալ դեպի Քրիստոսը դարձած հոգի և միտք՝ նոր կյանք վարելու նպատակով Պողոսը շարունակում է՝ տալով նոր կյանքի մանրամասն բացատրությունը: Մենք պետք է պաշտպանվենք հին մարդուց և խզենք կապերը արատների հետ՝ հագնելու նոր մարդու հանդերձներ և մշակելու քրիստոնեական առաքինություններ: Օգտագործված է հետևյալ պատկերը. հանել որոշ հագուստներ՝ նորերը հագնելու համար: Պատկերից պարզ է դառնում առաքյալի մտածողությունը: Այս առաքինությունների ձեռքբերումը ժամանակավոր գործ չէ. դրանք պետք է կրենք մշտապես:

Այնուհետև հիշատակված են երկու շարք արատներ՝ պղծությունն ու նախանձը, որոնք կռապաշտություն են: Խոսքը պոռնկության մասին է, բայց նաև՝ բարկության, չարության, ծաղրի, ամոթալի խոսքերի, սուտասանության: Առաջին շարքին պատկանող թերությունները վնաս են պատճառում անձամբ մեղավորին, իսկ երկրորդ շարքինը՝ ուրիշին: Դրանց փոխարինող առաքինություններն են՝ կարեկցանքը, բարությունը, հնազանդությունը, մեղմությունը, համբերատարությունը, համբերությունը, ներումը: Սրանք բոլորն էլ կարող են ամփոփվել մեկ նախադասությամբ՝ Քրիստոսի սերը պետք է գերիշխի ամբողջ կյանքի վրա (3:15-17): Մեր սիրտը պետք է պատկանի նրան, որպեսզի Աստծու խաղաղությունն իշխի մեր մեջ, Հոգին ու միտքը՝ նույնպես, որպեսզի խոսքը լուսավորի դրանք, նաև՝ մեծ կամքը: Նա է ուղղություն տալու ողորմածության մեր գործերին: «Ինչ էլ որ անեք խոսքերով կամ գործերով, արեք հանուն Հիսուս Քրիստոսի»:

Ինչպես Եփեսացիներին ուղղված նամակում, այստեղ ևս առաքյալը ձեռնամուխ է լինում ընտանիքի հարցի քննությանը: Կանայք, երեխաներն ու ծառաները պետք է հնազանդ լինեն, ամուսինները պետք է սիրեն իրենց կանանց՝ առանց նրանց վերևից նայելու: Ծնողները պետք է հարգեն երեխաներին և զգուշանան, որպեսզի նրանց չհուսահատեցնեն: Տերերը ծառաների հետ պետք է վարվեն այնպես, ինչպիսի վերաբերմունք կուզենային ստանալ նրանցից: Ծառաները պետք է իրենց ծառայությունը կատարեն այնպես, ասես դա պարտավոր են Աստծուն:

Եվ վերջապես, նա քննարկում է բարեպաշտության պարտականությունները (4:2-6): Աղոթքով մեր կյանքը պետք է մնա ակտիվ և ուժեղ, բնութագրվի երախտագիտության ոգով: Մենք պետք է աղոթենք Աստծուն հանուն նրանց, ովքեր հավատքի չեն եկել, քանզի միայն

Աստված կարող է բացել դռները: Պողոսը չէր կարող թափանցել Բյուզանդիայի գավառ. դռները փակ էին (Գործք 16:7): Բայց նա կարող է մտնել Եվրոպա, քանի որ Աստված այնտեղ դուռ էր բացել: Անհավատների դիմաց մեր կյանքերն ու խոսքերը կլինեն երախտագիտության ասպացույց և վնաս չեն հասցնի Ավետարանին:

5. Եզրակացություն (4:7-18)

Տյուքիկոսի՝ նամակը տանողի առաքելությունը որոշակի է: Նա պետք է կողոսացիներին տեղեկացնի Պողոսի վիճակի մասին և նրանց մխիթարի առաքյալի անունից: Պողոսի կողմից Օնեսիմոսի և Տյուքիկոսի՝ Եկեղեցու հոգևոր առաջնորդի, անունների հիշատակումը ցույց է տալիս, թե Ավետարանն ինչպես է բոլոր հավատացյալներին հավասար դարձնում Քրիստոսի մեջ: Այնուհետև գալիս են կողոսացիներին ուղարկված ողջույնները Արիստարքոսի՝ առաքյալի գերության ընկերոջ կողմից: Մարկոսից ու Ղուկասից, Հիսուսից, որ Յուստոս է անվանվում, Պողոսի գործընկերներից մեկից՝ Եպափրասից, և Դեմասից, որը հետագայում կլքի առաքյալին նրա հռոմեական դատավարության ժամանակ: Արքիպոսը՝ Կողոսայի Եկեղեցու սպասավորը, հանդիմանության է արժանանում ծուլության համար: Վերջապես, խորհուրդ է տալիս սույն նամակը կարդալ Լատրիկիայի Եկեղեցու առջև, որը 16 կմ հեռավորության վրա է գտնվում: Օրհնությունն ու հրաժեշտի խոսքերը գրված են Պողոսի ձեռքով:

Գ Լ ՈՒ Խ 30

ԹԵՍԱԴՈՆԻԿԵՑԻՆԵՐԻՆ ՈՒՂՂԱԾ ԵՐԿՈՒ ՆԱՍԱԿՆԵՐԸ

Ա. ՀԵՂԻՆԱԿՆ ՈՒ ՎԱԿԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ այս երկու նամակների առաջին երկու տողերի՝ դրանք պատկանում են ս. Պողոսի գրչին (տես նաև Բ. Թեսաղ. 3:17): Առաքյալն իր անունը կապում է երկու գործընկերների՝ Տիմոթեոսի և Սիդուանոսի անունների հետ: Այլ հատվածներ ամրապնդում են այն համոզմունքը, համաձայն որի Պողոսն իր անունը կրող այս երկու նամակների հեղինակն է: Վավերականության դեմ բարձրացված քննադատությունները ավելի ուշ շրջանի են և պակաս համոզիչ. թվագրված են 19-րդ դարի սկզբով:

Բ. ՎԱԿԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ

Հիշյալ երկու նամակները ճանաչված են և քրիստոնեական վաղ շրջանից ի վեր, դրանից մեջբերումներ են կատարել Իգնատիոս Անտիոքցին, Պոլիկարպոսը, Իրինեոսը, Հուստինոս Վկան և Տերտուլիանոսը: Դրանք Մարկիոնի Կանոնի մեջ են (մ. թ. 140 թ.), ինչպես նաև Մուրատորի կոչված հատվածի կանոնական գրքերի ցուցակում (2-րդ դարի վերջ):

Ներքին ապացույցները ևս բազմաթիվ են: Այնպիսի հատվածներ, ինչպիսիք են Ա. Թեսաղ. 1:5-9, 2:10-12, 4:15, 5:27 և Բ. Թեսաղ. 3:8-9, ոճն ու լեզուն, անձնական նշումները, թեսաղոնիկեցիների աղոթքի համար արված աղերսներն ու խնդրագրերը ստուգապես Պողոսին են: Հարցեր առաջադրող միակ բացառությունը կարող է լինել Թեսաղոնիկեցիներին ուղղված երկրորդ նամակի հայտնի 2:1-12 հատվածը, որը վերաբերում է անօրեն մարդուն: Ունանց կարծիքով, այն ավելի մոտ է Հովհաննեսի գրվածքներին, հատկապես Հայտնությանը, քան Պողոսի: Այսուամենայնիվ, եթե հաշվի առնենք այն մեծ տեղը, որ ապոկալիպտիկը զբաղեցնում էր հրեաների, ինչպես և թեսաղոնիկեցիների մեջ, ինչպես նաև Քրիստոսի վերադարձի հետ կապված մարգարեության նկատմամբ մեծ հետաքրքրությունը, ապա ոչ մի դժվարություն չի լինի ենթադրելու, որ Պողոս առաքյալն այստեղ պարզորոշ ակնարկ է արել այդ մասին:

Գ. ՀԱՍՑԵԱՏԵՐԵՐ

Երկու նամակների հասցեատերերը Թեսաղոնիկեի Եկեղեցու անդամներն են: Թեսաղոնիկե քաղաքը, որը գտնվում էր Փիլիպպեից մոտ 150 կմ հեռավորությամբ, առևտրական մեծ ու կարևոր նավահանգիստ էր: Այն հիմնել է Կասանդեր Մակեդոնացին մ. թ. ա. 315 թ. և այն անվանել իր կնոջ՝ Ալեքսանդր Մեծի քույրերից մեկի անվամբ: Բ. ա. 42 թ. Օկտավիանոսը՝ ապագա Օգոստոսը, այն կոռնելի ազատ քաղաք: Թեսաղոնիկեի բնակիչները նրան պաշտպանել էին իշխանության համար մղած պայքարում: Այս պատճառով քաղաքն ունեցավ իրավական սեփական վարչություն: Բնակչությունը կազմված էր հռոմեացիներից և հրեացիներից: Օլիմպոս լեռը, որը քաղաքից մի քանի կիլոմետր հարավ-արևմուտք է, հին աշխարհում համարվում էր հեթանոսական տասներկու աստվածությունների օջախը:

Պողոսը, Շիղայի և Տիմոթեոսի ուղեկցությամբ, այստեղ է ժամանում (Գործք 17:1-5) Փիլիպպեում տեղի ունեցած տանջալի փոփոխություններից հետո, և նրա քարոզին հետևում է քրիստոնեական Եկեղեցու հիմնադրումը: Եկեղեցու անդամների մեծ մասը կազմված է հավատափոխ հեթանոսներից (Ա. Թեսաղ. 1:9 և 2:14): Անդամներից անունով հայտնի են միայն Յասոնը (Գործք 17:5-19), Արիստարքոսը և Սեկունդոսը (Գործք 20:4):

Սովորության համաձայն՝ Պողոսը նախ մոտեցել էր քաղաքի հրեաներին՝ համոզելու, որ Հին Կտակարանը հայտնում էր Մեսիայի Չարչարաններն ու Մահը, և որ Հիսուսը հենց խոստացված ու սպասված Մեսիան էր: Նրան չհաջողվեց համոզել հայրենակիցներին, համենայն դեպս ոչ մեծաթիվ մարդկանց, սակայն հավատափոխներ ձեռք բերեց հեթանոսների մեջ (1:6-7): Այս հաջողությունը բորբոքեց հրեաների նախանձը, և նրանք սկսեցին հալածել առաքյալին: Պողոսը ստիպված էր թողնել քաղաքը:

Թեսաղոնիկեն, այսպիսով, եվրոպական երկրորդ քաղաքն էր, որը լսում և ստանում էր Ավետարանը: Բուռն հուզումների ժամանակ հրեաները առաքյալին հյուրընկալողին քարշտվեցին դատարան՝ մեղադրելով դավաճանության մեջ, քանզի օտարերկրյա քարոզիչները հայտարարում էին այլ Տեր, քան Կեսարն էր՝ իշխող կայսրը: Երեք առաքյալները, խոհեմությունից դրդված, ստիպված եղան թողնել քաղաքը:

Մեծ նեղությունների մեջ, բայց և մեծ ուրախությամբ են Թեսաղոնիկեցիներն ընդունել Ավետարանը:

Դ. ԳՐԵԼՈՒ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

Երբ մի քանի շաբաթ անց Պողոսը հասավ Աթենք, ապա լսեց այն հալածանքների մասին, որոնց թիրախը նոր հավատափոխներն էին, ու ցանկացավ մխիթարել նրանց: Այս նպատակով ուղարկեց Տիմոթեոսին: Վերջինս գնաց այնտեղ և ժամանակավոր առաքելությունն իրականացնելուց հետո եկավ Կորնթոս՝ միանալու առաքյալին: Նրան տեղեկացրեց Եկեղեցու իրական վիճակի և այստեղ դեռևս դրսևորվող հեթանոսական արատների մասին, ինչպես նաև առաքյալի դեմ տարածված զրպարտանքներին ու, հատկապես, Քրիստոսի երկրորդ գալստյան թեմայով եղած թյուրիմացություններին:

Այս զեկույցից հետո Պողոսը որոշեց նամակ գրել՝ թեսաղոնիկեցիներին քաջալերելու նպատակով, որպեսզի նրանք ամուր ու հավատարիմ մնան հալածանքի մեջ՝ հորդորելով վարել սուրբ կյանք, նաև կոչ անելով իր անձն ու առաքելությունը պաշտպանել խղճուկ ու անարդարացի զրպարտություններից և վերջապես՝ նրանց լուսավորելու և Քրիստոսի վերադարձի մասին աստվածաբանական տարակուսանքներից ու շփոթություններից ազատելու համար:

Ինչ վերաբերում է Երկրորդ նամակին, ապա նա նորից է ձգտում ցրել կեղծ շշուկները Քրիստոսի գալստյան վերաբերյալ՝ հորդորելով լինել հավատարիմ, ծույլերին ու խառնաշփոթ կյանքով ապրողներին խրախուսելով ընթանալ քրիստոնեական իրենց կոչման համաձայն:

Թվում է, որ Առաջին նամակի Քրիստոսի վերադարձի կապակցությամբ օգտագործված «հանկարծակի» բառը պետք է հասկանալ «անմիջապես» իմաստով (Ա. Թեսաղ. 5:3): Մաքսավորի նամակներից կարելի էր հասկանալ, որ Քրիստոսի վերադարձն անխուսափելի էր: Այս կեղծ գաղափարն այդ ժամանակ տեղիք էր տվել որոշակի ծուլության ու սոցիալական մեծ անկարգության, անգամ՝ ընդհանուր տագնապի: Առաջին նամակում ակնարկ է արվում այն մասին, որ թեսաղոնիկեցիները վախենում էին, թե ողջ չեն լինի Տիրոջ գալստյան ժամանակ: Վախն այժմ առնչվում է այն գաղափարին, որ գալուստը մոտ օրերի գործ է: Հրեաների կողմից մի նոր հալածանք ևս նպաստում է տագնապալից այս վիճակին:

Ե. ԳՐԵԼՈՒ ՏԱՐԵԹԻՎՆ ՈՒ ՎԱՅՐԸ

Հիշյալ երկու նամակները Պողոսը գրել է Կորնթոսից, որտեղ աշխատում էր: Ամենայն համոզվածությամբ՝ նամակները գրելու տարեթիվը կարելի է համարել 52 թվականը: Անշուշտ, դրանք առաջիններից են, եթե ոչ՝ Առաքյալի ամենաառաջին նամակները: Շիղան ու Տիմոթեոսը Պողոսի մոտ են, և օրինական է մտածել, որ մոտիկից հետևում էին միմյանց:

Զ. ԵՐԿՈՒ ՆԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Թեև նամակները կարճ են, սակայն առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Աստվածաշունչն ընթերցողի համար: Դրանք հստակ գաղափար են տալիս այն մասին, թե Պողոսն ինչպես էր Ավետարանը քարոզում հեթանոս հավատափոխներին, ինչ-

պես նաև պարզ պատկերացում տալիս եկեղեցու առաջին ժամվա քրիստոնեական կյանքի ու այն մասին, թե ինչ մոտեցում պետք է ունենալ կեղծ ուսմունքների ու անբարոյական վարքի նկատմամբ: Նամակները նաև վեր են հանում հեղինակի խոր զգացմունքները: Դրանք կարելի է համարել աննման փաստաթղթեր: Թեև այս երկու նամակները չեն հասնում Եփեսացիներին ուղղված նամակի բարձրությանը ու չեն դրսևորում Պողոսին հատուկ խիստ տրամաբանություն, ինչպես Հռոմեացիներին ուղղված նամակում է, հեթանոսների մեծ առաքյալից եկող լուրը մեզ համար միշտ էլ թանկ է: Այսուհանդերձ, որոշ առումներով, դրանց հատուկ արժեքը եզակի է: Նախ՝ առաջարկում են Պողոսի՝ իբրև քարոզչի, մխիթարող բարեկամի և մարգարեի ցնցող դիմանկարը: Եթե Փիլիպպեցիներին և Կորնթացիներին ուղղված նամակներում առաքյալը nolens volens ցուցադրում է իր բնավորությունը, ապա նույն կերպ էլ այստեղ, բացեիքաց ցույց է տալիս իր սիրտը. նկատում ենք նրա հավատքը, որը վեր է ամեն կասկածից, անթերի նվիրումը Քրիստոսին, այլասիրությունը, աղոթքով կյանքը, երախտագետ բնույթը, վրդովմունքը Ավետարանի թշնամիների դեմ, զգայունությունը կեղծ մեղադրանքների ու զրպարտությունների հանդեպ, որոնց ենթարկվում է, բարեկամների կողմից հասկացվելու սպասումը, քաղաքավարությունը, քրիստոնեական կապվածությունը:

Բացի այդ, շնորհիվ այս նամակների, գործ ունենք առաքյալի կողմից կիրառվող քարոզչական ամուր մեթոդների համառոտ ակնարկի հետ: Նա ձգտում է եկեղեցիներ հիմնել կայսրության մեծ կենտրոններում: Վտարվելով Փիլիպպեցից՝ մի նոր գործ է ձեռնարկում Թեսալոնիկեում, սակայն չի գոհանում Ավետարանը միայն ժողովարաններում քարոզելով և առավել ևս չի հուսահատվում թշնամիների հակազդեցությունից: Ընդհակառակը, շուրջն է հավաքում գործընկերների մի խումբ և, մի տնից մյուսը գնալով, համարձակորեն ու հուզիչ քնքշությամբ զբաղվում հավատափոխներով:

Այս էջերում երևում է նաև նրա կողմից հավատքի եկածների ու այն եկեղեցու բնույթը, որտեղ նրանք հավաքվում են: Մենք կարող ենք որոշակի գաղափար կազմել վաղ շրջանի քրիստոնեական եկեղեցու ակունքների մասին: Մենք վկաններն ենք ավետարանող նրա եռանդի, հալածանքի ժամանակ դրսևորած հավատարմության ու հավատքի արագ աճի: Եկեղեցին ազատագրված չէ սխալներից ու թերություններից, ոչ էլ պաշտպանված է կոպիտ մեղքերից: Որոշ առումներով, թվում է, որ վարդապետությունը վարակված և մի քիչ աղավաղված է: Հոգևոր առաջնորդները միշտ չէ, որ հնազանդվել են: Մեզ հայտնի չէ, թե որն է եղել նրանց գործը: Ենթադրվում է, որ նրանք խրատել են անկանոն կյանք վարողներին և խրախուսել համարձակությունը կորցնողներին: Այս առաջնորդներն, անշուշտ, ղեկավարել են մշակութային հավաքներն ու վարել ուսուցման ու աղոթքի սեանսերը: Եկեղեցին հայտնի էր քաջությանը ու եղբայրական սիրով:

Երկու նամակների առանձնահատուկ արժեքն այն է, որ դրանք առաքելական եկեղեցու ամենահին փաստաթղթերն են: Բովանդակում են ոչ միայն քարոզչական լուր, այլև նախնական Ավետարանը: Նամակները գրվել են Քրիստոսի Հարությունից հազիվ քսան տարի անց: Կարելի⁶ է արդյոք պնդել, որ անհամապատասխանություն է եղել Հիսուսի և Պողոսի վարդապետությունների միջև: Նամակները գրելիս Պողոսն արդեն տասնչորս տարի ի վեր քարոզչություն էր անում: Մյուս առաքյալները ծանոթ էին նրա քարոզչությանը: Այս Ավետարանը զորեղ ձևով հնչում է երկու նամակներում և, հետևապես, գլխավոր առաքյալները ծանոթ էին

դրանց բովանդակությամբ: Նամակներն ուսումնասիրելիս զարմանում ես՝ հանդիպելով ճշմարտությունների լայն մի շղթայի: Նամակները մյուսների պես «դոգմատիկ» կամ տեսական չեն, դրանք զլխավորապես բարոյագիտական բնույթի են և, այսուամենայնիվ, ենթադրում են տեսական ուսմունք. անդրադառնում են առօրյա աշխատանքին, վարքի մաքրությանը, սուրբ ու ազնիվ կյանքին, սիրուն ու հույսին: Այս ամենը սերտորեն աղերսվում է հավատքին: Առաքյալը բարոյականությունը երբեք չի անջատում կրոնից, կատեխիզիսը՝ որոշակի կյանքից: Գործնական պարտականությունը հիմնվում է ուսմունքի վրա, բոլոր խրատները սերտ կապի մեջ են քրիստոնեական ամենամեծ ճշմարտությունների հետ: Տեսական հայտարարությունները դառնում են տպավորիչ, որովհետև արվում են միայն պատահականորեն: Ճշմարտությունն այստեղ ենթադրվում է. այն արդեն ընդունված է: Այս ուսմունքները վերաբերում են Քրիստոսի անձին և Աստծու հայրությանը: Աստված Ավետարանի հեղինակն է: Նա հավատացյալներին կանչել է նոր կյանքի, և վերջիններս պետք է ընթանան համաձայն իրենց ստացած կոչման: Նրա Թագավորությունն ու փառքը մարդկային ամեն հույսի գագաթնակետն են: Ինչ վերաբերում է Քրիստոսին, ապա Հոր հետ նա կապված է իր էական հատկանիշով: Կարելի է աղոթք հղել նրան. նրա անձից հորդում է նոր կյանքը: Նրա մահն ու հարությունը, ինչպես նաև ամբողջ գործը, հավատքի հիմքն են: Նրա փառքով վերադարձը մնում է քրիստոնեական հույսի վերջնական առարկան:

Սուրբ Հոգին ներկայացված է իբրև գործոն, որը կբաշխի քրիստոնեական հայտարարված գորավոր լուրը, ինչպես նաև դրա համոզմունքը, ուրախությունն ու առաքելության պարզակները: Ամենից ավելի բարեհաճության արժանացածը, անշուշտ, Քրիստոսի գալստյան թեման է: Առաքյալը նկարագրում է ևս մի հայտնություն՝ անօրեն մարդու հայտնվելը, սակայն չի դադարում տեսնել նաև քրիստոնյայի ապագան լուսավոր հույսի մեջ, քանզի եթե հայտնվի անօրեն մարդը, նրան կհետևի Աստծու Որդու՝ մեր Տիրոջ ու Փրկչի փառավոր Վերադարձը: Պողոսը մեզ չի թույլատրում անրագրել տարեթվեր, այլ առաջարկում է վախճանաբանական ճշմարտությունները սպառելու հնարավորություն՝ հավատքի ամենօրյա մարտը մղելու համար:

Պողոսի Թեսաղոնիկեցիներին ուղղված երկու նամակներն, այսպիսով, հավաստում են, որ Պողոսի հայտարարած լուրը նորություն չէր «նախնական» կոչված Ավետարանի համեմատ: Վկայակոչությունները, որ անում է իր քարոզի մեջ, և հայտարարված ճշմարտությունների հիշեցումը ապացույց են այն բանի, որ նա զարգացնում է խիստ որոշակի մի համակարգ: «Ավանդույթ» բառը հաստատում է մեր տպավորությունը: Այս բառի տակ չպետք է հասկանալ այն, որ Պողոսը հաղորդում էր կասկածելի վավերականությամբ շշուկներ, այլ որ հիմնվում է մի ուսմունքի վրա, որը, անգամ բանավոր, շատ խնամքով ձևակերպվել ու պահպանվել է: Այս ավանդույթը պետք է ներառեր նաև բարոյագիտական ըմբռնումներ: Դա վարքի կանոն է, որին եղբայրները պետք է հետևեին (Բ. Փեսաղ. 3:6): Նշենք, որ Ղուկասն իր հերթին օգտագործում է «հաղորդել» բայը՝ Հիսուսի կյանքի ու առաքելության փաստերի պատմությունը նկարագրելու համար (Ղուկ. 1:2):

Այս ավանդույթը սոսկ վավերական չէր, այն ուներ նաև հեղինակություն: Գաղատացիներին ուղղված նամակում Պողոսը հայտարարում է, որ այս Ավետարանը բացառիկ էր իր ճշմարտությամբ, և որ ոչինչ չէր կարող փոխարինել նրան (տես նաև՝ Բ. Թեսաղ. 3:14): Եթե

առաքյալը շեշտը դներ զուտ անձնական հեղինակության վրա, ապա հազիվ թե խուսափեր եսասիրության, անգամ կրոնական բռնատիրության մեջ մեղադրվելուց: Բայց եթե լուրը ստացել էր Աստծուց, այնպես որ նրա հայտարարությունը դառնում էր հենց Աստծու խոսքը՝ հաղորդված իր միջոցով և Սուրբ Հոգու ազդեցությամբ (Ա. Թեսաղ. 2:1), ապա այդ ժամ նա իրավունք ուներ իրեն համարելու հեղինակությամբ օժտված: Ինչ վերաբերում է Առաջին նամակին, ապա այստեղ բարձրացված խնդիրները տարբեր են Գաղատացիներին ուղղված նամակում շոշափվածներից: Ընդհանրապես, դրանք արտացոլում են հեթանոս հավատափոխների և հրեական ծագում ունեցող ոչ հավատացյալների վիճակը: Պոռնկության ու ծուլության վերաբերյալ հարցերը չեն ծագում հրեական համայնքներում, մինչդեռ հեթանոսությունից եկող քրիստոնյաները չունեին լավ հաստատված բարոյական ավանդույթ: Սեռական հարաբերությունները կարգավորվում էին հաճույքներ փնտրելու կամ էլ հարմարության դրդապատճառներով: Թեև հեթանոս բարոյագետները սահմաններ են առաջարկել անառակության համար և փորձել են արգելակել սեռական սանձարձակությունը, սակայն երբեք, Նոր Կտակարանի մարգարեների պես, չեն խոսել հեղինակավոր ձևով: Սոցիալական համերաշխությունը, որ հրեան վայելում էր ընտանիքի և Իսրայելի հանդեպ ունեցած հավատարմության պատճառով, խզում է ամեն կապ հասարակական ու կրոնական միջավայրի հետ:

Եղբայրության ու փոխադարձ պատասխանատվության զգացում առաջացնելու նպատակով թեսաղոնիկեցիներին հորդորվեց լրջորեն աշխատել և խոհեմաբար վերաբերվել «նրանց հանդեպ, ովքեր դրսից են»: Քրիստոսի վերադարձի վերաբերյալ ուսմունքը առավել ևս նոր չէր, քանզի Պողոսը հիշեցնում էր, որ «այս բաներն ասել էր նրանց մոտ եղած ժամանակ» (Բ. Թեսաղ. 2:5): Ըստ Ա. Թեսաղ. 4:15 տողի՝ նա կարողացավ իմանալ Քրիստոսի որոշ խոսքեր այս թեմայի վերաբերյալ: Նա դիմում է գողի պատկերին, ով գալիս է գիշերով, պատկեր, որ Հիսուսն օգտագործել էր (Մատթեոս 24:43, Ղուկաս 12:39-40, Ա. Թեսաղ. 5:4):

«Տեղափոխմանը» կամ ողջերի «համբարձմանն» ու ննջեցյալների հարությանը վերաբերող քննության առաջին մասը (Ա. Թեսաղ. 4:13-18) գրելու պատճառն այն հոգսն է, որ թեսաղոնիկեցիներն ունեին մահացած հավատացյալների վերաբերյալ: Քրիստոսի վերադարձին հավատում էին, բայց ի՞նչ էր պատահելու մահացած հավատացյալներին: Բանավեճի երկրորդ մասը (5:1-11) պատճառաբանվում է հետևյալ ցանկությամբ՝ իմանալ, թե որ պահին է տեղի ունենալու վերադարձը: Պողոսի պատասխանը հավատացյալներին կողմնորոշում է ավելի շուտ դեպի հոգևոր գիտակցում, քան տարեթվային չարաշահվող հաշվարկ: Եթե նրանք լինեն զգոն ու ակտիվ՝ Տիրոջ գալուստին սպասելիս, ապա կտոկան հավատքի համար անհրաժեշտ ձևով:

Գործնականորեն, հավատքի բոլոր գլխավոր ուսմունքներն այստեղ առկա են: Նամակները չեն գրվել իբրև տեսական տրակտատներ, ոչ էլ Պողոսի աստվածաբանական ամբողջ ուսմունքը շարադրելու և զարգացնելու նպատակով: Նամակներ ստացողները հավատում էին մեկ Աստծու՝ Հորը, որը կենդանություն է պարգևել մարդկանց և նրանց ընտրել փրկելու նպատակով: Նրանց ազատել է վրա հասնող զայրությանից, և դա իմացրել է Ավետարանի խոսքով: Այս Ավետարանը վերաբերում է Տեր Հիսուս Քրիստոսին, որը մահացավ հրեաների ձեռքով, երրորդ օրը հարություն առավ և ներկայումս երկնքում է՝ Աստծու մոտ,

որտեղից կվերադառնա: Նրան վերագրվում է աստվածություն, որովհետև կոչվում է ՏԵՐ, ԱՍՏՕՈՒ ՈՐԴԻ ԵՎ ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍ: Ստանալով Աստծու Խոսքը՝ հավատացյալները երես են թեքում կուռքերից՝ դեմքով դառնալով դեպի իսկական Աստված՝ նրան ծառայելու և սպասելու Քրիստոսի վերադարձին: Անձնական կյանքում նրանք պետք է աշխատեն, աղոթեն, ուրախ լինեն: Այսպիսով, տեսականորեն ու գործնականորեն, Թեսաղոնիկեցիներին ուղղված նամակները բովանդակում են հայտնված ճշմարտության էական կետերը:

Է. ԹԵՍԱԳՈՆԻԿԵՑԻՆԵՐԻՆ ՈՒՂՎԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՍԱԿԻ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

1. Ներածություն (1:1)

Նամակի հասցեատերերի՝ Թեսաղոնիկեի քրիստոնյաների և Պողոսի անունից բացի, այստեղ կարող ենք կարդալ նաև առաքյալի երկու գործընկերների անունները: Երեքն էլ կապված են եղել Եկեղեցուն: Պողոսը հիմնադիրն էր, Շիդան օգնել է կազմակերպական գործերում, իսկ Տիմոթեոսը այցելել է այնտեղ ու բերել ներկա նամակը: Հնարավոր է, որ այս նամակը գրելիս Տիմոթեոսը նրան ծառայել է իբրև քարտուղար:

2. Պատմական բաժին (1:3-3:13)

Պողոսը շնորհակալ է լինում Տիրոջը՝ այս Եկեղեցու վիճակի համար: Նրա անդամները ցուցադրում են հավատքի, հույսի և եղբայրական սիրո նշաններ: Հոգևոր կյանքը ուսումնասիրելու հիմնական պատճառը Աստծու ընտրության և Ավետարանի զորության մեջ է, Ավետարան, որը սրտեր է փոխում: Ոչ ոք չի կարող դիմադրել Աստծու հոգու զորությանը: Դրա գերազանց արդյունքն այն է, որ նրանք դարձել են Քրիստոսին ընդօրինակողներ: Նրանք վկաներ են:

Այնուհետև առաքյալը հիշեցնում է, որ եղել է նրանց մոտ: Նա պաշտպանում է իրեն՝ հիշեցնելով, թե նրանց ինչպես է քարոզել Ավետարանը. աշխատել էր անշահախնդրորեն ձգտելով դուր գալ Աստծուն, աշխատել էր ազնվորեն՝ առանց օգտվելու իր առաքելությունից՝ սեփական համբավ ձեռք բերելու նպատակով: Աշխատել էր սեփական ձեռքերով՝ հոգավոր իր կարիքները, բեռ չդառնալով ոչ ոքի: Նրանց վկայել էր իր մեծ զգացմունքների մասին: Անբասիր ապրել էր նրանց մեջ (2:1-12): Երախտագիտությամբ հիշում է նաև, թե Թեսաղոնիկեցիներն ինչպես էին ստացել Ավետարանը, այսինքն՝ Աստծու, այլ ոչ թե մարդկային խոսքը: Նրանք վճռական էին Աստծու Խոսքը պահպանելու գործում և տրամադրված էին տառապելու, ինչպես իրենց ընկերներն այլուր, մասնավորապես Հրեաստանում (2:12-16):

Պողոսը միշտ մեծ հետաքրքրություն է ցուցաբերում նրանց նկատմամբ (2:17-3:13):

Ցանկանում է նրանց այցելել, որովհետև նրանց համարում է ուրախության աղբյուր և պատճառ, իր պսակը, այսինքն՝ որ կկարողանա Քրիստոսի վերջին գալուստի ժամանակ նրանց ներկայացնել իբրև Ավետարանի պտուղներ: Նրանց այցելելու ցանկությունն առաքյալը չկարողացավ իրականացնել, բայց Տիմոթեոսին ուղարկեց մխիթարելու և նրանց վիճակի մասին տեղեկանալու: Երբ Տիմոթեոսը վերադարձավ լավ լուրերով, առաքյալը շատ հրճվեց (3:1-10): Իր օրհնության մեջ (3:11) նա Աստծուն խնդրում է բացել այն ճանապարհը,

որն իրեն հնարավորություն կտա այցելել նրանց, որպեսզի սերը մեծ չափեր ընդունի, և որ Դատաստանի օրը նրանք ներկայացվեն անբիծ ու անբասիր:

3. Գործնական բաժին (4:1-5:22)

Եկեղեցու անդամներին հորդոր է արվում ապրելու սրբացման կյանք և աճելու աստվածային ողորմածության մեջ: Դա պարտավորեցնում է ունենալ բարոյական բարձր մաքրություն: Դրանք, ուստի, լավ խորհուրդներ էին՝ ուղղված մի քաղաքում ապրող քրիստոնյաների, որի նավահանգստում նավերի երթևեկության հետևանքով ծնված անբարոյականությունը պետք է, որ հանրահայտ լիներ: Եղբայրների մեջ, հավանաբար, իշխել էր ավելի ու ավելի ուժեղ սիրո զգացմունքը, նաև՝ ազնիվ աշխատանքի ձգտումը: Թվում է, թե այս հավատացյալներից ոմանք դադարել էին աշխատել, որովհետև սպասում էին Տիրոջ անխուսափելի վերադարձին (4:1-16), մի բան, որը Պողոսին մղում է որոշ դիտողություններ անել Տիրոջ Վերադարձի կապակցությամբ: Թեսաղոնիկեում վախենում էին, որ արդեն մահացած հավատացյալները չէին կարողանա հաղորդակից լինել Վերադարձի ուրախությանը: Արդ, պետք չէր մտածել, որ մեզանից առաջ մահացած եղբայրները անբարենպաստ վիճակի մեջ էին: Չէ՞ որ վախճանաբանական բոլոր իրադարձությունները՝ Քրիստոսի Գալուստ, մեռյալների Հարություն, կենդանի քրիստոնյաների Համբարձում և հավիտենական Երջանկություն, տեղի են ունենալու միաժամանակ:

Քրիստոսի Վերադարձը տեղի է ունենալու հանկարծակի և անսպասելի ձևով: Նա գալու է «գիշերով՝ գողի պես», որովհետև անհավատը քնած է հարբածի պես: Նա իրեն պահում է այն մարդու նման, ում զգայությունները թմբել են մեղքի ազդեցության տակ: Մինչդեռ քրիստոնյայի համար, եթե նա արթուն է և իրեն պահում է զուսպ, եթե ուշադիր է ժամանակների նշանների նկատմամբ և պատրաստվում է հանդիպել Տիրոջը (4:16-5:11), այս Վերադարձը անսպասելի անակնկալ չի լինի:

4:1-16 հատվածի գործնական խրատները հասցեագրված են առանձին անդամների, մինչդեռ 5:12-22 հատվածի խորհուրդներն ամբողջ համայնքի համար են (ինչպես Հռոմեացիներին ուղղված նամակի 12-րդ գլուխը): Առաքյալը նրան կոչ է անում պատվել իր առաջնորդներին, ապրել խաղաղությամբ, տրվել աղոթքին, ցուցաբերել երախտագիտություն, զգուշացնել անկանոն կյանքով ապրողներին, մխիթարել թուլյերին, հետևել Հոգուն և, անցնելով չարի կողքով, ընտրել Բարին:

4. Եզրակացություն (5:23-28)

Այս հատվածն սկսվում է Աստծուն ուղղված խնդրանքով՝ թեսաղոնիկեցիների կատարյալ սրբացման համար, որպեսզի Քրիստոսի Վերադարձի նպատակով պահպանեն հոգին ու մարմինը: Քրիստոնեությունը մասնակի կրոն չէ. նա, հիրավի, փնտրում է միայն կատարյալ մարդու կատարյալ փրկություն՝ ինչպես մարմնով, այնպես էլ հոգով: Պողոսը բարեկամներին նաև խնդրում է աղոթել, նա հավատում է հովանավորության ուժին, մերձավորների օգտին արված աղոթքին և պատվիրում է իր նամակը կարդալ բոլոր եղբայրներին: Առաջին նամակը եզրափակվում է Պողոսի՝ թեսաղոնիկեցիներին ուղղված ողջույնով ու օրհնությամբ:

Ը. ԹԵՍԱԳՂՈՆԻԿԵՑԻՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

1. Ներածություն (1:1-12)

Ողջույններ հղելուց հետո Պողոսը տալիս է թեսաղոնիկեցիների հանդեպ ունեցած երախտագիտության պատճառը. երախտագետ է նրանց հավատքի ամրության, մեծ սիրո և հավածանքի մեջ համբերատար տոկալու պատճառով (1:3-4): Նրանց հայտնում է գալիք հանգստի մասին, որը սկիզբ է առնելու Դատաստանի օրը: Անօրենների համար դա լինելու է սարսափի, միևնչյեռ սրբերի համար՝ փառքի օր: Անհավատները՝ նրանք, ովքեր չեն ուզում ճանաչել Աստծուն և մերժում են Ավետարանը, կորած են: Բոլոր նրանք, ովքեր ամարդարություն են գործում, կդատապարտվեն և կխոստովանեն, որ իրենց կրած պատիժն արդարացի է: Պողոսն այս բաժինը եզրափակում է աղոթքով, որպեսզի թեսաղոնիկեցիները համարվեն իրենց կոչմանն արժանի, և որպեսզի Աստված նրանց լցնի հավատքով ու գործությամբ, որպեսզի Քրիստոսը կարողանա փառաբանվել սրբերի մեջ, և սրբերը փառաբանվեն նրանում:

2. Հրահանգներ Քրիստոսի վերադարձի վերաբերյալ (2:1-14)

Տիրոջ օրվա՝ Դատաստանի օրվա վերադարձի վերաբերյալ կեղծ գաղափարները պետք է ուղղվեն: Շատ-շատերը մտածում են, որ այս օրն արդեն եկել է («օր»-ը մեկնաբանելով իբրև ժամանակահատված): Պողոսը հիշեցնում է, որ այն դեռ չի հայտնվել, քանզի դրան նախորդելու է երկու կասկածելի իրադարձություն. աստվածուրացությունը և հայտնությունն անօրեն մարդու, որին Յովհաննեսն անվանում է Հակաքրիստոս, կորստի գավակ (նշենք, որ Յովհաննեսի մոտ Յիսուսը Յուդային անվանել է կորստյան գավակ):

Հակաքրիստոսը գործիք կծառայի Սատանայի ձեռքին: Նա կհակադրվի Քրիստոսին և կծգտի փոխարինել նրան, իրեն պաշտել կտա իբրև Աստված, ցույց կտա նշաններ ու հրաշքեր, որպեսզի հասնի նպատակին: Բայց Քրիստոսը նրան կտապալի իր խոսքով ու շնչով՝ ժամանակների վախճանին անձնապես հայտնվելու ժամանակ:

Գալիք այս իրադարձությունների նպատակով Պողոսը թեսաղոնիկեցիներին խնդրում է ամուր մնալ հավատքի մեջ՝ կապվելով ճշմարտության այն ուսմունքին, որ Պողոսն իրենց բերանացի ուսուցանել է, ինչպես դա արել է Առաջին նամակում:

3. Գործնական խրատներ (2:15-3:15)

Պողոսը թեսաղոնիկեցիներին խնդրում է աղոթել իր համար, որպեսզի հնարավոր լինի ազատորեն քարոզել Ավետարանը, և որ նա ազատագրվի իր թշնամիներից (խոսքը, հավանաբար, հրեաների և հրեական կրոն տարածողների մասին է): Այն համոզմունքն է հայտնում, որ նրանք անպայմանորեն կմիանան հոգևոր այս պահանջին: Նաև խորհուրդ է տալիս հեռու մնալ անկանոն կյանք վարողներից: Նշենք, որ խոսքը ոչ թե վտարման, այլ ժամանակավոր բաժանման մասին է: Սա անաչեցնում է նրանց, ովքեր խայտառակ արարքներ են թույլ տալիս՝ նրանց հասցնելով զղջման (14-րդ տող): Վիրավորանք հասցնողը չպետք է համարվի թշնամի, նրա հետ պետք է վարվել եղբոր պես: Կարգուկանոն ստեղծելու գոր-

ծում խիստ ընդգծված է սիրո տարրը: Առաքյալը, վերջապես, խրատում է ընդօրինակել իր սեփական վարքի ու աշխատանքի (ծեռքի աշխատանքի) օրինակը: Իր կարիքները նա հոգացել է սեփական ձեռքերով՝ փոխանակ լինելու Եկեղեցու խնամակալության տակ: Եկեղեցու ծույլ անդամները ևս պետք է այսպես վարվեն: Դա չի նշանակում, որ պետք է վերջ դնել բարեգործական ամեն գործողության և կարիքավորներին ցույց տրվող օգնությանը, այլ որ նյութական օգնությունը պետք է հատկացվի միայն իսկական կարիքավորներին, և որ համեմատաբար ապահով մարդիկ պետք է օգնեն կարիքի մեջ գտնվողներին՝ նրանց, ովքեր զուրկ են էականից: «Ուտել ցանկացողը պետք է աշխատի»:

4. Եզրակացություն (3:16-18)

Օրինության մեջ, որով նամակն ավարտվում է, առաքյալն աղոթում է հանուն չվատակած այն ողորմածության, որ խաղաղությունն ու Քրիստոսի ներկայությունն է քրիստոնյա իր ընթերցողների սրտում: Նամակը ստորագրում է իր անվամբ՝ հավանաբար տարբերվելու զեղծարարներից և իր նամակը տարբերելու շրջանառության մեջ գտնվող կեղծ նամակներից (տես նաև՝ Կողոս. 4:18 և Ա. Կորնթ. 16:21):

Գ Լ ՈՒ Խ 31

ՏԻՍՈԹԵՈՍԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ա. «ՅՈՎՎԱԿԱՆ» ՆԱՄԱԿՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՆ ԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տիմոթեոսին (թվով երկու) և Տիտոսին ուղղված նամակները առանձին խումբ են կազմում Պողոսի գրվածքների մեջ և 19-րդ դարից ի վեր կրում «Յովվական» ընդհանուր վերնագիր: Դա բացատրվում է նամակների բովանդակությամբ, որը մեծապես կապված է եկեղեցիների կազմակերպման և այն պարտականությունների հետ, որոնք ընկած են նրանց սպասավորների (Երեցների ու Եպիսկոպոսների) վրա: Ընդհանուր առմամբ ընդունված է, անգամ նրանց կողմից, ովքեր վիճարկում են նամակների վավերականությունը, որ դրանց հեղինակը նույն անձնավորությունն է:

Վավերականության հարցը այն խնդիրներից է, որոնք միաձայն չեն լուծվել Նոր Կտակարանի մասնագետների կողմից: Բոլոր առարկությունները ո՛չ նույն բնույթի են, ո՛չ էլ նույնական արժեք ունեն: Դրանք կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

ա) առարկվում են պատմական բնույթի դժվարությունները.

բ) հիշատակվում է հերետիկոսությունների դեմ առարկությունների ու պայքարի առկայությունը.

գ) վկայակոչվում է եկեղեցական զարգացած՝ առաքելական դարաշրջանի հետ անհամատեղելի կազմակերպությունը.

դ) նշվում է, որ Պողոսի անձի նկարագիրը քիչ է համապատասխանում առաքյալի հայտ-
նի պատմությանը.

ե) ասում են, որ լեզուն ու ոճը տարբերվում են հեթանոսների առաքյալին հատուկ լեզ-
վից ու ոճից:

Մտոիկից ուսումնասիրենք այս առարկությունները:

1. Պատմական բնույթի դժվարություններ

Վավերականությունը քննադատողներն առարկում են՝ ասելով, որ Պողոսի քարոզչա-
կան գործունեության ժանոթ շրջանակում դժվար թե հնարավոր լիներ գտնել որևէ տեղ
կամ վայր՝ հիշյալ երեք նամակները գրելու համար: Այս շրջանակը մեզ է ներկայացվում
«Գործք Առաքելոց»-ով, ինչպես նաև Պողոսի այլ նամակներում սփռված որոշ վկայություն-
ներով: Ծանապարհորդությունները, որոնց մասին այստեղ ակնարկվում է, անհամատեղե-
լի են թվում այն տեղաշարժերի հետ, որ Ղուկասը ներկայացնում է «Գործք»-ում: Համա-
ձայն Տիմոթեոսին ուղղված առաջին նամակի 3-րդ գլխի՝ Պողոսի երիտասարդ գործընկերը
հավանաբար մնացել էր Եփեսոսում, մինչդեռ Պողոսը շարունակել էր երթուղին դեպի Մա-
կեդոնիա, բայց «Գործք» 19:22 և 20:1 տողերն ակնարկ են այն մասին, որ Տիմոթեոսը Եփե-
սոսից ուղարկվել էր Մակեդոնիա՝ նախքան իր ավագի ժամանումը: Ա. Տիմոթ. 3:14 տողում
առաքյալը ցույց է տալիս Եփեսոսում գտնվող Տիմոթեոսի մոտ վերադառնալու իր մտադրու-
թյունը, մինչդեռ «Գործք» 20:4 տողում Պողոսը նրա մոտ՝ Հունաստանում է, իսկ 20:14, 17
տողերում Պողոսը չի գնում Եփեսոս, նա միայն պատգամախոս է ուղարկում Եկեղեցու
երեցների մոտ՝ խնդրելով իրեն այցելել Միլետոսում՝ մայրաքաղաքի նավահանգստում: Նույն
ձևով էլ, Բ. Տիմոթ. 4:20 տողում Տրոփիմոսին վկայակոչելը չի կարող վերաբերել Գործք
20:17-21:8 հատվածում խոսվող ճանապարհորդությանը, քանի որ Տրոփիմոսը առաքյա-
լին ուղեկցում է Երուսաղեմ («Գործք» 21:29): Տիտոսին ուղղված նամակի 1:5, 3:12 հատ-
վածների վկայությունները, որտեղ Պողոսն ասում է, թե Տիտոսին թողնում է Կրետեում և
նրան խնդրում է իրեն հանդիպել Նիկոպոլիսում, չեն կարող ներդաշնակել միակ այն առիթի
հետ, երբ, համաձայն «Գործք» 27:8 տողի, այսինքն՝ բանտարկված վիճակում դեպի Հռոմ
կատարած ճանապարհորդության ընթացքում առաքյալը գնացել է Կրետե:

Այսուամենայնիվ, կարելի կլինի շրջանցել այս դժվարությունները, եթե ընդունենք, որ
առաջին գերեվարությունից հետո («Գործք» 28:30 և Փիլիպպ. 1:13) Պողոսն ազատվել է 62
կամ 63 թ. և նորից ձերբակալվել 66 կամ 67 թ.: Կորնթացիներին ուղղված առաջին նամա-
կում Կղենես Հռոմեացին (մոտ 97 թ.) խոսում է Պողոսի մասին, «որը գնացել է ընդհուպ
մինչև Արևմուտքի ժայրամասերը»: Քանի որ այս արտահայտությունը հանդիպում է Հռո-
մում գրված նամակում, ապա կարող է մատնանշել միայն Իսպանիան: Արդ, հայտնի է, որ
առաքյալը ցանկություն էր արտահայտել գնալու այս երկիր (Հռոմեաց. 15:24): Մուրատո-
րիի Կանոնում կամ հատվածում, փաստաթուղթ, որը թվագրված է 2-րդ դարի վերջով, նշված
է, որ առաքյալն, իրոք, իրականացրել է իր ծրագիրը: Այս ավանդությունն ավելի ուշ հան-
դիպում է 4-րդ դարում՝ Եվսեբիոսի և 5-րդ դարում՝ Հովհաննես Ոսկեբերանի մոտ: Եթե «Հով-
վական»-ի վավերականությունը չունենա այլ հիմք, ապա արտաքին այս փաստերը միայն
ինքնին քիչ վիճարկելի վկայություն են Պողոսի գործունեության այն շրջանի մասին, որը
լռության է մատնված «Գործք Առաքելոց»-ում:

2. Հերետիկոսություններին արված հղումներ

Մի շարք քննադատներ այս նամակներում և, մասնավորապես, Տիմոթեոսին ուղղված առաջին նամակում, տեսնում են հերետիկոսություններին արված հղումներ. դրանք լայնորեն տարածված էին միայն 2-րդ դարում (հատկապես՝ գնոստիկական աղանդները): Այս հերետիկոսությունները զբաղվում էին չարի խնդրով. դրանք հրեական ու հեթանոսական գաղափարները միաձուլում էին Քրիստոնեական հավատքի հետ, Քրիստոսի երկրային կյանքն ու գործունեությունը ներկայացնում այնպես, ասես ընդամենը թվացյալ էին (dokein, doce`tes, docétisme). փառաբանում էին իմացության առաքինությունը, որը դիտվում էր իբրև սահմանափակ թվով և հավատքով (հունարեն՝ pistis) գերազանցող ընտրյալների արտոնություն և ընդհանուր էր բոլորի համար:

Բայց հերետիկոսություններին արված հղումները, որ կարելի է հանդիպել «Չովվական» նամակներում, ծայրահեղորեն աղոտ են ու անորոշ: Այստեղ դժվարությամբ կարելի է գտնել docétisme-ին արվող չնչին ակնարկ, ինչպես, օրինակ, Ա. Չովի. 4:1-3 հատվածում. ենթադրվում է, որ այն գրվել է Եփեսոսից՝ նախքան 100 թ., իսկ Ա. և Բ. Տիմոթ. 4:1-4 և 6:20 տողերից չի երևում 2-րդ դարի տեսական վտանգավոր այս մոլորությունների առկայության փաստը: Չղումներն ամենևին էլ չեն հակասում նամակների վավերականությանը, ոչ ավելի, քան Կողոս. 2:8, 18, 23 տողերը:

Ձարմանալի չէ տարբեր տարրերից (տարբեր դաստիարակությամբ և զանազան կրոնների պատկանող հրեաներից ու հեթանոսներից) կազմված առաքելական եկեղեցու ստեղծման սկզբնական շրջանում հանդիպել դեռևս չզարգացած, սաղմնային վիճակում գտնվող հերետիկոսությունների (օրինակ՝ հրեական ուղղահավատ հերետիկոսությանը, որ վնասում էր միայն ողորմությամբ, հավատքի միջոցով փրկության հայտարարմանը (Ա. Տիմոթ. 1:7, Տիտոսին 1:14 և 3:9) և որը մոլեգնել էր գաղատացի քրիստոնյաների մեջ՝ նախորդող մի ժամանակաշրջանում), կամ էլ՝ հեթանոսական աղբյուրներից քաղված փիլիսոփայական չարաշահումների (Ա. Տիմոթ. 4:7, 6:20), ինչպես կողոսացիների մոտ էր: «Չովվական» նամակների հերետիկոսությունը ծագմամբ, կարծես, ավելի շուտ հրեական է: Խոսքն օրենքի, ցեղաբանությունների և «թույլ հրեաների» մասին էր, մինչդեռ ասկետիկ արարողությունները կարող էին ունենալ հեթանոսական ծագում: Շատ հավանական է, որ հրեական ծիսակարգային ծայրահեղությունները (տես՝ Չռոմեաց 14:3, Ա. Կորնթ. 8, Կողոս. 2:16, հմմտ. նաև Ա. Տիմոթ. 4:4 և «Գործք» 10:11-15 տողերի հետ) եղել են այս հերետիկոսությունների հիմքում:

3. Եկեղեցական կազմակերպություն

Պնդում են, որ եկեղեցական կազմակերպությունը, որի մասին ակնարկ է արվում, պետք է, որ հիմք հանդիսանար ավելի ուշ մի տարեթվի վարկածի համար: Տիտոսը Երեցներից պետք է բաշխեր բոլոր Եկեղեցիներում: Նա և Տիմոթեոսը հրահանգներ են ստանում Երեցների (կամ Եպիսկոպոսների) որակավորման վերաբերյալ: Բացի այդ՝ Տիմոթեոսին ցուցնումք է տրվում սարկավագների անելիքների մասին:

Ինչ վերաբերում է մեզ, ապա կարծում ենք, որ այս կազմակերպությունը առավել զարգացած չէ, քան դա եղել է Եկեղեցու սկզբնավորման ժամանակ: Սարկավագները նշանակվել են Երուսաղեմի Եկեղեցում՝ հիմնադրման տարեթվին շատ մոտ մի ժամանակ, թեև այդ

պահին դեռևս չէին կոչվում «տեխնիկական» բառով: «Գործք» 6:4 տողում հանդիպում ենք միայն համապատասխան բային, այլ ոչ թե գոյականին: Երեցներն առաքյալի կողմից, նրա քարոզչական առաջին ճանապարհորդության ժամանակ, արդեն նշանակվել էին Գաղատիայի յուրաքանչյուր եկեղեցում: Ճանապարհորդության վերջում, ամենայն հավանականությամբ, կազմում էին լավ հաստատված մարմին, որին վստահված էր հոտը հսկելու և նրան ուսուցանելու պարտականությունը: «Evéque»¹ բառն, իբրև այդպիսին, ամենևին էլ չի առաջարկում հետառաքելական տարեթիվ, քանզի.

1) Մեր նամակներում այն լայնորեն օգտագործված է presbyteros նույնանիշ բառի հետ միաժամանակ, ինչպես Նոր Կտակարանի մյուս գրվածքներում է («Գործք» 20:28, Փիլիպպ. 1:1):

2) Եթե անգամ, ինչպես խանդավառությամբ պնդում են, «եպիսկոպոս» բառն այստեղ մատնանշում էր եկեղեցու հիմնական մի ծառայություն, վտանգավոր կլիներ համարել, որ նամակը Պողոսինը չէ: Ընդհանուրի կարծիքով, եպիսկոպոսությունն, իբրև եկեղեցական ծառայություն, գալիս է առաքելական դարաշրջանից: Ուստի, բացարձակապես անհավանական չէ այսքան ուշ շրջանի (65-67 թթ.) առաքելական գրվածքում հանդիպել նույն իմաստով օգտագործված «եպիսկոպոս» բառին:

4. Պողոսի անձը

«Հովվական» նամակների՝ Պողոսի գրչին պատկանելու վերաբերյալ մեկ այլ առարկությամբ էլ պնդում են, որ գրելով նույնքան մտերիմ բարեկամների ու գործընկերների, ինչպիսիք Տիտոսն ու Տիմոթեոսն են, առաքյալը չէր կարող այդ աստիճան շեշտել առաքելական իր կոչումը: Դա, իբր, ապացուցում է, որ հեղինակը մեկ ուրիշ մարդ է, որն առաքյալի մահվանից հետո օգտվել է նրա անունից, քանզի մերձավորներին ուղղված գրավոր ոչ մի փաստաթղթում Պողոսն այսպես չի ընդգծում իր առաքելության պատճառն ու կշիռը (Փիլիպպ. 1:1 և Փիլիմոն 1):

Մեր կարծիքով, «Հովվական» նամակները մասնավոր բնույթի չեն: Դրանք գրվել են հրապարակավ՝ համայնքներում ընթերցելու համար: Հեղինակի միտքն ու հայացքն ուղղված են դեպի այն եկեղեցիները, որոնց հովիվներն իր բարեկամներն են: Իսկ այն փաստը, որ հերետիկոսության (կամ հերետիկոսությունների) դեմ պետք էր պայքարել, բավական է հասկանալու, թե Պողոսն ինչու էր հոգ տանում հաստատելու իր կոչման ու առաքելական գործունեության արժանապատվությունը:

5. Լեզուն և ոճը

«Հովվական» երեք նամակների և առաքյալի մյուս գրվածքների, որոնց վավերականությունը երբևէ կասկած չի հարուցել, լեզվի ու ոճի տարբերությունը առարկության մեկ այլ հող է քննադատների համար: Մանրամասները մենք չենք վերլուծի: Իրոք, կան զգալի թվով բառեր, որոնք բացակայում են մյուս գրվածքներում: Ավելի քան 170 բառ Նոր Կտակարանի այլ գրքերում չի հանդիպում: Դրանց մեջ որոշ բառեր օգտագործված են, իհարկե, նոր թեմաներ շոշափելու անհրաժեշտությամբ: Ոմանք սրանից ենթադրել են, որ անա-

¹ Եպիսկոպոս (Ֆր.):

նուն մի հեղինակ դիմել է Պողոսի նամակներից որոշ հատվածների և դրանք ներառել իր իսկ կողմից գրված «Հովվական» կոչվող նամակների մեջ:

Զեքե կարծում, թե բառապաշարին վերաբերող այս փաստարկը կարող է կշիռ ունենալ վավերականության խնդրում: Նմանատիպ տարբերությունները կարող են հրաշալիորեն բացատրվել Պողոսի այս և մյուս նամակները գրելու միջև ընկած ժամանակահատվածով կամ էլ այն փաստով, որ այժմ արդեն տարեց առաքյալը, որը շատ է ճանապարհորդել, ձեռք է բերել նոր փորձառություններ ու հավատքի եկած նորանոր մարդիկ: Զարմանալի չէ, որ նրա բառապաշարը հարստացել է մինչ այդ անհայտ ներդրումներով: Եվ հետո՞՞ նա՞ չէ, արդյոք, աստվածաբանական լիովին յուրահատուկ ու հրաշալի լեզվի հեղինակը: Նա պետք է գտներ ճշգրիտ ու նույնական արտահայտություն՝ արտահայտելու այն հասկացությունները, որոնք, նամակը գրելու ժամանակ, դեռևս հարազատ չէին: Ամեն տարի նա իր բառարանը պետք է հարստացներ նոր բառերով, և նոր արտահայտությունների հունձքն ավելի առատ էր դառնում հատկապես այնտեղ, որտեղ արդեն հարազատ դարձած ճշմարտությունները բախման մեջ էին մտնում նոր հերետիկոսությունների հետ:

Խորացված քննությունները հանգեցրել են այն եզրակացությանը, որ նրա նամակներում օգտագործված մոտ 200 բառեր չեն հանդիպում Պողոսի ապրած դարաշրջանից հետո: Դրանցից շատ-շատերն արդեն իսկ հանդիպում են Հին Կտակարանի հունարեն թարգմանության մեջ՝ «Յոթանասնից»-ում, մյուսները՝ դասական գրվածքներում և չեն հանդիպում այլուր: Անհրաժեշտ է նմանապես հիշել, որ վավերականության քննադատներն անգամ գտնում են, որ այստեղ ձևակերպված աստվածաբանական ու եկեղեցական մտածողության զգալի մի մասը խորք չէ Պողոսի աստվածաբանության մնացած մասին: Նույն այս քննադատները, ովքեր արտահայտվում էին ավելի ուշ տարեթվի օգտին, «Հովվական» նամակները համեմատում են Առաքելական Հայրերի (Կղեմես Զոռմեացի, Իգնասիո Անտիոքցի, Պոլիկարպոս Ջմյուռնիացի) գրվածքների հետ և դրանք դիտում իբրև վերջիններիս գրվածքները գերազանցող գործեր: Ասում են, որ հեղինակը, ով էլ որ նա լինի, ծանոթ է եղել Պողոսի աստվածաբանությանը:

Այս պարբերությունը եզրափակենք՝ հաստատելով, որ, հակառակ պատմական ու ներքին բնույթի որոշ խնդիրների, «Հովվական» նամակները կարող են պատկանել միայն Պողոսի գրչին: Դրանք կրում են նրա անձնավորության բոլոր կնիքները: Ուստի, մենք ընդունում ենք դրանց՝ Պողոսի գրչին պատկանելու իրողությունը:

Բ. ՎԱԿԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ

Սրանք միևնույն ժամանակ և՛ հին են, և՛ դրական: Անկասկած, 2-րդ դարի սկզբում դրանք ծառայություն են մատուցել Իգնասիո Անտիոքցու և Պոլիկարպոսի նամակներին: Իրիներսը քաղվածք է անում Տիմոթեոսին ուղղված առաջին նամակից, որը համարում է Պողոսի գրչին պատկանող նամակ: Նա համոզված է, որ Վիեն և Լիոն ուղարկված նամակի հեղինակը նույնպես ծանոթ է եղել այս նամակներին: Տերտուլիանոսը և Կղեմես Ալեքսանդրացին, որոնք Իրիներոսի ժամանակակիցներն են Արևելքում, Պողոսի մասին խոսում են իբրև «Հովվական» նամակների հեղինակի: Կղեմես Զոռմեացին, որը գրել է առաջին դարի վերջում և

երկրորդ դարի սկզբում, ունի «Յովվական»-ին զուգահեռ մի շարք հատվածներ, մի բան, որն ապացուցում է, որ ծանոթ է եղել դրանց բովանդակությանը: Մարկիոնը՝ երկրորդ դարի գնոստիկ հերետիկոսը, թեև շատ էր հիանում Պողոսով, դրանք հանեց իր կեղծ կանոնից: Դուկասի Ավետարանից պահպանեց միայն հրեական կրոնին արված հղումներից լիովին զուրկ հատվածները և առաքյալի տասը նամակները միայն: Հիշենք, որ Մարկիոնի կողմից կատարված այս մաքրումը պատճառաբանվում է հերետիկոսության առաջնորդի ունիվերսալիստական տեսությամբ և ներքին հակասեմիտիզմով: Միանգամայն տրամաբանական էր, որ նա պետք է մերժեր դրանք, եթե ուզում էր պաշտպանել իր դրույթը, քանզի «Յովվական» նամակները մերժում էին դրա և՛ հիմքը, և՛ զարգացումը: Ուստի չի կարելի հիմնվել մարկիոնյան Կանոնի մեջ ներառված չլինելու փաստի վրա՝ կասկածի տակ առնելով երեք նամակների՝ Պողոսի գրչին պատկանելու փաստը: Այս բնագավառում ևս, թվում է, առատորեն օգտվել ենք վավերականությանը վերաբերող արտաքին ապացույցներից:

Գ. ՏԱՐԵԹԻՎ

Ընդունելով «Յովվական» նամակների վավերականությունը՝ գալիս ենք այն եզրակացության, որ դրանք գրվել են առաքյալի հռոմեական երկու գերությունների միջև ընկած ժամանակաշրջանում: Առաքյալը Հռոմ էր ժամանել («Գործք» 28:16) հավանաբար 59 թ. սկզբում: Նա այստեղ մնաց երկու տարի՝ միաժամանակ վայելելով որոշակի ազատություն, մի բան, որը մեզ տանում է դեպի մոտ 61 թ. վերջը կամ 62 թ. սկիզբը: «Գործք Առաքելոց»-ը մեզ թողնում է այնտեղ՝ առանց շարունակելու պատմությունը: Կայսրը, անշուշտ, ստացել է իրեն ուղղված կոչը, և Պողոսը կրկին ազատության մեջ է: Շատ հավանական է, որ ազատագրվելուց հետո նա այցելել է Իսպանիա, ինչպես ծրագրել էր: Այնուհետև այցելում է քարոզչական այլ դաշտեր, որտեղ անցյալում աշխատել էր, մասնավորապես՝ Մակեդոնիա, գուցե նաև Եփեսոս (Ա. Տիմոթ. 1:3), Տիմոթեոսը որոշ ժամանակ մնացել էր Եփեսոսում: Առաքյալը նրան խնդրում է երկարած գել այստեղ մնալը: Դժվարին իրավիճակում և հանգամանքներում, հովվական իր առաքելությանը տեղյակ դարձնելու նպատակով, Մակեդոնիայից գրում է նրան ուղղված առաջին նամակը (գուցե 65 կամ 66 թ.): Այս ընթացքում կամ քիչ ժամանակ հետո նամակ է ուղարկում Տիտոսին: Նամակից տեղեկանում ենք, որ Տիտոսը Կրետեում էր, որտեղ նրան թողել էր Պողոսը (1:5) և ում այցելել էր դեպի Մակեդոնիա տանող ճանապարհին: Այժմ Պողոսը նրան խնդրում է ձեռնարկել իրեն միանալ Նիկոպոլիսում: Այստեղից առաքյալը կրկին կմեկնի Հռոմ, հայտնի չէ՝ դեպի մայրաքաղաք տանող այս նոր ճանապարհորդությունը ինքն է ձեռնարկել, թե դա եղել է մի նոր բանտարկության հետևանք: Ամեն դեպքում գիտենք, որ նորից է բանտարկվել: Երկրորդ նամակը Տիմոթեոսին գրել է բանտից: Նամակում երիտասարդ օգնականին խնդրում է իրեն միանալ Հռոմում (4:9): Հայտնի չէ, թե որտեղ էր Տիմոթեոսն այս ժամանակ: Շատ հավանական է, որ արդեն թողել էր Եփեսոսը, այլապես կիմանար, որ Տրոփիմոսը մնացել էր Միլետոսում՝ Եփեսոսի մոտ, կիմանար նաև Տյուքիկոսի այցի մասին (4:12, 20): Ինչ վերաբերում է առաքյալին, ապա նա գիտե, որ իր վերջը մոտ է (4:6): Արդեն մեկ անգամ կանգնել էր կայսերական դատավորների առջև և սպասում էր հավաստի դատապարտման: ՏԻՄՈՓԵՆՈՍԻՆ

ՈՒՂՂՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿՆ, այսպիսով, գրվել է Պողոսի մահվանից առաջ՝ հավանաբար մ. թ. մոտ 67 կամ 68 թ.:

Դ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Եկեղեցական կազմակերպության վիճակը, ինչպես երևում է այս երեք նամակներից, այնպիսին է, ինչը կարելի էր ակնկալել Պողոսի գործունեության վերջերում: Վերը նշել ենք, որ ամենուրեք, ուր լինում էր, Պողոսը հիմնում էր եկեղեցիներ՝ այստեղ ծառայության նշանակելով Երեցների: Նրանցից ոմանք, գուցե, ունեցել են հատուկ, այն է՝ եպիսկոպոսի գործառույթ: Բառն, իբրև այդպիսին, չէր տարբերվում «պրեսբիտեր» բառից: Երբ անհնարին էր լինում անձնապես հսկել ամեն ինչ, Պողոսն իր մտերիմ գործընկերներից մեկին ծառայության էր նշանակում՝ օգնելու նոր ստեղծված եկեղեցիները հսկելու գործում: Վիճակն այսպես էր, օրինակ, Եփեսոսում (Ա. Տիմոթ. 1:3) և Կրետեում (Տիտոսին 1:5): Տիմոթեոսն ու Տիտոսը առաքյալի պատվիրակներն էին, թեև նրանց առաքելությունը ժամանակավոր եղավ: Իրենց հերթին նրանք պետք է նշանակեին պրեսբիտերներ, թեև վերջիններիս դերը մանրամասնորեն ճշգրտված չէ: Առաքյալի համար կարևորը նրանց որակավորումն ու անձնական բնավորությունն է: Բացի այդ՝ այստեղ պետք է լինեին նաև սարկավագներ, որոնց գործը համարյա նման էր Երուսաղեմի սարկավագների գործին. պետք է հոգային Եկեղեցու նյութական գործերը՝ առանց, դրանով իսկ, սահմանափակվելու այս նեղ բնագավառով: Կարելի է, նմանապես, ենթադրել, որ կային նաև մասնավորապես կանանցով զբաղվող սպասավորուհիներ:

Ե. ՏԻՄՈԹԵՈՍԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԻ ՀԱՍՑԵԱՏԵՐԵՐԸ

Պողոսը երիտասարդ Տիմոթեոսին հանդիպել ու նրա հետ ծանոթացել էր քարոզչական առաջին ճանապարհորդության ժամանակ: Վերջինս ծագումով Փոքր Ասիայի Դերբե և Լյուստրա քաղաքներից էր: Այս երկրորդ քաղաքը կարևոր կենտրոն էր, գտնվում էր Պիսիդիայի Անտիոքը Դերբեի հետ կապող հռոմեական ճանապարհին, Փոքր Ասիայի հարավում: Հռոմեական գաղութ էր: Համարյա անհնարին է որոշել այստեղ ապրող ազգաբնակչության ճշգրիտ ծագումը:

Տիմոթեոսի հայրը հույն էր: Նա, հետևաբար, պետք է, որ ազդված լիներ հելլենական մշակույթից: Սակայն Ավետարանն ընդունելու գործում վճռական եղավ առավելապես մայրական՝ հրեական ծագումը: Մայրը՝ Լոդիան, և տատը՝ Եվնիկեն, նրան դաստիարակեցին Հին Կտակարանի գրքերի ավանդույթով: Պողոսն այցելեց նրա հայրենի քաղաք, երբ Տիմոթեոսը դեռևս պատանի էր, իսկ վերջինս տեսավ, թե առաքյալը միանգամից ինչպիսի առանձնահատուկ հարգանքի արժանացավ հեթանոս բնակչության կողմից: Անշուշտ, նրան լսել է մեծ հետաքրքրությամբ: Տեսել է իրաչք կատարելիս (անուժի բուժումը) և լսել հավատափոխության նրա կանչը, բայց տեսել է նաև քարկոծված, համարյա սպանված սանձազերծ ամբոխի կողմից: Տեսել է, նմանապես, թե նա, այսուամենայնիվ, ինչպես է բարձրացել տեղից ու վերադարձել քաղաք: Հաջորդ օրը Պողոսը շարունակել է ճանապարհորդությունը: Հավա-

տափոխ հավատացյալների մեջ, որոնց թողել էր Լյուստրայում, պատանի Տիմոթեոսն էր, նա դառնալու էր առաքյալի ամենամերձավոր ու թանկ գործընկերներից մեկը:

Քարոզչական երկրորդ ճանապարհորդության ժամանակ Պողոսը մի նոր այցելություն կատարեց Լյուստրա և Տիմոթեոսին վերցրեց իբրև ուղեկից: Այս ընտրությունը թելադրված էր, մի կողմից, մեծ հարգանքով, որ քարոզիչը տածում էր երիտասարդի նկատմամբ, հարգանք, որ կիսում էր նաև Լյուստրայի և Իկոնիայի Եկեղեցին: Մյուս կողմից էլ նրան հետաքրքրում էր հատկապես երիտասարդի մեջ նկատած մարգարեական (քարոզչական) ձիրքը: Հրեաների և հրեական կրոն տարածողների թյուրիմացություններից ու զրպարտություններից խուսափելու նպատակով Պողոսը թլփատել տվեց Տիմոթեոսին, այնուհետև Եկեղեցու խորհրդով նրան կարգեց Երեց. արարողությանը մասնակցեց նաև առաքյալը: Այս պահից սկսած մինչև առաքյալի մահը Տիմոթեոսը կլինի իր մեծ բարեկամի՝ հեթանոսների առաքյալի հավատարիմ ուղեկիցն ու սիրած գործընկերը: Նրանք միասին կկտրեն-կանցնեն Ասիան ու Եվրոպան՝ հայտարարելու Ավետարանը: Միասին կայցելեն Փիլիպպե, Թեսաղոնիկե և Բերիա: Կարճ ժամանակ Տիմոթեոսը չի ուղեկցի առաքյալին, սակայն նրան կմիանա Աթենքում, որտեղից Թեսաղոնիկեի Եկեղեցու անդամներին կտանի նրա կողմից ստորագրված մի ուղերձ: Առաքյալին կրկին կմիանա Կորնթոսում: Դարձյալ միասին՝ նրանք կգնան Երուսաղեմ և Անտիոք:

Քարոզչական երրորդ ճանապարհորդության ժամանակ, Տիմոթեոսի ուղեկցությամբ, Պողոսը ավելի քան երկու տարի կանցկացնի Եփեսոսում: Այս ընթացքում Տիմոթեոսին Կորնթոս քաղաքում կհանձնարարվի շատ նուրբ մի առաքելություն: Այնուհետև, Պողոսի հետ նա կայցելի Հունաստան, նրան կուղեկցի Երուսաղեմ, որտեղ առաքյալը կձերբակալվի: Բանտարկության երկու տարիների ընթացքում Տիմոթեոսը Պողոսի հետ կմնա Հռոմում: Նրա ազատվելուց հետո կգնա Ասիա՝ զբաղվելու Եփեսոսի Եկեղեցու գործերով: Քիչ ժամանակ հետո կստանա Առաջին նամակը, որում առաքյալը հրահանգներ է տալիս հովվական իր գործի վերաբերյալ: Երկրորդ նամակը նրան կհասնի կարճ ժամանակ անց՝ տեղեկացնելով, որ Պողոսը կրկին բանտարկված է և որ սպասում է անխուսափելի մահապատժի: Այս նամակից Տիմոթեոսն իմանում է, որ առաքյալն ուզում է իրեն վերստին տեսնել իր մոտ, որպեսզի հոգևոր պայքարի վերջին փուլերում ստանա երիտասարդ բարեկամի ու գործընկերոջ սփոփանքները: Տիմոթեոսի առաքելությունը Եփեսոսում եղել էր դժվարին: Քաղաքը հին աշխարհի ամենակարևոր մայրաքաղաքներից մեկն էր (տես՝ «Պողոսի՝ Եփեսացիներին ուղղված նամակը» գլուխը): Այստեղից էին մեկնում փոխադրամիջոցների և առևտրական ճանապարհների մեծ առանցքները: Այստեղ կողք կողքի հանդիպում էին հունական մտքի նշանավոր ներկայացուցիչները, այստեղ կատարում էին նաև հեթանոսական ծագում ունեցող ամեն տեսակ արարողություններ: Եփեսոսը մասնավորապես մեծ Դիւնւմի պաշտամունքի վայրն էր, և նրա սրբարանը կանոնավորապես դեպի իրեն էր ձգում հունական և արևելյան աշխարհի բոլոր անկյուններից եկող բազմաթիվ ուխտավորների, որոնք այստեղ էին բերում նյութական անսահման հարստություններ: Բացի հեթանոսական ազդեցությունից՝ Եփեսոսի քրիստոնյաները ենթարկվում էին նաև իրենց մեջ առկա հրեական կրոն տարածող հոսանքների ճնշմանը:

Այն, որ Տիմոթեոսին հանձնարարված էր հովվական նման առաքելություն, պերճախոս

վկայություն է Պողոսի՝ նրա նկատմամբ ունեցած հարգանքի: Այսուհանդերձ, բնույթով նա առավելապես զուսպ է, որը բացատրվում է երիտասարդ տարիքով կամ էլ թույլ առողջությամբ: Մեծ սխալ կլիներ նրան համարել կայուն համոզմունքներից զուրկ ամոթխած անձնավորություն: Կարելի է, ավելի շուտ, մտածել, որ մեծ առաքյալին երիտասարդ հավատափոխի ու բարեկամի հետ կապող խոր զգացմունքը բացատրվում է ոչ միայն վերջինիս գրավիչ անձով, այլև ուժեղ բնավորությամբ: Այսուամենայնիվ, առաքելությունը, որի համար կանչվել էր, նրա առաջ դնում էր շատ բարդ խնդիրներով լի դաշտ: Լիովին վստահելով ու նշանակելով հովիվ՝ Պողոսը չի մոռանում նրան ուղղել թանկարժեք խրհուրդներ ու խրատներ: Մենք չգիտենք, թե Տիմոթեոսն, արդյոք, կարողացել է ընթացք տալ Պողոսի հրավերքին և գնալ Ղոզն: Ավանդության համաձայն՝ կյանքի ու գործունեության մնացած մասը նա անցկացրել է Եփեսոսում՝ գուցե թե Յովհաննեսի ենթակայությամբ: Համաձայն «Հայտնության» Եփեսոսի Եկեղեցին դեռևս տալիս է «կեղծ առաքյալներին» ամուր դիմադրելու ապացույցներ: Այնուամենայնիվ, այնպես է թվում, թե նա կորցրել է նախկին եռանդը:

2. ԳՐԵԼՈՒ ՀԱՆՉԱՄԱՆՔՆԵՐԸ

Տիմոթեոսին ուղղված առաջին նամակը կարող է դիտվել իբրև հովվապետ-սպասավորին տրված հրահանգ-հանձնարարական: Տիմոթեոսը պետք է իմանա, թե ինչպես պետք է պայքարել և ինչ դիրք բռնել հավատացյալների մեջ մոլեգնող հերետիկոսությունների նկատմամբ ու նաև, թե ինչպես պետք է Երեցներ նշանակել եկեղեցիներում: «Թշնամիներն» աղանդ են, որի մասին ակնարկ է արվում Պողոսի մյուս նամակներում: Երբ գրեց Գաղատացիներին ուղղված նամակը, հակառակորդները հրեական կրոն տարածողներն էին, ովքեր ձգտում էին հրեական կրոնն ու սովորույթները ձուլել ավետարանչական մաքուր հավատքին: Կողոսացիներին ուղղված նամակում աղանդը, որի դեմ հարկավոր էր պայքարել, գնոստիկներինն էր. գնոստիկները մերժում էին Քրիստոսի հավիտենական աստվածությունը և անգամ՝ գոյության պատմականությունը: Սկսած «Յովվական» նամակներից՝ հրեական տարրը միշտ առկա է ու կստիվ, բայց իշխողը կողոսյան հերետիկոսության տարրն է: Այս հերետիկոսությունն ավելի զարգացած է, խզում է Քրիստոսից և կապվում կեղծ իմացությանը (gnosis): Երուսաղեմի անկումից հետո (70 թ.) հրեական տարրը կթուլանա՝ առանց դրանով իսկ լիովին անհետանալու. կխառնվի գնոստիկական տարրերին: Պողոսն իր բարեկամին ու գործընկերոջը խնդրում է ամուր մնալ արատավոր այն մոլորության դեմ, որով սպառնալիքի տակ է Փրկչի ու Տիրոջ, միաժամանակ՝ Աստծու և Մարդու նկատմամբ հավատի միաբանությունը: Այս հերետիկոսությունը սպառնացել է նաև (որը պակաս լուրջ չէ) քրիստոնեական բարոյականության աստվածաշնչյան հիմքին:

Պողոսն իր բարեկամին ուսուցանում է նաև Եկեղեցու կազմավորմանը վերաբերող հարցերում, որը նրան է հանձնարարված:

Է. ՏԻՄՈՔԵՈՍԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՍԱԿԻ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս նամակն ամենամանձնականն է «Հովվական» կոչվող նամակների մեջ: Նոր Կտակարանի ուրիշ ոչ մի նամակ, թերևս, չունի այնքան մեղմ ու սրտագին բնույթ, որքան այս մեկը: Ամեն պարբերություն ուժեղ հուզմունք է առաջացնում, ամեն նախադասություն լսել է տալիս հեղինակի սրտի բաբախյունը: Պողոսը՝ անհնազանդ քարոզիչը, Ավետարանի բացառիկ հերոսը, եվրոպական ու ասիական հողերի վրա եկեղեցիներ հիմնողը, կրկին Հռոմում է՝ կայսերական բանտերից մեկում: Այստեղ նա տառապում է՝ լքված, արհամարհված, դատապարտված: Նրան շուտով հայտնի կդառնա վերջնական ճակատագիրը, որին այդ ժամանակ սպասում էին Քրիստոսին՝ Տիրոջը, հավատարիմ շատ զինվորներ: Առաջին գերության ժամանակ նա կարողացավ վարձել առանձին մի տուն և ազատորեն գրուցել բարեկամների ու գործընկերների հետ, անգամ նրանց հրահանգներ տալ եկեղեցիների և ամբողջությամբ վերցված քարոզչական գործի ընթացքի վերաբերյալ: Այժմ շղթայակապ՝ նա խցիկի խորքում է՝ մեռակ, տառապելով ցրտից, կողքին ունենալով միայն հավատարիմ մի բարեկամի՝ «սիրված բժիշկ» Ղուկասին, ում, հավանաբար, թելադրում է այս նամակը:

Սակայն մեկ այլ իմաստով նա մեռակ չէ: Իր հավատքի աչքերով՝ դատապարտյալի նրա խցիկում «բնակվում» են բազմաթիվ սրբեր: Նա վստահում է աստվածային Վարդապետ Հիսուս Քրիստոսին: Նա մղել է ճիշտ պայքար, ավարտել է վազքը, պահպանել հավատքը... Այսուհետ նրա, ինչպես նաև նույն ճակատագիրն ունեցող մյուս բոլոր հավատացյալների համար է այն պսակը, որ Տերը՝ գերագույն Դատավորը, նրան կտա այն օրը: Տերը նրան կազատի ամեն մի անօրեն գործից ու կփրկի իր հավիտենական թագավորության համար:

Պողոսն իր բարեկամին խնդրում է գալ իր մոտ: Խցիկի ծանր մթնոլորտում նա փնտրում է մի բան, որը միանգամայն բնական է, Տիմոթեոսի՝ իր հոգեդորդու ուժ տվող ներկայությունը, նրա, ով այդքան հավատարմորեն ծառայել է իրեն:

Առաքյալի և նույնքան էլ Տիմոթեոսի համար դրանք հուսահատության ու ծայրահեղ տագնապալի ժամանակներ էին: Փորձությունները հոգեմաշ էին, իսկ տագնապը՝ խորը: Տիմոթեոսը կղիմակայի ոչ միայն եկեղեցու ներսում սուրբ ուսմունքը կեղծող հոսանքներից, այլև կայաքարի եկեղեցուց դուրս. թշնամիները կջանան նրան հալածել, ընդհուպ մինչև սպառնալ կյանքին: Արյունատենչ Ներոն կայսրը հրդեհել էր Հռոմը և այս չարագործության մեջ մեղադրել քրիստոնյաներին: Նրան հաջողվել էր ամբոխին տրամադրել նրանց դեմ: Ծայրահեղ անապահովության այս շրջանում Տիմոթեոսն այնքան երջանիկ էր, որ կողքին Պողոսն էր: Ավա՛ղ, նա կիմանա, որ առաքյալը ևս կայսերական կառավարության անմարդկային վերաբերմունքի զոհն է և որ շուտով մարտիրոսվելու է:

Կարելի է պատկերացնել, սակայն, որ կարդալով իրեն ուղղված այս նամակը նա ստացել է անհրաժեշտ խրախուսանքը, ականջալուր է եղել ինչպես խրատներից, այնպես էլ խոստումներից: Մենք նույնպես, կարդալով այս տողերը, համակվում ենք այն մտքով, որ առաքյալն ամենից առաջ չի մտածել իր անձի ու իրեն սպասվող ճակատագրի մասին: Եվ անգամ՝ Տիմոթեոսի հավատարմության մասին: Նրա մտքերն ուղղվում են դեպի եկեղեցի, դեպի նրա այնքան խախուտ վիճակը, դեպի նրա ներկան ու ապագան... Հանուն նրա Պո-

դոսը պատրաստ է զոհել իր անձը: Նա մտահոգվում է սուրբ ուսմունքն ու հավատարիմ վարքը պահպանելու խնդրով և Տիմոթեոսին պարտավորեցնում է ընտրել Եկեղեցին ղեկավարելու համար ընդունակ մարդկանց:

Ը. «ՅՈՒՎԱԿԱՆ» ՆԱՄԱԿՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

«ՅՈՒՎԱԿԱՆ» ԵՐԵՔ ՆԱՄԱԿՆԵՐԸ՝ իբրև առանձնահատուկ խումբ Պողոսի գրվածքների մեջ, հնարավորություն են տալիս հասկանալու Եկեղեցու կյանքը պիոներների դարաշրջանի վերջի և ավելի լավ կազմակերպված ու պաշտոնական բնույթ ստացած Եկեղեցու միջև անցման այս շրջանում: Դա աչքի է զարնում նաև Իզնասիո Անտիոքցու նամակում: Կարելի է առանձնացնել երկու կամ երեք ընդհանուր միտում:

Նախ՝ տեսանելի է դառնում հերետիկոսության զարգացումը: Եշմարտության ու տեսական տարածայնությունների դեմ հակադրությունն է հայտ է գալիս Պողոսի բոլոր նամակներում: Գաղատացիներին ուղղված նամակում հարձակում էր գործվում ուղղահավատության դեմ, Կորնթացիներին ուղղված առաջին նամակում Քրիստոսի մարմնական հարության իրողությունը պաշտպանվում էր ոմանց անհավատությունից, Կողոսացիներին հասցեագրված նամակում հիշատակվում էր փիլիսոփայական մի աղանդի ներթափանցումների մասին: Սակայն սրանք հատուկեմտ հանդիպող և տեղական նշանակության մոլորություններ են՝ բացառությամբ հրեական կրոն տարածողների շարժման: «Յովվական» նամակներում նույն այս մոլորություններն է հայտ են գալիս ընդգծված ձևով և էլ ավելի ծանր սպառնալիք են, որին երիտասարդ հովիվները պետք է դիմակայեն: Այս սպառնալիքն ընդգծում է *հավատո հանգանակներ* ձևակերպելու անհրաժեշտությունը: Սա «Յովվական» նամակներում առավել պարզ է, քան այլուր: Տեսական յուրահատուկ ձևակերպումները, որ կարելի է գտնել Տիտոսին ուղղված նամակում, հրահանգ են իրեն պահելու իբրև նմուշորինակ՝ Պողոսից լսած «սուրբ խոսքերի» համաձայն: Նման արտահայտությունները (Ա. Տիմոթ. 1:5, 2:3-5, 3:16, 4:10, Բ. Տիմոթ. 1:10, 2:8, 3:16) գործածական են և ցույց են տալիս, որ Եկեղեցին հետաքրքրվում է տեսական ձևակերպումներով: «Յավատարիմ է Խոսքը», ինչպես և «Սուրբ ուսմունք» արտահայտությունները հաճախ են հայտնվում: Թեև Եկեղեցու գիտակցումն իբրև հաստատություն երևան է եկել վաղուց ի վեր, այն դեռևս չի դարձել եկեղեցական լավ հաստատված օրգանիզմ: Հոգևոր կենսունակությունն ու բարոյական վարքը, ինչպես նաև անձնական բարեպաշտությունը նույնքան կարևոր են, որքան ծիսարանը, չնայած հալածանքին, քարոզչական մոտիվն ու հերետիկոսության հանդեպ զգոնությունը մնում են կենսունակ:

Նշենք, թե առաքյալն ինչպես է շեշտում ճշմարիտ ուսմունքն ու վարդապետությունը. դա բնական է այն ժամանակ, երբ հերետիկոսության դեմ միշտ պայքար է ծավալվում: Պողոսն ընդգծում է բոլոր մարդկանց փրկված տեսնելու աստվածային կամքը, Քրիստոսի՝ իբրև Տեր հայտնվելը, նրա անձն իբրև փրկագին նվիրաբերելը, մահն ու հարությունը, նրա հետ մեր հոգևոր միաբանությունը ոչ թե գործերով, այլ միայն ողորմածությամբ փրկությունը և այլն:

Պողոսի ուսմունքն անենուրեք անպայմանորեն կապված է լավ վարքի հետ: Եթե պետք է ընտրություն կատարել սուրբ ուսմունքի օգտին, ապա պատճառն այն է, որ լավ արդ-

յունքներ է տալիս («Չավատարիմ է խոսքը» արտահայտությունը հայտնվում է հինգ անգամ): Դա ապացուցում է, որ նման արտահայտությունները բավականաչափ տարածված էին քրիստոնյաների մեջ և կազմում էին խրատաբանական ձևակերպումների ու ձեռնարկումների մաս:

Թ. ՏԻՄՈԹԵՈՍԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՍԱԿԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Ողջույններ (1:1-2)

Պողոսը պնդում է, որ առաքելական իր դերն ստացել է Աստծու և Քրիստոսի հրամանով: Նա ավելացնում է, որ դա համարում է աստվածային ողորմածության արտոնություն: Տիմոթեոսն անվանվում է «երեխա» հավատքի մեջ: Դա կարող էր նշանակել, որ նրա հավատքը դեռ երիտասարդ էր, կամ, որն ավելի հավանական է, հավատքի էր եկել Պողոսի հոգացությամբ, որն իրավացիորեն նրան համարում էր իր հոգեորդին:

2. Այն մասին, թե Տիմոթեոսն ինչպես պետք է վարվի հերետիկոսության դեմ (1:3-20)

Տիմոթեոսն ուղարկվում է Եփեսոս՝ նաև պայքարելու հերետիկոսության դեմ: Նրանք, ովքեր պղտորում են հավատքը, պետք է դադարեցնեն իրենց կործանարար գործունեությունը: Սուրբ ուսմունքը հանգեցնում է անարատ սիրո, բարեխղճության, անկեղծ հավատքի, մինչդեռ կեղծ ուսմունքը առաջ է բերում կասկած, զուր փաստարկներ, անօրինություն: Սերտ կապ գոյություն ունի հավատքի ու բարոյականության միջև: Իմանալով, որ առասպելները երբեք չեն կարող փրկել որևէ մեկին, ով էլ որ նա լինի, Պողոսը հաստատում է Աստծու ճշմարտությունը և գովաբանում Տիրոջը: Նրանք, ովքեր աղտոտում և արատավորում են հավատքը, պետք է լռության մատնվեն:

3. Այն մասին, թե Տիմոթեոսն ինչպես պետք է կարգավորի եկեղեցու կյանքը (2:1-3:16)

Ա. Աղոթքների հետ կապված (2:1-7): Աղոթքները պետք է ամբողջական լինեն. ներառեն «բոլոր մարդկանց»: Դրանք սահմաններ չեն ճանաչում: Պետք է աղոթել բոլոր մարդկանց համար (ավելի շուտ՝ այլ վայրերում բնակվող և այլ ազգությունների, քան նույն ազգին պատկանող մարդկանց), որպեսզի մեծ թիվ կազմեն նրանք, ովքեր հասնում են Փրկիչ Քրիստոսի՝ Աստծու և Սարգու միջև միակ ու ինքնաբավ Միջնորդի ճանաչողությանը: Քաղաքացիական կառավարությունը առանձնահատուկ ուշադրության առարկա է: Իշխաններն ու դատավորները պետք է պաշտպանվեն մեր աղոթքներով: Եթե անգամ քաղաքացիական իշխանությունն իրեն դրսևորում է կամայական ձևով ու չարաշահումներ է թույլ տալիս, ապա չի նշանակում, որ սկզբունքորեն նա հաստատվել է Աստծու կողմից: Այն ժամանակ, երբ առաքյալը գրում է այս նամակը, կայսերական կառավարության ղեկավարը անօրեն Ներոնն էր: Այսուհանդերձ, նա կարողանում է գրել. «Աղոթեք հանուն ձեր երկրային իշխանության»:

Բ. Եկեղեցական արարողության հետ կապված (2:8-15): Եկեղեցու ղեկավարության գործը պետք է վստահի ընդունակ մարդկանց: Հրապարակավ աղոթքը, վարդապետությունն ու քարոզչությունը կապահովվեն տղամարդկանց կողմից: Կանայք պետք է զբաղեցնեն երկրորդ տեղը և ժողովրդական ծիսակատարությունների ժամանակ մնան իբրև «կրավորական» մասնակիցներ: Եկեղեցական նրանց կարգավիճակի պատճառը երկակի է. առաջինը ստեղծվել է Ադամը, Եվան ստեղծվել է հետո, առաջինը նա՛ պետք է ենթարկվի փորձության: Կանանց խորհուրդ է տալիս արտաքին զարդերի փոխարեն փնտրել ներքին գեղեցկություն: Բարեպաշտ հոգին ու լավ գործեր կատարելը կնոջ իսկական գեղեցկությունն են, որի էությունը ներքին առաքինությունն ու հոգու հատկանիշներն են:

Գ. Եկեղեցու սպասավորների հետ կապված (3:1-16): Եկեղեցու սպասավորները՝ «եպիսկոպոսները» կամ «պրեսբիտերները» և սարկավազները, որ բառացիորեն նշանակում են «ծառաներ», արդեն հայտնի էին այս դարաշրջանում: Պողոսը մարդկանց քաջալերում է ձեռք բերել այս ծառայությունները և թվարկում է նմանօրինակ ծառայություն իրականացնելու համար անհրաժեշտ հատկանիշները:

Երեցները պետք է ունենան լավ համբավ, լինեն զուսպ, հյուրասեր, իրենց վիճակից գոհ, խաղաղ ու համբերատար իրենց դիրքի մեջ, հասուն՝ հավատքի մեջ, միակի՛ն և ուսուցանելու ու կառավարելու ընդունակ:

Սարկավազները պետք է լինեն զուսպ, հավատարիմ, լուրջ, երախտագետ՝ ունեցածի համար, փորձված և ամուր՝ հավատքի մեջ, միակի՛ն և կառավարելու ընդունակ:

Կին օգնականները, որոնք զբաղվում են աղքատներին բարեգործական օգնություն ցույց տալու գործով, պետք է լինեն լուրջ, լեզվով՝ խոհեմ, զուսպ, և հավատարիմ՝ իրենց պարտականությունների կատարման մեջ:

Ըստ Պողոսի՝ այս կանոնները հաստատված են Աստծու Եկեղեցու մարդկանց լավ վարքի նպատակով, Աստված, որը «ճշմարտության սյունն ու նեցուկն է»:

4. Այն մասին, թե Տիմոթեոսն ինչպես պետք է իրականացնի իր առաքելությունը (4:1-6:19)

Ա. Իբրև օրինակելի հովվապետ (4:1-16)՝ Պողոսը կանխագուշակում է, որ աստվածուրացությունը լինելու է վերջին ժամանակներում, այսինքն՝ Քրիստոսի առաջին և երկրորդ գալուստների միջև: Այն նախորդելու է մեծ ուրացությանը, որը լինելու է Հակաքրիստոսի գործը: Ոմանք լքելու են հավատքը՝ կապվելու Սատանայից ներշնչված, նրա կողմից ծնունդ առած ուսմունքներին: Նրանք կարգելեն ամուսնությունը և կստիպեն ձեռնպահ մնալ որոշ ուտելիքների նկատմամբ, որոնք, սակայն, Աստծու պարգևներ են և պետք է ընդունել երախտագիտությամբ: Այս ճշմարտությունները հիշեցնելով հոտին՝ Տիմոթեոսը բարի ծառայություն կմատուցի Հիսուս Քրիստոսին:

Պողոսը Տիմոթեոսին հորդորում է զբաղվել ֆիզիկական որոշ վարժություններով՝ մարմինը լավ վիճակում պահելու համար: Սակայն, նա պետք է հիշեր, որ հոգևոր վարժությունը՝ հոգու մշակույթը, շատ ավելի շահեկան է այն օգուտների շնորհիվ, որ ձեռք է բերում ոչ միայն ներկա, այլև գալիք կյանքի համար: Նա պետք է զարգացնի նաև իր տաղանդն ու Ավետարանը հասկանալու ընդունակությունը, որպեսզի ուսուցանի ճշգրիտ ձևով, քանզի դա ևս Աստծու

պարզ և գործելով այս կերպ՝ նա կիրկի սեփական անձն ու նրանց, ովքեր հոգևոր հսկողության ներքո են: Պողոսը նրան հորդորում է վարել անարատ ու օրինակելի կյանք:

Բ. Անհատ մարդկանց և ընդհանրապես մարդկանց խոսքերի նկատմամբ ունեցած վերաբերմունքով (5:1-6:18):

Ծերերին պետք է հորդորել սիրով ու քնքշանքով՝ հայրերի ու եղբայրների պես (1-ին տող), իսկ կառավարողները պետք է ընդունակ լինեն ուսուցանելու, նրանց պետք է հարգել և նյութապես օգնել (6:17-18): Նրանց դեմ մեղադրանքները չպետք է ընդունել առանց բազմաթիվ վկաների, իսկ գործած մեղքերի համար պետք է մեղադրվեն հրապարակորեն, որպեսզի մյուսներն զգուշանան: Անաչառությունն ու զգուշավորությունը, ինչպես նաև սուրբ բաների նկատմամբ հոգսը, պետք է նշանավորեն Տիմոթեոսի յուրաքանչյուր քայլը (5:21-23):

Որբևայրի կանայք, ովքեր պետք է օգնություն ստանան Եկեղեցու կողմից, նրանք են, ովքեր առնվազն վաթսուն տարեկան են, ունեն ամուսնական կյանքում հավատարիմ լինելու լավ համբավ, կատարում են բարի գործեր և չունեն երեխաներ, որոնք կարողանան զբաղվել նրանցով: Նման որբևայրիներին պետք է պատվել և նյութապես օգնել: Ավելի երիտասարդ այրիները պետք է կրկին ամուսնանան և ընտանիք դաստիարակեն: Պողոսն այստեղ ցույց է տալիս, թե որքան է հարգում մայրությունը:

Քրիստոնեական սկզբունքները կիրառելով հասարակական ու տնտեսական կյանքի նկատմամբ՝ Պողոսը ստրուկներին խորհուրդ է տալիս պատվել տերերին և իրենց ծառայությունը համարել հանուն Աստծու կատարած գործ: Եթե անգամ ստրուկներն իրենց տերերի հետ ունեն նույն հավատքը և, այսպիսով, եղբայրներ են Քրիստոսի մեջ, դրանով իսկ չեն ազատվում նրանց հանդեպ ունեցած երկրային պարտականություններից:

Նա, ով տենչում է ունենալ կամ ձեռք բերել հարստություններ և նախանձով է նայում այս աշխարհի հարուստներին, պետք է հիշի, որ փողատիրությունը ամեն չարիքի արմատն է, մինչդեռ գոհունակ հոգու բարեպաշտությունը մեծ առաքինություն է: Պետք է փնտրել ոչ թե նյութական հարստություն, այլ առավելապես աստվածային շնորհներ: Նրանք, ովքեր հարուստ են, չպետք է վստահեն իրենց հարստությանը, այլ առատաձեռնորեն շառյլեն կարիքավորներին:

5. Եզրակացություն (6:20-21)

Վերջին տողերը վկայում են ջերմ, հազիվ զսպված հուզմունքի մասին: Պողոսը Տիմոթեոսին խնդրում է ամուր մնալ Ավետարանի մեջ և պինդ պահել Աստծու ողորմածությամբ իրեն տրված իսկական հավատքի ավանդը:

Ժ. ՏԻՄՈԹԵՈՍԻՆ ՈՒՂՂԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

1. Ներածություն

Ողջույնի խոսքում Պողոսն իրեն համարում է Աստծու կամքով առաքյալ և հետևաբար՝ կյանքի խոստում ստացած: Աստծու կամքի կատարումը մեզ համար նշանակում է հենց Աստծու կյանքը մեր մեջ: Նա երախտապարտ է հոգևոր այն դաստիարակության համար,

որ Տիմոթեոսն ստացել է մանկության տարիներին, նրա մոր և տատի բարեպաշտության և անձնական հավատքի համար: Չէ՞ որ ինքն էլ է մեծ դեր խաղացել նրան հավատքի բերելու գործում ու նրան անվանում է իր հոգեորդին:

2. Օգտակար հիշեցումներ (1:6-2:26)

Ա. Հաստատ մնալ Ավետարանի մեջ (1:6-18): Քրիստոնեությունը դառնում էր կրոնի արտաքին մի ձև, և հալածանքի սպառնալից ստվերը թևածում էր եկեղեցու վրա: Անհրաժեշտ էր ցուցաբերել բարոյական քաջություն և անարատ պահել սուրբ ուսմունքը: Տիմոթեոսը չպետք է ամաչի Պողոսի Ավետարանից, քանզի դա կնշանակեր ամաչել անձամբ Փրկիչ Աստծուց: Նա չպետք է հապաղի այցելել Պողոսին, այլ վարվել Օնեսիփորի պես, որն անխախտ բարեկամություն է ցուցաբերել ծեր առաքյալի նկատմամբ: Դատավարության ընթացքում այլոք լքել են նրան: Պողոսը մեր ուշադրությունը հրավիրում է քաջության սեփական օրինակի վրա. նա անվարան վստահում է Քրիստոսին, և դա կպահպանի իր հավատքը: Նա բուռն հոգով ցանկանում է, որ Տիմոթեոսն իրեն դրսևորի իբրև քաջ զինվոր և ամուր մնա հավատքի մեջ:

Բ. Մնալ համբերատար՝ փորձության և տառապանքի մեջ (2:1-13): Տիմոթեոսին հորդորելով ամրապնդվել հավատքի մեջ, նշանակել իրազեկ ուսուցիչներ՝ առաքելական «խսկական սերունդ», Պողոսն ավելացնում է, որ տառապանքը կապված է ապագայի հետ: Նա դիմում է երեք պատկերների. Տիմոթեոսն իրեն պետք է պահի ինչպես լավ զինվոր, լավ ըմբիշ և եռանդուն կառավարիչ:

Նա անպայմանորեն վերջում կստանա պսակը՝ Քրիստոսի հետ կառավարելու համար: Տառապանքը կարող է ներառել կամ հանգեցնել բանտարկության, բայց, անգամ այս կերպ, Հոգին ու Խոսքը չեն կարող շղթայվել:

Գ. Հավատարիմ լինել՝ իբրև հովիվ (2:14-26):

Կեղծ վարդապետությունների, տվյալ դեպքում՝ Հիմենոսի և Փիլեպոսի առկայության դեպքում, որոնք ձգտում են ոգեշնչել Հարությունը, Տիմոթեոսը պետք է պայքարի հերետիկոսության բոլոր տարատեսակների դեմ: Խոսքը պետք է շարադրել իր իսկական իմաստով: Հավատարիմ առաքյալը չպետք է վախենա ո՛չ անհաջողությունից, ո՛չ էլ անհավատությունից, եթե կարողանում է հավատարմորեն կատարել իր առաքելությունը: Աստծու կամքը հաստատված է, և այն կպահպանվի՝ ի հեճուկս բոլորի և ամեն ինչի: Ենթադրվում է, որ եկեղեցու անդամների միջև կլինեն տարբերություններ: Ծիշտ այնպես, ինչպես տան մեջ կան տարբեր կահկարասիներ: Ոմանք ամուր ու անարատ կմնան ուսմունքի մեջ, բայց կրակով մաքրագործվելու և զտվելու գնով:

3. Զգուշացումներ Տիմոթեոսին (3:1-4:5)

Ա. Մոտեցող վտանգավոր ժամանակների վերաբերյալ (3:1-13): Կարելի է թվարկել մոտ տասնութ առանձնահատկություն՝ իբրև վատ ժամանակների նշաններ: Էական արատ է եսասիրությունը, որը նկատելի է փողի ու հաճույքների հանդեպ սիրո մեջ: Այլ արատներ են անհնազանդությունը, ամբարտավանությունը, ձևամոլությունը, ցանկասիրությունը, կրոնական աղանդավորությունները և այլն: Պողոսը վստահում է Տիմոթեոսի հավատարմու-

թյանը, որի ապացույցները նա տվել է անցյալում՝ ձգտելով դառնալ Պողոսի նմանակը, ինչպես ուսմունքի, այնպես էլ վարքի հետ կապված:

Բ. Նույն այդ ժամանակներում ունենալիք պարտականությունների վերաբերյալ (3:14-5:5): Փոխանակ չարի առջև հուսահատվելու և տագնապի մեջ ընկնելու, առաքելություն իրականացնողը պետք է պատնեշ հանդիսանա նրան՝ մնալով ամուր և անվերջ քարոզելով: Սուրբ Գրքերը ներշնչված են Աստուծոց և օգտակար են ուսուցանելու, սխալն ուղղելու, մերժելու և քրիստոնեական արդարության ու բարեպաշտության մեջ ներքաշելու համար: Խոսքը Տիմոթեոսին էր եկել մոր և տատիկի, ինչպես նաև Սուրբ Գրքերի ու Պողոսի առաքելության միջոցով:

4. Պողոսի վերջին վկայությունը (4:6-18)

Ա. Հանգստություն մոտալուտ մահվան առջև (4:6-9): Նա պատրաստ է, անգամ անհամբեր՝ հեռանալու, որովհետև նրա գործն ավարտվել է: Նա բարի պայքար է մղել, անցել վազքատարածությունը. այսուհետ նրան մնում է միայն խոստացված պսակը: Նա տենչում է լինել Տիրոջ մոտ:

Բ. Նրա միայնությունն ու մարդկային կարիքները (4:9-18):

Այն ժամանակից ի վեր, ինչ Դեմասը լքել է նրան, և որ Կրեսկեսն ու Տիտոսը մեկնել են առաքելության, Ղուկասը միակն էր, որ մնացել էր նրա մոտ: Տիմոթեոսին խնդրում է գալ և իր հետ բերել Սարկոսին: Տյուբիկոսին ուղարկում է գործի մեջ իրեն փոխարինելու: Մոտեցող ձմռան պատճառով խնդրում է բերել վերարկուն, որ թողել է Տրոյայում, ինչպես նաև՝ մագաղաթները, գրքեր և, հավանաբար, առաջին դատավարությանը վերաբերող փաստաթղթեր: Նախորդ դատավարության ժամանակ Ալեքսանդրոսը մեղադրող վկա էր նրա դեմ, և Պողոսը չարժանացավ մարդկային ոչ մի օգնության: Այսուհանդերձ, վկայություն է տալիս այն մասին, որ յուրայիններին երբեք չլքող Տերն իրեն պաշտպանել և ապահովել է երկնքի համար հատկացված վարձատրությամբ:

5. Եզրակացություն (4:19-20)

Նամակն ավարտում է ողջույններով և շատ տեղին աղոթքով. «ՏԵՐԸ ԹՈՂ ԼԻՆԻ ՀՈԳՈՒ ՀԵՏ»: Սրանք մեծ առաքյալի գրչին պատկանող վերջին խոսքերն են:

ՏԻՏՈՍԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿԸ

Ա. ՀԵՂԻՆԱԿՆ ՈՒ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պողոսի «Հովվական» կոչվող նամակների հեղինակի ու վավերականության հարցն արդեն շոշափվել է նախորդ գլխում, այդ իսկ պատճառով էլ դրան երկար չենք անդրադառնալ։ ընդամենը մի քանի բառ։ Պողոսն այս նամակը գրել է երկու բանտարկությունների միջև ընկած ժամանակաշրջանում, հավանաբար 64 թ. մոտերքում։ Որոշ քննադատների կարծիքով, այն գրվել է նույն օրը, ինչ Տիմոթեոսին ուղղված առաջին նամակը, մի բան, որով բացատրվում են երկու նամակների աչքի զարնող նմանությունները (այսուամենայնիվ, պետք է նշել, որ շեշտադրությունը մասնակիորեն տարբեր է։ Տիմոթեոսին ուղղված առաջին նամակում ընդգծվում է սուրբ ուսմունքի անհրաժեշտությունը, մինչդեռ Տիտոսին ուղղված նամակում Աստծու կողմից Եկեղեցու վարքի և ղեկավարման համար պարտադրված կարգը)։

Բ. ՀԱՍՑԵԱՏԵՐԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տիտոսն ու Տիմոթեոսը սերտորեն կապված են Պողոսի կյանքին ու գործունեությանը։ Երկուսի անուններն էլ սիրով հիշատակված են առաքյալի կողմից և մեծ հարգանք են վայելում։ Սակայն նրանց բնավորությունները միանգամայն տարբեր են։ Տիմոթեոսն ավելի զգայուն է ու համակրելի, իսկ Տիտոսն առավելապես գործի մարդ է՝ օժտված քարոզչական հսկայական եռանդով և որոշումներ կայացնելու ընդունակությամբ։

Հարգանքը, որ Պողոսը տածում է նրա նկատմամբ, ի հայտ է գալիս այս նամակում, որը նրան անմահացնում է Եկեղեցու հավատքի աչքերով։ Նա նկարագրված է իբր նախկին հեթանոս, ծագմամբ՝ հույն։ Հավատքի է եկել Պողոսի միջոցով։ Հրեական կրոն տարածողներից ոմանք ջանում էին նրան ենթարկեցնել մովսիսական Օրենքին։ Հեթանոսությունից հավատքի եկած մարդկանց ճակատագիրը վճռելու համար էր Պողոսը, Տիտոսի և Անտիոքի Եկեղեցու այլ գործակալների հետ, առաքելական առաջին տիեզերաժողովի ժամանակ գնացել Երուսաղեմ, որտեղ կատաղի պայքար մղվեց Տիտոսի անձի շուրջ։ Բայց, ի վերջո, որոշում ընդունվեց քրիստոնյաներին ազատություն շնորհել օրենքին հետևելու հարցում այն չհամարելով հավատքի հիմքը։ Այսպիսով, Տիտոսի անունը կապվում է քրիստոնեական ազատության Մեծ Խարտիայի հետ։

Քարոզչական երրորդ ճանապարհորդության և Եփեսոսում երկար ժամանակ մնալու ընթացքում Պողոսը Տիտոսին նշանակեց իր օգնականն ու հատուկ գործակալ եկեղեցական մի շարք նուրբ իրավիճակներում, մասնավորապես Կորնթոսի պայթյունավտանգ իրավիճակում, երբ քրիստոնյաները պառակտված էին աղանդավորական ոգով։ Բացի այդ՝ նրանցից ոմանք ընկել էին մեծ անբարոյականության գիրկը։ Մշակութային հավաքների ժամանակ թույլ էին տալիս անպատիվ ու անհարգալից վերաբերմունք։ Նվազագույն չարիքը կեղծ ուսմունքներից եկողը չէր, ուսմունքներ, որոնց զոհ էին գնացել քրիստոնյաներից ոմանք։

Այս վիճակները շտկելու ու նաև Պաղեստինի մայր եկեղեցիների համար արված հանգանակությունը բերելու համար Տիտոսը երկու անգամ ուղարկվել է Կորնթոս: Նրա քաջությունը, եռանդը և ամուր բնավորությունը հնարավորություն տվեցին մեծ հաջողությամբ իրականացնել առաքելությունը: Կորնթացիներին ուղղված երկրորդ նամակը տալիս է հարգանքի առատ նշաններ, հարգանք, որ Կորնթոսի եկեղեցու անդամները տածում էին Տիտոսի նկատմամբ: Նույն նամակում Պողոսն իր հերթին ջերմ գովասանքներ է շռայլում նրա հասցեին: Եվ վերջապես, անձնական այս նամակով, առաքյալը մեկ անգամ և՛ մի վերջին անգամ, հարգանքի արժանի տուրք է մատուցում նրան: Նամակը կստանա Կրետեում, որտեղ Պողոսը նրան թողել է իբրև եպիսկոպոս՝ նոր ստեղծված եկեղեցիների գլխավոր հսկիչ:

Կղզին ռազմավարական դիրք էր զբաղեցնում Միջերկրական ծովում: Նախապատմական անտիկ աշխարհում այն հասել էր նուրբ քաղաքակրթության գագաթնակետին: Բայց, մեզ անհայտ պատճառով, անկում է ապրել այն աստիճան, որ Օգոստոսի դարաշրջանում կրետացիները համարվում էին բարբարոսներ. ընդհանուր առմամբ նրանց նայում էին նողկանքով ու արհամարհանքով:

Հռոմի ճանապարհին բանտարկության ժամանակ Պողոսը՝ կայսերական բանտարկյալը, մտավ Կրետեի մի նավահանգիստ, բայց հուժկու մի փոթորիկ քշեց-հեռացրեց նրա դժբախտ նավը, որը, «Գործք Առաքելոց»-ի պատմության համաձայն, նավաբեկությունից հետո բազմաթիվ օրեր շարունակ լողում էր մեկ ուրիշ կղզու՝ Մելիտեի ափերին: Նավի բոլոր ուղևորները փրկվեցին, և Պողոսին տարան Հռոմ: Երկու տարվա բանտարկությունից հետո նա արտաքուստ ազատ արձակվեց և շարունակեց գնալ քարոզչական երթուղիներով:

Այն տպավորությունն է ստեղծվում, որ առաքյալը լավատեղյակ է կրետացիների վատ համբավին, սակայն մտածում է, որ նրանք ևս կարող են լսել (և անգամ՝ ստանալ) Ավետարանը, ինչպես նրբաճաշակ աթենացիները կամ մայրաքաղաքի բնակիչները: Եվ այսպես, Տիտոսին վերցնելով իբրև ուղեկից, նա գնում է այդ մեծ կղզին: Շատ հնարավոր է, որ Ավետարանն այստեղ արդեն նախորդել էր իրենց, քանզի համաձայն «Գործք»-ի 2-րդ գլխի՝ Հոգեգալստյան օրը, Պետրոսի քարոզը լսող ամբոխի մեջ կային բազմաթիվ կրետացիներ: Սակայն, հավանաբար, Պողոսի ազդեցությամբ ու զորավոր գործով են եկեղեցիներ ստեղծվել Կրետեում: Նախքան իր առաքելության վերջը՝ Պողոսին կանչեցին Մակեդոնիա և Հունաստան: Լքելով Կրետեն՝ նա այստեղ թողեց Տիտոսին՝ մի մարդու, որին լիովին վստահում էր: Վերջինս կշարունակի նրա սկսած գործը: Առաքյալը նրան հանձնարարեց նաև կարգել երեցներ ու սպասավորներ երիտասարդ եկեղեցու համար:

Որոշ ժամանակ անց Պողոսը նրան է հասցեագրում այս նամակը: Նա հոգ է տանում ճշգրտել հոգևոր առաջնորդների գործառույթը, երիտասարդ գործընկերոջը նաև հորդորում է դիմակայել կեղծ դոկտորներին, հավատացյալներին խրատել վարելու սուրբ՝ քրիստոնեական իրենց կոչմանը համապատասխան կյանք և հաստատակամորեն գործել նրանց դեմ, ովքեր աշխատում են հանուն հերետիկոսության: Նամակը մամնապես ծառայում է իբրև երաշխավորագիր Ձենասի և Ապողոսի օգտին, ովքեր, ամենայն հավանականությամբ, այն հասցրել են հասցեատիրոջը: Պողոսն իր ընկերոջը խնդրում է թողնել կղզին և այցելել իրեն, հենց որ Արտեմասն ու Տյուքիկոսը գան նրա մոտ՝ իրեն միանալու Նիկոպոլիսում: Կարելի է կարծել, որ երկու բարեկամների այս հանդիպումն իրականացել է, քանի որ կարճ

ժամանակ հետո՝ առաքյալի երկրորդ բանտարկության ժամանակ, վերջինս գրել է Տիմոթեոսին՝ տեղեկացնելով Տիտոսի՝ Դաղամատիա մեկնելու մասին: Այս մեկնումը չի նշանակում, որ Տիտոսը թողել էր հավատքը, այլ, ընդհակառակը, որ նա ձգտում էր բացել քարոզչական մեկ ուրիշ դաշտ: Այստեղ նա առավել ևս պաշտպանված չի լինի դժվարություններից, ինչպես դա եղավ այլուր:

Տիտոսի՝ մեծ առաքյալի թանկագին գործընկերոջ, նրա եղբոր, իսկական հոգեորդու մասին վերջին անգամ լսում ենք Տիմոթեոսին ուղղված երկրորդ նամակում:

Ավանդության համաձայն՝ նա մահացել է 94 տարեկան հասակում: Նոր Կտակարանի այն հատվածները, որտեղ հիշատակվում է նրա անունը, հետևյալներն են՝ Գաղ. 1:2-3, Բ. Կորնթ. 2:12-13, 7:13-15, 8:6, 12:18:

Եվ վերջապես, նշենք, որ հակառակ այն բանի, ինչ նա արել է Տիմոթեոսի համար, որը մոր կողմից կիսահրեա էր, Պողոսը Տիտոսին չի ստիպում թլփատվել: Ահա ինչու, ի հեճուկս Եկեղեցի թափանցած կեղծ եղբայրների, Տիտոսը կընդունվի Երուսաղեմի Եկեղեցու առաջնորդների կողմից՝ հակառակ իր հեթանոսական ծագման:

Գ. ԳՐԵԼՈՒ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԵԹԻՎԸ

Նամակը հավանաբար գրվել է 64 թ. մոտերքում՝ Պողոսի երկու բանտարկությունների միջև ընկած ժամանակաշրջանում. տարեթիվը կարող է լինել ընդամենը ենթադրության առարկա՝ վկայակոչելով այս և Տիմոթեոսին ուղղված առաջին նամակի միջև եղած բազմաթիվ նմանությունները:

Աեզ հայտնի չեն Պողոսի՝ առաջին բանտարկությունից ազատագրվելուն հաջորդող ժամանակաշրջանի մանրամասները: Ճանապարհորդել է Կրետե՞: Օրինական է այսպես կարծելը: Հավանաբար ծանոթ էր այս Եկեղեցուն ծագած խնդիրներին. դեռևս ի վիճակի չէր ինքնակառավարելու: Նա շտապ կարիք էր զգում հաստատական և վստահության արժանի հոգևոր մի առաջնորդի: Իրավիճակն այնքան ավելի նուրբ էր, որքանով կեղծ դոկտորներն այստեղ գործում էին միանգամայն ազատորեն: «Հովվական» նամակներում նկարագրված հերետիկոսությունը, թվում է, տարածվում է համաճարակի պես: Անշուշտ, «հրեաներն ու նրանց առակները» մեծ դեր էին խաղացել մոլորության տարածման գործում (1:10-14):

Արդ, եթե Կրետեի եկեղեցիները գոհ գնային մոլորությանն ու ընկնեին վտանգավոր այս հերետիկոսության գիրկը, ապա շատ արագ կկանգնեին անհետ կորչելու վտանգի առջև: Բայց ի՞նչ կարող էին մտածել դրսի մարդիկ: Էությանմբ այս հերետիկոսությունը հեղափոխական էր: Այն հրաժարվում էր ընդունել ուժային հարաբերությունները և, այդպիսով, դուռ էր բացում ամեն տեսակ սխալ արարողությունների համար՝ ասես քրիստոնյաները վեր էին նյութական ամեն բաներից: Եթե քրիստոնյաներն ընդունեին նման ուսմունքները, ապա «աշխարհը» նրանց կհամարեր մարդատյացներ: Փոխանակ բարերար ազդեցություն գործելու շրջապատող հասարակության վրա՝ նրանք, ընդհակառակը, կհասցնեն «բացասական» հարված:

Առաքյալն, ուստի, խորհուրդներ է շռայլում իր բարեկամին՝ եկեղեցին կառավարելու դարաշրջանի տվյալ հանգամանքներում: Բայց նրա կարծիքը նույնքան էական է նաև մեր

դարաշրջանի և եկեղեցական արդի խնդիրների համար, հատկապես այն խնդիրների, որոնք վերաբերում են սուրբ ուսմունքը (ուղղահավատությունը) պահպանելու համար ցուցաբերվող զգոնությանը: Կրետեն պետք է լինեն համեմատաբար ավելի փոքր դաշտ, քան այն, որտեղ աշխատում էր Տիմոթեոսը: Բայց երկու դաշտերում էլ հանդիպում էին նույն խնդիրները: Կրետացիներն իրենց բանաստեղծի՝ Եպիմեմիդի կողմից որակվել են իբրև ստախոս, անպարկեշտ, ծույլ ու շատակեր մարդիկ: Թվում է՝ Պողոսը նույնպես այս կարծիքին է: Ուստի, դա այնպիսի ժողովուրդ չէր, որին կարելի էր հեշտությամբ մոտենալ:

Դ. ԼՈՒՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

Առաքյալը Տիտոսին խնդրում է գալ իր մոտ՝ հենց որ փոխարինողը տեղ հասնի, և բացատրում է, թե ինչպես պետք է զբաղվի Եկեղեցիներով, որոնց հովվապետի պաշտոնը նրան է հանձնարարված: Նա չի պարտադրում խիստ կանոններ, ոչ էլ եկեղեցական սին օրենքներ: Պետք է ամեն ինչ թողնել մի կողմ, ինչպես փրկությունն ու բարեպաշտությունը, այնպես էլ Քրիստոսի Փրկչությամբ ավարտին հասցված եկեղեցական կարգը: Կրետեում իրավիճակը, ինչպես տեսանք, վտանգավոր էր: Նրա անդամները միանգամայն անհոգ էին թվում իրենց վարքի հարցում: Եթե 2-րդ գլխի հրահանգները ցուցմունք են Եկեղեցու կարիքների վերաբերյալ, ապա այստեղ, հավանաբար, տղամարդիկ մի քիչ հաշտվողական էին, ծեր կանայք՝ բամբասկոտ ու գինեմուլ, երիտասարդ կանայք՝ առավել ծույլ: Ողորմածության Ավետարանի քարոզումը, գուցե, կրետացիների մեջ այն տպավորությունն էր ստեղծել, որ փրկությունը կապ չունի բարոյական կյանքի հետ: Առաքյալը վեց անգամ շեշտում է այս հանգամանքը՝ բարի գործերի կարևորության վերաբերյալ (1:16, 2:7, 14, 3:1, 8, 14): Թեև փրկությունը, իբրև այդպիսին, ամենևին էլ պարտական չէ բարի գործերին (3:5), Պողոսն, այսուհանդերձ, հաստատակամորեն պնդում է, որ հավատացյալը պետք է զզոն վերաբերմունք դրսևորի բարոյական իր պահվածքի հանդեպ: Կրետեում տեղի ունեցած հուզումները կրետացիների բարոյական թուլության և բնական միտումի խտացված ազդեցությունների արդյունքն են, միտում, որն ընդգծվում է «իրեական առակների» կամ իրեական կրոն տարածող դոկտորների (անաստվածներ, անկանոն կյանք վարողներ, պառակտիչներ, վարձկաններ) կողմից պարտադրված պատվիրանների շուրջ ծավալվող վիճաբանություններով ու կռիվներով: Այս ուսուցիչները տարբերվում էին նրանցից, ովքեր հուզումներ էին առաջացնում գաղատացիների մեջ, որովհետև նրանց մոլորությունը բարոյական այլասերվածությունն էր, մինչդեռ Գաղատիայում մոլեգնող կեղծ դոկտորներինը տեսական բնույթի էր (խոսքը ուղղահավատության մասին է): Նամակով, սակայն, երկու մոլորություններն էլ դատապարտվում են: Այն մեզ առաջարկում է հրաշալի համառոտ ակնարկ Եկեղեցու տեսական վարդապետության վերաբերյալ այն ժամանակ, երբ վերջինս պաշտոնական բնույթ է ստանում: Թեև նամակը գրված է հեթանոսների մեծ քարոզչի կողմից, այն ներկայացնում է մի եկեղեցի, որն առաջին սերնդից անցնելով երկրորդին, առաջին փուլից՝ հաջորդին, կարիք էր զգում ամուր հիմքերի: «Ողջամիտ» բառն իր մեջ բովանդակում է տեսության ընդունված մի կանոն, որին պետք է համապատասխանեն վարքն ու հուսալի ուսմունքը:

Նամակի առիթով Լյուբերը գրել է. «Նամակը կարճ է, բայց բովանդակում է քրիստո-

նեական ուսմունքի հենց էությունը և գրված է այնպիսի վարպետությամբ, որ պարունակում է այն ամենը, ինչն անհրաժեշտ է իմացության և քրիստոնեական կյանքի համար»:

Նամակից վեր է հանվել մոտ 44 բառ ու արտահայտություն, որ առաքյալն այլ տեղ չի օգտագործում: Դրանցից 29-ը հանդիպում են միայն Նոր Կտակարանում: Ամենահաճախ հանդիպող բառերն են՝ Փրկիչ, ողջմիտ, բարի գործեր և այլն:

Ե. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Պողոսն իրեն համարում է Աստծու ստրուկն ու Քրիստոսի լրաբերը, որը խրախուսում է Աստծու ընտրյալների հավատքն ու ճշմարտության իմացությունը և որը, Աստծու խոստումների շնորհիվ, մնում է հույսով լեցուն՝ հավիտենական կյանքի նկատմամբ: Տիտոսն անվանվում է ճշմարիտ կամ հավատարիմ, և առաքյալը նրան համարում է իր իսկական հոգեորդին:

1. Հովվական հրահանգներ երեցների ու կեղծ դոկտորների վերաբերյալ (1:5-14)

Ա. Կարգված երեցների տիպը: Էական է, որպեսզի յուրաքանչյուր եկեղեցի ունենա երեցի մանրատիպ, որովհետև երեցներն Աստծու առաքյալներն են, նրանք, ովքեր հսկում են եկեղեցու ընթացքն ու վարքը: Երեցը պետք է ունենա հրաշալի համբավ, մեկ կին, որդիները պետք է լինեն հավատացյալներ, պետք է տիրապետի ինքն իրեն, լինի առատաձեռն, ունենա ազնիվ իղեալներ, հավատարմություն ցուցաբերի Աստծու խոսքի նկատմամբ:

Բ. Վտանգ ներկայացնող կեղծ դոկտորներ: Սրանք մեծ թիվ են կազմում և հուզումներ են առաջացնում Կրետեի եկեղեցում, ունեն հեթանոսական ծագում և գործում են դրամասիրության մղումով: Տիտոսն ուղարկվում է նրանց լռեցնելու, թեև առաքյալը չի նշում, թե ինչպես: Նա եկեղեցու անդամներին զգուշացնում է նրանց վնասարար վարդապետությունից: Եկեղեցին հավատքը պետք է սուրբ պահի: Կեղծ մարգարեները պիղծ են (նրանց պես, ովքեր մոլորություններ են գտնում Աստվածաշնչում), նրանք ցուցաբերում են երկերեսանիություն, քանզի չհնազանդվելով Աստծու խոսքին, հավակնում են, իբր նրա մասին գիտեն ամեն ինչ:

2. Հովվական հրահանգներ տեղական ասամբլեայի տարբեր դասակարգերի վերաբերյալ (2:1-15)

Ողջմիտ վարդապետությունը ծնունդ կտա «սրբավայել քրիստոնյաների»: Պողոսը բացատրում է, թե քրիստոնյաներն ինչ պահվածք պետք է ունենան: Ահա այն խմբերը, որոնց դիմում է.

Ա. Տարեց մարդիկ: Պետք է վարեն իրենց տարիքին արժանի կյանք, լինեն լուրջ, այլ ոչ թե թեթևաբարո, քանզի դա պատիվ չի բերում հասուն տարիքի մարդուն: Ամեն ինչում պետք է լինեն զուսպ ու չափավոր, ունենան կայուն դատողություն և մաքուր հավատք:

Բ. Տարեց կանայք: Այս խմբին ուղղված զգուշացումը նախ բացասական բնույթի է: Նրանք պետք է խուսափեն չարախոսությունից և թունավորող խմիչքներից, երիտասարդ կանանց սովորեցնեն դառնալ լավ կողակիցներ ու նվիրված մայրեր: Պետք է սիրեն իրենց ամուսիններին ու երեխաներին, լինեն անարատ, հնազանդ ու բարեգործ:

Գ. Երիտասարդները: Քանի որ ձգտում են թեթևաբարո կյանքի, ապա նրանց խորհուրդ է տրվում լրջանալ: Տիտոսն ինքը, որ երիտասարդ է, պետք է լավ օրինակ ծառայի, ինչպես իր վարդապետությամբ, այնպես էլ վարքով:

Դ. Ստրուկները: Քրիստոսին դառնալը ստրուկին չի ազատում երկրային տիրոջ հանդեպ ունեցած պարտավորություններից: Նա պետք է խուսափի երկու թերությունից՝ չարախոսությունից ու զողությունից: Ամեն ինչում պետք է վստահի տիրոջը: Այս երկու խորհուրդների հետևում ի հայտ է գալիս քրիստոնեական երկու շարժառիթ. խոսքը չպետք է հայիտյանքի փոխարկվի քրիստոնյաների վատ վարքի պատճառով (տող 5), և մեր ուսմունքը պետք է վարձատրվի բարեպաշտ կյանքով (տող 9):

2:11-14 հատվածն ամփոփում է այս բաժինը, որտեղ առաքյալը հայտարարում է, որ ողորմածության արժանանալուց հետո պարտավոր ենք պայքարել անհավատության ու աշխարհիկ ցանկությունների դեմ և ապրել զուսպ կյանքով (ամեն խենթության հանդեպ ազատ, շիտակ ձևով՝ ունենալով Աստծու խրախուսանքը և լինելով բարեպաշտ մեր Աստծու հետ հաղորդության մեջ): Եվ, վերջապես, պետք է սպասենք Քրիստոսի գալստյանը:

3. Հովվական հրահանգներ ընդհանուր առմամբ քրիստոնյաների դիրքի վերաբերյալ (3:1-11)

Ա. Նրանց քաղաքացիությունը: Քանի որ կառավարությունները հաստատվել են Աստծու կողմից, ապա քաղաքացիական լավ վարքը մտնում է նրա հանդեպ ունեցած մեր պարտականության մեջ: Այս մոտիվը քրիստոնյային պետք է դարձնի ամենալավ քաղաքացին: Ճշգրիտ ձևով մեր պարտքը ներառում է հնազանդություն ու համագործակցություն այն ամենի մեջ, ինչն արդար է. խուսափել չարախոսությունից ու բախումներից, տրամադրված լինել համբերությամբ կրելու փորձությունները:

Բ. Նրանց անցյալ ու ներկա կարգավիճակը: Նախկին վիճակը ներառում էր չվերափոխված և, հետևապես, անհնազանդ ոգի. ցանկասիրությունը, նախանձն ու ատելությունն էր նրանց հատուկ ապրելաձևը: Սակայն լվացվելով վերածնության ավազանում (վերածնություն, որի խորհրդանիշը մկրտությունն է), նրանք նորացել են Հոգով: Նրանք երկնքի քաղաքացիներ են: Նրանք արդեն տեր են այս ժառանգությանը, բայց, ավելի ուշ, լիովին կտիրանան դրան: Նշենք այն ճոխ նախադասությունը, որտեղ Աստված կոչվում է մեր Տերը. ամբողջ շեշտը դրվում է, հետևապես, այն բանի վրա, ինչ նա կատարում է:

Գ. Նրանց վերաբերմունքը մոլորության և կեղծ դոկտորների հանդեպ (3:9-11): Պետք է խուսափել անմիտ հարցերի, դատարկաբանությունների, օրենքի շուրջ վիճաբանություններից ու կռիվներից: Բացի այդ՝ հերետիկոսին պետք է խրատել մեկ կամ երկու անգամ, ու եթե գործադրված ջանքերն արդյունք չեն տալիս, հարկավոր է նրան վտարել հավատքի համայնքից: Այսպիսով, ոչ թե Եկեղեցին է նրան մերժում, այլ, ընդհակառակը, ինքն է մերժում հավատքի հաղորդությունը:

4. Եզրակացություն (3:12-15)

Պողոսը խոստանում է օգնականներից մեկին՝ Արտեմասին կամ Տյուքիկոսին, ուղարկել շարունակելու Տիտոսի առաքելությունը: Թվում է, թե նամակը հասցեատիրոջն են

հասցրել Ձեռնասը կամ Ապոդոսը: Վերջինս պետք է նրանց հանձնի կրետական եկեղեցիներից իր հավաքած նվիրատվությունը: Նրանք, ովքեր Պողոսի մոտ են, ողջունում են հավատքով իրենց եղբորը:

Գ Լ ՈՒ Խ 33

ՓԻԼԻՍՈՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿԸ

Ա. ՅԵՂԻՆԱԿԸ

Շատ չենք ծավալվի այս նամակի հեղինակի անձի կամ վավերականության շուրջ: Նոր Կտակարանի մասնագետների համատեղ կարծիքով, խոսքը կարող է վերաբերել միայն Պողոս առաքյալին, որն այն գրել է Ղռոմում՝ 63 թ. մոտերքում, Եփեսացիներին ու Կողոսացիներին ուղղված նամակների հետ միաժամանակ: Քանի որ այս նամակի հասցեատերը՝ Փիլիմոնը, ապրում էր Կողոսա քաղաքում, ապա դրանից կարելի է եզրակացնել, որ այդ քաղաքի Եկեղեցուն հասցեագրված նամակն ու այս կարծ ուղերձը այնտեղ հասել են միաժամանակ:

Բ. ՀԱՍՑԵԱՏԵՐԸ

Փիլիմոնը, որ Կողոսա քաղաքի բնակիչ ու մեծ սեփականատեր է, Պողոս առաքյալի կողմից հավատքի է եկել Եփեսոսում երեք տարի տևած նրա առաքելության ընթացքում (Գործք 19:10): Թվում է՝ Կողոսայի Եկեղեցին հավաքվում էր նյութապես բարեկեցիկ կյանքով ապրող այս մարդու տանը:

Գ. ԳՐԵԼՈՒ ՀԱՆՉԱՄԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԵԹԻՎԸ

Նամակը գրելու ժամանակ առաքյալը Ղռոմում է՝ բանտում: Երկու տարվա բանտարկությունը նրան հնարավորություն է տվել գրել նաև, այսպես կոչված, «գերության նամակները», որոնցից են Եփեսացիներին, Կողոսացիներին և Փիլիպպեցիներին ուղղված նամակները:

Փիլիմոնին պատկանող մի ստրուկ՝ Օնեսիմոս անվամբ, փախել էր: Պողոսը բանտում հանդիպում է նրան և դարձնում Քրիստոսի հավատքին: Բայց Փիլիմոնը ստրուկ էր կորցրել և, անշուշտ, կրել էր նյութական այլ վնասներ: Հայտնի է, որ Ղռոմեական կայսրության մեջ ազգաբնակչության զգալի մասը կազմված էր ստրուկներից: Դատական ոչ մի իրավունք չէր պաշտպանում նրանց, և նրանց մեջ չէր ընդունվում մարդկային ոչ մի արժանապատվություն: Ստրուկը՝ տիրոջ սեփականությունը, լիովին վերջինիս տրամադրության տակ էր: Մոլորություններն ու հիմար արարքները երբեմն պատժվում էին մեծ դաժանությամբ, ինչ-

պես, օրինակ, խեղանդամ դարձնելով, խաչելով և կամ էլ մեղավորին վայրի գազանների հետ մրցասպարեզներում թողնելով: Նմանատիպ պատմությունների առաջ բերած սարսափի շնորհիվ՝ ստրուկների ընդարձակ շրջանում կարգապահություն էր պահպանվում: Սարսափեցնող այս հեռանկարը Օնեսիմոսին մղում է խնդրել հոգևոր հորը՝ իր օգտին նամակ գրելու, որպեսզի իրեն՝ փախստական ստրուկին, հաշտեցնի նախկին տիրոջ հետ: Մտածելով, որ Օնեսիմոսի գործած մեղքը կարող է ուղղվել, և որ Քրիստոսին դառնալը ոչ ոքի չի ազատում գործած մեղքը շտկելուց, ոչ էլ գողացվածը վերականգնելուց, Պողոսը հաճույքով ընդունում է առաքելությունը: Նա Օնեսիմոսին նամակով ուղարկում է Փիլիմոնի մոտ, նամակ, որը նախկին ստրուկի օգտին գրված պաշտպանական պերճախոս խոսք է: Այս փաստարկները կհեշտացնեն երկու քրիստոնյաների հաշտեցման գործը, այժմ երկուսն էլ դարձել են նույն Վարդապետի աշակերտները: Համաձայն Եփեսացիներին և Կողոսացիներին ուղղված նամակների՝ Պողոսի ընկերներից մեկին՝ Տյուքիկոսին է վստահված այս երկու նամակները հասցեատերերին հասցնելու պարտականությունը: Ինչ վերաբերում է Օնեսիմոսին, ապա նա կտանի իրեն վերաբերող նամակը և Տյուքիկոսին կուղեկցի այս ճանապարհորդության ժամանակ:

Դ. ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարճ նամակի բոլոր մեկնաբանները միաձայն ընդունում են նրա անզնահատելի արժեքը: «Հրաշալի մաքրություն ունեցող մարգարտի պես այն փայլում է Նոր Կտակարանի հարուստ գանձարանում», - գրում է նրանցից մեկը: Բացի այդ՝ այս նամակն առատ լույս է սփռում առաքյալի մասնավոր կյանքի ու բնավորության վրա: Այստեղ, առավել, քան այլուր, նա իրեն դրսևորում է իբրև հրաշալի նամակագիր: Վեր հանենք նամակին յուրահատուկ որոշ գծեր: Դա քրիստոնեական քաղաքավարության մանրատիպն է: Պողոսի ուսերին ընկած պարտականությունը բնույթով չափազանց նուրբ էր: Նա պետք է նամակ գրեր՝ Փիլիմոնից ստանալու նրա բարեհաճությունը՝ առանց վիրավորելու և ոչ էլ վնասելու նոր բարեկամի՝ Օնեսիմոսի շահերը: Նա պետք է զգուշանար, որպեսզի ճնշում չգործադրեր իր բարեկամի վրա, որը, սակայն, այլ առումներով իրեն մնում էր պարտք: Եվ այսպես, պաշտպանելով ու հիշելով մեկի արժանիքները, նա չի մոռանում մյուսի գործած սխալը:

Այսքան նուրբ գործ ձեռնարկելու հաջողությունն ապացուցում է, թե առաքյալն ինչքան գիտեր և ինչպես էր կարողանում իրեն դրսևորել իբրև կատարյալ բարեկիրք մարդ: Փիլիմոնն, անշուշտ, զգայուն է գտնվել ինչպես իր բարեկամի ու հոգևոր հոր և նրա շռայլած հաճոյախոսությունների, այնպես էլ այս կարճ նամակի հմայքի առջև: Իր կողմից Օնեսիմոսը ևս պետք է հաշիվ տար իր նկատմամբ Պողոսի ունեցած սիրո մասին, որն ավելի թանկ արժեք, քան նախկին տիրոջ կողմից շնորհված ներումը: Պողոսը չի գործածում պատվիրանի տոն, այլ ընդհակառակը՝ նուրբ պատշաճագացում ու քաղաքավարություն: Ծեր բանտարկյալի իր վիճակում՝ նա խնդրագիր է ուղարկում՝ առանց արհամարհելու այդքան նվաստացուցիչ պարտականությունը, որ իր միջնորդագիրն էր Օնեսիմոսի օգտին: Նա հույսը դնում է իր հասցեատիրոջ մեծահոգության ու հավատքի վրա: Նա Փիլիմոնին անվանում է համագործակից: Հավանաբար, նրան հիշեցնում է, թե Կողոսայի Եկեղեցին ինչ օգ-

նություն է ստացել Փիլիմոնից: Նա վկայակոչում է եղբայրական սերը՝ հովանավորելով մեկին, որն այժմ հավատքի հաղորդության մեջ է «ՔՐԻՍՏՈՍՈՒՄ»: Խնամքով գրված և քրիստոնեական քնքշությամբ լեցուն նախաբանից հետո է նա հիշատակում Օնեսիմոսի անունը: Մեղավոր ստրուկը ներկայացվում է իբրև նախկինում անպիտան մեկը, բայց որն այժմ թանկ էր դարձել Պողոսի համար: Նա ակնարկում է, թե որքան օգտակար կլիներ նրան իր մոտ պահելը: Մինչդեռ նա չի ցանկանում նրան պահել, քանզի վերջինս պատկանում է մեկ ուրիշի: Եվ այնպիսի հանգամանքներում, որոնք կարող էին ողբերգական լինել Օնեսիմոսի, եթե ոչ Փիլիմոնի համար, նա նշմարում է աստվածային Չայտնությունը: Քանզի Օնեսիմոսին եղբայրական հաղորդության մեջ ունենալն արժե ավելին, քան նախկին փախստականի պատճառած նյութական վնասի հատուցումը: Ուստի, միայն քրիստոնեական հավատքի հիման վրա է նա աղերսում Փիլիմոնին՝ նրան ընդունել այնպես, ինչպես կընդուներ անձամբ Պողոսին: Ինչ վերաբերում է Փիլիմոնի կրած վնասին, ապա թող այն դնի իր հաշվին. նա խոստանում է վճարել ամեն ինչ՝ իմանալով, թե հոգևոր առումով նա ինչքան է իրեն պարտական:

Ինչպես արդեն հավաստել ենք, այս փոքրիկ նամակը քրիստոնեական նամակագրության մուշտիմանակ է, քանզի քրիստոնյաների միջև նամակագրության համար սիրալիրությունը նույնքան էր կարևորվում, որքան սոցիալական հարաբերությունները: Նրանում լուսաբանվում է նաև եղբայրական սերը: Այն ժայթքում է քնքշությամբ լեցուն Պողոսի սրտից: Քաղաքավարություն ու սիրալիրություն չեն սովորում գրքեր ընթերցելով: Ոչ մի քրիստոնյա չպետք է անտեսի, ոչ էլ արհամարհի սոցիալական ու վարվելակարգի հաստատված կանոնները: Այսուհանդերձ, սիրալիրության արժեքը հիմնվում ու գնահատվում է ինչպես սրտի անկեղծությամբ, այնպես էլ ուրիշին պարզևս երջանկությամբ: Չենց այս ոգով է շնչում Փիլիմոնին ուղղված նամակի յուրաքանչյուր տող: Նամակը լի է քնքուշ սիրո արտահայտություններով: Նախկինում անպիտան համարվող փախստականն այժմ որակվում է իբրև պիտանի: Նա իրավացիորեն կարող է կրել իր Օնեսիմոս անունը (հունարենում թարգմանաբար նշանակում է «օգտակար»):

Եղբայրության այս խոստովանումը, հոգևոր հավասարության հայտարարումը պետք է, որ անպայմանորեն ավարտվեր ստրկության դարաշրջանի վրա կախված ամենամեծ անեծքներից մեկի վերացմամբ: Բայց եթե ճիշտ է, որ ստրկությունը զգվելի պրակտիկա էր, առաքյալն ինչո՞ւ էր այն հանդուրժում և ինչո՞ւ չէր պարսավանքի ենթարկում, ինչպես կանեին ժամանակակից «մարդասերները»: Ինչո՞ւ է Օնեսիմոսին հետ ուղարկում Փիլիմոնի մոտ:

Պատասխանն այս է. քրիստոնեությունը սոցիալական չարիքները հաղթահարել է ոչ թե զինված պարտավորությամբ և կամ ազատագրման կամ բռնության աստվածաբանական տեսությամբ ղեկավարվող հուզումներով, այլ սկզբունքներով, որոնք, ի վերջո, ավելի արդյունավետ ձևով տապալեցին անտիկ աշխարհի անմարդկային որոշ հաստատություններ: Կապերը, որ քրիստոնեական հավատքով հաստատվել էին Պողոսի և Օնեսիմոսի միջև, և հարաբերությունները, որ առաջինը ձգտում է ստեղծել Օնեսիմոսի ու Փիլիմոնի միջև, այժմ անկիրառելի էին դարձնում սոցիալական այնպիսի համակարգ, ինչպիսին ստրկությունն է: Փիլիմոնին ուղղված նամակը տեղին է անվանվել քրիստոնեական Ազատության Մեծ Խարտիա: Բացի այդ՝ այն մեզ առաջարկում է քրիստոնեական իսկական հավատա-

փոխության կատարյալ օրինակ: Ապացուցում է, որ Քրիստոսն ունի կյանքեր վերափոխելու և մարդկային ամենազգվելի էակներին փրկելու գործություն: Մարդու (յուրաքանչյուր մարդու) վերածնունդն ու վերափոխումը, հետևապես, հնարավոր է միայն Քրիստոսով: Հոգիներն ու սրտերն, իրոք, վերափոխվում են, երբ գործին խառնվում է քրիստոնեական անկողմնակալ սերը:

Օնեսիմոսի հավատափոխությունը հավանաբար եղել է անակնկալ, հանկարծակի ու անկեղծ ձևով: Դժվար թե հնարավոր լիներ պատկերացնել անհույս մի թափառական, քան փռյուզիացի այս ստրուկը: Այսուհանդերձ, տեսնում ենք, թե նա ինչպես է վերափոխվում հնազանդ բարեկամի և արժեքավոր գործընկերոջ: Փոփոխությունը, երևի, կատարվել է արագորեն՝ բանտարկության ընթացքում Պողոսի ունեցած ազդեցության շնորհիվ: Արդ, բանտարկության ժամկետը չլրացավ երկու տարուց, և նամակը գրելու պահին դեռևս շատ ժամանակ էր մնացել կրելու պատիժը: Այս հավատափոխությունը հատկապես շատ անկեղծ էր, եթե հաշվի առնենք այն փաստը, որ նա գիտակցում էր, որ իրեն սպասվող ճակատագիրը սկզբունքորեն մահն էր: Ազատորեն վերադառնալով նախկին տիրոջ մոտ՝ Օնեսիմոսն ընդունում էր հասարակական անպատվության, ինչպես նաև խաչվելու վտանգը: Անշուշտ, նա վերափոխված մարդ էր, քանի որ ընդունել էր նման ճակատագիրը: Նրա անունն իրավացիորեն դարձել է Քրիստոսի վերափոխող ուժի հոմանիշը:

Նամակը հասել է արդյոք նպատակին: Փիլիմոնը ներե՞լ է Օնեսիմոսին: Պատմությունն այս թեմայի շուրջ լռություն է պահպանում: Այսուհանդերձ, անհնար է թվում պատկերացնել, որ նման խնդրագիրը կարող է հանդիպել դաժանացած սրտի, որ առաքյալի բարեկամը մերժել է նրա խնդրանքը: Ոմանք առաջ են քաշում այն վարկածը, որի համաձայն, Օնեսիմոսին ընդունելուց հետո Փիլիմոնը նրան հետ է ուղարկել Հռոմ՝ Պողոսի մոտ՝ բանտարկության մնացյալ ժամկետում ծեր առաքյալին ծառայելու նպատակով:

Ե. ԼՈՒՐԸ

Լինելով ավելի շատ «անձնական, քան աստվածաբանական», գոնե արտաքուստ, Փիլիմոնին ուղղված նամակն, այսուհանդերձ, բովանդակում է էական մի լուր, այն է՝ վիրավորանքների ներում: Նախ՝ վկայակոչենք այն փաստը, որ Քրիստոսով մարդկային բոլոր հարաբերությունները՝ թե՛ մասնավոր ու անձնական, թե՛ ընտանեկան ու հասարակական, ձևափոխվել են: Հավատքն ինքնին մեր հարաբերությունների չափանիշն է, իսկ դրանք ճշգրտում ու պահպանում են մեր հավատքը: Եկեղեցու գոյության առաջին տարիների ընթացքում Պողոս առաքյալը օգտակար չհամարեց բացահայտորեն զբաղվել հասարակական խնդիրներով և լուծել ստրկության՝ հոգու և քրիստոնեական հավատքի տառի հետ անհամատեղելի հաստատության հարցը: Նախկինում հարաբերությունները կառավարվում էին միայն մի սկզբունքով՝ բարոյականության վրա լույս սփռող հավատքի սկզբունքով: Նոր ծնվող քրիստոնեությունը աստիճանաբար է հարձակում գործել անարդար կառույցների դեմ և քրիստոնեական բարքերից վերջնականապես դուրս մղել այլանդակ ամեն կիրառություն և ամեն պայման կամ հարաբերություն: Նամակը բովանդակում է քրիստոնեական թողության տարրեր:

- հասցված վիրավորանք
- հատուցում
- վերականգնում
- նոր հարաբերության ձեռքբերում

Այսպիսով, աստվածային թողության տեսակետներից յուրաքանչյուրն իր արտահայտությունն է գտնում այն տեսակետում, հանուն որի Պողոսը պաշտպանական խոսք է գրում Օնեսիմոսի օգտին: Մենք այստեղ հանդիպում ենք «Տերունական Աղոթք»-ի խնդրանքի իսկական ընդգրկմանը. «Թո՛ղ մեր պարտքերը»: Քրիստոնեական ուսմունքը գործածված է առօրյա կյանքում և մարդկային հարաբերությունների ամենամուրբ ոլորտներում: Առաքյալը ոչ թե ձեռնամուխ է լինում հավատքի մեծ ու հոյակերտ տաճարի շինության գործին, այլ զբաղվում է ամենամաստ եղբայրներից մեկով: Այս կերպ քաջալերում է նրանց, ովքեր ամենամերթևում են:

Բայց եթե առաքյալը չի խարխլում վատ կարգը (տվյալ դեպքում՝ ստրկական կարգը), ապա հայտարարում է դրա մոտալուտ կործանման մասին՝ Քրիստոսի կողմից բոլոր ընտրյալներին, ներառյալ նաև ստրուկներին տրված ազատության շնորհիվ, որոնք ևս իրենց հավատքով դարձել են նրա սեփականությունը: Վերջապես նշենք, թե Պողոսն ինչպես է խոստանում Փիլիմոնին վճարել Օնեսիմոսի փախուստի պատճառած վնասները: Այսուհետև, երկու մարդկանց միջև կլինեն ավելի շատ Քրիստոսի առաքյալի հաշտարար առաքելությանը հաշտված եղբայրների, քան ստրուկի ու տիրոջ հարաբերություններ:

Վերջացնելով մամակը՝ առաքյալն այն հույսն է հայտնում, որ շուտով կազատվի շղթաներից ու խոստանում է այցելել իր բարեկամին, ինչպես նաև Փոքր Ասիայի եկեղեցիներ:

2. ՆԱՍԱԿԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

1. Ներածությունը

Նամակը հասցեագրված է ո՛չ եկեղեցու, ո՛չ էլ առանձին անհատի, այլ մի ընտանիքի և նրա շուրջը հավաքված հավատացյալների խմբի: Բանն այն է, որ, իրոք, առաքյալի ուղարկած խնդրագիրը հետաքրքրում է բոլոր նրանց, ովքեր կապված են այս տանը: Ընտանիքի հայրը՝ Փիլիմոնը, Կողոսայի քաղաքացի է (ըստ Կող. 4:9): Առաջին դարերի մեկ ուրիշ քրիստոնյա՝ Թեոդորեթը, հաղորդում է, որ իր օրոք դեռևս ցույց էին տալիս Կողոսայի այն տունը, որը պատկանում էր Փիլիմոնին: Վերջինս վայելում է նյութական բարեկեցիկ կյանք: Ունի ստրուկներ: Նրա տանը հյուրընկալվում են բազմաթիվ բարեկամներ: Նրա շռայլությունը հայտնի է. *sunergos* մակդիրը, որ նրան շնորհում է Պողոսը, բացահայտում է նրա քրիստոնեական գործունեությունն այն շրջանակում, որտեղ ապրում է: Քանի որ Պողոսը երբեք չի այցելել Կողոսա, ապա հավանական է, որ Փիլիմոնն ու իր ընտանիքը նրան ճանաչել են այն ժամանակ, երբ վերջինս երկար ժամանակ մնացել է Եփեսոսում: Ինչ էլ որ լինի, հավատափոխության համար Փիլիմոնը պարտական էր մեծ առաքյալին (տես՝ 19-րդ տողն ու նրա իսկական իմաստը): Ապփիան կարող է լինել միայն Փիլիմոնի կինը: Պողոսը դիմում է նաև նրան, որովհետև շոշափում է տնտեսական հարց: Արքիպոսը հավանաբար նրանց որդին է: Ըստ Կողոս. 4:7 տողի՝ նա եկեղեցու սպասավոր է: Եպափրասի բացակա-

յության ժամանակ, հավանաբար, փոխարինում էր նրան: Նա անվանվում է Պողոսի գինակից, մասնակցում է հոտին սպառնացող կեղծ դոկտորների դեմ պայքարին. «քո տանը հավաքվող եկեղեցուն» բառերով առաքյալը մատնանշում է Կողոսայի քրիստոնյաների այն խումբը, որը մասնակցում է Փիլիմոնի տանը նշվող արարողությանը: Նրանք, հավանաբար, ճանաչում էին Օնեսիմոսին, որին առաքյալը փորձում է վերականգնել նաև նրանց աչքի առջև:

Շնորհակալական խոսքի (4:7) թեման Փիլիմոնի բարեգործությունն է, որի ապացույցները հասել են Պողոսի ականջին: Նրա վստահությունը Հիսուսի, բայց նմանապես նաև սրբերի հանդեպ է՝ Քրիստոսի կատարած գործի հիման վրա: Երբեմն, անգամ լավագույն քրիստոնյաները, ծանր փորձություններից հետո, չեն վստահում մյուս եղբայրներից: Խոսքը, մասնավորապես, հավատքի եկածների մասին է: Պողոսը վախենում է, որ Փիլիմոնը կարող է նման վերաբերմունք ունենալ Օնեսիմոսի հանդեպ: Սակայն գովաբանում է նրա բարի կամքը, գիտե, որ դրությունն է այդպես պահանջում և շնորհակալական իր խոսքը լրացնում է՝ մաղթելով, որ նրա հավատքի բարերար գործունեությունը, ի պատիվ Հիսուս Քրիստոսի, ավելի ու ավելի բեղուն դառնա Աստծու՝ իր զավակների սրտում բարիք գործելու հրաշալիությունը վեր հանելուն զուգընթաց: Նա իր բարեկամին քաջալերում է վստահել նախկին ստրուկի մեջ կատարված խոր փոփոխությանը: 7-րդ տողը, թվում է, վկայակոչում է առանձնահատուկ մի հանգամանք, երբ Փիլիմոնի շռայլությունը դրսևորվել էր վառ ձևով: Կարելի է մտածել ամբողջ շրջանը ցնցած երկրաշարժի մասին:

2. Նամակի հիմնական մասը

Նախապատրաստելով իր խնդրանքը՝ մեծ զգուշավորությամբ Պողոսն անցնում է հիմնական թեմային: Դա ճիշտ և պատշաճ ձևով ներկայացված մանդատ է: Առաքյալը զգուշանում է խնդրո առարկան անմիջականորեն շարադրելուց: Նախ՝ Փիլիմոնին հիշեցնում է, թե ով է խնդրանքով նրան դիմողը, հետո հիշատակում է նրա անունը, ում օգտին խնդրագիր է հղում: Այս կերպ հող նախապատրաստելուց հետո միայն անցնում է վերջնական գրոհին՝ արտասանելով հայտնի «ընդունիր նրան»-ը:

Պողոսը «աղերսագիր» է հղում: Նա շատ լավ կարող էր հրաման տալ. գերադասում է իբրև անձնական ծառայություն հայցել այս ներումը, որը կարող էր պահանջել որպես քրիստոնեական պարտք: Փիլիմոնն ինչպե՞ս կարող էր այս ողորմածությունը մերժել նրան, ով իր կյանքն անցկացրել էր հեթանոսներին ծառայելով, այսինքն՝ տարիքն առած Պողոսին, որ հենց այդ պահին, խայտառակ գերության մեջ, ամեն տեսակ նեղություններ էր կրում: Եթե իր հավատափոխության ժամանակ Պողոսը 30-35 տարեկան էր, և եթե այս իրադարձությունը տեղի է ունեցել մ.թ. 37 թ. մոտերքում, և եթե նամակը գրելու պահին 62 կամ 63 թվականն էր, ապա նա պետք է լիներ մոտ 60 տարեկան: Իր անձի հետ կապված՝ այս շարժառիթներին Պողոսն ավելացնում է այն շարժառիթը, որը վերաբերում է նրան, ում համար խնդրում է: Օնեսիմոսն իր հոգեորդին է, որին ունեցել է բանտում: Նա է, ով մինչև այդ, հավանաբար, արժանի չէր «Օնեսիմոս» անվանը, բայց որն այժմ այնքան էր վստահելի, որ Պողոսը հաճույքով կցանկանար պահել նրան իր մոտ՝ Ավետարանի գործին ծառայելու նպատակով: Իր համար նա արել է այն ամենը, ինչը կարող էր անել անձամբ Փիլի-

մոնը, եթե ներկա լիներ: Նա ցանկացել էր արժեքավոր այս օգնությունը ստանալ միայն Փիլիմոնի բարի կամքով: Պողոսը հովանավորում է նրան, ով տվյալ պահին կորած լինելով Փիլիմոնի համար, առհավետ գտնվել է իբրև եղբայր: Նա դարձել է Պողոսի եղբայրը:

Խնդրո նյութն այսպես է նախապատրաստվում. ընդունի՛ր նրան, ընդունի՛ր նրան այնպես, ինչպես կընդունեիր անձամբ ինձ: Պողոսը մտածում էր, որ ինչ-որ բան կարող էր խանգարել Փիլիմոնի կողմից բարեհաճ ընդունելությանը: Օնեսիմոսը ոչ միայն փախուստի էր դիմել, այլև տիրոջը պատճառել էր նյութական մեծ վնաս: Մեզ հայտնի չէ դրա ճշգրիտ բնույթը: Այս վնասն արդարացիորեն պետք է հատուցվեր: Դե, իհարկե, այդպես էլ կլինի. Պողոսը կհոգա այդ մասին. «Ես քեզ կվճարեմ»: Լո՞ւրջ է, արդյոք, այս առաջարկը: Այո՛ և ո՛չ: Ո՛չ, քանզի առաքյալը գիտե, որ Փիլիմոնը դա երբեք չի ընդունի, այո՛, քանի որ այդ առաջարկն արված է ծնունդ տալու Փիլիմոնի այն մտքին, որ Պողոսը չի վախենում նրան ներշնչել. ինչպե՞ս կարող է պատահել, որ նա, ում պարտական եմ հավատափոխությանս համար, մուրացիկի պես հայտնվի իմ առջև, նվաստացած վիճակում: Հաղթահարելով այս վերջին արգելքը՝ առաքյալը կրկնում է իր խնդրանքը՝ ասելով՝ այո՛, որն անհնարին կդարձնի մերժումը, և ակնարկելով, որ Փիլիմոնից առավել է սպասում: Ի՞նչ: Կարելի է հուսալ, որ Փիլիմոնը առաքյալին ավելի լավ կհասկանա, քան ժամանակակից մի շարք մեկնիչներ: Արդ, ազատության պարզակից ի՞նչն է ավելի թանկարժեք: Դրա գաղափարն արդեն առկա է 17-րդ տողում: Օնեսիմոսն ինչպե՞ս կարող էր ծառայել Պողոսին ու Ավետարանին, եթե նախ ազատ չլիներ:

3. Եզրակացություն

22-րդ տողում ներկա ենք մեղմ աղոթքի, լավ ընդունելության դիմաց խոստացված յուրատեսակ հատույցի. «Միաժամանակ մնալու տեղ պատրաստիր ինձ համար»: Այս նախադասությունը համաձայնում է Փիլիպպեցիներին ուղղված նամակի այն հատվածի հետ, որտեղ Պողոսը հույս է հայտնում, որ շուտով ազատվելու է կապանքներից:

Հաջորդում են Պողոսի ընկերների ու գործակիցների ողջույնները բովանդակող 23-րդ և 24-րդ տողերը: Դրանք նույն անուններն են, որոնք հանդիպում են Կողոսացիներին ուղղված նամակում, բացառությամբ Հիսուս-Յուստոսի, որը, հավանաբար, անծանոթ է Փիլիմոնին: Իբրև նամակագրի անձնական ընկեր՝ Եպափրասի անունն, իհարկե, առաջինն է հիշատակվում: Նա անվանվում է գերության ընկեր, հավանաբար, այն պատճառով, որ ընկերակցում էր Պողոսին Հռոմում վարձած մասնավոր բնակարանում: Նույնը՝ նաև Արիստարքոսի մասին: Անձնական բնույթի այս նամակում առաքյալը, բնականաբար, չի խոսում գործընկերների հատկանիշների մասին, մի բան, որ արել է համայնքներին ուղղված նամակներում:

ԵՐԱՅԵՑԻՆԵՐԻՆ ՈՒՂՎԱԾ ՆԱՍԱԿԸ

Ա. ՅԵՂԻՆԱԿԸ

Ըստ Օրիգենեսի (3-րդ դար)՝ միայն Աստծուն է հայտնի, թե ով է Նոր Կտակարանի կանոնական այս գրվածքի հեղինակը: F. Delitzsch-ի կարծիքով, այս նամակը Մելքիսեդեկի պես է. ո՛չ հայր ունի, ո՛չ մայր:

Քիչ են առաքելական դարաշրջանի այն անձինք, ում չեն փորձել վերագրել Եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակային իրավունքը: Թվարկենք հետևյալ վարկածները.

- Նամակը գրել է Պողոսը.
- Նամակը Պողոսինը չէ.
- Նամակը գրվել է Ղուկասի, Բառնաբասի, Կղեմես Յոննեսցու, Պրիսկիլայի, Ապողոսի կողմից.

- Մտածողությունը Պողոսինն է, շարադրանքը՝ ուրիշինը:

Այն մտել է Նոր Կտակարանի Կանոնի մեջ, որովհետև վերագրում էին Պողոս առաքյալին: 13-րդ գլխում բովանդակվող զանազան նշումներ, մասնավորապես Տիմոթեոսի անվան հիշատակումը, հիշեցնում են հեթանոսների առաքյալին: Մ. թ. 95 թ. մոտերքում Կղեմեսն այն հայտարարում է կանոնական, առանց, այսուամենայնիվ, ճշգրտելու, թե ով է հեղինակը: 2-րդ դարի վերջերին Յյուսիսային Աֆրիկայի աստվածաբան Տերտուլիանոսը գրում է, որ գոյություն ունի Բառնաբասի կողմից եբրայեցիներին ուղղված մի նամակ, իսկ այնուհետև հայտարարում է, որ խոսքը մեր այս նամակի մասին է՝ մեջբերելով 6:4-8 հատվածը:

2-րդ դարի վերջերին Կղեմես Ալեքսանդրացին պնդում է, որ Պողոսն այս նամակը գրել է եբրայերենով, և որ Ղուկասը խնամքով այն թարգմանել է հունարեն: Օրիգենեսն ավելի խոհեմորեն հայտարարում է. «Չամոզված եմ, որ մտքերը Պողոսինն են, բայց լեզուն ու կառուցվածքը՝ մեկ ուրիշինը»:

Յերոնիմոսի և Օգոստինոսի ազդեցության տակ Արևմուտքի Եկեղեցին միացավ այն վարկածին, որ նամակը գրվել է Պողոսի կողմից: Այսօր ևս հռոմեացի որոշ աստվածաբաններ, ովքեր դեռևս կապված են Տրիդենտի տիեզերաժողովի որոշումներով, ընդունում են, որ նամակը պատկանում է Պողոսի գրչին:

Այսուամենայնիվ, անառարկելի որոշ փաստեր հակադրվում են նման մոտեցմանը: Բառապաշարն ու ոճը շատ են տարբերվում Պողոսի նամակների բառապաշարից ու ոճից: Ողջույնի խոսքը նման չէ Պողոսի ողջույնի խոսքին: Թվում է, թե հեղինակն Ավետարանը ստացել է մեկ ուրիշից (2:3), մինչդեռ Պողոսը խստորեն մերժում է այս փաստը՝ հայտարարելով, որ զորություն ու հայտնություն ստացել է անմիջականորեն Աստուծուց (Գաղատ. 1:11-17):

«Տեր Յիսուս Քրիստոս» արտահայտությունը, որն ավելի քան 225 անգամ հանդիպում է Պողոսի գրվածքների հիմնական մասում, այստեղ չի հանդիպում, կամ հանդիպում է հազվադեպ: Շեշտադրումը տարբեր է: Սովորաբար, Պողոսը Յին Կտակարանը դիտում է իբրև օրենքների համակարգ, մինչդեռ այս նամակի հեղինակն այն համարում է գալիք իրադարձությունների ստվերների ու խորհրդանիշների համակարգ:

Եբրայեցիներին ուղղված նամակի կենտրոնական գաղափարը՝ մեծ հովվապետ Յիսուս Բրիստոսի ծառայությունը, ներկայացված է այլ կերպ, քան երբ Պողոսն է ներկայացնում Բրիստոսի գործը: Մանրամասն մի շարք այլ դիտողություններ ևս վճռականորեն խոսում են Պողոսի՝ այս նամակի հեղինակը լինելու անհնարինության օգտին:

Ըստ գրվածքի՝ հեղինակը մեզ թվում է հոգևոր մեծ անհատականություն և, միևնույն ժամանակ, մտքի որոշակի անկախություն ունեցող մարդ: Նա ունի շատ ընդարձակ բառապաշար և արտահայտվում է մաքուր ոճով, որը, հավանաբար, ամենագրականն է Նոր Կտակարանում. այս ամենը խոսում է կրթված մտածողի մասին: Նրան հարազատ է հելլենիստական հրեական կրոնի աստվածաբանությունը, և նրա նամակը ձևով ու բովանդակությամբ բազմաթիվ նմանություններ ունի հելլենիստ հրեա փիլիսոփա Փիլոն Ալեքսանդրացու գործերի հետ: Բացի այդ՝ նա, անշուշտ, այնպիսի մարդ էր, որը սիրով զբաղվում էր իսրայելյան պաշտամունքի կողմից պարտադրված աստվածաբանական խնդիրներով: Լյութերը նամակը վերագրում էր Ապողոսին: Այս ենթադրության միակ հիմքը «Գործք Առաքելոց»-ի 18:24-28 հատվածն է, որտեղ Ապողոսը մեզ է ներկայացված իբրև ծագումով ալեքսանդրացի հրեա քրիստոնյա՝ պերճախոս և լավատեղյակ Սուրբ գրքերին: Սակայն մենք նրա մասին այլևս ոչինչ չգիտենք: Յնագույն ոչ մի ավանդություն նրան չի վերագրում այս նամակի հեղինակության իրավունքը, և եթե հնարավոր է, որ նա է գրել, ապա այս հնարավորությունը արտահայտում է առաջին դարի հելլենիստ այլ քրիստոնյաների հետ:

Յնարավորությունը, որ «Գործք»-ից լավ ծանոթ Բառնաբասը կարող է լինել նամակի հեղինակը, թվում է ավելի հավանական: Պողոսի այս ուղեկիցը, որը նրա նկատմամբ պահպանեց բավականին անկախ վերաբերմունք, կարող էր գրած լինել մեր այս ուղերձը կազմող հորդորի խոսքը, նա, ով ստացել է «Մխիթարության որդի» անվանումը (Գործք 4:36): Այն ամենը, ինչ հայտնի է Բառնաբասի մասին, համապատասխանում է Եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակի մասին ունեցած մեր պատկերացմանը:

Առաջին ենթազուխը եզրափակենք՝ ավելացնելով, որ անանունությունը ամենևին չի վնասում այս գրվածքի բովանդակությանը, հեղինակությունը ոչնչով չի տուժում: Thomas de Kempis-ի հետ մեկտեղ ասենք. «Մի՛ հարցրու, թե ով է ասել, այլ՝ ինչ է ասել, և կանգ առ դրա վրա: Եթե մարդիկ անցնում են, Աստծու ճշմարտությունը միշտ նույնն է մնում»:

Բ. ՀԱՍՑԵԱՏԵՐԵՐԸ

Ակնհայտ չէ նաև այն, թե ովքեր էին գրվածքի հասցեատերերը: Ամենափին ձեռագրերն այս նամակը ներկայացնում են «Եբրայեցիներին» վերնագրով: Այս վերնագիրը, որ բնագրի մաս չի կազմում, նամակին ավելացվել է շատ վաղուց, անկասկած, այն ժամանակ, երբ նամակը մտել է առաքելական նամակների հավաքածուի մեջ: Նամակի բովանդակությունից երևում է, որ նախատեսված էր ծագումով հրեա քրիստոնյաների համար: Այս վերնագիրը, շատ աղոտ ձևով, կարող էր ստեղծել այն կարծիքը, որ նամակը վաղ շրջանի Եկեղեցու մաս կազմող, հրեական ծագում ունեցող բոլոր քրիստոնյաներին ուղղված կոնդակ է: Սակայն ընթերցողներին դիմելու ձևը ցույց է տալիս, որ այն նկատի ուներ տեղական շատ որոշակի մի համայնքի: Նամակում շատ հստակ ակնարկներ են արվում նրանց անցյալի և,

մասնավորապես, կրած հալածանքների մասին. հեղինակը ծանոթ է նրանց մասնավոր կարիքներին, իրեն անձնապես ճանաչում են, և ինքը մտադիր է այցելել նրանց:

Այս համայնքը Հիսուս Քրիստոսի՝ Հոր միակ բացահայտողի և մարդկանց միակ փրկչի նկատմամբ հավատը լքելու վտանգի առաջ էր: Ընթերցողները հոգնած են, նրանց թևերը թուլանում են, և ծնկները՝ դողում: Քրիստոնեական հավատքի մեջ շատ բաներ մեղքի հնարավոր առիթ են նրանց համար. Հիսուս Քրիստոսի տառապյալ ու ճնշված դեմքը, տառապանքները, որ կրել են իրենց հավատքի պատճառով և, վերջապես, փրկության վերջնական հայտնության ժամկետը: Բայց հատկապես՝ հրեական կրոնն ու նրա պաշտամունքը, որոնք չափազանց մեծ գրավչություն ունեն, և հենց սրա վրա է կենտրոնացվելու հեղինակի ջանքը:

Հին մեկնիչների գերակշռող մեծամասնությունը հասցեատերերին փնտրում է Պաղեստինում, անգամ՝ Երուսաղեմում: Սակայն ժամանակակից պատմաբանների մեծ մասի հետ կարծում ենք, որ նրանք, հավանաբար, եղել են Հռոմում. այստեղ են նամակի առաջին հետքերը: Մեզ հայտնի է, որ Հռոմի հարուստ ու առատածեռն եկեղեցին օգնել է աղքատ եկեղեցիներին: Ներոնի կողմից իրականացվող հալածանքն այնպես, ինչպես նկարագրված է պատմաբան Տակիտոսի կողմից, համապատասխանում է այն հալածանքին, որին ենթարկվել էին այս նամակի հասցեատերերը: Հայտնի է, որ Հռոմում կար նաև հրեական մի ուժեղ գաղութ, որը մյուս ժողովականների շարքում համարվում էր հենց եբրայեցիների ժողովարան: Վերջապես, ողջույնի վերջնական խոսքը (նրանց կողմից, որ Իտալիայից են) կարող էր բացատրվել բավարար ձևով:

Պետք էր, ուստի, մտածել, որ այս նամակն ուղղվել է հռոմեական եկեղեցու հրեաքրիստոնեական մի խմբի, եկեղեցի, որտեղ, ինչպես ճշգրիտ ձևով հայտնի է, կային բազմաթիվ տարբերակված միաբանություններ:

Գ. ԳՐԵԼՈՒ ՏԱՐԵԹԻՎԸ

Նույն անորոշությունն է իշխում նաև տեղի ու տարեթվի հարցում: Դա կարող է լինել Իտալիան, քանզի հեղինակը սպասում է Տիմոթեոսի ազատմանը: Տարեթիվը պետք է, որ տեղավորվի Երուսաղեմի կործանումից առաջ ընկած ժամանակաշրջանում, որովհետև զոհաբերական համակարգը դեռևս ուժի մեջ է Տաճարում: Հետևապես, կարելի է մտածել, որ նամակը գրվել է 70 թ. առաջ: Որոշ մասնագետներ ենթադրել են ավելի ուշ՝ 80 թ. հետո ընկնող տարեթիվ, մի իրողություն, որը խոսում է քրիստոնյաների երկրորդ սերնդին պատկանող հասցեատերերի օգտին: Մենք բացառում ենք ուշ տարեթիվը, որովհետև բնագիրը ենթադրում է հրեական պաշտամունքի գործառնությունը: Բացի այդ՝ նամակի բովանդակության մեջ պարզորոշ ձևով ակնարկ է արվում այն մասին, որ հրեաներին, ում դիմում է նամակը, դեռևս չափազանց գրավում է այս պաշտամունքը:

Քրիստոսի երիտասարդ եկեղեցու համար ժողովարանը լուրջ սպառնալիք էր, քանզի այն իր իսկ համար պահանջում էր հրեական ավանդույթի իշխանություն: Հալածանքն իր հերթին դառնում էր մեկ ուրիշ լուրջ սպառնալիք: Հասցեատերերը հավատքը լքելու վտանգի առաջ էին: Բայց այս դեպքում նրանք ինչպե՞ս էին վերաբերվում Քրիստոսի փառքին: Փառավոր անցյալի ժառանգորդ հրեաները տեր էին օրենքի, Տաճարի ու զոհաբերություններ-

րի: Նրանք ունեին Աբրահամ, Մովսես, Սամուել, Դավիթ, քահանաներ, մարգարեներ և թագավորներ: Քրիստոնեական հավատքի եկած հրեաները դիտվում էին իբրև ուրացողներ, որտեղից էլ հեղինակի բազմատեսակ լուրջ պատգամները.

- թույլ մի՛ տվեք ձեզ հեռանալ աստվածային բաներից, մի՛ անտեսեք Քրիստոսով փրկությունը.

- մի՛ դաժանացրեք ձեր սրտերը, մի՛ եղեք անհավատ.

- մի՛ մնացեք լճացած.

- մի՛ արհամարհեք փրկությունը, կամավոր ձևով մեղք մի՛ գործեք.

- մի՛ մերժեք նրան, ով խոսում է երկնքից, անտարբեր մի՛ եղեք նրա խոսքին, այլ

- քաջալերվե՛ք փոխադարձաբար և, հատկապես, քաջալերե՛ք նրանց, ովքեր տառապում են իրենց հավատքի պատճառով.

- հսկե՛ք աստվածուրացությունը՝ ապացուցելով Քրիստոսի նկատմամբ հավատքի գերազանցությունը:

Դ. ԱՌԱՆՁՆԱԴԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերը նշել ենք, որ այս նամակի ոճը չի հիշեցնում Պողոսի գրվածքների ոճը: Դա աչքի է զարնում առաջին իսկ տողերից: Դրանք վեհասքանչ են, հավասարակշիռ ու հարուստ հնչողությամբ: Առաջին դարերի հելլենիստ գիտնականները բացահայտել են այդ առանձնահատկությունը: Ըստ T. Manley-ն՝ ոճն ամենադասականն է՝ չհաշված Ղուկասի գրվածքներին:

Քանի որ քրիստոնյաները հալածված էին և, թվում է, պատրաստ էին հետ նահանջելու դեպի Տաճարի ծիսակարգը, հեղինակը նրանց հետ խոսում է երկակի մտադրությամբ. նրանց քաջալերել հավատարմության և ըմբռնել տալ Քրիստոսի հանդեպ հավատքի գերազանցությունը:

Ինչպես Հովհաննեսի նամակում, սկզբում չկա ողջույնի խոսք: Նամակը, սակայն, ունի եզրափակում: Ուսմունքն ու գործնական կյանքին վերաբերող խրատները միմյանցից անջատված չեն, ինչպես Պողոսի որոշ նամակներում: Այս նամակը հայտնում է Հիսուս Քրիստոսի վերջնական նպատակը: Նա Աստծու վերջին Հայտնությունն է. այդպիսին է իբրև Միջնորդ՝ Աստծու և մարդկանց միջև: Ոչ մի «կրոն» այսուհետ չի կարող գերազանցել նրանում դրված հավատքը:

Ե. ՆԱՍՎԿԻ ԼՈՒՐԸ

Հեղինակն ինքը հայտնում է իր նպատակն ու գրվածքի բնույթը՝ այն ներկայացնելով իբրև հորդոր: Նամակի սկզբից մինչև վերջ, որի ընթացքում դոգմատիկ մանրամասները հերթափոխում են գործնական խորհուրդներին, հեղինակը ցանկացել է միայն մի բան. խրատել ընթերցողներին: Եբրայեցիներին ուղղված նամակը չի ձգտում միտքը գաթակղել հնարամիտ ու տեսական շարադրանքով, այն նպատակ ունի ընթերցողներին հասնել նրանց կյանքում՝ հղելով կյանքը վերափոխող խոսք: Արտաքուստ նամակը չպետք է պատրանք ստեղծի մեզ համար. այն ներկայանում է հնարամիտ ձևով, մշակված աստվածաբանա-

կան տրակտատի տեսքով. նյութերը, որոնցից օգտվում է, և ձևը, որով ի մի է բերում դրանք, երբեմն տարօրինակ են թվում թե՛ մեր մտածողությանը, թե՛ մեր կյանքին: Բայց Աստվածաշնչի բոլոր գրքերի պես՝ այս մեկը ևս Աստծու խոսք է՝ ուղղված մեր որոշակի կյանքին:

Ո՞րն է հորդորի բովանդակությունը: Ինչ-որ իմաստով դա նույնն է, ինչ Աստվածաշնչի բոլոր գրքերինը. հորդորել՝ հավատալու, որ Հիսուս Քրիստոսը փրկություն բերողն ու իրականացնողն է: Նամակի հեղինակը, ինչպես աստվածաշնչյան յուրաքանչյուր հեղինակ, ուզում է վկայություն տալ փրկության այն գործի մասին, որ Աստված իրականացրել է մարդկանց համար՝ իր Որդու միջոցով, իսկ այս վկայությունը տրվում է, որպեսզի մենք հավատանք: Բայց քանի որ նա դիմում է առանձին ընթերցողների, ում ճանաչում է իրենց պայմաններով, թերություններով ու գայթակղություններով, ապա հորդորը ստանում է առանձնահատուկ բնույթ: Աստված խոսեց իր Որդով. սա է այն պնդումը, որը հիմք է նամակի ամբողջ լուրի համար: Հեղինակն ուզում է ցույց տալ, թե Աստված ինչպես է մեզ հետ խոսել իր Որդու միջոցով և թե ինչ է ասել: Արդ, քանզի նա դիմում է հրեական ծագում ունեցող ընթերցողների, ապա անմիջականորեն բախվում է աստվածաբանական մի էական խնդրի: Եվ այս խնդիրը, որը նամակի թեման է, Հին Կտակարանի՝ քրիստոնեական հավատքի համար ունեցած նշանակության խնդիրն է:

Մի բան հավաստի է և անվիճելի, ինչպես հեղինակի, այնպես էլ ընթերցողների համար. Աստված խոսել է Հայրերի հետ, և Հին Կտակարանը Աստծու այդ խոսքի տեքստն է: Ի՞նչ կապ կա Հայրերին ուղղված խոսքի և Որդու միջոցով ասված խոսքի միջև: Եբրայեցիներին ուղղված նամակի պատասխանը սահմանափակվում է քիչ բառերով: Հիսուս Քրիստոսը Հայրերին ասված խոսքի բովանդակությունն է: Եթե այս խոսքը զուրկ է բովանդակությունից, ապա իմաստ չունի: Եթե Հին Կտակարանը չի խոսում Հիսուս Քրիստոսի մասին, ապա Աստծու խոսք չէ: Հին Կտակարանի քրիստոնեական այս հասկացողությունն է միայն հնարավորություն տալիս հասկանալ, որ այժմ, երբ Հիսուս Քրիստոսը հայտնվել է մարմնապես, Աստված ինչ է ասել Հայրերին: Այս խոսքը շղարշված է, եթե այն կարդում ենք Հիսուս Քրիստոսի հավատքից դուրս: Բայց երբ սրտով դառնում ենք Հիսուս Քրիստոսին, ապա շղարշն ընկնում է, և աստվածային խոսքը դառնում է լսելի: Հին Կտակարանի՝ քրիստոնեական հավատքի համար ունեցած նշանակության խնդիրը նամակում շոշափված է շատ մանրամասնորեն ու հայացքների մեծ խորությամբ, բայց ոչ ամբողջապես: Հեղինակի համար ամենակարևորը (քանի որ ուզում էր կատարել պրակտիկ գործ և քիչ էր մտահոգված աստվածաբանական ամբողջական տրակտատ ստեղծելու հարցով) ընթերցողներին հենց այն տարածքում հանդիպելն էր, որտեղ նրանք վիճաբանում էին միմյանց հետ: Նա մտադիր է շոշափել խնդրի դիտանկյան հարցը. դա կենսական է նրանց համար և, ճշմարտությանը համապատասխան լուծում չստանալու պատճառով, կդառնար հավատքը կորցնելու և անհավատության կամ հրեական ուղղահավատության մեջ ընկնելու առիթ: Մտածելով նաև հասցեատերերի անձնական պայմանների, մասնավոր մարտերի ու որոշակի գայթակղությունների մասին, որոնց պետք է դիմակայեր, հեղինակն անդրադառնում է հատկապես Հիսուս Քրիստոսի և Հին Կտակարանի պաշտամունքային կարգադրագրերի հարաբերությունների հարցին: Թեև այս հարցը լուսաբանված է առանձնահատուկ ձևով, Եբրայեցիներին ուղղված նամակը, առավել քան Նոր Կտակարանի մեկ այլ գիրք, կարող է մեզ օգնել խնդիրն իր ողջ ծավալով լուծելու գործում:

Խոսելով Հիսուս Քրիստոսի անձի ու գործի մասին, կապված, գլխավորապես, իսրայելական պաշտամունքային համակարգի հետ, հեղինակի գլխավոր փաստարկն այն է, որպեսզի ցույց տա, որ ՄՈՎՍԵՍԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆՈՒՄ ԱՍՏԾՈՒ ԿՈՂՄԻՑ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԸ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԽԱՉԻ ՎՐԱ ՁՈՂԱԲԵՐՎԵԼՈՒ ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆ ԷՐ:

«Մարգարեական պատկեր» արտահայտությունը կարիք է զգում որոշ բացատրությունների: «Պատկեր»-ի տակ պետք է հասկանալ որևէ բանի արտաքին տեսքը, ներկայացումը: Պատկերը ներկայացվող առարկայի իրականությունը չէ: Պատկերն ունի սեփական իրականություն, որը պատկանում է ոչ թե առարկաների, այլ պատկերացումների աշխարհին: Պատկերի իրականությունը ներկայացված առարկայի իրականության արտացոլքն ու նրա նկատմամբ հավատարմությունը չէ: Այսպիսին է իսրայելական պաշտամունքը. այն Հիսուս Քրիստոսի զոհաբերության հավատարիմ ներկայացումն է, ունի սեփական իրականություն: Բայց նրա միակ իրականությունը, միակ արժեքը Հիսուս Քրիստոսի զոհաբերության պատկերը լինելն է: Դրան մեկ այլ արժեք հատկացնելը, քան նշված արժեքն է, և դրանում ոչ թե պատկեր, այլ ինքնին առարկա տեսնելը կնշանակի իսրայելական պաշտամունքն ամբողջապես զրկել իր իմաստից, այն իջեցնել կռապաշտական արարողության շարքը: Սա է հենց հրեական մոլորությունը, որից ընթերցողներին պաշտպանել է ձգտում հեղինակը:

Այս պատկերը մարգարեական է ոչ միայն այն պատճառով, որ ներկայացնում է իրականությունը, այլև որ հայտարարում և ստեղծում է այս իրականության սպասումը: Իսրայելական ամբողջ պաշտամունքը, մասնավորապես քավության ամենամյա արարողությունը, որն, ասես, դրա համառոտ ամփոփումը լինի, նպատակ ունի ժողովրդի հայացքն ուղղել դեպի այն պահը, երբ կհայտնվի Քրիստոսը և երբ Խաչի վրա իրապես կիրականացնի այն, ինչը մինչև նա գոյություն ուներ միայն իբրև պատկեր: Պաշտամունքային յուրաքանչյուր ծես Աստծու Խոսքի մի բառ էր, որ Իսրայելին հայտնում էր Փրկչի գալուստը: Սրբարանի բոլոր զոհաբերությունները, Իսրայելի դարավոր պատմության ընթացքում, ասես կիլոմետրեր նշող սյուներ լինեն, որոնք ցույց են տալիս մեր առջև գլորվող ճանապարհը՝ հայտնելով, որ ավելի ու ավելի ենք մոտենում ճանապարհորդության ավարտին:

Ցույց տալով, որ Հիսուս Քրիստոսը Աստծու՝ իրենց հայրերին ուղղված Խոսքն է, և որ միայն նա կարող է իմաստ հաղորդել Հին Ուխտի Սուրբ Գրքին, ուղերձի հեղինակն երբայցիներին ուզում է ապացուցել, որ Հին Կտակարանը, ըստ էության, ընդամենը Քրիստոսի մի մեծ առակ է: Բացատրելով այս առակը՝ հեղինակը նրանց օգնում է ավելի լավ ճանաչել Հիսուս Քրիստոսին, ըմբռնել նրա անսահման գերազանցությունը բոլոր նրանց նկատմամբ, ովքեր իրեն նախորդել են և ավելի հավատարմորեն կապված մնալ նրան: Այսպիսով, ամբողջ նամակը նրանց համար հորդորի խոսք է:

Մեզ՝ այսօրվա քրիստոնյաներիս համար նույնպես այս ուղերձը հորդորի խոսք է: Մեզ ցույց տալով, որ Հին Կտակարանը Հիսուս Քրիստոսի մեծածավալ մի առակ է, և բացատրելով այն, նամակն օգնում է ավելի լավ հասկանալ «Հիսուս Քրիստոսին, որին Հին Կտակարանը համարում է իր սպասումը, Նորը՝ իր մանրատիպը, իսկ երկու Կտակարանները՝ իրենց կենտրոնը»¹, և հավատարիմ մնալ նրան:

¹ Բլեզ Պասկալ:

Հիսուս Քրիստոսի գործն, իրոք, կարող ենք ճանաչել միայն այն ժամանակ, եթե այն դիտարկենք Հին Կտակարանի հետ ունեցած կապի մեջ: Դա է պահանջում Հիսուս Քրիստոսի հենց անունը: Ամեն անգամ, երբ ասում ենք Հիսուս Քրիստոս, խոստովանում ենք, որ Նազովրեցի Հիսուս Քրիստոսն է, այսինքն՝ Աստծու Օծյալը՝ Իսրայելին խոստացված Մեսիան: Արդ, բավական չէ միայն իմանալ, որ նա Քրիստոսն է: Պետք է նաև իմանանք, թե դա ինչ է նշանակում: Մեզ առաջարկվում է միայն մի հնարավորություն, հասկանալ, թե Աստված նրա մասին ինչ է ասել Հին Կտակարանում:

Նոր Կտակարանի բոլոր հեղինակների հետ այս ուղերձի հեղինակը կրկնում է այն, ինչ Փիլիպպոսն ասում էր Նաթանայելին. «Մենք գտել ենք նրան, ում մասին Մովսեսը խոսել է Օրենքում, և ում մասին խոսել են նաև մարգարեները. այն Նազովրեցի Հիսուսն է՝ Հովսեփի որդին (Հովհ. 1:45): Բայց և հենց դա է նրա առանձնահատուկ լուրը, նամակը համաձայնություն է հաստատում նախկինում Հայրերին ասված խոսքի և այսօր Որդու կողմից ասված խոսքի միջև՝ ցույց տալով, որ Նա եղել է մի նոր Ուխտի քահանայապետ, և որ նրա քավիչ զոհաբերության շնորհիվ՝ այժմ կարող ենք լիովին վստահորեն մոտենալ Ողորմածության գահին:

Ձ. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՔՐԻՍՏՈՍԸ ԲԱՐՁՐ Է ԻՐ ԱՆՁՈՎ

Բարձր է մարգարեներից՝ 1:1-4:16, 1:3

Բարձր է հրեշտակներից, պատգամ՝ 1:4-14, 2:17

Բարձր է՝ իջնելու իր կամքի պատճառով՝ 2:5-18

Բարձր է Մովսեսից՝ 3:1-4:16

ՀՈՐԴՈՐ

միջոցներ ձեռնարկել հանգստի մեջ մտնելու համար՝ 4:6-11

չթերագնահատել Աստծու խոսքը՝ 4:12-13

ողորմածության գահին մոտենալ կարեկցող, հովանավորող Քահանայապետի միջոցով՝ 4:14-16

ՔՐԻՍՏՈՍԸ ԲԱՐՁՐ Է ԻՐ ՔԱՅԱՆԱՅԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ՝ 5:1-10:18

Նա պատասխանում է գերագույն Քահանայապետի պահանջներին՝ 5:1-10

հանդիմանություն անտարբերության համար՝ 5:11-6:8

Հիսուսը Քահանայապետ է՝ ըստ Մելքիսեդեկի կարգի՝ 7:1-28

Այս գործով Քրիստոսն իրականացնում է Հին Կտակարանը՝ 8:1-10:18

երկու քահանայությունները համեմատվում են՝ 8:3-6

համեմատվում են երկու Կտակարանները՝ 8:7-13

համեմատվում են երկու խորանները՝ 9:1-12

համեմատվում են արյան երկու տիպերը՝ 9:12-28

համեմատվում են երկու պատարագները՝ 10:1-10

վերջնական համեմատություն մեղքերի քավության վերաբերյալ՝ 10:11-18

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ 10:19-13:17

1. մնալ հավատարիմ՝ 10:19-39
մոտենալով Աստծուն՝ 19-25
խուսափելով աստվածուրացությունից՝ 26-31
հիշելով անցյալը՝ 32-34
սպասելով Քրիստոսի Վերադարձին՝ 35-39
2. ընդօրինակել հավատքի հերոսներին՝ 11:1-40
3. դիմանալ պատժին՝ 12:1-24
նայելով Հիսուսին՝ 12:1-3
պատիժն ընդունելով իբրև հոգևոր անհրաժեշտ առարկա՝ խուսափելով
ընդօրինակել Եսավին՝ 12:14-17
4. մի վերջին երեք հորդոր՝ 12:25-13:17
5. լինենք երախտապարտ՝ 12:25-29
6. հաստատ մնանք մեր առաքինությունների մեջ՝ 13:1-6
7. նրա հետ միասին գնանք «բանակից դուրս»՝ 13:7-17
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 13:18-25

ՀԱՎԵԼՎԱԾ

Է. ՀԱՍՏԱՏԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՎԱՏՔԻ ՄԵՋ

Եբրայեցիներին ուղղված նամակը գրվել է մեկ կամ բազմաթիվ համայնքների, որոնք, թվում է, կորցրել են իրենց առաջին սերը, և որոնք, ինչպես հետապնդման վտանգի առջև, այնպես էլ Հին Կտակարանի կրոնին շնորհված չափազանցված կարևորությունից մղված՝ լքում են ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ հանդեպ հավատը:

Այս նամակը հնչում է իբրև եղջերափողի հնչեցրած կոչ և իր հասցեատերերին հրավիրում է վերադառնալ շարքերն ու հաստատ մնալ, քանզի Հիսուսը գերազանց է Հին Կտակարանի կերպարներից, և որ նրա քավիչ գործը գերազանցում է ծիսական նախկին զոհաբերություններին: Այն նաև հիշեցնում է, թե նրանից առաջ այլոք ինչպես են դիմացել նույն ճանապարհին: Եբրայեցիներն, ուրեմն, աստվածուրացության ճանապարհին են, և նրանց սպառնացողը սոսկ անցողիկ մեղք չէ:

Ո՞րն է այս հորդորի առօրեականությունը, և Բողոքական ուսմունքն ի՞նչ է հասկանում «Սրբերի հաստատակամություն» արտահայտությունն ասելով:

Աստվածաշնչի ամբողջ շարադրանքի մեջ հանդիպում ենք այն անդամը, որ հաստատակամությունն անխզելի կապերով կապված է Փրկություն համոզմունքին, բայց ոչ այն իմաստով, որ հաստատակամությունը Աստծու հետ մարդու համագործակցությունն է՝ հանուն փրկության, քանի որ փրկվել ենք դեռևս այն ժամանակ, երբ մեղավորներ էինք, փրկվել ենք Հիսուսի հրաշալի զոհողությամբ: Միայն Աստված է նախաձեռնում Փրկչության գործը, և միայն նա է այն ավարտին հասցնում:

Այսուհանդերձ, հաստատակամությունը ներհատուկ է հավատքին, որով արդարացված ենք: Կենդանի այս հավատքն արտահայտվում է հնազանդության ու երախտագի-

տության բարի գործերով, այսինքն՝ լիովին այլ բան է, քան դևերի ու կեղծ հավատացյալների հավատքը: Դա փրկության առաջարկին՝ Աստծու գերագույն պարգևին, տրված անհրաժեշտ պատասխանն է: Հավատքի հաստատակամության ակունքն Աստծու Հավիտենական հորհուրդն է և հիմնվում է խոստումների վրա (Եբր. 4 և 10): ԱՅՆ ՀԻՄՆՎՈՒՄ Է ՔՐԻՍՏՈՍԻ ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾԻ ԵՎ ՔԱՅԱՆԱՅԱՊԵՏԻՆՐՈՎ ԱՐԴԻ ԳՈՐԾԻ ՎՐԱ: Բազմաթիվ տեքստեր հավաստում են այս բանը, և դրանցից մեկը հետևյալն է. «Նա չի զղջում իր կանչի համար»: Աստծուն և նրա խոստումները լուրջ ընդունող հավատացյալը գիտե, որ եթե հաստատակամությունը պարզ և, ապա նաև պատասխանատվության իր մասնաբաժինն է: Նա պետք է մնա Քրիստոսի մեջ, մնա զգոն, դիմանա մինչև վերջ, չտխրեցնի Հոգին, ամրապնդի իր կոչումն ու ընտրությունը, ամուր ու անսասան մնա հավատքի մեջ: Առանց այս հնազանդության՝ Աստված մեզ չի պահպանում:

Այս պատճառով է ուղերձը հիշեցնում, որ Աստված ամենակուլ կրակ է: Չի կարելի ծաղրել նրան: Նրանք, ովքեր լուրջ չեն մոտենում Աստծուն և կարծում են, թե կարող են հաշվի չնստել նրա պահանջների հետ, չարաչար սխալվում են: Աստված իր չէ, որն ընդունում կամ հերթով դեն են նետում՝ քմահաճույքից ելնելով: Այն կուռք չէ, որից օգտվում են, երբ զգում են կարիքը, և անմիջապես մոռանում՝ առիթի դեպքում դրան վերադառնալու համար:

Կյանքից մինչև մահ, անհավատությունից մինչև իսկական հավատք անցնում են միայն մեկ անգամ: Եբրայեց. 6:4 տողը բացառում է երկրորդ հավատափոխության հնարավորությունը նրանց համար, ովքեր ճանաչելով ողորմածության գործն ու մասնակցելով դրան, ետ են նահանջում և վերջնականապես կործանվում՝ ինչ վերաբերում է հավատքին: Մենք ունենք բոլոր հիմքերը կարծելու, որ այս հատվածը վկայակոչում է ոչ թե Աստծու իսկական զավակներին, այլ արտաքուստ քրիստոնյա մարդկանց ինչ-որ մի կարգի, ովքեր մաս ունեն աստվածային պարգևների մեջ և անցել են մի փոքրիկ ճանապարհ: Չնայած այս բանին՝ նրանք հրաժարվում են լիովին պարտավորվել հանուն Աստծու՝ գերադասելով ետ նահանջել, որովհետև սեփական հավատարմության գինը նրանց թվում է չափազանց բարձր: Ոմանք մտածում են, թե կարող են հավատքի գալ հենց մահվանից առաջ: Դա այնքան հարմար է...

Մինչդեռ, առանց սրբերին բնորոշ հաստատակամության, չկա փրկություն: Ծշմարիտ է, որ այս մարդկանց դաժանացումը միշտ չէ, որ լույս աշխարհ է գալիս. Եկեղեցին չի կարող դատել կամ չափանիշներ ու նաև սահմանաբաժան հստակ գծեր հաստատել, որոնք պարզորոշ ձևով սահմանեն, թե որ պահին է գործվել աններելի մեղքը: Միայն Աստված է ճանաչում սրտերն ու չափում դրանց խորքը: Նրա հոսքը մեզ զուշացնելու համար է, որպեսզի չանցնենք սահմանաբաժան գծից այն կողմ, որտեղից անհնարին կլինեք հետ վերադառնալ՝ անգամ լալով ու ողբալով: Ուստի, պետք է զգոն մնալ, քանզի նա, ով այդպիսին չէ, իրավունք չունի մտածել իր փրկության հավաստիության մասին:

Քրիստոնեական ամեն համոզմունք հիմնված է Հիսուսի հետ կայուն հաղորդության վրա: Եթե համոզված ես, որ Աստված իրականացնում և շարունակում է իրականացնել «կամքն ու գործը», ապա ուրեմն «զարհուրանքով ու դողով» աշխատիր հանուն քո փրկության: Հոգու պտուղները՝ զղջումը, գուրքը, եռանդը, աղոթքը դիտվում են իբրև մեր ընտրության ու հաստատակամության նշաններ: Իսկական հավատացյալները միշտ չէ, որ խու-

սափում են գայթակղությունից կամ մեղքից: Բայց նրանց անկումը վերջնական չէ: Աստվածաշունչը մեզանից չի թաքցնում հավատքի հերոսների որոշ ճշացող մեղքեր, բայց և ներկայացնում է նրանց գղջումը: Հավատքը երբեք մեղքը չի դիտում իբրև կարևորություն չունեցող իրողություն և կամ մշտական վիճակ: Հաստատականությամբ ու հավատքով իսկական հավատացյալը միշտ հաղորդության մեջ կլինի Աստծու հետ, որը երբեք չի արհամարհում «գղջացող ու հնազանդ» սիրտը:

Հնազանդորեն պետք է լսել ուղերձի հորդորը. «ջանացե՛ք մտնել այդ հանգստի մեջ»: Նաև կարողանանք մարգարեի հետ մեկտեղ հրճվել ստացված մխիթարանքի համար: «Երբ սարերը հեռանան, ու բլուրները երերան, իմ սերը չի հեռանա քեզանից, և խաղաղության իմ ուխտը ամենևին չի սասանվի. այսպես է ասում Եհովան, որը կարեկցում է քեզ»:

Գ Լ ՈՒ Խ 35

ՀԱԿՈՐՈՍԻ ՈՒՂԵՐՁ

Ա. ՀԵՂԻՆԱԿՆ ՈՒ ՎԱԿԵՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս նամակը չի տալիս հեղինակի անունը և անգամ չի ներկայանում իբրև առաքյալի գրչի պատկանող գրվածք: Հեղինակը պարզապես իրեն նկարագրում է իբրև «Հիսուս Զրիստոսի ծառա»: Անկասկած, ցանկացած այլ ճշգրտում նրան ավելորդ էր թվում: Նա մտածում էր, որ ընթերցողները կհասկանային, թե խոսքը որ «ծառայի» մասին էր: Ներածական խոսքից, սակայն, հասկանալի է դառնում, որ հեղինակը պետք է, որ մեծ հեղինակություն վայելած լիներ քրիստոնյաների մեջ և առաջնակարգ դեր խաղացած լիներ Եկեղեցում: Բնական է մտածել Հակոբոսի՝ Հիսուսի եղբոր մասին:

Նոր Կտակարանում հիշատակված են նույն անունը կրող բազմաթիվ անձինք:

- Հակոբոս՝ Ջեբեոսի որդին, Հովհաննեսի եղբայրը: Մասնակցել է տասներկուսի խմբին և մահվան դատապարտվել Հերովդես Ագրիպասի կողմից՝ 44 թ. (տես՝ Գործք 12):

- Հակոբոս՝ Ալփեոսի որդին. տասներկուսի խմբակի մի ուրիշ աշակերտ, որի մասին, անունից բացի, ոչինչ հայտնի չէ:

- Հակոբոս՝ Հիսուսի եղբայրը (Մատթ. 13:55, Գաղատ. 1:1): Մատթեոսը տալիս է այլ անձանց անուններ, որոնցից կազմված է Հիսուսի ընտանիքը՝ Հուդա, Հովսեփ, Հակոբոս: Վերջինս, ինչպես և իր եղբայրները, չհավատաց նրան (Մարկոս 3:21, Հովհ. 7:5): Համաձայն Ա. Կորնթ. 15:7 տողի՝ հարություն առած Տերը հայտնվեց Հակոբոսին, և այս պահից ի վեր անհավատ եղբայրը հավատաց Տիրոջը: Նա նաև միացավ տասներկու աշակերտներին ու դարձավ Երուսաղեմի Եկեղեցու զագաթնասյուններից մեկը (Գործք 12:7): Պողոս առաքյալը նրան կհանդիպի առաքելական երրորդ ճանապարհորդության ընթացքում:

Լինելով անբասիր վարքի տեր և ջերմեռանդ բարեպաշտությամբ մարդ՝ նա հավանա-

բար մարտիրոսավել է (քարկոծվե՞լ)՝ օրենքը խախտելու պատրվակով: Ավանդության համաձայն՝ հաճախակի ու անվերջանալի աղոթքներից նրա ծնկներն ամբողջովին եղջերացել էին, դարձել նույնքան կոշտ, որքան ուղտինը: Նրա անունը հայտնվում է «Գործք»-ի 15-րդ գլխում, որտեղ ղեկավարում է Երուսաղեմի տիեզերաժողովը, և նույն գրքի 21:18-25 հատվածում: Համաձայն Ա. Կորնթ. 9:5 տողի՝ ամուսնացած է: Հայտնի է «Արդար» կոչմամբ, ինչպես և հայրը՝ Հովսեփը (Մատթ. 1:19), և Հիսուսը (Հակոբոս 5:6): Ավելի քան հավանական է, որ նա լինի իր անունը կրող նամակի հեղինակը:

Բ. ԳՐԵԼՈՒ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ: ՀԱՍՑԵԱՏԵՐԵՐԸ

Նամակը չի կարող գրված լինել 62 թ. հետո, քանի որ, ավանդության համաձայն, այս թվականին է Հակոբոսը մահացել: Ենթադրյալ տարեթվերը տատանվում են 55 և 60 թթ. և կամ, անգամ՝ 44 և 49 թթ. միջև: Ումանք էլ այն տեղավորում են առաջին դարի վերջերում և նույնիսկ՝ երկրորդ դարի սկզբում:

Մենք մտքում կպահենք ամենահին տարեթիվը՝ 45 թ. մերձակայքում: Այս տարեթվի օգտին են խոսում հետևյալ փաստարկները: Նշվում է քրիստոնեական մեկ կամ բազմաթիվ մեծ ուսմունքների բացակայության փաստը, ուսմունքներ, որոնք այս ժամանակաշրջանում դեռևս մշակված չեն: Տվյալ ժամանակաշրջանում քրիստոնեությունը հայտնվում է գլխավորապես իբրև հրեական ըմբռնում: Դա ցույց է տալիս, որ հեղինակը նոր-նոր է դուրս եկել հրեականությունից: Տվյալ պահին չկա բախում հրեական ու հեթանոսական ծագում ունեցող քրիստոնյաների միջև, մի բան, որը նամակը գրելու տարեթիվը տեղավորվում է նախքան Երուսաղեմի տիեզերաժողովն ընկած ժամանակաշրջանը:

Բացի այդ՝ նամակում չեն հիշատակվում առկա մեծ հերետիկոսությունները, ինչպես դա արվում է Նոր Կտակարանի առաքելական մյուս գրվածքներում: Եվ, վերջապես, այս տարեթվի օգտին է խոսում նաև ժողովարանի՝ իբրև առաջին քրիստոնյաների ծիսակատարությունների վայր հիշատակվելու փաստը: Քրիստոնյաները դեռևս տարբերակված չէին հրեաներից, իսկ հիշատակված մեղքերը բնությով այնպիսին են, որ կարող են հայտնված լինել հրեական հողի վրա:

Այս փաստարկները ենթադրել են տալիս, որ Հակոբոսի ուղերձը Նոր Կտակարանի գրվածքներից ամենաառաջինն է:

Հեղինակն իր նամակը ուղղում է սփռված Տասներկու ցեղերին: Խոսքը Պաղեստինի սահմաններից դուրս գտնվող հրեական ծագում ունեցող քրիստոնյաների մասին է: Նրանց բնորոշ է ճնշման ու հալածանքների տակ հուսահատվելու վտանգը, որը վնասում է հավատքին, եթե միայն չկապվեն քրիստոնեական ամեն մի առաքինությունից զուրկ հոգևոր որևէ հավատքի:

Հեղինակը խորապես համոզված է իր հեղինակության մեջ: Ուղերձի 108 տողերում օգտագործում է ոչ պակաս, քան 54 հրամայական: Նա քաջալերում է տոկալ գալթակողությանը դեմ հանդիման և զգուշանալ բարոյական սխալներից ու մոլորություններից:

2:1, 5, 7, և 5:7 հատվածներից բավականաչափ պարզ է դառնում, որ խոսքը ոչ թե ընդհանուր առմամբ հրեաների, այլ հրեական ծագում ունեցող քրիստոնյաների մասին է:

Այս իմաստով դա ընդհանրական նամակ է. ուղղված է Հիսուս Քրիստոսի ամբողջ եկեղեցուն: Հրեաների կողմից հիմնված այս եկեղեցիները սերտ կապի մեջ են Երուսաղեմի հետ և Հակոբոսին համարում են իրենց հոգևոր հայրը:

Գ. ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հակոբոսի ուղերձը «ընդհանրական» կոչված յոթ նամակներից մեկն է (մյուսներն են՝ Պետրոսի Ա և Բ, Հովհաննեսի Ա, Բ, Գ և Հուդայի նամակները): Դրանք գրվել են չորս հեղինակների կողմից, որոնցից երկուսը առաքյալներ են (Պետրոսն ու Հովհաննեսը), իսկ մյուս երկուսը Հիսուսի եղբայրներն են: Եթե այս նամակները համեմատենք իրար հետ, ապա կարող ենք հաստատել, որ Հակոբոսի նամակը գլխավորապես բարոյախոսական բնույթի է, Պետրոսինը՝ «փորձնական»: Հովհաննեսն իր նամակներում գրում է ճշմարտության մասին, մինչդեռ Հուդան զբաղվում է խրատելով: Հետաքրքիր կլիներ նաև այս չորս հեղինակներին համեմատել Պողոսի հետ: Վերջինս, թեև ոչ միակողմանիորեն, զարգացնում է քրիստոնեական ուսմունքը, Հակոբոսը զբաղվում է քրիստոնեական կյանքով, Պետրոսն ուսուցանում է Քրիստոնյայի փորձությունների թեմայով, Պողոսը շեշտը դնում է ուսմունքվարդապետության, Հակոբոսը՝ գործերի, Պետրոսը՝ հույսի, իսկ Հովհաննեսը՝ սիրո վրա:

Ինչպես ձևով, այնպես էլ բովանդակությամբ, Հակոբոսի նամակն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում առաքելական նամակների շարքում: Այն հիշեցնում է «Առակաց»-ը: Այդտեղ հանդիպում ենք Հին Կտակարանին արված բազմաթիվ հղումների (ավելի շուտ՝ ակնարկների): Այս նամակը հայելի է, որն արտացոլում է Քարոզը Սարի վրա, ուրախությունը փորձության մեջ, կատարելությունը, աղոթքի կատարումը, հնազանդությունը, զայրույթի դատապարտումը, գթասրտությունը, հավատքի դավանումը, խաղաղությունը, սերը, չղատելը, աշխարհի հարստությունների ժամանակավոր լինելը, մարգարեների օրինակին հետևելը և այլն: Փոխարենը՝ աղքատ է քրիստոնեական հավատքի էական պնդումների տեսակետից: «Ավետարան» բառը բոլորովին չի հիշատակվում: Քրիստոսի անունը հայտնվում է միայն երկու անգամ: Ոչ մի ակնարկ չի արվում մարմնացման, ոչ էլ փրկչության, հարության ու համբարձման վերաբերյալ: Դա բացատրվում է ուղերձի հիմնականում գործնական բնույթով, որն, այսուամենայնիվ, ունի տեսական խոր նշանակություն: Այս են ապացուցում չարի, հավատքի ու գործերի, լեզվի, իմաստության երկու տեսակների, աղոթքի և այլնի վերաբերյալ դասական հատվածները:

Առանձնահատուկ հանգամանքները Հակոբոսին չեն դարձնում այս նամակի հեղինակը: Նրա նպատակը, թվում է, եկեղեցիներում, որոնք այժմ հրեա-քրիստոնեական են, հավատքի անհետևողականությունների դեմ պայքարելն է առօրյա կյանքում: Աստված չի գոհանում միայն զուտ մտավոր ճակատով բարեպաշտությամբ (դևերը նույնպես հավատում են): Առանց ինքն իրեն պարտադրելու խիստ տրամաբանական որևէ կարգ՝ հեղինակը մեկը մյուսի հետևից հարձակում է գործում այս արատների դեմ, դրանք բնութագրում այրող խոսքերով, խարազանում ու դատապարտում սուրբ ու վրդովված գիտակցությունից բխող պերճախոսությամբ:

Համեմատել, օրինակ, հետևյալ հատվածները.

- Փորձության մեջ անհամբեր ու անհնազանդ լինելու դեմ 1:2-9

- Մակերեսայնության և ձևականության դեմ 1:19-27
- Ամեն տեսակ խտրականության դեմ 2:1-13
- Մեռած հավատքի դեմ 2:14-26
- Լեզվի գործած մեղքի դեմ 3:1-18
- Ամբարտավանության այլ ձևերի դեմ 4:1-17
- Անհամբերության ու անհնազանդության դեմ 5:7-20

Նշված առանձնահատկությունների շարքում պետք է ընդգծենք մի շարք նմանություններ Հիսուսի վարդապետության հետ: Այստեղ կգտնենք մեր Տիրոջ խոսքերի արձագանքը. ասվածն ապացուցելու համար բավական է համեմատել Հակոբոս 5:12 և Մատթեոս 5:34-35 և 37 հատվածները: Այլ օրինակները ևս շատ են: Այսպես, այս գրվածքում կարելի է հանդիպել նաև Լեռան Քարոզից «հատվածների» և կամ Երուսաղեմի կործանման մասին արված հայտարարությանը: Հետաքրքիր կլիներ համեմատել մի շարք հատվածներ Մատթեոսի 5-րդ, 7-րդ գլուխների և Հակոբոսի գրվածքի միջև¹:

Նոր Կտակարանի ուրիշ ոչ մի նամակ չի առաջարկում Հիսուսի վարդապետություններին անուղղակիորեն արված ակնարկների նման բազմազանություն: Պետք չէ զարմանալ աչքի ընկնող այս նմանությունից, հատկապես՝ Լեռան Քարոզի ու այս նամակի միջև: Չէ՞ որ Հակոբոսն ու Հիսուսը մարմնական եղբայրներ են: Այսուհանդերձ, Հակոբոսը չի ձգտում շեշտել մարմնական ազգակցական կապը: Նա շատ համեստորեն ներկայանում է իբրև «Աստծու և Հիսուս Քրիստոսի ծառա»:

Աերտ նմանություն գոյություն ունի նաև նամակի դարձվածաբանության և Հակոբոսի խոսքերի միջև, որ ներկայացնում է Ղուկասը՝ «Գործք»-ի 15-րդ գլխում: Դա առավել պարզորոշ է երևում բնագրից (հմմ. Գործք 15:23-ը Հովհ. 1:11, Գործք 15:33-ը՝ Հովհ. 2:5, Գործք 15:14-ը՝ Հակոբոսի 1:16, 19 և 2:5 հատվածների հետ):

Մեր նամակը մյուս, մասնավորապես «ընդհանրական» կոչված նամակներից տարբերվում է նաև ծայրաստիճան բարոյախոսական բնույթով: Դրանով այն մեզ տարօրինակ ձևով հիշեցնում է Հին Կտակարանի «Առակաց»-ը: Այս գրքում ապարդյուն կփորձեն գտնել նաև ս. Պողոսի աստվածաբանական պնդումների պես պնդումներ: Սակայն «Առակաց»-ը չի առաջարկում մարդկային համընդհանուր իմաստության պարզ օրինակ և կամ ուսմունք մարդկային բարոյականության վերաբերյալ, այլ, ավելի շուտ, օրենքի մեկնաբանություն, որի նպատակը Աստծու ժողովրդին գործնականորեն առաջնորդելն է: Հենց այս Ուխտն է «Հակոբոսի իմաստության» ետնապլանը: Թեև նա ծավալուն չի խոսում փրկության մասին, որ Քրիստոսով մեր փրկությունն է, այս բանը ենթադրել է տալիս՝ առօրյա կյանքի համար առաջարկելով գործնական իր իմաստությունը և խոսքը, որ գերագույն իմաստությունն է, արտահայտում առակների ձևով: Քրիստոսն, արդյոք, չի՞ դարձել մեր Իմաստությունը (Ա. Կորնթ. 1-30): «Առակաց»-ը չի շոշափում մեսիական հույսի խնդիրը: Նույն ձևով էլ Հակոբոսը մշակված վկայություն չի տալիս Հիսուս Քրիստոսի Անձի ու Առաքելության մասին: Սակայն, նամակում ենթադրություն է արվում Եկեղեցու դավանաբանության մասին և մի փոքրիկ հայտարարություն է արվում, որով Հիսուսը չի դառնում բարոյախոսության սովորական վարդապետ:

¹ Զուգահեռաբար դիմել նաև Աստվածաշնչին:

Վերջապես նշենք, որ նամակի գրական ու ճարտասանական բնույթը բարձր է. գրված է հրաշալի հունարենով, ունի պատկերավոր ոճ, որը մասնավորապես հիշեցնում է եբրայեցի մարգարեների ոճը: Բովանդակում է բնութային քաղված ավելի շատ պարզաբանումներ, քան Նոր Կտակարանի բոլոր մյուս գրվածքները: Դա հիշեցնում է Սինոպտիկական Ավետարաններում մեր Տիրոջ ոճը:

Այս տոնը և նամակը բովանդակող նյութը արտացոլում են գրելու տարեթիվն ու հանգամանքները՝ պաղեստինյան մթնոլորտը: Կարելի է նամակը որակել նաև իբրև հորդորմիսիթարություն. ազդվել է Ավետարանի ավանդույթից՝ առանց, այսուհանդերձ, ունենալու գրական բացարձակ կախվածություն:

Դ. ՀԱԿՈՐՈՍՆ ՈՒ ՊՈՂՈՍԸ

Սեկ դրվագ էլ նվիրենք Հակոբոսի ու Պողոսի հարաբերությանը:

Հետևելով Լյուբերի օրինակին՝ Հակոբոսին համարել են հեթանոսների առաքյալի հակառակորդը: Գերմանացի բողոքականի սխալ ու ցավալի այս դատողությունը հիմնված էր Գաղատացիներին ուղղված նամակի 2:12 տողի մեկնաբանության վրա: Այստեղ, թվում է, Պողոսը հավատքն ընդգծում է իբրև Քրիստոսով նոր կյանքի էական տարր: Հակոբոսն իր հերթին ապացուցում է, որ հավատքը կարող է ապրել միայն գործնական կյանքում: Թեև հետևում է Հին Կտակարանի դրույթներին՝ նրան չի կարելի համարել հրեական կրոնի ջատագով: Նա չի ձգտում պարտադրել Հին Ուխտի հաստատությունները: Նոր Կտակարանում ոչ մի տեղ չի հայտնվում իբրև Պողոսի հակառակորդ: Ընդհակառակը, թվում է, որ նրանց միջև եղել են լավ հարաբերություններ (Գաղատ. 1:19, 2:9): Եթե Պողոսը հակադրվում է Հակոբոսի որոշ պատգամների (Գաղատ. 2:12), ապա խոսքն ամենևին էլ նրա ու Հակոբոսի միջև բախման մասին չէ: Անգամ կարելի է ասել, որ Հակոբոսն իրեն դրսևորում է իբրև Պողոսի գործի պաշտպան (Գործք 15:13-29): Մինչև վերջ նա մնում է հեթանոսների քարոզչի բարեկամը (Գործք 21:18-25): Անշուշտ, կարող ենք պնդել, որ, որոշ իմաստով, երկուսը նույն թեմային նայում էին տարբեր անկյուններից: Բայց, ինչ էլ որ լինի, Հակոբոսի համար էականը հավատքն է (1:3, 6, 2:1-5, 22-24, 5:5, 15): Նրա կողմից խստորեն քննադատվող հավատքը մեռած ուղղափառ հավատքն է, որին Պողոսը նույնպես կհակադրվեր հոգու ու մտքի ողջ ուժով: Չէ՞ որ հավատքով արդարացման կողմնակից առաքյալը վճռականորեն կողմ է բարի գործերի, որոնք էլ հենց դիտվում են իբրև հավատքի պտուղներ (Հռոմ. 2:6-10, Բ. Կորնթ. 9:8, Եփես. 2, Կողոս. 1:1-4, Ա. Թեսաղ. 1:3, Բ. Թեսաղ. 2:17): Եթե ամսոսայինք Հակոբոսի գործնական վարդապետությանը, ապա հարկ կլիներ ցավել նաև անձամբ Հիսուսի վարդապետության համար:

Հակոբոսը ջանում է հավատափոխ քրիստոնյաներին զգուշացնել ինչպես հեթանոսությունից, այնպես էլ մովսիսական օրենքի ամբողջ բեռը կրելուց (Գործք 15:13-21): Հակոբոսը չի խոսում ծիսական օրենքը պահպանելու մասին, սակայն նրա մտահոգությունը ազատության կատարյալ օրենքի մասին է (1:15): Այս բանը նա հիշեցնում է իր ընթերցողներին (2:8) և, ընդգծելով այս կետերը, հետևում Պողոսի բռնած ճանապարհին (Հռոմ. 13:8): Նա շեշտում է հավատքի առաջնայնությունը: Երբ Պողոսը մերժում է գործերով արդարացման

հնարավորությունը, ապա խոսքը օրենքին մանրակրկիտ ձևով հարելու հիմքի վրա եղած արդարացման մասին է: Երբ Հակոբոսը խոսում է «գործերի» մասին, ապա դրա տակ չի հասկանում օրենքին ստրկաբար ենթարկված քրիստոնեական կյանք:

Կենդանի հավատքը, սակայն, պետք է դրսևորվի այլ կերպ, քան մեռած ուղղահավատության մեջ: Այս կետում Պողոսը միանգամայն համաձայն կլիներ նրա հետ: Ասենք, նա այս մասին չի՞ գրում, արդյոք, Հռոմեացիներին ուղղված նամակի 6:22 տողում: Հավատքը գործում է սիրով (Գաղատ. 5:6): Այս հայտարարությունները քաղված են նույն նամակներից, որոնցում, առանց երկիմաստության, խոսվում է ծիսական օրենքի գործերով արդարացման դեմ: Ինչպես Պողոսի, այնպես էլ Հակոբոսի համար, հավատքն ուժ չունի, եթե կյանքը մեռած է: Ահա թե ինչու, ճիշտ չէ խոսել երկու հեղինակների բախման մասին: Ծայրահեղ դեպքում Պողոսը կհակադրվեր նրանց, ովքեր հիմնվելով Հակոբոսի հայտարարությունների վրա՝ կչարաշահեին նրա իմաստությունը՝ այն վերածելով մի նոր ուղղահավատության:

Ե. ԼՈՒՐԸ

Նամակի ընդհանուր թեման հեշտությամբ կարող էր ամփոփվել մեկ նախադասությամբ. «Գործերն անհրաժեշտ են՝ հավատքն ապացուցելու համար»: Հրեական ծագում ունեցող քրիստոնյաները, որոնք կրոնը լքել էին բարի գործեր կատարելու նրա համառ պնդումների պատճառով, մեկ ծայրահեղությունից մյուսն ընկնելու վտանգի առջև էին՝ մի կողմ թողնելով նոր հավատքի գործնական առնչությունների նկատմամբ ամեն հետաքրքրություն: Ուստի, հարկավոր է խորհուրդ տալ նրանց ու քաջալերել՝ կատարելու բարի գործեր ոչ իբրև փրկության պայման, այլ որպես փրկության նշան (կամ ապացույց): Հակոբոսը հրաժարվում է ընդունել նրանց, ովքեր հավատքը դավանում են միայն խոսքերով: Նա ընդգծում է հավատքի անհրաժեշտությունը, սակայն՝ ակտիվ ու կենդանի հավատքի: Աստծուն չի կարելի գոհացնել արտաքուստ բարեպաշտությամբ, զուտ ուղեղային (կամ մտավոր) հավատքով: Որտեղից էլ՝ բուռն մեղադրանքներն ու գործնական խրատները, ինչպես, օրինակ՝ համբերություն փորձության մեջ՝ անհնազանդության, ձևականության, լեզվի գործած մեղքերի, հոգևոր անբարտավանության փոխարեն և այլն: Մարդու բարկությամբ չի իրականանում Աստծու արդարությունը: Պետք է դիմադրել չարիքին ու Սատանային, և վերջինս փախուստի կդիմի. աղոթքն արդյունավետ է այն դեպքում, եթե հավատքի արդյունք է:

Նամակը կազմված է ասացվածքների, պատգամների ու հրահանգների փոքրիկ խմբերից՝ առանց տրամաբանական խիստ պլանի:

Տեսական ի՞նչ դաս կարող ենք քաղել նամակից: Հակոբոսի ուսմունքը համառոտ կարող է ներկայացվել ներքոհիշյալ ձևով:

Թեև ընդունում ենք նամակի առանձնահատուկ «պրագմատիկ» բնույթն ու «առօրյա» հետաքրքրությունը, ճիշտ չէր լինի մտածել, որ այն զուրկ է աստվածաբանական ամեն իմաստից: Ընդգծենք նամակի որոշ տարրեր՝ դրանք խմբավորելով համակարգված ձևով.

- Աստվածային բնույթի միասնությունը (2:19, 4:12): Եռաստվածության մասին ակնարկ չի արվում, սակայն աստվածային էանիշների մասին խոսք է գնում: Աստված Արարիչն է

լույսի (1:17) ու մարդկանց (3:9): Նա անփոփոխ է (1:17): Աստված հեղինակն է ամեն լավ բանի, մասնավորապես՝ իմաստության (1:5), վերածնության (1:18), մարգարեական հայտնության (5:10): Նա մարդկանց Յայրն է (3:9), նրանց տալիս է իր շնորհը (4:6, 8), անսում է նրանց հավատքով աղոթքներին (1:5, 5:15, 18), թողություն է տալիս մեղքերին (5:15): Նրան անմատչելի է չարը, նա չի գայթակղում (1:13): Աստված համաշխարհային օրենսդիրն ու դատավորն է. կարող է փրկել կամ կորստի մատնել (4:12): Սակայն Յայտնության օրը նրա դատաստանը (5:1 և հաջորդ տողերը) անողորմ կլինի նրա համար, ով անգութ է եղել մեղքավորի հանդեպ (2:13):

- Յիսուս Քրիստոսը բացահայտորեն անվանվում է ընդամենը երկու անգամ (1:1, 2:1): Սակայն այդպիսին է իր անբողջական կոչմամբ (Տեր, Փրկիչ, Մեսիա, Մեր Տեր Յիսուս Քրիստոս), որն ուղեկցվում է նրա փառաբանության մասին հիշատակմամբ (2:1): Կարելի է ինքն իրեն հարց տալ՝ իմանալու, թե 2:7 և 5:7 հատվածներում խոսքն, արդյոք, դարձյալ նրա մասին է:

- Մարդն ստեղծված է Աստծու պատկերով (3:9), նա մեղավոր է՝ 3:2 (հմմ. Սաղմոս 19:23 տողի հետ): Նա չարիք է գործում սեփական ցանկասիրությունից մղված (1:14, 4:1) և սատանայի դրդմամբ (3:15, 4:7, 3:6): Վերածնվելով Ավետարանով (1:18, 21)՝ նա հավերժական կյանքի համար է (1:12): Մարդը վերջնականապես փրկվում է ոչ թե հավատքով, որը մտավոր պարզ միացում կլիներ, այլ այնպիսի հավատքով, որը զուգորդված է եղբայրական բարեգործությամբ (2:14-26), ողորմածությամբ (1:27, 2:13), բանբասանքից (4:11) կամ վեճերից (3:14-18, 4:11-13) զերծ մնալով, բոլորի հանդեպ անկողմնակալությամբ (2:1), աղերսական աղոթքով (5:16) և հոգևոր նախատիմքով (5:19): Մի խոսքով՝ Ավետարանի (1:21) թագավորական օրենքի (2:8) կիրառությամբ: Յավատքի մեջ նա ամրապնդվում է փորձություններով՝ այն պայմանով, որ իմաստություն ունենա հասկանալու դրա ընդգրկումը (1:21), իսկ կյանքի ու իրադարձությունների վրա աստվածային այս իմաստության ձեռքբերումը կատարվում է հույսով լեցուն աղոթքով (1:5-8), քանզի այս կերպ արված աղոթքն արդյունավետ է (5:18):

- Եկեղեցին միաժամանակ և՛ տեղական ժողովարան է (2:2), և՛ սփռված բոլոր քրիստոնյաների ընդհանուր ժողովարանը (1:1), քրիստոնյաներ, որոնք մեկը մյուսի եղբայրն են (1:2, 16, 19): Եթե տեղական եկեղեցին ունի երեցներ (5:14), որոնց գործը հիվանդների և, անշուշտ, նորադարձների հետ է, ապա ունի նաև ուսուցանող դոկտորներ, որոնք կարող են լինել նաև առաջնորդներ. դա, օրինակ, հեղինակի դեպքն է (3:1), և, այդժամ, նրանք էլ իրենց հերթին երեցներ են:

Յակոբոսի նամակն ունի ժամանակակից շեշտադրումներ: Սոցիալական արդարության հանդեպ նրա հետաքրքրությունը զարնում է քրիստոնյաների սրտերի զգայուն լարերին, մասնավորապես՝ մեր դարաշրջանում: Նամակը շատ է հիշեցնում Յին Կտակարանի մարգարեներին, հատկապես Ամոսին, որն իր դարաշրջանում, անսովոր ուժգնությամբ, վեր էր հանում ազգի գործած անարդարությունները: Ահա թե ինչու, առաքյալն անվանվել է Նոր Կտակարանի Ամոս: Յիսուս Քրիստոսի կողմից մեղքերի թողություն ստացած նրա ընթերցողներն իրենց հավատքը պետք է ցույց տան գործերով, խոսքով ու մտածողությամբ: Նրանք պետք է նեղությունների ու գայթակղությունների ենթարկվեն մինչև Տիրոջ վերադարձը:

Մակերեսային հայացքը հեշտությամբ կարող էր այն տպավորությունը թողնել, թե նա-
մակը համակարգված պլանով ամփոփելու ամեն փորձ կծախողվեր: Դա տեղի է ունենում
գրական մի միջոցի պատճառով, որը հունարենում կոչվում է diadiplasis: Ասույթները միմ-
յանց հետ կապվում են՝ առանց, այսուամենայնիվ, ներկայացնելու կապակցված խոսք: Մի
կետ ավելանում է մյուս կետին՝ տարբեր մի խոսքի կրկնությամբ: Ամենացայտուն օրինակը
1:3-6 և 12-15 հատվածներն են: Նմանատիպ խոսքը, մակերեսային տեսանկյունից, հիշեց-
նում է այնպիսի անձնավորություն, որը խոսելիս մի թեմայից մյուսին է անցնում: Եթե այդ-
պես լիներ, ապա անհնարին կլիներ այս գրվածքում փնտրել որևէ պլան, ինչպես կցանկա-
նային համակցված խոսքի պլան փնտրել բառարանը կազմող հազարավոր բառերի մեջ:
Ավելի լուրջ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դա այդպես չէ: 1:1-18 հատվածն
ընդգրկող բաժնում Հակոբոսն ուշադրությունը հրավիրում է կենտրոնական ու գլխավոր
մեկ մտածողության վրա միայն: Նա ճնշվածներին ու վշտացածներին հորդորում է համբե-
րություն: Եթե նրանք չունեն այդ շնորհը, թող պահանջեն Աստուծուց: Քաջությունը կորցնելու
փոխարեն՝ թող գնահատեն իրենց առանձնահատուկ կոչումը: 12-րդ տողի ուշադրության
կենտրոնում օրհնությունն է: Բացի այդ՝ դա Աստուծու պարգևն է (ընդգծված է 17-րդ տողում):
Այս ամենն, ուստի, ապացույց է նամակի շարադրանքի կատարյալ ու հրաշալի միասնա-
կանության: Հակոբոսը երբեք իսկապես չի հեռանում թեմայից, չի շեղվում: Բացի այդ՝ նա
եզրափակում է այնպես, ինչպես սկսել էր. համբերատարության հորդորով: Կարելի է առար-
կել՝ ասելով, որ 1:19-27 հատվածը տրամաբանորեն միասնական չէ: Արդյոք այդպե՞ս է:
22-րդ տողում նա ասում է (տե՛ս տեքստը), և նրա միտքը շարունակվում է մինչև 25-րդ տողը,
այնուհետև 26-րդ տողում նա դառնում է լեզվի գործածությանը: Վերջապես, 27-րդ տողում
համառոտ նկարագրում է մաքուր կրոնը: Այս առումով խոսում է աշխարհի հանդեպ իր անձն
անարատ պահելու մասին: Արդ, 21-րդ տողում շեշտը դնում էր հավատքի ու վարքի անարա-
տության վրա: Այսպիսով, շատ լավ երևում է, որ Հակոբոսը չի զառանցում: Նա ընդամենը
քարոզում է հրաշալիորեն կառուցված մի քարոզ: Մի շարք մեկնաբաններ հենց այսպես են
համարել նամակը. առաքելական քարոզ: Էականն այստեղ այն պնդումն է, որ իսկական
հավատքը գերազանցում է մտովի համաձայնությանը, և որ այն ապացուցվում է գործերով:

Զ. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ներածություն, հեղինակն ու հասցեատերերը

1. ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԳԱՅԹԱԿՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ 1:2-18

2. ՏԱՐԲԵՐ ԶՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ՝ ՄԵՂՔԵՐԻՑ՝ 1:19-3:18

ա) խոսք ասելու շտապողականություն 1:19-21

բ) Լսել խոսքը՝ առանց այն գործածելու՝ 1:22-27

գ) խտրականություններ՝ 2:1-7

դ) Մասնակի հնազանդություն Քրիստոսին՝ 2:8-13

ե) Անպտուղ հավատքը՝ 2:14-26

զ) Լեզվի չարաշահումը՝ 3:1-12

է) Կեղծ իմաստություն՝ 3:13-18

3. ՀԱՆԴԻՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ 4:1-5:6
 ա) Աշխարհականություն և ցանկասիրություններ՝ 4:1-10
 բ) Զրպարտություն-բամբասանք՝ 4:11-12
 գ) Ծրագրեր՝ առանց հաշվի առնելու Աստծուն՝ 4:13-17
 դ) Փողի վատ կիրառություն՝ 5:1-6
4. ՀՈՐԴՈՐՆԵՐ՝ 5:7-20
 ա) Համբերատար՝ մինչև Տիրոջ գալուստը՝ 5:7-11
 բ) Հարգանք ասածի հանդեպ՝ 5:12
 գ) Աղոթել ուրախության ու տխրության մեջ՝ 5:13-18
 դ) Ջերմ վերաբերմունք մոլորյալների հանդեպ՝ 5:19-20

Գ Լ ՈՒ Խ 36

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ

Ա. ՀԵՂԻՆԱԿԸ

Պետրոս առաքյալը ոչ այլ ոք է, եթե ոչ՝ Հովնանի որդի Սիմոնը, որի մասին հիշատակում են չորս Ավետարանները: Պետրոս մականունն ստացել է Հիսուսի կողմից. անշուշտ, նա Ավետարանների ամենից ավելի հարազատ դեմքն է: Լինելով գալիլիացի՝ նա Անդրեասի՝ մեկ ուրիշ աշակերտի եղբայրն է ու նրա պես՝ ձկնորս: Ծագումով Բեթսայիդա փոքրիկ վայրից է: Ամուսնացած է, և հայտնի է, որ զոքանչն ապրել է իր հարկի տակ:

Հիսուսի մոտ նրան կտանի Անդրեասը և, այսպիսով, նա կդառնա Տիրոջ ամենաառաջին աշակերտներից մեկը: Մյուսների պես նա էլ ամեն ինչ կլքի՝ հետևելու Հիսուսին: Տերը նրան կարժանացնի միանգամայն առանձնահատուկ ուշադրության: Նշանակվելով առաքյալ՝ նրա անունը միշտ առաջինը կհիշատակվի առաքյալների ցուցակում: Նա կգրավի առաջնակարգ դեր, և առաջինը կխոստովանի Քրիստոսի աստվածային ծագումը: Այսուամենայնիվ, հակառակ նրա լավ մտադրությունների և ամուր վճիռների, նա Հիսուսին կուրանա Կայիափայի առջև՝ դատավարության ժամանակ: Այս ուրացումը եղել է հանկարծակի խուճապի հետևանք: Նա կտիրապետի իրեն և ցույց կտա անկեղծ զղջման նշան: Բանտարկությանն ու խաչելությանն ուղեկցող իրադարձությունների ընթացքում կլքի Տիրոջը: Այսուհանդերձ, հարությունից հետո Քրիստոսը կհայտնվի նրան: Եվ նա առաջինը կթափանցի դատարկ գերեզմանը: Ավելի ուշ Քրիստոսը երես առ երես խոսակցություն կունենա նրա հետ: Հոգեգալստյան օրը նրա հրապարակային խոսքով կհաստատվի քրիստոնեական մոր առաքելությունը: Առաջին Եկեղեցին կլինի այս հայտարարության պտուղը: Այս օրվանից ի վեր և մինչև Երուսաղեմի տիեզերաժողովը (Գործք 15), նա վճռական դեր կխաղա Ավետարանը հայտարարելու և ծնվող Եկեղեցու հիմնադրման ու զարգացման գործում:

Նա նաև կրացի հավատքի դուռը հեթանոսների (հեթանոսությունից հավատափոխ եղածների) համար՝ հատկապես Փիլիպպոսի Կեսարիայում հաստատված հռոմեացի սպա Կոռնելիոսի մոտ կատարած այցի ժամանակ: Երուսաղեմի Տիեզերաժողովից հետո այլևս շատ բան չենք լսի նրա մասին: Հավանական է, որ կնոջ ընկերակցությամբ կատարել է հատուկ առաքելություն (Ա. Կորնթ. 9:5):

Ավանդույթի համաձայն՝ մահացել է Հռոմում, 67 թ. մոտերքում, տիրոջ պես խաչվելով, իր իսկ պահանջով՝ գլուխը դեպի ներքև: Այս դեպքում նա պետք է, որ եղած լիներ 75 տարեկան: Պետրոսն անվանվել է Առաքյալների Իշխան: Լինելով իմպուլսիվ և խանդավառվող խառնվածքի տեր մարդ՝ մշտապես մասնակցել է քրիստոնեական ձեռնարկումներին և շատ հաճախ իրեն դրսևորել իբրև իր ընկերների մունետիկը:

Հոգու խորքում ամեն կասկածից վեր նվիրվածության ու հավատարմության օրինակ է: Դրանով է բացատրվում նրա մեծ շփոթմունքը Քրիստոսի ներկայությամբ, երբ վերջինս հայտնվում է հարությունից հետո: Անշուշտ, մի քիչ անկայուն է, կրքոտ, թերևս նաև՝ մասամբ ամբարտավան: Բայց նրան է Տերն անվանել ՊԵՏՐՈՍ՝ ժայռ (հունարենի πέτρα բառից): Այսուհանդերձ, անառարկելի այս հատկանիշները նրան ամենևին էլ չպարզենցին գերակշիռ դիրք մյուս առաքյալների համեմատ: Վստահելով Թագավորության բանալիները (Մատթ. 16:18)՝ Հիսուսը, սակայն, նրան չտվեց այնպիսի իշխանություն, որից զրկված լինեին մյուս առաքյալները: Գիշտ հակառակը, բոլոր առաքյալները միասին տերն են այս բանալու, քանզի դա ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ Փրկության Ավետարանի հայտարարումը: Նշենք, որ ոչ մի խոսքում կամ գրվածքում Պետրոսը չի ներկայանում իբրև մյուս առաքյալներից ավելի բարձր, ոչ էլ իր համար պահանջում է գերակշիռ իրավունք: Նմանապես, թվում է, ոչ մի աշակերտ նրա մոտ չի ընդունում այս արտոնությունը: Եկեղեցու բոլոր հավաքների և կամ նոր հիմնադրված Եկեղեցիներ կատարած այցելությունների ժամանակ բոլոր որոշումները կայացվել են միասին: Անտիոք ուղարկված նամակի մի քննությունից (Գործք 15) չի երևում Պետրոսի գերազանցության և ոչ մի նշան:

Վերջապես հիշեցնենք նրա ծանր սխալը, որ գործել են նաև Երուսաղեմի Եկեղեցու մյուս նշանավոր դեմքերը՝ հրեական և հեթանոսական ծագում ունեցող քրիստոնյաների միջև ծագած մի միջադեպի ժամանակ (Գաղատ. 2:11): Կարելի է, ուստի, եզրակացություն կատարել Պետրոսի միջակ անսխալականության մասին:

Հետևյալ հատվածները հնարավորություն են տալիս ընդհանուր գծերով վերականգնել Պետրոսի կենսագրությունը՝ սկսած նրա կանչվելուց:

Հովհ. 1:41-42, Մարկ. 1:16-20, 29, 8:29, Հովհ. 6:67-68, Մատթ. 19:27, Մարկ. 5:37, 9:2, Ղուկ. 5:10, Մատթ. 16:17, Ղուկ. 22:31-32, Հովհ. 13:6-10, Մատթ. 26:29-75, Հովհ. 13:36-38, 18:10-15, 21:7, 15-21:

Բ. ՀԱՍՑԵԱՏԵՐԵՐԸ

Ստորև ներկայացնում ենք Պետրոսի առաջին նամակը գրելու հանգամանքները: Դրանք կտեղավորենք իրենց լայն ենթատեքստում և կբացատրենք նամակն ուղարկելու անհրաժեշտությունը, անգամ՝ հրատապությունը: Մինչև որոշակի մի կետ, Նոր Կտակարանը քիչ

բան ունի ասելու քրիստոնեական հավատքի և կայսերական իշխանության հարաբերությունների վերաբերյալ (Մատթ. 22:21): «Գործք Առաքելոց»-ը քրիստոնյաների և հռոմեական դատավորների միջև հարաբերություններն անփոփոխ ձևով ներկայացնում է նպաստավոր լույսի ներքո՝ ստեղծելով այն տպավորությունները, իբր դրանք հազվադեպ են: Պետրոսի նամակներում չեն վիճարկվում քաղաքական հարցեր և չի հիմնվում քաղաքական տեսություն՝ իբրև այդպիսին: Դրանք հավատացյալներին հորդորում են ենթարկվել իշխանություններին: Ամբողջատիրական կառավարության ներքո քաղաքական հարաբերությունների վերաբերյալ այս լռությունը զուրկ չէր նշանակությունից և հեշտորեն կարող էր բացատրվել տարբեր ձևերով: Քրիստոնեությունը ոչ թե քաղաքական, այլ հոգևոր կրոն էր (Հովհ. 18:36), թեև Հիսուսի ուսուցանած ուսմունքի կիրառությունն ուներ քաղաքական հավաստի հետևանքներ ու ամենչություններ: Այսուամենայնիվ, առաքյալները ո՛չ քաղաքական մունետկողներ էին, ո՛չ էլ նոր հասարակարգի ստեղծում քարոզող հեղափոխականներ: Հիշենք նաև, որ ծնվող քրիստոնեությունը զարգացավ հրեականության ներսում՝ իբրև *religio licita*, այսինքն՝ հասարակական իշխանությունների կողմից հանդուրժվող և անգամ, առիթի դեպքում, պաշտպանվող պաշտամունք: Հռոմեական կառավարությունը «Գավառների» կրոններին ու պաշտամունքներին թույլ էր տալիս բավականաչափ ազատ կիրառվել՝ այն պայմանով, որ բախումներ չլիներ միմյանց և քաղաքացիական իշխանության միջև: Քանի որ քրիստոնյաները դեռևս չէին խռովում հասարակական կարգը, Պետությունը չէր խառնվում Եկեղեցու գործերին:

Առաջին քրիստոնյաները հռոմեական իշխանությունների վրա թողնում էին առավելապես նպաստավոր տպավորություն (Գործք 16:36-39, 22:24-29, 24:12): Վաղ շրջանի Եկեղեցին հետևեց հասարակության խաղաղ ճանապարհով ներթափանցելու քաղաքականությանը՝ հայտարարելով Քրիստոսի լուրը: Մ. թ. 60-ական թթ. վերջերին դրությունը փոխվեց. այն վատացավ: Քրիստոնյաներն անջատվել էին հրեականությունից և ճանաչվել իբրև տարբեր խումբ: Անտեսանելի Աստծու և Հարություն առած Քրիստոսի հանդեպ հավատքը կասկած արթնացրեց և առաջ բերեց հասարակության արհամարհանքը, իսկ վերջին Դատաստանի և գոյություն ունեցող կառույցների փլուզման վերաբերյալ նրանց խոսքերը տեղի տվեցին ամեն տեսակ թյուրիմացությունների և անգամ ատելություն բորբոքեցին: Հակադեցություններն սկսվեցին Ներոնի դեմ մեղադրանքներով: Պետրոս առաքյալի մահը շրջադարձային եղավ կառավարության քաղաքականության մեջ: Երբ Եկեղեցիներն իրենց հաշիվ տվեցին վերաբերմունքի փոփոխության մասին, ապա վախ զգացին սպառնացող վտանգներից: Նրանք չէին կարող կազմակերպել դիմադրություն, քանզի դրանով կխախտեին չխախտելու սկզբունքը: Արդյո՞ք պետք է բնաջնջվեին: Ո՞րն էր ելքը: Ներոնի դաժանություններն ընդհուպ մինչև կայսրական ամենահեռավոր գավառները հասնելու վտանգ էին պարունակում: Այս պայմաններում հավատացյալներն իրենց հոգևոր առաջնորդներից սպասում էին եթե ոչ վստահեցնող, ապա գոնե՝ հստակ պատասխան: Հենց այս իրավիճակն էլ առիթ եղավ Պետրոսի առաջին նամակում բովանդակվող պատասխանի համար:

Սեզ քիչ բան է հայտնի Փոքր Ասիայի Եկեղեցիների, նրանց ծագման ու կազմակերպման վերաբերյալ (Գործք 16:7, 9, Գաղ. 2:11, Ա. Կորնթ. 9:5): Պետրոսն իր առաջին նամակը հասցեագրեց սփյուռքում մնացող ընտրյալներին, որոնք բոլորն էլ հեթանոսական ծագում

ունենին: Այս բառերն օգտագործված են փոխաբերաբա՞ր, թե՞ ունեն տառագի իմաստ: Հրեա-
յի համար «հեթանոս» բառով մատնացույց էր արվում նա, ով չէր ճանաչում ճշմարիտ
Աստծուն: Իսկ դա ակնարկ էր այն մասին, որ տվյալ մարդը հեթանոս է: Պետրոսի նամա-
կում բառը բովանդակում է հենց այս իմաստը, քանզի հրեական ծագում ունեցող քրիս-
տոնյաները չէին կարող անտեղյակներ լինել: Բացի այդ՝ նամակում հիշատակվում է նաև
այս քրիստոնյաների խավարից դուրս գալու մասին (2:9, 4:3):

Տրամաբանական է, սակայն, մտածել, որ այս եկեղեցիներում կար նաև հեթանոսների
հետ խառնված հրեական մի ընդարձակ միջուկ: Ուստի, անխուսափելի հալածանքի վտանգն
է եղել նամակը գրելու շարժառիթը: Այդ իսկ պատճառով էլ «տառապանք» բառը հանդես է
գալիս ավելի քան 16 անգամ:

Գ. ԳՐԵԼՈՒ ՎԱՅՐԸ

Հեղինակը հիշատակում է Բաբելոնը (5:13), որտեղից գրում է իր նամակը: Այս բառին
հանդիպում ենք նաև «Հայտնության» 14:8, 12:8, 10:21 հատվածներում. հեղինակն այս-
տեղ գաղտնագրի ձևով (°) վկայակոչում է Հռոմը՝ աշխարհի մայրաքաղաքը: Այս հարցում,
սակայն, կան տարածայնություններ, որոնց մասին կխոսենք միայն հարևանցիորեն: Եթե
խոսքն, իրոք, վերաբերում էր Հռոմին, հեղինակն ինչո՞ւ բացահայտորեն չի խոսում այս
մասին: Եթե այստեղ էր մահացել, ապա նրա ժամանման ու մահվան միջև ընկած ժամա-
նակաշրջանը հազիվ թե հնարավորություն տար գրելու նրան վերագրվող երկու նամակնե-
րը: Եվ, վերջապես, կարգը, որով հիշատակված են եկեղեցիներ ունեցող գավառները,
սկսվում է Արևելքի և վերջանում Արևմուտքի գավառների հիշատակմամբ, մի բան, որից
կարելի է ենթադրություն անել նամակի՝ ավելի շուտ արևելյան ծագում ունենալու մասին:
Որոշ մասնագետներ, որոնց մեջ նաև Վալվինը, կարծում են, որ խոսքը հին Բաբելոնի
մասին էր: Սակայն մեզ հայտնի է, որ նամակը գրելու ժամանակաշրջանում այստեղ չկար
հրեական գաղութ, քանի որ քաղաքը լիովին կործանված էր: Հնագույն ոչ մի ավանդու-
թյամբ ակնարկ չի արվում այն մասին, որ Պետրոսը եղել է այստեղ: Մի երրորդ վարկածի
համաձայն՝ նամակը գրվել է Նեղոսի վրա գտնվող Բաբելոնից՝ ներկայիս Կահիրեից: Արդ,
այստեղ էր գտնվում հրեական մի մեծ գաղութ:

Դ. ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետրոս առաքյալը ճանաչված է «բլփատվածների առաքյալ» անվամբ, որով էլ բա-
ցատրվում են նրա երկու նամակներում Հին Կտակարանին արված հղումները (1:10, 16:24-
25, 2:3, 6, 7, 9, 10, 17, 22): Համենատաքար ավելի շատ մեջբերումներ հանդիպում ենք
առաջին նամակում: Իբրև բլփատվածների առաքյալ՝ Պետրոսը ցույց է տալիս, որ Ավետա-
րանը Հին Կտակարանի և հրեական կրոնի շարունակությունն ու հոգևոր իրականացումն
է: Այստեղից էլ նամակին հատուկ այնպիսի բառեր ու արտահայտություններ, ինչպիսիք են՝
հույս, ենթարկվել, անել այն, ինչ լավ է, տառապել, անբարոյականություն, խառնվել ուրիշի
գործերին, ձեր հոգիների Հովվապետն ու պահապանը, մոռցացող առյուծ և այլն, որոնք չեն

հանդիպում Նոր Կտակարանի և ոչ մի գրքում: Այստեղ ենք հանդիպում նաև Հիսուսի՝ դժոխք իջնելու վերաբերյալ հրաշալի հատվածին, որը դժվար է մեկնաբանել (3:18-22, 4:6):

Ե. ԼՈՒՐԸ

Հեշտ չէ նամակը բաժանել այնպիսի մասերի, որոնք ցույց տան հեղինակի մտածողության համակարգված ընթացքը: Բայց այստեղ ևս, ինչպես Նոր Կտակարանի այլ գրվածքներում, ուսմունքն ու վարքը, աստվածաբանությունն ու բարոյականությունը, կարևոր հայտարարություններն ու գործնական հորդորները հաջորդում են միմյանց: Չկա արհեստական անջատում աստվածաբանության ու բարեպաշտության միջև: Ընդհակառակը, մեկը սնուցում է մյուսին, և տեսական ճանաչողության վրա հիմնված՝ բարեպաշտությունն ապացուցում է Քրիստոսով նոր կյանքի որոշակի իրականությունը: Ահա թե ինչու նամակում բովանդակվող մոտ երեսուն հրամայականները կատարելագործման պրակտիկայի թվարկումներ չեն սոսկ, որոնք անհրաժեշտաբար պետք է հանգեցնեին անպտուղ բարոյախոսության: Ընդհակառակը, դրանք հիմնված են սահմանական եղանակի վրա, որը նախորդում է, և որով սկսվում է նամակը. «Նրանց, ովքեր ընտրվել են Հայր Աստծու կանխագիտությամբ և Հոգու սրբությամբ... որպեսզի դառնան հնազանդ»: Քանի որ քրիստոնյան նոր ստեղծված է (սահմանական եղանակ), նա կարող է և պարտավոր է ապրել իբրև այդպիսին (հրամայական եղանակ): Նամակի գլխավոր թեման տառապանքն է: Հեղինակը ջանում է ցույց տալ փորձության անհրաժեշտությունը և զորությունը, որ ողորմածությունը տալիս է դրան դիմանալու համար, բայց նաև կանխասում է գալիք փառքը: Այս նամակը Նոր Կտակարանի ամենաթանկագին գոհարներից է և մխիթարության բարերար աղբյուր՝ ընկճվածի համար: Տառապանքը, որ մեղքի ուղղակի կամ անուղղակի հետևանքն է, թուլատրվում է Աստծու կողմից՝ իբրև քրիստոնեական հնազանդության միջոց: Երբ այն ընդունվում է ուրախությամբ, ապա հավատացյալին սերտորեն կապում է Քրիստոսին (նրան, որ եղել է Տառապյալ Մարդը). հավատացյալը տառապում է ոչ թե սեփական սխալների, այլ Տիրոջ պատճառով, ոգեշնչվում է Քրիստոսի օրինակից և վստահորեն իրեն հանձնում Աստծու ձեռքը: Չէ՞ որ Աստծու ողորմածությունը բավական է մեր բոլոր փորձությունների համար: Արդ, դրանցից յուրաքանչյուրը բովանդակում է աստվածային օրինություն, որը թաքնված է, բայց իրական: Տառապանքը անհեթեթ դիպված չէ (ոչ քրիստոնեական կարծիք): Այն, առավել ևս, գովական գործ չէ մեր փրկությանը նպաստելու համար (հռոմեական կաթոլիկության ուսմունք):

Հավատացյալի համար տառապանքը նրա ընտրության հավաստի նշան է: Աստված թուլատրում է, որ յուրայինները տառապեն: Նրա մտադրությունը տառապանքի՝ Քրիստոսի տառապանքի գնով մարդկանց փրկելն է: Երբ հավատացյալը հասկանում է աստվածային այս մտադրությունը, ապա իր հերթին մասնակցում է այդ հոգեվարքին և իր ուսերի վրա տանում առանց Աստված աշխարհի բեռը: Բայց, ըստ էության, անձամբ Աստված է կրում այս բեռը: Մեր, ինչպես և աշխարհի փրկությունը չի լինի մեր տառապանքի պտուղը: Մինչդեռ մեր համոզմունքը փոխակերպում է փորձությունը և, որոշ առումով, այն դարձնում հասկանալու աստիճան թափանցիկ: Այդժամ դրա միջով տեսնում ենք գալիք փառքը, որն

իր փայլով կգերազանցի անգամ մեր երևակայության ամենահանդուգն պատկերացումները: Այս պայմանով միայն կկարողանանք ըմբռնել ներկայիս աշխարհում մեր առաքելության բնույթը: Աստծու հանդեպ մեր հավատարմությունը հալածանքի, ճնշման ու փորձության այրող հնոցում առավել կարևոր է, քան սեփական անվտանգությունն ու բարեկեցությունը: Պարտավոր ենք հավատարիմ լինել Աստծուն, ինչ գնով էլ որ դա լինի: Հավատարմությունը մշտապես պահանջվում է, անգամ եթե աչքի առաջ չկա տառապանք: Աշակերտն Ուսուցչից մեծ չէ՝ այսպես էր ասում Հիսուս Քրիստոսը: Ավելացնենք նաև, որ Աստծու հանդեպ մեր հավատարմությունը աշխարհին մատուցված ծառայություն է: Նա, ով տառապում է անարդարացիորեն, պատասխանատվություն է ստանում Աստծու ծրագրի մեջ և մվիրվում յուրայիններին ծառայելու գործին:

Տառապանքը, սակայն, վերջ չի ունենա: Փրկությունը փառավոր հույս է պարզևում: Հակառակ վշտերի ու նեղությունների՝ հավատացյալը համոզված է, որ վերջնական իրավիճակը երբեք չի լինի վատթարագույնը: Նրան է սպասում երկնային անթառամ ժառանգությունը, եթե համբերությամբ տոկա: Դա զուգահեռաբար առաջարկում է մեկ այլ թեմա՝ սրբության թեման:

Խոսքն, ուստի, երկնային այս ժառանգությանն անարատ վարքով պատասխանելու մասին է: Պետք է հիշել դրա իրական մոտիվները: Նախ՝ հիշել Աստծու սուրբ լինելը, այնուհետ՝ մեր մեղքերի թողության համար վճարված գինը: Սրբությունը վերածնող Խոսքի միջոցով կդրսևորվի չփչացող սերմով, որպեսզի կատարենք թագավորության, մարգարեության, համաշխարհային քահանայության աստվածային գործը կյանքի և մեր գործունեության բոլոր ոլորտներում: Կարելի է ավելացնել, որ այս նամակի անհամեմատելի արժեքն այն ձևն է, որով քրիստոնյաներին ցույց է տրվում, թե աշխարհում ամեն օր ինչպես ապրել քրիստոնեական իր կոչումը:

3:18-22 վիճարկվող հատվածի կապակցությամբ ավելացնենք նաև, որ այն հիմք չի պարզևում աստվածաբանության համար, մի երկրորդ հաջողություն, ասես կարելի էր մահվանից հետո ակնկալել զոջալու առիթ: Կարելի է, պարզապես, առաջ քաշել հետևյալ վարկածը. եթե Քրիստոսը գնացել է անտեսանելի հոգիների աշխարհ, ապա դա եղել է իր հաղթանակը նրանց հայտարարելու, քավիչ իր առաքելության արդյունքների մասին տեղյակ պահելու մտադրությամբ: Գշգրտենք նաև, որ Նոյն ու նրա մերձավորները փրկվեցին ոչ թե ջրհեղեղի (մկրտությունը դրա խորհրդանիշն է) շնորհիվ, այլ ջրհեղեղից կամ ջրհեղեղի միջոցով: Պետրոսը հիշեցնում է, որ մկրտությունը ամենից առաջ քավության նշանն է, և անընդհատ մատնացույց է անում Փրկության գործը, որ մեկընդմիջտ, Խաչի վրա, իրականացրել է Աստծու Որդին՝ մեր Փրկիչը:

Ձ. ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ՝ 1:1-2
- ա) Ողորմածության գործեր՝ 1:3-12
- Փառաբանություն՝
- Կենդանի հույսի համար՝ տ. 3

- Ժառանգության համար՝ տ. 4
- Աստվածային պաշտպանության համար՝ տ. 5
- Ուրախությունների և փորձությունների համար՝ տ. 6-9
- Քրիստոսով Փրկության համար՝ տ. 10-12
- բ) Պարտավորություններ, որոնք հետևանք են ողորմածության օրհնությունների՝ 1:13-4:17
- Աստծու հետ ճշմարիտ հարաբերություններ՝ 1:13-2:10
- Ապրել հույսի մեջ՝ 1:13
- Ապրել սրբության մեջ՝ 1:14-16
- Ապրել Աստծու հանդեպ վախի մեջ՝ 1:17-21
- Ապրել սիրո մեջ՝ 1:22-25
- Ցանկանալ խոսքի կաթը՝ 2:1-3
- Դառնալ Աստծու թագավորներ ու մարգարեներ՝ 2:4-10
- 2. ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ՝ 2:11-3:12
- Պարտականություն քաղաքացիական իշխանության հանդեպ՝ 2:12-17
- Ծառաների պարտականությունը՝ 2:18-25
- Կանանց պարտականությունները՝ 3:1-6
- Տղամարդկանց պարտականությունները՝ 3:7
- Հավատացյալների պարտականությունները մեղքի աշխարհում
- 3. ԾԻՇՏ ՎԵՐԱՔԵՐՄՈՒՆՔ ՏԱՌԱՊԱՆՔԻ ՄԵՋ՝ 3:13-4:19
- Ընդունե՛ք տառապանքը՝ 3:13-17
- Հիշե՛ք Քրիստոսին՝ 3:18-22
- Հիշե՛ք դատաստանի և անխուսափելի մահվան մասին՝ 4:1-11
- Չվարճացե՛ք փորձության մեջ՝ 4:12-19
- 4. ՀՈՐԴՈՐՆԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՎՈՐՆԵՐԻՆ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ՝ 5:1-11
- Երեցներին՝ տ. 1-4
- Երիտասարդներին՝ 5:5ա
- Բոլորին՝ 5բ-11
- 5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ 5:12-14

ՊԵՏՐՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՍԱԿԸ

Ա. ՀԵՂԻՆԱԿՆ ՈՒ ՎԱԿԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս նամակի հեղինակը հավաստում է, որ արդեն գրել է մի առաջին նամակ: Նա հայտարարում է, որ Հիսուս Քրիստոսին տեսել է Պայծառակերպության Լեռան վրա (1:16-18): Ծագումով, անշուշտ, հրեա է, քանզի լավ գիտե Հին Կտակարանը: Նա պետք է, որ տարիքով մեծ լիներ, քանի որ սպասում էր մոտալուտ, անգամ հանկարծակի մահվան (1:13-15, հմմ. նաև Հովհ. 21-18): Երկու ուղերձներն էլ շնչում են նույն ոգով և տալիս են նմանատիպ վարդապետություն: Նշենք, վերջապես, նամակի անառարկելի գերազանցությունը ոչ կանոնական բոլոր գրվածքների համեմատ: Ինչ վերաբերում է հաստատված տարբերություններին, ապա հավանական է, որ դրանց պատճառը հեղինակի՝ տարբեր մեկնիչների ծառայությունից օգտվելն է: Նա ամենահին էլ առաջին նամակի գրագողը չէ:

Ուշադիր քննությունը ցույց կտա, որ ժամանակակից գրագողը չէր կարող պատկերացնել նշված տարբերությունները: Այստեղ կարելի է գտնել բազմաթիվ հատվածներ, որոնք հիշեցնում են Պետրոսի՝ «Գործք»-ում բովանդակվող քարոզների ոճը: Պետրոսը հայտնի էր Սիմոն անվամբ, և այս անվան գործածությունը (1:1) բոլորովին անբնական չէ այստեղ, մինչդեռ նմանակողը կարող էր արտագրել Ա. Պետրոս 1:1-ի վրա:

2:2, 14, 18 տողերում «Գայթակղում են» բայի երկակի կիրառությունը հիշեցնում է նրա նախկին զբաղմունքը, իսկ 1:14-15 հատվածի «մեկնում» բառերի համատեղ գործածությունը համապատասխանում է Ղուկասի Ավետարանում հեղինակի պատմած պայծառակերպության պատմությանը (9:Պ31-33):

Եթե երկար ժամանակ վիճարկվել է այս նամակի Պետրոսի գրչին պատկանելու հարցն ու Նոր Կտակարանի Կանոնի մեջ մտնելու իրավունքը, ապա առաջին դարերի քրիստոնյա հեղինակները և առաջին հերթին՝ Օրիգենեսը այն համարում են Պետրոսի գրվածքը: Օրիգենեսը խոսում է նրա ուղերձների երկու փողերի մասին, բայց նշում է, որ ոմանք կասկածի տակ են առնում երկրորդի վավերականությունը: Եվսեբիոսը՝ Եկեղեցու պատմիչը, երկրորդ նամակը, Հակոբոսի ու Հուդայի նամակների հետ մեկտեղ, տեղավորում է «կասկածելիների» (հունարեն՝ *ta antilegomena*) շարքում, որոնք սակայն ընդունված են բազմաթիվ եկեղեցիների կողմից: Շատ քննադատներ նամակը համարում են կեղծանվամբ տակ հանդես եկող գրողի գործ, որը գրվել է 2-րդ դարի վերջում: Վավերական չլինելու օգտին առաջ են քաշում այն փաստարկը, որ Առաքելական Հայրերի գրվածքներում հազվադեպ են Պետրոսի երկրորդ նամակից արված մեջբերումները, ինչպես նաև՝ Հուդայի նամակի հետ ունեցած նմանությունը: Ոմանք մինչև անգամ պնդում են, որ Պետրոսը պարզապես արտագրել է Հուդայի նամակը:

Այս ամենը բացատրվում է նամակի կարծությամբ և հիմքում ընկած հանգամանքներով: Դա է Կանոնի մեջ ուշացումով մտնելու պատճառը: 2-րդ և 3-րդ դարերում, երբ ի հայտ եկան հայտնութենական շատ գրվածքներ, ներառյալ նաև Պետրոսին վերագրվող մի «Հայտ-

նութուն», Եկեղեցու դոկտորները, իրավացիորեն, շատ խոհեմ գտնվեցին՝ նախքան ինչ-որ փաստաթուղթ Սուրբ Գիրք համարելը: 4-րդ դարում Յերոնիմոսը հայտարարել է, որ շատերը հրաժարվում էին այս նամակը վերագրել Պետրոսին՝ առաջին նամակի հետ ունեցած ոճական տարբերությունների պատճառով: Սակայն նա ընդունում էր նամակի վավերականությունը, քանզի, իր կարծիքով, ոճական տարբերությունը բացատրվում էր այն փաստով, որ իր անունը կրող երկրորդ նամակը շարադրելիս Պետրոսն օգտվել էր մեկ ուրիշ քարտուղարի ծառայությունից: Պետրոսի կողմից գրված լինելու փաստը վերջնականապես ընդունվել էր 4-րդ դարից սկսած:

Ավելացնենք նաև, որ երկրորդ նամակն անանուն չէ, և հեղինակի կենսագրությանը վերաբերող նշումները լիովին համապատասխանում են Պետրոս առաքյալի՝ մեզ հայտնի կյանքի տվյալներին: Նշենք, թե ինչ մեծ զգայունությամբ է խոսում հին մեղքերի մաքրման մասին (1:9), որն ակնարկ է նրա անխուսափելի մահվան մասին (1:13)՝ կանխասված Տիրոջ կողմից (Չովի. 21:18-19), պայծառակերպության մասին խոսում է իբրև իր ու գործընկերների կյանքի կարևոր կետ (1:17-18):

Բ. ՀԱՍՑԵԱՏԵՐԵՐԸ

Եկեղեցիներին սպառնացող վտանգները, իբրև հոգևոր առաջնորդներ ներկայացող կեղծ դոկտորների վարդապետության պատճառով երևան եկած կասկածն ու մոլորությունն է (2:1): Շեղումների բնույթը ճշգրտված չէ. հավանաբար ժխտում էին Փրկչագործությունն ու Քրիստոսի Տիրապետությունը (2:11): Այս իրողությունների լիակատար դրսևորումը լինելով դեռևս ապագայի գործ՝ առաքյալը տեսնում է այն վտանգը, որ անգիտությունն ու անվստահությունը կարող են գործել Եկեղեցիներում՝ որոշ մարդկանց հոգիներում (2:1): Ահա թե ինչու է նրանց հիշեցնում արդեն ուսուցանված ճշմարտությունները (1:12-13, 3:1-2): Սուրբ Գրքերը հնարամիտ երևակայության և կամ մարդկային կարծիքի արդյունք չէին, այլ Սուրբ Չոգով արված հայտնություն (1:19-21): Տիրոջ գալուստը, որն աղոտ ու հեռու էր թվում, գողեգող էր լինելու (3:10): Պետրոսի երկրորդ նամակն, այսպիսով, նպատակ ունի խթանել հավատքի հավատարմությունը և քաջալերել քրիստոնյաներին, որոնց մեջ Տիրոջ գալստյան սպասումը թուլացել էր նրա ակնհայտ ուշացման պատճառով:

3:1 տողից հստակորեն երևում է, որ հասցեատերերը նույնն են, ինչ առաջին նամակին: Սակայն նամակը միայն նրանց չէ ուղղված: Անշուշտ, գրվել է այն ժամանակ, երբ Պետրոսի մահն անխուսափելի է եղել: Նա իմացել էր, որ կեղծ դոկտորները մոլեգնում էին Եկեղեցուն և, հետևապես, ուզում էր եղբայրներին զգուշացնել հավատքը խեղաթյուրող այս մարդկանցից: Նա իր գիտակցությունը բեռնաթափում է ընթերցողների հանդեպ ունեցած պատասխանատվությունից՝ անդադար զգուշացնելով նրանց. գիտե, որ իր ժամանակը սահմանափակ է: Նա ջանում է արթնացնել ընթերցողների հոգևոր սուրբ միտքը, որպեսզի նրանց ընդունակ դարձնի դիմադրելու կեղծ դոկտորների մոլորեցնող զորությանը (3:1-17) և կենդանացնի Չիսուս Քրիստոսի վերադարձի հանդեպ հույսը: Այսպիսով, մինչդեռ առաջին նամակում առաքյալը ջանում էր ամրապնդել ընթերցողների հավատքը, որպեսզի նրանք կարողանան դիմանալ դրսից հարձակում գործող, ընկճեցնող փորձությանը, ապա երկրոր-

դում զգուշացնում է ներսի թշնամիներից: Այս բանը նա անում է՝ շեշտը դնելով Հիսուս Քրիստոսի Տիրապետության ու նրա մոտալուտ վերադարձի վրա՝ հորդորելով հոգևոր աճ ու զարգացում:

Մենք քիչ տեղեկություններ ունենք նամակը գրելու տեղի ու տարեթվի վերաբերյալ: Կարելի է ենթադրել, որ մոտալուտ մահվան սպասման մեջ նա պետք է, որ գրած լինի 66 կամ 67 թթ. մոտերքում:

Գ. ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ակնհայտ նմանություններ գոյություն ունեն Պետրոսի առաջին, Յուդայի և Պետրոսի երկրորդ նամակների միջև (տես, հատկապես, Յուդա 4-19): Սակայն հավաստի է, որ Պետրոսի երկրորդ նամակը գրվել է Յուդայի նամակից հետո: Այն համեմատելով Պետրոսի առաջին նամակի հետ՝ կարելի է հաշիվ տալ որոշ հակադրությունների մասին.

- Առաջինն ընդգծում է Քրիստոսի Մահն ու Հարությունը, իսկ երկրորդը՝ վերադարձը:

- Առաջինը մեղմ է ու խոնարհ, երկրորդն ավելի խիստ է ու հարձակողական:

- Առաջինը ուշադրություն է հրավիրում հալածանքի արտաքին վտանգի, մինչդեռ երկրորդը՝ ներքին, այսինքն՝ տեսական հերետիկոսությունից եկող վտանգի վրա:

- Առաջինն ընդգծում է թողություն ստացածների Փառքը, որը կդրսևորվի Քրիստոսի վերադարձի ժամանակ, մինչդեռ երկրորդը այս իրադարձությունը կապում է Ահեղ Դատաստանի հետ:

Դ. ԼՈՒՐԸ

Ուսմունքի վարդապետությունը երբեք զուրկ չէ կարևորությունից: Ահա թե ինչու կեղծ վարդապետությունը շատ ծանր վտանգ է, քանի որ շեղում է ճշմարտությունից և քայքայում հոգին: Լավագույն հակոսոնյան հենց Աստծուց եկող ճշմարտությունն է, որ կենտրոնացած է Քրիստոսի մեջ և կարող է ընդունվել ու հաղորդվել խոսքի միջոցով: Մոտ լինել խոսքին՝ նշանակում է մոտենալ Աստծուն. ինչքան մոտ ես ապրում Աստծուն, այնքան քիչ է մոլորվելու և ուրացության գիրկն ընկնելու վտանգը: Աստծուն և նրա Քրիստոսին ճանաչելը վստահելի ապաստան է կեղծ ուսմունքից:

Եթե առաջին նամակում առաքյալն ընդգծում էր աստվածային շնորհի առատությունը, ապա երկրորդում շեշտն առավելապես դնում է քրիստոնյայի պատասխանատվության վրա: Այստեղից էլ սուրբ կյանքի, նվիրումի, Աստծուն և նրա ճշմարտությունը ճանաչելու, ինչպես նաև Տիրոջ գալուստին զգոն սպասելու կոչը: Նամակն սկսում է քաջալերելով ընթերցողներին, որպեսզի նրանք առաջադիմեն քրիստոնեական կյանքում և բոլոր առաքինությունների ճանաչման մեջ, քանզի Քրիստոսով նոր հայտնությունը կապված է հին ժամանակներում մարգարեներին արված հայտնության հետ: Կեղծ ուսմունքն ուղեկցվում է ամբարտավանությամբ ու վատ կյանքով ու չի կարող մնալ անպատիժ, մի բան, որն էլ հենց Հին Կտակարանի գործելակարգն էր:

Նայելով դեպի ապագա՝ հեղինակը ծավալվում է Տիրոջ գալստյան սպասման հարցի շուրջ: Այս հույսը քրիստոնյային պետք է մղի վարելու անարատ կյանք և Սուրբ Գրքերի օգնությամբ առաջադիմելու Աստծուն ճանաչելու գործում: Ոճը, ինչպես և Պետրոսի առաջին նամակինը, կենդանի է ու եռանդուն: Պողոսի գործերին արված հղումները, որոնք առաջինում թաքնված են, այստեղ դառնում են բացահայտ: Նա Պողոսին համարում է հարգված ժամանակակից և իբրև իր հավասարը, այլ ոչ թե արդեն հեռավոր անցյալի կանոնական դարձած մարտիրոս:

Հավատացյալի պատասխանատվությունները գալիս են հենց ողորմածությամբ շնորհված արտոնություններից, ողորմածություն, որը ջրում և բերրիացնում է նրանց նոր գոյությունը: Քանի որ Աստված՝ ամեն շնորհի հեղինակը, տալիս է անհրաժեշտ ամեն բան նրանց աճի համար, ապա նրանք կարող են և պարտավոր են վարել բարեպաշտ կյանք: Դա բարոյական պարտք է: Բայց աստվածային գործի ավարտը կերևա Հավիտենական թագավորության մեջ: Այստեղ հավատացյալը պաշտպանված կլինի կործանումից (1:11): Եվ այսպես, Հիսուս Քրիստոսի գալուստը դառնում է մեր հույսի հիմքը՝ հավատքն ամրապնդող նեցուկ և ապաստան մեզ սպառնացող բոլոր վտանգների դեմ: Կեղծ դոկտորների դեմ խստությունը պատճառաբանվում է ոչ թե գթասրտության բացակայությամբ, այլ թուլություն ու թուլամորթություն մերժող սիրով: Արդ, հավատացյալներն ու ամբողջությամբ վերցված Եկեղեցին իրենց երկրային գոյության ընթացքում ենթարկվում են Տիրոջը մերժելու ու նաև նրա գալստյան հանդեպ հավատից հրաժարվելու վտանգին:

Այս լուրը կարող է բաշխվել հետևյալ կերպ.

Ճշմարիտ իմացության բնույթը Աստծու պարզևն է, և իր խոստումներով՝ այն հավատացյալին դարձնում է աստվածային բնույթի մասնակից, զարգացնում է նրան ու նախապատրաստում գալիք Թագավորության մեջ փորձվելու նպատակով:

Նրա հիմքը Քրիստոսին ճանաչողների վկայության և Սուրբ Հոգու Հայտնության մեջ է: Այնուհետև գալիս է մոլորություններ տարածողների մատնության մարգարեությունը, որոնց ներկայությունը Եկեղեցում կանխասված էր: Նրանց մոլորությունները մի կողմից Քրիստոսին մերժելն է, մյուս կողմից էլ՝ բարոյական հարմարվողականությունը: Հեղինակը մեջբերումներ է կատարում նախորդներից՝ ցույց տալու, որ Աստված դատապարտել է անցյալի ապականությունները և այդ բանն անում է պատկերավոր լեզվով՝ 2:19-20 հատվածում: Նրանց վերջնական դատապարտումը (2:21) հիշեցնում է Հիսուսի՝ Հուդային վերաբերող խոսքերը (Մատթ. 26:24):

Նամակի վախճանաբանական բնույթն առավել հստակորեն ի հայտ է գալիս վերջին գլխում: Մահվան մասին հիշատակումները ցույց են տալիս, որ Պետրոսն ունի հավիտենական կյանքի հեռանկար (տե՛ս՝ մարգարեության մասին ակնարկի՝ 1:21 տողում): Եթե 2-րդ գլխում բացահայտորեն խոսվում է մոլորության մասին, ապա 3-րդ գլխում քննարկվում է Աստծու մտադրության իմացության, նրա համբերության ու հաստատականության վրա հիմնված գալիք հույսի հարցը: Ծաղրասերները կարող են մերժել Քրիստոսի գալստյան ճշմարտությունը, որ կանխասել էին մարգարեներն ու առաքյալները: Բայց թող հիշեն անցյալն ու նախկինում կայացած դատաստանները: Քանզի Տիրոջ Օրը վրա կհասնի գողի պես (նույն արտահայտությունը Պողոսի մոտ՝ Ա. Թեսաղ. 5:2), և կործանմանը կհետևի նոր երկնքի ու երկրի ստեղծումը (3:13):

Ե. ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ողջույններ՝ 1:1-2

Հեղինակը ներկայանում է իբրև Աստծու կամքին ենթարկված «ստրուկ» և Աստծու ուղարկած «առաքյալ»: Նա իր նամակատերերն է համարում նրանց, «ովքեր ստացել են հրեաներին հավասար հավատք» և նրանց մաղթում շնորհ ու խաղաղություն՝ իմացության հետ:

1. Քրիստոնեական Կյանքի մեջ աճելը՝ 1:3-21

2. Կեղծ Դոկտորները՝ 2:1-22

3. Քրիստոսի վերադարձը՝ 3:1-18

ա) Չիրականացած Խոստումը՝ 1:7

բ) Օրը նկարագրված է՝ 8:13

գ) Հորդոր՝ 14-18

Գ Լ ՈՒ Խ 38

ՀՈՎՅԱՆՆԵՍԻ ԵՐԵՔ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ա. ՀԵՂԻՆԱԿՆ ՈՒ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Եկեղեցու ամբողջ պատմության ընթացքում «ընդհանրական» այս երեք նամակները վերագրվել են Հովհաննես առաքյալին: Նա նաև իր անունը կրող Ավետարանի հեղինակն է: Այս երեք նամակների և չորրորդ Ավետարանի լեզվի ու մտածողության միջև նմանություն ենք գտնում: Այն փաստը, որ մշված երեք նամակները շատ վաղ ընդունվել են Նոր Կտակարանի Կանոնում, հավաստում է դրանց՝ Հովհաննեսի գրչին պատկանելու իրողությունը: Գիշտ նույն կերպ էլ «իմ որդյակներ» արտահայտությունը համահունչ է այն բանին, ինչ ավանդությունն ասում է Հովհաննես առաքյալի՝ Հիսուսի «սիրած աշակերտի» վերջին օրերի մասին:

Թեև այս նամակներն անստորագիր են, ընթերցումից պարզ է դառնում, որ հեղինակը եղել է իր պատմած իրադարձությունների ականատես-վկան: Չորրորդ Ավետարանի նախաբանի և առաջին նամակի ներածության նմանությունը ցնցող է: Լեզուն անմնան է: Իր պարզության, բայց և վսեմության մեջ մտածողության նույն կարգը և նույն պատկերներն են հանդիպում երկուսում, հոգևոր խոր զգացմունքով նույն վկան և նույն ճշմարտությունը, որը հավատացյալին ընդհուպ մոտեցնում է Աստծուն: Ամենևին չկան կիսագույներ. մի կողմից Լույսն է, մյուս կողմից՝ Խավարը, այստեղ կյանքն է, այնտեղ՝ մահը: Ատելությանը հակադրվում է սերը:

Բացի նամակների վավերականության ներքին ցուցիչներից՝ ունենք նաև Առաքելական Հայրերի վկայությունը, որոնցից՝ Պոլիկարպոսինը, որը մեջբերումներ է կատարում բոլորից, ավելի ուշ՝ Եկեղեցական Հայրերինը, որոնցից են՝ Իրինեոսը, Տերտուլիանոսը, Օրիգենեսը, Կղեմես Ալեքսանդրացին ու Կիպրիանոսը, որոնք մեջբերումներ են կատարում Հովհաննեսի առաջին նամակից և ընդունում դրա՝ Հովհաննեսի գրչին պատկանելու փաստը:

ժամանակակից մասնագետների կարծիքով, այս երեք նամակները գրվել են նույն ժամանակաշրջանում և նույն վայրում:

Հիշեցնենք, թե ով է Յովհաննեսը: Լինելով Ջերեզոսի որդին և մասնագիտությամբ՝ ծկնոր՝ նա սկզբում ավելի շուտ թվում է հախուռն ու մեծամիտ բնավորությամբ մարդ: Ավելի ուշ, թվում է, մեղմանում է և հայտնվում աշակերտների մտերմիկ շրջանակում: Նա այն «աշակերտն է, որին Տերը սիրում էր»:

Բ. ՀԱՆՉԱՍԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՀԱՍՏԵԱՏԵՐԵՐՈ

Ճշգրտությամբ հնարավոր չէ տալ երեք նամակները գրելու ո՛չ տարեթիվը, ո՛չ էլ վայրը: Տեղի հետ կապված ամենահավանական վարկածն այն է, որի համաձայն գրելու վայրը համարվում է Փոքր Ասիան: Իբրև նամակատերեր կարելի է ենթադրել այն եկեղեցիները, որոնք այստեղ հաստատվել էին առաջին դարի կեսից սկսած և կամ, որ ավելի ճշմարտանման է, այս դարի վերջերին: Նշված ժամանակաշրջանում ժողովարանի ու եկեղեցու բաժանումն ավարտված էր, և հավատքով արդարացման ու գործերով փրկվելու վերաբերյալ վեճերը՝ դադարած: Բազմաթիվ հեթանոսների՝ եկեղեցի մուտք գործելն առաջ էր բերում այլ հարցեր: Նրանց ժառանգությունը կամ «մշակութային պաշարը» ծանրակշիռ ձևով զգացվում է երիտասարդ եկեղեցու աստվածաբանության վրա:

Հետաքրքիր կլիներ մի քանի տող նվիրել հեթանոսական և կրոնական այս ժառանգության ամենակարևոր ու ամենամահարմար մասին. չէ՞ որ այս երեք նամակները հավատացյալներին տեղեկացնում, վկայում և մղում են դիմակայելու եկեղեցուն ու նրա հավատքին սպառնացող վտանգին: Նորապես հավատքի եկած հեթանոսներն իրենց առջև բազմաթիվ խնդիրներ են դնում Քրիստոսի անձի վերաբերյալ: Ո՞վ էր նա: Եթե նա Աստված էր, այդ ինչպե՞ս է, որ մահացել է: Առաջարկվել են բազմաթիվ պատասխաններ: Հենց սկզբից էլ Քրիստոսի բնույթի և անձի հարցը երկար ժամանակ զբաղեցնում է եկեղեցուն. դա դեռևս այդպես է նաև մեր օրերում: Յովհաննեսի կողմից քննադատված առանձնահատուկ մոլորությունը գնոստիցիզմի՝ ծայրահեղ վտանգավոր հերետիկոսության նախնական ձև է: Գնոստիցիզմն, ըստ էության, ավելի շուտ կրոնի փիլիսոփայություն է, քան կրոնական համակարգ: Համաձայն գնոստիկական ուսմունքի՝ հոգին լավն է, իսկ նյութը՝ վատ: Այս երկու բևեռների միջև չկա մշտական կապ: Նրա կարծիքով, փրկությունը նյութից դուրս գալն ու դեպի հոգու ոլորտները փախչելն է: Այս փախուստը նույնացվում է իմացությանը, որը գնոստիկ հավատացյալին հնարավորություն է տալիս երկրից վեր բարձրանալ և ըմբռնել երկնային ճշմարտությունը: Ճանաչողությունը ձեռք է բերվում միայն ներքին (թաքուն) մի խմբի մտերիմների ու գործին տեղյակ մարդկանց կողմից: Այսպես է բախում առաջացել գնոստիցիզմի կողմնակիցների և քրիստոնյա աշակերտների միջև Քրիստոսի Անձի վերաբերյալ:

Հարցադրումը հետևյալն է. անսահման Հոգի հանդիսացող Աստված ինչպե՞ս կարող է ունենալ նյութեղեն մարմին: Երկուսի միջև միասնությունը միանգամայն անհնարին ու անըմբռնելի կլիներ: Այդժամ առաջարկվել է երկու լուծում: Առաջինի պնդմամբ, Քրիստոսը մարդ էր միայն արտաքնապես (սա արդեն իսկ *docétisme* է, հունարենի *dokein*՝ «հայտնվել» բառից): Հոգին Քրիստոսի մեջ պետք է ապրեր միայն նրա մկրտությունից սկսած և

լքեր խաչի վրա՝ նրա մահվան պահին: Մյուս մոլորությունն իր անվանումն ստանում է հերետիկոսական երկրորդ վարկածի հեղինակի՝ Գերենթի անունից: Երկուսն էլ ճակատագրական էին մաքուր Ավետարանը պահպանելու առումով: Քանզի եթե ընդունվեին թե՛ մեկ և թե՛ մյուս մոլորությունները, ապա անհնարին կլիներ իմանալ, թե ում էր հասցեագրվում հավատքը: Հավատացյալները հավատում էին երկրային Հիսուսի՞, թե՞ անմարմին հոգու:

Հովհաննեսի առաջին նամակի լեզուն ենթադրում և կամ ակնարկում է նախնական գնոստիցիզմի մասին: Հեղինակի համար Հիսուսը որոշակի և շոշափելի անձնավորություն է, ահա թե ինչու է նա հակադրվում docétisme-ին: Նա, ով Հիսուսին չի ընդունում իբրև այսպիսին, Աստծուց չէ: Մյուս երկու նամակները նույն խնդիրը շոշափում են եկեղեցական քաղաքականության տեսակետից: Երրորդ նամակը բովանդակում է հետաքրքիր տեղեկություններ դարաշրջանի եկեղեցական կյանքի վերաբերյալ: Շրջիկ քարոզիչների ներկայության փաստից կարելի է ենթադրել Եկեղեցու ներսում կիրառված չարաշահումների ու անօրինությունների վտանգի առկայության մասին: Դիտորեփեսի դեպքը հոգևոր բռնության օրինակ է: Նա այցելություններ չի ընդունում և ուրիշներին էլ խանգարում է այցելել: Հեղինակը բողոքում է իշխանության նմանօրինակ չարաշահման դեմ: Կարելի է ամփոփել՝ ասելով, որ երեք նամակները գրված են հոգևոր կեղծ մի փիլիսոփայության դեմ պայքարելու նպատակով, փիլիսոփայություն, որը ձգտում է ենթարկեցնել, կլանել քրիստոնեական հավատքը, այն ոչնչացնել ու նաև խեղաթյուրել նրա ավետարանական առանձնահատուկ լուրը:

Գ. ԿԱՊԸ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՀԵՏ

1. Նմանությունները

Ինչպես Ավետարանում, այնպես էլ նամակներում, ընդգծված են նույն ուսմունքներն ու ճշմարտությունները. Հիսուսը Լոգոսն է, Խոսքը, Միակ Որդին, Սուրբ Հոգին Մխիթարիչն է ու Պահապան-Հոգին: Հավիտենական կյանքը սկիզբ է առնում հենց այստեղ և տարածվում գալիք կյանքի վրա:

2. Տարբերությունները

Թվում է, թե Ավետարանն ուղղված է գլխավորապես ոչ հավատացյալներին. ընդգծում է Քրիստոսի աստվածային ծագումը (20:30-31), նրանց հրավիրում է հավատքի:

Համարյա միակողմանիորեն՝ նամակները հասցեագրվում են նրանց, ովքեր պատկանում են հոտին: Նրանք «որոյակներ» են (2:1, 18:28) և «սիրելիներ» (2:7, 3:2-6) հավատքի մեջ: Նամակները գրված են հավատքի նկատմամբ համոզվածություն առաջացնելու նպատակով (Ա. Հովհ. 5:13): Lightfoot-ի և նրանից հետո շատ շատերի կարծիքով, առաջին նամակը հավանաբար ուղարկվել է նույն ժամանակ, ինչ Ավետարանը՝ իբրև սրա վերջաբան:

3. Առաջին նամակի կապը մյուս երկու նամակների հետ

Հովհաննեսի առաջին նամակը զարգացնում է Աստծու հետ հաղորդության թեման, մինչդեռ վերջին երկուսը զարգացնում կամ էլ շեշտը դնում են նույն այս թեմայի մտավոր առնչու-

թյունների վրա: Կարելի է զարմանալի նմանություն գտնել առաջին երկու նամակների միջև. երկրորդ նամակի տասներեք տողերից ութը հանդիպում է առաջինում:

4. Կապը «Չայտնության» հետ

Չակաքիստոսի մասին հիշատակումը Չովհաննեսի առաջին նամակում տանում է դեպի թեմայի ավելի կատարյալ զարգացում «Չայտնություն»-ում, հատկապես Քրիստոսի առաջին և երկրորդ գալստյան միջև եղած պատմության ժամանակագրական ցանկում: Այստեղ հեղինակը զարգացնում և իր գագաթնակետին է հասցնում հակաքրիստոնեական ուժերի պարտությունը: Չովհ. 16:33 և Ա. Չովհ. 5:4 տողերում խոստացված հաղթանակն իրականացվում է թագավորաց թագավորի և տերերի Տիրոջ կողմից, ում մասին հայտնվում է «Չայտնության» մեջ:

Դ. ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. ՆԱԽԱԲԱՆ՝ 1:1-4

Նախաբանը հիմնավոր այն հայտարարությունն է, որի վրա հեղինակը կառուցում է նամակի ողջ մտածողությունը: Այն բաղկացած է երեք տարբեր մասերից. 1) Քրիստոսն Աստծու Չավիտենական Որդին է՝ ժամանակի մեջ դրսևորված կյանքի Խոսքը, 2) առաքյալները վկաներ էին, որոնք լսել էին նրա խոսքերն ու տեսել նրա հրաշքները. նրանք նաև Քրիստոսի Չարության վկաներն էին, 3) ընթերցողները կարող են հաղորդակցվել նրա հետ՝ լի ուրախությամբ:

2. ԱՍՏՎԱԾ ԼՈՒԹՍ Է՝ 1:5-2:27

Նրա հետ հաղորդության մեջ լինելու համար պետք է քայլել լույսի մեջ: Անհավատի նշանը մթության մեջ գտնվելն է. նա հավատում է ստին, մերժում է ճշմարտությունը, ատում է Լույսը: Ինչ վերաբերում է հավատացյալին, ապա նա Լույսի մեջ է. հավատում է Չայտնված ճշմարտությանը, հնազանդվում է խոսքով ու գործով: Ահա թե ինչու, եթե դուք լուսավորված եք Չոգով, պարտավոր եք.

ա) Ընդունել մեղքերը և դրանք խոստովանել (1:18-22): Պերֆեկցիոնիստները¹ պնդում են, որ այլևս ոչ մի մեղք չունեն: Մյուսները մեղքը համարում են սովորական մոլորություն և կամ մարդկային բնույթին հատուկ թուլություն: Այսպես թե այնպես, նշանակում է, որ Աստված համարվում է ստախոս, և այդժամ նրա ճշմարտությունն այլևս չի բնակվում մեր մեջ: Աստված հայտարարում է, որ մենք մեղավորներ ենք, և որ կարիք ունենք թողության: Չարկ է խուսափել երկու մոլորությունից. անտարբերությունից, քանզի ներկա կյանքում մենք երբեք զուրկ չենք լինի մեղքից, այնուհետև՝ կեղծ վստահությունից, որով պնդվում է՝ իբրև Աստված ամեն դեպքում թողություն կտա մեր մեղքերին:

բ) Արդ, մեր համոզվածությունը Քրիստոսի՝ Խաչի վրա քավության մեջ է: Աստծուն պետք է տեսնել իր պատվիրաններում և հետևել դրանց (2:3-8): Աստծու և մեր մերձավորի հետ

¹ Ֆրանսերենի perfection (կատարելություն) բառից: Քրիստոնեական աղանդի կողմնակիցներ, ովքեր փնտրում են կատարելություն:

հաղորդությունը պետք է կառավարվի նրա սուրբ պատվիրաններով: Եթե մենք ճանաչում ենք նրա ճշմարտությունը, նա մեզ կտանի ճիշտ ճանապարհով և այդամ կապացուցենք, որ նրան ճանաչում ենք: Հետևել Աստծու պատվիրաններին, նշանակում է հետևել Քրիստոսին:

գ) Քրիստոսին տեսնել մերձավորի մեջ և սիրել նրան (2:9-14): Ատել որևէ եղբոր, նշանակում է ընթանալ խավարի մեջ, դա հանգեցնում է իբրև սատանայի կողմնակից դառնալուն: Եթե սիրում եք ձեր եղբորը, ապա ցույց եք տալիս, որ Աստված ապրում է ձեր մեջ, որ ձեր մեղքերը ներվել են, և որ դուք գիտեք, որ Աստված Սատանային հաղթողն է:

դ) Ատեք չարիքը, որ տեսնում եք աշխարհում (2:15-17): Աշխարհիկությունը սահմանվում է իբրև մարմնի սեր (մարմնական ախորժակ), աչքերի ցանկասիրություն (նայելով և հաճույք ստանալով մեղքի մտքերից ու գործերից) և մեղքի պահանջներ (ապրելով այնպես, ասես ձեր կյանքի միակ պատասխանատուներն եք):

ե) Հակաքրիստոսին տեսնել գործի մեջ և մարտնչել նրա դեմ (2:18-28): Թեսաղոնիկեցիներին ուղղված երկրորդ նամակում նույն այս անձնավորությունն անվանվում է մեղավոր մարդ, իսկ Հայտնության մեջ՝ զազան: Հակաքրիստոսը բազմաթիվ նախորդներ ունի եկեղեցում: Նրանք տարբերվում են Հիսուսի Քրիստոս լինելու իրողության ժխտմամբ: Լինել քրիստոնյա նշանակում է կապերը խզել նրանցից:

3. ԱՍՏՎԱԾ ԱՐԴԱՐ Է՝ (2:24-4:6)

Նրա հետ հաղորդություն ունենալու համար պետք է արդար լինել: Վերածնունդը առաջ է բերում հոգևոր այնպիսի կյանք, որի մեջ արդարությունը բացահայտ է: Այս արդարությունը կդրսևորվի ինքնին:

ա) Հոգևոր ձևով նայելով առաջ, կանխատեսելով Տիրոջ գալուստը, իմանալով, որ մենք լինելու ենք փառաբանված Քրիստոսի պես (2:28-3:3):

բ) Բարոյապես՝ ինքնամաքրվելով և մարտնչելով մեղքի դեմ (3:3-10):

գ) Սոցիալապես՝ սիրելով եղբորը (3:11-14): Ատելության օրինակ է Կայենը՝ մարդն ըստ աշխարհի: Մինչդեռ Քրիստոսը սիրո մեծ օրինակ է, նա է, ով սիրում է յուրայիններին՝ ընդհուպ մինչև զոհելով կյանքը:

դ) Տեսականորեն՝ մարտնչելով հերետիկոսության դեմ (4:1-6): Կեղծ մարգարեները հրաժարվում են հավատալ հայտնությանը և գնում են սեփական ճանապարհներով:

4. ԱՍՏՎԱԾ ՍԵՐ Է (4:7-5:3)

Նրա հետ հաղորդություն ունենալու համար պարտավոր ենք սիրել: Հովհաննեսի հետ մեկտեղ ասելով, որ Աստված Սեր է, ուշադրությունը հրավիրում ենք նրա էության միայն մի փուլին: Նա նաև Արդարություն է, ճշմարտություն, Սրբություն: Եթե միակողմանիորեն շեշտեինք նրա Սերը, ապա, անշուշտ, կխեղաթյուրեինք Աստվածային նրա Անձը: Աստված մեզ ապացուցել է իր սերը՝ մեզ պարգևելով իր Միածին Որդուն: Մեր պարտքն է սիրել միմյանց, ինչպես Աստված է մեզ սիրել: Անկեղծ ու ազնիվ սեր հնարավոր է միայն Աստծու Հոգով: Նրա սերը զուր չի եղել, քանզի սեր է սերմանել մեր մեջ: Սիրել Աստծուն՝ նշանակում է հետևել նրա պատվիրաններին: Նրա պատվիրանների ընդհանուր հանրագումարը փոխադարձ սիրո կիրառությունն է:

5. ԱՍՏՎԱԾ ՀԱՎԱՏԱՐԻՄ Է՝ (5:4-12)

Նրա հետ հաղորդության մեջ լինելու համար պետք է կիրառենք հավատքը: Խոսելով հավատքի ու նրա կիրառության հարաբերության մասին՝ հեղինակն անդրադառնում է հենց հավատքին: Հավատքի պտուղը մեղքի և Սատանայի նկատմամբ տարած հաղթանակն է: Նրա առարկան Քրիստոսն է, ում մասին վկայություն է տրվել, որ Աստծու Որդին է. Հոգով, Մկրտությամբ և Խաչի վրա: Հավատալ կամ կիրառել նրա հավատքը, նշանակում է ունենալ Որդուն և Հավիտենական Կյանք, մինչդեռ հավատքի բացակայությունը նշանակում է Աստծուն համարել խաբեբա՝ մերժելով նրա Դատաստանը:

6. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ (5:13-21)

Իր եզրակացության մեջ հեղինակը կրկին հաստատում է գրվածքի նպատակը: Ընթերցողները պետք է իմանան, թե ինչ է Հավիտենական կյանքը, որը դրսևորվում է Որդու մեջ: Որպեսզի կարողանան աղոթել լիովին վստահ, թող իմանան, որ հավիտենապես փրկված են, եթե ճանաչում են Տեր Հիսուս Քրիստոսին: Նա եզրակացնում է քրիստոնյաներին ուղղված հայցով՝ զգուշանալ այն ամենից, ինչն Աստծուն թույլ չի տալիս իրենց գոյության մեջ զբաղեցնել առաջին տեղը:

Ե. ԼՈՒՐԸ

Հեղինակը ձգտում է տեղեկացնել այն ճշմարտության վերաբերյալ, որ նամակատերերն ընդունել են հավատքով: Նրանց հրավիրում է Աստծու և մյուս եղբայրների հետ ավելի մտերիմ հաղորդության: Հիշեցնում է Ենովքին, որն ընթացել է Աստծու հետ: Այս հավատացյալը Աստծու հետ քայլելու կատարելատիպն է և լուսաբանում է նամակի թեման. ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԱՍՏԾՈՒ ՀԵՏ:

Հովհաննեսի առաջին նամակը համարվել է ավելի շուտ սիմֆոնիկ (համանվագային) նամակ, քան տրամաբանական տրակտատ: Իրոք, հիշեցնում է ավելի շուտ երաժշտական ստեղծագործություն, քան համակարգված բանավեճ կամ շարադրանք: Նամակի այս հատկանիշը հնարավորություն չի տալիս այն ընթերցել ցանկալի թեթևությամբ: Որոշ մասնագետներ այն որակել են իբրև անձնական փորձառության վերաբերյալ տրակտատ: Իսկապես, ձգտում է ներարկել հավիտենական կյանք ունենալու համոզմունքը, առաջարկում է այն ձեռք բերելու համար անհրաժեշտ թեստեր: «Մենք գիտենք» արտահայտությունը ավելի քան 15 անգամ հանդիպում է նամակում: Նշանակում է, որ համոզվածության հասել են փորձառությամբ, կամ էլ բարձրագույն բնականոն գիտակցությամբ: «Լույս» և «Կյանք» բառերը հատուկ են հեղինակին: Նկարագրում են Աստվածությունը: Բովանդակության զարգացումը երկար նամակի մեծ մասն է կազմում: Ներածական երկար մի նախադասությամբ՝ հեղինակը՝ պատմության ականատես վկան, հաստատում է, որ ուզում է հաղորդել հայտնված կյանքի վերաբերյալ լուրը, որպեսզի ընթերցողները ևս փորձարկեն այն, և որ, իրենց հերթին, կարողանան մասնակցել Կյանքի հաղորդությանը, որ գոյություն ունի Հոր և Որդու միջև: Աստված Լույսն է, և Աստծու

հետ հաղորդությունը, հետևապես, պետք է դրսևորվի բարոյական գեղեցկության մեջ: Միայն նրանք կարժանանան ներման ու կմաքրագործվեն Քրիստոսի քավիչ մահով, ովքեր խոստովանել են իրենց մեղքերը: Նրանք, ովքեր փոխադարձ հաղորդության մեջ են, հաղորդության մեջ կլինեն Աստծու հետ: Աստծու և նրա մասին իմացության միջև հաղորդություն կարող է լինել միայն նրա պատվիրաններին հետևելու պայմանով: Աստծու հետ միաբանությունը ներառում է նրա բնավորությանը համապատասխանելու իրողություն, բնավորություն, որ Քրիստոսը մեզ հայտնել է: Նա, ով հրապարակավ հայտարարում է իբր Լույսի մեջ է, սակայն չի հնազանդվում սիրո պատվիրանին, հայտնվում է խավարի մեջ: Իսկական քրիստոնյաները չպետք է սիրեն աշխարհն ու ձուլվեն այս աշխարհում ապրողների հետ, քանզի վերջիններս դատապարտված են կործանման: Քրիստոսի աստվածային ծագումը ժխտող կեղծ դոկտորների տեսքով բազմաթիվ հակաքրիստոսների հայտնվելը ժամանակների վախճանի մոտեցման նշանն է: Իսկական հավատացյալներն ամրապնդվում են Քրիստոսի մեջ, ստացել են նրա Յոգու օծումը: Աստված Արդար է, իսկ նրանք, ովքեր հաղորդության մեջ են նրա հետ, պետք է կատարեն նրա Արդարությունը՝ իրենց որդի լինելն ապացուցելու համար: Եթե Տերը վերադառնա Երկիր, Աստծու զավակները նման կլինեն Քրիստոսին: Հակադրություն կա նրանց և սատանայի զավակների միջև: Նա, ով ծնվել է Աստծուց, հաճույքով չի տրվում մեղքին, քանզի նրանում ապրում է Աստծու բնույթը: Նրանք, ովքեր Աստծուց են, չեն գոհանում եղբայրական սիրո մասին խոսելով, այլ եռանդուն ձևով կիրառում են այն: Մաքուր խիղճ ունեցող մարդը բոլոր հանգամանքներում կարող է դիմել Աստծուն, և այդժամ կանսան նրա աղոթքներին: Հոգևոր ամեն գործունեություն, սակայն, Հոգու գործը չէ: Իսկական հավատացյալներ են միայն նրանք, ովքեր խոստովանում են մարմնացած Հիսուս Քրիստոսին, ովքեր ընդունում են Աստծու Որդու մարմնացումը: Կեղծ մարգարեները ժխտում են նրա մարդկային բնույթը: Իսկական սերը աստվածային ծագում ունի: Աստված ապացուցում է մեր հանդեպ իր սերը՝ ուղարկելով Որդուն, որպեսզի իրականացնի մեղքերի թողությունը: Նման սերն ու խոստովանումն այն բանի, որ Հիսուսը Աստծու Որդին է, Աստծու հետ մեր միաբանության հիմքն ու ապացույցն են: Կատարյալ սերը ցրում է Դատաստանի հանդեպ վախը: Աստծու նկատմամբ սերն անբաժանելի է եղբայրների հանդեպ սիրուց: Հիսուս Քրիստոսի՝ Աստծու Որդու նկատմամբ հավատքը Աստծուց ծնվածներից յուրաքանչյուրի նշանն է: Նրանք միակն են, որ կարող են հետևել Աստծու պատվիրաններին և հաղթել աշխարհին: Քրիստոնյան կարող է համոզված լինել, որ կանսան իր աղոթքներին և մեղք գործած որևէ եղբոր օգտին արված միջնորդությանը:

Ձ. ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Այս նամակն ավելի անձնական բնույթի է, քան առաջինը: Ուղղված է Ընտրյալ Տիկնոջն ու նրա երեխաներին: Այս ողջույնի թարգմանումը մնում է երկիմաստ, քանզի էլեկտան կամ Կյուրիան կարելի է ներկայացնել Ընտրյալ Տիկին ձևով, եթե դրանց տակ տեսնենք հատուկ անուն: Տարբեր մասնագետներ տարբեր կերպ են մեկնաբանում: Խոսքն արդյոք առանձին մի անձնավորության մասի՞ն է, թե՞ բառը մատնանշում է Եկեղեցին:

Դիմելուց ու ողջույնի խոսքից հետո հեղինակն իր ուրախությունն է արտահայտում այն անձանց քրիստոնեական վարքի կապակցությամբ, ում դիմում է: Հիշեցնում է սիրո ու հնազանդության պատվիրանը: Զգուշացնում է կեղծ դոկտորներից և հավատարմության հորդոր անում: Հերետիկոսին չպետք է ընդունել, անգամ ողջունել՝ վախենալով, որ նման ընդունելությունը կարող է դիտվել իբրև կեղծ ուսմունքի խրախուսում:

Հիշատակելով այն մասին, որ հույս ունի այցելել նրանց, առաքյալը հրաժեշտ է տալիս, և եկեղեցու կողմից, որին պատկանում է, ողջունում է նամակատիրոջն ու նամակատերերին:

Այստեղ, նմանապես, կարելի է նկատել, որ նույն վտանգը հետապնդում էր եկեղեցուն. խոսքը նրա մեջ թափանցած կեղծ դոկտորների մասին է: Հետևապես, զգոնության նույն կոչն ուղղվում է նաև եկեղեցուն:

1. Դիմում և ողջույն (տող 1-3)
2. Ուրախության արտահայտություն (տող 4-6)
3. Պատգամ կեղծ դոկտորներից զգուշանալու մասին (տող 7-11)
4. Եզրակացություն (տող 12-13)

Է. ՀՈՎՅԱՆՆԵՍԻ ԵՐՐՈՐԴ ՆԱՍԱԿԸ

Հովհաննեսի վերջին երկու նամակները բազմաթիվ առումներով նման են իրար: Երկուսում էլ հեղինակն ակնարկում է, որ այցելելու է նամակատերերին. ուզում է նրանց հետ բերանացի խոսել: Այստեղ ևս շեշտը դնում է եղբայրական սիրո անհրաժեշտության վրա: Ողջույնի կարճ խոսքից հետո Երեցն իր գոհունակությունն է հայտնում Գայոսի մասին ուրախ լուրեր ստանալու առիթով, նրա, ով հավատարմության ապացույցներ է տվել՝ հյուրընկալելով շրջիկ քարոզիչներին, որոնք, այսուամենայնիվ, հրաժարվում էին աշխատանքի մեջ օգնել նրան: Սակայն, քմնադատում է Դիոտրեփեսին՝ եկեղեցու մեծամիտ առաջնորդին, որը վնդում է հյուրընկալության ոգի ունեցողներին, մինչդեռ Դեմետրիոսն իրեն պահել է միանգամայն արժանավայել ձևով՝ համաձայն ուրիշ մարդկանց վկայության: Երեցը հուսով է, որ կարճ ժամանակ անց կհանդիպի Գայոսին: Եզրափակում է ողջույնի խոսքով և մաղթում անհատապես հիշվել բարեկամների կողմից:

1. Ողջույն և աղոթք (տ. 1-2)
2. Շնորհակալական խոսք քրիստոնեական հյուրընկալության համար (տ. 3-8)
3. Հանդիմանություն վատ վարքի համար (տ. 9-10)
4. Քրիստոնեական հյուրընկալության հորդոր (տ. 11-12)
5. Եզրակացություն (տ. 13-14)

Բովանդակությունից երևում է, որ Աստծու հետ հաղորդությունը ներառում է եղբայրների հետ հաղորդությունը: Իբրև մարդկային էակներ, մենք ունենք սոցիալական կարիքներ, իսկ դրանք կարող են բավարարվել եկեղեցուն: Եթե սիրում ենք Աստծուն, կսիրենք նաև հյուրընկալություն անել: Քրիստոնեական միստիկան գործ է միայն մեր և Աստծու միջև, այն նաև սոցիալական հարաբերություն է. դա նույն հավատքը դավանողներին ընդունելն է: Քրիստոնեական հավատքը, թեև այն չափազանց անձնական է, ունի սոցիալական ու համայնքային ընդգրկում:

Ձ. ՀՈԿՅԱՆՆԵՍԻ ԵՐԵՔ ՆԱՄԱԿՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Այս նամակները և հատկապես՝ առաջինը, անգնահատելի արժեք են ներկայացնում՝ իբրև քրիստոնեական կյանքի անձնական ու համայնքային զգայաչափ: Սրանք հորդոր-նամակներ են, սակայն զուրկ չեն տեսական վարդապետությունից: Եկեղեցում ներառված պատմական ճշմարտությունը կիրառվում է առաջին նամակում: Մեղմ տոնը չպետք է մտածել տա հանդուրժողականության մասին: Երեքն էլ պարզորոշ ձևով սահմանազատիչ գիծ են անցկացնում ճշմարտության ու ստի, Լույսի ու խավարի, սիրո և ատելության միջև: Սրանք ենթադրում են Քրիստոսով Հավիտենական կյանքի պարզ ու կատարյալ հայտնություն, որը հավատքի կողմից ընդունվելիք ճշմարտության կանոնն է: Նման ընդունելության հետևանքները գծագրված են այնպես, որ հավատացյալները կարողանան ասել՝ մենք մահ-վանից անցել ենք կյանք: Այս նամակները եզակի ու ամուր ճակատ են հերետիկոսություն-ների ու մոլորությունների հայտնության դեմ: Դրանք սոսկ բանավիճային չեն, այլև կառու-ցողական՝ դրականորեն ներկայացնելով Ավետարանի վարդապետությունը: Մտածողության հասունությունն ու սուրբ կյանքը նպատակներ են, որոնց պետք է հասնել: Նամակները գրվել են ոչ թե բանավեճ առաջացնելու, այլ քրիստոնեական կյանքը զարգացնելու նպա-տակով, որպեսզի քրիստոնյան զգուշանա չարից, և որ վերջինս ոչ մի ազդեցություն չգոր-ծի նրա վրա:

Գ Լ ՈՒ Խ 39

ՀՈՒՂԱՅԻ ՆԱՄԱԿԸ

Ա. ՀԵՂԻՆԱԿՆ ՈՒ ՎԱԿԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նոր Կտակարանը հիշատակում է Հուդա անունը կրող երեք անձ.

- Տասներկու առաքյալներից մեկը, որն հայտնի է նաև Ղեբեոս կամ Թադեոս անվամբ (Ղուկ. 6:16, Գործք 1:13): Չշփոթել Հուդա Իսկարիոփտացու հետ:

- Հուդա՝ Հիսուսի եղբայրը (Մատթ. 13:55, Մարկոս 6:3):

- Հուդա, որն անվանվում է նաև Բարսաբաս (Գործք 15:22):

Խոսքը ո՞ր Հուդայի մասին է: Բոլորը միաձայն ընդունում են, որ խոսքը ոչ թե առաքյա-լի, այլ Հիսուսի եղբոր մասին է: Չէ՞ որ նա համեստորեն իրեն անվանում է «Հիսուս Քրիստո-սի ծառա», իսկ 17-րդ տողի համաձայն, թվում է, չի պատկանում առաքյալների թվին: Ճշգրտումը, որ առաջարկում է՝ «Հակոբոսի եղբայրը», առավել ևս խոսում է նրա՝ «Հիսուսի եղբայրը» լինելու փաստի օգտին:

Հիսուսի հասարակական գործունեության սկզբում մարմնական եղբայրներից և ոչ մե-կը նրան չհավատաց (Հովհ. 7:5): Ավելի ուշ Հուդան, ինչպես նաև Հակոբոսը, հավատքի

եկավ (Գործք 1:1): Մեզ այլևս համարյա ոչինչ հայտնի չէ նրա անձի վերաբերյալ, բացառությամբ այն, ինչ ասված է Կորնթացիներին ուղղված առաջին նամակի 9:5 տողում, որտեղ հանդես է գալիս իբրև ամուսնացած մարդ և շրջիկ քարոզիչ: Նրա վերաբերյալ հավաքված բոլոր վկայությունները կապված են այս գրվածքի հետ: Վաղ շրջանի Եկեղեցու մեծ աստվածաբանները, որոնց մեջ՝ Տերտուլիանոսը, Օրիգենեսը և Յերոնիմոսը, հիշատակում են այն: Ըստ Յերոնիմոսի՝ այս կարճ նամակն անմիջապես չճանաչվեց իբրև կանոնական, քանի որ կարծում էին, թե այն պարունակում էր մեջբերումներ պարականոն գրքերից՝ Մովսեսի մահը, Ենովքի Գիրքը (տես՝ տող 9, 14, և 15):

Համաձայն հիների վկայության՝ նա օգտագործում է այնպիսի լեզու, որը չափազանց մնաց է պարականոն այս երկու գրքերի լեզվին: Իհարկե, դա չի նշանակում, որ Յուդան, պարականոն այս գրքերից արված մեջբերումները համարում է իր վարդապետության աղբյուր: Շատ հնարավոր է, որ Յուդայի այս երեք գրվածքների (Մովսեսի Մահը, Ենովքի Գիրքը) համար աղբյուր եղած լինի լիովին վստահելի բանավոր մի ավանդություն: Մեզ ճշգրտորեն հայտնի չէ, թե Յուդան որտեղից է քաղել իր տեղեկությունները: Բայց դա ամենևին էլ կարևոր չէ: Բավական է նրա գրվածքն ընդունել իբրև ներշնչանքով գրված կանոնական գիրք՝ Եկեղեցու հավատքի համար:

Բ. ԳՐԵԼՈՒ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

Յուդայի ուղերձը Նոր Կտակարանի «ընդհանրական» կոչվող յոթ նամակներից է: Ուղղված է ոչ թե որևէ անհատի կամ տեղական եկեղեցու, այլ Հիսուս Քրիստոսի ամբողջ եկեղեցուն (Յուդա տ. 1):

Կարելի է ավելացնել, որ Պետրոսի մարգարեությունն իրականացել է այն ժամանակ, երբ Յուդան շարադրում էր իր նամակը:

Յեղիմակը ոչինչ չի ասում այն վայրի վերաբերյալ, որտեղ իր նամակատերերն են: Յրեանե՞ր էին, թե՞ հեթանոսներ. այս մասին ևս ոչինչ հայտնի չէ: Յին Կտակարանի որոշ հատվածների արված հաճախակի հղումներից կարելի է ենթադրել, որ խոսքն, ավելի շուտ, հրեական ծագում ունեցող ընթերցողների մասին է: Նրանք, ըստ երևույթին, ապրում էին Փոքր Ասիայում, նրանց են ուղղված նաև Պետրոսի երկու նամակները: Մենք ընդունում ենք առավելապես այն մասնագետների (որոնցից են Th. Zahn-ը և Greidanus-ը) կարծիքը, ովքեր համաձայն չեն այս մտքին (հմմտ. օրինակ, Բ. Պետրոս 3:3-ը՝ Յուդա 17, 18 և Բ. Պետրոս 2:1-ը՝ Յուդա 4 տողերի հետ):

Յեղիմակի մտադրությունը պարզ է՝ ըստ 3-րդ և 4-րդ տողերի: Այն երկակի է.

- ուսուցանել համընդհանուր փրկության վերաբերյալ

- հորդորել պահպանելու ճշմարիտ հավատքը՝ այն պաշտպանելով կեղծ դոկտորներից ու տեսական աղավաղումներից, որոնք հանգեցնում են բարձիթողի բարոյականության:

Ինչ վերաբերում է գրելու տարեթվին, այստեղ, առավել ևս, չկա միահամուռ կարծիք: Ոմանք տեղավորում են Բ. հ. 70 թ. առաջ, քանի որ 5-րդ և 7-րդ տողերը կարող էին ակնարկել Երուսաղեմի կործանումը, եթե նամակը գրվել է այս իրադարձությունից հետո: Մյուսներն էլ հակված են ընդունել ավելի ուշ տարեթիվ՝ առաջին դարի վերջերում: Նրանք

հիմնվում են 17-րդ և 18-րդ տողերի վրա, որոնցում ակնարկ է արվում այն մասին, որ առաքյալները նախորդ սերնդից էին:

Գ. ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նամակում վեր հանված հետաքրքիր առանձնահատկություններից մեկը հեղինակի՝ տրիադաներ օգտագործելու հանդեպ սերն է: Իրոք, նամակը բաղկացած է վեց հիմնական մասից, որոնք տեղ են գտել երեք խմբի մեջ: Առաջին երկուսը ներմուծում են մտածողությունը, երկրորդում վիճարկվում է հերետիկոսությունը, իսկ վերջին երկուսը տալիս են եզրակացությունը: Օրինաձևը ընթերցողներին բերում է ողորմածություն, խաղաղություն և սեր: Կան այլ տրիադաներ ևս, որ կարելի է հայտնաբերել նամակն ուշադիր ընթերցելու դեպքում: Սակայն, հեղինակի ոճի այս առանձնահատկությունը կարևոր ոչ մի նշանակություն չունի հաղորդած լուրի համար:

Փոխարենը (և դա կարևոր է նշված առումով) նամակը գրելու ժամանակաշրջանում գոյություն ուներ արդեն հաստատված տեսական լավ մարմին: Տեսական ձևավորումն անցել է զարգացման դանդաղ գործընթաց: Ստույգ է անգամ, որ այսօր էլ տեսական բոլոր հարցերը վերջնականապես չեն ամրագրվել: Վերջապես, ընդունենք այն փաստը, որ եթե աստվածաբանական «մանրատիպեր» են հանդես եկել, ապա դրանք մոռացության են մատնվել: Չափազանց մեծ եղած կլիներ գայթակղությունը՝ եզրակացնելու, իբր նման փոփոխությունները հետևանք չեն թողնում Եկեղեցու կյանքում: Սակայն Նոր Կտակարանն առաջադրում է բավականին խիստ չափանիշներ ու կանոններ, նույնիսկ եթե մեր անգիտությունը, անգամ քրիստոնյաների մեղքը, բացատրում են քրիստոնեական մտածողության և աստվածաշնչյան վարդապետության ձևակերպման մեջ տեղ գտած որոշ շեղումներ:

Դ. ԼՈՒՐԸ

Հուդան ընթերցողներին և Քրիստոսի ամբողջ Եկեղեցուն զգուշացնում է աստվածուրացության վտանգից: Այս երևույթը, որը վեր է հանվում 4-րդ տողում, սոսկ տեսական բնույթի չէ, այլև բարոյական: Մոլորություններ տարածողների կարծիքով, այն, ինչ կատարվում է մարմնի մեջ, ամենևին ազդեցություն չի թողնելու հոգու վրա: Գաղափարը հիմնվում է հեթանոսական շահախարդախ դուալիզմի վրա, որով մարդը բաժանվում է երկու մասի՝ «մարմնի» և «հոգու», որոնք դիտվում են իբրև հակադիր նախանյութեր:

Այս տեսությունը նրանց հնարավորություն է տալիս մատնվել լիակատար անիշխանականության և ընկնել մեղքի բոլոր ծայրահեղությունների մեջ:

Տեսական մոլորությանը հաջողվում է Աստծու ազատագրող շնորհը վերածել քայքայված բարքերի, մի բան, որն, ի վերջո, հանգեցնում է Քրիստոսի Տիրապետության ժխտմանը: Ուրացողների գործունեությունը նկարագրված է բազմիցս (տ. 8, 12, 13, 16, 19): Հեղինակի ոճը, թեև խիստ, զուրկ չէ գեղեցկությունից (տ. 12 և 13):

Հին Կտակարանից է Հուդան քաղում մի շարք ցնցող օրինակներ. անհավատության պատճառով Իսրայելը նետվել է կրոնական ու ազգային աղետի մեջ: Ընկած, խռովարար

հրեշտակները հավիտենապես շղթայված են խավարի մեջ: Սողոմն ու Գոմորը, սանձարձակության պատճառով, կրում են դաժան պատիժը՝ հավիտենական կրակի դատաստանը: Կայենն ու Բաղաամը ցանկասիրության զոհ են դառնում: Կորխը մեծամիտ խռովարար է... Այս դեպքերից յուրաքանչյուրում մարդկանց գլխին աստվածային անասելի պատիժ է փլվում: Ահա թե ինչու, Դուդան իրեն ժամանակակից աստվածուրացներից համեմատում է Դին Կտակարանի ուրացողների հետ:

Բառապաշարը, որով սահմանում է իր կողմից վեր հանվող հերետիկոսությունը, համաձայնության մեջ է Պետրոսի բառապաշարի հետ: Հակաօրինության (անտիմոնիա) մոլորությունը, այսինքն՝ Օրենքի և Աստվածային Բարոյականության մերժումը, քրիստոնեական ազատությունը վերածում է թողտվության և հերքում անգամ Դիսուս Քրիստոսի Տիրապետությունը: Եթե մինչ այդ տեսական կարգի հերետիկոսությունն էր (հրեական կրոն տարածողների ուղղահավատությունը) սպառնում է կեղեցուն, ապա այսուհետ սպառնալիք է դառնում անբարոյականությունը, որը չի ճանաչում քրիստոնեական պահվածքի և ոչ մի կանոն: Դա մտավոր չարաշահման վտանգավոր արդյունք է՝ ուղեկցված ամեն պարտականության հանդեպ ազատ երևակայությամբ, արհամարհելով քրիստոնյայի բարոյական պատասխանատվության իմաստը:

Պետք է հակազդել անաստվածությանն՝ իր բոլոր ձևերով, հավատքով մարտնչել նրա դեմ (տ. 3): Ոչ միայն տեսականորեն, այլև Հայտնությանը և Փրկության իմացությանը համապատասխան կյանքով: Այս կերպ միայն հակառակորդները կխառնվեն իրար, այսինքն՝ Դիսուս Քրիստոսի վկա հավատացյալների ճիշտ վարքով:

Եթե սիրեն Աստծուն, ապա հավատքը կիրառության մեջ կդրվի: Նկատենք, որ խոսքն այս սիրո մեջ մնալու, այլ ոչ թե սեփական ջանքերով նրա մեջ թափանցելու մասին է: Իրողությունը նաև սուրբ հավատքի վրա իրեն կառուցել է: Աղոթել հոգով և հասնել վերջնական սպառնանք՝ փրկության վերջնական ավարտին (տ. 20-21): Չպետք է մոռանալ, որ հավատքի համար հնարավոր չէր մարտնչել սեփական ուժերով և, հատկապես, առանց ուրիշի մասին մտածելու:

Ինչպե՞ս օգնել մոլորյալներին: Խոսքը նրանց ուղղելու մասին է: Փրկության նպատակով հորդորել ոճանց, մյուսներին շրջապատելու հայրական ամուր զգացումով: Այս մարտը մղելու համար անհրաժեշտ ուժը կգա վերևից, Նրա կողմից, ով կարող է մեզ ետ պահել ամեն մեղքից (տ. 24) և անեղծ հայտնվել նրա առջև: Բայց եթե չընդունենք նրան, նա չի կարող մեզ ետ պահել մեղքից: Ամեն դեպքում, հոգևոր նման մարտը կարող է մտահղացվել միայն Սուրբ Դոգու օգնությամբ (տ. 20):

Ավելացնենք, որ թեև ոճը կոպիտ է, հեղինակը ոչ մի տեղ հավատացյալներին չի ստիպում հալածել շեղվողներին. վերջիններս իրենք իրենց կանհետանան: Բայց նա հոգ է տանում շեշտը դնելու նրանց հանդեպ սիրո վրա, ովքեր մոլորվում են թուլության ոգով: Ուղերձն ավարտվում է աստվածաշնչյան ամբողջ գրականության ամենագեղեցիկ ու ամենահրաշալի օրհնություններից մեկով:

Մենք գիտենք, որ հավատքի մեջ մեր համառությունը հնարավոր է, քանի որ Քրիստոսը մեզ պահպանում է մեր սուրբ հավատքի մեջ: «Դուդայի լեզուն արտառոց է: Այս նամակը այնքան էլ հանրաճանաչ չէ մեր օրերում: Այն չի ներդաշնակում ժամանակակից մտածո-

դությանը. նորահունչ չէ: Եվ, սակայն, նրա արդիականությունը պետք է գրավի մեզ: Որոշ արտահայտություններ կարող էին դուրս գալ ժամանակակից հեղինակների գրչի և կամ արվեստագետների վրձնի տակից: Համեմատեք, օրինակ, այն, ինչ գրում է քանուց քշվող անջուր ամպերի, աշնան անպտուղ՝ երկու անգամ մեռած, արմատախիլ եղած ծառերի և ծովի կատաղի ալիքների մասին, որոնք նետում են իրենց փրփուրը և կամ էլ թափառող աստղերի մասին, որոնք ընդմիշտ պահվել են գիշերվա մթության մեջ (տ. 12-13): Մեր առջև բնանկար է, որի վրա իշխում են անպտղությունն ու մահը: Արդ, գտնում ենք, որ Հուդայի նամակի ոչ ժողովրդականությունն ամենևին էլ լեզվի խստության մեջ չէ, այլ ճշմարտության ու ամրության: Հեղինակը ոչ թե խոսում է աղոտ բառերով, այլ մատնացույց է անում առանձնահատուկ մեղքերը: Նա վեր է հանում մահացու վտանգը և զգուշացնում է դրանից: Այսպիսով, հենց ժամանակակիցներն են, որ չեն գնահատում նմանատիպ բացահայտումները»¹:

Ե. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Ողջույն (տ. 1-4)

Հեղինակն իրեն համարում է Հակոբոսի եղբայրը և Հիսուս Քրիստոսի ծառան: Ընթերցողներին Աստված սիրում է, իսկ Քրիստոսը՝ պահպանում: Գրելով այնպիսի ընդարձակ թեմայի շուրջ, ինչպիսին Փրկությունն է, հեղինակը դառնում է ավելի ու ավելի ճշգրիտ, հորդորում է ընթերցողներին մարտնչել՝ հանուն ընդմիշտ ավանդված հավատքի և անխուսափելի վտանգների դեմ:

2. Չարագործների դեմ կայացված դատաստանը (տ. 5-10)

Մեջբերում է դատաստանի երեք օրինակ. Եգիպտոսից փրկված, բայց այնուհետև, անպատում ցուցաբերած անհավատարմության պատճառով, կործանված Իսրայել: Սկզբում ամբարիշտ իրեշտակները, որոնց մեղքին չհետևեց փրկությունը: Սողոմը՝ անօրենն ու պռոնիկը: Այս անհավատները, որոնց անվանում է «ցանկասիրությամբ լի, ամբարիշտ, աստվածամարգ մարդիկ», կունենան նույն ճակատագիրը: Տերը կուղղի նրանց ու կպատժի:

3. Նրանք, ովքեր չարիք են սփռում (տ. 11-16)

Նրանք համեմատվում են Կայենի՝ մարդասպանի հետ: Հերետիկոս Բաղասամին հետաքրքրում է միայն փողը: Կորխը՝ խռովարարը, հաստատված իշխանության դեմ է: Փոխաբերական իմաստով նրանք նկարագրված են իբրև սիրո խնջույքներն աղտոտողներ, անջուր, անօգտակար ամպեր, անպտուղ ծառեր, մոլոր աստղեր: Այս ամբարիշտների, կեղծավորների ու ցանկասերների դատավճիռն արդեն արտասանվել է Ենովքի՝ առաջին մարգարեի կողմից:

¹ C. Vander Waal.

4. Հորդորներ (տ. 17-23)

Նրանք (ընթերցողները) պետք է հիշեն այս կանխագուշակությունները, կառուցվեն սրբագույն հավատքի վրա, ջերմեռանդորեն աղոթեն և մնան Աստծու սիրո մեջ: Ինչ վերաբերում է ամբարիշտներին, ապա պետք է նրանց հանդիմանել, ցույց տալ ճիշտ ճանապարհը և ցավակցել:

Վերջնական փառաբանումն ուղղվում է Աստծուն, որն ընդունակ է նրանց պահպանել ամեն չարից և անեղծ պահել մինչև դատաստանի օրը, քանզի Մեր Տերն է:

Գ Լ ՈՒ Խ 40

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀԵՂԻՆԱԿՆ ՈՒ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նոր Կտակարանի վերջին գրքի հեղինակն իրեն անվանում է Հովհաննես (1:4, 9, 22:8): Ո՞ր Հովհաննեսի մասին է խոսքը: Ժամանակակից որոշ քննադատներ հրաժարվում են ընդունել, որ դա կարող է լինել առաքյալ աշակերտը: Իրենց փաստարկը հիմնում են նրա վրա, որ Ավետարանի և Նամակների հեղինակը կամ «հեղինակները» իրենց չեն անվանում: Քննադատությունը նշում է նաև իր կարծիքով աչքի զարնող այն տարբերությունը, որ գոյություն ունի «Հայտնության» և Հովհաննեսի գրչին պատկանող աստվածաշնչյան մնացած գրականության ոճի և ընդհանուր հնչողության միջև: Սակայն, բավական է ընթերցել Ավետարանը, իսկ այնուհետև «Հայտնությունը», որպեսզի համոզվենք հակառակ կարծիքի մեջ: Անշուշտ, Ավետարանում գաղափարները տրվում են մեղմ ձևով, մինչդեռ «Հայտնության» մեջ դրանք հայտնվում են այնքան կտրուկ, որ նախապես հնարավոր չէ իմանալ, թե ինչ է ուզում ասել հեղինակը: Ավետարանում ընդգծվում է Աստծու սերը, մինչդեռ «Հայտնության» մեջ ակնհայտ են դառնում նրա խստությունն ու դատաստանը: Ավետարանում նկարագրվում է Հոգու կյանքի ներքին վիճակը, իսկ «Հայտնություն»-ը զբաղվում է արտաքին իրադարձություններով: Առաջինը գրված է հրաշալի հունարենով, շատ գեղեցիկ ձևով, մինչդեռ վերջինը՝ անհարթ, եբրայաբանություններով լեցուն լեզվով, այսինքն՝ քաղաքակրթությանն ավելի մոտ կանգնած հունարենով:

Նմանապես, պնդել են նաև, որ զգալի տարբերություն կա Ավետարանում և այս գրքում շարադրված վարդապետությունների միջև: Առաջինը խոսում է լայն ու ընդհանրական ոգու մասին: Քարոզում է «նա, ով հավատում է», ինչպես նաև՝ ողորմածությամբ Փրկություն: Երկրորդը՝ դարձյալ քննադատների կարծիքով, վկայում է ավելի շուտ նեղ մտածողության մասին: Փրկության գաղափարի մեջ լինելով հրեա՝ հեղինակն ընդգծում է լավ գործեր կատարելու անհրաժեշտությունը:

Վերջապես նշում են, որ երրորդ դարի սկզբում, Դիոնիսոս Ալեքսանդրացին այս գիրքը վերագրում է մեկ ուրիշ Յովհաննեսի. այս գաղափարն ընդունվում է դարաշրջանի Եկեղեցու պատմաբանի՝ Եվսեբիոս Կեսարացու կողմից:

Հիշյալ փաստարկները որոշ քննադատների համոզեցին, որ Նոր Կտակարանի վերջին գիրքը գրող Յովհաննեսը մեկ ուրիշ Յովհաննես է, այլ ոչ թե Հիսուսի աշակերտը: Նրանց կարծիքով, Յովհաննեսը 4-րդ Ավետարանի հեղինակն է: Ոմանք էլ ընդունում են «Յայտնության» Յովհաննեսի գրչին պատկանելու փաստը, սակայն պնդում են, որ մեկ ուրիշն է, գուցե՝ նույն անունը կրող, գրել Ավետարանը: Կան նաև արմատական քննադատներ, ովքեր ժխտում են այն փաստը, որ Ավետարանն ու «Յայտնություն»-ը գրվել են Յովհաննես անունը կրող անձանց կողմից:

Ավելի մոտիկից քննության առնենք այս փաստարկները:

Առավել քան հավաստի է այն, որ «Յայտնության» հեղինակը, որն իրեն կոչում է Յովհաննես, ճանաչված էր ոչ միայն այն շրջանակում, ում դիմում էր, այլև Փոքր Ասիայի բոլոր Եկեղեցիներում:

Քանի որ ինքն իրեն անվանում էր պարզապես Յովհաննես, ապա անհրաժեշտաբար պետք է ենթադրենք, որ խոսքն առաքյալի մասին է: Կարծում ենք՝ իր անվանը ոչ մի կոչում չի ավելացրել այն պարզ պատճառով, որ բոլորի կողմից ճանաչված էր իբրև առաքյալ: Ու եթե չի հիշատակում այս կոչումը, պատճառն այն է, որ բնագիրն ուղղում է իբրև «պայծառատես», այլ ոչ իբրև ականատես վկա այն իրադարձությունների, որ կատարվել են մի ժամանակ (տես՝ Յովհ. 15:27, 1:22-23, Ա. Կորնթ. 9-1):

Մենք ընդունում ենք երկու գրվածքների քերականական ու ոճական աչքի զարնող տարբերությունը, մի բան, որը, սակայն, չի նշանակում, թե Յովհաննեսը «Յայտնության» հեղինակը չէ: Այս դեպքում ինչպե՞ս բացատրել առկա տարբերությունները:

Շատ հավանական է, որ Ավետարանը հրաշալի հունարենով գրված լինի մեկ կամ մի քանի քարտուղարների կողմից, մինչդեռ մյուսը՝ անմիջականորեն գրված լինի Պատմոս կղզում մեկուսացած հեղինակի կողմից:

Կան ուշադրության արժանի այլ տարրեր ևս: Ուստի, պետք չէ չափից ավելի ուռճացնել ոճական ու քերականական տարբերությունները, քանի որ երկու գրվածքների միջև առկա են բազմաթիվ նմանություններ, որոնք դրսևորվում են մինչև իսկ քերականական կառույցներում և բնորոշ արտահայտություններում, օրինակ՝ Յովհ. 7:37 և «Յայտնություն» 22, 17, Յովհ. 10:18 և «Յայտնություն» 2:27, Յովհ. 20:12 և «Յայտնություն» 3:4, Յովհ. 1:1 և «Յայտնություն» 19:13, Յովհ. 1:19 և «Յայտնություն» 5:6:

Նույն ձևով էլ՝ չակնկալենք կատարելապես նման ոճ այս երկու գրվածքներում: Ավետարանը պատմություն է, նամակներն անձնական գրվածքներ են, մինչդեռ «Յայտնություն»-ը հայտնութենական քողազերծում, իրադարձությունների խորհրդանշական մեկնաբանություն: Չպետք է մոռանալ, որ այս գիրքը գրելու ժամանակ հեղինակը Պատմոս կղզում էր՝ ազատ մարդու պայմաններից միանգամայն տարբեր հանգամանքներում: Նա ասում է, որ «Յոգու մեջ է»: Թեմայի տրամսցենդենտալ բնույթը, տեսիլքների ժամանակ հեղինակի խոր հուզական վիճակը, Հին Կտակարանին հաճախակի արվող ակնարկները՝ եբրայերենով կամ հունարենով. սրանք են ոճական տարբերությունների պատճառը, տարբերություն-

ներ, որոնք միաժամանակ մեկ այլ տեղ հավաստում են զարմանալի նմանություններ: Ավելի երկար չենք անդրադառնա երկու գրվածքների միջև գոյություն ունեցող «տեսական տարբերություններին»: Այն պարզ փաստը, որ «Չայտնություն»-ը չի հակադրվում Ավետարանին, արդեն իսկ մեծ ձեռքբերում է: Իրոք, Ավետարանում (1:29) Չիսուսն անվանվում է Աստծու Գառ (amos), իսկ «Չայտնության» մեջ 29 անգամ նա անվանվում է arnion: Չովհաննեսի նամակներում ու Ավետարանում օգտագործվում է Logos բառը, ինչն արվում է նաև «Չայտնության» 19:13 տողում:

Ավետարանում Քրիստոսը ներկայացվում է իբրև նախապես գոյություն ունեցած, Չավիտենական (1:1): Նույնը նաև՝ «Չայտնության» գրքում (22:13): Ավետարանը փրկությունը վերագրում է Աստծու գերագույն ողորմածությանն ու Չիսուս Քրիստոսի արյանը (1:29. 3:3, 5:24, 10:10-11): «Չայտնություն»-ը համառորեն նույն բանն է անում (7:14, 12:11, 21:6, 22:17): «Չայտնության» մեջ կրկին հանդիպում ենք նրա մասին ուսմունքին, «ով հավատում է» (Չովի. 3:36 և «Չայտնություն» 7:9, 22:6): Անկողմնակալորեն՝ մենք տեսական էական ոչ մի տարբերություն չենք տեսնում երկու գրվածքների միջև: Եվ, վերջապես, ինչ վերաբերում է Դիոնիսոսի կարծիքին, ապա պետք է պարզ լինի, որ այն հիմնվում է Պապիասի մի պնդման վատ ընթերցանության վրա. վերջինս, ըստ երևույթին, ազդվել էր միլենարիզմի (քիլիզմի) ընդդիմությունից, ուսմունք, որն իրեն արդարացնում էր՝ հենվելով «Չայտնության» վրա:

Վաղ շրջանի Եկեղեցին միաձայն այս գրքի հեղինակային իրավունքը տալիս է Չովհաննես առաքյալին՝ Չուստինոս Վկա (140), Իրինեոս (180), Սուրատորիի Կանոն (200), Կղեմես Ալեքսանդրացի (200), Տերտուլիանոս (200), Օրիգենես (233) և Չիպոլիտոս Չռոմեացի (240): Եթե ասվածին ավելացնենք նաև Չովհաննեսի՝ Պատմոս կղզի աքսորվելը կամ էլ այն փաստը, որ կյանքի վերջին տարիներին մնացել է Եփեսոսում և այստեղից ուղարկել 7 նամակները (2:1), ապա հեշտությամբ կեզրակացնենք, որ Աստվածաշնչի վերջին գրքի համար պարտական ենք Չովհաննեսին՝ Չիսուսի աշակերտին ու առաքյալին:

Բ. ՀԱՍՑԵԱՏԵՐԵՐԸ

Չամաձայն 1:1 և 22:6 տողերի՝ այս գրվածքի հասցեատերերը «Աստծու սպասավորներն» են, որոնք գտնվում են 2-րդ և 3-րդ գլուխներում հիշատակված Յոթ Եկեղեցիներում՝ Եփեսոսում, Ջնյուռնիայում, Պերգամոնում, Սարդեսում, Թյուստիրայում, Փիլադելփիայում, Լաոդիկիայում:

Գիրքը գրվել է Պատմոսում՝ Եգեյան ծովի 30 կմ² տարածքով ժայռապատ կղզում: Ուղղված է ժամանակի քրիստոնյաներին և պատասխան է ամբողջ Փոքր Ասիայում դաժանորեն ճնշված քրիստոնյաների աղոթքներին ու արցունքներին:

Չաջորդ պարբերություններում, այլ սյունակներում ևս, քննության կառնվի հասցեատերերի հարցը:

Գ. ԳՐԵԼՈՒ ՏԱՐԵԹԻՎԸ

Ե՞րբ է գրվել «Հայտնություն»-ը: Դա արդյո՞ք 69 թ. է, կամ ավելի ուշ ընկած մի տարեթիվ, կամ էլ, ինչպես ոմանք են անում, պե՞տք է, արդյոք, շրջել թվերի տեղերը՝ ստանալու 96 թ.: Ուշ տարեթվի օգտին չկա և ոչ մի հիմնավոր փաստարկ: Ոմանք հակված են ընդունել այս տարեթիվը, քանզի այդ ժամանակաշրջանում Հովհաննեսը «դեռևս բավականաչափ լավ չգիտեր հունարեն...»: Դրանով էլ, թերևս, բացատրում են ոճի անկատարությունը: Նրանք նմանապես հենվում են 11:1 տողի և այստեղ խոսվող Տաճարի կասկածելի մի մեկնաբանության վրա, որը, սակայն, լիովին խորհրդանշային է:

Ուշ տարեթիվն ունի ավելի շատ կողմնակիցներ: Իրինեսուր գրում էր. «Զէ՞ որ հայտնութենական տեսիլքը վաղուց չէ, որ հայտնվել է, այլ մեր դարաշրջանում՝ Դոմիցիանոսի կառավարման վերջերում», իսկ «Եփեսոսի Եկեղեցին, որ հիմնվել է Պողոսի կողմից, և որտեղ Հովհաննեսն ապրել է մինչև Տրայանոսի ժամանակները (98-117), իսկական վկան է առաքյալների ավանդույթի»:

«Հայտնությունն» արտացոլում է մի դարաշրջան, երբ Եփեսոսը կորցրել էր առաջին սիրո ջերմեռանդությունը, Սարդեսը համարյա մեռած էր, իսկ Լատդիկիան, որ ավերվել էր Ներոնի կառավարման օրոք և հետո կրկին վերակառուցվել, պարծենում էր նյութական բարգավաճ վիճակի համար (3:17), Հովհաննեսն աքսորված էր. պատժի մի ձև, որն ընդունված էր Դոմիցիանոսի դարաշրջանում, Եկեղեցին անցյալում հալածանքների էր ենթարկվել (20:4), իսկ Հռոմեական կայսրությունն իբրև այդպիսին, դարձել էր Եկեղեցու խոշոր հակառակորդը (17:9): Այս փաստերի շնորհիվ՝ կհանգենք մի եզրակացության, որը խոսում է ուշ՝ Դոմիցիանոս կայսեր կառավարման վերջերում ընկած տարեթվի օգտին:

«Հայտնության» ուշադրության կենտրոնում բոլոր Եկեղեցիների դեմ ծավալված աննախադեպ հալածանքներն են: Աղետը խիստ յուրահատուկ ձևով կդիպչի Փոքր Ասիայի Եկեղեցիներին: Հովհաննեսի աքսորումն, անկասկած, կայսերական որոշման հետևանք էր, որոշում, որի նպատակը կայսրության մեջ քրիստոնեության վերացումն էր: Գրքի բովանդակությունից հասկանում ենք, որ տարեթիվը կամ դարաշրջանը կայսրի՝ պաշտոնականացված աստվածացման տարեթիվը կամ ժամանակաշրջանն է: Նման պայմաններ Փոքր Ասիայում իշխում էին առաջին դարի վերջերին: Ըստ պատմաբան Եվսեբիոսի՝ Դոմիցիանոսն աքսորել է քրիստոնյաներին, որոնց մեջ նաև եղբոր աղջկան՝ Փլաբիա Դոմիցիլլային: Այլ քրիստոնյաների հետ նա աքսորվեց այժմյան Սև ծովի կղզիներից մեկը: Հռոմեացի հեղինակ Պլինիոսը Տրայանոս կայսերը գրել է (112 թ.), որ Բյուզանդիայի գավառում քրիստոնյաները իրենց նախկին հավատքն ուրացել էին շուրջ 20 տարի առաջ: Եթե անվանված Եկեղեցիների հրեշտակները եպիսկոպոսներն են, ապա դա ենթադրել է տալիս ավելի ուշ տարեթիվ: Բոլոր այս փաստերն, ուստի, խոսում են «Հայտնության» մ. թ. առաջին դարի ավարտին մոտ գրված լինելու օգտին: Լարված մթնոլորտում քրիստոնյաները ստիպված են պատասխանել՝ անգամ վտանգի ենթարկելով իրենց կյանքը. Քրիստոսի՞ն են ընտրելու, թե՞ նրան մերժելու են Կեսարի օգտին: Հավանական է, որ Հովհաննեսն իր գիրքը սկսել է գրել աքսորի սկզբում, աքսոր, որն, ըստ երևույթին, տևել է բազում տարիներ:

Դ. ԳՐՔԻ ՍԻՄՎՈԼԻԶՄԸ

Հայտնության գիրքը մաս է կազմում աստվածաշնչյան կամ արտաստվածաշնչյան գրական մի ժանրի, որը կոչվում է ապոկալիպտիկ գրականություն:

Ապոկալիպտիկ գրականության էությունը հասկանալու համար նախ պետք է ըմբռնել դրա գլխավոր կողմերը: Այնուհետև՝ ճանաչել գրելու դարաշրջանը: Գրական որևէ ժանր հնարավոր չէ ճանաչել՝ առանց ճանաչելու այն դարաշրջանը, որին այս գրականությունը պատկանում է, նաև՝ շրջապատող հանգամանքներն ու մշակույթը: Աստվածաշունչը նույնպես պետք է ընթերցվի՝ հաշվի առնելով գրելու արտաքին և ներքին գործոնները: Ընդունելով ներշնչված բնույթը՝ մենք պետք է Աստվածաշունչը տեղավորենք պատմական իր ընթացքի մեջ, ինչպես և ցանկացած այլ գիրք: Մենք, հետևաբար, խոսում ենք նրա առաջարկողական և պատմափրկչական բնույթի օգտին: Աստվածաշունչը, անգամ իր «Հայտնության» մեջ, երկնքից ուղղակիորեն ընկած գիրք չէ:

Արդ, աստվածաշնչյան գրականությունը, առավել քան մեկ ուրիշը, պահանջում է պատմական մոտեցում: Դա չի նշանակում, թե այն ընթերցելու և հասկանալու համար անհրաժեշտ է ունենալ գիտելիքների ամուր պաշար: Հիշենք, որ Գրքի առաջին ընթերցողների մեջ չկային բավականաչափ թվով Աստվածաբանության Դոկտորներ՝ լուրը հասկանալու համար (հնարավոր է անգամ, որ նրանց թիվն ավելանալու հետ գրքի ըմբռնման տոկոսն իջներ): Այս գրքի ընթերցանությանը ձեռնամուխ լինելու համար բավական է հիշել աստվածաշնչյան ամեն մի ընթերցանության ենթադրյալ հիմքը: «Հայտնություն»-ը նույնպես ներշնչված է Սուրբ Հոգով և պահանջում է իր հեղինակությունն ընդունելու գործում մեր համեստ ու երախտապարտ հնազանդության մասնաբաժինը: Աստվածային իր Հեղինակի աջակցության մասին հիշելով ենք այն ընթերցում, այլապես, ամենամեծ գիտելիքների առկայության դեպքում էլ, ճիշտ այնպես, ինչպես երևակայական որևէ այլ ընթերցանության դեպքում, կշեղվեինք կենսական այն լուրից, որ գիրքը հաղորդում է այսօրվա համար:

Հայտնության գիրքը բովանդակում է որոշակի իրողությունների մի շարք պատկերներ ու խորհրդանշական ներկայացումներ: Պատկերներն անընդհատ շարժման մեջ են: Այս շարժումը մեզմից առավել ուշադրություն է պահանջում: Ինչ-որ մեկը քայլում է ճրագակալների միջև. նա կրում է երկար զգեստ, իսկ կրծքավանդակի շուրջը ոսկյա գոտի է: Մազերը ձյան պես ճերմակ են, աչքերը փայլում են ինչպես կրակ: Աջ ձեռքին յոթ աստղ է, իսկ բերանից դուրս է գալիս կրկնակի սայրով թուր:

Այնուհետև պատկերը փոխվում է. երևում է լուսապսակով շրջապատված գահ, որտեղից դուրս են գալիս կայծակներ ու ամպրոպներ: Նա, ով նստած է գահին, աջ ձեռքին ունի յոթ կնիքով կնքված փաթեթ, ինչ-որ մեկը, որը ներկայացվում է իբրև Հուդայի ցեղի Առյուծ, մոտենում է գահին: Վերցնում է փաթեթը: Անմիջապես հետո կենդանի չորս արարած շրջապատում են գահը և 24 երեցներ ծնկի են իջնում Գառան առջև: Յուրաքանչյուրն ունի քմար և խնկով լի ոսկե բուրվառներ, ու նրանք մի նոր երգ են երգում: Մինչ երաժշտությունն ավարտվում է, հայտնվում են չորս ձիեր՝ սպիտակ, կարմիր, սև և դեղնականաչավուն: Մինչ ձիերն իրենց ձիավորներով սլանում են, երևում են միմյանց բնաջնջող մարդիկ: Ոմանք քաղցի զոհ են, մյուսները նետվում են վայրի գազանների առաջ: Երևում են նաև սպանվածների հոգիները: Նրանք բարձրաձայն աղաղակում են զոհասեղանի առջև: Արևը խա-

վարում է, լիալուսիճը արյան կարմիր գույն է ստանում: Աստղերն ընկնում են երկրի վրա: Երկինքը փաթեթի պես գալարվում է: Ամեն սար ու ամեն կղզի տեղից շարժվում է: Մարդիկ՝ թագավորները, մեծամեծերը, սպաները, հարուստներն ու աղքատները, թաքնվում են չորս քարանձավներում ու ժայռերի տակ: Չորս հրեշտակ պահում են չորս քամիները, որպեսզի ամեն ինչ չոչնչանա, ինչպես երկրի վրա, այնպես էլ ծովում: Այնուհետև, 144 հազար մարդ (խորհրդանշական թիվ) կնքվում են կնիքով. մարդկանց մի մեծ բազմություն, որ ոչ ոք չի կարող հաշվել, և որոնք սերված են բոլոր ազգերից ու ցեղերից, հայտնվում են ու բարձրաձայն աղաղակում. «Մեր փրկությունը Աստու գործի մեջ է, նրա, ով նստած է գահին և Գառի գործի մեջ»: Յոթ ուրիշ հրեշտակներ և յոթ փողեր են այնուհետև հայտնվում բեմի վրա: Մեկ ուրիշ հրեշտակ սկսում է խունկ առաջարկել: Խնկանոցը լիքն է կրակով. նրա բովանդակությունը դատարկվում է գետնին: Դրան հետևում են որոտ, կայծակ ու երկրաշարժ:

Ամբողջ գիրքը կազմված է նման տեսարաններից, որոնք հաջորդում են միմյանց ու լիքն են խորհրդանիշերով: Լսվում են ձայներ, երգեր, պատասխաններ և երկնային երգչախմբի ձայն:

Ինչպե՞ս մեկնաբանել այս սիմվոլիզմը: Փորձենք դա հասկանալ աստվածաշնչյան մեկ այլ պատկերի՝ առակի օգնությամբ, օրինակ՝ Ղուկասի Ավետարանի 10-րդ գլխում ներկայացվող Բարի սամարացու առակի:

Ամբողջ առակից պետք է հասկանալ էականը՝ խուսափելով այլաբանական իմաստ հաղորդել բոլոր մանրամասներին և կամ իմաստ որոնել դրանցում: Այս առակը հասկանալու համար ամենևին էլ անհրաժեշտ չէ իմանալ, թե ով է ավազակների զոհ դարձած ճանապարհորդը, ոչ էլ այն, թե ում են ներկայացնում քահանան, ղևատացին ու սամարացին: Եվ կամ՝ թե ինչ իմաստ պետք է տալ գինուն ու ձեթին, երկու արծաթադրամներին և այլն: Այս տարրերից և ոչ մեկը ինքնին չունի հոգևոր խոր նշանակություն: Եթե հարկ էր հոգևոր դարձնել սամարացու ջորին, ապա ո՞վ կարող էր որոշել, թե որն է դրա իմաստը: Երկու արծաթադրամներն արդյոք ներկայացնո՞ւմ են երկու խորհուրդները, թե՞ նաև երկու Ուխտերը: Ո՞վ կարող է որոշել դրանց բնույթը: Եվ այսպես, ենթատեքստը հնարավորություն չի տալիս առաջ քաշել որևէ վարկած: Այսուհանդերձ, երբ մեկ անգամ ընթերցում ես առակը, պետք է ինքդ քեզ հարց տաս՝ ո՞րն է պատմության ընդհանուր իմաստը: Դա մեզ կփրկի մանրուքների՝ անհնարին ու անիմաստ վերլուծության մեջ ընկնելուց: Առակի էությունը հետևյալն է. ո՞վ է իմ մերձավորը: Եվ կամ՝ ես՝ իմ օգնության կարիքն զգացող մարդու մերձավորն եմ:

Այս կերպ մեզ կհաջողվի գլխավորը տարբերել երկրորդականից:

Նմանատիպ մի սկզբունք պետք է ղեկավարի «Հայտնության» մեջ տեղ գտած առակների մեկնաբանության գործը: Հարկավոր չէ մտածել մանրամասների մասին՝ ձիերի, նրանց ատամների, կրծքի և այլն: Պետք է պահպանենք խորհրդանիշի միասնությունը: Պետք չէ մեկնաբանել մանրուքը, եթե միայն դա անհրաժեշտ չէ ամբողջը հասկանալու առումով: Օրինակ, Նոր Երուսաղեմի խորհրդանիշն ընդամենը Աստու հետ մտերիմ հաղորդության ներկայացումն է: Իսկ այնպիսի մանրամասներ, ինչպիսիք են գետը, պատերը, դռները, հիմքերը, պատկերում են դրա փառավոր իրողությունը: Այստեղ ևս, ինչպես առակում, ենթատեքստը հնարավորություն կտա ըմբռնել օգտագործված պատկերի իմաստը:

Առաջարկվել է աստվածաշնչյան առակները բաժանել երկու կարգի՝ Նոր դիսպանսա-

ցիայի սկզբի և վերջի առակներ: Խորհրդանիշերը, ինչպես ցույց է տալիս ենթատեքստը, ընդհանրապես վկայակոչում են առանձնահատուկ որևէ իրադարձություն:

Կրկնակի հունձքը վկայակոչում է Վերջին Դատաստանը, հետևաբար և՛ որևէ իրադարձություն: Այլ խորհրդանիշեր էլ հայտնվում են Քրիստոսի առաջին և երկրորդ գալուստների միջև: Մենք մտածում ենք այնպիսի խորհրդանիշերի մասին, ինչպիսիք են՝ ճրագակալները, կնիքները, փողերը, գավաթները և այլն: Եթե սրանք վկայակոչում են ճշգրիտ իրադարձություններ, ապա պետք է խոստովանենք մեր անգիտությունը: Պատմական հազարավոր տարեթվերից, անձանցից ու իրադարձություններից, որոնք բոլորն էլ նմանության որոշ գծեր ունեն խորհրդանիշի հետ, ո՞րն է ամենից ավելի հավատարմորեն ներկայացվել, ո՞վ կարող է դա ասել: Մենք կկանգնեինք հազարավոր բացատրությունների առջև՝ չլինելով սակայն կատարելապես համոզված: Այս դեպքում, «Հայտնություն»-ը մեզ համար մշտապես կլինի փակ գիրք:

Արդ, այս գիրքը փակ չէ: Նրա էջերում կարդում ենք Աստծու Հայտնությունը: Ուստի, կարծում ենք, որ անգամ ընդհանուր գծերով ուսումնասիրված այս սիմվոլիզմի հիման վրա, կարող ենք հասնել կարևոր եզրակացության: Կնիքները, փողերը, գավաթները և մյուս պատկերները վկայակոչում են ոչ թե պատմական իրադարձություններ կամ դրանց մանրամասները, այլ պատմության ընթացքում գործող սկզբունքներ: Դրանց գործունեության ոլորտն ընդարձակ է: Խորհրդանիշերը վերաբերում են հիմնականում ցամաքի, ծովի, ծառերի երրորդ մասին: Դա չէր կարող այդպես լինել, եթե ամեն խորհրդանիշ և ամեն կնիք պատկերեր պատմական ճշգրիտ որևէ իրադարձություն՝ տվյալ վայրում ու որոշակի ժամանակում: Բայց եթե խորհրդանիշը դիտենք իբրև դիսպանսիայի սկզբից մինչև վերջ տեղի ունեցող իրադարձությունների շարք մատնանշող նշան, ապա այն կսկսի իմաստ ստանալ: Օրինակ, այս արտահայտությամբ. «բոցավառված մի սար նետվեց ծով», նկարագրվում են տեղի ունեցած և տեղի ունենալիք ծովային բոլոր աղետները: Խորհրդանիշը չի վերաբերում միայն մեկ անհատի, այլ մարդկանց բազմությանը: Փողերը հնչում են ամբողջ մարդկության համար: Դրանք չեն առնչվում Եվրոպայում ապրող առանձին մի ժողովրդի, որը կռվելու է պապի հետ: Նմանապես, դրանք վերաբերում են ոչ թե որևէ դարաշրջանի անհավատների, այլ մարդկության պատմության բոլոր անհավատներին: Այս իմաստով կարող ենք ասել, որ «Հայտնությունը» արդիական գերազանց գիրք է:

Նշենք նաև 7 թվի կարևորությունը: Նամակներն ուղղված են Յոթ Եկեղեցիների: Այս թիվը հայտնվում է մոտ 54 անգամ: Դա հավաստում է այն դրույթը, համաձայն որի խորհրդանիշերը վկայակոչում են մարդկային վարքի և աստվածային կառավարման սկզբունքներ՝ իբրև կատարելության ու լիության նշան: Աստծու ծրագիրը մարդկանց՝ փրկության նկատմամբ իմաստուն դարձնելն է: Ուստի, հեղինակի նպատակը բարոյական է և հոգևոր: Եթե խորհրդանիշը ցույց տար պարզապես իրադարձություններ, ապա կգոհացներ որոշ ընթերցողների հետաքրքրասիրությունը՝ առանց, սակայն, հաստատելու նրանց հավատքը: Բայց եթե մտածենք, որ այն վեր է հանում մարդկային վարքի ու աստվածային կառավարման սկզբունքներ, ապա այդ ժամանակ կըմբռնենք պատմության ընթացքում Աստծու աջն ու նրա Ամենազորությունը՝ պաշտպանելով Եկեղեցին և Հիսուս Քրիստոսի Տիրակալությամբ նրան հաղթանակ պարգևելով: Սա ունի այն առավելությունը, որ ամրապնդում է մեր հավատքը և մխիթարում փորձության մեջ:

Մեկ բառ էլ այն մասին, թե ինչ բնագիր կամ թարգմանություն ընտրել: Նոր Կտակարանի թարգմանությունները հիմնված են հունարեն բնագրի վրա, որը հաստատվել է տրամադրության տակ եղած բոլոր ձեռագրերի լուրջ քննությունից հետո: Նոր Կտակարանի բոլոր գրքերից «Չայտնությունն» է, որ ունի ամենաքիչ հին ձեռագրեր: Բառացի զարգացման պատմությունը նույնպես տարբերվում է Աստվածաշնչի մյուս գրքերից: Որոշ նախադասություններ քերականորեն վատ են կառուցված և ունեն ոճական վատ դարձվածքներ: Դա դժվարացնում է բնագիր տեքստի թարգմանությունը: Ուստի, խորհուրդ չենք տալիս դիմել գրքի հակասություններին: Դրանք կեղծում են աստվածաշնչյան բնագրերի իմաստը՝ ժամանակակից ընթերցողներին պարզ ու հասկանալի դարձնելու պատրվակով:

Ոճական, լեզվական ու կառուցվածքային որոշ նոր ուսումնասիրություններ ապացուցել են ամբողջ գրքի հրաշալի կառուցվածքը, կապակցությունը, աստվածաշնչյան ու աստվածաբանական միակ լուրը: Այս ուսումնասիրությունները հիշատակում են հատկապես «յոթ»-ի շարքը, ուղերձային շրջանակը, եբրայերեն ու արիսայիկ ոճը, գրական մեթոդների ու պարզ կրկնությունների, կայուն ձևակերպումների ու անաֆորաների կիրառությունը:

Ե. ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Մի շարք մեկնաբաններ փորձել են պարզ դարձնել Գրքի լուրը: Նրանց մի մասը մոլորվել է խիստ երևակայական չարաշահումների մեջ, որոնք մթագնել են Չայտնության շատ պարզ լուրը: «Չայտնություն»-ը դարձել է նաև պարարտ այն հողը, որի վրա բուսել են վտանգավոր աղանդներն ու տարածվել են քրիստոնեական հավատքի տեսական շեղումները:

Այժմ հիշատակենք գրքի մեկնաբանման հինգ հիմնական դպրոցները:

1. Պրետորիստական դպրոց

Ըստ այս դպրոցի՝ գիրքը, հավանաբար, առնչվում է անմիջական այն դարաշրջանին ու հանգամանքներին, որոնցում ապրել էր հեղինակը: Չավաստի է, որ ամբողջ գրքում առկա «հրատապության» մթնոլորտով է բացատրվում նրա կանխագուշակությունների անմիջական կատարումը: Դատաստանի իրականացման զուտ ֆուտուրիստական մման մեկնաբանությունը կարատավորեր նրա հաղորդած լուրի էական տարրը: Քրիստոնյաների համար ամենից ավելի անմիջական սպառնալիքը կայսեր պաշտամունքն էր, որ ուզում էին պարտադրել: Նրանցից ոմանք արդեն ուրացել են Քրիստոսի անունը: Ինչ էլ որ լինի, Աստված կպաշտպանի յուրայիններին և կդատի ուրացողներին: Նա երկրի վրա կհաստատի իր իշխանությունը:

Կարելի է գնահատել այս մեկնության իրական ուժը, մեկնություն, որն ընդհանուր առմամբ ազատամտական աստվածաբանության տեսակետն է: Այսուհանդերձ, եթե իրապես գոյություն ունի պատմական անմիջական հանգամանքներին առնչվող հրատապության շեշտադրում, պետք է նաև նշել, որ, դժբախտաբար, այս դպրոցը լուրը զրկում է վախճանաբանական իր կարևորությունից: Կարծում ենք, որ ներկայից բացի, ապագան ևս ներառված է գրքի լուրի մեջ:

2. Պատմական դպրոց

Գիրքը համարում է պատմության համայնապատկերը, որը տարածվում է առաջին դարից մինչև Քրիստոսի Գալուստը: Հեղինակի դարաշրջանը ևս մտնում է դրա մեջ, բայց նաև ժամանակների վախճանը, առանց, սակայն, այս երկու ժամանակների խզման: Բազմաթիվ Բողոքականներ ընդունել են այս տեսակետը: Երբեմն, «Հայտնության» լուրը արդիականացնելու մտահոգությամբ, նրանք հասել են ընդհուպ մինչև այն, որ պապին նույնացրել են Գազանի հետ: Մանրամասների հետ կապված՝ առաջ են գալիս դժվարություններ: Օրինակ, ընդունելով այդ էջերի պատմական արժեքը, այս մեկնաբանության կողմնակիցները տարբերվում և պառակտվում են միջադեպերի և այն դարաշրջանների ճշգրտումների ու սահմանումների հարցում, որոնց նկատմամբ կիրառում են խորհրդանիշերը: Բացի այդ՝ նրանք ընկել են մոլորության գիրկը՝ այս կերպ մեկնաբանված պատմությունը հանգեցնելով միայն Արևմուտքի պատմությանը:

Արդ, հայտնի է, որ գոնե սկզբնական շրջանում, Եկեղեցու պատմությունն ընթանում էր Միջերկրականից դեպի Արևելք ընկած երկրներում, այլ ոչ թե Եվրոպայի սրտում:

3. Ֆուտուրիստական դպրոց

Այս դպրոցը պնդում է, որ սկսած 4-րդ գլխից, գիրքը զբաղվում է միայն ժամանակների վախճանի իրադարձություններով: Հեղինակին հետաքրքրում է ոչ թե իր դարաշրջանը, այլ բացառապես Քրիստոսի վերադարձին առնչվող իրադարձությունները: Սակայն լուրջ մի առարկություն կա այս դպրոցի դեմ (որն ընդգծում է գրքի կանխագուշակող արժեքը): Բանն այն է, որ զուտ ֆուտուրիստական լուրը պետք է որ ոչ մի հետաքրքրություն ներկայացրած չլինի գրքի առաջին ընթերցողների համար:

4. Սիմվոլիկ դպրոց

Ըստ այս դպրոցի՝ գրքի էությունը հալածված և անմարդկային ճնշման զոհ դարձած քրիստոնյաներին մխիթարելն էր, միաժամանակ նրանց հորդորելով համբերություն ու տուկունություն: Հեղինակն այդժամ դիմում է խորհրդանշական լեզվի, որը չի փորձում ընդունել տալ իբրև գրական իրողություն: Առաջարկում է Սուրբ Երրորդության հաղթանակի պատկերավոր նկարագրություններ:

«Հասկանո՞ւմ ես այն, ինչ ընթերցում ես»,- իր ճանապարհին հանդիպած եթովպացի սպային հարցնում է ավետարանիչ Փիլիպպոսը: Սպան այդ ժամանակ վախճանաբանական հատվածներ էր ընթերցում Եսայի մարգարեի գրքից: Նույն հարցը կարելի է տալ նաև Նոր Կտակարանի վերջին գրքի վերաբերյալ: Կասկածից դուրս է, որ «Հայտնություն»-ը ստացել է այնպիսի արտոնություն ու նաև՝ անհաջողություններ կրել, որ Աստվածաշնչի և ոչ մի գիրք չի ճանաչել: Սակայն, բացի 20-րդ գլխից, «Հայտնություն»-ը չի սովորեցնում որևէ բան, որն իբրև ճշմարտություն գտնվելիս չլինի Սուրբ Գրքում:

Ենք արդեն հիշատակել ենք այն փաստը, որ ապոկալիպտիկ լեզուն թյուրիմացությունների հիմնական պատճառներից է: Սակայն, գրքի հունարեն վերնագիրը՝ APOCALIPSIS, հրաշալիորեն թարգմանվել է ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ բառով, ինչպիսին իրականում է: Այն բացատրում է դրա և՛ բովանդակությունը, և՛ գրական ժանրը: Այսուհանդերձ,

ճշգրտենք, որ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ վերնագիրը եզակի թվով է, այլ ոչ թե հոգնակի. չկան բազմաթիվ հայտնություններ, կա միայն մեկ՝ Հիսուս Քրիստոսի Հայտնությունը:

Ք. հ. առաջին և երկրորդ դարերի ընթացքում գրական այս ժանրը շատ տարածված էր հրեաների մեջ: Աստվածաշնչի պատմական, մարգարեական, իմաստասիրական կամ ուղերձային (թղթակցություն, նամակ) լեզուն հարազատ է մեզ: Այն կատարելապես հասկանալի է: Նույնը չի կարելի ասել «Հայտնության» մասին: Քրիստոնյաները երբեմն *ապոկալիպս* և *ապոկալիպտիկ* բառերը նույնացնում են, այսինքն՝ այն, ինչն աղետաբեր է՝ առնչվելով Վերջին Դատաստանին:

Մ. թ. ա. 200 թ. ի վեր և ընդհուպ մինչև Ք. հ. 100 թ., հրեաներն առանձնակի սիրով էին քննարկում վախճանաբանական այն թեմաները, որոնք առնչվում էին ժամանակների վախճանին: Այսօրինակ մտածողության մեջ խորհրդանիշն իշխում է գաղափարին: Այս և մեր դարաշրջանների ու արտահայտության եղանակների միջև կա մտավոր ու լեզվական այնպիսի պատմեշ, որը հաճախ հազիվ ենք հասկանում: Մենք ժառանգորդներն ենք հունական մտածողության ու մտածելակերպի: Հունական մտածելակերպը հրաշալիորեն ինտելեկտուալ, հայեցակարգային և խիստ վերլուծական է: Պետք է խոստովանել, որ առանց դրա՝ արևմտյան քաղաքակրթությունը չէր կարող լույս աշխարհ գալ: Դժբախտաբար, այն նաև ծնունդ է տվել ծայրաստիճան մեքենայացված հասարակության ու մշակույթի:

Այսուամենայնիվ, տեղ կա նաև պատկերավոր լեզվի ու խորհրդանիշի համար, մի բան, որով հաճախ ավելի լավ է բացատրվում մեր էության խորքը, քան ամենախիստ տրամաբանությամբ:

Ապոկալիպտիկ գրականությունը պատկանում է հրեական սրբազան գրվածքների գրական ժանրին, որը հայտնի է նաև իբրև պարականոն գրականություն: Apocryphe¹ բառն ուներ «թաքնված, գաղտնի, միայն գաղտնիքին իրազեկ մարդկանց հայտնի» իմաստ: Սակայն, դա չի նշանակում, թե այն վավերական չէր: Մեզ հայտնի է, որ պարականոն գրականության մի տեսակ շատ մոտ է կանգնած աստվածաշնչյան լուրին: Պարականոն որոշ գրքեր նույնիսկ տեղ են գտել առաջին դարերի աստվածաշնչյան կանոնի մեջ: Հռոմեական եկեղեցին դրանք միշտ ընդունում է իբրև երկրորդ կարգի կանոնական գրքեր:

Ապոկալիպտիկ գրականությանն հատկանշական է սահմանափակ, սակայն ճշգրիտ նպատակը: Նրա նպատակը հաճախ տիեզերական մասշտաբով այն բախումը նկարագրելն է, որը տեղի է ունենում լույսի ու խավարի, բարու և չարի, Աստծու և Սատանայի միջև: Այս բախումն էլ ավելի է սրվում ժամանակների վախճանին մոտ: Այդժամ հակասություն է ի հայտ գալիս ներկա վատ դարաշրջանի և գալիք դարաշրջանի միջև, որը լինելու է երանության շրջան: Աստվածաբանական բառերով, ապոկալիպտիկ գրականությունը կարելի է բնութագրել իբրև դուալիստական ու վախճանաբանական:

Հովհաննու «Հայտնություն»-ը երևան է եկել երեքդարյա մի շրջանում, երբ այս տեսակ գրականությունը մեծ հաջողություն էր վայելում: Ձևով և բովանդակությամբ՝ այն դիտվում էր իբրև այս գրականության ծաղկունմն ու գագաթնակետը: Ապոկալիպտիկ գրականության մեջ այն ինչ խորթ է, հրաշալի, վեհ, երբեմն-երբեմն էլ՝ տարօրինակ կամ գրոտեսկային, կամ էլ non sequitur, հաղթում է տրամաբանությանը՝ լուրն էլ ավելի արդյունավետ ու ցնցող

¹ Պարականոն:

դարձնելու նպատակով: Այսուհանդերձ, ընդգծենք, որ այս սիմվոլիզմի աղբյուրը բացառապես (կամ հիմնականում) ապոկալիպտիկ գրականությունը և կամ պարականոն գրվածքների պատկերաշարն է: Աղբյուրը նաև Հին Կտակարանի կանոնական այնպիսի գրվածքներում է, ինչպիսիք են, օրինակ, Դանիելի ու Եզեկիելի գրքերը:

Գրական այս ժանրը ծնունդ է առել ու զարգացում ապրել այնպիսի մի դարաշրջանում, երբ Աստծու ժողովուրդը անտանելի ճնշման փորձությանն էր ենթարկված: Այդժամ, նրա հուսահատությունը պատասխան գտավ այս լուրի մեջ, որով հայտնվում էր, որ Աստված հրաշքով իր ժողովրդին փրկելու էր տիեզերական աղետից: Դրությունն այնքան էր վատ, որ միայն աստվածային միջամտությունը կարող էր փրկել ու ազատել: Արդ, ապոկալիպսի լուրը նշանակում է, որ եթե ներկա դարաշրջանում չարն անտանելի է, ապա գալիք դարաշրջանն ականատես է լինելու Բարու հաղթանակին ու չարի նկատմամբ նրա գերազանցությանը: Այս լուրը հաղորդվում է երկնային, հաճախ՝ պարականոն և ճնշող թշնամիների համար անհասկանալի խորհրդանիշերի օգնությամբ: Ապոկալիպտիկ գրականությունը սովորական ժանր էր մ. թ. առաջին դարում, և «Հայտնության» առաջին ընթերցողները հրաշալիորեն հասկացել են այն: Սակայն այս բանը ժամանակակից ընթերցողներին չի արտոնում 13-րդ գլխի գազանի մեջ փնտրել Ադոլֆ Հիտլերի կամ Ֆիդել Կաստրոյի, եթե ոչ՝ Մերձավոր Արևելքի տխրահռչակ այաթուլլաների կերպարը:

5. Գրոգրեսիվ զուգահեռականություն

Նոր Կտակարանի ամերիկացի մասնագետ W. Hendriksen-ը, բողոքական այլ աստվածաբանների օրինակով, առաջարկում է «Հայտնության» շահավետ ընթերցանություն: Մեթոդը կոչվում է «առաջադիմական զուգահեռականություն»: Ահա այն:

Գրքի ուշադիր ընթերցանությունը վեր է հանում յոթ բաժնից կազմված գրական կառուցվածքը: Դրանք զարգանում են զուգահեռաբար: Բոլոր բաժինները և յուրաքանչյուրն առանձին ծածկում են այս դարաշրջանը, որը տարածվում է Քրիստոսի գալուստից մինչև նրա Վերադարձը: Ամեն անգամ, երբ որևէ բաժին հասնում է Դատաստանի օրվան, հեղինակը ետ է դառնում՝ քննության առնելու մի նոր բաժին և սկսելու հենց սկզբից: Այս բաժինը դարձյալ նկարագրում է նույն շրջանը, սակայն տարբեր դիտանկյուններից և տարբեր խորհրդանիշերով:

Ահա մի աղյուսակ, որը սխեմատիկ ձևով բացատրում է գրքի բովանդակությունն ու զուգահեռ լուրը.

ա) Քրիստոսի Եկեղեցին աշխարհում (գլ. 1-3. ճրագակալները):

բ) Եկեղեցին տառապում է հալածանքից (գլ. 4-7. կնիքները):

գ) Եկեղեցու համար վրեժ է լուծված, այն պաշտպանված է ու հաղթանակած (գլ. 8-11. փողերը):

դ) Քրիստոսին հակադրվում են Վիշապն ու նրա լեզուները (գլ. 12-14. Քրիստոսն ու Վիշապը):

ե) Աստծու վերջնական գալուստը հարվածում է չզղջացողին (գլ. 15-16. գավաթները):

զ) Բաբելոնի ու գազանների անկումը (գլ. 17-19. Բաբելոն):

է) Վիշապի դատապարտումը, Քրիստոսն ու իր Եկեղեցին հաղթողներ են (գլ. 20-22):

Այս բաժիններն, այսպիսով, ներկայացնում են այն շրջանը, որն ընկած է Քրիստոսի առաջին գալստյան ու նրա Վերադարձի միջև: Սրան կիստևի վերջին Դատաստանը, ինչպես նաև աշխարհի ամբողջական նորոգությունը (այս առիթով՝ տես մեր «Espérer contre toute Espérance» աշխատության վերանայված ու լրացված նոր հրատարակությունը)¹:

Հիշյալ բաժինները, սակայն, պարզ կրկնություններ չեն: Դրանցից յուրաքանչյուրը մի նոր տարր է ավելացնում նախորդ բաժնի մտածողությանը: Բացի այդ՝ այս բաժինը հենց իր տեղում է, այնտեղ, որտեղ պետք է լինի: Ոչ մի տեղ չկա որևէ շփոթմունք: Այսպես, Եկեղեցին գործում է ինչպես ճրագակալ. այն կրում և տարածում է լույս: Իսկ ո՞րն է արդյունքը: Մշտապես և դարձյալ մթությանը պարուրված աշխարհը հալածում է Եկեղեցուն: Սա է հալածանքի յոթ կնիքների իմաստը: Սակայն, Աստված հալածողներին չի թողնում անպատիժ: Նա իր Դատաստանն իրականացնում է նաև աշխարհի վրա, որի խորհրդանիշը յոթ փողերն են: Եթե աշխարհը հաշվի չի առնում այս դատաստանը, ապա ստանում է աստվածային գայրություն լի յոթ գավաթ:

1-11 գլուխներում (առաջին երեք բաժիններ) Եկեղեցու և աշխարհի միջև պայքարը մատնանշում է է՛լ ավելի մեծ բախում, որը տեղի է ունենում Քրիստոսի ու Վիշապի միջև. 12-22 գլուխներ (գրքի վերջին 4 բաժիններ): Սատանան օգտվում է իր երեք դաշնակիցներից, որոնց մասին հիշատակված է 12-14 գլուխները ներառող բաժնում: Ծովի գազանը աշխարհը ներկայացնում է իբրև հալածանքի կենտրոն: Ցամաքից դուրս եկած գազանը և կեղծ մարգարեն այն ներկայացնում են իբրև կեղծ կրոնի և կեղծ փիլիսոփայության, իսկ Բաբելոնը՝ կռապաշտ գաթակալության կենտրոն: Եռակի նպատակը հավատացյալների մարմնի, հոգու և սրտի վրա հարձակում գործելն է: Թշնամիները, սակայն, պարտություն են կրում: 17-19 գլուխներում, երկու գազաններն ու Բաբելոնը պարտվում են: 20-րդ գլխում, Վիշապը, որ Սատանան է, նետվում է կրակե լիճ: Բաբելոնի փլատակների վրա վեր է խոյանում երկնային Երուսաղեմի պատկերը (21-րդ և 22-րդ գլուխներ): Աստծու ժողովուրդն, այսպիսով, հաղթող է: Այս ամենը նկարագրված է մեծ գեղեցկությամբ ու անսահման մխիթարության ուժով: Այստեղ գտնում ենք պատմության իսկական փիլիսոփայություն: Քրիստոսի միջնորդությամբ՝ Աստված ուղղություն է տալիս իրադարձությունների ընթացքին: Նա հոգ է տանում իր Եկեղեցու մասին՝ հակառակ արտաքին տեսակետների, հակառակ Եկեղեցու թվացյալ պարտությանը:

Գրքի յոթ բաժիններից քաղված այս վարդապետությունը համաձայնության մեջ է Աստվածաշնչի ամբողջ վարդապետության հետ:

Վկայության ճրագակալները (1-3) համեմատել, օրինակ, Մատթեոսի 5:14 տողի հետ. «Դուք աշխարհի Լույսն եք», 4-7 գլուխների հալածանքի կնիքները՝ Հովհ. 16:33 տողի հետ. «Աշխարհում դուք կունենաք նեղություններ, սակայն արիացե՛ք, քանզի ես հաղթել եմ աշխարհին»: 8-11 գլուխների Դատաստանի տողերի համար, տես՝ Դուկաս 18. «Աստված վրեժ չի՞ լուծի իր ընտրյալներից, որոնք գիշեր-ցերեկ աղաղակում են իր դեմ»: Իսկ 12-14 գլուխներն ընդգրկող բաժնում, Վիշապի դեմ դուրս եկող Գառ-Քրիստոսի համար Ծննդոցի 3:15 տողը. «Ես թշնամություն կհաստատեմ քո (վիշապ Սատանայի) և կնոջ ու նրա սերունդներ»:

¹ Գիրքը մեր կողմից թարգմանվել է հայերեն. «Հուսալ՝ հակառակ ամեն հույսի», Երևան, «Նաիրի», 1995 թ. (թարգմանիչ):

րի միջև»: Ձայրույթի գավաթները, որոնց պարունակությունը թափվում է չզղջացող հալածողների վրա (զլ. 15-16). տես՝ Հռոմեացիներին 2:5 և Ելից 14:15: Բաբելոնի և երկու գազանների անկումը (զլ. 17-19). տես՝ Ա. Հովհ. 2:17: Եվ վերջապես, Վիշապի և երկնային Երուսաղեմի վախճանը (զլ. 20-22) կարող է համեմատվել Հուդա 6 և Հռոմեացիներին 8:28 հատվածների հետ:

Ձ. ԳՐՔԻ ԹԵՄԱՆ

Այս գրքի բացառիկ լուրը կարելի է ամփոփել պարզ մի նախադասությամբ. *Հիսուս Քրիստոսի, բայց նաև նրա Եկեղեցու կատարյալ ու անառարկելի Հաղթանակը Սատանայի և նրա լեզեռնների նկատմամբ*: Վիճակն այնպիսին չէ, ինչպես թվում է առաջին հայացքից, քանզի, եթե դատելու լինենք ըստ թվացյալի, ապա անդունդի խորքից դուրս եկած գազանն է վարում մարտը: Նա պատերազմում է և հասնում այն բանին, որ ճգնում է հավատացյալներին: Վերջիններիս դիակները ծածկում են այն մեծ քաղաքի փողոցները, որը հոգևոր առումով անվանվում է Սողոմ և Եգիպտոս, «հենց այնտեղ, որտեղ Տերը խաչվել է»: Ժողովուրդների, ցեղերի, լեզուների ու ազգերի մեջ մարդիկ նայում են իրենց ընկած մարմիններին և թույլ չեն տալիս դրանք թաղել: Երկրի վրա ապրողները հրճվում են, միմյանց նվերներ են ուղարկում, որովհետև գազանները սպանել են այն երկու մարգարեներին, որոնք տանջել են երկրի վրա ապրող մարդկանց: Սակայն այս ուրախությունն անժամանակ է: Իրականում, վերջին խոսքը հավատացյալին է կամ, ավելի ճիշտ, նրա Տիրոջը: Այսպիսով, կարող ենք. «Երեք և կես օր անց Աստծու կյանքի շունչը մտավ նրանց մեջ, և նրանք ոտքի կանգնեցին, ու մի մեծ վախ պատեց բոլորին, և աշխարհի գերիշխանը դարձավ մեր Տիրոջ ու նրա Քրիստոսի գերակայությունը: Եվ նա կիշխի դարեդար»:

Հրաշալի այս գրքի մարգարեությունների մեջ Քրիստոսը հայտնվում է իբրև Հաղթանակող (1:18, 2:8, 5:9, 6:2, 11:15, 12:9, 14:1, 15:2, 19, 16, 20:4, 22:3):

Նա իշխում է մահվանը, մեռյալների բնակարանին, վիշապին, գազանին, կեղծ մարգարեին, նրան, ով պաշտում է գազանին և այլն: Հետևապես, եթե նույնիսկ խոր հուսահատության գրկում ենք, կարող ենք վերստին արիանալ:

Հապա նայեցեք հավատացյալներին. նրանց հագուստներն անմաքո՞ւր են. դրանք լվանում և սպիտակեցնում են գառան արյան մեջ (7:14, 22:14): Մեծ նեղության հորձանքի մե՞ջ են. դուրս են գալիս այդտեղից (7:14): Սպանվե՞լ են. ոտքի են կանգնում (11:11): Հալածվո՞ւմ են Վիշապի, Գազանի ու կեղծ մարգարեի կողմից. վերջում կտեսնենք, որ հաղթանակած կանգնած են Սիոն լեռան վրա: Նայեցե՞ք ավելի շուտ Գառանը և նրա հետ՝ «144 000»-ին (14:1): Նրանք հաղթել են Գազանին (15:2):

Չե՞ն անսացել նրանց աղոթքներին (6:10): Աշխարհի գլխին փլվող աստվածային դատաստանը Աստծու պատասխանն է իր ժողովրդի աղոթքին (8:3-5): Ահա թե ինչու այս աղոթքները ցանկացած փիլիսոփայության ու վավերական պատմության առեղծվածները բացող իսկական բանալի են:

Նրանք պարտվա՞ծ են երևում: Իրականում նրանք են իշխում երկրի վրա (5:10), իսկ

Քրիստոսի հետ՝ երկնքում, «հազար տարի» շարունակ (20:41), իսկ երկնքում ու երկրի վրա՝ հավիտյան հավիտենից (22:5):

Բայց ի՞նչ է լինում նրանց հետ, ովքեր արտաքուստ իշխողներ ու ճնշողներ են: Դուրս են գալիս ծովից, ցամաքից, անդունդից: Վիշապը (12:3), գազանը (13:1), կեղծ մարգարեն (13:11) և Բաբելոնը (14:8). նրանց տեսնում ենք վերջնականապես պարտված: (Բաբելոնը՝ 18:2, գազանն ու կեղծ մարգարեն՝ 19:20, վիշապը՝ 20:10 հատվածներում):

Ուստի թողնենք, որ գիրքն ինքը խոսի իր մասին: 17:14 հատվածում պարզորոշ ներկայացվում է թեման. նրանք (հիշատակված հակառակորդները) կկռվեն Գառան դեմ, բայց վերջինս նրանց կճգմի: Նա թագավորաց թագավորն է և տերերի Տերը:

Եվ այսպես՝ հեղինակը քաջալերում է Քրիստոսի Եկեղեցուն: Նրան վստահեցնում է վերջնական հաղթանակի մեջ: Հորդորում է հաստատական լինել: Հուսո նրա լուրն ուղղվում է ինչպես առանձին քրիստոնյային, այնպես էլ ամբողջ Եկեղեցուն: Հանգամանքները կարող են թվալ ողբերգական և լրջորեն սպառնալ մեզ: Սակայն, վերջնական հաղթանակն ապահովված է բոլոր նրանց համար, ովքեր Քրիստոսի կողքին են:

Ը. ԳՐՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գրքի յոթ բաժինները թվարկելուց հետո հարկ չկա ներկայացնել բովանդակության երկար վերլուծություն: Այսուհանդերձ, ելնելով բարեհարմարությունից՝ երկու տողով ներկայացնենք գրքի հիմնական բաժինները.

Ա. Պայքարը երկրի վրա. Եկեղեցին հալածվում է աշխարհի կողմից, բայց միևնույն ժամանակ պաշտպանված է ու հաղթող (գլ. 1-11):

Բ. Բախման հոգևոր՝ ավելի խոր ետնապլանը. Քրիստոսն ու իր Եկեղեցին իրականում հալածվում են Վիշապի ու նրա լեզեռների կողմից: Բայց Քրիստոսն ու նրա ընտրյալներն իսկական հաղթողներն են (գլ. 12-22):

ԱՅԱՐՈՆ ԳԱՅԱԵԱՆ
(կենսագրական գծեր)

Վերապատվելի Ա. Գայաեանը ծնվել է Աթենքի արվարձաններից մեկում՝ Նիքեայում, Ավետարանական հովիվ Ռուբեն և Վարդուհի Գայաեանների ընտանիքում:

Իր աստվածաբանական դաստիարակությունը ստացել է Լոզանի Սուրբգրային դպրոցում, որն ավարտելուց հետո մեկ տարի ուսանել է Ցյուրիխի Ամերիկյան աստվածաբանական ճեմարանում: Այնուհետև ֆրանսահայ Ավետարանական եկեղեցիները նրան հրավիրում են ուսումը շարունակելու Ֆրանսիայի էքս ան Պրովանս քաղաքում: Երեք տարի այստեղ սովորելուց հետո ֆրանսիական Բարեկարգյալ ռեֆորմի եկեղեցիները նրան հրավիրում են հովվական պաշտոն ստանձնելու Ֆրանսիայի տարբեր քաղաքներում, իսկ վերջին տասը տարիները՝ Փարիզում:

Հոգևոր հովվության ընթացքում Ա. Գայաեանը գործակցել է Ֆրանսիական և միջազգային ավետարանական մի շարք շարժումների, որպես Եվրոպական Ավետարանական Խորհրդի կենտրոնական վարչության անդամ, ֆրանսիական Ավետարանական միության շրջանային փոխնախագահ, Բարեկարգյալ միջազգային շարժման անդամ: Եղել է ֆրանսիական Ավետարանական վկաների կազմակերպության եռամյա պարբերականի խմբագիրն ու հրատարակիչը: Բազմաթիվ կրոնաբարոյական հոդվածներով հանդես է եկել ֆրանսախոս և անգլիախոս տարբեր հանդեսներում: Հեղինակել է ավելի քան քառասունհինգ գրքեր, որոնք վերաբերում են Սուրբ Գրքին և զանազան աստվածաբանական նյութերի: Դրանք թարգմանվել են տարբեր լեզուներով:

Փարիզում ծառայելու ժամանակ Ամերիկյան Ավետարանական Բարեկարգյալ եկեղեցու ձայնասփյուռի գործակալությունը Գայաեանին հրավիրում է ֆրանսերեն լեզվով կրոնական պատգամներ պատրաստելու և հաղորդելու ֆրանսախոս երկրներ՝ Կանադա, Եվրոպա և Աֆրիկա: Գայաեանի շուրջ երեսուն տարիների գործունեության արդյունքն այն մեծաթիվ ավետարանական եկեղեցիներն են, որոնք հաստատվել են աֆրիկյան զանազան երկրներում և նպաստել նրանց աստվածաբանական և կրոնական զարգացմանը:

Ա.Ռ. Գայաեանն ապրում է ԱՄՆ-ում:

Աշխարհագրորեն ընդգրկուն է նրա առաքելության ոլորտը. միջազգային ցանցի օգնությամբ (ինտերնետ) և ձայնասփյուռային հեռարձակմամբ գրեթե ամբողջ Հայաստանով թողարկվում են նրա հոգևոր պատգամները՝ հայրենակիցների համար:

Հայերենով հրատարակած գրքերը՝ «Հուսալ՝ հակառակ ամեն հույսի», «Իսլամի իմացությունը», «Հին Կտակարանի ընդհանուր ներածությունը», «Աստված անհաղթելի» և այլն, Ա. Գայաեանի հոգևոր գործունեության անժխտելի մնայուն արժեքներից են, որոնք այսօր էլ լրացվում են հայրենիքում նրա խմբագրապետությամբ հրատարակվող «Հավատք և կյանք» պարբերաթերթով:

Ի լրումն այս ամենի, նա բարեգործական բազում ձեռնարկումների հեղինակ է և հովանավոր:

Ա. Ռ. ԳԱՅԱԵԱՆ
ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

R. KAYAYAN
INTRODUCTION GENERALE
AU NOUVEAU TESTAMENT

ՀԱՎԱՏՔ ԵՎ ԿՅԱՆՔ
2003